



Խուան Զ. Լինց, Ալֆրեդ Ստեփան

## Ժողովրդավարութեան ԱՆՑՆԵԼՈՒ ԵՎ Ժողովրդավարութեան ԿԱՅԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Այս ծանրակշիռ հետազոտության հեղինակներն իրենց ողջ կյանքի ընթացքում որոնել են այն հարցերի պատասխանները, թե ինչպես են տապալվում ժողովրդավարությունները, ինչպես են տեղի ունենում անցումը ժողովրդավարությանը և ժողովրդավարության կայացումը... Այս գիրքը նրանց այդ երկարատև ջանքերի փայլուն արդյունքն ու զագաթնակետն է: Հեղինակների կողմից նշված ժողովրդավարության կայունացման հիմն ռիտորները՝ քաղաքացիական հասարակությունը, քաղաքական հասարակությունը, օրենքի գերակայությունը, պետական կառավարումն ու տնտեսական հասարակությունը, ինչպես նաև գործածվող ավելի լայն գիտական հասկացությունները (օր.՝ «հետամբողջատիրական հասարակություն»), հիմնականում կուրվագծեն այն ընդհանուր շրջանակները, որոնց սահմաններում գիտնականները կրիտարկեն նման խնդիրները: Հեղինակների կողմից նախկին կոմունիստական տարածքի մասին հետազոտություններն ազդարարում են սովետագիտության վերադարձը քաղաքական կոնպարատիվիզմի բնականոն հուն»:

Ֆրենսիս Ֆուկույամա, **Foreign Affairs** հանդես

«Գրքում փորձ է արվում դիտարկելու ինչպես անցումը ժողովրդավարությանը, այնպես էլ ժողովրդավարության կայունացումը 15 ժամանակակից երկրներում, որոնք տեղաբաշխված են երեք աշխարհագրական-մշակութային տարածքներում: Իմ կարծիքով՝ ոչ ոք չի համարձակվի վիճարկել այս աշխատության գիտական կշիռը... Անկասկած, այն մեծ ուշադրությամբ կկարդան բոլոր նրանք, ովքեր հետևում են ժողովրդավարացման ընթացքին ավելի քան 50 երկրներում, և կնտորեն, թե ինչով կավարտվի այդ ամենը... Լինցն ու Ստեփանը ցուցաբերել են մեծ քաջություն՝ ստանձնելով այս վիթխարի աշխատանքը»:

Ֆիլիպ Շմիտտեր, **Journal of Democracy** հանդես

Խուան Զ. Լինց

քաղաքական և հասարակական գիտությունների պրոֆեսոր Յեյլի համալսարանում

Ալֆրեդ Ստեփան

Կենտրոնա-եվրոպական համալսարանի առաջին ռեկտոր և նախագահ, պետական կառավարման պրոֆեսոր Օքսֆորդի համալսարանում



Գրքի թարգմանությունն ու հրատարակումը հնարավոր են դարձել Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեստրոնայան ֆինանսական աջակցության շնորհիվ



ԿՈՎԿԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
www.caucasusinstitute.org



Խուան Զ. Լինց  
Ալֆրեդ Ստեփան

Ժողովրդավարության  
անցումը և  
ժողովրդավարության  
կայացումը

Խուան Զ. Լինց  
Ալֆրեդ Ստեփան  
Ժողովրդավարութեան  
անցումը և  
Ժողովրդավարութեան  
կայացումը  
խնդիրները

Հարավային Եվրոպա,  
Հարավային Ասիայի և  
Հեցսոսիսական Եվրոպա



ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՆՑՆԵԼՈՒ ԵՎ  
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԿԱՅԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Հարավային Եվրոպա,  
Հարավային Ամերիկա և  
հետկոմունիստական Եվրոպա*

Խուան Ջ. Լինց, Ալֆրեդ Ստեփան

Կովկասի ինստիտուտ  
Երևան, 2011

ՀՏԴ 32.001

ԳՄԴ 66

Լ 567

Լ 567 Լինց Խուան, Ալֆրեդ Ստեփան  
Ժողովրդավարությանն անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները  
Հարավային Եվրոպա, Հարավային Ամերիկա և հետկոմունիստական Եվրոպա/  
Խուան Լինց, Ալֆրեդ Ստեփան. – Եր.: Կովկասի ինստիտուտ, 2011 – 620 էջ

Թարգմանությունն անգլերենից՝ Անժելա Ղասաբյանի, Հրաչյա Տաթևյանի  
Խմբագիրներ՝ Արմինե Պետրոսյան, Լևոն Գալստյան  
Գիտական խմբագիր՝ Վահան Տեր-Ղևոնդյան  
Խորհրդատու՝ Ալեքսանդր Մարկարով  
Սրբագրիչ՝ Մարգարիտա Ղազարյան

Գրքի թարգմանությունն ու հրատարակումը հնարավոր են դարձել Հայաստանում  
Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանության ֆինանսական աջակցության  
շնորհիվ

ISBN 978 -99941-2-469-5

ՀՏԴ 32.001

ԳՄԴ 66

© 2011 Կովկասի ինստիտուտ (միայն հայերեն հրատարակություն)

Կովկասի ինստիտուտ,  
Եզնիկ Կողբացի 39,  
Երևան 0010,  
Հայաստան

Original English edition:

Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America, and  
Post-Communist Europe  
by Juan J. Linz and Alfred Stepan

© 1996 Johns Hopkins University Press

All rights reserved. Published by arrangement with The Johns Hopkins University Press,  
Baltimore, Maryland

*The translation and publication of this book was made possible through the support of the  
Embassy of the United States in Armenia*

# Բովանդակություն

Հայերեն հրատարակության առթիվ 7  
Նախաբան և երախտագիտության խոսք 9

ՄԱՍ 1 19

## *Տեսական ակնարկ*

1. Ժողովրդավարությունը և ժողովրդավարության ոլորտները 21
2. «Պետութենականություն», ազգայնականություն և ժողովրդավարացում 38
3. Ժամանակակից ոչ ժողովրդավարական վարչակարգեր 66
4. Նախորդ վարչակարգի տիպի նշանակությունը ժողովրդավարության անցման ուղիների և կայացման խնդիրների համար 88
5. Գործող անձինք. նրանք համապատասխան համատեքստում 101

ՄԱՍ 2 125

## *Հարավային Եվրոպա. ավարտված կայացումներ*

6. «Դաշնությունահենք բարեփոխում, դաշնությունահենք բաժանում». Իսպանիայի հարացուցային օրինակը 127
7. Ժամանակավոր կառավարությունից մինչև միաժամանակյա անցում և կայացում. Պորտուգալիա 164
8. Ոչ բարձրաստիճան գինվորական վարչակարգի ճգնաժամը. Հունաստան 182
9. Հարավային Եվրոպա. եզրափակիչ մտքեր 193

ՄԱՍ 3 205

## *Հարավային Ամերիկա. սահմանափակված անցումներ*

10. Ռիսկերին հակամետ կայացած ժողովրդավարություն. Ուրուգվայ 209
11. Արդյունավետության, լեգիտիմության ու ժողովրդավարական պետության «ներկայության» ճգնաժամ. Բրազիլիայի օրինակը 228
12. Անհնարինից մինչև հնարավոր ժողովրդավարական խաղ. Արգենտինա 258
13. Անավարտ անցո՞ւմ, թե՞ գրեթե կայացում. Չիլի 276
14. Հարավային Ամերիկա. եզրափակիչ մտքեր 294

## ՄԱՍ 4 309

*Հետկոմունիստական Եվրոպա. ամենաբարդ ուղիներն ու խնդիրները*

15. Հետկոմունիզմի նախապատմությունը 313
16. Ավտորիտար կոմունիզմ, էթնիկ քաղաքացիական հասարակություն և երկդիմի քաղաքական հասարակություն. Լեհաստան 339
17. Հետամբողջատիրական վարչակարգերի տարբերակներ. Հունգարիա, Չեխոսլովակիա, Բուլղարիա 387
18. Ամբողջատիրության և սուլթանականության միաժանակյա ազդեցությունը ժողովրդավարությանն անցման վրա. Ռումինիա 453
19. «Պետութենականության» և անցումային փուլի խնդիրները. ԽՍՀՄ և Ռուսաստան 480
20. Երբ ժողովրդավարությունն ու ազգային պետությունը փոխհակասող տրամաբանություններ ունեն. Էստոնիա և Լատվիա 522
21. Հետկոմունիստական Եվրոպա. Եզրափակիչ համեմատական խոհեր 561
- Նկարներ, աղյուսակներ և ցուցադրություններ 590
- Այբբենական ուղեցույց 596

# Հայերեն հրատարակության առթիվ

ԿՈՎԿԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ սիրով ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում Խուան Ջ. Լինցի և Ալֆրեդ Ստեփանի «Ժողովրդավարությանն անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները. Հարավային Եվրոպա, Հարավային Ամերիկա և հետկոմունիստական Եվրոպա» գրքի հայերեն հրատարակությունը: Այս գրքով Կովկասի ինստիտուտը սկսում է քաղաքագիտության դասականների աշխատությունների հրատարակումների շարքը:

Ինչու ընտրեցինք այս գիրքը: 1996թ. ԱՄՆ-ում լույս տեսած ամերիկյան քաղաքագետներ Խուան Ջ. Լինցի և Ալֆրեդ Ստեփանի այս աշխատությունը հիմնարար հետազոտություն է Հայաստանի համար իսկապես հրատապ մի բնագավառի՝ քաղաքական ձևափոխումների տեսության մասին: Ամուր տեսական հիմքի և փաստական ընդարձակ նյութի հիման վրա գրքում վերլուծվում են ժողովրդավարության տարանցիկ բնույթն ու աշխարհի տարբեր երկրներում ժողովրդավարական ուժերի համախմբման դինամիկան, ինչպես նաև զուգահեռաբար դիտարկվում են դրանցից ծագող խնդիրներն ու լուծման հնարավոր ուղիները:

Քաղաքագիտությունը Հայաստանում դեռևս շատ երիտասարդ գիտություն է, և, բնականաբար, գիտական տերմինաբանությունն այս բնագավառում մշակման փուլում է: Ըստ այդմ՝ սույն աշխատության թարգմանիչները, հարազատ մնալով բնագրի ոգուն և հայերենի բառակազմական սկզբունքներին, անհրաժեշտաբար ստեղծել են որոշ նորակազմ տերմիններ, ինչը կարող է նպաստել միջազգային քաղաքագիտական զանազան հասկացությունների ճշգրիտ ընկալմանն ու դրանց հայերեն տերմինակերտմանը, ինչն իր հերթին առհասարակ ցանկացած գիտության զարգացման համար ունի հիմնարար նշանակություն:

Լիահույս ենք, որ այս գիրքն օգտակար ձեռնարկ կլինի քաղաքագիտություն ուսումնասիրող ուսանողների և գիտնական-քաղաքագետների, Հայաստանում աշխատող հասարակական և քաղաքական կազմակերպությունների, ինչպես նաև լրագրողների համար:

Մենք շնորհակալություն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր հնարավոր դարձրեցին այս գրքի լույսընծայումը: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանությանը, առանց որի ֆինանսական աջակցության անհնար կլիներ այս գրքի թարգմանությունն ու հրատարակումը, ինչպես նաև՝ John Hopkins University Press-ին հայկական հրատարակության հեղինակային իրավունքները մեզ տրամադրելու համար:

*Երևան, հունիս, 2011թ.*

*Ալեքսանդր Բսկանդարյան, Կովկասի ինստիտուտի տնօրեն*



# Նախաբան և երախտագիտության խոսք

Մեր խմբագրած «Ժողովրդավարական վարչակարգերի անկումը» բազմահատոր աշխատանքի նախաբանի նախավերջին պարբերությունում գրել էինք, որ «այս ուղղությամբ հետագա աշխատանքներում առաջնահերթ տեղ պետք է տրվի այն պայմանների վերլուծությանը, որոնք հանգեցրել են ավտորիտար վարչակարգերի անկմանը, ավտորիտարից դեպի ժողովրդավարական վարչակարգերի *անցմանը* և հատկապես հետավտորիտար ժողովրդավարությունների *կայացման* քաղաքական դինամիկային»:<sup>1</sup> Չեր ձեռքին գտնվող գիրքն այդ հետազոտական աշխատանքին նպաստելու մեր ջանքերի արդյունքն է:

Առաջին հերթին հարկ ենք համարում որոշ վերապահումներ անել գրքի վերնագրի վերաբերյալ: Որպես համեմատականների՝ մեզ քաջ հայտնի է, որ շատ դեպքերում երբեմնի կայուն ոչ ժողովրդավարական վարչակարգերի քաղաքական փոխակերպումները չեն վերածվում այնպիսի իրավիճակի, որը կարելի է համարել «ավարտված *անցում ժողովրդավարությանը*»: Էլ ավելի քիչ դեպքերում են դրանք դառնում կայացած ժողովրդավարություններ:<sup>2</sup> Եվ ինչպես պարզ է դառնում մեր 1978թ. աշխատությունից, անգամ արդեն կայացած ժողովրդավարությունները կարող են անկում ապրել:<sup>3</sup>

---

1. Խուան Լինցի և Ալֆրեդ Ստեփանի խմբ.՝ «Ժողովրդավարական վարչակարգերի անկումը» (Juan J. Linz and Alfred Stepan, eds., *The Breakdown of Democratic Regimes* (Baltimore: Johns Hopkins University Press, 1978), ix-x. Emphasis added):

2. Իսկապես, մեր աշխատանքի մեծ մասը նվիրված է եղել այն քաղաքական փոխակերպումների վերլուծությանը, որոնց հետևանքում անցումը ժողովրդավարությանը չի ավարտվել: Նման երկրների մի ակնառու խումբ ներառում է Իրանը՝ Շահի անկումից հետո, Հաիթին՝ «Պապա Դոկի» անկումից հետո և Նիկարագուան՝ Սամոսայի անկումից հետո: Այս բոլոր երկրներում առկա է եղել, Վեբերի խոսքով՝ «ծայրահեղ ժառանգորդության» սուլթանական ձևը: Այս դեպքերը կվերլուծվեն սուլթանական վարչակարգերին և դրանց ժառանգությանը նվիրված առանձին հատորում, որը խմբագրել են Հ. Չեհաբին և Խուան Լինցը: Առաջանում է մի հարակից, սակայն վերլուծական առումով առանձին խնդիր՝ ժողովրդավարության չավարտված անցումները, երբ որևէ ոչ ժողովրդավարական վարչակարգ անկում է ապրում կամ տապալվում է, և ստեղծվում է «արտակարգ իրավիճակների ժամանակավոր վարչակարգ», որը հետաձգում է ժողովրդավարական ընտրություններն անորոշ ժամանակով, հիմնավոր փոփոխություններ անելու համար: Տե՛ս Յոսսի Շեյն և Խուան Լինց, «Պետությունների միջև. Ժամանակավոր կառավարություններ և ժողովրդավարության անցումներ» (Yossi Shain and Juan J. Linz, *Between States: Interim Governments and Democratic Transitions* (New York: Cambridge University Press, 1995)): Ալֆրեդ Ստեփանը՝ որպես «Ամերիկյան դիտորդ» մարդու իրավունքների պաշտպանության խմբի անդամ, մշտապես ստիպված է եղել հորդորել ԱՄՆ կառավարության վարչակազմի պաշտոնյաներին՝ չարժեզրկել «ժողովրդավարություն» բառը՝ այն հավասարեցնելով զուտ «ընտրություններ» երևույթին, որը տիրում է այնպիսի երկրներում, ինչպիսիք են՝ Էլ Սալվադորը, Գվատեմալան ու Հունդուրասը, որտեղ զինվորականությունը իրականացրել է իր զգալի ոչ ժողովրդավարական արտոնություններն անգամ ընտրություններից հետո:

3. *Ժողովրդավարության ավարտված անցումների և կայացած ժողովրդավարությունների* մեր սահ-



Միևնույն ժամանակ հենց այն պատճառով, որ ավարտված ժողովրդավարական անցումները գործնականում կազմում են բոլոր հիմնական քաղաքական փոխակերպումների փաստացի փոքր մասը, և քանի որ մենք հավատարիմ ենք մնում այն նորմատիվային դիրքորոշմանը, որ ավարտված անցումները ժողովրդավարությանն ու ժողովրդավարության կայացումները ցանկալի են, այս գիրքը հստակորեն նվիրվում է այն պայմանների ու քայլերի վերլուծությանը, որոնք հնարավոր են դարձնում նման արդյունքները: Ավարտված անցումները ժողովրդավարությանն ու կայացած ժողովրդավարություններն այս գրքի գլխավոր կախյալ փոփոխականներն են: Փորձելով այս գրքում ուշադրություն հրավիրել սկզբունքորեն «հավանական» ռազմավարություններին՝ մենք միաժամանակ ուշադրություն կհրավիրենք նաև այն խնդիրների վրա, ինչպես նաև այն հանգամանքի վրա, թե ինչպես են հաջող էլքերը մեծ չափով պայմանավորվում, իսկ որոշ դեպքերում՝ խոչընդոտվում սոցիալ-տնտեսական գործոններով կամ նույնիսկ ճգնաժամով և պետության բացակայությամբ:

Մեր գրքում հետազոտություններն ու բացատրությունները հետևյալ կառուցվածքն ունեն: 1-ին մասը, որը նվիրված է ընդհանուր տեսական նկատառումներին, թեև ուղակի առնչություն ունի գրքի մնացած մասերին, այնուամենայնիվ, կարող է ընթերցվել որպես տեսական դրույթների առանձին համախումբ: Գլուխ 1-ն սկսում ենք՝ սահմանելով ու քննարկելով մեր երկու կախյալ փոփոխականները, որոնք են՝ *ավարտված անցումները ժողովրդավարությանը* և *կայացած ժողովրդավարությունները*: Այնուհետև մենք արծարծում ենք այն հարցը, թե ժողովրդավարությունների կայացման գործում ինչ դեր են ունենում հինգ ոլորտները, որոնք փոխադարձաբար ազդում են միմյանց վրա: Այս՝ միմյանց փոխազդող և ամրապնդող ոլորտներն են՝ աշխույժ քաղաքացիական հասարակությունը, համեմատաբար ինքնուրույն քաղաքական հասարակությունը, օրենքի գերակայությունը, գործուն պետությունը և տնտեսական հասարակությունը (նկատի ունեցեք, ոչ պարզապես կապիտալիստական շուկան):<sup>4</sup> 1-ին մասի մնացած հատվածում մենք դիտարկում ենք յոթ անկախ ընդհանրական փոփոխականներ, որոնք մեր պնդմամբ՝ առանձնահատուկ կերպով կարևոր են ժողովրդավարության անցման ու կայացման գործընթացների վերլուծության համար, և առաջ ենք քաշում դատողություններ այս փոփոխականների վերաբերյալ:<sup>5</sup> Մեր փոփոխականներից երկուսն այնքան կարևոր են, որ նրանց կանվանենք *մակրոփոփոխականներ* ու նրանց կհատկացնենք մի ողջ գլուխ:

մանումների էքստենսիվ քննարկում կլինի Գլուխ 1-ում:

4. Թեև բերում ենք ժողովրդավարության մի սահմանում, որը ներառում է կայացած ժողովրդավարություն համարվելու նվազագույն պահանջները, մենք նկատի չունենք որևէ նպատակադրված վերջնական պետություն, որովհետև յուրաքանչյուր կայացած ժողովրդավարությունում անխուսափելիորեն ծագում է հինգ ոլորտների միանգամայն առանձնահատուկ փոխազդեցություն: Անգամ կայացած ժողովրդավարություններն իրենց որակով ու մակարդակով կարող են զգալիորեն տարբերվել միմյանցից ավելի մեծ չափով ապահովելով հասարակության անդամների հավասարությունն ու մասնակցությունը:

5. Լավ է, թե վատ, մենք մեզ չենք սահմանափակի այս շրջանակի «պրոկրոստյան մահճով»: Պատմության առանձնահատկությունները նույնպես կարևոր են, և ուստի անհրաժեշտության դեպքում մենք կքննարկենք որոշ փոփոխականների դերը (ինչպիսիք են՝ *դեկավարությունը* և *ժամանակի ընտրությունը*), որոնք չեն ենթարկվում ընդհանրական դրույթներին, սակայն առանցքային են ցանկացած առանձին օրինակի պատմական վերլուծության համար:

Գլուխ 2-ում քննարկում ենք մեր առաջին անկախ մակրոփոփոխականը, որը մինչ օրս լրջորեն վերլուծված չէ այն գրականության մեջ, որը նվիրված է պետության, ազգ(եր)ի և ժողովրդավարացման միջև առկա փոխհարաբերությունների խնդիրներին: Այս փոփոխականն անվանում ենք *պետութենականություն*: Մենք ցույց ենք տալիս, թե ինչու ինքնիշխան պետության գոյությունը նախապայման է ժողովրդավարության և, անշուշտ, քաղաքացիական հասարակության համար: Այնուհետև գնահատում ենք ժողովրդավարության համար պետական շինարարության և ազգակերտման տարբեր ռազմավարությունների նշանակությունը, երբ պետությունը և ազգը չեն համընկնում, կամ երբ ազգային պետությունն ու ժողովրդավարությունն ունեն փոխհակասող տրամաբանություններ, մի բան, որ շատ հաճախ է պատահում:

Գլուխներ 3-ում և 4-ում քննարկում ենք մեր մյուս մակրոփոփոխականը. այն է՝ նախորդ վարչակարգի տիպը: Քանի որ մեր փաստարկները ժողովրդավարության գնահատման հարցում «հանգամանքներից կախվածության» մոտեցման օգտին են, ուստի նպատակահարմար է վերանայել արդի ոչ ժողովրդավարական այն հիմնական տիպերը, որոնցից սկսվել են տարբեր անցումների փորձերը: Դրա համար Գլուխ 3-ում մենք նախ ստեղծում ենք ժամանակակից ոչ ժողովրդավարական վարչակարգերի վերանայված տիպաբանությունը՝ ամբողջատիրական, հետամբողջատիրական, ավտորիտար և սուլթանական: Այնուհետև Գլուխ 4-ում փորձում ենք հնարավորինս հստակեցնել, թե վարչակարգի այս չորս տիպերից յուրաքանչյուրի համար ժողովրդավարությանն անցման որ ուղիներն են հնարավոր կամ անհնար: Նաև քննարկում ենք, թե ինչ կանխատեսելի *խնդիրներ* պետք է լուծվեն կայացած ժողովրդավարության այս հինգ ոլորտներից յուրաքանչյուրի շրջանակներում, մինչև որ հասարակարգը, սկսելով վարչակարգի չորս կատարելատիպերից որևէ մեկին նմանվելու մեկնարկային դիրքից, թերևս կարողանա դառնալ կայացած ժողովրդավարություն:

Գլուխ 5-ում քննարկում ենք մեր մյուս հինգ անկախ փոփոխականները: Դրանցից երկուսի կենտրոնում գործող անձինք են, իսկ երեքի կենտրոնում՝ համատեքստը: Կենտրոնում գործող անձինք ունեցող երկու փոփոխականները վերաբերում են նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգի ղեկավարության հատուկ բազայի հարցին և այն հարցին, թե ով է նախաձեռնում և վերահսկում անցումը: Երեք համատեքստակենտրոն փոփոխականները վերաբերում են միջազգային ազդեցություններին, լեգիտիմության և ճնշման քաղաքատնտեսությանը և սահմանադրության մշակման միջավայրին:

2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում տասնչորս երկրների նկատմամբ կիրառում ենք 1-ին մասում մշակված շրջանակը՝ կատարելով միջտարածաշրջանային և ներտարածաշրջանային վերլուծություն: Այս գրքի համար կատարված հետազոտության ընթացքում մենք միայնակ կամ խմբով բազմիցս այցելել ենք դիտարկված տասներեք երկրներից յուրաքանչյուրը (չհաշված իրավահաջորդ երկրները): Մեզանից մեկը կամ բոլորս միասին հանգամանորեն ուսումնասիրել ենք նաև մի շարք հարակից երկրներ, որոնք գրքում չենք ընդգրկել, ինչպես օրինակ՝ Հարավային Կորեան, Պերուն, Բոլիվիան և Ինդոնեզիան: Ինչո՞ւ են երկրներն այսքան շատ: Ինչո՞ւ չեն ընդգրկվել հարցին առնչվող հնարավոր այլ օրինակներ: Ինչո՞ւ նախընտրեցինք միասնական հեղինակային ձայնը՝ փոխանակ կազմելու խմբագրված մի հատոր, որտեղ հնարավոր կլիներ ներգրավել տարբեր երկրների հատուկ մասնագետների, ովքեր առանձին երկրների մասին, անկասկած, մեզանից ավել-

լի շատ գիտելիքներ ունեն: Այս բոլոր արդարացի հարցերին մեր պատասխանն այն է, որ ժողովրդավարական (և ոչ ժողովրդավարական) քաղաքականության մասին գիտելիքի զարգացման այս փուլում վճռորոշ խնդիրներից մեկը աշխարհի տարբեր տարածաշրջաններում ժողովրդավարացման հիմնախնդիրների գլխավոր տարբերությունների ու նմանությունների հետազոտումն է՝ կիրառելով բավական մանրակրկիտ միջտարածաշրջանային համեմատական վերլուծություն: Մենք կարծում ենք, որ սա լավագույնս կարելի է անել միասնական հեղինակային հայացքով: Ավելին, մենք նաև հավատացած ենք, որ տեղայնացված, ներտարածաշրջանային համեմատական վերլուծությունը հնարավորություն կընձեռնի մեզ ուշադրություն հրավիրելու, և հուսով ենք, բացատրելու այն գլխավոր տարբերությունները, որոնք կարող էին անտեսվել մեկ առանձին երկրին նվիրված մենագրական աշխատության մեջ:

Միջտարածաշրջանային և ներտարածաշրջանային վերլուծության առավելությունները մեկտեղելու նպատակով որոշեցինք ընտրել և անմիջականորեն դիտարկել այն երկրները, որոնք պատկանում են աշխարհի երեք առանձին տարածաշրջանների: Սա իմաստ ունի միայն այն դեպքում, երբ *տվյալ* տարածաշրջանի երկրների մեծ մասում վերջին շրջանում զգալի ջանքեր են գործադրվել ժողովրդավարությանն անցման ուղղությամբ: Սա սահմանափակեց տարածաշրջանների հնարավոր շարքը:<sup>6</sup> Մենք ընտրեցինք Հարավային Եվրոպան, որը 1970-ական թվականներին եվրոպական համայնքի ժողովրդավարական միջուկի ծայրամասում էր, մենք ընտրեցինք Հարավային Ամերիկայի Հարավային Կոնը՝ կապիտալիստական և գաղափարախոսության առումով Արևմուտքի մաս կազմող, սակայն սոցիալապես, քաղաքականապես կամ տնտեսապես առաջավոր ժողովրդավարական շուկայական համայնքից դուրս, և վերջապես՝ հետկոմունիստական Եվրոպան, որը մինչև վերջերս մի համակարգի ներքո էր, որը գաղափարախոսական առումով Արևմուտքի մաս չէր, և որտեղ մեր ենթադրությամբ՝ «իրականում գոյություն ունեցող սոցիալիզմ» առաջ էր բերել շահերի մի ամբողջություն, որը հակասության մեջ էր ապագա ժողովրդավարության շուկայական բնույթի մասին վերջերս հռչակված գաղափարների հետ:

Այս երեք տարաբնույթ տարածաշրջանների շրջանակում մենք որոշեցինք աշխատել երկրների ամբողջ խմբերի հետ այնպես, որ չընտրենք երկրներ՝ որոշակի եզրակացությունների նախապատվություն չտալու կամ կանխավ դատողություններ չանելու համար: Ընտրության առումով ամենադյուրին խումբը Հարավային Եվրոպան էր: Վերջին երեսուն տարվա ընթացքում միայն երեք հարավեվրոպական երկրներ էին սկսել անցումը՝ Իսպանիան, Պորտուգալիան և Հունաստանը, այնպես որ ընդգրկեցինք բոլորը:

Հարավային Ամերիկայում տարածաշրջանային խումբն ընտրվեց ժամանակակից պատմության և գիտական մտքի պահանջով: Չորս համեմատաբար զարգացած երկրներ՝

6. 1990-ական թվականների սկզբին, ըստ այս չափանիշների, բացառվեցին աֆրիկյան և իսլամական տարածաշրջանները: Հարավային Կորեան ու Թայվանը կազմում են մի հետաքրքիր փոքր խումբ: Սակայն տարածաշրջանը պետք է ներառեր այնպիսի երկրներ, ինչպիսիք են՝ Հյուսիսային Կորեան և Չինաստանը, որոնք անգամ չեն ազատականանում, ուր մնաց թե՛ ժողովրդավարանան: Կարծում ենք, որ հարավկորեական և թայվանական անցումները հնարավոր կլինի ուսումնասիրել՝ կիրառելով մեր շրջանակը՝ չնայած իրենց կոնֆուցիական ժառանգությանը: Հարավային Կորեայի և հատկապես Թայվանի համար առավել կարևոր խնդիրներից մեկն, ի դեպ, մեր մակրոփոփոխականներից մեկն է՝ *պետութենականությունը*:

Բրազիլիան, Արգենտինան, Չիլին և Ուրուգվայը, բոլորն էլ ժողովրդավարության անկում են ապրել 1960-ական թվականների վերջին և 1970-ականների սկզբին, և ըստ Գիյերմո Օ'Դոննելի հայտնի աշխատության՝ բոլորն էլ հաստատել են «բյուրոկրատական ավտորիտար վարչակարգեր»: Այս վարչակարգերը թուլացրել են համաժողովրդական կազմակերպությունները, ճնշել են քաղաքացիական հասարակություններին, ղեկավարվել են (ի տարբերություն Հարավային Եվրոպայի երկրների) աստիճանակարգային զինվորական վարչակարգերի կողմից և իրենց ինստիտուցիոնալ ու մշակութային ժառանգությամբ եղել են «նախագահական» և ոչ թե «խորհրդարանական»:<sup>7</sup> Դեռևս 1987թ. այս չորս երկրներից երեքում արդյունքը խիստ անորոշ էր, այնպես որ մենք ունենինք հնարավոր անցումներն ու հնարավոր ձախողումներն ուղղակիորեն դիտելու հնարավորություն:<sup>8</sup>

Հետևումնախատական Եվրոպայում որոշեցինք ներառել այն բոլոր երկրները, որոնք ուղղակիորեն կազմել են խորհրդային ենթահամակարգի մասն այն առումով, որ պատկանել են Վարշավյան դաշինքի անվտանգության գոտուն և ՏԾԽ-ի տնտեսական գոտուն: Մեր խումբը, հետևաբար, ներառում է նախկին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը (ԽՍՀՄ), Լեհաստանը, Հունգարիան, Չեխոսլովակիան, Ռումինիան և Բուլղարիան:<sup>9</sup> Համեմատական վերլուծաբանի խնդիրն ընդհանրություն-

7. Տե՛ս Գիյերմո Օ'Դոննել, «Արդիականացում և բյուրոկրատական ավտորիտարություն. Հարավային Ամերիկայի քաղաքականության ուսումնասիրություններ» (Guillermo O'Donnell, *Modernization and Bureaucratic Authoritarianism: Studies in South American Politics* (Berkeley: Institute of International Studies, Politics of Modernization Series, 1973)) և Դավիդ Քոլլիե, խմբ.՝ «Նոր ավտորիտարությունը Լատինական Ամերիկայում» (David Collier, ed., *The New Authoritarianism in Latin America* (Princeton: Princeton University Press, 1979)): Լատինական Ամերիկայի և Գարիբյան ավազանի ավելի քան երեսուն երկրները որպես մեկ խումբ վերցնելը վերլուծական առումով քիչ իմաստ կունենար և բոլոր դեպքերում դժվար կլիներ մշակելը: Մենք ընդունում ենք, որ տարածաշրջանում հնարավոր կլիներ ընտրել առնվազն երեք տարբեր խմբեր՝ յուրաքանչյուրը թեթևակի տարբերվող սոցիալ-տնտեսական, քաղաքական և աշխարհաքաղաքական խառնուրդով: Դրանք են՝ Անդյան տարածաշրջանային խումբը՝ սոցիալ-տնտեսական առումով ավելի քիչ զարգացած, որը կներմուծեր ընդոծին մշակույթների զգալի բաղադրիչ, Կենտրոնամերիկյան տարածաշրջանային խումբը, որտեղ առավել աչքի կընկնեին քաղաքացիական պատերազմներն ու ԱՄՆ-ի ներգրավվածությունը, կամ Գարիբյան միկրոպետությունները, որոնք նախկինում եղել են բրիտանական գաղութներ, և որոնց մեծամասնությունը տևական խորհրդարանական ժողովրդավարություններ են:

8. 1987թ. Չիլին տնտեսական վերելք էր ապրում, բարձրաստիճան զինվորականությունը միավորվել էր Պինոչետի շուրջը, իսկ ժողովրդավարական ընդդիմությունը պառակտված էր: Արգենտինայում ժողովրդավարությունը 1989թ. չափազանց ռիսկային էր երևում, որովհետև առաջին ժողովրդավարորեն ընտրված նախագահի՝ Ռաուլ Ալֆոնսինի օրոք տեղի ունեցան հինգ խռովություններ՝ կրսոսեր սպաների ղեկավարությամբ, և տասներկու ընդհանուր գործադուլներ: Նրա երդմանակալությունից ի վեր տնտեսությունն ապրում էր գերադաճ, և Ալֆոնսինի ստիպված էր պաշտոնաթող լինել վաղաժամկետ՝ քառսի պատճառով: 1989թ. Բրազիլիայում՝ մի երկրում, որտեղ տիրում է աշխարհում եկամտի ամենաանհավասար բաշխումներից մեկը, բարձրաստիճան զինվորականությունը դեռևս ազդեցիկ էր, ուղղակի նախագահական ընտրություններ դեռևս չէին անցկացվել, և հորիզոնում էր մի ամբողջավար նախագահական թեկնածու՝ իր թիկունքին, ըստ էության, չունենալով ոչ մի կազմակերպված կուսակցություն: Բրազիլիան այս գիրքը գրելու պահին դեռևս մոտ չէ ժողովրդավարության լիարժեք կայացմանը:

9. Այս չափանիշին բավարարող միակ երկիրը, սակայն որը մենք բացառեցինք, Արևելյան Գերմանիան էր, որն իր «երկու պետություն, մեկ ազգ» իրավիճակի շնորհիվ նախընտրեց միավորվել Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության՝ պատրաստի ժողովրդավարական պետության հետ: Հետևաբար, Արևելյան Գերմանիան իսկապես ինքնիշխան ժողովրդավարական պետությանն ան-

ների և տարբերությունների բացահայտումն ու գնահատումն է: Միայն այս եղանակով ենք մենք կարող գնահատել որոշ խնդիրներ, որոնք ընդհանուր են մեր հետազոտած եվրոպական հետկոմունիստական բոլոր երկրների համար, քանի որ նրանք բավական երկար ժամանակ եղել են նախկին Խորհրդային Միության՝ նրանց ընդհանուր քաղաքական, տնտեսական ու գաղափարախոսական համակարգ պարտադրելու ջանքերի թիրախները: Սակայն, չնայած այս ընդհանուր ժառանգությանը, տարածաշրջանում կար և կա հսկայական բազմազանություն: Ընդհանրությունների և տարբերությունների այս տարրերը վերլուծելու և բացատրելու ընթացքում մենք հույս ունենք, որ կնպաստենք համեմատական քաղաքականության մեջ հետկոմունիստական քաղաքականությունը ներառելու խնդրին, ուստի գրքի ավարտին փորձում ենք հետկոմունիստական Եվրոպայի հսկայական խնդիրներին ու բազմազանությանը մոտենալ լիովին համեմատական ու տեսական տեսանկյունից:<sup>10</sup> Այս ընթացքում ստիպված էինք վերաձևակել ու վերախմբավորել ժողովրդավարության անցմանն ու կայացմանը նվիրված գրականությունը, որին ներգրավված ենք եղել 1970-ական թվականների կեսերից: Սրանով է բացատրվում այս գրքի հետկոմունիստական մասն ամենաերկարը դարձնելու մեր համարձակ ու անտրամաբանական թվացող որոշումը (բնագավառ, որտեղ մեր փորձառությունն ու լեզվաբանական ունակությունն ամենացածրն են): Նույնիսկ եթե ոչ բոլոր ընթերցողների, ապա հեղինակների համար այդ ուղևորությունն արժեքավոր եղավ:

Ինչպես վայել է նման ծավալ ունեցող գրքին, եթե նշելու լինենք առավել կարևորները, մենք կիրառել ենք մի շարք տարաբնույթ եղանակներ՝ տիպաբանական վերլուծություն, հարցման արդյունքների վերլուծություն, բովանդակության վերլուծություն, նորինստիտուցիոնալ և հանգամանքներից կախվածության վերլուծություն, որոշ չափով՝ խաղերի տեսություն և էքստենսիվ հարցազրույցներ գլխավոր գործող անձանց հետ: Մեր կարծիքով՝ սա արդի ժողովրդավարացման հասկացութենական ուղղվածությամբ առաջին էմպիրիկ, տարածաշրջանային և միջտարածաշրջանային ուսումնասիրություն է, որը

ցման օրինակ չէ, բացառությամբ 1990թ. մարտի 18-ից հոկտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածի: Ինչ-որ առումով Արևելյան Գերմանիայի՝ այս գրքում չներառվելը հատկապես ցավալի էր, որովհետև Լինցը ծնվել է Գերմանիայում և 1990-91թթ. անց է կացրել Բեռլինի Wissenschaftskollegzu-ում: Գերմանիային մենք հպանցիկ կանդորադատանք, երբ քննարկենք պետութենականության խնդիրը, վարչակարգի «փլուզման» օրինակները և մեր անվանած «տեղեկացնողների գուման» համախտանիշը (սինդրոմ): Ըստ մեր չափանիշների՝ պետք էր դուրս թողնել Հարավսլավիան: Սակայն վերլուծական տեսանկյունից Հարավսլավիան ունի կարևոր համանման գծեր ԽՍՀՄ-ի հետ, ինչպես, օրինակ՝ ազատականացման հաջորդականությունն առանց ժողովրդավարացման, ծայրահեղ դաշնային սահմանադրությունը, որը նոր կյանք ստացավ, երբ հանրապետություններում բազմակուսակցական մրցակցային ընտրություններն անցկացվեցին նախքան կենտրոնում դրանց անցկացվելը, և դրան հետևած պետության կազմալուծումն ու (բացառությամբ Մլոյվենիայի խոշոր) էթնոկրատիաների առաջացումը: Ի հավելումն ԽՍՀՄ-ի մեր վերլուծության՝ մենք հետազոտում ենք պետության կազմալուծման այս ձևի հետևանքները Ռուսաստանի և այնպիսի իրավահաջորդ պետությունների համար, ինչպիսիք են Էստոնիան և Լատվիան, որտեղ քաղաքացիության և ազգայնացնող պետության հարցերը, ի տարբերություն հայրենի պետության, դարձել են կենտրոնական խնդիր: Ալբանիան դուրս է թողնվել, որովհետև այն ոչ միայն չէր մասնակցում Կարշավյան դաշինքին կամ ՏՓՆ-ին, այլև չէր սկսել անցումը ժողովրդավարությանը դեռ այն ժամանակ, երբ մեր հետազոտության մեծ մասն արդեն ավարտվել էր:

10. Տեսական շրջանակը, որը մենք հստակեցնում ենք Մաս 1-ում, և հատկապես՝ ժամանակակից ոչ ժողովրդավարական վարչակարգերի մեր տիպաբանությունը հետկոմունիստական Եվրոպայի հակասությունների վերաբերյալ վերլուծական նոր տեսանկյուն է հուշում :

գրվել է հեղինակային միահամուռ ջանքերով: Ճիշտ այս պատճառով գիրքը տպագրության հանձնելիս սուր կերպով գիտակցում էինք դրան բնորոշ սահմանափակումները: Կասկած չկա, որ գիրքն ավելի լավը կլիներ, եթե ունենայինք ևս հինգ տարի՝ ուսումնասիրելու և մտածելու հետևումունիստական Եվրոպայի մասին և կարգալու այն հիմնարար պատմական ուսումնասիրությունները, որոնք այժմ միայն ընթացքի մեջ են: Սակայն որպես գիտնականներ, որոնք պատասխանատվություն են զգում մեր լայն միջազգային համայնքում համաձայնեցված հետազոտությունների համար, կարծում ենք, որ այս գիրքը հավանաբար ավելի *օգտակար* կլինի, եթե հրատարակվի այս պահին, այնպես որ նոր սերնդի հասարակագետները, պատմաբաններն ու քաղաքական մտածողներն ու ակտիվիստները, որոնք շատ դեպքերում գրում են իրենց առաջին մենագրությունները, կարողանան ստանալ մեր այս նախնական փաստարկներից օգտվելու հնարավորություն: Հույս ունենք, որ մեր հաջորդները կհղկեն, և եթե անհրաժեշտ է, կհերքեն մեր փաստարկները՝ հանուն այն բանի, որ ավելի լավ պատկերացվի ժամանակակից պատմության մեջ առավել ոգևորիչ և դժվարին գործընթացներից մեկը:

Պետք է ընդունել այս գրքի ևս մեկ սահմանափակվածություն: Հասարակագիտության այն տեսակը, որով մենք զբաղվում ենք, և որը մեզ հուզում է, մեկ դար հետո կդառնա նյութ պատմաբանների համար և գուցե այնքան էլ հարիր չլինի ժողովրդավարացման կամ ժողովրդավարության որևէ տեսության: Սա, հավանաբար, անհաջողություն է նրանց համար, ովքեր երագում են հասարակական ֆիզիկայի կամ սոցիալական փոփոխությունների մոդելների մասին, ինչպիսիք առաջարկվել են տնտեսական տեսության մեջ կապիտալիստական շուկայական տնտեսություններն ուսումնասիրողների կողմից: Սակայն ենթադրում ենք, որ այդ մոդելներն էլ պատմության գիրկը կանցնեն: Դա հասարակագիտության ճակատագիրն է: Մեր ուսումնասիրած իրադարձությունները տեղի են ունեցել պատմական ժամանակաշրջանում, առանձնահատուկ հասարակական տարածքներում և առանձնահատուկ պետություններում ու ազգերի մեջ, որոնք գիտենք, որ հավերժ չեն: Մենք պատրաստակամորեն ընդունում ենք մեր աշխատանքի այս բնորոշ սահմանափակությունը: Սակայն կարծում ենք, որ 1970-ական թվականների և քսանմեկերորդ դարի միջև ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների մասին հիմա պատկերացում ստանալն արժեքավոր ու ոգևորիչ նպատակ է: Սա, այնուամենայնիվ, արժեքավոր նյութ է հասարակագետների համար անկախ այն հանգամանքից, թե որքանով ենք մենք կարողացել վերլուծել տասներեք երկրներում տեղի ունեցած իրադարձություններն այն երեք տարբեր տարածաշրջաններում, որտեղ ապրում է մոտ 500 միլիոն մարդ (հեղինակներից մեկը դրանցից մեկի քաղաքացի է):<sup>11</sup>

11. Գրքի մեկ այլ, մեր կարծիքով անհրաժեշտ սահմանափակությունը է այն, որ մեր վերլուծությունը մեկ գրքի սահմաններում հարմարեցնելու համար մենք մեծ չափով սեղմել ենք Հարավային Եվրոպայի և Հարավային Ամերիկայի «ժողովրդավարությանն անցման փուլը», որովհետև, ինչպես պարզ է դառնում բոլոր գրովներում արված մեր նշումներից, մենք և այլ գիտնականներ այդ թեմաներով հրատարակել ենք ընդարձակ մենագրություններ մեկ այլ տեղում: Մենք, իհարկե, նաև ամբողջապես չենք ներկայացրել և վերլուծել որոշ փաստարկներ, որոնք վերջին քսան տարիներին կենտրոնական են եղել մեր գիտական աշխատությունների համար, ինչպես, օրինակ՝ Ճիշտ ժամանակի ընտրությունը, ղեկավարությունը, կյանքը և կորպորատիվը: Մենք, իհարկե, այս գրքում ներառում ենք այդ թեմաներին մեր մոտեցումները:

Այս գիրքն իր ստեղծմամբ շատերին է պարտական, չնայած ունեցած բազմաթիվ սահմանափակումներին: Գրեթե չկա մի երկիր կամ խնդիր, որոնց մասին մեր նախկին կամ ներկայիս ուսանողներից որևէ մեկը մեզ չոգևորեր և արդարացիորեն չքննադատեր մեր ավելի վաղ կատարած վերլուծությունը: Այդ ուսանողներից մեկը Յեյլի համալսարանից է, որտեղ 1978 թ. ժողովրդավարության անկումը գրքի նախաբանը գրելուց անմիջապես հետո մենք մշակել և պարբերաբար դասախոսություններ ենք կարդացել ժողովրդավարությանն անցման և ժողովրդավարության կայացման խնդիրների մասին, մյուսները՝ Խուան Մարչի ինստիտուտից, Կոլումբիայի և Կենտրոնաեվրոպական համալսարանից: Մենք երախտապարտ ենք մեր այն հետազոտող գործընկերներին ամբողջ աշխարհում, ովքեր մեզ հետ միասին կարդացին ժողովրդավարության դասական աշխատությունները և արտահայտեցին իրենց քննադատական կարծիքը ոչ միայն Հարավային Եվրոպայի և Հարավային Ամերիկայի վերաբերյալ, այլև այն մասին, թե ինչի մեջ են նրանք տեսնում խոշոր փոխակերպումների ներուժը, չնայած այն հանգամանքին, որ այդ փոփոխությունները լիարժեք և որոշակի չեն այնպիսի երկրներում, ինչպիսիք են՝ Հարավային Կորեան, Ֆիլիպինյան Կղզիները, Իրանը և Լեհաստանը: Ահա մի քանիսը միայն այն բազմաթիվ մարդկանցից, ում մեծապես երախտապարտ ենք՝ Նանսի Բեքմեո, Ն. Չեհաբի, Պալոմա Ագիլար, Էդ Գիբսոն, Ռոբերտ Ֆիշման, Դանիել Ֆրիդհայմ, Չարլզ ժիլեսպի, Յան Գրոս, Լուիս Էդուարդո Գոնսալես, Ջոնաթան Հարթլին, Միմի Կեք, Ռոբերտ Մարտինես, Գիյերմո Օ'Դոննել, Վելլո Պետտի, Օլեգ Պրոցիկ, Սինդի Սկաչ, Բրայան Սմիթ, Հեկտոր Շամիս, Էվելին Հյուբեր Ստիվենս, Ջոն Ստիվենս և Մարկ Թոմփսոն: Նրանք հարստացրել են մեր աշխատանքն ու մեր կյանքը:

Ցանկանում ենք մեր շնորհակալությունը հայտնել *Wissenschaftskolleg zu Berlin*-ին, որտեղ Լինցն 1990-91թթ. ուներ գիտահետազոտական աշխատանք իրականացնելու համար հատկացված դրամաշնորհի, և որը կազմակերպեց ու անցկացրեց փոքր ծավալի միջազգային գիտաժողով գրքի նախագծի շուրջ: Գիրքը գրելուն նախորդած աշխատանքի համար նպաստավոր հանգամանք էր Լինցի ստացած առաջարկը՝ լինելու «Մաքս Վեբեր» հրավիրված դասախոս Հայդելբերգի համալսարանում: Երկու հեղինակներն էլ գոհունակությամբ նշում են իրենց ստացած գիտական դրամաշնորհները Մադրիդի առաջավոր հասարակագիտական «Խուան Մարչ» ինստիտուտում: Այսպիսի լայն ընդգրկում ունեցող գիրք գրելու մեր խենթ համարձակությունը քաջալերվում էր գործընկերների կողմից ու նրանց խորհուրդներով, որ ստացանք՝ մասնակցելով «*Ժողովրդավարության կայացման քաղաքականությունը Հարավային Եվրոպայում*» (*Politics of Democratic Consolidation in Southern Europe*) բազմաձևակ նախագծին՝ Ռիչարդ Գյունտերի, Պ. Նիկիֆորոս Դիամանդուրոսի և Հանս Յուրգեն Պուլիեի խմբագրությամբ, և Լարրի Դայմոնդի ու Սեյմուր Մարտին Լիպսեթի հետ Լինցի համախմբագրական աշխատանքին մեկ այլ բազմահատոր նախագծում՝ «*Ժողովրդավարությունը զարգացող երկրներում*» (*Democracy in Developing Countries*): Ստեփանը ցանկանում է շնորհակալություն հայտնել երկու բազմամյա, բազմահատոր նախագծերի իր գործընկերներին՝ մեկն Արևելք-Արևմուտք փոխակերպման վերաբերյալ, որը համակարգում էր Ադամ Պրժևորսկին և հրատարակվեց «*Կայուն ժողովրդավարություն*» (*Sustainable Democracy*) վերնագրով, իսկ մյուսը՝ Գիյերմո Օ'Դոննելի, Ֆիլիպ Շմիտթերի և Լուուրենս Ուայթհեդի խմբագրությամբ, որոնց արդյունքում ստեղծ-

վեց նրանց «Անցումներ ավտորիտար իշխանությունից» (*Transitions from Authoritarian Rule*) աշխատությունը:

Ալֆրեդ Ստեփանը ցանկանում է նաև շնորհակալություն հայտնել Օքսֆորդի Սբ. Էնթոնի քոլեջին, որտեղ նա ավագ անդամ էր, 1993թ. իրեն հյուրընկալելու համար՝ Թիմըթի Գարտոն Աշին, Արչի Բրաունին և Ալեքս Պրավդային, ովքեր օգնեցին այս գրքի վաղ տարբերակների փակ ընթերցումներով: Ամբողջ աշխարհում մեզ մեծապես օգնած այլ ընթերցողների թվում են Յիցհակ Բրադնին, Լասլո Բրուստը, Ռիչարդ Գյունտերը, Յանոշ Բիշը, Վիկտոր Օսիատինսկին, Պաուլո Սերխիո Պինեյրոն, Աննա Սելինին և Մամուել Վալենսուելան:

Ռիչարդ Ռոուզն արժանի է մեր հատուկ շնորհակալությանը այն բանի համար, որ Վիեննայի Պոլ Լագարսֆելդ ընկերության հետ միասին պատրաստել է եզակի տվյալների մի շտեմարան՝ նախկին կոմունիստական երկրներում քաղաքական ու տնտեսական փոփոխությունների և այդ փոփոխություններին հասարակական արձագանքի ուսումնասիրության համար: Մեր վերլուծությունները մեծապես հենվել են այդ հարցումների տվյալների վրա (թեև դրանց մեկնաբանության պատասխանատվությունն ամբողջովին մերն է), որոնցից նա մեծահոգաբար թույլ է տվել կատարել ծավալուն մեջբերումներ: Նույնը վերաբերում է մերձբալթյան և այլ երկրների մասին հարցումների տվյալներին, որոնցից օգտվելու հնարավորություն մեզ ընձեռել է Հանս-Դիտեր Կլիգեմանը, և որոնց հեղինակներին հղումներ են արվել տարբեր գլուխներում: Մենք հատկապես երախտապարտ ենք Սարթա Լագոսին, որը մեզ համար հասանելի դարձրեց առաջին «Լատինո բարոմետրի» դեռ չհրատարակված տվյալները: Հանրային կարծիքի ուսումնասիրությունը մեր կարծիքով՝ առանցքային է ժողովրդավարությունների ուսումնասիրության համար, և մենք այստեղ ընդունում ենք այդ աշխատանքի կարևորությունը մեր բնագավառում կատարված ու կատարվող աշխատանքների համար և հույս հայտնում, որ ապագայում մենք կարող ենք ունենալ «ժողովրդավարության համաշխարհային բարոմետր»:

Բազմաթիվ նախագահներ, վարչապետեր, նախարարներ և ընդդիմության առաջնորդներ ու ժողովրդավարությանն անցման հարյուրավոր խոշոր ընդդիմադիրներ ու կողմնակիցներ համաձայնեցին երկարատև հարցազրույցների, ինչի համար մենք երախտապարտ ենք: Նրանց թվում էին ընդդիմադիր արհմիութենական առաջնորդներ, ովքեր իրենց երկրներում դարձան նախագահներ կամ նախագահի թեկնածուներ, ինչպես օրինակ՝ Լեհաստանում՝ Լեխ Վալենսան և Բրազիլիայում՝ Լուիս Իգնասիո դա Սիլվան («Լուլա»), իշխող նոմենկլատուրայի անդամներ կամ իշխող գինվորականության ներկայացուցիչներ, ովքեր ջատագովում և նախագծում էին իրենց երկրների սկզբնական ազատականացումը, ինչպես օրինակ՝ Ալեքսանդր Յակովլևը՝ նախկին Խորհրդային Միությունից և գեներալ Գոլբերի դո Կուտոն է Սիլվան՝ Բրազիլիայից, քաղաքական առաջնորդներ, ովքեր ստեղծեցին պատմական դաշինքներ, ինչպես օրինակ՝ Իսպանիայի նախկին վարչապետ Ադոլֆո Սուարեսը և Ուրուգվայի նախագահ Խուլիո Մարիա Մանգինետտին, խոշոր գիտնականներ, ովքեր նոր ժողովրդավարություններում դարձան քաղաքացիական հասարակության ընդդիմության տեսաբաններ և ի վերջո՝ քաղաքական առաջնորդներ, ինչպես օրինակ՝ Բրոնիսլավ Գերեմեկը Լեհաստանում և Ֆերնանդո Էնրիկե Կարդոսոն՝ Բրազիլիայում, և առաջնորդներ, ովքեր փորձեցին ժողովրդավարոեն հաղթահարել անցյալի ժառանգությունները դատավարությունների անցկացման միջոցով, ինչպես



օրինակ՝ «անհետացածների» համար պատասխանատու զինվորականների դատավարությունները, որոնք կազմակերպել էր Արգենտինայի նախկին նախագահ Ռաուլ Ալֆոնսինը: Համապատասխան տեղերում և հղման թույլտվություն ունենալու դեպքում մենք գրքում հատուկ բերել ենք այս և այլ հարցազրույցների մանրամասները:

Ալֆրեդ Ստեփանը խորին շնորհակալություն է ցանկանում հայտնել «Ֆորդի» հիմնադրամին և Նյու Յորքի «Կարնեգի ընկերությանը», որոնց առատաձեռն գիտահետազոտական դրամաշնորհները նրան հնարավորություն տվեցին իրականացնելու լայն հետազոտություններ անմիջապես բոլոր երեք տարածաշրջաններում, հատկապես հետկոմունսիտական Եվրոպայում 1991-93թթ.: Նա ցանկանում է նաև շնորհակալություն հայտնել Կոլումբիայի համալսարանին և Կենտրոնական եվրոպական համալսարանին, որտեղ նրան խրախուսել են դասավանդել, հետազոտել և գրել հիմնական համալսարանական վարչական պարտականություններին զուգընթաց: Մեկ անգամ ևս մեզ համար հաջողություն էր աշխատելը Ջոնս Հոպկինսի համալսարանի հրատարակչությունից Հենրի Թոմի հետ: Շնորհակալություն ենք հայտնում Քեն Իտոնին իր մանրամասն անվանացանկի համար:

Այս գիրքը գրելու և խմբագրելու համար պահանջվում էր երկար օրերի ու հատկապես գիշերների համատեղ աշխատանք Բեռլինում, Բրազիլիայում, Բուդապեշտում, Նյու Հեյվընում, Նյու Յորքում, Մադրիդում, Թայբեյում և Վարշավայում:

Մենք այս գիրքը նվիրում ենք մեր գործընկերներ և համախոհներ Ռոսիո դե Թերանին և Նենսի Լեյզ Ստեփանին:

*Մաս 1*

*Տեսական ակնարկ*



## Ժողովրդավարությունը և ժողովրդավարության ոլորտները

ԳՐՔԻ ԳԼՈՒԽ 1-ՈՒՄ քննվում է այն, թե տարբեր ոչ ժողովրդավարական վարչակարգերի բնույթն ինչպես է ազդում կամ ինչպես չի ազդում այն ուղիների վրա, որոնք կարող են ընտրվել ժողովրդավարական վարչակարգին անցումն ավարտելու համար: Քննվելու է նաև նախկին ոչ ժողովրդավարական վարչակարգերի տիպերի նշանակությունն այն պոտենցիալ խնդիրների համար, որոնք անհրաժեշտ է լուծել, մինչև որ այդ նորերուկ ժողովրդավարական վարչակարգերը հնարավոր լինի կայացած համարել:

Հարցի այդպիսի ձևակերպման պարագայում փաստարկն ակնբերորեն պահանջում է սահմանել «ավարտված անցում ժողովրդավարության» և «կայացած ժողովրդավարություն» արտահայտությունները: Այս կամ այն երկիրն ի՞նչ չափով է մոտեցել ժողովրդավարության իր անցումն ավարտված համարելուն. սա հիմնավորելու փորձ կատարելիս գրքում որպես հիմք օգտագործվելու է հետևյալ սահմանումը.

«Անցումը ժողովրդավարությանը համարվում է ավարտված, երբ ընտրված կառավարություն կազմվելու համար անհրաժեշտ քաղաքական ընթացակարգերի շուրջ ձեռք է բերվել բավարար համաձայնություն, երբ որևէ կառավարություն իշխանության է գալիս որպես ազատ և համաժողովրդական քվեարկության անմիջական արդյունք, երբ այդ կառավարությունը դե ֆակտո օժտված է նոր քաղաքականություն մշակելու լիազորությամբ, և երբ նոր ժողովրդավարությունից ծնունդ առած գործադիր, օրենսդիր և դատական իշխանություններն ստիպված չեն իշխանությունը դե յուրե կիսել այլ կառույցների հետ»:

Այս աշխատանքային սահմանումից պետք է, որ պարզ դառնա, թե ինչու են ժողովրդավարության կողմնակիցներն ու տեսաբանները պնդում, որ անհրաժեշտ է տարբերակել *ազատականացում* և *ժողովրդավարացում* հասկացությունները: Ոչ ժողովրդավարական միջավայրում *ազատականացումը* կարող է առաջ բերել քաղաքական և սոցիալական փոփոխությունների մի խառնուրդ, ինչպես օրինակ՝ լրատվամիջոցների ավելի մեղմ գրաքննություն, աշխատավորների ինքնուրույն նախաձեռնությունների կազմակերպման համար որոշ չափով ավելի մեծ հնարավորության ընձեռում, անհատներին որոշ իրավական երաշխիքների տրամադրում, օրինակ՝ անձի անձեռնախելիություն (*habeas corpus*), քաղաքական բանտարկյալների մեծ մասի ազատ արձակում, աքսորյալների վերադարձ, թերևս նաև եկամուտների բաշխումը բարելավվելուն ուղղված միջոցառումներ և որ առավել կարևոր է՝ ընդդիմության հանդուրժում:

*Ժողովրդավարությունը* տանում է ազատականացման, սակայն այն ավելի լայն և գուտ

քաղաքական հասկացություն է: Ժողովրդավարացումը պահանջում է կառավարության ղեկին տիրանալու իրավունքի բաց վիճարկում, իսկ դա իր հերթին պահանջում է ազատ մրցակցային ընտրություններ, որոնց արդյունքում էլ որոշվում է, թե ով պետք է կառավարի: Հիմնվելով այս սահմանումների վրա՝ ակնհայտ է դառնում, որ ազատականացում կարող է լինել առանց ժողովրդավարացման:<sup>1</sup>

Ժողովրդավարությանն անցման ավարտի ինչպիսին լինելը պարզելու մեր քննությունն օգնում է շեշտել երկու լրացուցիչ հարց: Առաջին. հնարավոր է՝ սկսվեն անցումային իրավիճակներ, որոնք երբեք էլ չավարտվեն, անգամ եթե իշխանության գլուխ չանցնի որևէ նոր ավտորիտար վարչակարգ: Մեր սահմանումն օգնում է զգուշանալ «ընտրութենապաշտության մոլորությունից», այսինքն՝ այն բանից, որ ժողովրդավարության անհրաժեշտ պայմանը՝ ազատ ընտրությունները, դիտվում են որպես ժողովրդավարության բավարար պայման:<sup>2</sup> «Ընտրութենապաշտության» ոչ անցումային իրավիճակների առավել տարածված օրինակներ կարելի է գտնել այն դեպքերում, երբ նախկինում տիրապետող զինվորականների իշխանությունը (օր.՝ 1980-ական թվականներին Գվատեմալայում) կառավարության անմիջական ղեկը զիջելու միջոցով իրեն է վերապահում այնքան լայն, բացառիկ իրավունքներ, որ ժողովրդավարական եղանակով ընտրված կառավարությունը

1. Մտահայեցողական այն շփոթությունից, թե Գորբաչովն ինչ էր անում կամ ինչ չէր անում «գլխատու»-ով ու «պերեստրոյկա»-ով, մեծ մասամբ հնարավոր կլիներ խուսափել, եթե այդ երկու հասկացությունների մասին լինեի ավելի հստակ պատկերացում: Ազատականացման և ժողովրդավարացման միջև տարբերության վերն արված դիտարկումը վերցվել է Ալֆրեդ Ստեփանի «Ռազմական քաղաքականության վերախմբավորում. Բրազիլիա և Հարավային Կոնի երկրներ» գրքից (Alfred Stepan, *Rethinking Military Politics: Brazil and the Southern Cone* (Princeton: Princeton University Press, 1988), chap. a): *Տե՛ս նաև* Գիլերմո Օ'Դոննել և Ֆիլիպ Շմիտթեր, «Անցում ավտորիտար իշխանությունից, նախնական եզրակացություններ անկայուն ժողովրդավարական վարչակարգերի մասին» (Guillermo O'Donnell and Philippe C. Schmitter, *Transitions from Authoritarian Rule: Tentative Conclusions about Uncertain Democracies* (Baltimore: Johns Hopkins University Press, 1986), 7–11), Ադամ Պրծնոսկի, «Ժողովրդավարությունը և շուկան. քաղաքական և տնտեսական բարեփոխումներ Արևելյան Եվրոպայում և Լատինական Ամերիկայում» (Adam Przeworski, *Democracy and the Market: Political and Economic Reforms in Eastern Europe and Latin America* (New York: Cambridge University Press, 1991), chap. 2), Ջուզեպպե դի Պալմա, «Ժողովրդավարության ստեղծումը. ակնարկ ժողովրդավարությանն անցման մասին» (Giuseppe di Palma, *To Craft Democracies: An Essay on Democratic Transitions* (Berkeley: University of California Press, 1990), esp. 81–89), և Սեմյուել Փ. Հանթինգտոն, «Երրորդ ալիքը. ժողովրդավարացումը քսաներորդ դարավերջին» (Samuel P. Huntington, *The Third Wave: Democratization in the Late Twentieth Century* (Norman: University of Oklahoma Press, 1991), 9):

2. «Ընտրականությունը» կամ այն, ինչ անվանում ենք «ընտրականական մոլորություն», ցայտուն կերպով արտահայտվեց Կենտրոնական Ամերիկայի մասին վերջին քննարկումներում: Տե՛ս Թերրի Կարլ, «Համաձայնության պարտադրո՞ւմ. ընտրականությունն ընդդեմ ժողովրդավարացման էլ Մավադորում» (Terry Karl, *Imposing Consent? Electoralism vs. Democratization in El Salvador*), Փոլ Վ. Դրեյքի և Էդուարդո Սիլվայի խմբ.՝ «Ընտրությունները և ժողովրդավարացումը Լատինական Ամերիկայում, 1980–1985թթ.» (Paul W. Drake and Eduardo Silva, eds., *Elections and Democratization in Latin America, 1980–1985* (San Diego: Center for Iberian and Latin American Studies, University of California, San Diego, 1986), 9–36): *Տե՛ս նաև* Աբրահամ Ֆ. Լովենտալ, խմբ.՝ «Ժողովրդավարության արտահանում. Միացյալ Նահանգները և Լատինական Ամերիկան» (Abraham F. Lowenthal, ed., *Exporting Democracy: The United States and Latin America* (Baltimore: Johns Hopkins University Press, 1991) և Թոմաս Քարոթերս, «Հանուն ժողովրդավարության, ԱՄՆ քաղաքականությունը Լատինական Ամերիկայի նկատմամբ Ռեյգանի նախագահության տարիներին» (Thomas Carothers, *In the Name of Democracy: U.S. Policy toward Latin America in the Reagan Years* (Berkeley: University of California Press, 1991):

նույնիսկ դե յուրե անկախ չի լինում: Երկրորդ. վերը բերված սահմանման մեջ ներառելով ժողովրդավարական կառավարություն ստեղծելու համար հատուկ ինստիտուցիոնալ կազմավորման շուրջ համաձայնության գալու անհրաժեշտությունը, զգուշավորություն է ցուցաբերվում ժողովրդավարական քաղաքական դաշտում որոշումների ընդունման հարցում: *Ժողովրդավարների միջև* տարաձայնություններն այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են միացյալ, թե՞ դաշնային պետության կազմավորումը, կառավարման միապետակա՞ն, թե՞ հանրապետական ձևի հաստատումը կամ ընտրական համակարգի տեսակի ընտրությունը, կարող են հարցեր հարուցել ծնունդ առնող ժողովրդավարական կառավարության օրինականության, որոշումների ընդունման գործընթացի և, անշուշտ, քաղաքական համակարգի ապագայի մասին: Ժողովրդավարության ստեղծման համար անհրաժեշտ հիմնական ընթացակարգերի վերաբերյալ այդպիսի ինստիտուցիոնալ անորոշությունը ոչ միայն կարող է անավարտ թողնել անցումը ժողովրդավարության, այլև հետաձգել ժողովրդավարության ցանկացած կայացում: Նկատի չունենք այն, որ վաղ անցումային շրջանում և սահմանադրության մշակման գործընթացում չի կարող լինել տարաձայնություն առավել ցանկալի ժողովրդավարական ինստիտուտների ընտրելու հարցի շուրջ: Սա բնականոն տարաձայնություն է: Սակայն քաղաքական վերնախավի և բնակչության մեծամասնության միջև ժողովրդավարական ինստիտուտների շուրջ խոր և շարունակական որևէ հակամարտություն ու երկակիություն առանց սահմանված ինստիտուտներին հարմարվելու որևէ նշանի, իհարկե, նպաստավոր չէ ժողովրդավարության կայացման համար: Դա, հետևաբար, տարաձայնություն է ոչ միայն ժողովրդավարության կարևորության ըմբռնման, այլ նաև ցանկացած ժողովրդավարական վարչակարգին բնորոշ ինստիտուտների հարցում, ինչը կարող է դժվարացնել ժողովրդավարության կայացումը:

Հավելյալ քաղաքական և մտավոր առավելություն ես ստանում, երբ հստակ պատկերացնում ես, թե ինչ է պահանջվում *անցումն* ավարտված համարելու հնարավորության համար: Ոչ ժողովրդավարական իշխանության կրողները հաճախ պնդում են, որ իրենց ներմուծած որոշակի ազատականամետ փոփոխություններն ինքնին բավարար են ժողովրդավարության համար: Անցումն իրականում ավարտված համարելու հարցում հստակ չափորոշիչ կիրառելը ժողովրդավարական ընդդիմության համար ավելի դյուրին է դարձնում մատնացույց անել իր ներազգային և միջազգային դաշնակիցներին, ինչպես նաև ոչ ժողովրդավարական վարչակարգին, թե ինչ լրացուցիչ անխուսափելի փոփոխություններ դեռևս պետք է կատարել, եթե, իհարկե, այդպիսիք կան: Նման չափորոշիչը նաև խիստ օգտակար է այն հանգամանքներում, երբ նախկին ոչ ժողովրդավարական վարչակարգն անկում է ապրել կամ տապալվել է, և իշխանության է եկել մի անցումային կառավարություն: Այդպիսի պահերին սովորաբար լինում են խանդավառություն, արմատական բարեփոխումներ և արձակվում են տարերային հրամաններ: Սակայն եթե չկա ժողովրդավարությանն անցման համար պահանջվող բոլոր քայլերն արագ ավարտելու մտադրություն, ապա «Ժամանակավոր» անցումային կառավարությունը կարող է դառնալ մշտական:<sup>3</sup>

3. Անցումային կառավարություններն ավելի մանրամասն քննարկվում են Գլուխ 5-ում: Նման կառավարությունների ավելի լայն դիտարկման համար տե՛ս Յոսսի Շեյն և Խուան Ջ. Լինց, «Անցումային

Շատ դեպքերում ժողովրդավարությանն անցումն ավարտելուց հետո դեռևս մնում են լուծման կարոտ շատ խնդիրներ, պայմաններ, որոնք պետք է հաստատվեն, և վերաբերմունք ու սովորություններ, որոնք պետք է մշակվեն նախքան ժողովրդավարությունը հնարավոր կլինի համարել կայացած: Ուրեմն որո՞նք են կայացած ժողովրդավարության բնորոշ գծերը: Շատ գիտնականներ, առաջարկելով կայացած ժողովրդավարության սահմանումներ, թվարկում են վարչակարգի այն բոլոր բնորոշ գծերը, որոնք *ընդհանուր առմամբ* բարելավում են ժողովրդավարության *որակը*: Փոխաբերելով գրքում հեղինակները կողմ են կայացած ժողովրդավարության ավելի նեղ, սակայն այնպիսի սահմանման, որը, այդուհանդերձ, համակցում է վարքագծային, վերաբերմունքային և սահմանադրական հարթությունները: Ըստ էության, կայացած ժողովրդավարություն ասելով, հասկացվում է մի քաղաքական իրավիճակ, որտեղ ժողովրդավարությունը, մի խոսքով, դարձել է «հնարավոր լավագույն տարբերակը»:<sup>4</sup>

Վարքագծային առումով ժողովրդավարությունը դառնում է հնարավոր լավագույն տարբերակը, երբ ոչ մի նշանակալի քաղաքական խումբ լրջորեն չի փորձում տապալել ժողովրդավարական վարչակարգը կամ կապերը խզել պետության հետ: Այդպիսի իրավիճակներում ժողովրդավարությանն անցնելու հետևանքով առաջացած նորընտիր կառավարության ուշադրությունը գրավող միակ խնդիրն այլևս ժողովրդավարության անկումից խուսափելը չի դառնում: Վերաբերմունքային առումով ժողովրդավարությունը դառնում է հնարավոր լավագույն տարբերակը, երբ անգամ քաղաքական և տնտեսական ծանր ճգնաժամի պայմաններում մարդկանց ճնշող մեծամասնությունը հավատում է, որ ցանկացած հետագա քաղաքական փոփոխություն պետք է ծրագրվի ժողովրդավարական բանաձևերի սահմաններում: Սահմանադրորեն ժողովրդավարությունը դառնում է միակ հնարավոր լավագույն տարբերակը, երբ հասարակարգում բոլոր դերակատարներն ընտելանում են այն փաստին, որ քաղաքական բախումը հարթվելու է ըստ սահմանված նորմերի, և որ այդ նորմերի խախտումները, հավանաբար, և՛ անարդյունավետ են, և՛ ծախսատար: Մի խոսքով, ժողովրդավարությունը կայանալով դառնում է ընդունված կարգ և՛ խորապես յուրացված սոցիալական, ինստիտուցիոնալ բնագավառներում, և՛ անգամ հոգեբանական առումով, ինչպես նաև հաջողության հասնելու հաշվարկներում:

կառավարություն և ժողովրդավարություն. անցում մի վիճակից մյուսը» (Yossi Shain and Juan J. Linz, *Between States: Interim Governments and Democratic Transitions* (New York: Cambridge University Press, 1995), esp. 28-40):

4. Ժողովրդավարության կայացման հասկացության մասին այլ դիտարկումների համար տե՛ս Սքոթ Մեյնուրնիգի, Գիյերմո Օ'Ռոննելի և Ջ. Սեմյուել Վալենսուելայի խմբագրությամբ «Հարցեր ժողովրդավարության կայացման բնագավառի մասին. նոր հարավամերիկյան ժողովրդավարական վարչակարգերը համեմատական տեսանկյունից» գիրքը (Scott Mainwaring, Guillermo O'Donnell, and J. Samuel Valenzuela, eds., *Issues in Democratic Consolidation: The New South American Democracies in Comparative Perspective* (Notre Dame, Ind.: University of Notre Dame Press, 1992)): Հասկացության առավել մանրամասն դիտարկման համար տե՛ս նույն հատորում Ջ. Սեմյուել Վալենսուելա, «Ժողովրդավարության կայացումը հետանցումային միջավայրերում. հասկացություն, գործընթաց և նպաստող հանգամանքներ» (J. Samuel Valenzuela, "Democratic Consolidation in Post-Transitional Settings: Notion, Process, and Facilitating Conditions", 57-104): Տե՛ս նաև դի Պալմա, «Ժողովրդավարական վարչակարգերի ստեղծումը» (di Palma, *To Craft Democracies*, 137-55): «Հնարավոր լավագույն տարբերակը» ("the only game in town") դիպուկ արտահայտության համար պարտական ենք Ջուզեպպե դի Պալմային:

Հետևաբար, կայացած ժողովրդավարության մեր աշխատանքային սահմանումը հետևյալն է.

- Վարքագծային առումով ժողովրդավարական վարչակարգը տվյալ տարածքում համարվում է կայացած, երբ ոչ մի նշանակալի ազգային, սոցիալական, տնտեսական, քաղաքական կամ ինստիտուցիոնալ դերակատար չի ծախսում զգալի ռեսուրսներ՝ փորձելով հասնել իր նպատակներին ոչ ժողովրդավարական վարչակարգ ստեղծելու միջոցով կամ պետությունից անջատվելու նպատակով չի դիմում բռնության կամ օտարերկրյա միջամտության:

- Վերաբերմունքային առումով ժողովրդավարական վարչակարգը համարվում է կայացած, երբ ըստ գերակշռող հասարակական կարծիքի՝ մարդիկ ունեն այն հավատամքը, որ այնպիսի հասարակությունում, ինչպիսին իրենցն է, ժողովրդավարական ընթացակարգերն ու ինստիտուտները դառնում են համատեղ կյանքը կառավարելու առավել ճիշտ եղանակը, և երբ համակարգի դեմ ուղված այլընտրանքային շարժումները շատ չնչին աջակցություն են ստանում կամ այս կամ այն չափով մեկուսացած են ժողովրդավարությանը համակիր ուժերից:

- Սահմանադրական առումով ժողովրդավարական վարչակարգը համարվում է կայացած, երբ ինչպես կառավարական, այնպես էլ ոչ կառավարական ուժերն ամբողջ երկրի տարածքում ենթակա են դառնում նոր ժողովրդավարական գործընթացով թույլատրված որոշակի օրենքներին, ընթացակարգերին ու ինստիտուտներին և սովորում են բախումները հարթել դրանց շրջանակներում:

Երկու կարևոր վերապահում: Առաջին. երբ ասվում է, որ վարչակարգը կայացած ժողովրդավարություն է, այնուամենայնիվ, չի բացառվում այն բանի հավանականությունը, որ ապագայում՝ ինչ-որ ժամանակ, այն կարող է տապալվել: Եվ, այդուհանդերձ, պնդում ենք, որ նման անկումը ոչ թե կապված կլինի հենց ժողովրդավարության կայացման պատմական գործընթացին հատուկ թույլ կողմերի կամ հիմնախնդիրների, այլ մի նոր դինամիկայի հետ, որտեղ ժողովրդավարական վարչակարգը չի կարողանում լուծել մի շարք հիմնախնդիրներ, ոչ ժողովրդավարական այլընտրական շարժումը ձեռք է բերում զգալի աջակիցներ, իսկ ժողովրդավարական վարչակարգին հավատարիմ նախկին հպատակները սկսում են իրենց պահել սահմանադրորեն անհավատարիմ կամ կիսահավատարիմ կերպով:<sup>5</sup>

Երկրորդ վերապահումն այն է, որ միտում չենք ունեցել ենթադրելու, որ կա կայացած ժողովրդավարության միայն մեկ տեսակ: Հետազոտական աշխատանքի մի նոր հետաքր-

5. Ըստ էության, դա նշանակում է, որ ժողովրդավարական վարչակարգի անկման վերաբերյալ նյութերը, որոնք կարելի է գտնել Խոուն Ջ. Լինցի և Ալֆրեդ Ստեփանի խմբագրած «Ժողովրդավարական վարչակարգերի անկումը» (John J. Linz and Alfred Stepan, eds., *The Breakdown of Democratic Regimes* (Baltimore: Johns Hopkins University Press, 1978)) աշխատության մեջ, ավելի ուղղակիորեն են առնչվում նման երևույթի վերլուծությանը, քան ներկա գիրքը կամ ժողովրդավարության անցման և ժողովրդավարության կայացման վերաբերյալ այլ գրքեր: Ակնհայտ է, որ դա չի նշանակում ժողովրդավարության անցման վերաբերյալ գրականության քննադատություն: Ավելի ստույգ ասվածի իմաստն այն է, որ ժողովրդավարության անցմանը և ժողովրդավարական վարչակարգի անկմանը վերաբերող նյութերն անհրաժեշտ է միավորել ժողովրդավարության մասին ժամանակակից տեսության ընդհանուր գրականության մեջ: Նման միասնական տեսության տեսանկյունից «կայացած ժողովրդավարության անկում» արտահայտությունը հանդիպադրում (օքսիմորոն) չէ:



քիր ոլորտ է հենց կայացած ժողովրդավարական վարչակարգերի բազմազանությունը: Միտում չենք ունեցել նաև ենթադրելու, որ կայացած ժողովրդավարական վարչակարգերը չեն կարող շարունակել բարելավել իրենց որակը՝ բարձրացնելով այն նվազագույն տնտեսական հարթակը, որի վրա կանգնած են բոլոր քաղաքացիները, և մեծացնելով քաղաքական ու հանրային մասնակցությունը երկրի կյանքին: Կայացած ժողովրդավարական վարչակարգերն ունեն ժողովրդավարության որակի գնահատման սանդղակ՝ ցածրից մինչև բարձրը: Դրանց մեծ մասի որակը բարելավելու եղանակի շուրջ մտածելը հրատապ քաղաքական և ինտելեկտուալ խնդիր է: Գիրքը, դրա հետ կապ ունենալով հանդերձ, ունի, սակայն, առանձին նպատակ: Քանի որ մենք ապրում ենք մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ աննախադեպ թվով երկրներ ավարտել են անցումը ժողովրդավարությանը և փորձում են ամրացնել ժողովրդավարական վարչակարգերը, քաղաքականապես և գաղափարապես (հայեցակարգային առումով) կարևոր է, որ պատկերացվեն կայացած ժողովրդավարություն ստեղծելու առանձնահատուկ խնդիրները: Դժբախտաբար, ժողովրդավարացման ներկա «ալիքի» մասին հանրամատչելի և գաղափարախոսական քննարկումներում չափազանց մեծ տեղ է գրավում հենց «ընտրութենապաշտությունը» որպես այդպիսին կամ շուկայական մեխանիզմների ժողովրդավարացման ենթադրյալ ներուժը: Սակայն ժողովրդավարության կայացման համար պահանջվում է շատ ավելին, քան ընտրություններն են ու շուկայական տնտեսությունը:

### ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՆԳ ՈՒՈՐՏՆԵՐԸ

Մեր կարծիքով՝ ժողովրդավարության կայացումն ապահովելու համար կայացած ժողովրդավարական վարչակարգերը պետք է ունենան մեկը մյուսին գորացնող հինգ փոխկապակցված ոլորտներ: Այստեղ պահանջվում է ևս մեկ գործոն:

Ժողովրդավարությունը պետության կառավարման ձև է: Ուստի ոչ մի ժամանակակից հասարակարգ (polity) չի կարող դառնալ ժողովրդավարորեն կայացած, եթե այն նախ և առաջ պետություն չէ: Հետևաբար, պետության գոյություն չունենալը կամ պետականամետ կամքի այնպիսի ակնհայտ բացակայությունը, որ տվյալ տարածքում անհատների մեծ խմբերը ցանկանում են միանալ մեկ այլ պետության կամ ստեղծել անկախ պետություն, հարուցում են սկզբունքային և հաճախ անլուծելի հիմնախնդիրներ: Քանի որ նման պետութենական խնդիրները շատ հիմնարար են և շատ քիչ վերլուծված, ապա հաջորդ գլուխը նվիրում ենք այդ թեմայի քննարկմանը: Որպես փաստարկ, սակայն, այստեղ բավական է նշել այն, որ առանց պետության գոյության չի կարող լինել ժամանակակից կայացած ժողովրդավարական վարչակարգ:

Եթե գոյություն ունի գործող պետություն, պետք է գոյություն ունենան կամ ստեղծվեն նաև հինգ այլ փոխկապակցված կամ փոխադարձաբար միմյանց ուժեղացնող պայմաններ, որպեսզի ժողովրդավարությունը կայանա: Նախ՝ պետք է գոյություն ունենան համապատասխան պայմաններ ազատ և եռանդուն քաղաքացիական հասարակության զարգացման համար: Երկրորդ՝ պետք է լինի հարաբերականորեն անկախ և արժևորված քաղաքական հասարակություն: Երրորդ՝ պետք է լինի օրենքի գերակայություն՝ ապահովելու իրավական երաշխիքներ քաղաքացիների իրավունքների և անկախ ընկերային

կյանքի համար: Չորրորդ՝ պետք է լինի պետական կառավարման համակարգ, որը կիրառելի կլինի նոր ժողովրդավարական կառավարության կողմից: Հինգերորդ՝ պետք է լինի ինստիտուցիոնալացված տնտեսական հասարակություն: Բացատրենք, թե ինչ է պահանջվում այդ փոխկապակցված ոլորտները ստեղծելու համար:

*Քաղաքացիական հասարակություն* ասելով՝ նկատի ունենք հասարակարգի այն հարթությունը, որտեղ պետությունից հարաբերականորեն անկախ ինքնակազմակերպվող խմբերը, շարժումներն ու անհատները փորձում են սահմանել արժեքներ, ստեղծել ասոցիացիաներ ու դաշինքներ և առաջ մղել իրենց շահերը: Քաղաքացիական հասարակությունը կարող է ներառել զանազան սոցիալական շարժումներ (կանանց խմբեր, թաղային միություններ, կրոնական խմբեր ու մտավորականների կազմակերպություններ) և քաղաքացիական միություններ բոլոր սոցիալական խավերից (ինչպես օրինակ՝ արհեստակցական միությունները, ձեռնարկատիրական խմբերը, լրագրողները կամ իրավաբանները): Քաղաքացիական հասարակության գաղափարը՝ որպես նորմատիվային ձգտում և կազմակերպական ոճ Հարավային Ամերիկայի՝ հատկապես Բրազիլիայի, զինվորականության կողմից ղեկավարվող բյուրոկրատական –ավտորիտար վարչակարգերի դեմ ընդդիմությանը մոբիլիզացնելու մեծ կարողություն է ունեցել, իսկ Արևելյան Եվրոպայում վճռորոշ միջոց է եղել՝ կայացնելու նրանց անկախությունը, ովքեր ցանկանում էին վարվել այնպես, «իբր իրենք անկախ են», հատկապես Լեհաստանում:

Ի հավելումս մի ամբողջ շարք կազմակերպությունների, ինչպիսիք են օրինակ՝ անօրինական կամ ապօրինի (illegal or alegal) արհմիությունները, կրոնական համայնքները, փաստաբանների միությունները, քաղաքացիական հասարակության բարդ ցանցը կազմող ուսանողների և դասախոսների միությունները, չպետք է անտեսել հասարակության մեկ այլ մասին՝ սովորական քաղաքացիներին, ովքեր որևէ կազմակերպության մաս չեն: Նման քաղաքացիները հաճախ խիստ կարևոր դեր են կատարում վարչակարգ-ընդդիմություն հավասարակշռությունը փոխելու հարցում, որովհետև նրանք բողոքի երթերով հայտնվում են փողոցում, հարցերի տարափ տեղում ռստիկանության և իշխանությունների վրա, արտահայտում իրենց ընդդիմությունը նախ՝ առանձին միջոցառումներին ու խթանում ավելի լայն պահանջներ և ապա՝ ձեռնոց նետում վարչակարգին: Սովորաբար սկզբում նրանք լինում են փոքրաթիվ, իսկ հետագայում՝ ավելի սովոր և կարող են որոշ դեպքերում ճնշել վարչակարգի ներկայացուցիչներին՝ հարկադրելով նրանց մտածել ազատականացման խորացման և, ի վերջո, վարչակարգի փոփոխության մասին: Որքան էլ կարևոր, մեծաթիվ և հերոսական լինեն այդ համեմատաբար անկազմակերպ խմբերը, դրանք չեն կարողանա տապալել տիրող վարչակարգը և հաստատել ժողովրդավարական վարչակարգ, եթե չլինեն այս գրքում քննարկվող գործընթացները: Այն փաստը, որ գրքում վերլուծված անցումային ժամանակահատվածներում առկա վարչակարգերից ոչ մեկը պատրաստ չի եղել զանգվածաբար ուժ կիրառելու, ամբոխի վրա կրակ բացելու հրաման տալու և դրանով իսկ՝ հրահրելու արյունահեղություն, ինչպես եղավ Թիանանմեն հրապարակում, հանգեցրել է նրան, որ գրքում համեմատաբար քիչ է արձարծվել այդ ոչ ժողովրդավարական վարչակարգերը ուժով պահելու հնարավորության հավանականությունը: Կան փաստեր այն մասին, որ որոշ ղեկավարներ քննարկել են նման հնարավորություն: Նրանք ժամանակ առ ժամանակ մարտական պատրաստականության մեջ են պահել իրենց անվտանգության ծառայությունները (օր.՝ Բեռլինում պատը քանդելու հա-

ջորդ օրը): Եվ, այնուամենայնիվ, այդպիսի ուժ չի կիրառվել: Այդ չափի ճնշում գործադրելու գինը շատ բարձր էր, իսկ նման արձագանքի օրինականության նկատմամբ հավատարմ չափազանց ցածր: Ոչ ժողովրդավարական վարչակարգերը, գոնե Հարավային Եվրոպայում, Հարավային Ամերիկայի Հարավային Կոնի վրա գտնվող երկրներում և կոմունիստական Եվրոպայում այդպիսի օրինականության համբավ չեն վայելել, իսկ քաղաքացիական հասարակության մեջ բազմաթիվ շարքային, չկազմակերպված քաղաքացիներ հաճախ այդ փաստն իշխանություններին գրեթե անմիջապես առաջ են նկատել: Նման դեպքերի ամենավաղ օրինակներ են կոմունիստական Եվրոպայի երկրներից Արևելյան Գերմանիան ու Չեխոսլովակիան:

Ժողովրդավարացման միջավայրում «քաղաքական հասարակություն» ասելով՝ հասկանում ենք այն դաշտը, որտեղ հասարակարգը հատուկ կազմակերպվում է՝ վիճարկելու հասարակության ուժի և պետական ապարատի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու օրինական իրավունքը: Լավագույն դեպքում քաղաքացիական հասարակությունը կարող է վերացնել ոչ ժողովրդավարական վարչակարգը: Սակայն լիարժեք անցումը ժողովրդավարությանը և հատկապես ժողովրդավարության կայացումը պետք է տեղի ունենան քաղաքական հասարակության մասնակցությամբ: Ժողովրդավարական հասարակարգի կազմավորումն ու կայացումը պետք է մղեն լուրջ ծրագրերի ու քայլերի՝ ձևավորելու դրական ընկալում ժողովրդավարական քաղաքական հասարակության այն հիմնական ինստիտուտների մասին, ինչպիսիք են՝ քաղաքական կուսակցությունները, ընտրությունները, ընտրական օրենքները, քաղաքական ղեկավարությունը, միջկուսակցական դաշինքներն ու օրենսդիր մարմինները, որոնց միջոցով հասարակությունը քաղաքականապես ինքնակազմակերպվում է ժողովրդավարական կառավարություն ընտրելու և նրան վերահսկելու համար:<sup>6</sup>

Ժամանակակից ժողովրդավարության տեսության, հատկապես ժողովրդավարության կայացման եղանակներին վերաբերող հարցերի համար կարևոր է շեշտել ոչ միայն քաղաքացիական հասարակության և քաղաքական հասարակության *տարբերակվածությունը*, այլև դրանց *փոխլրացնելիությունը* (*կոմպլեմենտարություն*): Այդ փոխլրացնելիությունը միշտ չէ, որ ճանաչվում է: Ինչպես կտեսնենք գրքի հետագա էջերում, այդ երկու կողմերից մեկը հաճախ անտեսվում է հօգուտ մյուսի: Ավելին, ժողովրդավարական համայնքի ներսում քաղաքացիական կամ քաղաքական հասարակության կողմնակիցները, ցավոք, շատ հաճախ որդեգրում են այնպիսի դիսկուրս (խոսույթ) և գործնական քայլերի շարք, որոնք ոչ բացահայտ խոչընդոտում են մյուսի բնականոն զարգացմանը: Քանի որ այդ հակադրությունը հազվադեպ է լինում բացահայտ, դիտարկենք այն ձևերը, որոնք

6. Քաղաքացիական հասարակության և քաղաքական հասարակության ոլորտները տարբերակելու անհրաժեշտության վերաբերյալ ավելի վաղ քննարկման մասին *տե՛ս* Ստեփան, «Ռազմական քաղաքականության վերափոխումները: Բրազիլիա և Հարավային Կոնի երկրներ» (Stepan, *Rethinking Military Politics*, chap. 1): Հասկացությունները որոշակի պատմական վերլուծության մեջ հնարամիտ ձևով օգտագործելու օրինակներ, *տե՛ս* Պատլո Ֆարնետի, «Սոցիալական բախում, խորհրդարանական բաժանվածություն, ինստիտուցիոնալ կտրուկ փոփոխություն և ֆաշիզմի առաջացում. Իտալիա» (\*), "Social Conflict, Parliamentary Fragmentation, Institutional Shift, and the Rise of Fascism: Italy", Լինցի և Ստեփանի խմբագրությամբ՝ «Ժողովրդավարական վարչակարգերի անկումը», "The Breakdown of Democratic Regimes", էջ 3-33:

այդ ոչ բացահայտ հակադրությունը կարող են ընդունել, և այն, թե ինչպես ու ինչու են նման դիսկուրսն ու քայլերը խոչընդոտում ժողովրդավարության կայացմանը:

Վերջին ժամանակներս Արևելյան Եվրոպայում և Լատինական Ամերիկայում ոչ ժողովրդավարական վարչակարգերի դեմ պայքարում ձևավորվեց մի հայեցակետ, որը շեշտում էր «քաղաքացիական հասարակությունն ընդդեմ պետության» դրույթը: Այս երկհակադրությունը, իհարկե, ունի խոր փիլիսոփայական ծագումնաբանություն:<sup>7</sup> Մեր նպատակների համար ավելի կարևոր է այն, որ այդ փիլիսոփայական ավանդույթը քաղաքականապես օգտակար էր այն ժողովրդավարական շարժումների համար, որոնք ծնունդ էին առել վերջին ժամանակների համատեքստերում, որտեղ քաղաքական կազմակերպությունները բացահայտորեն արգելված կամ չափազանց թույլ էին: Քաղաքականապես օգտակար էր նաև քաղաքացիական հասարակության և պետության հակադրության գաղափարը, երբ ընդդիմությունը փորձում էր մեկուսացնել ոչ ժողովրդավարական վարչակարգը և վերջինիս պետությունը՝ ստեղծելով «մենք ընդդեմ նրանց» էթիկական քաղաքականությունը: Շատ երկրներում քաղաքացիական հասարակությունն իրավացիորեն համարվում էր ժողովրդավարական դիմադրության և անցման «աստղը»:

Այդ խնդիրը ծագում է ժողովրդավարությանն անցման պահին: Բավական հաճախ քաղաքական հասարակության ժողովրդավարական առաջնորդները պնդում են, որ իր պատմական դերը կատարած քաղաքացիական հասարակությունը պետք է «կազմալուծվի»՝ հնարավորություն տալով նորմալ ժողովրդավարական քաղաքականության զարգացման համար:<sup>8</sup> Նման փաստարկը վատ ժողովրդավարական տեսություն է և վատ ժողովրդավարական քաղաքականություն: Առողջ քաղաքացիական հասարա-

7. Քաղաքացիական հասարակության արդի վերածննդի մասին (հատկապես՝ Արևելյան Եվրոպայում և Հարավային Ամերիկայում), տե՛ս նույն վերնագիրը կրող գլխում՝ Ժան Կոհեն և Էնդրյու Արատո, «Քաղաքացիական հասարակություն և քաղաքական տեսություն» (Jean Cohen and Andrew Arato, *Civil Society and Political Theory* (Cambridge: MIT Press, 1992), 29-82): Այդ անգնահատելի գրքում հստակորեն համակցվում են քաղաքական փիլիսոփայությունն ու համեմատական քաղաքական վերլուծությունը: Տե՛ս նաև Ջոն Կեանի խմբագրած «Քաղաքացիական հասարակությունն ու պետությունը. նոր եվրոպական դիտանկյուններ» (John Keane, ed., *Civil Society and the State: New European Perspectives* (London: Verso, 1988), 1-31): Կոհեն-Արատոյի գիրքը նույնպես արժեքավոր է, քանի որ այն քաղաքական հասարակությունը չի դատում քաղաքացիական հասարակության կարգին: Յանոշ Քիշը՝ նշանավոր քաղաքական փիլիսոփան, այլախօհը և «Հունգարիայի ազատ ժողովրդավարներ» կազմակերպության նախկին նախագահը, առաջին մտածող-ակտիվիստներից էր, որը դիտարկեց քաղաքացիական և քաղաքական հասարակության տարբերակվող դաշտերը: Տե՛ս Քիշ, «Քաղաքականությունը Հունգարիայում ժողովրդավարական այլընտրանքի համար» (Kis, *Politics in Hungary: For a Democratic Alternative* (Boulder, Colo.: Social Science Monographs, 1989)):

8. Որոշ անցումային վիճակներում քաղաքացիական հասարակության ակներև ճգնաժամը պարզապես արտացոլում է այն փաստը, որ քաղաքացիական հասարակություն կոչվող որոշ շարժումներ մեծ չափով ստեղծվել և ուղղորդվել են նախկինում ոչ օրինական քաղաքացիական կուսակցությունների կողմից: Երբ այդ քաղաքական կուսակցություններն ի վիճակի եղան օրինական ձևով մասնակցելու քաղաքականությանը, կտրուկ շեղեցին իրենց ջանքերի ուղղությունը քաղաքացիական հասարակությունը մոբիլիզացնելուց, իսկ որոշ դեպքերում գիտակցաբար արեցին հակառակը: Այդ երևույթն առնաձևապես ակնբախ էր Բուսպանիայում կոմունիստական կուսակցության կողմից ղեկավարվող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դեպքում: Քաղաքացիական հասարակության բազմաթիվ շարժումներ Չիլիում նմանապես ղեկավարվում են քրիստոնյա-դեմոկրատական կամ սոցիալիստական կուսակցության առաջնորդների կողմից:

կույթունը, որն ունի քաղաքական այլընտրանքներ առաջացնելու և կառավարությունն ու պետությունը վերահսկման ենթարկելու կարողություն, կարող է օգնել անցումային վարչակարգերին մեկնարկել, կարող է օգնել դիմադրել իրադարձությունների հակառակ ընթացքին, ինչպես նաև կարող է օգնել արագացնելու անցումային վիճակներն իրենց ավարտին հասցնելուն, կարող է օգնել ժողովրդավարության կայացմանն ու խորացմանը: Հետևաբար, ժողովրդավարացման գործընթացի բոլոր փուլերում աշխույժ և անկախ քաղաքացիական հասարակությունն անգնահատելի է:

Սակայն պետք է մտածել նաև այն մասին, թե գաղափարապես ինչպես ճանաչել և դրանով իսկ օգնել հաղթահարելու այն կեղծ հակադրությունները, որ ոմանք դնում են քաղաքացիական հասարակության և քաղաքական հասարակության միջև: Գլխավորապես քաղաքացիական հասարակության մեջ եղած ժողովրդավարական խմբերը կարող են ժամանակ առ ժամանակ վտանգ ներկայացնել քաղաքական հասարակության զարգացման համար. դա այն է, երբ քաղաքացիական հասարակության համար լիովին նպաստավոր նորմատիվային նախապատվություններն ու կազմակերպական եղանակները կարող են ընտրվել որպես կազմակերպման ցանկալի կամ անգամ միակ օրինական ոճ քաղաքական հասարակության համար: Օրինակ՝ քաղաքացիական հասարակության շատ առաջնորդներ բարոյական հակակրանքով են մոտենում ժողովրդավարական ուժերի ներսում «ներքին բախմանն» ու «պառակտմանը»: Ինստիտուցիոնալ շարունացման, միջնորդությունների ու քաղաքականության մեջ փոխհամաձայնության մասին հաճախ խոսվում է արհամարհական արտահայտություններով:<sup>9</sup> Սակայն վերը նշված եզրերից յուրաքանչյուրը վերաբերում է կայացած ժողովրդավարական վարչակարգում քաղաքական հասարակության որևէ անկապտելի հմտության: Ժողովրդավարական վարչակարգի կայացման համար պահանջվում են այնպիսի կուսակցություններ, որոնց առաջնային խնդիրներից մեկն էլ հենց ժողովրդավարների միջև տարբերություններն ընդհանրացնելն ու ներկայացնելն է: Ժողովրդավարության ամրացման համար պահանջվում է զարգացնել ընտելացվածությունը *հակամարտությունների* կարգավորման ժողովրդավարական նորմերին ու ընթացակարգերին: *Ինստիտուցիոնալ շարունացման* բարձր մակարդակը այդ գործընթացի հիմնական մասերից մեկն է: *Միջնորդությունը* պետության և քաղաքացիական հասարակության միջև և *փոխհամաձայնության* ձեռքբերումը նմանապես քաղաքական հասարակության օրինական և անխուսափելի խնդիրներ են: Մի խոսքով, քաղաքացիական հասարակության կողմից տեղեկացված, ճնշման ենթարկված և պարբերաբար նորացված քաղաքական հասարակությունը պետք է ինչ-որ կերպ ձեռք բերի իրատեսական համաձայնություն ժողովրդավարական իշխանության ստեղծման և գործադրման անթիվ-անհամար եղանակների շուրջ:

Կայացած ժողովրդավարության հասնելու համար քաղաքացիական և քաղաքական հասարակության անհրաժեշտ չափով ինքնավարությունն ու անկախությունը պետք է այնուհետև դրվեն օրենքի գերակայության մեր երրորդ դաշտի հիմքում և պաշտպանեն

9. Հակաքաղաքականության հարցը մանրամասն քննարկվում է Լեհաստանին նվիրված գլխում և Չեխոսլովակիայի մասին հատվածում: Թե ինչպես «բարոյական քաղաքացիական հասարակություն» և «նորմալ քաղաքական հասարակություն» արտահայտությունները կարող են երբեմն հայտնվել նորմատիվային հակամիջոցների տեսքով, տե՛ս Լեհաստանին նվիրված գլուխը և հատկապես՝ 15.1 աղյուսակը: Հակաքաղաքականությունը խնդիրներ է առաջացրել նաև հետանցումային Բրազիլիայում:

դրանով: Բոլոր նշանակալի դերակատարները, հատկապես ժողովրդավարական կառավարությունն ու պետությունը պետք է հարգեն և պահպանեն օրենքի գերակայությունը: Քաղաքացիական հասարակության և քաղաքական հասարակության հենց նոր նկարագրած տեսակների համար սահմանադրականության ոգով օժտված օրենքի գերակայությունը պարտադիր պայման է: Սահմանադրականության ոգին պահանջում է ավելին, քան մեծամասնականության գերակայությունը: Այն իր հետևից բերում է համեմատաբար ուժեղ փոխհամաձայնություն սահմանադրության շուրջ և հատկապես՝ հավատարմություն կառավարման «ինքնապարտադրող» ընթացակարգերին, որոնք փոփոխելու համար պահանջվում է բացարձակ մեծամասնություն: Այն պահանջում է նաև անկախ դատական համակարգի կողմից մեկնաբանված և քաղաքացիական հասարակության ուժեղ իրավական մշակույթով պաշտպանված օրենքների հստակ աստիճանակարգ:<sup>10</sup>

Վերը նշված երեք պայմանները՝ եռանդուն ու անկախ քաղաքացիական հասարակությունը, բավարար ինքնավարության ու կառավարման ընթացակարգերի շուրջ իրատեսական փոխհամաձայնության հասած քաղաքական հասարակությունը և սահմանադրականությունն ու օրենքի գերակայությունը, ըստ էության, կայացած ժողովրդավարության սահմանման նախապայմաններն են: Սակայն այդ պայմանների բավարարման հավանականությունը շատ ավելի մեծ կլինի, եթե գոյություն ունենա ժողովրդավարական առաջնորդների կողմից կիրառելի կառավարման համակարգ և ինստիտուցիոնալացված տնտեսական հասարակություն:

Ժողովրդավարությունը կյանքի կառավարման ձև է այն պոլիսում, որտեղ քաղաքացիներն ունեն երաշխավորված և պաշտպանված իրավունքներ: Իր քաղաքացիների իրավունքները պաշտպանելու և նրանց պահանջած մյուս հիմնական ծառայությունները մատուցելու համար ժողովրդավարական կառավարությունը պետք է ի վիճակի լինի արդյունավետ կերպով գործադրելու տվյալ տարածքում ուժի օրինական կիրառման մենաշնորհ ունենալու իր իրավունքը: Եթե անգամ պետությունը դրանից բացի որևէ այլ գործառույթներ չունենա, այն ստիպված է ունենալ պարտադիր հարկման համակարգ՝ վճարելու ոստիկանության, դատավորների և հիմնական ծառայությունների դիմաց: Ժամանակակից ժողովրդավարությունը, հետևաբար, անհրաժեշտաբար պետք է ունենա հրամայելու, կարգավորելու և արդյունավետ գործելու կարողություն: Դրա համար այն ունի նոր, ժողովրդավարական կառավարության կողմից կիրառելի համարված գործուն պետության և պետական կառավարման համակարգի կարիք: Գլուխ 2-ում պարզաբանվում է, թե ինչու աշխարհի շատ տարածաշրջաններում չկա գոնե մեկ այդպիսի պետություն: Գրքում պետության քայքայման հարցը հատկապես կարևոր է նախկին Խորհրդային Միության հանրապետությունների պարագայում: Սակայն պետության հարկեր հավաքագրելու անբավարար կարողությունը կամ տարածքի մեծ մասում թույլ նորմատիվ դաշտի և կառավարման համակարգի առկայությունը, երբ քաղաքացիները չեն կարողանում արդյունավետ կերպով պահանջել, որ իրենց իրավունքները հարգվեն կամ ձեռք բերեն որևէ

10. Սահմանադրականության, ժողովրդավարության, իրավական մշակույթի և «ինքնապարտադրողականության» փոխհարաբերության քննարկմանը նվիրված հիմնալի հատորյակ է Ջոն Էլսթերի և Ռունե (Rune) Սլեգսթեդի խմբագրած «Սահմանադրականություն և ժողովրդավարություն» գիրքը (Jon Elster and Rune Slagstad, eds., *Constitutionalism and Democracy* (Cambridge: Cambridge University Press, 1988), esp. 1-18):

հիմնական իրավունք, մեծ խնդիր է Լատինական Ամերիկայի շատ երկրներում, ինչպես օրինակ՝ Բրազիլիայում: Նոր ժողովրդավարական վարչակարգի համար պետական կառավարման համակարգի կիրառելիության հարց ծագում է նաև այն երկրներում, որտեղ հեռացող ոչ ժողովրդավարական վարչակարգը մշտական պաշտոններ է տվել (ինչպես Չիլիում) պետական կառավարման համակարգի մեծ թվով կարևոր անդամների, ովքեր կատարում են քաղաքականապես ազդեցիկ գործառույթներ արդարադատության և կրթության բնագավառներում: Նոր ժողովրդավարական վարչակարգերի կողմից պետական կառավարման համակարգի կիրառելիության մասին կարևոր հարցեր են ծագում նաև այն դեպքերում (ինչպես հետկոմունիստական Եվրոպայի շատ երկրներում), երբ կուսակցության և պետության միջև տարբերությունը, ըստ էության, վերացել է, և կուսակցությունը գրկվել է իշխանությունից, քայքայվել կամ գրկվել է լեգիտիմությունից:

Կայացած ժողովրդավարության օգտին գործող վերջին պայմանը վերաբերում է տնտեսությանը, կամ ավելի ճիշտ՝ այն ոլորտին, որն ըստ հեղինակների՝ պետք է անվանվի «տնտեսական հասարակություն»: Կիրառելով «տնտեսական հասարակություն» արտահայտությունը՝ ընթերցողի ուշադրությունը հրավիրում ենք երկու պնդումների վրա, որոնք հեղինակների կարծիքով՝ հիմնավոր են և՛ տեսականորեն, և՛ էմպիրիկորեն: Առաջին. որևէ ոչ պատերազմական ժամանակաշրջանի կայացած ժողովրդավարություն երբեք չի եղել և չի կարող լինել վարչահրամայական տնտեսության պայմաններում: Երկրորդ. երբեք չի եղել, և գրեթե վստահ կարելի է ասել՝ երբեք չի լինի որևէ ժամանակակից կայացած ժողովրդավարություն գուտ շուկայական տնտեսության պայմաններում: Եթե ապացուցվի, որ այդ երկու պնդումները հիմնավոր են, ապա ժամանակակից կայացած ժողովրդավարական վարչակարգերի համար պահանջվում է պետության և շուկայի միջև միջնորդություն իրականացնող սոցիալ-քաղաքական առումով մշակված և սոցիալ-քաղաքական առումով ընդունված նորմերի, ինստիտուտների և կանոնակարգերի շարք, որը գրքում անվանվում է «տնտեսական հասարակություն»:

Գործնականում ոչ մի ապացույց երբևէ չի բերվել հավաստելու, որ կայացած ժողովրդավարության վերը նշված սահմանմանը բավարարող որևէ հասարակարգ երբևէ գոյություն է ունեցել վարչահրամայական տնտեսության պայմաններում: Սակայն հարցը շարունակում է մնալ առկախ: Նման համընդհանուր էմպիրիկ արդյունքը բացատրելու համար կա՞ արդյոք որևէ տեսական պատճառ: Կարծում ենք՝ կա: Տեսականորեն մեր ենթադրությունն այն է, որ տնտեսության մեջ անհրաժեշտ է շուկայի ինքնավարության և սեփականության ձևերի բազմազանության մի առնվազն ոչ սովորական աստիճան՝ խթանելու քաղաքացիական հասարակության անկախություն և աշխուժություն, որպեսզի այն կարողանա իր ներդրումը բերել ժողովրդավարության գործին: Նույն տրամաբանությամբ, եթե ամբողջ սեփականությունը պետության ձեռքում է, և գնի, աշխատանքի, առաջարկի ու բաշխման մասին որոշումների ընդունումը վարչահրամայական տնտեսության գլուխ կանգնած պետության բացառիկ իրավասությունն են, ապա կայացած ժողովրդավարական վարչակարգի համար պահանջվող քաղաքական հասարակության հարաբերական ինքնավարություն գոյություն ունենալ չի կարող:<sup>11</sup>

11. Ռոբերտ Ա. Դահլը նմանատիպ մի փաստարկում խոսում է այդ հետևանքն առաջ բերող պատճառականության երկու աղեղների մասին: Պատճառականության քաղաքական աղեղի վերաբերյալ

Սակայն ինչո՞ւ ամբողջովին ազատ շուկաները չեն կարող գոյակցել ժամանակակից կայացած ժողովրդավարական վարչակարգերի հետ: Էմպիրիկորեն ժամանակակից հասարակարգերի լուրջ հետազոտությունները կրկին ու կրկին ապացուցել են պետության կողմից շուկային միջամտելու և պետական սեփականության զգալի աստիճան ունենալու առկայությունը բոլոր կայացած ժողովրդավարական վարչակարգերում:<sup>12</sup> Թե ինչու դա հենց այդպես պետք է լինի, տեսականորեն գոյություն ունի առնվազն երեք պատճառ: Առաջին. չնայած շուկայի ինքնաբավության մասին նորագատական (նեոլիբերալ), գաղափարական առումով ծայրահեղ, սակայն զարմանալիորեն տարածված և ազդեցիկ պնդումներին՝ առանց պետական կարգավորման որոշ աստիճանի զուտ շուկայական տնտեսություններ ո՛չ կարող են ստեղծվել, ո՛չ էլ պահպանվել: Շուկաները պահանջում են ընկերությունների մասին օրենքներ, արժեթղթերի բորսաների կարգավորում, կշռի, չափման և բաղադրամասերի մասին կարգավորված չափորոշիչներ և թե՛ հանրային, թե՛ մասնավոր սեփականության պաշտպանություն: Այդ ամենը պահանջում է պետության որոշակի դերակատարություն տնտեսության մեջ: Երկրորդ. անգամ լավագույն շուկաներում պատահում են ձախողումներ, որոնք պետք է շտկվեն, որպեսզի շուկան լավ գործի:<sup>13</sup> Շուկայի «անտեսանելի ձեռքի» ջատագով Ադամ Սմիթն անգամ ընդունել է պետության անհրաժեշտությունը որոշակի գործառույթներ իրականացնելու համար: Ի դեպ, «Ազգերի հարստությունը» աշխատության մեջ մի անտեսված, սակայն կարևոր հատվածում Ադամ Սմիթը ժամանակակից պետության համար ընդգծում է երեք անխուսափելի խնդիրներ:

Առաջին. հասարակությունն այլ անկախ հասարակությունների կողմից իրականացվող բռնությունից ու ներխուժումից պաշտպանելու պարտականությունը, երկրորդ. հասարակության յուրաքանչյուր անդամի՝ հասարակության որևէ այլ անդամի կողմից անարդարության կամ հարստահարման զոհ դառնալուց պաշտպանելու պարտականությունն այնքանով, որքանով հնարավոր է, կամ արդարադատության ճիշտ իրականացման պարտականությունը, և երրորդ. որոշակի պետական ծրագրեր և որոշակի պետական ինստիտուտներ հիմնելու և պահպանելու պարտականությունը, որոնք հիմնելն ու պահպանելը երբեք չեն կարող բխել

(օր.՝ լենինիզմի իշխանության պարագայում) կուսակցապետական քաղաքականությունը բացահայտորեն դեմ է գնում քաղաքացիական հասարակության և քաղաքական հասարակության ինքնավարությանը: Կամ պետության կողմից կառավարվող պլանային տնտեսության դեպքում պատճառականության տնտեսական աղեղը դեմ է գնում ամրացած ժողովրդավարության որոշ նյութական կարիքներին, ինչպես օրինակ՝ մամուլի ազատությունը, որովհետև թուղթն ու տպագրական նյութերն անհնար է չորամաղթել: *Տե՛ս Դահլ*, «Ինչու բոլոր ժողովրդավարական երկրներն ունեն խառը տնտեսություն», Ջոն Չափմընի և Յան Շապիրոյի խմբագրած «Ժողովրդավարական համայնք» (Dahl, "Why All Democratic Countries Have Mixed Economies", in John Chapman and Ian Shapiro, eds., *Democratic Community* (New York: New York University Press, 1993), 35:259-82):

12. *Տե՛ս* օրինակ, տասնչորս զարգացած ժողովրդավարական վարչակարգերի վերաբերյալ ծավալուն նյութեր Ջոն Ռ. Ֆրիմանի «Ժողովրդավարական վարչակարգերը և շուկան. քաղաքականությունը խառը տնտեսությունն ունեցող երկրներում» (John R. Freeman, *Democracies and Market: The Politics of Mixed Economies* (Ithaca, N. Y.: Cornell University Press, 1989)):

13. Շուկայի անխուսափելի ձախողումների գերազանց վերլուծություններից *տե՛ս* Պիտեր Մաուլ, «Ի վիճակի է արդոք նոր դասական տնտեսագիտությունը նպաստելու կենտրոնացված պլանային տնտեսությունների բարեփոխումներին» (Peter Murrell, "Can Neoclassical Economics Underpin the Reform of Centrally Planned Economies?" *Journal of Economic Perspectives* 5, no. 4 (1991): 59-76):



որևէ անհատի կամ փոքրաթիվ անհատների շահերից, որովհետև շահույթը երբեք չի հատուցի որևէ անհատի կամ փոքրաթիվ անհատների կրած ծախսը, թեև այն հաճախ կարող է շատ ավելին անել «մեծ» հասարակության համար, քան հատուցելը»<sup>14</sup>

Կայացած ժողովրդավարական վարչակարգերում շուկային միջամտելու երրորդ պատճառն այն է, որ ժողովրդավարությունը կառավարության գերակայությունների և մոտեցումների շուրջ հարուցում է ազատ հասարակական բանավեճ: Եթե որևէ ժողովրդավարական վարչակարգ երբևէ ծնունդ չտա այնպիսի քաղաքականության, որն առաջ կբերի հանրային բարիքներ կրթության, առողջապահության և տրանսպորտի ոլորտներում կառավարության պատասխանատվության ներքո, որոշ ապահովագրական երաշխիքներ չտա շուկայական մեծ տատանումներից տուժած իր քաղաքացիներին և չապահովի ակնհայտ անհավասարության որոշակի մեղմացում, ապա ժողովրդավարությունը չի լինի կայուն:<sup>15</sup> Տեսականորեն, իհարկե, հակաժողովրդավարական քայլ կլինի օրինական հասարակական բանավեճի օրակարգը նման պետական քաղաքականությամբ սահմանափակելը: Այսպիսով, անգամ զուտ շուկայական տնտեսության հիման վրա առաջացած ժողովրդավարության ծայրահեղ սցենարի պարագայում ժամանակակից ժողովրդավարության (և ժամանակակից զարգացած կապիտալիստական տնտեսության) ընթացքն ինքնին կհանգեցնի այդ զուտ շուկայական տնտեսության փոխակերպմանը խառը տնտեսության կամ նորմերի, կանոնակարգերի, մոտեցումների և ինստիտուտների մի շարքի, որը գրքում անվանվել է «տնտեսական հասարակություն»:<sup>16</sup>

Ինչ եղանակով էլ վերլուծենք խնդիրը, ժողովրդավարության կայացման համար պահանջվում է սոցիալապես և քաղաքականապես կարգավորվող շուկայի ինստիտուցիոնալացում: Դրա համար պահանջվում է տնտեսական հասարակություն, որն էլ իր հեր-

14. Ադամ Սմիթ, «Ազգերի հարստությունը» (Adam Smith, *The Wealth of Nations* (London: J. M. Dent and Sons, Everyman's Library Edition, 1910), 2:180-81):

15. Ժամանակակից ժողովրդավարության ընթացքը սովորաբար նույնպես պահանջում է շուկայից գործունեության որոշ տեսակների բացառման, ինչպես օրինակ՝ մարդկային օրգանների վաճառքը կամ սեռական ծառայությունների համար երեխաների վաճառքը:

16. Ռոբերտ Դահիլի դատողությունների շղթան զարգանում է նույն տրամաբանությամբ: «Ժողովրդավարությունը գրեթե վստահաբար կտանի որոշակի տնտեսական կարգերի [ներառյալ] ոչ միայն կապիտալիստական պլանային տնտեսության, այլ նաև խիստ ազատ շուկայական տնտեսության քայքայման... Եթե մարդիկ, ովքեր տուժել են շուկայից, ունենան շուկան կարգավորելու ազատություն, ուժ և հնարավորություն, նրանք կփորձեն անել այդ, որպեսզի վերացնեն կամ գոնե սահմանափակեն իրենց կրած վնասները... Քաղաքական մրցակցությունն ընտրված առաջնորդների մեջ առաջ է բերում շահագրգռվածություն՝ արձագանքելու մարդկանց ցանկացած կազմակերպված կամ անկազմակերպ ընդհանրության կարծիքներին ու քվեներին... Հետևաբար, այս կամ այն ձևով ժամանակի ընթացքում ազատ շուկաների «գոհերը» հնարավոր է՝ ազդեն իշխանության կամ իշխանության որևէ մակարդակի վրա՝ տեղական, նահանգային, տարածքային կամ շրջանային՝ ընդունելու վնասի մեղմացմանը միտված միջամտության քաղաքականություն... Հետևաբար, պետք է եզրակացնել, որ յուրաքանչյուր ժողովրդավարական երկիր մերժել է չկարգավորվող մրցակցային շուկաների եթե ոչ զաղափարախոսությունը, ապա գոնե կիրառումը: Թեև ճիշտ է, որ շուկայական տնտեսություն առկա է բոլոր ժողովրդավարական երկրներում, այնուամենայնիվ, ճիշտ է նաև այն, որ յուրաքանչյուր ժողովրդավարական երկրում գոյություն ունեցածը շուկայական տնտեսություն է՝ ձևափոխված կառավարության միջամտությամբ: Տե՛ս նրա «Ինչու բոլոր ժողովրդավարական երկրներն ունեն խառը տնտեսություն» (*"Why All Democratic Countries Have Mixed Economies"*, 259-82) գրքում:

թին պահանջում է գործուն պետություն: Անգամ այնպիսի նորագատական նպատակ, ինչպիսին է Ճիշտ և օրինական ճանապարհով հանրային սեփականության շրջանակը նեղացնելը (մասնավորեցում), գրեթե վստահաբար ավելի արդյունավետ կիրականացվի ավելի ուժեղ, քան ավելի թույլ պետության կողմից (կարողությունների առումով): Որևէ կարգավորող գործառույթ իրականացնելու պետության անկարողության պատճառով տնտեսության ներկա մակարդակի խոր անկումը մեծապես բարդացնում է տնտեսական բարեփոխումների և ժողովրդավարացման խնդիրները:<sup>17</sup>

Ամփոփելով ասենք՝ ցանկացած ժամանակակից կայացած ժողովրդավարություն կարելի է պատկերացնել որպես հինգ խոշոր փոխկապակցված ոլորտներից բաղկացած մի համակարգ, որոնցից յուրաքանչյուրը ճիշտ գործելու համար ունի կազմակերպման իր ուրույն հիմնական սկզբունքը: Ճիշտ պատկերացման պարագայում ժողովրդավարությունն ավելին է, քան վարչակարգը. այն փոխազդող համակարգ է: Այդ համակարգի ոչ մի առանձին դաշտ չի կարող ճիշտ գործել առանց մյուս կամ հաճախ բոլոր ոլորտների որոշակի աջակցության:

17. Հետկոմունիստական Եվրոպայում Չեխիայի Հանրապետությունը և Հունգարիան վաղուց արդեն բռնել են ինստիտուցիոնալացված տնտեսական հասարակություններ դառնալու ճանապարհը: Կորուկ տարբերվում են Ուկրաինան ու Ռուսաստանը, որտեղ պետության վերահսկողությունն այնքան մեծ չէ, որ հնարավոր լիներ խոսել տնտեսական հասարակության մասին: Տնտեսական հասարակության բացակայության հետևանքները դրսևորվում են ամենուրեք: Օրինակ՝ Ռուսաստանում, որի բնակչությունը տասնհինգ անգամ շատ է Հունգարիայի բնակչությունից, և որն ունի անհամեմատ շատ հումք, 1992-93թթ. ստացել է միայն 3.6 մլրդ դոլարի ուղղակի օտարերկրյա ներդրում՝ ի տարբերություն Հունգարիայի, որը նույն տարիներին ստացել է 9 մլրդ դոլարի ուղղակի օտարերկրյա ներդրում: Այդ տարբերությունը հիմնականում կարելի է բացատրել այն բանով, որ Հունգարիան ուներ ուժեղ տնտեսական հասարակություն օրենքի, պայմանագրերի և իրավական ռեժիմի բնագավառներում, մինչդեռ Ռուսաստանը, ըստ էության, չունի տնտեսական հասարակություն, իսկ նրա պլանային տնտեսությունը դադարել էր գոյություն ունենալ: Ուղղակի օտարերկրյա ներդրումների մասին տվյալները վերցված են *Wall Street Journal* publication, *Central European Economic Review* (Summer 1994), 6: Հաջողակ շուկայի առավել հաճախ բերվող օրինակը՝ Չեխիայի Հանրապետությունը, ի դեպ, քաղաքական միջոցառումներով նոր տնտեսական հասարակության ստեղծման ամենացայտուն օրինակներից մեկն է: Իսկապես, Ստեֆն Հոլմսը պնդում է. «Վարչապետ Վացլավ Կլաուսը, որը շատ հեռու է հակապետական լինելուց և ձևացնում է, թե իբր այդպիսին է, իրականում հետկոմունիստական Եվրոպայում ամենատաղանդավոր պետություն կառուցողն է»: *Sté u Zolna*, «Տնտեսական քաղաքականությունը Չեխիայի Հանրապետությունում» (Holmes, "The Politics of Economics in the Czech Republic", *East European Constitutional Review* 4, no.2(1995):52-55, quote from p. 52):

**Աղյուսակ 1.1 Ժամանակակից կայացած ժողովրդավարության ճինգ խոշոր ուղղությունը: փոխկապակցված սկզբունքներ և փոխներագրման ասպարեզներ**

Դաշտ	Կազմակերպական հիմնական սկզբունք	Այլ ասպարեզների կողմից ցուցաբերված անհրաժեշտ աջակցություն	Վնասված փոխներագրումներն այլ ուղղություններում
Քաղաքացիական հասարակություն	Միությունների և հարողակցության ազատություն	<p>Իրական երաշխիքներ սահմանելու օրենքի զերակարգություն:</p> <p>Պետական ապարատ՝ պահպանելու քաղաքացիական հասարակության կազմակերպելու իրավունքները, եթե այդ իրավունքները ոտնահարվում են:</p> <p>Տնտեսական հասարակություն: բավարար բազմակարծություն: ապահովելու քաղաքացիական հասարակության իմե-նությունության և աշխուժության անհրաժեշտ աստիճանը:</p>	<p>Քաղաքացիական հասարակության շահերն ու արժեքները քաղաքացիական հասարակության գլխավոր ստեղծողներն են:</p> <p>Քաղաքացիական հասարակության կողմից ցուցաբերվող աջակցությունն օրոտանբանական-իրավական իշխանությանը և դրան ուղեկցող օրինական ուժի մեծաշնորհիկ:</p>
Քաղաքական հասարակություն	Ազատ և ներտաական ընտրական բանավեճ	<p>Կարիք ունի օրինականության քաղաքացիական հասարակության աչքում:</p> <p>Կարիք ունի իրավական երաշխիքների, որոնք խտրվելած են օրենքի զերակարգության կրտ և պահպանվում են անաչառ պետական ապահովող կողմից:</p>	<p>Մշակում է սահմանադրությունն ու գլխավոր օրենքները: Կառավարում է պետական ապարատը:</p> <p>Մշակում է տնտեսական հասարակության ընդհանուր իրավական շրջանակը:</p>
Օրենքի զերակարգություն	Սահմանադրականություն	<p>Իրական մշակույթ, որն ունի ուժեղ արձաններ քաղաքացիական հասարակության մեջ և կայելում է քաղաքական հասարակության և պետական ապարատի հարցաբք:</p>	<p>Սահմանում է նորների աստիճանակարգ, որը օրինական և կանխատեսելի է դարձնում այլ ասպարեզների գործողությունները և գործողություններն այլ ասպարեզներում:</p>
Պետական ապարատ	Տրանսբանական-իրավական բյուրոկրատական տրոներ	<p>Տրանսբանական-իրավական իշխանության և դրան ուղեկցող օրինական ուժի մեծաշնորհիկ նորմատիվային աջակցություն քաղաքացիական հասարակության կողմից:</p> <p>Տնտեսական հասարակության կողմից ստեղծված բավարար հարկման ենթակա ավելցուկից քաղաքական հասարակության կողմից գանձված դրամական աջակցություն:</p>	<p>Խիստ պարտադրանք քաղաքացիական, քաղաքական և տնտեսական հասարակությունների ենթարկվելու ժողովրդավարական սկզբունքների կրտ հիմնված քաղաքական հասարակության կողմից սահմանված օրենքներին և ընթացակարգերին:</p>
Տնտեսական հասարակություն	Ինտիտոցիոնարացված շուկա	<p>Իրական և կանոնակարգային շրջանակ՝ ստեղծված քաղաքական հասարակության կողմից, ընդունված քաղաքացիական հասարակության կողմից և կատարման պարտադրված պետական ապարատի կողմից:</p>	<p>Ստեղծում է այն անհրաժեշտ ավելցուկը, որով հնարավորություն է տալիս պետության իրականացնելու ընդհանուր բարօրության ուղղված իր գործառնությունները և տրանսպորտ նյութական բարգաքացիական և քաղաքական հասարակությունների բազմակարծության և ինքնուրույնության համար:</p>

Օրինակ, ժողովրդավարական վարչակարգում քաղաքացիական հասարակությանն անհրաժեշտ է պաշտպանվածություն՝ օրենքի գերակայությամբ, որը կերաշխավորի վերջինիս՝ միություններ ստեղծելու իրավունքը, և աջակցություն պետական ապարատի կողմից, որը գործուն իրավական պատժամիջոցներ կկիրառի նրանց նկատմամբ, ովքեր կփորձեն անօրինական եղանակներով արգելել խմբերին իրացնելու կազմակերպվելու իրենց ժողովրդավարական իրավունքը: Ավելին, ժողովրդավարական համակարգում յուրաքանչյուր ոլորտ ունի որոշակի ազդեցություն այլ ոլորտների վրա: Օրինակ՝ քաղաքական հասարակությունը մշակում է սահմանադրությունը և գլխավոր օրենքները, կառավարում է պետական ապարատը և ստեղծում տնտեսական հասարակության ընդհանուր իրավական դաշտը: Կայացած ժողովրդավարական վարչակարգում, հետևաբար, տեղի են ունենում մշտական փոխներազդումներ ոլորտների միջև, որոնցից յուրաքանչյուրը գտնվում է հենց մյուս ոլորտներից բխող ուժերի «դաշտում» (Ադյուսակ 1.1):

## «Պետութենականություն», ազգայնականություն և ժողովրդավարացում

ԱՅՍ ԳԼԽՈՒՄ անդրադառնալու ենք պետութենականության հարցին, որը ժողովրդավարության թերի ուսումնասիրված, սակայն այնպիսի կարևոր փոփոխական է, որը նախապես պահանջում է լիարժեք վերլուծություն: Մեր քննության առարկան պետության, ազգ(եր)ի և ժողովրդավարության փոխհարաբերությունն է:<sup>1</sup> Ամեն մի ժամանակակից ժողովրդավարական պետություն հիմնված է դեմոսի մասնակցության վրա, իսկ ազգայնականությունը ենթադրում է դեմոսի մեկ հնարավոր սահմանում, որը կարող է համընկնել պետության տարածքում գտնվող դեմոսին, կարող է և՛ ոչ: Մի շարք քննարկվելիք խնդիրներ բխում են դրանից:

Ժողովրդավարությանն անցման մասին մտածելիս շատ մարդիկ հակված են ենթադրելու, որ պայքարը ոչ ժողովրդավարական վարչակարգի դեմ է, և որ ժողովրդավարության հետ միասին հաստատվում է նոր լեգիտիմ համակարգ: Սակայն շատ երկրներում ոչ ժողովրդավարական վարչակարգերի ճգնաժամը միախառնվում է նաև այն խոր տարածայնություններին, թե ինչից պետք է իրականում կազմված լինի հասարակարգը (կամ քաղաքական համայնքը) և թե որ դեմոսը կամ դեմոսները (բնակչությունը կամ բնակչությունները) պետք է լինեն այդ քաղաքական համայնքի անդամ: Երբ խոր տարածայնություններ են ի հայտ գալիս քաղաքական համայնքի կազմավորած պետության տարածքային սահմանների և այն հարցում, թե ով ունի քաղաքացիության իրավունք այդ պետության մեջ, ծագում է «պետութենականության» հարցը: Ժողովրդավարության ձգտող ժամանակակից վարչակարգերն ըստ այդ փոփոխականի՝ կարող են խստորեն տարբերվել այն հասարակարգերից, որոնք չունեն պետութենականության խնդիր, մինչև այնպիսիները, որտեղ ժողովրդավարության առկայությունն անհնար է, քանի դեռ պետութենականության հարցը չի լուծվել:

Ժողովրդավարությանն անցման օրինակների վերաբերյալ սկզբնական, իսկ այժմ նաև դասական գրականությունը բավարար չափով չի անդրադարձել կամ ուշադրություն դարձրել «պետութենականության» խնդիրներին, որովհետև այդ գրականության մեծ մասը

---

1. Թերի ուսումնասիրվածության մասին մեր միտքը վերաբերում է հատկապես ժամանակակից պետության, ժամանակակից ազգայնականության և ժամանակակից ժողովրդավարության միջև եռամիասնական փոխհարաբերությանը: Իհարկե, գրվել են որոշ հիանալի նոր աշխատություններ պետության պատմության վերաբերյալ: Տե՛ս հատկապես Մայքլ Ման, «Սոցիալական իշխանության աղբյուրները», «Դասակարգերի և ազգային պետությունների առաջացումը» (Michael Mann, *The Sources of Social Power*, Vol. Two: *The Rise of Classes and Nation-States*, 1760-1914 (New York: Cambridge University Press, 1993)):

սը կենտրոնացել է Հարավային Եվրոպայում և Լատինական Ամերիկայում անցումների վրա, որտեղ մեկ տարածքային պետության մեջ մրցակցող ազգայնականների խնդիրը կամ այն հարցը, թե ով է համարվում նոր ժողովրդավարական հասարակարգի քաղաքացի, հիմնականում ուշադրության չի արժանացել:<sup>2</sup> Տեսական գրականությունը շատ հպանցիկ է անդրադարձել անգամ Իսպանիայում ազգայնական կատալոնացիների ու բասկերի մրցակցությանը, որովհետև իսպանական պետութենականության լեզվափոխությունը ձեռք էր բերվել բավարար հաջողությամբ: Հետևաբար, մեր նպատակն է ժողովրդավարությանն անցման ու կայացման տեսության մեջ պետութենականության գաղափարի հարցում որդեգրել համակարգված մոտեցում: Խնդրին կմոտենանք՝ քննելով երեք տարբեր հարցեր: Ինչո՞ւ է ինքնիշխան պետության գոյությունը համարվում ժամանակակից ժողովրդավարության նախապայման: Ինչո՞ւ են պետության կերտումն ու ազգի կերտումը համարվում գաղափարապես և պատմականորեն տարբեր գործընթացներ: Եվ որ ավելի կարևոր է, ո՞ր դեպքերում են ազգային պետություններն ու ժողովրդավարությունը հանդիսանում միմյանց փոխլրացնող կամ հակասող տրամաբանություններ, և ի՞նչ է հնարավոր անել ժողովրդավարություն կերտելու համար, եթե դրանք փոխհակասող տրամաբանություններ են:

## ԻՆՔՆԻՇԽԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Ժողովրդավարությունը ժամանակակից պետության կառավարման ձևերից մեկն է: Հետևաբար, առանց պետության ոչ մի ժամանակակից ժողովրդավարություն հնարավոր չէ:<sup>3</sup> Այս պնդումները ճիշտ են և՛ տեսականորեն, և՛ էմպիրիկորեն: Եկեք դիտարկենք պետության որոշ հիմնական սահմանումներ՝ տեսնելու, թե ինչու է այդպես: Մաքս Վեբերն առաջարկում է ժամանակակից հասարակություններում պետության հիմնական ատրիբուտների դասական և հստակորեն կենտրոնացված քննություն:

Ժամանակակից պետության հիմնական ձևական բնութագրերը հետևյալն են. այն ունի վարչական և իրավական կարգ, որը ենթակա է փոփոխության օրենսդրության միջոցով, և որին ուղղված է վարչական անձնակազմի կազմակերպված կորպորատիվ գործունեությունը, որը

2. Օրինակ՝ ժողովրդավարական անցումների մասին ամենահեղինակավոր ուսումնասիրություններից է Գյիլերմո Օ'Դոննելի, Ֆիլիպ Շմիտթերի և Լոուրենս Ուայթհեդի խմբագրած քառահատոր աշխատությունը, «Անցում վարչահրամայական/ավտորիտար իշխանությունից» (by Guillermo O'Donnell, Philippe C. Schmitter, and Laurence Whitehead, *Transitions from Authoritarian Rule* (Baltimore: Johns Hopkins University Press, 1986)), որը նվիրված է Հարավային Եվրոպային ու Լատինական Ամերիկային, և որը, ըստ էության, չի պարունակում պետութենականության խնդիրների կամ անգամ ազգայնականության հարցի որևէ քննարկում:

3. Անկասկած, ժամանակակից պետությունից տարբերվող սոցիալական կազմակերպության այլ ձևեր, ներառյալ՝ քաղաքական կազմակերպությունների նախապետական (կամ անգամ ոչ պետական) ձևերը, կարող են, ինչպես մարդագետներն են ճիշտ նշել, որոշումներ ընդունելու ժամանակ կիրառել ժողովրդավարական ընթացակարգեր: Որոշումների ընդունման նման ձևերը, սակայն, արմատապես տարբերվում են «քաղաքական ժողովրդավարություն» արտահայտության մեր կիրառումից՝ որպես ժամանակակից պետության մեջ իշխանության կերտման ձև:

նույնպես կարգավորվում է օրենսդրությամբ: Այդ տիպի համակարգը պահանջում է պարտադրող իշխանությունն ոչ միայն պետության անդամների, այսինքն՝ քաղաքացիների նկատմամբ, որոնց մեծ մասը ստացել է անդամակցություն ծննդյան իրավունքով, այլ նաև մեծ չափով իր իրավասության ոլորտում տեղի ունեցող բոլոր գործողությունների նկատմամբ: Դա, հետևաբար, պարտադիր կապ ունի տարածքային հիմքի հետ: Ավելին, այսօր ուժի գործադրումը համարվում է լեգիտիմ միայն այնքանով, որքանով դա կամ թույլատրվում, կամ նախատեսվում է պետության կողմից... Ժամանակակից պետության կողմից ուժի կիրառման մենաշնորհն իրեն վերապահելու հավակնությունը նույնքան էական է իր (պետության) համար, որքան իր հարկադրելու իրավասությունն ունենալն է և մշտական կազմակերպիչ լինելը:<sup>4</sup>

Չարլզ Թիլլին առաջարկում է ավելի նոր ձևակերպում, որը նույնպես ուշադրություն է հրավիրում տարածքում բնակչության նկատմամբ իշխանություն բանեցնելու պետության ունակության վրա: Թիլլիի համար «որոշակի տարածք զբաղեցնող բնակչության նկատմամբ իշխանություն բանեցնող կազմակերպությունը համարվում է պետություն» այնքանով, որքանով (1) այն առանձնանում է նույն տարածքում գործող այլ կազմակերպություններից, (2) այն ինքնավար է [և] (3) նրա ստորաբաժանումները ձևականորեն համաձայնեցված են միմյանց հետ:<sup>5</sup>

Քանի դեռ պետության այդ հատկանիշներն ունեցող որևէ կազմակերպություն չի գտնվում որևէ տարածքի վրա, ցանկացած կառավարություն (անգամ եթե այն «ընտրվել է» ժողովրդավարորեն) չի կարող արդյունավետ իրացնել որևէ տարածքում ուժի լեգիտիմ գործադրման մենաշնորհն ունենալու իր հավակնությունը, չի կարող հավաքել հարկեր (ուստի և իրականացնել որևէ հանրային ծառայություն) և չի կարող կիրառել դատական համակարգ:

Ինչպես պարզվեց կայացած ժողովրդավարության հինգ ոլորտների մասին մեր քննարկումից, առանց այդ կարողությունների ժողովրդավարական կառավարում լինել չի կարող: Հետևաբար, տրամաբանորեն և էմպիրիկորեն այս փաստարկը հանգեցնում է այն նույն եզրակացությանը, որ ժամանակակից պետության հատկանիշներն ունեցող որևէ կազմակերպության բացակայությունը (ինչպես Սոմալիում 1992-94թթ.) խոչընդոտում է

4. Մաքս Վեբեր, «Սոցիոլոգիայի հիմնարար հասկացությունները», Թավկոտ Փարսոնզի խմբագրած «Սոցիալական և տնտեսական կազմակերպության տեսություն» (Max Weber, *"The Fundamental Concepts of Sociology"*, in Talcott Parsons, ed., *The Theory of Social and Economic Organization* (New York: Free Press, 1964), 156):

5. Չարլզ Թիլլի, «Մտորումներ Եվրոպայում պետությունների կերտման մասին», Չ.Թիլլիի խմբագրած «Ազգային պետությունների կազմավորումը Արևելյան Եվրոպայում» (Charles Tilly, *"Reflections on the History of European Statemaking"*, in Charles Tilly, ed., *The Formation of National States in Western Europe* (Princeton: Princeton University Press, 1975), 70): Նույն սահմանման մեջ Թիլլին նաև ասում է, որ պետությունները պետք է լինեն «կենտրոնացված»: Մեր գրքում այդ մասը հանվել է դաշնային պետությունների մասին շփոթություն չհարուցելու համար, որոնք քանի դեռ «ունեն ձևական համաձայնեցվածություն» Թիլլիի նկատի ունեցած իմաստով, կարող են, իհարկե, հանդիսանալ պետություններ: Ժամանակակից պետության ծագման մասին հիանալի համառոտ վերլուծություն է Ջիանֆրանկո Պոգգիի՝ պատմականորեն և գաղափարապես լավ հիմնավորված գիրքը, «Ժամանակակից պետության զարգացումը. սոցիոլոգիական ներածություն» (Gianfranco Poggi, *The Development of the Modern State: A Sociological Introduction* (Stanford: Stanford University Press, 1978)):

ժողովրդավարական կառավարմանը պետության ողջ տարածքում, թեև այն հնարավոր է՝ չխանգարի քաղաքական իշխանության մասնատված ոլորտներին:

Եթե ընդունենք (ինչը և անում ենք) Վեբերի պնդումն այն կազմակերպության մասին, որը նախքան նրա պետություն դառնալը կարիք ունի հավակնելու պարտադրող իշխանության որևէ տարածքում, և Թիլլիի պահանջը, որ ցանկացած պետություն պետք է լինի ինքնուրույն, պետք է նաև պարզ լինի, որ դրանք պահանջկոտ (և կարծում ենք՝ անհաղթահարելի) սահմանափակումներ են ժողովրդավարության համար, քանի դեռ տարածքային միավորը չի ճանաչվել որպես ինքնիշխան պետություն: Այդ փաստարկը զարգացնենք Հոնգկոնգի օրինակով: Միացյալ Թագավորության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) միջև 1984թ. հիմնական համաձայնագրով Չինաստանի Ժողովրդական Հանրապետությանը շնորհվել են հիմնարար սահմանադրական իրավունքներ: Մինչև վերջինս չդառնա ժողովրդավարական կամ Հոնգկոնգին չշնորհի անկախություն, Հոնգկոնգը չի կարող դառնալ ժողովրդավարական՝ անկախ այնտեղ տեղի ունեցող ժողովրդավարական շարժումների աճող ծավալներից ու թափից:

1984թ. նախնական ձևակերպումը՝ «Մեկ երկիր, երկու համակարգ» և 1997թ. հուլիսի 1-ից սկսած մինչև հիստուն տարի Հոնգկոնգում գոյություն ունեցող իրավական, տնտեսական, սոցիալական և քաղաքական համակարգերի պահպանումը խոստացող համաձայնագիրը փայլուն կերպով ցույց են տալիս ժողովրդավարության սահմանները պետականության բացակայության պայմաններում:

Եթե «մեկ երկիր» արտահայտությունը փոխարինվի «մեկ պետություն» արտահայտությամբ, պարզ կդառնա, որ գերակշռող քաղաքական համակարգի տեսակի մասին որոշումը, ի վերջո՝ գտնվում է հենց այդ պետության ձեռքում: Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունն ըստ իր իսկ նպատակների՝ հատկապես Մակաոյի և բոլորից ավելի՝ Թայվանի ՉՇՀ-ի հետ վերամիավորման ծրագրերի, հնարավոր է՝ ունենա Հոնգկոնգի հատուկ վարչական տարածքին շատ թե քիչ ինքնավարություն և ինքնակառավարում շնորհելու պատրաստակամություն: Մակաոյն այդ որոշումն, ի վերջո, պետք է ընդունի չինական կառավարությունը: Միայն Միացյալ Թագավորության (ՄԹ) և Չինաստանի միջև համաձայնագրով երաշխավորված ինստիտուտները կունենան պահպանվելու որոշ հավանականություն՝ որպես միջազգային համաձայնագրի մաս, և այդ պատճառով է, որ կառավարությունը Պեկինում շարունակ մերժում է ցանկացած ինստիտուցիոնալ բարեփոխում, որն անգամ մոտ կլինի այն բանին, ինչը կանվանեինք քաղաքական ժողովրդավարություն Հոնգկոնգում:<sup>6</sup>

Հոնգկոնգի օրինակը լուսաբանում է մի խնդիր, որը չի քննարկվել ժողովրդավարացման վերաբերյալ գրականության մեջ: Հնարավոր է արդյոք ոչ ժողովրդավարական պետության ներսում ստեղծել և ունենալ գործող ժողովրդավարական քաղաքական ենթահամակարգ: Կարո՞ղ է արդյոք գոյություն ունենալ որևէ ժողովրդավարական են-

6. Օրինակ՝ 1997թ. հետո առաջարկված սահմանադրական կառուցվածքի մասին ուշադիր ընթերցողը կտեսնի, որ քաղաքական համակարգը Հոնգկոնգում այն տեսքով, ինչպես նախատեսված է 1984թ. համաձայնագրով, չի համապատասխանում ժողովրդավարության մեր չափանիշներին, որովհետև Հոնգկոնգի կառավարությունը չի ընտրվի, այլ կնշանակվի Պեկինի կողմից՝ Հոնգկոնգի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ներկայացուցիչների կողմից համատեղ առաջարկված երեք անձանցից բաղկացած ցանկից:



թահամակարգ որևէ ամբողջատիրական կամ հետամբողջատիրական պետության ընդհանուր շրջանակի մեջ: Քաղաքականապես՝ հավանաբար ոչ, և այն պատճառով, որ այն օրինակ կձառայի ավելի մեծ միավորման մեջ ապրող քաղաքացիների համար՝ տեսնելու, որ մի ուրիշ տարածք վայելում է իրենց համար անմատչելի ազատություններ: Այդ աններդաշնակությունն ինքնիշխան պետությանը մշտապես կմղի այդ ժողովրդավարական ինստիտուտները տապալելու գայթակղության: Սակայն կա ավելի լուրջ և սկզբունքային սահմանադրական դժվարություն: Պետությունը դարձյալ կունենա ցանկացած բաղադրիչ միավորի քաղաքական կարգավիճակը փոխելու իրավունք: Իհարկե, այդ անելն առաջ կբերի լուրջ քաղաքական հակամարտություն, իսկ Դահլիի հաշվարկը՝ հանդուրժելու ծախսը համեմատած ճնշման ծախսի հետ, կարող է ինքնիշխան պետությանը ստիպել հանդուրժել ժողովրդավարական ինստիտուտները երկրի մի մասում: Անգամ այդ դեպքում որոշումների ընդունման ոլորտների սահմանազատումը վերապահել այն միավորին, որին կանվանենք «դաշնային ենթամիավոր», իսկ որոշումների ընդունման այլ ոլորտները վերապահելը ոչ ժողովրդավարական կենտրոնական կառավարությանը կարող է կարևոր որոշումներ ընդունելուց ամբողջովին դուրս թողնել ժողովրդավարական իշխանությանը: Ցանկացած ժողովրդավարական դաշնային պետության մեջ ենթամիավորների քաղաքացիներն ակնհայտորեն մաս են կազմում դաշնային ներկայացուցչական մարմիններում կենտրոնում որոշումների ընդունման գործին ժողովրդավարական մասնակցության միջոցով: Սակայն կենտրոնում՝ ոչ ժողովրդավարական մի համակարգում, նրանք մաս չեն ունենա, և այդ ոչ ժողովրդավարական կենտրոնը կընդունի ամենակարևոր որոշումները: Հետևաբար, Հոնգկոնգի նման միավորը չի բավարարի Ռոբերտ Ա. Դահլիի բերած ժողովրդավարական դաշնության համար անհրաժեշտ երկու չափանիշներից և ոչ մեկին՝ ո՛չ նրա այն պահանջին, որ «դաշնային համակարգում որևէ ազգային մեծամասնություն չի կարող գերակշռություն ունենալ սահմանադրորեն երաշխավորված արտոնություն ունեցող տեղական միավորներից որևէ մեկում մեծամասնություն կազմող որևէ փոքրամասնության նկատմամբ» (որովհետև Հոնգկոնգը չունի սահմանադրորեն երաշխավորված արտոնյալ կարգավիճակ), ո՛չ էլ նրա այն պահանջին, որ դաշնության մեջ բոլոր միավորները պետք է լինեն ժողովրդավարական, և, հետևաբար, առանձին քաղաքացիների քաղաքական իրավունքները պետք է հարգվեն:<sup>7</sup>

Ոչ ժողովրդավարական համակարգում, ինչպիսին, օրինակ, Բրիտանիայի գաղութային իշխանությունն է Հնդկաստանում, կարող են լինել չափազանց կարևոր ժողովրդավարական զարգացումներ, և հնարավոր է, որ գոյություն ունենա ընտրված ժողովրդավարական ներկայացուցիչների հետ իշխանությունը կիսելու և նրա հետ լրջորեն խորհրդակցելու ի նչ-որ ձև, սակայն ցանկացած այդպիսի համակարգ՝ ըստ քաղաքական ժողովրդավարության մեր սահմանման, չէր կարող լինել ժողովրդավարություն՝ նկատի ունենալով Վեստմինստրի կողմից պահպանվող իրավասություններն այն ժամանակ, երբ դեռ Միացյալ Թագավորությունը չէր ճանաչել Հնդկաստանի անկախությունը: Ժողովրդա-

7. Դահլիի կարճ, բայց դասական քննարկումը ժողովրդավարական ֆեդերալիզմի և այն ներհատուկ (սակայն ընդունելի) սահմանների մասին, որ դաշնային համակարգը ենթադրում է պետության որոշ քաղաքացիների կողմից ընդունված ժողովրդավարական որոշումների որոշ տիպերի նկատմամբ, տե՛ս Ռոբերտ Ա. Դահլի, «Ժողովրդավարություն, ազատություն և հավասարություն» (Robert A. Dahl, *Democracy, Liberty, and Equality* (Oslo: Norwegian University Press, 1986), 114-26. Quote from 115):

վարությունը պահանջում է պետականություն: Առանց ինքնիշխան պետության չի կարող լինել ապահով ժողովրդավարություն:<sup>8</sup>

#### ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏՈՒՄ, ԱԶԳԵՐ ԵՎ ԱԶԳԱԿԵՐՏՈՒՄ

Ընդունելով այն, որ ժողովրդավարության համար պարտադիր պայման է ժամանակակից պետության առկայությունը, մենք այսուհետև կքննարկենք, թե պետության կերտումն ու ազգի կերտումն ինչու են հանդիսանում երկու մասամբ համընկնող, սակայն սկզբունքորեն և պատմականորեն տարբեր գործընթացներ: Եվ եթե պետության կերտումն ու ազգի կերտումը սերտորեն չեն համընկնում միմյանց և միմյանցից խիստ անբաժանելի գործընթացներ չեն, իսկ մենք ցույց ենք տալիս, որ հաճախ այդպես էլ լինում է, ապա այդ երկու գործընթացների միջև փոխհարաբերությունը կարող է խնդիրներ հարուցել և՛ պետականության, և՛ ժողովրդավարացման համար:

Պետության կերտումը թափ առավ ֆեոդալական հասարակության ճգնաժամի և Վերածննդի ու Ռեֆորմացիայի<sup>9</sup> ժամանակաշրջանների ի հայտ գալուն զուգընթաց: Այն քրիստոնեական կայսրության ճգնաժամի և Արևմտյան, իսկ ավելի ուշ՝ նաև Հյուսիսային Եվրոպայում առաջացող միապետությունների միջև մրցակցության արդյունք էր: Պետությունը, ինչպես ասում է մեծ պատմաբան Բուրքհարդտը, «արվեստի գործ է» և ի բնե

8. Բաժանված, սակայն անկախ և ինքնիշխան պետությունները, ինչպիսիք են՝ Հյուսիսային և Հարավային Կորեան ու Թայվանը և Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը, կարող են ստեղծել ժողովրդավարություն մեկ բաղադրիչում, սակայն անվտանգությանը սպառնացող վտանգի մասին վերնախավի ընկալումները կարող են արտոնություններ տալ զինվորական կամ հատուկ ծառայություններին և լրացուցիչ բարդություններ առաջացնել ժողովրդավարության գործընթացի համար: Օրինակ՝ Թայվանում ժողովրդավարացումը լրջորեն բարդացել էր այն իրավական ֆիլկցիայի պատճառով, որ Չինաստանի Հանրապետությունը (միայն Թայվանի և որոշ մտտակա կղզիների փաստացի ղեկավարը) պնդում էր, որ ներկայացնում է բոլոր չինացիներին և որ, հետևաբար, տեղեր են պահվել ցամաքային «ներկայացուցիչները» համար, որոնք մշտապես ընտրովի չեն եղել: Նրանք ունեցել են «երկարացված մանդատներ» և նրանց մահից հետո նշանակվել են փոխարինողներ: Ավելին, Թայվանն իրավունք չուներ պահանջել առանձին պետականություն: Չինաստան վերադառնալու ֆիլկցիան ավտորիտար կարգը պահպանելու պատճառաբանություններից մեկն էր: Լուրջ նշանակություն ունի այն, որ Թայվանում հարաճուն անցումը ժողովրդավարության հանգեցրեց այն բանին, որ պահված տեղերը և երկարացված մանդատները դադարեցին գոյություն ունենալ, և Թայվանի անկախության համար սկսվեց բաց բանավեճ: Թայվանում վերջին փոփոխությունների մասին տե՛ս Չիա-Լունյ Լին, «Քաղաքական վերնախավերը և ժողովրդավարական համախմբումը Թայվանում. ինստիտուցիոնալ կապը բաժան-բաժան եղած հասարակությունում» (նյութը ներկայացվել է Հյուսիսային Ամերիկայում Թայվանի ուսումնասիրությունների առաջին ամենամյա համաժողովին (Chia-lung Lin, "Political Elites and Democratic Consolidation in Taiwan: Institutional Connection in a Divided Society" (paper presented at the First Annual Taiwan Studies Conference in North America, Yale University, June 2-4, 1995)):

9. Ավելի մանրամասն և օրինակներով հիմնավորված քննարկում (որից մենք մեծ չափով կօգտվենք) տե՛ս Խուան Ջ. Լինց, «Պետության կերտում և ազգի կերտում» (Juan J. Linz, "State Building and Nation Building", *European Review* 1 (1993): 355-69): Մեր երախտագիտությունն ենք հայտնում "European Review" ամսագրի հրատարակիչներին, ովքեր մեզ թույլատրեցին օգտվել այդ հոդվածից այս գլխում: Տե՛ս նաև Խուան Ջ. Լինց, «Բազմազգայնությունը և ժողովրդավարությունը» (Juan J. Linz, "Plurinacionalismo e democrazia", *Revista Italiana di scienza politica* 25, no. 1 (1995): 21-50):

ունեցել է արհեստական բնույթ:<sup>10</sup> Պատահական չէ, որ այդ գործընթացը նկարագրելիս կյանքի են կոչվել ճարտարապետական պատկերներ: Պետության կերտման գործընթացը չի կրում բնական զարգացման այն լրացուցիչ իմաստները, որոնք հետագայում գերակշիռ մաս կկազմեն ազգայնականության գաղափարը քննարկելիս: Պետության գաղափարը կապվում է ոչ թե բնության, բնական ծագման, այլ ստեղծման և արհեստի գաղափարների հետ:

Պետության կերտման գործընթացը շարունակվեց մի քանի դար, քանի դեռ ազգի և հատկապես «ազգային պետության» գաղափարը չէր բորբոքել մտավորականների և հասարակ մարդկանց երևակայությունը: Ի դեպ, պետության կերտման գործընթացը վճռորոշ ազդեցություն ունեցավ Եվրոպայի պատմական քարտեզի և 1500թ. հարյուրավոր քաղաքական կազմավորումների թվի դանդաղ նվազման վրա, որոնք 1900թ-ին արդեն մոտավորապես 25-ն էին:<sup>11</sup> Ֆրանսիական հեղափոխությունից հետո Ֆրանսիական Հանրապետության ցույց տված աջակցությունը հանրապետական անկախությանն իր ծայրամասերում, իսկ ավելի ուշ՝ Նապոլեոնի կողմից որոշ ազգայնական շարժումներին ցույց տրվող աջակցությունն ու ազգայնականների պատասխանը նապոլեոնական տիրակալությանը, հանգեցրեց այն բանին, որ պետության կերտման գործընթացը շարունակվի առանց հիմնված լինելու ազգային զգացմունքի, ինքնության կամ գիտակցականության վրա:<sup>12</sup> Առաջանալով հինգերորդ դարից հետո՝ պետությունները չէին պահանջում իրենց սուբյեկտների խիստ նույնացում ըստ տարածքային սահմանների, պատմության, մշակույթի կամ լեզվի: Իսկապես, հաճախ ակնկալվում էր, որ պետության հետ նույնացումն ու հավատարմությունը *փոխանցելի* լինեն լոկ դինաստիաների միջև ամուսնությունների

10. Ջ. Բուրքհարդտ Յ., (J. Burckhardt, *Die Kultur der Renaissance in Italien* (Bern: Hallwag, 1943): Գիրքն սկսվում է մի բաժնով, որի վերնագիրն է "Der Staat als Kunstwerk", էջ 11-144: Գիրքն առաջին անգամ հրատարակվել է 1860թ. և կարևորագույն նյութերից մեկն է:

11. *Տե՛ս* օրինակ՝ այն քարտեզը, որտեղ պատկերված են 1860թ. գոյություն ունեցած 300 փոքր, աննշան պետություններն ու ազատ քաղաքներն այն տարածքում, որտեղ այսօր գտնվում է մեկ երկիր՝ Գերմանիան, Ջեֆրի Բարրաքլաուի «Թայմսի աշխարհի պատմության համառոտ ատլասում» (Geoffry Barraclough, *The Times Concise Atlas of World History* (London: Times Books, 1982), 79):

12. Հաճախ ազգայնականության մասին գրականության մեջ բացահայտ կամ ոչ բացահայտ կերպով պատճառահետևանքային կապի ուժեղ գիծ է տարվում Ֆրանսիական հեղափոխության և ազգայնականության միջև: Պատմականորեն և գաղափարապես այդ կապը շատ ավելի բարդ էր: Ֆրանսիական հեղափոխությամբ ազգայնականություն չարտահանվեց, քանի որ դրա շնորհիվ Բատավիայում և Չեկվեցիայում ստեղծված հանրապետությունները շահագործող բանակների և ֆրանսիական զավթման գործիքներ էին: Եթե համարենք, որ ազգայնականության և Ֆրանսիական հեղափոխության միջև գոյություն ունի ինչ-որ կապ, ապա դա թագավորական դինաստիաներին պատկանող կառավարիչների, քաղաքագետների և դիվանագետների ձախողումից հետո ինչ-որ պահի առաջացած հայտնի հակահեղափոխական արձագանքն էր ժողովրդին պաշտպանելու նպատակով, որն այնուհետև անկախությունը վերցրեց հենց իր ձեռքը (ինչպես իսպանացիների կողմից Նապոլեոնին ցույց տրված դիմադրության ժամանակ): Ոչ էլ Ֆրանսիայի «բնական սահմանների» ձեռք բերումը որևէ կերպ հիմնված է եղել ազգի մասին ժամանակակից հասկացությունների վրա, այլ ավելի ստույգ այն հիմնված է եղել Ֆրանսիական պետության շահերի վրա: Նապոլեոն I-ը Եվրոպայի քարտեզը վերաձևելիս նպատակ չի ունեցել ստեղծելու ազգային պետություններ, որոնց կառավարեն իր եղբայրներն ու գեներալները, այլ նրանց է տվել ինի երկրներ՝ թագավորություններ, օրինակ՝ Իսպանիան և Նեապոլը, կամ ստեղծել է պետություններ, ինչպես, օրինակ՝ Վեստֆալիան:

շնորհիվ: Այսինքն, հավատարմությունը պատկանում էր դինաստիային, այլ ոչ թե ազգին (որը շատ դեպքերում դեռևս չէր էլ «հայտնագործվել»):

Սակայն գրեթե անկասկած է, որ սուբյեկտների նույնացումը պետության հետ կամ ընդհանուր թագավորի նկատմամբ հավատարմությունը ժամանակակից միապետությունների հիմքը հանդիսացող տարբեր միավորներում ապրող մարդկանց կողմից ուղեկցվում էր նախազգային զգացմունքով:<sup>13</sup> Վաղ թե ուշ այդ երկրներից շատերում պետությունն սկզբնավորեց ազգի կերտման պետական գործընթաց և ժողովրդավարացման հետ միասին ի վերջո՝ ազգի կերտման գործընթաց: Դա մեզ կանգնեցնում է «ազգ» և «ազգային պետություն» բառերի առջև:<sup>14</sup>

Ըստ Վեբերի՝ ազգի գաղափարը պատկանում է արժեքների ոլորտին. այն «նախ և առաջ նշանակում է, որ հարկ է որոշակի խմբերից ակնկալել համերաշխության հատուկ զգացում այլ խմբերի առջև»:<sup>15</sup> Ինչպես լրացուցիչ նշում է Վեբերը, նաև համաձայնություն չկա այն բանի շուրջ, թե այդ խմբերն ինչպես է պետք տարանջատել, կամ այն հարցի շուրջ, թե ինչ համաձայնեցված գործողություն կարող է առաջանալ այդպիսի համերաշխության հետևանքով: Պարզ լեզվով ասած՝ պարտադիր չէ, որ ազգն անպայման նույնական լինի պետության մարդկանց հետ, այսինքն՝ տվյալ հասարակարգին անդամակցության հետ: Դա չի նշանակում, որ այն չի կարող նույնական լինել, բայց միևնույն ժամանակ նույնական լինելը պարտադիր չէ: Մինչև Գերմանիայի վերջերս տեղի ունեցած վերամիավորումը տիրող իրավիճակը միանգամայն հստակ ցույց է տալիս այդ տարբերությունը: Գոյություն ունեին երկու պետություններ, թեև շատ մարդիկ համաձայն էին խնդրի այն լուծմանը, որն ի վերջո արտահայտվեց Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության (ԳԴՀ) վերացմամբ և "Wir sind ein Volk" արտահայտության ի հայտ գալով, ըստ որի՝ կար մեկ գերմանական ազգ՝ բաժանված երկու պետությունների միջև:<sup>16</sup>

Այժմ անդրադառնանք պետությունների և ազգերի միջև որոշ՝ ավելի նշանակալի

13. Տե՛ս Լիա Գրինֆիլդի կարևոր աշխատությունը, «Ազգայնականություն. հինգ ճանապարհ դեպի արդիականություն» (Cambridge: Harvard University Press, 1992):

14. Թեև մենք խոսում ենք աշխարհի Միացյալ Ազգերի մասին, իրականում մենք գործ ունենք աշխարհի միացյալ պետությունների հետ: ՄԱԿ (ՄԱԿ) իրականում պետք է կոչվեր ՄԱԿ (ՄԱԿ), եթե այդ հասկացումը որպես ապրանքային նշան յուրացրած չլիներ Ամերիկայի Միացյալ Նահանգները:

15. Ազգայնամոլության վերաբերյալ Վեբերի դիտարկումների մասին տե՛ս Մաքս Վեբեր, «Քաղաքական համայնքներ» (Max Weber, "Political Communities"), Գյունտեր Ռոթի և Կլաուս Ուիտտիչի (Guenther Roth and Klaus Wittich) խմբ.՝ *Economy and Society* (New York: Bedminster Press, 1968), 11: 921-26:

16. Մ. Ռայներ Լեփսիուս, «Էթնոս և դեմոս» (M. Rainer Lepsius, "Ethnos and Demos", in *Interessen, Ideen and Institutionen* (Opladen: Westdeutscher Verlag, 1990), 250-51, 232-46): Ավստրիայի սահմանադրական ժողովն իր սահմանադրության նախագծի 1-ին հոդվածում միայն մեկ դեմ քվեով քվեարկեց հոգում Գերմանիայի հետ վերամիավորման, սակայն այդ վերամիավորումն աշխարհաքաղաքական պատճառներով արգելվեց Առաջին համաշխարհային պատերազմի հաղթողների կողմից: Դա որպես ժառանգություն թողեց պետությունականության հետ կապված խնդիրներ, որոնք I և II համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում թուլացրեցին ժողովրդավարությունը և՛ Ավստրիայում, և՛ Գերմանիայում: Տե՛ս Ուոլտեր Բ. Սայմոն, «Ժողովրդավարությունը պարտադրված անկախության ստվերում. Ավստրիայի առաջին հանրապետությունը», Խուան Ջ. Լինցի և Ալֆրեդ Ստեփանի խմբագրած «Ժողովրդավարական կարգերի տրոհումը. Եվրոպա» (Juan J. Linz and Alfred Stepan, eds., *The Breakdown of Democratic Regimes: Europe* (Baltimore: Johns Hopkins University Press, 1978), 80-121; for the vote see 83):

տարբերություններին: Ազգը չունի պաշտոնյաներ, և այնտեղ չկան սահմանված ղեկավար դերեր, թեև կան անհատներ, ովքեր շարժումներում և ազգայնական կազմակերպություններում հանդես են գալիս որպես ազգային զգացմունքի կրողներ, "Trager" (կրել) բառի վեբերյան իմաստով: Ազգի մեջ չկան անդամակցության այնպիսի հստակ կանոններ և սահմանված իրավունքներ ու պարտականություններ, որոնք կարող են լեգիտիմորեն կիրառվել (թեև ազգայնականները հաճախ փորձում են որոշակի վարքագիծ պարտադրել մարդկանց՝ հանդես գալով նրանց անունից, ովքեր նույնանում են ազգի հետ, կամ նրանց անունից, ովքեր նրանց պնդմամբ՝ պետք է նույնանան ազգի հետ): Սակայն առանց պետական հովանավորության ազգայնական ուժերը չեն կարող իրավականորեն կամ անգամ լեգիտիմորեն գործել: Ազգը կամ ազգի անունից հանդես եկող ազգայնական առաջնորդները չունեն հնազանդություն պահանջելու այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են՝ ուժային միջոցներն ու հարկերը: Այդ ռեսուրսները կարող է տրամադրել միայն պետությունը՝ պարտադրման եղանակով ազգային նպատակներ իրականացնելու համար:

Չեռևաբար, ազգը՝ որպես այդպիսին չունի կազմակերպական բնութագրեր, որոնք համեմատելի կլինեն պետության բնութագրերի հետ: Այն չունի ինքնավարություն, գործակալներ, օրենքներ, այլ միայն այնպիսի ռեսուրսներ, որոնք բխում են այդ ազգը կազմող մարդկանց հոգեբանական նույնականացումից: Այն դեպքում, երբ պետությունը կարող է գոյություն ունենալ իր օրենքների հետ արտաքին համաձայնության հիման վրա, ազգը պահանջում է որոշ ներքին նույնականացում: Բենեդիկտ Անդերսոնը միանգամայն իրավացի է: Առանց «երևակայական հանրության» ազգեր գոյություն չունեն:<sup>17</sup>

Կարելի է, իհարկե, բերել այնպիսի փաստարկներ, որ ազգայնական շարժման ընթացքում բյուրեղացող ազգը, անգամ երբ նա չի կառավարում տվյալ պետությունը, կարող է իշխանություն բանեցնել, բռնություն կիրառել կամ հարկեր «կորզել» առանց դեռևս պետականություն ձեռք բերած լինելու: Սակայն պետությունների համաշխարհային համակարգում դա նշանակում է, որ շարժումն իր վրա է վերցնում մեկ այլ պետության որոշ գործառնություններ՝ տապալելով դրա կարգն այնպես, որ պետությունն այդ ընթացքում փլուզվում է: Ազգայնամուլները կարող են ստեղծել մասնավոր բանակներ՝ հարկադրելու իրենց ձգտումները և մարտահրավեր նետելու պետական իշխանությանը, որը որոշ դեպքերում կարող է կորցնել իշխանության ղեկը որևէ տարածքում: Այդ դեպքում խոսքը քաղաքացիական պատերազմի կամ ազգային-ազատագրական պայքարի առաջացման մասին է, որը կարող է ավարտվել նոր պետության ստեղծմամբ:

Այն դեպքում, երբ ժամանակակից պետության առաջացումը վերագրում ենք տասնհինգերորդ դարին, ազգի մասին ժամանակակից գաղափարները կամ ժամանակակից ազգայնականությունն առաջացել են միայն տասնութերորդ դարի վերջին, իսկ ազգային պետությունները դարձել են խոշոր ուժեր միայն տասնիններորդ դարի երկրորդ կեսին:<sup>18</sup>

17. Տե՛ս նրա հիանալի գրքի՝ «Երևակայական հանրություն. մտորումներ ազգայնականության ծագման և տարածման մասին» (*Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism* (London: verso, 190, revised and expanded edition, 141)):

18. Միանգամայն այլ պատճառներով Բենեդիկտ Անդերսոնը և Էռնեստ Գելները միմյանցից անկախ 1983թ., երբ նրանց գլխավոր գրքերն առաջին անգամ տպագրվեցին, եկան այն եզրակացության, որ մեր սահմանումով դիտարկվող ազգայնականությունը ծագել է տասնութերորդ դարի վերջում: Ըստ Անդերսոնի՝ «ազգությունը, ինչպես նաև ազգայնականությունը, առանձնահատուկ մշակութային

Սակայն, թեև պատմականորեն «ազգերը» սկսել են հայտնվել տասնիններորդ դարում, առավելապես՝ տասնիններորդ դարի երկրորդ կեսին, դրանցից միայն քչերն են ծառայել որպես պետության կերտման գործընթացների հիմք. դրանցից կարելի է նշել Իտալիան, Գերմանիան, Հունաստանը և ուրույն առումով՝ Հունգարիան կրկնակի միապետության շրջանակում: Հատկապես հետաքրքրական է Բելգիայի օրինակը՝ մի պետության, որը 1830թ. անկախություն էր նվաճել Նիդերլանդներից (թեև 16-րդ դարից սկսած՝ ուներ քաղաքական ինքնուրույնություն), կարծես ինչ-որ պահի ներգրավվել էր ազգային պետության կերտման գործընթացում, սակայն քսաներորդ դարում ֆլամանդական ազգայնականության դեմ պայքարում ստեղծեց քաղաքական ինստիտուտներ և իրականացրեց քայլեր, որոնց հետևանքում դարձավ *բազմազգ ժողովրդավարական* պետություն: Հունգարական ազգայնականությունը տասնիններորդ դարում ամենաուժեղներից էր, սակայն Սր. Ստեֆանի թագն իր իշխանությունը տարածեց բազմազգ պետության վրա: Իտալացի պատմաբանները դեռևս համաձայնության չեն եկել այն հարցի շուրջ, թե «Ռիզորջիմենտոն» և միավորումը ավելի շատ Կավուրի ղեկավարությամբ պետության կերտմա՞ն, թե՞ ազգի կերտման գործընթաց է Մազինիի և Գարիբալդիի ղեկավարման ժամանակ:<sup>19</sup> Թեև Գերմանիայում միավորման գործընթացի թիկունքում կար ուժեղ ազգայնական շարժում,

---

արդյունքներ են... Կփորձեի հիմնավորել, որ տասնութերորդ դարի վերջին այդ մշակութային արդյունքների ստեղծումը «միմյանցից անջատ պատմական ուժերի բարդ «խաչաձևման» տարերային գտում» էր, Անդերսոն, «Երևակայական հանրություն», էջ 4: Նա առանձնահատուկ ուշադրություն է նվիրում տպագիր խոսքի տարածմանը. «Տպագիր խոսքն է, որ հայտնագործեց ազգայնականությունը, և ոչ թե մի ինչ-որ առանձին լեզու՝ որպես այդպիսին»: Նույն տեղում, էջ 134: Ազգայնականության ծագման նրա վերլուծությունը նախքան արդյունաբերականացումը (ինդուստրիալիզացիա), և որտեղ լեզվական տարբերությունները էական չէին, Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, ինքնատիպ է և համոզիչ: Նույն տեղում, էջ 47-66: Գելների համար արդյունաբերականացման ի հայտ գալն էր, որը պահանջեց բարձր մշակույթ և գրագիտություն, աշխատանքի բաժանում և հատկապես՝ համալիր կրթական համակարգ՝ մարդկանց միմյանց հետ կապելու իրենց անմիջական գործունեության վայրերից անդին: Գելների համար «արտաքին շփման հրամայականներն են այն հիմնական բանալին, թե ինչու պետությունն ու մշակույթն այժմ պետք է կապված լինեն, մինչդեռ անցյալում դրանց կապը սահմանափակ էր, պատահական, փոփոխական, թույլ և հաճախ՝ նվազագույն: Այժմ դա անխուսափելի է: Հենց դա է նշանակում ազգայնականություն, և ահա թե ինչու ենք ապրում ազգայնականության դարում»: Տե՛ս Էռնեստ Գելներ, «Ազգեր և ազգայնականություն » (Ernest Gellner, *Nations and Nationalism* (Ithaca: Cornell University Press, 1983), 38):

Կարևոր վերլուծություն, որն ընդունում է, որ արդի հումանիտար գիտությունների մեծ մասի կողմից ազգայնականությունը որպես շարժում և գաղափարախոսություն՝ թվագրվում է տասնութերորդ դարի վերջով, սակայն փաստարկներ է բերում հոգուտ այն մտքի կենսունակության, որկա «ավելի մեծ շարունակականության նախաժամանակակից էթնիկ խմբերի ու էթնոցենտրիզմի և ավելի ժամանակակից ազգերի ու ազգայնականության միջև», տե՛ս Էնթոնի Գ. Սմիթ, «Ազգային ինքնություն» (Anthony D. Smith, *National Identity* (London: Penguin Books, 1991, 43-70. Quotation from 52): *Տե՛ս նաև* Լիա Գրինֆելդի նախապես նշված գիրքը՝ «Ազգայնականություն, հինգ ուղի դեպի արդիականություն» (Also see the previously cited book by Liah Greenfeld, *Nationalism: Five Roads to Modernity*): Որպես Եվրոպայում ազգայնականության մասին նորարարական տեսական և էմպիրիկ աշխատություն, տե՛ս Գի Էրմե, «Ազգայնականությունը Եվրոպայում» (Guy Fiermet, *Les nationalismes en Europe* (Paris: Editions du Seuil, 1996):

19. Հ. Ուլրիխս (H. Ullrich) "*Burgertum and Nationale Bewegung im Italien des Itisorgintentos*", Օ. Դաննի (O. Dann) խմբ.՝ *Nationalismus und Sozialer Wandel* (Hamburg: Hoffman und Cape, 1978):

գերմանական ուսյալը պետականակերտման արդյունք է, ընդ որում՝ ավելի շատ Բիսմարկի, քան ազգայնականների կողմից իրականացված:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո կնքված հաշտության պայմանագրերը դարձան ազգակերտման բարձրակետը՝ Վիլսոնի կողմից ինքնորոշման սկզբունքների հռչակմամբ: Սակայն 1918 թվականից հետո առաջացած նոր պետություններից իրականում բոլորը չէ, որ ազգային պետություններ էին: Չեխոսլովակիայում չեխերն ու սլովակները կազմում էին նոր հանրապետության բնակչության 64.8%-ը, գերմանացիները՝ 23.6%-ը, ռութենացիները՝ 3.5%-ը, հրեաները՝ 1.4%-ը և «այլ»՝ 6.7%-ը: Լեհաստանում լեհերը կազմում էին 69.2%-ը, ուկրաինացիները՝ 14.3%-ը, հրեաները՝ 7.8%-ը, գերմանացիները՝ 3.9%-ը, իսկ ռուսները՝ 3.9%-ը: Լատվիայում «անվանադիր ազգությունը» կազմում էր 73.4%-ը, Լիտվայում՝ 80.1%-ը, իսկ Էստոնիայում՝ 87.6%-ը: Երեք կայսրությունների տրոհումը մի շարք պետությունների և միջպետական սահմանների վերագծումն անմիջականորեն ազգակերտման շարժումների ջանքերի արդյունք չէին: Դժվար է պնդել, որ Փարիզի խաղաղության պայմանագրերի շնորհիվ ծագած նոր պետությունների կամ ընդլայնված սահմաններ ունեցած պետությունների մեծ մասն ազգային պետություններ էին, քանի որ դրանց բնակչության զգալի խմբերը չէին կազմում տիրապետող ազգության մաս: Մի քանի այդպիսի պետություն թվարկելը պարզ է դարձնում ասվածը՝ Հարավսլավիա, Չեխոսլովակիա, Լեհաստան, ընդլայնված Ռումինիա, Լիտվա և Լատվիա:

Այդ նոր պետություններում տիրապետող «ազգերը» (կամ բնակչությունները), օրինակ՝ սերբերը, չեխերը, լեհերը, լիտվացիները կամ լատիշները, կարող էին իրենց զգալ «ազատագրված», սակայն այդպես չէին կարող իրենց զգալ դրանց տիրապետության տակ գտնվող ժողովուրդները, եթե ունեցել կամ ավելի ուշ զարգացրել են առանձին ազգային գիտակցություն, ինչպես խորվաթներն ու սլովենները՝ Հարավսլավիայում, Մուդետի գերմանացիները՝ Չեխոսլովակիայում, գերմանացիները և ուկրաինացիները՝ Լեհաստանում կամ նույնիսկ տարբեր փոքրամասնություններ՝ Մերձբալթյան երկրներում: Փոքրամասնությունների նկատմամբ հարգանքի կամ ճնշման աստիճանը տարբեր պետություններում տարբեր է եղել: Բազմազգ պետությունների գաղափարը երբեմն խրախուսվել է, թեև հազվադեպ է իրականացվել շնորհիվ «ազգակերտման» գաղափարի գրավչության: Իհարկե, նոր պետությունների առջև ծառայած դժվարությունը պետության բարեհաջող կերտումն էր: Կարելի է պատմականորեն վերլուծել, թե ինչպես մի շարք դեպքերում պետության ներսում գերակայությունն ազգակերտմանը տալը նպաստել է ժողովրդավարության անկայունությանը, ճգնաժամին, իսկ հաճախ նույնիսկ տվյալ պետության անկմանը հետագա տասնամյակներում: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայում ստեղծված ութ նոր պետություններից միայն երեքը՝ Ֆինլանդիան, Չեխոսլովակիան և Իռլանդիան, դարձան կայուն ժողովրդավարություններ: Ի տարբերություն դրա՝ տասնհինգ ավելի հին պետություններից ինը շարունակեցին մնալ որպես կայուն ժողովրդավարություններ: Պարտված Օսմանյան կամ Ռուսաստանյան կայսրությունների իրավահաջորդներից ոչ մի պետություն, բացառությամբ Ֆինլանդիայի, կայուն ժողովրդավարություն չդարձավ:<sup>20</sup>

20. Տես Իվ. Լինց (J. Linz, "La crisis de las democracias"), Մերսեդես Կաբրերա և ուրիշներ (Mercedes Cabrera et al), խմբ.՝ *Europa en crisis, 1919-1939* (Madrid: Editorial Pablo Iglesias, 1991), 231-80: Մեր հետա-

Ժամանակակից ազգակերտիչ պետությունների ծագման ու կայացած ժողովրդավարության միջև կապի այդ բավականին տխուր փաստը մեզ մոտեցնում է այս գլխի կենտրոնական խնդրին: Ժամանակակից ազգայնականության ուսումնասիրության բնագավառի ամենահեղինակավոր գիտնականների՝ Էռնեստ Գելների և Բենեդիկտ Անդերսոնի երկու փայլուն գրքերից ոչ մեկը հիմնովին չի անդրադարձել ազգայնականության, պետությունների և ժողովրդավարության միջև կապերին:<sup>21</sup> Այս գլխի շարունակությունը նվիրված կլինի այդ թեմային:

## ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՈՒՄ. «ՏՅԱՃ» ՓԱՍՏԵՐ

Ո՞ր էմպիրիկ պայմանների պարագայում են «ազգային պետություններն» ու «ժողովրդավարացումը» ձևավորում փոխլրացնող տրամաբանություն: Եվ ո՞ր պայմանների պարագայում են դրանք ձևավորում փոխհակասող տրամաբանություն: Եթե դրանք ձևավորում են փոխհակասող տրամաբանություն, ապա ի՞նչ քայլեր ու ինստիտուտներ են ժողովրդավարության կայացումը դարձնում առավել կամ նվազ հնարավոր:

Շատ քաղաքական մտածողներ և գործիչներ ենթադրում են, որ վերբյան պետությունները, ազգային պետություններն ու ժողովրդավարությունը միմյանց հետ կապվում են որպես ժամանակակից հասարակարգերի ամենահիմնական սկզբունքներ: Եվ այնպիսի մի աշխարհում, որտեղ Ֆրանսիան, Գերմանիան, Պորտուգալիան, Հունաստանը, Ճապոնիան ու Շվեդիան բոլորն էլ վերբյան պետություններ, ազգային պետություններ և ժողովրդավարություններ են, նման ենթադրությունը կարող է հիմնավորված թվալ:

Այնուամենայնիվ, շատ երկրներում, որտեղ ժողովրդավարությունները դեռևս կա-

---

բրբրող խնդիրների առումով հատկապես հետաքրքրական է Ֆինլանդիան: Ֆինլանդիան մոտ էր միատարր ազգային պետություն լինելուն: Սակայն Ֆինլանդիան ուներ շվեդախոս փոքրամասնություն: Ֆինլանդիան կատարեց պետության նկատմամբ հավատարմություն սերմանելուն ուղղված հաջող քայլը. շվեդերենը դարձրեց երկու պետական լեզուներից մեկը և շնորհեց քաղաքացիության լայն իրավունքներ: Այդ համատեքստում շվեդական փոքրամասնությունը հեշտությամբ դրսևորեց հավատարմություն Ֆինլանդիայի ժողովրդավարական պետության նկատմամբ՝ միաժամանակ պահելով շվեդական կարևոր մշակութային ինստիտուտները, որոնց լեզվատիրությունը ճանաչվեց ֆիննական պետության կողմից:

21. Իսկապես, ոչ ոք չի նշում ժողովրդավարությունն իր ընդգրկուն այբբենական ուղեցույցում: Գելներն իր որոշ այլ աշխատություններում, մասնավորապես՝ «Ազատության պայմանները, քաղաքացիական հասարակությունն ու իր խնայանները» (Gellner, *Conditions of Liberty: Civil Society and Its Rivals* (London: Hamish Hamilton, 1994)) անդրադառնում է ժողովրդավարական փորձին: Սակայն «Ազգեր և ազգայնականություն» աշխատության մեջ նրա միտքն զբաղեցնող կենտրոնական հարցն ինդուստրիալիզացիայի ու ազգայնականության առաջացումն է: Ընդհանուր առմամբ իր աշխատության մեջ նա ազգայնականությունը (և ժողովրդավարությունը) դիտում է որպես արդյունաբերականացման լուրջ սաղմեր: Կարծում ենք, որ Գելների բացատրությունը, հատկապես՝ աշխարհում ժողովրդավարությունների փաստացի ծագման ու դրանց բազմազանության էմպիրիկորեն հիմնավորված վերլուծություն լինելու համար, չափազանց ֆունկցիոնալիստական է: Այն ժխտում է, այլ հարցերի թվում, ժողովրդավարության միջազգային տարածման ազդեցությունն այն հասարակարգերում, ինչպիսիք են՝ Հնդկաստանը կամ Կարիբյան ծովի ավազանի բրիտանական մասի շատ երկրներ, որոնք հետագայում դարձան հարատև ժողովրդավարություններ առանց ենթարկվելու լայնածավալ ինդուստրալիզացիայի:



յացած չեն, ազգային պետության քաղաքականությունը հաճախ ունենում է այլ տրամաբանություն, քան ժողովրդավարական քաղաքականությունը: «Ազգային պետության քաղաքականություն» ասելով՝ նկատի ունենք մի այնպիսի ծրագիր, որով պետության ղեկավարները վարում են Ռոջերս Բրուբեյքրի բառերով ասած՝ «ազգայնականացնող պետական քաղաքականություն», որի նպատակն է մեծացնել մշակութային միատարրությունը: Կամա թե ակամա ղեկավարները հղում են այնպիսի ուղերձներ, ըստ որոնց՝ պետությունը պետք է լինի ազգի «հիման վրա ու հանուն դրա»:<sup>22</sup> Հետևաբար, նրանց գրած սահմանադրությունների և նրանց կիրառած քաղաքականության մեջ տիրապետող ազգի լեզուն դառնում է միակ պաշտոնական լեզուն և ժամանակ առ ժամանակ՝ միակ ընդունելի լեզուն պետական գործի և հանրային (և հնարավոր է՝ նաև մասնավոր) կրթության համար. այդ ազգի կրոնը դառնում է արտոնյալ (եթե նույնիսկ այն չի ընդունվել որպես պաշտոնական կրոն), տիրապետող ազգի մշակութային խորհրդանիշերը դառնում են արտոնյալ նաև պետական բոլոր խորհրդանիշերում (ինչպես օրինակ՝ դրոշմ, ազգային օրհներգը և անգամ իրավունակությունը զինվորական ծառայության որոշ տեսակների համար) և պետության կողմից վերահսկվող հանրայնացման բոլոր միջոցներում, ինչպես օրինակ՝ ռադիոն, հեռուստատեսությունն ու դասագրքերը: Ի տարբերություն դրա՝ պետության կերտման գործընթացում ժողովրդավարական քաղաքականությունները նրանք են, որոնք շեշտում են լայն և ներառական քաղաքացիությունը, որի պարագայում բոլոր քաղաքացիներին շնորհվում են անհատի հավասար իրավունքներ:

Ո՞ր էմպիրիկ պայմանների պարագայում են ազգի կերտմանը նպատակաուղղված պետական քաղաքականությունների տրամաբանությունը և ժողովրդավարության կերտմանը նպատակաուղղված պետական քաղաքականությունների տրամաբանությունը լինում ներդաշնակ: Այդ տարբեր քաղաքականությունների միջև հակասությունները մեղմանում են, երբ գործնականում որևէ պետության գրեթե բոլոր բնակիչները հարում են ազգային մեկ սուբյեկտիվ գաղափարի, և այդ ազգն իրականում համընկնում է պետության հետ: Այդ պայմանները բավարարվում են միայն այն դեպքում, երբ պետության սահմաններից դուրս չկա նշանակալի չվերամիավորված տարածք, եթե պետության ներսում գոյություն ունի (կամ ինքնագիտակցության է եկել) միայն մեկ ազգ, և երբ պետության ներսում մշակութային տարբերությունները փոքր են: Իրականում միայն այդպիսի հանգամանքներում են կառավարության ղեկավարներն ի վիճակի միաժամանակ վարել ժողովրդավարացմանը և ազգային պետությանը միտված քաղաքականություններ: Հասարակարգի և դեմոսի միջև նման ներդաշնակությունը նպաստում է ժողովրդավարական ազգային պետության ստեղծմանը: Այդ ներդաշնակությունը գործնականում լուծում է պետութենականության խնդիրների մեծ մասը և համապատասխանաբար՝ պետք է համարվի ժողովրդավարության կայացմանը նպաստող պայման: Սակայն ելնելով ներկա հանգամանքներից՝ շատ քիչ թվով ոչ ժողովրդավարական երկրներ են սկսում հնարավոր անցումը ժողովրդավարության ազգային պետության միատարրության բարձր աստի-

22. Տե՛ս Ռոջերս Բրուբեյքր, «Ազգային փոքրամասնություններ, ազգայնացող պետություններ և արտաքին հայրենիքներ նոր Եվրոպայում. ծանոթություն հարաբերությունների վերլուծությանը» (Rogers Brubaker, "National Minorities, Nationalizing States, and External Homelands in the New Europe: Notes toward a Relational Analysis" (May 1994, unpublished manuscript)), որը ստացել էնք այս գլխի նախնական տարբերակն ավարտելուց հետո:

ճանով:<sup>23</sup> Այդ անհարմարավետ փաստն ազգային պետության կողմնակիցների համար բավարար չափով չի գիտակցվել կամ լրջորեն դիտարկվել և կարող է բարդացնել պետությունականության խնդիրները:

Շատ հաճախ քաղաքական առաջնորդների ազգայնական ձգտումները չեն ներդաշնակվում իրենց պետության *դեմոսների* (բնակչությունների) էմպիրիկ իրականություններին: Գոյություն ունեն պոլիս-դեմոս աններդաշնակության շատ տեսակներ, և բոլորն էլ խնդիրներ են հարուցում ժողովրդավարության կայացման համար, եթե խնամքով չեն կարգավորվում: Կան, ի դեպ, շատ պետություններ (ոչ պարզապես կառավարություններ), որոնց լեգիտիմությունն է անգամ կասկածի տակ դրվում: Որևէ պետության լեգիտիմությունը կասկածի տակ առնելու հիմնական պատճառներից մեկն առաջանում է այն ժամանակ, երբ այնտեղ լինում են ազգային խմբեր, որոնք պահանջում են ազգային ինքնորոշման իրավունք, և որտեղ տիրապետող կամ (գործածելով սովետական արտահայտությունը) «անվանադիր ազգային» խմբերը ժխտում են պետության փաստացի բազմազգ բնույթը, մերժում են այլ խմբերի հետ որևէ փոխհամաձայնություն և դրանց չեն տալիս լրիվ քաղաքացիության իրավունք: Պետությունը կասկածի տակ առնելու մեկ այլ պատճառ է առաջանում, երբ մի պետության քաղաքացիների զգալի մեծամասնությունը ցանկանում է միանալ մեկ այլ պետության, սովորաբար որովհետև (ինչպես ավստրիացիները 1919թ-ին կամ արևելագերմանացիները՝ 1989թ-ին) նրանք իրենց համարում են այդ պետության մաս, մի պետության, որը պատկերացվում է որպես ազգային պետության մարմնացում:

Ժողովրդավարության և երբեմն նաև միջպետական խաղաղության համար մեկ այլ լրացուցիչ բարդություն է առաջ գալիս այն ժամանակ, երբ որևէ երկրում մի զգալի փոքրամասնությունն հանդիսանում է կամ կարող է հարևան երկրի կողմից համարվել որպես «խռեղենտա»: Այդ քողարկված հակամարտության խորացման հավանականությունը մեծանում է, եթե անվանադիր ազգի առաջնորդները փորձում են վարել ազգակերտման ագրեսիվ քաղաքականություն, որը հեռացնում է փոքրամասնություններին, և որոնք այդ ժամանակ դիմում են հարևան երկրին աջակցության համար: Նման ազգակերտման քաղաքականությունն իր հերթին կարող է բորբոքել ծայրահեղ ազգայնամոլություն հարևան երկրում, որը, ընկնելով արատավոր շրջանի մեջ, կարող է կառավարությանը հայտարարել ոչ լեգիտիմ իրենց «ազգակիցների» շահերը չպաշտպանելու կամ այն բանի համար, որ չի վարում վերամիավորման մարտաշունչ քաղաքականություն: Ինչպես էլ որ այն սկսվի, երբ վերամիավորման քաղաքականությունը դառնում է տիրապետող, այն լուրջ լար-

23. Օրինակ, այս գրքում դիտարկված պետությունների շարքից միայն Պորտուգալիան, Հունաստանը, Լեհաստանը, Չիլին, Ուրուգվայն ու Արգենտինան են իրենց անցումներն սկսել կատարյալ «ազգային պետությանը» բնորոշ միատարրության ինչ-որ չափով մոտ դիրքից: Նախկին Խորհրդային Միությունը, Հարավսլավիան և Չեխոսլովակիան այժմ կազմում են 22 պետություն: Իսպանական, ռումինական և բուլղարական պետություններում ապրում են մեկից ավելի ազգեր: Հունգարիայում «հունգարական ազգության» պատկանող շատ մարդիկ ապրում են պետության սահմանից այն կողմ՝ Ռումինիայում, Սլովակիայում և Սերբիայում: Բրազիլիան հատուկ դեպք է, եթե հաշվի առնենք դրա ռասայական և սոցիալ-տնտեսական լայն բազմազանությունը:

վածություն է ստեղծում ժողովրդավարության համար և՛ փոքրամասնության արտաքին «հայրենիքում», և՛ ազգ կերտող հարևան պետության ներսում:<sup>24</sup>

Ժողովրդավարության անցմանը և կայացմանը նվիրված գրականության մեջ պետության լեգիտիմության հարցի անտեսումը հիասթափեցնում է, որովհետև այդ փոփոխականը (թեև ոչ ժողովրդավարական հասարակարգերի համար ոչ միշտ մեծ կարևորություն ունեցող) ունի հիմնարար տեսական և քաղաքական նշանակություն ժողովրդավարության համար: Ի դեպ, պետութենականական գաղափարները տրամաբանորեն *նախորդում են* ժողովրդավարական ինստիտուտների *ստեղծմանը*: Այս խնդրի դասական սահմանումը տվել է Ռոբերտ Ա. Դահլը. «Մենք չենք կարող լուծել ժողովրդավարական միավորների ճիշտ սահմանների և տիրույթի խնդիրը ժողովրդավարության տեսության սահմաններում: Մեծամասնության սկզբունքի նման ժողովրդավարական գործընթացը ևս ենթադրում է միավորի գոյություն: *Ժողովրդավարական գործընթացի չափանիշները ենթադրում են հենց այդ միավորի օրինականությունը*: Եթե այդ միավորն ինքը ճիշտ կամ օրինական չէ [համարվում], եթե դրա սահմաններն ու տիրույթը հիմնավորել հնարավոր չէ, ապա այն չի կարելի դարձնել օրինական սոսկ ժողովրդավարական ընթացակարգերով»:<sup>25</sup>

Չենք կարծում, որ Դահլի կարևոր դիտարկումը նշանակում է, որ պետութենականության խնդիրները միշտ անլուծելի են: Ավելի ճիշտ՝ հաճախ անհրաժեշտ են համալիր բանակցություններ, դաշնագրեր և, հնարավոր է, տարածքային վերաձևումներ ու կոալիցիոն համաձայնագրեր նախքան մեծամասնության բանաձևը՝ որպես լեգիտիմորեն պարտավորեցնող գործոն ընդունելը: Սակայն ինչպես Դահլն է ապացուցում, մեծամասնության բանաձևը որպես այդպիսինի պնդելը ոչինչ չի տա, քանի դեռ չի հաստատվել միավորի համարժեքությունը:

Այս դեպքում ժողովրդավարական վարչակարգերը հատկապես խիստ են տարբերվում ոչ ժողովրդավարական վարչակարգերից, լինի դա «ավտորիտար», սուլթանական, «ամբողջատիրական» կամ «հետամբողջատիրական»:<sup>26</sup> Պետության տարածական տիրույթի մասին համաձայնությունները պարտադիր չէ, որ նախորդեն ոչ ժողովրդավարական վարչակարգի կառուցմանը: Ոչ ժողովրդավարական վարչակարգը թերևս կարողանում է երկարատև ժամանակամիջոցում լուռ հնազանդություն պարտադրել մարդկանց մեծ խմբերին առանց սպառնալու պետության ներդաշնանակությամբ: Ոչ ժողովրդավարական

24. Դա «ազգայնացող պետությունների, ազգային փոքրամասնությունների և արտաքին հայրենիքների» եռյակի միջև շարժման մեջ է դնում մրցակցային ուժային մի դաշտ, որը շատ լավ քննվել է Ռոջերս Բրուքեյթրի ավելի վաղ նշված հոդվածում: Օրինակ՝ Լեոնային Դարաբաղում հայկական չվերամիավորված տարածքը խիստ բարդացնում է ժողովրդավարացման գործընթացը Հայաստանում: Եթե Յասիր Արաֆաթը համոզի «Պաղեստինի ազատագրության կազմակերպությանը» (ՊԱԿ) ժողովրդավարացնել Գազան և Երիթրվը՝ որպես պաղեստինյան պետության միջուկ, նրան մարտահրավեր կենտեն նրանք, ովքեր Արևմտյան ափը համարում են չվերամիավորված տարածք:

25. Տե՛ս Ռոբերտ Ա. Դահլ «Ժողովրդավարությունն ու դրա քննադատները» (Robert A. Dahl, *Democracy and Its Critics* (New Haven: Yale University Press, 1989), 207): Շեշտը՝ բնագրում: Խորհրդային Միություն այցելելուց հետո Դահլն այս թեմայով իր մտքերը զարգացրեց «Ժողովրդավարությունը, մեծամասնության գերիշխանությունը և Գորբաչևի հանրաքվեն» գրքում (Dahl amplified "Democracy, Majority Rule, and Gorbachev's Referendum", *Dissent*, (Fall 1991): 491-96):

26. Ոչ ժողովրդավարական վարչակարգի այս բոլոր տեսակներից յուրաքանչյուրը սահմանվում և վերլուծվում է Գլուխ 3-ում:

րական վարչակարգում այն փաստը, որ կենտրոնական իշխանությունը չի ածանցվել ու պահվում է ազատ ընտրական մրցակցության արդյունքում, նշանակում է, որ անջատողական կամ պահանջատիրական ձգտումները, եթե այդպիսիք կան, շարունակաբար չեն շահարկվել սովորական քաղաքականության ընթացքում, և դրանք հնարավոր է պարզապես ճնշել:

Որպես կտրուկ հակադրություն՝ ժողովրդավարության սահմանումն ինքնին ենթադրում է որևէ տարածքում (ինչպես էլ որ այն սահմանված լինի) ապրող քաղաքացիների միջև համաձայնություն այն ընթացակարգերի շուրջ, որոնք պետք է կիրառվեն՝ ստեղծելու մի կառավարություն, որը կարող է ունենալ բավարար լեգիտիմություն իրեն հնազանդվելու պահանջ դնելու հարցում: Հետևաբար, եթե մարդկանց մի զգալի խումբ չի ընդունում իրեն հնազանդվելու պահանջները որպես լեգիտիմ, որովհետև չի ցանկանում լինել տվյալ ժողովրդավարական միավորի մաս, որքան էլ այն ժողովրդավարորեն կազմավորված լինի, դա լուրջ խնդիր է ժողովրդավարությանն անցման համար և անգամ էլ ավելի լուրջ խնդիրներ է հարուցում ժողովրդավարության կայացման հգործում:<sup>27</sup>

Հետևաբար, փոփոխական ժողովրդավարության տեսության համար առանցքային հանգամանք է այն աստիճանը, թե որքանով են բնակիչներն ընդունում որևէ տարածքային միավորի (որպես իրենց հնարավոր հետագա վերակազմավորման վերաբերյալ լեգիտիմ որոշումներ ընդունելու համար համապատասխան կառույցի) տիրույթն ու մասշտաբը: Հետևաբար, դրանից բխող ենթադրությունն այն է, որ տվյալ տարածքում որքան մեծ է այն մարդկանց տոկոսը, ովքեր զգում են, որ չեն ցանկանում լինել այդ տարածքային միավորի անդամ, անկախ դրա վերակազմավորման ձևից, այնքան ավելի դժվարանում է այդ միավորի ներսում հասնել մեկ ընդհանուր կայացած ժողովրդավարության:

Պետության ներսում քաղաքացիության հարցի շուրջ ձեռք բերված համաձայնությունները նույնպես անհրաժեշտաբար էական չեն ցանկացած ոչ ժողովրդավարական վարչակարգում: Որևէ ազգային մեծամասնություն՝ լեզվական, կրոնական, էթնիկ կամ մշակութային, հաճախ իր գերակայությունը կամ պետության մասին իր ըմբռումներն է պարտադրում փոքրամասնություններին: Պոտենցիալ կերպով իշխանական և պարտադրող ինստիտուցիոնալ ուղիներով (օր.՝ դատարանները կամ բաց ու ազատ ընտրությունները) հնարավոր չէ մարտահրավեր նետել այն կառավարությանը, որը պնդում է, թե «ներկայացնում է մարդկանց», որովհետև ոչ ժողովրդավարության պայմաններում նման բողոքարկման ուղիներ գոյություն չունեն: Ոչ ժողովրդավարական համատեքստում ընտրական արտոնությունից կամ լրիվ քաղաքացիության իրավունքներից փոքրամասնություններին «զրկելու» խնդիրները նույնպես քաղաքական առումով ավելի քիչ են ցայտուն, որովհետև բողոք նման իրավունքներից սովորաբար զրկված են:

Սակայն ժողովրդավարությանն անցման ժամանակ անխուսափելիորեն ծագում են երկու պոտենցիալ պայթյունավտանգ հարցեր. ո՞վ է պետության քաղաքացի, և ինչպե՞ս

27. Ի դեպ, անգամ ժողովրդավարական վարչակարգերում պետության լեգիտիմությունը կասկածի տակ առնող մեծամասնությանը կամ զգալի փոքրամասնությանը դիմակայելիս կենտրոնական ժողովրդավարական կառավարության պատասխանը հաճախ լինում է տարածքում ժողովրդավարական գործընթացների ճնշումը, ոչ ժողովրդավարական ուղղակի իշխանության հաստատումը և հաճախ՝ քաղաքացիական ազատությունների և անգամ մարդու իրավունքների լուրջ խախտումները: Բավական է միայն նշել Հյուսիսային Իռլանդիան կամ Քաշմիրն այդ միտքը հաստատելու համար:

են սահմանվում քաղաքացիության չափանիշները: Ժողովրդավարության համար անհրաժեշտ է սահմանել *դեմոս*-ը: Դեմոս-ը «ժողովուրդ» իմաստով մեկնաբանելն արդեն հարց է առաջացնում. ովքե՞ր են կազմում այդ ժողովուրդը. գերմաներեն «ժողովուրդ» նշանակող "*Volk*" բառի առկայությունը նույնպես վկայում է այն մասին, որ «դեմոս» բառի սահմանումը խնդիր է հարուցում: Ավելի լավ կլիներ, եթե կարողանայինք ասել, որ «դեմոս» ավելի շատ նշանակում է «քաղաքացիներ»՝ դրա լրացուցիչ անհատակենտրոն իմաստով, քան հավաքական ժողովուրդը՝ "*Volk*"-ը կամ ազգը: Սակայն դա լոկ մասնակի լուծում է, քանի որ այնուհետև պետք է հարց տրվի՝ ով է սահմանում քաղաքացիությունը և ինչպե՞ս: Ավանդաբար կիրառվել են երկու հիմնական սկզբունքներ՝ «յուս սանգվինիս» (*ius sanguinis*) (քաղաքացիություն՝ ըստ ծագման) կամ «յուս սոլի» (*ius soli*) (քաղաքացիություն՝ ըստ տվյալ երկրում ծնված լինելու միակ արժանիքի): Կա նաև մի երրորդ սկզբունք, որը ներառում է քաղաքացիության համար դիմելու և շնորհի ստանալու կրկնակի կամավոր գործողությունները: Այդ երեք եղանակներից յուրաքանչյուրում քաղաքացիությունը կապվում է պետության հետ. ծագումը սովորաբար մատնացույց է անում պետության քաղաքացիների՝ հաճախ անհիշելի ժամանակներից եկող սերունդներից սերած լինելը առանց հարցեր հարուցելու լեզվի, կրոնի, ռասայի կամ սուբյեկտիվ ինքնության մասին: Պետության հետ կապն էլ ավելի ակնհայտ է *յուս սոլի* դեպքում, որը նշանակում է «ծնված լինել պետության տարածքային սահմաններում»: Խնդրագրի ներկայացման վրա հիմնված քաղաքացիությունը, իհարկե, ամենից սերտ է կապված պետության հետ, որովհետև նրանք, ովքեր ցանկանում են քաղաքացի լինել, պետք է այն ստանան պետությունից՝ օրենքով կամ շնորհմամբ:

Դա մեզ վերադարձնում է մեր այն հիմնական պնդմանը. ժամանակակից ժողովրդավարական կառավարումն անխուսափելիորեն կապված է պետութենականության հետ: Առանց պետության չի կարող լինել քաղաքացիություն, առանց քաղաքացիության չի կարող լինել ժողովրդավարություն: Այս պնդումը պետք չէ շփոթել Հոբբեսի այն գաղափարի հետ, որ կազմակերպված հասարակությունը ոչ մի ձևով չի կարող գոյություն ունենալ առանց պետության: Ինչպես մարդագետները բազմիցս ցույց են տվել, որևէ հանրության պատկանելության, անդամակցության շատ ձևեր չեն տանում դեպի պաշտոնական քաղաքացիություն: Մեր տեսակետը, սակայն, այն է, որ չի կարող լինել ժամանակակից լիարժեք ժողովրդավարություն առանց քվեարկության, չի կարող լինել քվեարկություն առանց քաղաքացիության և քաղաքացիների հանրության մեջ չի կարող լինել ոչ մի պաշտոնական անդամակցություն առանց այդ անդամակցությունը պետության կողմից հավաստելու: Լատինաամերիկյան և հարավեվրոպական երկրներում պետության մեջ քաղաքացիության սահմանման հարցը ժողովրդավարությանն անցումների ժամանակ չի բարձրացվել: Քաղաքացիությունը սահմանված է եղել քաղաքացիության (ազգության) մասին օրենքներով նախքան ոչ ժողովրդավարական իշխանության առաջ գալը, պահվել է ավտորիտար իշխանության ներքո (բացի որոշ *կասսադոսներից*, որոնք բրազիլական բռնապետության կողմից գրկված են եղել իրենց քաղաքական իրավունքներից) և սկզբունքորեն չի փոխվել ժողովրդավարացման գործընթացում: Անգամ Բուպանիայում, որտեղ որոշ ծայրահեղական ազգայնամուլներ Բասկերի երկրում և Կատալոնիայում մերժեցին պետության լեզվաիմությունը, դեմոսի հարցը, թե ով է իսպանական պետության քաղաքացի, երբեք խնդիր չի դարձել իսպանական պետության համար: Որևէ բան կամ

կատարնացի գինյալի կամ անջատողականի համար երբեք Իսպանիայի քաղաքացի լինելու իրավական կարգավիճակ ստանալու հարց չի ծագել: Ի տարբերություն ԽՍՀՄ-ի՝ իսպանական պետության՝ անձը հաստատող փաստաթղթում երբեք չի եղել ազգության մասին որևէ տող: Իսպանիայի ցանկացած քաղաքացի անկախ նրա լեզվից, ազգային ինքնահամարումից կամ ծննդյան վայրից, ուներ և ունի հավասար քաղաքական և քաղաքացիական իրավունքներ իսպանական պետության բոլոր տարածքային միավորներում:

Սակայն Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության որոշ պետություններում մեկնարկային իրավիճակն արմատապես տարբեր էր: Ավստրո-հունգարական և խորհրդային կայսրությունների վախճանի, նացիստական և խորհրդային նվաճողականության մակընթացության ու տեղատվության, այդ ամենին ուղեկցող մարդկանց դաժան արտաքսումների ու տեղահանումների և սահմանների համատարած վերաձևման քսներորդ դարի պատմությունը պետությունականության և ազգի հարցը դարձրել է հատկապես խնդրահարույց: Աշխարհի այդ մասում շատ անհատներ իրենց կյանքի ընթացքում եղել են երեք կամ ավելի պետությունների հպատակ կամ քաղաքացի առանց իրենց ծննդավայրերից երբևէ տեղաշարժվելու: Հետևաբար, հետկոմունիստական Եվրոպան այնպիսի մի տարածք է, որտեղ նորագույն պատմության և ոչ թե սոսկ «նախատեղծ զգացմունքների» պատճառով են ի հայտ եկել տարաձայնություններ այն հարցի շուրջ, թե ովքեր են կազմում դեմոսը, ինչ է պոլիսը և, ամենից շատ, որոնք են Ռոբերտ Դաիլի նշած իմաստով որոշումների ընդունման և պետական ինքնիշխանության ստույգ միավորները: Մեջ բերենք Ռոբերտ Դաիլի սթափեցնող մտքերը.

Հատկապես կարևոր է, որ տիրույթը՝ այսինքն, միավոր կազմող անձինք, հստակորեն սահմանագծված լինի: Դա, անկասկած, այն երևույթի պատճառներից մեկն է, թե ինչու տարածքային (թեև ոչ խիստ էական) սահմանները այդքան հաճախ գործածվում են միավորի տիրույթը սահմանելու համար, հատկապես, եթե դրանք արտացոլում են ակնհայտ պատմական և երկրաֆիզիկական գործոններ: Եվ, ընդհակառակը, որքան անորոշ լինեն տիրույթն ու մասշտաբը, այնքան մեծ է այն բանի հավանականությունը, որ միավորը, եթե հաստատվի, ապա շարունակաբար ներգրավված կլինի իրավագործություններին առնչվող վիճաբանությունների կամ անգամ քաղաքացիական պատերազմների մեջ:<sup>28</sup>

Ժողովրդավարությունը բնութագրվում է ոչ թե հպատակներով, այլ քաղաքացիներով, այնպես որ ժողովրդավարությանն անցումը քաղաքականության կենտրոնում հաճախ դնում է պոլիսին և դեմոսին վերաբերող հարցեր: Մինչև հիմա ամբողջ ասվածից կարելի է բխեցնել երեք պնդում՝

1. Որքան բազմազգ, բազմալեզու, բազմակրոն կամ բազմամշակույթ հասարակություններից բաղկացած լինի պետության տարածքում ապրող բնակչությունը, այնքան ավելի բարդ կդառնա քաղաքականությունը, որովհետև ժողովրդավարության սկզբունքների շուրջ համաձայնության գալն ավելի դժվար կլինի:

2. Թեև դա չի նշանակում, որ ժողովրդավարությունը չի կարող կայանալ բազմազգ

28. Դաիլ, «Ժողովրդավարությունն ու դրա քննադատները» (Dahl, *Democracy and Its Critics*, 207. Emphasis added):

կամ բազմամշակույթ պետություններում, այնուամենայնիվ, պետք է տեղի ունենա ժողովրդավարական նորմերի, գործողությունների և ինստիտուտների սկզբունքների զգալի քաղաքական մշակում:

3. Պետութենականության խնդիրները լուծելու որոշ եղանակներ ի բնե անհամատեղելի են ժողովրդավարության հետ:<sup>29</sup>

Այս նյութի շուրջ հստակ մտածելու համար անհրաժեշտ առաջին պայմանը, հավանաբար, այն է, որ դիտավորյալ կասկածի տակ առնվեն որոշ պարզ դրույթներ: Ժողովրդավարության համար ամենավտանգավոր մտքերից մեկը կարելի է ամփոփել հետևյալ մաքսիմում. «Յուրաքանչյուր պետություն պետք է ձգտի դառնալ ազգային պետություն, իսկ յուրաքանչյուր ազգ պետք է դառնա պետություն»: Ի դեպ, մեր կարծիքով՝ հավանաբար, անհնար է, որ աշխարհի տարածքների կեսը, որոնք այսօր ժողովրդավարական չեն, երբևէ կարողանան միաժամանակ դառնալ ազգային պետություններ և կայացած ժողովրդավարություններ՝ այդ տերմինների մեր ըմբռնմամբ:

Այդ «տհաճ» փաստի պատճառներից մեկն այն է, որ աշխարհում գոյություն ունեցող պետություններից շատերը բազմազգ են, բազմալեզու և բազմամշակույթ:<sup>30</sup> Ժողովրդավարական եղանակներով դրանք ազգային պետություններ դարձնելը խիստ դժվար է: Կառուցվածքայնորեն ամրապնդված բազմամշակույթ միջավայրում միատարր ազգային պետություն ստեղծելու գրեթե միակ ժողովրդավարական հնարավորություններն են կամավոր մշակութային ուժացումը, պետությունից կամավոր անջատվելու իրավունք ունենալը կամ նոր տարածքային սահմանների խաղաղ ձևավորումը՝ միջազգային հանրության ֆինանսական աջակցությամբ ու վերահսկողությամբ և բոլոր քաղաքական առաջնորդներ-

29. Պարզ է, որ այս գրքի նպատակներով: Արևելյան Եվրոպայի և հատկապես՝ նախկին Խորհրդային Միության ու Հարավսլավիայի երկրների առջև ծառայած խնդիրները, հասկանալի է՝ ավելի մեծ էին, քան մեր դիտարկված ցանկացած հարավեվրոպական, հարավամերիկյան կամ անգամ Կենտրոնական Եվրոպայի երկրների քաղաքական խնդիրները:

30. 1970-ականների սկզբին Ուոլթեր Քոննորը հաշվարկել էր, որ այն ժամանակ աշխարհում գոյություն ունեցող 132 պետություններից միայն 12-ն են եղել «Էթնիկ տեսանկյունից հիմնականում միատարր»: Տե՛ս Քոննոր, «Ազգի կերտում, թե՞ ազգի կործանում» (Connor, "Nation-Building or Nation-Destroying", World Politics 24 (1972): 320): Ավելի ուշ տեղի ունեցած քննարկումներ, որտեղ բերվում են որոշ չափով տարբերվող չափանիշներ, որոնք, սակայն, նույնպես ցույց են տալիս շատ փոքր թվով ճշմարիտ ազգային պետություններ աշխարհում, տե՛ս Հակն Վիյբերգի «Ինքնորոշումը որպես միջազգային հարց» (Hakan Wiberg, "Self-determination as an International Issue"), Յոան Մ. Լյուխսի խմբ.՝ «Ազգայնականությունը և ինքնորոշումն Աֆրիկյան Եղջյուրի երկրներում» (Jaonn M. Lewis, ed., *Nationalism and Self-determination in the Horn of Africa* (London: Ithaca Press, 1983)), Ջորջ Թոմաս Կուրյան, «Համաշխարհային գնահատման նոր մատյանը» (George Thomas Kurian, *The New Book of World Ranking* (New York: Facts on File, 1991)) և Ուոլթեր Քոննորի «Էթնոազգայնականություն. իմաստավորման որոնումները» (Walker Connor, *Ethnonationalism: The Quest for Understanding* (Princeton: Princeton University Press, 1994)) աշխատության մեջ հավաքված տարբեր հոդվածները: Քոննորի աշխատությունը հատկապես նշանակալի է նրանով, որ նա փաստում է, որ, ցավոք, ժամանակակից քաղաքագիտության մեջ շատ հաճախ «ազգային պետություն» և «պետություն» բառերն ակնավոր հեղինակների կողմից նույն հոդվածում կիրառվում են փոխարինելիաբար: Տե՛ս Քոննոր, «Տերմինաբանական քառու», (Ազգը ազգ է, պետություն, էթնիկ խումբ, ... ), «Էթնոազգայնականություն» (Connor, "Terminological Chaos ('A Nation Is a Nation, Is a State, Is an Ethnic Group, Is a ...')", in *Ethnonationalism*, esp. 8):

րի կողմից ընդունված լինելու պայմանով: Սրանք, իսկապես, համարձակ (թե՛ գործնականում և թե՛ ժողովրդավարության առումով՝ դժվարին) ենթադրություններ են:<sup>31</sup>

Ոչ ներդաշնակ միջավայրում միատարր ազգային պետություն ստեղծելու այլ հնարավորությունները ներառում են նրբին և ոչ նրբին հարկադրամիջոցների կիրառումն այն մարդկանց հանդեպ, ովքեր չեն խոսում անվանադիր ազգի լեզվով, չեն կրում նրա ազգային տարազը կամ չեն դավանում նրա կրոնը: Յուզին Վեբերն իր «Գյուղացիները դառնում են ֆրանսիացի» դասական ուսումնասիրության մեջ ամենայն մանրակրկտությամբ վերլուծում է դպրոցներում, քաղաքացիական և զինվորական ծառայության ոլորտներում ազգային պետության լիազորած քաղաքականության այն լայն «խաղացանկը», որը հետևողականորեն նպատակաուղղվել է բազմալեզվայնությունն ու բազմամշակութայնությունը ճնշելուն և վերացնելուն:<sup>32</sup> Ֆրանսիական պետությունը, ոգեշնչված «միասնական և անբաժանելի ազգի» (nation unie et indivisible) մասին յակոբինյան գաղափարով, ի վերջո հաջողությամբ հաղթահարեց Ֆրանսիայի մշակութային և լեզվական տարասեռությունը: Ֆրանսիական պետության կողմից ազգի կերտման նպատակային գործընթացն աներևակայելի հաջողություն ունեցավ՝ ի տարբերություն տասնիններորդ դարի իսպանական ազատական կենտրոնամետ պետության համանման ջանքերի հետևանքում գրանցված ավելի սահմանափակ հաջողության, թեև պետք չէ անտեսել դարերի ընթացքում իսպանական ինքնությունը ստեղծելու իր ջանքերում Իսպանիայի և իսպանական պետության ձեռք բերած մեծ հաջողության փաստը հատկապես տասնիններորդ դարի առաջին յոթանասուն հինգ տարիների ընթացքում: Այսօրվա տեսանկյունից ժամանակակից պետությունների այդ ջանքերը շատ հեռու են թվում փայլուն լինելուց և այնպիսի մի գին ունեն, որ մեզանից շատերը չէին ցանկանա վճարել: Սակայն հարցը պարզապես այն չէ, թե ինչպես ենք գնահատում ազգակերտման նման պետութենահենք ջանքերը, այլ այն, թե որքանով են դրանք իրականանալի ժամանակակից ենթատեքստում: Սոցիոլոգիական վերլուծության հիման վրա ձևավորված մեր պատասխանն այն է, որ անկախ նման գործընթացի (որը ներառում է արժեքային համակարգի վրա հիմնված դատողություն) ցանկալիությունից, նման ջանքն այսօր դատապարտված է ձախողման հասարակությունների մեծ մասում և, անշուշտ, ժողովրդավարական ազատական հասարակություններում: Կարելի է երկար քննել, թե ինչու է այդպես, սակայն հարկ է սահմանափակվել մի քանի կետով: Ժամանակակից աշխարհում՝ անգամ ավելի նվազ զարգացած ծայրամասային կամ լուսանցքային էթնիկ, մշակութային, լեզվական փոքրամասնություններում, յուրաքանչյուր հասարակություն ծնունդ է տալիս մշակութային

31. Բացառապես ազգային հանրությունը, որը ժողովրդավարորեն վերահսկում է պետությունը կամ դրա ենթամիավորներից մեկը, կարող է նախաձեռնել ազգակերտման գործընթաց՝ օգտագործելով միջոցների, շահադրաման և սահմանափակ խտրականության մի ամբողջ զինանոց, և հասնել մասնակի հաջողության: Ամենամոտ օրինակը, որի մասին կարելի է ստաժել, դա կառավարության լեզվական «նորմալացման» կանոնակարգերն են Կատալոնիայում (Ջեներալիտատ/the Generalitat), որոնք տարրական դպրոցներում սահմանափակում են իսպաներեն լեզուն: Սակայն պետք է նշել, որ այդ նորմալացման քաղաքականության առջև ծագում են սահմանադրական և քաղաքական դժվարություններ:

32. Տե՛ս Յուզին Վեբերի ուշագրավ մենագրությունը՝ «Գյուղացիները դառնում են ֆրանսիացի. գյուղական Ֆրանսիայի արդիականացումը, 1870-1914թթ.» (Eugene Weber, *Peasants into Frenchmen: The Modernization of Rural France, 1870-1914* (Stanford: Stanford University Press, 1976)):



վերնախավի, որը հուզական պատճառներով և (չմոռանանք) իր սեփական շահերից ելնելով՝ պաշտպանում է «նախաստեղծ» արժեքներն ու առանձնահատկությունները: Նման վերնախավեր գոյություն չունենին, Գելլերի իրավացի շեշտամամբ՝ «մինչարդյունաբերական գյուղատնտեսական հասարակություններում»: Այսօր դրանք գոյություն ունեն անգամ այդպիսի գյուղատնտեսական հասարակություններում: Ժամանակակից հանգամանքներում, երբ բոլոր նշանակալի խմբերն ունեն գրողներ ու մտավորականներ, ովքեր տարածում են ազգային մշակույթը, երբ հաղորդակցության համակարգերը մեծապես ընդլայնել են իրենց հայրենի մշակույթի հետ ներգաղթողների՝ մշտապես կապված լինելու հնարավորությունները և երբ ժամանակակից ժողովրդավարական նորմերն ընդունում են բազմամշակութայնության որոշ աստիճան, միատարրացման քաղաքականությունը, անգամ եթե այն ձևական կերպով հակաժողովրդավարական չէ, հավանաբար չի նպաստի ժողովրդավարության ստեղծմանը: Եթե անվանադիր ազգն իսկապես ցանկանում է ունենալ իսկապես միատարր ազգային պետության բնակչություն, ապա «Էթնիկ գտման» բանաձևի տարբերակը շատ հաճախ դառնում է գայթակղիչ եղանակ:

Որոշ տիպի հասարակարգերում ազգային պետությունների և ժողովրդավարությունների [միաժամանակ] ստեղծման անհնարինության վերաբերյալ մեր հետազոտությունը նույնպես հիմնվում է աշխարհում մարդկության տարածական բաշխվածության թեզի վրա: Ազգակերտման «աղյուսներից» մեկը, թերևս, լեզուն է: Սակայն, ինչպես նշում է Էռնեստ Գելլերը, աշխարհում հավանաբար կա 8 000-ի հասնող լեզու (չհաշված նշանակալի բարբառները):<sup>33</sup> Թերևս «ազգային հանրությունները» հնարավոր է համարել «աղյուսիկներ», սակայն, եթե ստույգ փաստարկման համար ենթադրենք, որ յուրաքանչյուր տասը լեզվից մեկն է «բավականաչափ արդյունավետ» ազգայնականության հիմք, ապա կարող ենք ստանալ 800-ի հասնող կենսունակ ազգային հանրություն:<sup>34</sup> Սակայն ամենակարևոր «տիաճ» փաստը ոչ թե քանակական, այլ գոյաբանական փաստն է, այսինքն՝ այն, երբ մշակութային, լեզվական և կրոնական խմբերը ոչ թե հստակորեն բաժանվում են 8 000 կամ 800 ազգության, որոնցից յուրաքանչյուրն զբաղեցնում է բավականաչափ հստակորեն սահմանված տարածք, այլ խիստ միախառնված են ու միահյուսված: Եթե դա պատկերացնենք որպես փոխաբերություն, ապա դա շախմատի տախտակի հստակորեն նշված քառակուսիներով պատկեր չի լինելու, այլ մի գործվածք՝ բարդ, միախառնված երանգներով ու ելևէջներով:

Այժմ դիտարկենք լեզվի և էթնիկ պատկանելության որոշ տարածքային պատկերներ ազգային դառնալու ձգտում ունեցող որոշ պետություններում: Մենք դեմ չենք ժողովրդավարական եղանակով ձեռք բերված «թավշյա անջատումներին»: Սակայն պետք է նշել, որ համեմատաբար հստակ մշակութային սահմանները նպաստում են նման տարածքային անջատումներին: Լատվիան կցանկանար լինել ազգային պետություն: Սակայն Լատվիայի առավել շատ բնակեցված յոթ քաղաքներից և ոչ մեկում բնակիչների մեծամասնությունը չի խոսում լատիշերեն: Էստոնիայի մայրաքաղաք Տալլինում, որը բավականին հեռու է գտնվում Ռուսաստանի հետ սահմանից, ազգային պետություն դառնալու ձգտում ունեցող Էստոնիայի բնակչության հազիվ կեսն է խոսում էստոներեն: Դրանց և շատ այլ

33. Տե՛ս Գելլեր, «Ազգեր և ազգայնականություն» (Geller, *Nations and Nationalism*, 44):

34. Այս վարկածը զարգացվել է Գելլերի կողմից, նույն տեղում, էջ 44-45:

երկրների համար հնարավոր չէ տարածքային պարզ բաժանում կամ «թավշյա անջատում»:<sup>35</sup>

Որոշ վերլուծաբաններ ուրախացան, երբ նախկին Խորհրդային Միության առանձին ազգություններ դարձան տասնհինգ հանրապետություններ՝ բոլորը հիմնված «անվանադիր ազգությունների» վրա՝ ենթադրելով, որ հնարավոր է՝ ծագեն ժողովրդավարական ազգային պետություններ: Ի դեպ, հանրապետություններում պաշտոնավարողներից շատերն առաջին ընտրությունների ժամանակ հնչեցնում էին ծայրահեղ ազգայնական (և ոչ թե՛ ժողովրդավարական) թեմաներ: Անվանադիր ազգերի և «ներգաղթողների» հակամարտության նվազեցման հնարավոր բանաձևերից մեկն այն է, ինչ Դեյվիդ Լեթինսն անվանում է «մրցունակության վրա հիմնված ուժացման խաղ»: Այսինքն, աշխատավոր դասակարգին պատկանող շատ ներգաղթողների շահերից բխող հանգամանք է դառնում իրենց զավակների ապրելու հնարավորությունները մեծացնելու համար նոր միջավայրում ուժացումը մրցունակության հիման վրա: Նման բան կարող է տեղի ունենալ իսպանացի աշխատավոր ներգաղթողների հետ մշակութապես և տնտեսապես ավելի աշխույժ Կատալոնիայում: Սակայն հնարավոր է արդյոք այդպիսի բան Կենտրոնական Ասիայում ապրող ռուսների շրջանում: 1989թ. Ղազախստանի մայրաքաղաք Ալմա Աթայում ռուսները կազմում էին բնակչության 59%-ը, իսկ ղազախները՝ անվանադիր ազգը, 22.5%-ը: Ռուս բնակչության 1%-ից էլ քիչ մասն էր խոսում անվանադիր լեզվով: Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում տոկոսային հարաբերակցությունը գրեթե նույնն էր: Մրցակցության վրա հիմնված ուժացման միջոցով հնարավոր չէ ստեղծել ոչ մի կամավոր ազգային պետություն նման «նորաբնակների գաղութատիրության» համատեքստում: Այդ պարագաներում, եթե երբևէ ստեղծվի ազգային պետություն, այն, մինևույն է, ձեռք չի բերվի ժողովրդավարական միջոցներով: Ի դեպ, անգամ ազգային պետություն ձեռք բերելու լոկ ջանքը «գաղութացնող նորաբնակներին» լրացուցիչ կերպով կխրախուսի աջակցության համար դիմել Ռուսաստանում Ժիրինովսկու նման ծայրահեղ ազգայնական առաջնորդներին:<sup>36</sup>

35. *Տե՛ս* Անատոլ Լիվենի սքանչելի և սթափեցնող գիրքը՝ «Մերձբալթյան հեղափոխությունը. Էստոնիան, Լատվիան ու Լիտվան և անկախության ուղին» (*Anatol Lieven, The Baltic Revolution: Estonia, Latvia, Lithuania and the Path to Independence* (New Haven: Yale University Press, 1993), 434): Եթե անգամ կա համեմատաբար հստակ մշակութային առանձնացում, ինչպես, օրինակ՝ Ղրիմի ռուսախոս մասը, որն Ուկրաինային է տրվել Խորուշչովի կողմից 1954թ. կամ հյուսիսարևելյան Ղազախստանի ռուսական տարրի գերակշռություն ունեցող տարածքները, սովորաբար պետութենակիր ազգերի քաղաքական գործիչների համար չափազանց դժվար է «անջատում» թույլատրելը: Վարչապետ Վալցլավ Կլաուսի՝ իր կուսակցությանը և չեխերի մեծ մասին համոզելու ունակությունը, որ իրենք տնտեսապես ավելի բարգավաճ կլինեն առանց սլովակների, միանգամայն անսովոր բան էր:

36. Դեյվիդ Լեթինսի վերլուծությունն այն երևույթի մասին, որն ինքն անվանում է «միգրանտների մրցունակության վրա հիմնված ուժացման խաղ»՝ Կատալոնիայում, ինչպես նաև հավանական «գաղութացնող նորաբնակների խաղ» անվանվող նրա վերլուծությունը նախկին Խորհրդային Միության Կենտրոնական Ասիայի հանրապետություններում, *տե՛ս* Լեթինս «Չորս ազգության խաղերը և խորհրդային քաղաքականությունը», «Խորհրդային ազգությունների ամսագիր» (*Laitin, "The Four Nationality Games and Soviet Politics"*, (Spring 1991): 1-37): Ի դեպ, Ղազախստանը կարող է հանդիսանալ պետութենակիր ազգայնականների, ռուս փոքրամասնությունների և ռուսական «հայրենիքում» քաղաքական վերնախավի միջև հակամարտությունների հատկապես բարդ դեպք: *Տե՛ս* Սարթա Բրիլ Օլքոտ, «Ղազախստան. փոքրամասնությունների հանրապետություն», Յան Բրեմերի և Ռեյ Տարասի խմ-

Գոյություն ունի մեկ այլ «տհաճ» փաստ բազմազգ միջավայրերում ազգային պետության ջատագովների համար: Բազմազգ պետություններում ապրող շատ մարդկանց (կամ տնտեսության մեջ տարբեր «մուտքի կետեր» ունեցող իրենց պորտֆելը պահելու համար) հնարավոր է, որ դուր է գալիս բազմակի ինքնություն ունենալը, և նրանք կարող են ընդդիմանալ դեպի էթնիկ պետության միատարրացում տանող շարժմանը: Նման մարդիկ սովորաբար դառնում են էթնիկ պետության «ձեռներեցների» ճնշման առաջին թիրախները: Էմպիրիկ և զգացմունքային փաստն այն է, որ ժամանակակից աշխարհում մարդկային շատ էակներ երկար ժամանակ հարել են մեկից ավելի մշակույթների և պատմության, ամուսնացել են տարբեր ազգության մարդկանց հետ, ունեն տարբեր ազգության ընկերներ և գնացել-եկել են պետության ներսում: Հետևաբար, զարմանալի չէ, որ նրանք կարող են ունենալ երկակի ինքնություն: Ազգայնականները, որոնք ներկայացնում են պետության և՛ տիրապետող, և՛ ճնշված ազգը, ցանկանում են, որ մարդիկ թողնեն նման երկակի ինքնությունը և ընտրություն կատարեն հոգուտ այս կամ այն ազգության: Իհարկե, նրանք հաճախ հնարում կամ ներմուծում են երկընտրանքներ այնտեղ, որտեղ առաջներում նման բան չի եղել: Դա է պատճառներից մեկը, որ հանրաքվեները լինում են նաև պառակտող և քայքայում են իրական սոցիալական կապերը:

**ԲԱԶՄԱԶԳ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ,  
ՓՈՒՅԱԿԱՍՈՂ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՆԴԻՆ**

Ուրեմն, ինչպե՞ս է հնարավոր հասնել ժողովրդավարության բազմազգ պետություններում: Իհարկե, ունենք մի հիմնավոր վարկած այն եղանակների մասին, որոնք պետք չէ կիրառել բազմազգ միջավայրերում ժողովրդավարության կայացման համար: Տվյալ պետության մեջ որքան մեծ է այն մարդկանց տոկոսը, ովքեր ծնվել են այդտեղ կամ ովքեր չեն հասել այն կետին, որ իրենց ընկալեն որպես օտարերկրյա քաղաքացի, ում պետությունը մերժել է շնորհել քաղաքացիություն և ում կենսական հնարավորությունները տուժել են նման մերժումից, այնքան անհավանական է նման պետության մեջ ժողովրդավարության կայացումը:

Ավելի դրական ձևակերպմամբ՝ վարկածն այն է, որ բազմազգ միջավայրում ժողովրդավարության կայացման հնարավորությունները մեծանում են պետության քաղաքականության շնորհիվ, որը շնորհում է ներառական և հավասար քաղաքացիություն, և որը բոլոր քաղաքացիներին տրամադրում է պետության կողմից լիազորված և պարտադրված անհատական իրավունքների ընդհանուր «տանիք»:

Նման բազմազգ պետությունները նույնպես մի շարք ոչ մեծամասնական, անհանրաքվե բանաձևերի հնարավորությունները հետազոտելու կարիք ունեն և անգամ է՛լ ավելի մեծ կարիք, քան մյուս հասարակարգերը: Օրինակ, եթե պետության ներսում խմբերի միջև կան համեմատաբար ուժեղ տարածքային տարբերություններ, կարելի է հետա-

բազրած «Ազգեր ու քաղաքականություններ խորհրդային իրավահաջորդ պետություններում» (Martha Brill Olcott, "Kazakhstan: A Republic of Minorities", in Ian Bremmer and Ray Laras, eds., *Nations and Politics in the Soviet Successor States* (Cambridge: Cambridge University Press, 1993), 313-30):

գոտել դաշնության հնարավորությունը: Պետությունը և հասարակությունը կարող են թույլատրել նաև հասարակության աջակցությունը վայելող զանազան հանրային ինստիտուտներ, ինչպես օրինակ՝ տարբեր լեզուներով լրատվամիջոցները և դպրոցները, մշակութային բազմազանության խորհրդանշական ճանաչումը, մի շարք իրավականորեն ընդունված ամուսնության օրենսգրքեր, տարբեր հանրություններ ներկայացնող կուսակցությունների նկատմամբ իրավական և քաղաքական հանդուրժողականությունը և քաղաքական ընթացակարգերի ու միջոցների մի ողջ շարք, որ Արենդ Լիլիհարտը նկարագրել է որպես «կոալիցիոն ժողովրդավարություն»:՝<sup>37</sup> Սովորաբար համամասնական ներկայացուցչությունը (և ոչ թե՛ մեծ մեկնանդատային տեղամասերը, պարզ մեծամասնության հաղթանակով ընտրությունները) կարող է նպաստել տարածքային առումով սփռված փոքրամասնությունների ներկայացմանը: Անհատների իրավունքների ու ունիվերսալիզմի վրա կենտրոնացած քաղաքական ազատականության ավանդույթի որոշ արմատական կողմնակիցներ դեմ են կոլեկտիվ իրավունքների ցանկացած ձևերի: Սակայն կարծում ենք, որ բազմազգ, բազմամշակույթ հասարակության և պետության մեջ ազգությունների կամ փոքրամասնությունների *կոլեկտիվ իրավունքների* և պետության կողմից լիովին պաշտպանված *անհատների իրավունքների* համակցությունը հավանաբար նման ժողովրդավարական ոչ ազգային պետության քաղաքականության ձևակերպման ամենանվազ բախումնային եղանակն է:<sup>38</sup>

Այն դեպքում, երբ անցումը սկսվում է ոչ ժողովրդավարական բազմազգ դաշնային համակարգի համատեքստում, ժողովրդավարական դաշնություն ստեղծելու ռազմավարությունը պետք է հավանաբար հաջորդի ընտրությունների հերթականության սահմանմանը նախ և առաջ համապետական մակարդակում, որպեսզի առաջանա լեգիտիմ շրջանակ հետագա քննարկումների համար այն մասին, թե ինչպես հասարակարգը ժողովրդավարորեն ապակենտրոնացնել: Եթե առաջին մրցակցային ընտրությունները տարածքային մակարդակում են, ապա ընտրություններում հակված կլինեն առավելությունը տալու

37. *Stén* նրա արգասավոր հոդվածը՝ «Կոալիցիոն ժողովրդավարություն» (*"Consociational Democracy"*, *World Politics* 21 (January 1969): 207-25), և նրա «Ժողովրդավարությունը բազմատարր հասարակություններում. համեմատական հետազոտություն» (*Democracy in Plural Societies: A Comparative Exploration* (New Haven: Yale University Press, 1977)):

38. Հետաքրքիր փաստարկներ այն մասին, որ խմբային իրավունքների որոշ ըմբռնում իրականում անհրաժեշտ է անհատական իրավունքների որոշ տեսակների հենց սահմանման և իրավունքների համընդհանուր նորմերի զարգացման համար տե՛ս Օբսֆորդի փիլիսոփա ժոզեֆ Ռազի աշխատությունը՝ «Ազատության բարոյականությունը» (Joseph Raz, *The Morality of Freedom* (Oxford: Oxford University Press, 1986), esp.165-216), և Քիմ Լեյն Շեփելի «Խմբային իրավունքների վերախմաստավորում», (Kim Lane Scheppele, *"Rethinking Group Rights"*), նյութը՝ պատրաստված «Իրավունքների նշանակությունը նախկին սոցիալիստական ճամբարի երկրներում» թեմայով համաժողովի համար, հուլիսի 4-5, 1994թ., Սահմանադրական և օրենսդրական քաղաքականության ինստիտուտ, Կենտրոնական Եվրոպայի համալսարան, Բուդապեշտ: *Stén* նաև փիլիսոփա Ուլի Քիմիկայի մանրամասն գիրքը՝ «Բազմամշակութային քաղաքացիություն. ազատական տեսություն փոքրամասնության իրավունքների մասին» (Will Kymlicka, *Multicultural Citizenship: A Liberal Theory of Minority Rights* (Oxford: Oxford University Press, 1995)), հատկապես՝ Գլուխ 3, «Անհատական իրավունքներ և կոլեկտիվ իրավունքներ» (*"Individual Rights and Collective Rights"*), Գլուխ 4, «Ազատական ավանդույթի վերախմաստավորում», (*"Rethinking the Liberal Tradition"*) և Գլուխ 6, «Արդարությունը և փոքրամասնության իրավունքները», (*"Justice and Minority Rights"*):

տարածքային ազգայնականներին, և ժողովրդավարությունների փոխարեն հնարավոր է առաջանան էթնոկրատիաներ (ազգիշխանություն):<sup>39</sup> Սակայն բազմազգ միջավայրերում քաղաքական կյանքը կառուցելու որոշակի եղանակներն անհրաժեշտ է համապատասխանեցնել յուրաքանչյուր երկրի համատեքստին: Ելնելով այդ սկզբունքներից՝ կարծում ենք, որ ժամանակն է վերագնահատելու ոչ տարածքային ինքնավարությունների վերաբերյալ հարուստ փորձադարանը՝ կապված, օրինակ, միավորված էթնիկ կամ կրոնական համայնքների ինքնակառավարման հետ, ինչպես օրինակ՝ հրեական Կաբալան Լեհ-լիտվական տերությունում/Polish-Lithuanian Commonwealth, միլլեթներն Օսմանյան կայսրությունում կամ «ազգային կուրիաները» Հարբուրգների կայսրության ուշ շրջանում:<sup>40</sup> Այս մեխանիզմները չեն վերացնի հակամարտությունը բազմազգ պետություններում, սակայն դրանք կարող են մեղմացնել այն և օգնել և՛ պետությունը, և՛ ժողովրդավարությունն ավելի կենսունակ դարձնելուն:

Կարծում ենք նաև, որ որոշ հասկացութենական, քաղաքական և նորմատիվ ուշադրություն պետք է դարձվի «պետություն-ազգերի» հնարավորությանը: Պետությունները, որոնք կցանկանայինք անվանել «պետություն-ազգեր», բազմամշակույթ կամ նույնիսկ բազմազգ պետություններ են, որոնք, այդպիսին լինելով հանդերձ, դեռ կարողանում են առաջ բերել ինքնության և հավատարմության ուժեղ զգացում իրենց քաղաքացիների մեջ, ինքնության և հավատարմության այնպիսի զգացում, որ միատարր ազգային պետությունների կողմնակիցները կարծում են, որ կարող է առաջանալ միայն ազգային պետություններում: Ամերիկայի Միացյալ Նահանգները հենց այդպիսի բազմամշակույթ և մեծ չափով բազմակեզու երկիր է, ինչպես և Շվեյցարիան: Այդ երկրներից ոչ մեկը, մեղմ ասած, «ազգային պետություն» չէ, սակայն կարծում ենք, որ երկուսն էլ այժմ կարող են կոչվել «պետություն-ազգեր»: Ջավահարլալ Ներուի օրոք Հնդկաստանն զգալի ձեռքբերումներ ունեցավ բազմազգ երկրում ազգամիջյան լարվածությունները մարդկանց միավորելու բազմաթիվ միջոցների հմուտ և ներդաշնակ կիրառման միջոցով հաղթահարելու գործում: Այդ գործընթացների միջոցով Հնդկաստանը 1950-ականներին և 1960-ականների սկզբում դարձավ ժողովրդավարական «պետություն-ազգ»: Սակայն եթե հինդու ազգայնականները իշխանությունը վերցնեին 1990-ականներին և փորձեին փոխել Հնդկաստանն իր 110 միլիոն մուսուլմաններով և այն դարձնել հինդու ազգային պետություն, գրեթե անմիջապես կշատանային համայնքային խժոժությունները, և Հնդկաստանում ժողովրդավարությանը լուրջ վտանգ կսպառնար:<sup>41</sup>

39. Այս միտքն ավելի մանրամասն զարգացվել է մեր գրքում՝ «Քաղաքական ինքնություն և ընտրական հաջորդականություններ. Իսպանիա, Խորհրդային Միություն և Հարավսլավիա» (*Political Identities and Electoral Sequences: Spain, the Soviet Union and Yugoslavia*), Daedalus 121 (Spring 1992):123-39), և այս գրքում՝ Իսպանիային և ԽՍՀՄ-ում պետութենականությանը նվիրված գլուխներում:

40. Այդ կարևոր, սակայն անտեսված փորձերի վերլուծական և մատենագիտական ներածության մասին *տե՛ս* Ջոն Քոուքլի, «Էթնիկ հակամարտությունների լուծման մոտեցումներ. ոչ տարածքային ինքնավարության ռազմավարությունը» (John Coakley, *Approaches to the Resolution of Ethnic Conflict: The Strategy of Non-territorial Autonomy*), International Political Science Review, 15, no. 3 (1994): 297-314):

41. Այս թեմայով երկու ամենաառաջին գրքերից են Արենդ Լիյփհարտի «Հնդկական ժողովրդավարության հանելուկը. երկրորդ մեկնաբանություն» անտիպ ձեռագիրը (Arend Lijphart, *The Puzzle of Indian Democracy: A Reterpretation*), unpublished manuscript, 1994) և Աշուտոշ Վարշնիի «Վիճելի իմաստներ. Հնդկաստանի ազգային ինքնությունը, հինդու ազգայնականությունը և վահի քաղաքա-

Եկեք ավարտենք՝ խոսելով քաղաքական ինքնության մասին: Ազգայնականության մասին շատ գրվածքներ կենտրոնացել են «նախաստեղծ» ինքնության և փոխադարձաբար միմյանց բացառող ինքնությունների միջև մարդկանց ընտրություն կատարելու անհրաժեշտության վրա: Սակայն քաղաքական ինքնության մեր հետազոտությունը ցույց է տվել երկու բան: Առաջին. քաղաքական ինքնությունն ամրագրված կամ նախաստեղծ չի լինում Օքսֆորդի անգլերեն բառարանում բերված «վերաբերող կամ գոյություն ունեցող հենց սկզբում (սկզբից), առաջինն ըստ ժամանակի, ամենավաղ, սկզբնական, առաջնային, նախաստեղծ» իմաստներով: Ընդհակառակը, այն մեծապես փոփոխելի և սոցիալապես ձևավորված է: Երկրորդ. եթե ազգայնական քաղաքական գործիչներն իրենց ձևավորած մթնոլորտով (կամ հասարակագետները և մարդահամար անցկացնողները՝ անմշակ երկրներանքային կատեգորիաներով) չպարտադրեն բևեռացում, շատ մարդիկ կնախընտրեն իրենց ինքնաբերորոշել որպես *բազմակի* և *փոխլրացնող* ինքնություն ունեցողներ:<sup>42</sup> Ի դեպ, ներառական և հավասար քաղաքացիության պետության կողմից պաշտպանված իրավունքների ընդհանուր քաղաքական «տանիքի» հետ միասին բազմակի և փոխլրացնող ինքնության մարդկային կարողությունը հենց գլխավոր գործոններից մեկն է, որը հնարավոր է դարձնում ժողովրդավարությունը բազմազգ պետություններում: Քանի որ քաղաքական ինքնությունն ամրագրված և մշտական չէ, ուստի հատկապես կարևոր է ժողովրդավարական ղեկավարման որակը: Քաղաքական առաջնորդները կարող են դաստիարակել բազմակի և փոխլրացնող քաղաքական ինքնություն: Ինչպե՞ս կարելի է դաստիարակել նաև բևեռային ու բախումնային քաղաքական ինքնություն:<sup>43</sup> Նախքան ազգային պետություն կառուցելու համար էթնիկ զտման գիտակցաբար կիրառումը Բոսնիա-Հերցեգովինայում Սարանոն բազմազգ քաղաքային տարածք էր, որի բնակիչներն ունեին բազմակի ինքնություն և միջկրոնական ամուսնությունների ամենաբարձր մակարդակ աշխարհում ցանկացած քաղաքի համեմատությամբ:

Այս գլխի կենտրոնական միտքն այն է, որ եթե նպատակը ժողովրդավարության բարեհաջող կայացումն է, ապա պետական ապարատի ղեկին կանգնած ապագա ժողովրդավարությունը ստեղծողները պետք է լրջորեն հաշվի առնեն տվյալ տարածքի ազգերի, մշակույթների և գիտակցության եկած քաղաքական ինքնության յուրահատուկ խառնուրդը: Ժողովրդավարության որոշ ձևեր հնարավոր կլինի կառուցել մեկ տիպի հասարակարգում՝ սոցիալ-տնտեսական զարգացման հավասար մակարդակների պայ-

---

կանությունը» (Ashutosh Varshney, "Contested Meanings: India's National Identity, Hindu Nationalism and the Politics of Anxiety", *Daedalus* 122 (Summer 1993): 227-61):

42. Օրինակ՝ 1982թ. Կատալոնիայում, երբ հարցմանը պատասխանողներին հնարավորություն էր տրվել իրենց դասակարգել ըստ հարցաթերթիկի՝ առաջարկելով հինգ հնարավորություն՝ «իսպանացի», «ավելի իսպանացի, քան կատալոնացի», «հավասարապես իսպանացի և կատալոնացի», «ավելի կատալոնացի, քան իսպանացի» և «կատալոնացի», 40 %-ն (ամենամեծ առանձին խումբը) իրեն բնութագրել էր որպես հավասարապես իսպանացի և կատալոնացի: *Sté u* Խուան. Ջ. Լինց (Juan J. Linz, "De la crisis de un Estado Unitario al Estado de las Autonomias"), Ֆերնանդո Ֆերնանդես Ռոդրիգեսի (Fernando Fernandez Rodriguez) խմբ. *La España de las Autonomias* (Madrid: Instituto de Estudios de Administracion Local, 1985), 527-672 (above data on 560):

43. Տե՛ս Լինց և Ստեփան, «Քաղաքական ինքնություններ և ընտրական հաջորդականություններ. Իսպանիա, Խորհրդային Միություն և Հարավսլավիա» (Linz and Stepan, "Political Identities and Electoral Sequences: Spain, the Soviet Union and Yugoslavia", 123-39):

**Աղյուսակ 2.1. Պետության, ազգ(եր)ի և ժողովրդավարացման (այն ենթադրությամբ, որ չկա չվերափակողված տարածք) միջև փոխհարաբերությունները**

«Առկանստիպ ազգի» պետության առաջնորդների մտայնումներն ու գործողությունները		Ստեղծում է որոշ դաշնային կամ կիսադաշնային ինստիտուտներ և/կամ կիսամիավորման կարգեր	Սկզբունքներն ընդունում է խաղաղ և ժողովրդավարական բանակցությունների վրա հիմնված առանձնացում առաջնորդներ
Պետության տարածքում, բացի անվանատիր ազգից, այլ «ազգերի» ներկայության աստիճանը	Դեպի ազգային պետության նվազագույնը տամոլներ	Որոշ չափով ճանաչում է մշակութային բազմազանության լեգիտիմությունը	Չկան հատակ կամ կան չափազանց քիչ պետական առաջնորդներ
Ձկա որևէ այլ ազգ, բայց կա մշակութային և/կամ եթիկ վիթր տարբերություն	ժողովրդավարական ազգային պետությունը կարող է հեշտությամբ կայանալ և ուժեղ լինել	Մենազգային ժողովրդավարական պետությունը կարող է հեշտությամբ գոյություն ունենալ	
Ձկա ուղիչ ազգ, սակայն կա այն մշակութային բազմազանություն	ժողովրդավարական ազգային պետությունը հնարավոր է	ժողովրդավարական պետություն-ազգը հեշտությամբ կարող է գոյություն ունենալ	
Այլ ազգ(եր) կան, սակայն ինքնագիտակցության եկած չեն	Մտացանցում է հավանաբար տոթյուն, ժողովրդավարությունը ըստ մտքի, բայց ոչ անհնարին	Մտացանց պետությունը միայն ժողովրդավարության հնարավորություն է: Եթե ինձամբով արեթմվի, ժողովրդավարությունը կարող է կայանալ	Եթե կա հստակորեն գծված տարածքային հիմք, խաղաղ անջատումը հնարավոր է երկու պետություններում էլ ժողովրդավարության ստեղծմամբ
Կան այլ ազգ(եր), որոնք գիտակցության եկած են	Մտացանցում է այնքան հավանաբարություն կան ճշում, որ ժողովրդավարության կայացումը դառնում է մեծապես անհնարին	Մտացանց պետությունը միայն ժողովրդավարության հնարավորություն է: Մտիպում է գնալ դեպի	Եթե չկա տարածքային բազա, «թավշյա անջատում» անհնար է, և եթե մարտաշունք վիճակը շարունակվի, ապա ժողովրդավարությունը չի կարող կայանալ
Ինչ մի խումբ չունի բավարար մորաշնչակցություն և ինքնություն ազգ կերտող դառնալու համար			Պետություն հնարավոր չէ, ուրեմն ժողովրդավարություն անհնարին է

**Ճանաչողություն:** ունեցած տարածքի մասին հավակցությունն այստեղ գործառնված իմաստով (սակասաբան մասնակցությունը, ինչպես նաև «Մոցիսիանիա», *The Language of Social Research to Reader in the Methodology of Social Research* (Glencoe, Ill: Free Press, 1951) էջ 40-62:

մաններում, որը, սակայն, ըստ էության անհնար է, եթե պետության գլուխ կանգնած վերնախավերը մեկ այլ տիպի հասարակարգ կառուցելու փորձ անեն: Եթե տարածքը մշակութայնաբար բազմազգ է, պետության գլուխ կանգնած քաղաքական վերնախավերը կարող են նախաձեռնել «ազգայնացման քաղաքականություն», որը գուցե և չխախտի մարդու իրավունքները կամ Եվրոպայի խորհրդի ժողովրդավարության նորմերը, սակայն կունենա համակցված ազդեցություն հասարակարգի յուրաքանչյուր հինգ ոլորտների վրա՝ մեծապես նվազեցնելով ժողովրդավարության կայացման հնարավորությունները: Հինգ ոլորտներից յուրաքանչյուրում նման մեծամասնական «ազգայնացման քաղաքականություն» օրինակ կհանդիսանա հետևյալը: Քաղաքացիական հասարակության ոլորտում կրթությունն ու լրատվամիջոցները կարող են սահմանափակվել պաշտոնական լեզվի սահմաններում: Քաղաքական հասարակության ոլորտում քաղաքացիության օրենքների ազգայնացումը կարող է հանգեցնել ընտրովի քաղաքական պաշտոններում տիրապետող ազգության զգալի գերներկայացուցչականության: Պետական կառավարման համակարգում մեկ պաշտոնական լեզվին արագ անցնելը կարող է *դե ֆակտո* նվազեցնել այլ ազգությունների մասնակցությունը պետական գործերին և սահմանափակել պետական ծառայություններից օգտվելու նրանց հնարավորությունները: Օրենքի գերակայության դաշտում իրավական համակարգը կարող է նրբորեն արտոնություններ շնորհել ապագա ազգային պետության մի ամբողջ շարք սովորույթներին, կարգերին և ինստիտուտներին: Ի վերջո՝ տնտեսական հասարակության դաշտում պետությունակիր ազգությանը՝ որպես ազգային պետության ենթադրվող «տիրոջ», կարող են տրվել հողի վերաբաշխման կամ վառչերների բաշխման հարցում հատուկ (կամ անզամ բացառիկ) իրավունքներ, եթե իրականացվում է մասնավորեցում: Եվ հակառակը, եթե իրական նպատակը ժողովրդավարության կայացումն է, ապա ցանկացած ժողովրդավարացման ռազմավարություն պահանջում է, որ վերը նշված ասպարեզներից յուրաքանչյուրում մշակվեն ավելի քիչ մեծամասնական և ավելի շատ փոխհամաձայնեցված մոտեցումներ:

Քաղաքականությանն առնչվող ուշադրության արժանի մի եզրափակիչ միտք վերաբերում է ժամանակի ընտրությանը: Ժողովրդավարական պոտենցիալ դժվարին արդյունքները հնարավոր է կառավարելի դարձնել միայն այն դեպքում, երբ քաղաքական առաջնորդները հիմնավորեն, բանակցեն և իրականացնեն որոշ նախազգուշական քայլեր և որոշումներ: Եթե նման բարելավող մոտեցումների հնարավորությունը բաց է թողնվում, խուսանավման համար եղած հնարավորությունը փոքրանում է, իսկ հասարակական բախման դինամիկան այնքան է արագանում, որ ժողովրդավարության կայացումը դառնում է ավելի ու ավելի դժվար և ի վերջո՝ անհնար:

Ազգային պետություններն ու ժողովրդավարացման գործընթացը միմյանց հետ հաշտեցնելու հնարավորություններն ու սահմաններն ամփոփելու և բարելավող մոտեցումների՝ քաղաքականապես հնարավոր և ժողովրդավարորեն արդարացված տեղի ու ժամանակի վրա ուշադրություն հրավիրելու համար այս գլուխն ավարտում ենք Ադյուսակ 2.1-ով:<sup>44</sup>

44. Ադյուսակ 2.1-ը չի ներառում չվերամիավորված տարածքի ազդեցությունը ժողովրդավարության վրա և՛ պահանջի առարկա հանդիսացող տարածքում, և՛ հարևան պետություններում: Սա պատկերելու համար կպահանջվի անզամ էլ ավելի բարդ ադյուսակ:



## Ժամանակակից ոչ ժողովրդավարական վարչակարգեր

ԱՆՅՈՒՄԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ժողովրդավարության կայացումը ներառում են տեղաշարժ ոչ ժողովրդավարական վարչակարգից դեպի ժողովրդավարական վարչակարգ: Մակայն առանձին հասարակարգեր կարող են մեծ չափով տարբերվել անցման հնարավոր *ուղիների* և այն անկատար մնացած *խնդիրների* առումով, որոնց պետք է դիմակայի նոր ժողովրդավարությունը նախքան կայանալը: Հաջորդ երկու գլուխներում մենք հիմնականում ցույց կտանք, թե ինչպես և ինչու նման տարբերությունը մեծ մասամբ, թեև, իհարկե, ոչ ամբողջապես, կարելի է բացատրել նախորդ վարչակարգի տիպով:

Գրեթե քառորդ դարից ավելի աշխարհում տարբեր քաղաքական համակարգերի դասակարգմամբ հետաքրքրվող վերլուծաբանների շրջանում տիրապետող մտահայեցողական շրջանակը եղել է ժողովրդավարական, ավտորիտար և ամբողջատիրական վարչակարգերի եռակողմ տարբերակումը: Առաջացել են հայացքների նոր համակարգեր, որովհետև դրանք վերլուծաբաններին օգնել են տեսնելու այն ընդհանրություններն ու նշանակությունները, որոնք նախկինում վրիպել են աչքից: Երբ 1964թ. Խուան Լինցը գրեց իր «Ավտորիտար վարչակարգ. Իսպանիա» հոդվածը, նա ցանկանում էր ուշադրություն հրավիրել այն փաստի վրա, որ այն ժամանակ որպես երկու խոշոր կայուն քաղաքական բևեռներ դիտարկված ժողովրդավարական և ամբողջատիրական բևեռների միջև գոյություն ունի հասարակարգի մի ձև, որն ունի իր սեփական ներքին տրամաբանությունը և կայուն վարչակարգի տիպ է: Թեև դա ոչ ժողովրդավարական տիպ է, Լինցը, այնուամենայնիվ, ապացուցում է, որ այն հիմնովին տարբերվում է ամբողջատիրական վարչակարգից չորս հարթություններում՝ բազմակարծություն, գաղափարախոսություն, ղեկավարում և մոբիլիզացում: Դա, իհարկե, այն էր, ինչ Լինցն անվանեց *ավտորիտար վարչակարգ*: Նա դրանք սահմանեց որպես «քաղաքական համակարգեր՝ սահմանափակ, ոչ պատասխանատու, քաղաքական բազմակարծությամբ, առանց բարդ և ուղղորդող գաղափարախոսության, սակայն յուրահատուկ մտածելակերպերով, առանց էքստենսիվ կամ ինտենսիվ քաղաքական մոբիլիզացման, բացառությամբ իրենց զարգացման որոշ պահերի, և որտեղ որևէ առաջնորդ կամ որևէ փոքր խումբ ժամանակ առ ժամանակ բանեցնում է այնպիսի իշխանություն, որի շրջանակները ձևական առումով վատ են սահմանված, սակայն իրականում բավականին կանխատեսելի են»:<sup>1</sup>

1. Խուան Լինց, «Ավտորիտար վարչակարգ. Իսպանիայի օրինակը» (Juan J. Linz, "An Authoritarian Regime: The Case of Spain"), Էրիկ Ալարդտի և Լրյո Լիթթունենի խմբ.՝ «Ճեղքումներ, գաղափարախոսություններ և կուսակցական համակարգեր» (Erik Allardt and Yrjö Littunen, eds., *Cleavages, Ideologies*

1960-ական թվականներին, երբ վերլուծաբանները փորձում էին սահմանել կատեգորիաներ աշխարհում բոլոր համակարգերը դրանց հետ համեմատելու կամ հակադրելու համար, ավտորիտար կատեգորիան ասպարեզ եկավ ճիշտ ժամանակին: Երբ հայացքների նոր համակարգը տարածվեց կոմպարատիվիստների շրջանում, առաջ քաշվեցին երկու բավականին անսպասելի եզրակացություններ: Առաջին. ավելի ու ավելի ակնառու էր դառնում, որ ավելի շատ «ավտորիտար» վարչակարգեր կային, քան «ամբողջատիրականը» և «ժողովրդավարականը» միասին վերցրած:<sup>2</sup> Ավտորիտար վարչակարգերը, հետևաբար, ժամանակակից աշխարհում եղել են վարչակարգի ամենատարածված (մոդալ) տիպը: Երկրորդ. ավտորիտար վարչակարգերը պարտադիր չէ, որ եղած լինեն մեկ այլ տիպի վարչակարգի անցման վիճակում: Ինչպես ցույց տվեցին Լինցի՝ 1950 և 1960-ական թվականների Իսպանիայի ուսումնասիրությունները, ավտորիտար վարչակարգի չորս հստակ հարթությունները՝ սահմանափակ բազմակարծությունը, մտածելակերպը, որոշակիորեն կաշկանդված ղեկավարումն ու թույլ մոբիլիզացումը կարող են երկար ժամանակ հարակցվել որպես միմյանց ամրապնդող և միավորող համակարգ, որը հարաբերականորեն կայուն է:<sup>3</sup>

Տիպաբանություններն ի հայտ են գալիս կամ վերանում՝ ըստ հետազոտողների համար դրանց ունեցած օգտակարության վերլուծական առումով: Մեր դատողությամբ՝ վարչակարգի գոյություն ունեցող եռակողմ դասակարգումը ոչ միայն դարձել է ավելի քիչ օգտակար ժողովրդավարության տեսաբանների ու գործնականում կիրառողների համար, քան երբևէ եղել է, այլ նաև դարձել է խոչընդոտ: Տիպաբանության փոփոխության օգտին խոսող փաստարկների մի մասն առաջ է գալիս այն ողջ էմպիրիկ բազմությունից, որը պետք է վերլուծենք: Կոպիտ ասած՝ եթե դիտարկենք աշխարհը 1980-ական թվականների կեսերին, քանի՞ երկիր կարելի էր ենթադրաբար բնորոշել որպես տարրապետական տնտեսությամբ ժողովրդավարական վարչակարգ ունեցող երկիր: Եվ այդ ամբողջ ժամանակահատվածում քանի՞ երկիր է շատ մոտ գտնվել ամբողջատիրության բևեռին: Պատասխանները, իհարկե, ունեն ի բնե սուբյեկտիվ կողմ, հատկապես՝ այն փաստերի գնահատման առումով, որոնք օգտագործվել են երկրները դասակարգելու համար՝ ըստ տիպաբանության մեջ կիրառվող տարբեր չափանիշների: Սակայն, բարեբախտաբար,

*and Party Systems* (Helsinki: Transactions of the Westermarck Society, 1964), 291-342): Երկրորդ անգամ տպագրված էրիկ Ալարդտի և Շտեյն Ռոքանի խմբի՝ «Զանգվածային քաղաքականություն. ուսումնասիրություններ քաղաքական սոցիոլոգիայի բնագավառում» (Erik Allardt and Stein Rokkan, eds., *Mass Politics: Studies in Political Sociology* (New York: Free Press, 1970), 251 –83, 374-81): Նշված էջերը վերաբերում են 1970թ. հատորին: Սահմանումը գտնվում է էջ 255-ում:

2. Տե՛ս, օրինակ, այս գլխի 4-րդ և 5-րդ հղումները:

3. Լինց, «Ֆալանգիստի մինչև շարժում-կազմակերպություն. Իսպանիայի միակ կուսակցությունը և Ֆրանկոյի վարչակարգը 1936-1968թթ.» Juan J. Linz, "From Falange to Movimiento-Organization: The Spanish Single Party and the Franco Regime, 1936-1968", Սեմյուել Հանթինգտոնի և Կլեմենտ Մուրի խմբի՝ «Ավտորիտար քաղաքականությունը ժամանակակից հասարակությունում. հաստատված միակուսակցական համակարգերի դինամիկան» (Samuel P. Huntington and Clement H. Moore, eds., *Authoritarian Politics in Modern Society: The Dynamics of Established One-Party Systems* (New York: Basic Books, 1970), 128-203): Տե՛ս նաև Լինց, «Ընդդիմությունն ավտորիտար վարչակարգի մեջ և ներքո. Իսպանիայի օրինակը» (Linz, "Opposition in and under an Authoritarian Regime: The Case of Spain"), Ռոբերտ Դահլի խմբի՝ «Վարչակարգեր և ընդդիմություններ» (Robert A. Dahl, ed., *Regimes and Oppositions* (New Haven: Yale University Press, 1973), 171-259):

երկու միմյանցից անկախ կատարված ուսումնասիրությունների մեջ փորձ է արվում դասակարգել աշխարհի երկրների մեծ մասը՝ ըստ դրանցում քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների:<sup>4</sup> Ուսումնասիրությունների ժամանակ կիրառված չափանիշները ընդհանրական են, և արդյունքները ցույց են տալիս գնահատման շատ ընդհանուր աստիճան: Եթե օգտվենք այդ ուսումնասիրություններից և կիրառենք վարչակարգի տիպերի ավանդական եռակողմ տարբերակումը, կպարզվի, որ ժամանակակից ոչ ժողովրդավարական վարչակարգերի 90%-ից ավելին ստիպված կլինեն զբաղեցնել միևնույն տիպաբանական տարածքը, այսինքն՝ ավտորիտար վարչակարգը:<sup>5</sup> Իսկապես, երբ այդքան շատ տարասեռ երկրներ կիսում են միևնույն տիպաբանական

4. Նման աշխատանք նախաձեռնեցին Մայքլ Քոփեջը և Վոլֆգանգ Ռայնիկեն, ովքեր փորձեցին ձևակերպել այն 8 «ինստիտուցիոնալ երաշխիքները», որոնք ըստ Ռոբերտ Դահլի՝ պահանջվում են բազմիշխանության համար: Ըստ բազմիշխանության սանդղակի՝ նրանք արժեքներ տվեցին 137 երկրների՝ հիմնված քաղաքական պայմանների 1985 թվականի կեսերի կտրվածքով իրենց գնահատականի վրա: Արդյունքները կարելի է տեսնել «Բազմիշխանության չափորոշիչ» (*"A Measure of Polyarchy"*, Hoover Institution, Stanford University, May 27-28, 1988) նյութում, որը մշակվել էր ժողովրդավարության չափագրմանը նվիրված համաժողովին ներկայացնելու համար և նրանց «Բազմիշխանության սանդղակ»-ը (*"A Scale of Polyarchy"*), Ռեյմոնդ Գասթիլի խմբ. «Ազատությունն աշխարհում. քաղաքական իրավունքներ և քաղաքացիական ազատություններ» (Raymond D. Gastil, ed., *Freedom in the World: Political Rights and Civil Liberties, 1987-1988* (New York: Freedom House, 1990), 101-28): Բազմիշխանության համար անհրաժեշտ «ինստիտուցիոնալ երաշխիքների» արդյունավետ քննարկումը Ռոբերտ Դահլի «Բազմիշխանություն. մասնակցություն և ընդդիմություն» գրքում (Dahl, *Polyarchy: Participation and Opposition* (New Haven: Yale University Press, 1971), 1-16):

Ժողովրդավարության սանդղակ կիրառելու մեկ այլ լուրջ գործ է աշխարհում բառացիորեն բոլոր երկրների ամենամյա գնահատումը «Ֆրիդոմ հաուս» (Freedom House) կազմակերպության կողմից: Խորհրդատվական խումբը վերջին տարիներին ներառում էր այնպիսի գիտնականների, ինչպիսիք են՝ Սեյմուր Մարտին Լիփսետը, Ջիովանի Սարտորին և Լյուսիեն Փայը: 1978-1987թթ. յուրաքանչյուր տարվա համար նրանց սանդղակով տրված արժեքները կարելի է տեսնել Գասթիլի «Ազատությունն աշխարհում» (Gastil, *Freedom in the World*, 54-65):

5. Այս եզրակացությանը հանդեցինք հետևյալ կերպ: Ռայմոնդ Գասթիլի համակարգած ամենամյա հետազոտության ժամանակ կիրառվում է ժողովրդավարության քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների հարթությունների 7 կետից բաղկացած սանդղակ: Գիտնականների խմբի օգնությամբ Գասթիլը 1978-1987թթ. ըստ այդ սանդղակի՝ ամեն տարի դասակարգել է 167 երկիր: Եթե ըստ մեր նպատակների՝ ժողովրդավարությունների բազմությանը դասենք այն երկրները, որոնք 1978-1987թթ. ժամանակահատվածում Գասթիլի սանդղակով երբեք չեն ստացել 2-ից ցածր միավոր քաղաքական իրավունքների համար և 3-ից ցածր միավոր քաղաքացիական ազատությունների համար, ապա կստանանք 142 երկիր: Երկրների այս թիվը շատ մոտ է թվին այն երկրների, որոնց Քոփեջը և Ռայնիկեն 1985թ. իրենց ուսումնասիրության մեջ դասակարգել են որպես «լիարժեք բազմիշխանություններ»: Քանի որ մեզ հետաքրքրողն այն է, թե ինչպես են երկրները դառնում ժողովրդավարություններ, վերլուծության ելնական բազմություններից կհանենք այդ 42 երկրները: Ուստի այն բազմության մեջ, որը ցանկանում ենք հետազոտել, կունենանք 125 երկիր:

Եթե այնուհետև որոշենք վաղուց ի վեր գոյություն ունեցող «ամբողջատիրական» վարչակարգեր անվանել այն վարչակարգերը, որոնք 1978-87թթ. ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների գծով Գասթիլի սանդղակով ստացել են ամենացածր հնարավոր միավորը, ապա կունենանք ընդամենը 9 երկիր, որոնք համապատասխանում են ամբողջատիրությանը՝ ըստ դասակարգման: Չեռնաբար, ավանդական տիպաբանությունը կիրառելիս Գասթիլի սանդղակը կնշանակի, որ 125 երկրներից 116-ը կամ քննվող բազմության 92.8%-ը կդրվեն նույն տիպաբանական տարածքում: Տե՛ս Գասթիլ, «Ազատությունն աշխարհում» (Gastil, *Freedom in the World*, 54-65):

«մեկնարկային տեղը», վարչակարգի տիպերի նման տիպաբանությունը չի կարող շատ բան ասել անցման հնարավոր ուղիների և կայացման խնդիրների տարբերությունների այն չափազանց կարևոր շարքի մասին, որը մեր կարծիքով՝ իսկապես գոյություն ունի: Մեր նպատակն է այս գլխի մնացած մասում վերաձևակերպել վարչակարգի տիպերի եռակողմ տարբերակումն այնպես, որ այն ավելի օգտակար դառնա *անցման ուղիների* և *կայացման խնդիրների* վերլուծության հարցում: Ուստի առաջարկում ենք վերանայված տիպաբանություն, որը բաղկացած է «ժողովրդավարական», «ավտորիտար», «ամբողջատիրական», «հետամբողջատիրական» և սուլթանական վարչակարգերից:

### ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Նախ և առաջ սկսենք վարչակարգի ժողովրդավարական տիպից: Անշուշտ, ժողովրդավարության ներսում կան զգալի տարբերություններ: Սակայն կարծում ենք, որ այնպիսի կարևոր կատեգորիաներ, ինչպիսիք են՝ «փոխհամաձայնողական ժողովրդավարությունը» և «մեծամասնական ժողովրդավարությունը», հանդիսանում են ժողովրդավարության ենթատիպեր, և ոչ թե վարչակարգերի տարբեր տիպեր:<sup>6</sup> Ժողովրդավարությունը՝ որպես վարչակարգի տիպ, մեզ թվում է բավականաչափ արժեքավոր պահպանելու համար և այս գրքում տվյալ պահին հավելյալ մանրամասնելու կարիք չունի:

### ԱՄԲՈՂՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

Կարծում ենք նաև, որ «ամբողջատիրական վարչակարգ» հասկացությունը՝ որպես որոշ սահմանափակ պատմական շեղումներով կատարյալ տիպ, ունի մնայուն արժեք: Եթե որևէ վարչակարգ վերացրել է մինչ այդ գոյություն ունեցած գրեթե ողջ քաղաքական, տնտեսական և սոցիալական բազմակարծությունը, ունի միասնական, հստակ սահմանված, ուղղորդող, «ուստոպիստական» գաղափարախոսություն, իրականացնում է հասարակության ինտենսիվ և էքստենսիվ մոբիլիզացում և ունի այնպիսի ղեկավարություն, որն իշխում է հաճախ խարիզմատիկ կերպով, բանեցնում է կամայական իշխանություն, որի անկախատեսելիությունն ու ազդեցությունն իրենց մաշկի վրա են զգում թե՛ վերնախավերը և թե՛ ոչ վերնախավերը, ապա մեզ թվում է, որ դարձյալ պատմականորեն ու գա-

6. Ժողովրդավարության տարատեսակների քննարկում. տե՛ս Արենդ Լիյփհարտ, «Ժողովրդավարական վարչակարգեր. մեծամասնական և փոխհամաձայնության վրա հիմնված կառավարությունների օրինակներ քսանմեկ երկրներում» (Arendt Lijphart, *Democracies: Patterns of Majoritarian and Consensus Government in Twenty-one Countries* (New Haven: Yale University Press, 1984), esp. 1-36), Ֆիլիպ Շմիտթեր և Թերրի Լինն Կարլ, «Ինչ է ժողովրդավարությունը և ինչ չէ» (Philippe C. Schmitter and Terry Lynn Karl, "What Democracy Is ... and Is Not", *Journal of Democracy* 2, no. 2 (Summer 1991): 75-88), Խուան Լինց, «Փոփոխությունը և շարունակականությունը՝ որպես ժամանակակից ժողովրդավարությունների բնույթ» (Juan J. Linz, "Change and Continuity in the Nature of Contemporary Democracies"), Հարրի Մարքսի և Լարրի Դայմոնդի խմբ.՝ «Ժողովրդավարության վերախնամակարգում» (Gary Marks and Larry Diamond, eds., *Reexamining Democracy* (Newbury Park, N.J.: Sage Publications, 1992), 182-207):

ղափարական առումով իմաստ ունի այն անվանել ուժեղ ամբողջատիրական միտումներ ունեցող վարչակարգ:

Եթե ընդունենք ժողովրդավարական և ամբողջատիրական վարչակարգերի տիպերի՝ պահպանվող մտահայեցողական օգտակարությունը, ապա այն ուրրտը, որտեղ անհրաժեշտ է կատարել լրացուցիչ տիպաբանական վերանայում, վերաբերում է այն վարչակարգերին, որոնք հստակորեն ո՛չ ժողովրդավարական են, ո՛չ ամբողջատիրական: Մինչև 1980-ական թվականների սկիզբը այն երկրների թիվը, որոնք հստակորեն ամբողջատիրական էին կամ փորձում էին ստեղծել այդպիսի վարչակարգեր, իրականում որոշ ժամանակ արդեն նվազում էր: Քանի որ 1953թ. Ստալինի մահվանից հետո շատ խորհրդային տիպի վարչակարգեր սկսեցին փոխվել, դրանք արդեն չէին համապատասխանում ամբողջատիրական մոդելին, ինչպես ցույց տվեց հետազոտությունը: Այդ փոփոխությունն առաջացրեց մտահայեցողական շփոթություն: Որոշ գիտնականներ պնդում էին, որ ամբողջատիրության կատեգորիան որպես այդպիսին սխալ է: Ուրիշները հակված էին հետստալինյան վարչակարգերն անվանել «ավտորիտար»: Այդ մոտեցումներից և ոչ մեկը լրիվ բավարար չի թվում: Բհարկե, խորհրդային տիպի համակարգերի մեծ մասը 1980-ական թվականներին գործնականում ամբողջատիրական չէր: Սակայն հնարավոր չի լինի պատկերացնել «խորհրդային տիպի» վարչակարգերի յուրահատկությունը, բացառությամբ Լեհաստանի (տե՛ս Գլուխ 12), եթե դրանք ներառվեն ավտորիտար վարչակարգերի կատեգորիայում:

Խորհրդային տիպի վարչակարգերի վերաբերյալ գրականությունը ճիշտ կերպով ուշադրություն հրավիրեց վարչակարգի բնութագրերի վրա, որոնք այլևս ամբողջատիրական չէին, և երևան բերեց քաղաքականության մշակման նոր խոստումնալից ուսումնասիրություններ: Այդպիսի տեսանկյուններից մեկն «ինստիտուցիոնալ բազմակարծությունն» էր:<sup>7</sup> Սակայն մեր ըմբռնմամբ՝ այդ հետստալինյան հասարակարգերը «բազմակարծական» անվանելով՝ բաց թողնվեցին որոշ չափազանց կարևոր գծեր, որոնք դժվար թե կարելի կլինի անվանել «բազմակարծական»: Բազմակարծական ժողովրդավարության տեսությունը, հատկապես՝ «խմբերի տեսություն» տարբերակը, որն ուսումնասիրվել է այնպիսի հեղինակների կողմից, ինչպիսիք են՝ Արթուր Բենյոլին և Դեյվիդ Թրումանը, քաղաքացիական հասարակությունում սկսվում է այն անհատներից, ովքեր կազմում են ազատորեն ձևավորված շահերի վրա հիմնված բազմաթիվ խմբեր, որոնք հարաբերականորեն ինքնավար են և հաճախ ունենում են ընդհանուր շահեր: Քաղաքացիական հասարակության ներսում այդ բազմազան խմբերը փորձում են ընդհանրացնել իրենց շահերը և մրցել միմյանց հետ քաղաքական հասարակության մեջ պետության քաղաքականության վրա ազդեցություն գործելու հարցում: Սակայն «ինստիտուցիոնալ բազմակարծությունը», ինչը որոշ հեղինակներ տեսան Խորհրդային Միությունում, արմատապես տարբերվում էր նրանով, որ գրեթե բոլոր բազմակարծական հակամարտությունները տեղի էին ունենում *վարչակարգի կողմից ստեղծված կազմակերպություններում*՝ իր իսկ *կուսակցական պե-*

7. Ինստիտուցիոնալ բազմակարծության տեսանկյունից խորհրդային քաղաքականության վերլուծության ամենաուժեղ ջատագովն էր Ջերրի Հաուն, հատկապես՝ իր «Խորհրդային Միությունը և հասարակագիտության տեսությունը» գրքում (Jerry F. Hough, *The Soviet Union and Social Science Theory* (Cambridge, Mass.: Harvard University Press, 1977):

տության ներսում: Հետևաբար, գաղափարապես մրցակցության և հակամարտության այս ձևն իրականում ավելի մոտ էր այն բանին, ինչը քաղաքական տեսաբաններն անվանում են բյուրոկրատական քաղաքականություն, քան թե այն բանին, որը կոչում են բազմակարծության քաղաքականություն:<sup>8</sup>

Այդ խորհրդային տիպի վարչակարգերն ամբողջատիրական, ավտորիտար և ժողովրդավարական վարչակարգերի արդեն գոյություն ունեցող տիպաբանության մեջ պարզապես մտցնելու փոխարեն կարծում ենք, որ պետք է ընդլայնել այդ տիպաբանությունը՝ ներկայացնելով մի յուրահատուկ վարչակարգ, որը կանվանենք *հետամբողջատիրական*:<sup>9</sup> Կարծում ենք, որ այդ կատեգորիան մեթոդաբանորեն հիմնավորված է, որովհետև վարչակարգերի տիպերի չորս հարթություններից յուրաքանչյուրում՝ բազմակարծություն, գաղափարախոսություն, դեկավարություն և մոբիլիզացում, կարող է լինել հետամբողջատիրական վարչակարգի կատարելատիպ, որը տարբերվում է ամբողջատիրական, ավտորիտար կամ ժողովրդավարական վարչակարգերի կատարելատիպերից: Ավելի ուշ այս գլխում նորից մի փաստարկ կբերենք սուլթանականությունը վարչակարգի առանձին կատարելատիպ համարելու օգտին:<sup>10</sup>

Մեր փաստարկը վստահորեն սահմանելու համար նախ սխեմատիկորեն ներկայացնում ենք, թե վարչակարգերի առաջարկվող հինգ կատարելատիպերը՝ ժողովրդավարական, ամբողջատիրական, հետամբողջատիրական, ավտորիտար և սուլթանական, ինչով են միմյանցից տարբերվում՝ ըստ վարչակարգի տիպի չորս բաղկացուցիչ հարթու-

8. Խորհրդային քաղաքականության ինստիտուցիոնալ բազմակարծական մոտեցման քննադատության առաջամարտիկներից է Արչի Բրաունը՝ «Բազմակարծություն, իշխանություն և խորհրդային քաղաքական համակարգը. համեմատական տեսանկյուն» (Archie Brown, *Pluralism, Power and the Soviet Political System: A Comparative Perspective*), Սյուզան Գրոս Սոլոմոնի խմբ.՝ «Բազմակարծությունը Խորհրդային Միությունում» (Susan Gross Solomon, *Pluralism in the Soviet Union* (London: Macmillan, 1983), 61-107): Եղած գրականության ամփոփման առումով օգտակար է Գեբրիել Ալմոնդի (Լորա Ռոսելլի հետ միասին) «Մոդելի հարմարեցումը կոմունիզմի մասին ուսումնասիրություններում» (*Model-Fitting in Communism Studies*)՝ մասը նրա «Բաժանված բնագավառ. քաղաքագիտության դպրոցներ և աղանդներ» (A Discipline Divided: *Schools and Sects in Political Science* (Newbury Park, Calif.: Sage Publications, 1990), 157-72) աշխատությունում, որտեղ ուշադրության կենտրոնում են գտնվում այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են՝ Գորդոն Սքիլինգը, Արչի Բրաունը և Ջեքի Հաուն:

9. Խուան Լինցն իր «Ամբողջատիրական և ավտորիտար վարչակարգեր» (Juan Linz, *Totalitarian and Authoritarian Regimes*)՝ աշխատության մեջ, Ֆրեդ Գրինշտեյն և Նելսոն Փոլսբի խմբ.՝ «Հասարակագիտության ձեռնարկ»-ում (Fred I. Greenstein and Nelson W. Polsby, eds., *Handbook of Political Science* (Reading, Mass.: Addison-Wesley Publishing Co. 1975), 3:175-411), վերլուծում է այն, ինչ նա անվանում է «հետամբողջատիրական ավտորիտար վարչակարգեր», *տե՛ս* էջ 336-50: Այս գրքում ուշադրության կենտրոնում ունենալով ժողովրդավարության անցման հնարավոր ուղիները և ժողովրդավարության կայացման խնդիրները՝ կարծում ենք, որ ավելի օգտակար կլինի հետամբողջատիրական վարչակարգերը դիտարկել ոչ թե որպես ավտորիտարության ենթատիպ, այլ որպես ինքնուրույն կատարելատիպ:

10. Խուան Լինցի սուլթանիստության մասին մտքերը *տե՛ս* նույն տեղում, էջ 259-63: Սուլթանականության ավելի ամբողջական քննարկում. *տե՛ս* Հ. Չեհաբի և Խուան Լինց, «Սուլթանական վարչակարգեր» (H. E. Chehabi and Juan J. Linz, *Sultanistic Regimes*)՝ նյութը Հարվարդի համալսարանում սուլթանիստական վարչակարգերին նվիրված համաժողովի համար, 1990թ., նոյեմբեր: Համաժողովի արդյունքները, որոնք ներառում էին նյութեր այնպիսի երկրների մասին, ինչպիսիք են՝ Իրանը, Ֆիլիպինները, Դոմինիկյան Հանրապետությունը և Ռումինիան, կիրատարակվեն առանձին գրքով՝ Հ.Բ. Չեհաբիի և Խուան Լինցի խմբագրությամբ:

թյուններից յուրաքանչյուրի (Աղյուսակ 3.1): Հաջորդ գլխում բացատրելու ենք, թե որն է մեր կարծիքով վարչակարգերից յուրաքանչյուր տիպի նշանակությունը ժողովրդավարությանն անցման ուղիների և ժողովրդավարության կայացման խնդիրների համար:

### ՀԵՏԱՄԲՈՂՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

Մեր խնդիրն այստեղ այն խնդրի հետազոտումն է, թե ինչով է հետամբողջատիրությունը տարբերվում ամբողջատիրությունից, ինչպես նաև ավորիտարությունից՝ ըստ վարչակարգերի տիպերի չորս հարթություններից յուրաքանչյուրի:<sup>11</sup> Համապատասխան մասերում ուշադրություն է հրավիրվելու նաև թե՛ ամբողջատիրական, թե՛ հետամբողջատիրական վարչակարգերի՝ որոշ տեսականորեն թերզարգացած բնութագրերի վրա, որոնք առաջացնում են դինամիկ ճնշում տվյալ տիպին ոչ բնորոշ փոփոխության համար: Հեղինակները համաձայն չեն այն կարծիքին, որ տիպերից որևէ մեկը ստատիկ է:

Հետամբողջատիրությունը, ինչպես ցույց է տալիս Աղյուսակ 3.1-ը, կարող է ընդգրկել մի ողջ տիրույթ՝ «վաղ հետամբողջատիրությունից» ու «սառեցված հետամբողջատիրությունից» մինչև «հասուն հետամբողջատիրություն»: Վաղ հետամբողջատիրությունը շատ մոտ է ամբողջատիրական կատարելատիպին, սակայն դրանից տարբերվում է գոնե մեկ գլխավոր կողմով. սովորաբար առաջնորդի նկատմամբ լինում են որոշ սահմանափակումներ: Կարող է լինել սառեցված հետամբողջատիրություն, որում թեև վարչակարգի քաղաքացիական հասարակության որոշ քննադատների նկատմամբ կա տևական հանդուրժողականություն, կուսակցություն-պետության գրեթե բոլոր վերահսկողական մեխանիզմները երկար ժամանակ մնում են տեղում և զարգացում չեն ապրում (օր.՝ Չեխոսլովակիան 1977թ-ից մինչև 1989թ.): Կամ կարող է լինել հասուն հետամբողջատիրություն, որում տեղի է ունեցել հետամբողջատիրական վարչակարգի բոլոր հատկանիշների զգալի փոփոխություն, բացառությամբ այն բանի, որ պաշտոնական կուսակցության քաղաքական տեսանկյունից ղեկավար դերը դեռևս սբբություն է (օր.՝ Հունգարիան 1982թ-ից մինչև 1988թ., որն ի վերջո մինչև 1988թ. վերջն ապրեց այդ տիպին ոչ բնորոշ փոփոխությունը շատ մոտ զարգացումներ):

Ինչ վերաբերում է բազմակարծությանը, ապա ամբողջատիրության բնորոշ առանձնահատկությունն այն է, որ հասարակարգում չկա ո՛չ քաղաքական ու տնտեսական, ո՛չ էլ սոցիալական բազմակարծություն, և բազմակարծության՝ նախկինում գոյություն ունեցած աղբյուրներն արմատախիլ են արվել կամ շարունակաբար գապվել են: Ավտորիտար

11. Կարծում ենք, որ ընթերցողներն իրենք կարող են հեշտությամբ հասկանալ, թե հետամբողջատիրական վարչակարգերն ինչու են ոչ ժողովրդավարական, այնպես որ այս կետն առանձին չենք քննարկի: Ուզում ենք հստակեցնել, որ մեր վերլուծական այս գրքում «հետամբողջատիրական» բառը վերաբերում է ոչ ժողովրդավարական վարչակարգի տեսակին նախքան անցումը ժողովրդավարության: Այս գլխում մեզ հիմնականում հետաքրքրում են կատարելատիպերը: Սակայն Գլուխ 15-ում՝ «Հետկոմունիզմի նախապատմությունները», ներկայացվում են մեծ թվով էմպիրիկ ապացույցներ այն մասին, թե ինչ է նշանակում ամբողջատիրական կամ հետամբողջատիրական (ի տարբերություն ավտորիտարի) ժառանգությունը հինգ դաշտերից յուրաքանչյուրի համար, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարության կայացման համար, ինչպես քննեցինք այս գրքի Աղյուսակ 1.1-ում:

վարչակարգում կա որոշ սահմանափակ քաղաքական բազմակարծություն և հաճախ՝ միանգամայն էքստենսիվ տնտեսական ու սոցիալական բազմակարծություն: Ավտորիտար վարչակարգում սահմանափակ քաղաքական բազմակարծության դրսևորումները և էքստենսիվ սոցիալական ու տնտեսական բազմակարծությունը նախորդում են վարչակարգին: Ինչո՞վ է բազմակարծությունը հետամբողջատիրական վարչակարգերում տարբերվում բազմակարծության գրեթե բացակայությունից ամբողջատիրական վարչակարգերում և ավտորիտար վարչակարգերի սահմանափակ բազմակարծությունից:

Հասուն հետամբողջատիրական վարչակարգում պետության ներսում գոյություն ունի ինստիտուցիոնալ բազմակարծության շատ ավելի կարևոր և բարդ դաշտ, քան ամբողջատիրական վարչակարգում: Նաև ի տարբերություն ամբողջատիրության՝ հետամբողջատիրությունը սովորաբար ունի սոցիալական բազմակարծության շատ ավելի զգալի աստիճան, իսկ հասուն հետամբողջատիրական վարչակարգում հաճախ խոսվում է մի «երկրորդային մշակույթի» կամ «գուգահեռ մշակույթի» մասին: Դրա մասին է վկայում, օրինակ, մի այնպիսի երևույթ, ինչպիսին է աշխույժ ընդհատակյա *սամիզդաստ* գրականության գոյությունն այնպիսի ամսագրերի բազմատպաքանակ թողարկմամբ, ինչը հնարավոր չէր լինի ամբողջատիրական վարչակարգի օրոք:<sup>12</sup> Այս աճող բազմակարծությունը միաժամանակ խոցելիության դինամիկ աղբյուր է հետամբողջատիրական վարչակարգի համար և ուժի դինամիկ աղբյուր՝ առաջացող ժողովրդավարական ընդդիմության համար: Օրինակ, այդ «երկրորդ մշակույթը» կարող է լինել բավականին հզոր, այնքան հզոր, որ թեև երկրորդ մշակույթի առաջնորդները հաճախ բանտ են նետվում, բայց և այնպես, հասուն հետամբողջատիրական վարչակարգում ընդդիմության առաջնորդները կարողանում են ծնունդ տալ զգալի թվով հետևորդների և ստեղծել դիմացկուն ընդդիմադիր կազմակերպություններ քաղաքացիական հասարակությունում: Ըզնաժամի պահերին, հետևաբար, հասուն հետամբողջատիրական վարչակարգը կարող է ունենալ ժողովրդավարական ընդդիմության կադրային բանակ քաղաքացիական հասարակության ներսում՝ ժողովրդավարական քաղաքական ընդդիմությունն ձևավորելու շատ ավելի մեծ ներուժով, քան ամբողջատիրական վարչակարգում: Հասուն հետամբողջատիրական վարչակարգի բնորոշ գծերից մեկն է նաև պետական պլանային տնտեսության և պետական հատվածում էքստենսիվ կիսամասնավոր շուկայի ստեղծման փորձերի համատեղ առկայությունը, որը կարող է ծնել պետական հատվածի կառավարիչների «կարմիր բուրժուազիա» և աճող, սակայն ստորադաս մասնավոր հատված հատկապես գյուղատնտեսության, առևտրի և ծառայությունների ոլորտներում:

Սակայն հետամբողջատիրական վարչակարգում այդ սոցիալական և տնտեսական բազմակարծությունն իր աստիճանով և տեսակով տարբերվում է ավտորիտար վարչակարգում եղած սոցիալական և տնտեսական բազմակարծությունից: Աստիճանով այն տարբերվում է, որովհետև ավտորիտար վարչակարգում սովորաբար կա ավելի շատ սոցիալական և տնտեսական բազմակարծություն (մասնավորապես՝ սովորաբար ավելի

12. Օրինակ, հասուն հետամբողջատիրական Հունգարիայում ամենահեղինակավոր «սամիզդաստ» հրատարակչությունը՝ «Բեզելտն», 1982-1989թթ. հրատարակվել է տարվա մեջ չորս անգամ 20000 օրինակ տպաքանակով: Տեղեկատվությունը տրամադրվել է Ալֆրեդ Ստեփանին հրատարակչի և խմբագրական խորհրդի անդամ Միկլոշ Հարաշտիի կողմից, Բուդապեշտ, 1994թ., օգոստոս:





Ստանձա- հատկություն	ժողովրդավարություն	Ավտորիտարություն	Ամբողջատիրական	Վետանորջատիրական	Սուլթանական
<p>Ստրիկիզ- ցում</p> <p>Ստանկցություն ժողովրդա- վարացման գործընթացին քաղաքացիական հասա- նակության ինքնուրույն կազմակերպման և բաղա- քանակ հասարակության իրավական համակարգով երաշխավորված միջակցող կուսակցությունների միջո- ցով: Պետություն ինտանտ է դառնում վարչակարգի ցածր մոդիլիզացման, սակայն քա- ղաքացիների բարձր մաս- նակցություն: Վարչակարգի կողմից ցուված ջանքեր արթնացնելու քաղաքացիա- կան բարձր գիտակցություն և հայրենասիրություն: Խաղաղ և կարգապահ ընդհանույն հանրություն:</p>	<p>Քաղաքական համակարգ առանց էքստենսիվ կամ խտենսիվ քաղաքական մոդիլիզացման, բացի գաղ- զացման որոշ պահերի:</p>	<p>Էքստենսիվ մոդիլիզա- ցում վարչակարգի կողմից ստեղծված մի մեծ շարք պարտադիր կազմակերպու- թյուններում: Ընշող որովում է կարողների ակտիվության և մարտավարության վրա: Խաղաղակուրծություն առաջ բերելու ջանքեր: Մասնավոր կյանքը ենթարկվում է պար- տալանքի:</p>	<p>Վետաքրքրություն առող կորուստ մոդիլիզացման գործընթացում առաջնությունների մոտ: Բնակչության կանոնավոր մոբիլիզացում պետու- թյան կողմից հովանավորվող կազ- մակերպություններում՝ ձեռք բերելու փոխհամայնացման և ենթակու- սում նվազագույն աստիճան: Հստ «կարգը» և «ակտիվիստներ» գուտ կարիերիստներ և պատենաաշու- ներ են: Ջանկություն, մեկուսացում ու ի վերջո բնակչության արժեքների մեղ անձնավանագումը դառնում են ընդունված վիաստներ:</p>	<p>Քույլ, սակայն մեթոքները ուղղորդվող մոբիլիզացում՝ քաղաքականացման, բռնի կամ ենթարկող երանակներով առանց մշտական կազմակերպման: Մեթո- վետական խմբերի պարբերական մոբիլիզացում, որոնք բնութայուն են կիրառում սուլթանի կողմից քիռակն հանարվող խմբերի դեմ:</p>	<p>Սեռայն սուլթանիկ և թուս- րական անհնանակություններ: Դիմատիայի ուժեղ զգացում: Պետական աշխատանքում առաջ- խաղացման ինքնուրույնություն չկա: Առաջնորդը կաշխատված չէ գաղափարախոսության: Եթարկում ղեկավարներին հիմնական խոր վարի և անձնական պարզների վրա: Առաջնորդի աշխատակազմը կազմավորվել է իր ընտանիքի անդամներից, ընկերներից, գործարար ընկերու- րից կամ վարչակարգ պահելու համար ուղղակիորեն բնութայն կիրառման մեջ մեղադրված մարդկանցից: Աշխատողների դիր- քը բխում է իշխողին նրանց գուտ անձնական հպատակությունից:</p>
<p>Ղեկավարու- թյուն</p>	<p>Քաղաքական համակարգ, որում որևէ առաջնորդ կամ երբեմն որևէ փոքր խումբ գործադրում է իշխանություն վատ անհնանակ, սակայն իրականում բավականին կանխատեսելի նորմերի առնաններում: Նախկին վերնախափ խմբերին իշխանության մեջ ընդգր- վելու կողտուսցիա (ջանք): Որոշ ինքնուրույնություն պետական և զինվորական գործի մեջ առաջխաղացման հարցում:</p>	<p>Սեռոջատիրական ղե- կավարություն իշխում է ա) ոչ հստակ սահմանմե- րում և անդամների ու ոչ անդամների համար մեծ անվանխառնեղ լուրջությամբ: Նախնի խարիզմատիկ: Բարձրագույն ղեկավարու- թյան կազմում ընդգրկվել մեծապես կախված է կուսակ- ցական կարգավորության մեջ ունեցած հաջողությունից և նվիրումից:</p>	<p>Սեռոջատիրական քաղաքական մեղախափ կողմից անձնական ակնույնություն վրա: Բարձրագույն ղեկավարության ստուգաններ կուսակցության կա- ուղցվածքների, ընթացակարգի և «մերթյու ժողովրդավարության» միջոցով: Բարձրագույն ղեկավարու- րը հավանաբար են լինում խարիզ- մատիկ: Բարձրագույն ղեկավար- ության կազմում հավաքագրումը սահմանափակում է պաշտոնական անվարության, սակայն ավելի քիչ է կախված կուսակցական կազ- մակերպության մեղում ունեցած առաջխաղացումից: Բարձրագույն ընկերակրները կարող են առաջ բաշխել պետական ապարատում կու- սակցական տեղեկուկուսուներից:</p>	<p>Սեռայն սուլթանիկ և թուս- րական անհնանակություններ: Դիմատիայի ուժեղ զգացում: Պետական աշխատանքում առաջ- խաղացման ինքնուրույնություն չկա: Առաջնորդը կաշխատված չէ գաղափարախոսության: Եթարկում ղեկավարներին հիմնական խոր վարի և անձնական պարզների վրա: Առաջնորդի աշխատակազմը կազմավորվել է իր ընտանիքի անդամներից, ընկերներից, գործարար ընկերու- րից կամ վարչակարգ պահելու համար ուղղակիորեն բնութայն կիրառման մեջ մեղադրված մարդկանցից: Աշխատողների դիր- քը բխում է իշխողին նրանց գուտ անձնական հպատակությունից:</p>	<p>Սեռոջատիրական ղե- կավարություն իշխում է ա) ոչ հստակ սահմանմե- րում և անդամների ու ոչ անդամների համար մեծ անվանխառնեղ լուրջությամբ: Նախնի խարիզմատիկ: Բարձրագույն ղեկավարու- թյան կազմում ընդգրկվել մեծապես կախված է կուսակ- ցական կարգավորության մեջ ունեցած հաջողությունից և նվիրումից:</p>

ինքնուրույն մասնավոր հատված, որոշ չափով ավելի մեծ կրոնական ազատություն և ավելի ծավալուն չարգելված մշակութային արտադրություն): Տեսակի առումով հետամբողջատիրական և ավտորիտար վարչակարգերի տարբերությունը տիպաբանորեն ավելի կարևոր է: Հետամբողջատիրական հասարակությունում թե՛ վարչակարգի իշխանությունը կրողների, թե՛ ընդդիմության պատմական արմատները գտնվում են նախորդ ամբողջատիրական վարչակարգում: Ըստ սահմանման՝ որևէ նախորդ ամբողջատիրական վարչակարգի գոյությունը նշանակում է, որ պատասխանատու և կազմակերպված բազմակարծության՝ նախկինում գոյություն ունեցած արյուրների մեծ մասը վերացվել է կամ ճնշվել, և հաստատվել է ամբողջատիրական կարգ: Հետևաբար, քաղաքացիական հասարակության ընդդիմադիր հոսանքների կողմից գործադրվում են ակտիվ «ապամբողջատիրացման» ջանքեր:

Քաղաքացիական հասարակության մեջ ընդդիմության զգացմունքային և կազմակերպական մղումն, այսպիսով, մեծ մասամբ առաջ է գալիս գիտակցաբար՝ մշակելու այլընտրանքներ ամբողջատիրական վարչակարգի կողմից ստեղծված քաղաքական, տնտեսական և սոցիալական կառույցների համար, կառույցներ, որոնք դեռևս խոշոր դեր են խաղում հետամբողջատիրական հասարակությունում: «Երկրորդ մշակույթը», հետևաբար, մեծ մասամբ ձևով ավանդական չէ, այլ արտահայտվում է նոր շարժումներում, որոնք բխում են ամբողջատիրական կենսափորձից: Կարող է տեղի ունենալ նաև պետության կողմից ղեկավարվող ապամբողջատիրացում, երբ վարչակարգն ինքն է սկսում վերացնել մենիշխանական կենսափորձի առավել ծայրահեղ գծերը: Այսպիսով, եթե գոյություն ունի աճող «ինստիտուցիոնալ բազմակարծություն» կամ աճող հարգանք կանոնակարգի և օրենքի նկատմամբ կամ նոր թույլատրված մասնավոր հատված, դա պետք է հասկացվի որպես բազմակարծության տեսակ, որը *ծագում է* նախորդ ամբողջատիրական վարչակարգից:

Սակայն տիպաբանական և քաղաքական տեսանկյունից կարևոր է շեշտել, որ հետամբողջատիրական հասարակություններում կան բազմակարծության զգալի սահմանափակումներ: Ի տարբերություն ավտորիտար վարչակարգի՝ այստեղ քաղաքական ոլորտում չկա այդպիսի սահմանափակ և համեմատաբար ինքնուրույն բազմակարծություն: Բոլոր հետամբողջատիրական վարչակարգերում պաշտոնական կուսակցությանը դեռևս օրինական կերպով շնորհվում է հասարակարգում առաջնորդող դեր: Հետամբողջատիրական վարչակարգի ինստիտուցիոնալ բազմակարծությունը պետք չէ շփոթել քաղաքական բազմակարծության հետ, ընդհակառակը, ինստիտուցիոնալ բազմակարծությունը գործադրվում է կուսակցական պետության մեջ կամ նոր թույլատրված երկրորդ տնտեսության կամ գուգահեռ մշակույթի մեջ: Զուգահեռ կամ երկրորդ մշակույթի բազմակարծությունը պետք է դիտարկել որպես *սոցիալական* բազմակարծություն, որը կարող է ունենալ քաղաքական հետևանքներ: Սակայն, պետք է պնդել, որ հետամբողջատիրական վարչակարգերում կուսակցությունը և վարչակարգի ղեկավարները, եթե միայն նրանք չեն կրում տիպիկ ոչ բնորոշ փոփոխություն, ոչ պաշտոնական քաղաքական բազմակարծությունը չեն դարձնում ո՛չ լեգիտիմ, ո՛չ էլ՝ պատասխանատու:<sup>13</sup> Անգամ արբանյակային կուսակ-

13. 1988-89թթ. Հունգարիան մի հասուն հետամբողջատիրական վարչակարգ էր, որն իրականացնելով էքստենսիվ ապամբողջատիրացում և ավելի ու ավելի շատ ճանաչելով այլ կուսակցություն-

ցությունների ձևական բազմակարծությունը քաղաքականապես դառնում է էական միայն վարչակարգի ավարտական փուլերում՝ անցման ընթացքի մեջ մտնելուց հետո:

Երբ անդրադառնում ենք *ղեկավարություն* հարթությանը, տեսնում ենք նաև կարևոր միտումներ, որոնք տարբերակում են ամբողջատիրական ղեկավարությունը ավտորիտար ղեկավարությունից: Ամբողջատիրական ղեկավարությունը չի ենթարկվում օրենքներին ու կանոնակարգերին և հաճախ խարիզմատիկ է: Ղեկավարությունը կարող է ծնունդ առնել հեղափոխական կուսակցությունից կամ շարժումից, սակայն այդ կորիզի անդամները նույնքան խոցելի են առաջնորդի կողմից հայտարարված կտրուկ քաղաքականության և գաղափարախոսական փոփոխությունների առումով (անգամ շատ ավելի՝ իրենց կյանքը կորցնելու հնարավորության առումով), որքան և բնակչության մնացած մասը:<sup>14</sup> Ի տարբերություն դրա՝ Լինցի սխեմայում ավտորիտար ղեկավարությունը բնութագրվում է մի քաղաքական համակարգով, որտեղ առաջնորդը կամ երբեմն որևէ փոքր խումբ կառավարում է ձևական առումով վատ սահմանված, սակայն իրականում բավականին կանխատեսելի նորմերի սահմաններում: Հաճախ էքստենսիվ ջանքեր են գործադրվում հին վերնախավին պատկանող խմբերին ղեկավար դերերում ներգրավելու ուղղությամբ, իսկ պետական աշխատանքում առաջխաղացման ու զինվորական գործում կա որոշ անկախություն:

Ինչպես ամբողջատիրական վարչակարգում, հետամբողջատիրական ղեկավարությունը ևս դեռ բացառապես սահմանափակված է հեղափոխական կուսակցությունից կամ շարժումից դուրս եկածներով: Սակայն, ի տարբերություն ամբողջատիրական վարչակարգի, հետամբողջատիրական առաջնորդները հակված են լինելու ավելի բյուրոկրատական և պետական-տեխնոկրատական, քան խարիզմատիկ: Հետամբողջատիրական վարչակարգի կենտրոնական կորիզը սովորաբար ձգտում է բարեհաջող կերպով մեծացնել իր ապահովությունը և նվազեցնել իր վախը՝ պակասեցնելով բարձրագույն ղեկավարությանը վերապահված քմահաճ գործողությունների ազատությունը:

Ի հակադրություն նրանց, ովքեր ասում են, որ «ամբողջատիրական վարչակարգ» հասկացությունը ստատիկ է, կարծում ենք, որ առիթի դեպքում (օրինակ՝ բարձրագույն ղեկավարի մահը) ղեկավար վերնախավի ցանկությունը նվազեցնելու ապագա ղեկավարի գործողությունների բացարձակ ազատությունը, ինչպես և սպասվում էր, ճնշման դինամիկ աղբյուր է ամբողջատիրականից հետամբողջատիրական վարչակարգին ոչ բնորոշ փոփոխության համար: Հետամբողջատիրական ղեկավարությունը, ուստի, տիպաբանորեն այս առումով ավելի մոտ է ավտորիտար ղեկավարությանը այնքանով, որ առաջնորդն իշխում է չսահմանված, սակայն իրականում բավականին կանխատեսելի սահմաններում: Սակայն վարչակարգի այդ երկու տիպերի ղեկավարները դարձյալ միմյանցից հիմնավորապես տարբերվում են: Հետամբողջատիրական ղեկավարությունը համալրվում է բացառապես կուսակցության այն

ների լեգիտիմությունը՝ տեսել է նշանակալի ոչ բնորոշ փոփոխություններ անգամ նախքան կոմունիստական կուսակցության իշխանությունը կորցնելը: *Տե՛ս* Գլուխ 17:

14. Օրինակ, Մտալինի օրոք 1930թ. քաղբյուրոյի ինն անդամներից հինգն անհետացել կամ գնդակահարվել են մինչև 1937թ.: *Տե՛ս* Ջորջ Շուլլեր, «Քաղբյուրոն» (George K. Schueller, *The Politburo* (Stanford: Stanford University Press, 1951), 5-6):

անդամներով, ովքեր ապահովում են իրենց առաջխաղացումը հենց կուսակցական կազմակերպության ներսում, բյուրոկրատական ապարատում կամ պետության տեխնոկրատական ապարատում: Նրանք բոլորն էլ, այսպիսով, առաջ են քաշվում վարչակարգի կողմից ստեղծված կառույցներից: Ի զգալի տարբերություն դրա՝ ավտորիտար վարչակարգերի մեծ մասում վարչակարգի համար ընդունված բան է ղեկավարությունը համալրել այն խմբերից, որոնք ունեն որոշ իշխանություն, ներկայացվածություն և լեգիտիմություն, ինչը չի բխում անմիջապես վարչակարգի ցանկությունից: Իսկապես, նախկինում գոյություն ունեցած հասարակության հզոր բեկորները հաճախ զավթել են ավտորիտար վարչակարգը: Որոշ ավտորիտար վարչակարգերում բարձրագույն պաշտոնների նշանակման նույնիսկ կարելի է հասնել ոչ այնքան քաղաքական հավատարմության, որքան մասնագիտական և տեխնիկական փորձառության և մրցակցության որոշ աստիճանի շնորհիվ՝ քննությունների միջոցով, որոնք ընդհանրապես բաց են հասարակության համար: Հասուն հետամբողջատիրական վարչակարգերում մասնագիտական գիտելիքը դառնում է ավելի ու ավելի կարևոր, սակայն պետք է հիշել, որ սկզբնական մուտքը մասնագիտական ուսուցման ոլորտ վերահսկվում է քաղաքական չափանիշներով: Ինչպես նաև այն, որ հետամբողջատիրական համակարգերի կողմից ընդունված կամ ճանաչված մասնագիտական կամ կառավարչական կարողությունները, այնուամենայնիվ, չեն ներառում այնպիսի հմտություններ, որոնք ձեռք են բերվում ոլորտների ավելի մեծ տիրույթում, ինչպես օրինակ՝ իրավունքը, եկեղեցական կազմակերպությունները կամ անկախ գործարարությունն ու աշխատանքը:

Հետամբողջատիրական վարչակարգի սահմանափակ կուսակցական-բյուրոկրատական-տեխնոկրատական բազմակարծությունը վարչակարգին չի տալիս վարչակարգի ներսում փոփոխություն առաջ բերելու այն ճկունությունը, որը շատ ավտորիտար վարչակարգեր կարող են ձեռք բերել ոչ վարչակարգային վերնախավերի ներգրավմամբ: Առաջին քարտուղար-գաղափարախոսի անձնավորված ղեկավարությանը դիմադրելու ցանկությունը կարող է դառնալ ամբողջատիրական վարչակարգից հետամբողջատիրականի փոխվելու աղբյուր, սակայն այն կարող է ի վերջո հանգեցնել ծերացող օլիգարխիկ ղեկավարության, նումենկլատուրայի կողմից ցուցաբերվող աջակցության: Դրսից նոր կադրեր ներգրավելու միջոցով «վերնների» երիտասարդացնելու փորձերը սովորաբար շատ սահմանափակ են: Ծայրահեղ դեպքերում (օր.՝ ԳԴՀ-ում և 1968թ-ից հետո՝ Չեխոսլովակիայում) սառեցված հետամբողջատիրությունը դրսևորում է ծերացման միտումներ: Ճգնաժամային հանգամանքներում ղեկավարությունը նորացնելու ոչ այնքան պարադոքսալ անկարողությունն այդ սառեցված հետամբողջատիրական վարչակարգում կարող է դառնալ դինամիկ փոփոխության պոտենցիալ աղբյուր նրանով, որ սառեցված հետամբողջատիրական վարչակարգն իր հին ու նեղ ղեկավար բազայով ունի բանակցելու շատ սահմանափակ կարողություն: Ղեկավարության նման կառուցվածքը, եթե այն ի վիճակի չէ ճգնաժամի պարագայում ճնշելու իր հակառակորդներին, հատկապես ենթակա է անկման վտանգի: Պատճառներից մեկը, թե ինչու երբեմնի ամենակարող ճնշիչ ապարատի միջին կադրային օղակը կարող է ճգնաժամի պայմաններում ժողովրդավարական ընդդիմության վրա կրակ բացելու փոխարեն թողնել, որ վարչակարգը տապալվի, կապ ունի հետամբողջատիրական վարչակարգում գաղափարախոսության դերի հետ:

Ամբողջատիրական և հետամբողջատիրական համակարգերում գաղափարախոսության ունեցած դերերի միջև առկա տարբերությունը շատ մեծ է, սակայն այն ավելի շատ բխում է վարքագծից և հավատամքից, քան թե պաշտոնական կանոնից: Գաղափարախոսության ոլորտում ամբողջատիրական վարչակարգից հետամբողջատիրականի փոխվելու դինամիկ ներուժը և՛ կադրերի, և՛ հասարակության կողմից հարաճուն փաստացի բաժանումն է պաշտոնական գաղափարախոսական հավակնությունների և իրականության միջև: Այդ բաժանումը թուլացնում է կադրերի գաղափարախոսական նվիրումը և առաջ է բերում վարչակարգի աճող քննադատություն քաղաքացիական հասարակության խմբերի կողմից: Ի դեպ, քաղաքացիական հասարակությունում նոր քննադատներից շատերն ասպարեզ են գալիս նախկին ճշմարիտ հավատացողների շարքերից, ովքեր սկսում են պնդել, որ վարչակարգն առաջ չի տանում կամ, որ ավելի վատ է, չի կարողանում առաջ մղել իր իսկ ծրագրերը: Դոկտրինի և իրականության միջև այդ առկա հակասությունից առաջ եկած ճնշումը հաճախ նպաստում է վարչակարգին ոչ բնորոշ կտրուկ փոփոխություններին, օրինակ՝ ամբողջատիրական վարչակարգի կողմից խանդավառությունն առաջացնելու ջանքերից դեպի հետամբողջատիրական վարչակարգի կողմից լուր համաձայնություն պահպանելու ջանքերը: Հետամբողջատիրական փուլում լավ մշակված և ուղղորդող գաղափարախոսությունը, որն ստեղծվել էր ամբողջատիրական վարչակարգի օրոք, դեռևս գոյություն ունի որպես պետության պաշտոնական կանոն, սակայն շատ ղեկավարների մեջ նկատվում է ուտոպիայի նկատմամբ հավատի և նվիրման թուլացում: Բնակչության մեծամասնության շրջանում պաշտոնական կանոնը դիտվում է որպես պարտադիր արարողություն, իսկ «զուգահեռ հասարակությանը» կամ «երկրորդ մշակույթին» պատկանող խմբերն առաջին մշակույթը մշտապես անվանում են «կենդանի սուտ»:<sup>15</sup> Դա հետամբողջատիրական վարչակարգի թուլության, թվացյալ ուժի «անամեջ» դառնալու մեկ այլ աղբյուր է:

Հետամբողջատիրական վարչակարգում գաղափարախոսության նշանակությունն, այսպիսով, նվազեցվում է ամբողջատիրական վարչակարգում դրա ունեցած նշանակությունից, սակայն այն դեռևս բավականին տարբերվում է գաղափարախոսության դերից ավտորիտար վարչակարգում: Ավտորիտար վարչակարգերի մեծ մասում գոյություն ունեն ցրված ոչ ժողովրդավարական մտածելակերպեր, սակայն դրանք չունեն խիստ հստակ սահմանված գաղափարախոսություն կուսակցության առաջնորդող դերի, միասնական շահեր ունեցող խմբերի, կրոնի և քաղաքացիական հասարակության, քաղաքական հասարակության, տնտեսության շատ այլ կողմերի և պետության մասին, որը դեռևս գտնվում է մի այնպիսի վարչակարգում, որը կանվանենք «հետամբողջատիրություն»: Հետևաբար, հետամբողջատիրական և ավտորիտար վարչակարգերի միջև սկզբունքային տարբերություններից մեկն այն է, որ հետամբողջատիրական վարչակարգում կա կարևոր գաղափարախոսական ժառանգություն, որը չի կարելի անտեսել և որը չի կարելի պաշտոնապես կասկածի տակ առնել: Պետության կողմից «նշանակված» գաղափարախոսությունն ունի *սոցիալական ներկայություն* հետամբողջատիրական հասարակարգի կազմակերպական

15. «Զուգահեռ հասարակության», «երկրորդ մշակույթի» և «կենդանի ստի» մասին ընդարձակ քննարկումներ և հղումներ կան այս գրքի՝ Հունգարիայում և Չեխոսլովակիայում հետամբողջատիրությանը նվիրված գլխում (Գլուխ 17):

կյանքում: Անկախ այն բանից, թե արդյոք այն արտահայտվում է պետության կողմից հովանավորվող կազմակերպությունների ընդարձակ շարքում, թե սկիզբ առնող, սակայն դեռևս պաշտոնապես վերահսկվող կազմակերպությունների տիրույթում, գաղափարախոսությունն ավելի մեծ չափով է հանդիսանում հետամբողջատիրական վարչակարգի սոցիալական իրականության մասը, քան ավտորիտար վարչակարգերի մեծ մասում:

Հետամբողջատիրական վարչակարգերի հարաբերական ապագաղափարայնությունը և ուտոպիայի՝ որպես լեգիտիմության հիմքի նկատմամբ հավատի թուլացումը նշանակում են, որ, ինչպես շատ ավտորիտար վարչակարգերում, հետամբողջատիրական հասարակարգում նույնպես ավելի ու ավելի մեծ ջանք է գործադրվում՝ լեգիտիմացնելու վարչակարգը կատարողականի չափորոշիչների հիման վրա: Գաղափարախոսության սկզբնական ուտոպիստական տարրերի և վարչակարգի արդյունավետությունից բխող լեգիտիմացման հարաճուն ջանքերի միջև եղած տարբերությունը, հատկապես երբ արդյունավետությունն սկսում է ընկնել, հետամբողջատիրական վարչակարգերի թուլության աղբյուրներից մեկն է: Քանի որ ժողովրդավարությունները հնազանդության իրենց պահանջը հիմնում են ժողովրդավարական քաղաքացիության ընթացակարգային հիմքերի, ինչպես նաև կատարողականի վրա, թույլ կատարողականի դեմ նրանք ունեն մեկուսիչ շերտ, որը հասու չէ շատ հետամբողջատիրական կամ ավտորիտար վարչակարգերին: Ուտոպիստական գաղափարախոսության թուլացումը, որը հետամբողջատիրության բնորոշ գծերից է, հետևաբար, ի հայտ է բերում վարչակարգի խոցելի կողմերի մի նոր դինամիկա կամ ժողովրդավարությանն անցման տեսանկյունից՝ նոր հնարավորություններ, որոնք կարող են օգտագործվել ժողովրդավարական ընդդիմության կողմից: Օրինակ, գաղափարախոսության կարևորության մասին մշտական թմբկահարման և քաղաքականության իրականացման գործում գաղափարախոսության աճող ոչ պիտանիության միջև առկա հակասությունները կամ, որ ավելի վատ է, դրա հստակ հակադրությունը սոցիալական իրականությանը, նպաստում են վարչակարգի միջին և ցածր օղակի կադրերի նվիրվածության ու հավատի թուլացմանը: Նման իրավիճակը կարող է նպաստել վարչակարգի արագ անկմանը, եթե ճնշման ապարատի միջին օղակի պաշտոնյաները լրջորեն կասկածի տակ առնեն վարչակարգի և դրա գաղափարախոսության դեմ բողոքող քաղաքացիների վրա կրակ բացելու իրենց իրավունքը, ինչպես կտեսնենք Արևելյան Գերմանիայի և Չեխոսլովակիայի դեպքերը քննելիս:<sup>16</sup>

Վերջին տիպաբանական տարբերությունը, որը պետք է ուսումնասիրենք, վերաբերում է *մոբիլիզացմանը*: Ավտորիտար վարչակարգերի մեծ մասում երբեք զարգացում չեն ապրել միությունների բարդ, խիստ ներառական ցանցերը, որոնց նպատակն է բնակչության մոբիլիզացումը: Դրանք գուցե ունեցել են ինտենսիվ մոբիլիզացման

16. Դանիել Ֆրիդհայմը խոշոր հետազոտություն է իրականացնում նման ստեղծված հետամբողջատիրական վարչակարգերի անկման վերաբերյալ: *Տե՛ս Ֆրիդհայմ, «Վարչակարգի անկումն արևելագերմանական խաղաղ հեղափոխության ժամանակ. միջին օղակի պաշտոնյաների դերը»* (1999թ. ապրիլ), (Friedheim, "Regime Collapse in the Peaceful East German Revolution: The Role of Middle-Level Officials", German Politics (April 1993): 97-112) Գերմանական քաղաքականությունը (1999թ. ապրիլ), էջ 97-112, և իր առաջիկա Յեյլի համալսարանի դոկտորական դիսերտացիան, որտեղ նա քննարկում է Արևելյան Գերմանիան:

կարճ ժամանակահատվածներ, բայց սովորաբար եղել են ավելի նվազ ինտենսիվ, քան ամբողջատիրական վարչակարգում, և ավելի քիչ էքստենսիվ, քան հետամբողջատիրական վարչակարգում: Ամբողջատիրական վարչակարգերում, սակայն, տեղի է ունենում հասարակության էքստենսիվ և ինտենսիվ մոբիլիզացում վարչակարգի կողմից ստեղծված մի մեծ շարք կազմակերպություններում և միջոցառումներում: Քանի որ ուտոպիստական նպատակները ներհատուկ են վարչակարգին, կադրերին ակտիվացնելու համար խանդավառություն առաջ բերելու մեծ ջանք է գործադրվում, իսկ առաջնորդների մեծ մասն էլ առաջ է գալիս այդ կադրերից: Տանն իրենց ընտանիքի և ընկերների հետ «առանձնացած» և իրենց ընտրած փոքր շրջանում կյանքը վայելող բուրժուա անհատներն ամբողջատիրական վարչակարգում ենթարկվում են պարսավանքի:

Հետամբողջատիրական վարչակարգերում սոցիալական կյանքում դեռևս տիրապետում է վարչակարգի կողմից ստեղծված մոբիլիզացման մեքենաների ինստիտուտների էքստենսիվ շարքը: Սակայն դրանք կորցրել են իրենց ինտենսիվությունը: Անդամակցությունը դեռևս ընդհանրացված է և պարտադիր, սակայն ավելի շատ ձանձրույթ է պատճառում, քան խանդավառություն: Պետական-տեխնոկրատական աշխատանքը հանդիսանում է կադրային ակտիվության այլընտրանք՝ որպես աշխատանքում բարեհաջող առաջխաղացման ուղի, եթե միայն ցուցաբերվում է «ճիշտ» մասնակցություն պաշտոնական կազմակերպություններին: Խանդավառություն առաջ բերելու փոխարեն, որն այնքան նպատակահարմար կարող է լինել ամբողջատիրական վարչակարգում, հետամբողջատիրական վարչակարգում թատերականացված մոբիլիզացման ցանցերը կարող են արհեստավարժների շրջանում առաջ բերել տեխնոկրատական խնդիրներից հեռու ժամանակի «կորուստ», իսկ շատ այլ մարդկանց ձանձրույթ պատճառել և ստիպել նահանջել դեպի մասնավոր կյանք: Երբ չկա կառուցվածքային ճգնաժամ, և հատկապես երբ չկա հասանելի այլընտրանքի զգացողություն, նման առանձնացումը պարտադիր չէ, որ խնդիր դառնա հետամբողջատիրական վարչակարգի համար: Այսպիսով, Գադարի հայտնի ասացվածքը՝ «Ովքեր մեզ դեմ չեն, կողմ են», մի ասացվածք է, որն ըմբռնելի է միայն հետամբողջատիրական վարչակարգում և ոչ թե՛ ամբողջատիրական վարչակարգում: Սակայն եթե ի տարբերություն ամբողջատիրականի՝ հետամբողջատիրական վարչակարգի կատարողականն այնքան ցածր է, որ մասնավոր կյանքի անձնական պարզները հոսո են ցնդում, ապա առանձնացումն ու անտարբերությունը կարող են նպաստել «հեռանալու», «ձայնի» և «հավատարմության» ճգնաժամի մի նոր դինամիկայի, հատկապես, երբ թվում է՝ կան հնարավոր այլընտրանքներ:<sup>17</sup>

Հետամբողջատիրության վերլուծությունն ավարտենք դրա քաղաքական և գա-

17. Հղումն, իհարկե, արվում է Աբերտ Հիրշմանի «Մեկնում, ձայն և հավատարմություն» գրքին (Albert Hirschman, *Exit, Voice and Loyalty* (Cambridge: Harvard University Press, 1970), 59): Այս դինամիկայի սքանչելի քննարկում՝ կապված ԳՂՀ-ի անկման հետ, տե՛ս Հիրշման, «Մեկնում, ձայն և Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության ճակատագիրը. գաղափարական պատմության ակնարկ», «Համաշխարհային քաղաքականություն 41» (1993թ. հունվար), էջ 173-202 (Hirschman, "Exit, Voice and the Fate of the German Democratic Republic: An Essay on Conceptual History", *World Politics* 41 (January 1993: 173–202): Մեջբերումը Քադարից ավելի մանրամասն քննարկվում է հետամբողջատիրության մասին գլխում (Գլուխ 17):



դափարախոսական թույլ կողմերի ամփոփ մամբ, ինչի նպատակն է սրել քննարկումն այն հարցի շուրջ, թե ինչու այդ վարչակարգերն այդպես արագ անկում ապրեցին, երբ մտան երկարաձգված լճացման փուլ, և ԽՍՀՄ-ը դադարեցրեց իր էքստենսիվ ճնշիչ աջակցությունը Անշուշտ, Գլուխ 17-ում՝ «Հետամբողջատիրական վարչակարգերի տարատեսակները»-ում, զարգացվում է տեսական և էմպիրիկ մի փաստարկ այն մասին, թե ինչու են սատեցված հետամբողջատիրական վարչակարգերն ավելի խոցելի անկման նկատմամբ, քան ավտորիտար կամ ամբողջատիրական վարչակարգերը:

Ամբողջատիրությունը, ժողովրդավարությունը և անգամ շատ ավտորիտար վարչակարգեր սկսվում են իրենց բուն աջակցողների շրջանում «գենետիկական» լեգիտիմությամբ՝ ըստ այն պատմական հանգամանքների, որոնք հան գեցրել են այդ վարչակարգերի հաստատմանը: Ի հակադրություն դրա՝ հետամբողջատիրական վարչակարգերը չունեն նման հիմնարար գենետիկ լեգիտիմություն, որովհետև դրանք ծնունդ են առնում ստանդարտացումից, քայքայումից կամ այն համգամանքից, որ վերնախավը վախենում է ամբողջատիրական վարչակարգից: Տիրապետելով ժառանգություն ստացած ճնշիչ ռեսուրսների, հետամբողջատիրական վարչակարգերը և դրանց հետ կապված կազմակերպված ընդդիմության թույլ կողմերը կարող են ստեղծել կայունության նույնքան կամ ավելի մեծ տպավորություն, քան ավտորիտար վարչակարգերը: Բայց եթե արտաքին աջակցությունը դադարեցվի, պապ նպատակի և նվիրումի ներքին կորուստը դրանց կդարձնի խոցելի անկման հանդեպ:

Հետամբողջատիրական քաղաքականությունը մասամբ արդյունք էր ստալինիզմից նահանջի, սակայն այն նաև կոմունիստական հասարակություններում սոցիալական փոփոխությունների արդյունք էր: Հետամբողջատիրական վարչակարգերը վերջ տվեցին ճնշման ամենավատ դրսևորումներին, սակայն միևնույն ժամանակ պահպանեցին հսկողության մեխանիզմների մեծ մասը: Անվտանգության ծառայությունների ներկայությունը, ինչպես օրինակ՝ «շտազիականները» (STASI) ԳԴՀ-ում, երբեմն ավելի մեծ տարածում էր գտնում, թեև ավելի քիչ էր արյունարբու, քան Ստալինի օրոք: Հետամբողջատիրությունը կարող էր տանել դեպի տնտեսության մեջ չափավոր բարեփոխումների «Որահայի գարնան» ժամանակներում քննարկվածների նման, սակայն բրեժնևյան «ռեստավրացիան» կանգնեցրեց դինամիկ ադապտացիան ԽՍՀՄ-ում և այլ խորհրդային տիպի համակարգերի մեծ մասում, բացառությամբ Հունգարիայի և Լեհաստանի:

Հետամբողջատիրական վարչակարգում, հավանաբար, ավելի քիչ լեգիտիմություն ունեին իշխող վերնախավը և էլ ավելի քիչ՝ միջին օղակի կադրերը, քան ամբողջատիրական վարչակարգում: Գաղափարախոսության մեջ ուտոպիստական բաղադրիչի կորուստն ու կատարողականին ավելի մեծ չափով վստահելը (որը որոշ նախնական հաջողությունից հետո չշարունակվեց) վարչակարգերին դարձրեցին խոցելի, իսկ գանգվածային ճնշումների գործադրումն ի վերջո՝ ավելի պակաս արդարացված: Կրավորական հնագանդությունը և պաշտոնամոլությունը հանգեցրին անձնական կյանքում պարփակվելուն՝ թուլացնելով վարչակարգն այնպես, որ ընդդիմությունն ի վերջո կարող էր ստիպել նրան գնալ բանակցությունների կամ անկում ապրել, երբ այլևս չկարողանա հույսը դնել ճնշման վրա:

Հետամբողջատիրական վարչակարգերի թուլությունը դեռևս ամբողջությամբ չի վերլուծված և բացատրված, սակայն, հավանաբար, դա միայն հնարավոր է հասկանալ՝ մտա-

պահելով մարքսիզմ-լենինիզմի հետ նախապես կապված այն հսկայական հույսերն ու եռանդը, որոնցով բացատրվում են ամբողջատիրության առաջացումը և դրա գրավչությունն անցյալում:<sup>18</sup> Բազմաթիվ հայտնի և հեղինակավոր արևմտյան մտավորականներ հիացել կամ ներողամտություն են ցուցաբերել լենինիզմի, իսկ 1930-ականներին՝ անգամ ստալինիզմի նկատմամբ, սակայն շատ քիչ արևմտյան ձախ մտավորականներ կարողացան թեկուզ մի փոքր ոգևորություն ցուցաբերել ԽՍՀՄ-ում հետամբողջատիրության կամ անգամ «պերեստրոյկայի» և «գլասնոստի» նկատմամբ:

Ինչպես կտեսնենք 4-րդ մասում, հետամբողջատիրության առաջացումն ու զարգացումը կարող է հանդիսանալ երեք հստակ, սակայն հաճախ փոխկապակցված գործընթացների արդյունք՝ (1) իշխանավորների կանխամտածված քաղաքականություն՝ մեղմացնելու կամ բարեփոխելու ամբողջատիրական համակարգը (կամավոր ապամբողջատիրացում), (2) ամբողջատիրական վարչակարգերի կառուցվածքների ներքին «սնամիջացում» և համակարգի նկատմամբ կադրերի գաղափարախոսական հավատի ներքին քայքայում (ապամբողջատիրացում քայքայմամբ) և (3) սոցիալական, մշակութային և անգամ տնտեսական այնպիսի տարածքների ստեղծում, որոնք դիմադրում են կամ խույս են տալիս ամբողջատիրական վերահսկողությունից (ապամբողջատիրացում հասարակության հաղթանակով):

### ՄՈՒԼԹԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վարչակարգերի մի մեծ խումբ, ինչպես օրինակ՝ Հաիթին Դյուվալիենների օրոք, Դոմինիկյան Հանրապետությունը Տրուխիլիոյի օրոք, Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետությունը Բոկասսայի օրոք, Ֆիլիպինները Մարկոսի օրոք, Իրանը շահի օրոք, Ռումինիան Չաուշեսկուի օրոք և Հյուսիսային Կորեան Կիմ Իր Սենի օրոք, ունեցել են ժառանգականության ծայրահեղ ուժեղ միտումներ, որ Վերերն անվանել է սուլթանականություն: Վերերի համար

*պատրիստնիալիզմը* և դրա ծայրահեղ դրսևորումը՝ *սուլթանականությունը*, միտում ունեն առաջանալու այն դեպքերում, երբ ավանդական իշխանությունը ստեղծում է վարչակազմ և զինվորական ուժ, որոնք հանդիսանում են տիրոջ զուտ անձնական գործիքները... Երբ իշխանությունը ... գործում է գլխավորապես գործողությունների ազատության հիման վրա, այն անվանվում է *սուլթանականություն*... Ոչ ավանդական տարրը [իշխանության], սակայն, չի հիմնավորվում օբյեկտիվ արտահայտություններով, այլ կայանում է միայն ղեկավարի գործողությունների ազատության խիստ ծավալմամբ: Մրանով էլ հենց այն տարբերվում է ռացիոնալ իշխանության ցանկացած այլ ձևից:<sup>19</sup>

18. Հեղափոխական մարքսիզմ-լենինիզմի՝ որպես ամբողջական համակարգի գաղափարախոսական և բարոյական գրավչության և դրա անկումից հետո առաջացած «վակուումի» մասին տես Էռնեստ Գելներ, «Ոչ հեղափոխության հայրենիքը» (Ernest Gellner, "Homeland of the Unrevolution" Daedalus (Summer 1993):141-54):

19. Մաքս Վեբեր, «Տնտեսությունը և հասարակությունը. մեկնաբանական սոցիոլոգիայի նկարագրություն», խմբ.՝ Գյունտեր Ռոթ և Կլաուս Վիթթիխ (Max Weber, *Economy and Society: At Outline of*

Վեբերը մտադրություն չունի *սուլթանականություն* բառին տալու հնազանդության մասին կրոնական պահանջների նշանակություն: Ի դեպ, Օսմանյան տիրապետության օրոք կառավարողն ուներ երկու հստակ պաշտոն և տիտղոս՝ սուլթան և խալիֆա: Սկզբնապես օսմանյան կառավարողը սուլթան էր և միայն Դամասկոսի նվաճումից հետո նա ընդունեց խալիֆայի տիտղոսը, որը տալիս է կրոնական իշխանություն: Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից և հանրապետության հռչակումից հետո նախկին կառավարողը կորցրեց սուլթանի իր տիտղոսը, սակայն պահպանեց խալիֆայի կրոնական տիտղոսն այնքան ժամանակ, մինչև Աթաթուրքն ի վերջո ստիպեց նրան հրաժարվել անգամ այդ տիտղոսից: Ասվածի իմաստն այն է, որ նրա իշխանության աշխարհիկ և կրոնական հարթությունները գաղափարապես և պատմականորեն տարրոշվել են: Ավելին, *սուլթան* բառը պետք չէ վերլուծականորեն կապել Մերձավոր Արևելքի հետ: Ճիշտ այնպես, ինչպես «մանդարիններ» կան ոչ միայն Պեկինում, այլև Նյու Դելիում և Փարիզում, իսկ «մաշոյական» (տղամարդակենտրոն) քաղաքականությունը հատուկ է ինչպես Բուենոս Այրեսին, այնպես էլ Պենտագոնին, ճիշտ այդպես էլ սուլթանական իշխողներ կան ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ Աֆրիկայում և Կարիբյան ավազանի երկրներում: Այն լրացուցիչ իմաստը, որը ցանկանում ենք, որ *սուլթանականություն* բառն արտահայտի, տիրապետման և վարչակարգի կառավարման ընդհանրական մի ոճ է, որը, ինչպես Վեբերն է ասում, հանդիսանում է ժառանգականության ծայրահեղ դրսևորում: Սուլթանական վարչակարգում մասնավորն ու հանրայինը միաձուլված են, կա ընտանեկան իշխանության և դինաստիական հաջորդականության ուժեղ հակվածություն, չկա հստակ տարբերություն պետական գործում առաջխաղացման և կառավարողին անձնական ծառայության մատուցման միջև, չկա տրամաբանորեն հիմնավորված օբյեկտիվ գաղափարախոսություն, տնտեսական հաջողությունը կախված է կառավարողի հետ անձնական հարաբերություններից և ամենից շատ կառավարողը գործում է միայն իր անզուսպ հայեցողությամբ առանց ավելի մեծ, օբյեկտիվ նպատակների:

Աղյուսակ 3.1-ը տալիս է կարևոր մանրամասներ այն մասին, թե ինչ է սուլթանական տիպը՝ կապված բազմակարծության, գաղափարախոսության, մոբիլիզացման և ղեկավարության հետ: Այս բաժնում փորձ է արվում ընդգծել սուլթանականության, ամբողջատիրության և ավտորիտարության միջև եղած տարբերությունները, որովհետև թեև կարծում ենք, որ դրանք հստակ կատարելատիպեր են, այնուամենայնիվ, ցանկացած առանձին դեպքում որևէ առանձին վարչակարգ կարող է ունենալ որոշ սուլթանական և որոշ ավտորիտար միտումներ (մի համակցություն, որը կարող է առաջարկել անցումային տարբերակների մի ողջ բազմազանություն) կամ սուլթանական և ամբողջատիրական միտումների մի խառնուրդ (մի համակցություն, որը կարող է հասցնել անցումային տարբերակների մի ողջ բազմազանության վերացման):

«Ամբողջատիրական և ավտորիտար վարչակարգեր» իր ընդարձակ ակնարկում Խուան Լինցը քննում է այն առանձնահատուկ գծերը, որոնք սուլթանականությունը դարձնում են

*Interpretive Sociology*, ed. Guenther Roth and Claus Wittich (Berkeley: University of California Press, 1978), 1:231, 232): Շեղատառը՝ ըստ բնագրի:

ոչ ժողովրդավարական վարչակարգի տիպերից մեկը:<sup>20</sup> Քանի որ սուլթանական վարչակարգի տիպը լայնորեն չի ընդունվել գրականության մեջ, կարծում ենք, որ օգտակար կլինի մշտապես ուշադրության կենտրոնում պահել դրան բնորոշ հատկությունները, որպեսզի ավելի պարզ դառնա վարչակարգի այս տիպի նշանակությունը ժողովրդավարական դիմադրության օրինակների և ժողովրդավարության կայացման խնդիրների համար:

Սուլթանական վարչակարգում կառավարողը մեծ չափով միաձուլում է մասնավորն ու հանրայինը: Սուլթանական հասարակարգը դառնում է սուլթանի անձնական տիրույթը: Այդ տիրույթում չկա օրենքի գերակայություն, և թույլ է ինստիտուցիոնալացումը: Սուլթանական վարչակարգում կարող է լինել էքստենսիվ սոցիալական և տնտեսական բազմակարծություն, սակայն գրեթե երբեք՝ քաղաքական բազմակարծություն, որովհետև քաղաքական իշխանությունը շատ ուղղակիորեն է կապված կառավարողի անձի հետ: Սակայն սուլթանական վարչակարգի առանցքային իրողությունն այն է, որ բոլոր անհատները, խմբերն ու ինստիտուտները մշտապես ենթակա են սուլթանի անկանխատեսելի և բռնատիրական միջամտության, և, հետևաբար, ամբողջ բազմակարծությունն անհուսալի է:

Ամբողջատիրական վարչակարգում կարող է լինել կամ չլինել օրենքի գերակայություն, կարող է տեղ տրվել կիսաընդդիմությանը կամ վարչակարգի «չափավորականներին», ովքեր, հնարավոր է, կապեր հաստատեն ընդդիմության «չափավորականների» հետ, և սովորաբար առկա է էքստենսիվ սոցիալական և տնտեսական գործունեություն, որը տեղի է ունենում հարաբերական ինքնավարության երաշխավորված շրջանակներում: Սուլթանականության օրոք, սակայն, չկա օրենքի գերակայություն, տեղ չունեն կիսաընդդիմությունը, վարչակարգի «չափավորականները», ովքեր կբանակցեին ժողովրդավարական «չափավորականներին» հետ, և չկա տնտեսության կամ քաղաքացիական հասարակության որևէ ոլորտ, որը ենթակա չլինի սուլթանի կամքի բռնապետական դրսևորմանը: Ինչպես ցույց է տրվում հաջորդ գլխում, ավտորիտար վարչակարգում բազմակարծության և սուլթանական վարչակարգում բազմակարծության միջև այս խիստ կարևոր տարբերությունն ունի հսկայական նշանակություն անցումային տիպերի համար, որոնք *հնարավոր* են ավտորիտար վարչակարգում, սակայն *անհնար* են սուլթանականում:

Կա նաև սուր հակադրություն ամբողջատիրական վարչակարգի գաղափարախոսության և սուլթանական վարչակարգի գաղափարախոսության դերի ու նշանակության միջև: Ամբողջատիրական վարչակարգում ոչ միայն կա լավ մշակված և ուղղորդող գաղափարախոսություն, այլ նաև այդ գաղափարախոսությունն ունի վարչակարգը լեգիտիմացնող գործառույթ, իսկ կառավարողները հաճախ որոշ չափով սահմանափակվում են իրենց սեփական արժեքային համակարգի գաղափարախոսությամբ: Նրանք կամ նրանց հետևորդները, կամ երկուսն էլ հավատում են այդ գաղափարախոսությանը՝ որպես հղման աղբյուրի և իրենց գործողությունների հիմնավորման: Ի տարբերություն դրա՝ սուլթանական կառավարողին բնորոշ չէ լավ մշակված և ուղղորդող գաղափարախոսություն ունենալը: Կարող են լինել գաղափարախոսության հավակնություններ ունեցող և հիմնականում սուլթանի անունից արվող խիստ սուբյեկտիվ հայտարարություններ, սակայն այդ գաղա-

20. Լինց, «Ամբողջատիրական և ավտորիտար վարչակարգեր» (Linz, "Totalitarian and Authoritarian Regimes", 259-63):

փարախոսությունը մշակվում է կառավարողի կողմից իշխանությունն ընդունելուց հետո և ենթակա է ծայրահեղ շահարկման, և որ ավելի կարևոր է, համարվում է, որ այն չի պարտավորեցնում կառավարողին և ուժի մեջ է լինում միայն այնքան ժամանակ, քանի դեռ վերջինս կիրառում է այն: Հետևաբար, գուցե հարցեր ծագեն, թե արդյոք Ստալինի գործերն ու խոսքերը համատեղելի՞ են եղել մարքսիզմ-լենինիզմի հետ, թե՞ ոչ, սակայն որևէ մեկը պատճառ չունի վիճարկելու, թե արդյոք Տրոլիսիլիոյի հայտարարությունները համատեղելի՞ են «տրոլիսիլիոյիզմի» հետ, թե՞ ոչ: Այդ հակադրությունն ավտորիտար և սուլթանական վարչակարգերի միջև ավելի քիչ է աչքի ընկնում գաղափարախոսության հարթությունում, սակայն այն հատուկ մտածելակերպերը, որոնք ավտորիտար դաշնությունների հիմքն են, սովորաբար ավելի շատ են սահմանափակում կառավարողներին, քան սուլթանի՝ միայն իրեն հատուկ և սուբյեկտիվ գաղափարախոսությունը:

Էքստենսիվ և ինտենսիվ մոբիլիզացումը, որն ամբողջատիրության բնորոշ գծերից է, սուլթանական վարչակարգում հազվադեպ է կարող գոյություն ունենալ ինստիտուցիոնալացման իր ցածր աստիճանի և մի ընդհանուր գաղափարախոսությանն իր քիչ ենթարկվելու պատճառով: Կազմակերպման ցածր աստիճանը նշանակում է, որ ցանկացած մոբիլիզացում, որը եթե անգամ տեղի է ունենում, ապա լինում է անկանոն և դիպվածային: Հավանաբար սուլթանական մոբիլիզացման և ավտորիտար մոբիլիզացման միջև եղած ամենամեծ տարբերությունը սուլթանական վարչակարգում հակվածությունն է (առավել դրամատիզմով լի Դյուվալիե Թոնթոն Մակուտեի դեպքում՝ Հաիթիում) օգտագործելու սուլթանի հետ կապ ունեցող կիսապետական խմբերը՝ կիրառելու բռնություն և տեռոր ցանկացածի դեմ, ով ընդդիմանում է կառավարողի կամքին: Այդ կիսապետական խմբերն իրենցից չեն ներկայացնում ընդհանրացված նորմեր և ընթացակարգեր ունեցող ժամանակակից կառավարման ապարատներ, ավելի շատ դրանք սուլթանի կամքի ուղղակի կատարողներ են: Դրանք չունեն նշանակալի ինստիտուցիոնալ ինքնուրույնություն: Ինչպես Վերերն է շեշտում, դրանք գուտ «տիրոջ անձնական գործիքներն» են:

Վերջապես, ինչպե՞ս է տարբերվում ղեկավարությունը սուլթանական, ամբողջատիրական և ավտորիտար վարչակարգերում: Սուլթանական վարչակարգի հիմքն անզուսպ անձնական իշխանությունն է: Այս անձնական իշխանությունը, ինչպես տեսանք, չի սահմանափակվում գաղափարախոսությամբ, տրամաբանական-իրավական նորմերով կամ իշխանությունը որևէ ձևով հավասարակշռելով: «Աջակցությունը հիմնվում է ոչ թե արդեն գոյություն ունեցող արտոնյալ սոցիալական խմբերի և կառավարողի միջև շահերի համընկնման վրա, այլ նրա իշխանությամբ ստեղծված շահերի, հավատարմության դիմաց նրա առաջարկած պարզենների և նրա վրիժառույթներից ունեցած վախի վրա»:<sup>21</sup>

Ղեկավարությունը սուլթանականության և ամբողջատիրության օրոք նման է մեկ գլխավոր առումով: Երկու վարչակարգերում էլ առաջնորդն իշխում է իր ուժի չորոշակիացված սահմաններում, և գոյություն ունի լուրջ անկանխատեսելիություն ինչպես վերնախավերի, այնպես էլ ոչ վերնախավերի համար: Այս առումով Ստալինն ու Սոմոսան նման են: Սակայն կան կարևոր տարբերություններ: Օբյեկտիվ և հասարակական առաքելության իմաստ ունեցող լավ մշակված գաղափարախոսությունն ամբողջատիրական վարչակարգերում նախատեսվում է հանդես գալ որպես լեգիտիմացման կարևոր գործա-

21. Նույն տեղում, էջ 260:

ռույթ: Ամբողջատիրական առաջնորդի գաղափարախոսական հայտարարությունները լրջորեն են ընդունվում ոչ միայն իր հետևորդների ու կադրերի, այլև հասարակության ու մտավորականների կողմից՝ ներառյալ (լենինիզմի, ստալինիզմի և մարքսիզմի և անգամ ֆաշիզմի դեպքում) այն մտավորականներին, ովքեր դուրս են գտնվում այն պետությունից, որտեղ առաջնորդն իրականացնում է իր իշխանությունը: Դա ամբողջատիրական ղեկավարությանը պարտադրում է կազմակերպական, սոցիալական և գաղափարախոսական որոշ սահմանափակում, ինչը չկա սուլթանական ղեկավարության պարագայում: Եվ որ առավել կարևոր է, այն մեծագույն չափը, որով իշխանությունը սուբյեկտիվ է սուլթանական վարչակարգում, իշխանության *դինաստիական* հարթությունը դարձնում է նորմատիվորեն ընդունելի և գործնականում տարածված, մինչդեռ ամբողջատիրության հասարակական պնդումները դինաստիական հավակնությունները դարձնում են եթե ոչ աննախադեպ, ապա գոնե նորմայից շեղված:

Ղեկավարության հարթությունը երևան է հանում է՛լ ավելի ուժեղ հակադրություն ավտորիտար և սուլթանական վարչակարգերի միջև: Ինչպես Լինցը ձևակերպում է ավտորիտար վարչակարգի մասին իր քննարկման մեջ, ղեկավարությունն ավտորիտար վարչակարգում իրականացվում է՝ ըստ «ձևական առումով վատ սահմանված, սակայն իրականում բավական կանխատեսելի» նորմերի:<sup>22</sup> Ավտորիտար վարչակարգերի մեծ մասում կարևոր դեր են խաղում որոշ բյուրոկրատական կառույցներ: Այդ բյուրոկրատական կառույցները հաճախ պահպանում կամ ստեղծում են իրենց սեփական նորմերը, ինչը նշանակում է, որ, այնուամենայնիվ, կան ընթացակարգային և նորմատիվային սահմաններ այն հրամաններում, որոնք առաջնորդները կարող են տալ նրանց՝ որպես պաշտոնյանների, օրինակ՝ որպես զինվորական սպաների, դատավորների, հարկային պաշտոնյանների կամ ոստիկանության սպաների: Մակայն ցանկացած սուլթանական առաջնորդ պարզապես «պահանջում է անվերապահ հնազանդություն, որովհետև պաշտոնյայի հավատարմությունն իր կառավարողին անկողմնակալ նվիրում չէ օբյեկտիվ խնդիրներին, որոնք սահմանում են նրա կառավարության շրջանակն ու բովանդակությունը, այլ ավելի շատ՝ ծառայի հավատարմություն՝ հիմնված կառավարողի հետ գուտ անձնական հարաբերությունների վրա, և պարտականություն, որը սկզբունքորեն թույլ չի տալիս որևէ սահմանափակում»:<sup>23</sup>

Մենք նկարագրեցինք ժամանակակից աշխարհում վարչակարգերի հինգ կատարելատիպերի կենտրոնական միտումները, որոնցից չորսը ոչ ժողովրդավարական են: Այժմ պատրաստ ենք հաջորդ քայլին, որն է՝ հետազոտել, թե ինչու և ինչպես է նախորդող ոչ ժողովրդավարական վարչակարգի տիպը կարևոր ազդեցություն ունենում ժողովրդավարության անցման հնարավոր ուղիների և այն խնդիրների վրա, որոնք պետք է իրականացվեն նախքան ժողովրդավարության կայացումը:

22. Նույն տեղում, էջ 255:

23. Նույն տեղում, էջ 260:

## Նախորդ վարչակարգի տիպի նշանակությունը ժողովրդավարությանն անցման ուղիների և կայացման խնդիրների համար

ՎԵՐԼՈՒԾԵԼՈՎ կայացած ժողովրդավարության համար անհրաժեշտ պայմանները և այնուհետև ձևակերպելով ոչ ժողովրդավարական վարչակարգի չորս կատարելատիպերի գլխավոր տարբերությունները՝ պարզ է դառնում, որ նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգի առանձնահատկությունները մեծ նշանակություն ունեն անցման հնարավոր ուղիների և այն խնդիրների համար, որոնց տարբեր երկրներ դիմակայում են, երբ սկսում են կայացած ժողովրդավարություն զարգացնելու իրենց պայքարը: Մեր չորս կատարելատիպերի տրամաբանության շրջանակում հասկանալի է, որ ցանկացած առանձին ավտորիտար վարչակարգ իր ուշ փուլերում կարող է ունենալ ուժեղ քաղաքացիական հասարակություն, սահմանադրականությանն ու օրենքի գերակայությանն աջակցող իրավական մշակույթ, մասնագիտական նորմերի սահմաններում գործող պետական կառավարման ապարատ և բավականաչափ լավ ինստիտուցիոնալացված տնտեսական հասարակություն: Այդպիսի հասարակարգի համար նախնական ժողովրդավարացման օրակարգում առաջին և միակ անհրաժեշտ կետը կվերաբերի քաղաքական հասարակությանը, այսինքն՝ կերտել ժողովրդավարական ինստիտուտների ինքնուրույնությունը, լիազորությունը, իշխանությունն ու լեգիտիմությունը: Գլուխ 6-ում ցույց է տրվում, որ 1970-ական թվականների սկզբում Իսպանիան գրեթե համապատասխանում էր այս վիճակին: Սակայն եթե մեկնարկային կետը լիներ կոմունիստական ենթատիպի ամբողջատիրական վարչակարգը, ապա ժողովրդավարության կայացումն իր հետևից կբերեր ոչ միայն քաղաքական ու տնտեսական հասարակության, այլև ժողովրդավարության յուրաքանչյուր առանձին դաշտի միաժամանակյա կերտման խնդիրը: Այդ փաստարկների ամբողջական նշանակությունն ավելի համակարգված և մանրամասն բերվում է Աղյուսակներ 4.2-ում և 4.3-ում, սակայն այստեղ նախ պատկերենք փաստարկն իր ամենապարզ տեսքով՝ Աղյուսակ 4.1:

Հետամբողջատիրական և ամբողջատիրական վարչակարգերի միջև տարբերությունների վերլուծական օգտակարությունը պետք է արդեն պարզ լինի: Ինչպես ցույց է տալիս Աղյուսակ 4.1-ը, հասկանալի է, որ ցանկացած հետամբողջատիրական վարչակարգ կարող է սկսել անցումը ժողովրդավարությանը՝ կայացած ժողովրդավարության համար անհրաժեշտ յուրաքանչյուր պայմանին տրված ցածր-միջին կամ միջին միավորների հա-

**Աղյուսակ 4.1. Նախկին ոչ ժողովրդավարական վարչակարգի տիպի նշանակությունը ժողովրդավարության կայացման խնդիրների համար**

Դաշտ, բնութագիր	Ավտորիտար	Ամբողջատիրական	Նետամբողջատիրական	Սուլթանական
Քաղաքացիական հասարակության ինքնուրույնություն	Միջինից բարձր	Ցածր	Ցածրից միջին	Ցածրից միջին
Քաղաքական հասարակության ինքնուրույնություն	Ցածրից միջին	Ցածր	Ցածր	Ցածր
Սահմանադրականություն և օրենքի գերակայություն	Ցածրից բարձր	Ցածր	Միջին	Ցածր
Մասնագիտական նորմեր և պետական կառավարման ապարատի ինքնուրույնություն	Ցածրից բարձր	Ցածր	Ցածրից միջին	Ցածր
Տնտեսական հասարակություն՝ շուկայի որոշ ինքնուրույնությամբ և սեփականության ձևերի բազմազանությամբ	Միջինից բարձր	Ցածր (կոմունիստական) կամ միջին (ֆաշիստական)	Ցածրից ցածր-միջին	Ցածրից միջին

*Ծանոթություն:* Նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգի դաշտերի բնույթն անցմանը համեմատաբար մոտ ժամանակահատվածում մեծ կարևորություն ունի այն խնդիրների համար, որոնց ժողովրդավարական առաջնորդները պետք է դիմակայեն: Որքան քիչ է զարգացած դաշտը, այնքան մեծ խնդիրներ պետք է իրականացնեն ժողովրդավարական առաջնորդները, նախքան նոր վարչակարգը կդառնա կայացած ժողովրդավարություն:

մակցությամբ, բացառությամբ «Քաղաքական հասարակության ինքնուրույնություն» կետի: 1989թ. սկզբում և կեսերին Հունգարիան բոլոր երկրներից ավելի շատ էր մոտեցել այդ վիճակին համապատասխանելուն: Թեև հասուն հետամբողջատիրական վարչակարգից սկսող ժողովրդավարների առջև ծառայած խնդիրները դժվարին են, դրանք զգալիորեն ավելի քիչ են, քան ամբողջատիրական վարչակարգից սկսող ժողովրդավարների առջև ծառայած խնդիրները: Մակայն պետք է պարզ լինի նաև, որ հենց այն պատճառով, որ հետամբողջատիրական վարչակարգերն ունեցել են նախորդող ամբողջատիրական ժամանակահատված, ապա նաև ունեն այնպիսի *ժառանգություն*, որն անհրաժեշտ է հաղթահարել, և որը երբևէ ամբողջատիրական չեղած ավտորիտար վարչակարգ ունեցող երկրում պարզապես գոյություն չունի:

Մեր տիպաբանության մեջ ավտորիտար և սուլթանական վարչակարգերի միջև առկա սուր տարբերությունները նույնպես օգնում են ուշադրությունն ուղղելու այն փաստին, որ սուլթանական վարչակարգի անմիջական նշանակությունը ժողովրդավարություն ստեղծողների համար (ինչպես Հաիթիում) այն է, որ նրանք քաղաքացիական հասարակության, սահմանադրականության և օրենքի գերակայության, պետական կառավարման ապարատի մասնագիտական նորմերի, տնտեսական հասարակության և քաղաքական ինստիտուտների կառուցումը պետք է սկսեն շատ ցածր հիմքից:

Վարչակարգերի տարբեր տիպերի սխեմատիկ պատկերը նույնպես թույլ է տալիս ավելի որոշակիորեն ցույց տալ «դաշինքների»՝ որպես տվյալ առանձին ոչ ժողովրդավարական վարչակարգի տիպի համար հնարավոր կամ ոչ հնարավոր անցման տարբերակի հնարավորություններն ու սահմանափակումները: Նախքան քննելը, թե ինչ պայմաններում են հնարավոր դաշինքները, պետք է շեշտել դաշինքների մասին երեք ընդհանուր վերլուծական նկատառում: Առաջին. ո՛չ տեսականորեն, ո՛չ էլ պատմականորեն պարտա-



դիր չէ, որ ժողովրդավարական անցումների ժամանակ դաշինքներ առաջանան: Իսկապես, մեկ այլ գրքում Ստեփանի վերլուծած վերածողովրդավարացման ութ բնորոշ ուղիներից միայն երեքի ժամանակ են դաշինքներ առաջացել:<sup>1</sup> Երկրորդ, իրենց նպատակով և հետևանքներով դաշինքները կարող են լինել լիարժեք ժողովրդավարականից մինչև բացարձակապես ոչ ժողովրդավարական: Որևէ դաշինք կարող է ստեղծվել հատուկ՝ օժանդակելու որևէ ոչ ժողովրդավարական վարչակարգի արագ տապալմանը և վաղաժամ սահմանելու ազատ ընտրությունների որոշակի օր: Նման դաշինքը կլինի իսկապես ժողովրդավարական իր նպատակով և եթե իրականացվի՝ նաև իր հետևանքներով: Կամ որևէ դաշինք կարող է առաջին հիմնադիր ընտրությունից առաջ կամ հետո կարճ ժամանակով բացահայտորեն հանգեցնել որոշ ոչ ժողովրդավարական սահմանափակումների: Եվ ընդհակառակը, որևէ փոխհամաձայնողական դաշինք, որը նախապես ոչ ժողովրդավարական չի եղել, երկար ժամանակ պահպանվելու դեպքում կարող է խոչընդոտել նոր խմբերի մուտքը քաղաքականություն և ի վերջո դառնալ «բացառող փոխհամաձայնողական ավտորիտարության» մի ձև:<sup>2</sup>

Եվ վերջապես, ցանկացած դաշինք, որը նախատեսվում է որոշ խմբեր ընդմիջո քացառելու և այլ խմբեր լայնորեն գերներկայացնելու նպատակով, պարզորոշ կերպով ոչ ժողովրդավարական է իր միտվածությամբ և քանի դեռ պահպանվում է՝ նաև իր հետևանքներով: Երրորդ, ինչպես Ստեփանը մեկ այլ գրքում ապացուցում է՝ «Դաշինքի ստեղծումն անպայմանորեն չի նշանակում դաշինքի պահպանում. դաշինքները կարող են քանդվել... Դաշինքները միասնականական տարրերով կամ առանց դրանց չեն կարող ստեղծվել բոլոր քաղաքական համակարգերում: Կուսակցական դաշինքներն ունեն երկու նախապայման՝ առաջին. միմյանց միջև լուրջ կռախիցիա ստեղծելու համար բանակցելու կազմակերպական և գաղափարախոսական կարողություն ունեցող առաջնորդներ, երկրորդ. նրանց քաղաքական հետևորդների հավատարմությունը դաշինքի պայմաններին»:<sup>3</sup>

Դաշինքների վերաբերյալ անցումային գրականության մեջ շատ հաճախ խոսվում է «անզիջումների» և «չափավորների» մասին: Անցումները հաճախ դիտարկվում են որպես այնպիսիք, որտեղ գոյություն ունի դաշինք վարչակարգի չափավորների և ընդդիմության չափավորների միջև, որոնք երկուսն էլ ի վիճակի են «օգտագործելու» և «սանձելու» իրենց համապատասխան անզիջումներին: Դա, ըստ էության, չորս խաղացողով խաղերի տե-

1. Տե՛ս Ալֆրեդ Ստեփան, «Ուղիներ դեպի վերածողովրդավարացում. տեսական և համեմատական մտքեր» (Alfred Stepan, "Paths toward Redemocratization: Theoretical and Comparative Considerations"), Գիերնո Օ'դոննել, Ֆիլիպ Շմիտթեր և Լուուերնս Ուայթհեդ խմբ.՝ «Անցումներ ավտորիտար իշխանությունից. համեմատական տեսանկյուններ» (Guillermo O'Donnell, Philippe C. Schmitter, and Laurence Whitehead, eds., *Transitions from Authoritarian Rule: Comparative Perspectives* (Baltimore: Johns Hopkins University Press, 1986), 64-84, 170-74):

2. Ջոնաթան Հարթլինը միասնականական բացառումը քննում է «Կռախիցիոն կառավարման քաղաքականությունը Կոլումբիայում» (Jonathan Hartlyn, *The Politics of Coalition Rule in Colombia* (Cambridge: Cambridge University Press, 1988)) նյութում:

3. Ստեփան, «Դեպի վերածողովրդավարացում տանող ուղիները» (Stepan, "Paths toward Redemocratization", 80): Շեշտը բնագրում: Դաշինքի պահպանման դժվարությունների գերազանց վերլուծություն. տե՛ս Էրիկ Նորդլինգեր, «Հակամարտության կարգավորում և տրոհված հասարակություններ» (Eric Nordlinger, *Conflict Regulation and Divided Societies* (Cambridge: liter for International Affairs, Harvard University Press, 1972)):

**Աղյուսակ 4.2. Տախտոց ոչ ժողովրդավարական վարչակարգի տիպի նշանակալությունը ժողովրդավարություն տանող ուղիների համար**

Ուղի	Ավտորիտարություն	Ավտորիտարություն	Սերիալիզացիայիություն	Վետանորոգչատիրություն	Մուլթիպակամություն
<p>«Ռաշնությունահենք բարեփոխում, ղաշնությունահենք բարձրում»</p>	<p>Նաշվի ամենելով, որ քարայքադա-կան հասարակությունը կարող է լինել բավական լավ գաղափարացած և կարող է գոյություն ունենալ որոշ չափավոր քաղաքական ընտրիմա-թյուն ազգային ընտրազանգվածով, ապա «Պաշտությունահենք բարեփոխում, ղաշնությունահենք բարձրում» հնարավոր է վարչակարգի չափավորների և ժողովրդավարական ընտրիմության չափավորների միջև:</p> <p>Կամ վարչակարգի առաջնորդնե-րը, կամ ընտրիմությունը կարող են հարթել արդար ընտրություններում և ավարտին հասցնել անցումը:</p>	<p>Կազմակերպված ժողովրդավարա-կան ընտրիմությունը կամ վարչա-կարգի չափավորները տեղ չունեն: Դասար «բարեփոխել համանախն-դի» ուղին անհնար է:</p>	<p>Նասուն հետամորոգչատիրական վարչակարգում կարող է լինել կրեմ-լիք լեզվավարություն և չափավոր ընտրիմությունը կարող է ունենալ լավ գաղափար «Երկրորդ մշակույթ» և ստրենալիզող քաղաքական խնդիրներում: Եթե հասուն հե-տամորոգչատիրության վարչակար-գի առաջնորդները կարծում են, որ ընտրություններն անորոշաճ են, և նրանք ունեն հարթելու հնարա-վորություն, «Երկրորդ մշակույթի» առաջնորդների և լեզվի ազատ ընտ-րություններ տանող ստրենալիզող ընտրիմության հետ «բարեփոխել համանախնդի»-ը հնարավոր է:</p>	<p>Նաշվի ամենելով մի կողմից՝ օրենքի գերակայության և քաղաքացիական ազատությունների բացակայու-թյունը, իսկ մյուս կողմից՝ Մուլթիա-կամքի ստրենալիզող ընտրիմա-թյուն անբողոք հասարակարգի մեջ չորս խաղացող ղաշնիքի վրա հիմնված բառերիտուննե-րի համար անորոշաճաճ են երկու նախապայմանները՝ կազմակերպ-ված ոչ բռնի ժողովրդավարական ընտրիմություն և վարչակարգի բանակցություններ վարելու համար բավարար լիազորություն ունեցող չափավորներ, գոյություն չունեն, որը «ղաշնությունահենք բարեփոխումը» դարձնում է իսկապես անհնար:</p>	<p>Նաշվի ամենելով օրենքի գերակայու-թյան բացակայությունը և կանխորեն ստորաձևված կիսապատկան բռնությունը ժողովրդավարական ուղին իսկապես անհնար է առանց արտաքին նմուշորդիցի և նրաշ-խիքների:</p>
<p>Պարտություն պատերազմում</p>	<p>Պարտությունը պատերազմում կամ պատերազմի հետ կապված անկու-նը կարող են հանգեցնել անցմանը ժողովրդավարության՝ նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգի քույր բանակցային իշխանության, եթե քաղաքացիական կարգա-քակման հասարակություններում կան ժողովրդավարական ուժերի ներկայացուցիչներ և պահանջում են ընտրական ուղի:</p>	<p>Իսկապես միակ ուղին, որը պա-տերազմում պատված անորոգչա-տիրական վարչակարգին կարող է արագորեն տանել ղեկի ժողովր-դավարական վարչակարգ, որն է ժողովրդավարական վարչակարգի կողմից կվանում ու դրանց մոմիտու-րիների ենթարկվող ժողովրդավարու-թյան ներմուծումն է:</p>	<p>Կառ հետամորոգչատիրական վարչակարգում ժողովրդավարու-թյան պատկերը կարող է հիշեցնել անորոգչատիրությունը: Նասուն հե-տամորոգչատիրական վարչակար-գում հնարավոր է կառավարության ընտրիմություններ կառավարական ընտրիմության կողմից և կարգաձև ընտրությունների անցկացում:</p>	<p>Նաշվի ամենելով օրենքի գերակայու-թյան բացակայությունը և կանխորեն ստորաձևված կիսապատկան բռնությունը ժողովրդավարական ուղին իսկապես անհնար է առանց արտաքին նմուշորդիցի և նրաշ-խիքների:</p>	<p>Նաշվի ամենելով օրենքի գերակայու-թյան բացակայությունը և կանխորեն ստորաձևված կիսապատկան բռնությունը ժողովրդավարական ուղին իսկապես անհնար է առանց արտաքին նմուշորդիցի և նրաշ-խիքների:</p>

Աղյուսակ 4.2. (շարունակություն)

Ուղի	Ավտոդիտարություն	Անբողջատիրություն	Վեռամբողջատիրություն	Սուլթանականություն
<p>ժամանակավոր կառավարություն վարչակարգի տապալումից հետո, որը չի սահմանվել վարչակարգի կողմից (հեղաշրջում ոչ բարձրաստիճան գիվախ-րականության, զինված խռովարարների կողմից կամ զանգվածային ապստամբություն և վարչակարգի ամրում)</p>	<p>Ավտոդիտար վարչակարգում հնարավոր է, որ գոյություն ունենան բաղաբաղկավոր հասարակությունում կազմակերպված ժողովրդավարական ընդդիմություն և անզամ բաղաբաղկավոր հասարակություն: Եթե դրանք պահանջեն վարչաժամ ընտրություններ, ապա ամցման այս ուղին միանգամայն հնարավոր է: Սակայն ընտրությունների գործուն պահանջի բացակայությամբ ժամանակավոր կառավարությունը կենթարկվի քաղաքականության մեջ հերակոխական իշխանություն գործարկելու և ընտրությունները հետաձգելու կամ չեղյալ հայտարարելու ռաթյակության՝ որսնով իսկ հետաձգելով անցումը կամ տանելով դեպի մի կողմ ոչ ժողովրդավարական վարչակարգի:</p>	<p>ժամանակավոր կառավարությունը հավանական է: Սակայն եթե խոր ճգնաժամը հանգեցնի որևէ իրավահարցի կառավարության աստիճան՝ հաշվի առնելով հնարավոր զանգված քաղաքացիական հասարակությունը և կազմակերպված ժողովրդավարական բաղաբաղկավոր հասարակության բացակայությունը, ազատ ընտրություններ անցկացնելու բարենպաստ պարտությունը հավանական է: Իրականացումները կարող են փորձել հասնել ընտրական լեգիտիմության, սակայն սա չի ապահովի ժողովրդավարացում:</p>	<p>Վարչաժամ ընտրություններն ամենահնարավոր ուղին են միայն հասուն հեռանկարային ընտրական վարչակարգում, որտեղ ընդդիմության ակտիվիստները կարող են կազմավորել կառավարություն և շարունակել գնալ դեպի ժողովրդավարություն: Վաղ կամ ստույգ չէ հեռանկարային ընտրական վարչակարգում առավել հնարավոր անցումը զանգվածային ապստամբություն է, որը, եթե չհաշվի, կարող է հանգեցնել վարչակարգի ամրանում և ժամանակավոր կառավարության հաստատմանը: ժամանակավոր կառավարությունն էլ կարող է կազմակերպել ընեց հին վարչակարգի հետ կապված վերնախաղերից, որոնք ի վիճակի են ընտրությունների միջոցով հաստատելու իրենց իշխանությունը դեռևս «հնազանդված հասարակությունում»:</p>	<p>Կա լուրջ հնարավորություն, որ «ժամանակավոր կառավարություն» կհայտարարի, որ գործում է ժողովրդի անունից, և փետտանգի ընտրությունները բարենորոգումներ իրականացնելու համար: Կաշվի առնելով քաղաքացիական կամ ինքնուրույնության: արդեն նշված բաղաբաղկավոր կառավարություն, որ սուլթանի հետ կապված, սակայն ապստամբությամբ աջակցելու համար լեգիտիմություն պահանջող խմբերը ճեղք կրեն ոչ ժողովրդավարական իշխանություն: ժողովրդավարության ամրանում կավազույն հնարավորություն այն է, երբ հերակոխական վերնախաղ առաջնորդվում է միջազգային աջակցություն վայելող, ընկալի ժողովրդավարություն հավանա առաջնորդների կողմից, ովքեր կմշտանակեն ընտրությունների օր և թույլ կտան իշխանության ազատ վիճակը:</p>

**Աղյուսակ 4.2. (շարունակություն)**

Ուղի	Ավերտիտարություն	Ամբողջատիրություն	Վետամբողջատիրություն	Մուլթանավանություն
<p>Իշխանությունից բարձրատարիճան գինեղրականություն հետազոտ</p>	<p>Եթե վարչակարգը ղեկավարում է բարձրատիճան գինեղրականության կողմից, ապա գինեղրականություն-ինստիտուտը եթե իրեն զգում է արտաքին կամ ներքին սպառնալիքների տակ, կարող է ընդ կատարվել գինեղրականություն-վառավարություն ուղղակի իշխանությունից հետանալ, ստիճարել և ընտրություններ անցկացնելու գործում: Անցման տևողությունը և «իշխանության պահուստային տիրույթների» չափը, որոնք գինեղրականությունը կարող է պարտադրել, որպես հետագա ման գին, նվազում են: Կապակած գին-վրավանություն- ինստիտուտի նկատմամբ ներքին կամ արտաքին սպառնալիքների սրությունից և թաղաքային կամ ու բարձրակարգ հասարակության մեջ ժողովրդավարական ուժերի հզորությունից:</p>	<p>Ուղին հասու չէ վարչակարգի այս տիպի: Ներկայիս կան արտաքին և առաջնությունից անսահմանափակ ռիսկ անհնար են դարձնում բարձրատիճան գինեղրականության իշխանությունը:</p>	<p>Ուղին հասու չէ այս տիպին: Իաշխի առնելով կուսակցության ղեկավար ղերը:</p>	<p>Ուղին հասու չէ վարչակարգի այս տիպի: Մուլթանավանությունը ենթարկում է մասնավորի և հանրային միաձուլման որոշակի աստիճան, իսկ սուլթանի միջանկյալությունը բուրձր կուսակցական նրբնոր հարցում անհամատեղելի է բարձրատիճան գինեղրականության իշխանության հետ:</p>
<p>Վարչակարգի հատուկ անցման որոշ հնարավոր ուղիներ և հավանական արտաքին</p>	<p>Եթե ոչ ժողովրդավարական ավերտար Վարչակարգը ղեկավարում է ոչ բարձրատիճան գինեղրականություն կողմից և այդ վարչակարգը անկողմնակալում է ապրում կամ տասակալում, ապա ավելի հեշտ կլինի գինեղրականություն-ինստիտուտի արտաքին կամ արտաքին սպառնալիքների սրությունից և թաղաքային կամ ու բարձրակարգ հասարակության մեջ ժողովրդավարական ուժերի հզորությունից:</p>	<p>Ուղին հասու չէ վարչակարգի այս տիպի: Ներկայիս կան արտաքին և առաջնությունից անսահմանափակ ռիսկ անհնար են դարձնում բարձրատիճան գինեղրականության իշխանությունը:</p>	<p>Յանկացած հետամբողջատիրական վարչակարգ լուրջ հզամանի հանրապետի կարող է տալ ավելի, եթե ենշան տարբերակը հնարավոր չլինի: Ավերտ կարող է հանգցնել, այլ ընտրանքային վերահսկողություն իրականացնել, իսկ վարչակարգը, ուստի սուլթանի վարչակարգը, կարող ղեկավարել և ավերտականացում կան թաղաքային:</p>	<p>Իաշխի առնելով սուլթանականության ղեկավարական միտումները, եթե սուլթանը նահանս բավականատեղերով, ապա կրակատեղեր կտրորեն շարունակել սուլթանական վարչակարգը, ուստի սուլթանի վարչակարգը կարող ղեկավարել և ավերտականացում կան թաղաքային:</p>

Աղյուսակ 4.2. (շարունակություն)

Ուղի	Ավտոդիտարություն	Անբողջատիրություն	Վետամբողջատիրություն	Մուլթանավանություն
Վարչակազմին հասում ասլ ուղիներ	<p>Եթե քարաբացիական կառավարություն ունեցող ավտոդիտար վարչակարգը նախաձեռնում է անցում ժողովրդավարության, ինչ համաձայնություններ էլ որ ձեռք բերվեն, կունենան միայն ավթան ուժ, որքան ընտրագնազանձը և ընտրված պաշտոնյաները դրանց կտան: Առաջացող ժողովրդավարությունը, ուստի, սովորաբար կլին ավելի պակաս սահմանափակ, քան այլ դեպքում, երբ նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգը ղեկավարվում է բարձրաստիճան գինեիրականության կողմից:</p>	<p>Եթե անբողջատիրական վարչակարգը սատարվում է որևէ արտաքին հեգեմոնի կողմից, հեգեմոնի սատարման դարպեցունը կարող է փոխել ուժերի հարաբերակցությունը: Մեծամասն է ճնշման գինը: Մեծամասն է ընդդիմությունը և մեծ թիվից ցուցում, և ամկունը դառնում է հնարավոր արդյունք, վարչակարգն ամկում է ապրում և շատ հնարավոր է, որ տիրի քառս կամ ժամանակավոր կառավարություն: Նաչվի առնելով կազմակերպված ժողովրդավարական ընդդիմության բացավարությունը, անգամ եթե ժամանակավոր կառավարությունն ամբողջ ակտի, շատ հնարավոր է հանրությունն անցնի հին վարչակարգից առաջ եկած մարդկանց:</p>	<p>Եթե հետամբողջատիրական վարչակարգը սատարվում է արտաքին հեգեմոնի կողմից, սաա այն կարող է ամկում ապինել, եթե հեգեմոնը հետ վերցնի ճնշիչ նրաշխիքը: Եթե այն վատ հետամբողջատիրական վարչակարգը հնարավոր է լինի ավտոդիտար կամ կառավարվի նախորդ վարչակարգից ծագած առաջնորդների կողմից: Եթե այն հասուն հետամբողջատիրական վարչակարգ է, ապա ժամանակավոր կառավարության քարաբացիական հասարակության առաջնորդները կարող են հայտարարել վերաժամ և ամբողջովին ազատ ընտրություններ:</p>	<p>Եթե սուլթանը կախում ունի օտար ինքլիթյա հովանավորից, ապա շարունակվող եզմասանը և ինվանավորի կողմից ճնշում կարող են հանգեցնել կառավարողի կողմից արագ ընտրությունների անցկացմանը, որոնք իր կարծիքով՝ նա կարող է վերափոխել: Ընտրություններում պարտությունը հավանաբար է, հատկապես եթե արտաքին հովանավորը սատարում է ընդդիմությանը: Նավայն ժողովրդավարական կառավարումը մեծապես կօժանդակվի ժողովրդավարացման գործընթացում ինվանավորի շարունակական մերգրավմանը: Օտար ինքլիթյա հովանավորը կարող է երբեմն սուլթանին ստիպել լիջևանությունից հրաժարվել:</p>
Վարչակազմին հասում ասլ ուղիներ	<p>Անբողջատիրական վարչակարգը կարող է փոխվել հետամբողջատիրական: Տե՛ս հետամբողջատիրական վարչակարգին անցման տարբերակները:</p>	<p>Ամենայն հավանականությամբ սուլթանի պարտության ներքին պատճառը սպանությունն է կամ գինեկաձ խնդրի ու քարաբացիական հասարակության ավստամբության հերակոխական ավստամբությունը բարձրացումը: Ապստամբությունը կարող է սատարվել անգամ գործարար խնդրի կողմից սուլթանի կանանական իշխանության չափից դուրս շատ գործարարների առաջացած նրանց հավակրանքի պատճառով: Շատ հավանական է ժամանակավոր կառավարության կազմավորումը: Տե՛ս վերը թիվ 3:</p>		

սության մոդելն է:<sup>4</sup> Սակայն որպեսզի դա լինի իսկապես չորս խաղացողով խաղ, պետք է բավարարի երկու պայմանի: Վարչակարգի չափավոր խաղացողները պետք է ունենան բավարար ինքնուրույնություն, որպեսզի կարողանան ժամանակի ընթացքում վարել ռազմավարական, ինչպես նաև մարտավարական բանակցություններ չափավոր ընդդիմության խաղացողների հետ: Եվ հակառակը, ընդդիմության չափավորները հասարակարգում կարիք ունեն որոշ աստիճանի վրա պահպանվող կազմակերպական ներկայության իշխանության և հետևորդների բանակցային դաշինքներում իրենց դերը խաղալու համար: Անցումների վերաբերյալ շատ հեղինակների համար նման դաշինքի դասական դեպքը (*locus classicus*) տեղի ունեցավ Իսպանիայում:<sup>5</sup> Իսպանիայում, ինչպես կտեսնենք Գլուխ 6-ում, վարչակարգի և ընդդիմության չափավորներն սկզբում նախաձեռնեցին դաշինքի վրա հիմնված բարեփոխումներ: Ի վերջո բանակցությունները հանգեցրին դաշնությունահենք բաժանման, ինչը հնարավորություն տվեց քանդելու Ֆրանկոյի պետության ոչ ժողովրդավարական բաղադրիչները և ստեղծելու նոր ժողովրդավարական կառույցներ: Այդ ընդհանուր գործընթացը կոչվում է «*դաշնությունահենք բարեփոխում, դաշնությունահենք «սպառազանք»*» (*reforma pactada–ruptura pactada*):

Թեև հաճախ են անդրադառնում այն հավանականությանը, որ դաշինքներն առանցքային դեր են ունեցել շատ անցումներում, այնուամենայնիվ, լիարժեք չորս խաղացողով դաշինքներ հնարավոր են նշված ոչ ժողովրդավարական վարչակարգերի չորս կատարելատիպերից միայն երկուսում: Ցանկացած վարչակարգ, որը նմանվում է սուլթանական կատարելատիպին, չունի «*բարեփոխել՝ համաձայնվելով, բաժանվել՝ համաձայնվելով*» տարբերակը՝ որպես անցման հնարավոր ուղի երկու «չափավոր» խաղացողների բացակայության պատճառով: Սուլթանական կատարելատիպի էությունն այն է, որ սուլթանը միաձուլում է անձնական և հանրային իշխանությունը: Վարչակարգում կարևոր դեմքերը նշանակալի են ոչ թե իրենց զբաղեցրած ինչ-ինչ պետական կամ մասնագիտական պաշտոնների, այլ սուլթանի անձնական աշխատակազմում իրենց ներկայության շնորհիվ:

Սակայն սուլթանի «տնային տնտեսության» աշխատակազմում բացարձակապես տեղ չկա այնպիսի չափավոր խաղացողի համար, ով հրապարակայնորեն քննարկում է իր գործատուին գահինկեց անելու հարցը: Մյուս խաղացողները, ովքեր երբևէ գոյություն չեն ունեցել սուլթանական կատարելատիպի վարչակարգում, կազմակերպված ժողովրդավարական ընդդիմության «չափավորներն» են: Ո՛չ քաղաքացիական հասարակությունը, ո՛չ էլ քաղաքական հասարակությունը չունեն բավական ինքնուրույնություն՝ հնարավորություն տալու հասարակայնորեն կազմակերպված ընդդիմությանը զարգացնելու բա-

4. Տե՛ս, օրինակ, Ադամ Պրժեմսկի, «Անցման խաղերը» (*Adam Przeworski, "The Games of Transition"*), Սքոթ Մեյնուորինգի, Գիլերմո Օ'Ռոննելի և Սեմյուել Վալենսուելայի խմբ.՝ «Ժողովրդավարության կայացման հարցեր» (*Scott Mainwaring, Guillermo O'Donnell, and Samuel Valenzuela, eds., Issues in Democratic Consolidation* (Notre Dame, Indiana: University of Notre Dame Press, 1992), 105-53):

5. Իսպանիայի օրինակի նկատմամբ խաղերի տեսության մանրամասն ու ճիշտ կիրառումը տե՛ս Ժոզեպ Բոլոնտեր, «Խաղի տեսությունը և անցում ժողովրդավարության. Իսպանիայի մոդելը» (*Josep Colomer, Game Theory and the Transition to Democracy: The Spanish Model* (Aldershot, England: Edward Elgar Publishing, 1995)) և «Անցումներ՝ համաձայնությամբ. մոդելավորում իսպանական եղանակով» (*"Transitions by Agreement: Modeling the Spanish Way"*, *American Political Science Review* (December 1991): 1283-1302):

Աղյուսակ 4.3. Ոչ ժողովրդավարական վարչակարգի տիպի նշանակությունն այդ տիպի վարչակարգից ժողովրդավարական վարչակարգի անցման ավարտման և կայացման նվազագույն խնդիրների լուծման համար

Անդրաձեռն պայմաններ	Ավտորիտարություն	Անբողջափոխություն	Մտերմացում	Մուլթիմեդիայություն
<p>Օրենքի գերակայություն և քաղաքացիական հաստատություն</p>	<p>Որոշ ավտորիտար վարչակարգերում կա օրենքի գերակայության ավանդույթ և քաղաքացիական հաստատություն, որը կարող է լինել անհրաժեշտ կլինի ընդդիմել և վաշտավաճեցնել քաղաքացիական գաղափարները: Գրեթե անհրաժեշտ լինի ընդդիմել և կիրառվել արհեստագիտական միտումներին, լուստվամիջոցներին և այլ կազմավորություններին ինքնուրույնություն ստվող օրենքներ:</p>	<p>Օրենքի գերակայություն գոյություն չունի: Օրենսգրքի մեծ մասը, որը ամուլ այն գոյություն ունի, մեծապես քաղաքականացված է և կուսակցական պետության մեղքին գործիչ է և ոչ թե՛ վերջինիս քաղաքացիների հանդեպ, և հետևաբար, անհասանելի է ժողովրդավարության հետ: Քաղաքացիական ազատությունը նվազագույնն են և կարիք ունեն օրինակման, գարգացման և պաշտպանության: Քաղաքացիական հաստատություն «հարթեցված» բնույթը պահանջում է հիմնարար փոփոխություններ, որոնք ղեկարգ առաջ բերել կարճ ժամանակում:</p>	<p>Անհրաժեշտ կլինեն իրավական համակարգի այն բարեփոխումները, ապահովելու քաղաքացիական իրավիճակները և օրենքի գերակայությունը:</p>	<p>Նաշվի առնելով հանրափոխ և մասնավորը վիճակներու ժամանցությունը և իշխանության ծայրահեղ անձնավորումը՝ խիստ առաջնահերթ կայություն և քաղաքացիների համար երաշխավորելու հաստատումը:</p>
<p>Քաղաքական հաստատություն ինքնուրույնություն և որպես իրավական պայմանը</p>	<p>Անհրաժեշտ է ստեղծել կուսակցությունների միջև ազատ ընտրական մրցակցություն ապահովող բոլոր տրոնակ պայմանները: Որոշ դեպքերում կուսակցությունների միջև մրցակցությունը պարզապես կանգնվել է և կարելի է հեշտուրա՝ քաղաքացիական կուսակցությունը կարող է լինել և վերացնել առանձին արհեստագիտական միտումները: Որոշ դեպքերում կարող են առանձին փակումները: Որոշ դեպքերում զգալիոր կա քաղաքական գործիչների ղեկ ղեկներում գուցե կարիք կլինի ապահովելու որևէ ավտորիտար պետական կուսակցություն:</p>	<p>Կուսակցության տիրապետող դիրքը հաստատության բոլոր բնագավառներում և որպես արտոնյալ կարգավիճակ կլինակ ու ռեսուրսները պետք է ապահովվելու, վերացնել դրա ներկայությունը բոլոր հաստատություններում և որպես գրեթե ողջ ունեցվածքը փոխանցել պետությանը: Սակայն եթե քաղաքացիները ցանկանան վերստեղծել կուսակցությունը, ապա նրանց կուսակցությունը այդ ամենը, իսկ կուսակցության աջակցություն ունի պետք է կախված լինի ձայներից, որ մարտիկ, հնարավոր է, ցանկանան տալ դրա օգուտը: Նաշվի առնելով «հարթեցված տիպի կուսակցություն» շահերի ներկայացումը ստանձնահատուկ ղեկարգ կլինի:</p>	<p>Անհրաժեշտ կլինի ապահովելու, տիրապետող կուսակցության արտոնյալ կարգավիճակը՝ իրավական և այլ առումներով: Անհրաժեշտ կլինեն նաև իրավական քաղաքական կուսակցությունների ազատ ձևավորումն ու մրցակցությունը: Թեև հաստատությունը կարող է այնքան էլ հարթեցված չլինել, ինչպես անբողջափոխության օրոք, ստեղծված և քաղաքական տարբերակման հարաբերական թացակայությունը շահերի քաղաքական «ներկայացում» դարձնում է ղեկարգ և քաղաքացուն է ժողովրդավարական կուսակցությունների տրոնակ սպեկտրի գարգացումը:</p>	<p>Կիսանախաձեռն ընտրության նշումը և որոշ չափով կուսակցության ստեղծումը պայմաններ են քաղաքական կուսակցությունների գարգացման, իշխանության ազատ վերստեղծման և ժողովրդավարական մրցակցության ղեկ ու ինտիլիցենտների աշխատանքի համար քաղաքականացման համար: ինքնուրույնություն համար:</p>

**Աղյուսակ 4.3. Հարունակություն**

Անրաժեշտ պայմաններ	Ավտորիտարություն	Անբողջատիրություն	Նստանբողջատիրություն	Սուբբանավտություն
<p>Սահմանադրական կառուցումները իշխանությունը ժողովրդավարորեն բաշխելու համար</p>	<p>Որոշ ռեաբելում կարող է անմիջապես հայտարարվել, որ վերականգնվել է նախկին ժողովրդավարական սահմանադրությունը, այլ ռեաբելում օգտակար կարող է լինել ոչ ժողովրդավարական սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելը, բոլորովին այլ ռեաբելում անհրաժեշտ կլինի ժողովը ողջ ժողովրդավարական ընտրազանգվածը և իրականացնել սահմանադրության մշակման գործընթաց:</p>	<p>Նստավոր է գործություն ունենալ քոֆի վրա մի սահմանադրություն, որը ժողովրդավարական բովանդակությամբ ցզվեում ռեաբելում է հանգեցնել սխալ հետևանքների, բանի որ նախատեսված չի եղել ժողովրդավարական հասարակության համար: Նոր ժողովրդավարական սահմանադրության մշակումը կլինի անհրաժեշտ, սակայն որվար սարձնային վիճակում գտնվող քաղաքական հասարակության, սահմանադրական մշակումը բացակայության և նախկին սահմանադրության ցուցադրական խտտումների պատճառով կտեղծված ժառանգության պատճառով:</p>	<p>Նաշվի ստեղծված սահմանադրության ձևական բնույթը այդ ինտիտուտներն օգտագործելը լուրջ հետևանքներ կունենա, և ժողովրդավարական սահմանադրության մշակումը անտեղ է համարվի բարձր գերակայություն: Ի համարում ժառանգականության մի վերջում վստահության ոգի և սահմանադրականության նկատմամբ հարգանք գոյություն չունի:</p>	<p>Մտերմանավտություն</p>
<p>Պետական կառավարման ապարատ, որն ընդունելի և կիրառելի է ժողովրդավարական կառավարության կողմից</p>	<p>Այնքանով, որքանով պետական կառավարման ապարատը չի բարդաբալանացվել և պահպանել է մասնագիտական չափորոշիչները, գրգռել բյուրոկրատական բարենորոգումները, փոխումների անմիջական կարիք չի կիր: Որոշ ռեաբելում պետական կառավարման ապարատը շատ քիչ անմասնավոր «գոտմը»: Ներսույալ մասնավոր և գլխավոր պաշտոնյան պաշտոնը, կարող է ցանկալի լինել: Սակայն եթե նախկին ոչ ժողովրդավարական վարչակարգում խոշոր դեր է խաղացել բարձրաստիճան գերակառնությունը, սակայն նման գերակառնությունը, սակայն կարող են ղեկավարել «գոտմներ»: կարող են ղեկավարել քիչ քան իրականացվել:</p>	<p>Պետության գլխավոր ինդիվիդուալ պատկերակրող կուսակցությանը և կուսակցության ներքախնացումը բոլոր բյուրոկրատական և սոցիալական ինտիտուտներ, հրամայական և ղեկավար ինդիվիդուալներն է չբարաբալանացված պետական ներսույալ կուսակցության անցառումները պետությունը կարող է լրջորեն ապարտի ստեղծումը: Պետության անկազմեցնել պետական ապարատի արդյունավետությունն ու համահայնացվածությունը և ընդարկողությունը խոշոր ստեղծել լուր ժողովրդավարների կամ օպորտունիստների կողմից իշխանության հովանավորչական «գոտմներ»: զգալիքն համար:</p>	<p>Նաշվի ստեղծված սահմանադրության ձևական բնույթը այդ ինտիտուտներն օգտագործելը լուրջ հետևանքներ կունենա, և ժողովրդավարական սահմանադրության մշակումը անտեղ է համարվի բարձր գերակայություն: Ի համարում ժառանգականության մի վերջում վստահության ոգի և սահմանադրականության նկատմամբ հարգանք գոյություն չունի:</p>	<p>Նստանբողջատիրություն</p>
<p>Պետական կառավարման ապարատ, որն ընդունելի և կիրառելի է ժողովրդավարական կառավարության կողմից</p>	<p>Այնքանով, որքանով պետական կառավարման ապարատը չի բարդաբալանացվել և պահպանել է մասնագիտական չափորոշիչները, գրգռել բյուրոկրատական բարենորոգումները, փոխումների անմիջական կարիք չի կիր: Որոշ ռեաբելում պետական կառավարման ապարատը շատ քիչ անմասնավոր «գոտմը»: Ներսույալ մասնավոր և գլխավոր պաշտոնյան պաշտոնը, կարող է ցանկալի լինել: Սակայն եթե նախկին ոչ ժողովրդավարական վարչակարգում խոշոր դեր է խաղացել բարձրաստիճան գերակառնությունը, սակայն նման գերակառնությունը, սակայն կարող են ղեկավարել քիչ քան իրականացվել:</p>	<p>Պետության գլխավոր ինդիվիդուալ պատկերակրող կուսակցությանը և կուսակցության ներքախնացումը բոլոր բյուրոկրատական և սոցիալական ինտիտուտներ, հրամայական և ղեկավար ինդիվիդուալներն է չբարաբալանացված պետական ներսույալ կուսակցության անցառումները պետությունը կարող է լրջորեն ապարտի ստեղծումը: Պետության անկազմեցնել պետական ապարատի արդյունավետությունն ու համահայնացվածությունը և ընդարկողությունը խոշոր ստեղծել լուր ժողովրդավարների կամ օպորտունիստների կողմից իշխանության հովանավորչական «գոտմներ»: զգալիքն համար:</p>	<p>Նստանբողջատիրություն</p>	<p>Նստանբողջատիրություն</p>



**Աղյուսակ 4.3. (շարունակություն)**

Ամրամշտ պայմաններ	Ավելորդիտարություն	Ամբողջատիրություն	Նեստաբոլոցատիրություն	Սուբստանավանություն
Տնտեսության և տնտեսական դաշտում գործողների համար շակարտը ինքնուրույնություն՝ ապահովելու քաղաքացիական և տնտեսական հասարակության բազմակարծությունը	Եթե տնտեսությունը երբեք է գործող խառը տնտեսություն, ժողովրդավարությանն անցնանք և կայացնանք նպատակներ համար կարող է անմիջական փոփոխությունների կարիք չլինել: Ինչպիսիք որպեսզի բարեփոխումներ էլ ցանկալի կամ անհրաժեշտ լինեն, դրանք կլինեն նորնալ քաղաքական գործընթացներով մաս և կարող են ներառել ավելի շատ համրյանացում կամ ունեցվածքի մասնավորեցում ու շուկայի շատ քն քիչ սոցիալական և/կամ տնտեսական կարգավորում:	Կոմունիստական ամբողջատիրական վարչակարգում ցույցի գրեթե համընդհանուր համայնքի անկախությունը և կոմունիզմում ու տնտեսության միջև կապերը քաղաքացիական և քաղաքական հասարակության ինքնուրույնության անը դարձնում են հատկապես դժվար: Կոմունիստական է դառնում տնտեսության արմատական բարեփոխումը, սակայն շուկայական տնտեսության համար իրավական ինստիտուցիոնալ շրջանակի բացակայությունը և իրավական մշակութային թուլությունը դժվարեցնում են «տնտեսափոփոխականություն» ստեղծումը և նպաստում են անօրինական ու ոչ իրավական գործողությունների:	Պետության կողմից ամբողջ տնտեսական գործունեության ծայրահեղ հսկողությունը Հի նպատակում քաղաքացիական և քաղաքական հասարակության անիրական նկատարումն ապահովում է ստեղծումը, ինչն ամրամշտ է ժողովրդավարական հասարակարգի համար: Որոշ բարեփոխումներ ամրամշտ են ստեղծելու ինստիտուցիոնալացված տնտեսական հասարակություն: Կյարոնք բարեացած շուկայական տնտեսությունը ժողովրդավարություն պայման չէ:	Կառավարողի և որպես կորնակիցների ժառանգականական և հովանավորական կատարողները բախտը անհրաժեշտ կլինի քաղաքացիական, քաղաքական և տնտեսական հասարակության նորնալ գաղափարները համար:

վարար բանակցային կարողություն՝ դաշինքի վրա հիմնված անցման լիարժեք խաղացող դառնալու համար:<sup>6</sup>

Նույն տրամաբանությունը թույլ չի տալիս ամբողջատիրական կատարելատիպի վարչակարգն անգամ երկու խաղացողով լիարժեք խաղ համարելը: Կա մի խոշոր խաղացող (ամբողջատիրական անզիջում բարձրագույն ղեկավարն ու նրա կուսակցական պետության աշխատակազմը) և մի փոքր ընդհատակյա ընդդիմություն (գուցե կե՞ս խաղացող), որը կարող է պայքարել գոյություն ունենալու համար և, հնարավոր է, դիմադրի, սակայն բացարձակապես զուրկ է դաշնությունահենք անցման հասնելու կարողությունից:

Անգամ վաղ հետամբողջատիրական վարչակարգերն իշխող կուսակցական պետության ղեկավարության մեջ չունեն բավարար բազմազանություն և ինքնուրույնություն կամ ժողովրդավարական ընդդիմության ներսում՝ բավարար ուժ և ինքնուրույնություն իսկապես ասպարեզ հանելու այն բոլոր խաղացողներին, ովքեր անհրաժեշտ են ժողովրդավարությանն անցման չորս խաղացողով խաղը բարեհաջող կերպով ավարտին հասցնելու համար: Հիրավի, ինչպես հիմնավորեցինք Գլուխ 3-ում, եթե որևէ վաղ կամ «սառեցված» հետամբողջատիրական վարչակարգում տեղի է ունենում ընդդիմության ճգնաժամ, ապա այդ վարչակարգն իր սահմանափակ բանակցային կարողությունների պատճառով հատկապես խոցելի է դառնում անկման հանդեպ, եթե ի վիճակի չի լինում ճնշելու այդ ընդդիմությանը: Սակայն հասուն հետամբողջատիրական վարչակարգը (ինչպես օրինակ՝ Հունգարիան 1980-ական թվականների կեսերին) և ավտորիտար վարչակարգերի մի ընդարձակ շարք (ինչպես օրինակ՝ Իսպանիան և Բրազիլիան 1970-ական թվականների կեսերին) կարող են նախաձեռնել չորս խաղացողով խաղեր: Այդպիսով, չնայած «դաշնությունահենք անցումները» գրականության մեջ աչքի ընկնող տեղ ունեն, դաշինքի վրա հիմնված դասական չորս խաղացողով անցումներն իրականում որպես անցման ուղի հնարավոր են միայն որոշ ավտորիտար և հասուն հետամբողջատիրական վարչակարգերում:

Անցման մի այլ ուղի, որը հնարավոր է թվում շատ ոչ ժողովրդավարական վարչակարգերում, սակայն ավելի մանրամասն քննելուց հետո պարզվում է, որ իրականում հնարավոր է միայն ավտորիտար տիպի վարչակարգերում, վերաբերում է գինվորականությանը: Եթե «գինվորականությունը՝ որպես ինստիտուտ», կարծում է, որ «գինվորականության՝ որպես կառավարության» համար իշխանության գինը չափազանց մեծ է, ապա ազատ ընտրությունը կարող է դառնալ ավտորիտար վարչակարգի գլուխ անցած բարձրաստի-

6. Օրինակ՝ Վարչակայան դաշինքի երկրներից միակը, որը 1988թ. չունեւ ընդդիմության տպագրվող և ոչ մի «սամիզդատ» ամսագիր, Ռուսինիան էր, մի երկիր, որտեղ Չաուչեսկուի օրոք համակցվել էին ուժեղ սուլթանիստական և ամբողջատիրական միտումները: Սուլթանիստական վարչակարգից բարեհաջող կերպով ժողովրդավարությանն անցման հատուկ դժվարությունների մասին տե՛ս Հ. Չեհաբիի և Խուան Լինցի խմբ.՝ «Սուլթանիստական վարչակարգեր» (H. E. Chehabi and Juan J. Linz, *Sultanistic Regimes*), ընթացքի մեջ գտնվող հատորի ներածական գլխում և Ռիչարդ Սնայդեր, «Բացատրություն ի նորժառանգական բռնատիրություններից անցումների» (Richard Snyder, "Explaining Transitions from Neopatrimonial Dictatorships", *Comparative Politics* 24 (July 1992): 379-99): Տե՛ս նաև Մայքլ Բրատտոն և Նիկոլաս վան դե Վալլը. «Նորժառանգական վարչակարգերն ու քաղաքական անցումն Աֆրիկայում» (Michael Bratton and Nicholas van de Walle, "Neopatrimonial Regimes and Political Transition in Africa", *World Politics* (July 1994): 453-89):

ճան զինվորականության՝ իշխանությունից հեռացման բանաձևի մաս:<sup>7</sup> Մակայն բարձրաստիճան զինվորական բյուրոկրատիայի կողմից կառավարության վերահսկողությունը բացարձակապես տարբերվում է սուլթանականության և ամբողջատիրության կամ հետամբողջատիրական վարչակարգում կուսակցության առաջատար դերի տրամաբանությունից:

Այժմ պատրաստ ենք քննարկման ներկայացնել մի եզրակացություն ժողովրդավարությանն անցման ուղիների համար ոչ ժողովրդավարական վարչակարգերի տիպերի նշանակության (Աղյուսակ 4.2) և ժողովրդավարական վարչակարգին անցումն ու ժողովրդավարության կայացումն ավարտելու նվազագույն խնդիրների իրականացման համար վարչակարգերի տիպերի նշանակության (Աղյուսակ 4.3) վերաբերյալ:

---

7. Ընդարձակ հասկացութենական և քաղաքական վերլուծություն «զինվորականությունը՝ որպես կառավարություն» և «զինվորականությունը՝ որպես հաստատություն» տարբերական մասին բերվում է Գլուխ 5-ում:

## Գործող անձինք. նրանք համապատասխան համատեքստերում

Ի ՀԱՎԵԼՈՒՄԸ մեր «մակրոփոփոխականների» նախորդ վարչակարգի տիպի ու պետությանակնության՝ ուշադրություն ենք հրավիրում մի շարք այլ կարևոր փոփոխականների վրա, որոնք ազդում են ժողովրդավարությանն անցման ու կայացման վրա և վերաբերում են միջին հարթության տեսությանը (middle range theory): Այդ փոփոխականներից երկուսը, որոնց կենտրոնում գտնվում են գործող անձինք, վերաբերում են նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգի ղեկավարության կադրային բազային և այն հարցին, թե ով է նախաձեռնում ու վերահսկում անցումը: Եվս երեք համատեքստային փոփոխականներ վերաբերում են միջազգային ազդեցությանը, լեզվափոխության ու ճնշման քաղաքատնտեսությանը և այն միջավայրին, որտեղ մշակվում է սահմանադրությունը:

ՆԱԽՈՐԴ ՈՉԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ԻՆՍԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԸ ԵՎ  
ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեր գլխավոր հարցն այստեղ վերաբերում է այն հիմնական խմբին, որն իրականացնում է պետական ապարատի ամենօրյա ղեկավարությունը: Ո՞րն է այդ պետական վերնախավի ինստիտուցիոնալ բնույթը: Արդյոք դրա բնույթը բարենպաստ, թե՞ անբարենպաստ ազդեցություն է գործում ժողովրդավարությանն անցման ու կայացման վրա: «Կազմակերպական բազա» փոփոխականը, անկասկած, վերլուծականորեն տարբերվում է «վարչակարգի տիպ» փոփոխականից, որովհետև վարչակարգի որոշ տիպերի ներսում (հատկապես՝ ավտորիտար), կարող են լինել պետական վերնախավերի բացարձակապես տարբեր տիպեր՝ յուրաքանչյուրը ժողովրդավարությանն անցման ու կայացման վերաբերյալ միանգամայն տարբեր նկատառումներով: Հետևյալ ցանկը չհամարելով սպառիչ կարելի է տարբերակել պետական վերնախավերի չորս տարբեր տիպեր՝ (1) բարձրաստիճան զինվորականություն, (2) ոչ բարձրաստիճան զինվորականություն, (3) քաղաքացիական վերնախավ և (4) սուլթանական վերնախավին բնորոշ կատեգորիան:

### Բարձրաստիճան զինվորականություն

Ինչպես ցույց է տրվում Գլուխ 4-ում, որտեղ խոսվում է նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգերի տիպերի հետևանքների մասին, միայն ավտորիտար վարչակարգն ունի բարձրաստիճան զինվորական կազմակերպության կողմից վերահսկվելու հավա-

նականություն: Նման կազմակերպության կողմից վերահսկողությունը դեմ է ամբողջատիրական, հետամբողջատիրական կամ սուլթանական վարչակարգերի տրամաբանությանը:<sup>1</sup> Բոլոր բարձրաստիճան գինվորական վարչակարգերն ունեն մեկ ընդհանուր առանձնահատկություն, որը պոտենցիալ կերպով նպաստավոր է ժողովրդավարությանն անցման համար: Սպայական կորպուսը, ամբողջությամբ վերցրած, իրեն տեսնում է որպես պետական ապարատի անքակտելի մաս՝ այն հաստատուն շահերով ու մշտական գործառույթներով, որոնք գտնվում են տվյալ պահին գործող կառավարության շահերի սահմաններից դուրս: Դա նշանակում է, որ մշտապես առկա է այն բանի հավանականությունը, որ գինվորականություն-ինստիտուտի բարձրաստիճան առաջնորդները կարող են հանգել այնպիսի որոշման, որ ոչ ժողովրդավարական իշխանության մեջ անմիջական ներգրավման գինն ավելի բարձր է, քան հեռանալու գինը: Հետևաբար, գինվորականություն-ինստիտուտի բարձրաստիճան գինվորականության կողմից իշխանության վերանվաճումը մշտական վտանգ է ներկայացնում գինվորականություն-կառավարության համար: Ավելին, որպես իրավիճակային վերնախավի անդամներ, ում ուժն ու կարգավիճակը կախված է գործող պետական ապարատի գոյությունից, գինվորականություն-ինստիտուտը շահագրգռված է կայուն պետության մեջ, իսկ դրա համար պահանջվում է կառավարություն:<sup>2</sup> Դա հաճախ նշանակում է, որ եթե ժողովրդավարությունը հանդիսանում է հասարակարգում իշխելու մատչելի բանաձև, ապա գինվորականությունը կարող է որոշել լուծել իր ներքին կազմակերպական խնդիրները և բավարարել կառավարություն ունենալու իր կարիքը կառավարության կազմավորումը քաղաքացիականներին թողնելու միջոցով: Պարադոքսալ, սակայն կանխատեսելի կերպով ժողովրդավարական ընտրությունները, այսպիսով, հաճախ հանդիսանում են ոչ ժողովրդավարական վարչակարգերում իրենց աչքի ընկնող դերից սպառնալիք զգացող գինվորական ինստիտուտների նեղ վիճակից դուրս գալու ռազմավարության մաս:

Ժողովրդավարության կայացման գործընթացի առումով կարող ենք բարձրաստիճան գինվորական վարչակարգերի մասին արտահայտել զգուշավոր և շատ ավելի նվազ լավատեսական կարծիք: Ճիշտ այն պատճառով, որ գինվորականությունը (բացի այն դեպքերից, երբ այն վերացվում է օտարերկրյա ուժերի կողմից կամ հեղափոխության

1. Որոշ դեպքերում, ինչպես, օրինակ՝ Չիլին և Ուրուգվայը, և հատկապես՝ «կեղտոտ պատերազմն» Արգենտինայում, գինվորականությունը մշակում է թշնամու սահմանումն իր ազգային անվտանգության դոկտրինում, որը ճնշմանը հաղորդում է ամբողջատիրական բնույթ: Տե՛ս, օրինակ, Ալեխանդրա Բարաոնա դե Բրիտո՝ «Ճշմարտություն, թե՞ ներում. մարդու իրավունքներ և ժողովրդավարացումը Լատինական Ամերիկայում. Ուրուգվայ և Չիլի» (Alexandra Barahona de Brito, "Truth or Amnesty—Human Rights and Democratization in Latin America: Uruguay and Chile" (Ph.D. diss., University of Oxford, 1993), 28–61):

2. Տրամաբանորեն ավելի լավ հիմնավորված փաստարկ «գինվորականություն-կառավարության» և «գինվորականություն-ինստիտուտի» տարբերական վերլուծական ու պատմական կիրառման մասին տե՛ս Ստեփան, «Դեպի վերաժողովրդավարացում տանող ուղիները» (Stepan, "Paths toward Redemocratization", 75–78, 172–73): Զինվորականությունը որպես պետության հետ հատուկ հարաբերություն ունեցող «իրավիճակային վերնախավ» հասկացությունը տե՛ս Ալֆրեդ Ստեփան, «Լեռաճական և բացառական գինվորականության պատասխաններն արմատականությանը՝ հատուկ ուշադրություն Պերուի վրա» Alfred Stepan, "Inclusionary and Exclusionary Military Responses to Radicalism with Special Attention to Peru", Սեվերին Բիալերի խմբ.՝ «Արմատականությունն արդի դարաշրջանում» (Seweryn Bialer, ed., *Radicalism in the Contemporary Age* (Boulder: Westview Press, 1977), 3:221–39, 344–50):

հետևանքով) պետական ապարատի մշտական մասն է և որպես այդպիսին՝ ունի ճնշման ռեսուրսներից օգտվելու արտոնյալ հնարավորություն, զինվորականության անդամները կազմում են այն մեքենայի անբաժանելի մասը, որը նոր ժողովրդավարական կառավարությունը պետք է գործի դնի: Հետևաբար, թե՛ տեսականորեն և թե՛ գործնականում որքանով որ բարձրաստիճան զինվորականությունը նախքան անցումն ավելի ուղղակիորեն է իրականացրել պետության և սեփական կազմակերպության ամենօրյա կառավարումը, այնքանով էլ ժողովրդավարության կայացման խնդրի լուծման համար ավելի ակնառու հարց է դառնում բանակը ժողովրդավարորեն կառավարելը: Որքան ավելի աստիճանակարգված ձևով է ղեկավարվում զինվորականությունը, այնքան ավելի է նվազում այն բանի հավանականությունը, որ նա ստիպված կլինի հեռանալ ոչ ժողովրդավարական վարչակարգից ներքին հակասությունների պատճառով, և որքան թույլ է նրան կառավարությունից դուրս մղող կոալիցիան, այնքան ավելի է մեծանում այն բանի հավանականությունը, որ զինվորականությունն ի վիճակի կլինի իր հեռանալու շուրջ բանակցելու՝ այնպիսի պայմաններ թելադրելով, որոնք իրեն թույլ կտան պահել ոչ ժողովրդավարական արտոնություններ կամ առաջադրել բազմաթիվ սահմանափակող պայմաններ ժողովրդավարության կայացմանը տանող քաղաքական գործընթացների առջև: Ոչ ժողովրդավարական վարչակարգերում գոյություն ունեցող կազմակերպական հիմքերի երեք տիպերից ամենաշահեկան դիրքում է բարձրաստիճան զինվորականությունը, քանի որ այն ունի նորընտիր կառավարությունից սեփական ազդեցության «պահուստային տիրույթներ» կորզելու ամենամեծ ունակությունը, իսկ դա խոչընդոտ է համարվում ժողովրդավարության կայացման ճանապարհին: Դա առանձնահատուկ սուր խնդիր է դառնում, երբ բարձրաստիճան զինվորականությունը ներգրավված է լինում մարդու իրավունքների համատարած խախտումների մեջ և որպես պետական ապարատի մաս՝ իր հավատարմությունն է խոստանում նոր ժողովրդավարական կառավարության կողմից չպատժվելու պայմանով: Մարդու իրավունքների խախտումների նման ժառանգությունը ծանր խնդիրներ է հարուցել ժողովրդավարության կայացմանը Արգենտինայում և Չիլիում:

Ասվածից չի բխում, որ պետք է ենթադրել ստատիկ իրավիճակ: Իշխանությունը միշտ և ամենուրեք հարաբերական է: Պարզապես նկատի ունենք, որ եթե համեմատաբար միասնական, աստիճանակարգված ձևով ղեկավարվող զինվորականությունը հենց նոր թողել է իշխանության ուղղակի իրականացումը, ապա ժողովրդավարական իշխանության ստեղծման բարդ դիալեկտիկական խնդիրները և զինվորականության ոչ ժողովրդավարական արտոնությունների տիրույթների կրճատումը պետք է դառնան նոր ժողովրդավարական առաջնորդների երկու ամենակարևոր խնդիրները:

## Ոչ բարձրաստիճան զինվորականություն

Ոչ բարձրաստիճան զինվորականության կողմից ղեկավարվող ոչ ժողովրդավարական վարչակարգն ունի որոշ բնորոշ գծեր, որոնք այն դարձնում են ավելի նվազ չափով պոտենցիալ խոչընդոտ ժողովրդավարությանն անցման և հատկապես ժողովրդավարության կայացման համար: Ինչ վերաբերում է ժողովրդավարությանն անցմանը, ապա ոչ բարձրաստիճան զինվորականություն-կառավարությունը (օր.՝ փոխգնդապետերն ու

մայրերը) դժվարությունների առջև կանգնելիս ավելի մեծ չափով է տրվում քաղաքացիական իշխանությունից ազատագրվելու և հեղաշրջման միջոցով իշխանությունը վերանվաճելու գայթակհությանը, քան այն դեպքում, երբ կառավարությունը ղեկավարվում է բարձրաստիճան գինվորականների կողմից: Սկզբունքային քաղաքական և տեսական տարբերակումը, սակայն, վերաբերում է ժողովրդավարության կայացմանը: Այն բանի հավանականությունը, որ գինվորականություն-ինստիտուտը կհանդուրժի հեռացող ոչ ժողովրդավարական կառավարության անդամների պատիժն ու դատավարությունները, զգալիորեն ավելի մեծ է, եթե պատժի ենթարկվող խումբը չի համարվում գինվորականություն-ինստիտուտը՝ ինքը, այլ դիտվում է որպես գինվորականության ներսում մի խումբ, որը խախտել է ենթակարգության նորմերը: Նմանապես, եթե գնդապետերը սահմանել են կիսապետական հետախուզական գործընթացներ, որոնք ընկալվել են որպես սպառնալիք անգամ գինվորականություն-ինստիտուտի կողմից, ապա բարձրաստիճան գինվորականությունը շատ ավելի մեծ հավանականությամբ կհամաձայնի (կամ անգամ կպնդի), որ իր իշխանության պահուստային ոլորտները վերացվեն:

### Քաղաքացիական ղեկավարություն

Համեմատական տեսանկյունից քաղաքացիականների կողմից առաջնորդվող վարչակարգերը (անգամ քաղաքացիական ղեկավարություն ունեցող հասուն հետամբողջատիրական վարչակարգերը, որտեղ կոմունիստական կուսակցություններն առանցքային բաղադրիչներ են) էապես ունեն ավելի մեծ ինստիտուցիոնալ, խորհրդանշական և կլանող կարողություններ ժողովրդավարությանն անցումը նախաձեռնելու, ուղղորդելու և կառավարելու համար, քան գինվորական կամ սուլթանական առաջնորդներ ունեցողները: Քաղաքացիական առաջնորդները հաճախ ունենում են ավելի մեծ շահագրգռվածություն՝ դաշինքներ կազմելու բարդ բարեփոխումների իրականացման համար և գինվորականությունից ավելի ունակ են դրա շուրջ բանակցելու: Նրանք հաճախ ավելի շատ կապեր ունեն հանրության հետ, քան գինվորականությունը կամ կիսաբանակային սուլթանական առաջնորդները: Քաղաքացիականները կարող են նաև ապագա ժողովրդավարական վարչակարգում իրենց տեսնել որպես հավանական հաղթողներ և իշխողներ: Այս տարբերակը շատ ավելի քիչ է հավանական գինվորական կամ սուլթանական իշխանավորների համար:

Քաղաքացիականների կողմից ղեկավարվող նման քաղաքական փոփոխության մեջ, իհարկե, կան ժողովրդավարությանը լրիվ անցման և կայացման պոտենցիալ խնդիրներ: Քաղաքացիականների կողմից ղեկավարվող ազատականացումը կարող է փոխել հավասարակշռությունը համակարգում ժողովրդավարությանն անցումից անմիջապես առաջ կամ խմբերին տալ ընտրություններում հաղթելու հնարավորություն՝ հմուտ, սակայն ոչ ժողովրդավարական միջոցներով իշխանության լծակներից օգտվելու իրենց արտոնյալ հնարավորության պատճառով: Սակայն երբ դիտարկում ենք ժողովրդավարության կայացումը, այնպես է թվում, որ նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգի քաղաքացիական առաջնորդների՝ ժողովրդավարության կայացման առջև խոչընդոտներ (օրինակ՝ իշխանության՝ սահմանադրորեն թույլատրված պահուստային տիրույթները) հարուցե-

լու կարողությունն զգալիորեն ավելի փոքր է, քան զինվորական կազմակերպության կարողությունը:

Վերը բերված պնդումից բացառություն է, թերևս, որևէ քաղաքացիական ղեկավարություն ունեցող մենաշնորհային կուսակցության՝ հատկապես իշխող կոմունիստական կուսակցության վրա հիմնված ոչ ժողովրդավարական վարչակարգի դեպքը: Պե՞տք է արդյոք նման տիպի կազմակերպական բազան խոչընդոտ համարել ժողովրդավարության կայացման համար, որն արժանի է համեմատվելու իշխանությունից հենց նոր հեռացած բարձրաստիճան զինվորական կազմակերպության հետ: Արևելյան Եվրոպայում որոշ քաղաքական ակտիվիստներ վախենում էին այն բանից, որ ցանկացած պարտված իշխող կուսակցություն կամ պարտված իշխող բարձրաստիճան զինվորականություն հանդիսանում են գործառական համարժեք ներժողովրդավարության կայացմանը խոչընդոտելու իրենց ունակությամբ: Սակայն, կարծում ենք, որ այն դեպքերում, երբ կոմունիստական կուսակցությունը պարտվել է ազատ և մրցակցային ընտրություններում (ինչպես Հունգարիայում 1990թ.), այս նմանությունը սկզբունքորեն մեզ ապակողմնորոշում է երկու բանի հիման վրա՝ (1) կազմակերպական հարաբերությունները պետական ապարատի հետ և (2) շահերը: Բարձրաստիճան զինվորականությունը՝ որպես կազմակերպություն (եթե միայն դա նոր ժողովրդավարական պաշտոնյաների կողմից պարտված և արձակված զինվորականությունը չէ), կփակվի պետական ապարատում որպես միավոր՝ դեռևս ունենալով այնտեղ էքստենսիվ պետական առաքելություններ և պետության կողմից հատկացված ռեսուրսներ (ինչպես Չիլիում 1989թ.): Պարտված կոմունիստական կուսակցությունը, ի տարբերություն դրա, թեև դեռ կարող է պահել շատ ռեսուրսների նկատմամբ հսկողությունն ու հավատարիմ կողմնակիցներին, որոնք իրեն կօգնեն մրցել հետագա ընտրությունների ժամանակ, պետական ապարատում չունի համեմատելի ինստիտուցիոնալ բազա, նոր պետության ռեսուրսների նկատմամբ պահպանվող հավակնություն և շարունակվող պետական առաքելություն: Որպես կազմակերպություն՝ դա կառավարությունից դուրս մնացած պարտված կուսակցություն է և թեև կարող է հաղթել ապագայում բաց ընտրություններում (ինչպես Հունգարիայում 1994թ.), բայց ունի «պահուստային տիրույթներ» պարտադրելու ավելի քիչ կոլեկտիվ ռեսուրսներ, քան կառավարությունից դուրս մնացած զինվորականությունը: Մեր փաստարկն այստեղ սահմանափակվում է միայն այն դեպքերով, երբ ժողովրդավարական ընդդիմությունը հաղթում է բաց և մրցակցային ընտրություններում, իսկ այնուհետև ընդունում կառավարության ղեկավարումը: Սակայն սովորաբար ամբողջատիրական բևեռին մոտ գտնվող որոշ հասարակություններում, որոնք չեն ժառանգել ազատական կամ ժողովրդավարական քաղաքականություն, իշխանության բարձրագույն դեմքերն ի վիճակի են հագնել ազգայնական տարագրվել ոչ թե «դեմոկրատիայի», այլ «էթնոկրատիայի» կերտմամբ: Նման համատեքստերում քաղաքացիական հասարակությունը չափազանց թույլ է մրցունակ քաղաքական հասարակություն ծնելու համար, և նոմենկլատուրայի անդամներն ի վիճակի են յուրացնելու իշխանությունը ու իրենց «լեգիտիմացնելու» ընտրությունների միջոցով:

Վարքագծային շահագրգռությունների տեսանկյունից հատկանշական է, որ նախկին նոմենկլատուրային կոմունիստներն (կամ նախկին կոմունիստները) ազատ և մրցակցային ընտրություններում պարտություն կրելուց հետո դարձյալ զբաղեցնում են բազմաթիվ կարևոր պաշտոններ պետական ապարատում, հատկապես՝ պետական ձեռնարկու-



թյուններում: Նախկին նոմենկլատուրայի անդամները կառավարման, վարչարարության և անգամ անվտանգության ծառայությունների ոլորտներում իրենց ծանոթությունների միջոցով կարող են առաջացող կապիտալիստական տնտեսության մեջ իրենց համար ապահովել արտոնյալ դիրք՝ քաղաքական ազդեցությամբ: Սակայն նրանք սովորաբար գործում են՝ իրենց ուրույն անհատական շահերից դրդված: Շատ հետևումունիստական երկրներում նախկին նոմենկլատուրան փորձ չի կատարում տապալելու նոր վարչակարգը կամ ուղղակիորեն մարտահրավեր նետելու դրան, այլ փորձում է օգտվել դրանից: Որոշ դեպքերում, հատկապես՝ նախկին Խորհրդային Միությունում սա հանգեցնում էր հանրայինն ու մասնավորը շփոթելուն, և դրանով զգալի տեղ էր բացվում կոռուպցիայի համար: Նախկին նոմենկլատուրայի անդամները որքան ավելի շատ հանդես գան որպես անհատներ կամ գործեն որպես ժողովրդավարական պետության կառավարիչներ, այնքան ավելի մեծ կլինեն որպես պաշտոնյա մնալու նրանց հնարավորությունները: Դա հատկապես վերաբերում է պետական արտադրական, առևտրական և բանկային ձեռնարկությունների կառավարիչներին, ովքեր կարող են ի շահ իրենց օգտագործել սեփական կազմակերպական ռեսուրսները՝ վերակազմավորելու վերասերված (ռեկոմբինատային) հանրային-մասնավոր սեփականության նոր ձևեր:<sup>3</sup> Այսպիսով, նախկին նոմենկլատուրայի վարքագծային շահագրգռությունների համակարգի ուժեղ բաղադրիչներ են առանձին մարդկանց հետ ծանոթությունը կամ ծանոթությունների լայն ցանցը, ինչը ենթադրում է աշխատանք նոր քաղաքական համատեքստը շահարկելու միջոցով առավելություն ստանալու ուղղությամբ, փոխանակ ընդդիմանար դրան և ընդունել նրան այնպիսին, ինչպիսին որ կար: Չինվորականության համար վարքագծային շահագրգռությունների համակարգն սկզբունքորեն այլ է: Որոշ բացառությամբ վարքագծային շահագրգռությունը զինվորականության համար խմբային է և բխում է խմբային արտոնությունները պահելու պայքարից՝ խուսափելու այնպիսի բացասական կոլեկտիվ գործողություններից, ինչպիսիք են, օրինակ, դատավարությունները: Հետևաբար, ի տարբերություն կառավարությունից դուրս մնացած նոմենկլատուրայի կառավարությունից դուրս մնացած զինվորականության համար կարող է լինել միասին գործելու զգալի շահագրգռվածություն՝ մրցակցության մեջ մտնելով նոր ժողովրդավարական կառավարության հետ:

## Սուլթանական ղեկավարություն

Եվ վերջինը: Համառոտ դիտարկելու ենք, թե ինչ նշանակություն ունի սուլթանական իշխանության ինստիտուցիոնալ կազմությունը ժողովրդավարությանն անցման ու կայացման համար: Սուլթանական վարչակարգն այնպիսի վարչակարգ է, որտեղ կառավարողն անձնավորում է կառավարությունն ու վարչակարգը և ոչ ինստիտուցիոնալացված, բայց անսպասելիորեն համապարփակ ձևով թափանցում է պետական, քաղաքական և քաղաքացիական հասարակության մեջ: Միաձուլված են ոչ միայն մասնավորն ու հանրայինը,

3. Նոր ցանցի ձևավորման և դրա հետ կապված «ռեկոմբինատային սեփականության» երևույթի մասին [ոչ իսկապես մասնավոր և ոչ էլ այլևս հանրային] նորարարական աշխատություն է Դեյվիդ Ստարկի գիրքը՝ «Ռեկոմբինատային սեփականությունն արևելաեվրոպական կապիտալիստական հասարակարգում» (David Stark, "Recombinant Property in East European Capitalism", Working Paper, Collegium Budapest, 1994):

այլ նաև քաղաքացիականն ու զինվորականը: Տեսականորեն դժվար է սուլթանականությունը դասակարգել որպես զինվորականության կամ քաղաքացիականների կողմից ղեկավարվող վարչակարգ: Սուլթանական վարչակարգերը ինքնին հնարավորություն են ժողովրդավարությանն անցման համար, որովհետև կառավարողի (և նրա ընտանիքի) գահընկեց արվելու կամ սպանվելու դեպքում սուլթանական վարչակարգն անկում է ապրում: Սակայն ցանկացած սուլթանական վարչակարգի արդեն իսկ բնույթը նշանակում է, որ ժողովրդավարական ընդդիմության կազմակերպման համար շատ քիչ տեղ կա: Հետևաբար, բացի բնական պատճառներով մահվանից, սուլթանական բռնակալները սովորաբար գահընկեց են արվում քաղաքացիական հասարակության արագ, զանգվածային շարժումների, սպանության կամ զինված ապստամբության միջոցով (տե՛ս Ադյուսակ 4.2): Վարչակարգի վախճանի նման եղանակը հաճախ հանգեցնում է ժամանակավոր կառավարության դինամիկային, որը եթե միայն չկա արագ ընտրություններ անցկացնելու մասին որոշում, սովորաբար վտանգ է ներկայացնում ժողովրդավարության կայացման համար:<sup>4</sup> Նաև բռնապետի շուրջն իշխանության անձնավորումը վարչակարգին մոտ կանգնածներին կարող է տալ իշխանությունը վերցնելու հնարավորություն: Կամ նույնիսկ, երբ ապստամբությունը ղեկավարող խումբը կամ զինված շարժումը վերացնում է սուլթանական վարչակարգի հետ առավել կապ ունեցողներին, նրանք կարող են իրենց նշանակել որպես ժողովրդի «ինքնիշխան» ներկայացուցիչներ և կառավարել ժողովրդավարության անունից առանց անցնելու ազատ մրցակցության և ազատ ընտրության այն փուլերը, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարությանը լրիվ անցման և ժողովրդավարության կայացման համար:

## ԱՆՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ. Ո՞Վ Է ՍԿՍՈՒՄ ԵՎ Ո՞Վ Է ՎԵՐԱՀՄԿՈՒՄ

Քաղաքացիական հասարակության ոտքի կանգնելու, ոչ ժողովրդավարական վարչակարգի հանկարծակի անկման, զինված հեղափոխության կամ ոչ բարձրաստիճան ղեկավարությամբ զինվորականության ապստամբության հետևանքով նախաձեռնված բոլոր անցումները սովորաբար առաջացնում են այնպիսի իրավիճակներ, երբ իշխանության լծակները անցնում են ժամանակավոր կառավարությանը:<sup>5</sup> Պետության կամ վարչակարգի կողմից ղեկավարվող աստիճանակարգային ուժերի կողմից նախաձեռնված անցումների ժամանակ նման բան տեղի չի ունենում:

Ժամանակավոր կառավարություններն ինքնին հիշեցնում են բավականաչափ հեղհեղուկ իրավիճակներ և կարող են հանգեցնել տրամագծորեն հակառակ արդյունքների՝ կախված այն բանից, թե որ խմբերն են առավել հզոր, և հատկապես այն բանից, թե արդյոք ընտրությունները, թե՞ հախուռն հրամանների հետևանքով իրականացվող բա-

4. Ժամանակավոր կառավարությունները կքննարկենք հաջորդ փոփոխականի վերլուծության ժամանակ:

5. Ժամանակավոր կառավարությունների ավելի մանրամասն քննարկումը տե՛ս Յոսսի Շեյնի և Խուան Լինցի խմբ.՝ «Պետությունների միջև ժամանակավոր կառավարություններ և ժողովրդավարության անցումներ» (Yossi Shain and Juan J. Linz, eds., *Between States: Interim Governments and Democratic Transitions* (New York: Cambridge University Press, 1995)):

րեփոխումներն են համարվում գերակայություն: Եթե ժամանակավոր կառավարությունը շուտափոյթ նշանակում է ընտրությունների օրը և կառավարում է որպես այդ ընտրությունների համար հարաբերականորեն չեզոք պատասխանատու, ապա դա կարող է լինել ժողովրդավարությանն անցման շատ արագ և գործուն ուղի: Սակայն եթե ժամանակավոր կառավարությունը հայտարարում է, որ նախկին կառավարությունը տապալելու իր գործողություններն իրեն լեգիտիմ իրավունք են տալիս կատարելու հիմնարար փոփոխություններ, որոնք իր կողմից որակվում են որպես ժողովրդավարական ընտրությունների նախապայմաններ, ապա այդ ժամանակավոր կառավարությունը կարող է շարժման մեջ դնել մի վտանգավոր դինամիկա, որտեղ անցումը ժողովրդավարության դրվում է վտանգի տակ՝ մինչև իսկ ներառյալ ընտրությունների հետաձգումն *անորոշ ժամանակով*:

Ընտրությունները որոշիչ նշանակություն ունեն, որովհետև առանց դրանց չկա գնահատելու դյուրին եղանակ, թե արդյոք ժամանակավոր կառավարությունն իրականում ներկայացնո՞ւմ է մեծամասնությանը, թե՞ չի ներկայացնում: Առանց ընտրությունների այն գործող անձանց համար, ովքեր կենտրոնական դեր չեն խաղացել հին վարչակարգի վերացման գործում, շատ դժվար կլինի ասպարեզ գալ ու պնդել, որ իրենք ունեն ժողովրդավարական մանդատ: Եվ առանց ընտրությունների նոր ժողովրդավարական քաղաքական հասարակություն կազմող մի ամբողջ շարք ինստիտուտներ, ինչպիսիք են, օրինակ՝ օրենսդիրները, ընտրողների հավաքները և մրցակցող քաղաքական կուսակցությունները, պարզապես չեն կարող ձեռք բերել բավարար ինքնուրույնություն, օրինականություն և լեգիտիմություն:

Շատ հավանական է, որ ընտրություններն արագ անցկացվեն վարչակարգի անկման այն դեպքերում, երբ ժողովրդավարական կուսակցության առաջնորդները (ինչպես Հունաստանում 1974թ.) գրեթե անմիջապես հանդես են գալիս որպես ժամանակավոր կառավարության կորիզ, կամ որտեղ քաղաքացիական հասարակության առաջնորդները, ովքեր նվիրված են նախ և առաջ քաղաքական ժողովրդավարություն ստեղծելուն (ինչպես Չեխոսլովակիայում 1989թ.), ժամանակավոր կառավարության միջուկն են: Հաճախ, սակայն, հատկապես զինված ուժի միջոցով իշխանության գալու դեպքերում ժամանակավոր կառավարությունը ձեռք է բերում այնպիսի դինամիկա, որը նրան ամբողջովին հեռացնում է ազատ մրցակցությունից: Հավակնելով հեղափոխական լեգիտիմության՝ ժամանակավոր կառավարությունը կարող է պարբերական համաժողովրդական հարցումները կամ հանրաքվեները փոխարինել բազմակուսակցական ընտրություններով: Ամեն մի ժամանակավոր կառավարություն, որն սկսվում է ոչ բարձրաստիճան սպաների ապստամբությամբ, կարող է առաջացնել պայթյունավտանգ իրավիճակ, որովհետև այն կարող է ընթանալ պետական ապարատի մի մասի հարձակմամբ մեկ այլ մասի վրա, որի ժամանակ կարող են լինել տարբեր արդյունքներ՝ գանգվածային պետական ճնշումից մինչև հեղափոխություն: Նման հակամարտության ժամանակ ամենաքիչ հավանական էլքը կարող է լինել ընթացակարգային ժողովրդավարությունը:

Ի՞նչ կարելի է ասել պետության կողմից ղեկավարվող կամ վարչակարգի նախաձեռնած ու վերահսկվող անցումների մասին: Եթե վարչակարգն է վերահսկում իշխանության փոխանցումը, ապա ժամանակավոր կառավարության ստեղծման հավանականությունը, ըստ էության, բացառվում է, մինչև ընտրությունների արդյունքում որոշվի, թե ով պետք

է կառավարի: Արտահայտելով այս հիմնարար միտքը՝ պետք է գիտակցենք, որ վարչակարգի կողմից վերահսկվող իշխանության փոխանցումները կազմում են մի սանդղակ՝ ամենաժողովրդավար ընդդիմադիրներից մինչև իրեն ամենահավատարիմները: Իշխանության փոխանցումը ժողովրդավար ընդդիմադիրներին առաջ է բերում այնպիսի իրավիճակ, երբ ինչ-ինչ պատճառներով հեռացող վարչակարգը փորձում է կաշկանդել եկող ժողովրդավարորեն ընտրված կառավարությանը՝ իր վարչակարգի աջակիցներին նշանակելով գլխավոր պետական պաշտոններում այն նպատակով, որ հնարավորին չափ շատ ոչ ժողովրդավարական գծեր պահպանվեն նոր քաղաքական համակարգում: Իշխանության փոխանցումն իրեն ոչ հավատարիմ ուժերին առավել հավանական է այն դեպքերում, երբ հեռացող ոչ ժողովրդավարական վարչակարգի առաջնորդները չեն ցանկանում իշխանությունը փոխանցել ժողովրդավարական ինստիտուտներին, և ոչ ժողովրդավարական վարչակարգի ու ժողովրդավարական ընդդիմության ուժերի միջև հարաբերակցությունն այնպիսին է, երբ ոչ ժողովրդավարական առաջնորդները պահպանում են իրենց ազդեցության զգալի քաղաքական ռեսուրսներ: Վերոհիշյալ պատճառներով սա ավելի հավանական սցենար է, երբ տեղի է ունենում նախկին ոչ ժողովրդավարական կառավարության քաղաքացիական և քաղաքական հասարակության մեջ ուժեղ դաշնակիցներ ունեցող բարձրաստիճան գինվորականության կողմից վերահսկվող ռազմական վարչակարգի դեպքում, ինչպես կտեսնենք Չիլիի օրինակով:

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդավարությանն անցումների մասին առավել հեղինակավոր և լայնորեն կարդացվող հրապարակումներից է «Անցում ավտորիտար իշխանությունից» քառահատոր աշխատությունը՝ Գիլյերմո Օ'Դոննելի, Ֆիլիպ Շմիտթերի և Լոուրենս Ուայթհեդի խմբագրությամբ: Այս ուսումնասիրության մեջ բերված օրինակները վերաբերում են Հարավային Եվրոպային ու Լատինական Ամերիկային (բացառությամբ Բոտսվայի), մասնավորապես՝ 1970-ականների կեսերից մինչև 1980-ականների կեսերը: Այդ տարածական և ժամանակային սահմաններում ընկած իրադարձություններից ընդհանրացումներ կատարելով՝ Օ'Դոննելը և Շմիտթերը եզրափակիչ հաստորում ապացուցում են, որ «ներքին գործոնները գերակշիռ դեր են խաղում անցման գործում: Մի խոսքով, հարկ է պնդել, որ իշխանության ուղղակի կամ անուղղակի փոխանցումն ավտորիտար վարչակարգի ներսում առկա էական տարբերությունների հետևանք չէ»:<sup>6</sup> Լոուրենս Ուայթհեդը միջազգային ազդեցության մասին իր արժեքավոր գլխում առաջարկում է մի էլ ավելի հստակ ընդհանրացում. «Խաղաղ ժամանակներում այստեղ դիտարկված բոլոր դեպքերում անցման փորձի ուղղությունն ու ելքը որոշելու գործում առաջնային կարևորություն ունեցել են ներքին ուժերը, իսկ միջազգային գործոնները խաղացել են միայն երկրորդական դեր»:<sup>7</sup>

6. Գիլյերմո Օ'Դոննել և Ֆիլիպ Շմիտթեր, «Նախնական եզրակացություններ անհաստատ ժողովրդավարությունների մասին» (Guillermo O'Donnell and Philippe C. Schmitter, *Tentative Conclusions above Uncertain Democracies* (Baltimore: Johns Hopkins University Press, 1986), 19):

7. Լոուրենս Ուայթհեդ, «Ժողովրդավարացման միջազգային կողմերը», Օ'Դոննելի, Շմիտթերի և Ուայթհեդի «Անցումներ ավտորիտար իշխանությունից, համեմատական տեսանկյուններ» (Laurence

Սակայն եթե դիտարկելու լինենք ամբողջ աշխարհին ու ժողովրդավարացման ժամանակակից բոլոր խոշոր փաստացի (կամ հնարավոր) դեպքերը, միջազգային ազդեցությունների վերլուծությունը կարելի է շատ ավելի հեռուն տանել և առաջադրել մի շարք վարկածներ: Դրա համար հարկ է տարբերակել արտաքին քաղաքականության, *ցայտ-ցայտի* (ժամանակի ոգու) և *դիֆուզիայի* թողած ազդեցությունները:

### Արտաքին քաղաքականություններ

Սկզբունքորեն արտաքին քաղաքականությունները կարող են ազդեցություն ունենալ ներքին համատեքստերի վրա շատ տարբեր եղանակներով: Սկսենք այն բանից, որ իրականում կա իրավիճակների երեք կատեգորիա, որոնցում արտաքին քաղաքականության մեջ ուժի գործադրումը փաստորեն *որոշում է* ժողովրդավարության հետ կապված արդյունքները: Առաջին. որևէ ոչ ժողովրդավարական երկիր կարող է գործադրել ուժ՝ տապալելու ռազմական առումով ավելի թույլ ժողովրդավարությունը և միացնելու կամ գրավելու տվյալ երկիրը կամ հաստատելու ոչ ժողովրդավարական խամաճիկային վարչակարգ (օր.՝ Գերմանիան՝ Չեխոսլովակիայում 1938թ.): Երկրորդ. ոչ ժողովրդավարական տարածաշրջանային հեգեմոնը՝ (որը կարող է լինել մի առանձին երկիր կամ միասին գործող երկրների հանրություն) կարող է իր «արտաքին կայսրությունում» գործադրել ռազմական ուժ՝ հետադարձելու ոչ ժողովրդավարական վարչակարգը տապալելու որևէ հաջող հեղափոխական ժողովրդավարացման փորձ (օր.՝ Նունգարիայում 1956թ.) կամ հետադարձելու որևէ ազատականացման գործընթաց (օր.՝ Չեխոսլովակիան 1968թ.): Երրորդ. ցանկացած ժողովրդավարական երկիր, որը հաղթել է ոչ ժողովրդավարական վարչակարգի դեմ պատերազմում, կարող է գրավել պարտված երկիրը և նախաձեռնել անցում ժողովրդավարությանը հաստատման միջոցով (օր.՝ Գերմանիան և Ճապոնիան 1945թ.): Սակայն չնայած այն բանին, որ արտաքին քաղաքականությունները կարող են որոշիչ ուժ ունենալ ժողովրդավարության անցման փուլում, ժողովրդավարության կայացումը որևէ անկախ երկրում վերջին հաշվով որոշվում է ներքին ուժերով:

Ժողովրդավարության անցման և ժողովրդավարության կայացման վրա արտաքին քաղաքականության մեկ այլ ազդեցություն վերաբերում է նրան, ինչը կարող ենք անվանել *դուռ բացել ժողովրդավարական ջանքերի առջև*: Ձևական կամ ոչ ձևական կայսրու-

---

Whitehead, "International Aspects of Democratization", in O'Donnell, Schmitter, and Whitehead, *Transitions from Authoritarian Rule: Comparative Perspectives*, 4): Հոդվածի հիմնական մասում Ուայթհեդը մանրամասն տեղեկություններ է տալիս այն մասին, թե ինչ մեծապես աջակցող դեր է խաղացել եվրոհամայնքը Հարավային Եվրոպայում ժողովրդավարության կայացման գործում: Հետագա աշխատություններում Ուայթհեդը, Օ'Դոննելը և Շմիտերը ճիշտ են եղել՝ ընդունելով այն, որ Արևելյան Եվրոպայում միջազգային ազդեցությունը խաղացել է կենտրոնական դեր: *Տե՛ս նաև* Աբրահամ Լովենտալի խմբ. երկհատոր աշխատությունը՝ «Ժողովրդավարության արտահանում. Միացյալ Նահանգներն ու Լատինական Ամերիկան» (edited by Abraham F Lowenthal, *Exporting Democracy: The United States and Latin America*, (Baltimore: Johns Hopkins University Press, 1991)) և Ջեֆրի Փրիդհամ, խմբ.՝ «Ժողովրդավարության ապահովում. Հարավային Եվրոպայում վարչակարգի փոփոխման միջազգային համատեքստը» (Geoffrey Pridham, ed., *Securing Democracy: The International Context of Regime Transition in Southern Europe* (London: Routledge, 1990)):

թյունները, մեծապես ելնելով իրենց սեփական ներքին ու աշխարհաքաղաքական կարիքներից, ստորադաս վարչակարգերում ժողովրդավարական ջանքերի առջև կարող են բացել նախկինում փակ դուռը: Արդյոք տեղի կունենա՞ անցում ժողովրդավարությանը, թե՞ ոչ, և արդյոք դա կհանգեցնի՞ ժողովրդավարության կայացմանը, թե՞ ոչ, մեծ մասամբ պայմանավորվում է ներքին գործոններով (օր.՝ Բրիտանական կայսրության մեծ մասը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, սոցիալիստական ճամբարն Արևելյան Եվրոպայում 1989թ.):

Վարչակարգի տապալումը քաղաքականության ազդեցության մեկ այլ տեսակ է: Տարածաշրջանային հեգեմոնները (ժողովրդավարական կամ ոչ ժողովրդավարական) կարող են խաղալ կարևոր նպաստող, թեև հազվադեպ որոշիչ դեր ոչ ժողովրդավարական վարչակարգը տապալմանը աջակցելու գործում (օր.՝ ԱՄՆ արտաքին քաղաքականությունը Ֆիլիպինների հանդեպ 1987թ.) կամ օգնելով տապալել ժողովրդավարությունը, որն ընդդիմանում է հեգեմոնի քաղաքականության նախընտրություններին (օր.՝ ԱՄՆ արտաքին քաղաքականությունը Չիլիի նկատմամբ 1973թ.): Ժողովրդավարական որևէ հեգեմոն կարող է նաև օգտագործել իր աշխարհաքաղաքական և տնտեսական ուժը՝ խանգարելու ոչ ժողովրդավարական ուժերին, որոնք փորձում են խոչընդոտել ժողովրդավարությանն անցման գործընթացը (օր.՝ նախագահ Քարտերի դերը Դոմինիկյան Հանրապետությունում ընտրակեղծիքին հակադրվելու գործում 1978թ.):

Ի վերջո, որևէ տարածաշրջանային հեգեմոն կարող է բազմանշանակ խրախուսանքների կամ սաստելու հետևողական քաղաքական փաթեթի միջոցով խաղալ խոշոր (բայց ոչ՝ որոշիչ) աջակցողի դեր՝ օգնելով տարածաշրջանում որևէ նորելուկ ժողովրդավարությանը՝ ավարտելու անցումը և կայանալու (օր.՝ Եվրոպական տնտեսական համայնքի (ԵՏՀ) կողմնակցությունը արտաքին քաղաքականությունը և հատկապես՝ Արևելյան Գերմանիայի քաղաքականությունը Պորտուգալիայի նկատմամբ 1974թ.):

### Ցայտգայստ

*Ցայտգայստի* գաղափարը փոխառվել է հասարակական մտքի պատմության գերմանական ավանդույթից և նշանակում է «Ժամանակի ոգի»: Ցանկացած տարբերակով չենք ընդունում «պատմության վերջի» մասին թեզը, ըստ որի՝ որևէ գաղափարախոսություն, ինչպես օրինակ՝ ժողովրդավարական գաղափարախոսությունը, կարող է դադարեցնել կամ կղադարեցնի այլընտրանքային քաղաքական տեսականների ու գաղափարախոսությունների միջոցով ինդիվիդուալ արձագանքելու մարդկության ջանքերը:<sup>8</sup> Սակայն պաշտպանում ենք այն միտքը, որ երբ որևէ երկիր մաս է կազմում միջազգային գաղափարախոսական հանրության, որտեղ ժողովրդավարությունը բուռն կերպով մրցակցող բազմաթիվ գաղափարախոսություններից միայն մեկն է, ժողովրդավարությանն

8. Տե՛ս, օրինակ, Ֆրենսիս Ֆուկույամա, «Պատմության վերջը» (Francis Fukuyama, "The End of History", National Interest 16 (Summer 1989): 3-18): Օրինակներից մեկը, թե ինչպես պատմությունը կարող է զարգանալ նոր և անսպասելի ուղիներով, Լիտվայում, Լեհաստանում և Հունգարիայում բարեփոխված կոմունիստների՝ որպես սոցիալ-դեմոկրատների վերադարձն է: Մեկ այլ օրինակ է նախկին Խորհրդային Միության երկրներում և Հարավսլավիայում «ժողովրդավարական մեծամասնականություն» անունից էթնիկ ազգայնական բռնապետությունների վերականգնումը:

անցման ու վերջինիս կայացման հնարավորություններն էապես ավելի քիչ են, քան այն պարագայում, երբ ժամանակների ոգին այնպիսին է, որ ժողովրդավարական գաղափարախոսությունները չունեն հզոր մրցակիցներ: Ժողովրդավարական առումով թշնամական կամ նպաստավոր *ցայտգայտ* կարելի է հեշտությամբ տեսնել, եթե համեմատենք երկու համաշխարհայինների միջև ընկած Եվրոպայի 1970-ական թվականների կեսերի և 1980-ական թվականների Եվրոպայի հետ: Միջպատերազմական ժամանակների Եվրոպայում Ավստրո-հունգարական կայսրության փլուզումից, Վերսալի պայմանագրի հետևանքով առաջ եկած սահմանների փոփոխություններից և գանազան քաղաքական փորձերից հետո անկախ ժողովրդավարական վարչակարգի քիչ կամ բոլորովին փորձ չունեցող տասնմեկ պետությունները կատարեցին ժողովրդավարության հաստատման որոշ քայլեր:<sup>9</sup> Սակայն ժամանակի ոգին այնպիսին էր, որ ժողովրդավարության կատարելատիպը Եվրոպայում մրցում էր չորս այլ մրցակից գաղափարախոսությունների հետ, որոնցից *ոչ մեկը* ժողովրդավարական չէր: Կոմունիզմը Խորհրդային Միությունում մի նոր փորձ էր, որը շատերի կարծիքով՝ շատ խոստումնալից էր: Ֆաշիզմն Իտալիայում շատերի կողմից դիտվում էր որպես և՛ կոմունիզմի, և՛ ժողովրդավարության հզոր մրցակից: Կաթոլիկությունը պապի շրջաբերական *Ռեքոմ նովարումից* (նոր բաների մասին) հետո հիմք դարձավ կորպորատիվիստական և ինտեգրալիստական շարժումների նոր դրսևորումների համար: Ի վերջո՝ այս լարված գաղափարական պայքարի բովում շատ պահպանողականներ դեռևս դրականորեն էին հիշում նախաժողովրդավարական ավտորիտար սահմանադրական միապետության քաղաքական բանաձևը, որի արժեքավոր օրինակ էր կայսերական Գերմանիան: Ամբողջ Եվրոպան որոշ չափով կրել է այդ ոչ ժողովրդավարական գաղափարների ազդեցությունը: Լատինական Ամերիկան նույնպես մեծապես կրել է այդ եվրոպական մտավոր և գաղափարախոսական հոսանքների ազդեցությունը, ինչպես ցույց են տալիս Էստադո Նովոյի փորձը Վարգասի օրոք Բրազիլիայում և պերոնիզմն Արգենտինայում:

Թեև ժողովրդավարությունը ոչ մի դեպքում «գերերաշխավորված» չէ անգամ ամենանպաստավոր *ցայտգայտի* համատեքստում, այնուամենայնիվ, մինչև 1970-ական թվականների վերջը Հարավային Եվրոպայում *ցայտգայտը*, իսկապես, աշխարհի մեծ մասում (իհարկե, բացառելով կարևոր նշանակություն ունեցող իսլամական մշակութային համայնքում նորից աշխուժացած արմատականությունը) այնպիսին էր, որ ժողովրդավարության՝ որպես քաղաքական համակարգի համար լուրջ գաղափարական մրցակիցներ չկային: Իսկապես, կոմունիզմն արմատավորվել էր Խորհրդային Միությունում և տարածվել Արևելյան Եվրոպայի ենթակա վարչակարգերում, սակայն մի ակնաձևով լեի փիլիսոփայի հայտարարությունն այն մասին, որ խորհրդային ներխուժումը Չեխոսլովակիա 1968թ. «կլինիկական մահ» դարձավ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում մարքսիստական ռեզիզիոնիզմի համար, պարզվեց, որ

9. Այդ պետություններն էին՝ Իսպանիան, Իտալիան, Լեհաստանը, Հունգարիան, Չեխոսլովակիան, Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Բուլղարիան, Հարավսլավիան և Ռումինիան: Դրանց անկման քննարկումը *տե՛ս* Խուան Լինց, «Ժողովրդավարությունների ճգնաժամը», (Juan J. Linz, "La crisis de las democracias"), Մերսեդես Կաբրերա, Սանտոս Խուլիա և Պաբլո Մարտին Ասենսա, խմբ.՝ «Եվրոպան ճգնաժամի մեջ 1919-1939թթ.» (Mercedes Cabrera, Santos Julia, and Pablo Martin Acena, eds., *Europa en crisis, 1919-1939* (Madrid: Editorial Pablo Iglesias, 1992), 231-80):

մարգարեական է:<sup>10</sup> 1977թ. մարդու իրավունքների հարցն արդեն այնպիսի համակերպական աջակցություն էր ձեռք բերել, որ արևելաեվրոպական վարչակարգերի մեծ մասն ստորագրեց Հելսինկիի համաձայնագիրը:<sup>11</sup> Ֆաշիզմն ու նացիզմն ամբողջովին հեղինակագրվել էին Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և այլևս ձգողական բևեռ չէին ներկայացնում: Վատիկան II-ից (1961-63թթ.) հետո կաթոլիկությունը մշակեց մի գաղափարախոսական և ինստիտուցիոնալ դիրքորոշում՝ ավելի համապատասխան ժողովրդավարությանը (էթե ոչ՝ կապիտալիզմին), քան երբևէ եղել էր նախկինում:<sup>12</sup> Արդի դարաշրջանում ապահով և հաջողակ միապետերի մեծ մասն արդեն դարձել էր պետության սահմանադրական գլուխ խորհրդարանային ժողովրդավարություններում: 1960-ական թվականներին այնքան գրավիչ եգիպտական և պերուական ռազմական տարբերակն արդեն 1970-ական թվականների կեսերին քիչ կողմնակիցներ ուներ աշխարհում: Մյուս կողմից՝ զինվորականության կողմից դեկավարվող ժամանակակից բյուրոկրատական-ավտորիտար վարչակարգի նոր տիպի Լատինական Ամերիկայի ձախերի փորձը նպաստել էր ժողովրդավարության խոր վերագնահատմանը ոչ թե որպես զուտ մարտավարական գործիքի, այլ որպես ինքնակա արժեքի:<sup>13</sup> Որոշ ժողովրդավարների հույսերը բոլորովին չարդարացան այն հարցում, թե Հարավսլավիայի աշխատավորների ինքնակառավարման ձևը ժողովրդավարության դպրոց է: Աֆրիկայում «մեկ կուսակցության» պետությունները մինչև 1990-ական թվականների սկիզբը գրեթե կորցրել էին իրենց նախնական վստահությունը որպես «մոբիլիզացնող վարչակարգերի» և ավելի ու ավելի մեծ քամահրանքի էին արժանացել որպես ոչ ժողովրդավարական վերնախավերի կողմից շահարկվող «թռչակառուական» բանաձևեր:

## Դիֆուզիա

Քաղաքականության բնագավառում ցայտզայտոր վերաբերում է պատմական դարաշրջաններին: Սակայն դիֆուզիայի էֆեկտը որևէ միջազգային քաղաքական հանրությունում, հատկապես՝ այնպիսի մի հանրությունում, որտեղ այն սերտորեն զուգակց-

10. Լեշեկ Կոլակովսկի, «Մարքսիզմի հիմնական հոսանքները» (Leszek Kolakowski, *Main Currents of Marxism* (Oxford: Oxford University Press, 1978), 3: 465):

11. Արևելաեվրոպական երկրների ներքին քաղաքականությունների վրա այդ ազդեցությունների և Խորհրդային Միության կողմից Հելսինկիի համաձայնագիրը ստորագրելու մասին տե՛ս Սեմյուել Հանթինգտոն, «Երրորդ ալիքը՝ ժողովրդավարացումը քսաներորդ դարում» (Samuel P. Huntington, *The Third Wave: Democratization in the Twentieth Century* (Norman: Oklahoma University Press, 1991), esp. 85-100):

12. Վատիկան II-ի մասին և այն մասին, թե ինչպես այն բարձրացրեց ժողովրդավարության կարգավիճակը հռոմեական կաթոլիկ աստվածաբանության մեջ, տե՛ս Ջորջ Վեյգել, «Վերջին հեղափոխությունը. դիմադրության եկեղեցին և կոմունիզմի անկումը» (George Weigel, *The Final Revolution: The Resistance Church and the Collapse of Communism* (New York: Oxford University Press, 1992), esp. 67-74):

13. Չախերի կողմից ժողովրդավարության վերաժողովումն առաջ բերեց աշխատությունների մի նոր հարուստ ժանր: Նման մի օրինակ տե՛ս Ֆրանսիսկո Վեֆորտ, «Բնչու ժողովրդավարություն» (Francisco Weffort, "Why Democracy?"), Ալֆրեդ Ստեփանի խմբ.: «Բրազիլիայի ժողովրդավարացումը. անցման և կայացման խնդիրներ» (Alfred Stepan, ed., *Democratizing Brazil: Problems of Transition and Consolidation* (New York: Oxford university Press, 1989), 327-50):



ված է մշակույթով, ճնշման համակարգերով և/կամ հաղորդակցությամբ, կարող է տևել շաբաթներ կամ անգամ՝ օրեր: Օրենքի բնույթ ունեցող հայտարարությունները մարդու ստեղծած այնպիսի իրողության մասին, ինչպիսին ժողովրդավարությունն է, ի բնե տարբերվում են նման հայտարարություններից ֆիզիկական գիտություններում, որովհետև պատմության մեջ ոչ մի երկու պահ ճիշտ միանման լինել չեն կարող: Մարդկային էակաները մտածում են նախորդ իրադարձությունների մասին և այնտեղ, որտեղ այդ իրադարձությունները թվում են ուղղակիորեն իրենց հետ կապ ունեցող, հաճախ գիտակցաբար կամ ենթագիտակցորեն փորձում են հարմարեցնել իրենց վարքագիծն այնպես, որ ստանան համեմատության արժանի որևէ արդյունք կամ խուսափեն դրանից: Քաղաքական իրադարձությունից հնարավոր է դաս քաղել: Օրինակ, պորտուգալական հեղափոխության պայթյունից հետո իսպանական պահպանողական առաջնորդներից մեկը՝ Մանուել Ֆրագան, որոշ հետաքրքրություն ցուցաբերեց ժողովրդավարական փոփոխությունը ղեկավարելու գործում դեր խաղալու հարցում, որովհետև նա «չցանկացավ դառնալ Իսպանիայի Կաետանոն»:<sup>14</sup> Նմանապես, Իսպանիայում արքայազն Խուան Կառլոսի վրա, անկասկած, ազդեցություն էր գործել Հունաստանի օրինակը, որտեղ նրա փեսան՝ Կոնստանտին թագավորը, կորցրեց իր գահը ժողովրդավարության հանդեպ իր անվստահության պատճառով:

Ավելի ընդհանրացնելով՝ պնդում ենք, որ որքան ավելի սերտ կապված լինեն մի խումբ երկրներ, այնքան ավելի հավանական է, որ այդ խմբի երկրներից որևէ մեկում բարեհաջող անցումը խմբի մնացած երկրներում կառաջացնի քաղաքական հնարավոր այլընտրանքների շարքի ձևափոխություն: Իհարկե, ինչպես կտեսնենք, երբ քննենք 1989թ.-ի Կենտրոնական և Արևելյան Եվրոպան, միջազգային *դիֆուզիայի* էֆեկտները կարող են գրեթե մի գիշերվա ընթացքում փոխել վերնախավի քաղաքական ակնկալիքները, ամբոխի վարքագիծը և ուժային փոխհարաբերությունները վարչակարգի ներսում: Ինչպես գործնական մարդկանց, այնպես էլ տեսաբանների համար արդի աշխարհում դիֆուզիոն էֆեկտներն ակներևորեն ավելի ցայտուն են դարձել շնորհիվ հաղորդակցությունների ոլորտում հեղափոխության: Այսօր ոչ ժողովրդավարական վարչակարգի կտրուկ անկումն անմիջապես իր մաշկի վրա է զգում հարևան երկրների բառացիորեն ողջ բնակչությունը՝ ռադիոյի և հեռուստատեսության միջոցով: Այդ հանգամանքը, հետևաբար, ակնթարթորեն դառնում է ներքին քաղաքականության նոր հզոր բաղադրիչ:<sup>15</sup>

## ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՃՆՇՄԱՆ ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ո՞րն է վարչակարգի սոցիալ-տնտեսական արդյունավետության մասին քաղաքացիներ-

14. Ֆրագան նկատի ուներ Պորտուգալիայի հետսպաղարյան առաջնորդ Մարսելյո Կաետանոյի տապալումն անցման ձախորդ փորձ նախաձեռնելիս: Դիֆուզիայի էֆեկտն այստեղ այն է, որ իսպանական պահպանողականներն արագորեն սկսեցին վերահաշվարկել ժողովրդավարության անցման նախաձեռնման ծախսերն ու օգուտները:

15. Այս հաստատում քննարկված բոլոր երկրները կրել են որոշ դիֆուզիոն ազդեցություններ, սակայն դրանցից ոչ մեկում դրանք այնքան սուր չեն եղել, որքան Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում:

րի ընկալման և նույն վարչակարգի լեգիտիմության մասին նրանց ընկալման միջև կապը: Ինչպե՞ս է տնտեսությունն ազդում ոչ ժողովրդավարական վարչակարգից ժողովրդավարականի անցման հեռանկարների վրա: Եթե անցումն արդեն սկսվել է, ինչպե՞ս է տնտեսությունն ազդում ժողովրդավարության կայացման հնարավորությունների վրա: Արդյո՞ք կայուն զարգացումը հավասարապես նպաստում է ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական վարչակարգերի զարգացմանը: Արդյո՞ք ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական վարչակարգերը հավասարապես են տուժում տնտեսական անկումից:

Մենք ընդունում ենք այն միանգամայն հիմնավորված փոխկապակցվածությունը, որ սոցիալ-տնտեսական զարգացման չափազանց ցածր աստիճանի վրա գտնվող քիչ ժողովրդավարություններ կան, և որ սոցիալ-տնտեսական բարձր մակարդակ ունեցող հասարակարգերի մեծ մասը ժողովրդավարական է:<sup>16</sup> Արդի ժամանակաշրջանում անցման լուրջ փորձերի մեծ մասը տեղի է ունենում զարգացման միջին մակարդակ ունեցող երկրներում: Սակայն, զարգացման և ժողովրդավարության հավանականության միջև այս կապը մեզ շատ բան չի ասում այն մասին, թե երբ և ինչպես տեղի կունենա անցում կամ արդյոք այն տեղի կունենա՞ և բարեհաջող կերպով կավարտվի՞, թե՞ ոչ: Իհարկե, զարգացման միջին մակարդակների այս խիստ կարևոր համատեքստում մեկ բան հաստատ է, որ հաճախ դժվար կամ անհնար է մեթոդաբար հայտարարություններ անել ժողովրդավարացման գործընթացների վրա տնտեսությունների ազդեցության մասին:<sup>17</sup> Սակայն եթե կիրառենք մի վերլուծական շրջանակ, որտեղ համակցվում են քաղաքականությունն ու տնտեսությունները, և կենտրոնում լեգիտիմությունն է, ապա կարելի է անել շատ ավելի իմաստալից պնդումներ: Իհարկե, անցման տեսության համար տնտեսական միտումներն իրենք ավելի քիչ կարևոր են, քան այլընտրանքների ընկալումը, համակարգի մերժումն ու բնակչության նշանակալի հատվածների կամ ինստիտուցիոնալ խոշոր գործող անձանց լեգիտիմության մասին կարծրատիպերը: Ինչո՞ւ:

Տեսաբանների և գործիչների համար, ովքեր տնտեսության և վարչակարգի միջև սերտորեն փոխկապակցված հարաբերություններն են դնում փաստարկների հիմքում,

16. Այս փաստարկի սկզբնական դասական ձևակերպումը պատկանում է Սեյմուր Մարտին Լիպսետին՝ «Ժողովրդավարության որոշ սոցիալական նախապայմաններ՝ տնտեսական զարգացում և քաղաքական լեգիտիմություն» (Seymour Martin Lipset, "Some Social Requisites of Democracy: Economic Development and Political Legitimacy", *American Political Science Review* (March 1959): 69-105): Լարրի Դայմոնդն ուսումնասիրել է զարգացում-ժողովրդավարություն բանավեճի վերաբերյալ երեք տասնամյակների ընթացքում կուտակված գրականությունը և եզրակացրել, որ ապացույցները լայնորեն հիմնավորում են Լիպսետի տեսությունը: Տե՛ս Դայմոնդ, «Նոր հայացք տնտեսական զարգացմանն ու ժողովրդավարությանը» (Diamond, "Economic Development and Democracy Reconsidered"), Հարի Մարքս և Լարրի Դայմոնդ, խմբ.: «Ժողովրդավարության վերաքննում» (Gary Marks and Larry Diamond, eds., *Reexamining Democracy* (Newbury Park: Sage, 1992), 93-139):

17. Տնտեսական աճի կամ տնտեսական ճգնաժամի և ոչ ժողովրդավարական վարչակարգից անցման նախաձեռնության միջև հատուկ կապը հանդիսացել է զգալի բանավեճերի առարկա: Խոսե Մարիա Մարավալն իր հայտնի և լավ հետազոտված աշխատության մեջ շատ մանրամասն վերլուծել է այս խնդիրը՝ հատուկ անդրադառնալով Հարավային և Արևելյան Եվրոպային: Կարծում ենք, որ նրա վերլուծությունը զուգամիտում է մեր համառոտ վերլուծության հետ, որը մենք կատարել ենք միմյանցից անկախ: Համապատասխան փաստերի համար ուրախ ենք նրա գիրքն առաջարկելու ընթերցողին: Տե՛ս Խոսե Մարիա Մարավալ (Jose Maria Maravall, *Los resultados de la democracia: Un estudio del sur y el este de Europa* (Madrid: Alianza Editorial, 1995)):

առողջ տնտեսական պայմանները կթվան ցանկացած տիպի վարչակարգի համար բարենպաստ: Մենք կպնդեինք, սակայն, որ այս դատողությունը տեսականորեն և էմպիրիկ կերպով ապացուցելի չէ: Մենք տեսնում ենք հիմնավոր տեսական պատճառներ, թե ինչու կայուն տնտեսական զարգացումը կարող է քայքայել ցանկացած ոչ ժողովրդավարական վարչակարգ: Միաժամանակ, չենք տեսնում ոչ մի հիմնավոր տեսական պատճառ, թե ինչու կայուն տնտեսական զարգացումը կարող է քայքայել որևէ ժողովրդավարական վարչակարգ: Վարչակարգի տիպը կարող է մեծ տարբերություն առաջ բերել: Քաղաքատնտեսության տեսանկյունից մենք բացարձակապես չենք կարող ձևակերպել որևէ ընդունելի դատողություն, որը կունենա հետևյալ տեսքը՝ «տնտեսական տնական բարգավաճման պայմաններում չի լինի շահագրգռվածություն ոչ ժողովրդավարական վարչակարգից ժողովրդավարականի անցման համար»: Դա այդպես է ճիշտ այն պատճառով, որ շատ ոչ ժողովրդավարական վարչակարգեր, հատկապես՝ ավտորիտար վարչակարգեր, հենց սկզբից պաշտպանվում են պետության վերնախավի և ըստ անհրաժեշտության՝ նրա հիմնական սոցիալ-տնտեսական դաշնակիցների կողմից՝ հաշվի առնելով հասարակարգի դիմակայած առանձնահատուկ դժվարությունները (հաճախ՝ տնտեսական): Այսպիսով, երկարատև տնտեսական բարգավաճումը հատկապես ավտորիտար վարչակարգում կարող է քայքայել վարչակարգի՝ բացառիկ հանգամանքների վրա խարսխված արդարացման հիմքը: Երկարատև տնտեսական հաջողությունից կարող է լինել այնպիսի զգացողություն, որ ոչ ժողովրդավարական վարչակարգին հատուկ ճնշիչ ձեռնարկումները այլևս անհրաժեշտ չեն և հավանաբար կարող են թուլացնել նոր տնտեսական բարգավաճման ամբողջությունը:

Երկարատև տնտեսական աճը կարող է նպաստել նաև սոցիալական փոփոխություններին, որոնք բարձրացնում են ճնշման գինը և դրանով իսկ անուղղակիորեն հեշտացնում անցումը ժողովրդավարությանը: Երկարատև տնտեսական աճը սովորաբար նպաստում է միջին դասի զարգացմանը, ավելի կարևոր և անհրաժեշտ հմտություններ ունեցող աշխատուժի զարգացմանը, կրթության զարգացմանը, այլ հասարակությունների հետ ավելի մեծ կապերին՝ հեռուստատեսության, ռադիոյի և ճանապարհորդությունների միջոցով և հնարավոր բողոքների ավելի բազմաբնույթ շարքով: Նույնիսկ գոյություն ունի մի հիմնավոր ապացույց, որը մատնանշում է, որ որևէ տարածքում տարածաշրջանային հարստության ավելացումը մեծացնում է քաղաքացիների ակնկալիքներն այն մասին, որ ոստիկանությունն իրենց պետք է լավ վերաբերվի:<sup>18</sup>

Գործնականում առկա են մի շարք դեպքեր, երբ կայուն բարգավաճումը փոխել է ու-

18. Օրինակ՝ ֆրանկոյական Իսպանիայում յոթ մասնագիտական խմբերին ձեռքի աշխատանք կատարողներից մինչև ազատ մասնագիտություն ունեցողներին, հարց է տրվել, թե արդյոք նրանք ակնկալե՞լ են «հավասար», «ավելի լավ» կամ «ավելի վատ» վերաբերմունք ոստիկանության կողմից, քան մյուս քաղաքացիները: Տվյալները դասակարգվել են՝ ըստ պատասխանողների բնակության վայրի տնտեսական զարգացման մակարդակի: 21 հնարավոր համեմատություններից 19-ում որքան տարածաշրջանը տնտեսապես զարգացած է, այնքան մեծ է ոստիկանության կողմից հավասար վերաբերմունքի արժանանալու ակնկալությունը: *Sté u* Խուան Լինց, «Բնապահպանական վերլուծության և հարցման հետազոտություն» (Juan J. Linz, "Ecological Analysis and Survey Research"), Մատտեյ Դոգան և Շտեյն Բոկկան, խմբ.՝ «Քանակական բնապահպանական վերլուծությունը հասարակագիտության մեջ» (Mattei Dogan and Stein Rokkan, eds., *Quantitative Ecological Analysis in the Social Sciences* (Cambridge: MIT Press, 1969), 91-131, esp. table 1, p. 113):

Ժերի հարաբերակցությունը հոգուտ ժողովրդավարական ուժերի: Ի դեպ, մեր ուսումնասիրության մեջ բերվող երեք օրինակները՝ Չիլիի Պինոչետի օրոք, Բրազիլիան 1970-ական թվականների սկզբին և ֆրանկոյական Իսպանիան իր վերջին քսան տարիների ընթացքում (ինչպես նաև Հարավային Կորեան) ունեցել են աշխարհում գրանցված տնտեսական աճի մի քանի ամենաբարձր մակարդակները: Իսպանիայի զարգացումը նպաստել է ավտորիտար վարչակարգի որոշ հիմնական կողմնակիցների և արդյունաբերական վերնախավի մեջ այն հավատի առաջացմանը, որ իրենց գործերն ապագայում էլ կարող են նույն կերպ լավ ընթանալ ավելի ժողովրդավարական միջավայրում: Ժամանակները փոխվել են, փոխվել է և վարչակարգը:<sup>19</sup> Բրազիլիայում զինվորականության չափավոր ճկուն քաղաքականություն վարող թեր հոչակեց իր ազատականացման ծրագիրը 1973թ. սեպտեմբերին՝ հինգ տարվա աննախադեպ աճից հետո և *մինչև* նավթային ճգնաժամը, արագ բարձրացող տոկոսադրույքները և դրան ուղեկցող պարտքային ճգնաժամը: 1973թ. սեպտեմբերին զինվորականությունն զգաց, որ տնտեսությունը գերազանց վիճակում է, և ոչ մի լուրջ քաղաքական վտանգ չկա: Իրենց իսկ աչքում իրենց խոռվությունն օրինականացնող «հատուկ հանգամանքների» բացակայությամբ նրանք սկսեցին հավատալ, որ շարունակվող ավտորիտար իշխանությունը ոչ միայն անհրաժեշտ չէ, այլ նաև կարող է նպաստել անվտանգության ուժերի ինքնավարությանն ու «Բրազիլիայի արգենտինացմանը»:<sup>20</sup> Չիլիում խոշոր արդյունաբերողներից շատերը, ովքեր կարծում էին, որ Պինոչետը միանգամայն անհրաժեշտ է 1980թ., արդեն 1988թ. սկսեցին մտածել, որ արդար ընտրություններն ավելի քիչ ռիսկ են ներկայացնում տնտեսական մոդելի համար, քան անարդար ընտրություններում Պինոչետին աջակցելը:<sup>21</sup> Բոլոր երեք դեպքերում էլ բարգավաճման քաղաքական տնտեսությունը նպաստել է այլընտրանքային ապագաների մասին նոր պատկերացումների առաջ գալուն և ժողովրդավարական այլընտրանքների նկատմամբ դիմադրության թուլացմանը:

Երբ դիտարկում ենք ժողովրդավարացող վարչակարգերը կամ կայացած ժողովրդավարությունները, արձանագրվում է մեծ տարբերություն այն առումով, որ չկան տեսական պատճառներ կամ էմպիրիկ ապացույցներ՝ հիմնավորելու այն, որ տնտեսական աճը նպաստում է վարչակարգի քայքայմանը: Իհարկե, «մեծացող ակնկալիքների շրջապատույտը» կարող է ժողովրդավարական կառավարությունների առջև դնել նոր պահանջներ, սակայն չի կարող կասկածի տակ առնել դրանց գոյության հիմնավորվածությունը (*raison d'être*): Իհարկե, եթե որևէ վարչակարգ հիմնված է ժողովրդավարական ընթացակարգերի և սոցիալ-տնտեսական արդյունավետության կրկնակի լեգիտիմության վրա, հասարակության որևէ նշանակալից խմբի կողմից բարձրացված վարչակարգի ցանկացած հիմ-

19. Ինչպես Ադոլֆո Սուարեսն է ասել մինչև Իսպանիայի վարչապետ դառնալը՝ «մեր ժողովուրդը, որը նրա (Ֆրանկոյի) կառավարությունից պարզապես հաց էր պահանջում, այսօր պահանջում է որակյալ սպառում, և նույն ձևով, եթե սկզբում կարգուկանոն էր ուզում, այսօր ազատություն է պահանջում՝ քաղաքական միության ազատություն», Էրույթ Կորտեսում, 1976թ. հունիսի 9-ին:

20. Ստեփան, «Ռազմական քաղաքականության վերախմբում» (*Stepan, Rethinking Military Politics*, 32-33):

21. *Տե՛ս* Չիլիում ընդհանուր շահեր ունեցող խոշոր գործարար խմբերից մեկի ղեկավարի հետ հարցազրույցը Ալֆրեդ Ստեփանի «Պինոչետի վերջին օրերը» գրքում (*Alfred Stepan "The last Days of Pinochet?" New York Review of Books* (June 2, 1988): 33):

նարար այլընտրանքի հնարավորություն (հաշվի առնելով «պետությանականության» հետ կապված որևէ խնդրի բացակայությունը) գործնականում չնչին է:

Ծանր տնտեսական խնդիրները տարբեր կերպ են անդրադառնում ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական, հատկապես՝ ավտորիտար, վարչակարգերի վրա: Կան հիմնավոր տեսական պատճառներ, թե ինչու կտրուկ տնտեսական անկումը (օրինակ՝ հինգ տարի շարունակվող բացասական աճը) անբարենպաստ ազդեցություն է ունենում և՛ ժողովրդավարական, և՛ ոչ ժողովրդավարական վարչակարգերի կայունության վրա, սակայն վերջինիս վրա դրա ազդեցությունը կլինի էպայես ավելի մեծ: Ժամանակակից ոչ ժողովրդավարական (հատկապես՝ ավտորիտար) վարչակարգերը հաճախ խիստ կախվածություն ունեն *կատարողականի* նկատմամբ իրենց պահանջներից, սակայն չեն սատարվում ժողովրդավարական կարգավիճակից բխող ընթացակարգային պահանջներով: Տեսությունը, հետևաբար, մեզ տանում է դեպի այն բանի հաստատմանը, որ ժողովրդավարական վարչակարգն ունի կայուն տնտեսական անկումից զերծ մնալու երկու արժեքավոր աղբյուր, որոնք հասու չեն ոչ ժողովրդավարական վարչակարգերին՝ իր ծագման վրա հիմնված լեգիտիմության հավակնությունը և այն հանգամանքը, որ ընտրությունները մշտապես հորիզոնում են և կրողներն են առանց վարչակարգի փոփոխության այլընտրանքային սոցիալ-տնտեսական ծրագրի և այլընտրանքային կառավարություն ստեղծելու հեռանկարի: Դա նշանակում է, որ նոր ժողովրդավարությունների մեծ մասն ունի մոտավորապես ութ տարի շունչ քաշելու ժամանակ՝ մոտավորապես չորս տարի՝ նախնական կառավարության և մոտավորապես չորս տարի՝ այլընտրանքային կառավարության համար:

Այս տեսության վրա հիմնված ենթադրությունը ծանրակշիռ փաստացի հիմնավորում է ստանում Ֆերնանդո Լիմոնցիի և Ադամ Պրժևորսկու հավաքած տվյալներով: 1944թ-ից մինչև 1988թ. ընկած ժամանակահատվածում Հարավային Ամերիկայի մասին իրենց ուսումնասիրության մեջ նրանք պարզել են, որ այն բանի հավանականությունը, թե ցանկացած ոչ ժողովրդավարական վարչակարգ կարող է շարունակել գոյությունը երեք տարի անընդմեջ բացասական աճից հետո, կազմում է 33%, մինչդեռ այն բանի հավանականությունը, որ ժողովրդավարական վարչակարգը կարող է գոյությունը շարունակել երեք տարվա բացասական աճից հետո, 73% է: Ավելի արտահայտիչ է այն, որ նրանց տվյալները ցույց են տալիս, որ *ոչ մի* ոչ ժողովրդավարական վարչակարգ չի պահպանել իր գոյությունը երեք տարուց ավել տևող անընդմեջ բացասական աճից հետո, մինչդեռ այն բանի հավանականությունը, որ ցանկացած ժողովրդավարական վարչակարգ կարող է գոյությունը պահպանել չորս կամ հինգ տարվա անընդմեջ բացասական աճից հետո, համապատասխանաբար եղել է 57 և 50%:<sup>22</sup>

Եկեք վերադառնանք ոչ ժողովրդավարական ու ժողովրդավարական վարչակարգերում տնտեսագիտությանը և *այլընտրանքների* ու *համակարգի մեղադրման* քաղաքականությանը վերաբերող մեր փաստարկին: Եթե քաղաքական իրավիճակն այնպիսին է, որ չկա հնարավոր այլընտրանքի մասին հստակ պատկերացում, ոչ ժողովրդավարական

22. Ֆերնանդո Լիմոնցիի և Ադամ Պրժևորսկի «ժողովրդավարությունը և զարգացումը Հարավային Ամերիկայում, 1945-1988թթ.» (Fernando Limongi and Adam Przeworski, "Democracy and Development in South America, 1945-1988" (University of Chicago, October 27, 1993, unpublished manuscript)):

վարչակարգը կարող է հաճախ շարունակել իշխել ճնշման միջոցով: Սակայն երբ հավատն առ այն, որ հնարավոր են (ինչ պես նաև՝ նախընտրելի) ուրիշ այլընտրանքներ, այդ հավատն աճում է, իսկ լեգիտիմության և ճնշման քաղաքական տնտեսությունը՝ կտրուկ փոխվում: Եթե ոչ ժողովրդավարական վարչակարգի ճնշելու կարողությունը նվազում է (ասենք՝ ներքին տարաձայնությունների կամ արտաքին կենսական երաշխիքները հետ վերցվելու պատճառով), ապա երկարատև լճացման քաղաքատնտեսությունը կարող է նպաստել վարչակարգի քայքայմանը: Տնտեսության մեջ փոփոխությունները չէ, որ սկիզբ են տալիս վարչակարգի քայքայմանը, այլ քաղաքականության փոփոխությունները, այսինքն, թույլ տնտեսության *հետևանքներին* հաճախ պետք է միջամտել քաղաքական փոփոխության միջոցով:

Համակարգի մեղադրման հարցը նույնպես խիստ կարևոր է ժողովրդավարությունների ճակատագրի համար: Ինչպես մեկ այլ տեղում քննարկել ենք, միջպատերազմական Եվրոպայում տնտեսական ճգնաժամը նույնքան լարված էր Նիդեռլանդների և Նորվեգիայի պես երկրներում (որոնք չփլուզվեցին), որքան Գերմանիայում և Ավստրիայում (որոնք փլուզվեցին): Իսկապես, 30 000 հոլանդացի բանվորներ 1936թ. գնացին աշխատելու Գերմանիա, որովհետև Հոլանդիայի տնտեսությունը գտնվում էր ավելի վատ վիճակում, քան Գերմանիայի տնտեսությունը: Գերմանիայում և Ավստրիայում տնտեսության ճգնաժամը քաղաքական համակարգի ճգնաժամի փոխակերպեց այն հանգամանքը, որ աջ և ձախ ուժերն խմբերն իրենց մտքում ունեին վարչակարգի վերաբերյալ այլընտրանքներ և, հետևաբար, գրոհեցին վարչակարգը: Քաղաքական շարժառիթներով վարչակարգին մեղադրելն ավելի մեծ պատճառ դարձավ Գերմանիայի ու Ավստրիայի փլուզման, քան ինքնին տնտեսական ճգնաժամը:<sup>23</sup>

Ժողովրդավարությունների համար գլխավոր հարցն այն է, թե արդյոք իրենց քաղաքացիները հավատո՞ւմ են, որ որոշակի հանգամանքներում ժողովրդավարական կառավարությունը կատարում է վստահություն ներշնչող աշխատանք՝ փորձելով հաղթահարել տնտեսական խնդիրները: Կարևոր է շեշտել այն, որ լեգիտիմության քաղաքական տնտեսությունը ժողովրդավարության կայացման համար առաջադրում է դաժան և հավանաբար անլուծելի մարտահրավերներ այն դեպքերում, երբ ժողովրդավարական հա-

23. Համապատասխան տվյալներով այս փաստարկն ավելի մանրամասն հիմնավորելու համար տե՛ս Խուան Լինց և Ալֆրեդ Ստեփան, «Ժողովրդավարության կայացման կամ քայքայման քաղաքական եղանակը. եվրոպական և հարավամերիկյան համեմատություններ» (Juan J. Linz and Alfred Stepan, "Political Crafting of Democratic Consolidation or Destruction: European and South American Comparisons"), Ռոբերտ Պաստորի խմբ.՝ «Ժողովրդավարությունն Ամերիկաներում՝ կանգնեցնել ճոճանակը» (Robert A. Pastor, ed., *Democracy in the Americas: Stopping the Pendulum* (New York: Holmes and Meyer, 1989), 41-61): Մենք պարտական ենք էբարտ Ցիմերմանին միջպատերազմական Եվրոպայի մասին իր առաջին ուսումնասիրությունների համար: Տե՛ս Ցիմերման, «Կառավարության կայունությունը վեց եվրոպական երկրներում 1930թ. համաշխարհային ճգնաժամի ընթացքում՝ որոշ նախնական դիտարկումներ» (Zimmerman, "Government Stability in Six European Countries during the World Economic Crisis of the 1930s: Some Preliminary Considerations", *European Journal of Political Research* 15, no. 1 (1987): 23-52), Ցիմերման, «Տնտեսական և քաղաքական արձագանքները 1930-ական թվականների համաշխարհային տնտեսական ճգնաժամին. վեց եվրոպական երկրներ» (Zimmerman, "Economic and Political Reactions to the World Economic Crises of the 1930s: Six European Countries"), նյութը ներկայացվել է Միջինարևմտյան քաղաքական գիտության միության համաձայնագրի (Mid-West Political Science Association Convention, Chicago, April 10-12, 1986) համար, Չիկագո, 10-12 ապրիլի, 1986թ.:

մակարգն *ինքը* համարվում է անկարող տնտեսական ճգնաժամը հաղթահարելու ծրագիր մշակելու գործում:

Ամփոփելով ի՞նչ կարող ենք ասել և ի՞նչ չենք կարող ասել անցման տեսության և լեզվի տիրույթի քաղաքատնտեսության մասին: Տեսությունը և Լիմոնժիի ու Պրժմոսկու տվյալները ցույց են տալիս, որ բացասական աճի անընդմեջ տարիները նվազեցնում են ցանկացած վարչակարգի՝ գոյությունը պահպանելու հնարավորությունը, լինի դա ոչ ժողովրդավարական թե՛ ժողովրդավարական: Հետևաբար, դրական աճ ապրող ցանկացած երկիր այլ հավասար պարագաներում ունի ժողովրդավարության կայացման ավելի մեծ հնարավորություն, քան բացասական աճ գրանցող որևէ երկիր: Դրա հետ մեկտեղ տեսությունն ու տվյալները նաև ցույց են տալիս, որ ցանկացած ժողովրդավարական վարչակարգ ավելի լավ է պաշտպանված տնտեսական դժվարություններից, քան որևէ ոչ ժողովրդավարական վարչակարգ: Այն հարցը, թե արդյո՞ք հաջողության ձգտող ցանկացած ժողովրդավարություն կարո՞ղ է դիմանալ տնտեսական դժվարություններին, ինչպես ցույց տվեց Գերմանիայի և Հոլանդիայի համեմատությունը, մեծ չափով կախված է ոչ տնտեսական համակարգի քննադատության աստիճանից և ուրիշ քաղաքական այլընտրանքների ցանկալիության մասին զանգվածների ու վերնախավի մասին պատկերացումից: Հարցը, հետևաբար, վերաբերում է հարաբերակցություններին: Տեսականորեն հնարավոր է, և իսկապես պատահել է, որ որևէ նոր ժողովրդավարացող վարչակարգում ժողովրդավարության սոցիալ-տնտեսական արդյունավետության մասին քաղաքացիների պատկերացումները հոռետեսական լինեն, և *միևնույն ժամանակ* մեծանա նրանց լավատեսությունն առ այն, որ «ժողովրդավարությունը հնարավոր լավագույն քաղաքական համակարգն է մեր երկրի նման երկրի համար»:<sup>24</sup>

Սակայն այն դեպքերում, երբ քաղաքացիներն սկսում են հավատալ, որ ժողովրդավարական համակարգն ինքն է բարդացնում տնտեսական խնդիրը կամ անկարող է սահմանել և իրականացնել տնտեսական բարեփոխումների վստահելի ռազմավարություն, համակարգին մեղադրելը մեծապես խորացնում է տնտեսական ծանր իրադրության քաղաքական հետևանքները: Եվ որ ավելի կարևոր է, տնտեսական ճգնաժամը միտում ունի տանելու դեպի ժողովրդավարության փլուզման այն դեպքերում, երբ կառավարությունից դուրս կամ ավելի ճակատագրական դեպքերում՝ կառավարության ներսում ազդեցիկ խմբերն ավելի ու ավելի շատ են պնդում, որ իշխանության ոչ ժողովրդավարական այլընտրանքները տնտեսական ճգնաժամի միակ լուծումն են:

Այնպիսի իրավիճակում, երբ ճգնաժամը կրում է հարատև բնույթ կառավարության գոնե մեկ ժողովրդավարական փոփոխությունից հետո, և երբ կարելի է բերել հիմնավոր

24. Լինցի և Ստեփանի «ժողովրդավարության կայացում քաղաքական եղանակով կամ քայքայում» (Linz and Stepan, "Political Crafting of Democratic Consolidation or Destruction," 44) նշվում է, որ Բուպանիայում ավելացող գործազրկության, գների սղաճի, ռեցեսիայի և ահաբեկչության մի ժամանակաշրջանում (1978-1981թթ.) համազգային հարցման արդյունքներով՝ քաղաքացիների հավատն առ ժողովրդավարության արդյունավետությունը նվազել էր 25%-ային կետով, մինչդեռ հավատն առ այն, որ ժողովրդավարությունը լավագույն քաղաքական համակարգն է մի այնպիսի երկրի համար, ինչպիսին Իսպանիան է, նույն ժամանակահատվածում բարձրացել էր 5%-ային կետով: Գլխավոր եզրակացությունն այն է, որ չնայած տնտեսական խնդիրներին, քաղաքացիները չէին էլ կարծում, որ նախընտրելի է որևէ ուրիշ այլընտրանքային քաղաքական համակարգ:

փաստարկ այն մասին, որ ժողովրդավարական քաղաքական գործիչները անկարող են կամ չեն կամենում լուծումներ փնտրել, կամ անգամ բարդացնում են խնդիրներն այնպիսի գործողություններով, ինչպիսիք են՝ պառակտումներն ու կոռուպցիան, գլխավոր գործող անձինք փնտրում են այլընտրանքներ: Գլխավոր գործող անձանց՝ այլընտրանքների հետ ունեցած նախորդ փորձը կարող է լինել նույն ձևով կամ ավելի տհաճ: Նման հանգամանքներում այդ գործող անձանցից շատերը կարող են հաշտվել հետ մնացող ժողովրդավարության հետ: Նման հաշտվողականությունը գուցե չի կանխում ճգնաժամերը, անկարգություններն ու տեղական անհաջող խռովությունները, սակայն չի կարող հանգեցնել վարչակարգի փոփոխության: Մակայն այն, անկասկած, դժվարացնում է կայացման գործը և կարող է անգամ ապակայունացնել ցանկացած ժողովրդավարություն:

### ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ժողովրդավարությանն անցման ու կայացման մի անտեսված կողմ վերաբերում է այն համատեքստերի համեմատական վերլուծությանը, որտեղ սահմանադրական բանաձևերն ընդունվում կամ պահպանվում են: Առանց բոլոր հնարավոր տարբերակների ուսումնասիրության փորձ կատարելու թույլ տվեք պարզապես նշել սահմանադրությունների մշակման վեց շատ տարբեր հնարավոր համատեքստեր և/կամ բանաձևեր ու նշել, թե դրանք ինչ խնդիրներ են հարուցում ժողովրդավարությանն անցման ու կայացման համար: Սկսելու ենք այն համատեքստերից ու բանաձևերից, որոնք որևէ պետությունում ժողովրդավարության կայացման համար ներկայացնում են առավել սահմանափակող պայմաններ, և հասնենք նրանց, որոնք ունեն են ամենանվազ սահմանափակող պայմանները:<sup>25</sup>

1. Որևե ոչ ժողովրդավարական վարչակարգի կողմից ստեղծված սահմանադրության պահպանում՝ «պահուստային ոլորտներով» և փոփոխման դժվարին ընթացակարգերով: Այս սահմանափակող պայմանները կարող են լինել այն գինը, որ հեռացող ոչ ժողովր-

25. Սահմանադրությունների և ժողովրդավարության մասին որոշ անփոխարինելի աղբյուրներ են՝ Ջոն Էլստերի և Ռուս Սլեգստեդի խմբ.՝ «Սահմանադրականություն և ժողովրդավարություն» (Jon Elster and Rune Slagstad, eds., *Constitutionalism and Democracy* (Cambridge: Cambridge University Press, 1988)), Դուգլաս Գրինբերգ, Ստենլի Կաց, Մելանի Բեթ Օլիվեյրա և Սթիվեն Ուիթլի խմբ.՝ «Սահմանադրականություն և ժողովրդավարություն. անցումները ժամանակակից աշխարհում» (Douglas Greenberg, Stanley N. Katz, Melanie Beth Oliveira, and Steven C. Wheatly, eds., *Constitutionalism and Democracy: Transitions in the Contemporary World* (New York: Oxford University Press, 1993)), Բրյուս Ակերման, «Ազատական հեղափոխության ապագան» (Bruce Ackerman, *The Future of Liberal Revolution* (New Haven: Yale University Press, 1992)), Դիկ Հովարդ, խմբ.՝ «Սահմանադրության մշակումն Արևելյան Եվրոպայում» (A. E. Dick Howard, ed., *Constitution Making in Eastern Europe* (Washington: Woodrow Wilson Center Press, 1993)), «Արևելաեվրոպական սահմանադրական ընկույն» (*East European Constitutional Review*, published quarterly since 1992 by the Center for the Study of Constitutionalism in Eastern Europe at the University of Chicago Law School in partnership with the Central European University) որը 1992-ից տարին չորս անգամ հրատարակվում է Չիկագոյի համալսարանի իրավաբանական դպրոցի Արևելյան Եվրոպայում սահմանադրականության ուսումնասիրման կենտրոնի կողմից՝ Կենտրոնական եվրոպական համալսարանի հետ համագործակցությամբ:



դավարական վարչակարգը կկարողանա կորզել պետական ապարատի պաշտոնական վերահսկողությունը զիջելու դիմաց: Սակայն եթե այդ սահմանադրությունը *դե յուրե* սրբության պես պահում է հեռացող ոչ ժողովրդավարական իշխանությունը կրողների կողմից պարտադրված ոչ ժողովրդավարական «պահուստային ոլորտները», ապա անցումը, ըստ մեր սահմանման, չի կարող ավարտվել, քանի դեռ այդ ուժերը չեն վերացվել: Եթե այդ սահմանադրությունն ունի փոփոխություններ կատարելու շատ դժվարին ընթացակարգեր, ապա դա լրացուցիչ կերպով կբարդացնի ժողովրդավարությանն անցման ու կայացման գործընթացը: Գրքում Զիլիի օրինակն ամենաակնբախն է:

2. «Թղթե» սահմանադրության պահպանում, որն ունի անսպասելիորեն ապակայունացնող և կաթվածահարող հետևանքներ ավելի մրցակցային ընտրությունների պայմաններում կիրառելու դեպքում: Որոշ ոչ ժողովրդավարական սահմանադրություններ կարող են սրբությամբ պահել որոշում-կանոնների, ընթացակարգերի ու իրավունքների մի չափազանց բարդ ամբողջություն, որը ոչ մի ազդեցություն չի ունենա ոչ ժողովրդավարական վարչակարգի աշխատանքի վրա, որովհետև այդ սահմանադրությունը ֆիկցիա է: Սակայն ավելի մրցակցային ընտրությունների պայմաններում այդ սահմանադրությունը կարող է սկսել ապրել իր սեփական կյանքով, որը գրեթե անհնար կդարձնի ժողովրդավարորեն պարտադիր որոշումների կայացումը: Նման դեպքերում սահմանադրությունը կարող է նպաստել պետության կործանմանը և պետք է փոխվի շատ արագ, նախքան դրա արատավոր հետևանքները կունենան կաթվածահարող ազդեցություն: Այդ տիպի սահմանադրության առավել նշանակալի օրինակներ կան խորհրդային տիպի դաշնային սահմանադրություններում՝ նախկին ԽՍՀՄ-ում, Հարավսլավիայում և Չեխոսլովակիայում:

3. Ժամանակավոր կառավարության կողմից որոշ *դե յուրե* ոչ ժողովրդավարական լիազորություններ պարունակող սահմանադրության ստեղծում: Անգամ եթե հին ոչ ժողովրդավարական վարչակարգը ոչնչացել է, և շատ նոր մոտեցումներ են որդեգրվել, ժողովրդավարությանն անցումն ինքը չի կարող ավարտվել, քանի դեռ ժամանակավոր կառավարության կողմից մշակված սահմանադրության ոչ ժողովրդավարական բաղադրիչները չեն վերացվել, ինչպես կտեսնենք Պորտուգալիայի դեպքում: Անգամ եթե այդ ոչ ժողովրդավարական դրույթները վերացվեն, սահմանադրության սկիզբ առնելը ժամանակավոր կառավարությունից կարող է վնասել ժողովրդավարության կայացմանն իր անհարիրության կամ հասարակության կողմից վատ ընդունելության պատճառով:

4. Ոչ ժողովրդավարական ինստիտուտների և ուժերի *դե ֆակտո* իշխանությունն արտացոլող մեծապես սահմանափակող հանգամանքների ներքո մշակված սահմանադրության կիրառում: Նման սահմանադրությունը կարող է պաշտոնապես լինել ժողովրդավարական և դրանով իսկ համապատասխանել ավարտին մոտեցող անցմանը, սակայն ժողովրդավարության կայացումը կարող է դժվարանալ, որովհետև մի սահմանափակ սահմանադիր ժողով, հավատարմ, որ ուրիշ ինստիտուցիոնալ ձևեր ավելի են հարմար ժողովրդավարական քաղաքականության մշակման ու կայացման համար, կարող է դրանք *դե ֆակտո* ընտրելու հնարավորություն չունենալ: Որոշ չափով նման օրինակ է Բրազիլիան:

5. Որևէ նախկին ժողովրդավարական սահմանադրության վերականգնում: Այս բանաձևը կանխում է սահմանադրական այլընտրանքների մասին ցանկացած պոտենցիալ կերպով պառակտիչ բանավեճ և հաճախ ընտրվում է վերածափովրդավարացող հասա-

րակարգերի կողմից արագության, հակամարտություններից խուսափելու և պատմական լեգիտիմության որոշ ժառանգությունները ոգեկոչելու ցանկության պատճառով: Պետք է նշել, սակայն, որ պարզ վերականգնումը ժողովրդավարության կայացման համար առաջադրում է երկու հավանական խնդիր: Առաջին. երբ հասարակարգը մեծ փոփոխությունների է ենթարկվել ավտորիտար «ընդմիջման» ընթացքում, հնարավոր է, որ սահմանադրության մի նոր վերածնունդ ըստ էության ավելի հարմար լինի ժողովրդավարության կայացման համար: Երկրորդ. վերականգնումը նաև ենթադրում է, որ հին սահմանադրության քաղաքական ընթացակարգերն ու ինստիտուտներն ընդհանրապես ոչ մի դեր չեն խաղացել ժողովրդավարության անկման գործում: Եթե հին ժողովրդավարական կառուցվածքն իրականում նպաստել է ժողովրդավարության անկմանը, ապա վերականգնումը կանխում է պատմական հնարավորությունը՝ կազմավորելու այլ ընթացակարգեր ու խորհրդանիշեր ունեցող մի նոր և կատարելագործված կառուցվածք: Այս տեսանկյունից վերլուծության արժանի օրինակներ են Ուրուգվայն ու Արգենտինան:

6. Սահմանադրության ազատ և փոխհամաձայնեցված մշակում: Սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ ժողովրդավարորեն ընտրված ներկայացուցիչները հավաքվում են՝ ազատորեն մտածելու և կռելու նոր սահմանադրական կառուցվածքը, որը նրանք համարում են ամենաճիշտն իրենց հասարակարգում ժողովրդավարության կայացման համար: Լավագույն տարբերակն այն է, որ սահմանադրական ժողովը պետք է խուսափի կուսակցական սահմանադրությունից, որը հաստատվել է որևէ գուտ «ժամանակավոր մեծամասնության» կողմից՝ հանգեցնելով այն բանին, որ խոշոր փոքրամասնությունը օրակարգ է մտցնում սահմանադրական փոփոխությունների հարց՝ դրանով իսկ ավելի դժվարացնելով ժողովրդավարական ինստիտուտների կայացումը: Օպտիմալ բանաձևն այն է, երբ պոտենցիալ կերպով մեծ տարածայնություններ ու լարվածություն պարունակող հարցերի շուրջ որոշումներ ընդունվում են ոչ թե մեծամասնական, այլ փոխհամաձայնեցված ձևով, և որ սահմանադիր ժողովը ձեռք է բերում հետագա լեգիտիմություն՝ հավանություն ստանալով հանրաքվեի ժամանակ, որն էլ սահմանում է այն ժողովրդավարական համատեքստը, որում տեղի են ունենում հետագա փոփոխությունները, ինչպես օրինակ՝ իշխանության փոխանցումը (եթե դրանք պետք է հաշվի առնվեն):<sup>26</sup> Սույն գրքում միայն Իսպանիան է համապատասխանում այս նկարագրությանը:

Գրքի հաջորդ բաժիններում քննվում է այն, թե ինչպես է մեր առանձնացրած դաշտերի, այսինքն՝ քաղաքական հասարակության, օրենքի գերակայության և տնտեսական հասարակության և մեր փոփոխականների (վարչակարգի տիպը, պետութենականությունը և այս գլխում նկարագրված փոփոխականները) փոխազդեցությունն ազդում ժողովրդավարության անցման գործընթացների և ժողովրդավարության կայացման վրա աշխարհի երեք տարբեր սոցիալ-քաղաքական (և աշխարհագրական) տարածաշրջաններում՝ Հարավային Եվրոպայում, Լատինական Ամերիկայի Հարավային Կոնի երկրներում և հետկոմունիստական Եվրոպայում:

26. Համագրային բանավեճերի արդյունքում մշակված և հաստատված փոխհամաձայնական սահմանադրությունների օգտին փաստարկ, տե՛ս Ակերման, «Ազատական հեղափոխության ապագան» (Ackerman, *The Future of Liberal Revolution*, 46-68):



## Մաս II

Հարավային Եվրոպա.  
ավարտված կայացումներ

Չնայած այն կարծիքին ենք, որ ժողովրդավարությանն անցումն ու ժողովրդավարության կայացումը սերտորեն փոխկապակցված գործընթացներ են, այնուամենայնիվ, կարծում ենք, որ հասարակագետները կարող են և պետք է ձգտեն լինել որքան հնարավոր է ճշգրիտ՝ հստակ ասելով, թե որն է անցում արդյոք ավարտված է, թե՞ ոչ, և որն է կոնկրետ քաղաքական համակարգ արդյոք կայացած ժողովրդավարություն է, թե՞ ոչ: 2-րդ մասում հիմնավորելու ենք այն, որ Իսպանիան, Պորտուգալիան և Հունաստանը ոչ միայն ավարտել են ժողովրդավարությանն անցումը, այլ նաև դարձել են կայացած ժողովրդավարություններ: Քանի որ կատարվել են շատ ուսումնասիրություններ Հարավային Եվրոպայում անցումների վերաբերյալ, սակայն համեմատաբար քիչ՝ ինքնին կայացման վերաբերյալ, Հարավային Եվրոպայի երկրների վերաբերյալ մեր ուսումնասիրություններում հատուկ ուշադրություն ենք դարձնում այն բանին, թե ինչպես անկայուն և անգամ դժվարին անցումները վերածվել են կայացած ժողովրդավարությունների:

## «Դաշնությունահենք բարեփոխում, դաշնությունահենք բաժանում». Իսպանիայի հարացուցային օրինակը

ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ շրջաններում գալիս են հարաճուն մի փոխհամաձայնության, որ անցումն Իսպանիայում շատ իմաստներով դաշնությունահենք անցում է և ժողովրդավարության արագ կայացումն ուսումնասիրելու հարացուցային օրինակ, գրեթե այնպես, ինչպես Վայմարյան Հանրապետության օրինակը դարձել է հարացուցային ժողովրդավարության անկումն ուսումնասիրելու համար:<sup>1</sup> Մի շարք գործոններ նպաստում են

1. Իսպանիայում անցման վերաբերյալ մատենագիտությունն այս գրքում դիտարկվող բոլոր օրինակներից ամենաընդարձակն է: Հիմնական աղբյուր է Խոսե Ֆելիք Տեզանոսի (Jose Felix Tezanos), Ռամոն Կոտարելոյի (Ramon Cotarelo) և Անդրես դե Բլասի (Andrés de Blas) խմբ.՝ *La transición democrática española* (Madrid: Sistema, 1989): Այդ հատորում ներառված են իսպանացի հասարակագետների հայտնի հոդվածներ, շատ ավարտուն մատենագիտություն, ակնարկ անցման տարբեր վերլուծությունների վերաբերյալ և գործընթացի ժամանակագրությունը: *Sté u ívasi* «Միստեմայի» հատուկ համարը, էջ 68-69 (1985թ. նոյեմբեր), որը ներառում է մատենագիտական ակնարկ, մի շարք հայտնի հոդվածներ և անցման գործընթացի վերաբերյալ տեսակետների մասին կազմված հարցաթերթիկին քաղաքագետների ու մտավորականների կողմից տրված պատասխաններ: Հոդվածների մի անփոխարինելի ընտրանի կա Ռամոն Կոտարելոյի (Ramon Cotarelo) խմբ.՝ *Transición política y consolidación democrática: España (1975-1980)* (Madrid: Centro de Investigaciones Sociológicas, 1992): Այլ արժեքավոր հարցազրույցներ, տե՛ս Խոսե Մարիա Մարավալ և Խուլիան Սանտամարիա, «Քաղաքական փոփոխությունն Իսպանիայում ու ժողովրդավարության հեռանկարները» (Jose Maria Maravall and Julian Santamaria, "Political Change in Spain and the Prospects for Democracy"), Գիյերմո Օ'Դոննելի, Ֆիլիպ Շմիտթերի և Լոուրենս Ուայթհեդի խմբ.՝ «Անցում ավտորիտար իշխանությունից. Հարավային Եվրոպա» (Guillermo O'Donnell, Philippe C. Schmitter and Laurence Whitehead, eds., *Transitions from Authoritarian Rule: Southern Europe* (Baltimore: Johns Hopkins University Press, 1980), 70-108), Խոսե Մարիա Մարավալ *La política de la transición 1975-80* (Madrid: Taurus, 1981), որը կա անգլերեն թարգմանությամբ՝ վերնագրված «Ժողովրդավարության անցումն Իսպանիայում» (*The Transition to Democracy in Spain* (London: Croom Helm, 1982)), Կարլոս Հինեուս (Carlos Huneeus), *La Union de Centro Democrático y la transición a la democracia en España* (Madrid: Centro de Investigaciones Sociológicas-Siglo XXI de España, 1985) և Դոնալդ Շեր, «Իսպանիայում ժողովրդավարության իրականացումը» (Donald Share, *The Making of Spanish Democracy* (Westport, Conn.: Praeger, 1980)): Անցման անմիջապես նախորդող ու հաջորդող ժամանակահատվածների լավ վավերագրված ուսումնասիրություն, որը հատուկ ուշադրության է առնում այն հարցը, թե ինչու Ֆրանկոյի վարչակարգի ուշ շրջանում գլխավոր ակտիվիստները հանգեցին ժողովրդավարության ընդունմանը, տե՛ս Չարլզ Փաուել, «Բարեփոխում, թե՛ բաժանում Իսպանիայում ժողովրդավարության անցման ժամանակ» (Charles T. Powell, "Reform versus "Ruptura" in Spain's Transition to Democracy" (Ph.D. diss., Faculty of Modern History, Oxford University, 1989)): Կուսակցությունների ու ընտրությունների մասին տե՛ս Ռիչարդ Գյունտերի, Ջակոմո Սանիի և Գոլդի Շաբադի խմբ.՝ «Իսպանիան Ֆրանկոյից հետո՝ մրցակցային կուսակցական համակարգի ստեղծումը» (Richard Gunther, Giacomo Sani, and Goldie Shabad,

Իսպանիայի հատուկ (եթե ոչ իրականում միշտ հարացուցային) կարգավիճակին անցումներին վերաբերող գրականության մեջ: Ամենագլխավորն այն փաստն է, որ Իսպանիան առաջինն էր մի շրջափուլում, որը Մեմյուել Հանթինգտոնն անվանում է ժողովրդավարության անցումների «երրորդ ակիբ» և, հետևաբար, իր ազդեցությունն է թողել այն երկրների մտածելակերպի վրա, որոնք հետագայում լուծելու էին համանման դժվարին խնդիրներ: Դա նաև, ի տարբերություն շատ անցումների, այնպիսի անցում էր, որտեղ ավտորիտար վարչակարգը պատերազմում չէր կրել կամ գրեթե չէր կրել պարտություն, ինչպես Պորտուգալիայի կամ Հունաստանի դեպքերում: Նմանապես, դրա ղեկավարները չէին պայքարում խոր տնտեսական ճգնաժամի դեմ, ինչպես Լատինական Ամերիկայում կամ Արևելյան Եվրոպայի ու Խորհրդային Միության կոմունիստական երկրներում: Դա ոչ էլ այնպիսի դեպք էր, երբ որևէ արտաքին գործոն, ինչպես օրինակ՝ որևէ գերիշխող ուժի կողմից աջակցության դադարեցումը, ազդել էր ղեկավարների վրա: Ավելի ստույգ՝ դա այնպիսի դեպք էր, երբ իշխանության գլուխ կանգնածները կարծում էին, որ իրենք, հաշվի առնելով արևմտաեվրոպական համատեքստը, չեն կարող պահել իշխանությունն առանց չափազանց ուժեղ ճնշման, մինչդեռ վարչակարգին մարտահրավեր նետածները գոնե անմիջապես չկարողացան հավաքել այնքան ուժ, որ կարողանային տապալել այն՝ հատկապես հաշվի առնելով զինված ուժերի հավատարմությունը վարչակարգին:<sup>2</sup> Այս իմաստով Իսպանիայում տեղի ունեցածը «վարչակարգի նախաձեռնած անցում» էր, չնայած այն արվեց հասարակության ճնշման տակ:

Իսպանիայում ժողովրդավարության անցման շատ դիտորդների համար հիացմունքի մեկ այլ պատճառ է եղել նաև այն, որ օտարների աչքում Իսպանիան ներկայացել է որպես մեծապես բախումնային ու պոտենցիալ բռնի հասարակություն քաղաքացիական պատերազմ ժառանգելու պատճառով: Սակայն օտարի տեսակետը չի համապատասխանում 1970-ական թվականների իսպանական հասարակության մասին եղած փաստերին: Ընդհակառակը, անցումից առաջ քաղաքացիական հասարակության «մշակութային աշ-

---

eds., *Spain after Franco: The Making of a Competitive Party System* (Los Angeles: University of California Press, 1988): Աշխատավորների դերի մասին տե՛ս Ռոբերտ Ֆիշման, «Աշխատավորների դասակարգի կազմակերպումը և վերադարձ ժողովրդավարությանն Իսպանիայում» (Robert Fishman, *Working Class Organization and the Return to Democracy in Spain* (Ithaca: Cornell University Press, 1990)): Անցման ժամանակ իսպանացիների քաղաքական վերաբերմունքների և առաջին ընտրությունների մասին հիմնական աղբյուր է Խուան Լինզ (Juan J. Linz), Ֆրանցիսկո Անդրես Օրիզո (Francisco Andres Orizo), Մանուել Գոմես-Ռեյնո (Manuel Gomez-Reino) և Դարիո Վիլա (Dario Vila), *Informe sociologico sobre el cambio politico en España 1975-1981* (Madrid: Fundacion FOESSA, Euramerica, 1982):

2. Ֆրանկոյի մահվանից տասը տարի հետո հասարակական կարծիքի վերաբերյալ մի հարցման ժամանակ գրանցվեց փակուղու առջև գտնվելու այդ զգացումը: Մի կողմից՝ հարցման եկթարկվածների միայն 13%-ն էր կարծում, որ Ֆրանկոյի մահվանից հետո վարչակարգն առանց փոփոխության կարող էր շարունակել գործել: Մյուս կողմից՝ հարցման եկթարկվածների միայն 18%-ն էր ասել, որ «ընդդիմադիր խմբերը շատ ուժեղ էին և կարող էին տապալել վարչակարգը»: *Sté u Actitudes y opiniones de los españoles ante la constitución y las instituciones democráticas* (Madrid: Centro de Investigaciones Sociológicas, 1985), էջ 105: 1969-75թթ. ժամանակահատվածում վարչակարգի ուժերի փոփոխվող հաշվարկների մասին տե՛ս Փաուել, «Բարեփոխում, թե՞ բաժանում» (Powell, "Reform versus Ruptura", 15-54): Նույն ժամանակահատվածում զինվորականության դերի մի փայլուն վերլուծություն, տե՛ս Ֆերնանդո Ռոդրիգո Ռոդրիգես, *El camino hacia la democracia: Militares y política en la transición española* (Ph.D diss., Facultad de Ciencias Políticas y Sociológicas, Universidad Complutense, 1989), էջ 21-72:

խատանքի», իսկ անցման ժամանակ քաղաքացիական հասարակության ու քաղաքական հասարակության գրեթե բոլոր տարրերի կողմից այդ մշակութային աշխատանքը շարունակելու շնորհիվ Իսպանիան քաղաքացիական պատերազմի դասերը փոխակերպել-դարձրել էր դրական տարր, որն օժանդակեց անցմանը: Տարբերությունը 1940-ական թվականների խորվաթական-սերբական քաղաքացիական պատերազմների պատմական նշանակությունից ավելի սուր լինել չէր կարող:<sup>3</sup> Դրան պետք է ավելացնել և այն, որ Իսպանիան ժողովրդավարության անցման փորձի վերաբերյալ մեր բերած օրինակներից առաջինն է, որտեղ բազմալեզու և բազմազգ պետության խնդիրները սաստկացել էին անցման գործընթացի նախաձեռնմանը զուգընթաց:

Մեկ այլ հանգամանք, որ Իսպանիայի օրինակը դարձնում է առանձնապես հետաքրքիր, այն է, որ ավտորիտար վարչակարգը տևել էր երեսունվեց տարի ու ստեղծել էր մի բարդ ինստիտուցիոնալ կառուցվածք: Հնարավոր չէր օգտագործել գոյություն ունեցող ինստիտուտները՝ դրանց տալով ժողովրդավարական բովանդակություն, կամ ձեռնամուխ լինել նախաբնապետական ժողովրդավարական ինստիտուտների վերականգնմանը, ինչպես որոշ լատինաամերիկյան երկրների դեպքում: Եվ ի վերջո, առկա էր անցումն ակնհայտորեն բարդացնող մի բացառիկ գործոն, որն էր՝ Ֆրանկոյի կողմից այնպիսի միապետության հաստատումը, որն ուներ թույլ պատմական լեգիտիմություն և կարող էր հեշտությամբ վիճարկվել ժողովրդավարների կողմից: Այսօր թագավորի մասին հաճախ

3. Ինչպես Վիկտոր Պերես-Դիասն է հրաշալի հիմնավորում, Իսպանիայի նոր ժողովրդավարական քաղաքական մշակույթը «որոշ չափով կշռադատված ինստիտուցիոնալ ու մշակութային կառույց է... Այս ինստիտուցիոնալ քայլին զգալիորեն նպաստել է կոլեկտիվ մշակութային ջանքը՝ մասամբ գիտակցաբար, մասամբ՝ ենթագիտակցաբար... Մեր միասնական հիշողության մեջ այդ փորձառությունն ի մի բերելով՝ տեսնում ենք մի վճռորոշ նշանակություն ունեցող փորձ, որը ձախողվել էր՝ մեր II Հանրապետությունը և 1936-1939թթ. քաղաքացիական պատերազմը... Այդ ողբերգական պատմության բարդական նշանակությունը հետևյալն էր. մեղքի ու պատասխանատվության բաժինը քիչ թե շատ հավասարապես էր բաշխված մրցակիցների միջև, քանի որ նրանք բոլորն էլ մեղավոր էին»: Տե՛ս Պերես-Դիաս, «Ժողովրդավարական Իսպանիայի առաջացումն ու ժողովրդավարական ավանդույթի «հայտնագործումը» (Perez-Diaz, *Emergence of Democratic Spain and the 'Invention' of a Democratic Tradition* (Madrid: Instituto Juan March, June 1990, Working Paper #1), quotes from 19, 20, 21, 23), մեջբերումները՝ էջ 19, 20, 21, 23: *Sté u' suis* նրա մագիստրոսական թեզը «Քաղաքացիական հասարակության վերադարձը. ժողովրդավարական Իսպանիայի առաջացումը» (*The Return of Civil Society: The Emergence of Democratic Spain* (Cambridge, Mass.: Harvard University Press, 1993)): Պալոմա Ագիլար Ֆերնանդեսն իսպանական դասագրքերի, ժամանակագրական ֆիլմերի, թատրոնի և ընդհանուր դիսկուրսի իր գերազանց ուսումնասիրության մեջ հիմնավորում է, թե ինչպես է Ֆրանկոյի մահվանից քսան տարի առաջ քաղաքացիական պատերազմի պատմական հիշողությունը մշակութային առումով վերաձևակերպվել, այնպես որ այն դարձել է ժողովրդավարության կայացման ջանքի «աղյուսիկներից» մեկը: Տե՛ս նրա "La memoria histórica de la guerra civil española" (1936-1939)", "Un proceso de aprendizaje político" (Mado I, *Centro de Estudios Avanzados en Ciencias Sociales*, 1995): Չնայած այն բանին, որ անցել է քառասուն տարուց ավելի, խորվաթների և նրանց սերբ թշնամիների երկուստեք ամենատարածված բնութագրական արտահայտություններն էին քաղաքացիական պատերազմում մրցակցող խոշոր ֆրակցիաների անվանումները՝ խորվաթական Ustaša-ները [անջատողական և ֆաշիստական], և գերակշիռ մասով՝ սերբ Chetnik-ները [ազգայնամոլական և ոռյալիստական]: Տե՛ս Բովո Բրանաչ, «Հետ-կոմունիզմ և հետ-հարավսլավիզմ. Հարավսլավիայի ոչհեղափոխությունները 1989-1990թթ.» (Ivo Banac, *Post-Communism as Post-Yugoslavism: The Yugoslav Non Revolutions of 1989-1990*), Բովո Բրանաչի խմբ.: «Արևելյան Եվրոպան հեղափոխության մեջ» (Ivo Banac, ed., *Eastern Europe, in Revolution* (New Haven: Yale University Press, 1992), 168-87):



խոսվում է որպես "el piloto del cambio"-ի (փոփոխության առաջատարի) մասին: Սակայն օգտակար է հիշել, որ Իսպանիայում թագավորն իր գործողություններով լեգիտիմացրեց միապետությունն ավելի, քան միապետությունը լեգիտիմացրեց թագավորին:<sup>4</sup>

Իսպանիայում անցման համեմատաբար սահուն գործընթացը շատ մարդկանց *a posteriori* (հետագա փորձի հիման վրա) հանգեցրեց քաղաքական ճարտարագիտության իսպանական մոդելը «նախասահմանված» հաջողություն համարելուն: Իսկպպես, եթե պատմական խառը գործընթացն իր բոլոր բարդություններով, հիասթափություններով, ձգձգումներով ու կասկածներով պարզեցնենք մինչև տեսական մոդելի աստիճանի, ապա այն կթվա գեղեցիկ գործընթաց, անգամ՝ վերլուծելի՝ խաղերի տեսության միջոցով:<sup>5</sup> Ի դեպ, համեմատությունը մեր արդի տեսական մոդելավորման ու գործնականում անխուսափելիորեն ավելի բարդ գործընթացների միջև պետք է որպես ազդանշան ծառայի նրանց համար, ովքեր համանման փոփոխությունները վերլուծում են դեռևս ընթացքի մեջ եղած ժամանակ: Լավ է հիշել, որ անգամ ամենահեշտ ու առավել բարեհաջող անցումն ապրվել է որպես երերուն գործընթաց, որը մշտապես պահանջել է նորարարական քաղաքական քայլեր:<sup>6</sup> Դժվար թե 1975-77թթ. ժամանակահատվածում իսպանացիները անցման իրականացման մասին հարցերին պատասխանեին նույնքան հպարտությամբ, որքան նրանք այդ արեցին տասը տարի անց: Անշուշտ, այսպես կոչված *desencanto*-ն՝ հիասթափությունը գործընթացից և դրա առաջնորդներից (հատկապես՝ վարչապետ Ադոլֆո Սուարեսից 1970-ական թվականների վերջին և 1980-ական թվականների սկզբին) կամ դրանց առասպելագրծումն արդեն մոռացվել է, սակայն այն գուգահեռներ ունի անցումների մեծ մասի հետ աշխարհի այլ մասերում: Հետահայաց կերպով առկա է նաև 1981թ.

4. Անցման ժամանակ թագավորի դերի մասին պատմող մի արժեքավոր հատոր, գիրք, որը շահել է «Իսպանիայի հայելի» մրցանակը, տե՛ս Չարլզ Փաուել (Charles T. Powell), *El piloto del cambio: El rey, la monarquía y la transición a la democracia* (Barcelona: Editorial Planeta, 1991): Թագավորի դերի մասին քննարկում, տե՛ս *Խոսքեր Խուան Լինց*, «Ժողովրդավարության անցման նորարարական ղեկավարում և մի նոր ժողովրդավարություն. Իսպանիայի օրինակը» (Juan J. Linz, "Innovative Leadership in the Transition to Democracy and a New Democracy: The Case of Spain"), Գաբրիել Շեֆերի խմբ.՝ «Նորարարական ղեկավարությունը միջազգային քաղաքականության մեջ» (Gabriel Sheffer, ed., *Innovative Leadership in International Politics* (Albany: State University of New York Press, 1993), 141-86):

5. Տե՛ս, օրինակ, Ժոզեպ Կոլոմեր (Josep M. Colomer), *El arte de la manipulacion política: Votaciones y teoría de juegos en la política Española* (Barcelona: Editorial Anagrama, 1990), խաղերի տեսությունն անցման նկատմամբ կիրառելու յուրօրինակ ու խելացի գիրք է: Գրքի վրա հիմնված մի հոդված է «Անցումներ համաձայնությամբ. իսպանական եղանակի մոդելավորում» (the book is "Transitions by Agreement: Modeling the Spanish Way", *American Political Science Review* (Dec. 1991): 1283-1302):

6. Տե՛ս, օրինակ, Խուան Լինց, «Իսպանիա և Պորտուգալիա. վճռորոշ ընտրություններ» (Juan J. Linz, "Spain and Portugal: Critical Choices"), Դեյվիդ Լանդեսի խմբ.՝ «Վճռորոշ ընտրություններ ամերիկացիների համար. Արևելյան Եվրոպայ» (David S. Landes, ed., *Critical Choices for Americans: Western Europe* (Lexington, Mass.: Lexington Books, 1977), 237-96): Այս ակնարկը, որը գրվել է 1974թ. և թեթևակիորեն խմբագրվել է 1976թ., արտացոլում է Խուան Կառլոս I թագավորի գահակալության սկզբում եղած անվստահություններն ու վախը: Վերընթերցումը նպատակ ունի ճշգրտելու անցման՝ որպես սահուն ու նախորոշված գործընթացի մասին պատկերացումը, որը դրա էքս պոստ ֆակտո մշակած տեսական մոդելը կարող է առաջարկել: Հնարավորն իրականության փոխարկելու գործում ղեկավարության վճռորոշ դերի մասին տե՛ս Լինց, «Նորարարական ղեկավարություն անցման ժամանակ» (Linz, "Innovative Leadership in the Transition"):

փետրվարի 23-ին ձախողված զինվորական հեղաշրջման՝ անցմանն ուղղված հավանական սպառնալիքը թերագնահատելու հակվածություն:<sup>7</sup>

Ի վերջո Սոնկլոայի դաշինքը սովորաբար որպես մի օրինակ է բերվում անցման գործընթացների կայունացման մեջ դաշինքների ունեցած դերի քննարկումների ժամանակ: Շատ հաճախ, սակայն, մոռացության է մատնվում այն, որ վարչապետի «Սոնկլոա» անունը կրող բնակատեղիում կազմավորված այդ դաշինքը ոչ թե եղել է *սոցիալական դաշինք* արհմիությունների ու գործատուների կազմակերպությունների միջև, այլ *քաղաքական դաշինք*: Ադոլֆո Սուարեսը Սոնկլոայի հանդիպումները հրավիրեց, որովհետև ցանկանում էր փոխադարձ բանակցությունների մեջ ներգրավել քաղաքական հասարակությանը և, մասնավորապես, բոլոր կուսակցություններին, որոնք առաջին ազատ ընտրություններից հետո ներկայացուցիչներ ունեին Բսպանիայի օրենսդիր մարմնում: Սոնկլոայի հանդիպումների ընթացքում կուսակցությունները խորհրդակցում էին քաղաքացիական հասարակության մեջ իրենց գլխավոր ընտրազանգվածների հետ (Սուարեսը քաղաքական հասարակության և քաղաքացիական հասարակության միջև այդ կապը հատկապես կարևորում էր կոմունիստական կուսակցության ու արհմիությունների պարագայում): Միայն այդ լարված բանակցություններից հետո Սոնկլոայի քաղաքական դաշինքի ձևակազմը պաշտոնապես քվեարկության դրվեց Կորտեսի հանդիսավոր նիստում:<sup>8</sup> Սոնկլոայի դաշինքի հաստատման որոշումն ընդունվեց մեկ դեմ ձայնով ստորին պալատում և երեք դեմ ու երկու ձեռնպահով՝ Սենատում:

Այս փաստերը շեշտեցինք նախքան մեր փոփոխականների վերլուծությունն սկսելը, որովհետև թեև մեր փոփոխականները համարում ենք չափազանց կարևոր, այնուամենայնիվ, չենք կամենում ինքներս մեզ և ընթերցողին ծուղակը գցել՝ հավատացնելով, թե

7. Անցման շրջանում զինվորականության և 1981թ. փետրվարի 23-ի ձախողված հեղաշրջման մասին կա ընդարձակ գրականություն: *"Revista de investigaciones sociológicas 36"* (1986թ. հոկտեմբեր-դեկտեմբեր) նվիրված է քաղաքացիականների ու զինվորականության միջև հարաբերություններին և ներառում է մի հոդված Ագուստին Ռոդրիգես Մահագունի հեղինակությամբ, որը եղել է պաշտպանության առաջին քաղաքացիական նախարարը Սուարեսի օրոք, մեկ այլ հոդված գրվել է պաշտպանության առաջին սոցիալիստ նախարարի՝ Նարցիս Սեռայի կողմից, ինչպես նաև հասարակագետների մշակած նյութեր, հասարակական կարծիքի մասին տվյալներ ու գրքերի ոկյուններ: Հիասթափության բարդությունն ու ներքին հոգեբանությունը հիանալի կերպով հետազոտվել է Ալբերտ Հիրշմանի (Albert O. Hirschman) «Հիասթափության մասին» գլխում, նրա *Shifting Involvements: Private Interest and Public Action* (Princeton: Princeton University Press, 1982) գրքում, էջ 9-24:

8. Սոնկլոայի դաշինքի քաղաքական գործընթացի այս նկարագրությունը մեծապես հիմնված է 1990թ. մայիսի 24-ին Ադոլֆո Սուարեսի հետ Ալֆրեդ Ստեփանի անցկացրած հարցազրույցի վրա: Սուարեսն ասել էր, որ նախապես դիտարկված է եղել կայունացման ծրագրի վերաբերյալ գործադրի որոշում ընդունելու հարցը, սակայն անմիջապես հասկացել է, որ ավելի լեգիտիմ ու ավելի արդյունավետ կլինի, եթե նա համաձայնության գա քաղաքական կուսակցությունների հետ: Քաղաքական հասարակության ներսում այս բարդ փոխհամաձայնողական գործընթացը, որը ցույց է տալիս Բսպանիայում անցման հարգը, իսկապես իսպառ բացակայում էր արգենտինյան և «Բրազիլիայի իրական կայունացման նախաձրագիր» խոշոր ծրագրերում, որոնք գաղտնի կերպով մշակվել էին նախագահի ու նրան մոտ կանգնած խորհրդականների կողմից և ցնցված ժողովրդին հայտարարվել հեռուստատեսությամբ առանց անգամ օրենսդրի կողմից քննարկված լինելու: Կոմունիստական ու սոցիալիստական կուսակցությունների, արհմիությունների ու Սոնկլոայի դաշինքի միջև հարաբերությունների մասին *տե՛ս* Ֆիշման, «Աշխատավոր դասակարգի կազմակերպումը և ժողովրդավարությունը» (Fishman, *Working Class Organization and Democracy*, 17, 180, 215-26):

Իսպանիայում անցումն իբր «նախասահմանված» էր բարեհաջող լինել, կամ թե քաղաքական ճարտարագետները մշտապես հետևել են ռացիոնալ մոդելին: Նկատի ունենալով այս կարևոր վերապահումները՝ պարզենք, թե ինչ առնչություն ունի Իսպանիան 1-ին մասում մեր քննարկած փոփոխականների հետ:

Մինչև անցումն ավարտելն ու ժողովրդավարության կայացումը ամեն երկրի կողմից պարտադիր իրականացվելիք խնդիրների առումով Իսպանիան սկսել էր համեմատաբար արտոնյալ վիճակից: Իհարկե, դատելով Ադյուսակ 4.3-ից, միակ խնդիրը, որն անվերապահորեն հրատապ էր Ֆրանկոյի մահից հետո՝ 1975թ. նոյեմբերին, ինքնուրույնությամբ ու կողմնակի աջակցությամբ օժտված քաղաքական ինստիտուտների ստեղծումն էր: Նկատի առնելով այդ իրավիճակը՝ այժմ մոդաիկ է դառնում Իսպանիայում ժողովրդավարության կայացումը դիտել որպես գրեթե անխուսափելի մի բան՝ հաշվի առնելով դրան օժանդակող սցիյալ-տնտեսական ու աշխարհաքաղաքական համատեքստը: Կարծում ենք, որ նման չքննված կարծիքը ոչ միայն հանգեցնում է Իսպանիայում ժողովրդավարության անցման ու կայացման փաստացի գործընթացի սխալ մեկնաբանմանը, այլև նպաստում անցման փաստացի նախապատրաստման ու այն պարագայի նկատմամբ ուշադրության վտանգավոր բացակայությանը, թե ինչպես այդ ծրագրի բարեհաջող իրականացումը հետագայում ավելի հեշտացրեց Իսպանիայում պետութենականության խնդրի լուծումն ու, ըստ էության, ժողովրդավարության կայացումը: Եկեք, ուրեմն, դառնանք այն հարցին, թե անցումն իրականում ինչպես է իրականացվել:

### ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ ԱՆՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Իսպանիայում անցման ժամանակ անհրաժեշտ էր հաղթահարել հետագա անցումների ժամանակ էլ պարբերաբար կրկնվող մի խնդիր՝ ինչպես քանդել ոչ ժողովրդավարական վարչակարգն ու դրա ինստիտուտները և ձեռք բերել ընտրությունների վրա հիմնված ժողովրդավարական լեգիտիմություն՝ հաղթահարելու հասարակության առջև կանգնած բազմաթիվ խնդիրները: Ի տարբերություն զինվորական վարչակարգերի, Հունաստանում ու Լատինական Ամերիկայում (Չիլիի ու Բրազիլիայի մասնակի բացառությամբ), Ֆրանկոյի քաղաքացիական և ավտորիտար վարչակարգը ստեղծել էր մի ավարտուն ինստիտուցիոնալ ու սահմանադրական կառույց: Ֆրանկոյական ինստիտուտներն իրենց պաշտոնական միակ կուսակցությամբ և կորպորատիվիստական Կորտեսով (խորհրդարան) միայն մեծ երևակայության դեպքում էր հնարավոր ծառայեցնել ժողովրդավարությանը՝ դրանք համալրելով ժողովրդավարորեն ընտրված կադրերով: Շատերը կարծում էին, թե այդպես հնարավոր էր վարվել արևելաեվրոպական կոմունիստական վարչակարգերի ձևականորեն ուլտրաժողովրդավարական սահմանադրությունների հետ: Այդ ֆրանկոյական ինստիտուտները պետք է վերանային, սակայն հեղափոխական տապալման ձևը՝ ընդդիմության պահանջած բաժանումը, իսկապես իրականանալի չէր (ինչպես Իսպանիայի կոմունիստական կուսակցությունը հետագայում ընդունեց)՝ հաշվի առնելով հասարակական կարծիքի ընդհանուր տրամադրվածությունն ու, մասնավորապես, զինված

ուժերի կողմից վարչակարգին ցուցաբերած աջակցությունը:<sup>9</sup> Ֆրանկոյի սահմանադրությունը չեղյալ համարելու մասին թագավորի ոչ սահմանադրական հայտարարությունը՝ զինված ուժերի որոշ արմատական խմբերի աջակցությամբ (պորտուգալական կայծակնային հեղափոխության ռզեկչված աննշան փոքրամասնությունը), անհնար էր: Հետևաբար, սկզբից նեթ վարչակարգի ներսում դիտարկվել էր այն սահմանադրորեն փոխելու նպատակով Ֆրանկոյի հիմնական օրենքների և խոշոր գործարարներից բաղկացած Կորտեսի՝ օրինականությունից օգտվելու հնարավորությունը՝ հակառակ այդ օրենքների ոգուն ու դիտավորությանը: Շատ խորհրդածություններից ու բանավեճերից և որոշ ձախողված մեկնարկներով քայլերի արդյունքում վերջապես մշակվեց «Քաղաքական բարեփոխումների մասին» օրենքը: Ջուզեպպե դի Պալմայի արտահայտությամբ՝ օրինական «հետադարձ լեգիտիմացման» կարիքը հիմնված էր այն փաստի վրա, որ թագավորը երդում էր տվել պաշտպանելու այդ օրենքները, որ նրա իշխանությունը բխում էր դրանցից, որ գործող կառավարությունը նշանակվել էր՝ համաձայն դրանց, և զինված ուժերի հնազանդությունը կարելի էր կլինե՞ր ապահովել միայն այն դեպքում, երբ փոփոխությունը տեղի ունենար այդ եղանակով:<sup>10</sup> Եթե չլինե՞ր հետզարգացման կամ քաղաքական ճնշման ռիսկը, ապա չէր լինի վախ իշխանության վակուումից կամ իշխանության հանկարծակի փոխանցումից այդ պահին արմատական ընդդիմադիր ուժերին՝ նախ և առաջ ազգայնականներին ծայրամասերում և Իսպանիայի կոմունիստական կուսակցությանն ու վերջինիս կողմից վերահսկվող արհմիութենական շարժումներին: Բարեփոխումներ իրականացնողները, այսպիսով, պետք է գործեին զգուշորեն՝ որպես գործիք օգտագործելով իրավական բարեփոխումները՝ հնարավոր դարձնելու մի ժողովրդավարորեն ընտրված մարմին,

9. Իսպանիայի կոմունիստական կուսակցության (PCE) առաջին թեզիսը 1978թ. փետրվարին կուսակցության IX կոնգրեսի ժամանակ նվիրված էր այն բանի բացատրությանը, թե ինչու վարչակարգի և ընդդիմադիրների կողմից եկող ռեֆորմիստական ճնշումների համակցությունը, ինչպես նաև միջազգային ճնշումն «ստիպեցին PCE-ն զգուշությամբ մոտենալ իրենց բաժանման թեզիսի ձևակերպմանը»: Ամբողջ տեքստը տե՛ս *Unión Obrera*, Madrid, (Feb. 2, 1978), 1:

Սակայն դեռևս 1981թ. ըստ Ֆիշմանի ուսումնասիրության՝ Մադրիդում ու Բարսելոնայում աշխատավոր դասակարգի գործարանային մակարդակի առաջնորդների ոչ քիչ մասն էր կարծում, որ «ընդդիմության շատ առաջնորդների տատանումների ու սխալների պատճառով կորսվել էր պատմական հնարավորությունը՝ ստեղծելու ավելի առաջավոր ժողովրդավարություն հասարակության համախմբումների ու քաղաքական բաժանման հիման վրա»: Բարսելոնայում «Comisiones Obreras»-ին (Կոմունիստների միություն) հարած առաջնորդների 68%-ն այդպես էր կարծում՝ համեմատած 40%-ի հետ Մադրիդում: Սոցիալիստական UGT-ում ("Unión General de Trabajadores") համապատասխանաբար 31 և 23%-ը Բարսելոնայում ու Մադրիդում հավատում էր, որ բաժանումը հնարավոր կլինե՞ր, մինչդեռ 57%-ը կարծում էր, որ «քաղաքական անցման տվյալ պահին ուժերի համամասնությունը թույլ չէր տալիս քայլ անել դեպի ժողովրդավարություն բաժանման միջոցով, և ձախ առաջնորդները ճիշտ վարվեցին՝ փոխելով ռազմավարությունը՝ նպաստելու բարեփոխումներին, որոնք տանում էին դեպի ժողովրդավարություն»: Սա UGT ներկայացուցիչների մեծամասնության կարծիքն էր Բարսելոնայում (66%), Մադրիդում (72 %), իսկ «Comisiones Obreras»-ի համար՝ Մադրիդում (55 %) և միայն 30 % Բարսելոնայում: Վերը բերված տվյալները վերցրած են՝ Ֆիշման, «Աշխատավոր դասակարգի կազմակերպում և ժողովրդավարություն»-ից (Fishman, *Working Class Organization and Democracy*, 144):

10. «Հետադարձ լեգիտիմության» հասկացությունն առաջին անգամ մշակվել է Ջուզեպպե դի Պալմայի կողմից՝ «Կոալիցիաների հիմնում շարավային Եվրոպայում. լեգիտիմություն և հեգեմոնիա», (Giuseppe di Palma, "Founding Coalitions in Southern Europe: Legitimacy and Hegemony", *Government and Opposition* 15 (1980): 162-89):

որը կարող էր հաղթահարել հորիզոնում երևացող բոլոր խնդիրները՝ ներառյալ պետության կայունության խնդիրներն ու ծնունդ առնող տնտեսական ճգնաժամը: Էսկան էր նաև առանձնապես ուժեղ լեգիտիմություն չվայելող միապետության մասին առանձին ու բաց բանավեճից խուսափելը:

Ընտրված ուղին Ֆրանկոյի կողմից ստեղծված կամ մասամբ նշանակված Գորտեսին համոզելն էր, որպեսզի վերջինս թույլ տար ստեղծելու մի հիմնավորապես այլ օրենսդրական մարմին՝ քաղաքական կուսակցությունների մասնակցությամբ, բաց և ազատ ընտրություններից հետո: Դա էր, որ ձեռք բերվեց «Քաղաքական բարեփոխումների մասին» օրենքով ու հանրաքվեի միջոցով դրա հետագա հաստատումը:<sup>11</sup> Դրա համարժեքը ԽՍՀՄ-ում կհանգեցներ այն բանին, որ Գորբաչովը կհամոզեր կոմունիստական կուսակցությանն ու բարդ սահմանադրական կառուցվածք ունեցող Խորհրդային Միության օրենսդրական մարմիններին թույլատրել բազմակուսակցական, ազատ մրցակցային ընտրություններ Միության մի այնպիսի խորհրդարանի համար, որն այնուհետև կունենար կառավարություն կազմավորելու պարտականություն և լիազորություն: Անհաջողության դեպքում գոնե հնարավոր կլիներ իրականացնել Խորհրդային Միության նախագահի համամիութենական, ուղղակի, բազմակուսակցական մրցակցային ընտրություն: Ինչպես կտեսնենք, Խորհրդային Միության գոյության ընթացքում նման ընտրություններին մոտ և ոչ մի բան երբևէ տեղի չէր ունեցել: Փաստորեն ինչպե՞ս այն տեղի ունեցավ Իսպանիայում: Ոչ ոք չի կարող անտեսել Իսպանիայում կառուցվածքային առումով նպաստավոր պայմանները, սակայն անկասկած է, որ այս՝ հատկապես բարեհաջող անցումը շատ բանով պարտական է գործող անձանց:

Ժողովրդավարությանն անցման ժամանակ դրա առաջնորդների ավելի մանրամասն վերլուծությունն զգալի ուշադրության կարժանացնի թագավորի՝ որպես մոդերատորի դերը, Սանտյագո Կարիլյոյի (Իսպանիայի կոմունիստական կուսակցության առաջնորդ) կառուցողական ղեկավարությունը, կարդինալ Տարանկոնի (Իսպանիայի կաթոլիկական եկեղեցու առաջնորդ) շրջահայացությունը, գեներալ Գուտիեռես Մեյադոյի (իսպանական բանակի աշխատակազմի ղեկավարը) աջակցությունն ու քաջությունը, Ժոզեպ Տառադելլասի (Կատալոնիայի տարածքային կառավարության արքայազն առաջնորդը) քաղաքական հետատեսությունը, Տորկուատո Ֆերնանդես Միրանդայի խորհրդարանա-

11. «Քաղաքական բարեփոխումների մասին» օրենքի վերաբերյալ տե՛ս Պարո Լուկաս Վերդու (Pablo Lucas Verdu, *La octava ley fundamental*), որի առաջաբանը գրել է Էնրիկե Տիերնոն (Enrique Tierno Madrid: Tecnos, 1976), և Անտոնիո Էրնանդես Գիլ (Antonio Hernandez Gil), *El cambio político español y la constitucion* (Barcelona: Planeta, 1981): Որոշ ընթերցողներ գուցե կարծեն, թե մենք անարդարացիորեն մեր վերլուծության մեջ գերակայությունը տալիս ենք վարչակարգի կամ ընդդիմության գլխավոր գործող անձանց դերին: Այստեղ վարչակարգի ճգնաժամի առաջացման գործում ցանկանում ենք ընդգծել հասարակ քաղաքացիների կարևոր դերը: Նրանք հաճախ ռիսկի են դիմում իրենց ընդդիմությամբ և պայքարում են վարչակարգի դեմ: Նրանք նաև ճնշում են գործադրում վարչակարգի գործող անձանց վրա, որ նրանք նախաձեռնեն անցում ժողովրդավարությանը (հաճախ դրանով նաև կանխվում է վարչակարգի անկումը): Սակայն Իսպանիայի պարագայում մեր մոտեցման օգտին ունենք հարցման տվյալներ, որն անց էր կացվել «Քաղաքական բարեփոխումների մասին» օրենքի հաստատումից անմիջապես հետո՝ պատասխանողներին հարցնելով այն մասին, թե ում են նրանք վերագրում փոփոխության դրական կողմերը. 26%-ն ընտրեց կառավարությանը, 23 %-ը՝ թագավորին, 20 %-ը՝ վարչապետ Սուարեսին, 8 %-ը՝ ընդդիմության կուսակցություններին, 3 %-ը՝ Գորտեսին, 21 %-ը՝ ընդհանրապես մարդկանց ու քաղաքացիներին, մինչդեռ 6%-ն ասաց, որ ոչ մի լավ բան չկա, իսկ 9 %-ը չպատասխանեց: Տե՛ս Լինց և ուրիշներ (Linz et. al.), *Informe sociológico sobre el cambio político*, p. 119:

կան բանակցային ունակությունները և պահպանողական առաջնորդ Մանուել Ֆրագայի համագործակցությունը, եթե պարզապես տանք միայն մի քանի ներգրավված գործիչների անուններ: Ունեցած սահմանափակ տեղի պատճառով չենք կարող արժանին մատուցել այդ բոլոր գործող անձանց ու կազմակերպություններին: Սակայն կցանկանայինք առանձնահատուկ ուշադրություն դարձնել Ադոլֆո Սուարեսի նորարարական ղեկավարմանը: Հատուկ ուշադրություն կդարձնենք այն բանին, թե ինչպես նա ձևակերպեց ժողովրդավարության գլխավոր հարցերն իր երկու վճռորոշ ելույթներում (որոնք, ցավոք սրտի, երբեք չեն թարգմանվել անգլերեն): Ինչպես կտեսնենք, Սուարեսի համար ընտրությունների անցկացումը եղել է իր խնդրի բուն էությունը: Նա ճիշտ էր: Ընտրություններն առանցքային են հին վարչակարգի քանդման ու իշխանությունից զրկման ժողովրդավարական գործընթացի համար: Դրանք էլ ավելի կարևոր են նոր ժողովրդավարական վարչակարգի հաստատման, լեգիտիմացման ու լիազորման համար: Թեև այս գործընթացի առանձնահատկությունները տարբերվում են հասարակարգից հասարակարգ, կարծում ենք, որ ավելի ուշ քննարկվելիք երկրներից մի քանիսում՝ առավել վառ արտահայտված ԽՍՀՄ-ում, իսկ հետագայում՝ Ռուսաստանում, առաջնորդները կորցրել են այդ իշխանության քայքայման ու իշխանության հաստատման գործընթացն առաջ տանելու հնարավորությունները՝ ժողովրդավարության ու պետության կարողությունների համար վտանգավոր հետևանքներով:

Իր երկու կարևոր ելույթներից առաջինում Ադոլո Սուարեսը, առաջին թագավորական կաբինետում խոսելով որպես այն ժամանակ գրեթե չգործող միակ պաշտոնական կուսակցության *Մովիմիենտոյի* (Շարժում) նախարար-գլխավոր քարտուղար, ընդհանուր կոչով դիմեց Ֆրանկոյի կողմից վերահսկվող խոշոր գործարարներից բաղկացած Կորտեսին, որ ազատականացումն ու ի վերջո ժողովրդավարացումն անհրաժեշտ են:<sup>12</sup> Դա հինգ ամիս տևած հիմնավորումների սկիզբն էր: Սուարեսն սկսեց՝ վկայակոչելով բարեփոխումներին «ժողովրդավարական միապետի» աջակցությունը: Նա շարունակեց հիմնավորել, որ, հաշվի առնելով Ֆրանկոյի օրոք սոցիալ-տնտեսական զարգացումները, կառավարությունը պետք է անի քաղաքական բարեփոխումների հաջորդ քայլը՝ թույլատրելով ազատ քաղաքական միություններ: «Ես կարծում եմ, որ մեր պատմական խնդիրը... շատ պարզ է՝ ավարտել աշխատանքը [Ֆրանկոյի սկսած]... Կառավարությունը՝ այս պատմական պահի լեգիտիմ իրականացնողը, կրում է ժամանակակից ժողովրդավարության կայացման համար անհրաժեշտ մեխանիզմը շարժման մեջ դնելու պատասխանատվությունը»: Նա շեշտեց, որ իսպանական հասարակության մեջ փոփոխությունները նպաստել են նոր բազմակարծության առաջացմանը, բազմակարծություն, որն արդեն դե ֆակտո ընդունել է քաղաքական ձևեր:

Մեկնման կետը [քաղաքական միություններն օրինականացնող օրենքով առաջարկված քաղաքական բարեփոխումներին] մեր հասարակության բազմակարծության ճանաչումն է: Եթե այս հասարակությունը բազմակարծիք է, ապա մենք չենք կարող մեզ թույլ

12. Իսպանիայում անցման շատ վերլուծաբաններ կարծում են, որ այս ելույթը մեծ ազդեցություն գործեց թագավորի՝ երիտասարդ Ադոլֆո Սուարեսին անհաջողության մատնված Արիաս Նավարոյին իրավահաջորդ նշանակելու ընտրության վրա: Մարավալն ու Սանտամարիան պնդում են, որ Արիասը «երբեք չընդունեց ժառանգություն ստացած վարչակարգը բազմակարծական ժողովրդավարության փոխակերպելու գաղափարը»: *St'ú* Մարավալ և Սանտամարիա, «Քաղաքական փոփոխությունն Իսպանիայում» (Maravall and Santamaria, "Political change in Spain", 81):

տակ այն անտեսելու շքեղությունը... Եթե մենք դիտարկենք ազգային իրականությունը անգամ նվազագույն անկեղծությամբ, ապա պետք է ընդունենք, որ ի լրումն այս տեսական բազմակարծության, արդեն գոյություն ունեն կազմակերպված ուժեր: Մենք անիմաստ կուրությամբ կհամակվենք, եթե հրաժարվենք սա տեսնելուց: Այս ուժերը, ուզում եք անվանել դրանց կուսակցություններ թե ոչ, արդեն գոյություն ունեն որպես հանրահայտ փաստեր... Կուսակցությունների նպատակները որոշակի են, և իշխանության գլուխ անցնելը դրանցից նվազագույնը չէ: Ուրեմն, եթե ճանապարհը չի բացվում իր իսկ պետության կողմից առաջարկվող օրինականությամբ, ապա կտիրի միայն առերես խաղաղություն, որի տակ ծիլ կտան տապալման սերմերը:

Սուարենս առաջ գնաց՝ ասելով, որ քաղաքական դաշինքները քննարկվում են, սակայն նա հեռատեսորեն բարձրացրեց այն հարցը, թե ինչպես է հնարավոր առաջ բերել ժողովրդավարական քաղաքական ներկայացուցիչներ նման դաշինքներին մասնակցելու համար. «Ո՞ւմ հետ պետք է նրանք [կառավարությունը] դաշինք կնքեն»: Սուարենս անմիջապես տվեց իր իսկ հարցի պատասխանը. «Միայն ընտրություններից հետո կլինեն իրավագործությունների ու լեգիտիմացված ներկայացուցիչներ»:<sup>13</sup> 1976թ. հուլիսի 1-ին վարչապետ Արիաս Նավարրոն ստիպողաբար հրաժարական տվեց, իսկ վարչապետ նշանակվեց Ադոլֆո Սուարեսը:

Ժողովրդավարական գործընթացի ինստիտուցիոնալացումը դեռևս մեծապես կասկածի տակ էր առնվում Սուարեսի նշանակման ժամանակ: Ժողովրդավարությանը շատ անցումների ժամանակ հին վարչակարգի սահմանադրությունը մնում է ուժի մեջ և խանգարում կամ ուշացնում է ժողովրդավարական վերածնունդը: Իսպանիայում նման կառույց կարող էր դառնալ Կորտեսը: Սուարեսի՝ անհնարին թվացող խնդիրը Կորտեսի անդամներին համոզելն էր «Քաղաքական բարեփոխումների մասին» օրենքի օգտին քվեարկելու, որն, ըստ էության, կհանգեցնեք իր իսկ՝ Կորտեսի անհետացմանը: Եթե նա չկարողանար համոզել Կորտեսի անդամներին, ապա ստիպված էր լինելու դիմել ժողովրդավարական լեգիտիմության համար անորոշ հետևանքներ պարունակող սահմանադրական հակամարտության ռիսկին (ինչպես տեղի ունեցավ Ռուսաստանի խորհրդարանի հետ Ելցինի հակամարտության դեպքում 1993թ.) կամ հաշտվել ժողովրդավարությանն անցման համար անհրաժեշտ փոփոխությունները կաթվածահար անելու Կորտեսի ունակության հետ:

Սուարենս այս խնդրին լրջորեն մոտեցավ՝ բծախնդրորեն մշակելով ու քննարկելով քաղաքական բարեփոխումների մասին ժողովրդավարացնող օրենքի դրույթների նախագիծը: Հաստատման գործընթացի համար օրինագիծը Կորտես ներկայացնելուց առաջ նա ազգային հեռուստատեսությամբ ունեցավ իր երկրորդ պատմական ելույթը: Ժողովրդին ուղղված այդ ելույթում Սուարեսը ոչ բացահայտ կերպով նախագրուշացրեց Կորտեսին, որ առանց նոր սահմանադրական նորմերի կարող է առաջանալ սոցիալական հակամարտություն. «Կանոնների բացակայությունը հանգեցնում է «իրավիճակայ-

13. Այս բոլոր մեջբերումները մեր թարգմանություններն են Ադոլֆո Սուարեսի ելույթից՝ ի պաշտպանություն «Քաղաքական միությունների մասին» օրենքի, որը նա Կորտեսին ներկայացրեց 1976թ. հունիսի 9-ին: Նրա ելույթն ամբողջությամբ և օրենքը կարելի է գտնել Մադրիդում «Ediciones del Movimiento»-ի կողմից հրատարակված պամֆլետում (1976թ.), որի վերնագիրն է "El Derecho de Asociación Política", էջ 9-28:

նության» և կարող է տանել անիշխանության»: Նա նաև հորդորեց Կորտեսին խուսափել հակամարտությունից՝ ժողովրդին իր կամքն արտահայտելու հնարավորություն տալով: Նա ժողովրդին ասաց, որ ինքը վստահ է, որ Կորտեսը կիրականացնի այդ պատմական խնդիրը: Այնուհետև Սուարեսը կատարեց ազատականացումից մինչև ժողովրդավարացում խիստ կարևոր քայլը: Նա գովաբանեց ազատ և բաց ընտրություններն ու նշանակեց օրը: «Ես արտաբերեցի *ընտրություններ* բառը և դա, ըստ էության, առաջարկի բանալին է: [Առաջարկված] սահմանադրական փոփոխությունը թույլ կտա [նոր] Կորտեսն ընտրել ուղղակի, գաղտնի և համընդհանուր քվերակությամբ որքան հնարավոր է՝ շուտ և բոլոր դեպքերում մինչև 1977թ. հունիսը: Այս կերպ ժողովուրդը կմասնակցի իր իսկ ապագայի կառուցմանը, քանի որ նա կարտահայտի իր կարծիքը, կընտրի իր ներկայացուցիչներին, և այդ ներկայացուցիչները որոշումներ կընդունեն այն հարցերի վերաբերյալ, որոնք ազդում են ժողովրդի վրա»: Ադոլֆո Սուարեսի համար հիմնական խնդիրն այն էր, որ փոփոցում ու քաղաքացիական հասարակության մեջ ներկա ուժերը մասնակցեն քաղաքական համակարգին առանց վայր դնելու իրենց լիազորությունները մինչև ընտրությունների ավարտը: Ընդունելով ընդդիմության խմբերի ու առաջնորդների հեղինակությունը՝ նա միաժամանակ նորից ու նորից կրկնում էր իր փաստարկը, որ միայն ընտրությունները կորոշեն, թե ում հետ է պետք բանակցել: Սուարեսի համար ընտրությունների միջոցով էր, որ այն «քաղաքական խմբերը, որոնք այսօր կամավոր կերպով իրենց հրապարակավ ներկայացնում են որպես գլխավոր գործող անձինք (իսկ նրանք նշանակալից են ու հարգանքի արժանի, սակայն չունեն ժողովրդական մանդատ), կդառնան ժողովրդի ներկայացուցիչներ»:

Սուարեսն անուղղակիորեն կոչ արեց խոշոր գործարարներից բաղկացած Կորտեսին՝ ասելով, որ բարոյապես ու պատմականորեն ճիշտ կլինի, որ վերջինս քվեարկի իր իսկ վերացման օգտին՝ թույլատրելով ազատ ընտրություններ: Նա նաև վստահեցրեց ժողովրդին, որ իշխանության վակուում չի տիրի, և որ կհաղթանակի օրենքի գերակայությունը: «Կառավարությունը համոզված է, որ ինստիտուտները [Ֆրանկոյի վարչակարգի] կհասկանան այս բարեփոխումների անհրաժեշտությունը և կսատարեն ուղղակի կոչը՝ ուղղված ժողովրդին, ում էլ այդ հաստատությունները ծառայում են: Չի կարող լինել ու չի լինի սահմանադրական վակուում, և էլ ավելի քիչ է օրինականության վակուումի առաջացման հավանականությունը: Նման վակուում չի կարող առաջանալ, որովհետև Իսպանիան օրենքի պետություն է, որը հիմնված է օրենքի առաջնայնության վրա»:

Այնուհետև Սուարեսը շարունակեց հիմնավորել այն միտքը, որ պետությունը բավականաչափ ուժեղ կլինի՝ իրագործելու երկրի սոցիալ-տնտեսական օրակարգն ու լուծելու պետութենականության աճող խնդիրը միայն այն դեպքում, երբ վերակազմավորվի ու լցվի նոր ժողովրդավարական իշխանությամբ: Սուարեսի համար բարեփոխումների հաջորդականությունն, այսպիսով, պետք է սկսվեր քաղաքական բարեփոխումներով: «Երբ ժողովուրդն իր ձայնը լսելի դարձնի, ապա լուծում կարող են ստանալ ուրիշ մեծ քաղաքական խնդիրներ այն լիազորությամբ, որը կբխի ընտրական ներկայացուցչությունից: Հետո հնարավոր կլինի ձեռնամուխ լինել այնպիսի հարցերի, ինչպես օրինակ՝ հարատև միասնականությամբ Իսպանիայի տարածքների ինստիտուցիոնալացման հարցը»: Սուարեսի համար քաղաքական բարեփոխումները տնտեսական բարեփոխումների նախապայման էին: «Քանի դեռ քաղաքական ծպտյալները [incógnitas] շարունակում են



մնալ երկրում, չի կարող լինել ո՛չ տնտեսական աշխուժացում, ո՛չ էլ կայունացում»: Նա եզրափակեց՝ հուսալով և ակնարկելով, որ Կորտեսը պետք է ժողովրդին թույլ տա որոշում ընդունել: «Ապագան գրված չէ, որովհետև միայն ժողովուրդն այն կարող է գրել»:<sup>14</sup>

Քվեարկության նախորդ օրը իրադարձություններին ուշադիր հետևող բազմաթիվ դիտորդներ վստահ չէին, որ «Քաղաքական բարեփոխումների մասին» օրենքը կընդունվի: Սակայն Սուարեսն ու ժողովրդավարացման շարժումն այնպիսի թափ էին ստացել, որ Կորտեսն օրենքն անցկացրեց 425 կողմ և 59 դեմ ձայնով:<sup>15</sup> Հետագայում «Քաղաքական բարեփոխումների մասին» օրենքը հանրաքվեի դրցվեց 1978թ. դեկտեմբերի 15-ին: 77%-ից ավելի բարձր մասնակցությամբ այն հաստատվեց ընտրողների 94%-ի կողմից:

Հանրաքվեի միջոցով «Քաղաքական բարեփոխումների մասին» օրենքի ձայների ճնշող մեծամասնությամբ հաստատումից հետո ավտորիտար կառուցվածքը քանդելու և ժողովրդավարական իշխանության ձեռքբերումները հնարավոր դարձնելու գործընթացն արագացավ: Հանրաքվեն ընդլայնեց Սուարեսի իշխանությունն ու ներառական քաղաքական հասարակություն ստեղծելու համար բանակցությունների մեջ մտնելու նրա ունակությունը: Սուարեսն առաջին հերթին պաշտոնապես հանդիպեց ընդդիմությանը՝ 1976թ. դեկտեմբերի 23-ին՝ հանրաքվեից ընդամենը ութ օր հետո, թեև 1976թ. ամռանը նա երկու անգամ ոչ պաշտոնական հանդիպում էր ունեցել սոցիալիստական կուսակցության առաջնորդ Ֆելիպե Գոնսալեսի և ընդդիմության ուրիշ առաջնորդների հետ: Սուարեսը ոչ պաշտոնական հանդիպում ունեցավ կոմունիստական կուսակցության առաջնորդ Սանտյագո Կարիլյոյի հետ 1977թ. հունվարին՝ Կարիլյոյի՝ բանտից դուրս գալուց անմիջապես հետո: 1977թ. ապրիլի 9-ին Սուարեսը բարեհաջող կերպով կատարեց կոմունիստական կուսակցությունն օրինականացնելու վտանգավոր քայլը՝ հաշվի առնելով անգիջումների դիմադրությունը: Խորհրդարանական առաջին ընտրությունն անցկացվեց 1977թ. հունիսի 15-ին: Ընտրությունների միջոցով ստեղծված խորհրդարանը մշակեց սահմանադրության նախագիծ, որը հաստատվեց 1978թ. դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեի ժամանակ: Գործընթացը, որը մենք հենց նոր նկարագրեցինք, ցույց է տալիս օրինակալիության, լեգիտիմության ու իշխանության միջև բարդ փոխազդեցությունը և անցումների համար ճիշտ ժամանակի ընտրության կարևորությունը:<sup>16</sup>

14. Տե՛ս Պարլո Լուկաս Վերդու (Pablo Lucas Verdu), *La octava ley fundamental*, որը պարունակում է օրենքի բոլոր դրույթները (103-8) և Սուարեսի՝ ժողովրդին հղած ելույթն ամբողջությամբ (109-19), որից մենք թարգմանել ենք հատվածներ:

15. Խուան Լինցը ներկա էր Կորտեսում ամբողջ բանավեճի և առաջին քվեարկության ժամանակ: Այդ 366 ձայնի առավելությամբ տարած հաղթանակը 1976թ. նոյեմբերի 18-ին 123 ձայնով ավելի էր, քան Քաղաքական միությունների մասին ավելի քիչ հակասական ազատականացնող օրենքի օգտին 1976թ. հունիսի 9-ին տրված ձայների քանակը:

16. Վարչակարգի փոփոխությունների ընթացքում ճիշտ ժամանակի ընտրության դերի մասին տե՛ս Խուան Լինց (Juan J. Linz), *"Ill fattore tempo nei mutamenti di regime"*, *Teoria politico* 11, no. 1 (1986): 3-47:

ԿՈՍՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ.  
ԱՆԴՐԱԴԱՐՁ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ազատ ընտրությունների միջոցով օրենսդրի կազմավորման ընդհանուր սկզբունքի ընդունումից հետո ամենադժվարին ու վտանգավոր որոշումը, որը Սուարեսը պետք է կայացներ, Իսպանիայի կոմունիստական կուսակցության (ԻԿԿ) օրինականացման մասին որոշումն էր: Տասնամյակների հակակոմունիստական քարոզչությունը, կոմունիստների հավակնությունների մասին կասկածներն ու հասարակության մեջ կուսակցության ծավալված ուժի մասին մտահոգությունները ներկայացնում էին մի համատեքստ, որտեղ աջերը, հատկապես՝ զինվորականությունը, միանգամայն կարող էին մոբիլիզացնել իրենց ուժերն անցման դեմ: Անգամ բարեփոխումներ իրականացնողների մեջ կային այնպիսիք, ովքեր պնդում էին, որ անհրաժեշտ է հետաձգել կոմունիստական կուսակցության օրինականացումը մինչև առաջին ազատ ընտրությունների ավարտը:

Օրինականացման հարցը, սակայն, մի հարց էր, որն ազդում էր մրցակցության ներառականության՝ ժողովրդավարության առանցքային տարրերից մեկի և, հետևաբար, Իսպանիայի վարչակարգի ժողովրդավարացման քայլի վստահելիության վրա: Ավելին, ուժեղ կոմունիստական կուսակցության նկատելի ներկայությունն ակտիվիստների ու համակրողների առումով անխուսափելիորեն առաջ էր բերում երկընտրանք՝ ճնշման գինը հանդուրժելու գնի դիմաց: Օրինականացման հիմնավորմանը նվիրված իր հեռուստատեսային ուղերձի մեջ Սուարեսը խնդիրը հստակ դրեց ժողովրդի առջև.

Մերժել [օրինականացման համար պահանջը] կնշանակի հաշվի չառնել այն իրականությունները, որ կոմունիստական կուսակցությունը գոյություն ունի և կազմակերպված է: Դրա դեմ պայքարը հնարավոր կլինի իրականացնել միայն ճնշման միջոցով:

Ես ոչ միայն կոմունիստ չեմ, այլ նաև խստորեն մերժում եմ այդ գաղափարախոսությունը, ինչպես այն մերժում են նաև իմ կաբինետի մյուս անդամները: Սակայն ես ժողովրդավար եմ և անկեղծորեն ժողովրդավարական: Հետևաբար, ես մտածում եմ, որ մեր ժողովուրդը բավականաչափ հասուն է... իր իսկ բազմակարծությանը ընտելանալու համար:

Ես չեմ կարծում, որ մեր ժողովուրդն ուզում է դատապարտված լինել տեսնելու, թե ինչպես են մեր բանտերը լցվում քաղբանտարկյալներով: Ես կարծում եմ, որ ժողովրդավարական վարչակարգում մենք բոլորս պետք է զգոն լինենք մեր հանդեպ, մենք բոլորս պետք է լինենք մեր հրապարակային գործողությունների վկաներն ու դատավորները: Մեզ անհրաժեշտ է հարգանք ունենալ իրավական փոքրամասնությունների նկատմամբ: Միասին ապրելու իրավունքների ու պարտականությունների մեջ է մտնում սեփական հակառակորդին (*adversario*) ընդունելը: Եթե պետք է հակադրվել նրան, ապա դա պետք է անել քաղաքակիրթ մրցակցության մեջ: Անկեղծ ասած՝ նախընտրելի չէ՝ արդյոք քվեատուփերի մեջ հաշվել այն, ինչն այլ կերպ ստիպված էինք լինելու հաշվել փողոցներում՝ անկարգությունների խղճուկ հիմքի վրա:<sup>17</sup>

17. Սուարեսի այս և մյուս ելույթները 1976-78թթ. վճռորոշ ժամանակահատվածում կարելի է տեսնել՝ Ադոլֆո Սուարես Գոնսալես (Adolfo Suarez Gonzalez), *Un nuevo horizonte para España: Discursos del Presidente del Gobierno 1976-1978* (Madrid: Imprenta del Boletín Oficial del Estado, 1978):

Այս վճռական որոշումը վերջ տվեց ժողովրդավարության գործին Սուարեսի անձնական նվիրվածության մասին ցանկացած կասկածի, իսկ Սուարեսն օգտվեց հեռուստատեսային ելույթի ընձեռած հնարավորությունից՝ հայտարարելու ընտրություններում իր թեկնածության մասին: Կոմունիստական կուսակցության օրինականացման մասին որոշումը ծայրահեղ վտանգավոր էր, ինչը երևաց որոշ գլխավոր զինվորական առաջնորդների ու անգամ անցմանը սատարող որոշ կարևոր քաղաքական գործիչների թշնամական պատասխաններից: Օրինակ, Սուարեսի հայտարարությունը հրահրեց նավատորմի նախարարի հրաժարականը, ում փոխարեն ստիպված էին նշանակել թոշակի անցած մի ծովակալի, որովհետև ծառայության մեջ գտնվող ոչ մի ծովակալ չէր ընդունում այդ պաշտոնը: Սուարեսի հայտարարությունը պատճառ դարձավ նաև մեկ այլ միահամուռ հայտարարության Բանակի գլխավոր խորհրդի կողմից առ այն, որ «կոմունիստական կուսակցության օրինականացումն առաջ է բերել բանակի բոլոր ստորաբաժանումների ընդհանուր անհանդուրժողականություն»: Սակայն հակառակ դրանից առաջ տարածված էլ ավելի սուր մի փաստաթղթի՝ նրանք նաև եզրափակել էին, որ «հաշվի առնելով ազգային բարձր շահերը՝ [խորհուրդը] կարգապահորեն ընդունում է կատարված փաստը [*hecho consumado*]:»<sup>18</sup> Սուարեսի դժվարին ընտրությունը որոշիչ դարձավ Իսպանիայի կոմունիստական կուսակցության ու դրա առաջնորդ Սանտյագո Կարիլյոյի չափավոր եվրո-կոմունիստական կեցվածքն ապահովելու գործում և կենսականորեն անհրաժեշտ նպաստ բերեց Իսպանիայում անցման վերջնական հաջողությանը:

Երկար-բարակ փաստարկներ չենք բերի, սակայն մի բան պարզ է՝ ժողովրդավարության համար վճռական նշանակություն ունի ընտրությունը՝ պե՞տք է արդյոք ընդունել մի ներառական որոշում՝ թույլ տալով բոլոր քաղաքական ուժերին մասնակցել քաղաքական գործընթացին, թե՞ ընդունել սահմանափակող որոշում՝ կանոններ պարտադրելով կուսակցություններին, որոնք վարչակարգի կամ հասարակության այս կամ այն կարևոր հատվածի տեսանկյունից կարող են ընկալվել որպես իրենց կամ ժողովրդավարությանը սպառնացող: Չենք սկսի նաև կարևոր նորմատիվային բանավեճ այն մասին, թե ժողովրդավարությունն արդյոք իրավունք ունի՞ «ժողովրդավարական խաղում» մասնակցությունը սահմանափակելու միայն նրանցով, ովքեր պարտավորվում են խաղալ ժողովրդավարական կանոններով: Կցանկանայինք, սակայն, մինչև վերջ հստակ լինել ներառական ընտրության երկու գործնական նշանակությունների հարցում: Սուարեսը երկուսին էլ մասնագիտորեն անդրադարձել էր իր վերը նշված ելույթում: Առաջին. մասնակցությունը թույլատրելու մասին որոշումը հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն հաշվելու ցանկացած ծայրահեղական շարժման հնարավոր աջակցողների ձայները, ինչով կթուլացվի հասարակական աջակցության ծավալման ցանկացած հավակնություն, որը կծագեր, եթե մասնակցությունն արգելվեր: Երկրորդ. եթե ծայրահեղական կուսակցություններն օրենքից դուրս հայտարարվեն, ապա ժողովրդավարական վարչակարգը կսկսի բանտ նստեցնել պետության կողմից անլեզալ հայտարարված կազմակերպություններին հարող քա-

18. Կոմունիստական կուսակցության օրինականացումից հետո զինվորականության շրջանում լարված իրավիճակի մասին մի փայլուն քննարկում, *տե՛ս* Ռոդրիգո (Rodrigo), "El camino hacia la democracia", 185-94, quote from p. 191:

դաքացիներին՝ ոչ թե փաստացի վարքագծային, այլ հավանական գաղափարախոսական հիմքերով:

Սա չի նշանակում, որ ժողովրդավարները պետք է պասիվ լինեն հակաժողովրդավարական ուժերի դեմ: Ժողովրդավարները կարող են ընդդիմանալ ու փորձել գաղափարախոսական ծայրահեղականներին քաղաքականապես մեկուսացնել կամ բանտ նստեցնել, եթե նրանք փաստացի բռնություն գործադրեն իրենց գաղափարներն առաջ տանելու համար: Ամենից ավելի ժողովրդավարները պետք է խուսափեն հակաժողովրդավարական ուժերի հետ ցանկացած կիսահավատարիմ դիրքորոշումով համագործակցությունից:

Իսպանիայի կոմունիստական կուսակցությունը հավատարմորեն նպաստեց անցմանն ու ժողովրդավարության կայացմանն Իսպանիայում: Սակայն 1977թ. Իսպանիայում բարձրացված նորմատիվային ու գործնական հարցերը դեռևս նկատելի էին 1990-ական թվականներին: «Հրրի Բատասունա» (HB) կուսակցությունը, որը քարոզում է անկախություն և հեղափոխական փոփոխություն Բասկերի երկրում, չի թաքցնում իր համակրանքն ու անգամ անուղղակի աջակցությունը "ETA" ("*Euskadi Ta Askatasuna*", «Բասկերի երկիր և ազատություն») ահաբեկիչների նկատմամբ: Սակայն, կարծում ենք, որ "HB"-ն իրավացի է հաշվի առնելով բերված այն տեսական ու գործնական փաստարկները, ըստ որոնց՝ նա օրենքից դուրս չի հայտարարվել: Իհարկե, "HB"-ն հաջողության է հասել մի քանի ներկայացուցիչների ու պաշտոնյաների ընտրության գործում: Սակայն հիմնականում այն եղել է քաղաքականապես մեկուսացված:

Գործնականում ժողովրդավարության կայացման գործում Իսպանիայի առավելությունն անգամ բացահայտորեն հակաժողովրդավարական ծայրահեղականներին ընտրություններին մասնակցել թույլատրելու առումով դառնում է ակներև, երբ վերլուծում ենք մի քանի գլխավոր իրադարձություններ: Օրինակ, 1979թ. Իսպանիայում երկրորդ ընդհանուր ընտրությունների ժամանակ երկրում ակտիվ քարոզարշավ էր իրականացնում «Ֆուերսա Նուևա» ("*Fuerza Nueva*", «Նոր ուժ») նեոֆաշիստական խումբը՝ հայտարարելով, որ խոսում է հոգուտ անցյալի արժեքների և փորձելով մոբիլիզացնել վարչակարգին ընդդիմադիր ուժերին: Սակայն «Ֆուերսա Նուևան» շահեց ընդհանուր ձայների միայն 2.1%-ը, ընտրեց մեկ պատգամավոր և կազմալուծվեց որպես քաղաքական ուժ անմիջապես 1979թ. ընտրություններից հետո: Սրանից ավելի վաղ օրինակ էլ կա. դատարանը թույլատրեց փոխգնդապետ Անտոնիո Տեխերո Մուլինային՝ 1981թ. փետրվարյան հեղաշրջման կազմակերպիչներից մեկին, 1982թ. ընդհանուր ընտրությունների ժամանակ իր բանտախցից ղեկավարել «Մուլիդարիդադ Էսպանյոլա» կուսակցությունը: Այս անգամ ևս նրա հավակնությունն այն էր, որ ինքը ներկայացնում է ընդդիմության ուժեղ հոսանք անցման ուղղության դեմ: Տեխերոյի կուսակցությունն ստացավ ընդհանուր ձայների 30000-ից էլ քիչ (0.13%)՝ դրանով իսկ օբյեկտիվորեն հաշվելով, Մուարեսի արտահայտությամբ, «պուտչիստներին» բացարձակ մերժած ընտրազանգվածի ձայները:

Ժողովրդավարություն չի նշանակում, որ յուրաքանչյուր քաղաքացի կողմ է ժողովրդավարությանը, ոչ էլ այն, որ հակաժողովրդավարականները չպետք է վայելեն ժողովրդավարական ազատություններ օրինական և ոչ բռնի գործողությունների համար: Բռնի գործողությունները, իհարկե, պետք է պատժվեն՝ կիրառելով իրավական միջոցներ (չնայած անգամ որոշ ժողովրդավարներ՝ որպես ահաբեկչությունից ունեցած իրենց անբավարարվածության դրսևորում, կարող են ներել անլեզալ ճնշումիջոցները): Ժողովր-

դավարության պաշտպանությունը ժողովրդավարական կուսակցությունների ու առաջնորդների և ի վերջո ընտրողների պարտականությունն է՝ հնարավոր դարձնելու համար կառավարման ժողովրդավարական ձևը:

ՊԵՏՈՒԹԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՅ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ  
ՎԵՐԱԶԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

Եթե Իսպանիան լիներ համեմատաբար միատարր ազգային պետություն, ինչպես Պորտուգալիան, Հունաստանը և Լատինական Ամերիկայի երկրները, ինչը կքննարկենք հաջորդիվ, ժողովրդավարությանն անցումն այնտեղ հավանաբար կավարտվեր սահմանադրության հաստատմամբ: Սակայն Կատալոնիայում ու Բասկերի երկրում ուժեղ ազգայնական զգացումները վեր հանեցին պետութենականության խնդիրներ: Կատալոնացիների ու Բասկերի ազգայնականությունն Իսպանիայի անցման գործընթացի մասին գրած հեղինակների մեծ մասի կողմից չի ընկալվել որպես կենտրոնական հարց: Սակայն այլ բազմազգ երկրներում ճգնաժամն ընդգծում է իր պետութենականության խնդիրը լուծելու համար Իսպանիայի ձեռնարկած քայլերի նշանակությունը, քայլեր, որոնք արժանի են հատուկ ուշադրության: Մենք պաշտպանում ենք այն տեսակետը, որ Իսպանիան կարողացել է հաղթահարել իր պետութենականության խնդիրը իշխանության բարեհաջող փոխանցմամբ միայն այն պատճառով, որ այն նախ ստեղծել է (հենց նոր վերլուծված գործընթացի միջոցով) լեգիտիմ պետական իշխանություն՝ հասարակարգը վերակազմավորելու լիազորությամբ ու կարողությամբ:

Մեր կարծիքով՝ անցման սկզբում երևան եկած Իսպանիայի փոփոխականը, որը պոտենցիալ կերպով ներկայացնում էր ամենավտանգավոր բարդությունը և՛ ժողովրդավարությանն անցման, և՛ ժողովրդավարության կայացման համար, պետութենականությունն էր: Քանի որ պետութենականությունն այնքան վճռորոշ էր և որովհետև, ի տարբերություն Հարավսլավիայի ու Խորհրդային Միության՝ այն այնքան լավ լուծում ստացավ Իսպանիայում, մենք այն կվերլուծենք ամենայն մանրամասնությամբ և՛ այն պատճառով, որ պետութենականությունը լույս է սփռում Իսպանիայում անցման վրա, և՛ այն տեսական նշանակության համար, որ պետութենականությունն ունի անցումների համար բազմազգ պետություններում, որոնք ունեն տարածաշրջանային, մշակութային ու ազգային կարևոր տարբերություններ, ինչպիսիք են՝ Հարավսլավիան, Խորհրդային Միությունը, Չեխոսլովակիան, Ինդոնեզիան և Նիգերիան:

Երբ Իսպանիայում սկսվեց ժողովրդավարացման գործընթացը, իսկապես, պոտենցիալ կերպով գոյություն ուներ պետութենականության վտանգավոր հիմնախնդիր: Ամենակարևոր ցուցանիշն այն էր, որ ազգայնամոլ բասկերի կազմակերպության "ETA"-ի ("Euskadi ta Askatasuna", «Բասկերի երկիր և ազատություն»), ահաբեկչական գործողությունները 1960թ-ի և Ֆրանկոյի մահվան տարվա՝ 1975թ-ի միջև ընկած ժամանակահատվածում, պատճառ դարձան քառասուներեք մահվան դեպքերի: Սահմանադրության հաստատման տարում՝ 1978թ., մահվան դեպքերի թիվը հասավ մինչև վաթսուհինգի: Յոթանասուներեք մահ գրանցվել է 1979թ-ին, և իննսուներեք՝ 1980թ-ին՝ առաջին տարածաշրջանային ընտրությունների տարում, ինչը հանգեցրեց իշխանության հիմնավոր

փոխանցման:<sup>19</sup> Այդ զինված բռնություններն առաջ բերեցին ժողովրդավարությանն անցման ու կայացման դեմ զինվորական ընդդիմության շատ իրական հավանականություն, որովհետև եթե 1968-75թթ. Ֆրանկոյի օրոք բասկերի ապստամբության կամ 1975-1977թթ. անցման ժամանակ չսպանվեց բանակի անգամ մեկ սպա, ապա 1978-1983թթ. միջև ընկած ժողովրդավարական իշխանության հետընտրական ժամանակահատվածում բասկ ազգայնականների բռնությունների հետևանքով զոհվեց բանակի երեսուկույթ սպա:<sup>20</sup>

Այդուհանդերձ, զարմանալիորեն, չնայած զինվորական սպաների մահվան դեպքերին ու Իսպանիայի կիսադաշնային պետության ստեղծման անխուսափելի դժվարություններին, համապետական շահեր հետապնդող *ոչ մի* կարևոր խումբ կամ կուսակցություն չբարձրացրեց *համակարգի մեղադրման* հարց: Անբարենպաստ մթնոլորտը երբեք միտումնավոր կերպով չշահարկվեց նորելուկ ժողովրդավարական վարչակարգը կամ Իսպանիայի ավանդական միասնական պետական կազմակերպությունից հեռացած նոր սահմանադրական կառույցները ապալեզիտիմացնելու համար: Մեր դատողությամբ՝ համակարգի մեղադրման այս բացակայության հիմնական պատճառն Իսպանիայում պետութենականության պոտենցիալ կերպով լուրջ խնդրի բարեհաջող լուծումն էր համապետական ընտրությունների միջոցով:

Ընտրությունները, հատկապես հիմնադիր ընտրություններն օգնում են մշակել օրակարգեր, առաջադրել գործող անձանց ու կազմակերպություններին և որ ամենակարևորն է, ստեղծել լեգիտիմություն և իշխանություն: Մեր գլխավոր փաստարկներից մեկն այն է՝ որ եթե երկիրն ունի պետութենականության խնդիր, ապա խիստ կարևոր է այն հանգամանքը, թե արդյոք առաջին ընտրությունները եղել են համապետակա՞ն, թե՞ տարածքային: Իսպանիայում առաջին ընտրությունները համապետական էին, և կարծում ենք, որ դրանք նպաստեցին երկրում պետութենականության խնդրի հաղթահարմանը: Հետֆրանկոյական առաջին քվեարկությունը, ինչպես տեսանք, «քաղաքական բարեփոխումներին *ուղղված օրենքը*» հաստատելու նպատակով անցկացված հանրաքվեն էր: Այդ օրենքով կառավարությունը պարտավորություն ստանձնեց ոչ թե քաղաքական բարեփոխումների այս կամ այն ուղղության, այլ հստակ *ժողովրդավարացման* (ոչ թե՝ զուտ *ազատականացման*) գործընթացի իրականացման համար:

1977 հունիսի 15-ի երկրորդ կարևորագույն քվեարկությունը նույնպես զուտ ազատականացման վերաբերյալ չէր, այլ ժողովրդավարացման. դրանք համապետական ընդհանուր ընտրություններ էին՝ ընտրելու պատգամավորների, ովքեր կստեղծեին կառավարություն և կմշակեին նոր սահմանադրության նախագիծ: Քանի որ վճռվում էր երկրի ճակատագիրը, երկրի մասշտաբով չորս գլխավոր կուսակցություններն Իսպանիայով

19. *Տե՛ս* Ֆերնանդո Ռեյնարես, «Սոցիոգենեզ և սահաբեկչության զարգացումն Իսպանիայում» (Fernando Reinares, "Sociogénesis y evolución del terrorismo en España"), Սավադոր Գիների խմբ. «Իսպանիայի հասարակությունը և քաղաքականությունը» (Salvador Giner, ed., *España sociedad y política* (Madrid: Espasa Calpe, 1990), 353-96):

20. Նույն տեղում, *տե՛ս նաև* Ֆրանսիսկո Լյետա, «Բասկերը և քաղաքականությունը: Բասկական քաղաքական գործընթացները՝ ընտրություններ, կուսակցություններ և լեգիտիմացման մասին հասարակական կարծիքը Բասկերի Երկրում» (Francisco J. Llera, *Los vascos y la política. El proceso político vasco: elecciones, partidos y opinión pública y legitimación en el País Vasco, 1977-1992* (Bilbao: Universidad del País Vasco, 1994)):

մեկ իրականացրին համապետական հարցերի շուրջ քարոզարշավ՝ 350 տեղից գրավելով 319-ը: Նույնչափ կարևոր էր նաև այն, որ համապետական կուսակցություններն իրենց քարոզարշավում ուշադրության կենտրոնում էին պահում հիմնականում այն շրջանները, որտեղ անջատման հավանականությունն ավելի մեծ էր, իսկ համակարգի դեմ ունեցած ընդդիմադիր զգացումներն առավել խոր էին արմատացած. դրանք Կատալոնիան ու գլխավորապես բասկերով բնակեցված տարածքներն էին: Թեև կատալոնացիների ու բասկերի՝ ուժեղ ազգայնական կուսակցություններ, իրոք, առաջացան, բայցնայնպես, չորս համապետական նշանակության կուսակցություններն ու դրանց տարածաշրջանային մասնաճյուղերը շահեցին ձայների 67.7%-ը Կատալոնիա յում և 51.4%-ը՝ Բասկերի երկրում:<sup>21</sup>

Այդ համապետական ընտրությունների միջոցով ասպարեզ ելած պատգամավորներն ու կառավարությունը ներգրավվեցին երկարատև հրապարակային ու մասնավոր բանակցություններում սահմանադրության և այն հարցի շուրջ, թե ինչ ուղղությամբ է պետք առաջ գնալ պետութենականության խնդրի առնչությամբ: Ի վերջո փոխհամաձայնական մի սահմանադրություն խորհրդարանում պաշտպանության արժանացավ չորս խոշոր կուսակցությունների, ինչպես նաև կատալոնական ազգայնականների խոշոր կուսակցության կողմից. 274 քվեարկող անդամներից 258-ը տվեցին իրենց հավանությունը: Այնուհետև հաջորդեց երրորդ համընդհանուր դիմումն Իսպանիայի ընտրազանգվածին՝ հանրաքվե սահմանադրության վերաբերյալ, որը հաստատվեց քվեարկողների 87.8%-ի կողմից 1978թ. դեկտեմբերի 1-ին: Կատալոնիայում սահմանադրությունը հաստատվեց ընտրողների 90.4%-ի կողմից: Բասկերի երկրում ընտրողների 68.8%-ը հավանություն տվեց սահմանադրությանը, սակայն քվեարկողների մասնակցությունը միայն 45.5% էր, ինչը ցածր է իսպանացիների ու կատալոնացիների դրսևորած 67%-ից:<sup>22</sup>

Իրենց ընտրազանգվածի այս երեք մոբիլիզացումներով ուժեղացած ու լեգիտիմացած Իսպանիայի կառավարությունն ու խորհրդարանը լրջորեն ձեռնամուխ եղան իշխանության հանձնման շուրջ բանակցություններին Կատալոնիայի ու Բասկերի երկրի նահանգային ներկայացուցիչների հետ, որոնք իրենք էլ առաջ էին քաշվել ընդհանուր ընտրությունների հետևանքով: Լարված վիճաբանությունների պայմաններում ընթացող բանակցություններն ի վերջո հանգեցրին մի համակարգի ստեղծմանը, որի միջոցով Իսպանիան պետք է փոխեր իր պատմականորեն կենտրոնացված պետական կառուցվածքը նոր՝ ապակենտրոնացված կառուցվածքով, որը բնութագրվում է ծայրամասային ազգայնական տարրերին իշխանության աննախադեպ փոխանցմամբ: Տարածքային ինքնավարության շուրջ բանակցությունների արդյունքում այդ ձեռք բերված համաձայնությունները (ինքնավարության մասին օրենսդրական ակտերի տեսքով) ներկայացվեցին բասկ և

21. Համապետական կուսակցությունների կազմակերպման և այդ կուսակցությունների օրակարգի փոփոխման գործում համընդհանուր ընտրությունների կարևորության մասին տե՛ս Գյունտեր, Սանի և Շաբադ, «Իսպանիան Ֆրանկոյից հետո» (Gunther, Sani, and Shabad, *Spain after Franco*, 37-177), ընտրությունների արդյունքների մասին տե՛ս էջ 38 և 311:

22. Սահմանադրական քվեարկությունների մասին մանրամասն տե՛ս Անդրեա Բոնիմե-Բլանկ, «Իսպանիայի անցումը ժողովրդավարության. սահմանադրության մշակման քաղաքականությունը» (Andrea Bonime-Blanc, *Spain's Transition to Democracy: The Politics of Constitution-Making* (Boulder, Colo.: Westview Press, 1987)):

կատարնացի ընտրողներին 1979թ. հոկտեմբերին: Կատալոնիայի օրենսդրական ակտը հաստատվեց տարածաշրջանում քվեարկողների ձայների 87.9%-ով, իսկ Բասկերի երկրի օրենսդրական ակտը՝ 90.3%-ով:<sup>23</sup> Բասկ ամենախոշոր ու ամենահին ազգայնական կուսակցությունը (PNV), որը ձեռնպահության էր դրդում սահմանադրության շուրջ ավելի վաղ անցկացված հանրաքվեի ժամանակ, հարմարվեց նոր քաղաքական իրավիճակին ու կոչ արեց հավանություն տալ ինքնավարության մասին օրենսդրական ակտին:<sup>24</sup>

Եթե Իսպանիայում առաջին ընտրությունները լինեին տարածաշրջանային, այլ ոչ թե՛ համապետական, համաիսպանական կուսակցությունների ու համաիսպանական օրակարգի ստեղծման շահագրգռվածությունը զգալիորեն կնվազեր: Դրա հետևանքով համապետական կուսակցություններն ու դրանց մասնաճյուղերը կստանային ավելի քիչ ձայն:<sup>25</sup> Կարծում ենք նաև, որ եթե առաջին ընտրությունները լինեին տարածաշրջանային մակարդակում, ազգությունների կողմից բարձրացված հարցերն ավելի էական ու բաժանարար դեր կստանձնեին ընտրական քարոզարշավում, քան իրականում ստացան, և ազգայնական կուսակցություններն ու դրանց մասնաճյուղերը կլինեին ավելի ծայրահեղական: Հիրավի, կար լուրջ հավանականություն, որ ծայրամասային ազգայնական կուսակցություններն ու խմբերն ի վիճակի կլինեին կտրականապես փոխելու ընտրական քարոզարշավի դիսկուրսն այնպես, որ բաժանման ու անկախության համար մոբիլիզացման կոչերը դառնային գերակշռող:<sup>26</sup> Ուժեղացած ազգայնական կուսակցությունները մեծապես կբարդացնեին պետութենականության խնդիրն Իսպանիայում: Զինվորականության ու կենտրոնական կառավարության ժողովրդավարամետ ուժերի միջև հարաբերությունները գրեթե վստահաբար մեծ լարման տակ կդրվեին: Պետութենականության հարցի շուրջ

23. *Sté u* Խուան Լինց (Juan J. Linz), "De la crisis de un Estado unitario al Estado de Las autonomías", Ֆերնանդո Ֆերնանդեսի խմբ.՝ *La España de las autonomías* (Madrid: Instituto de Estudios de Administración Local 1985), 527-672 և Խուան Լինց (Juan J. Linz), *Conflicto en Euskadi* (Madrid: España Calpe, 1986): Բասկերի ինքնավարության մասին օրենսդրական ակտերի շուրջ քննարկումները, *տե՛ս* լրագրողներ Կեպա Բորդեգարայի (Kepa Bordegarai) և Ռոբերտ Պաստորի (Robert Pastor) կյուրսում՝ *Estatuto vasco* (San Sebastian: Ediciones Vascas, 1979):

24. Որոշ ծայրահեղ անջատողական խմբեր շարունակում էին բոյկոտել ինքնավարության հարցի քվեարկությունը, իսկ քվեարկողների ընդհանուր մասնակցությունը 13%-ով ցածր էր, քան միջին ցուցանիշն Իսպանիայում սահմանադրության հանրաքվեի ժամանակ. այդուհանդերձ, 54% քվեարկողների մասնակցությունը քաղաքականապես նշանակալից էր:

25. Անգամ երբ պետութենականության հարցերը ցայտուն չեն, տարածաշրջանային կուսակցություններն Իսպանիայում 15-25%-ով ավելի շատ ընտրող են գրանցում տարածաշրջանային ընտրությունների, քան համընդհանուր ընտրությունների ժամանակ:

26. Նման հավանական դիսկուրսի օրինակներից է այն փաստը, որ «Consejo de Fuerzas Políticas de Cataluña» 1976թ. մարտին հրապարակայնորեն պահանջեց «Գեներալիտետի ժամանակավոր կառավարության հաստատում, որը Կատալոնիայում կընդուներ իշխանությունը "ruptura democrática"-ի պահից սկսած՝ հնարավորինս կարճ ժամկետում Կատալոնիայի խորհրդարանի ընտրությունները հայտարարելու և անցկացնելու պատասխանատվությամբ, որ կառավարությունը կկազմավորվի այն սկզբունքների հիման վրա, որոնք ձևավորել են 1932թ. օրենսդրական ակտերը, և որպես առաջին քայլ՝ կդրսևորվի ինքնորոշման իրավունքի որոշակի իրագործման մեջ»: Ինչպես իր հուշերում մեկնաբանում է Կատալոնիայի նախորդ տարածքային կառավարության աքսորված առաջնորդ Խոսե Տարադելլարը, «քաղաքական երկարաբանությունը գտնվում էր իր գագաթնակետում»: Խոսե Տարադելլաս (José Terradellas), *Ja Soc Aquí: Recuerdo de un retorno* (Barcelona: Planeta, 1990), diary entry of March 15, 1976, p. 4:



Աղյուսակ 6.1. Բազմակի ինքնությունները Կատալոնիայում, 1982թ.

Ինքնություն	Բնակչություն			
	Երկու ծնողները ծնվել են Կատալոնիայում	Ծնողներից ոչ մեկը Կատալոնիայում չի ծնվել	Ներգաղթողներ	Ամբողջ ընտրանքը
Կատալոնացի	13.7	10.7	2.3	9.0
Ավելի կատալոնացի, քան իսպանացի	26.5	12.0	4.2	16.9
Նավասարապես կատալոնացի և իսպանացի	48.2	37.5	25.9	40.1
Ավելի իսպանացի, քան կատալոնացի	5.7	10.5	12.6	8.2
Իսպանացի	5.1	23.7	51.3	23.5
Պատասխան չկա	0.8	5.7	3.8	2.4
	(414)	(69)	(317)	(885)

Աղբյուրը՝ Խուան Լինզ (Juan J. Linz), "De la crisis de un estado unitario al estado de las autonomias", Ֆերնանդո Ֆերնանդեսի խմբ.: *La España de las autonomías* (Madrid: Instituto de Estudios de Administracin Local, 1985) էջ 560:

սրված հակամարտության համատեքստում զինվորական հեղաշրջման կռալիցիան, որը պարտվել էր թագավորի անձնական միջամտության շնորհիվ 1981թ. փետրվարի 23-ին, հավանաբար ավելի վաղ կծագեր ու ավելի մեծ ուժով՝ ընդդեմ բաժան-բաժան եղած ու նվազ լեզվատիր կառավարության:

Իսպանիայում անցումը ժողովրդավարությանն անշուշտ սկսվեց նպաստավոր պայմաններում, սակայն ժողովրդավարության գործին հստակ նվիրումն ու համերկրային ընտրություններն ամրապնդեցին կենտրոնական կառավարության լեզվատիրության հավակնությունները, օգնեցին քաղաքական ու քաղաքացիական հասարակության միջև կապերի ստեղծմանն ու նպաստեցին նոր, սահմանադրությամբ հավանություն ստացած հարաբերությունների հաստատմանն Իսպանիայի ծայրամասային ազգայնականների ու կենտրոնական կառավարության միջև: Ամենից կարևորն այն էր, որ համերկրային ընտրությունները արձանագրեցին պետական ինքնության փաստն այնպիսի ձևով, որը նպաստավոր էր Իսպանիայում բազմակի ինքնությունների ու ժողովրդավարության համար: Նոր ժողովրդավարական Իսպանիայում շարունակում են պահպանվել փոխլրացնող բազմակի ինքնությունները: Կրկնակի ինքնությունները Կատալոնիայում եղել են նորմա և երբեք կասկածի տակ չեն առնվել (Աղյուսակ 6.1):

Կատալոնացիներն այժմ ձեռք են բերել քաղաքական ու մշակութային վերահսկողություն կրթության, հեռուստատեսության ու ռադիոյի և, իհարկե, այն ոլորտների մեծ մասի նկատմամբ, որտեղ կատալոնյան ազգայնականությունն անցյալում բոլորից շատ է ճնշվել: Կատալոնացիները՝ որպես տարածաշրջանային խումբ, մասնակցում են նաև Եվրոպական համայնքին (այժմ՝ Եվրոպական Միություն), մի մարմին, որը որոշ կարևոր առումներով նույնքան տարածաշրջանների համայնք է, որքան և պետությունների: Եվ վերջապես, այս նոր համատեքստում կատալոնացիներն ավելի մեծ չափով, քան երբևէ նախկինում ընդունեցին իրենց՝ որպես իսպանական պետության անդամների ինքնությունը: Ընտրությունների հաջորդականությունն Իսպանիայում օգնեց ձևավորել այս փոխադարձ սատարող իրավական ու զգայական անդամակցությունն ազգային (կա-

**Աղյուսակ 6.2. Ազգային ինքնությունները Կատալոնիայում**

Նարցման պատասխան	Տոկոս	
	Կատալոնացիներ	Ամբողջ Իսպանիան
«Նպարտ եմ, որ իսպանացի եմ»	73%	85%
«Նպարտ եմ, որ կատալոնացի եմ»	82%	5/9*
Եվրոպական համայնքի միջոցով Եվրոպայի միասնականացման օգտին	83%	76%

*Աղբյուրը՝* նպարտության վերաբերյալ հարցերը տե՛ս՝ Ֆրանսիսկո Անդրես Օրիսո և Ալեյխանդրո Սանչես Ֆերնանդես, «Կատալոնացիների արժեքների համակարգը» (Francisco Andrés Orizo and Alejandro Sanchez Fernandez, *El sistema de valores dels Catalans* (Barcelona: Institut Catala d'Estudis Mediterranis, 1991), 207): Եվրոպայի միասնականացման վերաբերյալ հարցերը՝ "Los Españoles ante el Segundo aniversario de la firma del Tratado de Adhesión de España a la Comunidad Europa" (Մադրիդ, Սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոն, 1988թ. ապրիլ), էջ 53: Այս աղյուսակը վերարտադրվել է Խուան Լինցի և Ալֆրեդ Ստեփանի թույլտվությամբ՝ «Քաղաքական ինքնություններ և ընտրական հաջորդականություններ. Իսպանիա, Խորհրդային Միություն և Նարավալիա», "Political Identities and Electoral Sequences: Spain, the Soviet Union, and Yugoslavia," *Դեդալուս* 121 (1992թ. գարուն), էջ 128:

\* «5/9» տվյալ չկա:

**Աղյուսակ 6.3. Ազգային ինքնությունները Բասկերի երկրում**

Նարցման պատասխան	Տոկոս	
	Բասկերի երկիր	Ամբողջ Իսպանիան
«Նպարտ եմ, որ իսպանացի եմ»	44%	85%
«Նպարտ եմ, որ բասկ եմ»	69%	5/9*
Եվրոպական համայնքի միջոցով Եվրոպայի հետ միավորման օգտին	74%	76%


*Աղբյուրը՝* վերատպվել է Խուան Լինցի և Ալֆրեդ Ստեփանի թույլտվությամբ՝ «Քաղաքական ինքնություններ և ընտրական հաջորդականություններ. Իսպանիա, Խորհրդային Միություն ու Նարավալիա» (Juan J. Linz and Alfred Stepan, "Political Identities and Electoral Sequences: Spain, the Soviet Union, and Yugoslavia", *Daedalus* 121 (spring 1992): 129):

\* «5/9» տվյալ չկա:

տալոնական), պետական (իսպանական) և վերապետական (Եվրոպական համայնք) կառույցներին: Բոլոր կատալոնացիների գերակշռող տոկոսը հպարտ է, որ կատալոնացի է, հպարտ է, որ իսպանացի է և մեծապես կողմ է ինտեգրված եվրոպական քաղաքական համայնքին միանալուն: Աղյուսակ 6.2-ը շատ հստակ ցույց է տալիս այդ փոխարացնող բազմակի ինքնությունները:

Բասկերի երկիրը ներկայացնում է մի ավելի դժվար քաղաքական իրավիճակ: Թեև միասնական Եվրոպային անդամակցության կողմնակիցները շատ են, Բասկերի երկրի բնակիչները 40%-ով ավելի քիչ են հպարտ, որ իսպանացի են, քան գրանցված ազգային միջին ցուցանիշն է, և մոտ 30%-ով ավելի քիչ են հպարտ իսպանացի լինելու համար, քան կատալոնացիները (Աղյուսակ 6.3): Բասկերի երկրում դեռևս տիրում են սովորական դարձած անջատողական բռնությունները, սակայն կարծում ենք, որ ընտրությունների արդեն նկարագրված հաջորդականությամբ ընդհանուր քաղաքական իրավիճակը բարելավվել է: Հիբավի, Բասկերի երկիրը հատկապես վառ օրինակ է այն բանի, թե ընտրություններն ինչպես կարող են ձևավորել ինքնություններն ու ապալեզիտիմացնել հակապետական բռնությունների որոշակի տեսակները:

Այժմ եկեք կենտրոնանանք այն հարցի վրա, թե քաղաքական գործընթացների միջոցով



**Նկ. 6.1. Կատալոնիայում ու Բասկերի երկրում և Նավարայում անկախության ձգտող բնակչության տոկոսն ինքնավարություններին իշխանություն տալու մասին 1979թ-ին անցկացված հանրաքվեից առաջ և հետո**

*Աղբյուրը՝* Խուան Լինց և Ալֆրեդ Ստեփան «Քաղաքական ինքնություններ և ընտրական հաջորդականություններ. Իսպանիա, Խորհրդային Միություն և Նարավալիա» (Juan J. Linz and Alfred Stepan, "Political Identities and Electoral Sequences: Spain, the Soviet Union, and Yugoslavia", Daedalus 121, no. 2 (Spring 1992): 130), վերատպված «Գեոլոլոսի» թույլտվությամբ: Այս աղյուսակը կազմված է նախապես Խուան Լինցի (Juan J. Linz) ներկայացրած տվյալների հիման վրա՝ "De la crisis de un Estado unitario al Estado de las autonomias", Ֆերնանդո Ֆերնանդես Ռոդրիգեսի խմբ.՝ *La España de las autonomias* (Madrid: Instituto de Estudios de Administracion Local, 1985), 587.:

ինչպես է հնարավոր ձևավորել ինքնությունները: 1977-79 թվականներին Իսպանիայում ամենաթեժ քաղաքական հարցը վերաբերում էր ծայրամասային ազգայնականների հարաբերությանը միասնական իսպանական պետության հետ: Այս երկամյա ժամանակահատվածում Բասկերի երկրում բնակչության այն տոկոսը, որն ասել էր, որ ցանկանում է լինել անկախ, *կրկնապատկվել էր՝* կազմելով ամբողջ բնակչության, ըստ էության, մեկ երրորդը: Սկսելով ավելի փոքր հիմքի վրա՝ անկախության նկատմամբ վերաբերմունքը Կատալոնիայում նույն ժամանակահատվածում *եռապատկվել է:* Իսկապես, եթե այդ միտումները շարունակվեին ևս մի քանի տարի, ապա Իսպանիայում տեղի կունենար պետութենականության ծանր ճգնաժամ: Մակայն երբ անցկացվեց հանրաքվե ինքնավարության մասին օրենսդրական ակտերի շուրջ և հաստատվեցին կառավարությունները՝ բասկ ու կատալոնական ազգայնական կուսակցությունների ներկայացուցիչների ներառ-

մամբ, անկախության հարցի նկատմամբ զգացումների դրսևորումը պակասեց, իսկ հետո կայունացավ՝ իջնելով ավելի ցածր մակարդակի (Նկար 6.1):

Բասկերի երկրում հանրաքվեից հետո էլ դեռ շարունակվում էին սպանությունները, առևանգումներն ու ահաբեկչություններն անկախության կողմնակից խմբերի կողմից, սակայն դրանց քաղաքական նշանակությունը կտրուկ փոխվել էր: "ETA"-ի ահաբեկչությունը եղել է կենտրոնական գործոն ժողովրդավարության անցման ընթացքում, սահմանադրության մշակման ժամանակահատվածում, ինքնավարության մասին օրենսդրական ակտերի շուրջ բանակցությունների ու դրանց հաստատման ժամանակ, բասկերի խորհրդարան ընտրելիս, կառավարությունը կազմավորելիս ու կառավարությանը գործառույթներ փոխանցելիս: Այս բոլոր իրադարձություններից յուրաքանչյուրի ընթացքում վստահություն էր արտահայտվում, որ այդ քայլերը կտանեն դեպի ահաբեկչության վերացմանը, սակայն շատ ավելի հաճախ դրանք համընկնում էին ահաբեկչության գոհերի թվի կտրուկ աճի հետ: Ահաբեկչությունը չանհետացավ նաև իսպանական ժողովրդավարության և բասկերի ինստիտուտների ու ինքնակառավարման կայացմամբ:

Արդյո՞ք դա նշանակում է, որ պետութենականության խնդրի՝ ծայրամասային ազգայնականության խնդրի լուծման ուղղությամբ արված քայլերը ձախողվել են: Կան փաստեր (որոնք մենք այստեղ ամենայն մանրամասնությամբ չենք կարող քննարկել), որ դա այդպես չէ: Ահաբեկչությունը կենտրոնական կարևորություն ունենալուց դարձել է կյանքի ողբերգական կողմ, առավելապես Բասկերի երկրում, սակայն չի կարող ապակայունացնել ժողովրդավարությունն Իսպանիայում: Ընդդիմադիր «Ժողովրդական կուսակցություն» ("Partido Popular") կուսակցության առաջնորդ Խոսե Մարիա Ասնարի կյանքի դեմ մահափորձը 1995թ. միաբերան դատապարտվեց: Ահաբեկչությունն այսօր ունի իր ուրույն դինամիկան՝ բասկ բնակչության միայն փոքրամասնության աջակցությամբ:

Հասարակական կարծիքի մասին տվյալները ցույց են տալիս բասկ բնակչության վերաբերմունքի մեջ հիմնական փոփոխություններ "ETA"-ի նկատմամբ, սակայն վերաբերմունքների համեմատությունը ժամանակի ընթացքում բարդանում է հարցի ձևակերպման որոշ փոփոխությունների և «կարծիք չունեմ» ու «չգիտեմ» կետերի տարբեր համամասնությունների պատճառով (հավանաբար հանրային հարցումներ իրականացնող տարբեր կազմակերպությունների մոտեցումների տարբերությունների հետևանքով): Սա հաշվի առնելով՝ ցանկանում ենք նշել, որ 1979թ. միայն 5%-ն էր "ETA"-ին համարում «հանցագործ», 1989թ. այդ կարծիքին էր արդեն 16%-ը: 1979թ. 17.1%-ը "ETA"-ին համարում էր հայրենասեր, իսկ 1989թ. միայն 5%-ն էր նրանց համարում այդպիսին: Ժողովրդավարության մեկ տասնամյակի ընթացքում հարցվողների այն մասը, որն "ETA"-ին անվանում էր «իդեալիստ», 33%-ից իջավ մինչև 18%-ի, երկխմաստորեն «շահարկված» պատասխան տվածների թիվը 29%-ից իջավ մինչև 11%-ի, մինչդեռ «խելագարներ» պատասխանողների թիվը 8%-ից աճեց մինչև 16%: Այդ փոփոխություններից շատերը կապված էին «չգիտեմ» պատասխանաձևների և չպատասխանաձևների մեծ թվի հետ՝ 8%-ից մինչև 34%, որը հավանաբար արտացոլում էր այդ ամբողջ հարցից համընդհանուր հոգնածությունը, սակայն դա ուշադրությունը չի շեղում այն փաստից, որ "ETA"-ին աջակցող մարդկանց թիվը, ովքեր որակում էին նրանց որպես «հայրենասերների», և նրանց թիվը, ովքեր դատապարտում էին նրանց որպես «հանցագործների», փոխվել էր:

1981թ.-ից մինչև 1989թ. ընկած ժամանակաշրջանին վերաբերող տվյալների մեկ այլ

խումբ ցույց է տալիս, որ 1981թ. 8%-ը "ETA"-ին է տվել իր «լիակատար աջակցությունը», իսկ 1989թ. այդ թիվը կազմել է 3%: Այն մարդկանց թիվը, ովքեր համաձայն են եղել "ETA"-ի նպատակներին, սակայն ոչ միջոցներին, 3%-ից 1981թ-ից մինչև 1989թ. դարձել էր 9%: Որ առավել կարևոր է, «լրիվ մերժում» արտահայտող պատասխան տվածների տոկոսը 1981թ. 23-ից դարձել է 45% 1989թ-ին, 48% «չգիտեմ, պատասխան չկա» եղել է 1981թ., մինչդեռ միայն 16% «չգիտեմ, պատասխան չկա»՝ 1989թ-ին:<sup>27</sup>

1979 և 1986 թվականների միջև ընկած ժամանակահատվածում ըստ կուսակցությունների քվեարկության տվյալների՝ համեմատությունը ցույց է տալիս, որ սոցիալիստներին (PSOE) աջակցողների թվում «հայրենասերներ» ու «իդեալիստներ» պատասխաններ տվածների տոկոսն ընկել է 46-ից մինչև 10, իսկ բացասական պատասխաններ տվածների («խելագարներ» կամ «հանցագործներ») տոկոսը 47-ից բարձրացել է մինչև 74-ի: Առավել նշանակալից է այն, որ այս «ինքնության ապալեզիտիմացումն» առաջացել է անզամ հիմնական ազգայնական կուսակցության՝ «Բասկ ազգային կուսակցության» ("Partido Nacionalista Vasco") (PNV) ընտրողների մեջ, որտեղ դրական պատասխանների տոկոսն ընկել է 40-ից մինչև 16%-ի: Անզամ «Էրրի Բատասունայի» ընտրողների շրջանում են նվազել դրական պատասխանները՝ 60%-ից, ովքեր անվանել են «հայրենասերներ», մինչև 31%-, մինչդեռ աճել է «իդեալիստներ» անվանած ընտրողների թիվը՝ 1986թ. 40%՝ 1979թ-ի 25%-ի դիմաց:<sup>28</sup>

Բասկ ազգայնականների համար (հավանաբար ամբողջ աշխարհում ազգայնականների մեծ մասի նման) անկախ ազգային պետություն ունենալու նպատակը երբեք չի վերանա: Սակայն այդ ձգտման ինտենսիվությունն ու այն առաջ մղելու համար կիրառվող քաղաքական միջոցները կարող են փոխվել և փոխվել են: Բազմազգ ժողովրդավարական պետությունը ի գործ է հարմարվելու, ինչպես ցույց է տալիս վերջին երկու տասնամյակում իսպանա-բասյան քաղաքականության օրինակը:

Այս զարգացումները մեծապես կայունացրել են ինքնության բազմակի մակարդակները (այն անձանց էական թվաքանակը, ովքեր զգում են իրենց և՛ բասկ, և՛ իսպանական ինքնությունը) և սահմանափակել երկու հանրությունների բևեռացումը: Դրանք նաև կա-

27. Բասկերի մասին տվյալների վերլուծության և քաղաքական բռնության համատեքստում ժողովրդավարական քաղաքականության ավելի մանրամասն քննարկման մասին *տե՛ս* Գոլդի Շաբադ և Ֆրանսիսկո Լյեռա, «Քաղաքական բռնությունը ժողովրդավարական պետությունում. բասկերի ահաբեկչությունն Իսպանիայում» (Goldie Shabad and Francisco J. Llera, "Political Violence in a Democratic State: Basque Terrorism In Spain"), Մարթա Քրինշոուի խմբ.՝ «Ահաբեկչությունը համատեքստում» (Martha Crenshaw, ed. *Terrorism in Context* (University Park, Penn.: Pennsylvania State University Press, 1995), 410-69), Էռա, «Բասկերը և քաղաքականությունը» (Llera, *Los vascos y la politica and Linz, Conflictio en Euskadi*, 698):

28. Շաբադ և Էռա, «Քաղաքական բռնություն» (Shabad and Hera, "Political Violence"): Դժբախտաբար, 1979-1989թթ. ժամանակահատվածում անկախության նկատմամբ վերաբերմունքների համեմատությունն ամբողջությամբ հնարավոր չէ, քանի որ «անտարբեր եմ» պատասխանը ներմուծվել է 1989թ.: Սակայն նրանք, ովքեր արտահայտել են անկախության «մեծ ձգտում» կամ «բավական մեծ ձգտում», 1979թ. կազմել են 36%, իսկ 1989թ.՝ 31%: Նրանք, ովքեր նշել են «բավական քիչ ձգտում», կազմել են 15% և 8% համապատասխանաբար, «շատ քիչ»՝ 12 և 7% և «ոչ մի»՝ 1.9 և 19%: «Անտարբեր եմ» տարբերակի առաջարկելն ընտրություն չկատարելու հնարավորություն է տվել 19%-ին, «ոչ մի պատասխան» նշածների թիվն ավելացել է 7%-ից մինչև 18% (հավանաբար հարցումները տարբեր կերպ կազմակերպելու պատճառով):

յունացրել են անկախության ի սկզբանե ուժեղ և հարածուն ձգտումը: Այնպես չէ, որ այդ ձգտումն անհետացել է, և թեև այն ավելի ու ավելի շատ սահմանվում է որպես խորհրդանշական երկարաժամկետ նպատակ, առայժմ քաղաքականությունը, կառավարությունն ու ընտրությունները տեղի են ունենում վերափոխված իսպանական պետությունում: Այդ զարգացումները նաև հնարավոր են դարձրել Բասկերի երկրում "ETA"-ի ահաբեկիչների ապալեզիտիմացումն ու քաղաքական մեկուսացումը: Թեև բասկերի քաղաքական սպանությունները շարունակվում են, բայց դրանք այլևս չեն սպառնում տապալել ժողովրդավարական կառավարությունը:

Իսպանական պետութենականության ճգնաժամը կասեցվեց նախնական փուլում շնորհիվ ընտրությունների ճիշտ հաջորդականության: Ինչպես կտեսնենք, երբ քննարկենք պետութենականության հարցը Խորհրդային Միությունում ու Հարավսլավիայում, ընտրությունների հաջորդականությունն այս երկու երկրներում հիմնավորապես այլ էր, և այն խորացրեց պետութենականության խնդիրը, որն այդ երկու երկրներն էլ արդեն ունեին իրենց խորհրդային ոճի դաշնային սահմանադրությունների ու պատմական հիշողությունների շնորհիվ: Չենք ցանկանում չափազանցնել առաջին հերթին համընդհանուր ընտրություններ (որտեղ համերկրային կուսակցությունները մրցեցին ամբողջ երկրում, և որը ժողովրդավարական լեզիտիմություն հաղորդեց նաև ազգային կուսակցություններին) անցկացնելու նշանակությունը վճռորոշ պահին Իսպանիայում պետութենականության խնդրի բարեհաջող լուծման համար: Առանց բոլոր հաջորդ քայլերն իրականացնելու (նախաինքնավարությունների մասին որոշումները 1977թ. աշնանը, 1978թ. սահմանադրությունը և "Estatutos"-ի հաստատումը 1979թ.) խնդիրը կարող էր ձգձգվել՝ խոչընդոտ դառնալով իսպանական ժողովրդավարության լրիվ կայացման համար: Չենք պնդում նաև, որ ծայրամասերում ազգակերտման ջանքերը խնդրահարույց չեն բազմալեզու կատալոնական ու բասկ հասարակություններում այն իմաստով, որն արդեն քննարկել ենք Գլուխ 2-ում: Մեր ասածն այն է, որ իշխանության լրիվ փոխանցման հետաձգելը մինչև 1978թ. իսպանական սահմանադրության հաստատումը, ինքնավարության մասին օրենսդրական ակտերի շուրջ բանակցություններն ու հանրաքվեի միջոցով դրանց հասարակական լեզիտիմացումը հնարավոր դարձրին ազգային ձգտումների ավելի քիչ բախումնային ու ավելի շատ ինստիտուցիոնալ ճանաչումը և նոր ու միանգամայն այլ պետության կազմավորումը:

Կիրառելով ժողովրդավարությանն անցման ավելի վաղ առաջ քաշած սահմանումը՝ մենք հաստատապես ասում ենք, որ Իսպանիայում անցումն սկսվեց 1975թ. նոյեմբերի 20-ին Ֆրանկոյի մահվամբ և ավարտվեց ոչ ուշ, քան 1979թ. հոկտեմբերի 25-ին, երբ անցկացվեցին տարածաշրջանային ինքնավարության մասին բասկերի ու կատալոնացիների հանրաքվեները: Իհարկե, կարելի է ասել, որ անցումն ավարտվել էր այն ժամանակ, երբ 1977թ. նոյեմբերին պաշտոնապես հաստատվեց կառավարության՝ խորհրդարանին հաշվետու լինելու սկզբունքը կամ այն ժամանակ, երբ նոր ժողովրդավարական սահմանադրությունը հաստատվեց հանրաքվեի միջոցով 1978թ. դեկտեմբերի 6-ին: Սակայն կարծում ենք, որ միայն այն բանից հետո, երբ բանակցություններ անցկացվեցին բասկերի ու կատալոնացիների տարածաշրջանային ինքնավարության բանաձևի շուրջ, Իսպանիան բավարարեց *ավարտված անցման* մեր երեք պահանջները. իշխանության էր եկել մի կառավարություն, որն արդյունք էր ազատ ու համաժողովրդական քվեարկության, այդ կա-

ռավարությունն ուներ գերագույն լիազորություն՝ քաղաքականություն մշակելու համար և այդ կառավարությունը *դե յուրե* ստիպված չէր իշխանությունը կիսելու այլ մարմինների հետ: Մինչև այս կետը կար որոշ կասկած այն մասին, թե արդյոք գինվորականությանը կհաջողվի՞ վիճարկել ազգային շրջանների քաղաքականության մեծապես հակասական ոլորտում կառավարության՝ բանակցելու և նոր մոտեցումներ առաջադրելու գերագույն իրավունքը: Ավելին, եթե ժողովրդավարորեն ընտրված կառավարությունը չլուծեր ազգային շրջանների հետ կապված այս խնդիրները, նրա անգամ լեգիտիմությունը կարող էր կասկածի տակ առնվել, որովհետև այդ կառավարությունը կարող էր դիտվել որպես ֆրանկիստական վարչակարգի շարունակականության արտահայտություն:

### ԱԿՆԱՐԿ. ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՈՒՄ

Դժվար է գնահատել քաղաքական բռնությունների դերը ժողովրդավարության համար մղվող պայքարում: Մեր աշխատության մեջ ներառված օրինակներում վարչակարգերը չեն տապալվել գինված ժողովրդական շարժումների, պարտիզանների կամ ահաբեկիչների կողմից, եթե մի կողմ թողնենք Ռումինիայի շփոթեցուցիչ իրադարձությունները: Պորտուգալացի կապիտանների «ազատություն մի հարվածով»-ը ("liberation by golpe") բոլորովին ուրիշ դեպք է: Սակայն Իսպանիայի դեպքում կային բռնություններ "ETA"-ի կողմից, որոնք, իհարկե, չտարան դեպի անցում, սակայն նպաստեցին Ֆրանկոյի վարչակարգի անկմանը: Նրա վարչապետի՝ Լուիս Կարրերո Բլանկոյի սպանությունը 1973թ. դեկտեմբերին, կարևոր իրադարձություն էր, որի քաղաքական նշանակությունը վարչակարգի ու Ֆրանկոյի մահվանից հետո փոփոխությունների համար դեռևս երկար կքննարկվի: Պնդում են, որ եթե Լուիս Կարրերո Բլանկոն լիներ վարչապետ Ֆրանկոյի մահվան ժամանակ, ապա «բունկերի» (անզիջումների) դիմադրությունն ավելի մեծ կլիներ և անցումը հավանաբար շատ ավելի այլ կերպ ու դժվարին կլիներ: Որոշ փաստեր պարզ են: "ETA"-ի կողմից բռնությունների գործադրումը լուրջ խնդիր էր: Այդ ճնշումը նպաստեց Ֆրանկոյի վարչակարգի միջազգային ապալեգիտիմացմանը: Սակայն բռնությունների չափը հասավ իր գագաթնակետին 1978-80թթ.: սահմանադրության հաստատման, երկրորդ ազատ ընտրությունների, բասկ չափավոր քաղաքական գործիչների հետ բասկերի ինքնավարության հարցի շուրջ բանակցությունների ու բասկերի շրջանային խորհրդարանի առաջին ընտրությունների ժամանակ:

Այնուամենայնիվ, ընդդիմության մեծ մասի համակրանքը կամ հանդուրժողական վերաբերմունքը "ETA"-ի նկատմամբ այդ ամբողջ ժամանակ և ֆրանսիական կառավարության երկակի վերաբերմունքը Ֆրանսիայում գործող "ETA" անդամների նկատմամբ "ETA"-ին թույլ տվեցին նոր ժողովրդավարական վարչակարգում խաղալու խոչընդոտող ու հուսախաբեցնող դեր: Չնայած աճող քաղաքական մեկուսացմանը՝ "ETA"-ի բռնությունները հանգեցրին այն բանին, որ սոցիալիստական ժողովրդավարական կառավարությունը, չգիտենք՝ ստույգ ինչ չափով, թույլատրեց անլեզալ գործողություններ "ETA"-ի դեմ: Սա այն դեպքն է, երբ ժողովրդավարական կառավարությունը գործում է այնպիսի եղանակներով, որոնք բիծ են թողնում դրա քաղաքացիական իրավունքների տարեգրու-

թյան մեջ:<sup>29</sup> Դա տարիներ հետո՝ 1995 թվականին, նպաստեց կառավարության նկատմամբ վստահության լուրջ ճգնաժամի ի հայտ գալուն:

Այստեղ ցանկանում ենք նշել միայն, որ ահաբեկչական պայքարը ոչ ժողովրդավարական կառավարության դեմ նոր ժողովրդավարության համար կարող է թողնել դժվարին ժառանգություն, քանի որ ահաբեկիչները կարող են հետապնդել ժողովրդավարությունից տարբեր նպատակներ և, հետևաբար, կարող են չդադարեցնել իրենց գործողությունները ժողովրդավարության ձեռքբերումից հետո նաև: Աջ ուժերի մտավորական առաջնորդներից մեկի՝ սենատոր Խայմե Գուսմանի սպանությունը Չիլիում ժողովրդավարական կառավարության իշխանության գալուց հետո մեկ այլ օրինակ է, թե ինչպես է նման ժառանգությունը բարդացնում ժողովրդավարական քաղաքական գործընթացը:

### ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄ

Գիտնականները լիովին փոխհամաձայնության են եկել այն հարցի շուրջ, որ Իսպանիայում ժողովրդավարությունը *կայացել է 1982թ.* հոկտեմբերին՝ համընդհանուր ընտրություններից հետո սոցիալիստական ընդդիմությանն իշխանության խաղաղ փոխանցումից ոչ ուշ: Մենք ընդունում ենք այդ ամսաթիվը: Այդուհանդերձ, հնարավոր է այն տեսակետը, ըստ որի՝ ժողովրդավարությունը կայացել էր անգամ ավելի վաղ՝ 1981 թվականին, փետրվարի 23-ի չհաջողված հեղաշրջման մեջ ներգրավված զինվորական առաջնորդների դատավարությունների բարեհաջող ավարտմամբ և նրանց բանտարկությամբ: Մեծապես էական է (և ապշեցուցիչ հակադրություն Արգենտինայի դեպքի հետ) այն, որ այն բանից հետո, երբ հեղաշրջման փորձի երկու խոշոր առաջնորդները՝ գնդապետ Տեխերոն և գեներալ Միլանս դել Բոսկը, բանտ նետվեցին, ընդհանրապես տեղի չունեցավ զինվորականության կամ քաղաքացիական հասարակության քաղաքականապես նշանակալի որևէ շարժում նրանց նկատմամբ գթասրտություն ցուցաբերելու համար:

Ժողովրդավարության կայացման վերաբերյալ մեր տեսական քննարկման ժամանակ քաղաքացիների *վերաբերմունքը* տարբերեցինք ազգային առումով նշանակալից խմբերի *վարքագծից* ու *սահմանադրական իրականությունից*, թե արդյոք ժողովրդավարական կառավարությունը քաղաքականության ոլորտում *դե յուրե* ինքնիշխան է, թե՞ ոչ: Իսպանիայի օրինակում առաջին բաղադրիչը, որն ամբողջովին համապատասխանեց ժողովրդավարության կայացմանը, հասարակական կարծիքն է: Մինչև 1978թ. Իսպանիայում հասարակական կարծիքը խիստ ժողովրդավարական էր և այդպիսին էլ մնացել է առ այսօր (Աղյուսակ 6.4):

29. Ինչպես մատնացույց է արել Լինցը (Linz), ժողովրդավարական կառավարություններն ամենայն հավանականությամբ կարող են օրենքն ու մարդու իրավունքները խախտել այն դեպքերում, երբ ահաբեկչությունը զուգակցվում է ազգայնական, լեզվական կամ կրոնական պահանջների հետ: Տե՛ս նրա «Քաղաքական վարչակարգերի տիպերը և հարգանքը մարդու իրավունքների նկատմամբ. պատմական և ազգային-համեմատական տեսանկյուններ» ("Types of Political Regimes and Respect for Human Rights: Historical and Cross-National Perspectives"), Սաբյորն Էյդեի և Բերնսե Հագթվետի խմբ.՝ «Մարդու իրավունքները հեռանկարում. գլոբալ գնահատում» (Asbjorn Eide and Bernt Hagtvet, eds., *Human Rights in Perspective: A Global Assessment* (Oxford: Blackwell, 1992), 177- 222, 299-310, esp. 190-93):



**Աղյուսակ 6.4. «Ժողովրդավարությունը լավագույն քաղաքական համակարգն է այնպիսի երկրի համար, ինչպիսին մերն է», Իսպանիա, 1978-1993թթ.**

Նարցման պատասխան	1978	1980	1981	1982-83	1983	1988	1993
«Այո»	77	69	81	74	85	87	79
«Ոչ»	15	20	13	6	10		
«Նայած որ դեպքում»				12			
«Այլ, Տ/Չ»	8	11	6	7	5		
Թիվը	(5898)	5/9	(1703)	(5463)	(3952)	(4548)	(1440)

Աղբյուրը՝ այս աղյուսակը վերարտադրվել է Խուան Լինցի և Ալֆրեդ Ստեփանի թույլտվությամբ նրանց «Ժողովրդավարության կայացման քաղաքական եղանակը կամ քայքայում. եվրոպական և հարավ-ամերիկյան երկրների համեմատություններ», Ռոբերտ Պաստորի խմբ. «Ժողովրդավարությունն Ամերիկաներում. կանգնեցնելով երեքսակը» (Juan J. Linz and Alfred Stepan, "Political Crafting of Democratic Consolidation or Destruction: European and South American Comparisons", in Robert A. Pastor, ed., *Democracy in the Trenches Stopping the Pendulum* (New York: Holmes and Meier, 1989), 44): Ազգային հետազոտություններ՝ Data S.A., Մադրիդ, 1978թ. (հուլիս) և 1980թ., տե՛ս՝ Խ.Լինց (J. J. Linz), Ս. Գոմես-Ռեյնո (M. Gómez-Reino), Դ. Վիլա (D. Vila) և Ֆ. Օրիսո (F. A. Orizo), "Informe sociológico sobre el cambio político en España", 1975-1981 (IV Informe FGSSA, Vol. I, Fundación FOESSA), (Madrid Euramérica, 1981), էջ 627-29: 1981թ. մարտի 4-21 (փետրվարի 23-ի ձախողված հեղաշրջումից հետո), *Cambia* 16, no. 488 (1981թ. ապրիլի 6), էջ 42-45, 1982-83 նոյեմբեր-հունվար, հետընտրական հետազոտություն Ֆոլքսվագեն-Շոֆտուոնգի աջակցությամբ, չհրատարակված: Ուսումնասիրությունը տե՛ս՝ Խ. Լինց և Խ. Սոնտերո, "Crisis y lambi, Electores y partidos en la España de los años ochenta" (Մադրիդ, Սահմանադրական հետազոտությունների կենտրոն, 1986թ.), 1983թ. (աշուն), Խ. Լինց "La sociedad española presente, pasado y futuro", Խ. Լինցի խմբ. "España, un presence para el futuro, 1. La sociedad" (Մադրիդ, Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ, 1984թ.), էջ 57-95 և Խ. Լինց, «Ժողովրդավարության լեգիտիմությունը և սոցիալ-տնտեսական համակարգը» (J. J. Linz, "Legitimacy of Democracy and the Socioeconomic System"), Մաֆեյ Կոգանի խմբ. «Բազմակարծական ժողովրդավարությունների համեմատում. լարվածություն լեգիտիմության վրա» (Maffei Cogan, ed., "Comparing Pluralist Democracies: Strains on Legitimacy" (Boulder, Colo.: Westview Press, 1988)), էջ 65-113, 1988թ. և 1993թ. տվյալները՝ Centro de Documentación de Data, S.A., Madrid: Կարևոր հասկացութենական և էմպիրիկ վերլուծություն տե՛ս՝ Խոսե Ռամոն Մոնտերո և Ռիչարդ Գյունտեր, «Ժողովրդավարության լեգիտիմությունն Իսպանիայում. փաստաթուղթ՝ պատրաստված Միջազգային հասարակագիտական ասոցիացիայի համար» (Jose Ramon Montero and Richard Gunther, "Democratic Legitimacy in Spain paper prepared for the International Political Science Association (IPSA)", IVI World Congress, Berlin, August 21-25, 1994):

Իսպանիայում ոչ միայն հասարակական կարծիքը խիստ ժողովրդավարամետ էր վերացական իմաստով, այն նաև գերակշռող մեծամասնությամբ մերժեց ժողովրդավարության գլխավոր հնարավոր այլընտրանքը՝ զինվորական կառավարությունը (Աղյուսակ 6.5):

Ֆրանկոյի մահվանից տասը տարի անց բնակչության 76%-ը հպարտություն էր զգում անցման համար, և միայն 9%-ն ասաց, որ անցումը հպարտության աղբյուր չէ: Հպարտության այս զգացումն առանձնահատուկ կերպով ուժեղ էր ձախ ճամբարում, որտեղ կոմունիստների օգտին ձայն տվածների 82%-ը այդ հարցին դրական էր պատասխանել, իսկ սոցիալիստների օգտին քվեարկածներից հպարտության զգացում էին արտահայտել 88%-ը:<sup>30</sup>

Ազգային առումով նշանակալի խմբերի վարքագծի տեսակետից զինվորականության մի մասը զգալի միջոցներ ծախսեց՝ փորձելով ժողովրդավարորեն ընտրված կառավարություններին պարտադրել պայմաններ՝ ճնշման, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ զինվորական ուժի միջոցով առնվազն մինչև 1981թ. փետրվարի ձախողված հեղաշրջումը: Որոշ գիտնականներ, ինչպես օրինակ՝ Փոլ Փրեստոնը, պնդում են, որ որոշ կուսակցական ակտիվիստներ այնքան են կապված եղել հեղաշրջման դավադիրների հետ, որ լիովին հնարավոր է դրանց «կիսահավատարիմ ընդդիմություն» անվանել: Մակայն հեղաշրջման նկատմամբ թագավորի, հասարակական կարծիքի ու կուսակցական առաջնորդների կողմից արտահայտված գերակշռող բացասական արձագանքն օգնեց ավելի

30. "Actitudes y opiniones de los Españoles ante la constitución y las instituciones democráticas", 32:

**Աղյուսակ 6.5. . «Այս պահին ի՞նչն է Ձեր կարծիքով լավագույնը՝ միայն "UCD"-ից (Union de Centro Democrático՝ այն ժամանակվա իշխող կուսակցությունը) կազմված կառավարությունը, քաղաքական կուսակցությունների կոալիցիան, քաղաքացիա-զինվորական կառավարությունը, թե՛ զինվորական կառավարությունը».** Իսպանիա, 1981թ.

Նարցման պատասխան	Տոկոս
UCD կառավարություն	27%
Կոալիցիոն կառավարություն	52%
Քաղաքացիական-զինվորական կառավարություն	5%
Զինվորական կառավարություն	2%
Այլ (պատասխան չկա, չգիտեմ, դժվար է որոշել)	14%
	100%

(N=1703)

*Ծանոթություն.* Խարցն իսպաներենով հետևյալն էր՝ «Այս պահին որն է Ձեր կարծիքով ամենալավը՝ միայն "UCD" անդամներից կազմված կառավարությունը, քաղաքական կուսակցությունների կոալիցիոն կառավարությունը, քաղաքացիական-զինվորական կառավարությունը, թե՛ զինվորական կառավարությունը» "En estos momentos, ¿qué cree usted que es el mejor: un gobierno sólo de UCD, un gobierno de coalición partidos políticos, un gobierno cívico-militar, o un gobierno militar?"

*Սղթյուրը.* այս աղյուսակը վերարտադրվել է Խուան Լինցի և Ալֆրեդ Ստեփանի թույլտվությամբ՝ «Ժողովրդավարության կայացման քաղաքական եղանակը կամ քայքայում» աշխատությունից (Linz and Stepan, "Political Crafting of Democratic Consolidation or Destruction". 45): Տվյալները հատուկ հարցումից են, որն իրականացվել է Data, S.A.-ի կողմից, Սադրիո, Իսպանիա, մարտի 4-ի և 21-ի միջև, 1981թ. փետրվարի 23-ի պուոչից հետո:

հստակ արձանագրել, որ 1981թ. փետրվարից հետո եղած լավագույն և միակ տարբերակը ժողովրդավարությունն է:<sup>31</sup>

Ժողովրդավարության կայացմանը հասնելու վերջին բաղադրիչը ժողովրդավարական կառավարության կողմից ոչ ժողովրդավարական ինստիտուտներին իր քաղաքական իշխանությունը սահմանափակել թույլ չտալու սեփական իրավունքի իրագործումն է: Զինվորականության դատավարությունները և ձեռքբերվածություններն ավարտվեցին մինչև 1982թ.: Դատավարությունները նպաստեցին ժողովրդավարության կայացմանը, որովհետև դրանք ցույց տվեցին, թե զինվորական «այլընտրանքն» իրականում որքան մասնատված էր և առանց ծրագրի: Ամենանշանավոր անզիջումները պարտվեցին, խայտառակվեցին ու բանտարկվեցին: Դատավարություններից հետո «մեծ թվով սպաների մեջ առաջ եկավ մի հաստատուն համոզումնք, որ ժողովրդավարությունը պետք է մնա, իսկ զինվորականությունը պետք է հարմարվի դրան»:<sup>32</sup> Ի վերջո, երբ նրանք բախվեցին սոցիալիստների կողմից 1982թ. հոկտեմբերին նվաճված խորհրդարանական պատկառելի մեծամասնությանը, «զինվորականության մրցակցությունը քաղաքականության ասպա-

31. Նախքան չհաջողված հեղաշրջումը մի շարք կուսակցությունների՝ ներառյալ սոցիալիստական կուսակցության հայտնի քաղաքական գործիչները ներգրավված էին զինվորականության հետ «կիսահավատարիմ» քննարկումների մեջ հնարավոր քաղաքացիա-զինվորական տեղապահ կոալիցիոն կառավարություն ստեղծելու մասին: Կուսակցության ակտիվիստների կողմից բոլոր նման երկիմաստ գործողությունները դադարեցին հեղաշրջումից հետո: Որոշ քաղաքական գործիչների կիսահավատարիմ վարքագծի մասին տե՛ս Փոլ Փրեստոն, «Ժողովրդավարության հաղթանակն Իսպանիայում» (Paul Preston. *The Triumph of Democracy in Spain* (London: Methuen, 1986), 160-88, esp. 181-84):

32. Ֆելիպե Ագուերո, «Քաղաքացիական գերազանցության հաստատումը հետավտորիտար համատեքստերում. Իսպանիան համեմատական տեսանկյունով» (Felipe Agüero, "The Assertion of Civilian Supremacy in Post-authoritarian Contexts: Spain in Comparative Perspective" (Ph.D. disc., Duke University, 1991), 300):

րեզից կտրուկ անցավ դեպի գուտ զինվորականությանը վերաբերող խնդիրների բնագավառ, իսկ դիմադրությունը փոխվեց հարմարվողականության»:<sup>33</sup> 1982թ. դեկտեմբերից մինչև 1991թ. մարտը սոցիալիստական կառավարության պաշտպանության նախարար Նարսիս Մեռոան՝ Բարսելոնայի նախկին քաղաքապետը, ստեղծագործաբար մտահղացավ և իրականացրեց զինվորականության լայն վերակազմավորում, որն սկսվել էր "UCD" կառավարություններով և դրանց քաղաքացիական պաշտպանության նախարարներով: Երբ նա պաշտոնաթող եղավ, «նախկինում սարսափազդու Poder Militar-ն (զինվորական ուժ) այժմ շատ առումներով հանդիսանում էր պետական կառավարման մարմնի ևս մեկ ճյուղ»:<sup>34</sup> Քաղաքացիական-զինվորական տեսության առումով քաղաքացիական-զինվորական հարաբերությունների ժողովրդավարական մոդելն այնպիսի մոդել է, որտեղ զինվորականությունը քիչ է վիճարկում ժողովրդավարորեն ընտրված կառավարության մտտեցումները, և որտեղ զինվորականությունն ընդունում է, որ իրենք ունեն քիչ «արտոնություններ» կամ պահուստային ոլորտներ:<sup>35</sup> Ավելի քան մեկ տասնամյակ Իսպանիան եղել է այդ դրության մեջ:

Ժողովրդավարության կայացմանը խոչընդոտող հիմնական նախադրյալային փոփոխականներին նորից անդրադարձը ցույց է տալիս, որ Իսպանիան մեր քննարկած պետությունականության փոփոխականի կարևոր բացառությամբ իր անցումն սկսել է մյուս բոլոր փոփոխականների առումով նպաստավոր պայմաններում: Ավտորիտար վարչակարգի կազմակերպական բազան քաղաքացիական էր կամ ներառում էր վարչակարգին կողմ քաղաքացիականացված սպաներին: Ունանք կարող են Ֆրանկոյի վարչակարգը համարել ռազմական վարչակարգ, սակայն Ֆրանկոն գործադրում էր իշխանությունը՝ որպես կուսակցության ղեկավար, ինչպես նաև զինված ուժերի գեներալիսիմուս և գլխավորապես՝ որպես պետության ղեկավար: Ֆրանկոյի վարչակարգի վերջին քսանհինգ տարիների ընթացքում ընդունած որոշումների վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրությունները պաշտպանում են Ֆելիպե Ագուերոյի կարծիքն այն մասին, որ «թեև Իսպանիայում զինվորականությունը լայնորեն ներկայացված է եղել ֆրանկոյական կառույցներում, այն չէր նախանշում կամ վերահսկման ենթարկում կառավարության քաղաքականությունը կամ վերահսկում դրա առաջնորդին», և որ «զինվորականությունն Իսպանիայում մաս չի կազմել էլիտար միջուկի, որն ընդունել է անցման վերաբերյալ հիմնական որոշումները»:<sup>36</sup>

33. Նույն տեղում, էջ 309:

34. Ոչ սոցիալիստական բարեփոխումների մասին հոյակապ քննարկում, *տե՛ս* նույն տեղը, էջ 309-56: Այս մեջբերումը՝ էջ 356:

35. «Զինվորականության արտոնությունների» ու «զինվորականության մրցակցության» մասին ավելի լայն հասկացութենական քննարկում և Իսպանիայի, Չիլիի, Ուրուգվայի, Արգենտինայի և Բրազիլիայի համեմատական վերլուծություն, *տե՛ս* Ստեփան, «Զինվորականության քաղաքականության վերախմաստավորում» (Stepan, *Rethinking Military Politics*, 93-127, esp. figure 7.3 on p. 122):

36. Երկու մեջբերումն էլ Ֆելիպե Ագուերոյից են՝ «Զինվորականությունը Հարավային Ամերիկայում և Հարավային Եվրոպայում քաղաքական ժողովրդավարացման գործընթացներում. արդյունքներ և նախնական պայմաններ» (Felipe Aguero, *The Military in the Processes of Political Democratization in South America and South Europe: Outcomes and Initial Conditions*), նյութը ներկայացվել է Լատինաամերիկյան ուսումնասիրությունների միության XV միջազգային կոնգրեսին, Սան Խուան, Պուերտո Ռիկո, սեպտեմբեր, էջ 21-23, 1989թ., 22 և 27 (San Juan, Puerto Rico, September 21-23, 1989, 22 and 27): Նման փաստարկի հիմնավորող փաստերով, *տե՛ս* Ռոդրիգո, *"El camino hacia la democracia"*, էջ 21-32 և

Հետևաբար, մեր դատողությամբ ճիշտ կլինի անցմանը նախորդող տարիներին եղած վարչակարգային բազան անվանել «քաղաքացիականացված-ավտորիտար վարչակարգ»: Ինչպես ապացուցել ենք, նման բազան ավելի քիչ հավանական խոչընդոտներ է ներկայացնում ժողովրդավարությանն անցման և կայացման համար, քան սուլթանական բազան կամ բարձրաստիճան գինվորականությունը:

Երբ Ֆրանկոն մահացավ, Իսպանիայում, իհարկե, առկա էր զգալի սոցիալական և քաղաքական ճնշում հանուն փոփոխությունների: Իսպանիայում որպես ծնունդ առնող քաղաքական հասարակության հիմք, ծածկ ու հենարան մասամբ ծառայած քաղաքացիական հասարակության պաշտոնապես ձևավորված մասը մեր կողմից շեշտադրելը թող չհանգեցնի այն բանին, որ անտեսենք անհամաձայնության ավելի նվազ կազմակերպված ձևերը՝ ժողովրդի կողմից ցույցերի, հավաքների ու համակրանքի գործադուլների ձևով: Որոշ գործողություններ բավականին ինքնաբերական էին և, իհարկե, մասնակիցներից շատերը չէին էլ պատկանում դրանք նախաձեռնած որևէ կազմակերպության:

Սակայն կա մի շատ կարևոր տարբերություն ավտորիտար Իսպանիայի և կոմունիստական Եվրոպայի այն վարչակարգերի միջև, որոնք ունեին ուժեղ ամբողջատիրական կամ սառեցված հետամբողջատիրական գծեր, ինչպես օրինակ ԳՂՀ-ն, Չեխոսլովակիան, Բուլղարիան, Ռումինիան և մերձբալթյան հանրապետությունները: Այնտեղ քաղաքացիական ու քաղաքական հասարակության թուլությունը մինչև անցման սկիզբը և անցման ընթացքում ստիպեց, որ հրապարակներում, եկեղեցիներում ու փողոցներում (ինչպես օրինակ՝ Լայպցիգում, Դրեզդենում, Բեռլինում, Պրահայում, Սոֆիայում և վերջապես՝ Տիմիշտարայում ու Բուխարեստում) հավաքված մարդկանց ինքնաբերական գործողությունները շատ ավելի մեծ դեր խաղան այդ վարչակարգերի ճգնաժամի ու դրանց անկման գործում, քան վերևից նախաձեռնած փոխակերպումը: Այդպիսի որոշ դեպքերից մի քանիսում եղել է խնդրի բռնի լուծման լուրջ հավանականություն, ինչպես Տիանանմեն հրապարակում, ինչը քիչ հավանական էր Իսպանիայում (բացառությամբ, թերևս, Բասկերի երկրի)՝ շնորհիվ քաղաքացիական կազմակերպությունների և նորերուկ քաղաքական հասարակության առաջնորդների միջնորդող դերի: 1977թ. փետրվարին տեղի ունեցած զանգվածային ցույցն Իսպանիայում կոմունիստ արհմիութենական իրավաբանների սպանությունից հետո (Ատոկայի սպանություններ) մի այդպիսի օրինակ է. նրանց մարմինները մեծ շուքով Գերագույն դատարանի շենքում փաստաբանների միության գրասենյակներում դնելը, զանգվածային ցույցի թույլատրված լինելն ու "PCE"-ի կողմից ակտիվիստների վերահսկողությունն այն վերածեցին կարևոր, բայց նաև կանոնավոր միջոցառման: Փոփոխություն առաջ բերելու ակնկալությամբ ուժեղացած հասարակական ճնշման այս համատեքստում վարչակարգի քաղաքական առաջնորդները, հատկապես՝ Ադոլֆո Սուարեսը, նախաձեռնեցին Քաղաքական բարեփոխումների մասին օրենքը և պատասխանատու էին առաջին ընտրությունների անցկացման ու սահմանադրության մշակման համար: Ժողովրդական ճնշումը շարունակեց առաջ մղել անցումն ու նպաստեց դիպլեկտիկային, որն արտացոլվեց հանրահայտ իսպաներեն *"reforma pactada-ruptura pactada"* (դաշնությունահենք բարեփոխումներ, դաշնությունահենք խզում) արտահայտության մեջ: Այդուհանդերձ, քանի որ

Ստեփան, «Ձինվորականության քաղաքականության վերաիմաստավորում» (Stepan, *Rethinking Military Politics*, 118-21):

վարչակարգը գլխավոր դեր է խաղացել անցման բոլոր փուլերում, ճիշտ կլինի Իսպանիայի օրինակն անվանել բանակցված անցում, որը, ըստ մեր փաստարկի, այնպիսի ձևաչափ է, որը շրջանցում է «ժամանակավոր կառավարության» ինդիքների մեծ մասը:

Ինչ վերաբերում է նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգի բնույթի նշանակությանը, ապա մենք հիմնավորեցինք Ադուսակ 4.3-ում, որ հնարավոր է՝ ավտորիտար վարչակարգի ուշ փուլերում երկիրը հանգի պայմանների մի համակազմի՝ կապված քաղաքացիական հասարակության, սահմանադրականության և օրենքի գերակայության, պետական կառավարման ապարատի ու տնտեսական հասարակության հետ, որը միանգամայն նպաստավոր կլինի ժողովրդավարության կայացման համար, եթե տեղի է ունեցել անցում ժողովրդավարությանը: Իսպանիան այդ երևույթի շատ խոսուն օրինակ է: Վիկտոր Պերես-Դիասի խոսքերով՝ «մինչև հասանք 70-ական թվականների կեսերին, Իսպանիայի տնտեսական, սոցիալական ու մշակութային ինստիտուտներն արդեն բավական մոտ էին Արևմտյան Եվրոպայի համանման ինստիտուտներին, և մշակութային ընկալումները, նորմատիվային կողմնորոշումն ու այդ ինստիտուտների աշխատանքին ուղեկցող մոտեցումները նույնպես մոտ էին եվրոպականին: Սա է պատճառն այն բանի, թե ինչու քաղաքական անցումը ժողովրդավարության տեղի ունեցավ այդքան արագ»:<sup>37</sup> Այնուհետև նա ասում է, որ մինչև 70-ական թվականների կեսերը (անմիջապես անցումից առաջ) «Իսպանիայի տնտեսությունը ժամանակակից տնտեսություն էր, որը գրավում էր տասներորդ տեղը կապիտալիստական երկրների մեջ ամբողջ աշխարհում՝ խոշոր արդյունաբերական ոլորտով, ծաղկող ծառայությունների ոլորտով և արագ կերպարանափոխվող գյուղատնտեսությամբ»:<sup>38</sup> Իսկապես, Իսպանիայի տնտեսությունը շահել էր Արևմտյան Եվրոպայի ընդհանուր զարգացումից և 1961թ-ից մինչև 1970թ. ունեցել էր 7.3% աճի տեմպ՝ ամենաբարձրերից մեկն աշխարհում:<sup>39</sup> Իսպանիայում անցումը հատկապես առնչվում է նոր ժողովրդավարություններին անցման ու դրանց կայացման գործում տնտեսական գործոնների վերաբերյալ բանավեճին: Առողջ տնտեսական զարգացումն Իսպանիայում 1960-ական թվականներին անուղղակիորեն նպաստեց անցմանը՝

37. Պերես-Դիաս, «Ժողովրդավարական Իսպանիայի առաջացումը», (Perez-Diaz, "Emergence of a Democratic Spain", 14): Սա ճիշտ է անգամ քաղաքական նախապատվությունների ոլորտում: Օրինակ, չնայած 1977թ. ընտրություններից անմիջապես առաջ առաջնորդների հասարակական ճանաչումը քիչ էր, և բազմաթիվ նորաստեղծ կուսակցությունները փոքր էին. իսպանացիներն անգամ Ֆրանկոյի մահվանից առաջ և հատկապես՝ անցումն սկսվելուց հետո կարող էին հստակորեն իրենք իրենց տեղորոշել աջ-ձախ սանդղակի վրա և արտահայտել եվրոպական քաղաքական ծիրում այս կամ այն գաղափարախոսական միտումներից իրենց նախընտրածները: Իսպանացիների մեծ մասը բավականաչափ տեղյակ էր Եվրոպայում քաղաքականության և կուսակցությունների մասին ամենօրյա նորություններին: Այս առումով Իսպանիան շատ էր տարբերվում հետաաբողջատիրական երկրների մեծ մասից և հատկապես՝ նախկին Խորհրդային Միությունից:

38. Նույն տեղում:

39. *Stéu Iv*. Մարավալ, «Տնտեսական բարեփոխումները նոր ժողովրդավարություններում. հարավ-եվրոպական փորձը» (J. M. Maravall, "Economic Reforms in New Democracies: The Southern European Experience"), «Արևելք-հարավ համակարգի փոխակերպումներ» ("East South System Transformations"), աշխատանքային փաստաթուղթ, #3 (1990թ. հոկտեմբեր), Քաղաքացիության ֆակուլտետ, Չիկագոյի համալսարան, 3: 1960-75թթ. Ֆրանկոյի վարչակարգի օրոք տնտեսության ուժեղ և թույլ ոլորտների ավելի մանրամասն գնահատում, *տե՛ս* Խոսե Մարիա Մարավալ, "Los resultados de la democracia: Un estudio del sur y el este de Europa" (Madrid: Alianza Editorial, 1995), էջ 61-104:

ծնունդ տալով ավելի զարգացած ու ազատ հասարակության, որտեղ տեղի էին ունենում աշխատավոր դասակարգի զգալի թվով բողոքներ ու գործադուլներ՝ սկզբում տնտեսական հարցերի, իսկ ավելի ուշ՝ մոբիլիզացման պահանջների շուրջ: Անցման պահին Իսպանիայի կազմակերպությունների սերտ կապը սահմանափակեց անկազմակերպ ու բռնի գործողությունները, թերևս, որովհետև յուրաքանչյուրն ինչ-որ բան ուներ կորցնելու անկարգության պարագայում: Սակայն ուղղակի կապ չկար ոչ երկարատև տնտեսական աճի ու անցման սկզբի, ոչ էլ դեպի ժողովրդավարություն տանող հատուկ քաղաքական գործընթացների միջև: Իսպանիան հասել էր զարգացման մի մակարդակի, որը պետք է տաներ ժողովրդավարացման 1975թ. Ֆրանկոյի մահվանից բավական տարիներ առաջ: [Սակայն] գործարար դասը ճնշում չգործադրեց, չբերեց փաստարկներ, թե վարչակարգն իր դարն ապրել է, կամ որ հետագա զարգացումը պահանջում է ժողովրդավարացում: Գործարարները չընդդիմացան ժողովրդավարացմանը և զուցե մասնավոր կարգով անգամ աջակցեցին դրան, սակայն ժողովրդավարության իրագործման ակտիվ հասարակական դեր գործարարությունը չխաղաց:

Ինչպես հիմնավորվեց առաջին գլխում, ժողովրդավարության համար վճռորոշ հինգ ասպարեզներից Իսպանիան սկսեց իր անցումը բոլոր ասպարեզների չափավոր բարենպաստ պայմաններում, բացի քաղաքական հասարակության ասպարեզից: Ժողովրդավարություն կառուցողներն ու աջակցողները ժառանգեցին մի քաղաքացիական հասարակություն, որն արդեն աշխույժ և բավական տարբերակված էր, մի տնտեսական հասարակություն, որը կարիք ուներ վերակազմավորման, սակայն արդեն ինստիտուցիոնալացված էր, մի պետական ապարատ՝ վարակված ավտորիտարությամբ, սակայն օգտագործելի (և իսկապես այդպիսին էր առաջին ժողովրդավարորեն ընտրված կառավարությունը, որն առաջ էր եկել դրա շարքերից) և օրենքի գերակայության բավականին ուժեղ նոր ավանդույթով:

Հաշվի առնելով այս իրավիճակը՝ չենք կարծում, որ միջազգային ազդեցությունը վճռական նշանակություն ուներ Իսպանիայում ժողովրդավարության անցման ու կայացման համար (մի բան, որ վճռական նշանակություն ուներ Պորտուգալիայի պարագայում, ինչը մենք կհիմնավորենք ստորև), սակայն այն, անշուշտ, մշտապես սատարող էր: Ժողովրդավարությունն Իսպանիայում, ի դեպ, արդեն կայացած էր նախքան 1986թ. Իսպանիայի մտնելը Եվրոպական տնտեսական համայնք: Սակայն այն փաստը, որ ԵՏՀ-ն հաստատուն կերպով ժողովրդավարական էր և հավանական անդամների համար «սահմանել էր խրախուսման կամ զսպման կայուն մոդել», նպաստավոր էր Իսպանիայում ժողովրդավարությանն անցման ու կայացման համար:<sup>40</sup> Ինչպես նշել է նախկին սոցիալիստ նախարար Խոսե Մարավալը, «Ադոլֆո Սուարեսը ներկայացրեց Իսպանիայի ԵՏՀ-ին անդամակցության մասին դիմումը 1977թ.», և խորհրդարանական կուսակցությունների ամբողջությունն աջակցեց նրան: Լայնորեն տարածված մի կարծիք կար, թե Իսպանիայի նորագույն պատմության մեջ միջազգային մեկուսացումն ու բռնապետությունը սերտորեն միախոյունված են եղել: Եվրոպական տնտեսական համայնքը դիտվում էր որպես ժողովրդավարության ու զարգացման խորհրդանիշ. այդ խորհրդանիշը շատ կարևոր է եղել

40. Ուայթհեդ, «Ժողովրդավարացման միջազգային կողմերը» (Whitehead, "International Aspects of Democratization", 22):

Ֆրանկոյականության դեմ պայքարում: ԵՏՀ-ին միանալը համարվում էր որոշիչ քայլ ժողովրդավարության կայացման համար»:<sup>41</sup> Արտաքին քաղաքականություններն Իսպանիայի նկատմամբ ու Արևմտյան Եվրոպայում տիրապետող *ցայտզայտթը*, այսպիսով, շատ նպաստավոր էին ժողովրդավարությանն անցման և կայացման համար: Դիֆուզիայի էֆեկտը նույնպես նպաստավոր էր Իսպանիայի համար: 1974թ. հեղափոխությունը Պորտուգալիայում վարչակարգին կողմ որոշ առաջնորդների խրախուսեց Իսպանիայում ժողովրդավարությանն անցումն առաջ մղել ներքնից արձագանքի սպասելու փոխարեն, իսկ Հունաստանում թագավորի գահընկեցությունը հավանաբար քաջալերեց Խուան Կառլոս թագավորին՝ աջակցելու վարչակարգի կողմից ղեկավարվող անցմանը ժողովրդավարության:

Լեզիտիմության քաղաքատնտեսությունը չափազանց հետաքրքիր է, որովհետև բացարձակապես ոչ մի կասկած չկա, որ անցման ժամանակ Իսպանիայում տնտեսական վիճակը կտրուկ անկում ապրեց ու բարելավվեց ժողովրդավարության կայացումից միայն երեք տարի հետո՝ 1982թ-ին: Ֆրանկոյի օրոք՝ 1970-ական թվականների սկզբին, գործազրկությունն Իսպանիայում ամենացածրերից մեկն էր Եվրոպայում՝ մոտ 3%-ի մատույցներում: Ժողովրդավարությանն անցմամբ գործազրկության մակարդակն էապես աճեց, ի դեպ, Իսպանիայում 20% գործազրկության մակարդակը 1980-ական թվականների կեսերին ամենաբարձրն էր Արևմտյան Եվրոպայում: Տնտեսական աճի տեմպերը, որոնք 1960թ-ից մինչև 1974թ. ընկած ժամանակահատվածում միջին հաշվով կազմում էին 7% և աշխարհում ամենաբարձրերից էին, 1975թ-ի և 1985թ-ի միջև ընկած ժամանակահատվածում միջին հաշվով կազմում էին միայն 1.7%:<sup>42</sup> Տնտեսական արդյունավետության ու քաղաքական լեզիտիմության միջև խիստ փոխկապակցված հարաբերության մասին վարկածը մեզ կարող է տանել ժողովրդավարության լեզիտիմության համապատասխան նվազեցման կանխատեսմանը: Սակայն թեև հարցումները ցույց տվեցին վարչակարգի սոցիալ-տնտեսական արդյունավետության նկատմամբ հավատի կտրուկ անկում, զգալիորեն ավելացել էր այն քաղաքացիների թիվը, ովքեր դրական պատասխան էին տվել այն հարցին, թե «արդյո՞ք ժողովրդավարությունը լավագույն քաղաքական համակարգն է այնպիսի երկրի համար, ինչպիսին մեր երկիրն է»:<sup>43</sup> Ինչպես հոլանդացիները 1930-ական թվականների կեսերին, այնպես էլ իսպանացիները 1980-ական թվականներին, չնայած

41. Մարավալ, «Տնտեսական բարեփոխումները նոր ժողովրդավարություններում» (Maravall, "Economic Reforms in New Democracies", 16):

42. Իսպանիայում գործազրկության մասին տվյալները՝ "Banco de Bilbao", «Տնտեսագիտական հետազոտությունների վարչություն» (Economic Research Department), «Իրավիճակ. Իսպանիայի տնտեսության ուսումնասիրություն» ("Situacion: Review of the Spanish Economy", International Edition, no. 10-11, 1986): Իսպանիայում աճի տեմպերի մասին տվյալները ստացվել են Միացյալ ազգերի վիճակագրական տարեգրքից (United Nations Statistical Yearbook), 1976թ., 1982թ. և Տնտեսագիտական հետազոտության բաժին, «Եռամսյակային հաշվետվություններ. Իսպանիա» (Economic Intelligence Unit, Quarterly Report., Spain (2nd quarter 1986)):

43. Ավելի մասնրամասն այս փաստարկը զարգացվում է Ստեփան և Լինզ, «Ժողովրդավարության կայացման քաղաքական եղանակը կամ քայքայում. եվրոպական և հարավ-ամերիկյան երկրների համեմատություններ»-ում (Stepan and Linz, "Political Crafting of Democratic coil solidation or Destruction: European and South American Comparisons"), Ռոբերտ Պաստորի խմբ.՝ «Ժողովրդավարություն Ամերիկաներում. կանգնեցնելով ճոճանակը» (Robert A. Pastor, ed., *Democracy in the Americas: Stopping the Pendulum* (New York: Holmes and Meier, 1989), 42-48; the quote is from p. 43):

տնտեսության անկմանը, էլ ավելի ջանասիրաբար էին պայքարում՝ աշխատեցնելու ժողովրդավարական վարչակարգը, որովհետև ոչ մի այլընտրանք ավելի հարմար չէր թվում: Շնորհիվ այն հանգամանքի, որ Իսպանիան սկսել էր բավականին լավ տնտեսությամբ, փաստացի իրականացված բարեփոխումների հաջորդականությունը նախ քաղաքական էր, ապա՝ սոցիալական և, հետո միայն՝ տնտեսական:<sup>44</sup>

Մեր վերջին պայմանավորող փոփոխականը սահմանադրություն-ընդունում բանաձևն է: Սուլթանական անցյալի կամ պետության ներսում զինված հակամարտության բացակայության պայմաններում ժամանակավոր կառավարության կողմից պարտադրված որևէ սահմանադրություն բացառվում էր: Նախկին ավտորիտար վարչակարգի ամենօրյա կառավարման գործընթացում զինվորականության հարաբերական բացակայությունը և այն փաստը, որ անցումն առաջնորդվում էր վարչակարգի քաղաքացիական առաջնորդների կողմից, նշանակում էր, որ զինվորականությունը փորձ չարեց Սահմանադիր ժողովին պարտադրելու ավտորիտար արտոնություններ կամ սահմանափակող պայմաններ:<sup>45</sup> Քաղաքացիական պատերազմի ժառանգությունը, սոցիալ-տնտեսական մեծ փոփոխությունները՝ սկսած 1930-ական թվականներից, և այն փաստը, որ Ֆրանկոյի կառավարությունը իշխանության է եղել քառասուն տարի, ըստ էության, բացառեցին որևէ վերականգնում: Այդ գործոնները ժողովրդավարական ընդդիմության ճնշման հետ միասին վարչակարգի առաջնորդներին տարան դեպի սահմանադրության ազատ մշակման բանաձևի ընդունումը: Այս բանաձևի շրջանակներում Իսպանիայում ընտրվեց սահմանադրության մշակման փոխհամաձայնողական ոճը՝ ի տարբերություն մեծամասնականի: Անցման քաղաքական գործընթացի և հատկապես սահմանադրության մշակման գործընթացի հիմքում ընկած փոխհամաձայնության հարցը շեշտվել էր Սուարեսի 1978թ. ապրիլի 5-ի մի ելույթում պատգամավորների Կոնգրեսի առջև հետևյալ ձևակերպմամբ.

Սահմանադրական գործընթացի ժամանակ կառավարությունը պետք է սահմանափակի իր տարբերակների պարտադրումն այն մակարդակներում, որոնք էական չեն, որովհետև դա միակ եղանակն է խուսափելու նրանից, ինչը քաղաքական միավորի համար կհանդիսանա ամենալուրջ վտանգը՝ ազգային գոյակցության հիմնական տարրերի շուրջ համաձայնության չգոյությունը երկրի հենց արմատներում: Այս անցումային իրավիճակը, որը բնորոշ է բոլոր կազմավորող ժամանակամիջոցներին, պայմանավորում է քաղաքական գործողության բոլոր կողմերը... Սահմանադրությունը՝ որպես ազգային համաձայնության արտահայտություն, պետք է ձեռք բերվի փոխհամաձայնության միջոցով, որի համար անհրաժեշտ է հաշվի առնել ներկայումս գործող տարաբնույթ քաղաքական ուժերը»:<sup>46</sup>

44. Հարավային Եվրոպայում բարեփոխումների հաջորդականության սահմանման մասին արգասավոր աշխատություն է Մարավալ, «Տնտեսական բարեփոխումներ նոր ժողովրդավարություններում» (Maravall, "Economic Reforms in New Democracies"): Հաշվի առնելով «միաժամանակայնության» խնդիրը, որին բախվեցին բոլոր հետկոմունիստական հասարակարգերը, հաջորդականության այս սահմանումը (ոճբախտաբար) լրջորեն հաշվի չէր առնվել տարածաշրջանում: Անգամ հարավ-ամերիկյան երկրներում ամենուրեք, բացի Չիլիից, ընտրվել է պարտքի հետ կապված լուրջ խնդիրների ու քաղաքական խնդիրների միաժամանակյա լուծման մոտեցումը:

45. Այս կետի մասին տե՛ս Ռոդրիգոյի գերազանց թեզը՝ "El Camino hacia la democracia", էջ 273-77:

46. Ժողովրդավարական քաղաքականության մշակման փոխհամաձայնողական և մեծամասնական ոճերի միջև տարբերակումը մշակել է Արենդ Լիյփհարթը՝ «Ժողովրդավարություններ. մեծամասնական



Սահմանադրության մշակման հարցի հանդեպ փոխհամաձայնական մոտեցման արդյունքը եղավ այն, որ սահմանադրությունը ստորին պալատում հաստատվեց 325 ձայնով՝ միայն 6 դեմ և 8 ձեռնպահ: Նոր սահմանադրության առավելագույն լեգիտիմության հասնելու համար իսպանացի առաջնորդները նախընտրեցին իրենց կոլեկտիվ աշխատանքը դնել սահմանադրական հանրաքվեի, որտեղ, ինչպես տեսանք, այն ձեռք բերեց մոտ 88%-ի հավանությունը:<sup>47</sup> Այս գրքում դիտարկված մնացած տասներկու երկրներից և ոչ մեկն այդ բոլոր քայլերը չի իրականացրել: Հավանաբար փոխհամաձայնողական գործընթացի առավել նշանակալի հետևանքն այն է, որ Ֆրանկոյի մահվանից տասը տարի անց հարցման ենթարկվածների 65%-ը գգում էր, որ սահմանադրությունը «համաձայնություն է գրեթե բոլոր քաղաքական կուսակցությունների միջև», մինչդեռ միայն 10%-ն էր համարում, որ այն «մի կուսակցության կողմից պարտադրված էր մյուսներին»: Ի պատասխան այն հարցին, թե «Ո՞ւմ գաղափարներն են գերակշռում սահմանադրության մեջ՝ «աջերի», «ձախերի», «կենտրոնի», «բոլորի» կամ «առանձնապես ոչ մեկի», «բոլորի» պատասխանին համաձայն է եղել 57%-ն այն դեպքում, երբ հաջորդ բարձրագույն ցուցանիշը եղել է 7%-՝ «կենտրոնի» պատասխանով:<sup>48</sup> Սահմանադրությունը, հետևաբար, նոր ժողովրդավարության մեջ եղել և է ժողովրդական փոխհամաձայնության մի տարր:

Չենք ցանկանում թողնել այն տպավորությունը, թե ժողովրդավարության կայացումն Իսպանիայում նախասահմանված է մեր փոփոխականներով: Մենք ընդունել ենք պետությունականության հարցի խնդրի նուրբ լինելը, Իսպանիայում ժողովրդավարության հանդեպ զինվորականության ներկայացրած սպառնալիքի ծանրությունը 1981թ. փետրվարին և հաջողության համար կուսակցության առաջնորդների ու թագավորի հմտության ու երևակայության բացարձակ անհրաժեշտությունը: Այդուհանդերձ, համեմատական առումով Իսպանիայում անցումն սկսվեց շատ բարենպաստ պայմաններում: Դա այդպես չէր լինի, եթե Իսպանիայում անցումն սկսվեր ամբողջատիրական, հետամբողջատիրական կամ սուլթանական հիմքի վրա: Սակայն, ինչպես կտեսնենք Պորտուգալիայի օրինակը քննելիս, անցումը, որն սկսվում է ոչ բարձրաստիճան զինվորականության կողմից հեղաշրջմամբ, մեծապես բախվում է շատ ավելի բարդ հանգամանքների, նույնիսկ եթե այն ունենում է միևնույն տիպաբանական սկիզբը որպես ավտորիտար վարչակարգ:

Մեր գրքի վերջնական խմբագրման ժամանակներում Իսպանիայի կառավարությունը գտնվում էր անցման հետ կապ չունեցող լուրջ ճգնաժամի մեջ: Ճգնաժամն առաջացել էր Իսպանիայի բանկի կառավարչի և "Guardia Civil"-ի (քաղաքացիական հեծյալ պահակախումբ) առաջին քաղաքացիական ու սոցիալիստ ղեկավարի հետ կապված կոռուպցիայի դեպքերի բացահայտման, "GAL" (Grupos Anti-terroristas de Liberacion) անվանվող

նականության և փոխհամաձայնության օրինակներ քսանմեկ երկրներում» (Arend Lijphart, *Democracies: Patterns of Majoritarianism and Consensus in Twenty-one Countries* (New Haven: Yale University Press, 1984), 1-36):

47. Քվեարկության մասին տե՛ս Լինց, «Նորարարական ղեկավարում անցումների ժամանակ» (Linz, *Innovative Leadership in the Transitions*), 185): Սահմանադրության մշակման գործընթացի մասին տե՛ս Բոնիմե-Բլանկ, «Անցումը ժողովրդավարության Իսպանիայում» (Bonime-Blanc, *Spain's Transition to Democracy*):

48. «Իսպանացիների մոտեցումներն ու կարծիքները Սահմանադրության մասին» (*Actitudes y opiniones de los Españoles ante la constitución*), 50-51:

անլեզալ կազմակերպության "ETA"-ի դեմ ահաբեկչության նկատմամբ հանդուրժողակա-  
նության կամ աջակցության, ոստիկանության կողմից "ETA" անդամներից մեկի սպանու-  
թյան կոծկման և հեռախոսազանգերի լայնատարած գաղտնալսումների պատճառով:

Կատալոնական "Convergencia i Unio" կուսակցության կառուցողական անվստա-  
հության քվեից ու շահերից բխած բարդությունների մի խառնուրդ հետաձգեց կազմա-  
լուծումն ու նոր ընտրությունները: Սակայն ոչ ոք կասկածի տակ չառավ ժողովրդավա-  
րական ինստիտուտները, և պատասխանն այն էր, որ 1996թ. մարտին ժամկետից շուտ  
հայտարարվեցին ընտրություններ: Այս դեպքում ժողովրդավարության որակը վտանգի  
տակ չի դնում ժողովրդավարության կայացումը, ի դեպ, այս և մյուս դեպքերում կարելի  
է պնդել, որ վատ կառավարության հանդեպ ժողովրդավարական ինստիտուտների հա-  
րաբերական անխոցելիությունը համակարգի կայացման ապացույց է:

# Ժամանակավոր կառավարությունից մինչև միաժամանակյա անցում և կայացում. Պորտուգալիա

ԱՆՅՈՒՄԸ Պորտուգալիայում ունի առանձնահատկություններ, որոնք ուղղակիորեն վերաբերում են մեր տեսական շրջանակին: Այն հատկապես ավելի ցայտուն է դարձնում այն խնդիրները, որոնք բխում են ոչ բարձրաստիճան զինվորականության նախաձեռնած անցումից: Պորտուգալիայում սա հանգեցրեց ժամանակավոր կառավարությունների իշխանությանը և սահմանադրության մշակման գործընթացին, որը մեծապես պայմանավորված էր ոչ ժողովրդավարական ճնշումներով: Արդյունքը եղավ իշխանության «պահուստային ոլորտների» ստեղծումը, որոնք քանի դեռ գոյություն ունեին, խոչընդոտում էին ժողովրդավարության անցման ավարտին և, հետևաբար, ժողովրդավարության կայացմանը: Պորտուգալիայի օրինակը նաև վառ կերպով ընդգծում է, թե ընտրություններն ինչպես կարող են հանդիսանալ անցման ու կայացման առանձին գործոն, քանի որ դրանք կարող են սոցիալապես, ինչպես նաև իրավականորեն փոխել ուժերի հարաբերակցությունը: Առանց Զինված ուժերի շարժման (MFA) պաշտոնական գրավոր պարտավորության՝ ընտրություններն անցկացնել մեկ տարվա ընթացքում (մի որոշում, որի կայացման համար որոշ հեղափոխական սպաներ և նրանց դաշնակիցները զոջացին), Պորտուգալիայում անցման անորոշությունն ու դժվարությունը շատ ավելի մեծ կլինեին, քան եղան իրականում:

Ինչո՞ւ էր Պորտուգալիայում անցումն այդպես հիմնովին տարբերվում Իսպանիայում տեղի ունեցած անցումից: Վարչակարգի տիպն առանձնապես դեր չի խաղում, որովհետև Սալազարի վարչակարգը Պորտուգալիայում էականորեն չէր տարբերվում Ֆրանկոյի վարչակարգից Իսպանիայում: Իհարկե, այդ վարչակարգը երբեմն նկարագրվում է որպես ամբողջատիրական, սակայն գիտնականների մեծ մասն այժմ համաձայնության է գալիս այն հարցի շուրջ, որ այն երբեք ամբողջատիրական չի եղել անգամ Սալազարի իշխանության ամենավատ ժամանակներում:<sup>1</sup> Վարչակարգն, անշուշտ, ունեցել է զանգվածային կազմակերպությունների ֆաշիստական ոճի կառուցվածք, սակայն այդ կառույցներն իրա-

1. Սալազարի վարչակարգի կորպորատիստական, այլ ոչ թե՛ ամբողջատիրական բնույթի վերլուծություն, *տե՛ս* Մանուել դե Լուսենա (Manuel de Lucena), *Interpretações do Salazarismo: Notas de leitura crítica*, "Análise social 20", (1984), էջ 423-51: Գրականության փայլուն ռեյտու *տե՛ս* Անտոնիո Կոստա Պինտո, «Սալազարի բռնապետությունն ու եվրոպական ֆաշիզմը. մեկնաբանության խնդիրներ» (Antonio Costa Pinto, *Salazar's Dictatorship and European Fascism: Problems of Interpretation* (Boulder: Social Science Monographs, 1995)): Սալազարի և Ֆրանկոյի վարչակարգերի համեմատությունը, որի եզրակացու-

կանում ավելի պակաս կարևոր էին, քան Իսպանիայում, իսկ պաշտոնական կուսակցությունը լավ չէր կազմակերպված: Վարչակարգն ուներ ուժեղ կորպորատիվիստական գծերով օժտված մի ոչ ժողովրդավարական սահմանադրական համակարգ, սակայն ուներ նաև Իսպանիայից ավելի շատ ազատական ծագում ունեցող որոշակի ինստիտուտներ, ինչպես օրինակ՝ կանոնավոր խորհրդարանական ընտրություններն ու նույնիսկ ընտրություններից առաջ թույլատրելի քաղաքական մրցակցության մի կարճ ժամանակահատված:<sup>2</sup> Ինչ-որ ժամանակ անգամ տեղի էին ունենում նաև նախագահի ուղղակի ընտրություններ. ի դեպ, 1958թ. վարչակարգի թեկնածուն գրեթե պարտվեց: Միակ պաշտոնական կուսակցության թուլությունն ու ֆաշիստական գաղափարախոսական ազդեցության ավելի նվազ կշիռն էլ ավելի էին վարչակարգը հեռացրել ամբողջատիրական մոդելից, քան Իսպանիայում: Զինվորականությունն ավելի անկառավարելի ու քաղաքականացված էր, քան Իսպանիայում: Զինվորական խռովությունները սովորական բան էին, և թե՛ վարչակարգը, և թե՛ ընդդիմությունը փորձում էին իրենց իսկ հենարանն ամրապնդելու համար առաջ մղել զինվորական սպաներին՝ որպես նախագահական ընտրությունների դրոշակակիրների: Ի դեպ, Պորտուգալիայի բոլոր նախագահները 1926թ-ից մինչև 1986թ. ընկած ժամանակահատվածում եղել են զինվորական:<sup>3</sup> Սակայն վարչակարգը ոչ մի դեպքում զինվորական վարչակարգ չէր: Եվ վերջապես՝ Իսպանիայի վարչակարգի նման Պորտուգալիայի ոչ ժողովրդավարական վարչակարգը կարող էր բնութագրվել որպես թույլ կուսակցություն ունեցող քաղաքացիականացված ավտորիտար վարչակարգ: Սալազարը համալսարանի դասախոս էր, որը շրջապատված էր ուսումնական այրերով, և նրա հետնորդն էլ համալսարանի հայտնի պրոֆեսոր էր: Ի վերջո Սալազարը, երկար ժամանակ լինելով կառավարության ղեկավար, Ֆրանկոյի նման նվիրված էր իր իսկ ստեղծած ոչ ժողովրդավարական վարչակարգը պահպանելուն:

Պորտուգալիայում և Իսպանիայում միանման վարչակարգերի պարագայում ինչո՞ւ Պորտուգալիան իր անցյալի հետ ունեցավ հեղափոխական բաժանում, մինչդեռ Իսպանիայում տեղի ունեցավ «անցում համաձայնությամբ»: Այսօր Պորտուգալիայում խռովությունների մասին գրելիս շատ հաճախ հակված ենք դրանք տեսնելու ավելի ուշ տեղի ունեցած անցման գործընթացներով սահմանված շրջանակում՝ մոռանալով, որ 1974թ. Պորտուգալիայում տեղի ունեցավ ժամանակակից Հարավային Եվրոպայում առաջին

թյունն այն է, որ դրանցից ոչ մեկն ամբողջատիրական չեն, *տե՛ս* Խավիեր Տուսել, «Ֆրանկոյի բռնապետությունը» (see Javier Tusell, *La dictadura de Franco* (Madrid: Alianza Editorial, 1988), 272-305):

2. *Տե՛ս* Ֆիլիպ Շմիտթեր (Philippe C. Schmitter), «*Regime d'Exception*», որը դարձավ օրենք. Պորտուգալիայում ավտորիտար տիրապետության քառասունութ տարիները» ("The 'Régime d'Exception' That Became the Rule: Forty-eight Years of Authoritarian Domination in Portugal") Գրահամ և Մակլեր, «Ժամանակակից Պորտուգալիան» (Graham and Makler, *Contemporary Portugal*, 3-46):

3. Պորտուգալիայի զինվորականությունը Սալազարի օրոք և ապստամբության քսանմեկ տարբեր դեպքերի վերլուծությունը, *տե՛ս* Դուգլաս Ուիլլեր, «Զինվորականությունը և պորտուգալական բռնապետությունը 1926-1974թթ.». «Բանակի պատիվը» (Douglas L. Wheeler, *The Military and the Portuguese Dictatorship, 1926-1974: "The Honor of the Army"*), Գրահամ և Մակլեր, «Ժամանակակից Պորտուգալիան» (Graham and Makler, *Contemporary Portugal*, 221-56): Չնայած ապստամբության այս ակտերին՝ Վիլիերը հստակորեն ասում է, որ Սալազարի կառավարությունը զինվորական կառավարություն չէր, «1933թ-ից և հատկապես II համաշխարհային պատերազմից հետո զինված ուժերի ղեկավարությունն ավելի ու ավելի շատ էր վերահսկվում պետության կողմից» (էջ 199):

անցումը: Այսինքն, չկար որևէ «խսպանական մոդել» ընդօրինակման կամ քննադատության համար, ինչպիսին հետազայում կար Հունգարիայի, Բրազիլիայի, Ուրուգվայի և Հարավային Կորեայի և՛ կառավարության, և՛ ընդդիմության վերնախավերի համար: Պորտուգալական անցմանը (քանի որ առաջինն էր) չէր նպաստել նաև որևէ դիֆուզիոն էֆեկտ: «Դաշնությունահենք բարեփոխում, դաշնությունահենք խզում» մոդելը դեռևս չէր հայտնագործվել: Սակայն, հաշվի առնելով այն, որ մեզ հետաքրքրում է դիֆուզիայի ու քաղաքական գիտելիքի ձեռքբերման կարևորության գնահատումը, Իսպանիայի մասին մեր քննարկումը բացում է մի չափազանց իրական հնարավորություն: Պատճառը, թե ինչու անցումն Իսպանիայում հիմնովին տարբերվում էր պորտուգալականից, մասամբ այն է, որ Պորտուգալիայում խռովությունները տեղի էին ունենում Ֆրանկոյի մահվանից անմիջապես հետո և Իսպանիայում վարչակարգի գլխավոր ակտիվիստներից ոմանց համար ծառայեցին որպես կողմնորոշում, թե ինչպես պետք չէ կատարել անցումը: Այս կարևոր մտքից զատ, կարելի է, այնուամենայնիվ, տեսականորեն «ինչ կլինեք, եթե...» բանաձևով մտածել, թե արդյոք Պորտուգալիայում հնարավոր կլինե՞ր «անցում համաձայնությամբ»:

Այս «համաձայնությամբ անցումների» տեսաբանները, ինչպես օրինակ՝ Մեյնուորինգն ու Շերը, ընդհանրացումներ կատարելով Իսպանիայի ու Պորտուգալիայի օրինակների հիման վրա, պնդում են, որ նման անցման հավանականությունը մեծ է, եթե գոյություն ունեն (1) բավական լավ հաստատված վարչակարգ, (2) թույլ հակակառավարական սպառնալիք, (3) համագործակցող ընդդիմություն, (4) թույլ մոբիլիզացում և (5) նորարարական ղեկավարություն:<sup>4</sup> Բացառությամբ փոքր, սակայն ստալինյան տիպի կոմունիստական կուսակցության, Պորտուգալիան 1970թ. Սալազարի մահվան ժամանակ խիստ նմանություններ ուներ Իսպանիայի ու Բրազիլիայի հետ՝ ըստ առաջին չորս պայմանների: Պորտուգալիան չունի միայն նորարարական առաջնորդ, որն անցումը նախաձեռնելու գործում կատանձներ գլխավոր դեր:<sup>5</sup> Վերջին հաշվով միջին օղակի կադրային սպաները, որոնց ճնշում և նվաստացում էին, և շատ կրտսեր սպաներ, ովքեր արմատական գաղափարներով էին տոգորվում Անգոլայի գաղութատիրական պատերազմներում և հատկապես՝ Մոզամբիկում ու Գվինեայում, վերացրեցին կառավարությունը, որը չէր

4. Տե՛ս Սքոթ Մեյնուորինգ և Դոնալդ Շեր, «Անցում համաձայնությամբ. ժողովրդավարացումը Բրազիլիայում և Իսպանիայում» (Scott Mainwaring and Donald Share, "Transition through Transaction: Democratization in Brazil and Spain"), Ուեյն Սելչերի խմբ.՝ «Քաղաքական ազատականացումը Բրազիլիայում» (Wayne Selcher, ed., *Political Liberalization in Brazil* (Boulder, Colo.: Westview Press, 1986), 175-215):

5. Փայլուն վերլուծություն այն մասին, թե ինչպես Մարսելյո Կանտանուն, ի մեծ տարբերություն Սուարեսի «նորարարական ղեկավարության» Իսպանիայում, չօգտվեց այս նպաստավոր պայմաններից համաձայնեցված անցման համար, տե՛ս Դանիել Ֆրիդհայմ, «Նորարարական ղեկավարություն. նախահեղափոխական Պորտուգալիայի ժողովրդավարացման ձախողումը» (Daniel V. Friedheim, "Innovative Leadership: The Failure to Democratize Pre-revolutionary Portugal" (Yale University, July 1990, mimeo)): Իսպանիայում և Պորտուգալիայում անցումների վաղ համեմատություններ, տե՛ս Խուան Լինգ, «Որոշ համեմատական մտքեր Պորտուգալիայում և Իսպանիայում ժողովրդավարության անցման վերաբերյալ» (Juan J. Linz, "Some Comparative Thoughts on the Transition to Democracy in Portugal and Spain"), Ժորժի Բրագա դի Մասեդո և Սայմոն Սերֆատի խմբ.՝ «Պորտուգալիան հեղափոխությունից հետո. տնտեսական և քաղաքական տեսանկյուններ» (Jorge Braga de Macedo and Simon Serfaty, eds., *Portugal since the Revolution: Economic and Political Perspectives* (Boulder, Colo.: Westview Press, 1981), 25-45):

կարողանում կամ չէր ցանկանում դադարեցնել պատերազմները: 1974թ. ապրիլի 25-ին Արևմտյան Եվրոպայում կրտսեր սպաները տապալեցին ամենահին բռնապետությունը:<sup>6</sup>

Գրեթե անմիջապես ամբոխները զանգվածաբար հեղեղեցին փողոցները՝ ի աջակցություն կրտսեր սպաների՝ մեխակներ դնելով իրենց հրացաններին և դրանով իսկ օգնելով լեզիտիմացնել ու անդառնալի դարձնել «մեխակների հեղափոխությունը»: «Կայծակնային» ազատագրման հաջողությունն արագորեն հանգեցրեց քաղաքական բանտարկյալների ազատ արձակմանը:<sup>7</sup> Ազատագրումը սկիզբ դրեց տենդագին գործունեության, սոցիալական ընդվզումների, գործարանների ու խոշոր գյուղատնտեսական միավորների քիչ թե շատ տարերային գրավումների, բոլոր տեսակի ինստիտուտների գոտումների, էթե համարվել էր, որ դրանք նախորդ վարչակարգի հետ սերտ կապ էին ունեցել: Սկսվել էր ամեն ինչի վերաբերյալ որոշում կայացնելու համար մշտական *ժողովների* մի ժամանակաշրջան: Այն կուսակցությունները, որոնք դիտվել էին որպես հին վարչակարգի գործը շարունակող, հայտարարվեցին օրենքից դուրս: Պորտուգալիայի կոմունիստական կուսակցությունն այդ բազմաթիվ ժողովներից դուրս եկավ իշխանության կարևորագույն պաշտոնները գրաված: Բանկերի ազգայնացումը երկիրն ուղղեց սոցիալիզմի ճանապարհով, քանի որ բանկերն ավանդաբար վերահսկում էին արդյունաբերական ոլորտի մեծ մասը: Դա մի հեղափոխական գործընթաց էր, որն արժանացավ համաշխարհային ուշադրության, առաջ բերեց խանդավառություն ու վախ:

## ԱՆՅՈՒՄ ՆԱԽԱԶԵՆՈՒՎԱԾ ՈՉ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՇԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Վերլուծական տեսանկյունից հարց է ծագում, թե ինչպես է սկսվում նման մի հեղափոխական գործընթաց և հատկապես ինչպես և ինչու է նման գործընթացը տանում դեպի խորհրդարանային ներկայացուցչական ժողովրդավարություն: Իսկապես, երբ մենք անդրադառնում ենք 1-ին մասում մեր քննարկած փոփոխականներին, հեղափոխականներն առավելապես առնչվում են «ո՞վ է նախաձեռնում և ղեկավարում անցումը» փոփոխականին: Անցումը նախաձեռնողների բնույթը նույնպես ուժեղ ոչ ժողովրդավարական

6. Զինվորականության շարքերում ճգնաժամը երևում է այն փաստից, որ 1971թ. զինվորական ակադեմիայի դասարանում կար 550 տեղ, սակայն միայն 169 դիմորդ էր դիմել ընդունելության քննության համար, իսկ ընդունվել էր 103 հոգի: *Sk'u* Մարիա Կարիլյոի բազմաթիվ փաստերով հագեցած գիրքը՝ *"Forças armadas e mudança política em Portugal no séc. XX: Para uma explicação sociológica do paper dos militares"* (Lisbon: Estudos Gerais Serie Universitaria, 1985), էջ 385: Համալսարանի գորակոչված ուսանողների հետ գործ ունենալը զայրացնում էր կադրային սպաներին, որոնցից շատերը ցանկանում էին, որ վերջ տրվի գաղութատիրական պատերազմներին: Կադրային սպաներն անհանգստանում էին, որ էթե պարտվեն պատերազմներում, ապա կառավարությունից կստանան նույն նվաստացուցիչ վերաբերմունքը, որին արժանացել էին Գոայում նահանջած պորտուգալական վաշտերի հրամանատարները:

7. Դասական ուսումնասիրությունը Ֆիլիպ Շմիտթերինն է՝ «Կայծակնային ազատագրում. հետադարձ հայացք ավտորիտար վարչակարգի տապալմանը» (Philippe C. Schmitter, *"Liberation by Golpe: Retrospective Thoughts on the Demise of Authoritarian Rule in Portugal"*, *Armed Forces and Society* 2 (Nov. 1975):5-33):

տարրեր է ներմուծում այն փոփոխականի մեջ, որն անվանում ենք «սահմանադրության մշակման միջավայր»:<sup>8</sup>

Անցումը Պորտուգալիայում մեծ չափով սկսվեց կապիտանների կողմից: Ուստի, ի տարբերություն Հունաստանի, որը մենք կդիտարկենք ստորև, Պորտուգալիայում հեղափոխությունը չէր նախաձեռնվել պետության կողմից: Սա հանգեցրեց կանոնավոր զինվորական կառույցների ճգնաժամին ու նաև տարավ դեպի պետության ընդհանուր ճգնաժամ: Ըստ մեր վերլուծական շրջանակի՝ սա սկիզբ դրեց «ժամանակավոր կառավարությունների» մի ժամանակահատվածի, երբ ժողովրդավարությանը լրիվ անցման հնարավորությունները, էլ չասած ժողովրդավարության կայացման մասին, լուրջ կասկածների տեղիք էին տալիս: Մի պահ Լիսաբոնում ու հարավում զանգվածային գորաշարժից հետո կրտսեր զինվորականությունը, ըստ էության, դաշինքի մեջ էր ստալինյան կոմունիստական կուսակցության և տարբեր հեղափոխական խմբերի հետ՝ շանալով փոխակերպել երկիրը:<sup>9</sup> 1974 և 1976թթ. միջև երկիրն ապրում էր ժամանակավոր կառավարությունների հերթագայության ու պետության գրեթե կազմալուծման փոթորկուն ժամանակներ: Իսկապես, Քենեթ Մաքսվելը հիշատակում է այն փաստը, որ մի շարք իմաստներով Պորտուգալիայում անցումն այս ժամանակահատվածում ավելի մոտ էր Նիկարագուային, քան Հարավային Եվրոպայի կամ Հարավային Ամերիկայի որևէ երկրում տեղի ունեցածին:<sup>10</sup>

Հեղափոխական ցնցումների այս ժամանակահատվածում զինվորականությունը խորապես ներգրավվեց քաղաքական գործունեության բոլոր փուլերում: 1974թ. ապրիլից հետո Ազգային փրկության խունտան, որը ղեկավարվում էր յոթ սպաների կողմից, ստանձնեց գերագույն իշխանություն, ընտրեց նոր նախագահ իր անդամներից ու կազմավորեց կառավարությունը: Նոր վարչակարգի մեկ այլ հեղափոխական մարմին՝ Պետական խորհուրդը, իրականացնում էր օրենսդրական իշխանությունը մինչև Սահմանադիր ժողովի ընտրությունները. այն բաղկացած էր քսանմեկ անդամից, որոնցից միայն հինգն էին քաղաքացիական, մնացած բոլորը նշանակված էին զինվորականության կողմից: Վերջին հինգ ժամանակավոր կառավարությունները ղեկավարվել են զինվորական այրերի կողմից: Կաբինետի 90 պաշտոններից 40-ը զբաղեցնում էին զինվորական սպաները:<sup>11</sup> Ի լրումն սրա՝ 1974-75թթ. ընթացքում զինվորականության իրավագործության

8. Այս փոփոխականների մեր քննարկումը, տե՛ս Գլուխ 5:

9. Կարևոր է շեշտել ժողովրդի ինքնաբուխ համախմբման ու հողերի գրավումների բարձր աստիճանը, որը լավ վավերագրված է Նանսի Ջինա Բերմեոյի կողմից «Հեղափոխությունը հեղափոխության մեջ. աշխատավորների իշխանությունը գյուղաբնակ Պորտուգալիայում» (Nancy Gina Bermeo, *The Revolution within the Revolution: Workers' Control in Rural Portugal* (Princeton: Princeton University Press, 1986)):

10. Քենեթ Մաքսվել, «Վարչակարգի տապալումը և ժողովրդավարության անցման հեռանկարները Պորտուգալիայում» (Kenneth Maxwell, *Regime Overthrow and the Prospects for Democratic Transition in Portugal*), Օ'Դոննելի, Շմիտերի և Ուայթհեդի խմբ.՝ «Անցումներ ավտորիտար իշխանությունից. Հարավային Եվրոպա» (O'Donnell, Schmitter, and Whitehead, *Transitions from Authoritarian Rule: Southern Europe*, 113):

11. Այս բոլոր թվերը վերցված են Խոսե Սանչես Սերվելլոյի տեղեկություններով հագեցած հոդվածից՝ «*El proceso democrático portugués (1974-1975)*», in Hipólito de la Torre, ed., *Portugal y España en el cambio político (1958-1978)* (Mérida: Universidad Nacional de Educación a Distancia, Centro Regional de Extremadura, 1989), էջ 155-63:

ողորտը ոչ միայն չվերացվեց կամ չսահմանափակվեց, այլև ընդլայնվեց՝ ընդգրկելով բոլոր «հակահեղափոխական» հանցագործությունները՝ ներառյալ զանգվածային լրատվական միջոցների կողմից կատարված «հանցագործությունները»։ Զինվորականությունն իրեն իրավունք վերապահեց ձեռքբերելու, ոստիկանական հարցաքննություններ իրականացնելու և ռազմական դատաստանի ենթարկելու ցանկացած քաղաքացիական անձի, ով նրանց կարծիքով՝ ներգրավված էր եղել զինվորականության դեմ գործված զանցանքների մեջ։<sup>12</sup> Զինվորականությունն ստանձնեց արտաքին քաղաքականության գլխավոր հարցերի միակողմանի վերահսկողությունը։ Ժամանակավոր կառավարության ամենաարմատական զինվորական առաջնորդներից մեկի՝ Վաշկու Գոնսալվիշի բառերով՝ "MFA"-ն ապագադուրսացումը ղեկավարող միակ ու բացառիկ խումբն էր։<sup>13</sup> Զինվորականությունը նաև կարևոր դեր ստանձնեց զանգվածային լրատվամիջոցներում։ Դրա "MFA" տեղեկագիրն ուներ 100000 օրինակի հասնող շրջանառություն, իսկ "MFA"-ի "Dinamizaçao Cultural" կոչվող ստորաբաժանման միջոցով իրականացվում էր լայն քաղաքական մոբիլիզացում՝ ի աջակցություն հեղափոխական գործընթացի։ Եվրոպական Եվրատեսիլի երաժշտական առաջին փառատոնում մասնակցելու համար մրցություն հաղթողն անգամ սպա էր։<sup>14</sup>

Հաշվի առնելով ոչ բարձրաստիճան զինվորականության խաղացած բացառիկ քաղաքական դերը, Մոսկվայի գծին հետևող կոմունիստական կուսակցության առկայությունն ու համաժողովրդական հեղափոխական գործողությունները, ինչպես էր Պորտուգալիան, ըստ մեր չափանիշների, 1982թ. օգոստոսի 12-ին *միաժամանակ* ավարտեց ժողովրդավարությանն իր անցումն ու ժողովրդավարության կայացումը։

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսականորեն ու էմպիրիկորեն կարծում ենք, որ ցանկացած ժամանակավոր կառավարության ոչ ժողովրդավարական դինամիկային հակակշռող ամենաուժեղ ժողովրդավարական ուժն ազատ ընտրություններն են՝ սահմանված ժամկետով։ Միայն նման ընտրությունները կարող են կազմավորել քաղաքական հասարակություն։ Դա այդպես է այն պատճառով, որ ընտրությունները կարող են (1) ասպարեզ բերել նոր ժողովրդավարական քաղաքական գործիչների, (2) նոր բացված քաղաքական տարածքը համալրել ժողովրդավարական ինստիտուտներով, (3) ժողովրդավարական լեգիտիմության հավակնություն տալ այն ուժերին, որոնք պարտադիր չէ, որ որևէ դեր խաղացած լինեն ոչ ժողովրդավարական վարչակարգի քայքայման գործում, և (4) երկրում քաղաքացիներին տալ ժամանակավոր կառավարության մասին դրական կամ բացասական կարծիք հայտնելու առաջին հնարավորությունը։

12. Նույն տեղում։

13. Նույն տեղում, էջ 162։

14. Նույն տեղում, էջ 162-63։ Անփոխարինելի ժամանակագրություն, որը վերաբարձրում է 1974-75թթ. հեղափոխական ժամանակաշրջանի կարևորագույն հրամանների, մանիֆեստների ու ելույթների մեծ մասը, տե՛ս Էնրիկե Բարիլարոյի (Henrique Barrilero Ruas) խմբ. "A revolução das flores: Do 25 de Abril ao Governo Provisorio" (Lisbon: Editorial Aster, n.d.):



Պորտուգալիայի օրինակը հաստատում է այս ընդհանուր փաստարկը: Դեռևս ուսումնասիրման ենթակա որոշ պատճառներով Զինված ուժերի շարժման նախնական ծրագիրը նրանց հաստատելու պարտավորեցնում էր մեկ տարվա ընթացքում անցկացնել Սահմանադիր ժողովի ընտրություններ:<sup>15</sup> Պարտավորություն կար Սահմանադիր ժողովի կողմից սահմանվելիք շրջանակում հաջորդ տարվա ընթացքում անցկացնել նաև խորհրդարանական ու նախագահական ընտրություններ:<sup>16</sup> Եկեք հիշենք, որ գոյություն ունի նոր սահմանադրություն մշակելու երկու տարբերակ: Մեկը Սահմանադիր ժողովի ընտրություններն են՝ առանց որևէ այլ գործառույթի, և որին կառավարությունը հաշվետու չի լինում, իսկ մյուսը՝ կանոնավոր խորհրդարանի ընտրությունն է (որին կառավարությունը հաշվետու է), որն օրինագծերի մշակմանը գուզընթաց մշակում է սահմանադրության նախագիծն ու հաստատում է այն: Առաջին տարբերակը կարող է ծառայել խորհրդարանահենք կառավարության կազմավորումը հետաձգելուն սահմանադրության հաստատումից ու նոր ընտրություններից հետո, ինչպես Պորտուգալիայում: Այն թույլ է տալիս երկարաձգել գուցե ավտորիտար ժամանակավոր կառավարությունը: Մեկ այլ հետևանք կարող է լինել և այն, որ իրական քաղաքական գործիչները հնարավոր է նախընտրեն չմասնակցել Սահմանադիր ժողովին, որի մշակածը [սահմանադրությունը], հետևաբար, կլինի ավելի վերացական ու տեսական, քան այն հավանաբար կլինի, եթե մշակվեր փոխգիշումների արդյունքում առավել հզոր առաջնորդների միջև, ովքեր շահագրգռված են օրենսդրի կամ գործադրի կազմում լինել, քանի դեռ Սահմանադիր ժողովը գումարման ընթացքում է: Համեմատական կարգով ասենք, որ Նիկարագուայում սանդինիստներին աջակցող լայն կոալիցիան չպահանջեց կամ չարեց ժողովրդավարներն ընտրված Սահմանադիր ժողովի կողմից սահմանադրության ընդունման վերաբերյալ նման հստակ հայտարարություն և ոչ էլ սահմանեց ժամանակավոր կառավարության ավարտի մասին որևէ ժամկետ:

Պորտուգալիայում Սահմանադիր ժողովի ընտրություններն անցկացվեցին ըստ ժամանակացույցի՝ 1975 թվականի ապրիլի 25-ին: Այս համապետական ընտրություններում մեկ ձայնակենտրոն կուսակցություն, մեկ աջակենտրոն կուսակցություն և մեկ պահպանողական կուսակցություն, որոնք բոլորն էլ կողմ էին ընթացակարգերի վրա հիմնված ժողովրդավարությանը, շահեցին ընտրողների ձայների 72%-ը: 1976 թվականին 1920թ. հետո տեղի ունեցած առաջին ազատ խորհրդարանական ընտրություններում այս նույն երեք կուսակցությունները շահեցին ձայների 75%-ը և 263-ից 222 տեղ Սահմանադիր ժողովում:<sup>17</sup>

Ժամանակավոր կառավարությունների մասին խիստ կարևոր վերլուծական կետերից

15. *Stéu* "Disposições Constitucionais Transitórias"-ի հոդված 4-ը (1974թ. մայիսի 14): Ամբողջ տեքստը վերստայված է՝ Բարիլարո Ռուաս, «Մադիկների հեղափոխությունը», "A revolução das flores", էջ 308-14:

16. Նույն տեղում, էջ 118

17. Ընտրությունների մասին *տե՛ս* Դեյվիդ Գոլդի, «Ընտրությունները և ժողովրդավարության կայացումը Պորտուգալիայում 1974-1983թթ.» (David B. Goldey, "Elections and the Consolidation of Portuguese Democracy: 1974-1983", *Electoral Studies* 2, no. 3 (Dec.1983): 229-4), Թոմաս Բրունո և Ալբեր Գալաուդ, «Քաղաքականությունը ժամանակակից Պորտուգալիայում և ժողովրդավարության կայացումը» (Thomas C. Bruneau and Alex Macleod, *Politics in Contemporary Portugal: Parties and the Consolidation of Democracy* (Boulder, Colo.: Lynne Rienner Publisher, 1986), esp. chap. 2):

է այն, որ երկարատև ավտորիտար ժամանակահատվածից հետո այն խմբերը, որոնք կործանել են ոչ ժողովրդավարական վարչակարգն ու կազմավորել ժամանակավոր կառավարությունը, միշտ կարող են հավակնել ժողովրդի կարիքներն ու ցանկությունները լեգիտիմորեն ներկայացնողի դասին: Ըստ էության, անհնար է ստուգել կամ վիճարկել նրանց հավակնությունն առանց ընտրությունների: Ընտրություններն առաջ են բերում նոր ժողովրդավարական հավակնորդների: Ժամանակավոր կառավարության առաջնորդների մենաշնորհային հավակնությունները, այսպիսով, վիճարկվում են, և նոր ստեղծված ժողովրդավարական քաղաքական տարածքի կարևոր մասը զբաղեցվում է այնպիսի գործող անձանցով, ովքեր ծնունդ են առել ժողովրդավարական ընթացակարգերից:

Ընտրությունների անցկացումը չի նշանակում, որ անցման ժողովրդավարական կամ ոչ ժողովրդավարական ուղղվածության համար պայքարն ավարտված է: Մեծապես անկայուն այն միջավայրում, որը տիրում էր Պորտուգալիայում 1974-75թթ., ազատ ընտրությունները միայն նշանակում էին, որ ստեղծվել են ժողովրդավարական մի դիսկուրս և ժողովրդավարական իշխանության ռեսուրսներ՝ վիճարկելու այն դիսկուրսն ու ռեսուրսները, որոնք գտնվում են ժամանակավոր կառավարությանը հարող ուժերի ձեռքում: Այն, որ այս երկու դիսկուրսներն ու իշխանության հիմքերը կարող են միմյանցից արմատապես տարբերվել անգամ ընտրություններից հետո, զարմանալիորեն պարզ դարձավ Պորտուգալիայի կոմունիստական կուսակցության առաջնորդ Ալվարո Կունյալի դիտողություններից 1975թ. իտալացի լրագրող Օրիանա Ֆալլաչիի հետ մի հարցազրույցի ժամանակ: «Եթե դուք կարծում եք, որ սոցիալիստական կուսակցությունն իր 40%-ով և ժողովրդական ժողովրդավարներն իրենց 27%-ով կազմում են մեծամասնություն ... Դուք թյուրըմբռնման գոհն եք... Ես Ձեզ ասում եմ, որ ընտրությունները ոչ մի կապ կամ շատ քիչ կապ ունեն որևէ հեղափոխության դինամիկայի հետ... Ես Ձեզ վստահեցնում եմ, որ Պորտուգալիայում խորհրդարան չի լինի»:<sup>18</sup>

## ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Իսկ ինչո՞ւ ժողովրդավարական խորհրդարան, փաստորեն, հիմնվեց 1976 թվականին: Այժմ պետք է գնանք հետ՝ դեպի հեղափոխության ակունքները՝ կրտսեր սպաների ժամանակաշրջան: 5-րդ գլխում ոչ բարձրաստիճան զինվորականների կողմից ղեկավարվող վարչակարգը մշտապես գտնվում է բարձրաստիճան զինվորականների կողմից վերահսկողության հաստատման վտանգի առջև: Այստեղ մեր մոտեցումը որոշ չափով տարբերվում է Ֆելիպե Ագուերոյի կարևոր աշխատության մեջ արտահայտած մոտեցումից: Նա պնդում է, որ եթե նախորդ ավտորիտար վարչակարգը լինում է քաղաքացիականացված, և անցումն սկսվում է զինվորական հեղաշրջումից, ապա զինվորականության հարաբերական ուժային դիրքը լինում է «ամուր»:<sup>19</sup> Կարծում ենք, որ սա ճիշտ է միայն այն դեպ-

18. Մաքսվել, «Վարչակարգի տապալումն ու անցումը Պորտուգալիայում» (Maxwell, "Regime Overthrow and Transition in Portugal", 127):

19. Ֆելիպե Ագուերո, «Զինվորականությունը և ժողովրդավարությունը Հարավային Ամերիկայում

քում, երբ հեղաշրջման առաջնորդ է եղել բարձրաստիճան գինվորականությունը: Եթե հեղաշրջումը ղեկավարվում է ոչ բարձրաստիճան գինվորականության կողմից, ապա վերջինս, ինչպես արդեն հիմնավորել ենք, միշտ խոցելի է բարձրաստիճանների կողմից հակահեղաշրջման տեսակետից:

Պորտուգալիայում ժամանակավոր կառավարությունների օրոք իրականացվող քաղաքականությունն ավելի ու ավելի մեծ սպառնալիք էր ներկայացնում բարձրաստիճան գինվորականների համար: Որոշ դեպքերում ստեղծվում էին զուգահեռաբար գործող ղեկավար մարմիններ, որոնք հրաժարվում էին ենթարկվել իրենց «միայն անունով» վերադասների հրամաններին: Սպաների ու շարքայինների խառը խմբերը ժամանակ առ ժամանակ հանդիպում էին բանավեճերի ֆորումներում: Ի վերջո՝ ինքնահռչակ «հեղափոխության շարժիչի» մոբիլիզացումը ճաք տվեց՝ ծնունդ տալով ապագա քաղաքականության ուղղությունների ու դաշնակցային ռազմավարությունների շուրջ սուր ներգինվորական հակամարտությունների: Ինչպես նշել է Լուուրենս Գրահամը, արդեն 1975թ. վերջին պորտուգալական գինվորականության քաղաքական ներգրավվածությունը հասել էր մի կետի, երբ «քաղաքական խմբավորումները ձախում, աջում ու կենտրոնում միասին ներկայացնում էին քաղաքացիական ու գինվորական առաջնորդների տարբեր համակցություններ: Կազմակերպական առումով այդ ժամանակ արդեն գինվորականությունը՝ որպես քաղաքացիական հասարակությունից տարբերակվող առանձին ինստիտուտ, ընդհանուր առմամբ դադարել էր գոյություն ունենալ: Նախահեղափոխական բաժանումները գերատեսչությունների միջև և դրանց ներսում սպաների ու շարքայինների միջև վերացան՝ դրանք դարձնելով միմյանց դեմ պայքարող կողմեր»:<sup>20</sup> Իսկապես, կան փաստեր, որոնք ցույց են տալիս, որ գինվորականության ներսում արդեն 1975թ. օգոստոսին ծագել էին առնվազն երեք զարմանալիորեն տարբեր քաղաքական միտումներ:<sup>21</sup>

և Հարավային Եվրոպայում. արդյունքներ և նախնական պայմաններ» (Felipe Aguero, "The Military and Democracy in South America and Southern Europe: Outcomes and Initial Conditions") (կոլոր ներկայացվել է Լատինաամերիկյան ուսումնասիրությունների միության XV միջազգային կոնգրեսին, Մայամի, դեկտեմբերի 4-6, 1989թ.): *Տե՛ս նաև* Ֆելիպե Ագուերոյի կարևոր գիրքը՝ «Զինվորներ, քաղաքացիականներ ու ժողովրդավարություն՝ հետ-ֆրանկոյական Իսպանիան համեմատական տեսանկյունից» (Felipe Aguero, *Soldiers, Civilians, and Democracy: Post-Franco Spain in Comparative Perspective* (Baltimore: Johns Hopkins University Press, 1995)):

20. Լուուրենս Գրահամ, «Զինվորականությունը. արդիականացում և տեսանկյունի փոփոխություն» (Laurence S. Graham, "The Military: Modernization and Changing Perspectives"), Քենեթ Մաքսվելի խմբ. «Պորտուգալացիների պաշտպանությունն ու արտաքին քաղաքականությունը ժողովրդավարացումից հետո» (Kenneth Maxwell, ed., *Portuguese Defense and Foreign Policy Since Democratization* (New York: Camoes Center, Research Institute on International Change, Columbia University, Special Report No. 3, 1991), 16):

21. Երեք միանգամայն անհամադրելի քաղաքական փաստաթղթեր գրվել են մրցակցող գինվորական խմբակցությունների կողմից 1975թ. հուլիսին և օգոստոսին: Հատկապես *տե՛ս* առաջապահականների հեղափոխականամետ փաստաթուղթը, որը հրապարակվել է «COPCON» կոչվող մի խմբի կողմից և մի ժողովրդավարական-սոցիալիստական փաստաթուղթ, որը ստորագրվել է սպաների կողմից, ովքեր բացահայտորեն դատապարտում են COPCON-ի հակաժողովրդավարական քաղաքականությունը Իպոլիտե դե լա Տորրեի և Խոսե Սանչես Սերվելոյի «Պորտուգալիան XX դարում» (Hipolito de la Torre and Josep Sanchez Cervello, *Portugal en el siglo XX* (Madrid: Ediciones Istmo, 1992), 325-34): Փոլ Քրիստոֆեր Մանուել, «Անորոշ արդյունք. ժողովրդավարության անցման քաղաքականությունը Պորտուգալիայում» (Paul Christopher Manuel, *Uncertain Outcome: The Politics of the Portu-*

Այդ հանգամանքներում միասնության ու կարգուկանոնի ինստիտուցիոնալ հարցերով մտահոգված ավագ սպաների մի խումբ սկսեց հավաքվել գնդապետ Ռամալյու Էանիշի շուրջը: Երբ պարզվեց, որ մի դեսանտային դասակ՝ առանց սպաների, ներգրավված է ձախերի կողմից նախապատրաստված «պուտչի» մեջ 1975թ. նոյեմբերի 25-ին, դա կասեցվեց գնդապետ Էանիշի կողմից, ինչը սատարվեց ազգային ու միջազգային ուժերի գորեղ քաղաքական կոալիցիայի կողմից: Սկսվեց «զինվորականություն-կազմակերպության» ներսում բարձրաստիճանների հսկողության վերահաստատման մի երկարատև գործընթաց: Ընտրությունների արդյունքի հետ հաշվի նստելը դարձավ բարձրաստիճան զինվորականների սեփական ապաքաղաքականացման ռազմավարության մասը: Ինչպես Մաքսվելն է ասում, «բանակը, որը 1975 թվականին իրեն համարում էր «հեղափոխության ավանգարդ» ու «ազգային ազատագրական շարժում», արդեն 1976 թվականին գովերգում էր բարձրաստիճան զինվորականությանն ու «կարգուկանոնը»:<sup>22</sup>

### ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԻՋՍԱՎԱՅՐԸ. 1976Թ. ՈՉ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Սակայն ժամանակավոր կառավարությունների միջնախաղն ու քաղաքականության մեջ զինվորականության չափազանց մեծ ներգրավվածությունը թողել էին իրենց հետևանքը հատկապես այն փոփոխականի առումով, որն անվանում ենք *սահմանադրության մշակման միջավայր*: Ժողովրդավարության տեսության ու ժողովրդավարական ինստիտուտների առումով վճարած «զինն» այն էր, որ ի տարբերություն Իսպանիայի՝ Սահմանադիր ժողովն իսկապես «ինքնիշխան» չէր և ի վիճակի չէր նախագծելու այն սահմանադրությունը, որը ցանկանում էին իր անդամները: Որպեսզի 1975թ. Սահմանադիր ժողովի ընտրություններն առաջ ընթանան, կուսակցությունները խոնարհվեցին հեղափոխական զինվորական իշխանության առջև ու պաշտոնական գրավոր դաշինք կնքեցին "MFA"-ի հետ (Զինված ուժերի շարժում)՝ համաձայնություն տալով "MFA"-ի վերահսկողական դերին անգամ ընտրություններից հետո: Մի երկրորդ դաշնագիր "MFA"-ի ու քաղաքական կուսակցությունների միջև ստորագրվեց 1976թ. փետրվարի 26-ին, երբ Սահմանադիր ժողովն ընթացքի մեջ էր՝ էլ ավելի սահմանափակելով ընտրված պաշտոնյաներին:<sup>23</sup>

Այս դաշինքների հետևանքով 1976թ. մշակված սահմանադրությունը պարունակում էր որոշ ակնհայտ ոչ ժողովրդավարական գծեր: Գերակշիռ մասով զինվորականության ներկայացուցիչներից կազմված Հեղափոխական խորհրդին հատկացվեց իր սեփական

*guese Transition to Democracy* (Lanham, N.Y.: University Press of America, 1995)), ներկայացնում է 1974-1976թթ. ժամանակահատվածում "MFA"-ի քաղաքականության ու խմբակցությունների մանրամասն ու վավերագրված նկարագրությունը:

22. Մաքսվել, «Վարչակարգի տապալումն ու անցումը Պորտուգալիայում» (Maxwell, *Regime Overthrow and Transition in Portugal*), 133):

23. Առաջին դաշնագրի ամբողջ տեքստը վերատպված է՝ "Plataforma Constitucional Partidos—M.F.A.," in Fernando Ribeiro de Mello, ed., *Dossier 2a República* (Lisbon: Edições Afródite, 1976), 1:235-41: Երկրորդ դաշնագրի ամբողջ տեքստը վերատպված է՝ "Segundo Pacto dos Partidos com o M.F.A.," in Reinaldo Caldeira and Maria da Ceu Silva, *Constituição política da República Portuguesa 1976: Projectos, votações, e posicoes dos partidos* (Lisbon: Livraria Bertrand, 1976), էջ 343-52:

օրենքներն անցկացնելու ու ժողովի կողմից անցկացված բոլոր օրենքների սահմանադրականության մասին դատելու իրավունք: Պորտուգալիայի 1976թ. սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ պարբերության մեջ որոշակիորեն ասվում էր, որ «Հեղափոխական խորհրդի օրենք-հրամանագրերն ունեն նույն ուժը, ինչ որ Հանրապետության ժողովի օրենքները»:<sup>24</sup> Հոդված 148-ում սահմանվում էր, որ Հեղափոխական խորհուրդը պետք է ունենա «Զինված ուժերի կազմակերպական ֆունկցիոնալությանն ու կարգապահությանը վերաբերող օրենքներ մշակելու» կարողություն: Այն նաև սահմանում էր, որ « նախորդ պարբերության մեջ նշված լիազորությունները վերապահվում են միայն Հեղափոխական խորհրդին»:<sup>25</sup>

Քանի դեռ Մահմանադրությունն այս *դե յուրե* արտոնությունները տալիս էր մի ինստիտուտի, որի իշխանությունը չէր բխում ժողովրդավարական ընթացակարգերից, Պորտուգալիան չէր համապատասխանում ժողովրդավարությանն ավարտված անցման մեր չափանիշներին: Ի լրումն սրա՝ Հեղափոխական խորհուրդը *դե ֆակտո* իրագործում էր իր *դե յուրե* իշխանությունը: Ըստ Բրունոյի և Մաքլաուդի՝ «խորհուրդն ընդունել էր ակտիվիստական դիրք, ինչը քաղաքացիական ծագումով քաղաքական գործիչներից շատերին դուր չէր գալիս, մերժելով ներկայացված յոթանասունչորս օրինագծերից առնվազն երեսունհինգը»:<sup>26</sup> Ի վերջո ժողովրդավարական քաղաքական կուսակցություններից պահանջվեց վեց տարվա աշխատանք և նախագահ Էանիշի համաձայնությունն ու ժամանակ առ ժամանակ ակտիվ աջակցությունը, մինչև որ 1982թ. տեղի ունեցավ սահմանադրության վերանայում, որը վերջ տվեց Հեղափոխական խորհրդին ու սահմանեց իրավական դաշտ զինվորականության ժողովրդավարական վերահսկողության համար:<sup>27</sup>

## ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՑՄԱՆ ԱՎԱՐՏ ՈՒ, ՄԻԵՎՆՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄ

Ժողովրդավարությանն անցումն ու ժողովրդավարության կայացումը սովորաբար առանձին գործընթացներ են, որոնք հետևում են միմյանց ժամանակագրական հաջորդականությամբ: Սակայն որոշ հանգամանքների բերումով դրանք կարող են տեղի ունե-

24. Այս իշխանությունը պարզապես վերահաստատեց արդեն մեջբերված "Plataforma Constitucional Partidos – M.F.A."-ի հոդված 3, բաժին 2-ում համաձայնեցված զիջումները:

25. Զինվորական ինքնակառավարման այս արտակարգ «իրավունքը» նույնպես նախապես դաշնագրով համաձայնեցվել է "Segundo Pacto dos Partidos com o M.E.A."-ի հոդված 3, բաժին 14-ում:

26. Բրունո և Մաքլաուդ, «Քաղաքականությունը ժամանակակից Պորտուգալիայում» (Bruneau and Macleod, *Politics in Contemporary Portugal*, 40):

27. Հեղափոխական խորհրդի արձակման օգտին քվեարկության մանրամասները, *տե՛ս* «Վավերագրված փաստեր» (*Facts on File*, 41 (1982): 638, 867): 1982թ. նոյեմբերին Պետական պաշտպանության մասին կարևոր օրենքը, որը սահմանում է քաղաքացիականների կողմից վերահսկողության մանրամասները, արդեն ընդունվել էր: Քաղաքացիականներին լիազորություններ տալու ու ժողովրդավարական վերահսկողության այս աստիճանական գործընթացի մասին արժեքավոր փաստեր, *տե՛ս* Բրունո և Մաքլաուդ, «Քաղաքականությունը ժամանակակից Պորտուգալիայում» (Bruneau and Macleod, *Politics in Contemporary Portugal*, 12-25, and Graham, "The Military," 14-28):

նալ նաև միաժամանակ: Կարծում ենք, որ նման միաժամանակայնություն տեղի ունեցավ Պորտուգալիայում 1982թ. օգոստոսի 12-ին: Ինչո՞ւ:

Ժողովրդավարության կայացման վերաբերմունքային հարթության հետ կապված՝ դժբախտաբար, չունենք հասարակական կարծիքի մասին բավարար և/կամ մեթոդաբանական առումով հիմնավոր տվյալներ, որոնք կարտահայտեին ժողովրդավարության նկատմամբ պորտուգալացիների վերաբերմունքը 1982թ-ից առաջ, սակայն կարծում ենք, որ Պորտուգալիայում 1975-1985թթ. ժամանակահատվածում զարմանալիորեն հաստատուն կուսակցական նախապատվությունները ցույց են տալիս, որ ընտրական իրավունք ունեցողների ճնշող մեծամասնությունը հետևողականորեն արտահայտվում էր հոգուտ ժողովրդավարամետ, վարչակարգի կողմնակից կուսակցությունների: Հասարակական կարծիքի ուսումնասիրության ու քվեարկության պատկերների իրենց վերլուծության հիման վրա Բրունոն և Մաքլաուդը հաստատում են, որ «կուսակցությունների նկատմամբ հավատարմությունը հաստատվել է ավելի վաղ՝ 1975թ., և շարունակվել է մի կուսակցությունից դեպի մեկ այլ կուսակցություն ընտրողների շատ փոքր տեղաշարժով 1976-1983թթ. ժամանակահատվածում»:<sup>28</sup> Այդ առումով հատկապես տպավորիչ էին 1975 թվականի «հիմնադիր ընտրությունները»: 1975 թվականի ընտրությունները դարձան մրցույթ հեղափոխական զինվորականության, որը բացահայտորեն քարոզում էր հոգուտ ձեռնպահության կամ անվավեր քվեի, և ժողովրդավարական քաղաքական կուսակցությունների միջև, որոնք խթանում էին լայն մասնակցությունը: Զինվորականության քարոզարշավն, ըստ էության, ոչ մի ազդեցություն չունեցավ: Մասնակցությունն 90%-ից բարձր էր՝ այս գրքում դիտարկված բոլոր հիմնադիր ընտրությունների մասնակցության ամենաբարձր մակարդակներից մեկը, իսկ անվավեր քվեաթերթիկներ գցել էին միայն 2%-ով ավելի ընտրողներ, քան 1976թ. ընտրությունների ժամանակ, երբ ոչ ոք քարոզարշավ չէր անցկացնում հոգուտ անվավեր քվեաթերթիկների:<sup>29</sup>

Անգամ մինչև 1982 թվականը վստահություն ներշնչող սոցիալաբանությունների բացակայությամբ քվեարկության այս պատկերը գալիս է հիմնավորելու այն փաստարկը, որ վերաբերմունքի առումով Պորտուգալիան անցել էր ժողովրդավարության կայացման մեր սահմանած շեմն արդեն 1982թ-ին: Պորտուգալիայում 1985թ. անցկացված հասարակական կարծիքի մասին մի հարցման արդյունքներով բացահայտվեց հասարակական կարծիքի այնպիսի պատկեր, որը հեռու չէր այլ կայացած ժողովրդավարությունների պատկերից:<sup>30</sup> 1988թ. հարցման ժամանակ բնակչության 90.2%-ն ուներ ընդհանուր համակրանք ժողովրդավարության նկատմամբ: Ժողովրդավարությանն ակտիվորեն աջակցում

28. Բրունո և Մաքլաուդ, «Քաղաքականությունը ժամանակակից Պորտուգալիայում» (Bruneau and Macleod, *Politics in Contemporary Portugal*, 4):

29. 1975թ. հիմնադիր ընտրությունների վերաբերյալ մանրամասների լավագույն աղբյուրն է Խորխե Գասպար և Նունո Վիտորինո (Jorge Gaspar and Nuno Vitorino), "As eleições de 25 de Abril: Geografia e imagem dos partidos" (Lisbon: Livros Horizonte, 1976):

30. 1985թ. հանրային հարցումը և Արևմտյան ու Հարավային Եվրոպայի վերաբերյալ համեմատություններ ու վերլուծություններ, *տե՛ս* Լեոնարդո Մորլինո և Խոսե Մոնտերո, «Լեգիտիմությունն ու ժողովրդավարությունը հարավային Եվրոպայում» (Leonardo Morlino and Jose R. Montero, "Legitimacy and Democracy in Southern Europe"), Ռիչարդ Գյունտերի, Նիկիֆորոս Դիամանդուրոսի և Հանս-Յուրգեն Փուլեի խմբ.: «Ժողովրդավարության կայացման քաղաքականությունը. Հարավային Եվրոպան համեմատական տեսանկյունից» (Richard Gunther, P. Nikiioros Diamandouros, and Hans-Jurgen Puhle, eds.,

էր 38.9%-ը: Ժողովրդավարությունը պասիվ կերպով ընդունում էր 51.3%-ը: Ուշագրավ է այն, որ հարցման ժամանակ վերջին տասը տարիների ընթացքում ժողովրդավարության կատարած քայլերից «դժգոհ եմ» պատասխանած 24.6% բնակչության միայն 5.1%-ն է պատասխանել, որ իրենք եղել են «դեմ», այն դեպքում, երբ 19.1%-ն ասել է, որ ժողովրդավարությանը «կողմ» է եղել: <sup>31</sup> Արդեն 1990թ. Պորտուգալիայում ժողովրդավարամետ զգացումները բարձր էին Արևմտյան Եվրոպայում գրանցված նորմայից: Ի պատասխան Եվրոպայի համար բարոնետր հանդիսացող այն ստանդարտ հարցին, թե որքանով եք բավարարված ժողովրդավարության ընթացքից, Եվրոպական համայնքում պատասխանողների միջինում 62%-ը պատասխանել է «շատ բավարարված եմ»: Պորտուգալիայում այդ թիվը կազմել է 71%:<sup>32</sup>

Վարքագծային առումով կարծում ենք, որ 1982թ. հետո և, հավանաբար նաև առաջ, ազգային նշանակության ոչ մի կազմակերպություն կամ շարժում չի ծախսել զգալի միջոցներ՝ փորձելով իր նպատակներին հասնել ոչ ժողովրդավարական եղանակներով: Հա-

*The Politics of Democratic Consolidation: Southern Europe in Comparative Perspective* (Baltimore: Johns Hopkins University Press, 1995), 230–60):

31. Այս արդյունքների մասին խոսվում է Ֆրանց-Վիլհելմ Հայմեր, Խորխե Վալա-Սալվադոր և Խոսե Մանուել Լեիտե Վարգաս, «Ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունքները ժամանակակից Պորտուգալիայում»-ում (Franz-Wilhelm Heimer, Jorge Vala-Salvador, and Jose Manuel Leite Vargas, "Attitudes toward Democracy in Contemporary Portugal") (նյութը ներկայացվել է Քաղաքական հետազոտությունների եվրոպական կոնսորցիումին, Փարիզ, ապրիլի 10-15, 1989թ.): *St'ú նաև* Բրունո և Մաքսուդ, «Քաղաքականությունը ժամանակակից Պորտուգալիայում» (Bruneau and Macleod, *Politics in Contemporary Portugal*), 1978 և 1984թթ. անցկացված հանրային հարցումների համեմատական վերլուծության մասին: Պորտուգալիայում հասարակական կարծիքի մասին տվյալների ռեյու, *տե՛ս նաև* Մարիո Բակալաու, «Քաղաքական համակարգի և քաղաքական վերաբերմունքների անցումը Պորտուգալիայում», (Mario Bacalhau, "Transition of the Political System and Political Attitudes in Portugal", *International Journal of Public Opinion Research* 2, no. 2 (1990): 141-54):

32. «Եվրոպարոմետր», "Eurobarometer" (1991), էջ 18-31: Իսկապես, 1987թ. «Եվրոպարոմետրի» տվյալներով՝ Եվրոպական համայնքի բոլոր անդամներից ժողովրդավարության ընթացքից բավարարված լինելու առումով Պորտուգալիայից առաջ միայն Լյուքսեմբուրգն էր: *St'ú Ֆիլիպ Շմիտեր*, «Հասարակական կարծիքը և ժողովրդավարության «որակը» Պորտուգալիայում» (Philippe C. Schmitter, "Public Opinion and the 'Quality' of Democracy in Portugal"), Չեխաբիի և Ալֆրեդ Ստեֆանի խմբ.՝ «Քաղաքականություն, հասարակություն և ժողովրդավարություն. համեմատական ակնարկներ» (H. E. Chehabi and Alfred Stepan, eds., *Politics, Society and Democracy: Comparative Essays* (Boulder, Colo.: Westview Press, 1995), 345-59) Շմիտերի հոդվածում նա ուշադրությունը հրավիրում է հանրային հարցման ենթարկվածների այն բավական ցածր տոկոսի վրա, որը կարծում էր, որ իրենք կարող են ազդել կառավարության վրա, և Գաետանոյի ոչ ժողովրդավարական կառավարությանը (ի տարբերություն նախքան 1984թ. որևէ ժողովրդավարական կառավարության) տված շատ ավելի բարձր գնահատականների վրա: Սակայն Շմիտերը եզրափակում է հետևյալ դատողությամբ. «Նորմատիվային տեսության տեսանկյունից և նույնիսկ ավելի շատ ելնելով Movimento do 25 do Abril-ում արտահայտված ձգտումներից ու դրանց ամփոփական հետևանքից՝ ժողովրդավարության որակը ժամանակակից Պորտուգալիայում մենք կհամարենք «հիասթափեցնող»: Սակայն Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում ժողովրդավարության գործնական փորձի տեսանկյունից այն պետք է համարվի որպես «նորմա»: Սա կարող է շատ ոգևորիչ չթվալ, սակայն դա զգալի նվաճում է, երբ հետ ես նայում, թե որտեղ էր երկիրը նախքան ավտորիտար իշխանության տապալումը» (էջ 358-59): Պորտուգալիայում անցման առաջին քսան տարիների հետազոտության տվյալների առավել համապարփակ հավաքածու և վերլուծություն, *տե՛ս* Մարիո Բակալաու, "Atitudes, opiniões e comportamentos políticos dos Portugueses: 1973-1993" (Lisbon: Edição Mário Balcilhau-Thomas Bruneau, 1994):

րավելրոպական նոր ժողովրդավարությունների վերաբերյալ կարևոր համեմատական հոդվածի հեղինակները Պորտուգալիային տվել են «վարչակարգի աջակցության» նույն վարկանիշը, ինչն, ըստ այդ նույն չափանիշների, տվել են կայացած ժողովրդավարություններին Ֆրանսիայում, Իտալիայում և Ֆինլանդիայում:<sup>33</sup>

Ի վերջո, *սահմանադրական* հարթության առումով 1982թ. սկզբին այդ հասարակարգում Հեղափոխական խորհրդի անհաշվետու իշխանության «պահուստային ռոբոտների» դեռևս չափազանց շատ լինելու փաստը վկայում է այն մասին, որ Պորտուգալիան չէր ավարտել իր անցումը ժողովրդավարության: Սակայն երբ 1982թ. օգոստոսի 12-ին զինվորականությունն ընդունեց սահմանադրական փոփոխությունները, Պորտուգալիայում ոչ միայն ավարտվեց անցումը, այլև վերաբերմունքային, վարքագծային ու սահմանադրական առումով կայացավ ժողովրդավարությունը:<sup>34</sup>

Կարծում ենք, որ Պորտուգալիայում անցման ու կայացման ընթացքի վերլուծության մեր յոթ փոփոխականներից ամենաարտահայտիչը վերաբերում է անցումը նախաձեռնողների բնութագրերին: Այն փաստը, որ անցումն սկսվեց ազատագրմամբ՝ ոչ բարձրաստիճանների հեղաշրջման միջոցով, արագորեն ակտիվացրեց ժամանակավոր կառավարությունների դինամիկան, որտեղ հեղափոխությունը հանդիսանում էր նույնքան հնարավոր տարբերակ, որքան և խորհրդարանային ժողովրդավարությունը: Երկրորդ, առավել կարևոր փոփոխականը՝ սահմանադրության մշակման միջավայրը, սերտորեն կապված է առաջինի հետ: Ոչ բարձրաստիճան զինվորականության խաղացած բացառիկ մեծ դերը (Պորտուգալիայի կոմունիստական կուսակցության սատարմամբ և մայրաքաղաքում ու դրան հարող հարավային շրջաններում հասարակական տպավորիչ մոբիլիզացմամբ) հանգեցրեց մինչ այդ մեծապես սահմանափակված սահմանադրության վերամշակման գործընթացի: Մյուս փոփոխականներից ոչ մեկն անցման ու կայացման գործընթացում այդքան արտահայտված չէր: Սակայն բոլորն էլ, եթե պատկերացվեն այլ ուժերի հետ իրենց դիալեկտիկական հարաբերությունների մեջ, կարող են դիտվել որպես ժողովրդավարության կայացման համար վերջին հաշվով նպաստավոր:

Ի տարբերություն Իսպանիայի կամ անգամ ավելին՝ հետկոմունիստական օրինակների մեծ մասի՝ Պորտուգալիայի դեպքում «պետութենականությունը» խնդիր չի եղել, որով-

33. Արենդ Լիյփհարտ, Թոմաս Բրունո, Նիկիֆորոս Դիամանդուրոս և Ռիչարդ Գյունտեր, «Ժողովրդավարության միջերկրածովային մոդել»: Հարավեվրոպական ժողովրդավարությունները համեմատական տեսանկյունից» (Arend Lijphart, Thomas C. Bruneau, P. Nikiforos Diamandouros, and Richard Gunther, "A Mediterranean Model of Democracy? The Southern European Democracies in Comparative Perspective", West European Politics 11 (Jan 1988): 19):

34. Պորտուգալիայում 1974թ. ապրիլի 25-ից մինչև ժողովրդավարության կայացման գործընթացի փուլերի հասկացութենական նկարագրություն կարելի է տեսնել Անտոնիո Վիտորինոյի՝ Եվրախորհրդարանում սոցիալիստական կուսակցության պատգամավորի, իրավունքի պրոֆեսորի և Սահմանադրական դատարանի նախկին անդամի հոդվածում՝ "A democracia representativa." Ադրիանո Մորեյրայի խմբ.՝ "Portugal hoje" (Lisbon: Instituto Nacional de Adinistração, 1995), էջ 328-50: Վիտորինոն գրում է. «Ժողովրդավարական քաղաքական համակարգի լրիվ կայացումը, որը հաջորդեց 1982թ. հաստատված Սահմանադրության առաջին վերանայմանը, վերացրեց Հեղափոխական խորհուրդը՝ դրանով իսկ տանելով դեպի քաղաքական համակարգի վերասահմանումը [այնպես որ], համաժողովրդական ընտրական իրավունքը դարձավ հասարակական ուժի միակ աղբյուրը» (էջ 329): Այս ակնարկը պարունակում է հիանալի մատենագիտական հղումներ սահմանադրության վերանայման մասին գրականությանը:



հետև այն, ըստ էության, այնքան մոտ է տիպիկ ազգային պետության կատարելատիպ լինելուն, որքան որևէ այլ երկիր Եվրոպայում: Պորտուգալիան միավեզու ազգային պետություն է, որի սահմաններն ամրագրված են եղել հարյուրավոր տարիների ընթացքում: Միակ հնարավոր «չվերամիավորված տարածքը» Իսպանիային սահմանակից 25000 բնակիչ ունեցող մի քաղաք է: Պետութենականության միակ հավանական խնդիր կարող էր լինել Ազորյան կղզիներում անջատողականությունը, որը գուցե աջակցություն ստանար Միացյալ Նահանգների կողմից այնտեղ նրա ունեցած օդուժի բազաների պատճառով, եթե Պորտուգալիան դառնար կոմունիստական, սակայն դա երբեք ակնառու հարց չդարձավ:

Ինչ վերաբերում է միջազգային ազդեցության փոփոխականին, ապա օտար պետությունների քաղաքականությունը, ըստ էության, նպաստավոր էր Պորտուգալիայում ժողովրդավարությանն անցման ու կայացման համար: Բիարկե, այդ գործոնն այստեղ ավելի վճռորոշ էր, քան Իսպանիայի դեպքում, և պահանջում է ավելի խոր հետազոտություն: Թեև որոշակի պատկերացում ստանալու համար պետք է սպասել արխիվները բացելուն և ավելի ամբողջական հուշագրությունների լույս տեսնելուն, բայց անգամ այս փուլում կան որոշ փաստեր, որոնք ցույց են տալիս, որ Միացյալ Նահանգներն այնքան էր անհանգստացած հեղափոխական դինամիկայից Պորտուգալիայում, որ նկատի է ունեցել մի շարք գաղտնի ու անգամ մերձոգմական գործողություններ:<sup>35</sup> Հաշվի առնելով պորտուգալացիների մոբիլիզացվածությունը 1975թ., եթե ընտրությունների փոխարեն ԱՄՆ-ի գաղտնի ռազմական գործողությունները (ինչպես 1954թ. Գվատեմալայում) հեղափոխական ուժերի պարտության պատճառ լինեին, դժվար է հավատալ, որ դրան հետևած մթնոլորտը նպաստավոր կլիներ ժողովրդավարության կայացման համար: Սակայն Եվրոպական համայնքը կոչ արեց Միացյալ Նահանգներին հետևել քաղաքական և ոչ թե՛ զինվորական ռազմավարության: Ավելին, Եվրոպական սոցիալիստական կուսակցությունները, հատկապես արևմտագերմանական սոցիալիստական կուսակցությունը, դրամական միջոցներով, կազմակերպական կապերով ու բարոյական աջակցությամբ սատարեց Պորտուգալիայում ամենակարևոր ժողովրդավարական կուսակցությանը՝ սոցիալիստներին՝ Մարիո Սուարեշի գլխավորությամբ: Անցնելով 1975թ. հիմնադիր ընտրությունների ու հատկապես 1976թ. ընտրությունների բովով, որի հետևանքում ստեղծվեց կառավարություն, Պորտուգալիայի ժողովրդավարական կառավարությունների համար ձգողական, արժեքավոր ու կայուն բևեռ դարձավ Եվրոպական համայնքը:<sup>36</sup> Անցման ժամանակ քա-

35. Քենեթ Մաքսվելը գրում է, որ «երբ իրադարձությունները Լիսաբոնում դեպի ձախ գնացին, մի պահ ԱՄՆ քաղաքականությունը, որի գլուխ կանգնած էր Հենրի Քիսինջերը, ժողովրդավարական ելքի հույսը կորցրեց և սկսեց մտնտալ տարբեր հակահեղափոխական տարբերակներ՝ մի քանիսը՝ պարառազմական, մի քանիսն էլ՝ Ազորյան կղզիներում անջատողականների ներգրավմամբ»: *St'ú Մաքսվել, «Պորտուգալիայի պաշտպանությունը և արտաքին քաղաքականությունը. ակնարկ» ("Portuguese Defense and Foreign Policy: An Overview")*, Մաքսվելի՝ *"Portuguese Defense and Foreign Policy"*, էջ 6:

36. Գերմանացի գիտնական Ռայներ Էյսֆելդը (Rainer Eisfeld) մեջբերում է փաստաթղթեր, որոնք վերաբերում են Գերմանիայի սոցիալ-ժողովրդավարական կուսակցության կողմից Պորտուգալիայի սոցիալիստական կուսակցությանը տրված օգնությանը: *St'ú* իր «Պորտուգալիան և Արևմտյան Եվրոպան» (*"Portugal and Western Europe"*), Քենեթ Մաքսվելի խմբ.: «Պորտուգալիան 1980-ականներին. ժողովրդավարության կայացման երկրնորանքները» (Kenneth Maxwell, ed., *Portugal in the 1980s: Dilemmas of Democratic Consolidation* (New York: Greenwood Press, 1986), 29-62, esp.55): *St'ú նաև* Թոմաս

ղաքական հարաբերություններն Իսպանիայի և Պորտուգալիայի միջև նույնպես արժանի են ավելի մեծ ուշադրության, քան առ այսօր դրանց հատկացվել է: Ի դեպ, Իսպանիայում և Պորտուգալիայում գլխավոր քաղաքական գործիչները մեծ ջանքեր են գործադրել խուսափելու համար իսպանա-պորտուգալական հակամարտություններից 1974-75թթ. հեղափոխական գործընթացում: Ջարմանալիորեն Ֆրանկոյի կողմից ղեկավարվող հարևան Իսպանիան ճանաչեց հեղափոխական կառավարությունը Պորտուգալիայում վերջինիս իշխանության գալուց չորս օր անց: Ֆրանկոյի կառավարությունը և Պորտուգալիայում միմյանց հաջորդող հեղափոխական ժամանակավոր կառավարությունները բժախնդրորեն ջանքեր են գործադրել երկու երկրների միջև ճիշտ հարաբերություններ պահպանելու համար: 1975թ. սեպտեմբերին Պորտուգալիայում Պինեյրո դե Ասենեդոի ավելի չափավոր կառավարությունը, որը հաջորդել էր գնդապետ Վաշկու Գոնսալվեշի կոմունիստամետ կառավարությանը դրա անկումից հետո, առաջացրեց մի անորոշ, սակայն վտանգավոր իրավիճակ: Իսպանական պետության կողմից քաղաքական սպանություններ կատարելու մեջ մեղադրված հինգ հեղափոխականների մահապատժից հետո կրակի մատնվեցին Լիսաբոնում Իսպանիայի դեսպանի ու Պորտոյում իսպանական հյուպատոսարանի շենքերը: Պորտուգալիայում լայնորեն շրջանառվում էին իսպանական տանկերի՝ դեպի Պորտուգալիայի սահմանը տեղաշարժվելու մասին կեղծ հաղորդագրություններ: Պորտուգալական արմատական զինվորական խմբակցությունները, ինչպես օրինակ՝ COPCON-ը, կամա թե ակամա կարծես թե ներգրավված են եղել այդ իրադարձություններում: Միայն Պորտուգալիայի ու Իսպանիայի կառավարությունների արագ և չափավոր դիվանագիտական գործողությունները վերացրին ճգնաժամը:<sup>37</sup>

Թեև սա մեր հիմնական փոփոխականներից չէ, բայց մեր կողմից անփութություն կհամարվեր *մորիլիզացման* հարցը չքննարկելը: «Հեղաշրջման միջոցով ազատագրումից» առաջ նշանակալից մորիլիզացում տեղի չի ունեցել:<sup>38</sup> Սակայն ազատագրումը ողջունող անմիջական զանգվածային աջակցությունը փողոցներում, անշուշտ, օգնեց նվազեցնել Մալազար-Կատեանոյի վարչակարգի կողմնակիցների կողմից բարեհաջող հակահարվածի հնարավորությունները: Մի քանի օրվա ընթացքում անվտանգության սարսափազդու ուժերի անդամները մտել էին անկազմակերպ պայքարի մեջ, պետությունը քայքայ-

Բրունո «Քաղաքականություն և պետականություն» (Thomas C. Bruneau, *Politics and Nationhood* (New York: Praeger, 1984), 52-54):

37. *Տե՛ս* լավ հետազոտական ու վավերական նյութեր պարունակող զիրք՝ Խոսե Սանչես Սերվելլո (Josep Sanchez Cervello), *"A revolução Portuguesa e a sua influencia na transição Espanhola"* (1961-1976) (Lisbon: Assirio e Alvin, 1993), էջ 353-57: Դեռևս հստակ պարզ չէ այն, թե արդյոք իսպանիայի դիվանագիտական շենքերի հրդեհումը Պորտուգալիայում COPCON-ի կամ ուրիշների կողմից դիտավորություն էր՝ հրահրելու Իսպանիայի ներխուժումը՝ որպես Պորտուգալիայում ազգայնական զացմունքերը բորբոքելու և դրանով իսկ՝ պորտուգալական քաղաքականությունն արմատականացնելու եղանակ Իրանում ԱՄՆ դեսպանատան գրավումից հետո տեղի ունեցած արմատականացման նման:

38. Ինչպես ցույց է տալիս Խ. Մ. Մարավալը, «Թեև աշխատավորական գործադուլները շատացել էին անցումից առաջ, պահանջների պայթյունը նախորդելու փոխարեն հաջորդեց բռնապետության ավարտին: Ժողովրդավարությունն էր, որ ազատություն տվեց պահանջներին: Տասնյոթ գործադուլ տեղի ունեցավ ժողովրդավարության առաջին շաբաթում, երեսուներկու՝ երկրորդում, ութսունյոթ՝ երրորդում և իննսուներեք՝ չորրորդում»: *Տե՛ս* Մարավալ, «Տնտեսական բարեփոխումները նոր ժողովրդավարություններում» (Maravall, *"Economic Reforms in New Democracies"*, 6, cited in chap. 6, n. 39):

վում էր և տեղի էին ունենում մեր հիշատակածներից ամենաընդգրկուն գոտումները:<sup>39</sup> Սակայն գոյություն ուներ նաև մոբիլիզացման մյուս կողմը: Եթե մի այնպիսի երևույթ, երբ միլիոնավոր մարդիկ իրենց գործողություններով իրադարձությունները թելադրողի դերում են, անվանենք մոբիլիզացման ձև, ապա այն փաստը, որ 1975թ. ընտրությունների ժամանակ միլիոնավոր պորտուգալացիներ հրաժարվեցին արձագանքել քվեաթերթիկներն անվավեր դարձնելու կոչին, հանդիսանում է մոբիլիզացման արդեն չափազանց կարևոր ձև: Իրենց նախապատվությունները զանգվածաբար արտահայտելով՝ Պորտուգալիայի քաղաքացիները վճռորոշ դեր խաղացին:

Վերջին փոփոխականը, որը պետք է գնահատել, լեգիտիմության ու ճնշման քաղաքատնտեսությունն է: Սկսած 1968թ. Սալազարին շարքից դուրս բերելու պահից մինչև 1974թ. կայծակնային հեղափոխությունը Պորտուգալիայի տնտեսությունը միջինում գրանցել է տարեկան 6.5% տնտեսական աճ:<sup>40</sup> Հետևաբար, չի կարելի ասել, թե տնտեսության ճգնաժամը՝ որպես այդպիսին, նպաստել է անցումն սկսելուն: Անցումն սկսելուն իսկապես նպաստած գործոնն այն էր, որ ճնշման ապարատի գլխավոր մասերից մեկը՝ զինվորականությունը, համոզվեց, որ վարչակարգը չէր կարող լուծել գաղութատիրական պատերազմների հարցը, և դա նրա համար կառաջացնի խոր ճգնաժամ: Ուստի այն դարձավ հակավարչակարգային: Այնուհետև վարչակարգի հետ կապ ունեցող քաղաքական գործիչներից շատերը, ովքեր 1960-ական թվականներին առաջ էին մղում ազատակամացումը, արդեն 1974թ. համոզվեցին, որ վարչակարգը չի կարող առաջնորդել անցումը: Այսպիսով, նրանք «ազատ» էին աջակցելու զինվորականության հակավարչակարգային

39. Անտոնիո Կոստա Պինտոն իր գերազանց հոդվածում իրավամբ ուշադրություն է հրավիրում այն վճռորոշ դերի վրա, որ խաղացել է համախմբումը՝ օգնելով կազմալուծել հին վարչակարգի ճնշման ապարատը: Նա հիմնավորում է, որ «Պետության լեգիտիմության ճգնաժամը հեղաշրջումից հետո և դրան հաջորդող քաղաքական ու սոցիալական համախմբումը տարան դեպի մեծ փոփոխությունների Պորտուգալիայի հասարակության և տնտեսության մեջ... Զինվորական հեղաշրջումից հետո առաջին օրերին Պորտուգալիայի երեք հիմնական քաղաքներից առաջ եկավ ազատագրման մի ուժգին մթնոլորտ, որին հետևեցին ցույցերը: Գործողությունը նախորդեց օրենսդրությանը. քաղաքական բանտերը շրջապատվել էին, նախորդ միակ կուսակցության կենտրոնակայանը, գրաքննության գրասենյակներն ու գործարար միությունները բոլորը գրավվել էին... Չախաթնայան քաղաքական շարժումների ճնշումն ու «ազատագրման» էֆեկտը կանխեցին ինստիտուտների ու տարրալուծված վարչակարգի ազգային քաղաքական վերնախավի կողմից նախատեսվող որևէ գործողություն»: *Տե՛ս* Կոստա Պինտո, «Հաղթահարելով ավտորիտարության ժառանգությունը. քաղաքական գոտում ու արմատական աջ շարժումները Պորտուգալիայում ժողովրդավարության անցման ժամանակ 1974-1976թթ.» (Costa Pinto, "Dealing with the Legacy of Authoritarianism: Political Purge and Radical Right Movements in Portugal's Transition to Democracy (1974-1976)"), Մթեյն Լարսեն և ուրիշներ, խմբ.՝ «Ժամանակակից Եվրոպան ֆաշիզմից հետո՝ 1945-1980-ականներ» (Stein U. Larsen et al., eds., *Modern Europe after Fascism: 1945-1980's* (Bergen: Norwegian University Press, forthcoming)):

40. *Տե՛ս* Մարավալ, «Տնտեսական բարեփոխումները նոր ժողովրդավարություններում» (Maravall, "Economic Reforms in New Democracies", 2-3): Դայանա Սմիթը՝ «Ֆայնենշլ թայմսի» թղթակիցը, Պորտուգալիայում մեկ տասնամյակի ընթացքում, ասում է, որ «1972-1974թթ. միջև տնտեսական աճը վերելք է ապրել տարեկան 8%-ից ավելի»: *Տե՛ս* Սմիթ, «Պորտուգալիան և 1992թ. մարտահարվերը» (Smith, "Portugal and the Challenge of 1992" (New York: Camoes Center, Research Institute on International Change, Columbia University, 1990), 6): Գաղութատիրական պատերազմների պատճառով, սակայն, կար պետության աճող ֆինանսական ճգնաժամ, քանի որ վարչակարգն իր բյուջեի 30-50%-ը հատկացնում էր Աֆրիկայում իր պատերազմներին:

գործողություններին: Քաղաքականությունը և ոչ թե տնտեսությունը պատճառ եղավ վարչակարգի անկման համար ու գործի գցեց անցումը:

Այժմ եկեք դիտարկենք տնտեսության դերը ժողովրդավարության կայացման մեջ: Մենք հիմնավորել ենք, որ ժողովրդավարությունը Պորտուգալիայում կայացավ 1982թ. հոկտեմբերին: Կարևոր է շեշտել, որ նավթի գների կտրուկ տատանումների, Եվրոպայում ռեցեսիայի, արտասահմանից վերադարձող բնակչության (հինգ անգամ ավելի մեծ թվաքանակի, քան Ֆրանսիան ստիպված էր կլանել Ալժիրից հետո) և 1974-75թթ. ընդհատված հեղափոխությունից հետո տիրող տնտեսական խառնաշփոթի պատճառով Պորտուգալիայի տնտեսությունը ժողովրդավարության կայացումից դեռ շատ հետո էլ գտնվում էր ծանր վիճակում:<sup>41</sup> 1983-84թթ. կայունացման մեծ ծրագիրն էլ ավելի խորացրեց տնտեսական դժվարությունները մարդկանց մեծ մասի համար: Սակայն իր լայնածավալ հարցման հիման վրա Թոմաս Բրունոն արձանագրել է, որ այդ տնտեսական անկման պատճառով ժողովրդավարական վարչակարգի *համակարգի մեղադրում* շատ հազվադեպ էր տեղի ունենում: 1984թ. հարցման ժամանակ ժողովրդի ինստուներեք տոկոսն ասել է, որ առկա է տնտեսական ճգնաժամ: Սակայն, ինչպես Բրունոն է նշում, «հարցման ժամանակ հարց էր տրվում տնտեսական ճգնաժամի պատճառների մասին, և պարզվեց, որ պատասխանողները շատ փոքր կապ էին տեսնում դրա և որևէ առանձնահատուկ կառավարության միջև. ավելի շատ այն համարում էին համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանք: Հարցման ժամանակ եղած պատասխաններից ոչ մեկը ցույց չտվեց ներկա վարչակարգից լուրջ օտարացման որևէ նշան»:<sup>42</sup> 1989 և 1991թթ. միջև ընկած ժամանակահատվածում Պորտուգալիան ունեցել է Եվրոպայում ամենաարագ զարգացող տնտեսություններից մեկը:<sup>43</sup> Սակայն քանի որ տնտեսության այդ վերելքը տեղի ունեցավ ժողովրդավարության կայացումից հետո, ավելի ճիշտ կլինի ասել, որ այդ տնտեսական աճն ամրապնդեց ժողովրդավարության կայացումը, քան թե որպես այդպիսին նպաստեց դրա նախնական կայացմանը: Պորտուգալիայի օրինակը հստակորեն ցույց է տալիս, որ ժողովրդավարությունը կայացավ խոր տնտեսական դժվարությունների ժամանակաշրջանում և ոչ թե՝ քաղաքական անելանելիության կամ համակարգի մեղավորության պայմաններում:

41. Ինչպես ցույց է տալիս Դայանա Սմիթը, «արդեն 1982թ. դեկտեմբերին Պորտուգալիան ուներ ՀՆԱ-ի 15%-ի չափով բյուջեի դեֆիցիտ, 5.6 մլրդ առևտրային դեֆիցիտ, 3.2 մլրդ վճարային հաշվեկշռի դեֆիցիտ (ամենավատն իր պատմության մեջ՝ հավասար ՀՆԱ-ի 13.5%-ին) և 14.5 մլրդ արտաքին պարտք՝ ՀՆԱ-ի 72%-ը», նույն տեղում, էջ 9:

42. Թոմաս Բրունո, «Պորտուգալիայում անսպասելի «անցումը» (Thomas C. Bruneau, "Portugal's Unexpected Transition"), Քենեթ Մաքսվելի և Մայքլ Հալցելի խմբ.՝ «Պորտուգալիա. հին երկիր, նոր ժողովրդավարություն» (Kenneth Maxwell and Michael H. Haltzel, ed., *Portugal: Ancient Country, Young Democracy* (Washington, D.C.: Wilson Center Press, 1990), 15):

43. 1986-90թթ. վերելքի մասին տե՛ս Սմիթ, «Պորտուգալիան և 1992թ. մարտահարվերը» (Smith, "Portugal and the Challenge of 1992"): Արդեն 1989թ. բյուջեի դեֆիցիտը կրճատվել էր մինչև ՀՆԱ-ի 4.7%-ը, կար երկու մլրդ դոլար առևտրային հավելուրդ, և 1989-90թթ. Պորտուգալիան գրանցել էր ամենաբարձր տնտեսական աճը ՏԶԵԿ-ի քսանչորս երկրներից: Այս և այլ տվյալները, տե՛ս "Portugal Outlook I" (1990), էջ 6-9:

## Ոչ բարձրաստիճան զինվորական վարչակարգի ճգնաժամը. Հունաստան

ՎՍՏԱՀԱԲԱՐ կարելի է ասել, որ Հունաստանում անցումն սկսվել է 1974թ. հուլիսի 21-ին և ավարտվել 1974 թվականի դեկտեմբերի 9-ին: Այս 142 օր տևած անցումն աներկ-բայորեն ամենաարագն է մեր օրինակների հարավեվրոպական-հարավամերիկյան շարքում:<sup>1</sup> Ի՞նչն է Հունաստանում անցման արագության պատճառը:

Շատ բան կարելի է բացատրել Հունաստանի ավտորիտար վարչակարգի ինստիտուցիոնալ բազային վերաբերող մեր փոփոխականով: 1967 թվականին զինվորականության իրականացրած պետական հեղաշրջումը տեղի ունեցավ Գեորգիոս Պապադոպուլոսի ղեկավարած բարձրաստիճան գնդապետերի ապստամբության միջոցով: Այն, որ հեղաշրջումն իրականացրել են բարձրաստիճան զինվորականները, հաստատվում է այն փաստով, որ բանակում կրտսեր սպաները 1967թ. իրենց ավագ սպաներից վերացրին մոտ 400 հոգու:<sup>2</sup> Նրանք նաև հեղաշրջումն իրականացրեցին առանց նավատորմի կամ օդային ուժերի աջակցության: Այն բոլոր ոչ ժողովրդավարական վարչակարգերից, որոնց անցումներն ուսումնասիրում ենք, հունական խունտան ունեցել է ամենանեղ բազան պետության մեջ: Ինչպես դիպուկ նկատում է Դիամանդուրոսը, թագավորական իշխանության ընդդիմությունը «սկզբում թաքնված էր, ապա գործում էր բացահայտ վատ ծրագրված ու վատ իրականացված հակահարվածի ժամանակ՝ 1967թ. դեկտեմբերի 13-ին, դեռևս ընդհատումներով, բայց դրանից հետո՝ անընդ մեջ»: «Գահի ու գնդապետերի միջև այս բախումը տեղի ունեցավ հունական սպայական կորպուսի ներսում սուր պառակտման հետևանքով, և նավատորմի սպաների ճնշող մեծամասնությունը և մեծ թվով օդային ուժերի սպաներ դուրս եկան բանակի իրենց գործընկերների դեմ»:<sup>3</sup>

1. Ամենաերկարատևը Բրազիլիայում էր. անցումն այնտեղ սկսվեց Էռնեստո Գայզելի 1974թ. մարտի 16-ի ինագուրացիոն ելույթով ու ավարտվեց տասնվեց տարի անց՝ առաջին ազատ և ուղղակիորեն ընտրված նախագահի ինագուրացիայով:

2. Կոնստանտինե Դանոպուլոս, «Մնաս բարյավ, հեծյա՛լ. ինտերվենցիան ու քաղաքացիական իշխանությունը ժամանակակից Հունաստանում» (Constantine Danopoulos, "Farewell to the Man on Horseback—Intervention and Civilian Rule in Modern Greece") (կտրվել ներկայացվել է ժողովրդավարության կայացման վերաբերյալ համաժողովին, որը կազմակերպել էր «Centro de la Realidad Contemporanea»-ը, Սանտյագո, Չիլի, 1989թ. օգոստոսի 10–11-ը), էջ 6:

3. Նիկիֆորոս Դիամանդուրոս, «Վարչակարգի փոփոխությունը և ժողովրդավարության հեռանկարները Հունաստանում 1974–1983թթ.», Օ՛Դոննելի, Շմիտտերի և Ուայթհեդի «Անցումներ ավտորիտար իշխանությունից. Հարավային Եվրոպա»-ում (P. Nikiforos Diamandouros, "Regime Change and the Prospects for Democracy in Greece: 1974–1983", in O'Donnell, Schmitter, and Whitehead, *Transitions from Authoritarian Rule: Southern Europe*, 146–47):

Քաղաքական հասարակության մեջ Դիամանդուրուն անդրադառնում է «խորհրդարանական աջ թևի կողմից զինվորականության հետ համագործակցության կիսամիասնական մերժմանը»:<sup>4</sup> Սա ընդգծված կերպով տարբերվում է զինվորական վարչակարգերից Բրազիլիայում և Չիլիում, որոնք երկար տարիներ ստացել են խորհրդարանական ավանդական աջերի շատ մեծ աջակցությունը: Եվ վերջապես, 1967թ. զինվորական հեղաշրջման պատճառներից մեկը եղավ քաղաքացիական հասարակության հարածուն համախմբումը: Այդ համախմբումները նորից սկսեցին թափ առնել 1973 թվականին և իրենց գազաթնակետին հասան Ազգային պոլիտեխնիկականի ուսանողների խռովությունների ժամանակ՝ նոյեմբերին: Այն փաստը, որ բանակի գնդապետերն ունեին այդքան նեղ բազա պետական ապարատում ու քաղաքական հասարակության մեջ, նշանակում է, որ ուսանողական խռովությունները ստացել էին լայն ազգային և միջազգային աջակցություն, ինչն էլ ավելի էր մեկուսացրել ու մասնատել զինվորականությանը: Դա նպաստել էր անզիջողականների՝ բրիգադային գեներալ Իոաննիդեսի և նրան սատարողների կողմից ապստամբության իրականացմանը ռազմական ոստիկանության ու բանակային ցածրաստիճան սպաների շրջանում:<sup>5</sup> Սակայն այդ նոր զինվորական ապստամբությունը ընդամենը հանգեցրեց սպայական կորպուսում էլ ավելի խոր բաժանումների ու գոտումների և լրացուցիչ կերպով ընդգծեց վարչակարգի ոչ բարձրաստիճան զինվորականների բազան:

Ջինվորականության պառակտվածությունն ու թշնամական քաղաքական համատեքստը հունական խունտային դարձրեցին Թուրքիային դեմ հանդիման գործելու անկարող և 1974 թվականի հուլիսի 20-ին Կիպրոսի ճգնաժամին պատշաճ պատասխան տալու անընդունակ: Ճգնաժամն արագացավ Կիպրոսի կառավարության դեմ արքեպիսկոպոս Մակարիոսի առաջնորդությամբ հույների հրահրած հեղաշրջման մեջ խունտայի ապաշնորհ մասնակցությամբ և թուրքերի՝ ներխուժմամբ Կիպրոս, որին հաջորդեց խունտայի անգրագետ ռազմական պատասխանը: Այս պայմաններում էր, ինչպես Դիամանդուրոսը ճիշտ կերպով նկատում է, որ «Հրամանատարների միացյալ կոմիտեն, վկայակոչելով պատերազմի սպառնալիքը, զինված ուժերի ներսում վերահաստատեց աստիճանակարգային շղթան և հաջողությամբ չեզոքացրեց Իոաննիդեսին ու անզիջողականներին պահող ուժային բազան: Այս քայլն ազդանշան հանդիսացավ քայքայվող վարչակարգից զինված ուժերի հեռանալու համար և հեշտացրեց իշխանության փոխանցման բանաձևի որոնումը նրանց հովանու ներքո»:<sup>6</sup>

Կցանկանայինք շեշտել Հունաստանում անցման չորս գլխավոր ինստիտուցիոնալ ասպարեզները, որոնք անմիջական կապ ունեն մեր հասկացութենական շրջանակի հետ: Առաջին. իշխանության փոխանցումն իրականացվեց այնպիսի խմբերի կողմից, որոնք հանդես էին գալիս ավելի որպես պետության և ոչ թե՛ վարչակարգի մաս: Թուրքիայի՝ Կիպրոս ներխուժելուց հետո յոթանասուներկու ժամվա ընթացքում վարչակարգի կողմից նշանակված նախագահը՝ գեներալ Գիզիկիսը, որին աջակցում էր բարձրաստիճան զինվորականությունը, պաշտոնանկ էր արել ոչ բարձրաստիճան զինվորականությանը և խունտայի հետ կապեր ունեցող քաղաքացիական քաղաքական գործիչների աջակ-

4. Նույն տեղում, էջ 147:

5. Նույն տեղում, էջ 156:

6. Նույն տեղում, էջ 157

ցությանը բանակցություններ էր վարում պահպանողական քաղաքական առաջնորդ Կոնստանդին Կարամանլիսի վերադարձի շուրջ: Ժողովրդի խանդավառ պատասխանը Կարամանլիսի՝ Աթենք վերադառնալուն է՛լ ավելի ամրապնդեց Կարամանլիսի դիրքը զինվորականության շրջանում և հանգեցրեց նրա՝ որպես վարչապետի արագ երդմանակալությանը:<sup>7</sup> Երկրորդ, զինվորականության համար կառավարությունից անմիջապես հեռանալու ծայրահեղ անհրաժեշտության պատճառով «զինվորականություն-ինստիտուտը» չկարողացավ որպես հեռանալու նախապայման քաղաքացիականներին որևէ սահմանափակող պայման պարտադրել: Իսկապես, հույն զիտնական և քաղաքացիականների ու զինվորականության մասնագետ Թանոս Վերեմիսը հիմնավորում է, որ պատերազմում զինվորականության անկարողությունը մեծացրեց Կարամանլիսի բանակցային ուժը: Բարձրաստիճան զինվորականությունը ցանկանում էր, որ նա անմիջապես ստանձնի իշխանությունը, սակայն «Կարամանլիսի կողմից իշխանության ընդունման պայմաններից մեկն այն երաշխիքն էր, որ զինված ուժերը պետք է վերադառնային իրենց նախկին զինվորական պարտականություններին ու ձեռնպահ մնային կառավարությունում իրենց հետագա միջամտությունից»:<sup>8</sup> Երրորդ, պետական ինստիտուտի կողմից իշխանության այս փոխանցումը անցումային կառավարությանը կանխեց հեղափոխական «ժամանակավոր կառավարության» առաջացումը, ինչպես Պորտուգալիայում: Չորրորդ, բարձրաստիճան զինվորականությունը, որը վերացվել էր ոչ բարձրաստիճան զինվորականության կողմից, հետ էր կանչվում գործող զինվորական ծառայության և նշանակվում էր նոր քաղաքացիական կառավարության ռազմական աստիճանակարգային շղթայի բարձրագույն պաշտոններում: Կոնստանտին Դանոպուլոսը հաշվարկում է, որ 1967-68թթ. «գտման» ենթարկված ավագ սպաների մոտ 75%-ը 1974 թվականին վերադարձավ զլխավոր պաշտոնների:<sup>9</sup> Հունաստանում անցման այս չորս կարևոր ասպարեզների հավաքական ազդեցությունը մեծ նշանակություն ունի այն հանգամանքի բացատրության համար, թե ինչու 1975թ. Հունաստանում շատ սպաներ հանցագործությունների համար

7. Այս յոթանասուչորս ժամվա ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների ճշգրիտ հաջորդականության քննարկում, *տե՛ս* Նիկիֆորոս Դիամանդուրոս, «Անցումը ժողովրդավարական քաղաքականության և վերջինիս կայացումը Հունաստանում 1974-1983թթ. նախնական գնահատում» (Nikiforos Diamandouros, "Transition to, and Consolidation of, Democratic Politics in Greece, 1974-1983: A Tentative Assessment"), Ջեֆրի Փրիդհամի խմբ.՝ «Միջերկրածովային նոր ժողովրդավարությունները. վարչակարգի անցումներ Իսպանիայում, Հունաստանում և Պորտուգալիայում» (Geoffrey Pridham, ed., *The New Mediterranean Democracies: Regime Transitions in Spain, Greece and Portugal* (London: Frank Cass, 1984) 53-56): Նաև մանրամասնություններին ու հաջորդականությանը դարձված մանրակրկիտ ուշադրություն համար անչափ պարտական ենք Դեմիտրաս Պապասին «Հունաստան. հուլիսի 24-ից նոյեմբերի 17, 1974թ.» (Demitras Pappas, "Greece: July 24-November 17, 1974" (Yale University, 1988, published manuscript):

8. Թանոս Վերեմիս, «Հունաստան. վետո և փակուղի, 1967-1974թթ.» (Thanos Veremis, "Greece: Veto and Impasse, 1967-1974"), Քրիստոֆեր Քլապհամի և Ջորջ Ֆիլիպի խմբ.՝ «Զինվորական վարչակարգերի քաղաքական երկրնորանքները» (Christopher Clapham and George Philip, eds., *The Political Dilemmas of Military Regimes* (London: Croom Helm, 1985), 41): Ճգնաժամի ժամանակ քաղաքացիական-զինվորական հարաբերությունների մասին *տե՛ս* Տակիս Պապաս «Կուսակցական ժողովրդավարության կառուցումը Հունաստանում» (Takis Pappas, "The Making of Party Democracy in Greece" (Ph. D. diss., Department of Sociology, Yale University, 1995)):

9. Բանավոր փոխանակում Ստեֆանի և Դանոպուլոսի միջև, Դանոպուլոսի վերը նշված նյութը Սանտյագոյում (Չիլի) ներկայացնելուց հետո քննարկման ժամանակ 1989թ. օգոստոսի 10-ին:

դատապարտվեցին, իսկ զինվորականություն-ինստիտուտը դատավճիռներին չընդդիմացավ:

Համեմատական տեսանկյունից կարող ենք ասել, որ Իսպանիայի դեպքում առկա էին ուժեղ նախաձեռնություններ *վարչակարգի* ներսում, որոնք նպաստեցին ժողովրդավարացման գործընթացին, և վարչակարգը կարողացավ դրանով «նվաճել» *պետությունը*: Միանգամայն այլ իրավիճակ էր Պորտուգալիայում, որտեղ վարչակարգը դրսևորեց թույլ կամք և իրեն վերափոխելու անկարողություն, իսկ ոչ բարձրաստիճան զինվորականների հեղափոխությունը, որն արագորեն աջակցություն ստացավ քաղաքացիական հասարակության համախմբվածությունից, ոչնչացրեց *վարչակարգն* ու *պետության* մեծ մասը: Հունաստանում արդյունքն ավելի կառավարվող էր, որովհետև *պետության* մի մասը (բարձրաստիճան զինվորականությունը) տապալեց *վարչակարգն* ու իշխանությունն անմիջապես փոխանցեց մի պահպանողական, սակայն ժողովրդավարամետ կառավարության:<sup>10</sup>

Կարծում ենք, որ Հունաստանում անցումն ավարտվել է 1974թ. դեկտեմբերի 9-ին ազատ ընտրությունների ու հանրաքվեի հետևանքով, որոնք 1974 թվականի դեկտեմբերի 8-ին վերացրեցին միապետությունը, բացվեց խորհրդարանը, և վարչապետ Կարամանլիսը դարձավ խորհրդարանին հաշվետու: Զինվորականության հեռանալու և Խորհրդարանի բացվելու միջև ընկած 142-օրյա ժամանակահատվածում վերացվեցին ժողովրդավարությանը լրիվ անցման խոչընդոտները: Կարամանլիսը, որն ակտիվորեն մասնակցել էր սահմանափակող օրենսդրության մշակմանը, որը վարկաբեկում էր Հունաստանի քաղաքականությունը Քաղաքացիական պատերազմից ի վեր, «հատկապես վերջ դրեց 509/1948 օրենքին՝ քաղաքացիական պատերազմի դիսկրիմինացիոն օրենսդրության վերջին խոշոր մասին»:<sup>11</sup> Նա հայտարարեց, որ ընտրված խորհրդարանը կվերանայի սահմանադրությունը, վերականգնեց շատ քաղաքացիական ազատություններ, որոնք վերացել էին քաղաքացիական պատերազմից հետո, և որ առավել կարևոր է, վերջ դրեց կոմունիստական կուսակցության՝ օրենքից դուրս կարգավիճակին: Այսպիսով, երբ խորհրդարանը բացվեց, անցումը Հունաստանում ավարտվեց:

Այն հարցին, թե երբ է Հունաստանում ժողովրդավարությունը կայացել, պատասխանելն ավելի դժվար է (իսկ որոշ դիտորդներ նույնիսկ հարց են տալիս, թե կայացե՞լ է արդյոք): Սակայն մենք կանդեմք, որ ժողովրդավարությունը կայացավ ամենաուշը այն ժամանակ, երբ սոցիալիստական ընդդիմադիր կուսակցությունը հաղթեց 1981թ. ընտրություններում և ստանձնեց իշխանությունը:

*Սահմանադրական* տեսանկյունից զգալի չափով մեր հենց նոր դիտարկած գործընթացի շնորհիվ բարձրաստիճան զինվորականությունը ոչ պնդեց «պահուստային ոլորտների» վրա, ո՛չ էլ վիճարկեց զինվորականության լայնածավալ դատավարությունները շարու-

10. Պետության և վարչակարգի միջև տարբերության ձևակերպման ու դրա նշանակության մասին (հաճախ աչքաթող արված) տե՛ս Ռոբերտ Ֆիշմանի կարևոր ռեֆերատը «Պետության ու վարչակարգի վերախմաստավորում. Հարավային Եվրոպայի անցումը ժողովրդավարության» (Robert M. Fishman, "Rethinking State and Regime: Southern Europe's Transition to Democracy", World Politics 42 (April 1990): 422-40):

11. Դիամանդուրոս, «Անցումը ժողովրդավարական քաղաքականության Հունաստանում» (Diamandouros, "Transition to Democratic Politics in Greece", 60):



նակելու մասին նորընտիր կառավարության որոշումը: Հունաստանում 1975 թվականին շատ սպաներ դատապարտվեցին հանցագործությունների համար, զինվորականություն-ինստիտուտը չընդդիմացավ դատավճիռներին, և ընտրություններից հետո այդ մեկ տարվա ընթացքում դատավարությունների բարեհաջող ավարտը քաղաքականության ու զինվորականության տեսանկյունից դրականորեն նպաստեց ժողովրդավարության կայացմանը: Թանոս Վերեմիսը Հունաստանի մասին անում է հետևյալ դատողությունը.

Անկասկած, դատավարությունները և բռնապետության առաջատար անդամների ու նրանց որոշ կողմնակիցների բանտարկությունը միանգամայն հեռու էր բավարար լինելուց խունտայի համակիրներից զինված ուժերը մաքրելու առումով: Այդուհանդերձ կառավարությունը 1975թ. ի վեր ո՛չ սպառնալիք է զգացել բանակի կողմից, ո՛չ էլ այն ինչ-որ ձևով խոչընդոտել է նրան... Սպաները... հավանաբար ցնցված լինելով զինվորական իշխանության աղետաբեր հետևանքներից, նախընտրում են ենթարկվել պրոֆեսիոնալիզմի կանոններին, որոնք Արևմուտքում միշտ եղել են սպայական կորպուսի բնորոշ առանձնահատկությունը:<sup>12</sup>

Զինվորական դատավարությունների հետևանքով առաջ եկան մի շարք սահմանադրական և օրենսդրական բարեփոխումներ, որոնք սահմանափակեցին զինվորականության ազդեցության ոլորտները ժողովրդավարական շրջանակներում: 1975 թվականը դեռ չէր ավարտվել, երբ ներդրվեց մի նոր սահմանադրություն (ժողովրդավարական ձևով, սակայն, ինչպես կտեսնենք, ուժեղ ընդդիմության հաղթահարմամբ) և չկային օրենքներ, ընթացակարգեր կամ արտոնություններ, որոնք կսահմանափակեին ժողովրդավարական քաղաքականության ու կանոնակարգերի ինքնիշխանությունը: Ի տարբերություն Պորտուգալիայի՝ Հունաստանում սահմանադրական կառույցները ժողովրդավարության կայացման առաջին ասպարեզն էին:

*Վարքազծային* առումով հատկապես բոլոր խոշոր խաղացողների կողմից մրցակցելու և հաղթելու դեպքում իշխանությունը գործադրելու ժամանակ միմյանց իրավունքներն ընդունելու առումով Հունաստանում ժողովրդավարության ինստիտուտներն ու արժեքները դարձել էին «միակ լավագույն տարբերակը» 1981թ. ընտրություններից հետո: Չենք ասում 1974թ., որովհետև անգամ 1974թ. ընտրություններից հետո ժողովրդավարական քաղաքականության մեջ գլխավոր մասնակիցները դեռ պետք է կատարեին կարևոր ճշգրտումներ:

Երկու առավել կարևոր կիսալոյս կամ անգամ ոչ ժողովրդավարական խմբերը քաղաքացիական պատերազմի և 1967 թվականի անկման միջև ընկած ժամանակահատվածում եղել են աջամետ խմբեր, որոնք սովորաբար պնդել են «վերահսկվող ժողովրդավարության» հաստատման վրա, որի պարագայում նրանք կմերժեին քաղաքացիության իրավունք շնորհել այն ձախերին, ում համարում էին «ոչ ազգայնական մտածողություն ունեցողներ», և կոմունիստական կուսակցություններին, որոնք (հատկապես Մոսկվայի

12. Թանոս Վերեմիս, «Զինվորականությունը» (Thanos Veremis, "The Military"), Քևին Ֆեդերստոունի և Դիմիտրոս Կացուդասի խմբ.՝ «Քաղաքական փոփոխությունը Հունաստանում գնդապետներից առաջ և հետո» (Kevin Featherstone and Dimitrios K. Katsoudas, eds., *Political Change in Greece before and after the Colonels* (London: Croom Helm, 1987), 225): Կոնստանտինե Դանտպուլուտոս իր «Մնաս բարյավ, հեծյա՛լ»-ում, "Farewell to the Man on Horseback" բերում է նույնանման փաստարկներ:

կողմը հակված "ΚΚΕ"-ն) պարբերաբար տուրք էին տալիս ոչ ժողովրդավարական ընդդիմադիր մարտավարությանը:<sup>13</sup> Անգամ համահելլենիստական սոցիալիստական շարժումը ("PASOK"), որն ստեղծվել էր Անդրեաս Պապանդրեուի կողմից 1968թ. բանտից դուրս գալուց հետո, ուներ հակահամակարգային երանգներ: 1974թ. ընտրությունների ժամանակ "PASOK"-ի ներսում առաջատար խումբը կազմված էր դիմադրության կազմակերպությունների նախկին անդամներից: "PASOK"-ի այս թևն ավելի «մաքսիմալիստական» էր, քան կոմունիստները: Նրանք բացարձակապես չէին վստահում աջերին, և իրենց հերթին աջերն էլ բացարձակապես չէին վստահում նրանց:<sup>14</sup> Նոր քաղաքական համակարգի երկու գլխավոր գծերը պատրաստակամորեն չընդունվեցին "PASOK"-ի և հիմնական կոմունիստական կուսակցության "ΚΚΕ"-ի կողմից: Չախերի խոշոր կուսակցությունները սուր քննադատության էին ենթարկում ընտրական համակարգը, որը նրանց պնդմամբ՝ կառուցված էր արագորեն անցկացվող ընտրություններում ամենամեծ կուսակցությունը գերներկայացնելու, իսկ ընդդիմությունը թերներկայացնելու վրա: Ի դեպ, «Նոր ժողովրդավարություն» կուսակցությունը, որն ստեղծվել էր Կարամանլիսի կողմից և սատարվում էր պահպանողականների մեծ մասի կողմից, շահեց ձայների 54.4, սակայն տեղերի՝ 73.3%-ը: Ի տարբերություն դրա՝ "PASOK"-ը և Միացյալ ձախերի ընտրական դաշինքը շահեցին ձայների 23.1, իսկ տեղերի՝ միայն 6.7%-ը:<sup>15</sup> Սա նշանակում էր, որ «Նոր ժողովրդավարություն» կուսակցությունն ուներ խոշոր մեծամասնություն՝ 1975թ. սահմանադրությունը ձևավորելու այնպես, ինչպես ինքն էր կամենում: Ի դեպ, «Նոր ժողովրդավարությունը», լիովին տարբերվելով Իսպանիայի ոչ մեծամասնական կառավարությունից, շատ քիչ ջանք նվիրեց սահմանադրական փոխզիջման գալու համար: Կարամանլիսն օգտագործեց իր կուսակցության ունեցած ճնշող մեծամասնությունն իր ուզած սահմանադրությունն ստանալու համար: Ընդդիմության հետ քննարկվեցին միայն սահմանափակ գիշումներ: Ընդդիմությունը մասնավորապես առարկում էր արտակարգ իրավիճակներում ուժեղ նախագահական լիազորությունների դեմ: Ըստ Նիկոս Ալիվիզատոսի՝ «բանավեճը հանգեցրեց խոշոր բախման՝ 1975թ. մայիսին բոլոր ընդդիմադիր

13. 1967թ. անկումից առաջ Հունաստանի քաղաքական կյանքի հակաժողովրդավարական պարասահմանադրական գծերի մասին *տե՛ս* Նիկիֆորոս Դիամանդուրոս, «Սահմանադրության մշակման քաղաքականությունը հետավտորիտար Հունաստանում՝ մակրոպատմական տեսանկյուն» (P. Niki-foros Diamandouros, "The Politics of Constitution-Making in Postauthoritarian Greece: A Macrohistorical Perspective") (կյուրթ ներկայացվել է 1987թ. Ամերիկյան քաղաքագիտական միության ամենամյա հանդիպմանը):

14. "PASOK"-ի քաղաքական զարգացման ու նրա վաղ «մաքսիմալիստության» մասին *տե՛ս* Նիկիֆորոս Դիամանդուրոս, "PASOK"-ը և պետություն-հասարակություն հարաբերությունները հետավտորիտար Հունաստանում (1974-1988թթ.)» P. Nikiforos Diamandouros, "PASOK and State-Society Relations in Postauthoritarian Greece (1974-1988)", Սփերոս Վրյոնիսի կրտսերի խմբ.՝ «Հունաստանը ժողովրդավարության ճանապարհին. խունտայից մինչև "PASOK", 1974-1986թթ.» (Speros Vryonis, Jr., ed., *Greece on the Road to Democracy: From the Junta to PASOK, 1974-1986* (New Rochelle, N.Y.: Caratzas Publishers, 1991), 15-35): "PASOK"-ի մասին կարևոր աշխատություն է՝ Գեորգի Մավրոգորդատոս, «Հունական արևածագը. ընտրությունները Հունաստանում 1981թ.» (George Th. Mavrogordatos, *Rise of the Greek Sun: The Greek Elections of 1981* (London: Kings' College, Center for Contemporary Greek Studies, 1983, occasional paper 1)):

15. *Տե՛ս* Ռիչարդ Քլոգ, «Կուսակցություններն ու ընտրությունները Հունաստանում. լեգիտիմության որոնումներ» (Richard Clogg, *Parties and Elections in Greece: The Search for Legitimacy* (London: C. Hurst and Co., 1987), 60):

կուսակցությունների՝ [Սահմանադիր] ժողովից վերջնականապես դուրս գալուն՝ նոր սահմանադրությունը որակելով որպես ավտորիտար: Որպես հետևանք՝ 1975թ. հունիսի 9-ի վերջնական քվեարկության ժամանակ սահմանադրությունը հաստատվեց միայն «Նոր ժողովրդավարության» պատգամավորների կողմից»:<sup>16</sup>

Հաջորդ հինգ տարիների ընթացքում, սակայն, բոլոր խոշոր խաղացողներն էական ճշգրտումներ կատարեցին ժողովրդավարական մոտեցումներն ու Հունաստանում ժողովրդավարության հատուկ ինստիտուտներն ընդունելու գործում: 1977թ. ընտրությունների ժամանակ "PASOK"-ը, առաջ տանելով ավելի նվազ մաքսիմալիստական ու ավելի դեպի ընտրողները կողմնորոշված ծրագիր, հանդես եկավ որպես ամենագլխավոր ընդդիմադիր կուսակցություն: «Նոր ժողովրդավարություն» իր հերթին չչարունակեց չարաշահել իր մեծամասնական առավելությունները: «Նոր ժողովրդավարություն» ու "PASOK"-ը յուրաքանչյուրը 1981թ. ընտրություններ մտավ՝ ընդունելով մյուս կուսակցության ժողովրդավարական հավատարմությունն ու երկուստեք ավելի մեծ չափով հասնելով մի շարք լուռ «որդեգրված» ըմբռնումների, թե ինչպես է պետք վարել ժողովրդավարական խորհրդարանային քաղաքականությունը:<sup>17</sup>

"PASOK"-ն աստիճանաբար սկսեց ընդունել ընտրական ու սահմանադրական հատուկ դրույթները և կարողացավ խորհրդարանը տանել դեպի սահմանադրության մեջ փոփոխությունների կատարումը 1986թ.: Երկու կոմունիստական կուսակցություններն ավելի ու ավելի էին մի կողմ թողնում հակահամակարգային վարքագիծն ու փորձում իրենց նպատակներին հասնել ժողովրդավարական վարչակարգի շրջանակում: Հետևաբար, կարելի է պնդել, որ վարքագծային առումով ժողովրդավարությունը կայացել էր ամենաուշը 1981թ.: Նույնիսկ որոշ մասնագետներ պնդում են, որ վարքագծային առումով այն կայացել էր ավելի շուտ՝ 1977թ.:

*Վերաբերմունքային* տեսանկյունից գնդապետերի վարչակարգը երբեք չէր ունեցել այնպիսի աջակցություն բնակչության նշանակալի հատվածի կողմից, ինչպիսին ունեցել էին Սալազարի ու Ֆրանկոյի երկարատև բռնապետությունները (և Պինոչետինը), ոչ էլ այն ունեցել է համեմատության արժանի՝ իրեն վերագրելի որևէ նվաճում որևէ ոլորտում: Հետևաբար երբ հանդես եկան ժողովրդավարական այլընտրանքներ, գնդապետերը բավվեցին քաղաքացիական հասարակության կողմից գանգվածային մերժմանը: Գնդապետերի խունտայից մնացած ժառանգությունն ավելի քիչ խոչընդոտներ հարուցեց ժողովրդավարության կայացմանը, քան որևէ այլ հարավեվրոպական կամ հարավամերիկյան դեպքերում, որոնք մենք դիտարկում ենք մեր ուսումնասիրության մեջ: Դժբախտաբար,

16. Նիկոս Ալիվիզատոս, «Հիմնավորման» դժվարությունները բևեռացված քաղաքական համակարգում. Հունաստանի պատգամավորների պալատը», (Nikos Alivizatos, "The Difficulties of 'Rationalization' in a Polarized Political System: The Greek Chamber of Deputies") Ուլրիկե Լիբերտի և Մաուրիցիո Կոտտայի խմբ.՝ «Խորհրդարանի ու ժողովրդավարության կայացումը Հարավային Եվրոպայում» (Ulrike Liebert and Maurizio Cotta, eds., *Parliament and Democratic Consolidation in Southern Europe* (London: Pinter Publishers, 1990), 134):

17. Ալիվիզատոսը գրում է, որ «տարիների ընթացքում, թեև դա բացահայտորեն չի ընդունվում, "PASOK"-ի և «Նոր ժողովրդավարության» միջև տիրում էր մի տեսակ փոխհամաձայնություն առ այն, թե խորհրդարանային խաղն ինչպես պետք է խաղացվի, մի փոխհամաձայնություն, որն էլ ավելի զարմանալի է, եթե հաշվի առնենք երկու կուսակցությունների ակնբախտորեն անհամադրելի սոցիալ-տնտեսական ծրագրերը», նույն տեղում, էջ 146:

**Աղյուսակ 8.1. Դունաստանում, Իսպանիայում և Պորտուգալիայում ավտորիտար վարչակարգերի գնահատումը**

Նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգի մասին կարծիքը	Տոկոս		
	Դունաստան (1985)	Իսպանիա (1985)	Պորտուգալիա (1985)
Միայն վատ	59%	28%	30%
Մասամբ լավ, մասամբ վատ	31%	44%	42%
Լավն էր	6%	17%	13%
Զգիտեմ/պատասխան չկա	4%	11%	15%
N Շնորհամենք	1998	2488	2000

*Աղբյուրը.* տվյալները՝ Լեոնարդո Մոռլինո և Խոսե Ռամոն Մոնտերո, «Լեգիտիմություն ու ժողովրդավարությունը Նարավային Եվրոպայում», "Legitimacy and Democracy in Southern Europe", Ռիչարդ Գյունտերի, Նիկիֆորոս Դիմանդուրոսի և Դանս-Յուրգեն Պուլեի խմբ.՝ «Ժողովրդավարության կայացման քաղաքականությունը. Նարավային Եվրոպան համեմատական տեսանկյունից», *The Politics of Democratic Consolidation: Southern Europe in Comparative Perspective* (Բալթիմոր, Չոնս Նոպկինսի համալսարանի հրատարակչություն, 1995), էջ 236:

սա հաստատելու համար մենք ունենք հասարակական կարծիքի մասին տվյալներ միայն 1980-ական թվականների կեսերի կտրվածքով, սակայն այդ տվյալները հիմնավորում են մեր եզրակացությունը: Կարծում ենք, որ Կարամանլիսի կողմից մի նոր պահպանողական կուսակցության ստեղծումը, որն ընդգծված կերպով կոչվում է «Նոր ժողովրդավարություն», երկու կոմունիստական կուսակցությունների՝ մոսկվամետ "KKE"-ի և եվրակոմունիստական "KKI"-ի (երկրի ներսում) օրինականացումն ու մասնակցությունը և "PASOK"-ի զարգացման դրական փոփոխություններն օգնեցին այդ կարևոր կուսակցական խմբավորումների ներսում ու նրանց զանգվածային հետևորդների մեջ առաջ բերելու այնպիսի վերաբերմունք, որը խիստ նպաստավոր էր ժողովրդավարության կայացման համար 1981թ-ին: Իսկապես, երբ ամբողջ Հարավային Եվրոպայում հասարակական կարծիքը պարզելու համար կատարված հարցումներն առաջին անգամ հնարավոր դարձան 1985թ-ին, երկու բան հստակորեն երևաց: Առաջին. հույներն ունեին շատ ավելի բացասական կարծիք զինվորական բռնապետության մասին, քան իսպանացիներն ունեցել են Ֆրանկոյի կամ պորտուգալացիները՝ Սալազարի ժամանակների մասին: Մի հարցման ժամանակ երկու անգամ ավելի շատ հույներ, քան իսպանացիներ կամ պորտուգալացիներ, պատասխանել են, որ նախորդ ավտորիտար վարչակարգը «միայն վատ էր» (Աղյուսակ 8.1):

Երկրորդ. հավանաբար վերը նշված պատճառով հույների ավելի մեծ տոկոս, քան իսպանացիների կամ պորտուգալացիների դեպքում, ասել է, որ ժողովրդավարությունը նախընտրում է ավտորիտարությանը (Աղյուսակ 8.2): Մեր կարծիքով՝ այս և այլ կազմակերպությունների կողմից անցկացված հետազոտությունները հաստատում են այն, որ 1981թ-ի կառավարության փոփոխությամբ Հունաստանը դարձավ կայացած ժողովրդավարական երկիր:

Մենք երկար-բարակ չենք քննարկի մնացած բոլոր փոփոխականները, սակայն ընդհանուր առմամբ դրանք որևէ լուրջ խնդիր չհարուցեցին ժողովրդավարության կայացման համար: «Միջազգային ազդեցություն» փոփոխականն իսկապես արագացրեց ժողովրդավարության կայացումը նրանով, որ ԵՏՀ-ն կիրառեց և՛ մահակի (գնդապետերի ապստամբությունից հետո Հունաստանի դիմումը հետաձգվեց), և՛ բլիթի (ԵՏՀ-ն չափազանց արագ

**Աղյուսակ 8.2 Ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունքային աջակցության համեմատությունը. Նունաստան, Իսպանիա և Պորտուգալիա (1985թ.)**

Նախընտրած հասարակարգի մասին կարծիք	Տոկոս		
	Նունաստան	Իսպանիա	Պորտուգալիա
«Ժողովրդավարությունը նախընտրելի է որևէ այլ վարչակարգից»	87%	70%	61%
«Որոշ դեպքերում նախընտրելի է ավտորիտար վարչակարգ, բռնապետություն»	5%	10%	9%
«Ինձ նման մարդկանց համար բոլորն էլ մեկ են»	6%	9%	7%
Զգիտեմ/Պատ. չկա	2%	11%	23%

*Աղբյուրը.* տվյալները՝ Լեոնարդո Մոուլինո և Խոսե Ռամոն Մոնտերո, «Լեգիտիմությունն ու ժողովրդավարությունը Նարավային Եվրոպայում», "Legitimacy and Democracy in Southern Europe", Ռիչարդ Գյունտերի, Նիկիֆորոս Գիամանդուրոսի և Նանս-Յուրգեն Պուլեի խմբ. «Ժողովրդավարության կայացման քաղաքականությունը. Նարավային Եվրոպան համեմատական տեսանկյունից» *The Politics of Democratic Consolidation: Southern Europe in Comparative Perspective* (Բալթիմոր, Ջոնս Հոպկինսի համալսարանի հրատարակչություն, 1995), էջ 236:

արձագանքեց Կարամանլիսի կառավարության անդամակցության մասին դիմումին, և Հունաստանն ընդունվեց ԵՏՀ 1981թ.) սկզբունքը: Լեգիտիմության քաղաքատնտեսական առումով ինչպես Արևմտյան Եվրոպայի մեծ մասում, 1975-81թթ. ժամանակահատվածը բարեհաջող չէր տնտեսության համար, սակայն հույների համար դա ավելի քիչ կարևորություն ուներ, քան չափազանց շոշափելի քաղաքական օգուտները:

Պետութենականության հարցն ավելի բարդ է: Թեև Հունաստանն ազգային պետություն է, այն անտիկ ժամանակներից ունեցել է խոշոր սփյուռք, իսկ վերջին ժամանակներս Հունաստանի քաղաքական կյանքը մեծ չափով երանգավորվել է իռեդենտիստական [չվերամիավորված տարածքների խնդիրներով համակված] զգացմունքներով: Ազգայնական զգացմունքները Հունաստանում ավելի շատ են միբրձվել քաղաքականության մեջ, քան Պորտուգալիայում կամ Իսպանիայում: Անկախության համար երկարատև պայքարի հիշողությունները, տարբեր պատերազմներում տարածքների դանդաղ միավորումը, 1919-22թթ. հույն-թուրքական պատերազմում (Հունաստանի պատմության մեջ հայտնի «այդ աղետը» արտահայտությամբ) Հունաստանի զինվորականության կրած ջախջախիչ պարտությունը, ինչը հանգեցրեց մեկ տարուց էլ պակաս ժամանակահատվածում օսմանյան սփյուռքից մեկ միլիոնից ավելի չքավոր հունախոս բնակչության վերադարձին, և սառը պատերազմի ժամանակ միջազգային ուժային կենտրոններից հունական պետության կախվածությունը հանգեցրին Հունաստանում ազգայնական զգացմունքների ու քաղաքականության սրմանը: Կիպրոսի հետ «էնոսիսի» (միացում) գաղափարը, Ալբանիայում հունական փոքրամասնության առկայությունը և այն միտքը, որ Մակեդոնիան պետք է չընդունի «պատմականորեն հունական անուն», հանդիսանում են հունական ու բալկանյան քաղաքականության հարցեր և արտացոլում են իռեդենտիստական զգացմունքների տազնապալի ազդեցությունը: Այդ զգացմունքը չխանգարեց ժողովրդավարության կայացմանը 1981թ., սակայն նպաստեց Հունաստանում ժողովրդավարության «որակի» խնդրին, որին մենք այժմ կանդադառնանք:<sup>18</sup>

18. «Այդ աղետի» ու Հունաստանի պետութենականության խնդիրը բարդացնող ազգայնական ու

Կայացած ժողովրդավարությունների *որակի* թեման մի բան է, որն, իսկապես, այս գրքի շրջանակներից դուրս է, սակայն կարիք ունի համառոտ քննարկման: Երբ 1991թ. շրջանառության մեջ էինք դնում այս գրքի նախնական օրինակները, մեր գործընկերները հաճախ վերապահությամբ էին վերաբերվում Հունաստանում ժողովրդավարությունը *կայացած* անվանելուն: Նրանք ճիշտ կերպով մատնանշում էին, որ նախկին վարչապետ Անդրեաս Պապանդրեուն և նրա կառավարության մյուս առաջնորդները պաշտոնապես մեղադրվում էին կոռուպցիայի մեջ, որ Հունաստանի բյուջեի դեֆիցիտն ամենաբարձրն էր ԵՏՀ-ում, ու ոչ մի տեսակի կառավարություն չէր կարող այն հսկողության տակ վերցնել, որ քաղաքական դիսկուրսի ոճը թվում էր վտանգավոր կերպով թունոտ և երկու համընդհանուր ընտրություններն իրար հետևից (1989թ. հունիսին և 1989թ. նոյեմբերին) առաջ բերեցին «առկախ» խորհրդարաններ (ոչ մի կուսակցություն չստացավ ճնշող մեծամասնություն): Սակայն այն փաստը, որ այս բազմաթիվ ճգնաժամերը ժողովրդավարական ինստիտուտների համար լուրջ վտանգի չեն հանգեցրել, մեր կարծիքով՝ կարող է մեկնաբանվել նաև որպես ժողովրդավարության կայացման նշան: Կարծում ենք՝ ավելի ճիշտ կլինի վերը նշված խնդիրները տեսնել որպես կայացած ժողովրդավարության վատ որակի ցուցանիշ:<sup>19</sup> «Կայացած ժողովրդավարություն» կատեգորիայի ներսում որոշ ժողովրդավարություններ խորանում են, իսկ մի քանիսը՝ ոչ: Որոշ ժողովրդավարություններ համեմատաբար բարձր որակի են, իսկ մյուսները՝ համեմատաբար ցածր: Հունաստանում ժողովրդավարությունը մենք համարում են համեմատաբար ցածր որակի, իսկ ցածրորակ ժողովրդավարություններն ունեն ազատության ավելի քիչ աստիճան և կարող են ավելի հեշտ տապալվել: Սա ասելով՝ հավանաբար հարկ է նշել, որ չնայած այս խնդիրներին, Հունաստանում ժողովրդավարությունը դրսևորել է ճկունության և հարմարվողականության որոշ տպավորիչ որակներ:

Քաղաքացիական պատերազմի մասին «պատմական հիշողություն» այժմ դարձել է ավելի շատ այնպիսին, ինչպիսին իսպանացիների մոտ է (և բուրբուլիսն ոչ նման Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ խորվաթների ու սերբերի միջև քաղաքացիական կռիվների պատմական հիշողությանը): Ուշագրավ է, որ հասարակական կարծիքի հարցման ժամանակ ըստ նույն հատկանիշի առանձնացված ամենամեծ խումբը (41%) քաղաքացիական պատերազմի համար մեղադրում է *երկուսին* էլ՝ և՛ կոմունիստներին, և՛ կառավարական ուժերին, իսկ հաջորդ ամենամեծ խումբը (32%) անգամ կարծիք չի առաջարկում:<sup>20</sup> Չնայած հանրային բանավեճի կողմերի կատաղի կուսակցականամետությամբ՝ առանձին քաղաքացիներ ավելի ու ավելի շատ էին հակվում ասելու, որ ապագա-

իռեդենտիստական քաղաքականության մասին ընդարձակ գրականության ներածություն կարելի է գտնել Դիամանդուրոս, «Վարչակարգի փոփոխությունը և Հունաստանում ժողովրդավարության հեռանկարները» (Diamandouros, "Regime Change and the Prospects for Democracy in Greece"):

19. Հունաստանում այն բանավեճի մասին, թե արդյոք 1980-ականները «կորուսյալ» տասնամյակ էր և ժողովրդավարության որակի մասին լավ քննարկում, տե՛ս Նիկիֆորոս Դիամանդուրոս, «Քաղաքականություն և մշակույթ. 1974-91թթ.՝ մեկնաբանություն» (P. Nikiforos Diamandouros, "Politics and Culture, 1974-91: An Interpretation"), Ռիչարդ Քլոգի խմբ.՝ «Հունաստանը 1981-1989թթ.՝ ամբոխավարական տասնամյակ» (Richard Clogg, ed., *Greece, 1981-1989: The Populist Decade* (New York: St. Martin's Press, 1993), 1-25):

20. Հունաստանում հանրային հարցման հետաքրքիր ռեյտ, տե՛ս Պանայոտե Ելիաս Դիմիտրաս, «Հասարակական կարծիքը Հունաստանում. շարունակականություն և փոփոխություն» (Panayote Elias

յում իրենք կմտածեն հակառակ ճամբարի կուսակցության օգտին քվեարկելու մասին: Մացույց է տալիս, որ կուսակցությունների միջև կա ոչ այնքան մեծ «մշակութային տարբերություն», և ժողովրդավարորեն ընդունելի այլընտրանքների ոլորտը ընդլայնվում է:<sup>21</sup>

Ի վերջո՝ երկու առկա խորհրդարանների գոյության փաստը համարում ենք ավելի քիչ նշանակալի, քան այն գործընթացները, որոնց միջոցով քաղաքական կուսակցություններն արձագանքել են իրենց ընդհանուր խնդրին: 1989թ. հունիսի անորոշ ընտրություններից հետո՝ 1989թ. հունիսից մինչև նոյեմբեր ամիսը, 1946-49թթ. քաղաքացիական պատերազմում երկու պատերազմող կողմերի «հետնորդները» մոսկվամետ կոմունիստական կուսակցությունը և «Նոր ժողովրդավարությունը», կազմեցին կռաւիցիոն կառավարություն: Այդ կռաւիցիայի մասին անցման սկզբում՝ 1974թ., հնարավոր չէր լինի մտածել անգամ: Իսկապես, եթե 1949 թվականը կարելի է համարել Հունաստանում քաղաքացիական պատերազմի ռազմական ավարտը, իսկ 1974թ. ընտրությունները՝ քաղաքական ավարտը, ապա 1989 թվականի Կոմկուս-«Նոր ժողովրդավարություն» կռաւիցիան քաղաքացիական պատերազմի մշակութային ավարտն է: Երբ 1989թ. նոյեմբերյան ընտրություններում դարձյալ չհաջողվեց որոշել հաղթողին, լարված ներկուսակցական ու միջկուսակցական բանակցությունների հետևանքով ծնունդ առավ մի բազմակուսակցական կառավարություն, որն իշխեց մինչև 1990 թվականի ապրիլյան ընտրությունները, երբ «Նոր ժողովրդավարությունը» ձեռք բերեց աննշան մեծամասնություն:<sup>22</sup>

Ակնհայտ է, որ Հունաստանում ժողովրդավարությունը խնդիրներ ունի, և, այնուամենայնիվ եթե ժողովրդավարությունն այնտեղ երբևէ անկում ապրի, ըստ մեզ՝ դա չի լինի այն պատճառով, որ Հունաստանում ժողովրդավարությունը բոլորովին չէր կայացել, այլ այն պատճառով, որ ժողովրդավարական քաղաքական գործիչները խնդիրներին արձագանքել են այնպիսի եղանակներով, որոնք էլ ավելի են խորացրել ճգնաժամը: Հունաստանում ցանկացած հնարավոր ճգնաժամից խուսափելու և այն վերլուծության ենթարկելու եղանակը պակաս չափով է կապված ժողովրդավարությանն անցման ու կայացման տեսության ու գործնականի, և ավելի մեծ չափով՝ «անկման» տեսության ու գործնականի հետ:<sup>23</sup>

Dimitras, "Greek Public Attitudes: Continuity and Change", International Journal of Public Opinion Research 2 (Summer 1990): 92-115, esp. 103):

21. Օրինակ, 1985թ. ընտրությունների ժամանակ մեծ Աթենքում կոմունիստական կուսակցությունները շահեցին ձայների 17%-ը, սակայն հարցման ենթարկվածների 30%-ն ասել էր, որ պետք է մտածեն նման կուսակցությունների օգտին ապագայում քննարկելու մասին: 1989թ. թվերը համապատասխանաբար 15 և 44% էին: "PASOK"-ը և «Նոր ժողովրդավարություն» ունեցան քվեարկողների ձայների համանման (սակայն ավելի քիչ արտահայտված) աճ այն մարդկանց, ովքեր իրենց համարում էին պատրաստակամ ապագայում նրանց օգտին քվեարկելու համար: Նույն տեղում, էջ 99:

22. Դիամանդուրոս, «Քաղաքականություն և մշակույթ» (Diandourous, "Politics and Culture"): Հետաքրքիր է այն ցուցանիշը, որը վերաբերում է խնդիրների լուծման փորձ կատարելու քաղաքացիական հասարակության մեծացող կարողություններին, երբ պետության աճող ֆինանսական ճգնաժամի պայմաններում երկու ազդեցիկ կազմակերպությունները՝ «Արդյունաբերական ոլորտների հունական դաշնությունը» և «Հունաստանի բանվորների ընդհանուր կոնֆեդերացիան», 1990թ. ստորագրեցին լայնածավալ երկամյա կոլեկտիվ (աշխատանքային) համաձայնագիր:

23. Մենք այստեղ նկատի ունենք այն պատկերները, որ վերլուծված էին Խուան Լինցի ու Ալֆրեդ Ստեփանի գրքում՝ «Ժողովրդավարական վարչակարգերի անկումը» (Juan J. Linz and Alfred Stepan, eds., *The Breakdown of Democratic Regimes* (Baltimore: Johns Hopkins University Press, 1978)):

## Հարավային Եվրոպա. եզրափակիչ մտքեր

ՄԵՆՔ ԱՅԺՄ կարող ենք ամփոփել Հարավային Եվրոպայի մասին մեր եզրակացությունները: Որոշ եզրակացություններ գրեթե վստահաբար ակնհայտ են, սակայն պարզ է, որ հաշվի առնելով ամբողջ աշխարհում ժողովրդավարությանն անցումների ու կայացումների ամբողջ շարքը՝ այս հարավեվրոպական դեպքերը տեղի են ունեցել հնարավոր նախնական պայմանների՝ համեմատաբար սահմանափակ շրջանակում:

- Ոչ մի հարավեվրոպական անցում չի կատարվել սուլթանականից:
- Ոչ մի հարավեվրոպական անցում չի կատարվել ամբողջատիրական կամ հետամբողջատիրական վարչակարգից:
- Ոչ մի հարավեվրոպական անցում չի սկսվել բարձրաստիճան գինվորականության կողմից ղեկավարվող ավտորիտար վարչակարգից:
- Ոչ մի հարավեվրոպական անցում չի սկսվել միակ ուժեղ ավտորիտար կուսակցության բազայի վրա:

Բոլորը միասին վերցրած՝ սա նշանակում է, որ աշխարհի այլ մասերում եղած նախնական առավել ցայտուն սահմանափակող պայմաններից շատերը Հարավային Եվրոպայում բացակայել են:

Մեկ այլ կարևոր միտք, որ կցանկանայինք շեշտել, վերաբերում է *հաջորդականությանը*: Հարավեվրոպական երկրները կառուցվածքային առումով ի վիճակի էին և գիտակցաբար որոշեցին սկզբում կենտրոնանալ քաղաքականության վրա, երկրորդը՝ սոցիալական բարեկեցության ռազմավարական մոտեցումների վրա և միայն ավելի ուշ՝ տնտեսության կառուցվածքային բարեփոխումների վրա: Մենք սա համարում ենք օպտիմալ հաջորդականություն, եթե այդպիսի բան ընդհանրապես հնարավոր է: Ժողովրդավարությունը որևէ կամայական երկրում իր հետևից բերում է որոշումների կայացման կանոնների մասին պատկերացումներ, ինստիտուցիոնալ կառուցվածքի ստեղծում, մասնակցության արգելքների վերացում, ընտրությունների անհրաժեշտ տարր ու քաղաքական հասարակության ստեղծում: Լավագույն տարբերակում սոցիալ-տնտեսական ռազմավարական մոտեցումներն առաջանում և բխում են այդ միջավայրից:

Մի այնպիսի դարաշրջանում, երբ «պետության ազդեցության նվազեցումն» առաջ է քաշվում որպես հրամայական Լատինական Ամերիկայի և հետկոմունիստական Եվրոպայի պայքարող նոր ժողովրդավարությունների համար, ցանկանում ենք արձանագրել մի նախազգուշական պատմական դրույթ: Հարավեվրոպական նոր ժողովրդավարություններից *բոլոր* երեքն էլ ամրապնդել են իրենց պետությունները հարկային եկամուտներն ավելացնելու միջոցով: *Բոլոր* երեքն էլ այդ եկամուտներն օգտագործել են սոցիալական բարեկեցությանն ուղղված ծախսերն ու պետական զբաղվածությունն զգալիորեն մեծացնելուն: (Աղյուսակ 9.1):



**Աղյուսակ 9.1. Նարկային եկամուտների, հանրային ծախսերի ու պետական զբաղվածության ան. Իսպանիա, Պորտուգալիա և Ղուսաստան (1976թ., 1984թ., 1988թ.)**

Եկամուտ և ծախս	Վամախառն ազգային եկամտի տոկոսը								
	Իսպանիա			Պորտուգալիա			Ղուսաստան		
	1976	1984	1988	1976	1984	1988	1976	1984	1988
Եկամուտ հարկերից	25.0	33.2	36.7	31.0	34.6	36.6	29.2	34.2	35.9
Ընդամենը հանրային ծախս	26.0	38.7	41.7	37.3	41.6	43.7	20.9	44.2	51.3
Պետական զբաղվածության ծախս	8.5	12.8	13.8	8.8	13.3	13.8	8.5	9.4	10.1

*Աղբյուրը.* տվյալները՝ Խոսե Մարի Մարավալ, «Քաղաքականություն և ռազմավարական մոտեցումներ. տնտեսական բարեփոխումները Նարավային Եվրոպայում», Լուիս Կառլոս Բրեսթր Պերեյրայի, Խոսե Մարիա Մարավալի և Ադամ Պրժեվորսկու «Տնտեսական բարեփոխումները նոր ժողովրդավարություններում. սոցիալ-ժողովրդավարական մոտեցում» գրքում (Լյու Յորք, Քենդրիջի համալսարանի հրատարակչություն, 1993թ.), Աղյուսակ 2.4, էջ 103:

Բոլոր երեք հարավեվրոպական երկրները նաև դարձել են կայացած ժողովրդավարություններ *նախքան* իրենց տնտեսությունների բարելավումն ու անգամ մինչև տնտեսական վերակազմավորումն սկսելը: Իսպանիայում սկսվեցին խոշոր կառուցվածքային տնտեսական բարեփոխումներ իրականացնել միայն 1982թ-ից սկսած, Պորտուգալիայում՝ 1985թ-ից հետո, իսկ Ղուսաստանի առաջին անհաջող փորձը եղավ 1985-87թթ.:<sup>1</sup> Որպես վերը նշվածի հետևանք, ընտրված կառավարությունների՝ իշխանության ստանձնման ու ժողովրդավարության կայացման միջև ընկած վճռորոշ ժամանակահատվածում հարավեվրոպական երկրներից *ոչ մեկում* տնտեսության կառուցվածքին կամ գործելուն վերաբերող հարցերն այնքան ցայտուն չէին, որքան քաղաքական իշխանության կառուցվածքին ու գործելուն վերաբերող բանավեճերը:

Պետութենականությունը Պորտուգալիայում երբեք խնդիր չի եղել ժողովրդավարությանն անցման ու կայացման համար: Ղուսաստանում պետութենականությունը նույնպես նշանակալի խնդիր չի եղել ժողովրդավարությանն անցման ու կայացման ժամանակահատվածում, սակայն որպես խնդիր ծագել է 1990-ականներին, երբ հունական ազգայնականությունը միահյուսվել է բալկանյան, հատկապես՝ մակեդոնական քաղաքականության հետ: Պետութենականությունը կարող էր պատճառ հանդիսանալ Իսպանիայում անցման տապալմանը, սակայն միասնական պետությունը բազմալեզու և բազմազգ *estado de las autonomias-ի* փոխակերպումն իրականացնելու գործում իսպանացի առաջնորդների հաջողությունը ցույց է տալիս, որ անգամ նոր ժողովրդավարությունները կարող են գործ ունենալ նման խնդիրների հետ:

1. Սա հստակորեն երևում է Խոսե Մարիա Մարավալի «Քաղաքականություն և ռազմավարական մոտեցումներ. տնտեսական բարեփոխումները Հարավային Եվրոպայում»-ում (Jose Maria Maravall, "Politics and Policy: Economic Reforms in South Europe"), Լուիս Բրեսթր Պերեյրայի, Խոսե Մարիա Մարավալի և Ադամ Պրժեվորսկու «Տնտեսական բարեփոխումները նոր ժողովրդավարություններում. սոցիալ-ժողովրդավարական մոտեցում» (Luiz Bresser Pereira, Jose Maria Maravall, and Adam Przeworski, *Economic Reforms in New Democracies: A Social Democratic Approach* (New York: Cambridge University Press, 1993), 77-131): Տե՛ս նաև Խոսե Մարիա Մարավալի կարևոր աշխատությունը՝ "Los resultados de la democracia. Un estudio del sur y el este de Europa" (Madrid: Alianza Editorial, 1995):

Հարկ է նաև մի երկու խոսք ասել միջազգային միջավայրի մասին: Բոլոր երեք երկրներն էլ ընտրեցին Եվրոպական տնտեսական համայնքին միանալու փորձ կատարելու և ըստ այդ համայնքի նորմերի ապրելու տարբերակը: Բոլոր երեքն էլ դարձան լիարժեք անդամ, սակայն միայն իրենց երկրներում ժողովրդավարության կայացումից հետո: Հռոմի պայմանագրի կանոնակարգերով նախատեսվում են սուբսիդիաներ համայնքի ներսում ամենաաղքատ շրջանների համար: Այդ դրույթների շնորհիվ ժամանակի ընթացքում զգալի սուբսիդիաներ հատկացվեցին Հունաստանին, Իսպանիային ու Պորտուգալիային: ԵՏՀ-ի հետ այդ երեք նոր ժողովրդավարությունների հարաբերությունների շուրջ մտորելուց հետո համաձայն ենք Լոուրենս Ուայթհեդի եզրակացությունների հետ, որ համայնքն ինքը սահմանել է պարզների ու խրախուսանքների մի կայուն սկզբունք, որ համայնքն ունի խոր ու հաստատուն շահագրգռվածություն՝ կայացնելու ժողովրդավարությունն իր անմիջական տարածքում, և որ Եվրոպական համայնքին անդամակցության հեռանկարը «առաջ էր բերում ժողովրդավարացման էական երկարաժամկետ սուր անհրաժեշտություն»:<sup>2</sup>

Վերջապես կարծում ենք, որ քաղաքական ինստիտուտների առանձնահատուկ վաստակն արժանի է ավելի մեծ ուշադրության, քան այն արժանացել է ժողովրդավարությանն անցումների ու ժողովրդավարության կայացման մասին գրականության մեջ: Մասնավորապես կարծում ենք, որ հարավեվրոպական երկրների՝ խորհրդարանական կամ կիսանախագահական (որ աստիճանաբար դարձել են խորհրդարանական) սահմանադրական շրջանակների ընտրությունը դրանց տալիս է ազատության ավելի մեծ աստիճան, քան եթե որպես իրենց սահմանադրական շրջանակ՝ նրանք ընտրած լինեին ԱՄՆ տիպի նախագահականությունը: Այն փաստը, որ Հարավային Եվրոպայում ոչ մի նոր ժողովրդավարություն չի ընտրել ԱՄՆ տիպի նախագահականություն, ըստ մեզ՝ մեծացնում է նրանց ազատության աստիճանը: Իսպանիայում խորհրդարանականությունը Սուարեսին թույլ տվեց, այն պահին, երբ նա արդեն սպառել էր իրեն ցուցաբերվող աջակցությունը, հրաժարական տալ, այն թույլ տվեց նրա հետնորդին՝ Կալվո Սոտելոյին, գլխավորել ապստամբություն բարձրացնողներին բանտ նստեցնելու ջանքերը և այն թույլ տվեց հայտարարել վաղաժամ ընտրություններ, ինչը հանգեցրեց սոցիալիստների իշխանության գալու: Հունաստանում խորհրդարանական շրջանակը հնարավոր դարձրեց «Լոր ժողովրդավարության» ու կոմունիստների պաշտոնական կռաւիցիայի առաջացումը: Պորտուգալիայում կիսանախագահական շրջանակը թույլ տվեց զինվորական նախագահին ու գնալով ավելի մեծ իշխանություն ձեռք բերող քաղաքացիական վարչապետին միմյանց հետ գոյատևել, թեև այսպես կոչված երեք «նախագահական կարիներն» առաջ բերեցին զգալի լարվածություն: Այս ամենը հնարավոր չէր լինի որևէ զուտ նախագահական համակարգում:

Խորհրդարանականության՝ որպես մի սահմանադրական շրջանակի օգտին բերվող

2. Լոուրենս Ուայթհեդ, «Ժողովրդավարացման միջազգային ասպեկտները» (Laurence Whitehead, "International Aspects of Democratization"), Օ'Դոննելի, Շմիտերի և Ուայթհեդի խմբ.՝ «Անցումներ ավտորիտար իշխանությունից. համեմատական տեսանկյուններ» (O'Donnell, Schmitter, and Whitehead, eds., *Transitions from Authoritarian Rule: Comparative Perspectives*, 23): Արդեն 1990-ական թվականների կեսերին Եվրոպական Միության որոշ կանոններ առաջ բերեցին լուրջ դժգոհություն ու բողոք, հատկապես՝ իսպանացի ձկնորսների, ֆերմերների և անասնապահների շրջանում:

ընդհանուր գործնական ու տեսական փաստարկը նպաստում է ժողովրդավարության կայացմանը, կարելի է էլ ավելի առաջ տանել: Աշխարհում տասը տարի անընդմեջ՝ 1981թ-ից մինչև 1990թ. ընկած ժամանակահատվածում, ժողովրդավարություններ ունեցած քառասունմեկ երկրներից երեսունը եղել են զուտ խորհրդարանական համակարգեր, և միայն դրանցից չորսն են եղել զուտ նախագահական համակարգեր: Աշխարհում 1945 և 1979 թվականների միջև ընկած ժամանակահատվածում անկախություն ձեռք բերած իննսուներեք երկրներից միայն տասնհինգն են անընդմեջ եղել ժողովրդավարություններ 1980-89թթ. ժամանակահատվածում, սակայն բոլորն էլ սկսել են որպես խորհրդարանական ժողովրդավարություններ: Չենք կարծում, որ այս թվերը պատահական են հայտնվել:<sup>3</sup> Մեկ այլ տեղում հիմնավորել ենք, որ խորհրդարանական կազմակերպական ձևը քաղաքական համակարգին զգալի առավելություններ է տալիս նախագահականի նկատմամբ ժողովրդավարության կայացման համար օգտակար երեք կարողությունների առումով՝ արդյունավետություն, մեծամասնություններ կազմավորելու կարողություն և կառավարության ճգնաժամին վերջ դնելու կարողություն, քանի դեռ այն չի դարձել վարչակարգի ճգնաժամ:<sup>4</sup> Իսպանիան և Հունաստանը զուտ խորհրդարանական համակարգեր են: Պորտուգալիան կիսանախագահական համակարգ է, սակայն 1988թ-ից գնալով ավելի է սկսել գործել որպես խորհրդարանական համակարգ:<sup>5</sup> Ոչ մի նոր լատինամերի-

3. Խմբավորումն իննսուներեք երկրների՝ ըստ նրանց նախնական սահմանադրական շրջանակի և ժողովրդավարության հետագա կայացման, հետևյալն է: Իննսուներեք երկրների բազմության մեջ տասներեքն սկսեցին իրենց անկախությունը՝ որպես իշխող միապետություններ, երեքը՝ որպես կիսանախագահական համակարգեր, իսկ քառասունմեկը՝ որպես խորհրդարանական համակարգեր: Պիրսոնի համաձայնության չափանիշների թեստի (Pearson's chi-squared test) կիրառումն ամբողջական տվյալների նկատմամբ Ստեփանի և Սինդի Սկաչի կողմից նրանց թույլ տվեց մերժել այն գրոյական վարկածը, որ վերը նշված բաշխումը պատահական է: Այս բաշխումը պատահական կերպով դիտարկելու հավանականությունը մեկը հազարից էլ քիչ է: Այս և այլ տվյալներ ներկայացված և վերլուծված են Ստեփան և Սկաչ, «Սահմանադրական շրջանակներ և ժողովրդավարության կայացում. խորհրդարանականությունն ընդդեմ նախագահականության»-ում (Stepan and Skach, "Constitutional Frameworks and Democratic Consolidation: Parliamentarianism versus Presidentialism", World Politics 45 (October 1993), 1-22, esp. 5-15):

4. Տե՛ս Լինց, «Էքսկուրսներ նախագահական և խորհրդարանական ժողովրդավարության մասին» (Linz, "Excursus on Presidential and Parliamentary Democracy"), Խուան Լինցի և Ալֆրեդ Ստեփանի խմբ.՝ «Ժողովրդավարական վարչակարգերի անկումը» (Juan J. Linz and Alfred Stepan, eds., *The Breakdown of Democratic Regimes* (Baltimore: Johns Hopkins University Press, 1978), 71-74) և Լինց, «Նախագահակա՞ն, թե՞ խորհրդարանական ժողովրդավարություն. կա՞ արդյոք տարբերություն» (Linz, "Presidential or Parliamentary Democracy: Does It Make a Difference?"), Խուան Լինցի և Արտուրո Վալենսուելայի խմբ.՝ «Նախագահական ժողովրդավարության ձախողումը. համեմատական տեսանկյուն» (Juan J. Linz and Arturo Valenzuela, eds., *The Failure of Presidential Democracy: Comparative Perspectives* (Baltimore: Johns Hopkins University Press, 1994), 3-87) և Ալֆրեդ Ստեփան, "Parliamentarismo X Presidentialismo no mundo modern: Revisao de um debate atual", "Estudos Avancados" (São Paulo, Janeiro/Abril 1990), էջ 96-107:

5. Իսպանիան՝ որպես սահմանադրական միապետություն, երբեք չի ունեցել որևէ կիսանախագահական գծեր: Հունաստանում բազմաթիվ խոսակցություններ էին գնում Հինգերորդ հանրապետության ոճի կիսանախագահականություն ընդունելու մասին, սակայն նախագահի ուղղակի ընտրություն նախատեսող օրենսդրություն այդպես էլ չընդունվեց, իսկ 1975թ. սահմանադրությամբ նախատեսված ուժեղ նախագահական արտոնությունները զգալիորեն նվազեցվեցին սոցիալիստների կողմից ներմուծված սահմանադրական փոփոխությունների միջոցով 1981թ. նրանց իշխանության գալուց հետո: 1995թ. Պորտուգալիան դեռ կիսախորհրդարանական էր իր ձևով, սակայն 1982թ. նախագահի լիազորությունները նվազեցին սահմանադրական փոփոխությունների միջոցով: Քաղաքական կարգը դար-

**Աղյուսակ 9.2. Այն պատասխանողների տոկոսը, ովքեր հաստատում են, որ «ժողովրդավարությունը նախընտրելի է կառավարության ցանկացած այլ ձևից» Իսպանիայում, Պորտուգալիայում և Ղունաստանում և համեմատած Եվրոպական Միության երկրների միջինի հետ, 1992թ. (Լեզիտիմության ցուցանիշ)**

Պատասխանողի գտնվելու վայրը	Տոկոս
Իսպանիա	78%
Պորտուգալիա	83%
Ղունաստան	90%
Եվրոպական Միության միջին	78%

Աղբյուրը. տվյալները «Եվրաբարոմետրից», էջ 37, 1992թ.:

**Աղյուսակ 9.3. Այն պատասխանողների տոկոսը, ովքեր «Շատ գոհ են» կամ «Բավականաչափ գոհ են» ժողովրդավարության գործելուց Իսպանիայում, Պորտուգալիայում և Ղունաստանում՝ համեմատած Եվրոպական Միության անդամ-երկրների միջինի հետ, 1985-1993թթ. (արդյունավետության ցուցանիշ).**

Պատասխանողի գտնվելու վայրը	Տոկոս				
	1985թ.	1987թ.	1989թ.	1991թ.	1993թ.
Իսպանիա	51	55	60	57	40
Պորտուգալիա	34	70	60	75	51
Ղունաստան	51	49	52	34	39
Եվրոպական Միություն	49	51	57	50	43

Աղբյուրը. Եվրաբարոմետրի միտումների փոփոխականներ, 1974-1993թթ. (1994թ. մայիս):

կյան, ասիական կամ հետկոմունիստական ժողովրդավարություն (բացառությամբ Հունգարիայի) նախապես չի ընտրել ու ստեղծել զուտ խորհրդարանական ձև: Չեխոսլովակիան մոտ էր դրան, սակայն ո՛չ վարչապետը, ո՛չ էլ նախագահը չկարողացան արձակել խորհրդարանն ու հայտարարել նոր ընտրություններ: 1995թ. դրությամբ հավանաբար պատահական չէ, որ Հունգարիան, Չեխիայի Հանրապետությունը (որտեղ նախագահն ընտրվում է անուղղակիորեն) և Սլովենիան (որն ունի ուղղակիորեն ընտրված նախագահ՝ քիչ լիազորություններով) պետք է որ ավելի մոտ լինեն կայացմանը, քան որևէ այլ հետկոմունիստական երկիր, որն ունի ուղղակիորեն ընտրված նախագահ՝ զգալի լիազորություններով: Կարծում ենք, որ խորհրդարանականության՝ որպես ժողովրդավարության կայացմանը նպաստող ինստիտուցիոնալ շրջանակի օգտին բերվող փաստարկները արժանի են ավելի լուրջ դիտարկման և՛ գործնական մարդկանց, և՛ տեսաբանների կողմից:

Ի վերջո՝ որքանով են Հարավային Եվրոպայում նոր ժողովրդավարությունների լեզիտիմության ու արդյունավետության մասին քաղաքացիների կարծիքները համադրելի

ձավ է՛լ ավելի խորհրդարանական, երբ առաջին քաղաքացիական անձը, ով նախկինում եղել էր նաև վարչապետ, ստանձնեց այդ պաշտոնը 1986թ.:

Եվրոպական Միության մյուս երկրների քաղաքացիների կարծիքների հետ: Պատասխան՝ միանգամայն համադրելի են (Ադյուսականեր 9.2 և 9.3):

Միասին վերցրած՝ բոլոր հարավեվրոպական երկրները ժողովրդավարորեն կայացել են, ոչ մի կայացում չի տնել ութ տարուց ավելի, և հարավեվրոպական նոր ժողովրդավարություններն իրենց քաղաքական մոդելներով գնալով ավելի համադրելի են դառնում մյուս արևմտաեվրոպական խորհրդարանական ժողովրդավարությունների հետ:<sup>6</sup> Թեև հարավեվրոպական երեք երկրներում ժողովրդավարության կայացումն այսօր թվում է համեմատաբար դյուրին ձեռք բերված, պետք չէ մոռանալ, որ անցումներն Իսպանիայում ու Պորտուգալիայում սկսվել են ոչ ժողովրդավարական իշխանության միայն ծայրահեղորեն երկար տևած ժամանակահատվածներից հետո, և որ Հունաստանում հետպատերազմական ժողովրդավարությունը կասկածներ էր առաջ բերել շատ հույների մեջ՝ հաշվի առնելով քաղաքացիական պատերազմի հետևանքները: Ավելին, բոլոր հարավեվրոպական երկրներում անցումներն սկսվել են ժողովրդավարացումների «երրորդ ալիքի» սկզբում և չէին կարող օգտվել այլ երկրների փորձից քաղած դասերից:<sup>7</sup>

ԱԿՆԱՐԿ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՈՒ ՆԱԽՈՐԴ ՈՉ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ  
ՎԱՐՉԱՎԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ  
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՁ ՉԷ

Այժմ, երբ ավարտել ենք ժողովրդավարության կայացման մեր վերլուծությունը երկու ոչ ժողովրդավարական հասարակարգերում, որոնք ժամանակին առավել երկարատև են եղել Արևմտյան Եվրոպայում՝ Պորտուգալիայում և Իսպանիայում, կցանկանայինք անդրադառնալ մի սկզբունքային հարցի, որը հաճախ է ծագում ժողովրդավարացման մասին գրականության մեջ: Կան ուսումնասիրողներ, ովքեր նոր ժողովրդավարությունների անցման ու կայացման գործընթացները կապում են նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգի մերժման ու բացասական գնահատականի հետ: Անգամ փաստարկներ են բերվում հոգուտ այն բանի, որ նման մերժումն անհրաժեշտ է ժողովրդավարության կայացման համար, և երբեմն նոր ժողովրդավարությունների որակի գնահատումը ներառում է նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգի գնահատման ցուցանիշներ: Մենք մերժում ենք նման փաստարկները հասկացութենական, պատմական ու գործնական առումներով:

Հասկացութենական առումով մենք մերժում ենք նման փաստարկները, որովհետև կայացման մեր սահմանումը կողմնորոշված է դեպի ներկան ու ապագան: Այսինքն, մեզ համար գլխավոր ցուցանիշներից մեկն այն է, թե արդյոք քաղաքացիների ճնշող մեծա-

6. Սա նախապես մեջբերված հոդվածի կենտրոնական փաստարկն է՝ Լիիփհարթ. Բրունո, Դիանանդորոս և Գյունտեր, «Ժողովրդավարության միջերկրածովային մոդել», "A Mediterranean Model of Democracy?"

7. Մեմյուել Հանթինգտոնի համար ժողովրդավարացման «երրորդ ալիքն» աշխարհում (1974թ.) սկսվել է Պորտուգալիայով: Տե՛ս Հանթինգտոն, «Երրորդ ալիքը. ժողովրդավարացումը քսաներորդ դարում» (Huntington, *The Third Wave: Democratization in the Twentieth Century* (Norman: Oklahoma University Press, 1991), chap. 1):

մասնությունը համաձայն է, թե՛ ոչ այնպիսի արտահայտության հետ, ինչպիսին է՝ «Մեր երկրի նման երկրի համար ժողովրդավարությունն ավելի լավ է, քան ցանկացած այլընտրանք»։ Վերլուծական առումով ժողովրդավարության նկատմամբ դրական վերաբերմունքն այսօրվա դրությամբ լավագույն վերաբերմունքն է, իսկ ապագան չի պահանջում բացասական վերաբերմունք անցյալի նկատմամբ։ Մարդիկ կարող են ինքնուրույն գնահատականներ տալ ու հաստատել, որ նախորդ վարչակարգն ունեցել է նվաճումներ կամ առնվազն բոլորովին էլ վատը չի եղել և դարձյալ կողմ լինել ժողովրդավարությանը՝ որպես իրենց նախընտրած կառավարման ձևի։

Պատմական առումով մենք մերժում ենք նման փաստարկները, որովհետև մեր դատողությամբ՝ կայացած ժողովրդավարությունների ճնշող մեծամասնությունն իրականում ժողովրդավարությանն իր անցումը չի սկսել այնպիսի պարագաներում, երբ հասարակարգի անդամների մեծամասնությունը կամ անգամ անցման գլխավոր գործող անձանցից շատերը եղել են կամ համոզված ժողովրդավարներ, կամ քաղաքացիներ, ովքեր մերժել են անցած վարչակարգի հետ կապ ունեցող ամեն ինչ։ Ընդհակառակը, ժողովրդավարական մեծամասնություն առաջանում է այն ժամանակ, երբ վերնախավն ու սովորական քաղաքացիներն սկսում են մտածել այդ ժամանակ իրենց առջև կանգնած հասարակական խնդիրների ու ընդհանրապես իրենց ապրած աշխարհի տեսանկյունից, որ հակամարտությունների կարգավորման ժողովրդավարական ընթացակարգերն ավելի լավն են կամ նվազ վտանգավոր, քան կառավարման ցանկացած ուրիշ այլ ձևեր։ Այսպիսով, վերնախավի բազմաթիվ հիմնական ներկայացուցիչների մեջ ժողովրդավարական վարքագիծն առաջանում է ժողովրդավարական վերաբերմունքից առաջ, որովհետև վերնախավն ի վիճակի է հաշվարկել, որ խաղի ժողովրդավարական կանոնների խախտումը, անկախ այն բանից՝ դրանք իրեն դուր են գալիս թե ոչ, դրական արդյունք չի բերի իրենց շահերի առումով։ Ժողովրդավարությունը դառնում է «միակ լավագույն տարբերակը» մասամբ համոզմունքի և մասամբ վերնախավի՝ «ինչ եմ կորցնում զիջելու դեպքում և ինչ եմ կորցնում կառավարման այլընտրանքների համար համախմբման դեպքում» հաշվարկի շնորհիվ։

Գործնականում մենք մերժում ենք նման փաստարկները, որովհետև վերջին ժամանակների անցումների մասին ունենք հիմնավոր վավերական նյութեր, որոնք ցույց են տալիս, որ ժողովրդավարությունը հնարավոր է՝ կայանա, չնայած հասարակության միայն փոքրամասնությունն է ամբողջովին մերժում անցյալը։ Մրա ապացույցն այն է, որ 1985թ. Պորտուգալիայում և Իսպանիայում, երբ ըստ մեր չափանիշների՝ ժողովրդավարությունը երկու երկրներում էլ արդեն կայացել էր, հարցման ենթարկվածների 30%-ից էլ քիչն էր ասել, որ Ֆրանկոյի կամ Սալազարի վարչակարգերը «միայն վատ են», մինչդեռ մի ճնշող մեծամասնություն ասել է, որ «ժողովրդավարությունը նախընտրելի է ցանկացած այլ վարչակարգից» (Աղյուսակ 9.4)։

Աղյուսակ 9.4-ը ցույց է տալիս, որ եթե մենք մեկտեղենք Ֆրանկոյի վարչակարգի մասին «լավն էր» ու «մասամբ լավն էր, մասամբ՝ վատը» պատասխանները, պապ կտեսնենք, որ 1985թ. հարցման ենթարկվածների 61%-ն Իսպանիայում և 57%-ը Պորտուգալիայում անցյալն ամբողջովին չեն մերժել, և, իսկապես, այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ այն ունեցել է որոշ լավ հատկություններ։ Նույն հարցման ժամանակ, սակայն, պատասխանողների 70%-ն Իսպանիայում ու 61%-ը Պորտուգալիայում պատասխանել է

**Աղյուսակ 9.4. Ժողովրդավարական ներկայի ու ապագայի ցանկալիության ուժեղ հաստատման և ոչ ժողովրդավարական անցյալի թույլ մերժման համադրելիությունը. Իսպանիա և Պորտուգալիա**

Նարցման պատասխան	Պատասխանողների տոկոսը			
	Իսպանիա		Պորտուգալիա	
	1985թ.	1992թ.	1985թ.	1992թ.
Ժողովրդավարության՝ որպես նախընտրելի հասարակարգի ուժեղ հաստատում				
«Ժողովրդավարությունը նախընտրելի է ցանկացած այլ վարչակարգից»	70	78	61	83
«Որոշ դեպքերում նախընտրելի է ավտորիտար վարչակարգը, բռնատիրությունը»	10	9	9	9
«Ինձ նման մարդկանց համար ամեն ինչ մինույն է»	9	7	7	4
«Զգիտեն/պատասխան չկա»	11	6	23	4
Նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգի մասին կարծիքը				
«Այն լավն էր»		17		13
«Մասամբ լավն էր, մասամբ՝ վատը»		44		44
«Միայն վատը»		29		29
«Զգիտեն/պատասխան չկա»		10		14
N Ընդհանուր թիվը	(2488)		(2000)	

Մղբյուրը. 1985թ. տվյալների աղբյուրը նույնն է, ինչ որ Աղյուսակներ 8.1-ն ու 8.2-ը: 1992թ. տվյալները եվրաբարոմետր 37-ից են (1992թ.):

նան, որ «Ժողովրդավարությունը նախընտրելի է ցանկացած այլ վարչակարգից»: Առաջին պատասխանն անցյալի գնահատումն էր, երկրորդը՝ ներկայում ու ապագայում նախապատվության հաստատումն էր: Այդ երկու խումբ պատասխաններն համադրելի էին:<sup>8</sup> Արդեն 1992թ. Պորտուգալիայում պատասխանողների 83%-ը (համեմատած 61%-ի հետ 1985թ.) ժողովրդավարությունը նախընտրում էր որևէ այլ վարչակարգից: Ժողովրդավարությանը ցուցաբերվող աջակցության մեծացումը մասամբ այն իրողության շնորհիվ էր, որ այն մարդկանց թիվը, ովքեր հրաժարվել էին պատասխանել կամ ովքեր ասել էին «չգիտեն», 1985թ-ից մինչև 1992թ. 23%-ից իջել էր՝ հասնելով ընդամենը 4%-ի.: Մենք տվյալներ չունենք, բայց դժվար թե Պորտուգալիայում եղած լինի անցյալը որպես «միայն վատ» գնահատելու էական շարժում:

Եկեք մտածենք այն մասին, թե ինչ տիպի հոգեբանական ու պատմական գործընթացներ կարող են համակցվել՝ թույլ տալու, որ մարդիկ միաժամանակ ոչ ժողովրդավարական անցյալը գնահատեն որպես «ոչ ամբողջովին վատ» և դարձյալ նախընտրեն ժողովրդավարական վարչակարգը ներկայում ու ապագայում: Ցանկացած վարչակար-

8. Իսկապես, 1978թ. Իսպանիայում անցկացված մի հարցման վերլուծությունը ցույց է տալիս, որ Ֆրանկոյի մասին և ժողովրդավարության մասին տրված երկու հարցին պատասխանողների 83.5%-ն ասել է, որ «Ժողովրդավարությունը լավագույն քաղաքական համակարգն է մեր երկրի նման երկրի համար»: Նրանցից միայն 28.1%-ն է լիովին դատապարտել «Ֆրանկոյի գործողությունները», իսկ 23.2%-ն ասել է, որ «կային շատ սխալներ, որոնցից կարելի էր խուսափել», մինչդեռ 32.0%-ն ինչ-որ ձևով հավանություն է տվել Ֆրանկոյի գործողություններին (5.9%-ը «լիովին հավանություն է տվել», 15.6%-ը կարծել է, որ այդ գործողություններն «ընդհանուր առմամբ լավ են եղել», իսկ 10.5%-ի կարծիքով՝ դրանք եղել են «միջին՝ առանց չափազանց շատ սխալների»): *See* Խուան Լինց, "El legado de Franco y la democracia", Խուան Լինցը և ուրիշներ գրքում՝ "Informe sociológico sobre el cambio político en España", 1975-1981 (Madrid: Euramérica, 1981), էջ 587-618:

գի գնահատումը պահանջում է չափանիշների, հարթությունների, հասարակության անդամների կենսափորձի մի երկար շարք, և իրատեսական չի լինի ենթադրել, որ մարդիկ, ովքեր տասնամյակներ ի վեր ապրել են ոչ ժողովրդավարական վարչակարգի ներքո, ովքեր իրենց համար կյանք են ստեղծել այնտեղ և կյանքում ձեռք բերած իրենց հաջողությունները կապել են վարչակարգի ինստիտուտներում ունեցած իրենց մասնակցության հետ, պետք է հանկարծ մերժեն վարչակարգին առնչվող ամեն ինչ: Ավելին, որոշ ոչ ժողովրդավարական վարչակարգեր (Թայվանը և Հարավային Կորեան 1980-ականներին, Իսպանիան 1960-ական թվականներին և 1970-ական թվականների սկզբին, Հունգարիան Կադարի ժամանակաշրջանի կեսերին) ի պատիվ իրենց ունեցել են զգալի նվաճումներ հասարակական կյանքի այս կամ այն ոլորտում, նվաճումներ, որոնք անաչառ դիտորդը երբեք չի ժխտի. դրանք կարող են ժխտել միայն գաղափարախոսական քարացածությամբ համակված կույր մարդիկ: Դա չի նշանակում, որ այդ նույն մարդիկ (ճշգրտորեն) չեն ընկալում նախորդ վարչակարգի բացասական կողմերը, որոնք կարող են նրանց վրա ազդած լինել կամ որոնց մասին նրանք կարող են իմանալ: Դժվար կլինի պատկերացնել մի հասարակություն, հատկապես այնպիսի վարչակարգերում, որոնք մենք վերը նշել ենք, որտեղ մեծ թվով մարդիկ կունենան միայն բացասական կամ դրական փորձառություն, հատկապես եթե այդ վարչակարգն ապրել է երկարատև զարգացում ու երբեմն էլ՝ խնամքով մտածված ազատականացման գործընթաց, որը շատ մարդկանց թույլ է տվել իրենց սեփական կյանքը վարել վարչակարգի կողմից հաստատված շրջանակներում: Իսկապես, ավելի որոշակի հարցեր, քան սովորաբար հարցումների ժամանակ տրվածները, ցույց են տալիս, որ մեծ թվով մարդկանց կողքին, ովքեր վատ են արտահայտվում վարչակարգի որոշակի կողմերի, ինչպես օրինակ՝ ճնշման չափի ու ազատության սահմանների մասին, միաժամանակ կան շատ մարդիկ, ովքեր նշում են վարչակարգի դրական կողմերը, օրինակ՝ տնտեսական կամ սոցիալական զարգացման ոլորտում:<sup>9</sup>

Կա մի պատմություն իսպանացի մի տարագրի մասին, ով շատ տարիներ անց Ֆրանկոյի օրոք վերադարձել է Իսպանիա, ոգևորվել է իսպանական հասարակության մեջ տնտեսական զարգացման հետևանքով երևան եկած դրական փոփոխություններով և այն բանով, որ հասարակությունը շատ է տարբերվում քաղաքացիական պատերազմից առաջ եղածից, և հարց է տվել. «Արդյոք պատերազմի ժամանակ ես սխալ կողմից եմ կռվել, եթե այս ամենը պետք է ձեռք բերվեր Ֆրանկոյի օրոք»: Պատասխաններից մեկն այն է, որ նրա՝ 1950-ական և 1960-ական թվականներին դրական երևացող շատ բաներ ձեռք կբերվեին Եվրոպական համատեքստում ցանկացած վարչակարգի ներքո և, թերևս, դրանց կարելի կլինեին հասնել անգամ ավելի վաղ, եթե տվյալ վարչակարգը չլիներ: Սակայն դրանց ձեռքբերման պատճառի ու ձևի մասին չէ, որ մարդիկ մտածում են անցած վարչակարգի կատարողականը գնահատելու ժամանակ:

Այն պարզ փաստը, որ շատ մարդիկ կարող են որոշ դրական գնահատական ունենալ անցյալի նկատմամբ, արդյո՞ք արգելք է դառնում նոր ժողովրդավարական վարչակարգի նկատմամբ նրանց դրական տրամադրվածությանը: Էմպիրիկ տվյալները ցույց են տալիս, որ դա այդպես չէ: Մարդիկ, ովքեր նախորդ վարչակարգի մասին չունեն բացասական կարծիք, հատկապես նրանք, ովքեր ունեն երկակի կարծիք («մասամբ լավ, մա-

9. Նույն տեղում:



սամբ վատ»), կարող են լինվին աջակցել նոր ժողովրդավարական վարչակարգին: Նման մարդկանց գնահատականները խարսխված են այն լրացուցիչ դրական լիցքերի վրա, որոնք ժողովրդավարությունը հաղորդում է քաղաքական կյանքին ու հասարակությանը, և ամենից ավելի բխում է նրանց հիմնականում դրական արձագանքից այն արժեքների նկատմամբ, որոնք կապված են ազատության, մասնակցության, վերահսկողության և այն հանգամանքի հետ, թե ով պետք է կառավարի: Նաև կապված է իշխանության գլուխ կանգնածների այն հատկության նկատմամբ մեծացող վստահության հետ, երբ իշխանությունը հաշվետու է լինում քաղաքական գործընթացների համար: Եկեք չմոռանանք, որ ոչ ժողովրդավարական վարչակարգերի ներքո, հատկապես էթե դա անձնավորված վարչակարգ է, մարդկանց մեծ անհանգստություններից մեկն այն է, թե ինչ կպատահի, եթե դեկավարը մահանա: Բոլոր գերագույն առաջնորդներն անհետանում են բեմից: Այսպես, բոլոր իսպանացիները Ֆրանկոյի օրոք ապրել են մի անհանգստությամբ, որ վաղ թե ուշ երկիրը պետք է բախվի այն փաստին, որ Ֆրանկոն մահանալու է, և որ այդ ժամանակ պետք է ընդունվեն նոր որոշումներ, որոնց համար չկան հստակ կանոններ, և որոնք բացում են դռներն անվստահության ու հնարավոր է՝ անգամ կատաղի հակամարտության առջև: Ողջ անվստահությամբ հանդերձ, որն Ադամ Պրժմոսկիև ճիշտ կերպով շեշտել է որպես ժողովրդավարությունը բնութագրող կողմ, ժողովրդավարության բնորոշ գծերից մեկը նաև այն է, որ կան կանխատեսելի մեխանիզմներ՝ կառավարությունները փոխելու և փոփոխվող հասարակությանը հարմարվելու համար: Ժողովրդավարություններն ունեն տարբեր օրենքներով ու ընթացակարգերով երաշխավորված սահմանադրական շրջանակ, որը սահմանափակում է քաղաքական փոփոխության անկանխատեսելիությունն ու անհատներին ու խմբերին երաշխավորում է իրավունքներ, ինչը չի կարող արդյունավետ կերպով անել ոչ մի ոչ ժողովրդավարական վարչակարգ:

Ժողովրդավարության կայացումը նախորդ վարչակարգի ընդհանուր բացասական գնահատականի հետ կապելու հիմքում ընկած ենթադրությունը հաճախ գալիս է այն սխալ գաղափարից, որ այդպիսի ոչ ժողովրդավարական վարչակարգերը երբեք չեն ունեցել զգալի աջակցություն, բացի փոքր, արտոնյալ ու բռնակալական փոքրամասնությունների աջակցությունը: Որոշ մարդիկ կարծում են, որ Հարավային Եվրոպայում ու Հարավային Ամերիկայում աջակողմյան ավտորիտար վարչակարգերին աջակցում էին միայն խոշոր հողատերերը, եպիսկոպոսները, գեներալները, բանկերի կառավարիչներն ու փոքրամասնությունն կազմող գաղափարախոսական ակտիվիստները՝ մոռանալով, որ կային նաև մեծ թվով ոչ վերնախավային ներկայացուցիչներ, որոնք թերևս իրենց ապագան տեսնում էին նախորդ վարչակարգի դրական ազդեցության ներքո:

Նույնը վերաբերում է նախկին կոմունիստական հասարակություններին: «Իրական սոցիալիզմն» առաջ բերեց շահեր ու ընտրողներ: Բազմաթիվ մարդիկ, համաձայնվելով վարչակարգի հետ, վեր էին բարձրանում սոցիալական սանդուղքով՝ ստանում էին բարձրագույն կրթության կրթաթոշակներ, մեդալներ՝ իրենց մարզական նվաճումների համար, դրամական միջոցներ՝ իրենց մշակութային գործունեության համար և աշխատանքային առաջխաղացում նույննկատուրայում, դառնում էին գործարանների հաջողակ տնօրեններ ու էլ ինչ ասես: Այդ մարդիկ, անկախ վարչակարգի նկատմամբ ունեցած իրենց վերաբերմունքից, անկախ խորհրդային կախվածության հանդեպ ունեցած իրենց թշնամությունից (եթե ազգայնականներ են եղել) և անկախ բազմաթիվ

փոքր, բյուրոկրատական քաշքշուկներից ունեցած իրենց դժգոհությունից, չեն կարող ժխտել, որ իրենք ունեցել են չափավոր, իսկ երբեմն՝ նույնիսկ բավականին լավ կյանք, և որ իրենց հասարակությունում տեղի ունեցող փոփոխությունները վտանգում են այդ ձեռքբերումները: Ավելի անհանգստացնողը ոչ ժողովրդավարական վարչակարգի հին սատարողներից շատերի համար այն է, որ նոր ժողովրդավարները հաճախ ժխտում են նրանց անձնական լեզվիությունը՝ ենթադրելով, որ եթե նրանք հաջողակ են եղել անցած վարչակարգում, ապա պետք է որ վատը եղած լինեն:

Մեկ անգամ ևս շեշտում ենք մեր այն միտքը, որ շատ ժողովրդավարություններում պետք է ձևավորվեն համոզված ժողովրդավարների մեծամասնություն: Այն պատկերացման վրա սևեռվելը, թե միայն ժողովրդավարական ընդդիմության անբասիր դեմքերը միայն կարող են լինել հավատարիմ ժողովրդավարներ, կարող է իրականում վնասել ժողովրդավարությանը:

Մեզ հետաքրքրում է նախորդ վարչակարգի նկատմամբ տարբեր մարդկանց վերաբերմունքը, սակայն միայն նրբերանգված ձևով: Օրինակ, Իսպանիայի կամ Պորտուգալիայի համեմատ Հունաստանում ավելի շատ մարդիկ են նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգը գնահատում որպես «միայն վատ»: Սակայն չենք կարծում, որ դա հույներին անհրաժեշտաբար դարձնում է ավելի համոզված ժողովրդավարներ, քան իսպանացիներն են կամ պորտուգալացիները: Հունաստանում հարցման արդյունքները մենք տեսնում ենք որպես ճշգրիտ գործնական հաստատում այն բանի, որ գնդապետերի կարճատև վարչակարգը չունեցավ զգալի հաջողություններ ի պատիվ և, էլ ավելի շատ, համոթ իրեն: Ճիշտն այն է, սակայն, որ հունական բռնապետության արմատական մերժումը նպաստեց նրան, որ մարդու իրավունքների խախտումների համար պատժվեցին զինվորական վարչակարգի նախկին առաջնորդները: Ինչպես կտեսնենք, Չիլիի օրինակը նման է Իսպանիայի և Պորտուգալիայի օրինակին այն առումով, որ մարդկանց համեմատաբար մեծ տոկոս կարծում է, որ ոչ ժողովրդավարական վարչակարգը «մասամբ լավն է, իսկ մասամբ՝ վատը»: Գլխավոր տարբերությունը, որը փաստերով ցույց կտանք ավելի ուշ, այն է, որ չիլիացի պատասխանողների մի մտահոգիչ թվաքանակ կողմ է ներկայում Պինչետի վարչակարգի կողմից ստեղծված որոշ ոչ ժողովրդավարական ինստիտուտների դերի շարունակմանը: Այս առումով Չիլին հիմնովին տարբերվում է Իսպանիայից կամ Պորտուգալիայից: Ինչպես հետագայում կտեսնենք նաև, Կենտրոնական Եվրոպայի հեղուկունիստական երկրների քաղաքացիներն ի վիճակի են անելու բարդ և ինքնուրույն դատողություններ անցյալի ու ներկայի մասին: Պատասխանողների ճնշող մեծամասնությունը Կենտրոնական Եվրոպայում (բայց ոչ՝ նախկին Խորհրդային Միությունում) կոմունիզմի անկումից հինգ տարի անց միաժամանակ ասել է, որ տնտեսությունն ավելի լավ վիճակում էր կոմունիստական վարչակարգի օրոք, սակայն քաղաքական համակարգն ավելի լավն է նոր ժողովրդավարացող վարչակարգի ներքո: Հետևաբար, նրանք ի վիճակի են եղել տարբերություն անցկացնելու «բարիքների տնտեսական զամբյուղի» և «բարիքների քաղաքական զամբյուղի» միջև, անցյալի, որը նրանց՝ որպես անհատների համար ամենին վատ չի եղել, և մի այլ քաղաքական ապագայի միջև, որին նրանք ձգտում են՝ անգամ իմանալով, որ կորցնելու են անցյալի՝ իրենց արժուրած տարրերը:



## Մաս 3

Հարավային Ամերիկա.  
սահմանափակված անցումներ

Ինչպես մեր դիտարկված երեք հարավեվրոպական երկրները, այնպես էլ մեր լատինաամերիկյան խմբի չորս երկրներից ոչ մեկը (Բրազիլիա, Ուրուգվայ, Արգենտինա և Չիլի, որոնք այսուհետև կանվանվեն Հարավային Կոնի երկրներ) չեն սկսել իրենց գոյությունը սուլթանական, հետամբողջատիրական կամ ուժեղ քաղաքացիականացված ավտորիտար կուսակցական վարչակարգերի հիմքի վրա: Սակայն եթե հարավեվրոպական ժողովրդավարություններից ոչ մեկը չի սկսել բարձրաստիճան գինվորական վարչակարգի հիմքի վրա, ապա Հարավային Կոնի բոլոր անցումներին նախորդել են բարձրաստիճան գինվորականների կողմից կառավարվող վարչակարգեր: Մեր ներածական քննարկման մեջ հասկացութենական մակարդակում հաստատեցինք, որ այդ գինվորականությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ վերացվում է օտարերկրյա ուժերի կողմից կամ հեղափոխության հետևանքով, անցման ժամանակ և անցումից հետո դեռևս մնում է որպես պետական ապարատի մշտական մաս և հետևաբար՝ այն մեքենայի անբաժան մաս, որը նոր ժողովրդավարական կառավարությունը պետք է փորձի կառավարել: Այնուհետև մենք ասացինք, որ «որքան ավելի աստիճանակարգայնորեն է ղեկավարվում գինվորականությունը, այնքան ավելի փոքր է հավանականությունը, որ այն ստիպված կլինի հեռանալ ներքին հակասությունների պատճառով, և որքան թույլ լինի կառավարությունից նրան հեռանալ ստիպող կոալիցիան, գինվորականությունն այնքան ավելի մեծ հնարավորություն կունենա իր հեռացման շուրջ բանակցելու այնպիսի պայմաններով, որոնք նրան թույլ կտան պահել ոչ ժողովրդավարական արտոնություններ կամ ժողովրդավարության կայացմանը տանող քաղաքական գործընթացներին պարտադրել վերին աստիճանի սահմանափակող պայմաններ»:

Որքանո՞վ են այս ընդհանուր դատողությունները հաստատվում Հարավային Կոնի այդ չորս երկրներում: Ավելին, որքանո՞վ է բարձրաստիճան գինվորականություն փոփոխական ինքնին բարդացնում ժողովրդավարության կայացման խնդիրը, երբ համեմատում ենք Հարավային Կոնի երկրները Հարավային Եվրոպայի երկրների հետ:

Մաս 3-ում մենք ցույց ենք տալիս, որ անցումները բոլոր չորս երկրներում, իսկապես, լրջորեն սահմանափակվել են բարձրաստիճան գինվորականությունների կողմից: Սակայն նաև ցույց ենք տալու, որ մեր քննարկված չորս երկրների միջև կան մեծ տարբերություններ: Չիլիում, չնայած ամենանպաստավոր տնտեսական պայմաններին, առ այսօր գինվորականության արտոնություններն այնքան մեծ են, որ ժողովրդավարական կառավարությունը հավանաբար չի բավարարի կայացած անցման մեր գուցե խիստ սահմանմանը մինչև 1990-ական թվականների վերջը: Մյուս կողմից՝ Ուրուգվայը, չնայած շարունակվող տնտեսական խնդիրներին, դարձել է մեր հարավամերիկյան խմբի միակ երկիրը, որը կայացել է, սակայն ունի կառավարման այնպիսի խնդիրներ (հատկապես արդյունավետության), որ մենք այն համարում ենք «ոչսկզբին հակամետ» կայացած ժողովրդավարություն: Քանի դեռ իրադրությունը չէր սկսել բարելավվել 1994թ. կեսերին, Բրազիլիան 1992-94թթ. ավելի հեռու էր կայացած լինելուց, քան 1985թ. գինվորական ուղղակի կառավարման վերջում: Արգենտինան գտնվում էր վարչակարգի կազմալուծման ու գինվորականության վերակազմավորման վտանգավոր վիճակում Ալֆոնսինի գլխավորած առաջին ժողովրդավարորեն ընտրված կառավարության վերջին մի քանի տարիների ընթացքում, սակայն այդ երկու գործընթացն էլ հետընթաց ապրեցին Մենեմի օրոք, ում ունեցած դերի որոշ կողմեր, սակայն, դժվարացնում են Արգենտինան կայա-

ցած ժողովրդավարություն համարելը: Ակնհայտորեն երկրների միջև նման տարբերությունը բացատրելու համար բացի աստիճանակարգայնորեն ղեկավարվող զինվորական վարչակարգերից, դրանց ընդհանուր ծագումից, ստիպված ենք լինելու հետազոտել այլ փոփոխականներ, հատկապես՝ լեզվիտիմության «քաղաքատնտեսություն» փոփոխականը: Քաղաքական հասարակության ասպարեզները և օրենքի գերակայությունը նույնպես ենթարկվում են լայն վերլուծության չորս երկրներում իրենց չափազանց տարբեր որակների պատճառով:



## Ռիսկերին հակամետ կայացած ժողովրդավարություն. Ուրուգվայ

ՄԵՐ ԽՆԴԻՐՆ այս գլխում կրկնակի է: Առաջին. մենք պետք է զարգացնենք այն աներկբա հակասական փաստարկը, որ Ուրուգվայը կայացած ժողովրդավարություն է, և գնահատենք այն, թե ինչ պայմաններ հնարավորություն տվեցին նրան դառնալու Հարավային Ամերիկայի չորս նախկին «բյուրոկրատական-ավտորիտար» վարչակարգերից միակը, որը ստացել է այս կարգավիճակը:<sup>1</sup> Երկրորդ. պետք է բացատրենք, թե ինչու ենք կարծում, որ Ուրուգվայը, ինչպես Հունաստանը, ռիսկերին հակամետ է, և ինչու ռիսկերին հակամետ լինելու հարցն ավելի լավ է վերլուծված ժողովրդավարությունների անկման վերաբերյալ գրականության ու քաղաքականության, քան «ժողովրդավարությանն անցումներին» նվիրված գրականության ու քաղաքականության մեջ:<sup>2</sup>

Հասկացութենական առումով Ուրուգվայը շատ լավ հարմարվում է մեր տեսական շրջանակին: Ուրուգվայը եղել է ավտորիտար վարչակարգ 1973թ-ից մինչև 1985թ., որտեղ միշտ *դե ֆակտո* տիրապետել է զինվորականությունը, իսկ 1976թ-ից՝ *դե յուրե* իշխում էր աստիճանակարգայնորեն ղեկավարվող զինվորականությունը մինչև այն պահը, երբ զինվորական մի միացյալ կազմակերպություն իշխանությունը 1985թ հանձնեց ժողովրդավարորեն ընտրված նախագահին:<sup>3</sup> Հետևելով մեր վերլուծության տրամաբանությանը՝

1. «Բյուրոկրատական-ավտորիտար» վարչակարգ հասկացության մասին *տե՛ս* Գիյերմո Օ'Դոննել, «Արդիականացում և բյուրոկրատական-ավտորիտարություն. Հարավային Ամերիկայի քաղաքականության ուսումնասիրություններ» (Guillermo O'Donnell, *Modernization and Bureaucratic-Authoritarianism: Studies in South American Politics* (Berkeley: Institute of International Studies, University of California, 1973)) և Դեյվիդ Քոլլիերի խմբ.՝ «Նոր ավտորիտարությունը Լատինական Ամերիկայում» (David Collier, ed., *The New Authoritarianism in Latin America* (Princeton: Princeton University Press, 1979)):

2. Այսինքն, այն հնարավոր կլինի ավելի լավ վերլուծել՝ կիրառելով այն շրջանակը, որն առաջարկում է Խուան Լինցի և Ալֆրեդ Ստեփանի խմբ.՝ «Ժողովրդավարական վարչակարգերի անկումը» (Juan J. Linz and Alfred Stepan, eds., *The Breakdown of Democratic Regimes* (Baltimore: Johns Hopkins University Press, 1978)), քան անցման վերաբերյալ գրականության մեջ դասական համարվող աշխատությունները, ինչպիսին է, օրինակ, Օ'Դոննելի, Շմիտտերի և Ուայթհեդի քառաստոր ուսումնասիրությունը՝ «Անցումներ ավտորիտար իշխանությունից» (O'Donnell, Schmitter, and Whitehead, *Transitions from Authoritarian Rule*):

3. Մենք միանգամայն սխեմատիկ կլինենք Ուրուգվայի մեր վերլուծությամբ, որովհետև այն ընթերցողները, որոնց հետաքրքրում են Ուրուգվայում անցման մանրամասնություններն ու կայացման համար դրա ներկայացրած խնդիրները, ունեն վերջերս հրատարակած երկու փայլուն մենագրություններ՝ նվիրված հենց այս հարցերին: Մենք նկատի ունենք՝ Չարլզ Գայ Ջիլեսպի, «Բանակցություններ ժողովրդավարության շուրջ. քաղաքական գործիչներն ու գեներալներն Ուրուգվայում» (Charles Guy Gillespie, *Negotiating Democracy: Politicians and Generals in Uruguay* (Cambridge: Cambridge University Press, 1991)) և Լուիս Գոնսալես, «Քաղաքական կառույցներն ու ժողովրդավարությունն Ուրուգվայում» (Luis



նշենք այն փաստը, որ զինվորականությունն անցման ընթացքում մնացել է կառավարության կազմում, բացառել է ժամանակավոր կառավարության հարցը:

Մեր տրամաբանության շրջանակում նաև հիմնավորեցինք, որ աստիճանակարգային ձևով ղեկավարվող զինվորական ավտորիտար վարչակարգերը սովորաբար պոտենցիալ առավելություն ունեն անցման համար (զինվորականություն-ինստիտուտը կարող է հանգել այն կարծիքին, որ իր շահերին ավելի լավ կծառայի զինվորականություն-կառավարությունից հեռացումը), սակայն պոտենցիալ խոչընդոտ են ներկայացնում ժողովրդավարության կայացման համար (զինվորականություն-ինստիտուտը՝ որպես իր հեռացման դիմաց պահանջվող զին, կարող է ուժեղ սահմանափակումներ պարտադրել եկող ժողովրդավարական կառավարությանը): Ուրուգվայը ցուցադրում է այս երկու կանխատեսված միտումները:

Ինչո՞ւ է սկսվել անցում ժողովրդավարությանը: Ի՞նչն է պատճառ դարձել զինվորականություն-ինստիտուտի ու զինվորականություն-կառավարության միջև բաժանմանը: Սկզբում՝ 1978թ-ից մինչև 1980թ., Ուրուգվայում քիչ էին այն զինվորական սպաները, ովքեր նախապատվություն էին տալիս դեպի ազատական ժողովրդավարություն վերադարձին, սակայն փոքրաթիվ էին նաև նրանք, ովքեր պատրաստ էին ավտորիտար վարչակարգն ինստիտուցիոնալացնելու փորձ կատարել: Մշտական ճնշումների առումով (սակայն ոչ մահվան դեպքերի), Ուրուգվայն այս չորս հարավամերիկյան բյուրոկրատական-ավտորիտար վարչակարգերից եղել է ամենաճնշող օրինակը:<sup>4</sup> Քաղաքացիական հասարակությունը և քաղաքական հասարակությունը նույնպես դիմադրության ավելի թույլ հենակետեր էին, քան Բրազիլիայում կամ Չիլիում: Այդուհանդերձ, քսաներորդ դարում Ուրուգվայում զինվորականությունը երբեք ուղղակիորեն չի իշխել, երկիրն ավելի շատ տարիներ է ապրել ժողովրդավարական վարչակարգերի ներքո, քան Լատինական Ամերիկայի որևէ այլ երկիր, իսկ երկու ավանդական ամենակոլ կուսակցությունները՝ (կոլորադոսներն "Colorados" ու բլանկոսները "Blancos") երբեք չեն ստացել ընդհանուր ձայների 75%-ից քիչ ցանկացած նախագահական ընտրությունների ժամանակ: Ուրուգվայի ընտրողներն անգամ արևմտաեվրոպական չափորոշիչներով ունեն կուսակցություններին հարելու մեծ ավանդույթ ու ձայն-աջ ցուցիչի հստակ զգացում:<sup>5</sup> Զինվորական

E. Gonzalez, *Political Structures and Democracy in Uruguay* (Notre Dame: University of Notre Dame Press, 1991): Մեզ բախտ վիճակվեց աշխատել այդ տաղանդավոր գիտնականներից երկուսի հետ էլ, երբ նրանք գրում էին այս առենախոսական գրքերը Յեյի համալսարանում:

4. Օրինակ, ըստ «Միջազգային համաներման» հաշվարկների վարչակարգի առաջին տարիներին Ուրուգվայի քաղաքացիները բանտ էին նստեցվել 1:600 հարաբերակցությամբ, համապատասխան հարաբերակցությունն Արգենտինայում կազմել է 1:1200-ի, իսկ Չիլիում՝ 1: 2000-ի: *Stén*, Ջիլեսպի, «Բանակցություններ ժողովրդավարության շուրջ» (Gillespie, *Negotiating Democracy*, 50-87):

5. Գոնսալեսը բերում է բազմաթիվ ապացույցներ՝ հիմնավորելու իր փաստարկն այն մասին, որ Ուրուգվայը մինչև անկումն ունեցել է ամենաուժեղ ժողովրդավարական ավանդույթը Լատինական Ամերիկայում՝ «Քաղաքական կառույցները և ժողովրդավարությունն Ուրուգվայում» (*Political Structures and Democracy in Uruguay*), էջ 1-7: Բսկապես, Ռոբերտ Դաիլն (Robert A. Dahl) ավելի առաջ է գնում՝ ասելով, որ Ուրուգվայը հավանաբար ամենաապշեցուցիչ օրինակն է, «որտեղ համեմատաբար երկար ժամանակ գոյություն ունեցող ժողովրդավարական համակարգը փոխարինվել է ներսից պարտադրված ավտորիտար վարչակարգով»՝ «Նախարան տնտեսական ժողովրդավարության» (*A Preface to Economic Democracy* (Berkeley: University of California Press, 1985), 40):

սպաների մեծ մասը նույնպես հարում է Ուրուգվայի երկու ավանդական կուսակցական «ընտանիքներից» մեկնումունեկին:

Այս համատեքստն օգնում է բացատրելու, թե ինչու այն չէր համարվում դրանք հեռացնելու փորձ կատարել, թեև զինվորականությունը ճնշում էր քաղաքական կուսակցություններին: Իսկապես, 1976թ., երբ զինվորականությունը վերջապես տապալեց անվանական քաղաքացիական նախագահին, այն մեծ ջանքեր էր գործադրում հայտարարելու, որ ինքը չի «ցանկանում կիսել պատմական պատասխանատվություն կուսակցությունների վերացման համար», և որ «ինքնիշխանությունը պատկանում է ազգին... ինչպես ցույց տվեց... համաժողովրդական քվեարկությունը»:<sup>6</sup> Արդեն 1977թ. զինվորականությունը հայտարարեց, որ ինքը կմշակի նոր սահմանադրություն «ժողովրդավարության ամրապնդման» համար: Նոր սահմանադրությունը կներկայացվի պլեբիսցիտի 1980թ. և հաստատման դեպքում երկու ավանդական կուսակցությունների կողմից առաջադրված ու զինվորականության կողմից հավանության արժանացած միասնական նախագահական թեկնածուով ընտրությունները կանցկացվեն 1981թ.:

Ուրուգվայում ժողովրդավարությանն անցումն սկսվեց այն ժամանակ, երբ, ի զարմանս մեծաքանակ դիտորդների և հատկապես ի զարմանս զինվորականության, համաժողովրդական հարցման ժամանակ հաղթեց ժողովրդավարական ընդդիմությունը: Լեզիտիմությունն ու ուժային հարաբերությունները սկսեցին անմիջապես փոխվել: Ինչպես տեսանք Պորտուգալիայում, ընտրությունները մերժում կամ հաստատում են իշխանությունը վիճարկողների լեզիտիմությունը: Համաժողովրդական հարցման արդյունքները թուլացրեցին որոշ նշանավոր զինվորական սպաների հավատն առ իրենց իշխելու իրավունքը: Իսկապես, համաժողովրդական հարցման հաջորդ օրը հանդիպում անցկացրած սահմանադրական աշխատանքային խմբի արձանագրությունները ցույց են տալիս, որ զինվորական բարձրաստիճան պաշտոնյաներից ոմանք առաջին անգամ սկսել էին զինվորական կառավարության մասին խոսել պարզապես որպես "gobierno de facto"-ի (դե ֆակտո կառավարություն):<sup>7</sup> Ինչ վերաբերում է ավանդական քաղաքական կուսակցություններին, ապա դրանք համաժողովրդական հարցումից դուրս եկան եռանդով լի, ավելի քիչ վախեցած ու իրենց լեզիտիմության նկատմամբ նոր ինքնավստահությամբ լցված:<sup>8</sup>

6. Մեջբերված է Ջիլիսպի, «Բանակցություններ ժողովրդավարության շուրջ» (Gillespie, *Negotiating Democracy*, 54):

7. Diariode sesiones de la Constituent, 1980թ.: Այս բանի վրա մեր ուշադրությունը հրավիրել են Խուան Ռիպլը և Կարինա Պերելլին:

8. Համաժողովրդական հարցման ու դրա հետևանքների մի հրաշալի վերլուծություն, տե՛ս Լուիս Գոնսալես, «Ուրուգվայը 1980-81թթ. անսպասելի հնարավորություն» (Luis E. Gonzalez, "Uruguay 1980-81: An Unexpected Opening", *Latin American Research Review* 18, no. 3 (1983): 63-76): Գոնսալեսն այս քվեարկությունն անվանում է զինվորականության փորձ՝ հիմնելու պլեբիսցիտար ոչ ժողովրդավարական վարչակարգ: *Sté u sus* Հովարդ Հանդելման, «Ընտրությունների նախերգանք. զինվորականության լեզիտիմության ճգնաժամը և 1980թ. սահմանադրական համաժողովրդական հարցումն Ուրուգվայում» (Howard Handelman, "Prelude to Elections: The Military's Legitimacy Crisis and the 1980 Constitutional Plebiscite in Uruguay"), Պոլ Դերելլի և Էդուարդո Սիլվայի խմբ.: «Ընտրություններն ու ժողովրդավարությունը Լատինական Ամերիկայում 1980-85թթ.» (Paul W. Drake and Eduardo Silva, eds., *Elections and Democratization in Latin America, 1980-85* (San Diego Center for Iberian and Latin American Studies, Center for U.S.-Mexican Studies, Institute of the Americas, University of California, San Diego, 1986), 201-14):

Պլեբիսցիտի ժամանակ զինվորականության պարտությունը և այն փաստը, որ ավանդական կուսակցությունները ներկայացրեցին նորովի ուժեղացրած այլընտրանք, առաջ բերեցին այդ խզումը զինվորականություն-կառավարության (որը զանազան եղանակներով փորձում էր մնալ իշխանության) և զինվորականություն-ինստիտուտի միջև (որն սկսում էր անցումային բանաձևեր քննարկել ժողովրդավարական ընդդիմության մի մասի հետ): Մեր հասկացութենական ներածության մեջ ասացինք, որ թեև հեռացող կառավարության հսկողությունը բարձրաստիճան զինվորականության կողմից մշտապես վտանգ է ներկայացնում, որ այն կարող է խանգարել անցմանը, այդ անել կարողանալու աստիճանը կախված է ուժային հարաբերությունների փոփոխվող դինամիկայից: Ո՞րն էր կուսակցությունների բավականաչափ ուժեղ լինելու պատճառը զինվորականության հետ առճակատման պարագայում անցումն իրականացնելու ու ժողովրդավարությունը կայացնելու համար:

Արդեն 1980թ. զինվորականությունը չուներ որևէ պաշտպանական ծրագիր պարտիզանների դեմ: Պարտիզաններն, ի դեպ, անգամ պարտության էին մատնվել նախքան զինվորականության կողմից 1973թ. իշխանությունն ստանձնելն ու նշանակալի ներկայություն Ուրուգվայում չունեին արդեն 1980թ.: Զինվորականությունը չուներ նաև հստակ տնտեսական ծրագիր, ոչ մի «հիմնարար» կամ հարձակողական օրակարգ: Եվ վերջապես, երկու գլխավոր ավանդական կուսակցությունները ներկայացրել էին սպառնալիք չպարունակող մի այլընտրանք: Համաժողովրդական հարցումից վեց ամիս առաջ անցկացված հասարակական կարծիքի հարցման ժամանակ 2:1 հարաբերությամբ պարզվեց, որ բարձր խավի պատասխանողների կարծիքով՝ քաղաքական բաց մթնոլորտը ոչ թե կդանդաղեցնի, այլ ընդհակառակը, կարագացնի տնտեսության առողջացումը: Անգամ ավելի նշանակալից է այն, որ պատասխանողների մեջ վերին խավի ներկայացուցիչներից 7:1 հարաբերությամբ կարծում էին, որ քաղաքական բաց մթնոլորտը ոչ թե կվատթարացնի, այլ կբարելավի հանդարտությունն ու հասարակական կարգը: Կարևոր նշանակություն ունի այն, որ 1980թ. համաժողովրդական հարցման ժամանակ գործարար խմբերից և ոչ մեկը բաց չթողեց զինվորականությանն աջակցող որևէ գովազդ:<sup>9</sup> Իշխանության նկատմամբ զինվորականության ունեցած հավակնություններին հատկապես վնասակար հարված հասցվեց այն ժամանակ, երբ սովորաբար պահպանողական «Գյուղական ասոցիացիայի» նախագահը հեռուստատեսությամբ ելույթ ունեցավ ու բավական արհամարհական կերպով մերժեց այն միտքը, որ Ուրուգվային անհրաժեշտ է զինվորականության կողմից մշակված սահմանադրության նախագիծ: Քաղաքացիական կամ քաղաքական հասարակության մեջ առանց ներքին վտանգի, առանց նշանակալից հզոր դաշինքների առկայության ու պարտություն կրելով համաժողովրդական հարցման ժամանակ, որի արդյունքներն ասել էին, որ կհարգեն, քաղաքական գործիչների հետ համաձայնության գալու զինվորականություն-ինստիտուտի ուժն զգալիորեն պակասել էր: Ինչպես Հունաս-

9. Հարցումների և ո՛չ պաշտպանական, ո՛չ հարձակողական նախագիծ զինվորականության չունենալու մասին, տե՛ս Ալֆրեդ Ստեփան, «Պետական իշխանությունը և քաղաքացիական հասարակությունը Լատինական Ամերիկայի Հարավային Կոնի երկրներում» (Alfred Stepan, "State Power and Civil Society in the Southern Cone of Latin America", Պիտեր Էվանսի, Դիտրիխ Ռուեշեմեյերի և Թեդա Սկոպոլի խմբ.՝ «Նեո վերադարձնելով պետությունը» (Peter Evans, Dietrich Rueschemeyer, and Theda Skocpol, eds., *Bringing the State Back In* (New York: Cambridge University Press, 1985), 325-31):

տանում, այնպես էլ Ուրուզվայում քաղաքացիական քաղաքական գործիչները հրաժարվեցին իշխանության պատասխանատվությունը ստանձնելու շուրջ բանակցությունները շարունակել, քանի դեռ զինվորականությունը չէր մեղմացրել իր պահանջները:<sup>10</sup>

Սա չի նշանակում, որ զինվորականություն-կազմակերպությունն ի վիճակի չէրավ դրա դիմաց ինչ-որ փոխհատուցում ստանալ: Այն փաստը, որ աստիճանակարգայնորեն ղեկավարվող զինվորականությունը պահեց իշխանությունը մինչև առաջին ընտրությունների վերջը, նշանակում է, որ զինվորականությունն ի վիճակի էր բանակցելու իշխանության փոխանցման շուրջ այնպես, որ անցումը սահմանափակվեր: Առավել կարևոր սահմանափակումը, որի շուրջ համաձայնություն ձեռք բերվեց կուսակցության ու զինվորականության միջև «Ռազմածովային ակումբի» դաշինքով, այն էր, որ ընտրությունները կարող են անցկացվել միայն այն պայմանով, որ երկու գլխավոր կուսակցություններից մեկի խարիզմատիկ առաջնորդը՝ բլանկիստական Վիլսոն Ֆերեյրան, չառաջադրվի որպես նախագահական թեկնածու: Ֆերեյրան ավելի շատ անհատական ձայներ էր ստացել, քան որևէ այլ թեկնածու 1971թ. ընտրությունների ժամանակ, որոնք վերջին ընտրություններն էին զինվորական հեղաշրջումից առաջ: Ուրուզվայի ընտրական համակարգի առանձնահատկությունների պատճառով նա չչափեց նախագահական ընտրությունը 1971թ.: Ֆերեյրան կլիներ առաջատար մրցակից, որը կհաղթեր, եթե զինվորականությունը նրա առաջադրման վրա արգելք չդներ: Առաջին հետզինվորական ընտրություններն, այսպիսով, որոշ հիմնական ընտրողների համար իրենց փայլը կորցրեցին: Սակայն այն փաստը, որ բլանկիստական կուսակցությունն առաջադրեց այլ թեկնածուների, և ձախակողմյան կոալիցիան («Լայն ճակատ»՝ "Frente Amplio") համաձայնեց մասնակցել ընտրություններին, մեղմացրեց ընտրությունների ոչ լեգիտիմությունը: Զինվորականությունը կարողացավ նաև երաշխիքներ կորզել Ազգային անվտանգության խորհրդի և իր իսկ ինքնավարության համար: Այդուհանդերձ, կուսակցությունների համաձայնությունն ձեռք բերելու գործությունը բավականաչափ մեծ էր, ուստի զինվորականությունը համաձայնեց, որ այդ արտոնությունների ժամկետը կսպառվի ժողովրդավարական իշխանության առաջին տարվա վերջին:

Զինվորականության կողմից կիրառված և ընտրված կառավարության ինքնիշխանությանը քաղաքականապես ամենամեծ վնասը պատճառած կրճատումը տեղի ունեցավ 1986 թվականի դեկտեմբերին: Թեև սա հաստատող գրավոր փաստաթղթեր չկան, բայց գոյություն ունի մի ընդունված կարծիք՝ ըստ «Ռազմածովային ակումբի» դաշինքի ոչ պաշտոնական մեկնաբանության, որ բանակցությունները վարող որոշ կարևոր քաղաքական կուսակցական ու զինվորական անձինք եկել են լուր համաձայնության, որ զինվորական իշխանությունից անմիջապես առաջ և ընթացքում կատարված մարդու իրավունքների խախտումների համար զինվորական սպաների դատավարություններ չեն անցկացվի: 1986թ. դեկտեմբերին որոշ զինվորական սպաներ ստացել էին դատարան ներկայանա-

10. «Պարզ» հյուրանոցում նախնական բանակցությունների ժամանակ բախվելով անզիջում զինվորականության պահանջներին՝ քաղաքացիական բանագնացները դուրս եկան ու վերադարձան միայն ավելի բարեհաջող «Ռազմա-ժովային ակումբի» դաշինքի քննարկումների ժամանակ, երբ զինվորականությունը մեղմացրել էր իր պահանջները: Այդ բանակցությունների ավելի մանրամասն վերլուծությունը տե՛ս Գլուխ 6-8, Ջիլեսպի, «Բանակցություններ ժողովրդավարության շուրջ» (Gillespie, *Negotiating Democracy*):

լու ծանուցագրեր: Ուրբաթ օրը պաշտպանության նախարարը սպաներին կարգադրել էր հաջորդ երկուշաբթի դատարան չներկայանալ: Քառասունութ ժամ ուրուզվայցի քաղաքական գործիչները փորձում էին գլուխ հանել լեգիտիմությունը հարվածի տակ դնող երկրնորանքից: Եթե նրանք պնդեին, որ սպաները պետք է ներկայանան դատարան, ապա կստանային զինվորականության մերժումն ու հետևաբար՝ կկանգնեին իրենց իսկ իշխանության ճգնաժամի առջև: Ուրպես այլընտրանք՝ նրանք կարող էին անհապաղ ընդունել համաներման մասին օրենք և խուսափել անմիջական ճգնաժամից ժողովրդավարական ինստիտուտների հեղինակության կորստի գնով:<sup>11</sup> Բազմաթիվ տառապագին քննարկումներից հետո նրանք ընտրեցին վերջին գործելակերպը՝ համատարած սարսափի մատնելով բնակչության մեծամասնությանը: Ի վերջո հավաքվեց բավարար քանակով ստորագրություն (ընտրագանգվածի 25%-ը) համաներման մասին հանրաքվե պարտադրելու համար: 1989թ. ապրիլյան հանրաքվեի արդյունքում քվեարկողների 57%-ը համաձայնեց համաներումը թողնել ուժի մեջ: Սակայն հասարակական կարծիքի հարցումները ցույց տվեցին, որ ընտրագանգվածի նշանակալի հատվածներ քվեարկել էին համաներումը ուժի մեջ թողնելու օգտին ավելի շուտ ճգնաժամից խուսափելու, քան թե այն արդարացի համարելու պատճառով:<sup>12</sup> Նրանք, իսկապես, գրեթե ճիշտ էին եղել՝ կարծելով, որ տեղի կունենար զինվորականության ճգնաժամ: Զինվորականություն-ինստիտուտի հեռացման շուրջ բանակցությունների գործում ամենակարևոր ու կառուցողական դերը խաղացած ուրուզվայցի գեներալ Ուգո Մեդինան 1991թ. տված հարցազրույցներից մեկում այն հարցին, թե ինչ կպատահեր, եթե քաղաքացիները քվեարկեին զինվորականության դեմ դատավարությունների օգտին, արել է հետևյալ միանշանակ հայտարարությունը. «Եթե ես չստանձնեմ հեղաշրջման պատասխանատվությունը, ապա այն կստանձնի աստիճանակարգում հաջորդ սպան, եթե ոչ նա, ապա՝ հաջորդը: Սա այդպես է, որովհետև դա զինված ուժերի տրամաբանությունն է»:<sup>13</sup> Չնայած այս սահմոկեցուցիչ հայտարարությանը՝ քաղաքացիների քվեարկելուց հետո դա թերևս կուսակցություն ու զինվորականություն օրակարգին վերաբերող բանավեճի վերջին գլխավոր կետն էր: 1989թ. դեկտեմբերին անցկացվեցին ազատ ընտրություններ, որտեղ բոլոր թեկնածուներին թույլ էր տրված մասնակցել, և, ի դեպ, ձախ կռալիցիան՝ «Ֆրենտե ամպլիոն», հաղթեց Ուրուզվայի բնակչության գրեթե կեսը ներկայացնող Մոնտևիդեոյի քաղաքապետի ընտրություններում:

11. Երկրնորանքի այս գնահատականը ներկայացվել էր Ստեփանի կողմից անցկացված մի հարցազրույցի ժամանակ անմիջապես այն ժամանակվա նախագահ Սանգվինետիի ու սենատոր Խորխե Բաթթլիի հետ Մոնտևիդեոյի դեպքից հետո՝ 1987թ. փետրվարի 3-ին: *Sté u sus* Խուլիո Մարիա Սանգվինետի (Julio Maria Sanguinetti), *"El temor y la impaciencia: Ensayo sobre la transiciónjudeniocrilitica en America Lemuel"* (Buenos Aires: Fondo de CulturaEconómica, 1991), էջ 63-68:

12. Օրինակ, 1989թ. մարտին "Equipos"-ի անցկացրած հարցման ժամանակ հարցվողների միայն 27%-ն էր կարծում, որ զինվորականությունը կհարգի այդ որոշումը: Համաներումը ուժի մեջ թողնելու օգտին ժողովրդի քվեարկելու համար առավել հաճախ բերված պատճառը ժողովրդավարության կայացումն էր: Պաշտպանվող օրենքի պաշտոնական վերնագիրն էր "Ley de Caducidad de la Pretension Punitiva del Estado" («Պետության պատժելու պահանջը չեղյալ հայտարարելու մասին» օրենք):

13. Գեներալ Ուգո Մեդինայի հետ առաջին խոշոր տպագիր հարցազրույցը երևաց *"Búsqueda"-ում* (մարտի 7, 1991թ.), էջ 32-37: Այս մեջբերումը էջ 37-ից է: Այսպես կոչված «Անպատժելիության օրենքի» վերաբերյալ հանրաքվեի շուրջ բանավեճերի մասին մանրամասն տե՛ս Լուրենս Վեշլեր, «Մի հրաշք, մի տիեզերք. հաշիվները մաքրել տանջարարների հետ» (Lawrence Weschler, *A Miracle, a Universe: Settling Accounts with Torturers* (New York: Random House, 1990), 173-236):

Հանրաքվեի և 1989թ. դեկտեմբերի ընտրությունների իրականացմամբ Ուրուգվայը բավարարեց ավարտված անցում համարելու համար մեր սահմանած բոլոր պահանջները:<sup>14</sup> Սակայն [իշխանության] «փոխանցման գինը», որը բարձրաստիճան գինվորականությունը կորզեց նոր ժողովրդավարությունից, թեև ցածր էր բրազիլական կամ չիլիական ստանդարտներով, բայց իրական էր և՛ քաղաքականության ինքնուրույնության, և՛ քաղաքական լեգիտիմության առումով:

Չնայած այն ճնշմանը, որ բարձրաստիճան գինվորականությունը կարողացավ գործադրել անցման գործում, կարծում ենք, որ Ուրուգվայը դարձել էր կայացած ժողովրդավարություն արդեն 1992թ., մի դատողություն, որը կարող է հակասական լինել: Եկեք նախ քննենք կայացման վարքագծային հարթությունը: 1968-73թթ. դեպի սպստամբություն տանող ժամանակահատվածում Ուրուգվայի տուպամարոսները (Tupamaros) Լատինական Ամերիկայի ամենալավ կազմակերպված քաղաքային պարտիզանական ուժերն էին: Գոնսալեսն ասում է, որ իշխող քաղաքական կուսակցության կոլորադոսների տիրապետող խմբակցությունը ղեկավարվում էր մի նախագահի կողմից, որն օգտագործեց պարտիզանական սպառնալիքը՝ «ստեղծելու... մի տեսակ պաշարման վիճակ, որը նա օգտագործեց խորհրդարանի ծրագրերը խափանելու համար»: Գոնսալեսն ավելացնում է, որ 1968թ. հետո «արդեն կիսահավատարիմ ձախերը կառավարության ու խոշոր կուսակցությունների առաջնորդների մեծ մասի կողմից բացահայտ կերպով դրդվեցին ակնհայտ անհավատարմության, բացի նշանակալի բացառություն կազմող բլանկիստական մեծամասնությունից: Բացի այդ, արդեն 1971թ. հավատարմության մասին մտածելն անգամ անհնար էր. կառավարությունն ինքը չէր ենթարկվում գոյություն ունեցող կանոններին»:<sup>15</sup> Եվ, իսկապես, դեռևս 1973թ. հուլիսյան հեղաշրջումից շատ առաջ գինվորականությունը միակողմանիորեն ստանձնեց պարտիզանների դեմ կեղտոտ պատերազմի վերահսկողությունը և, ինչպես Ջիլեսպի ճիշտ գրում է, «ողբերգականն այն էր, որ գինվորականության միջամտության առավել կարևոր կատալիզատորը բոլոր կողմերից գեներալների նկատմամբ ցուցաբերվող շողոքորթություններն էին քաղաքական գործիչների կողմից»:<sup>16</sup> Ըստ էության, 1968-73թթ. Ուրուգվայը հանդիսանում էր մի համակարգ, որտեղ ազգային տեսանկյունից առավել կարևոր քաղաքական գործիչներն «անհավատարիմ» կամ լավագույն դեպքում «կիսահավատարիմ» էին ժողովրդավարական վարչակարգի հանդեպ:<sup>17</sup>

14. Այս ընտրությունների մասին տե՛ս Գարինա Պերելլի և Խուան Ռիալ (Carina Perelli and Juan Rial), "El fin de la restauración: La elección del 26 de noviembre de 1989", "Cuadernos de orientación electoral", no. 10, (Montevideo: Peitho, April 1990): *Տե՛ս նաև* մի գերազանց աշխատություն Ալեխանդրա Բարաոնա դե Բրիտոյի՝ «Ճշմարտություն կամ համաներում. մարդու իրավունքները և ժողովրդավարացումը Լատինական Ամերիկայում. Ուրուգվայ և Չիլի» (Alexandra Barahona de Brito, "Truth or Amnesty: Human Rights and Democratization in Latin America: Uruguay and Chile" (Ph.D. diss., St. Antony's College, University of Oxford, 1993)):

15. Մեջբերումները՝ Գոնսալես, «Քաղաքական կառույցները և ժողովրդավարությունն Ուրուգվայում» (Gonzalez, *Political Structures and Democracy in Uruguay*, 42, 41):

16. Ջիլեսպի, «Բանակցություններ ժողովրդավարության շուրջ» (Gillespie, *Negotiating Democracy*, 44):

17. Ժողովրդավարության անկման վերլուծության համար «կիսահավատարմություն» և «անհավատարմություն» կատեգորիաների կարևորության մասին տե՛ս Խուան Լինզ, «Ժողովրդավարական վարչակարգերի անկումը. ճգնաժամ, անկում և վերահավասարակշռում» (Juan J. Linz, *The Breakdown*

Քաղաքական դասերը կարող են նպաստել ժողովրդավարության կայացմանը: Նախ և առաջ քաղաքացիները կարող են դաս քաղել նախորդ անկումներից ու փոխել խորհրդարանի կազմն իրենց քվեարկությամբ: Ուրուգվայում 1968-73թթ. անկման հետ ավելի մեծ կապ ունեցող բոլոր խոշոր աջ կամ ձախ քաղաքական կուսակցությունների խմբակցություններն ընտրազանգվածի կողմից «պատժվել են»: Երկու ավանդական կուսակցություններն էլ ունեցել են ծայրահեղական աջ խմբակցություններ, որոնք 1968-73թթ. եղել են հստակորեն անհավատարիմ կամ կիսահավատարիմ: Աջ «Կոլորադո» կուսակցությունը, որն անհավատարմություն էր դրսևորել նախքան անկումը, ստացավ ձայների 56%-ը՝ 1971թ., 31%-ը՝ 1982թ. կուսակցության ներքին ընտրությունների ժամանակ, և 24%-ը՝ 1984թ., և անգամ ավելի վառ արտահայտված միտում դրսևորվեց բլանկոների կուսակցության դեպքում, երբ ավտորիտար վարքագիծը սատարող խմբակցությունն ստացավ ձայների 34%-ը՝ 1971թ., 26%-ը՝ 1982թ. և միայն 3%-ը՝ 1984թ.: Եվ վերջապես, ձախ ու աջ կուսակցությունների՝ «Ֆրենտե ամպլիո» կռալիցիայում 1984թ. ընտրություններում հաղթածները ամեն մի կուսակցության կենտրոնամետ ուժերն էին (վտանգավոր «կենտրոնախույս բևեռացման» Սարտորիի մոդելի հակառակը): Ինչպես ամփոփում է Գոնսալեսը, «դեպի կենտրոն տեղաշարժման գործընթացը... թուլացրեց քաղաքական սպեկտրի հակահամակարգային ուժերին»:<sup>18</sup>

Ժողովրդավարության կայացման համար կարևոր է կուսակցությունների՝ ժողովրդավարությանը հավատարիմ վարքագիծը, սակայն նույնքան կարևոր է նաև այն, որ բոլոր խոշոր քաղաքական կուսակցություններն ընկալեն, որ մյուս խոշոր կուսակցությունները հավատարիմ են գործընթացին: Եթե բոլոր խոշոր կուսակցությունները միմյանց ընկալեն որպես հավատարիմների, դա կնվազեցնի պարտության գինը (որովհետև պարտվողները կունենան ընտրությունները վիճարկելու մեկ այլ հնարավորություն, և փոքրամասնության իրավունքները կհարգվեն) և կմեծացնի ժողովրդավարական գործընթացից «միջժամանակային» հեռացման արժեքը (շնորհիվ այն ընկալման, որ ժողովրդավարությունը քաղաքական խաղերից ամենակարևորն է):<sup>19</sup> Ջիլեսպիի՝ հարցման համար

*of Democratic Regimes: Crisis, Breakdown and Reequilibration* (Baltimore: Johns Hopkins University Press, 1978), 28-45):

18. Բոլոր ընտրական տոկոսներն ու մեջբերումները՝ Գոնսալես, «Քաղաքական կառույցներն ու ժողովրդավարությունն Ուրուգվայում» (Gonzalez, *Political Structures and Democracy in Uruguay*, 70-71): *Sté u նաև* Խուան Ռիալ, «1984թ. ընտրություններն Ուրուգվայում. կենտրոնի հաղթանակը» (Juan Rial, *"The Uruguayan Election of 1984: A Triumph of the Center"*), Դրեյք և Սիլվա, խմբ.՝ «Ընտրություններ ու ժողովրդավարացում» (Drake and Silva, eds., *Elections and Democratization*, 245-72):

19. Ադամ Պրծնորսկին արտահայտում է մի հավելյալ միտք, երբ խոսում է կայացման համար ժողովրդավարական խաղը խաղալու «միջժամանակային» օգուտները մեծացնելու կարևորության մասին: Հաշվի առնելով այն, որ այս խաղում ի հայտ են գալիս հաղթողներ ու պարտվողներ, Պրծնորսկին հարցնում է. «Ինչո՞ւ նրանք, ովքեր տուժել են ժողովրդավարական փոխազդեցության արդյունքում, չեն ձգտում տապալել այն համակարգը, որը բերում է նման արդյունքների»: Նա շարունակում է հիմնավորել, որ պարտվողները «հաշտվում են ներկա պարտությունների հետ, որովհետև նրանք հավատում են, որ ժողովրդավարական մրցակցություն կազմակերպող ինստիտուցիոնալ շրջանակն իրենց թույլ կտա առաջ տանելու իրենց շահերն ապագայում»: *Sté u* Պրծնորսկի, «Ժողովրդավարությունը և շուկան. քաղաքական և տնտեսական բարեփոխումները Արևելյան Եվրոպայում և Լատինական Ամերիկայում» (Przeworski, *Democracy and the Market: Political and Economic Reforms in Eastern Europe and Latin America* (New York: Cambridge University Press, 1991), esp. 18-19):

կազմած հարցերից մեկն ուղղված էր իրենց կուսակցական հակառակորդների հավատարմության, կիսահավատարմության ու անհավատարմության մասին քաղաքական խմբակցությունների ընկալումները պարզելուն: Տասը կետից բաղկացած սանդղակով, որտեղ չորսից մինչև վեցը կիսահավատարիմներն էին, իսկ յոթից բարձր՝ անհավատարիմները, 1985թ. երեք առաջատար կուսակցությունների տասներկու խոշոր խմբակցություններից և ոչ մեկն իր ախոյանների կողմից չէր համարվել որպես անհավատարիմ: Ի տարբերություն դրան՝ կիրառելով նույն ընթացակարգը՝ ինը խոշոր խմբակցություններից չորսը 1968-73թթ. ժամանակահատվածում հետահայաց կերպով համարվել են որպես անհավատարիմ առնվազն մեկ ընդդիմադիր կուսակցության կողմից:<sup>20</sup>

Վարքագծային առումով քաղաքական կայացման մեկ այլ վճռորոշ ապացույց է այն, թե արդյոք այն կուսակցություններին, որոնց անցյալում վերաբերվել են որպես անընդունելի իշխանություն կրողների, սկսե՞լ են համարել «ընդունելի», թե՞ ոչ: 1971թ. կոլորադոսների ու բլանկոսների նշանավոր խմբերը ձախ կռալիցիան («Ֆրենտե ամալիո») համարել են անընդունելի: Սակայն 1985թ. «Ռազմածովային ակումբի» դաշինքին «Ֆրենտե Ամալիո»-ի կարևոր մասնակցությունից ի վեր դրա անդամները գնալով ավելի շատ են դիտվել որպես ժողովրդավարական համակարգի նորմալ և ընդունված մասնակիցներ: 1989թ. «Ֆրենտե ամալիո» կռալիցիայից մի սոցիալիստ՝ Տաբարե Վասկեսը, ընտրվեց Մոնտևիդեոյի քաղաքապետ: Պաշտոնը վարելու կամ ստանձնելու նրա իրավունքի մասին լուրջ վեճեր չեն եղել: Նրա՝ որպես Մոնտևիդեոյի քաղաքագլխի վարքագիծը համարվել է արդարացի: Իսկապես, 1990թ.՝ այն ժամանակ, երբ Մոնտևիդեոյի՝ հարցման ենթարկված բնակիչների միայն 22%-ն էր հավատում, որ ավանդական «Բլանկո» կուսակցության անդամ նախագահ Լակայեն հաշվի է առնում բոլոր ընտրողների կարիքներն ու պահանջները, Մոնտևիդեոյի՝ հարցման ենթարկված բնակիչների 63%-ը հավատում էր, որ Վասկեսը դրանք հաշվի է առնում: Եվ որ ավելի կարևոր է՝ նախագահ Լակայեին ձայն տվողները 17% կետով Վասկեսին համարում էին ավելի ուշադիր բոլոր ընտրողների կարիքների ու հարցերի նկատմամբ, քան ինքը՝ Լակայեն:<sup>21</sup> Արդեն 1992թ. կետերին վերլուծաբանների մեծ մասն սկսում էր Տաբարե Վասկեսին տեսնել որպես գլխավոր մարտահրավեր նետողի, ում նախկին նախագահ Խորխե Սանգինետտին և իր բլանկիստական ախոյանները պետք է ստիպված լինեն դիմակայել 1994թ. նախագահական ընտրությունների ժամանակ: Հեղինակներից մեկի հետ մի հարցազրույցի ժամանակ Վասկեսն ասել է. «Ես բացարձակապես վստահ եմ, որ ով էլ որ հաղթի 1994թ. ընտրություններում, կստանձնի կառավարությունը: Մեր զինվորականությունը հակաժողովրդավարական չէ»:<sup>22</sup> Ջուստ

20. Սա հաշվարկված է Այլուսակներ 3.6 և 10.5-ից՝ Ջիլեսպի, «Բանակցություն ժողովրդավարության շուրջ» (Gillespie, *Negotiating Democracy*):

21. Հարցումներն անցկացվել են՝ "Equipos Consultores Asociados"-ի կողմից 1990թ. հունիսին:

22. Հարցազրույց Ալֆրեդ Սոեփանի հետ, Մոնտևիդեո, 25 մարտի, 1992թ.: Վասկեսը շարունակեց՝ ավելացնելով, որ քաղաքապետի պաշտոնն ստանձնելուց հետո նա քաղաքավարության այցեր կատարեց Մոնտևիդեոյում զինված ուժերի զարնիզոնների բոլոր հրամանատարներին: Այդ ժամանակվանից ի վեր նա դիպլոմատներ է շնորհել Ռազմա-ծովային ակադեմիայի և Ոստիկանական ակադեմիայի ավարտական միջոցառումների ժամանակ ու ներկա է գտնվել Օդային ուժերի ավարտական հանդեսին: Նա ասաց, որ կցանկանար ներկա գտնվել բանակայինների ավարտական հանդեսին, սակայն առ այսօր հրավեր չի ստացել: Երբ Սոեփանը հարցրեց Ուրուզվայի բարձրաստիճան գեներալներից մեկին, թե ինչ կանի բանակը, եթե Վասկեսը հաղթի ընտրություններում, նա ասաց, որ բանակը կլինի «կոռեկտ,



այն փաստը, որ Վասկետը համարվել է Ուրուգվայի հավանական նախագահ, մեծացրել է կոալիցիայի իր դաշնակիցների վարքագիծը չափավորելու նրա ուժը: 1992թ. «Ֆրենտե ամալիոն» ընդունված համարվեց Ուրուգվայի ժողովրդավարական քաղաքական համակարգի մեջ բոլոր նշանավոր կուսակցությունների կողմից: Իսկապես, Տաբարե Վասկետը գրեթե ընտրվեց նախագահ 1994թ. նոյեմբերյան ընտրությունների ժամանակ, որտեղ նա ստացավ ավելի շատ ձայն, քան առանձին վերցրած որևէ այլ թեկնածու: Նա շշափեց նախագահական պայքարը, որովհետև Ուրուգվայի ընտրական համակարգում գումարվում են կուսակցության ընդհանուր ձայները: Ձայների գրեթե եռակողմ բաժանման մեջ նրա կոալիցիան՝ "Encuentro Progresista" ("EP"), գրավեց երրորդ տեղը՝ 36005 ձայնով կոլորադոսներից և 13206 ձայնով բլանկիստականներից հետո: Սակայն ամբողջ նախընտրական ու հետընտրական խոսակցություններում այն մասին, որ Ուրուգվայը կառավարելի դարձնելու համար հարկավոր է համագործակցություն, «Ֆրենտե ամալիոն»-ի անդամները համարվում էին քաղաքական համակարգի լեգիտիմ մասնակիցներ: Սենատոր Դանիելո Աստորին, այն խմբի առաջնորդը, որը "EP"-ում բոլորից շատ ձայն շահեց, հատկապես ակտիվ դեր խաղաց կառավարելիության մասին քննարկումներում 1994թ. ընտրություններից հետո:<sup>23</sup>

Ի՞նչ կարելի է ասել զինվորականության մասին: 1989թ. զինվորականությանը չմեղադրելու մասին Կոնգրեսի որոշման վերաբերյալ հանրաքվեից հետո զինվորականությունը բացահայտ կամ թաքուն սպառնալիքներ կամ պահանջներ չներկայացրեց ժողովրդավարական քաղաքական համակարգին: Արտոնությունների առումով այն գրեթե վերադարձավ քաղաքացիական-զինվորական հարաբերությունների մինչավտորիտար վարչակարգի մոդելին: 1990թ. այն, անշուշտ, ուներ ավելի քիչ արտոնություններ, քան զինվորականությունն ուներ Չիլիում, Արգենտինայում կամ Բրազիլիայում:<sup>24</sup> Պատճառներից մեկը, թե ինչու զինվորականությունն այնքան էլ հզոր չէր Ուրուգվայի քաղաքական ասպարեզում ազատ ընտրություններից հետո, այն է, որ այն փաստորեն չուներ ոչ մի դաշնակից: Հարցման ենթարկված գործարար վերնախավերը, քաղաքական գործիչներն ու զանգվածային հասարակայնությունը մերժում էին զինվորականության ներգրավվածությունը քաղաքականության մեջ: Օրինակ, «Եթե 1973թ. նման հանգամանքներ

---

սակայն՝ ոչ ավելի»: Քաղաքական տարածքի նորարարական վերլուծություն և այն, թե ինչպես Թաբարե Վասկեսի դիսկուրսը նրան հնարավորություն տվեց հանդես գալու որպես նոր ժողովրդավարական առաջնորդ Ուրուգվայում, *տե՛ս* Կարինա Պերելլի, "Un líder transgresor: Tabaré Vnsquez o la intendencia como espacio político", Կարինա Պերելլիի, Ֆերնանդո Ֆիգուերայի և Սիլվանա Ռուբինոյի խմբ.՝ "Gobierno y política en Montevideo: La intendencia municipal de Montevideo y la formación de un nuevo liderazgo a comienzos de los años 90" (Montevideo: Peitho, 1991), էջ 109-51:

23. 1994թ. ընտրությունների վերջնական արդյունքները, *տե՛ս* «Ուրուգվայ. Սանզվինետտին ձգտում է շրջանային համաձայնության» ("Uruguay; Sanguinetti Seeks All-round Accords"), «Լատինաամերիկյան տարածաշրջանային զեկույցներ՝ Հարավային Կոնի մասին զեկույցներ» ("Latin American Regional Reports: Southern Cone Report (Feb. 9, 1995): 7): Սենատում կոլորադոսները ստացան տասնմեկ տեղ, բլանկոսները՝ տասը, "Frente Amplio"-ն՝ ինը և "Nuevo Espacio"-ն՝ մեկ: Պատգամավորների պալատում կոլորադոսները/Colorados շահեցին երեսուներկու տեղ, բլանկիստականները/Blancos՝ երեսունմեկ, "Frente Amplio"-ն՝ երեսունմեկ և "Nuevo Espacio"-ն՝ հինգ:

24. Ուրուգվայում, Չիլիում, Արգենտինայում և Բրազիլիայում զինվորականության արտոնությունների վավերագրման ու վերլուծության մասին *տե՛ս* Ստեֆան, «Ձինվորական քաղաքականության վերախմբավորում» (Stepan, *Rethinking Military Politics*, 93-125, esp. 116-18):

առաջանան Ուրուզվայում, կարծում եմ՝ լա՞վ կլինի, որ զինվորականությունն ստանձնի իշխանությունը» հարցին կառավարիչների ու մասնագիտական անձնակազմի 92%-ը պատասխանել է «ոչ»: Նաև ժողովրդավարությունից անխուսափելի "desencanto"-ն (հիասթափությունը) չի նպաստել ոչ ժողովրդավարական անցյալի նկատմամբ որևէ կարոտախտի առաջացմանը: Ուրուզվայն, ըստ էության, կառավարվել է հինգ ավտորիտար նախագահների կողմից 1968-85թթ., իսկ հետո՝ ժողովրդավարորեն ընտրված Սանգինետտիի կողմից: 1988թ. դեկտեմբերի հարցմանը պատասխանողներին խնդրվել է գնահատել, թե որ նախագահի օրոք է երկիրը եղել ավելի բարեկեցիկ ըստ յոթ տարբեր կատեգորիաների: Յուրաքանչյուր առանձին կատեգորիայում ամենաբարձր գնահատականներն ստացել է ժողովրդավար նախագահ Խորխե Սանգինետտին:<sup>25</sup> 1985թ. օգոստոսին ինը ինստիտուտներից, որոնք գնահատվել էին ըստ վստահության, ամենաբարձր գնահատականի արժանացել էին քաղաքական կուսակցությունները՝ 57 ձայնով ավելի, իսկ զինված ուժերը ստացել էին ամենացածր գնահատականը՝ 73 ձայնով պակաս: Միայն բնակչության 5%-ն է զինված ուժերին վերաբերվել «համակրանքով», իսկ 7%-ը՝ «չեզոք», ի տարբերություն այն 78%-ի, ովքեր զինվորականությանը վերաբերվել են «հակակրանքով»:<sup>26</sup> Մեր տասներեք երկիր ընդգրկող ընտրանքից ոչ մի երկրում, թերևս բացառությամբ միայն Հունաստանի, ժողովրդավարությունը չի սկսվել զինվորականության քաղաքական դերի նման ամբողջական մերժմամբ:

Այնպիսի մի համատեքստում, որտեղ չկան դիտարկելի թշնամիներ (ժողովրդավարական իշխանության առաջին յոթ տարիների ընթացքում ձախերի հետ կապված եղել է բռնության միայն մեկ լուրջ դեպք), քաղաքական կուսակցությունների շրջանում անհավատարիմ ընդդիմության փաստացի վերացման ու որպես քաղաքական դաշնակից զինվորականության համաժողովրդական մերժման պայմաններում չափազանց դիսկային կլիներ զինվորականություն-ինստիտուտի համար փորձել ստանձնել իշխանությունը կամ խանգարել «Ֆրենտե ամալիո»-ի 1994թ. նախագահական ընտրություններում հնարավոր հաղթանակ տարած թեկնածուի երդմնակալությանը: 1992թ. Ստեփանը հարց է տվել գործող զինվորական ծառայության մեջ գտնվող մի առաջնակարգ գեներալի, թե քաղաքական առումով ինչ կպատահեր Ուրուզվայում, եթե Տաբարե Վասկեսը նախագահ ընտրվեր 1994թ.: Գեներալի պատասխանը նշանակում էր, որ ինքը նույնպես ընդունում է, որ համակարգն արդեն կայացած ժողովրդավարություն էր: 1994թ. Տաբարե Վասկեսի հաղթանակի դեպքում գեներալը քաղաքական կարգապահությունն ապահովելու խնդիրը համարում էր ոչ թե մի բան, որը կառաջանար զինվորական գործողությունից, այլ հակառակը՝ քաղաքականության նորմալ գործելուց: Նա այդ նպատակով սիրով մեջբերեց ուրուզվայցի մի ավագ քաղաքական գործչի դիտողությունն այն մասին, որ «Ֆրենտե ամալիո»-ն, ինչպես բոլոր մյուս կուսակցությունները, կարիք կունենա կուսակցությունների հետ համաձայնությունների ձեռքբերման՝ արդյունավետ կերպով կառավարելու համար: Ուրուզվայում նախագահական պաշտոնն, ըստ էության, իշխանություն չէ: Իշ-

25. "Equipos", 1988թ. դեկտեմբերի հանրահարցում:

26. "Equipos", 1985թ. օգոստոսի հանրահարցում:

խանութային համար անհրաժեշտ են համաձայնություններ, իսկ համաձայնությունները կախված են ընդունելի վարքագծից»:<sup>27</sup>

1992թ. մարտին Ուրուգվայ կատարած մեր բազմաթիվ այցերից մեկից հետո եկանք այն եզրակացության, որ Ուրուգվայը կայացել է (որպես ժողովրդավարություն): Դրանից անմիջապես հետո նախկին նախագահ Սանգինետտիի կողմից ժամանակ առ ժամանակ օգտագործվող մի գրասենյակ ուժակոծման էր ենթարկվել մի խմբի կողմից, որը հավանում էր, որ իր կազմում կան թռչակի գնացած միջին օդակի սպաներ, որոնց օգնում են գործող զինվորական ծառայության մեջ գտնվող ուրիշ սպաներ: Բնականաբար, մենք մտածեցինք այն մասին, թե արդյո՞ք մեր դատողությունը դարձյալ ճիշտ է: Մենք որոշեցինք, որ ուժակոծման իմաստը գնահատելու լավագույն եղանակը քաղաքական արձագանքները քննելն է: Բոլոր դեպքերում Իսպանիայում կանոնավորապես տեղի են ունենում ահաբեկչական ուժակոծություններ, սակայն Իսպանիան կայացած է, որովհետև 1981թ. հետո չի եղել որևէ լուրջ համապետական նշանակության կիսահավատարիմ կամ անհավատարիմ վերաբերմունք կուսակցությունների կամ ինստիտուտների կողմից: Ուրուգվայում բոլոր խոշոր քաղաքական խմբերը բացահայտորեն դատապարտեցին ուժակոծությունը: Բարձրաստիճան զինվորականությունը նույնպես դատապարտեց ուժակոծությունն ազդեցիկ արտահայտություններով: Չնայած այդ անհանգստացնող ահաբեկչական արարքին՝ Ուրուգվայի կայացման վարքագծային հարթության վերաբերյալ մեր դատողությունը հաստատվեց: Արդեն 1992թ. Ուրուգվայում որևէ խոշոր կուսակցության կամ կազմակերպության կողմից կիսահավատարիմ կամ անհավատարիմ վարքագիծ չէր դրսևորվել:<sup>28</sup>

Ուրուգվայը կայացել է նաև ինստիտուցիոնալ առումով. «Ռեզոլուցիայի ակումբի» դաշնագրով համաձայնեցված ժամկետը լրանալուց հետո՝ ժողովրդավարական խորհրդարանի երդմնակալության օրվանից ճիշտ մեկ տարի անց, ժողովրդավարական կառավարության քաղաքականության ազատության հանդեպ *դե յուրե* խոչընդոտներ չեն եղել: Ժողովրդավարական կառավարության վրա 1985 թվականից մինչև 1989 թվականը եղած *դե ֆակտո* սահմանափակումը, որը բխում էր մարդու իրավունքների խախտումների համար դատվելու զինվորականության հրաժարվելուց, իհարկե, լուրջ խոչընդոտ էր: Սակայն լավ էր, թե վատ, 1989թ. համաներման մասին հանրաքվեի արդյունքներով այս կետն օրակարգից հանվել էր:

Խորհրդարանը վերանայում է զինվորականության բյուջեները, կա պաշտպանության քաղաքացիական (սակայն համեմատաբար թույլ) նախարար, իսկ նախագահն ունի գործողությունների լրիվ ազատություն՝ ընտրելու երեք ծառայությունների գլխավոր հրամանատարին: Անկասկած, Ուրուգվայում դեռևս կան քաղաքացիական-զինվորականական խնդիրներ: Դեռևս լուրջ վերլուծություն չի կատարվել նախագահի, խորհրդարանի կամ պաշտպանության նախարարի կողմից, թե ինչ տեսակի զինված ուժեր է Ուրուգվայն իս-

27. Հարցազրույց, 25 մարտի, 1992թ., Մոնտեիդեո: Ոչ ուղղակի վերագրման համար/Not for direct attribution:

28. Սակայն զինվորականներն ասացին, որ չկա ապացույց առ այն, որ զինվորականությունը ակտիվորեն ներգրավված է եղել: Իհարկե, մեր վերջնական դատողությունը կանենք հետո, մինչև ի վիճակի լինենք որոշելու, թե արդյոք զինվորականությունը լրիվ կհամագործակցի՞՝ հետաքննության հետ և կողմ կլինի՞՝ դատարանի որոշմանը, եթե հանցագործները դատվեն ու մեղավոր ճանաչվեն:

կապես ցանկանում: Մեղինայի հետ հարցազրույցը նաև բացահայտեց դեռևս մտահոգիչ տարբերություն մարդու իրավունքների մասին քաղաքացիական ու զինվորական կարծիքների միջև: Այլ դեպքեր, ինչպես օրինակ՝ խառնաշփոթն ու բախումը 1993թ.՝ առանց կառավարության թույլտվության Ուրուզվայում չիլիացի ռազմական հետախուզության գործակալին ապաստանի տրամադրման շուրջ, մեզ հանգեցնում են այն կարծիքին, որ քաղաքացիական-զինվորական հարաբերությունների որակը Ուրուզվայում 1993-94թթ., իսկապես, դեռևս բարձր չէր:

Այդուհանդերձ, հաշվի առնելով ընդհանուր քաղաքական հավասարակշռությունն Ուրուզվայում՝ զինվորականությունն այլևս սպառնալիք չէ ժողովրդավարության կայացման համար: Այս առումով օգտակար է հիշել, որ քաղաքացիական-զինվորական հարաբերությունների որակն Իսպանիայում դեռևս ցածր էր 1982թ., երբ Ֆելիպե Գոնսալեսն ստանձնեց վարչապետի պաշտոնը: Իսպանիան Ուրուզվայի նման դարձավ կայացած ժողովրդավարություն համեմատաբար վատ քաղաքացիական-զինվորական հարաբերությունների պարագայում: Այդ հարաբերությունների որակի բարելավումը մեկ այլ տասնամյակի գործ էր՝ Նարսիս Սեռոայի խանդավառ ղեկավարությամբ ու ռազմավարությամբ: Իսկ թե Ուրուզվայը կունենա՞ արդյոք համեմատելի ղեկավարություն ու ռազմավարություններ և անհրաժեշտ ֆինանսական հզորություն՝ իրականացնելու նոր ծրագրեր, դեռևս խիստ կասկածելի է: Սակայն Ուրուզվայը 1992թ., ինչպես Իսպանիան 1982թ., անցել էր մի շեմ:

Եվ վերջապես՝ արդյո՞ք ժողովրդավարության *վերաբերմունքային* հիմքը հաստատուն է Ուրուզվայը կայացած համարելու համար: Եթե մենք համեմատենք Ուրուզվայում ժողովրդավարության հանդեպ քաղաքացիների վերաբերմունքը Հարավային Եվրոպայի երեք կայացած ժողովրդավարություններում առկա վերաբերմունքի հետ, կտեսնենք, որ կայացման վերաբերմունքային հարթությունը բոլոր չորս երկրներում նույնանման է (Աղյուսակ 10.1):

Այս տվյալները արձանագրում են Ուրուզվայում ժողովրդավարության նկատմամբ ընդհանուր վերաբերմունքային աջակցության բարձր աստիճան: Սակայն քանի որ մեր վերլուծությունը վերաբերում է ժողովրդավարության *կայացմանը*, մենք պետք է տարանջատենք ու քննենք այդ վերաբերմունքն ավելի մոտիկից: Եթե ձախերից կամ աջերից կամ որոշակի աշխարհագրական տարածքի սահմաններում գործող որևէ էական խումբ վերաբերմունքային առումով մնար ժողովրդավարությանը չաջակցող, դա կայացման համար կլիներ խոչընդոտ: Սակայն Ուրուզվայում, ինչպես ցույց է տալիս Աղյուսակ 10.2-ը, ժողովրդավարական համակարգին ցուցաբերվող աջակցությունը բավական ուժեղ է ամբողջ երկրով ու քաղաքական սպեկտրով մեկ:

Այժմ դառնանք Ուրուզվայի օրինակով առաջադրված վերջին հասկացութենական ու քաղաքական հարցին, կայացած ժողովրդավարության որակի հարցին: Ակնհայտորեն կայացած ժողովրդավարությունների բազմության մեջ կան երեք չափազանց տարբեր տրամաբանական հնարավորություններ՝ (1) որոշ ժողովրդավարություններ կարող են խորացնել ու բարելավել արդարության, մասնակցության ու աջակցության իրենց աստիճանը, (2) ուրիշները կարող են ունենալ լուրջ խնդիրներ (ինչպես օրինակ՝ սոցիալական հակամարտության կամ հասարակության ցածր խավերի դեռևս զգալի առկայություն), որոնք բացասաբար են ազդում ժողովրդավարության որակի վրա, սակայն կարող են

**Աղյուսակ 10.1. Ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունքային աջակցության համեմատությունն Ուրուգվայում և Հարավային Եվրոպայի երեք կայացած ժողովրդավարություններում. Իսպանիա, Պորտուգալիա և Ղուանաստան**

Նախապատվելի քաղաքականության մասին կարծիքը	Պատասխանողների տոկոսը			
	Ուրուգվայ (1991թ.)	Իսպանիա (1985թ.)	Պորտուգալիա (1985թ.)	Ղուանաստան (1985թ.)
«Ժողովրդավարությունը նախապատվելի է կառավարության որևէ այլ ձևից»	73	70	61	87
«Որոշ դեպքերում ոչ ժողովրդավարական կառավարությունը կարող է նախընտրելի լինել ժողովրդավարությունից»	10	10	9	5
«Ինձ նման մարդկանց համար ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական վարչակարգերը նույն բանն են»	8	9	7	8
Պատասխան չկա*	9	11	23	2

Աղբյուրը. Ուրուգվայի տվյալները տրամադրվել են "Equipos, Consultores Asociados"-ի կողմից, Սոնտկիդե: Իսպանիայի, Պորտուգալիայի և Ղուանաստանի տվյալները՝ Լեոնարդո Սորլինո և Խոսե Ռամոն Սոնտերո, «Լեգիտիմությունն ու ժողովրդավարությունը Հարավային Եվրոպայում», "Legitimacy and Democracy in Southern Europe," Ռիչարդ Գյունտերի, Նիկիֆորոս Դիամանդուրոսի և Վանս-Յուրգեն Պուլեի խմբ.՝ «Ժողովրդավարության կայացման քաղաքականությունը. Հարավային Եվրոպայի համեմատական տեսանկյունից», "The Politics of Democratic Consolidation: Southern Europe in Comparative Perspective" (Քալթհորն, Չոսն Նոպկինսի համալսարանի հրատարակչություն, 1995թ.), էջ 236:

\*Չգիտեմ/Պատ. չկա:

չնպաստել դրա անկմանը, և (3) որևէ կայացած ժողովրդավարություն կարող է ունենալ մի շարք խնդիրներ, որոնք այն չի լուծել, կամ կարող է ծագել խնդիրների մի նոր խումբ, որոնք ի վերջո կնպաստեն կիսահավատարիմ կամ անհավատարիմ վարքագծի՝ որակապես ու քանակապես նոր մակարդակի առաջացմանը, որը կհանգեցնի վարչակարգի աճող ապակայունացմանն ու ի վերջո՝ դրա անկմանը: Ժողովրդավարական վարչակարգերի անկման վերաբերյալ 1978թ. քննարկման ժամանակ Լինցը նշել է, որ «վերջին վերլուծությամբ՝ անկումը հետևանք է այնպիսի գործընթացների, որոնք առաջ են եկել կառավարության՝ խնդիրները լուծելու անկարողության պատճառով, և որոնք հաղթահարելու համար անհավատարիմ ընդդիմությունները որպես խնդրի լուծում, առաջարկում են իրենք իրենց»:<sup>29</sup>

Թեև մենք համարում ենք, որ Ուրուգվայը կայացած ժողովրդավարություն է, այնուամենայնիվ, մեր կարծիքով՝ ժողովրդավարությունն Ուրուգվայում ավելի մեծ չափով ունի «ոչսկեբին հակամետ կազմություն», քան Իսպանիայում կամ Պորտուգալիայում:<sup>30</sup> Եթե

29. Լինց և Ստեփան, «Ժողովրդավարական վարչակարգերի անկումը» (Linx and Stepan, *The Breakdown of Democratic Regimes*, 50):

30. Գոնսալեսն Ուրուգվայի վերաբերյալ կիրառում է այս արտահայտությունը՝ «Քաղաքական կառույցներն ու ժողովրդավարությունն Ուրուգվայում» (Gonzalez, *Political Structures and Democracy in Uruguay*, 161): Նրա փաստարկը գտնում ենք համոզիչ, իսկ գաղափարը՝ արժանի միացվելու կայացման մասին ընդհանուր գիտական վերլուծությանը: Ինչպես տեսանք, այն եղանակը, որով հունական ժողովրդավարական քաղաքականությունն իրեն ներքաշել էր բավականյալ քաղաքականության մեջ, այն դարձրել էր ավելի ոչսկեբին հակամետ 1990-ական թվականների կեսերին, քան եղել էր 1980-ականներին կեսերին:

**Աղյուսակ 10.2. Ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունքներն Ուրուզվայում՝ ըստ աշխարհագրական տարածքի և պատասխանողների գաղափարական ինքնորոշման (1991թ. դեկտեմբեր)**

	Պատասխանողների տոկոսն ըստ տարածքի				Պատասխանողների տոկոսն ըստ գաղափարական ինքնորոշման						
	Սոնտե վիդեո (1988թ.)	Սոնտե վիդեո	Միջ-քաղաքային	Ազգ	Զայս	Զայս-կենտրոն	Կենտրոն	Աջ-կենտրոն	Աջ	Զորոշված	
Նախընտրած հասարակարգի մասին կարծիքը											
«Ժողովրդավարությունը նախընտրելի է կառավարության որևէ այլ ձևից»	79	78	69	73	74	81	80	75	69	57	
«Որոշ դեպքերում ոչ ժողովրդավարական կառավարությունը կարող է նախընտրելի լինել ժողովրդավարությունից»	9	10	10	10	11	11	11	10	11	6	
«Ինձ նման մարդկանց համար ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական վարչակարգերը նույն բանն են»	6	6	9	8	8	4	6	11	9	10	
Պատ.չկա*	6	6	12	9	7	4	3	4	11	27	

Աղբյուրը՝ տվյալները՝ «Equipos, Consultores Asociados», Սոնտևիդեո:

\* Զգիտեն/Պատ.չկա:

Ժողովրդավարական քաղաքական համակարգը չի կարողանում լուծել կարևորագույն խնդիրները, ապա կա ռիսկ, որ նշանակալի քաղաքական գործող անձինք՝ գլխավոր գործադիր օղակը, քաղաքական կուսակցությունները, կարծիք մշակողները կամ սոցիալական շարժումները կարող են առաջ քաշել հակահամակարգային այլընտրանքներ: Կիսահավատարիմ ու անհավատարիմ վարքագծի որակն ու քանակը կարող են աճել: Մեր կարծիքով՝ այդ վճռորոշ պահին քննության համար առավել նշանակություն ունեցող ինտելեկտուալ ու քաղաքական կատեգորիաներն ավելի շատ վերաբերում են «Ժողովրդավարության անկման» մասին գրականությանը, քան թե «անցումների» մասին գրականությանը:<sup>31</sup>

1995թ. այս մասին գրելիս Ուրուզվայի քաղաքական համակարգի ռիսկերին հակամետ կազմության երեք գլխավոր տարրերն են՝ արդյունավետության ընկալված ճգնաժամը, հարաճուն ըմբռնումն առ այն, որ արդյունավետության այդ ճգնաժամն ուղղակիորեն կապված է որոշակի ինստիտուցիոնալ կառուցվածքի հետ, որն Ուրուզվայում ժողովրդավարական մրցակցության՝ վաղուց գոյություն ունեցող առանձնահատկությունն է, և մի զինվորականություն, որը թեև չի ընդդիմանում ժողովրդավարությանը, սակայն կազմակերպորեն ու գաղափարապես չի վերակազմավորվել, ինչպես Իսպանիայում, և քաղաքական համակարգի հետ չի միավորվել ավելի ապահով հիմքի վրա: Երբորդ բաղադրիչը կարող է աստիճանաբար ձեռք բերել ավելի մեծ նշանակություն հենց Ուրուզվայի՝

31. Իհարկե, անցումների որոշ տեսակներ կարող են ուղղակիորեն նպաստել ժողովրդավարության ստեղծմանը, որը թեև կայացած է, սակայն ունի այնպիսի գծեր, որոնք այն դարձնում են ռիսկերին հակամետ:

ոիսկերին հակամետ կազմության մյուս երկու տարրերի հետ փոխազդելու իր ներուժի պատճառով, ժողովրդավարության համար վնասակար եղանակներով:

Թեև Ուրուգվայը 1980թ. ունեցել է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մեկ մարդու հաշվով 2820 դոլար եկամուտ (ավելի բարձր, քան Արգենտինայում, Բրազիլիայում կամ Չիլիում), գրագիտության ամենաբարձր մակարդակն (94%) այդ չորս երկրներից ու, հավանաբար, Լատինական Ամերիկայում եկամտի լավագույն բաշխումը, սկսած 1950-ական թվականների կեսերից՝ երկիրը եղել է հարաբերական անկման մեջ:<sup>32</sup> Լավ վավերականացված փաստացի պատկերը վկայում է, որ ժողովրդավարական քաղաքական համակարգերը սովորաբար պատկերացվում են որպես ավելի լեգիտիմ, քան նրանց տնտեսական համակարգերը, լինեն դրանք դեպի շուկան կողմնորոշված, թե ոչ:<sup>33</sup> Նաև քաղաքացիների հավատն առ ժողովրդավարության լեգիտիմությունը կարող է ժամանակավորապես *մեծանալ* այն դեպքում, երբ նրանց հավատն իրենց տնտեսական խնդիրները լուծելու ժողովրդավարության կարողության (արդյունավետության) նկատմամբ *նվազում է*: Իսպանիան 1976-82թթ. ներկայացնում է նման մի օրինակ: Այս տարբերությունը մենք կանվանենք լեգիտիմությունն ընդդեմ արդյունավետության: Իսպանիայում չհաջողված հեղաշրջման այդ վտանգավոր տարում մի կարճ ժամանակ (1981թ.) բնակչության 81%-ը կարծում էր, որ ժողովրդավարությունը լավագույն քաղաքական համակարգն է իրենց երկրի պես երկրի համար, սակայն միայն 43%-ն էր գգում, որ ժողովրդավարությունը հնարավորություն է տալիս լուծելու այն խնդիրները, որոնց նրանք՝ որպես իսպանացիներ, բախվել են: Արդեն 1983թ. Իսպանիայի լեգիտիմության ու արդյունավետության ցուցանիշների միջև այդ 38% տարբերությունը նվազել էր մինչև 24%-ի:<sup>34</sup> Մոնտե-նիդեոյում՝ Ուրուգվայի մայրաքաղաքում, սակայն, լեգիտիմության ու արդյունավետության միջև տարբերությունը 1988թ. 41% էր: 1990թ. այդ տարբերությունն աճել էր մինչև 43%: Ավելին, 1988 թվականի դեկտեմբերին Մոնտե-նիդեոյում հարցման ենթարկվածների միայն 13%-ն էր ասել, որ երկիրն առաջընթաց է ապրում, մինչդեռ 31%-ն ասել է, որ երկիրն անկում է ապրում: Երեք տարի հետո այս թվերն արդեն ավելի էին վատացել՝ համապատասխանաբար 9 և 39%:<sup>35</sup>

Ուրուգվայի արդյունավետության ու լեգիտիմության միջև հենց միայն տևական տարբերությունը կարող է ժողովրդավարությունը դարձնել «ոիսկերին հակամետ»: Սակայն կազմությունը կդառնար անգամ էլ ավելի ոիսկերին հակամետ, եթե Ուրուգվայի ժողովրդավարական ինստիտուտներն իրենք ընկալվեին որպես կուրսի անարդյունավետությանը նպաստող: Ինչպես մենք հիմնավորեցինք Գլուխ 5-ում, տնտեսական խնդիրները հատկապես սրվում են ժողովրդավարական վարչակարգի համար, եթե որպես լուծում

32. Այս համեմատական տվյալների քննարկումը, տե՛ս Գոնսալես, «Քաղաքական կառույցներն ու ժողովրդավարությունն Ուրուգվայում» (Gonzalez, *Political Structures and Democracy in Uruguay*, 2-4):

33. Այս գրականությունը վերլուծվել է՝ Խուան Լինզ, «Ժողովրդավարության լեգիտիմությունն ու սոցիալ-տնտեսական համակարգը» (Juan J. Linz, *Legitimacy of Democracy and the Socioeconomic System*), Մատտեյ Դոգանի խմբ.՝ «Բազմակարծական ժողովրդավարությունների համեմատություն՝ շեշտերը լեգիտիմության վրա» (Mattei Dogan, ed., *Comparing Pluralist Democracies: Strains on Legitimacy* (Boulder, Colo.: Westview Press, 1988), 65-113):

34. Այս մասին քննարկումը տե՛ս Գլուխ 6-ում:

35. "Equipos", *Informe de Coyuntura*, 1990 հունիս և "Equipos", 1991թ. դեկտեմբեր:

առաջարկվում են ոչ ժողովրդավարական այլընտրանքներ, և երբ գոյություն ունեցող ժողովրդավարական ինստիտուտներն ընկալվում են որպես տնտեսական խնդիրներին նպաստող: Ուրուգվայում այս պահին որպես լուծում ոչ մի ոչ ժողովրդավարական այլընտրանք չի առաջարկվում: Ընդհուպ մինչև վերջերս կար համակարգի համեմատաբար քիչ քննադատություն, որովհետև քաղաքական գործիչները երկրում լճացման համար մեղադրում էին իրենց կամ միջազգային համակարգը: Մա կարող է փոխվել:

Ուրուգվայի ոսկե դարում (1918-1956թթ.) ընդունված էր երկկուսակցական համակարգը՝ տիրապետող կուսակցությամբ, որը նախագահներ էր տալիս կրկնակի մեծամասնությամբ՝ անձնական մեծամասնությամբ ու օրենսդրական մեծամասնությամբ: Գոյություն ուներ կուսակցական մի համակարգ, որը նման էր մեկ այլ երկրի նախագահական համակարգին, որտեղ ժողովրդավարությունը հաջողություն ունեցավ (այսինքն՝ Միացյալ Նահանգները), որովհետև գոյություն ուներ քիչ բաժանվածություն ու ցածր բեռնացվածություն: Ուրուգվայի վաղուց ի վեր գոյություն ունեցող ու անսովոր ընտրական համակարգը (հայտնի որպես կրկնակի միաժամանակյա քվեարկություն) բոլոր կուսակցություններին թույլ է տալիս բազմաթիվ թեկնածուներ առաջադրել նախագահության համար ու կուսակցության անունով բոլոր ձայները (լինի դա ծայրահեղ ձախ թեկնածու, թե ծայրահեղ աջ թեկնածու) գումարել կուսակցության օգտին:<sup>36</sup> Մինչև 1950-ական թվականների վերջն այս ընտրական համակարգը լուրջ խնդիրներ չի առաջացրել: Սակայն կուսակցությունների, ներկուսակցական խմբակցությունների թիվն ու նախագահական թեկնածուների թվաքանակն, ըստ կուսակցությունների զգալիորեն աճել է 1960թ. ի վեր:<sup>37</sup> Նախագահներն արդեն սովորաբար ընտրվում են 25%-ից էլ քիչ համաժողովրդական քվեով, որովհետև հաղթող կուսակցությունները ստեղծել են 2-ից 4 խմբակցություն: Այս բաժան-բաժան եղած բազայից նախագահներն օրենսդրական աջակցության առումով կարող են հույս դնել միայն օրենսդրի քառորդ մասից էլ քիչ մասի վրա: Այս կուսակցական-ինստիտուցիոնալ համատեքստը չափազանց դժվարացնում է քաղաքական կուրսի հետևողական մեծամասնության ստեղծումը Ուրուգվայում լճացումը հաղթահարելու համար: Ուրուգվայի առավել հայտնի վերլուծաբաններից ու քաղաքական գործիչներից շատերն այժմ հիմնավորում են այն միտքը, որ հենց Ուրուգվայի կուսակցական բաժանվածության, ընտրական համակարգի և նախագահականության համադրությունն է, որ ստեղծել է օրենսդրական փակուղի ու կարճ կյանք ունեցող ռազմավարական կոալիցի-

36. Տե՛ս Օսկար Բոտինելլի, "El sistema electoral uruguayo: descripción y análisis", "Peitho, Documentos de Trabajo, no. 83", 1991թ.:

37. Այս հարցերի դասական ուսումնասիրություն է՝ Ջակոմո Սանի և Ջիովանի Սարտորի, «Բևեռացումը, բաժանվածությունը և մրցակցությունն Արևմտյան ժողովրդավարություններում» (Giacomo Sani and Giovanni Sartori, "Polarization, Fragmentation and Competition in Western Democracies"), Հանս Դաալդերի և Պիտեր Մայրի խմբ.՝ «Արևմտաեվրոպական կուսակցական համակարգեր՝ շարունակականություն և փոփոխություն» (Hans Daalder and Peter Mair, eds., *Western European Party Systems: Continuity and Change* (London: Sage, 1983), 307-40): Գոնսալեսը կրկնակում է իրենց վերլուծությունից շատ բան՝ ցուցադրելու, որ 1954 թվականից մինչև 1984թ. Ուրուգվայը փոխվել է համեմատական առումով, բաժանվածության իրենց սանդղակի գրեթե ներքևի կետից մինչև գրեթե վերևի կետ, Գոնսալես, «Քաղաքական կառույցներն ու ժողովրդավարությունն Ուրուգվայում» (Gonzalez, *Political Structures and Democracy in Uruguay*, pp. 85-112):



աներ.<sup>38</sup> Խաղերի տեսության տեսանկյունից միակ խմբերը, որոնք կարող են փոխել այս համակարգը, խորհրդարանն ու կուսակցական առաջնորդներն են, սակայն սրանք ճիշտ այն խմբերն են, որոնք համակարգում «հաղթողներ» են եղել: Հետևաբար դժվար կլինի համակարգը փոխելու համար հասնել մեծամասնության, քանի դեռ չկա ճգնաժամի հստակ ըմբռնում: Սակայն եթե Ուրուգվայի քաղաքական համակարգի ինստիտուտները գնալով ավելի շատ դիտվեն որպես անմիջականորեն Ուրուգվայում լճացմանը նպաստող, կարող է առաջանալ համակարգի աճող քննադատություն հենց ժողովրդավարական վարչակարգի նկատմամբ: Այն փաստը, որ Ուրուգվայում նախընտրել են վերականգնել և՛ սահմանադրությունը, և՛ ընտրական համակարգը, որոնք ուժի մեջ են եղել նախքան զինվորականության իշխանության գալը՝ հաշվի չառնելով անկմանը դրա բերած նպաստը, նշանակում է, որ բաց է թողնվել բռնապետությունից հետո սահմանադրական ու ինստիտուցիոնալ նորացման մի հնարավորություն:

Սա մեզ տանում է դեպի Ուրուգվայի՝ ռիսկերին հակամետ կազմության երրորդ բաղադրիչին՝ զինվորականությանը: Ինչպես հիմնավորել ենք, Ուրուգվայում զինվորականությունն ստացել է իր ոչ ժողովրդավարական արտոնություններն ու ներկայումս ցանկացած ոչ ժողովրդավարական խմբի համար վստահելի կոալիցիոն գործընկեր չէ: Սակայն Ուրուգվայի ձգձգվող տնտեսական լճացումը նպաստել է պետության ֆինանսական ճգնաժամին, որը բարդացրել է քաղաքացիական-զինվորական հարաբերությունները: Ուրուգվայի զինվորականությունը, սկսած 1985թ., եղել է կրկնակի ճգնաժամի մեջ՝ «գոյության ճգնաժամի», որը վերաբերում է իր առաքելությանը, և ռեսուրսների ճգնաժամի, որն առաջացել է բյուջեի լայն կրճատումների հետևանքով:<sup>39</sup> Ժողովրդավարական կառավարությունները կրճատել են զինվորականության բյուջեները, սակայն ի տարբերություն Իսպանիայի՝ դրանք դեռևս դեր չեն խաղացել զինվորականության կազմակերպության, առաքելության և ուժային կառուցվածքի վերակազմավորման գործում կամ նոր մոտեցման մշակման մեջ, թե ինչպես զինվորականությանը սցոյալապես ու զաղափարապես վերամիավորել ժողովրդավարական հասարակարգի հետ: Եթե նման իրավիճակը չփոխվի (քաղաքական գործիչների շրջանում սկսի առաջ գալ անհավատարիմ ու կիսահավատարիմ վարքագիծ, և զինվորականությունը հանկարծ գտնի այն դաշնակիցներին, որոնց չի ունեցել 1980-1995թթ. ժամանակահատվածում), ապա ժողովրդավարությունը Ուրուգվայում կարող է դառնալ էլ ավելի ռիսկային:

38. Ուրուգվայում տարբեր քաղաքական ֆորումներում Խուան Ռիպին ու Լուիս Էդուարդո Գոնսալեսն անընդհատ պնդել են այս կետը: Նրանց գրածն այս մասին *տե՛ս* Գոնսալես, «Քաղաքական կառույցներն ու ժողովրդավարությունն Ուրուգվայում» (Gonzalez, *Political Structures and Democracy in Uruguay*, 161-64), Խուան Ռիպ, *"Reforma constitucional: Invitación a una discusión necesaria"*, էլույթի տեքստ, որը ներկայացվել է Ուրուգվայի երիտասարդ քաղաքական գործիչներին, 1991թ. նոյեմբեր: «Գոլորադո» քաղաքական կուսակցության խոշոր առաջնորդներից մեկը՝ Խորխե Բաթլ, իր անվանած «Ուրուգվայական նոստենկլատուրային» ուղղված ինքնաքննադատության մեջ պնդում է, որ «մի կառավարություն, որը ծնվել է առանց մեծամասնությունների, որպես հետևանք մեր ընտրական համակարգի, ոչ միայն խնդիրներ է ստեղծում կառավարության համար, այլ ավելի վատ, համակարգը սրբացնում է յուրաքանչյուրի անպատասխանատվությունը», հանրային էլույթ, 15 հուլիսի, 1990թ.:

39. Գերագանց վերլուծություն, հատկապես՝ գոյության ճգնաժամի մասին, *տե՛ս* Կարինա Պերելլի, *"El nuevo ethos militar en America Latina: Las crisis existenciales de las fuerzas armadas de la región en los 90"*, "Peitho, Documentos de Trabajo, no. 80", 1991թ.:

Մենք ցանկանում ենք շեշտել, որ այդպիսի կիսահավատարիմ ու անհավատարիմ վարքագիծ ներկայումս գոյություն չունի, և հորիզոնում չենք տեսնում որևէ հավանական «հեղաշրջման» կռալիցիա:<sup>40</sup> Այդպիսի հակաժողովրդավարական վարքագիծն ու անկման համար նպաստավոր ուժերի նման կորելացիան կլինի ժողովրդավարության ապագա չհաղթահարված ճգնաժամի արդյունքը:<sup>41</sup> Մենք նաև ցանկանում ենք շեշտել, որ Ուրուգվայի ժողովրդավարական ինստիտուտների, փորձի ու արժեքների համախումբը խանգարում է այն ախտանիշի առաջ գալուն, որը Գիլերմո Օ'Դոննելն անվանում է «պատվիրակված ժողովրդավարություն», որն աղետաբեր է այնքան մեծ թվով նախագահական համակարգերի համար, և որը մենք կքննարկենք Արգենտինայի ու Բրազիլիայի օրինակներում:<sup>42</sup> Սակայն եթե ժողովրդավարական քաղաքական գործիչները չկարողանան կամ չվերափոխեն Ուրուգվայի ռիսկային կազմությունը, նրանք կարող են իրենք դառնալ (ինչպես անկման պատմական դեպքերի մեծ մասում) նման արդյունքին ուղղակիորեն նպաստողներ:

40. Ի դեպ, մենք տեսնում ենք հակառակը: Արգենտինայի և անգամ Բրազիլիայի տնտեսությունների առողջացման աճը 1994թ. և կառավարության ունակությունը՝ բանակցելու ավելի լավ պայմաններով "MERCOSUR"-ում (Բրազիլիայի, Արգենտինայի, Ուրուգվայի և Պարագվայի նոր ընդհանուր շուկան) Ուրուգվայի կողմից դեր ունենալու շուրջ ստիպեցին, որ ապագայի նկատմամբ վստահության ցուցանիշն զգալի վերելք ապրի 1988թ. ի վեր առաջին անգամ: Ըստ 1990թ. օգոստոսին "Equipos" իրականացրած հանրային հարցման՝ համազգային սոցիալական հետազոտության ժամանակ հարցման ենթարկվածների 66%-ն ասաց, որ կարծում է, որ տնտեսությունը «վատ» կամ «չատ վատ» է: 1994թ. հոկտեմբերին տնտեսության մասին «վատ» կամ «չատ վատ» կարծիք ունեցողների թիվն ընկել էր 40%-ից ցածր: Ավելին, նախագահի գործունեությանը տրված հավանության գնահատականը, որը հասել էր նոր պատմական ցածր տոկոսի՝ 11%, 1992թ. օգոստոսից մինչև 1994թ. հոկտեմբերը բարձրացել էր մինչև 29%-: Իսկապես, ի հակադրություն 1992-93թթ. քաղաքական բոլոր կանխատեսումների՝ «Բլանկո» իշխող կուսակցությունը, ինչպես տեսանք, գրեթե հաղթեց 1994թ. նոյեմբերի նախագահական ընտրություններում: Սրանք և "Equipos" հանրային հարցման այլ տվյալներ հրատարակվել էին "El Observador"-ում, 24 հոկտեմբերի, 1994թ.:

41. Կուսակցական շատ առաջնորդներ 1994թ. նոյեմբերի ընտրություններից հետո մտահոգություն են արտահայտել, որ Ուրուգվայի ավանդական երկկուսակցական համակարգը կարող է դառնալ կառավարության աջակցության անգամ էլ ավելի թույլ բազա, եթե Ուրուգվայը դառնա եռակուսակցական համակարգ: Փորձելով հաղթահարել կառավարելիության խնդիրները՝ օրենսդիրում ներկայացուցիչներ ունեցող բոլոր կուսակցությունները համաձայնել են բանակցություններ սկսել կարևոր ընտրական ու սոցիալ-տնտեսական բարեփոխումների շուրջ: *Stéu* «Ուրուգվայ. Կոնգրեսը ձգտում է թարմացնել իր իմիջը» ("Uruguay: Congress Seeks to Update its Image", Latin American Regional Report: Southern Cone Report (April 20, 1995): 7):

42. Ուրուգվայի ժողովրդավարության այս դրական կողմերի քննարկում, *տե՛ս* Խուան Լինզ, «Նախագահական, թե՞ խորհրդարանական ժողովրդավարություն. կա՞րպիտակ տարբերություն» (Juan J. Linz, "Presidential or Parliamentary Democracy: Does It Make a Difference?"), Խուան Լինզի և Արտուրո Վալենսուելայի խմբ.՝ «Նախագահական ժողովրդավարության ձախողումը» (Juan J. Linz and Arturo Valenzuela, eds., *The Failure of Presidential Democracy* (Baltimore: Johns Hopkins University Press, 1994), 36-37) և Գիլերմո Օ'Դոննել, «Պատվիրակված ժողովրդավարություն» (Guillermo O'Donnell, "Delegative Democracy", *Journal of Democracy* 5, no. 1 (January 1994): 55-69, esp 64):

## Արդյունավետության, լեգիտիմության ու ժողովրդավարական պետության «ներկայության» ճգնաժամ. Բրազիլիա

ԱՅՍ ԳՐՔՈՒՄ վերլուծվող թվով յոթ հարավեվրոպական ու հարավամերիկյան երկրներից ժողովրդավարության կայացման գործում ավելի մեծ դժվարությունների է բխվել Բրազիլիան: Բրազիլիան ունեցել է նախորդ վարչակարգի նույն տիպը, ինչ որ մյուս վեց երկրները՝ ավտորիտար, հետևաբար այդքանը բավարար չէ շեղումը բացատրելու համար: Ի տարբերություն Իսպանիայի և շատ արևելաեվրոպական երկրների՝ այն չի ունեցել պետութենականության լուրջ խնդիր, ուրեմն այդ փոփոխականը ևս չունի բացատրական նշանակություն կայացման ճգնաժամի համար:<sup>1</sup> Ուրուգվայի, Չիլիի ու Արգենտինայի նման Բրազիլիան էլ է կրել միջազգային պարտքի ճգնաժամի չարաբաստիկ հետևանքները, սակայն թեև այն ուներ Միացյալ Նահանգներից բացի աշխարհում ամենամեծ ընդհանուր պարտքը, բայց և այնպես 1980-ական թվականների ընթացքում մեկ շնչին ընկնող պարտքը էականորեն ավելի քիչ էր, քան Չիլիինը կամ Արգենտինայինը, երբ երկուսն էլ իրենց պարտքի ճգնաժամն ավելի լավ էին կարողացել հաղթահարել արդեն 1990-ական թվականների սկզբին:<sup>2</sup> Այն, որ Բրազիլիայում անցման արմատները գտնվել են բարձրաստիճան զինվորականների վարչակարգի մեջ, իհարկե, ժողովրդավարացման գործընթացի համար ունեցել է բազմաթիվ վնասակար հետևանքներ, որոնց գնահատականը դեռ տալու ենք: Սակայն Բրազիլիան այնքան էլ չի սահմանափակվում զինվորականության կողմից, ինչպես Չիլին, իսկ Չիլին, ինչպես կտեսնենք, հասարակարգի նման տարաբնույթ ճգնաժամեր չի ապրում:

Բրազիլիայում ամենաուշագրավ խնդիրը վերաբերում է լեգիտիմության քաղաքատնտեսության մեր փոփոխականին: Բրազիլիայում տիրում է եկամուտների ակնհայտորեն առավել անհավասար բաշխում և սոցիալական ապահովման ու կրթության շատ վատ

1. Սակայն ճիշտ է, որ պետության ձգձգվող ֆինանսական (ու քաղաքական) ճգնաժամի պայմաններում Բրազիլիայում 1992-93թթ. տեղի ունեցան բազմաթիվ շարժումներ հյուսիսում ու արևմուտքում, որոնք պահանջում էին, որ որոշ նահանգներ վերաբաժանվեն և նորերը կազմվեն, իսկ համեմատաբար միատարրորեն զարգացած ու գերակշռող սպիտակամորթ բնակչությամբ Ռիո Գրանդե դե Սուլ, Սանտա Կատարինա ու Պարանա նահանգներում առաջացավ մի անջատողական շարժում ուժեղ ռապիստական ենթատեքստով: Ասպապիա Ալվանտարա դե Կամարգոյի առաջիկա գրքում անդրադարձ է կատարվում բրազիլական դաշնայնության աճող խնդիրներին:

2. Տե՛ս, օրինակ, Համաշխարհային բանկի հաճախակի հրապարակումները 1980-ական թվականներին, որոնք անվանվում են Համաշխարհային բանկի պարտքի աղյուսակ:

ստանդարտներ, էթե համեմատենք Հարավային Եվրոպայի կամ Հարավային Ամերիկայի կամ հենց թեկուզ Կենտրոնական Եվրոպայի՝ մեր ուսումնասիրության մեջ ներառված որևէ երկրի հետ, և դա, իհարկե, չի նպաստել ժողովրդավարության կայացմանը:<sup>3</sup> Ավելին, Բրազիլիան պատմականորեն ունեցել է քաղաքական կուսակցությունների ամենաթույլ կազմավորված համակարգն այն բոլոր չորս հարավամերիկյան երկրներից, որ մենք վերլուծում ենք այս գրքում: Այս համատեքստում 1985թ. և 1993թ. միջև ընկած ժամանակահատվածում կիրառվել են բարեփոխումների յոթ տարբեր փաթեթներ, որոնք ձախողվել ու մի կողմ են դրվել համատեղ կայուն կռախիցիս ստեղծելու անկարող քաղաքական հասարակության կողմից:<sup>4</sup> Որոշ հետևումունիատական երկրների նման, որոնք մենք հետագայում կքննարկենք, ինչպես օրինակ՝ Ռուսաստանում, այդ քաղաքական անարդյունավետությունը քայքայիչ ազդեցություն է ունեցել ժողովրդավարական հասարակարգի հիմնական հարթություններից յուրաքանչյուրի վրա: Սահմանադրականությունն ու օրենքի գերակայությունը, որոնք երբեք ուժեղ չեն եղել Բրազիլիայի մեծապես անհավասար հասարակությունում, հետագայում է՛լ ավելի թուլացան: Չզձգվող տնտեսական ճգնաժամը նվազեցրեց պետության ֆինանսական ու բարոյական հզորությունները՝ հասարակության մեջ միավորող դեր խաղալու ու քաղաքացիներին հիմնական ծառայություններ մատուցելու գործում: Քաղաքական հասարակության ինստիտուտներին վերագրվող ինքնավարությունն ու արժեքը դարձան ավելի ու ավելի չնչին: Պետության նահանջելու ու որևէ քաղաքական այլընտրանքի շուրջ կայուն աջակցություն ստեղծելու քաղաքական հասարակության անկարողության հետևանքով հասարակությունը դարձավ ավելի անկազմակերպ, իսկ քաղաքացի լինելու արժեքը նվազեց:

3. Օրինակ, Համաշխարհային բանկն ունի քառասունմեկ երկրներում եկամտի բաշխման վերաբերյալ տվյալներ: Այդ խմբում Բրազիլիան ունի մեկ մարդու հաշվով համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ամենաբարձր տոկոսը, որն ընկնում է բնակչության վերին մեկ տասներորդին ու ամենացածր տոկոսը, որն ընկնում է բնակչության ամենաաղքատ երկու տասներորդին: Տե՛ս «Համաշխարհային զարգացման զեկույց 1990թ.. աղբատություն» (*World Development Report 1990: Poverty* (World Bank, 1990), 236-37): *Տե՛ս նաև* Բոլիվար Լամունիեր, «Բրազիլիա՝ անհավասարությունն ընդդեմ ժողովրդավարության» (Bolívar Lamounier, "Brazil: Inequality against Democracy"), Լարրի Դայմոնդի, Խուան Լինցի և Սեյմուր Մարտին Լիպսեթի խմբ.՝ «Ժողովրդավարությունը զարգացող տարածաշրջաններում. Լատինական Ամերիկա» (Larry Diamond, Juan J. Linz, and Seymour Martin Lipset, eds., *Democracy in Developing Areas: Latin America* (Boulder, Colo.: Lynne Rienner, 1989), 111-58):

4. Լուիս Կառլոս Բրեսսեր Պերեյրան՝ բրազիլացի հայտնի տնտեսագետն ու ֆինանսների նախկին նախագահը, անդրադառնում է այն հարցին, թե ինչու դրանցից յուրաքանչյուրը ձախողվեց «Բրազիլիայի տնտեսական, քաղաքական և սոցիալական բարեփոխումները» համաժողովի ժամանակ ունեցած իր «Ձախողումը կայունանում է» հիմնական սկզբունքային ելույթում, Լոնդոնի համալսարանի լատինաամերիկյան ուսումնասիրությունների ինստիտուտ, փետրվարի 16-17, 1993թ.: Թե՛ն նա պնդում էր, որ որոշ ծրագրեր տեխնիկապես թույլ էին, որովհետև դրանք հաշվի չէին առնում Բրազիլիայի «իներցիոն սղաճի» առանձնահատկությունները, բոլոր ծրագրերը, անգամ նրանք, որոնք նրա կարծիքով տեխնիկապես ճիշտ էին, դադարեցվեցին դժվարությունների բախվելիս քաղաքական աջակցությունը պահպանելու անկարողության պատճառով: Տե՛ս նաև Ալբերտ Ֆիշլոու, «Տնտեսության վիճակը Բրազիլիայում և Լատինական Ամերիկայում. արդյո՞ք անցյալն ապագայի նախաբանն է» (Albert Fishlow, "The State of Economics in Brazil and Latin America: Is the Past Prologue to the Future?"), Ալֆրեդ Ստեփանի խմբ.՝ «Ամերիկաներ. նոր մեկնաբանական ակնարկներ» (Alfred Stepan, ed., *Americas: New Interpretive Essays* (New York: Oxford University Press, 1992), 58-79): Ութերորդ և ավելի հաջողված ծրագիրը՝ «Պլան Ռիալը», գործարկվեց 1994թ. հուլիսի 1-ին ավելի լայն համաձայնեցված քաղաքական աջակցության հիման վրա, քան մյուս ծրագրերը: «Պլան Ռիալը» կքննարկենք այս գլխի վերջում:

Բրազիլիայի մասին մեր վերլուծությունը բաժանվում է վեց մասի: Նախ՝ Բրազիլիայում նախնական անցումը համառոտ դիտարկում ենք համեմատական համատեքստում: Երկրորդ, վավերագրում ենք, թե ինչպես է Բրազիլիայի բարձրաստիճան գինվորականությունը ծանր խոչընդոտներ ստեղծել առաջին ժողովրդավարական կառավարության առջև: Երրորդ, հետազոտում ենք լեգիտիմության քաղաքատնտեսության ճգնաժամի բնույթը: Չորրորդ, փաստերով ցույց ենք տալիս, թե լեգիտիմության քաղաքատնտեսության ճգնաժամն ինչպես է նպաստել ժողովրդավարության հանդեպ անորոշության այնպիսի աստիճանին, որը չի եղել մեր հարավեվրոպական կամ հարավամերիկյան օրինակներից ուրիշ որևէ մեկում: Հինգերորդ, հետազոտում ենք որոշ ավելի մոայլ ու դժվարին խնդիրներ, որոնք այդ ձգձգված ճգնաժամը բերել է քաղաքացիությանը, պետությանը, հասարակարգին, և վերլուծում ենք որոշ անհրաժեշտ ու հավանական բարեփոխումներ: Վեցերորդ, համառոտ գնահատում ենք, թե ինչպես բրազիլացիները, բախվելով 1993թ. նախնական քառսին, 1994թ. սկսեցին միասին կազմել ու սատարել ավելի խոստումնալից ծրագրեր՝ հաղթահարելու Բրազիլիայի տարաբնույթ ճգնաժամերը:

#### ԵՐԿԱՐԱՍԵՎ, ԶԳԶԳՎԱԾ ԱՆՑՈՒՄ

Բրազիլիայի անցումն ավտորիտարությունից դեպի ժողովրդավարություն սկսվեց նախագահի պաշտոնում գեներալ Էռնեստո Գեյզելի երդմանակալությամբ 1974թ. մարտի 15-ին: Կառավարությունում իրենց շարքերից Գեյզելն ու իր ամենամոտ քաղաքական խորհրդական գեներալ Գոլբերի դո Կուտո է Սիլվան սկսեցին քաղաքացիական հասարակությունում դաշնակիցներ փնտրելու մի բարդ գործընթաց՝ հսկողության տակ պահելու անվտանգության անձնակազմի աճող ինքնավարությունը, որը նրանք համարում էին վտանգավոր գինվորականություն-հաստատության համար և ոչ անհրաժեշտ, որովհետև ձախերի բոլոր պարտիզանական շարժումները վերացվել էին: Նրանք նախաձեռնեցին վերահսկվող ազատականացում, սակայն շուտով սկսվեց մի երկարատև գործընթաց, որին Ստեփանը վերլուծության մեջ անդրադարձել է որպես «վարչակարգի զիջման ու հասարակական նվաճման» դինամիկա:<sup>5</sup> Ժողովրդավարությանն անցումը Բրազիլիայում ավարտվեց միայն այն ժամանակ, երբ ուղղակիորեն ընտրված նախագահ Ֆերնանդո Կոլլոր դե Մելլոն ստանձնեց պաշտոնը 1990թ. մարտի 15-ին: Այս տասնվեցամյա անցումը գրեթե երկու անգամ ավելի երկար տևեց, քան անցումը Պորտուգալիայում (որն ամենաերկարատևն է մեր հարավեվրոպական խմբում): Բրազիլիայում անցման տևո-

5. Գոլբերիի և Գայզելի հարցազրույցներն այն մասին, թե ինչու իրենք սկսեցին այդ գործընթացը, տե՛ս Ստեփան, «Զինվորական քաղաքականության վերախմաստավորումը. Բրազիլիա և Հարավային Կոնի երկրներ» (Stepan, *Rethinking Military Politics: Brazil and the Southern Cone* (Princeton University Press, 1988), 30-44): Քաղաքացիական հասարակության ներսում հաղթական դինամիկայի մասին, որն ի վերջո գինվորականության ազատական ծրագրերը մղեց դեպի ժողովրդավարություն, տե՛ս Ալֆրեդ Ստեփան, «Պետական իշխանությունը և քաղաքացիական հասարակության ուժը Լատինական Ամերիկայի Հարավային Կոնի երկրներում» (Alfred Stepan, *State Power and the Strength of Civil Society in the Southern Cone of Latin America*), Պիտեր Էվանսի, Դիտրիխ Ռուշեմեյերի և Թեդա Տկոպոլի խմբ.՝ «Պետության վերականգնումը» (Peter B. Evans, Dietrich Rueschmeyer, and Theda Skocpol, eds., *Bringing the State Back In* (Cambridge: Cambridge University Press, 1985), 331-43):

դրությունն ավելի ցայտուն է երևում, երբ հաշվի ենք առնում, որ այնտեղ ավտորիտար վարչակարգն սկսվել է միայն 1964թ. մարտի 31-ին:

Ե՛վ Բրազիլիայում անցման արտառոց տևողությունը, և՛ այն փաստը, որ զինվորականության «մուտքը» (*abertura*) վեց տարով ավելի երկար տևեց, քան դրա «հեռացումը», մեզ թվում է, որ ուղղակիորեն կապված են այն հանգամանքի հետ, որ ավտորիտար վարչակարգը, թեև այն երբեք լիովին չինստիտուցիոնալացվեց, ղեկավարվում էր բարձրաստիճան զինվորականների մի կազմակերպության կողմից, որն ուներ բավարար իշխանություն՝ անցման տեսլք վերահսկելու ու հեռացման բարձր զին կորզելու համար:<sup>6</sup>

1984թ. փետրվարից մինչև հունիս Բրազիլիան ապրեց իր պատմության մեջ ամենաերկարատև ու զանգվածային քաղաքական շարժումը՝ "*Diretas Já*" կամ «Ուղղակի ընտրություններ հիմա» քարոզարշավը: Քաղաքական ու քաղաքացիական հասարակության առավել նշանակալից ուժերը ցանկանում էին ուղղակի ընտրություններ: Ի դեպ, քաղաքացիական հասարակության ոչ մի խոշոր խումբ, ներառյալ՝ գործարարները, չարտահայտվեց ընդդեմ ուղղակի ընտրությունների:<sup>7</sup> Սակայն զինվորականությունը պնդեց, որ անցկացվեն անուղղակի ընտրություններ, և 1964թ.-ից ի վեր առաջին քաղաքացիական կառավարությունը 1985թ. ծնունդ առավ անուղղակի ընտրությունների միջոցով: Դրությունն ավելի վատթարացավ, երբ ժողովրդականությունն վայելող, սակայն անուղղակիորեն ընտրված Տանկրեդո Նետը մահացավ նախքան պաշտոնն ստանձնելն ու փոխզիջման արդյունքով ընտրված փոխնախագահ Խոսե Սարնեյը, որը եղել էր վարչակարգամետ կուսակցության նախագահ, որպես երկրի նախագահ՝ ծառայեց հաջորդ հինգ տարիների ընթացքում, թեև արդեն 1988թ. բրազիլացիների երեք քառորդը ցանկանում էր, որ նրա պաշտոնավարումը ընդհատվի:<sup>8</sup> Հեռացող բարձրաստիճան զինվորականների վարչակարգի կողմից պարտադրված սահմանափակումներն իրենց ազդեցությունը թողեցին ոչ միայն նոր քաղաքացիական կառավարության ծագման, այլ նաև դրա կատարողականի վրա: Մի ամբողջ շարք կարևորագույն քաղաքական հարցերի շուրջ քաղաքացիական կառավարությունը լավագույն դեպքում ինքնիշխանությունը կիսում էր զինվորականության հետ: Առաջին քաղաքացիական նախագահ Խոսե Սարնեյի (1985-90թթ.) ամբողջ կառավարման ընթացքում կաբինետում կային վեց զինվորական նախարարներ: Բազմաթիվ դեպքերում զինվորականությունը միակողմանի որոշում է ընդունել գործա-

6. *Տե՛ս* երկու գլխավոր սոցիալական տեսաբանների ու կուսակցական առաջնորդների հոդվածները (Ֆերնանդո Էնրիկե Կարդոսո և Ֆրանսիսկո Վեֆորտ) Բրազիլիայում անցման մասին, քաղաքացիական հասարակության դիմադրության մասին՝ Ռալֆ դելլա Կավա, Մարգարետ Քրահան և Սքոթ Մեյնուորինգ, և քաղաքական համակարգի զարգացման մասին՝ Բոլիվար Լամունիեր և Մարիա դո Կարմո Կամպելլո դե Սուսա, *տե՛ս* Ալֆրեդ Ստեփանի խմբ.՝ «Բրազիլիայի ժողովրդավարացումը. անցման և կայացման խնդիրներ» (Alfred Stepan, ed., *Democratizing Brazil: Problems of Transition and Consolidation* (New York: Oxford University Press, 1989)):

7. Տե՛ս "Veja"-ի հատուկ համարը (16 հունվարի, 1985թ.): *Տե՛ս նաև* Ալֆրեդ Ստեփան, «Պետական իշխանությունը և քաղաքացիական հասարակության ուժը Լատինական Ամերիկայի Հարավային Կոնի երկրներում» (Alfred Stepan, *State Power and the Strength of Civil Society in the Southern Cone of Latin America*), Էվանսի, Ռուշենմեյերի և Սկոչիուլի խմբ.՝ «Պետության հետ վերադարձումը» (Evans, Rueschmeyer, and Skocpol, eds., *Bringing the State Back In*, 331-343):

8. Մարնեյի աջակցություն չունենալու վերաբերյալ փաստեր, *տե՛ս* Բոլիվար Լամունիեր և Ալեխանդրե Մարկես, *"A democracia brasileira no final da 'década perdida"*, Բոլիվար Լամունիերի խմբ.՝ *"Ouvindo o Brasil: Uma Análise da Opinião Pública Brasileira Hoje"* (São Paulo: Editora Sumaré, 1992), էջ 143:

դուլավորներին ճնշելու համար զինվորական ջոկատներ ուղարկելու կամ չուղարկելու մասին: Ջինվորական ծառայության մեջ գտնվող բանակի գործող սպաները շարունակում էին վերահսկել Ազգային հետախուզական ծառայությունը: Բրազիլիայի հակասական միջուկային նախագծերից ոչ մեկը չի քննարկվել Կոնգրեսում: Ջինվորականությունը խոշոր դեր է խաղացել ազրարային բարեփոխումների սահմանները որոշելու գործում:<sup>9</sup>

Ջինվորականության ազդեցությունը Սահմանադիր ժողովի վրա զգալիորեն ուժեղ էր՝ ապահովելու Բրազիլիայի սահմանադրության տեղը մեր՝ «սահմանադրություն՝ ստեղծված մեծապես խոչընդոտող հանգամանքներում, որոնք արտացոլում են ոչ ժողովրդավարական ինստիտուտների և ուժերի դե ֆակտո իշխանությունը» կատեգորիայում: Ջինվորականությունը սպառնալիքների ու լոբբինգի հմուտ համադրության միջոցով հաջողության հասավ զինվորականության ինքնավարությունը նվազեցնելու հավանականությունն ունեցող սահմանադրական դրույթները վերացնելու, մեղմացնելու կամ տապալելու գործում:<sup>10</sup> Սահմանադրության մշակման գործընթացում զինվորականության ներգրավվածության առավել լարված պահը վերաբերում էր նախագահի հետ դրա մանևրելուն՝ կանխելու Լատինական Ամերիկայում խորհրդարանականության կամ, ավելի ճիշտ, «կիսանախագահականության» առաջին փորձը՝ Ֆրանսիական հինգերորդ հանրապետության օրինակով: Սահմանադիր ժողովի անդամների շրջանում կառավարության ավելի խորհրդարանական ձևին աջակցությունն այնպիսին էր, որ առաջին յոթանասուկոթ հողվածները մշակվեցին ու հաստատվեցին մի այնպիսի վերջնական ձևակերպմամբ, որը ենթադրում էր, որ կառավարության հիմնական ձևը լինելու է խորհրդարանականը, և ոչ թե՛ նախագահականը: Սակայն անմիջապես նախքան 78-րդ հողվածի կապակցությամբ վճռորոշ քվեարկությունը, որը Բրազիլիայում բացահայտորեն կհաստատեր կառավարության խորհրդարանական ձև, զինվորականությունը նպաստեց ուժերի հարաբերակցությունը փոխելուն: Անուղղակիորեն ընտրված նախագահ Խոսե Սարնեյը, որը չէր ցանկանում, որ իր պաշտոնավարման ժամկետն ու իշխանությունը կրճատվեն, և բանակը, որը չէր ցանկանում ենթարկվել խորհրդարանի կողմից անվստահության քվեին ու ցանկանում էր պահպանել իր ուղղակի հարաբերությունը նախագահի հետ, միավորեցին ջանքերը: Նախագահ Սարնեյն ու զինվորականությունն սկսեցին «պետական գրպանից» օգտվելու հնարավորությունների խոստումների ու սպառնալիքների մի հզոր հակահարված, և վերջին պահին ձայների փոփոխության միջոցով նախագահականությունը հաղթանակեց Սահմանադիր ժողովում:<sup>11</sup>

9. Լայն վավերագրեր, *տե՛ս* Ստեփան, «Ջինվորական քաղաքականության վերաիմաստավորումը» (Stepan, *Rethinking Military Politics*, 103-14):

10. Տե՛ս Էլիեզեր Ռիզո դե Օլիվեյրա (Eliezer Rizzo de Oliveira), «O papel das forças armadas na nova constituição e no futuro da democraciano Brasil», *Voices* 82, no. 2 (1988թ. հուլիս-դեկտեմբեր), էջ 21-27:

11. Կատարված քննարկումը հիմնված է 1989թ. դեկտեմբերին Ալֆրեդ Ստեփանի՝ Բրազիլիայում անցկացրած լայն հարցազրույցների վրա:

ՀԱՄԱԿՑՎԱԾ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Զինվորականության կողմից սատարվող նախագահական իշխանության այս հանկարծակի գործադրումը նպաստեց Բրազիլիայի սահմանադրական, քաղաքական ու տնտեսական անկայունությանը, երբ այն փորձում էր ժողովրդավարությունը կայացնել 1990-ական թվականներին: Ի դեպ, Սահմանադիր ժողովի անդամները երբեք չփոխեցին առաջին յոթանասուկյոթ «խորհրդարանական» հողվածները: 1988թ. սահմանադրությունը, այսպիսով, ներկայացնում էր խիստ ամրապնդված օրենսդրական իշխանություն՝ համապատասխանեցված խորհրդարանական սահմանադրությանը, այնպես որ նախագահը հատկապես բյուջեի հետ կապված ոլորտներում բացի հրամանագրերի եղանակի կիրառումից, չէր կարող փոքրիշատե արդյունավետ ազդեցություն ունենալ առանց ուժեղ օրենսդրական աջակցության:<sup>12</sup> Սակայն նախագահականության ու հեռուստատեսության արդյունք նախագահ Կոլլորը, որը հակաքաղաքական ու հակակուսակցական քաղաքական գործչի դասական օրինակ է, իր նախագահությունն սկսեց մի կուսակցության սատարմամբ, որը վերահսկում էր Կոնգրեսում տեղերի 5%-ից էլ քիչ մասը:

Կոլլորի նախագահության առաջին խոշոր ռազմավարական նախաձեռնությունը՝ կայունացումը կամ «Կոլլորի ծրագիրը», արագորեն բացահայտեց այն վտանգները, որ Կոնգրեսում նման թույլ բազա ունենալը ներկայացնում է ժողովրդավարության կայացման համար: Ի մեծ տարբերություն Իսպանիայի, որտեղ կայունացման համաձայնագիրը՝ Մոնկլոայի դաշինքը, արդյունք էր կուսակցական բարդ բանակցությունների, և որը պաշտոնապես հաստատվեց խորհրդարանում, Բրազիլիայի նախագահ Կոլլորի ծրագիրն ապշահար ժողովրդին հայտարարվեց հեռուստատեսությամբ բացարձակապես առանց քաղաքական կուսակցությունների կամ Կոնգրեսի հետ նախնական խորհրդակցության: Սկսվել էր ռազմավարական փակուղու կամ նախագահական ահաբեկման մի վտանգավոր խաղ:<sup>13</sup> Երկու կարևորագույն «ժամանակավոր հրամաններն» արագորեն դատարանների կողմից ճանաչվեցին որպես ոչ սահմանադրական ու մերժվեցին: Սակայն նախագահն ապառնաց Կոնգրեսին, որ կմոբիլիզացնի զանգվածներին իր ծրագրին աջակցելու համար: «Կասկած չկա, որ ես ունեմ սերտ և խոր կապեր չքավոր զանգվածների հետ», - հայտարարեց նա: Նա զգուշացրեց Կոնգրեսին. այն «պետք է հարգի ինձ, որովհետև ես ուժի կենտրոնն եմ»:<sup>14</sup> Անգամ նախագահ Կոլլորի ամենաուժեղ աջակիցներից մեկը՝ ֆինանսների նախկին ազդեցիկ պահպանողական նախարար սենատոր Ռոբերտո

12. 1995թ. պլանավորման նախարար դարձած հեղինակավոր տնտեսագետի վերլուծությունը, *տե՛ս* Ժուզե Սեռա (Jose Serra), "A constituição e o gastopublico", *Planejamento e Políticas Públicas*, no. 1 (June 1989): 93-106:

13. Իսպանիայում և Բրազիլիայում ռազմավարական պլանավորման քաղաքականության համեմատության նորարարական նախախաձեռնություն, *տե՛ս* Լուիս Կառլոս Բրեսսեր Պերեյրա, Խոսե Մարիա Մարավալ և Ադամ Պրժմորսկի, «Տնտեսական բարեփոխումները նոր ժողովրդավարություններում. սոցիալ-ժողովրդավարական մոտեցում» (Luis Carlos Bresser Pereira, Jose Maria Maravall, and Adam Przeworski, *Economic Reforms in New Democracies: A Social Democratic Approach* (New York: Cambridge University Press, 1993)):

14. «Լատինական Ամերիկայի տարածաշրջանային զեկույցներ. Բրազիլիա», 3 մայիսի, 1990թ., 6: Սա, իհարկե, դիսկուրսի այն տիպն է, որ Գիյերմո Օ'Դոննելն այնպես հստորեն վերլուծում է իր



Կամպոսը, տրտնջաց. «Մա իրավական սպանդ է, որն ի չիք է դարձնում վստահությունը Կոլտրի ծրագրի նկատմամբ»:<sup>15</sup>

Ի տարբերություն Պերուի նախագահ Ֆուխիմորիի՝ նախագահ Կոլտրը «ինքնահեղաշրջման» փորձ չարեց, սակայն իր նախագահության ժամկետի կեսից էլ քիչ ժամանակամիջոցում նրա մեկուսացումը քաղաքացիական ու քաղաքական հասարակությունից նպաստեց այն բանին, որ նա փորձ արեց ու չկարողացավ իրականացնել կտրուկ կայունացման երկու տարբեր ծրագրեր:<sup>16</sup> Նա նաև անձնապես խրված էր կոռուպցիոն խայտառակությունների մեջ:<sup>17</sup> Ցանկացած ժողովրդավարական վարչակարգում մշտապես գոյություն ունի «կառավարության ճգնաժամի» ռիսկ: Արդեն 1992թ. հունիսին Բրազիլիան կանգնած էր կառավարության սուր ճգնաժամի առջև: Ժողովրդավարության համար գլխավոր հարցն այն է, որ կառավարության ճգնաժամը հաղթահարվի հնարավորինս արագ, քանի դեռ այն չի դարձել «վարչակարգի ճգնաժամ», այնպես որ հնարավոր լինի վերակազմավորել մի նոր քաղաքական կոալիցիա՝ նորից փորձելով համադրել քաղաքական կուրսի արդյունավետությունը ժողովրդավարական լեգիտիմության հետ: Սովորաբար՝ խորհրդարանական համակարգերում, որտեղ չկան գլխավոր գործադրի ուղղակի ընտրություններ, Կոլտրը կընտրվեր որպես վարչապետ, քանի որ նրա կուսակցությունը Կոնգրեսում վերահսկում էր ձայների 5%-ից էլ պակաս մասը: Որևէ մեծամասնության կողմից սկզբում պասիվ կերպով աջակցված լինելու դեպքում անգամ արդեն 1992թ. կեսերին կառավարության ճգնաժամի պայմաններում նա գրեթե վստահաբար խաղաղ ու անաղմուկ կփոխարինվեր մեկ ուրիշով, ով կարող էր իր տրամադրության տակ ունենալ գոնե մի ժամանակավոր մեծամասնություն: Բրազիլիայի նախագահական համակարգում, սակայն, նոր կառավարություն ձեռք բերելու միակ եղանակը նախագահ Կոլտրին իմպիչմենտի ենթարկելն էր, մի գործընթաց, որը ըստ բոլոր գլխավոր քաղաքական խաղացողների՝ չափազանց դժվարին ու վտանգավոր էր:<sup>18</sup> Սահմանադրական ճգնաժամը ստեղծեց մի միջավայր, որտեղ գլխավոր քաղաքական գործիչները մտմտում էին խորհր-

«Պատվիրակվող ժողովրդավարություն»-ում (*"Delegative Democracy"*, Journal of Democracy 5, no. 1 (Jan. 1994): 55-69):

15. Տե՛ս «Ավտորիտար կառավարությունների Նոր Բրազիլիայի ծրագրի աճող քննադատությունը (*"Mounting Criticism of 'Authoritarian Governments' Novo Brasil Plan"*, Latin American Regional Reports: Brazil, June 7, 1990, 1-3; Campos quote on p. 2):

16. Տե՛ս Լուիս Կառլոս Բրեսսեր Պերեյրա, *"Os tempos heróicos de Collor: Aventuras da modernidade e desventuras da ortodoxia"* (São Paulo: Nobel, 1991):.

17. Կոլտրի նախագահման շրջանում տիրող կոռուպցիայի լայնության ու խորության մասին լավագույն աղբյուրը Կոնգրեսի 371 էջից բաղկացած հաշվետվությունն է, Բրազիլիա, Congresso Nacional, "Relatório Final da Comissão Mista de Inquérito" (1992թ. օգոստոս): Այդ հաշվետվության վերլուծությունը, տե՛ս Լուիս Ֆելիպե Ալենկանտոր, *"O Relatório do CPI: Um Retrato, do Brasil"*, "Novos Estudos CEBRAP" no. 34 (Nov. 1992): 3-7. Տե՛ս նաև Ջեյմս Բրուկի առաջնորդող հոդվածը՝ «Բրազիլիայի կոռուպցիոնը» (James Brooke, "Looting Brazil", New York Times Magazine, November 8, 1992, 30-33, 42-45, 70-71):

18. Բրազիլիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրությունը, 1988թ., (Հոդված 86), սահմանում է, որ նախագահի հեռացման համար պահանջվում է Ներկայացուցիչների պալատի ձայների երկու երրորդը և հետո՝ Սենատի կողմից դատավարություն (քաղաքական հանցագործության համար) կամ Գերագույն դատարանի կողմից դատավարություն (սովորական քրեական հանցագործությունների համար): Պետական հանցագործության մեջ մեղադրանքի հարուցումը լրացուցիչ կերպով բարդանում էր այն փաստով, որ իրականացման օրենսդրությունը, որը սահմանում էր ընթացակարգերը, դեռևս չէր ընդունվել (Հոդված 85):

դարանականության վերաբերյալ հանրաքվեի նշանակված օրը շտապ կերպով մոտեցնելու վտանգավոր նախադեպի շուրջ, ազդեցիկ մեկնաբաններն ու հանրային կարծիքի գրեթե մեծամասնությունը ցանկանում էին, որ նախագահը հրաժարական տա, սակայն նախագահը պնդում էր, որ պետք է մինչև վերջ իրագործի իր «մանդատը»:<sup>19</sup> Թեև զինվորականությունն ուղղակիորեն մեղավոր չէր դեպքերի նման ընթացքի համար, այնուամենայնիվ, առանց Սահմանադիր ժողովի խորհրդարանային ծրագրերի վրա դրված վետոյի գործում զինվորականության խաղացած կարևոր սատարող դերի Բրազիլիայում ժողովրդավարության կայացմանը չէր սպառնա նման լարված օրենսդիր-գործադիր հակամարտություն 1990-94թթ. նախագահական ժամանակահատվածում: Բարեբախտաբար, բախվելով այդ ճգնաժամին՝ Բրազիլիայի և՛ քաղաքացիական, և՛ քաղաքական հասարակությունը միավորեցին ուժերն ու կարողացան բարեհաջող կերպով գլուխ բերել քսաներորդ դարում առաջին իմպիչմենտը Հարավային Ամերիկայում: Սակայն թույլ փոխնախագահ Բտամար Ֆրանկոն, որը դարձավ նախագահի պաշտոնակատար ու ի վերջո, նախագահ, սկզբում նույնքան անկարող էր իրականացնելու ներդաշնակ տնտեսական քաղաքականություն, ինչպես և նախագահ Կոլորը:

ԵՐԿԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

Հաշվի առնելով այս համատեքստը՝ զարմանալի կլիներ, եթե բրազիլական հասարակությունը դրսևորեր ժողովրդավարությանն ուժգնորեն սատարող մի վերաբերմունք, որ առկա էր Իսպանիայի, Պորտուգալիայի, Հունաստանի կամ Ուրուգվայի կայացած ժողովրդավարություններում: Իսկապես, նախագահ Կոլորի իշխանության գալու երկրորդ տարեկիցի նախօրեին և, հետևաբար, վերը քննարկված երկու ամիս կոռուպցիայի ու իմպիչմենտի ճգնաժամից առաջ հասարակական կարծիքի համազգային մի հարցում ցույց տվեց, որ Բրազիլիայի քաղաքացիները ժողովրդավարության հանդեպ ունեին ապշեցուցիչ կերպով ավելի երկակի վերաբերմունք, քան դրսևորվել էին մեր քննարկած չորս կայացած ժողովրդավարություններում (Իսպանիա, Պորտուգալիա, Հունաստան և Ուրուգվայ) (Աղյուսակ 11.1):

1992թ. արդյունքներն այնքան ապշեցուցիչ էին, որ մենք ուսումնասիրեցինք Բրազիլիայում այս հարցերը պարունակող բոլոր հանրային հարցումների տվյալները՝ տեսնելու, թե արդյոք 1992թ. մարտի արդյունքները պատահակա՞ն էին, թե՞ ավելի հաստատուն պատկերի մաս էին կազմում: Բարեբախտաբար, Բրազիլիայում այդ նույն հարցերը վեց

19. Նախագահ Կոլորի աջակցության մեծ մասը 1989թ. նախագահական ընտրությունների ժամանակ եկել էր նրա այն երաշխիքից, որ կայաքարի կոռուպցիայի դեմ: Արդեն 1992թ. հունիսին հարցման ենթարկվածների միայն 19%-ն էր կարծում, որ նա անմեղ է կոռուպցիայի հարուցված մեղադրանքների մեջ, սակայն 71%-ի կարծիքով՝ նա չի դատապարտվի: Այդուհանդերձ, 47%-ը ցանկանում էր, որ նա հրաժարական տա կամ նախագահությունից ժամանակավոր արձակուրդ վերցնի դատական գործընթացի առաջ գնալու ժամանակ: *St'e u "Folha de São Paulo"*, հունիս 25, 1992թ., 1: Կոլորի հրաժարականի զինվորական ու քաղաքական կոչերի մասին *տե՛ս* Ջեյմս Բրուկ, «Բրազիլիայի նախագահի վարկաբեկումը կոռուպցիայի հետաքննությունների հետևանքով» (James Brooke, *"Brazil's President Damaged by Corruption Inquiry"*, New York Times, June 28, 1992, A-9):

**Աղյուսակ 11.1. Բրազիլիայում ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունքային աջակցության համեմատությունն Ուրուգվայում, Իսպանիայում, Պորտուգալիայում և Նունաստանում չորս կայացած ժողովրդավարությունների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի հետ**

	Պատասխանողների տոկոսը				
	Բրազիլիա (1992թ.)	Ուրուգվայ (1991թ.)	Իսպանիա (1985թ.)	Պորտուգալիա (1985թ.)	Նունաստան (1985թ.)
Նախընտրած հասարակարգի մասին կարծիքը					
«ժողովրդավարությունը նախընտրելի է կառավարության որևէ այլ ծնից»	42	73	70	61	87
«Որոշ դեպքերում ոչ ժողովրդավարական կառավարությունը կարող է նախընտրելի լինել ժողովրդավարությունից»	22	10	10	9	5
«Ինձ նման մարդկանց համար ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական վարչակարգերը միևնույն բանն են»	24	8	9	7	6
Զգիտեմ/Պատ. չկա*	12	9	11	23	2

*Աղբյուրը՝* Ուրուգվայի վերաբերյալ նույնը, ինչ Աղյուսակ 10.1: Իսպանիայի, Պորտուգալիայի և Նունաստանի վերաբերյալ նույնը, ինչ Աղյուսակ 8.2: Բրազիլիայի մասին տվյալները՝ "Avaliacao do Governo Collor apos dois anos de mandato", *Datafolha* (Սան Պաուլո, 1992թ. փետրվար), ազգային ընտրանք՝ 2500:

\*Զգիտեմ/Պատասխան չկա:

անգամ տրվել էին 1988թ. և 1992թ. միջև ընկած ժամանակահատվածում չորս տարբեր կազմակերպությունների կողմից, որոնք կիրառել էին ինչ-որ չափով տարբեր ընտրանքներ ու հարցման եղանակներ: Ի դժբախտություն Բրազիլիայի քաղաքականության՝ *յուրաքանչյուր* առանձին հարցման ժամանակ այդ երեք հիմնական հարցերից *յուրաքանչյուրի* գծով ցուցանիշները Բրազիլիայում ավելի ցածր էին, քան Իսպանիայում, Ուրուգվայում, Պորտուգալիայում կամ Հունաստանում (Աղյուսակ 11.2):

1986-92թթ. ժամանակահատվածում ժողովրդավարության աջակցության բարձրակետը եղել է 1989թ. դեկտեմբերին՝ քսանինը տարվա ընթացքում Բրազիլիայում առաջին ուղղակի նախագահական ընտրություններից անմիջապես հետո:<sup>20</sup> Արդեն 1991-1992թթ., սակայն, այդ աջակցությունը «նվաճել էր» նոր ցածր դիրքեր: Աղյուսակներ 11.1-ի և 11.2-ի արդյունքներն այնքան հստակ են, որ միայն դրանց վրա հիմնվելով կարելի է անել այն դատողությունը, որ Բրազիլիայում ժողովրդավարությունը հետո է կայացած լինելուց: Մենք հիմնավորել ենք, որ ժողովրդավարությանն աջակցությունը պետք է միշտ գնահատվի ուրիշ այլընտրանքների հետ համեմատության մեջ: Ուրուգվայի դեպքում մենք տեսանք, որ գոյություն ունեւ հսկայական անդունդ արդյունավետության ու լեգիտիմության միջև: Սակայն այդ տարբերության վտանգավորությունը Ուրուգվայում ժողովրդավարության համար նվազեցվել էր, որովհետև քաղաքական կուսակցությունները լցրել էին քաղաքական տարածքի մեծ մասը, իսկ զինվորականությունը չէր ընդունվել որպես այլընտրանք: Իսկապես, մենք տեսանք, որ նախագահ Մանզինետիի ժողովրդավարա-

20. Վերլուծություն այն մասին, թե ինչպես ընտրությունների ժամանակ մասնակցության ընդլայնումը մեծացրեց ժողովրդավարությանն աջակցությունը, տե՛ս Տուգե Ալվարո Մոզիսի (Jose Alvaro Moises) առաջիկա "*Cultura Política*", ինչպես և նրա «Ճողովրդավարությունն ու զանգվածային քաղաքական մշակույթը Բրազիլիայում» ("*Democratization and Mass Political Culture in Brazil*" (St. Antony's College, Oxford University, March 1992, unpublished manuscript)):

**Աղյուսակ 11.2. Ժողովրդավարության նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի զարգացումը Բրազիլիայում, 1988-1992թթ.**

Նախընտրած հասարակարգի մասին կարծիքը	Պատասխանողների տոկոսը					
	Պեկտեմբեր 1988	Սեպտեմբեր 1989	Դեկտեմբեր 1989	Մարտ 1990	Ապրիլ 1991	Ապրիլ 1992
«Ժողովրդավարությունը նախընտրելի է կառավարության որևէ այլ ձևից»	43	43	55	56	39	42
«Որոշ դեպքերում ոչ ժողովրդավարական կառավարությունը կարող է նախընտրելի լինել, քան ժողովրդավարությունը»	21	18	15	17	17	22
«Ինձ նման մարդկանց համար ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական վարչակարգերը նույն բանն են»	26	22	16	17	28	24
Զգիտեմ/Պատ. չկա/այլ	10	17	14	10	14	12
Ընտրանքի մեծությունը	800 (Ման Պաուլո)	2083 (Ազգային)	2510 (Ազգային)	2480 (Ազգային)	3650 (Ազգային)	2500 (Ազգային)
Վարցման կազմակերպիչ	IDESP	CEDEC	CEDEC	CEDEC	IBOPE	Datafolha

*Աղբյուրը՝* 1988թ. դեկտեմբերի հարցումը կազմակերպվել էր "IDESP"-ի երկու հետազոտողների կողմից և այդ մասին տվյալները ներկայացվել են՝ Յուդիթ Մուսոինսկի և Անտոնիո Սանուել Տեյքսերա Մենդեշ, "Democratização e opinião pública no Brasil", Բոլիվար Լամունիերի խմբ.՝ "De Geisel a Collor: O balançodetransição" (São Paulo: Editora Sumaré, 1990), էջ 61-80, հատկապես՝ 70: 1989թ. սեպտեմբերի, 1989թ. դեկտեմբերի և 1990թ. մարտի ուսումնասիրությունները արդյունք են քաղաքական մշակույթի մասին մի բազմամյա հետազոտական ծրագրի, որը կազմակերպել էր ժուզե Ալվարո Մոիզիսը "CEDEC"-ից, և որի տվյալները կիրառարակվեն առաջիկա գրքում: 1991թ. ապրիլի արդյունքները "IBOPE"-ից են, որը Բրազիլիայի հարցում իրականացնող ամենախոշոր առևտրային կազմակերպությունն է, որը կիրառում է հեռախոսային հարցազրույցներ: "IBOPE"-ի արդյունքները ներկայացված են Բոլիվար Լամունիերի խմբ.՝ "Ouvindo o Brasil: Uma análise da opinião pública brasileira hoje" (São Paulo: Editora Sumaré, 1992), էջ 137-58, հատկ.՝ 150-51: 1992թ. ապրիլի հարցումն անցկացրել է "Datafolha"-ն, "Folha da São Paulo" լրագրի հասարակական կարծիքի հարցման կազմակերպությունը:

կան կառավարությունը, չնայած դժվարություններին, համարվել էր ավելի արդյունավետ, քան զինվորականությունը՝ ըստ ռազմավարական յոթ ոլորտների, որտեղ նրանց կատարողականները համեմատվել էին:

Իրավիճակը Բրազիլիայում էականորեն ավելի վտանգավոր էր: Ե՛վ արդյունավետությունը, և՛ լեգիտիմությունը բավական ցածր էին, իսկ բնակչության մի զգալի մասի կարծիքով՝ զինվորական կառավարությունը եղել էր ավելի արդյունավետ, քան քաղաքացիականը: 1989թ. յոթ կետերից հինգի առնչությամբ քաղաքացիները հավատում էին, որ իրավիճակն ավելի լավ էր 1964-85թթ. զինվորական վարչակարգի օրոք, քան քաղաքացիական ժողովրդավարական իշխանության առաջին չորս տարիներին (Աղյուսակ 11.3):

Զինվորականության նախկին կատարողականի բարձր գնահատականից անգամ ավելի վտանգավոր էր ապագա նախընտրության հարցը: Ի տարբերություն Ուրուգվայի կամ անգամ Արգենտինայի՝ Բրազիլիայի քաղաքացիների մի զգալի տոկոսը զինվորականության վերադարձը հաստատուն կերպով տեսել է որպես *ապագայի ցանկալի այլընտրանք*: Օրինակ՝ 1988թ. դեկտեմբերին Բրազիլիայում, Արգենտինայում և Ուրուգվայում նոր ժողովրդավարությունների համեմատական ուսումնասիրության մեջ Մոնտեխիդեյի հարցման ենթարկված բնակիչների միայն 6%-ն է կարծել, որ զինվորականության վերադարձը կշտկի իրերի վիճակը. այդպես է կարծել արգենտինացիների միայն 15%-ը, մինչդեռ դա

**Աղյուսակ 11.3. Քաղաքացիների բավարարվածությունը Բրազիլիայի կատարողականով 1964-1985թթ. զինվորական վարչակարգի օրոք և քաղաքացիականների կողմից ղեկավարվող ժողովրդավարության (Նոր հանրապետություն) առաջին չորս տարիներին**

Գնահատվող կետը	Պատասխանողների տոկոսը			
	Ավելի լավ զինվորական վարչակարգի օրոք	Ավելի լավ Նոր Վանրապետության ժամանակ	Վավասար՝ երկու ժամանակամիջոցներում էլ	Զգիտեմ կամ պատասխան չկա
Ընդհանուր իրավիճակը	46	17	28	9
Տնտեսական վիճակը	52	13	26	9
Սղան	56	14	21	9
Արտաքին պարտք	37	18	30	15
Կոռուպցիա	35	18	32	15
Քաղաքական ազատություններ	19	48	18	15
Արտահայտման ազատություն	16	50	17	17

*Աղբյուրը.* Տվյալները՝ "Ibope"-ից (1989 ապրիլ), N2, 750, համազգային հարցումից: Մեջբերված է՝ Բոլիվար Լամունիերի և Ալեխանդր Մարկոսի, "A democracia brasileira no final da 'década perdida,'" Բոլիվար Լամունիերի խմբ. "Ouvindo o Brasil. Uma análise da opinião brasileira hoje" (São Paulo: Editors Sumare, 1992), էջ 149:

եղել է Սան Պաուլոյի հարցման ենթարկված բնակիչների 40%-ի կարծիքը:<sup>21</sup> Մեկ տարի անց ազգային հարցման ժամանակ, ի պատասխան այն պնդման, որ «Երկիրն ավելի լավ վիճակում կգտնվեր, եթե զինվորականությունը վերադառնար իշխանության», իր համաձայնությունն է արտահայտել 38%-ը, և չի համաձայնվել միայն 45%-ը:<sup>22</sup>

Ինչո՞ւ այդքան շատ բրազիլացիներ երկակի զգացում ունեին ժողովրդավարության հանդեպ: Մեկ հնարավոր վարկածն այն է, որ մի այնպիսի երկրում, որտեղ եկամուտների հավանաբար ամենավատ բաշխումն է աշխարհում, ամենաաղքատ քաղաքացիները զգում են, որ անարդյունավետ կառավարության ու ասկետիզմի երկարատև քաղաքականության համակցությունը նշանակում է, որ ժողովրդավարությունը դրական ազդեցություն չի ունեցել նրանց կյանքի տնտեսական որակի վրա: Ի դեպ, երբ տալիս ենք այն երեք դասական հարցերը՝ քաղաքացիների՝ ժողովրդավարությանը կողմ լինելու և նրանց տնտեսական վիճակի համեմատության վերաբերյալ, մենք տեսնում ենք խառը պատկեր: Երեք հարցերից երկուսի կապակցությամբ ամենաաղքատ մարդիկ իսկապես ամենաքիչն էին կողմնակից ժողովրդավարությանը: Սակայն մեկ զլխավոր հարցի կապակցությամբ՝ «որոշ հանգամանքներում բռնապետությունն ավելի լավ է, քան ժողովրդավարությունը», նրանք առավել կողմնակից էին ժողովրդավարությանը: Ընդհանուր պատկերը, որը երևում է, այն է, որ անհավասարությանը կուլ գնացած Բրազիլիայում աջակցությունը ժողովրդավարությանը համեմատաբար թույլ է բոլոր խմբերում (Աղյուսակ 11.4):

Երբ շարունակում ենք հետազոտել ժողովրդավարության նկատմամբ Բրազիլիայի

21. Տե՛ս Յուդիթ Մուսչինսկի և Անտոնիո Մանուել Տեյքսիերա Մենդես (Judith Muszynski and Antonio Manuel Teixeira Mendes), "Democratização e opinião pública Brasil", Բոլիվար Լամունիերի (Bolivar Lamounier) խմբ. "De Geisel a Collor: O balanço da transição" (São Paulo: Editora Sumaré, 1990), էջ 71:  
 22. Այս հարցումը քննարկված է "Cultura Política"-ում, no. 1 (1989թ. սեպտեմբեր):

**Աղյուսակ 11.4. Պատասխանողների վերաբերմունքների միջև առկա փոխկապակցվածությունը (կորելացիա)<sup>1</sup>**  
**Նրանց եկամտի բավարար լինելու և ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունքի առումով. Բրազիլիա**

Նախընտրած հասարակարգի մասին կարծիքը	Պատասխանողների տոկոսը				
	Ամբողջ ընտրանքը	«Իմ եկամտուն ավելի քան բավարար է»	«Իմ եկամտունը ճիշտ այնքան է, որքան ինձ պետք է»	«Իմ եկամտունը բավարար չէ»	«Իմ եկամտունը շատ քիչ է, և դա ղեկավարություններ է ստեղծում»
«Ժողովրդավարությունը նախընտրելի է կառավարության որևէ այլ ձևից»	42	52	49	49	35
«Որոշ դեպքերում ոչ ժողովրդավարական կառավարությունը կարող է նախընտրելի լինել, քան ժողովրդավարությունը»	22	26	24	23	21
«Ինձ նման մարդկանց համար ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական վարչակարգերը նույն բանն են»	24	16	23	21	27
Զգիտեմ/Պատ. չկա/այլ	12	7	5	7	16
N	2500	55	11	864	1247

Սղբերը. Տվյալները՝ “Datafolha”, Բրազիլիայի համազգային հարցում, 1992թ. փետրվար:  
<sup>1</sup>Զգիտեմ/Պատ. չկա:

քաղաքացիների վերաբերմունքի երկակիությունը, տեսնում ենք, որ բախվում ենք մտահոգիչ տվյալների կայացած ժողովրդավարությունների երեք ասպարեզների առնչությամբ, այն է՝ օրենքի գերակայություն, գործուն պետություն և ուժեղ քաղաքական հասարակություն, որոնք մենք քննարկեցինք 1-ին գլխում: Իսպանիայում, Պորտուգալիայում, Հունաստանում և Ուրուգվայում այդ երեք ասպարեզները խնդրահարույց չեն եղել ժողովրդավարության կայացման համար, ուստի շատ ուշադրություն դրանց չենք նվիրել: Բրազիլիայի օրինակը, սակայն, մեզ ստիպում է ժողովրդավարության այդ ասպարեզները հետազոտել ավելի մանրամասն:

Ժողովրդավարությունը ոչ այնքան նորմատիվ ուստպիա է, որքան հակամարտությունը կարգավորելու միջոցառումների շուրջ համաձայնություն: Պետությունն ինքը պետք է հարգի օրենքն ու քաղաքացիների համար ռեսուրս հանդիսանա հակամարտությունների կարգավորման ժամանակ: Որպեսզի պետությունը (ժողովրդավարական կառավարության ղեկավարությամբ ու ձևավորված ժողովրդավարական ինստիտուտներով) իրականացնի հակամարտությունների կարգավորման ու սոցիալական ինտեգրման խնդիրները, անհրաժեշտ է երկու բան: Առաջին. պետությունը նորմատիվորեն ու ինստիտուցիոնալ կերպով պետք է ներկա լինի ամբողջ տարածքում: Երկրորդ. պետությունը պետք է դիտվի որպես համեմատաբար գործուն և արդար մեքենա հասարակարգում հակամարտությունների հաղթահարման համար: Մենք ապրում ենք մի դարաշրջանում, երբ ամեն կողմից կոչ է արվում նվազեցնել պետության դերը բոլոր ոլորտներում: Սակայն ժողովրդավարության նորմատիվ խոստումներից մեկն այն է, որ քաղաքացիների իրավունքները պետք է հարգվեն: Եթե քաղաքացիական հասարակության որևէ մեկ խումբ իր գերազանցող տնտեսական ու ճնշողական միջոցների պատճառով մերժում է քաղաքացիական հասարակության մեջ այլ խմբերի իրավունքները, ապա եթե ժողովրդավարությունն իսկապես պետք է լինի հակամարտությունների կարգավորման ու իր քաղաքացիներին իրավունքներ տրամադրելու մեքենա, պետությունը պետք է գործուն կերպով

**Աղյուսակ 11.5. Բրազիլիայում արդարադատության համակարգի և ոստիկանության արդարության մասին պնդումների հետ համաձայնության և անհամաձայնության աստիճանը, 1989թ.**

Պնդում	Պատասխանողների տոկոսը			
	Լիովին համաձայն են	Մասամբ համաձայն են	Մասամբ անհամաձայն են	Լիովին անհամաձայն են
«Բրազիլիայում արդարադատության համակարգը գործում է միայն ուժեղներին պաշտպանելու համար»	58	26	7	6
«Ոստիկանությունը ձերբակալում և սպանում է անմեղ մարդկանց»	39	39	9	9

*Աղբյուրը.* Տվյալները՝ "CEPAC-IBOPE"-ի ութսուն հարցից բաղկացած համազգային հարցում, որն անցկացվել է 1991թ. ապրիլին, 3600 պատասխանողների ազգային ընտրանքի շրջանում: Արդյունքները մասամբ հրապարակվել են "CEPAC"-ի տնօրեն Ռուբեն Ֆիգուրեդոյի կողմից "Verdades e mitos sobre a cult brasileira", Լամունիերի "Ouvindo o Brasil"-ում, էջ 95-115: 1989թ. մայիսին Սան Պաուլոյի խաղաղության ու արդարության հանձնաժողովն իրականացրեց ֆոկլոր խմբի վերլուծություն արդարադատության համակարգի, ոստիկանության և պետության արդարության մասին քաղաքացիների ընկալումների վերաբերյալ: Որակական արդյունքներն ամուր կերպով հիմնավորում են "CEPAC-IBOPE"-ի քանակական փաստերը: Տե՛ս "Pesquisa direitos humanos: Primeira fase relatório final" (São Paulo: Comissão Justiça e Paz, Maio, 1989):

ներկա գտնվի: Այս հիմնական իմաստով է, որ քաղաքացիությունն ու ժողովրդավարությունը ենթադրում են պետության նորմատիվային ու ինստիտուցիոնալ ներկայություն: Արդի քաղաքացիությունն ու ժողովրդավարությունը պահանջում են պետություն: Անգամ նախագահ Ֆուլխիմորիի «ինքնահեղաշրջումից» առաջ պերուական պետության դերն այնքան էր նվազել, որ քաղաքացիությունն ու ժողովրդավարությունը գրեթե կորցրել էին իրենց իմաստի մեծ մասը: Բրազիլիան նույնպես պետության նորմատիվային և ինստիտուցիոնալ ներկայությանը վերաբերող մեծ խնդիրներ ունեցող մի երկիր է: Ուսումնասիրությունները մեկը մյուսի հետևից բացահայտում են, որ Բրազիլիայի քաղաքացիների ճնշող մեծամասնությունը չի հավատում, որ պետությունը փորձում է օրենքները իր բոլոր քաղաքացիների նկատմամբ կիրառել անաչառությամբ: Մասնավորապես, քաղաքացիները կարծում են, որ արդարադատության համակարգը հիմնականում գոյություն ունի ուժեղներին պաշտպանելու համար, և որ ոստիկանությունը վստահության արժանի չէ (Աղյուսակ 11.5):

Ոստիկանությունն ու իրավական համակարգը, ըստ էության, ներկա չեն գյուղական վայրերում աղքատների նկատմամբ բռնությունների բացահայտման ու դատական հետապնդման առումով: 1964-1989թթ. ընթացքում 1566 քաղաքացի (գյուղական բանվորներ, տեղաբնակներ և որոշ իրավաբաններ ու կրոնավորներ) սպանվել են հողային վեճերի շուրջ հակամարտություններում: Ընդամենը 17 մարդ է երբևէ դատվել այդ սպանությունների համար: Միայն 8-ն են դատապարտվել: Սովորական քաղաքացիների համար օրենքի հասանելիության բացակայությունը հստակորեն երևում է այն փաստից, որ դատապարտման ութ դեպքերից երեքում ներգրավված են եղել քահանաներ, երեքում՝ իրավաբաններ, իսկ երկուսում՝ ընդոծին ժողովուրդներին պաշտպան կանգնող միջազգային կազմակերպություններ:<sup>23</sup>

23. Տե՛ս Պաուլո Սերխիո Պինեյրո (Paulo Sergio Pinheiro), "Democracia, derechos humanos y desarrollo economico y social: Obstáculos y resistencias. El caso de Brasil", "Núcleo de estudios da violência", (1991թ. դեկտեմբեր) էջ 11:

Քաղաքային շրջաններում պետությունը ներկա է ոստիկանության տեսքով, սակայն համաշխարհային ստանդարտներով մահվան էլքով բռնի ուժի կիրառումը չափազանց մեծ է ժողովրդավարության համար: Ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ հրազենային փոխհրաձգություններից սպանված քաղաքացիների ու ոստիկանների հարաբերակցությունը, օրինակ, մի չափորոշիչ է, որը գնահատելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք մահվան էլքով դեպքերում բռնի ուժի կիրառումն անհրաժեշտ է եղել: 1990թ. Նյու Յորքում նման փոխհրաձգությունների ժամանակ յուրաքանչյուր ոստիկանի հաշվով սպանվել էր 7.8 քաղաքացի: 1990թ. Սան Պաուլոյում այդ հարաբերակցությունը 28:1 էր: Սան Պաուլոյի արվարձաններում, որտեղ մեծ մասամբ ապրում է ավելի աղքատ բնակչություն, այդ հարաբերակցությունը մոտ էր 40:1: Մեկ այլ գլխավոր ցուցանիշ հետազոտման համար վիրավորվածների ու սպանվածների հարաբերակցությունն է, այսինքն՝ ոստիկանության հետ ընդհարումների ժամանակ վիրավորված քաղաքացիների թվի հարաբերակցությունը նման ընդհարումների ժամանակ սպանված քաղաքացիների թվին: Չիկագոյում 1971թ-ից մինչև 1974թ. այդ հարաբերակցությունը եղել է այսպիսին. վիրավորվածներ և սպանվածներ՝ 3/1 (393 քաղաքացիներ վիրավորվել են, իսկ 131 քաղաքացիներ սպանվել են): Սան Պաուլոյում 1990թ., սակայն ոստիկանության կողմից վիրավորվել էին 251 ու սպանվել՝ 588 քաղաքացիներ: Այսինքն սպանվածների ու վիրավորվածների հարաբերակցությունը 7 անգամ մեծ էր Չիկագոյի ցուցանիշից: Սպանվածների ու վիրավորվածների նման հարաբերակցությունը ցույց է տալիս, որ շատ քաղաքացիներ, հավանաբար, սպանվել էին ոչ այնքան ոստիկանների հետ հրազենային կոնֆլիկտում, որքան գնդակահարվել էին ոստիկանության կողմից:<sup>24</sup>

Այս ցուցանիշներն օգնում են հասկանալու, թե ինչու են Բրազիլիայում շատ զեկույցներ ցույց տալիս, որ մարդիկ այնքան են վախեցած ոստիկանությունից, որ բախումների կարգավորման համար հազվադեպ են դիմում նրա օգնությանը: Ինչպես մենք կտեսնենք, սա կտրուկ կերպով տարբերվում է Չիլիից, որտեղ ամբողջ բնակչության 76%-ը և անգամ 72%-ն այն անձանց, ովքեր իրենց ձախ են համարում, կարծում է, որ կարժանանանա բարյացակամ վերաբերմունքի, եթե որևէ խնդրով դիմի ոստիկանությանը:<sup>25</sup>

24. Այս և այլ ցուցանիշների նորարարական ուսումնասիրություն, *տե՛ս* Փոլ Չևինի, «Ոստիկանության մահաբեր ուժը որպես սոցիալական վերահսկողության ձև. Ջամայկա, Բրազիլիա և Արգենտինա» (Paul G. Chevigny, "Police Deadly Force as Social Control: Jamaica, Brazil and Argentina", *Nucleo de estudos da violencia*, (1991)): Այս հարցերը փայլուն կերպով արծարծվել և հիմնավորվել են Վանդերլի Գիլիերմ դո Սանտոսի (Wanderley Guilherme dos Santos), "*Fronteiras do Estado Minimo: Indicações sobre o híbrido institucional brasileiro*", in *Razões da desordem* (Rio de Janeiro: Rocco, 1993), էջ 77-116: Փայլուն, ինչպես նաև մտահոգություններ առաջ բերող վերլուծություն արդարադատության ոլորտում պետական հատվածի վատ կատարողականի շրջափուլի մասին, որը նպաստում է մարդու իրավունքների պաշտպանների նկատմամբ քաղաքացիական հասարակության մոտ զոհությունն ու թշնամանքի առաջացմանը, որն իր հերթին սնում է ոստիկանական անխտիր բռնությունները, *տե՛ս* «Ոստիկանական բռնությունները և օրենքի գերակայության ձախողումը» ("*Police Violence and the Failure of the Rule of Law*"), Թերեզա Պիրես դո Ռիո Կալդեյրայի, «Պատերի քաղաքը. հանցագործությունը, խտրականությունը և քաղաքացիությունը Սան Պաուլոյում» (Teresa Pires do Rio Caldeira, "*City of Walls: Crime, Segregation and Citizenship in São Paulo*" (Ph.D. diss. Department of Anthropology, University of California at Berkeley, 1992), 159-223):

25. Չիլիի մասին տվյալները պարունակվում են "Estudio, social y de opinión pública", Centro de Estudios Públicos, Documento de Trabajo, no. 173 (Մանտյագո, Չիլի, 1992թ. փետրվար), էջ 65: Բրազիլիայի



Բրազիլիայում պետության ֆինանսական ճգնաժամը բարդացնում է այս խնդիրներից շատերը: Օրինակ, Ոստիկանության ազգային ակադեմիան, որը, հնարավոր է՝ նոր ժողովրդավարական կառավարության կողմից դարձվեր նոր հետազոտությունների, հասարակայնացման ու ուսուցման աղբյուր, փակված էր 1985թ-ից ի վեր ֆինանսական դժվարությունների պատճառով:<sup>26</sup>

Գիյերմո Օ'Դոննելլն արել է մի հիմնավոր դիտարկում վերը քննարկված թեմայի վերաբերյալ: Նա պնդում է, որ եթե մեկը կանաչ գույնով ներկեր քարտեզն այնտեղ, որտեղ պետությունն ու ժողովրդավարական կառավարությունը գործուն կերպով ներկա են, մոխրագույն՝ որտեղ նրանք միայն մերթնդմերթ են ներկա, և սպիտակ թռչուններ այն մասը, որտեղ նրանց ծառայությունները, օրենքներն ու նորմերը չեն զգացվում, կայացող ժողովրդավարությունը պետք է գնալով «կանաչեր»: Դժբախտաբար, ցածր արդյունավետության, բարձր կոռուպցիայի, նորագատականության՝ պետության դերի նվազեցման տարերային շանքերի ու ֆինանսական ճգնաժամի համակցությունը նշանակում էին, որ 1985թ-ից մինչև 1993թ. Բրազիլիայի մոխրագույն ու սպիտակ մասերն ավելի են ընդարձակվել, քան կանաչ մասերը:<sup>27</sup>

1993թ. ապրիլի վերջին՝ նախագահ Կոլլորի իմպիչմենտից ու նախագահ Իտամար Ֆրանկոյի կողմից պաշտոնի ստանձնումից վեց ամիս հետո, Բրազիլիան շարունակում էր առաջ ընթանալ ամիսը գրեթե 30% սղաճով: Շատ վերլուծաբաններ արտահայտում էին իրենց կասկածներն առ այն, որ դժվար թե որևէ լուրջ կառուցողական փոփոխություն տեղի ունենա մինչև նոր նախագահի երդմնակալությունը 1995թ. հունվարին: Բազմաթիվ քաղաքական գործիչներ, ինչպես նաև քաղաքացիներ բարձրաձայնում էին իրենց վախը, որ նախագահական ընտրությունները կբեռնացնեն երկիրն ու կստեղծեն մեկ այլ փոք-

---

րնակչության զգուշավորությունը ոստիկանությունից երևում է Շիկու Բուարկե դե Օլանդայի երգում՝ «Օգնեցե՛ք, կանչե՛ք գողին» («Օգնեցե՛ք, կանչե՛ք ոստիկանությանը»)-ի փոխարեն):

26. Ստեփանի հարցազրույցը Բրազիլիայի արդարադատության նախարար Չելլո Բորջիայի հետ 1992թ. ապրիլի 7-ին: Նույն հարցազրույցում, երբ խնդրվեց մեկնաբանել, թե բրազիլացիներն ինչու են կասկածանքով վերաբերվում արդարադատության ու ոստիկանության համակարգերին, նա պատասխանեց. «Լրանք ճիշտ են, որ նման կասկածանքներ ունեն»: Սակայն շարունակեց տրտնջալ, որ, ըստ էության, չունի ֆինանսական ռեսուրսներ իրավիճակը բարելավելու նպատակով հատկացնելու համար:

27. Գիյերմո Օ'Դոննելլ, «Դիտողություններ պետության, վարչակարգի և ճգնաժամի մասին կամ ինչպես եմ հայտնաբերում, որ օգտակար է մտածել այնպիսի երկրների մասին, որոնք բոլորովին էլ չեն գնում դեպի կայացած ժողովրդավարական վարչակարգ», "Notes on State, Regime and Crisis-or how I am finding it useful to think about countries that are not moving at all toward a consolidated democratic regime" (նյութը պատրաստված է Արևելք-Հարավ համակարգի փոխակերպման ծրագրի համաժողովի համար, Տոլեդո, 1991թ. հունվար): Ոճական նկատառումներով մեզ թույլ ենք տվել փոփոխել Օ'Դոննելլի որոշ գույները, սակայն նրա հիմնական դիտարկումը մնում է: Օ'Դոննելլի սկզբունքային աշխատության ինչ-որ չափով վերանայված տարբերակը տպագրված է որպես «Պետության, ժողովրդավարացման ու որոշ հասկացութենական խնդիրների մասին (լատինաամերիկյան տեսակետ)՝ հայացք նետելով որոշ հետկոմունիստական երկրներին», "On the State, Democratization and Some Conceptual Problems (a Latin American View with Glances at some Post-Communist Countries)", Համաշխարհային զարգացում 21 (1993թ.), էջ 1355-69:

Տե՛ս նաև դոս Սանտոս (dos Santos), "Fronteiras do Estado Minimo", «Razões da desordem» գրքում: Նույն գրքում տե՛ս նաև "Primeiro, terceiro e outros mundos possíveis, ou como se tornar um paismais pobre e predar oplaneta", էջ 117-48:

րամասնական կառավարություն: Մեկնաբաններն այդ ժամանակ նաև անհանգստանում էին, որ եթե Բրազիլիայում տեղի ունենա զերսոլաճ, ապա նախագահ Իտամար Ֆրանկոն ստիպված կլինի հրաժարական տալ, իսկ դա կարող է առաջացնել քաղաքական ու սահմանադրական ճգնաժամ:<sup>28</sup>

Այս համատեքստում Բրազիլիայի ամենահեղինակավոր լրագրողներից մեկը Բրազիլիայի խոշորագույն շաբաթաթերթում գրեց հետևյալ խմբագրականը.

«Երթ դեպի հեղաշրջում»

Ստորև բերվում է ենթադրությունների մի փոքրիկ ցանկ, որոնց շուրջ ոչ անհիմն կերպով կարելի է ենթադրել, որ Բրազիլիայում կա փոխհամաձայնության ինչ-որ ձև:

1. Երկիրը չունի իր տարադրամը:

2. Բրազիլիայի տնտեսությունն ապրում է այս դարի ամենաձանր ճգնաժամը, և առաջիկա երկու տարիներին չկա առողջացման հույս: Առողջացման հույսն ավելի քիչ է խաղի ներկա կանոնների պայմաններում:

3. Մեծ քաղաքների հանրային անվտանգության ծառայությունների ճգնաժամը քաղաքացիներին փողոց դուրս գալու վախ են ներշնչել:

4. Գործադիր իշխանությունն անկման ուղին բռնեց տասը տարի առաջ:

5. Օրենսդիր իշխանությունը վարկաբեկված է:

Հնարավոր է հանդուրժել այս դժբախտությունների որոշ մասը երկար ժամանակ կամ անգամ բոլոր հինգն էլ՝ մի կարճ ժամանակ, սակայն անհնար է բոլորը հանդուրժել անորոշ ժամանակով:

Բրազիլիան բռնել է պետական հեղաշրջման ճանապարհը: Այս իրավիճակը չի կարող տևել ևս երկու տարի: Ինչպես տեղի կունենա հեղաշրջումը, դժվար է ասել: Կախված հաջորդ տարվա նախագահական ընտրությունների արդյունքներից ու հաղթողի պահվածքից՝ դա կարող է ավելի նման լինել 1937թ-ին (հեղաշրջում նախագահի հետ), քան 1964թ-ին (նախագահի դեմ):

... Ասել, որ հեղաշրջման վտանգ չկա, որովհետև զինված ուժերը քաղաքականությունից դուրս են, հիմարություն է: Բրազիլիայում հեղաշրջում կատարած մարդիկ քաղաքացիական կյանքում փողի տոպրակներ են... Հեղաշրջումը երթի չի ելել: Սա մի այնպիսի իրավիճակ է, որը միջին խավին և ձեռնարկատերերին կստիպի երթի ելնել հեղաշրջման համար:<sup>29</sup>

Անգամ առանց վերոհիշյալ խմբագրականի կարծում ենք, որ ավելի քան բավարար ապացույցներ ենք բերել՝ ցույց տալու, որ Բրազիլիան 1993թ. հեռու էր կայացած ժողովրդավարություն լինելուց: Իսկապես, ասվածը եզրափակող կենտրոնական հարցերն են,

28. Բրազիլիայի առաջատար տեղեկատվական բյուլետեններից մեկը՝ "Carta Política"-ն, իր 1993թ. ապրիլի 5-11 համարում, ըստ էության, անց է կացրել էլիտար հարցում այն մասին, թե ով պետք է հաջորդի նախագահ Ֆրանկոյին, եթե նա հրաժարական տա: Ստեփանի հետ գրույցների ժամանակ 1993թ. ապրիլին, որոշ պատգամավորներ ասել են, որ նախքան նախագահ Իթամար Ֆրանկոյին հրաժարական տալու մասին հորդորելը, ըստ իրավահաջորդության սահմանադրական կարգի՝ հաջորդ պաշտոնյան՝ պատգամավորների պալատի նախագահը, ում նույնպես ներկայացվել են կոռուպցիոն մեղադրանքներ, պետք է հեռացվի պաշտոնից:

29. Էլիո Գասպարի (Elio Gaspari), "Veja" (28 ապրիլի, 1993թ.), էջ 23:

թե ի՞նչ կարելի է անել Բրազիլիայի փխրուն ժողովրդավարությունը հետագա քայքայումից փրկելու կամ ավելի դրական ձևակերպմամբ՝ Բրազիլիայում ժողովրդավարության որակը բարելավելու համար: Այս հարցերն, իհարկե, արժանի են բազմաթիվ տնտեսական, սոցիալական ու քաղաքական լիարժեք ուսումնասիրությունների: Մենք կսահմանափակվենք մի քանի դիտողություններով, որոնք ուղղակիորեն բխում են կայացած ժողովրդավարության հինգ ոլորտների վերաբերյալ մեր նախնական տեսական շրջանակից, որը քննարկեցինք Ադյուսակ 1.1-ում՝ եռանդուն քաղաքացիական հասարակություն, համեմատաբար ինքնավար ու արժեքավոր քաղաքական հասարակություն, օրենքի գերակայություն, գործուն պետություն ու ինստիտուցիոնալացված տնտեսական հասարակություն: Արդյո՞ք ժողովրդավարությունը Բրազիլիայում նախասահմանված ձախողում է, թե՞ կան որոշ հնարավոր հավանականություններ՝ հիրշմանյան իմաստով:

### ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՆԵՐԸ ԲՐԱԶԻԼԻԱՅՈՒՄ. ՀՆԱՐԱՎՈՐ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ

Եկեք նախ անդրադառնանք օրենքի գերակայության հարցին: «Հաշվետու լինելը» պետության ժողովրդավարական վերահսկողության արդի տեսության ու պրակտիկայի համար կենտրոնական գաղափար է: Դժբախտաբար, «հաշվետու լինել» հասկացության համար պորտուգալերենում բառ չկա: Ամենամոտ բառը "*responsabilidade*" բառն է, որն արտահայտում է այն միտքը, որ ինչ-որ բանի՝ առանձնահատուկ կերպով վատ ընթացք ստանալու դեպքում պատասխանատու անձը ստանձնում է պատասխանատվությունը: Ժամանակակից ժողովրդավարական պրակտիկայում, սակայն, հաշվետու լինելն ունի ավելի լայն ներքին նշանակություններ: Սա նշանակում է, որ բոլոր ֆինանսական տվյալները *կանոնավորապես* ենթարկվում են տեսչական ստուգման, և հանրային ֆինանսական միջոցներն օգտագործող պաշտոնյաների պարտականությունն է թափանցիկ ընթացակարգերով առաջնորդվելը: Այդ հասկացությունն ավելի ու ավելի շատ է կիրառվում՝ օգնելով սահմաններ դնել հանրային ֆինանսական միջոցները հանրային նպատակներով ընդունելի օգտագործման ու հանրային ֆինանսական միջոցները մասնավոր նպատակներով անթույլատրելի օգտագործման միջև: Բյուրոկրատներն ու պաշտոնյաները, ովքեր պետական ռեսուրսներին վերաբերվում են որպես իրենց «ժառանգության», ենթարկվում են պատասխանատվության և կարող են բանտարկվել:<sup>30</sup>

30. Մաքս Վեբերի՝ ժամանակակից բյուրոկրատիայի ու պատրիմոնիալ իշխանության ներքո վարչական համակարգի դասական տարբերակման համառոտ համեմատություն, *տե՛ս* Ռայնհարդ Բենդիքս, «Մաքս Վեբեր. ինտելեկտուալ դիմանկար» (Reinhard Bendix, Max Weber: *An Intellectual Portrait* (New York: Anchor Books, 1960), 423-25): Բյուրոկրատական իշխանության վեց գլխավոր սկզբունքները, որոնցից բոլորն էլ հակասում են ժառանգականության պրակտիկային, և որոնց բոլորին էլ ժողովրդավարացման կողմնակիցները դեռևս փորձում են հասնել Բրազիլիայում, հետևյալն են՝ (1) «Պաշտոնական աշխատանքը կատարվում է շարունակական հիմունքով», (2) «Այն կատարվում է սահմանված կանոնների համաձայն», (3) «Յուրաքանչյուր պաշտոնյայի պարտականություններն ու լիազորությունները կազմում են իշխանության աստիճանակարգության մասը», (4) «Պաշտոնյաներն ու այլ վարչական աշխատողները չունեն անհրաժեշտ ռեսուրսներ իրենց համար նախատեսված գործառույթներն իրականացնելու համար, սակայն նրանք հաշվետու են այդ ռեսուրսների օգտագործման

Ինչպես տեսանք, գլխավոր պատճառներից մեկը, թե ինչու է օրենքի գերակայությունն այդքան թույլ Բրազիլիայում, այն է, որ պետական պաշտոնյաները քաղաքացիների կողմից չեն ընկալվում որպես արդարադատություն իրականացնող անաչառ մարդիկ: Ավելին, պետական պաշտոնյաները հաճախ օրենքն անպատիժ կերպով խախտում են: Այս առումով նախագահ Կոլորի իմպիչմենտը ժողովրդավարական ընթացակարգերի հաղթանակն էր ու «անպատժելիության» դեմ առաջին խոշոր հաղթանակը: Տեսական առումով իմպիչմենտի գործընթացի տպավորիչ կողմն այն էր, որ ժողովրդավարության բազմաթիվ ճգնաժամերի պարագայում անգամ բրազիլական հասարակարգի բոլոր գլխավոր բաղադրիչները կատարեցին իրենց հիմնական ժողովրդավարական խնդիրները: Կոլորի վարչակազմի դեմ կոռուպցիայի մեղադրանքները նախ՝ քաղաքացիական հասարակության կողմից լրիվ ի ցույց դրվեցին ամսագրային ու լրագրային մի շարք հիանալիորեն շարադրված պատմությունների տեսքով: Այնուհետև մեղադրանքները մեղմելու կամ զինվորականությունից արտասահմանադրական օգնություն հայցելու փոխարեն քաղաքական հասարակության համապատասխան մասը՝ Բրազիլիայի Կոնգրեսը, ճիշտ կերպով ստանձնեց լայնածավալ հետաքննություն իրականացնելու պատասխանատվությունը: Կառավարությունը ևս խաղաց իր պատշաճ դերը: Գլխավոր պետական մեղադրողի նորովի վերասահմանված գրասենյակն անցկացրեց անկախ հետաքննություն, իսկ արդարադատության նախարարությունը դաշնային ոստիկանությանը թույլատրեց անցկացնել որոշակի անհրաժեշտ հետաքննություններ: Երբ բազմաթիվ հետաքննությունների արդյունքները հրապարակվեցին, քաղաքացիական հասարակությունն այս անգամ բազմաթիվ զանգվածային հրապարակային ցույցերի միջոցով քաղաքական հասարակությանը հորդորեց քվեարկել իմպիչմենտին կողմ և անպատժելիությանը դեմ: Ջինվորականությունից դուրս կամ դրա ներսում ոչ մի նշանակալի ուժ երբեք փորձ չարեց զինվորականությանը ներգրավել ժողովրդավարական ընթացակարգերի աշխատանքը դանդաղեցնելու կամ արագացնելու գործում:<sup>31</sup> Դեռ չափազանց վաղ է որևէ դատողություն անել, սակայն հնարավոր է, որ Կոլորի իմպիչմենտն ավելի ընդհանուր կերպով է նպաստել օրենքի գերակայությանը Բրազիլիայում՝ պետական պաշտոնյաների և օրենսդիրների անպատժելիության հարցը գոնե ժողովրդավարական օրակարգում ներառելու միջոցով:<sup>32</sup>

համար: Պաշտոնական աշխատանքն ու մասնավոր գործերը, պաշտոնական եկամուտն ու մասնավոր եկամուտը խստորեն առանձնացված են» (շեշտն ավելացված է), (5) «Պաշտոնները չեն կարող յուրացվել դրանք զբաղեցնողների կողմից», (6) «Պաշտոնական աշխատանքը կատարվում է գրավոր փաստաթղթերի հիման վրա»: Նույն տեղում, էջ 424:

31. Պետական հանցագործության մեջ մեղադրանքի մասին լիարժեք գիտական ուսումնասիրություններ դեռ չեն հրատարակվել: Սակայն կարևոր սկիզբ է Մարիա Դ'Ալվա Ջիլ Կինզոյի «Կոլորի իմպիչմենտի քաղաքական գործընթացը» (Maria D'Alva Gil Kinzo, "The Political Process of Collor's Impeachment" (paper prepared for the conference, "Brazil: The Struggle for Modernization: Institute of Latin American Studies, University of London, Feb. 18-19, 1993, to be published in the conference proceedings by the institute)): Հետևանքի քաղաքական գործընթացի մասին տե՛ս նաև Մարկոս Նոբրը (Marcos Nobre), "Pensando o Impeachment", Novos Estudos CEBRAP, no. 34 (Nov. 1992): 15-20:

32. Օրինակ՝ "Veja" (24 մարտի, 1993թ.), էջ 16-25, տպագրել է երկու հոդված, որտեղ համեմատվում են կոռուպցիայի համար անպատժելիությունը Բրազիլիայում և ազատագրվումն Իտալիայում: Ի թիվս այլ բաների՝ "Veja"-ն մատնացույց է արել, որ Ռիո դե Ժանեյրո նահանգում 8700 բանտարկյալների շրջանում մարդահամարը 1988թ. չի բացահայտել և ոչ մի մարդու, ով բանտ է նստեցվել քաղաքական

Այժմ դառնանք Բրազիլիայի «քաղաքական հասարակության» հարցին և տնտեսության հետ դրա կապին: Գլխավոր խնդիրներից մեկը, որ ցանկացած ժողովրդավարական քաղաքական հասարակություն պետք է իրականացնի, շահերի միավորումն է մի այնպիսի եղանակով, որ ընտրված կառավարությունները կարողանան զարգացնել բավարար ժողովրդավարական իշխանություն՝ արդյունավետորեն լուծելու այն խոշոր խնդիրներից շատերը, որոնք կանգնած են հասարակության առջև: Ինչպես ցույց ենք տվել փաստերով, յոթ տարբեր կայունացման ծրագրերի ձախողումը 1985թ. և 1992թ. միջև ընկած ժամանակահատվածում Բրազիլիայում արդյունավետության ու ժողովրդավարական իշխանության բացակայության բազմաթիվ նշաններից էին:

Բրազիլիայի տնտեսությունն այս ժամանակահատվածում լիովին փլուզված չէր: Օրինակ, 1992թ., երբ Մեքսիկան ուներ 22.8 մլրդ դոլարը առևտրային դեֆիցիտ, Բրազիլիան ուներ ավելի քան 15 մլրդ դոլարի առևտրային հավելուրդ և ավելի քան 20 մլրդ դոլարի պահուստներ: Մակայն ընդհանուր առմամբ երկրում քաղաքական ճգնաժամի պատճառով առաջին երեք քաղաքացիական նախագահներն անկարող էին եղել աջակցություն ձեռք բերել կայունացման որևէ ռազմավարության օգտին. աշխատավորների իրական եկամուտները նվազել էին, և ի վերջո, պետությունը կանգնել էր այնպիսի ֆինանսական ճգնաժամի առջև (որն, ըստ էության, նկարագրվում է որպես անվստահություն, այնպես որ պետությունը կարող է միայն պարտք վերցնել շատ կարճ ժամկետով ու շատ բարձր տոկոսադրույքներով), որ իրական տոկոսադրույքները 1992թ. մոտեցել էին 30%-ի: Այս բարձր իրական տոկոսադրույքը մասնավոր հատվածի նոր ներդրումները դարձրել էր անկարելիորեն ծախսատար նրանց համար, ովքեր կարիք ունեին դիմելու կապիտալի շուկային, իսկ Բրազիլիայի կառավարության ներքին պարտքի սպասարկումն այնքան ծանրաբեռնող էր, որ պետությունը գնալով ավելի քիչ հանրային բարիքներ էր կարողանում տրամադրել իր քաղաքացիներին: 1985-1993 թվականների միջև ընկած ժամանակահատվածում Բրազիլիայում թույլ կառավարությունները չէին ցանկանում կամ չէին կարողանում հաղթահարել ֆինանսական ճգնաժամն ու կայունացնել տնտեսությունը: Օրենսդրական աջակցության գինը գրեթե միշտ մի համաձայնություն էր ֆինանսական բարեփոխումների հարցը օրակարգում չդնելու կամ կոնգրեսականների ու կառավարողների ընտրողներին հատուկ սուբսիդավորում տալու շուրջ:

Ֆինանսական միջոցների չարաշահման կամ ունեցած ազդեցության առք ու վաճառքի համար: 1993թ. ապրիլին արդարադատության նախարարությունը նմանատիպ ուսումնասիրություն իրականացրեց Բրազիլիայի բանտերում գտնվող 126000 բանտարկյալների վերաբերյալ և նախնական տվյալներով չէր գտել ոչ մի հանցագործ գրասենյակային աշխատող կամ պետական նախկին բարձրաստիճան պաշտոնյա, ով բանտարկվել էր Բրազիլիայում մեծ աղմուկ հանած սկանդալային կոռուպցիոն դեպքերի կապակցությամբ: Նոր մթնոլորտի մեկ այլ նշան էին լուրջ հետաքննություններն ու աննախադեպ մեծ թվով պաշտոնական մեղադրանքները, որոնք հետևեցին պետական ոստիկանության կողմից 111 բանտարկյաների սպանությանը Սան Պաուլոյում բանտային խռովության արդյունքում: Խռովությունը տեղի ունեցավ Գոլոթրի իմպիչմենտից անմիջապես հետո:

Ավելի մտահոգիչ էր այն, որ գրեթե ոչ մեկը բանտ չնստեցվեց Գոլոթրգեյթի սկանդալներից որևէ մեկի կամ Սան Պաուլոյի սպանությունների համար: Բարեփոխումների կողմնակից, հանրապետության գլխավոր դատախազ Արիստոդեուս Ժունյուեյրան պնդում էր, որ քանի դեռ չեն իրականացվել քրեական ու դատական համակարգերի բարեփոխումներ ապացուցված հանցագործությունների դեպքում դատապարտելու համար, անպատժելիության նկատմամբ հասարակության մեջ նոր փոխհամաձայնությունը կվերածվի խորացած ցինիզմի:

Բրազիլիայում շատ բաներ նպաստեցին այս իրավիճակի ստեղծմանը, սակայն իսկապես խոշոր դեր խաղաց բաժան-բաժան եղած կուսակցական համակարգի ու ամբոխավար, վոյունտարիստ նախագահների ուրույն համադրությունը: Բաժանված բազմակուսակցական համակարգերն ու նախագահականությունը տևական ժողովրդավարության համար ստեղծում են մի չափազանց անբարենպաստ համադրություն:<sup>33</sup> Սա մեր կարծիքով՝ այն բազմաթիվ պատճառներից մեկն է, որ Բրազիլիայում խորհրդարանականության ընդունումը հանրաքվեի ժամանակ 1993թ. ապրիլի 21-ին թերևս ազատության կարևոր աստիճաններ կտար երկրի փխրուն ժողովրդավարական համակարգին: Բացատրենք, թե ինչու ենք կարծում, որ խորհրդարանականության պարտությունը 1993թ. ապրիլին դարձավ չարաբաստիկ իրադարձություն:

Կառավարությունները խորհրդարանական համակարգում չեն կարող ձևավորվել ու գոյատևել առանց մեծամասնության նվազագույն աջակցության: Հետևաբար, խորհրդարանականությունը ժամանակի ընթացքում մշակում է բազմաթիվ խթաններ՝ առաջ բերելու կոալիցիոն մեծամասնություններ: Նախագահականությունն ունի կոալիցիաներ առաջ բերող շատ ավելի քիչ խթաններ:<sup>34</sup> Բազմակուսակցական կոալիցիաներից մնայուն

33. *Տե՛ս Սքոթ Մեյնուորինգի* հրաշալի կերպով փաստարկված հոդվածը՝ «Նախագահականություն, բազմակուսակցականություն և ժողովրդավարություն. բարդ համադրություն» (Scott Mainwaring, "Presidentialism, Multipartisan, and Democracy: The Difficult Combination", Comparative Political Studies 26, no. 2 (July 1993): 198-228): Նա այս փաստարկն ավելի մանրամասն է զարգացնելու Բրազիլիայի օրինակի համար. «Բազմակուսակցական նախագահական ժողովրդավարության երկընտրանքները. Բրազիլիայի օրինակը» ("Dilemmas of Multiparty Presidential Democracy: The Case of Brazil"), Սքոթ Մեյնուորինգի և Մեթյու Շուգարտի խմբ.: «Նախագահականությունն ու ժողովրդավարությունը Լատինական Ամերիկայում» (Scott Mainwaring and Matthew Shugart, eds., *Presidentialism and Democracy in Latin America* (forthcoming)):

34. Խորհրդարանականության օգտին առաջին ընդհանուր փաստարկը տպագիր տեսքով երևաց Խուան Լինցի համառոտ ակնարկում՝ «Էքսկուրսներ. նախագահական ու խորհրդարանական ժողովրդավարություններ» ("Excursus on Presidential and Parliamentary Democracy"), Լինց և Ստեփան, «Ժողովրդավարական վարչակարգերի անկումը» (Linz and Stepan, *The Breakdown of Democratic Regimes*, 71-74): Գնալով ավելանում է նախագահականության ու խորհրդարանականության համեմատական առավելությունների վերաբերյալ գրականությունը, որից շատ նյութեր ի մի են բերվել Խուան Լինցի և Արտուրո Վալենսուելայի խմբ.: «Նախագահական ժողովրդավարության ձախողումը» (Juan J. Linz and Arturo Valenzuela, eds., *The Failure of Presidential Democracy* (Baltimore: Johns Hopkins University Press, 1994)): Խորհրդարանական թեզը հիմնավորող էմպիրիկ, տարբեր երկրների վերաբերյալ փաստեր, *տե՛ս* Ալֆրեդ Ստեփան և Սինդի Սկաչ, «Սահմանադրական շրջանակներ ու ժողովրդավարության կայացում. խորհրդարանականությունն ընդդեմ նախագահականության» (Alfred Stepan and Cindy Skach, *Constitutional Frameworks and Democratic Consolidation: Parliamentarism versus Presidentialism*", World Politics (Oct. 1993): 1-22): Առաջադեմ որակական վերլուծություն, որը ցույց է տալիս, որ խորհրդարանական վարչակարգերն ավելի նպաստավոր են տնտեսական աճի համար ու ավելի լավ են դիմանում տնտեսական դժվարին ժամանակներում, քան նախագահական վարչակարգերը, *տե՛ս* Ադամ Պրժեռոսկի և Մայք Ալվարես, «Խորհրդարանականություն և նախագահականություն. ո՞րն է հաջողվում, ո՞րն է հարատևում» (Adam Przeworski and Mike Alvarez, "Parliamentarianism and Presidentialism: Which Works? Which Lasts?" (Lublin, June 27-30, 1994)):

Շատ պատճառներից ևս մեկը, թե ինչու ենք մենք նախընտրում խորհրդարանականությունը, այն է, որ դա օրենսդրի ու գործադրի փոխադարձ կախվածության մի ձև է: Օրենսդիրը կարող է արձակել կառավարությունը, իսկ կառավարությունը կարող է հայտարարել նոր ընտրություններ: Այս փոխադարձ կախվածությունը նպաստում էր կոալիցիոն մեծամասնությունների առաջացմանը, կամ եթե դա չի հաջողվում, տրամադրում է ընթացքում փակուղիները հաղթահարելու գործիքներ: Ի տարբերություն

մեծամասնություններ ստեղծելու իր ավելի մեծ կարողության շնորհիվ խորհրդարանականությունն ունի օրենսդիր մարմնում մեծ թվով կուսակցությունների հետ միասին գոյատևելու ավելի մեծ կարողություն, քան նախագահականությունը: Ի դեպ, 1979թ. և 1989թ. միջև ընկած ժամանակահատվածում թվով տասնմեկի հասնող կայացած խորհրդարանական ժողովրդավարություններն իրենց օրենսդիր մարմիններում ունեցել են երեքից յոթ «գործուն» քաղաքական կուսակցություններ՝ կիրառելով «գործուն» կուսակցությունները հաշվելու Լասկոտ-Թաագեպերայի ցուցիչը:<sup>35</sup> Ի տարբերություն դրա, տևական նախագահական ժողովրդավարություններից ոչ մեկն իր օրենսդիր մարմնում չի ունեցել 2.7-ից ավելի «գործուն» քաղաքական կուսակցություն: Կիրառելով նույն ցուցիչը՝ Բրազիլիան 1992թ. ստորին պալատում ուներ 8.5 կուսակցություններ, որոնք այն դարձնում էին երեք անգամ ավելի տարանջատված (կամ ավելի քիչ միավորված), քան որևէ տևական, կայացած նախագահական ժողովրդավարություն աշխարհում (Աղյուսակ 11.6): Խորհրդարանականությունը՝ կուսակցական կարգապահության ու կոալիցիաների ստեղծման իր ուժեղ խթաններով, մեր կարծիքով՝ կքաջալերեր Բրազիլիայի քաղաքական հասարակությանը՝ միավորելու շահերը:

Կորցնելով այն, ինչը մեր կարծիքով՝ նախագահական համակարգից խորհրդարանականի անցնելու պատմական հնարավորություն էր, ի՞նչ կարելի է անել (եթե ընդհանրապես կարելի է որևէ բան անել)՝ բարելավելու Բրազիլիայի քաղաքական հասարակությանը մոբիլիզացնող ու կառավարություն ստեղծող հզորությունները:<sup>36</sup>

Ի տարբերություն Չիլիի և Ուրուգվայի կամ անգամ Արգենտինայի՝ Բրազիլիան ունի կուսակցություններին հարելու թույլ քաղաքական մշակույթ: Սակայն թեև քաղաքական

---

դրա՝ նախագահականությունը փոխադարձ անկախության համակարգ է: Նախագահն ունի ամրագրված ու անկախ մանդատ, և օրենսդիրն ունի ամրագրված ու անկախ մանդատ: Կառավարությունները կարող են կազմվել ու կազմվում են առանց մեծամասնությունների, և բազմաթիվ կուսակցություններ ունեցող համակարգերում, ինչպիսին Բրազիլիան է, նման փոքրամասնական կառավարությունները մշտապես բախվում են երկարատև օրենսդրական փակուղային իրավիճակների առանց ընթացքում սահմանադրությամբ նախատեսված փակուղային իրավիճակների հաղթահարման միջոցների: Այս պայմաններում օրենսդիրները կարող են ցանկացած բյուջե քվեարկության դեմ առանց կառավարության պատասխանատվությունն ստանձնելու:

35. Կուսակցությունների «իրական» թիվը հաշվարկվում է՝ կիրառելով Լասկոտ-Թաագեպերայի ցուցիչը, որը հաշվի է առնում կուսակցությունների հարաբերական ուժեղությունն՝ ըստ ազգային օրենսդրի ստորին պալատում նրանց ունեցած տեղերի թվի: *Տե՛ս* Մարկու Լասկոտ և Ռեյն Թաագեպերա, «Քաղաքական կուսակցությունների «իրական» թիվը. չափորոշիչ՝ կիրառված Արևմտյան Եվրոպայի նկատմամբ» (Markku Laakso and Rein Taagepera, "Effective' Number of Political Parties: A Measure with Application to West Europe", Comparative Political Studies 12, no.1, (April 1979): 3-27): *Տե՛ս* Ստեփան և Սկաչ, «Սահմանադրական շրջանակներ ու ժողովրդավարության կայացում» (Stepan and Skach, "Constitutional Frameworks and Democratic Consolidation", 8-9):

36. Բոլիվար Լամունիերը (Bolívar Lamounier) գրել է երկու փայլուն հոդված, որոնք մանրամասն հետազոտում են այս հարցերը: *Տե՛ս* նրա «Բրազիլիա. դեպի խորհրդարանականություն» ("Brazil: Toward Parliamentaryism?"), Լինցի և Վալենսուելայի խմբ.՝ «Նախագահական ժողովրդավարության ձախողումը» (Linz and Valenzuela, eds., *The Failure of Presidential Democracy*, 179-219): Նա վերլուծում է նախագահական տարբերակի պարտությունը՝ էջ 215-16: Բրազիլիայում ընկճված տրամադրությունը 1994թ. սկզբին լավ արտահայտված է Լամունիերի «Լատինական Ամերիկայի վճռորոշ ընտրությունները. Բրազիլիան փակուղում»-ում (Lamounier, "Latin America's Critical Elections: Brazil at an Impasse", Journal of Democracy 5, no. 3 (1994): 72-87):

**Աղյուսակ 11.6. «Գործուն» քաղաքական կուսակցությունների Լաակո-Փաագեպերա ցուցիչը խորհրդարանական, կիսանախագահական ու նախագահական չընդհատվող ժողովրդավարությունների օրենսդիր մարմիններում, 1979-1989թթ.**

Խորհրդարանական		Կիսանախագահական		Նախագահական	
3.0 կամ ավելի կուսակցություններ	3.0 կուսակցությունից քիչ	3.0 կամ ավելի կուսակցություններ	3.0 կուսակցությունից քիչ	3.0 կամ ավելի կուսակցություններ	3.0 կուսակցությունից քիչ
	Կիրիբատի *				
	Նաուրու *				
	Տուվալու *				
	Բոտսվանա 1.3				
	Սբ. Վինսենտ 1.4				
	Դոմինիկա 1.5				
	Ջամայկա 1.5				
	Բահամներ 1.6				
	Թրին&Թոբ 1.6				
	Բարբադոս 1.7				
	Սբ. Լուիս 1.7				
	Նոր Զել 2.0				ԱՄՆ 1.9
	Կանադա 2.0				
	ՄՅ 2.1				Կլումբիա 2.1
	Նդկաստան 2.1				
	Նունաստան 2.2				Դոմ. Նանր. 2.3
	Ավստրիա 2.4				Կոստ. Ռիկ. 2.3
	Ավստրալիա 2.5				
	Սողոմոնի կղ. 2.5				
	Մաուրիտիուս 2.5				Վենես. 2.6
	Իռլանդիա 2.7				
	Իսպանիա 2.7				
	ճապոնիա 2.9				
Արևմ. Գերմ. 3.2		Ֆրանս. 3.2			
Նորվեգիա 3.2					
Շվեդիա 3.4					
Լյուքսեմբ. 3.4					
Իսրայել 3.6		Պորտու. 3.6			
Նիդեռլ. 3.13					
Իտալիա 3.9					
Պապ. Ն. Գվին. 4.0					
Իսլանդիա 4.3					
Դանիա 5.2					
Բելգիա 7.0					

*Ծանոթություն.* Շվեյցարիան ու Ֆինլանդիան «խառը» համակարգեր են՝ 5.4 և 5.1 «գործուն» կուսակցություններով համապատասխանաբար:

*Աղբյուրը.* այս աղյուսակը վերարտադրվել է՝ ըստ Ալֆրեդ Ստեփան և Սինդի Սկաչ, «Սահմանադրական շրջանակներ ու ժողովրդավարության կայացում» խորհրդարանականությունն ընդդեմ նախագահականության»-ի, "Constitutional Frameworks and Democratic Consolidation: Parliamentarism versus Presidentialism", *World Politics* (1993թ. հոկտեմբեր), էջ 8-9: Տե՛ս նաև Մարկու Լաակո և Ռեն Փաագեպերա «Կուսակցությունների «գործուն» թիվը. չափորոշիչ՝ կիրառված Արևմտյան Եվրոպայի նկատմամբ», "'Effective' Number of Parties: A Measure with Application to West Europe". *Comparative Political Studies* 12, no. 1 (1979թ.), էջ 3-27:

\* Նաշվի առնելով պաշտոնական կուսակցությունների բացակայությունը՝ գոյություն ունեն երկուսից ավելի քիչ «քաղաքական խմբավորումներ»:



մշակույթը շատ կարևոր է, բայց կարևոր են նաև այն հատուկ գործոնները, որոնք խանգարում կամ խրախուսում են կուսակցությունների տարածումը: Այս առումով կարող ենք ասել, որ Բրազիլիան ունի ընտրական, կուսակցական ու կոնգրեսական ամենահանդուրժողական որոշումների ընդունման կանոններն ամբողջ աշխարհում: Այդ որոշումների ընդունման կանոնները առաջ են բերում լայն ու խիստ շոշափելի գործոններ՝ ձևավորելու «թոշակառուական» վարքագիծ այն քաղաքական ձեռներեցների մեջ, ովքեր ստեղծում են կուսակցություններ, դրանք որպես գործարքի միջոցներ կամ որպես կուսակցական կարգապահությունից խուսափելու եղանակ օգտագործելու նպատակով:<sup>37</sup>

Օրենսդրության ցանկացած «որոշումների ծառ» ունի բազմաթիվ կարևոր ճյուղավորման կետեր, որոնք կարող են խրախուսել կամ խանգարել կուսակցությունների տարածմանը: Գլխավոր որոշումներից մեկը վերաբերում է ընտրական համակարգի այն տիպին, որը ցանկացած ազգ ընտրում է իր օրենսդրի կազմը որոշելու համար: Այստեղ որոշումը սովորաբար ընդունվում է մի կողմից՝ մեծամասնական համակարգի, իսկ մյուս կողմից՝ համամասնական ներկայացուցչության (ՇՆ) որևէ ձևի միջև: Թեև ՇՆ համակարգերը համարվում են ավելի «ներկայացուցչական» նրանով, որ հակված են խորհրդարանում վերարտադրելու քաղաքական ուժերի հարաբերական կշիռը երկրում, այդ համակարգերը նաև հակված են ստեղծելու ավելի տարանջատված օրենսդրական մարմին: Մեծամասնական համակարգերն ու միամանդատ տարածքներն, ընդհակառակը, նախատեսված են ստեղծելու մի խորհրդարան, որը ներկայացնում է գուտ այն հիմնական քաղաքական ուժերին, որոնք ընտրությունների առումով ամենազորեղն են երկրում: Հետևաբար, մեծամասնական համակարգը միտված է օրենսդրի ներսում ավելի քիչ կուսակցություններ առաջ բերելուն:<sup>38</sup> Թեև այս համակարգը կարող է այնքան էլ չթվալ հասարակության մեջ տարբեր քաղաքական ուժերը «ներկայացնող» (համեմատած ՇՆ-ի հետ), այն, այդուհանդերձ, խրախուսում է մեծամասնական կուսակցություններ ունեցող օրենսդրի ձևավորումն ու խանգարում է կուսակցությունների տարածմանը:

Յուրաքանչյուր ճյուղավորման կետում Բրազիլիան ընտրել է որոշման այն կանոնը,

37. Զգալի պատմություն ունեցող ամենահին քաղաքական կուսակցությունները Բրազիլիայում "PMDB" (Partido do Movimento Democrático Brasileiro) և "PT" (Partido dos Trabalhadores) են, որոնք երկուսն էլ հիմնադրվել են 1970-ական թվականներին: Մեր վերլուծության մեջ մյուս երեք հարավամերիկյան օրինակներում (Ուրուգվայ, Չիլի և Արգենտինա) բոլոր երկրներն էլ ունեն որոշ խոշոր քաղաքական կուսակցություններ, որոնք իրենց ծագումը կարող են տանել մինչև տասնիններորդ դարի կուսակցական արմատները: Մի շարք նորարարական քանակական ու որակական համեմատություններ, տե՛ս Սքոթ Մեյնուորինգ և Թիմոթի Սկալլի, «Ներածություն. կուսակցական համակարգերը Լատինական Ամերիկայում» (Scott Mainwaring and Timothy R. Scully, "Introduction: Party Systems in Latin America"), Սքոթ Մեյնուորինգի և Թիմոթի Սկալլիի խմբ.՝ «Ժողովրդավարական ինստիտուտների կառուցում. կուսակցական համակարգերը Լատինական Ամերիկայում» (Scott Mainwaring and Timothy R. Scully, eds, *Building Democratic Institutions: Party Systems in Latin America* (Stanford: Stanford University Press, 1995), 1-34):

38. Տե՛ս Մորիս Դյուվերգեյի դասական ուսումնասիրությունը՝ «Քաղաքական կուսակցություններ» (Maurice Duverger, *Political Parties* (New York: Wiley, 1954)): Տե՛ս նաև Դյուվերգեյի (Duverger) ավելի ուշ աշխատությունը՝ «Դյուվերգեյի օրենքը երեսուն տարի անց» (*"Duverger's Law: Thirty Years Later"*), Բեռնարդ Գրոֆմանի և Արենդ Լիյփհարտի խմբ.՝ «Ընտրական օրենքներն ու դրանց քաղաքական հետևանքները» (Bernard Grofman and Arend Lijphart, ed., *Electoral Laws and Their Political Consequences* (New York: Agathon Press, 1986), 69-84):

որն *առավելագույն* է խրախուսում կուսակցությունների տարածումը: Բրազիլիան ընտրել է համամասնական ներկայացուցչություն, սակայն ՀՆ-ի շրջանակներում ցանկացած երկիր կարող է ունենալ բարձր շեմ (5%) խորհրդարանում որևէ կուսակցության ներկայացվելու համար կամ՝ ոչ մի շեմ: Բրազիլիան ընտրել է զրոյին մոտ շեմը: Որևէ կուսակցություն Ազգային կոնգրեսում կարող է ներկայացուցչություն ստանալ չնչին՝ 0,04%-ի չափով ժողովրդական քվեով:<sup>39</sup> Ինչ վերաբերում է կուսակցական կարգապահությանը, ապա ճյուղավորման կետը փակ ցուցակով համակարգի (որտեղ կուսակցությունը դասակարգում է լավագույն թեկնածուներին ու դրանով առաջ է բերում ուժեղ մոտիվացում կուսակցական կարգապահության համար) և բաց ցուցակով համակարգի միջև է, որտեղ ցանկացած թեկնածու ազատ է մասնակցելու, իսկ առավելագույն ձայները ստացած թեկնածուները համարում են, որ ստացել են ավելի շուտ «անձնական քվե», քան թե կուսակցական: Բրազիլիան ունի բաց ցուցակային համակարգ: Օրենսդրական ընթացակարգը կարող է պատժել կամ չպատժել կուսակցությունները փոխած անդամներին: Բրազիլիայում այս առումով ընդհանրապես որևէ պատժամիջոց չկա:<sup>40</sup> Ցանկացած երկիր կարող է իր ընտրությամբ՝ կուսակցություններին ընտրությունների ժամանակ լրատվամիջոցներով անվճար եթերաժամանակ *չտրամադրել*, լրատվամիջոցներով անվճար եթերաժամանակ հատկացնել միայն խոշոր կուսակցություններին կամ եթերաժամանակ տրամադրել բոլոր գրանցված կուսակցություններին, որքան էլ դրանք փոքր լինեն: Բրազիլիայի գործող օրենսդրությունը տարվա մեջ երկու անվճար ժամ ազգային հեռուստատեսությամբ ու ռադիոյի ցանցերով և մեկ ժամ անվճար ժամանակ հանրային հեռուստատեսությամբ ու ռադիոկայաններով հատկացնում է բոլոր գրանցված *տասնյոթ* կուսակցություններին:<sup>41</sup>

Հնարավոր է արդյոք փոխել կուսակցությունների տարածման ու կուսակցական անկարգապահության ինստիտուցիոնալ խթանների այս արտասովոր համակարգը: Համա-

39. Այս միտքը զարգացրել է Սքոթ Մեյնուորինգը «Կուսակցություններ, քաղաքական գործիչներ և ընտրական համակարգեր՝ Բրազիլիան համեմատական տեսանկյունից»-ում (Scott Mainwaring, "Parties, Politicians and Electoral Systems: Brazil in Comparative Perspective", Comparative Politics (Oct. 1991): esp. 43 n. 7):

40. Հարցումը ներկայացվել է "Folha de São Paulo"-ում, 27 հոկտեմբերի, 1990թ., A-4: Կուսակցական անկարգապահության մասին ընդարձակ վավերագրություն, *տե՛ս* Սքոթ Մեյնուորինգի փայլուն հոդվածում՝ «Բրազիլիա. թույլ կուսակցություններ, անօգնական ժողովրդավարություն» (Scott Mainwaring, "Brazil: Weak Parties, Feckless Democracy"), Մայնուորինգի և Սկալլիի խմբ.՝ «Ժողովրդավարական ինստիտուտների կառուցում» (Mainwaring and Scully, eds., *Building Democratic Institutions*, 354-98): Այս համատեքստում ընտրական անկայունությունը չափազանց բարձր էր: Ի դեպ, ըստ ընտրական անկայունության Պեդերսենի ինդեքսի, որը չափում է տեղերի (կամ ձայների) տոկոսը, որոնք մեկ ընտրությունից մյուսն անցնում են կուսակցությունից կուսակցություն, մեկ դարի ընթացքում տասնութ արդյունաբերական ժողովրդավարություններում միջին փոփոխականությունը եղել է 9%-ից ցածր (ձայներով): Ուրուգվայի փոփոխականությունն ըստ Պեդերսենի ինդեքսի՝ 1971 թ-ից մինչև 1989թ. եղել է 9.1%, Արգենտինայինը՝ 1983 թ-ից մինչև 1993թ. եղել է 12.7%, Չիլիինը՝ 1973 թ-ից մինչև 1991թ. եղել է 15.8 %, Բրազիլիայինը՝ 1982 թ-ից մինչև 1990թ. եղել է 40.9%՝ երբևէ գրանցվածներից ամենաբարձրը: Բրազիլիայի փոփոխականության մեծ մասն առաջ է եկել քաղաքական գործիչների և ոչ թե ընտրազանգվածի ընտրությունից: Օրինակ, 1986թ. ընտրված բոլոր դաշնային պատգամավորների ավելի քան մեկ երրորդը փոխել է իր կուսակցությունն արդեն 1990թ.: *Տե՛ս* էջ 374, Պեդերսենի ինդեքսի մասին տվյալները:

41. «Tribunal Superior Electoral» հայտարարությունը վերատպվել է "Horario eleitoral gratuito re- começa dia 6", "O Estado de São Paulo", 24 ապրիլի, 1993թ., էջ 6:

ձայն 1988 թվականի սահմանադրության՝ 1993 թվականի հոկտեմբերի և 1994 թվականի ընտրությունների միջև ցանկացած ժամանակ կարող էր ստեղծվել մի վերանայող Սահմանադիր ժողով: Այս ժողովում երկու պալատները կարող էին միասին հանդիպել ու սահմանադրական օրենսդրական ակտերի մասին օրենքներն անցկացնել պարզ մեծամասնությամբ: Դժբախտաբար, նրանք կորցրին այս հնարավորությունը: Եթե Սահմանադիր ժողովի պարզ մեծամասնությունն այդպես որոշեր, ապա այն բազմաթիվ եղանակներով կկարողանար փոխել Բրազիլիայում մոտիվացման համակարգը կուսակցական բաժանվածությունն արգելելու համար: Օրինակ, եթե այն ընտրած լիներ գերմանական տիպի խառը ընտրական համակարգը (կես ՀՆ՝ 5% շեմով և կես միամանդատ տարածքներ), Բրազիլիան ամենայն հավանականությամբ, կկարողանար իր կուսակցական ինդեքսը կիսով չափ կրճատել: Դժբախտաբար, ինչպես ցույց է տալիս Ադյուսակ 11.6-ը, թեև սա միանգամայն նորմալ թիվ է խորհրդարանական համակարգի համար, այն դեռևս էականորեն ավելի բարձր է, քան որևէ տևական ժողովրդավարական նախագահական համակարգին աշխարհում: Սակայն մեր ասածն այն է, որ չնայած Բրազիլիայի հակակուսակցական քաղաքական մշակույթին՝ ներկա ժողովրդավարական ներկայացուցիչները, եթե երբևէ ցանկանան կրճատել կուսակցությունների թիվը մինչև ավելի կառավարելի չափի կամ բարելավել կուսակցական կարգապահությունն օրենսդրի ներքում, ունեն քաջալերման մեխանիզմների մի ընդարձակ շարք, որը կարող են օգտագործել: Եթե նրանք իսկապես օգտագործեն այդ խթանները, ապա մեր կարծիքով՝ կմեծացնեն շահերը միավորելու ու ժողովրդավարական իշխանություն առաջ բերելու Բրազիլիայի քաղաքական հասարակության կարողությունները: Եթե նրանք հրաժարվեն այդ անել, ապա ուժեղացնելու փոխարեն կարող են թուլացնել քաղաքական հասարակությունը: Սա նախասահմանված չէ:

1-ին գլխում մենք հիմնավորեցինք, որ ժողովրդավարության կայացումը պահանջում է «գործուն պետություն»: Մենք հիմնավորեցինք նաև, որ չնայած ժամանակ առ ժամանակ ունանց՝ պետությանը հարվածող ճառերին, որոնցում պնդում են «պետության դերի նվազեցման» մասին, լուրջ ու գործուն մասնավորեցումը պարադոքսալ կերպով պահանջում է բավականին ուժեղ պետական կարգավորման ապարատ:<sup>42</sup> Պետության կողմից համակարգվող մասնավորեցման նման ռազմավարության նպատակը պետության *վերակազմավորումն* է, այնպես որ հաղթահարվի ֆինանսական ճգնաժամը, խթանվեն պետական եկամուտները, և ուժեղանա ընդհանուր շուկայական տնտեսությունը: Այս ռազմավարությունն իր հետևից բերում է պետության ազդեցության շրջանակը նեղացնելու, արդյունաբերության տարբեր ոլորտները գեղջ գնելով վաճառելու և ոչ անհրաժեշտ կադրերը կրճատելու միաժամանակյա ջանքերի, որպեսզի մասնավոր հատվածը հանի-

42. Ինչպես Մայլս Կալերն է պնդում. «Ավանդապահությունը գլուխ չի հանել այն պարադոքսից, որ իր միակ գործիք պետությունը կիրառելով՝ փոխի քաղաքականությունը պետության կողմից ավելի քիչ կարգավորվող տնտեսության ուղղությամբ», Կալեր, «Ավանդապահությունն ու դրա այլընտրանքները. կայունացման ու կարգավորման մոտեցումների բացատրություն» (Kahler, "Orthodoxy and Its Alternatives: Explaining Approaches to Stabilization and Adjustment"), Ջոնա Նելսոնի խմբ.՝ «Տնտեսական ճգնաժամը և ռազմավարական մոտեցման ընտրությունը. կարգավորման քաղաքականությունը երրորդ աշխարհում», (Joan M. Nelson, ed., *Economic Crisis and Policy Choice: The Politics of Adjustment in the Third World* (Princeton: Princeton University Press, 1990), 33-61, quote from p. 55):

րավի չսահմանափակվի, իսկ պետության հզորությունները մեծանան՝ իրականացնելու իր բուն պարտականություններն առողջապահության, կրթության, իրավունքի և արդարադատության ոլորտներում: Ե՛վ հին, և՛ նոր ժողովրդավարությունները տարբեր եղանակներով փորձում են ավելի կամ պակաս հաջողությամբ հաղթահարել այս դժվարին երկակի խնդիրը:

Շատ միջազգային դիտորդներ քննադատել են նախագահ Կոլլորի կոռումպացված լինելը, սակայն գովաբանել են նրա իրականացրած մասնավորեցման գործընթացը: Սակայն կարծում ենք, որ երբ Կոլլորի օրոք մասնավորեցումը համակարգված ուսումնասիրվի, ապա տվյալները ցույց կտան, որ բաժանված քաղաքական հասարակության ու վոյալտարիստական նախագահի համակցությունը ստեղծել է մասնավորեցման մի արմատապես կիսաօպտիմալ ոճ, որն ունեցել է վտանգավոր հետևանքներ: Օրինակ, մի երկրում, որտեղ ամենալուրջ հաշվարկներով հարկերից խուսափելու դոլարային արժեքն ավելի մեծ է, քան հարկերի հավաքման դոլարային արժեքը, նախագահ Կոլլորը պետական կադրերը կրճատելու իր չնտածված շտապողականությամբ շարունակեց հարկերը հավաքողների կրճատումը, որն սկսվել էր 1979թ. նավթի ճգնաժամի հետ: Բրազիլիայում 1979թ. կային 12000 դաշնային հարկային գործակալներ: 1992թ. կային միայն 5700-ը:<sup>43</sup> Ավելին, նախագահական կոռուպցիայի ու կայուն քաղաքական բազա չունեցող մի շարք անկանխատեսելի տնտեսական բարեփոխումների համակցությունը հանգեցրեց հարկ վճարողների դիմադրությանը: Եկամտահարկի չվճարման ինդեքսն իրավաբանական անձանց կողմից, ովքեր ընդունել էին իրենց չվճարած հարկի գումարը (և դրանով իսկ՝ սովորական «խուսափողներ» չէին, այլ փաստացի «հանդուգն հայտարարագրողներ») 1.6%-ից աճեց 1988թ. (նախագահ Կոլլորի կողմից պաշտոնն ստանձնելուց մեկ տարի առաջ) մինչև 50.7% 1991թ. (նրա վերջին տարին այդ պաշտոնում):<sup>44</sup>

Պետության մասնակցության նվազեցմանն ուղղված շատ բարեփոխումներ այնքան վատ էին մշակված նախագահի աշխատակազմի կողմից, որ դրանք հակաարդյունավետ էին: Պետության «ուղեղի» կարևորագույն մասերը վտանգված էին վատ մտածված մասնավորեցման պատճառով: Օրինակ, արդյունաբերության ու առևտրի նախարարությունում վերացվել էր Բրազիլիայի արդյունաբերության բոլոր ոլորտների վերաբերյալ համակարգչային տվյալների շտեմարանների ապահովումը, և շատ տվյալներ կորել էին:

43. *St'u* պետության՝ հարկերը հավաքելու կարողության քայքայման մասին տեղեկություններ պարունակող հոդվածը՝ Լուրդես Սոլա, «Պետությունը, կառուցվածքային բարեփոխումներն ու ժողովրդավարացումը Բրազիլիայում. տնտեսության ազատականացում դեֆոլտով» (Lourdes Sola, "State, Structural Reform and Democratization in Brazil: Economic Liberalization by Default"), Ս. Ակունայի, Է. Գամարայի և Վ. Սմիթի խմբ.՝ «Ժողովրդավարությունը, շուկան և կառուցվածքային բարեփոխումները ժամանակակից Լատինական Ամերիկայում» (C. Acuna, E. Gamarra, and W. Smith, eds., *Democracy, Market and Structural Reform in Contemporary Latin America* (New Brunswick, NJ: Transaction Publishers, 1994)):

44. Տվյալներն Ալֆրեդ Ստեփանին տրամադրվել են Բրազիլիայի կոնգրեսի Ֆինանսական բարեփոխումների գծով հանձնախմբի գլխավոր տնտեսագետի կողմից մի աղյուսակից՝ "Índices de Inadimplencia-Brasil", որը պետք է հրապարակվի առաջիկա՝ "Relatório Final da Comissao Parlamentar Mista de Inquérito"-ում ֆինանսական բարեփոխումների վերաբերյալ: *St'u Usus* Սոլա, «Պետությունը, բարեփոխումներն ու ժողովրդավարացումը Բրազիլիայում» (Sola, "State, Reform and Democratization in Brazil"):

Սա վերացրել էր մի կարևոր պոտենցիալ ռեսուրս արդյունավետ հարկահավաքման աշխատանքների համար: Նմանապես, Գյուղատնտեսության նախարարությունում կտրուկ կերպով կրճատվել էր անասունների տեսչական ստուգումներ անցկացնող մի կարևորագույն հիմնարկ, որը թուլացրել էր պետության՝ որակի վերահսկողության կարողությունը, որը կենսական էր և՛ առողջապահության վարչարարության, և՛ արտահանման խթանման համար: Ի վերջո՝ Բրազիլիայում լավագույն քաղաքային ծախսերը թողեցին կառավարությունում ծառայությունն այն բանից հետո, երբ նախագահ Կոլլորը, ըստ հողվածների վետո կիրառեց, որն էականորեն կկրճատեր նրանց թոշակների վճարային փաթեթները: Որոշ բարձրաստիճան քաղաքացիական ծառայողներ գրեթե անմիջապես զուգահեռաբար աշխատանքի էին անցել պետության այլ օղակներում և այժմ ստանում էին ամսական երկու պետական աշխատավարձ: Շատ ուրիշներ պետական ծառայության համար դարձել էին անպիտան կամ գտնվում էին բարոյալքված վիճակում:<sup>45</sup> Մասնավորեցումն իրականացնող պետական պաշտոնյաների կողմից ավելի մեծ ընտրողականության ցուցաբերումը կարող էր ավելի շատ դրամ ու մտավոր կարողություններ խնայել ու ավելի արդյունավետորեն կրճատել ավելցուկային կամ ոչ հմուտ աշխատողներին:

Նորագատական բարեփոխումներ կարելի է իրականացնել այնպիսի եղանակով, որ կրճատվեն ոչ անհրաժեշտ պետական ծախսերը, վերացվի ֆինանսական ճգնաժամն ու ավելացվի պետական սոցիալական ծախսերի ու ենթակառուցվածքում ներդրումների գուտ գումարը: 1986թ. և 1990թ. միջև ընկած ժամանակահատվածում Սեառա նահանգի երկու բարեփոխիչ նահանգապետեր՝ Տասո Երեյսատին ու Սիռո Գոմեշը, ընդհանուր աշխատավարձերը 152000-ից կրճատեցին 112000-ի (աշխատավարձերը և ոչ անպայման՝ կադրերը, քանի որ որոշ անհատներ ստանում էին նույնիսկ մինչև յոթ աշխատավարձ) և աշխատողների ու պարտքի վրա պետբյուջեի 69%-ը ծախսելու փոխարեն սկսեցին ծախսել 39%-ը: Ավելացած փողով Սեառա նահանգում մեծացվեցին ենթակառուցվածքային ներդրումներն ու կենսական սոցիալական ծառայությունները: Այդ ընթացքում Սեառայում մշակվեց համայնքի մակարդակով կանխարգելիչ բժշկության մրցանակի արժանացած առողջապահական ծրագիր, չորս տարվա ընթացքում 32%-ով կրճատվեց նորածինների մահացությունը, մշակվեց խիստ մասնակցական ինքնօգնության բնակարանային ապահովման ծրագիր և կառուցվեցին ճանապարհներ այլ նահանգներում կառուցված ճանապարհների մեկ մղոնի վրա ծախսած գումարի քառորդ մասի չափով: Սեառայի երկու նահանգապետերը Բրազիլիայի պատմության մեջ աննախադեպ և ամենաբարձր գնահատականների արժանացան:<sup>46</sup>

Նախագահ Կոլլորի՝ նորագատականության ու պետության դերի նվազեցման նկատմամբ ուրույն մտտեցումը սրեց ֆինանսական ճգնաժամը, կաթվածահար արեց մասնա-

45. Ստեփանի հարցազրույցներն աշխատակազմի անդամների ու Բրազիլիայի կոնգրեսի տնտեսական բարեփոխումների հանձնախմբից մի սենատորի հետ, 22 ապրիլ, 1993թ.: Քաղաքացիական ծառայության մասին հրամանագիրը թիվ 12-ն էր, 12 դեկտեմբերի, 1990թ.:

46. Նորածինների մահացության կրճատման ծրագիրը, որը շահեց Ceara UNICEF's Maurice Pate Prize, *տե՛ս* UNICEF, "Ceará: Como Reduzir a Mortalidade Infantil" (1991, հունիս): Ֆինանսական ճգնաժամի հակադարձման մասին զեկույց, *տե՛ս* Ceara, Secretaria de Planejamento de Ceara, "A caininbil do Ceara melhor: A rota das mudancas" (Fortaleza: 1993) և «Հույսը հյուսիս-արևելքից», "Hope from the North-East", "Economist" (7 դեկտեմբերի, 1991թ.), էջ18-20:

վոր հատվածի ներդրումները, կազմաքանդեց պետությունն ու թուլացրեց ժողովրդավարությանը ցուցաբերվող աջակցությունը: Նահանգապետեր Տասսու Երեյսատիի ու Սիոռ Գոմեշի նորագատական մոտեցումը վերջ դրեց ֆինանսական ճգնաժամին, ավելացրեց հանրային հատվածի սոցիալական ու ենթակառուցվածքային ներդրումները, հանգեցրեց արդյունաբերության մեջ մասնավոր հատվածի վերելքին, վերակազմավորեց ու ամրապնդեց պետությունը և խորացրեց աջակցությունը ժողովրդավարությանը:

Եկեք եզրափակենք «քաղաքացիական հասարակության» մասին մի դիտողությամբ: Բրազիլիան պատմականորեն դրսևորել է եկամտի բաշխման ամենավատ պատկերն աշխարհում: 1980թ-ից մինչև 1992թ. եկամտի բաշխումն էլ ավելի էր վատթարացել:<sup>47</sup> Հետևաբար, խորքային առումով Բրազիլիայի տնտեսական ճգնաժամը միանշանակորեն աղքատների կողմից վերաբաշխման իրական պահանջարկի *ավելցուկի* պատճառով չէ: Ի դեպ, կան շատ ապացույցներ, որոնք վկայում են, որ Բրազիլիայում ժողովրդավարության բարելավման համար ոչ միայն քաղաքական հասարակությունը պետք է ի վիճակի լինի *մոբիլիզացնելու* իր պահանջներն ավելի արդյունավետ կերպով, այլ նաև աղքատներից ամենաաղքատները պետք է կարողանան *ձևակերպել* իրենց պահանջներն ավելի արդյունավետ կերպով, որպեսզի ունենան քաղաքացիական իրավունքներից օգտվելու ավելի մեծ հնարավորություն, և նրանց տեսակարար կշիռն ավելի կանոնավոր կերպով ներառվի քաղաքական հասարակության վճռորոշ հաշվարկների մեջ: Բրազիլիայում մասնակցության ու ժողովրդավարության վերաբերյալ երկու վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրա իրականացման ամենահստակ ճանապարհը կրթության ընդլայնումն է: Սոցիալական կազմակերպվածության մասին արված մի ուսումնասիրություն ցույց է տալիս, որ եթե Բրազիլիան բաժանենք հինգ տարածքների, և յուրաքանչյուր տարածք ունենա կրթության երեք մակարդակ, տասնհինգ դիտարկումներից տասնչորսի դեպքում որքան ավելի բարձր կրթություն ունենա անձը, այնքան ավելի մեծ կլինի նրա՝ որևէ կազմակերպության միանալու հավանականությունը:<sup>48</sup> Քաղաքական մշակույթի բնագավառում հասարակական կարծիքի վերաբերյալ մի բազմամյա ուսումնասիրությունն նույնպես ցույց է տալիս, որ որքան ցածր էր մարդկանց կրթությունը, այնքան քիչ էին նրանք քննադատում կառավարության մատուցած ծառայությունները և այնքան ավելի հեռու էին քաղաքականությունից (մի նպաստավոր խառնուրդ չարձագանքող կամ հակաժողովրդավարական կառավարությունների կենսունակության համար): Սակայն ֆիզիկական աշխատանք կատարողների շրջանում որքան կրթված էին մարդիկ, այնքան ավելի քննադատաբար էին մոտենում կառավարության մատուցած ծառայություններին, բայց ավելի շատ էին կողմ մասնակցական քաղաքականությանն ու համակարգի մեջ ներգրավվածությանը (մի վերաբերմունք, որը, հաշվի առնելով Բրազիլիայում ներկա սոցիալական դեֆիցիտն ու քաղաքական ճգնաժամը, սատարում է ժողովրդավարական բարեփոխումները):<sup>49</sup>

47. Տե՛ս Լամունիեր, «Բրազիլիա. անհավասարությունն ընդդեմ ժողովրդավարության» (Lamounier, "Brazil: Inequality against Democracy"):

48. Տե՛ս Դոս Սանտոս, "Fronteiras do Estado Minimo", Ադյուսակ 15, էջ 97:

49. Սա Ժուզե Ալվարո Մոիզիսի կողմից իրականացվող հասարակական կարծիքի հետազոտման բազմամյա ծրագրի լուրջ արդյունքն է՝ "Cultura Política Consolidação Democrática no Brasil", հրատարակվելու է գրքային տեսքով: Այս ծրագրի արդյունքների մասին համառոտ ակնարկ անգլերենով, տե՛ս

Բրազիլիան դեռ չկայացած ժողովրդավարության օրինակ է: Մասամբ դրա պատճառը զինվորականության կողմից անցմանը պարտադրված սահմանափակումներն են ու պարտքի ճգնաժամը: Սակայն եթե ժողովրդավարությունը շարունակի քայքայվել Բրազիլիայում, ապա դա հիմնականում կլինի այն պատճառով, որ Բրազիլիայում ժողովրդավարությունն անկարող է եղել լուծելու անցումից հետո ծագած խնդիրները: Մեր համառոտ անդրադարձը կայացած ժողովրդավարության համար վճռորոշ հինգ բաղադրիչներին, այսինքն՝ օրենքի ու արդարադատության համակարգին, որն ապաստան է քաղաքացիների համար, քաղաքացիական հասարակությանը, որը կարող է ձևակերպել պահանջները, քաղաքական հասարակությանը, որը կարող է միավորել պահանջները, պետությանը, որն իրականացնում է հանրային բարիքների բաշխման կենսական գործառույթներ, ու տնտեսական հասարակությանը, որն ստեղծում է և՛ հարկեր, և՛ հարստություն, ցույց է տալիս, որ յուրաքանչյուր ասպարեզում կան ընտրության կետեր, որտեղ ռազմավարական մոտեցումները կարող էին բարելավել իրավիճակը: Ո՛չ անկումը, ո՛չ էլ կայացումը նախասահմանված չեն: Սակայն քանի դեռ չեն կատարվել կարևոր փոփոխություններ հինգ գլխավոր ժողովրդավարական ասպարեզների մեծ մասում, որոնք հենց նոր քննարկեցինք, ժողովրդավարական քաղաքականության սխալանքի սահմանը կփոքրանա, իսկ անկման հավանականությունները կմեծանան:

#### ԲՐԱԶԻԼԻԱՆ 1994-1995ԹԹ.. ԹՈՒՅԼ ՉՏԱԼ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱԿԱՅԱՅՈՒՄ

Ինչպես տեսանք 1993թ., որոշ հեղինակավոր վերլուծաբաններ քննարկել են ժողովրդավարության անկման հավանականությունը Բրազիլիայում: Սակայն մի համատեքստում, որտեղ զինվորականությունը ընդունված չէր որպես լեգիտիմ ու կենսունակ իշխանավարման այլընտրանք, և որտեղ տարածաշրջանային *ցայտգայտքը* դեռևս նպաստավոր էր ժողովրդավարության համար, ոչ մի նշանակալի խումբ Բրազիլիայում լուրջ ռեսուրսներ չորամադրեց հեղաշրջման համար աջակցության մոբիլիզացմանը: Ոչ մի ոչ ժողովրդավարական գրավիչ կամ վստահելի այլընտրանք չունեցող, սակայն գերազանցի ու աճող քաղաքական տագնապներից վախեցած փոխհամաձայնական կողմնորոշում ունեցող ֆինանսների մի նախարար՝ Ման Պաուլոյի համբավավոր սոցիոլոգ ու սենատոր Ֆերնանդո Էնրիկե Կարդոսոն, հրապարակավ ստեղծեց մի խորհրդարանական կոալիցիա՝ աջակցելու կայունացման նկատմամբ նոր մոտեցմանը: Նրա «Պլան ռիալն» սկսվեց 1994թ. հուլիսի 1-ին: Արդեն 1995թ. հուլիսի 1-ին, ըստ "Economist"-ի՝ «սղաճը տարեկան մի քանի հազար տոկոսից կտրուկ ընկել էր մինչև 30%-ից էլ ցածր»:<sup>50</sup>

Շատ քաղաքական վերլուծաբաններ վախեցել էին, որ 1994թ. նախագահական ընտրությունները երկրորդ փուլում կբեռնացնեին աջերի ու ձախերի միջև հակամարտությունը: Ինչպես երևում էր, հակամարտությունն ընթանում էր երկու թեև տարբեր ծրագ-

Ժուզե Ալվարո Մոիզիս, «Ժողովրդավարությունը, զանգվածային քաղաքական մշակույթը և քաղաքական լեգիտիմությունը Բրազիլիայում» (Jose Alvaro Moises, "Democratization, Mass Political Culture and Political Legitimacy in Brazil" (Center for the Advanced Study in the Social Sciences, Juan March Institute, Madrid. estudio/working paper 1993/94, Feb. 1993)):

50. Տե՛ս «Բրազիլիա՛, տարեդարձը շնորհավոր» ("Brazil: Happy Birthday," Economist, July 8, 1995, 46):

րեր, ընտրազանգվածներ ու ոճեր ունեցող, բայց ըստ էության սոցիալ-դեմոկրատական այն թեկնածուների միջև, ովքեր եղել էին ավտորիտարության դեմ քաղաքացիական հասարակության ընդդիմության առաջնորդներ՝ Ֆերնանդո Էնրիկե Կարդոսոյի և նույնչափ հռչակավոր արհմիութենական առաջնորդ Լուիս Իգնասիո «Լուլա» դա Սիլվայի միջև: Կարդոսոն, որը խորհրդարանականության առաջատար ջատագով է, Բրազիլիայի նախագահ ընտրվեց առաջին շրջանում: Ի տարբերություն Ֆերնանդո Կոլլորի՝ նախագահ Կարդոսոն գլխավոր գործադրի պաշտոնում գործեց օրենսդրական ոլորտում ունեցած մեծ հեղինակությամբ և փորձով: 1995թ. հուլիսի 1-ին՝ «Պլան դիալի» առաջին տարելիցին, հասարակական կարծիքի մասին հարցումը ցույց տվեց, որ Կարդոսոն ուներ 72% աջակցության վարկանիշ: Վերնախավի մակարդակում արդեն 1995թ. կեսերից ժողովրդավարության մասին խոսակցություններն արմատապես տարբերվում էին 1993 թվականի խոսակցություններից: Ժողովրդավարության անկման մասին խոսակցություն քիչ կար, եթե ընդհանրապես կար:<sup>51</sup> Այդուհանդերձ, բոլոր լուրջ վերլուծաբանները՝ ներառյալ հենց նախագահ Կարդոսոն ու նրա պլանավորման նախարար Ժոզե Սեռոան, ամենայն խորությամբ տեղյակ են, որ այս գլխում նկարագրված բոլոր խնդիրները, որոնք վերաբերում են ծայրահեղ սոցիալական անհավասարությանը, բաժանված կուսակցական համակարգին, օրենքի գերակայության խնդիրներին ու ծակոտկեն ֆինանսական համակարգին, մնում են օրակարգում:<sup>52</sup> Փոփոխությունը հատկապես դժվար կլինի ֆինանսական համակարգում՝ հաշվի առնելով Բրազիլիայի դաշնային համակարգի քաղաքականությունը: Աջակցությունը նոր նախագահին կարող է բարձր լինել, սակայն ժողովրդավարության հանդեպ բրազիլացիների ոչ միանշանակ վերաբերմունքը փոփոխելու համար անկասկած կպահանջվի տասնամյակների աշխատանք: Այդուհանդերձ, Հարավային Կոնի դեպի ժողովրդավարություն առավել վտանգված անցումը կատարող երկիրը 1995 թվականի մուտք գործեց "desencanto"-ի գարմանալի բացակայությամբ:

51. Հասարակական կարծիքի մասին հարցում՝ իրականացված "Jornal do Brasil/Vox Populi" հուլիսի 21-24-ի միջև, 1995թ.: Վերնախավի շրջանում խոսակցությունների մասին մեր 1995թ. դիտարկումը՝ 1993թ. համեմատությամբ, հիմնված է Բոլիվար Լամունիերի մի ելույթի վրա, որը նա ունեցավ «Պլան դիալի» առաջին տարելիցին: Այդ ելույթում Լամունիերը, այնուամենայնիվ, շեշտեց Բրազիլիայում քաղաքական ինստիտուտների խոշոր փոփոխությունների խիստ անհրաժեշտությունը:

52. Այս խնդիրների հաղթահարման համար քաղաքական ռազմավարություն մշակելու անհրաժեշտությունը տեղյակությունը շարունակաբար շեշտվում էր Կարդոսոյի ու Սեռոայի հրապարակային ու մասնավոր գրույցներում մի հանդիպման ժամանակ, որին մենք ներկա էինք. Բրազիլիա, դեկտեմբերի 2-3, 1994թ.: Պետք է նշել, որ Կարդոսոյի վարչակազմի այդ քառամյա առավելագույն ժամանակամիջոցի հեռանկարն ավելի սահմանափակող ենթատեքստ է ժողովրդավարական բարեփոխումների համար, քան կլինեք, եթե Բրազիլիան ունենար խորհրդարանական համակարգ:



## Անհնարինից մինչև հնարավոր ժողովրդավարական խաղ. Արգենտինա

ԱՐԳԵՆՏԻՆԱՅՈՒՄ 1976 թվականից մինչև 1983 թվականը գոյություն է ունեցել բարձրաստիճան զինվորականների կողմից ղեկավարվող վարչակարգ: Այս լայն համատեքստի շրջանակներում Արգենտինայի զինվորական վարչակարգն ունեցել է որոշ առանձնահատկություններ, որոնք ազդեցություն են թողել ժողովրդավարության անցման ու կայացման վրա: Ուրուգվայում զինվորական վարչակարգը բնակչության մեկ շնչի հաշվով ավելի շատ մարդ է բանտ նստեցրել, քան Արգենտինայում, և մշտական ճնշումներ է գործադրել: Սակայն Արգենտինայում զինվորական մասնագետներն ու «բռնության գործի ձեռներեցները» 1975-1977թթ. նպաստել են նրան, որ իշխի ահաբեկչությունը՝ երբեմն հասնելով սանձարձակության: Արգենտինայում բնակչության մեկ շնչի հաշվով երեսուներկու անգամ ավելի շատ մարդ է «անհետացել», քան Ուրուգվայում, և ավելի քան երեք հարյուր անգամ ավելի, քան Բրազիլիայում: Թեև վարչակարգը չուներ ամբողջատիրական վարչակարգի գաղափարախոսության ու կազմակերպության համաձայնեցվածությունը, զինվորականության շատ հայտարարություններ իրենց թշնամիներին ոչնչացնելու մասին ունեին ամբողջատիրական կտրականություն:<sup>1</sup> Զինվորական կառավարությունն, ըստ էության, ավելի շատ ավտորիտար «վարչավիճակ» էր, քան ինստիտուցիոնալացված «վարչակարգ»:<sup>2</sup> Զինվորականությունը երբեք չստեղծեց կուսակցություն-

1. Մի քանի մեջբերում բավարար է: Գներալ Իբերիկո Մեն ժանը հայտարարում էր. «Նախ մենք կսպանենք քայքայիչ գործունեություն ծավալողներին՝ հակակառավարականներին, այնուհետև նրանց մատնիչներին, այնուհետև ... նրանց համակրողներին, այնուհետև ... նրանց, ովքեր մնում են անտարբեր»: Փաստը, որ գաղափարախոսությունը և ոչ թե գործողություններն են եղել գնդակահարելու բավարար պատճառ, երևում է գներալ Լուչանո Մենենդեսի ասածից. «Մենք ստիպված ենք լինելու սպանել 50000 մարդ՝ 25000 խոռվարարների, 20000 համակրողների և թույլ կտանք 5000-ի սխալ»: Երկու մեջբերումն էլ Ջեյմս ՄաքԳիբի արժեքավոր ուսումնասիրությունից են՝ «Ժամանակավոր կառավարություն և ժողովրդավարության կայացում. Արգենտինան համեմատական տեսանկյունից» (James W. McGuire, "Interim Government and Democratic Consolidation: Argentina in Comparative Perspective"), Խուան Լինցի և Յոսսի Շեյնի խմբ.՝ «Պետությունների միջև» (Juan J. Linz and Yossi Shain, eds., *Between States* (New York: Cambridge University Press, 1995), pp. 179-210; quotes from p. 183): Զինվորական ահաբեկչության ոճի ու պատկերի առավել մանրամասն նկարագրություն, տե՛ս "Nunca Más: The Report of the Argentina National Commission on the Disappeared" (New York: Farrar, Straus and Giroux, 1986): Հարավային Կոնուս «անհետացումների» համեմատական տոկոսը ցույց տվող աղյուսակ, տե՛ս Ստեփան, «Զինվորական քաղաքականության վերախմաստավորում» (Stepan, *Rethinking Military Politics*, 70):

2. «Ավտորիտար «վարչավիճակի» ու «ավտորիտար վարչակարգի» միջև տարբերությունը զարգացնում է Խուան Լինցը «Ավտորիտար «վարչավիճակի» ապագան կամ ավտորիտար վարչակարգի ինստիտուցիոնալացումը. Բրազիլիայի օրինակը»-ում (Juan J. Linz, "The Future of an Authoritarian Situation

ներ կամ չանցկացրեց ընտրություններ, ինչպես Բրազիլիայում: Այն երբեք չձևակերպեց «ուղղորդված ժողովրդավարության» սահմանադրություն և այն չներկայացրեց հանրաքվեի, ինչպես Ուրուգվայում կամ Չիլիում: Ավելին, զինվորական իշխանության ողջ ժամանակահատվածում պետական ծառայությունների միջև ու բանակի ներսում տեղի ունեցան բազմաթիվ հակամարտություններ, որոնք հանգեցրին ժամանակավոր քաղաքական դաշինքների ու փաստացի տնտեսական ռազմավարությունների կտրուկ փոփոխությունների: Մրցակցային ընտրությունների միջոցով իշխանություն ձեռք բերելու երկարաժամկետ ծրագրի ոչ մի նշան չկար: Այս ամենի հետ մեկտեղ հնարավոր է նաև, որ գեներալ Գալտիերիի ներխուժումը Մավլինյան կղզիներ զինվորականության իշխանության ու նրա անձնական ղեկավարության համար նոր բազա ստեղծելու հայտ էր: Հաշվի առնելով այս ընդհանուր համատեքստը, երբ 1982թ. հունիսի 14-ին արգենտինյան զինվորականությունը Մավլինյան կղզիներում նահանջեց բրիտանացիների առջև, Արգենտինայի քաղաքացիական կամ քաղաքական հասարակության ոչ մի խոշոր հատված զինվորականությանը չէր դիտում որպես վստահելի կամ կարող դաշնակցի, իսկ դրա ներքին հակասությունները, հակամեղադրանքներն ու կարգապահության բացակայությունը հասել էին այնպիսի աննախադեպ մակարդակի, որ որոշ սպաներ անհանգստանում էին ներզինվորական զինված հակամարտության ու զինվորականությունը որպես կազմակերպություն քայքայվելու հավանականության մասին:<sup>3</sup>

Իր բովանդակալից համեմատական ուսումնասիրության մեջ Ֆելիպե Ագուերոն մշակում է զինվորականության հետանցումային իշխանության տիպաբանությունը, որտեղ գլխավոր փոփոխականները վերաբերում են այն բանին, թե նախորդ վարչակարգը եղել է ռազմականացվա՞ծ, թե՞ քաղաքացիականացված, և արդյոք անցման ուղին եղել է դաշնությունահենք բարեփոխումների՞, ռազմական հեղաշրջմա՞ն, թե՞ զինվորականության պարտության ու վարչակարգի անկման ձևով: Ագուերոյի տիպաբանության մեջ եթե ավտորիտար վարչակարգը ռազմականացված է, և անցման ուղին զինվորականության

---

*or the Institutionalization of an Authoritarian Regime: The Case of Brazil*"), Ալֆրեդ Ստեփանի խմբ.՝ «Ավտորիտար Բրազիլիան. ակունքները, քաղաքականությունը և ապագան» (Alfred Stepan, ed., *Authoritarian Brazil: Origins, Policies and Future* (New Haven: Yale University Press, 1973), 233-54):

3. Օրինակ՝ 1982թ. հուլիսի 24-ին Բուենոս Այրեսում Ալֆրեդ Ստեփանի հետ մի հարցազրույցի ժամանակ մի արգենտինացի գեներալ պնդում էր, որ ներքին զինվորական հակամարտությունը կարող է հանգեցնել զինվորականության դե ֆակտո քայքայման, և որ ռուսական հեղափոխությունը տեղի ունեցավ միայն այն պատճառով, որ ցարական բանակը կազմալուծված էր: Այս ժամանակահատվածում ներքին զինվորական հակամարտությունների հարուստ ու մանրամասն վերլուծություն, *տե՛ս* Անդրուս Ֆոնտանա (Andres Fontana), *"De la crisis de Malvinas a la subordinacion condicionada: Conflictos intramilitares y transicion politica en Argentina"* (Helen Kellogg Institute for International Studies, University of Notre Dame, August 1986, working paper no. 74):

Մավլինյան հակամարտության ընթացքում զինվորականության մասնագիտական անկարողության ու ճնշումների քաղաքականության հետ դրա հարաբերության մասին *տե՛ս* Արգենտինայի զինվորականության մասին հիմնալիորեն վավերագրված ու գիտնականին վայել աշխատություն՝ «Մոնտայից մինչև Մենեմի նախագահությունը», իսպանացի գնդապետ Պրուդենսիո Գարսիայի (Prudencio Garcia) կողմից՝ *"El drama de la autonomia militar: Argentina bajo las juntas militares"* (Madrid: Alianza Editorial, 1995): Կեղտոտ պատերազմի սկզբնաղբյուրների, դրա զարգացման ու քաղաքական բռնությունների մասին սպառիչ ուսումնասիրություն, *տե՛ս* Մարիա Խոսե Սոյանո, «Արգենտինայի զինված պայքարը 1969–1979թթ.» (Maria Jose Moyano, *Argentina's Lost Patrol: Armed Struggle, 1969–1979* (New Haven: Yale University Press, 1995)):

պարտությունն ու վարչակարգի անկումն է, ապա զինվորականության հարաբերական դիրքը, համապատասխանաբար, «թույլ» է: Նրա բերած երկու օրինակներն են Արգենտինան և Հունաստանը:<sup>4</sup>

Կարծում ենք, որ այս տիպաբանությունը բավական օգտակար է անցման վերլուծության համար: Սակայն եթե ցանկանում ենք վերլուծել զինվորականության պարտության քաղաքական հետևանքները ժողովրդավարության կայացման համար, ապա պետք է խիստ ուշադիր լինենք՝ տարբերակելու այն դեպքերը, երբ ավտորիտար զինվորական վարչակարգը ղեկավարվում է աստիճանակարգայնորեն, այն դեպքերից, երբ դա այդպես չէ, և այն դեպքերը, երբ վարչակարգն իրականում «անկում է ապրում»՝ այն դեպքերից, երբ այն անկում չի ապրում: Մավլինյան կղզիների համար պատերազմում արգենտինյան զինվորականության պարտությունն ու խայտառակությունը նպաստեցին, ինչպես և հունական զինվորականության ֆիասկոն Կիպրոսում, զինվորական կառավարության ավարտին: Ինչպես Հունաստանում, այնպես էլ այստեղ, հեռացող զինվորականությունը փորձեց պարտադրել որոշ պայմաններ՝ որպես իր հեռանալու գին: Սակայն ներքին անմիասնականությունը, ցածր հեղինակությունն ու իշխանությունից արագ հեռանալու ինստիտուցիոնալ հրատապությունը, այս բոլորը միասին նշանակում էր, որ ո՛չ Հունաստանի, ո՛չ Արգենտինայի զինվորականություն-ինստիտուտն ի վիճակի չէր սահմանափակող պայմաններ պարտադրելու հաջորդող կառավարություններին՝ որպես անցման հնարավորության ընձեռման գին:

Սակայն Հունաստանի և Արգենտինայի միջև կան կարևոր տարբերություններ, որոնք շատ հաճախ աչքաթող են արվում: Այն փաստը, որ Արգենտինայի զինվորական կազմակերպությունը ղեկավարվել է աստիճանակարգայնորեն, մինչդեռ Հունաստանի զինվորականությունը՝ ոչ, նշանակում է, որ Արգենտինայի զինվորականությունն իրականում «անկում» չի ապրել և, հետևաբար, եղել է այնպիսի դիրքում, որ կարող էր լրջորեն բարդացնել ժողովրդավարության կայացման խնդիրը: Իրադարձությունների հիմնական պուժետային հաջորդականության համառոտ շարադրանքը պետք է որ բավարար լինի «անկման» մոդելային պատկերացումից մեզ հեռացնելու համար: Արգենտինայի նահանջը Մավլինյան կղզիներում տեղի ունեցավ 1982թ. հունիսի 14-ին: Նույն օրը գեներալ Գալտիերին ճնշման տակ հրաժարական տվեց բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնից: Նրան հաջորդեց գեներալ Քրիստիանո Նիկոլայիդեսը: Գեներալ Նիկոլայիդեսն առանց ստանալու օդային ուժերի կամ նավատորմի իր խունտայական դաշնակիցների թույլտվությունը բանակի մի արդեն պաշտոնաթող գեներալի՝ Ռեյնալդո Բինյոնեին, նշանակեց որպես նախագահի պաշտոնակատար: Բինյոնեն նախագահ դարձավ 1982թ. հուլիսի 1-ին: Դրանից անմիջապես հետո զինվորականությունը հայտարարեց, որ ընտրությունները կանցկացվեն ոչ ուշ, քան 1983թ. վերջին: Ընտրություններն, իսկապես, անցկացվեցին 1983թ. հոկտեմբերին, իսկ 1983թ. դեկտեմբերին Ռաուլ Ալֆոնսինը երդում տվեց՝ որպես Արգենտինայի նոր նախագահ: «Գահավիժումը» տևեց ոչ ավելի, քան տասնութ ամիս:

4. Տե՛ս Ֆելիպե Ագուերո, «Զինվորականությունը քաղաքական ժողովրդավարացման գործընթացներում Հարավային Ամերիկայում և Հարավային Եվրոպայում. արդյունքներ և նախնական պայմաններ» (Felipe Aguero, "The Military in the Processes of Political Democratization in South America and South Europe: Outcomes and Initial Conditions" (paper presented at the XV International Congress of the Latin American Studies Association, San Juan, Puerto Rico, September 21-23, 1989)):

<sup>5</sup> Հետևաբար, թեև Պորտուգալիան, Հունաստանն ու Արգենտինան անցմանը նվիրված գրականության մեջ հաճախ միացվում են մի խմբի մեջ որպես արտաքին պարտության պատճառով վարչակարգի պարտության դեպքեր, անկման մոդելային պատկերացումն անհասկանալի է դարձնում որոշ խիստ տարբեր ուժային հարաբերություններ այդ երկրների ներսում:

Պորտուգալիայում ոչ բարձրաստիճան սպաները, որոնք դժգոհ էին և վախենում էին պարտության դատապարտված պատերազմի մեջ ներքաշվելուց, տապալեցին վարչակարգը, կրտսեր սպաներն օգնեցին ձևավորել մի ժամանակավոր հեղափոխական կառավարություն, և ահռելի ժողովրդական համախմբման պայմաններում պետությունն անկում ապրեց: Հունաստանում ոչ բարձրաստիճան զինվորականների վարչակարգը Մավլինյան կղզիներին «վայել» արկածախնդրությամբ երկիրը գրեթե տանում էր դեպի Թուրքիայի դեմ պատերազմը: Ոչ բարձրաստիճանների վարչակարգը տապալվեց բարձրաստիճան զինվորականության կողմից, որը քսանչորս ժամվա ընթացքում իշխանությունը փոխանցեց մի ժամանակավոր քաղաքացիական կառավարության, որը խոստացել էր ընտրություններ իրականացնել: Պետությունն անկում չապրեց: Տապալվեց մի թույլ ոչ բարձրաստիճան զինվորականների վարչակարգ, իսկ զինվորականություն-կազմակերպությունն ընտրություններից հետո ողջ ուժն ուղղեց մարդու իրավունքների խախտումներ կատարած ոչ բարձրաստիճան զինվորականության գտմանն ու դատական հետապնդմանը:<sup>6</sup>

Արգենտինայի զինվորական կառավարության առանձնահատուկ կատաղի բնույթը, ներքին հակասությունները, արտաքին պատերազմում կրած պարտությունն ու բարձրաստիճան զինվորականության՝ պատերազմում պարտվելուց հետո տասնութ ամիս կառավարության ղեկին մնալու կարողությունն, ունեցան հինգ, որոշ չափով՝ հակասական հետևանքներ: Առաջին. այն փաստը, որ զինվորականությունն ի վիճակի եղավ իր պարտությունից հետո տասնութ ամիս պահել կառավարության ղեկավարությունն ու նախագահությունը հանձնել ընտրություններում հաղթողին, նշանակում էր, որ կանխվեց հեղափոխական ռազմավարություն ունեցող ժամանակավոր կառավարության հաստատումը, ինչը տեղի ունեցավ Պորտուգալիայում:

Երկրորդ. թեև զինվորականությունը կառչել էր կառավարությանը, այն իրականում թուլացած էր իշխանության առումով, որովհետև շատ ավելի, քան Ուրուգվայում, զինվորականություն-ինստիտուտն այնքան լրջորեն էր մասնատված, որ վախենում էր ներքին զինված հակամարտությունից: Նրանց հեռացման անհրաժեշտության ընկալումը շատ ավելի ինտենսիվ էր, քան Ուրուգվայի զինվորականության դեպքում: Այս հանգամանքներում քաղաքական կուսակցություններն ի վիճակի եղան մերժելու զինվորականության՝ դաշինքի մեջ մտնելու փորձերը: Երեք անգամ զինվորականությունը դաշինքի մեջ մտնե-

5. Նախապես մեջբերված Մաթհիրի հոդվածը «Ժամանակավոր կառավարություն և ժողովրդավարության կայացում», "Interim Government and Democratic Consolidation", հատկապես համոզիչ է այս կետում:

6. Պետության ու վարչակարգի միջև տարբերակման կարևորության մասին տե՛ս Ռոբերտ Ֆիշման, «Պետության և վարչակարգի վերաիմաստավորում. Հարավային Եվրոպայի անցումը ժողովրդավարության» (Robert M. Fishman, "Rethinking State and Regime: Southern Europe's Transition to Democracy", World Politics (April, 1990): 422-40):

լու փորձ կատարեց, և երեք անգամ էլ կուսակցությունները մերժեցին: Այս ուժային հարաբերությունը բացատրում է, թե ինչու Արգենտինայում անցումն սկսվեց ավելի քիչ համաձայնեցված սահմանափակումներով քաղաքական կուսակցությունների կողմից, քան Բրազիլիայում, Ուրուգվայում կամ Չիլիում: Կուսակցությունները չընդունեցին անուղղակի նախագահական ընտրությունների գաղափարը, ինչպես բրազիլական կուսակցություններն այդ արեցին 1985թ.: Կուսակցությունները չընդունեցին խոշոր նախագահական թեկնածուի բացարկը, ինչպես այդ արվեց Ուրուգվայում: Եվ կուսակցություններն ստիպված չէին համաձայնելու կառավարություն կազմել այն պարագայում, երբ ավտորիտար վարչակարգի սահմանադրության գլխավոր մասերը դեռևս ուժի մեջ էին, ինչպես այդ արվեց Չիլիում: Արգենտինայում տեղի ունեցավ միակ անդաշինք ու դասական առումով առավել ազատ անցումը մեր չորս հարավամերիկյան օրինակների շարքում:

Երրորդ. ուժային հարաբերությունների նման կազմը բացատրում է նաև, թե ինչու միակ դեպքը հարավամերիկյան օրինակներում Արգենտինան է, որտեղ իշխանության եկած ժողովրդավարական կառավարությունը, ինչպես և Հունաստանում, մարդու իրավունքների խախտումների համար հետապնդեց, դատապարտեց ու բանտ նստեցրեց բազմաթիվ զինվորական սպաների:

Չորրորդ. զինվորականության «աջ ու ձախ» կատարած բռնություններն ու չկշռադատված արտաքին ռազմական արկածախնդրությունը լրջորեն թուլացրին նրա՝ որպես քաղաքական դաշնակցի «արժեքը» Արգենտինայի քաղաքականության մեջ: Հարաբերությունների առումով դա մեծացրեց ընտրությունամետ քաղաքականության «կշիռը»:

Հինգերորդ. Հունաստանում զինվորականության դատավարությունները նպաստեցին ժողովրդավարության կայացմանը: Արգենտինայում դատավարությունները գրեթե տարան դեպի ժողովրդավարության տապալում: Գլխավոր բացատրական փոփոխականն այստեղ ոչ բարձրաստիճան ու բարձրաստիճան զինվորական կառավարությունների միջև եղած տարբերությունն է: Հունաստանում զինվորականություն-ինստիտուտը զինվորական կառավարության ոչ բարձրաստիճան առաջնորդների դատավարություններն ու բանտարկությունը տեսնում էր որպես զինվորական աստիճանակարգը նորից համախմբելու մի եղանակ: Արգենտինայում զինվորականություն-կազմակերպությունը նախորդ զինվորական կառավարության բարձրաստիճան առաջնորդներին բանտարկելու ջանքերն ընկալեց որպես մահացու հարձակում իրենց ինստիտուտի վրա: 1987թ. ապրիլ և 1990թ. հունվար ամիսների միջև ընկած ժամանակահատվածում տեղի ունեցան չորս զինվորական խռովություններ միջին օդակի սպաների կողմից, որոնք թուլացրին նախագահ Ալֆոնսինի հեղինակությունը, նրա ուշադրությունը շեղեցին այլ վճռորոշ ռազմավարական խնդիրներից ու նրան ստիպեցին անել վնասակար գիշումներ:<sup>7</sup>

Չենք ցանկանում չափից ավելի ընդգծել քաղաքացիականներ-զինվորականներ հարաբերությունների հարցը: Նախագահ Ալֆոնսինն ուներ շատ այլ խնդիրներ իր նախագահության օրոք: Պաշտոնն ստանձնելիս նա հայտարարեց, որ արագորեն առաջ կըն-

7. Չափազանց մանրակրկիտ համեմատական վերլուծություն չորս խռովությունների ու Ալֆոնսինի կառավարության վրա դրանց ազդեցության մասին տե՛ս Կառլոս Ակունա և Կատալինա Սմուլովից (Carlos H. Acuna and Catalina Smulovitz), "¿Ni olvido, ni perdón? Derechos humanos y tensiones cívicas-militares en a transición Argentina", Buenos Aires, CEDES, Documento CEDES, no. 69, July 1991, esp. 19-31:

թանա՝ կատարելու Արգենտինայի բնակչության նկատմամբ կուտակված սոցիալական պարտավորությունները: Սակայն Ալֆոնսինը երբեք մեծամասնություն չունեցավ երկու պալատներում: Ավելին, նա երբեք ի վիճակի չեղավ փոխըմբռնման գալու պերոնական արհմիությունների հետ կամ վերահսկելու դրանք, ինչը հանգեցրեց տասներեք ընդհանուր գործադուլների կազմակերպմանը ընդդեմ նրա տնտեսական ծրագրերի: 1986թ. Ռաուլ Ալֆոնսինի գլխավոր կայունացման ծրագիրը՝ «Պլան աուստրալը», մի կողմ թողնվեց: 1987թ. հոկտեմբերի ընտրությունների ժամանակ նա կորցրեց երկու պալատների վերահսկողությունը: Ցանկացած խորհրդարանական համակարգում նման դեպքում Ալֆոնսինը գրեթե վստահաբար հեռացած կլիներ ու պաշտոնաթող եղած: Նախագահական շրջափուլի ժամկետի համաձայն այդ պաշտոնում մնալու դատապարտված Ալֆոնսինը, զինվորականության կողմից աճող ճնշման պայմաններում հայտնված, առանց քաղաքացիական ու քաղաքական հասարակությունում հաղթող կռախցիա ունենալու, սկանստես եղավ իր կառավարությանը ցուցաբերվող աջակցության, վարչակազմի՝ տնտեսական քաղաքականություն իրականացնելու ունակության և, իհարկե, ժողովրդավարության շարունակականության վտանգավոր նվազման:<sup>8</sup> Արդեն 1988թ. հունիսին սղաճը սուր կերպով մեծանում էր, կառավարությունն ուներ միայն 12% դրական վարկանիշ, իսկ բնակչության 49%-ն զգում էր, որ կարող է տեղի ունենալ զինվորական հեղաշրջում:<sup>9</sup> Եվ 1989 թվականի հունիսին Արգենտինայում երբևէ գրանցված ամենաբարձր գերսղաճի թեժ պահին իր կառավարության լիակատար քայքայվածության պայմաններում ստորացված Ռաուլ Ալֆոնսինը ժամկետից ամիսներ շուտ թողեց իր պաշտոնը: Սակայն մի անսպասելի շրջադարձով արդեն 1992թ. հունիսին Արգենտինայում շատ քաղաքական գործիչներ ու վերլուծաբաններ սկսեցին այնդե, որ երկիրը դադարեցրել է իր 60-ամյա անկումը, իսկ ոմանք անգամ հայտարարեցին, որ ժողովրդավարությունը կայացել է:

Հետագայում այս բաժնում քննելու ենք պատմական հարաբերությունների նոր կազմի առաջացումը, սակայն այստեղ ուշադրությունը հրավիրում ենք երկու խոշոր փոփոխությունների վրա, որոնց կանդորադառնանք ամփոփ կերպով: Դրանք տեղի ունեցան նախագահ Մենեմի օրոք: Առաջինը վերաբերում է զինվորականությանը: Երբ 1987թ. սկսվեցին կրտսեր սպաների խռովությունները, ներկած դեմքերով սպստամբները («կարասյինտադասս» *carapintadas*) ստացան զինվորականություն-ինստիտուտի ծածուկ աջակցություն:

8. Երեք ձեռագիր, որոնք քննարկում են ժողովրդավարության քայքայվող որակը 1987-89թթ. Արգենտինայում, հետևյալն են՝ Դեյվիդ Ռոք, «Ժողովրդավարական վարչակարգի վատթարացումն ու անկումը. Ալֆոնսինի կառավարությունը 1986-1989թթ.» (David Rock, "The Decline and Fall of a Democratic Regime: The Alfonsín Government, 1986-1989"), Անդրես Ֆոնտանա (Andres Fontana), "La política militar en un contexto de transición: Argentina 1983-1989" (երկու նյութն էլ պատրաստվել են Շելլ ինստիտուտի համաժողովի համար, Յեյլի համալսարան, 1990թ. մարտ) և Մարսելո Կավարոցցի ու Մարիա Գրոսսի (Marcello Cavarozzi and Maria Grossi), "De la reinención democrática al reflujo político y la hiperinflación (la Argentina de Alfonsín)" (նյութը պատրաստվել է "CERC"-ում համաժողովի համար, Սանտյագո, Չիլի, 1990, օգոստոս):

9. Այս տվյալները հանրային հարցումներից են, որոնք կազմվել են Էդգարդո Բատերբերգի (Edgardo Catterberg) կողմից և ներկայացվել են նրա չափազանց ընդգրկուն աշխատանքին՝ «Արգենտինան դիմադրում է քաղաքականությանը. քաղաքական մշակույթն ու հասարակական կարծիքն Արգենտինայում ժողովրդավարության անցման ժամանակ» (*Argentina Confronts Politics: Political Culture and Public Opinion in the Argentine Transition to Democracy* (Boulder, Colo.: Lynne Rienner, 1991). pp. 91, 110):

նր, որովհետև կարապինտադասների հայտարարած գլխավոր նպատակը բարձրաստիճան գինվորականության ինստիտուտներն «անարդարացի» դատավարությունների դեմ պաշտպանելն էր: Սակայն կարապինտադա երևույթը ձեռք բերեց իր ուրույն դինամիկան, որը գինվորականություն-ինստիտուտին ստիպում էր հետզհետե զգուշանալ դրանից: Ապստամբություններն ավելի բացահայտորեն դարձան քաղաքական: Դրանք հետզհետե ավելի շատ էին պայմանավորված կրտսեր սպա առաջնորդների անձնական նպատակներով: Ի վերջո, ապստամբությունները սկսվեցին վերածվել ոչ այնքան գինվորականություն-ինստիտուտի պաշտպանության, որքան ոչ բարձրաստիճան գինվորականության հարձակումների նախագահ Ալֆոնսինի և բարձրաստիճան հրամկազմի վրա: Ավելին, 1989թ. հոկտեմբերին նախագահ Մենենը գինվորականությանը շնորհեց զանգվածային ներում՝ խունտաների օրոք մարդու իրավունքների խախտումների ու Ռաուլ Ալֆոնսինի ժողովրդավարական կառավարության ներքո գինված անհնազանդության կապակցությամբ, որը հանգեցրեց խունտայի որոշ ազատ արձակված առաջնորդների այն հայտարարությանը, թե իրենք արդարացվել են: Այս նոր համատեքստում, երբ կրտսեր սպաներն ու բազմաթիվ պահեստի սպաներ խոռվություն սկսեցին 1989թ. դեկտեմբերին, կարապինտադաների շրջափուլն ավարտվեց, քանի որ նախագահն ու գլխավոր հրամանատարը միավորեցին ուժերը՝ ջախջախելու այդ խոռվությունը հանուն գինվորական կարգապահության ու քաղաքական ժողովրդավարության: Այն դեպքում, երբ նախագահ Ալֆոնսինը վարկաբեկվեց գինվորական խոռվությունների պատճառով, բարձրաստիճան գինվորականության դեմ խոռվությունը նախագահ Մենենին ընձեռեց իր հեղինակությունն ամրապնդելու հնարավորություն:<sup>10</sup>

Մյուս խոշոր բարելավումը վերաբերում է քաղաքացիների կողմից տնտեսության ընկալմանը: Մասամբ դա ժողովրդավարության՝ որպես համակարգի որոշ ընդհանրական կողմերի շնորհիվ էր, մասամբ՝ Մենենի նախագահության մեջ առկա զուտ արգենտինյան մի երևույթի շնորհիվ: Ընդհանրական հարթությունը վերաբերում է լեզվափոխության քաղաքատնտեսությանը: Գլուխ 5-ում մենք հիմնավորեցինք, որ ավտորիտար վարչակարգերի մեծ մասի համար դժվար է լինում կառավարությունը պահել տնտեսական երեք անընդմեջ վատ տարիներից հետո, որովհետև իշխանության նկատմամբ նրանց հավակնությունները հիմնված են արդյունավետության և ոչ թե՛ լեզվափոխության վրա: Ի տարբերություն դրա՝ մենք հիմնավորեցինք, որ ժողովրդավարական վարչակարգերն ունեն տնտեսական վատ ժամանակների դեմ պաշտպանության երկու աղբյուր. առաջին՝ համակարգի՝ որպես ժողովրդավարական լինելու որոշ լեզվափոխություն և երկրորդ՝ այն հեռանկարը, որ առաջիկա ընտրություններում քվեարկությունը կլինի այլընտրանքի օգտին: Արգենտինայում 1988թ. նոյեմբերին հարցման ենթարկված մարդկանց 70%-ի կարծիքով՝ վերջին հինգ տարիների ընթացքում պայմանները երկրում վատացել են: Սակայն 74%-ը, այդուհանդերձ, դեռ հաստատել է, որ «ժողովրդավարությունը միշտ նախընտրելի է

10. Ակունայի և Սմուլովիցի (Acuna and Smulovitz) արդեն մեջբերված հրապարակումը՝ *"¿Ni olvido ni perdón?"*, էջ 39-45, հրաշալի կերպով ցույց է տալիս, թե ինչպես և ինչու այդ "carapintada"-ի շրջափուլն ավարտվեց: Մենենի՝ մեծ դժվարությամբ նվաճված դատարանի որոշումների հաշվին գինվորականության հետ խաղաղություն ձեռք բերելու համար հիմնավորապես վավերացրված քննադատության մասին *in* է սպասնացի գնդապետ Գարսիայի (Garcia) արդեն մեջբերված աշխատությունը՝ *"El drama de la autonomía militar"*, էջ 269-76:

բռնապետությունից»։ Հարցման ենթարկվածների միայն 15%-ի կարծիքով (Բրազիլիայի 40%-ի դիմաց) իրադրությունը կարող է բարելավվել զինվորականության վերադարձի դեպքում։ Տնտեսության քայքայումը շարունակվում էր հաջորդ վեց ամիսներին։ Իրավիճակի բարելավման ոչ մի օբյեկտիվ նշան չկար։ Մակայն տեղի ունեցան ընտրություններ։ Թեև հաղթողը՝ Կառլոս Մենենը, ստացավ ձայների 49%-ը, միաժամանակ այն քաղաքացիների տոկոսը, ովքեր հավատացել էին, որ տնտեսությունը կբարելավվի, 32-ից աճել էր մինչև 72:<sup>11</sup>

Այժմ դառնանք տնտեսական խնդրի ուրույն, հատուկ արգենտինյան կողմերին։ Այն դեպքում, երբ նախագահ Ալֆոնսինը թուլացավ տասներեք համընդհանուր գործադուլներից, նախագահ Մենենն իր իշխանության առաջին երեք տարիներին չբախվեց ոչ մի համընդհանուր գործադուլի, նույնիսկ այն դեպքում, երբ նրա նորագատական մոտեցումները ցնցեցին շարքային պերոնականներին։ Մենենն աներկբայորեն շահեց այն լայն աջակցությունից, որ ստացավ պերոնական շրջաններում՝ չնայած իր ռազմավարական մոտեցումներում առկա շրջադարձին։ Նա նաև շահած դուրս եկավ տեղական և միջազգային կապիտալի կողմից ցուցաբերված լայն աջակցությունից։ Ի տարբերություն Ալֆոնսինի, որը պաշտոնի եկավ պարտքի ճգնաժամի գագաթնակետին, Մենենի համար նպաստավոր եղավ այն փաստը, որ նա պաշտոնի եկավ հենց այն ժամանակ, երբ համաշխարհային պարտքի ճգնաժամն ավարտվում էր, և միջազգային կապիտալը փնտրում էր իրացման նոր շուկաներ։ Բայց, ի վերջո՝ նախագահ Մենենը դիմեց աշխատավորության վերահսկողության դասական կորպորատիվիստական զինանոցին։ Աշխատավորական առաջնորդների ու միությունների ֆինանսական միջոցների և ուժի մեծ մասը դրանց պաշտոնական ճանաչման մեջ է։ Նախագահ Մենենը, ինչպես Գետուլիո Վարգասը Բրազիլիայում ու Լազարո Կարդենասը Մեքսիկայում իրենից առաջ, կիրառեց պաշտոնական ճանաչման գենքը՝ ամրապնդելու դաշնակիցներին, որոնք ստեղծեցին նոր ղեկավար խմբեր, և իրավական ճանաչման հարցում մերժելու իր հակառակորդներին (ինչպես օրինակ՝ "CTA"-ին)։ Պաշտոնական թույլտվություն չունեցող գործադուլները հայտարարվեցին անլեգալ, իսկ դրանք համառորեն շարունակող միությունները ռիսկի էին դիմում՝ կորցնելու իրենց պաշտոնական կարգավիճակը կամ պետական աջակցությունը որոշակի գործունեության համար։ Որ առավել կարևոր է՝ ինչպես Վարգասն ու Կարդենասը 1930-ական թվականներին, Մենենը ձեռք բերեց մի բան, որն անգամ Պերոնը երբեք չէր ունեցել՝ լայն կառավարական վերահսկողություն արհմիությունների սոցիալական ապահովության ընդարձակ հիմնադրամների վրա:<sup>12</sup>

Չնայած աշխատավորական ուժեղ դիմադրության բացակայությանը՝ նախագահ Մե-

11. Այս հանրային հարցումների մասին տե՛ս Քատերբերգ, «Արգենտինան դիմադրում է քաղաքականությանը» (Catterberg, *Argentina Confronts Politics*, 110) և նույն «Անցման հավասարակշռությունը. կառավարության արդյունավետության մասին ընկալումները Հարավային Կոնի երկրներում» (*The Balance of Transition: Perceptions of Government Efficacy in the Southern Cone*) (paper prepared for the XVth World Congress of the International Political Science Association, Buenos Aires, July 21-25, 1991.):

12. Աշխատավորական ուժերին վերահսկելու Մենենի ռազմավարության համառոտ, սակայն մերկացնող ակնարկ, տե՛ս Ռոսենդո Ֆրագա (Rosendo Fraga), *1991, fin de un poder sindical*, Ambito Financiero Dec. 30 1991: 18: Պերոնի կողմից արհմիությունների նկատմամբ պետական վերահսկողության հաստատման մոդելի ակունքների մասին տե՛ս Ռոնո Բերինս Քոլիեր և Դեյվիդ Քոլիեր, «Քաղաքական ասպարեզի ձևավորում»՝ վճռորոշ պահեր և վարչակարգի դինամիկան Լատինական Ամերիկայում»



ների առաջին տնտեսական ծրագիրն ավելի հաջող չէր, քան նախագահ Ալֆոնսինի ծրագիրը: Երկրորդ, գերադաճի վախը նախագահ Մենենդին ստիպեց 1991թ. փետրվարին ընտրել նոր ֆինանսների նախարար՝ Դոմինգո Կավալտյին, որն աջակցության համար դիմեց Կոնգրեսին, որտեղ պերոնականներն ու նրանց դաշնակիցները կազմում էին մեծամասնություն, և հասարակության բոլոր հատվածներին՝ վերջ դնելու գերադաճի ու տնտեսական անկման ջրապտույտին: Միաճի ցածր մակարդակի և տնտեսության աճի պայմաններում կառավարության տնտեսական քաղաքականության հավանության վարկանիշը Բուենոս Այրեսում 1991 թվականի մարտին 16%-ից բարձրացավ մինչև 68%-ի 1991թ. դեկտեմբերին:<sup>13</sup> Արդեն 1992թ. կեսերին Արգենտինայում շատերն էին խոսում այն մասին, որ ցածր արդյունավետություն ու ցածր լեգիտիմություն ունեցող կառավարության տևական ժամանակահատվածից հետո, Արգենտինայում սկսել էր զարգանալ չափավոր արդյունավետությամբ ու որոշ լեգիտիմությամբ մի հասարակարգ:

### ԱՆՀՆԱՐԻՆ ԽԱՂԻՑ ԱՆԴԻՆ

Մի նշանավոր աշխատության մեջ Գիլերմո Օ'Դոննելը կիրառել էր Արգենտինայի ընտրական քաղաքականության մանրամասն խաղային տեսության մոդել՝ ցույց տալու, որ կուսակցական ժողովրդավարությունը, ինչպես այն խաղացվել էր Արգենտինայում 1955-66թթ. ընթացքում, մի «անհնարին խաղ» էր:<sup>14</sup> Թեև մենք չենք կիրառի Օ'Դոննելի կիրառած ճիշտ նույն կատեգորիաները, եկեք սխեմատիկ կերպով ծանոթանանք այն երեք հիմնական ենթադրություններին ու կանոններին, որոնք այդ ժամանակահատվածում ժողովրդավարական քաղաքականությունը դարձրել էին իսկապես մի անհնարին խաղ:

Առաջին հիմնական ենթադրությունն այն էր, որ թեև պերոնականները կազմում էին ամենախոշոր միասնական կուսակցությունը, նրանց պետք չէր թույլատրել մրցակցության մեջ մտնելու ընտրություններում, որովհետև գրեթե վստահաբար կհաղթեին, իսկ եթե հաղթեին, չէին իշխի ժողովրդավարորեն, և հնարավոր չէր լինի նրանց իշխանությունից հեռացնել ընտրությունների միջոցով: Խուսան Պերոնի երկակի վերաբերմունքը ժողովրդավարական պրակտիկայի ու դոկտրինների նկատմամբ, երբ նա իշխանության էր 1943-55թթ. ժամանակահատվածում, հնարավորություն էր տվել խմբերին, որոնք, հնարավոր է, եղել են ոչ ժողովրդավարական, թաքցնել իրենց ոչ ժողովրդավարական վարքագիծը ժողովրդավարության պաշտպանության ժողովրդավարական դիսկուրսում:

Օ'Դոննելի անհնարին խաղի երկրորդ հիմնական ենթադրությունն այն էր, որ ամենամեծ հակապերոնական կուսակցությունը՝ «Ժողովրդական արմատականները», երբեք

(Ruth Berins Collier and David Collier, *Shaping the Political Arena: Critical Junctures, the Labor Movement and Regime Dynamics in Latin America* (Princeton: Princeton University Press, 1991), 331-50):

13. Մեծ Բուենոս Այրեսի հանրային հարցում "Estudio Mora y Araujo, Noguera y Asociados"-ի կողմից:

14. Գիլերմո Օ'Դոննել, «Անհնարին խաղ», կուսակցական մրցակցությունն Արգենտինայում 1955-66թթ.» (Guillermo O'Donnell, "An Impossible 'Game': Party Competition in Argentina, 1955-66", *Modernization and Bureaucratic-Authoritarianism: Studies in South American Politics* (Berkeley: Institute of International Studies, University of California, 1973), 166-200):

բավականաչափ ուժեղ չէր լինի ընտրություններում հաղթելու համար, եթե չլինեին որոշ սահմանափակումներ պերոնականների հանդեպ: Սակայն նույնիսկ եթե նրանք իշխանության գային կիսով չափ ազատ ընտրությունների միջոցով, արմատականները չէին կարող կազմել գործուն կառավարություն՝ հաշվի առնելով պերոնականների ուժն արհմիություններում:

Երրորդ հիմնարար ենթադրությունն այն էր, որ բուրժուազիան ընդունել էր զինվորականությանը՝ որպես ընտրական խաղի դատավորի: Վերջինս ուներ երկու զլխավոր գործառույթ: Առաջին. եթե բուրժուազիան զգար, որ տեղի է ունենում այն, ինչը նրանք համարում էին լեգիտիմության ճգնաժամ (ինչպես օրինակ՝ պերոնականների կամ պերոնականների հետ դաշնակցած փոքր կուսակցությունների հաղթանակը), դատավորին թույլ էր տրված դադարեցնել ընտրական խաղի այդ խաղակեսը: Երկրորդ. եթե բուրժուազիան զգար, որ կա արդյունավետության ճգնաժամ (ինչպես օրինակ՝ թույլ հակապերոնական կուսակցությունների՝ գործուն կերպով կառավարելու անընդունակությունը), դատավորը կարող էր դադարեցնել ընտրական խաղի այդ խաղակեսը: Բուրժուազիան այդ լիազորությունները պատվիրակել էր զինվորականությանը՝ որպես դատավորի, որովհետև նրան համարում էր վստահելի դաշնակից կամ ժամանակավոր կառավարող, որը չէր փորձի կառուցել մշտական ոչ ընտրական խաղ: Ընդհակառակը, խաղի ենթադրությունն այն էր, որ որոշ ժամանակ անց, օրենքներն ինչ-որ ձևով փոխվում են, և կսկսվի այդ ընտրական խաղի մեկ այլ խաղակես:

Օ՛րոնները բացահայտորեն չի պնդում այդ միտքը, սակայն կարծում ենք, որ այդ խաղի կանոնները հանգեցրին արգենտինյան հասարակարգի երկարատև, կրկնակի ճգնաժամին, ժողովրդավարության լեգիտիմության ճգնաժամին՝ բացառման աստիճանի պատճառով, և արդյունավետության ճգնաժամին՝ ընտրված կառավարությունների աջակցության նեղ բազայի պատճառով: Այս կրկնակի ճգնաժամը, առավել ևս՝ այն փաստը, որ դատավորը սովորաբար չէր փորձում ստեղծել մեքսիկական ոճի ավտորիտար հեգեմոնիա (իսկ երբ փորձեց, ձախողվեց) նպաստեցին Արգենտինայում զարգացման ճգնաժամի ձգձգմանը: Գործող անձանց ոչ մի համակցություն որևէ քաղաքական ծրագրի համար չէր կարող ստեղծել աջակցության ո՛չ կայուն ժողովրդավարական, ո՛չ էլ կայուն ոչ ժողովրդավարական բազա: Նման համատեքստում «ռացիոնալ գործող անձինք» ձգտում են կուտակել և օգտագործել ոչ ժողովրդավարական ռեսուրսներ, և գրեթե ոչ ոք չի ցանկանում շարունակել ընտրական խաղի տվյալ խաղակեսը: Օ՛րոններն այդ իրավիճակն ամփոփում է հետևյալ կերպ:

Երբ այս խաղի խաղակեսերից մեկը խաղացվել է, և կանոնները կատարելապես հայտնի են, ակներև է դառնում, որ դա անօգուտ խաղ է, որում ոչ ոք չի կարող հաղթել: Հետևաբար, ցանկացած ռացիոնալ խաղացող դառնում է «ոչ հավատարիմ» (նա մերժում է խաղը կամ առնվազն հետաքրքրված չէ դրա շարունակությամբ) և «անպատասխանատու» (քանի որ բոլորն էլ ի վերջո պարտվում են, ինչ կարճաժամկետ ձեռքբերումներ որ հնարավոր է, պետք է նվաճվեն): Ոչ միայն խաղն է անօգուտ, այլ նաև դրա դինամիկան ունի հարաճուն բևեռացվածություն: Առանց այն շարունակել ձգտող խաղացողների, խաղը հեշտությամբ կարող է դադարեցվել:<sup>15</sup>

15. Նույն տեղում, էջ 180:

Չնայած Օ'Դոննելի դասական վերլուծությունը հրատարակվել էր 1973թ., մենք կարծում ենք, որ Արգենտինայի 1976-83թթ. զինվորական վարչակարգը կարող է դիտվել որպես ուժի կիրառմամբ Արգենտինայի տնտեսությունն ու հասարակարգը փոխելու ու նոր խաղ ստեղծելու սարսափելի և, ըստ էության, միանգամայն անհաջող ջանք: Չինվորականության ու նրա դաշնակիցների խաղը կտրականապես ձախողվեց և՛ արդյունավետության, և՛ լեգիտիմության առումով: Ոչ ոք չցանկացավ խաղալ «բյուրոկրատական-ավտորիտար» խաղի երրորդ խաղակեսն այն դեպքում, երբ առաջին խաղակեսը խաղացվել էր 1966-73թ., իսկ երկրորդը՝ 1976-83թթ.:

Մեր գրքում կիրառած կատեգորիաների առումով Արգենտինայի ընտրական քաղաքականության 1955-83 թվականների Օ'Դոննելի խաղն ուներ հետևյալ բնութագրերը: Ժողովրդավարությունը երբեք չեղավ միակ լավագույն տարբերակը: Ժողովրդավարությունը միշտ բնորոշվում էր խմբերի մեծամասնության կիսահավատարիմ ու հաճախ՝ անհավատարիմ վարքագծով: Գլխավոր գործող անձանց համար կային քիչ միջժամանակային խթաններ՝ շարունակելու ցանկացած ժողովրդավարական խաղ: Ընտրությունների քաղաքականության համակարգի նկատմամբ մեղադրանքը խիստ բնորոշ էր տվյալ տարածաշրջանին:

Վերաժողովրդավարացման ձախողված դեպքերը քննելու համար կարևոր է պարզել, թե արդյոք դեռևս առկա են նախորդ տապալման պատճառները կամ այն նոր հանգամանքները, որոնք նպաստում են քաղաքական գիտելիքների ձեռքբերմանը, ինչպես նաև հարկ է պարզել այն, թե ժողովրդավարության ինստիտուտացիոնալացման ու կայացման նոր քայլերի համար գոյություն ունի արդյոք էապես նոր միջավայր: Պարզ է, որ Արգենտինայի ընտրական քաղաքականության բնութագրերը, որոնք մենք նկարագրեցինք, ինքնին բավարար էին ժողովրդավարության կայացման խաղն անհնարին դարձնելու համար: Գոյություն ունի՞ արդյոք որևէ ապացույց, որը վկայում է, որ Արգենտինայի քաղաքականությունը դառնում է հնարավոր ժողովրդավարական խաղ 1992թ. հետո: Շատ սխեմատիկ կերպով եկեք վերաքննենք անհնարին խաղի երեք հիմնական ենթադրությունները: Դրանք դեռևս գոյություն ունեն՞ն, թե՞ արդեն փոխակերպվել են:

Սկսենք անհնարին խաղում բուրժուազիայի, զինվորականության ու պերոնական կուսակցության միջև հարաբերությամբ: Բուրժուազիայի համար ընտրական խաղը երբեք չի եղել միակ լավագույն տարբերակը, որովհետև տիրապետող ընտրական ուժը՝ պերոնականությունը, ոչ միայն անընդունելի դաշնակից էր, այլ նաև անընդունելի հաղթող: Նրանք կարող էին լավագույն դեպքում ռիսկի դիմել և ընտրական քաղաքականություն մտնել իրենց կիսահավատարիմ մասնակցությամբ, որովհետև նրանց համար զինվորականությունն ընդունելի դատավոր էր ընտրական խաղում կամ ընդունելի դաշնակից՝ խաղակեսերի միջև: Մակայն զինվորականության քայլը՝ ստեղծելու իր սեփական խաղը, 1976-83թթ. հիմնովին փոխեց բուրժուազիա-զինվորականություն-քաղաքական կուսակցություն հարաբերությունները: Չինվորականության կատարած առանց խտրության սպանություններն ու կտտանքները նշանակում էին, որ մինչև այժմ անձեռնմխելի համարվող խավերի շատ անդամների որդիներ ու դուստրեր տանջանքների են ենթարկվել և/կամ «անհետացել են»: Դրան գումարվեց նաև զինվորականության արկածախնդրությունը Մավիլիայն կղզիներում, որը եթե մի քանի ամիս էլ շարունակվեր, կարող էր ամենայն հավանականությամբ հանգեցնել Արգենտինայում անգլիացիների ունեցվածքի

համատարած բռնագրավումների: Մավլինյան կղզիներում հաղթանակը թերևս պայմաններ ստեղծեց Երրորդ աշխարհի հավանական ռազմավարական համաձայնությունների համար, որոնք լրջորեն կվնասեին արգենտինյան բուրժուազիայի սոցիալական ինքնությանն ու տնտեսական դաշինքներին: Զինվորականությունն իրեն դրսևորեց նաև որպես վտանգավոր կերպով տարանջատված ու թույլ: Հաշվի առնելով սոցիալական, տնտեսական ու ռազմական այս հետմավլինյան հանգամանքները՝ արդեն 1983թ. զինվորականությունն այլևս բուրժուազիայի կողմից չէր դիտվում որպես վստահելի դաշնակից կամ վստահելի դատավոր: Եվ վերջապես, երբ Մենեմն ընդունեց և, որ ավելի կարևոր է, իրականացրեց նորագատական մոտեցումների մեծ մասը, որոնք երկար ժամանակ առաջ էին մղվում բուրժուազիայի ծանրակշիռ խմբակցության կողմից, պերոնական կուսակցությունը նրանց աչքում անընդունելի դաշնակից լինելուց փոխակերպվեց պոտենցիալ, իսկ 1990-ականների սկզբին՝ *փաստացի* ընդունելի դաշնակից: Հին անհնարին ժողովրդավարական հարաբերությունը բուրժուազիայի, զինվորականության ու պերոնական կուսակցության միջև այլևս գոյություն չունեք:<sup>16</sup>

Անհնարին ժողովրդավարական խաղի երկրորդ գլխավոր բաղադրիչն այն է, որ ընտրական խաղում շատ խաղացողների համար մրցակցային, ազատ ու ներառական ընտրությունները չէին կարող թույլատրվել, որովհետև, ինչպես ասվում էր փաստարկում, պերոնականները միշտ կհաղթեին և երբեք չէին խաղա ամբողջովին ժողովրդավարական կանոններով, և եթե ինչ-որ ձևով հաղթեին արմատականները, նրանք չէին կարող գործունե կերպով կառավարել պերոնականների ուժի պարագայում: Իսկպես, Օ'Դոննելն արել էր այն դիտողությունը, որ դեռևս Ֆրոնդիսիի նախագահության ժամանակ (1958-62թթ.) ամենամեծ հակապերոնական կուսակցությունը՝ «Պուերտյի արմատականները», համոզված էր, որ «հաշվի առնելով տիրող իրավիճակը՝ նրանք երբեք ի վիճակի չեն լինի հաղթել որևէ ընտրություններում»:<sup>17</sup> Պերոնականների ջախջախիչ հաղթանակը 1973թ. և կիսազինվորական մոնտոներների (Montoneros) բռնությունների նկատմամբ նրանց հանդուրժողականությունն ու անգամ խրախուսանքն էլ ավելի նպաստեցին այն բանին, ինչը շատերն անվանում են «Արգենտինայի քաղաքականության երկայթե օրենք», երբ ազատ ընտրություններում միշտ հաղթում էին պերոնականներն ու չէին հարգվում փոքրամասնության իրավունքները: Երբ Ռաուլ Ալֆոնսինն ու իր արմատականները հաղթեցին 1983թ. ազատ ընտրություններում, նա կուտրեց արգենտինյան քաղաքականության այս երկայթե օրենքը: Մենեմը վերընտրվեց նախագահ 1995թ.: Սակայն արմատականները

16. Պահպանողական-գործարար-զինվորական հարաբերությունների հիմնական փոփոխությունը շատ ավելի մանրամասն հետազոտվել է Չիկագոյի համալսարանից Գառլոս Ակունայի և Կոլումբիայի համալսարանից Էդվարդ Գիբսոնի երկու հիմնալի դոկտորական թեզերում: Ակունան պնդում է, որ ժողովրդավարությունը դարձել է միակ լավագույն տարբերակը, իսկ զինվորականությունը՝ անընդունելի դաշնակից իր "Intereses empresarios, dictadura y democracia en la Argentina actual (o, porqué la burguesía abandona estrategias autoritarias y opta por la estabilidad democrática)" (Buenos Aires: CEDES, Feb. 1992): Էդվարդ Գիբսոնը կենտրոնանում է քաղաքական կուսակցությունների համար զինվորականության անընդունելի դաշնակից դառնալու հետևանքների և Մենեմի ու կուսակցությունների միջև նորագատականական նոր համաձայնության ձեռքբերման վրա՝ "Conservative Parties and Democratic Politics: Argentina in Comparative Perspective", (Ph.D. diss. Department of Political Science, Columbia University, 1992):

17. Օ'Դոննել, «Անհնարին «խաղ»» (O'Donnell, "An Impossible 'Game'", 188):

(և "FREPASO"-ն, մի նոր կուսակցություն, որը հարցման արդյունքներով մայրաքաղաքում գերազանցեց պերոնականներին 1995թ.) հույսեր ունեին, որ 1999թ. արգենտինյան հասարակարգն արդեն պատրաստ է լինելու կուսակցական իշխանության փոփոխությանը: Եթե ժողովրդավարության խաղը շարունակվի, ապա երեք խոշոր կուսակցությունների ակտիվիստները հավատում են, որ իրենք կհաղթեն: Հաղթելու հեռանկարը բոլոր կուսակցությունների առաջնորդների համար մեծացնում է միջժամանակային մոտիվացումը՝ շարունակելու ժողովրդավարության խաղը:

Սակայն՝ գոյություն ունեն հին խաղի որոշ տարրեր, որոնք անհանգստացնում են արմատական կուսակցության որոշ ակտիվիստներին: Այն փաստը, որ պերոնական արհմիությունները ղեկավարել էին տասներեք գործադուլներն ընդդեմ Ալֆոնսինի արմատական կուսակցության վարչակազմի, և այն, որ իշխանության գլուխ կանգնած արմատականներն ի վիճակի չեղան պահպանելու գործուն տնտեսական քաղաքականություն, անհնարին խաղի մնացուկ է: Այդուհանդերձ, 1992-94թթ. արմատական կուսակցության որոշ առաջնորդներ մի կողմ քաշված սկսեցին պնդել, որ եթե Մենեմն ի վիճակի լիներ պահպանելու կենսունակ տնտեսական մոդել ու կրճատելու արհմիությունների ինքնավարությունը, մի ապագա արմատական կառավարություն, չբախվելով անհավատարիմ զինվորականության ու տնտեսական ճգնաժամի հետ, կարող էր լինել շատ ավելի արդյունավետ, քան իրենք եղել են անցյալում:

Անհնարին խաղի երրորդ բնութագիրը մի վտանգավոր դիսկուրս էր այն մասին, որ Արգենտինան ունի մշտական մեծամասնական կուսակցություն, որը լավագույն դեպքում ժողովրդավարության նկատմամբ ունի երկակի վերաբերմունք: Այս դիսկուրսի մի մասը, ինչպես տեսանք, թուլացել էր 1983 թվականի ընտրություններում պերոնականների պարտության պատճառով: Ժամանակը՝ և՛ ֆիզիկական, և՛ պատմական, նույնպես թուլացրել է այս դիսկուրսի ուժը: Քաղաքականության մեջ որոշ թշնամանքներ մարում են միայն այն ժամանակ, երբ մահանում են գլխավոր գործող անձինք: Արգենտինայում անհնարին խաղի մի մասն այն էր, որ Պերոնն իր կենդանության օրոք ներկայացնում էր գրավչության ու հակակրանքի մի արտասովոր բևեռ Արգենտինայի քաղաքականության ոլորտում: Որպես մի առաջնորդ, ով ակնառու դիրքի հասավ այն ժամանակ, երբ Մուսոլինին դեռևս կառավարում էր, Պերոնն ի վիճակի եղավ ստեղծելու ու պահպանելու մի կիսաֆաշիստական, ժողովրդահաճ-ազգայնական հոետորական ոճ: Պերոնի կենդանության օրոք պերոնականությունն ավելի շատ շարժում էր, քան կուսակցություն: Պերոնի երկակի մոտեցումը քաղաքականության ու դոկտրինի առումով օգնել է նրան հավերժացնելու իր տիրապետությունը և՛ շարժման, և՛ կուսակցության վրա: Հաշվի առնելով 1955թ.-ից հետո զինվորականություն-ինստիտուտի ու բուրժուազիայի կարևոր հատվածների գրեթե մշտական թշնամությունը Պերոնի նկատմամբ՝ ընտրությունները Պերոնի համար երբեք չեն եղել միակ լավագույն տարբերակը: Ուստի նա պահել ու գեներացրել էր արտակուսակցական ու արտաժողովրդավարական ռեսուրսների մի լայն տեսականի:

Մենեմը, սակայն, իշխանության էր եկել համաշխարհային պատմության մեկ այլ ժամանակաշրջանում: Ինչպես Ֆրանկոյի հաջորդները, այնպես էլ նա չկարողացավ պահպանել հոետորական ոճը մի այնպիսի պատմական *ցայթգայստի*, որն այլևս գոյություն չունեի: Նաև պերոնական արհմիությունների վրա իր հարձակումից հետո Մենեմն ու մանավանդ՝ կուսակցության մեջ նրա առավել հավանական իրավահաջորդները հետզ-

հետև ավելի մեծ չափով իրենց ուժային ռազմավարությունները կհիմնեն ժողովրդավարական ընտրական ուժի և ոչ թե՛ շարժման վրա: Եթե այս դինամիկան իսկապես զարգանա, ապա «անհնարին խաղի» վերջին բաղադրիչը կփոխակերպվի:

Մենք չենք կարող ասել, որ նախկին անհնարին խաղի այդ երեք փոխկապակցված բաղադրիչների փոփոխությունը բավարար է ժողովրդավարության կայացման համար: Սակայն կարող ենք ասել, որ այդ երեք փոփոխությունները նախապայման էին հնարավոր ժողովրդավարական խաղ զարգացնելու համար: Իսկապես, այս երեք բաղադրիչների փոփոխություններն ավելացրել են այն տեսակի վարքագիծը, որը ժողովրդավարական քաղաքականությունը դարձնում է հնարավոր խաղ: Երեք խոշոր կուսակցություններն ու առաջատար գործարար խմբերը չեն դրսևորում ժողովրդավարական առումով բացահայտ անհավատարիմ վարքագիծ: Առկա է ժողովրդավարական ինստիտուտների ավելի քիչ քննադատություն՝ համակարգի մեղադրում, որովհետև 1990-94թթ. արդյունավետությունը բարձրացավ և ոչ թե անկում ապրեց: Եվ երբ բոլոր երեք խոշոր կուսակցությունները գիտեն, որ իրենք ապագայում ունեն հաղթելու ու գործուն կերպով կառավարելու հնարավորություն, այլ ոչ թե պարտվելու դեպքում կրելու են խիստ մեծ վնաս, մեծացել է ժողովրդավարական խաղը խաղալու միջժամանակային մոտիվացումը: Եվ վերջապես, հաշվի առնելով այն համատարած ընկալումը, որ զինվորականությունն այլևս ոչ մի ժողովրդավարական կոալիցիայի վստահելի գործընկեր չէ, ժողովրդավարությունը աստիճանաբար դառնում է ամենակարևոր ու լավագույն տարբերակը: Սակայն, թեև կարծում ենք, որ ժողովրդավարությունը դարձել է հնարավոր խաղ Արգենտինայում, կավարտենք՝ քննելով որոշ մտահոգիչ հարցեր, որոնք վերաբերում են ծնունդ առնող ժողովրդավարության որակին:

## ԱՐԳԵՆՏԻՆԱՅՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1-ին գլխում մենք քննարկեցինք կայացած ժողովրդավարության հինգ ոլորտները և այն, թե ինչպես են կատարելատիպային տարբերակով յուրաքանչյուր ասպարեզի ներսում իրականացվում միջոցառումներ ու մշակվում նորմեր, որոնք ամրապնդում են ժողովրդավարական պրակտիկան ու արժեքները մյուս ասպարեզներում (տե՛ս Աղյուսակ 1.1): Համառոտակի դիտարկենք ժողովրդավարության որակի վրա նախագահ Մենեմի ունեցած ազդեցությունը մեր քննարկած այդ հինգ ոլորտներում:

Եթե որևէ նոր ժողովրդավարության կառավարությունը մշտապես գործի սահմանադրության եզրին կամ անցնի այդ եզրը, ապա այն ակներևորեն կթուլացնի օրենքի գերակայությունն ու դրա առաջնային կազմակերպական սկզբունքը՝ սահմանադրականությունը: Նկատի ունենալով նախագահ Մենեմի կառավարման ոճը՝ Գառլոս Նինոն՝ հանգուցյալ արգենտինացի ականավոր իրավական տեսաբանը, նկատել է, որ «հեղաշրջման կամ ժողովրդավարության անկման վախն անընդհատ նվազում է, սակայն այդ ռիսկերը փոխարինվել են ժողովրդավարության այլատերման ու բովանդակազրկման վախով»: Արգենտինացի քաղաքական սոցիոլոգ Խուան Գառլոս Տորրեսը, որը նույնպես գլխավորապես անհանգստանում էր ժողովրդավարության որակի համար, նկատել է, որ Մենեմի իշխելու ոճը եթե չզսպվի, առաջ կբերի «ցածր լարվածության ժողովրդավարություն ցածր

լարվածության քաղաքացիությամբ»<sup>18</sup> Դատելով փաստերից՝ նախագահ Մենեմի երկակի վերաբերմունքը օրենքի գերակայության հանդեպ թուլացրել է ոչ միայն սահմանադրականությունը, այլև պետական ապարատում և քաղաքացիական, քաղաքական ու տնտեսական հասարակությունում ժողովրդավարական պրակտիկայի ու նորմերի որակը:

Իր պաշտոնավարելու առաջին չորս տարիներին նախագահ Մենեմն օգտվեց սահմանադրության կետերից մեկի ընձեռած հնարավորությունից, որը թույլատրում էր նախագահին արձակել հրամանագրեր, եթե նա հիմնավորեր, որ դրանք «անհրաժեշտ ու հրատապ» են: 1853 և 1989թթ. միջև ընկած ժամանակահատվածում նրա նախորդներն արձակել էին 30-ից էլ քիչ այդպիսի հրամանագիր: 1989 և 1993թթ. միջև ընկած ժամանակահատվածում նախագահ Մենեմն արձակեց 244-ը: Ավելին, սահմանադրությամբ պահանջվում էր *էքս պոստ ֆակտո* (իրադարձությունից հետո) հրամանագրերի դիտարկում օրենսդրի կողմից: Նախագահ Մենեմի 244 հրամանների միայն 74%-ն է երբևէ ներկայացվել Կոնգրեսին, և միայն 4%-ն է անցել լրիվ հաստատման գործընթացով: Սակայն գրեթե բոլոր հրամանագրերը մնացել են ուժի մեջ, որովհետև օրենսդիրը, որտեղ նախագահ Մենեմն ուներ մեծամասնություն, չի առարկել դրանց դեմ:<sup>19</sup>

Երբ նախագահ Մենեմը բախվեց Գերագույն դատարանի կողմից դիմադրության հավանականությանը, նա օգտագործեց իր օրենսդրական մեծամասնությունը՝ ավելացնելու Գերագույն դատարանի դատավորների թվաքանակը հինգից իննի: Կոնգրեսի կողմից քննարկման համար միայն քառասունմեկ վայրկյան հատկացվեց այս չհայտարարված փոփոխությանը: Ավելի վատ էր այն, որ Մենեմի ամենամոտ խորհրդականների նկատմամբ հարուցվել էին կոռուպցիայի խոշոր մեղադրանքներ: Նրանցից մի քանիսն էլ ակնարկում էին հենց իր՝ նախագահ Մենեմի կապը:<sup>20</sup> Հորիզոնում քրեական հետաքննություններն էին: Այս ենթատեքստում Մենեմը ստեղծում է մի բարձրագույն քրեական դատարան, որը ցածր էր միայն Գերագույն դատարանից և օժտված էր երկրում ցանկացած քրեական դատավարություն վերանայելու ու հակադարձելու դատական իրավասությամբ: Մենեմն այդ դատարանի անձնակազմն ամբողջությամբ համալրեց իր աջակիցներով: Բոլոր նոր նշանակվածներին տրվեց ցմահ նշանակում: Եթե երբևէ Մենեմին դատապարտեին կոռուպցիայի համար իր նախագահության ընթացքում կամ հետո, նրան պետք է դատապարտեր այդ դատարանը:<sup>21</sup>

Թեև մամուլի ուղղակի գրաքննություն քիչ է եղել տարածված «վախի մշակույթը», որը գրեթե վերացվել էր նախագահ Ալֆոնսինի օրոք, նորից գլուխ բարձրացրեց նախագահ Մենեմի օրոք: Օրինակ, Արգենտինայի Լրագրողների միության ղեկավարն ասում էր, որ Մենեմի կառավարության առաջին քառասուններկու ամիսների ընթացքում 139 լրագրող

18. Ալֆրեդ Ստեփան, քննարկումներ Կառլոս Նինոյի և Խուան Կառլոս Թորեսի հետ, Բուենոս Այրես, Արգենտինա, հուլիսի 26-29, էջ 1993:

19. Մատեո Գորետտիի և Ղեյլա Ֆերեյրա Ռուբիոյի ուսումնասիրությունը բերված է՝ "Latin American Regional Reports: Southern Cone Report" (9 սեպտեմբերի, 1993թ.), էջ 8:

20. Արգենտինացի առաջատար հետաքննչական լրագրող Օրասիո Վերբիցկին (Horacio Verbitsky) ուսումնասիրում է կոռուպցիայի, արդարադատության շահարկումների ու սահմանադրությունն արհամարհելու մասին մեղադրանքները մի երկար հարցազրույցում՝ "Menem es el jefe de la corrupción", "La Maga" (March 11, 1992), 1-3: Նաև նրա հանրահայտ գիրքը՝ "Robo para la corona: Los frutos prohibidos del árbol de la corrupción" (Buenos Aires: Planeta, 1991):

21. Ալֆրեդ Ստեփան, քննարկումներ Կառլոս Նինոյի հետ, Բուենոս Այրես, 25 հուլիսի, 1993թ.:

ստացել են անանուն սպառնալիքներ, և տեղի է ունեցել ֆիզիկական հարձակման հիստուն դեպք: Նա պնդում էր, որ անանուն սպառնալիքների մեծ մասը «կապված է եղել կառավարական կապեր ունեցող մարդկանց հետ»: Ընդհուպ մինչև 1993թ.՝ Կոնգրեսի ընտրություններին նախորդող հինգ ամիսները հիմնական պահպանողական լրագիրը՝ "La Nacion"-ը, մեղադրանք է ներկայացրել, որ իր լրագրողներից քսաներկուսը ստացել են մահվան սպառնալիքներ՝ հատուկ զգուշացմամբ, որ պետք է դադարեն քննադատել նախագահ Մենեմին:<sup>22</sup>

1853 թվականի սահմանադրությունը, որը վերականգնվել էր նախագահ Ալֆոնսինի երդմնակալությունից հետո, հստակորեն արգելում էր նախագահի՝ պաշտոնավարման ժամկետը լրանալուց անմիջապես հետո հաջորդ վերընտրությունը: 1992-94թթ. ընթացքում նախագահ Մենեմն իր եռանդի մեծ մասը նվիրեց այդ սահմանադրական կետի փոփոխմանը: Քաղաքական մթնոլորտը դարձել էր այնքան լարված, որ նրա ներքին գործերի նախարարը հրաժարական տվեց՝ զգուշացնելով, որ իր կարծիքով՝ Մենեմի որոշ քաղաքական կադրեր մտադրված են ապահովելու Մենեմի անընդհատությունն «ինչ գնով էլ, որ լինի»:<sup>23</sup> Առաջատար ընդդիմադիր կուսակցությունը հրապարակեց մի հայտարարություն, որում ասում էր, որ Մենեմի կառավարությունը գտնվում է սահմանադրության վերանայման ցանկացած հնարավոր գործընթացի «լեգիտիմության խախտման» եզրին:<sup>24</sup> Սակայն 1993թ. հոկտեմբերին Կոնգրեսի ընտրություններում պերոնականների հաջողությունից հետո նախկին նախագահ Ալֆոնսինը մի քայլով, որը նրա կուսակցության մյուս գլխավոր առաջնորդներին զարմանք պատճառեց, անձնական դաշինքի մեջ մտավ նախագահ Մենեմի հետ՝ թույլատրելու Սահմանադիր ժողովի մի նիստ, որով մի շարք բարեփոխումների դիմաց վերացվեց այն կետը, որն արգելում էր գործող նախագահի թեկնածությունն անմիջապես հաջորդ վերընտրության դնելը:<sup>25</sup> Ի վերջո՝ Ալֆոնսինի

22. *Stéu* «Քաղաքականությունն ու մամուլը. Մենեմի վերաբերմունքը ավտորիտարիզմին» ("Politics and Press: Menem's Attitude 'Authoritarian", Latin American Regional Report: The Southern Cone Report (Sept. 9, 1993), 6-7):

23. Սահմանադրության ճգնաժամի փայլուն նկարագրություն, *տե՛ս* Մարիո Դանիել Սերաֆերո (Mario Daniel Serrafiero), "Las formas de la reforma: Entre Maquiavelo y Montesquieu" (Buenos Aires: Centro Editor de America Latina, 1994): Նախարարի պաշտոնանկության մասին *տե՛ս* հատոր 2, էջ173-75:

24. Նույն տեղում:

25. Չկա փոխհամաձայնություն այն հարցի շուրջ, թե ինչու Ալֆոնսինը մտավ դաշինքի մեջ: Ոմանք ասում են, որ նա այդպես վարվեց, որովհետև կարծում էր, որ դա լավագույն եղանակն է՝ խուսափելու սահմանադրականության *a la* Պերոն անկումից 1949թ.: Ուրիշներն ասում են, որ դա Արգենտինայի քաղաքականության մեջ իրեն՝ որպես առաջատար ազդեցիկ դեմքի վերահաստատելու համար էր: Ալֆոնսինը շեշտեց սահմանադրության առաջարկված վերանայումների կարևորությունը, որոնք «կմեղմացնեին գերնախագահականությունը»: Սակայն Մենեմ-Ալֆոնսինի համաձայնության (երբեմն անվանվում է «Օլիվո» դաշինք) Սերաֆերոյի խոր վերլուծությունը բացահայտում է, որ առաջարկվող սահմանադրական փոփոխությունների մեծ մասն իրականում չէր մեղմացնի նախագահական ավելի ծայրահեղ արտոնությունները: Կարհնետի ղեկավարի առաջարկված պաշտոնը, որը գովազդվում էր որպես քվազի-վարչապետային, իրականում քիչ իրական լիազորություններ ուներ, չկար պաշարողական դրություն ստեղծելու նախագահական իրավունքի զգալի նվազեցում, իսկ ծայրամասերում միջամտության նոր ընթացակարգերը՝ օրենսդրի թերևս ավելի լայն դերով, դարձյալ կլինեին բավական լայն ժողովրդավարական դաշնային համակարգի համար: Եվ վերջապես, առաջարկված սահմանադրական վերանայումներն իրականում դե յուրե սահմանադրական լեգիտիմության որոշ աստիճան կշնորհեին նախագահի կողմից «պատվիրակված օրենսդրությանը»: «Օլիվո» դաշնագրի լրիվ



կուսակցությունն իր կատաղի ու խիստ պառակտված համագումարի ժամանակ հավանություն տվեց Մենեմ-Ալֆոնսին դաշինքին: 1995թ. մայիսի ընտրություններում, չնայած UNICEF-ի զեկույցին, որ Արգենտինայի հյուսիս-արևմուտքում մահացության մակարդակը թռիչք է ապրել, կոռուպցիայի շարունակվող բացահայտումներին ու Մենեմի դատապարտմանը մարդու իրավունքների պաշտպանության խմբերի կողմից զինվորականությանն ուղղված իր երկիրն աստ ակնարկների համար, թե «մենք հաղթեցինք այդ կեղտոտ պատերազմում» (ինչպես նաև Պլասաս դե Մայոյում ծեծի ենթարկված մայրերի համար), Մենեմն անձնական հաղթանակով շահեց ավելի քան երկու անգամ ավելի ձայն, քան իր կուսակցությունը, և վերընտրվեց: Մենեմն, այսպիսով, գրավեց նախագահության դեկր մինչև դարի վերջը:<sup>26</sup> Սակայն հաշվի առնելով անկախ օրենսդրության և դատական համակարգի հարաբերական բացակայությունն ու սուբյեկտիվությամբ ապականված սահմանադրության վերանայման գործընթացը՝ բարձր որակի ժողովրդավարության կայացումն Արգենտինայում հեռու է ապահովված լինելուց:

Նախագահ Մենեմի հակառակորդները, հատկապես՝ արմատական կուսակցությունից, ժամանակ առ ժամանակ քննարկել են նրա հետկանչի հարցը սահմանադրության խախտումների մեղադրանքով:<sup>27</sup> Նրա դաշնակիցները պնդում են, որ Մենեմը սահմանադրականության եզրին է, բայց բոլորովին էլ չի անցել այն: Ի դեպ, հասարակական կարծիքը նախագահ Մենեմին բավական ցածր գնահատականներ է տալիս դատական համակարգի և օրենսդրական համակարգի նկատմամբ հարգանքի պակասի առումով:<sup>28</sup> Նախագահի գործելը սահմանադրության եզրին, և հանրության կողմից նրա քաղաքականության ոճին հավանություն տալը ժողովրդավարության կայացման համար լավագույն պայմանները չեն: Գիյերմո Օ'Դոննելը կասեր, որ այն կրում է «պատվիրակվող

տեքստն ու դրա դրոյթների ճարտար մեկնաբանություն, *in* է՝ Սերաֆերո (Serafero), *"Las formas de la reforma"*, 2, էջ195-224:

26. Ընտրությունների ժամանակ արմատականներն ստացան ձայների ամենաքիչ քանակությունը, մի բան, որ հարյուր տարի ազատ ընտրությունների ժամանակ նրանց հետ չէր պատահել, սակայն ծնունդ առավ մի նոր, լայն, ձախակենտրոն ընդդիմադիր կոալիցիա՝ "Frepaso"-ն, որը փաստացի ավելի շատ ձայն ստացավ կոնգրեսի ընտրություններում, քան պերոնական կուսակցությունը: Քարոզարշավի ընթացքում "Frepaso"-ն շեշտում էր այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ սոցիալական բարեկեցությունն ու կոռուպցիան: Ընտրությունների վերջնական արդյունքների մասին *in* է՝ «Քաղաքականություն. Մենեմը գերազանցում է բոլոր ակնկալիքները» (*"Politics: Menem Exceeds All Expectation"*, Latin American Regional Reports: Southern Cone Report (July 1, 1995): 2-3) և «Մեռածները վերադարձել են Մենեմին հետապնդելու. կառավարությունը կնախընտրեր, որ անցյալը թաղված մնար» (*"Dead Return to Haunt Menem: Government Would Prefer the Past to Remain Buried"*, Latin American Regional Reports: Southern Cone Report (April 20, 1995): 3):

27. Օրինակ, պատգամավոր Խորխե Վանտսին 1992թ. փետրվարին պատրաստեց հետկանչի մի երկար, մանրամասն գործ՝ սահմանադրության բազմակի խախտումների հիմքով: Սակայն Մենեմի կողմից Կոնգրեսի ու դատական համակարգի վերահսկողության պատճառով, պնդում էր Վանտսին, այն երբեք լրջորեն հաշվի չի առնվել:

28. Օրինակ, Մեծ Բուենոս Այրեսում Քատերբերգի կողմից իրականացված հանրային հարցման ժամանակ (N= 500)՝ 1991թ. դեկտեմբերին, հարցման ենթարկվածների 61%-ը կարծում էր, որ երկիրը ճիշտ ուղղությամբ է գնում, սակայն 84%-ը զգում էր, որ կա «շատ» կամ «բավական շատ» կոռուպցիա ազգային կառավարությունում, 60%-ը կարծում էր, որ դատական համակարգն ունի քիչ կամ ընդհանրապես չունի անկախություն, և միայն 14%-ն էր մտածում, որ կառավարությունն ունի Կոնգրեսի նկատմամբ հարգանք:

ժողովրդավարության» բոլոր մտահոգիչ գծերը: Օ՛րոննելի տեսանկյունից պատվիրակվող ժողովրդավարության որոշ գլխավոր բնորոշ գծերն այն են, որ (1) հաղթող նախագահական թեկնածուներն իրենց ներկայացնում են որպես կուսակցություններից վեր, (2) այնպիսի ինստիտուտները, ինչպիսիք են Կոնգրեսն ու դատական համակարգը, անհարմարություն են, իսկ նրանց առջև հաշվետվողականությունը՝ ոչ անհրաժեշտ խոչընդոտ, (3) նախագահն ու նրա անձնական աշխատակազմը քաղաքականության ալֆան ու օմեգան են և (4) այն դեպքում, երբ կայացած ժողովրդավարություններում ընտրված գործադիրները գտնվում են ինստիտուցիոնալացված ուժային հարաբերությունների ցանցի հիմքում, պատվիրակվող ժողովրդավարություններում նախագահն իրեն մեծ մասամբ մեկուսացնում է գոյություն ունեցող քաղաքական ինստիտուտներից ու կազմակերպված շահերից և դառնում «իր» ռազմավարությունների հաջողության համար պատասխանատու միակ անձը: Օ՛րոննելը կարծում է, որ պատվիրակվող ժողովրդավարությունները կարող են դառնալ ավտորիտար, կարող են չդառնալ, սակայն դրանք չեն կարող դառնալ կայացած ժողովրդավարություններ:<sup>29</sup>

Ժողովրդավարության կայացման համար լավագույն համադրություն կլինի բարձր արդյունավետությունն ու բարձր լեգիտիմությունը: Մակայն անգամ կառավարության՝ համեմատաբար ցածր արդյունավետության ժամանակահատվածներում բարձր լեգիտիմությունը կարող է օգնել կայացած ժողովրդավարությանը՝ անկախ անխուսափելի տնտեսական անկումներից: Արդյո՞ք 1990-ական թվականներին Արգենտինայում բարձր արդյունավետության գինը պատվիրակվող ժողովրդավարության ու միայն չափավոր լեգիտիմության հետևանք էր: Եթե այդպես է, ապա ի՞նչ տեղի կունենա նման քաղաքական համակարգի հետ, եթե արդյունավետությունը նվազի:<sup>30</sup>

29. Գիլբերտ Օ՛րոննել, «Պատվիրակվող ժողովրդավարություն», "Delegative Democracy?" (Արևելք-Հարավ համակարգի փոխակերպումների ծրագիր, Չիկագոյի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետ, 1991թ., աշխատանքային փաստաթուղթ no. 21): Պատվիրակման ուժեղ հակվածություն ունեցող քաղաքական գործիչների թվում են Ֆոլխիմորին՝ Պերուում, Մենեմն՝ Արգենտինայում, Պերոն՝ Միացյալ Նահանգներում, և Կոլորը՝ Բրազիլիայում: Օ՛րոննելի հոդվածի համառոտ տարբերակը, տե՛ս "Journal of Democracy" (1994թ. գարուն), էջ 55-69:

30. Մտքիդ է գալիս, օրինակ, Կառլոս Անդրես Պերեսի կառավարման ոճի վնասակար նշանակությունը Վենեսուելայում ժողովրդավարության համար: Նա ժողովրդականություն էր վայելում, երբ ակտիվ էր (շնորհիվ նավթի բարձր գների), սակայն կոռումպացված էր, 1970-ական թվականներին: Երբ նա երկրորդ անգամ վերադարձավ պաշտոնավարման 1990-ական թվականների սկզբներին և անարդյունավետ էր (մասամբ նավթի ցածր գների պատճառով) ու կոռումպացված, Վենեսուելայում ժողովրդավարությունը գրեթե անկում ապրեց: Որոշ լավ տնտեսագետներ, ովքեր ուշ-ուշով հետևում էին Արգենտինայի տնտեսությանը պնդում են, որ 1992-94թթ. ցածր սղաճ/բարձր աճ ունեցող տնտեսությունն ուներ հավանական թուլությունների երեք աղբյուր, որոնք կարող էին ի վերջո նվազեցնել արդյունավետությունը՝ (1) դուլարին կապված գերարժեքով պետ, որը կարող էր հանգեցնել վճարային հաշվեկշռի խնդիրների, (2) բյուջեի կառուցվածքային դեֆիցիտ՝ քողարկված սեփականաշնորհման միջոցով պետական միջոցների միանվագ վաճառքով, և (3) հիմնական արդյունաբերության մեջ համեմատաբար ցածր ներդրումային մակարդակ: Փաստը, որ Արգենտինայի տնտեսությունը, ի տարբերություն Չիլիի, անգամ Բրազիլիայի տնտեսության, 1995թ. զգալիորեն թուլացել էր մեքսիկական «տեկիլայի էֆեկտի» ("tequila effect") պատճառով, ամրապնդում է այս մտահոգությունները: 1995թ. տնտեսական անկումը խորացրեց Արգենտինայի նորագատականական մոտեցումների շարունակվող «սոցիալական դեֆիցիտը»:

## Անավարտ անցում, թե՞ գրեթե կայացում. Չիլի

ՉԻԼԻԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, հատկապես՝ բանական անցման պայմանների շուրջ պայքարի մեջ մտավ շատ ավելի ուժեղ դիրքերից (ինստիտուցիոնալ, ինչպես նաև քաղաքացիական դաշնակիցներ ունենալու առումով), քան այդ արեցին նրանց բրազիլացի, ուրուգվայցի կամ արգենտինացի գործընկերները: Բրազիլիայում զինվորականությունը 1974թ. իր ուրույն պատճառներով նախաձեռնեց ազատականացում, ինչը հանգեցրեց «զիջումների ու նվաճումների» մի երկարատև գործընթացի տնտեսական հարաճուն անկարգության համատեքստում՝ դրդելով գլխավոր արդյունաբերողներին միանալու ժողովրդավարական ընդդիմությանը: Ուրուգվայում արդեն 1980թ. բոլոր խոշոր կուսակցությունները միավորել էին իրենց ուժերը զինվորականության և նրա առաջարկած սահմանադրության դեմ: Բուրժուազիան, որն արդեն այդ ժամանակ չէր հավատում, որ զինվորականությունն ունի անհրաժեշտ «պաշտպանական» ծրագիր կամ վստահելի հիմնարար ծրագիր, ոչ մի գործողության չդիմեց վարչակարգն իշխանության դեկին պահելու համար: Արգենտինայում զինվորականությունն իշխանությունից հեռացավ ամոթահար, պարտված ու բաժան-բաժան եղած: Ի տարբերություն այս ամենի՝ չիլիական բուրժուազիան 1980-ական թվականների ընթացքում պատրաստակամ էր հրաժարվելու քաղաքական ամենօրյա դեկավարության ցանկացած հավակնությունից՝ հակառակ ձախերի դեմ զինվորականության «պաշտպանական» ծրագրի և հակառակ այն վստահելի հիմնարար ծրագրի, որ զինվորականությունն իր օգնությամբ իրականացնում էր տնտեսության մեջ: 1988թ.-ին՝ տասնհինգ տարի իշխանության գլուխ լինելուց հետո, բանակը միավորված էր, ավտորիտար վարչակարգը քաղաքացիական հասարակության մեջ դեռևս ուներ աջակիցների մի ամուր կորիզ, իսկ Պինչետոն ուներ գործող սահմանադրության միջոցով առնվազն ևս մեկ տասնամյակ իշխելու ծրագիր:<sup>1</sup>

1. Բրազիլիայում, Արգենտինայում, Ուրուգվայում և Չիլիում «հարձակողական» ու «պաշտպանողական» ծրագրերի շատ տարբեր խառնուրդների ու քաղաքացիական հասարակության կողմից զինվորականության դիմադրության կամ աջակցության աստիճանի մասին լայնածավալ վերլուծություն, *տե՛ս* Ալֆրեդ Ստեփան, «Պետական իշխանությունն ու քաղաքացիական հասարակության ուժը Լատինական Ամերիկայի Հարավային Կոնի երկրներում» (Alfred Stepan, "State Power and the Strength of Civil Society in the Southern Cone of Latin America"), Պիտեր Էվանսի, Դիտրիխ Ռեսչեմեյերի և Թեդա Տոկոպոլի խմբ.՝ «Հետ վերադարձնելով պետությունը» (Peter B. Evans, Dietrich Rueschemeyer, and Theda Skocpol, eds., *Bringing the State Back In* (New York, Cambridge University Press, 1985), 317-43): Չիլիում ժողովրդավարության ու 1973թ. դրա անկման պատճառի վերլուծություն, *տե՛ս* Արտուրո Վալենսուելա, «Ժողովրդավարության անկումը Չիլիում» (Arturo Valenzuela, "The Breakdown of Chilean Democracy"), Խուան Լինցի ու Ալֆրեդ Ստեփանի խմբ.՝ «Ժողովրդավարական վարչակարգերի անկու-

Պինչետոն իշխանությունը զիջեց միայն այն պատճառով, որ ընդդիմությունը միացավ ու համախմբվեց՝ օգտվելու Պինչետոի սեփական սահմանադրության մեջ միակ հնարավոր խոցելի կողմից: 1980թ. գեներալ Պինչետոն ու նրա հետևորդները կազմեցին մի ավտորիտար սահմանադրություն և այն ներկայացրեցին պլեբիսցիտի (համաժողովրդական հարցման): Չիլիում բոլոր ավանդական աջ ու գործարար խմբերը, ի տարբերություն Ուրուգվայի, ակտիվորեն քարոզարշավ էին անցկացնում՝ հօգուտ սահմանադրության հաստատման: Թեև քվեարկության ընթացակարգերը բավական թերի էին, այս սահմանադրությունն իսկապես «հաստատվեց» պլեբիսցիտով: Սահմանադրությունը նախատեսել էր հանրաքվե 1988թ., որի ժամանակ, եթե թեկնածուն, որը միաձայն ընտրվել է քառանկյա զինվորական խուճապի կողմից, հաղթեր ձայների մեծամասնությամբ, ապա նա կկառավարեր որպես «ընտրված» նախագահ ևս ութ տարի:<sup>2</sup> Սակայն, ինչպես բոլորը գիտեին, թեկնածուն Պինչետոն էր, և թեև վերջինս ստացավ ձայների 44%-ը, նա չստացավ իշխանության ղեկին ևս ութ տարի մնալու համար իրեն անհրաժեշտ 50.1%-ը:<sup>3</sup>

մը» (Juan J. Linz and Alfred Stepan, eds., *The Breakdown of Democratic Regimes* (Baltimore: Johns Hopkins University Press, 1978)) (կա նաև որպես առանձին գիրք՝ փափուկ կազմով): Չիլիացի քաղաքագետը, որը հատուկ ուշադրություն է դարձնում զինվորական վարչակարգի հիմնարար ծրագրին, Մանուել Անտոնիո Գառետոն է՝ *"El Proceso Político Chileno"* (Santiago: FLACSO, 1983), հատկապես՝ էջ 163-71: Անցման համար նրա ներկայացրած խնդիրների մասին *տե՛ս*՝ Գառետոն, «Չիլիի զինվորականության քաղաքական զարգացումը» (Garretton, *"The Political Evolution of the Chilean Military"*), Օ'Դոննելի, Շմիտտերի և Ուայթհեդի խմբ.՝ «Անցումներ ավտորիտար իշխանությունից՝ Լատինական Ամերիկա» (O'Donnell, Schmitter, and Whitehead, eds., *Transitions from Authoritarian Rule: Latin America* (Baltimore: Johns Hopkins University Press, 1986), 95-112, esp. 98-103): Առաջին վերլուծությունը, որը ցույց է տալիս, թե ինչպես գեներալ Պինչետոը Չիլիի զինվորականությունը փոխակերպեց վարչակարգի նոր տիպի համար բազայի, *տե՛ս* Ջենարո Արիագադա (Genaro Arriagada), *El pensamiento político de los militares* (Santiago: CISEC, 1986): Գնահատման մասին, թե ինչու Չիլիի նորագատական տնտեսական վերակազմավորումն իրականում գնաց ավելի հեռու, քան նույնանման ջանքերը, որոնք արագորեն ձախողվեցին Ուրուգվայում և Արգենտինայում, *տե՛ս* Ալեխանդրո Ֆոքսլի, «Լատինաամերիկյան փորձերը նոր-պահպանողական տնտեսությունում» (Alejandro Foxley, *Latin American Experiments in Neconservative Economics* (Berkeley: University of California Press, 1983)): Չիլիում ու Չիլիից դուրս գտնվող առաջատար մասնագետների ակնարկների արժեքավոր հավաքածու աշխատանքային, քաղաքական կուսակցությունների ու սոցիալական շարժումների վրա հիմնարար ծրագրի ունեցած կամ չունեցած ազդեցության մասին *տե՛ս* Պոլ Դրեյքի և Իվան Յակսիչի խմբ.՝ «Պայքարը ժողովրդավարության համար Չիլիում 1982-1990թթ.» (Paul W. Drake and Ivan Jaksic, eds., *The Struggle for Democracy in Chile, 1982-1990* (Lincoln: University of Nebraska Press, 1991)):

2. Քննարկում այն մասին, թե ինչպես 1980թ. սահմանադրությունն ընձեռեց այս հնարավորությունը և ինչպես էր ժողովրդավարական ընդդիմությունը սկսում համախմբվել՝ առավելագույնի հասցնելու իր հնարավորությունը, *տե՛ս* Ալֆրեդ Ստեփան «Արդյո՞ք Պինչետոի վերջին օրերն են» (Alfred Stepan, *"The Last Days of Pinochet?"* New York Review of Books 35 ( June 2, 1988): 32-35):

3. Չնայած այս հաղթանակը խիստ բավարարվածություն պատճառեց ժողովրդավարական ընդդիմությանը, այնուամենայնիվ, նրանց ամենագոտացնում էր տեսնել, որ Չիլիի ոչ ժողովրդավարական կառավարողը ստացել է ձայների ամենամեծ քանակությունը, որը երբևէ ստացել է որևէ ոչ ժողովրդավարական պաշտոնատար անձ մինչև օրս տեղի ունեցած որևէ անցման ժամանակ: Պլեբիսցիտի և հասարակական կարծիքի մասին հարցումների վերլուծություն, որը լույս սփռեց այն բանի վրա, թե ինչու ընտրողները, երբ կազմակերպվեցին միասնական ժողովրդավարական ճակատով, քվեարկեցին ընդդեմ Պինչետոի, *տե՛ս* Մանուել Անտոնիո Գառետոն (Manuel Antonio Garretton), *"El plebiscito de 1988 y la transición a la democracia en Chile"* (Santiago: FLACSO Cuadernos de Difusion, 1988) և Խոբերտո Մենդես, Օսկար Գոդոյ, Էնրիկե Բառոս և Արտուրո Ֆոնտեն Թալավերա (Roberto Mendez, Oscar Godoy, Enrique Barros, and Arturo Fontaine Talavera), *"¿Por qué ganó el 'No'?"*, Estudios Públicos no. 33 (1989թ.

Դրա հետևանքով հնարավորություն ստեղծվեց 1989թ. նախագահական ընտրությունների և 1990թ. մարտին իշխանության փոխանցման համար:<sup>4</sup> Մեկ ուրիշ հնարավորություն էլ ստեղծվեց ծայրահեղորեն սահմանափակված անցման և մեր հարավկերտական ու Հարավային Կոնի երկրների օրինակներում ժողովրդավարության առումով առավել «անհավատարիմ» իշխանության փոխանցման համար:

Մեր հայեցակարգային ներածության մեջ հիմնավորեցինք, որ առավել սահմանափակող սահմանադրական բանաձևը ցանկացած նոր կառավարության համար այն է, երբ եկող կառավարությունը պետք է համաձայնի կառավարել ըստ ավտորիտար սահմանադրության, որն ստեղծվել է հեռացող ավտորիտար վարչակարգի կողմից: Հաշվի առնելով գեներալ Պինոչետի սակարկելու ուժեղ ձիրքը՝ վերջինս կարողացավ կորզել այս գիներ: Նորընտիր կառավարությունը Չիլիում համաձայնեց իր իշխանությունն սկսել 1980թ. սահմանադրությամբ (մասնակիորեն փոփոխված 1989թ.) և փորձել վերացնել դրա ավտորիտար գծերը փոփոխությունների դժվարին սահմանադրական ընթացակարգերով, որոնք նախատեսված էին հենց իր՝ սահմանադրության մեջ:

Չնայած ժողովրդավարական քաղաքականության մշակման այս շարունակվող սահմանափակումներին՝ 1991թ. օգոստոսի 7-ին նախագահ Այլվինը հայտարարեց, որ Չիլիում անցումն ավարտվել է, և որ իր գլխավոր խնդիրը մինչև իր պաշտոնավարման ավարտը՝ 1994թ. մարտը, լինելու է ժողովրդավարության կայացումը:<sup>5</sup>

Գլուխ 1-ում մենք հիմնավորեցինք, որ քաղաքականապես, ինչպես նաև գաղափարապես կարևոր է հստակորեն պարզել այն, թե անցումն իրականում ավարտվե՞լ է, թե՞ ոչ: Քաղաքականապես դա կարևոր է, որովհետև եթե մարդիկ կարծում են, որ անցումն ավարտվել է այն դեպքում, երբ այն իրականում չի ավարտվել, ապա դա կարող է նշանակել, որ առաջ ընթացող ժողովրդավարության գլխավոր անդամներն սկսել են ոչ ժողովրդավարական սահմանափակումներն ընդունել որպես տանելի կամ ամենավատ տարբերակով՝ ինչ-որ կերպ անգամ օգտակար կառավարման նպատակների համար:

Այս ասելով՝ օգտակար կլինի վերադառնալ ժողովրդավարության լիարժեք կայացման մեր սահմանմանը: 1-ին գլխում մեր առաջարկված սահմանումն ուներ երեք բաղադրիչ՝ առաջին՝ կառավարությունը պետք է իշխանության գա ազատ ու համաժողովրդական քվեարկության արդյունքում: Երկրորդ՝ այս կառավարությունը պետք է ունենա նոր քաղաքականություններ մշակելու լիազորություն: Երրորդ՝ նոր ժողովրդավարության

ամառ), էջ 83-134: Պլեբիսցիտի մասին հետազոտությունների ընդարձակ հավաքածու հրատարակել է CERC-ը (Centro de Estudios de la Realidad Contemporanea), համակարգումը՝ Մարթա Լագոսի ու Կառլոս Ունեուսի:

4. 1989թ. ընտրաբաշարի և դրա արդյունքների մասին *տե՛ս* Ալան Անխել և Բեննի Պոլակ, «1989թ. ընտրությունները Չիլիում և ժողովրդավարության անցման քաղաքականությունը» (Alan Angell and Benny Pollack, "The Chilean Elections of 1989 and the Politics of the Transition to Democracy", Bulletin of Latin American Research 9, no. 1 (1990): 1-23) և Արտուրո Ֆոնտեյն Թալավերա, Հերալդ Բեյեր և Լուիս Էռնան Պոլ (Arturo Fontaine Talavera, Harald Beyer, and Luis Hernan Paul), "Mapa de las corrientes políticas en las elecciones generales de 1989", Estudios Públicos, no. 38 (Autumn 1990): 99-128:

5. Այս պնդման ընդարձակ պաշտպանություն Այլվինի կառավարության հաղորդակցության և մշակույթի նախարարի կողմից, *տե՛ս* Էյուխենիո Տիրոնի (Eugenio Tironi), "Sobre el fin de la transición" APSI (Oct. 21-Nov. 3, 1991): 19-21: 1993թ. նախագահ Այլվինը իրավացիորեն փոխեց խոսքը և նշեց, որ անցումը դեռևս ժամանակ է պահանջում, նախքան այն կհամարվի ավարտված:

կողմից կյանքի կոչված գործադիր, օրենսդիր ու դատական իշխանությունները պետք է ստիպված չլինեն իշխանությունը կիսելու այլ մարմինների հետ *դե յուրե*: Այս սահմանմամբ արդեն այն ժամանակ, երբ Այլվինի կառավարությունն իշխանությունից հեռացավ 1994թ. մարտին, այս չափանիշներից միայն առաջինն էր ամբողջությամբ բավարարված: 1989թ. դեկտեմբերի նախագահական ընտրություններն ազատ ու համաժողովրդական էին, ինչպես և խորհրդարանական ընտրությունները նույնիսկ այն պարագայում, որ դրանք անցացվել էին շատ հակասական ընտրական օրենքներով, որոնք ժողովրդավարական կոալիցիային՝ "Concertación"-ին, կուսակցություններին ոչ ավել, ոչ պակաս տասնյոթ տեղ արժեցան:<sup>6</sup> Պինոչետի 1980թ. սահմանադրությունը, անգամ այն բանից հետո, երբ ժողովրդավարական ընդդիմությունը բանակցությունների հետևանքով հասավ կարևոր փոփոխությունների (վավերացվեցին 1989թ. պլեբիսցիտի ժամանակ), պարզորոշ կերպով ուներ այնպիսի գծեր, որոնք նշանակում էին, որ եկող ժողովրդավարական կառավարությունը ստիպված է իշխանությունը *դե յուրե* կիսելու անհատների ու ինստիտուտների հետ, որոնք ծագումով ժողովրդավարական չէին:

Ժողովրդավարական ինքնիշխանության մի գլխավոր *դե յուրե* սահմանափակում, որը և սահմանափակում էր ժողովրդավարական կառավարության՝ նոր ռազմավարություններ մշակելու լիազորությունը, այն հանգամանքն էր, որ հեռացող ոչ ժողովրդավարական կառավարությունն իրեն էր վերապահել Սենատի քառասունյոթ անդամներից իննին նշանակելու սահմանադրական իրավունքը:<sup>7</sup> Չիլիի համատեքստում սա վճռորոշ էր, որովհետև 1980թ. սահմանադրության գրեթե բոլոր հակասական գծերը և վերջին պահին Պինոչետի ընդունած բազմաթիվ փոխհամաձայնական «հիմնարար օրենքները», որոնք սահմանում էին խաղի կանոններն ավտորիտար պետության անբաժան մասը հանդիսացող ընտրական համակարգի, դատարանների, իրավապահ մարմինների և կիսաինքնավար գործակալությունների կազմավորման համար, պահանջում էին երկու պալատների ձայների 60%-ը:<sup>8</sup> "Concertación"-ն, ի դեպ, շահեց Սենատի՝ քվեարկության համար բաց երեսուկութ տեղերից քսաներկուսը, որով սովորական պայմաններում նրան կպակասեր միայն մեկ ձայն 60%-ին հասնելու համար: Սակայն քառասունյոթ անդամ ունեցող Սենատում ինը «նշանակված սենատորներ» ունենալու պարագայում դա նշանակում էր, որ "Concertación"-ին իրականում պակասում էր երկու ձայն՝ նույնիսկ պարզ մեծամաս-

6. Ընտրական օրենքի մասին, հատկապես մոդելավորում՝ ցույց տալու, թե ինչպես դա կարող է ունենալ շատ անսպասելի հետևանքներ, տե՛ս Արտուրո Վալենսուելայի և Պիտեր Սիավելլիսի (Arturo Valenzuela and Peter Siavelis) նորարարական մոտեցման հիման վրա հողվածը՝ *"Ley electoral y estabilidad democrática: Un ejercicio de simulación para el caso de Chile"*, Estudios Públicos no. 43 (Winter 1991): 21-87:

7. *Sk'e Constitución Política de la República de Chile: 1980*, հոդված 45: Խորաթափանց վերլուծություն այն մասին, թե ինչպես 1980թ. սահմանադրության որոշ խիստ ավտորիտար գծեր վերացվեցին բանակցությունների հետևանքով: *"El primer gobierno de la democracia en Chile"*, Universitat Heidelberg, Institut für Politische Wissenschaft, (1995թ. փետրվար), էջ 9-13: Փոփոխությունների մասին 1989թ. և 1991թ., և այն մասին, թե ինչը չի փոխվել, տե՛ս Մարկ Ենսալակո, «Լորդ՝ ներս, հինը՝ դո՛ւրս. սահմանադրական բարեփոխումների ժողովրդավարացնող ազդեցությունը Չիլիում» (Mark Ensalaco, *"In with the New, Out with the Old? The Democratizing Impact of Constitutional Reforms in Chile"*, Journal of Latin American Studies 26, no. 2 (May 1994): 409-29):

8. Նույն տեղում, հոդվածներ 116-19:

նության և վեց ձայն՝ սահմանադրության ոչ ժողովրդավարական գծերի լուրջ փոփոխություն համար պահանջվող քսանութ ձայնին հասնելու համար:<sup>9</sup>

Նոր ժողովրդավարական կառավարության լիազորության մեկ այլ *դե յուրե* սահմանափակում վերաբերում է զինվորական ղեկավարության *շարունակականությանը*: Սահմանադրությունը գեներալ Պինոչետին տվեց որպես բանակի հրամանատար անփոխարինելիության (*inamovilidad*) արտոնություն մինչև 1998թ. մարտը, և նույն արտոնությունը տրվեց նաև խունտայի մյուս երեք անդամներին՝ նավատորմի, օդային ուժերի ու ոստիկանության ներկայացուցիչներին:<sup>10</sup> Բոլոր չորսն ունեին նաև խոսքի ու քվեարկության իրավունք ու թե հոգուց բաղկացած Ազգային անվտանգության խորհրդում:<sup>11</sup>

Չինվորականության և քաղաքացիական ու քաղաքական հասարակությունում նրանց դաշնակիցների կարողությունը՝ սահմանափակելու ժողովրդավարական կառավարության կանոնակարգեր ու նորմեր սահմանելու ունակությունը, էլ ավելի ամրապնդվեց ինքնավարության այն ուժեղ նյութական, զաղափարախոսական ու ղեկավարման բազաներով, որ զինվորականությունը կառուցել էր իր համար: Նախագահ Այլվիին երդմանակալության արարողությունից տասներկու օր առաջ Պինոչետը ստորագրեց զինված ուժերի մի հիմնարար սահմանադրական օրենք, որը հաստատվեց Սահմանադրական դատարանի կողմից, որը Պինոչետը ստեղծել ու անդամներին նշանակել էր 1980թ.:<sup>12</sup> Այս օրենքը մեծապես ընդլայնեց զինված ուժերի ինստիտուցիոնալ ինքնավարությունը: Կադրային քաղաքականության մեկ այլ վճռորոշ բնագավառում օրենքով վերացվեց սպաներին տարիքային պաշտոնաթողության հրաման տալու նախագահի իրավունքը (մի կարևոր իրավական գործիք, որ նախագահ Այլվինը կարող էր կիրառել մի քանի առավել հայտնի խոշտանգողների ու մարդու իրավունքները խախտողների ակտիվ զինվորական ծառայությունից հեռացնելու համար) և գեներալ-մայորի աստիճանի շնորհման (որի հիման վրա առաջ կքաշվեին բոլոր ապագա գլխավոր հրամանատարները) «դարպասները հսկելու» իրավունքը սահմանվեց որպես գլխավոր հրամանատարի բացառիկ արտոնություն՝ դրանով ամրապնդելով հավակնոտ սպաների կախվածությունը Պինոչետից:<sup>13</sup> Սպայա-

9. Սահմանադրության ներկայացրած խնդիրների փայլուն վերլուծությունը և 1989թ. ընտրությունների արդյունքները, *տե՛ս* Մանուել Անտոնիո Գառետոն (Manuel Antonio Garretón), *"La redemocratización política en Chile: Transición, inauguración y evolución"*, Estudios Públicos no. 42 (Autumn 1991): 101-35:

10. *Constitución Política*, Disposiciones Transitorias, Octava.

11. Ազգային անվտանգության խորհրդի կազմության ու լիազորությունների մասին *տե՛ս* նույն տեղում, հոդվածներ 95, 96: Ազգային անվտանգության խորհրդի երկու քաղաքացիական անդամներն էին Գերագույն դատարանի նախագահը և պետական վարչակազմի գլխավոր վերահսկողը, որոնք երկուսն էլ նշանակվել էին Պինոչետի կողմից և ունեին պաշտոնավարման երկարատև ժամկետ: Այսպիսով, Ազգային անվտանգության խորհրդի ութ անդամներից միայն երկուսն ունեին ամուր կապ նոր ժողովրդավարական կառավարության հետ՝ Չիլիի նախագահ Պատրիցիո Այլվինը և Սենատի նախագահ Գաբրիել Վալդուբ:

12. *Stéu* Ministerio de Defensa Nacional, "Ley Orgánica Constitucional de las Fuerzas Armadas", *Diario Oficial de la República de Chile*, no. 18.948 (Feb. 27, 1990): 1678-83: Նույն թողարկման մեջ Սահմանադրական դատարանը պաշտոնապես հաստատել էր օրենքը, հետևաբար կպահանջվեր սահմանադրական փոփոխություն այն հակադարձելու համար:

13. Նույն տեղում, հոդվածներ 24-32 և հատկապես՝ հոդված 53: Հանրապետության նախագահն իրավունք չունի թեկնածու առաջադրելու, սակայն կարող է հրաժարվել իր ստորագրությունը դնելուց

կան կորպուսի ժողովրդավարական սպասոցիալականացման խնդիրը չափազանց դժվարացել էր այն հանգամանքով, որ ռազմական ուսումնական ծրագրերի ողջ ընտրությունն ու ռազմական դոկտրինին վերաբերող բոլոր հրատարակումները բացահայտորեն դրված էին գլխավոր հրամանատարի բացառիկ հսկողության ներքո:<sup>14</sup> Եվ վերջապես՝ զգալիորեն թուլացվել էր ֆինանսական ռեսուրսների միջոցով զինված ուժերին սահմանափակելու ժողովրդավարական հնարավորությունը: Օրենքն արգելում էր, որ զինվորականության բյուջեն երբևէ ավելի ցածր լիներ, քան դրա բավականին բարձր մակարդակը 1989թ.: Ավելի կարևոր է այն, որ զինվորականությանը տրվել էր Չիլիի արտահանման հիմնական հողավածի՝ պղնձի պետական ձեռնարկության իրացումից ստացված արտարժույթի 10%-ի և ռազմական գույքի, որը ներառում է լայնատարած հողեր ու շինություններ, ցանկացած վաճառքից ստացված եկամուտը պահելու իրավունք:<sup>15</sup>

Ուժային հարաբերությունները երբեք ստատիկ չեն լինում: Այլվիճի երդմնակալությունից հետո ժողովրդավարական կառավարության հարաբերական իշխանությունը զինվորականության նկատմամբ սկսեց աճել դրա ընտրական ծագման, ֆինանսների նախարար Ալեխանդրո Ֆոքալիի հեռատես քաղաքական ու մասնագիտական ուղղորդման ներքո տնտեսության գերազանց կատարողականի շնորհիվ և մի շարք զինվորական սկանդալների պատճառով: Սակայն զինվորականության այս *դե յուրե* ոչ ժողովրդավարական արտոնությունները վերացնելու համար պայքարը կարող է դեռևս շարունակվել մինչև 1990-ական թվականների վերջը:

1980թ. սահմանադրությունը՝ իր նշանակված սենստորներով ու հատուկ երաշխիքներով, ստեղծվել էր բազմաթիվ այլ պաշտպանական միջոցներ ունենալու նպատակով: Սահմանադրությունը կամ զինվորական վարչակարգի կողմից ստեղծված պետության անքակտելի մասը կազմող բազմաթիվ «հիմնարար սահմանադրական օրենքներ» փոփոխելու մասին ցանկացած օրենք պետք է հաստատվեր Սահմանադրական դատարանի կողմից *նախքան* հրապարակումը: Սակայն այս դատարանի կառուցվածքն ու գործառույթները կազմավորվել էին համաձայն 1980թ. սահմանադրության՝ այն ժողովրդավարական ուղղակի ճնշումներից զերծ պահելու նպատակով: Երբ 1990 թ. իշխանության

---

և դրանով իսկ մերժել որևէ առաջխաղացում: Որոշ դեպքերում նախագահ Այլվին օգտվել է այս արտոնությունից: *Stéu* Ունեուս (Huneus), "En defensa de la transición", 23-24: Սովորաբար, սակայն, գեներալ Պինչեչեոի կողմից առաջխաղացման բոլոր հանձնարարականներն ընդունվում էին: *Stéu*, օրինակ, «Չիլի. բանակի առաջխաղացման հանձնարարականներն ընդունված են» ("Chile: Army Promotions Accepted", Latin American Regional Reports: Southern Cone Report (Nov. 24, 1994), 5): Պինչեչեոի կողմից առաջխաղացումների հսկողությունն ավելի հեռու գնաց այս առումով, քան Ֆրանկոյինը՝ իսպանական բանակի վերաբերյալ:

14. Նույն տեղում, հոդված 47: Հոդվածը բացահայտորեն սահմանում է. «Զինված ուժերի սահմանադրական առաքելություններից մեկը Հանրապետության ինստիտուցիոնալ կարգի երաշխավորումն է»:

15. Նույն տեղում, հոդված 47, կետ L և հոդվածներ 93-97: Այս դրույթների լավ քննարկում, *տե՛ս* Գիլերմո Պատիլլո (Guillermo Pattillo), "El gasto militar de Chile en la ducada de los ochenta: Un análisis introductorio", Գիլերմո Պատիլլոյի, Ֆերնանդո Բուստամանտեի և Միգել Նավարոյի (Guillermo Pattillo, Fernando Bustamante, and Miguel Navarro) խմբ. "Cuál debe ser el gasto militar en el Chile de los 90" (Santiago: CED--Editorial Atena, 1991), 13-51: Զինվորականության բյուջեի արտոնությունների վերաբերյալ խորհրդարանական ու արտախորհրդարանական բանավեճերին ծանոթանալու համար, *տե՛ս* Կլաուդիո Ֆունտես (Claudio Fuentes), "Debate en torno al gasto militar: Nuevas perspectivas", Fuerzas Pumas Armadas y Sociedad 6, no. 4 (1991), 24-49:



եկավ ժողովրդավարական վարչակարգը և բախվեց Պինոչետի կողմից նշանակված յոթ անդամներից բաղկացած սահմանադրական դատարանին, անմիջապես հասկացավ, որ նրանցից ոչ մեկին հնարավոր չէր փոխարինել ուրիշով, քանի դեռ չէին հասել կենսաթոշակային տարիքին ( յոթանասունհինգ տարեկան): Ավելին, Սահմանադրությունն ասում էր, որ եկող ժողովրդավարական նախագահը կարող է ապագայում նշանակել դատարանի յոթ անդամներից միայն մեկին, նույնիսկ այն ժամանակ, երբ կազմն ի վերջո պետք է նորացվեր: Երկու անդամ նշանակվում էր Անվտանգության ազգային խորհրդի կողմից, երեքը՝ Գերագույն դատարանի կողմից (որի մեծամասնությունը նշանակվել էր Պինոչետի կողմից 1990թ.) և մեկը՝ Մենատի բացարձակ մեծամասնությամբ (որտեղ նշանակված սենատորների պատճառով ժողովրդավարական կառավարությունը մեծամասնություն չուներ):<sup>16</sup>

Ի հավելումն ասենք, որ երբ ավելի ու ավելի պարզ դարձավ, որ ժողովրդավարական ընդդիմությունը կհաղթի ընտրություններում և կկազմավորի հաջորդ կառավարությունը, գեներալ Պինոչետն իր եռանդի մեծ մասը նվիրեց լրացուցիչ օրենքներ ու ինստիտուցիոնալ կազմավորումներ ստեղծելուն՝ սահմանափակելու եկող ժողովրդավարական կառավարության՝ քաղաքականություն մշակելու ազատությունը: Այս ոչ վստահելի անցման անպատկառության մասին է վկայում այն, որ Պինոչետի կառավարության անկումային ամիսներին Գերագույն դատարանի դատավորներին տրվեցին խիստ գրավիչ ֆինանսական խթաններ՝ ժամանակից շուտ թոշակի անցնելու, որպեսզի Պինոչետը կարողանա այդ պաշտոններում նշանակել իրեն հավատարիմ երիտասարդների: Պետական հեռուստատեսային խոշոր ալիքներից մեկն էժան վաճառվեց և նշանակվեց Հեռուստատեսության ու ռադիոյի «անկախ» խորհուրդ՝ նախքան նոր կառավարության իշխանության գալը: Պինոչետն ընդունեց այնպիսի օրենքներ, որոնք պաշտոնի ապահովություն էին տալիս պետական հատվածի մեծ մասին: Օրինակ, Ներքին գործերի նախարարությունում 556 հաստատված պաշտոններից միայն 12-ն էին տեսականորեն բաց նորընտիր կառավարության կողմից նոր նշանակումներ անելու համար:<sup>17</sup>

Ուժեղ ավտորիտար պետությունը նկարագրելու համար Գրամշին կիրառում է ամբողջ մի քանի շարք խանդակներով շրջապատված լինելու փոխաբերությունը:<sup>18</sup> Չիլիացի հասարակագետ Մանուել Անտոնիո Գառետոնը նման պաշտպանական միջոցները որակում է որպես «ավտորիտար անկլավներ», իսկ մեկ այլ տեղում Ալֆրեդ Ստեփանը քննար-

16. Հավաքագրման այս համակարգի մասին տե՛ս "Constitución Política"-ի հոդված 81-ը: 1991թ. յոթ դատավորներից մեկը մահացավ, և նախագահ Այլվինը կիրառեց իր իրավունքը՝ որպես դատավոր նշանակելու Concertación-ի առաջատար դեմքերից Էուխիկյո Վելյակոյին: Սահմանադրական դատարանի մասին մեր պատկերացմանը զգալիորեն նպաստեց Ստեփանի հանդիպումը դատավոր Վելյակոյի հետ 1992թ. մարտի 7-ին Սանտյագոյում:

17. Մրանք և բազմաթիվ այլ օրենքներ ու հրամանագրեր հայտնի են «հրամայական նորմեր» (leys de amarre) արհամարհական անվանմամբ: Քննարկում ու լայն վավերագրում, տե՛ս Անիսել և Պոլակ, «1989թ. ընտրությունները Չիլիում» (Angell and Pollack, "The Chilean Elections of 1989", 1-23): Բարձրորակ քննարկում, թե ինչպես Այլվինի կառավարությունը կարողացավ հսկողության տակ վերցնել Կենտրոնական բանկն ու թուլացնել որոշ օրենքների պարտադիրությունը, ինչպես, օրինակ՝ հեռուստատեսության վերաբերյալ օրենքը, տե՛ս Ունեուս (Huneeus), "En defensa de la transición", 9-16:

18. Տե՛ս Անտոնիո Գրամշի, «Բանտային նոթատետրերի ընտրանի» (Antonio Gramsci, *Selections from the Prison Notebooks* (New York: International Publishers, 1971), 238):

կել է այն գաղափարը, որ զինվորականության արտոնությունները պետք է կրճատվեն նոր ժողովրդավարական կառավարությունների կողմից:<sup>19</sup> Ինչպիսի արտահայտություն էլ որ կիրառվի, մի բան պարզ է, որ քանի դեռ ոչ ժողովրդավարական արտոնությունների այդ փոխմիակցող համակարգը չի վերացվել կամ լրջորեն նվազեցվել, Չիլիում անցումը չի կարող ավարտվել և ըստ սահմանման՝ Չիլիում ժողովրդավարությունը չի կարող կայանալ:

Գլխավոր մասնակիցները հողվածներում կամ մեզ հետ մասնավոր գրույցներում անուղղակիորեն նշել են, որ մինչև ժողովրդավարական կառավարության իշխանության գալը, իրենց գլխավոր գերակայություններից մեկը նախապես եղել է լայն համաձայնության ձեռքբերումը ժողովրդավարությանն անցման առջև առավել լուրջ խոչընդոտները վերացնելու համար: Ռազմավարությունը եղել է այն, որ համակցվեն նոր նախագահի անմիջական դիմումը ժողովրդին և Խորհրդարանում որոշ ժողովրդավարական աջերի հետ ձեռք բերված համաձայնությունները: Այս ընդհանուր կարգավորման գլխավոր գերակայությունները եղել են նշանակված սենատորների վերացումը, պաշտոնյաներին թոշակի ուղարկելու նախագահի իրավունքի ապահովումը, Պինտչետի և նրա մյուս գլխավոր հրամանատարների «անփոխարինելիության» կարգավիճակի փոփոխությունը, Սահմանադրական դատարանի կառուցվածքի ու առաքելության վերակազմավորումը, անցումը Չիլիի նախագահական գործադիր ձևից դեպի կիսախորհրդարանական մոդելի և տեղական ինքնակառավարման մարմինների ուղղակի ընտրությունների անցկացումը: Սակայն նախագահ Այվիինի վարչարարության վերջում այս քաղաքական գերակա կետերից միակը, որն իրականացվեց, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն էին, որոնք անցկացվեցին 1992թ. հունիսին:

Այն հարցին, թե ինչու չփորձեցին իրականացնել ավելի լայն կարգավորումներ՝ վե-

19. «Ավտորիտար անկլավներ» մասին հիանալի քննարկում, *տե՛ս* Մանուել Անտոնիո Գառետոն (Manuel Antonio Garretón), *"Posibilidad democritica en Chile"* (Santiago: FLASCO Cuadernos de Difusion, 1989), 51-62: Ստեփանի (Stepan) քննարկումը արտոնությունների վերաբերյալ, *տե՛ս* նրա «Զինվորական քաղաքականության վերախմաստավորումը» (*"Rethinking Military Politics"*, 93-127): Ստեփանի՝ 1988թ. արտոնությունների մասին վերլուծության շարունակությունը հանդիսացող մանրամասն գնահատում, որը փաստում է, որ դրանց մեծ մասը Չիլիում դեռևս պահպանվել էր 1995թ., *տե՛ս* Մարկ Էնսալակո, «Զինվորականության արտոնությունները և Չիլիում քաղաքացիա-զինվորական հարաբերությունների «պատային» իրավիճակը» (Mark Ensalcó, *"Military Prerogatives and the Stalemate of Chilean Civil-Military Relations"*, Armed Forces and Society 21, no. 2 (1995): 255-70), և Վենդի Հանթեր, «Երկու քայլ առաջ, մեկ քայլ հետ. քաղաքացիա-զինվորական հարաբերությունները հետավտորիտար Արգենտինայում և Չիլիում» (Wendy Hunter, *"Two Steps Forward, One Step Back: Civil Military relations in Post-authoritarian Argentina and Chile"* (paper prepared for a conference on Fault Lines of Democratic Governance in the Americas, North-South Center, University of Miami, May 4-6, 1995)): Նախագահ Ֆրեյը ոչ ժողովրդավարական արտոնությունների վերացումը դարձրեց 1993թ. ընտրական քարոզարշավում իր դիրքորոշման մաս: Սակայն արդեն 1994թ. նոյեմբերին պարզվեց, որ զինվորականության առավել կարևոր արտոնությունները ժողովրդավարական կառավարության կողմից կվիճարկվեն Ֆրեյի վարչակազմի փուլային բարեփոխումների միայն չորրորդ փուլում, հնարավոր է՝ 1997թ., երբ բանակի, նավատորմի, օդային ուժերի և ոստիկանության գլխավոր հրամանատարների ու նշանակված սենատորների պաշտոնավարման ժամկետները մոտենան ավարտին: *Տե՛ս* «Չիլի. սահմանադրության փուլային բարեփոխումները» (*"Chile: Phased Reform of the Constitution"*, Latin American Research Report: Southern Cone Report (Nov. 24, 1994), 3) և Հանթեր, «Երկու քայլ առաջ, մեկ քայլ հետ» (Hunter, *"Two Steps Forward, One Step back"*):

րացնելու ոչ ժողովրդավարական արտոնությունների փոխհանգուցող համակարգը, կառավարության գլխավոր պաշտոնյաները պատասխանեցին, որ իրենք պարզապես չունենին համապատասխան ձայներ Մենատում, Ազգային անվտանգության խորհրդում կամ դատարաններում: Ավելին, նրանք շեշտեցին, որ իրենք ունեին լայն տնտեսական ու սոցիալական օրակարգ, որը թեև չէր պահանջում սահմանադրական փոփոխություններ, սակայն պահանջում էր, որ իրենց ընդհանուր քաղաքականության փաթեթը կառուցեին այնպես, որ կարողանային շահել աջերի ընդդիմության մի մասի աջակցությունը Մենատում: Հասկանալով ավտորիտար անկլավներից բխող վտանգն ու դրանք վերացնելու դժվարությունը՝ առաջին ժողովրդավարական կառավարությունը որոշեց հարմարվել դրանց հանուն կայունության և տարբեր հարցերում ժողովրդավարական աջերի, թեկուզ չնչին քաղաքական աջակցության:

Մեր տեսական շրջանակի առումով, Չիլին, այսպիսով, Գլուխ 5-ում մեր առաջ քաշած վարկածի պարզորոշ հաստատումն է: Մենք պնդում էինք, որ նախորդ կառավարության այն տիպը, որը կարող է առավելագույն արգելքները հարուցել անցմանը, այն տիպն է, որտեղ ոչ ժողովրդավարական վարչակարգի հիմք է բարձրաստիճան զինվորականությունը, որը միավորված է և ունի ուժեղ քաղաքացիական դաշնակիցներ: Այս պայմաններում մենք հիմնավորեցինք այն, որ հեռացող զինվորական վարչակարգը կունենա հզոր ռեսուրսներ՝ սահմանափակող պայմաններ պարտադրելու ցանկացած տիպի անցմանը, և որ այն պարզապես հետ կքաշվի պետության մեջ, որտեղ կկարողանա իր ձեռքում պահել պետության կողմից հաստատված առաքելություններ ու ռեսուրսներ: Սա տեղի ունեցավ Չիլիում: Մենք նաև ասացինք, որ սահմանադրության մշակման գործընթացների վեց տիպերից ամենապակաս ժողովրդավարականը կլինի այն, երբ եկող ժողովրդավարական կառավարությունն ստիպված լինի իր իշխանությունն ամրապնդելու փորձ անել այն խաղի կանոնների համաձայն, որոնք սահմանվել էին հին ավտորիտար վարչակարգի կողմից գրված սահմանադրության մեջ: Սա նույնպես տեղի ունեցավ Չիլիում: Քաղաքական առումով Չիլիում ժողովրդավարությունն սկսվեց շատ ավելի սահմանափակ սահմանադրական պայմաններում, քան այս գրքում մեր դիտարկած լատինաամերիկյան կամ հարավեվրոպական երկրներից որևէ մեկի դեպքում:<sup>20</sup>

Հասկացությունական առումով որտեղի՞ց սկսվեց "Concertación"-ի կառավարությունը 1990 թվականի մարտի 11-ին և ո՞ր կարողացավ հասնել չորս տարվա ընթացքում: Ժողովրդավարական կառավարության առջև կանգնած էր մի դժվարին խնդիր: Զինվորականության մեծ մասը նրա վերահսկելիության տակ չէր նշված մեխանիզմների և համեմատաբար ինքնավար զինվորականության հետ դեպի պետական ապարատ նահանջելու պատճառով: Ավելին, այս ավտորիտար անկլավներն ունեին զգալի գաղափարախոսա-

20. Լեհաստանում այն առանձնահատուկ հանգամանքները, որոնցում «Կլոբ սեդանը» բանակցում էր անցման ինստիտուտների շուրջ, ունեին համանման սահմանափակող պայմաններ, որոնք ի վերջո հաղթահարվեցին, սակայն, ինչպես կտեսնենք, դրանք թողեցին մի բարդ ժառանգություն: Չիլիի ու Լեհաստանի միջև տարբերությունն այն է, որ Լեհաստանում ոչ ժողովրդավարական վարչակարգը սատարվում էր կոմունիստական ապարատի կողմից և ոչ թե աստիճանակարգային զինվորականության ամբողջ ուժի կողմից: Մեկ այլ հետաքրքիր դեպք է Լիկարագուան, որտեղ ժողովրդավարորեն ընտրված նախագահ Վիոլետա Չամոռոն ստիպված էր *դե ֆակտո* և մասամբ *դե յուրե* «գոյակցել» սանդիստական զինվորականության առաջնորդ հրամանատար Դանիել Օրտեգայի հետ:

կան ու կոալիցիոն ռեսուրսներ, որովհետև երկու առանձին խիստ մրցակցային ընտրություններում քաղաքացիական հասարակությունն իր աջակցության 43%-ը տվել էր ավտորիտար վարչակարգին կամ դրա դաշնակիցներին: Սա մեծապես տարբերվում է այն 7-ից մինչև 12% սահմանից, որ հին վարչակարգի կողմնակիցներն ստացել էին Հունգարիայում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում և Արևելյան Գերմանիայում անցկացված առաջին մրցակցային ընտրություններում:

Նոր ժողովրդավարական կառավարության մեծագույն ուժը քաղաքական հասարակությունն էր, որը չնայած բոլոր պարտադրված սահմանադրական սահմանափակումներին, գոնե վերահսկում էր կառավարությունը՝ ունենալով մեծամասնություն ստորին պալատում և հարաբերական մեծամասնություն՝ Սենատում: Չորս տարի անց կառավարությունն արդեն իր օգտին էր փոխել ուժային հարաբերությունները պետության, քաղաքացիական ու քաղաքական հասարակության մեջ:

Այս բաժնի մնացած մասում մենք կդիտարկենք Չիլիի վերաբերյալ երկու սցենար: Սցենարներից մեկում, որը հավանաբար կտևի մինչև առնվազն 1998թ., Չիլիում ժողովրդավարությունը հասնում է «միաժամանակայնության» արդյունքին, ինչպես ժողովրդավարությունը՝ Պորտուգալիայում: Այսինքն, վերջին ավտորիտար անկլավի վերանալուն պես Չիլիում նույն օրն ավարտվում է անցումը, և կայանում է ժողովրդավարությունը:

Երկրորդ սցենարը դիտարկման համար թվում է գրեթե կոպիտ: Դա այն տարբերակն է, երբ երկար ժամանակ խոչընդոտվող կայացման հետևանքները շարժման մեջ են դնում մի շարք հակազդեցություններ, որոնք նվազեցնում են ժողովրդավարական կառավարման լեգիտիմությունն ու կարողությունը: Կամ որ ավելի վատ է, հնարավոր է՝ անգամ նպաստում են այն բանին, որ կոալիցիայի՝ սկզբնապես ժողովրդավարական մասն սկսի նախընտրել պաշտպանված ժողովրդավարական սահմանադրության ընձեռած «կառավարման առավելությունները»:

Նախ դիտարկենք «պորտուգալական» կամ «միաժամանակայնության» բանաձևը, որը համարում ենք առավել ճշմարտանման տարբերակ: 1988 թվականի պլեբիսցիտի ժամանակ Պինոչետը շարունակաբար զգուշացնում էր, որ ընդդիմության հաղթանակը հետ կրերի կուսակցական քառուրդ, սոցիալական հակամարտությունն ու տնտեսական անկարգությունը: Ճիշտ այն պատճառով, որ շատ ընտրողներ դեռևս հավատում էին Պինոչետի հարձակողական ու պաշտպանողական ծրագրերին, նա շահեց ձայների 43%-ը՝ այնքան, որքան Մարգարետ Թետչերը երբևէ ստացել է Անգլիայում: Սակայն, ինչպես Իսպանիայում և Ուրուգվայում և՛ քաղաքացիական հասարակությունը, և՛ քաղաքական հասարակությունն իրականում եզրակացություններ էին արել տապալման նախկին փորձից և իրենց սովորածից շատ բաներ կիրառել էին ժողովրդավարությունն «աշխատեցնելու» համար: Ինչպես Ուրուգվայում, գլխավոր դեր խաղացել էին քաղաքական կուսակցությունները: Հակառակ Պինոչետի կանխատեսումների՝ տասներկու կուսակցությունների կոալիցիան քրիստոնյա ժողովրդավարների առաջնորդությամբ "Concertación"-ում զարգացրել էին միասին աշխատելու և ռազմավարությունը հետևողականորեն իրականացնելու հիանալի կարողություն: Քաղաքական բռնությունները շարունակվում էին, սակայն դարձել էին ավելի նվազ ինտենսիվ ու ավելի մարզինալացված, և որ առավել կարևոր է՝ մշտապես մերժվում էին բոլոր քաղաքական կուսակցությունների կողմից: Մղաճը, հեռու լինելով աճի որևէ միտում ցուցաբերելուց, հասել էր ավելի ցածր մակարդակի, քան Պի-

նոչետի նախագահության վերջին երկու տարիներին: Ավելին, հաշվի առնելով կառավարության տնտեսական ռազմավարության ամուր քաղաքական հիմքը, նշենք, որ միջազգային ֆինանսական ներդրումները Չիլիում հասան նոր բարձունքների:<sup>21</sup>

Ավելի դժվար հաղթահարելի էր մարդու իրավունքների խախտումների ժառանգությունը՝ նկատի ունենալով Պինոչետի դատական, զինվորական ու քաղաքական ռեսուրսների շարունակվող ներկայությունը: Հաշվի առնելով ուժերի այս կորելացիան՝ Այլվինի կառավարությունը որոշեց, որ էքստենսիվ դատավարությունների արգենտինյան մոդելը հնարավոր չէ: Իսկապես, Արգենտինայում 1984-87թթ. քաղաքացիա-զինվորական ճգնաժամը նրանք բխեցրին մի այնպիսի գործընթացից, որի ժամանակ պետության բաղադրիչներից մեկը (զինվորականություն-կազմակերպությունը) կտրուկ հակամարտության մեջ է մտնում պետության մեկ այլ բաղադրիչի հետ (ժողովրդավարական կառավարության գործունեությունը): Արգենտինյան ոճի հակամարտությունից և այն բանից խուսափելու համար, ինչը նրանք Ուրուգվայի կառավարությունում համարում էին «մոռանալու» ավելորդ քաղաքականության, Այլվինի կառավարությունը նախընտրեց միջին ուղին, այն է՝ նախորդ զինվորական վարչակարգի օրոք քաղաքացիական իրավունքների խախտումներին արդարացի գնահատական տալը:

Կառավարությունը հանձնարարեց 1973-85թթ. ժամանակահատվածում մարդու իրավունքների խախտումների ու քաղաքական բռնությամբ ուղեկցված հանցագործությունների լրիվ ծավալով հետաքննություն և հրապարակեց արդյունքները:<sup>22</sup> Սակայն կայացվեց

21. Ժողովրդավարական կառավարության առաջին տարվա կատարողականի նկատմամբ միջազգային ֆինանսական համայնքի դրական արձագանքին համապատասխան զեկույց էր Ջոն Փաուելի, Ջոյս Չելնջի և Դիրք Դամրոյի զեկույցը՝ «Չիլի. ներդրումային մակարդակի վարկ», *"Chile: An Investment-Grade Credit"* (New York: Solomon Brothers, May 1990), որում նրանք ասում էին. «Մեր կարծիքով՝ Չիլին պետք է դիտվի որպես Լատինական Ամերիկայի՝ առաջին ներդրումային աստրճանի պետական վարկ, հետևյալ պատճառներով՝ կա ուժեղ փոխհամաձայնություն տնտեսական ռազմավարության նպատակների շուրջ... Չիլիի քաղաքական կայունությունը ինքնաբավ է... Ողջախոս մակրոտնտեսական միջոցառումները տվել են առողջ արդյունքներ... Չիլին զգալիորեն նվազեցրել է արտաքին ցնցումների նկատմամբ իր խոցելիությունը» (էջ 1): Չիլիի լուրջ տնտեսական կատարողականը 1995թ., չնայած մեքսիկական «տեկիլայի էֆեկտի», որը ցնցեց Արգենտինան, հաստատեց, որ այս դատողությունները հիմնավոր են:

22. Նախագահ Այլվինը հրապարակեց "Comisión Nacional de Verdad y Reconciliación" երկհատոր զեկույցը մի հուզիչ, երկրորդ մեկ հետարձակվող հեռուստատեսային արարողության ժամանակ: Զեկույցն ընդունված է անվանել Rettig հանձնախումբ: Խոսե Սալակետը՝ հանձնախմբի ութ անդամներից մեկը և Միջազգային համաներման միջազգային գործադիր հանձնախմբի նախկին նախագահը, համեմատել է Ուրուգվայի, Արգենտինայի և Չիլիի բնակչության պատասխանները մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ "Derechos humanos y limitaciones políticas en las transiciones democráticas del Cono Sur", Colección Estudios CIEPLAN no. 33 (Dec. /991), էջ 147-186: Մեր պատկերացումն այն մասին, թե ինչ էր արել և ինչ չէր արել Rettig հանձնախումբը, խորացավ Սալակետի հետ Ստեփանի մի հարցազրույցից հետո 1992թ. մարտի 5-ին: Լրիվ ծավալով կարևոր գնահատում, *տե՛ս* «Մարդու իրավունքները և համաձայնությունների «քաղաքականությունը» Չիլին Այլվինի նախագահության առաջին տարում» (*"Human Rights and the 'Politics' of Agreements: Chile during President Aylwin's First Year"* (New York, Americas Watch, July 1991)): Տե՛ս Չիլիի և Ուրուգվայի փայլուն համեմատական վերլուծություն, Ալեխանդրա Բարաոնա դե Բրիտո, «Ճշմարտություն կամ համաներում: Մարդու իրավունքներն ու ժողովրդավարացումը Լատինական Ամերիկայում. Ուրուգվայ և Չիլի» (Alexandra Barahona da Brito, "Truth or Amnesty. Human Rights and Democratization in Latin America: Uruguay and Chile" (Ph.D. diss., University of Oxford, 1993)):

**Աղյուսակ 13.1. Լեգիտիմությունն ու արդյունավետությունը Չիլիում և Իսպանիայում**

Ցուցանիշ	Չիլի		Իսպանիա		
	1 տարի վերածողովրդավարացումից հետո (1991թ. մարտ)	2 տարի վերածողովրդավարացումից հետո (1992թ. մարտ)	1 տարի վերածողովրդավարացումից հետո (1978թ.)	3 տարի վերածողովրդավարացումից հետո (1980թ.)	11 տարի առաջին ընտրություններից հետո (1988թ.)
Լեգիտիմություն «ժողովրդավարությունը լավագույն քաղաքական համակարգն է մեր երկրի նման երկրի համար»	86.6	79.1	77	69	87
Efficacy «ժողովրդավարությունը թույլ է տալիս լուծել ինդիվիդուալ, որոնց մենք [«որպես իսպանացիներ/որպես չիլիացիներ»] բավում ենք:	78.7	67.0	68	45	56
N			(5898)	(3132)	(4548)

Աղբյուրը՝ Չիլիի տվյալները վերցված են՝ "Evaluación del segundo año de gobierno democrático" (Santiago: Centro de Estudios de la Realidad Contemporanea, May 1992), աղյուսակ 33: Իսպանիայի տվյալները՝ Խոսե Ռամոն Մոնտերո և Ռիչարդ Գյունտեր, «ժողովրդավարության լեգիտիմությունն Իսպանիայում» "Democratic Legitimacy in Spain", Եյոթը ներկայացվել է Քաղաքագիտության միջազգային միության XVI համաշխարհային կոնգրեսին, Բեռլին, օգոստոսի 21-25, 1994թ.:

մի փոխհամաձայնողական որոշում առ այն, որ դատավարությունները պետք է նախաձեռնվեն միայն անհատների կողմից՝ ընդդեմ անհատների՝ արգենտինյան ներպետական հակամարտությունից խուսափելու նպատակով: Նրանց բանաձևն ամբողջությամբ չարդարացրեց արդարադատության պահանջները (անհատների համար չափազանց դժվար է դատ հարուցել անհատների դեմ) կամ մարդու իրավունքների համար ակտիվորեն պայքարողների հույսերը: Չնայած զգալի վերապահումներին և՛ ձախերի, և՛ աջերի կողմից, շատ չիլիացիներ դժկամորեն ընդունեցին այդ բանաձևը որպես լավագույն ելք, որը քաղաքականապես իրականանալի էր այդ հանգամանքներում:

Ստորին պալատում ունենալով կոալիցիոն մեծամասնություն և մեծ ջանքեր գործադրելով ձեռք բերելու գրեթե համաձայնական բանաձև ժողովրդավարական աջերի մի մասի հետ Սենատում՝ Այլվինի կառավարությունը, ի տարբերություն Բրազիլիայի ու Արգենտինայի՝ հրամանագրերով կառավարվող «պատվիրակված ժողովրդավարության» ոճի կամ փակուղու առջև գտնվող Ուրուգվայի կառավարության, պարզվեց, որ շատ արդյունավետ է: Այն կարողացավ ձևակերպել ու բոլոր ոլորտներում իրականացնել մի շարք ներդաշնակ ծրագրեր, որոնք, ըստ էության վետոյի չարժանացան 1980թ. սահմանադրության ու անկում ապրող, սակայն դեռևս հզոր Պինոչետին իրենց թիկունքում ունեցող պահպանողական կոալիցիայի կողմից:

Հաշվի առնելով այս համատեքստը՝ 1992թ. կեսերին Չիլիի արդեն նվաճել էր ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունքային աջակցություն, որը խոսում էր հոգուտ Չիլիի եթե համեմատենք Իսպանիայի, Պորտուգալիայի, Հունաստանի և Ուրուգվայի կայացած ժողովրդավարություններում եղած վերաբերմունքի հետ: 1992թ. Չիլիի միակն էր մեր չորս լատինաամերիկյան օրինակներից, որի քաղաքացիները հաստատել են իրենց հավատն առ ժողովրդավարության լեգիտիմությունն ու արդյունավետությունը: Ի դեպ,

**Աղյուսակ 13.2. Կառավարության արդյունավետության մասին քաղաքացիների ընկալումը ժողովրդավարական իշխանության երկրորդ տարելիցին ազատ ընտրված նախագահների օրոք (Ալվինը՝ Չիլիում, Կոլտրը՝ Բրազիլիայում)**

Ցուցանիշ	Չիլի (1992թ. մարտ)	Բրազիլիա (փետրվարի 20-22, 1992թ.)
«Ներկա կառավարությունը լուծում է տնտեսական խնդիրները երկրում»	23.1	3
«Ներկա կառավարությունը չի լուծում տնտեսական խնդիրները երկրում, սակայն անհրաժեշտ է ժամանակ»	54.1	32
«Ներկա կառավարությունը չի կարող լուծել տնտեսական խնդիրները երկրում»	12.8	29
«Ոչ մի կառավարություն չի կարող լուծել տնտեսական խնդիրները երկրում»	8.3	30
Զգիտեմ/պատասխան չկա	1.8	6

*Աղբյուրը՝* Չիլիի տվյալները նույն աղբյուրից, ինչ որ Աղյուսակ 13.1-ը, Աղյուսակ 58, N=1500, ազգային ընտրանք: Բրազիլիա. տվյալները՝ "Datafolha"-ից, ազգային ընտրանք, N=2500:

այս չափորոշիչներով Չիլին ու Իսպանիան զարմանալիորեն նման են (Աղյուսակ 13.1): Չիլիում սեփական կառավարության բարձր արդյունավետության մասին քաղաքացիների ընկալումը հատկապես աչքի է ընկնում, եթե համեմատում ենք Բրազիլիայի տվյալների հետ (Աղյուսակ 13.2):

Չիլիում ավելի, քան անգամ Իսպանիայում, ընդգծվում է նաև այն փաստը, որ քաղաքացիները կարող են մտածել, որ նախորդ ավտորիտար վարչակարգը «մասամբ լավն էր, մասամբ՝ վատը», և միաժամանակ ճնշող մեծամասնության կարծիքը կարող է ուղղվել ժողովրդավարության օգտին, երբ ժողովրդավարությունը լավ գործի: Իսպանիայում, ինչպես ցույց է տալիս Աղյուսակ 9.4-ը, իսպանացիների 44%-ը կարծում էր, որ Ֆրանկոյի վարչակարգը «մասամբ լավն էր, մասամբ՝ վատը»: Չիլիում բնակչության 55%-ն ուներ նման կարծիք Պինոչետի մասին 1989թ. հոկտեմբերին:<sup>23</sup> Սակայն այն հանգամանքը, որ Պինոչետը համարվել էր ժողովրդավարությունն արգելակող այր, նպաստել է այն փաստին, որ ժողովրդավարական կառավարության երդմնակալությունից մեկուկես տարի հետո նրա հեղինակությունը չափազանց ցածր էր՝ համեմատած առաջատար ժողովրդավարական գործիչների հեղինակության հետ: 1991թ. դեկտեմբերին անցկացվեց հանրահարցում երեսունմեկ հասարակական գործիչների դրական կամ բացասական իմիջի վերաբերյալ: Ժողովրդավարական կառավարության առաջատար դեմքերը՝ նախագահ Ալվինը, ֆինանսների նախարար Ալեխանդրո Ֆոքսիլին և կրթության նախարար Ռիկարդո Լագոսը (սոցիալիստ, որը սոցիալ-ժողովրդավարական «Հանուն ժողովրդավարության կուսակցության» հիմնադիր-նախագահն էր), չափազանց մեծ ժողովրդակալություն էին վայելում:

Ժողովրդավարական աջ կուսակցության երիտասարդ նախագահ Անդրես Ալլամանդը նույնպես ստացել էր շատ նպաստավոր գնահատական: Ամենամեծ «զուտ հակակրանքի» արժանացած երկու դեմքերն էին գեներալ Պինոչետն ու ձախ առաջնորդ

23. "Informe Encuesta Nacional", CERC, Մանտյագո, 1989թ. հոկտեմբեր, Աղյուսակ 8:

Վոլոդյա Տեյտելբոյնը, որը դեռ 1988թ. խոսում էր զանգվածային խռովության անհրաժեշտության մասին:<sup>24</sup>

Եվ վերջապես, ինչպես հիմնավորեցինք Մաս 1-ում, կայացած ժողովրդավարության անհրաժեշտ է ունենալ մի պետական ապարատ, որն իր քաղաքացիների կողմից համարվում է գործուն ու բավականաչափ արդար: Բրազիլիայի օրինակում մենք տեսանք, որ քաղաքացիները մեծապես վախենում են ոստիկանությունից: Չնայած այն փաստին, որ Չիլիում ոստիկանությունը մոտ էր կանգնած Պինոչետի վարչակարգին, Ազգային ոստիկանության ուժերը ("Carabineros") կարողացան իրենց կերպարը որոշ չափով անբիծ պահել: Ընտրություններում ժողովրդավարական ընդդիմության հաղթանակից երկու տարի անց Չիլիում համերկրային ընտրանքի 76%-ը և իրենց ձայներ համարողների 71%-ն, ասացին, որ հավատում են, որ կարաբիներոսներն օգնության կհասնեն իրենց ու իրենց նման մարդկանց:<sup>25</sup>

Հաշվի առնելով արդեն 1992 թվականին այս նպաստավոր վերաբերմունքը վարչակարգի լեգիտիմության, արդյունավետության ու արդարության նկատմամբ՝ Չիլիում ժողովրդավարության վերաբերմունքային հարթությունը կարծես թե ցույց է տալիս, որ Չիլին բռնել է ժողովրդավարության կայացման ճանապարհը: Նաև նկատի ունենալով շատ քաղաքական գործիչների կողմից անհավատարիմ ու կիսահավատարիմ վարքագծի դրսևորման նվազումը, բացառությամբ զինվորականության այնպիսի վարքագծի, որն անտեսել հնարավոր չէ, կայացման վարքագծային հարթությունը նույնպես թվում է բարենպաստ: Այս իրավիճակը վստահելիություն է հաղորդում մեր պորտուգալական սցենարի հավանականությանը: Այսինքն, երբ ժողովրդավարապես հաստատված ինստիտուտների՝ քաղաքականություն մշակելու ունակության այս բոլոր դե յուրե սահմանափակումները վերջապես հաղթահարվեն, նույն օրը Չիլիում ժողովրդավարության անցումն ու ժողովրդավարության կայացումը հավանաբար տեղի կունենան միաժամանակ:

Մա մեզ տանում է դեպի մեր վերջին հարցը: Ի՞նչ զին կունենա, եթե ընդհանրապես ունենա, ժողովրդավարությունը Չիլիում, եթե այն պետք է սպասի մինչև 1990-ականների վերջը՝ վերացնելու ոչ ժողովրդավարական արտոնություններն ու ստեղծելու ժողովրդավարական սահմանադրություն: Նախքան տեղի կունենար այն քվեարկությունը, որը հանգեցրեց Պինոչետի պարտությանը, Չիլիի ժողովրդավարական ընդդիմության շատ առաջատար քաղաքական դեմքեր՝ ձայնից մինչև աջ, վերանայեցին 1973թ. Չիլիում ժողովրդավարության անկման պատճառներն ու քննարկեցին, թե ինչպես կայացնել ժողովրդավարությունն ապագայում: Հիմնովին ընդունվեց այն փաստը, որ Չիլին, բնականաբար, բազմակուսակցական համակարգ է՝ ուժեղ կուսակցական գաղափարախո-

24. CERC-ի հանրահարցման տվյալներ, որոնք տրամադրվել են հեղինակներիին:

25. *Sté u "Estudio social y de opinión pública"*, Centro (le Estudios Publicos, Documento de Trabajo, no. 173 (1992թ. փետրվար), էջ 65: Քաղաքացիական հետաքննությունների ոստիկանությունը (PCI) նույնպես բավական արդյունավետ էր ու ոչ բռնի: 1991 թ-ից մինչև 1994թ. հունիս ընկած ժամանակահատվածում Չիլիի առավել ակտիվ ահաբեկչական խմբերից մեկի՝ "Movimiento Juvenil Lautaro"-ի բարձրագույն ղեկավարության 53 անդամները բռնվեցին «անարյուն գործողությունների» հետևանքում և բանտարկվեցին: *Sté u «Լաուտարոյի ամբողջ ղեկավարությունը Գաոլում»*, "Entire Lautaro Leadership in Gaol", Latin American Research Report: Southern cone Report (1994թ. օգոստոս), էջ 7:



սություններով: Ժողովրդավարական ընդդիմության առաջնորդներն անցյալում պնդում էին, որ այս համակցությունը միտում ունի առաջ բերելու փոքրամասնական կառավարություններ, օրենսդրական փակուղիներ ու ժողովրդի ընտրած նախագահների կողմից փորձեր՝ իշխելու հրամանագրերի միջոցով կամ կիրառելու արտախորհրդարանական միջոցառումներ: Չիլիից արտաքսված բազմաթիվ քաղաքական գործիչներ, ապրելով Իտալիայում, Գերմանիայում ու Իսպանիայում, գտնում էին, որ ժամանակակից խորհրդարանականությունն է ճիշտ պատասխանը Չիլիի հարցերին:<sup>26</sup> Արդեն գրեթե ծագել էր փոխհամաձայնություն, որ նախագահականությունն ունի խնդիրներ, որոնք անհրաժեշտ է լուծել: Ումանք պնդում էին նաև, որ առաջին ժողովրդավարական կառավարությունում, քանի դեռ կոալիցիան միասնական էր ու նախքան ապագա նախագահական քարոզարշավները կբաժանեին դրա անդամներին, ժողովրդավարական ընդդիմությունը պետք է գնար դեպի խորհրդարանական համակարգի կիսանախագահական տարբերակը: Սակայն գալով իշխանության և բախվելով սահմանադրական բարեփոխումներին, Պինոչետի կոալիցիայի դիմադրությանն ու սոցիալ-տնտեսական քաղաքականության միջոցառումներ առաջ մղելու իրենց սեփական ցանկությանը՝ կառավարությունը որոշել էր քաղաքական բարեփոխումներն առայժմ մի կողմ թողնել:

Արդեն 1992թ. սկզբում, սակայն, "Concertación" կոալիցիայի երկու առաջատար բաղադրիչները՝ քրիստոնյա-ժողովրդավարներն ու սոցիալիստները, ունեին չհայտարարված, բայց հզոր նախագահական թեկնածուներ, որոնք կազմակերպում էին իրենց քարոզարշավներն ու անխուսափելիորեն որոշ լարվածություն ստեղծում "Concertación"-ում:<sup>27</sup> Մեր տեսական ու համեմատական վերլուծությունը մեզ հանգեցնում է այն մտքին, որ բազմաթիվ չիլիացի քաղաքական գործիչների ու տեսաբանների կողմից առաջ քաշված փաստարկները 1985-88թթ. ճիշտ էին այն ժամանակ և հիմա էլ ճիշտ են: Սակայն կարծում ենք, որ քաղաքականության մեջ վճռորոշ նշանակություն ունի ժամանակը: Ընտրական մրցակցության տրամաբանությունն ու նախագահական պաշտոնը վարելու գայթակղությունը շատ ավելի կոժվարացնեն խորհրդարանական հաղթող կոալիցիայի ստեղծումը Չիլիում 1990-ական թվականների վերջին, քան դա հնարավոր կլիներ անել 1990-ական թվականների սկզբին: Սա իր հերթին ավելի կոժվարացնի կառավարման համար կոալիցիաներ կազմավորելու խնդիրը: Ինչո՞ւ:

26. Երկու հեղինակներն էլ ներկա էին այս թեմայով եռօրյա համաժողովին Չիլիում, 1989թ. օգոստոսին: Եզրափակիչ հանրային նիստի ժամանակ Ռիկարդո Լագոսը՝ "Partido por la Democracia"-ի նախագահը («Կուսակցությունը հանուն ժողովրդավարության» PPD), Անդրես Ջալդիվարը՝ "Partido Demócrata Cristiano"-ի նախագահը («Քրիստոնյա ժողովրդավարական կուսակցություն» PDC) և Անդրես Ալլամանը՝ "Renovación Nacional" խոշոր ժողովրդավարական աջ կուսակցության նախագահը, բոլորն առաջ քաշեցին փաստարկներ՝ հօգուտ Չիլիի նախագահական համակարգի վերաքննման անհրաժեշտության: Չիլիի «Քրիստոնյա ժողովրդավարական կուսակցության» վերջին ժամանակների քարտուղար Ջենարո Արրիագադան գրել էր մի նորարարական հոդված այն թեմայով, թե ինչպես է Չիլիի բազմակուսակցական նախագահական համակարգը ստեղծել «կրկնակի փոքրամասնական» կառավարություններ և, հետևաբար, կարիք ունի խորհրդարանականության:

27. Երկու առաջատար «նախաթեկնածուները» առաջ էին եկել *Concertación*-ի երկու խոշոր կուսակցություններից, Էդուարդո Ֆրեյը քրիստոնյա-ժողովրդավարներից, իսկ Ռիկարդո Լագոսը՝ սոցիալ-ժողովրդավարական «Կուսակցությունը հանուն ժողովրդավարության»-ից: Արդեն 1992թ. կեսերին Էդուարդո Ֆրեյն զգալի առավելություն ուներ 1993թ. դեկտեմբերի հանրահարցումների ժամանակ: Վերջում Լագոսը հետ կանգնեց որպես թեկնածու, և Ֆրեյը հեշտությամբ հաղթեց:

Ըստ ումանց պնդումների՝ հաշվի առնելով "Concertación"-ի գոյությունը և ստորին պալատում դրա ստեղծած հզոր փոխհամաձայնական մեծամասնությունը՝ Չիլիում ձեռք էին բերվել խորհրդարանականության կռալիցիոն առավելություններ առանց անգամ անցնելու խորհրդարանական համակարգին: Սա հնարավոր է: Սակայն "Concertación"-ի կարողությունը 1990-94թթ. շատ բանով պարտական էր կռալիցիոն փոխհամաձայնության համար այն լուրջ մտփվացիային, որն առաջ էր եկել 1980 թվականի սահմանադրության պարտադրած սահմանափակումների պատճառով: Իհարկե, կռալիցիայի ներսում քաղում էին ներքին քաղաքական դասեր, սակայն սահմանադրությունն ու Պինոչետի կողմից պետական ապարատի հսկողությունը հանդես եկան որպես հզոր սոսնձող գործոններ: Եթե այս տրամաբանությունը ճիշտ է, ապա, երբ Պինոչետի ներկայությունը թուլանա, ու նախագահականության համատեքստում զարգանա բազմակուսակցական մրցակցություն, ապա Չիլիի կռալիցիոն հաշվարկը ևս մեկ անգամ կարող է բավական դժվարանալ:<sup>28</sup>

Սակայն մարդու իրավունքների խախտումների գործերով դատավարություններին Պինոչետը շարունակում էր դիմակայել և հակված էր արգելափակելու ժողովրդավարորեն ընտրված կառավարության այն ջանքերը, որոնց նպատակը սահմանադրության փոփոխությունն էր և զինվորականության արտոնությունների փոխկապակցված համակարգը վերացնելը: Այդ ամենի հետևանքով ժողովրդավարությունը կարող է որոշ չափով կորցնել իր գրավչությունն ու անգամ լեգիտիմությունն իր իսկ քաղաքացիների

28. Այս պնդումը հիմնված է այն տեսական ենթադրության վրա, որ բազմակուսակցական խորհրդարանական համակարգում տևական կռալիցիաներ կազմելու ավելի մեծ մոտիվացիա կա, քան բազմակուսակցական նախագահական համակարգում: Աշխարհում երկար ժամանակ գոյություն ունեցող ժողովրդավարությունների վերաբերյալ քանակական փաստերը տեսական փաստարկին տալիս են լուրջ ենվիրիկ հիմնավորում: 1980-89թթ. գոյություն ունեին տասնչորս խորհրդարանական կամ կիսանախագահական համակարգեր՝ երեքից յոթ «գործուն» քաղաքական կուսակցություններ Լատինա-Ամերիկայի սանդղակով: «Գործուն» կուսակցության ամենաբարձր ցուցանիշն այդ ժամանակահատվածում տարբ տարվա տևողություն ունեցող ժողովրդավարության համար Վենեսուելան է՝ 2.6 կուսակցությունով, սակայն Չիլին Պինոչետից առաջ հաճախ ունեցել է գրեթե 6-ի հասնող կուսակցության ցուցանիշ՝ միանգամայն բավարար խորհրդարանական ժողովրդավարության համար, սակայն խիստ բացառիկ՝ նախագահականի համար: *Տե՛ս Ալֆրեդ Ստեփան և Սինդի Սկաչ*, «Սահմանադրական շրջանակներ ու ժողովրդավարության կայացում. խորհրդարանականությունն ընդդեմ նախագահականության» (Alfred Stepan and Cindy Skach, "Constitutional Frameworks and Democratic Consolidation: Parliamentary vs. Presidentialism", World Politics 46 (Oct. 1993): 8-9): Խորհրդարանականության օգտին ընդհանուր փաստարկ և Չիլիի՝ նախագահականության հետ կապված խնդիրների վերլուծություն, *տե՛ս* Խուան Լինցի և Արտուրո Վալենսուելայի (Juan J. Linz and Arturo Valenzuela) հոդվածներում, համապատասխանաբար իրենց խմբագրած հատորում՝ «Նախագահական ժողովրդավարության ձախողումը» (The Failure of Presidential Democracy (Baltimore: Johns Hopkins University Press, 1994)):

1989-93թթ. Այլվիի կառավարությունն ուներ զգալի համաձայնական և քվազիխորհրդարանական գծեր: Նախագահ Ֆրեյի կառավարությունը ոճով ավելի նախագահական էր: Օրինակ՝ նախագահ Ֆրեյը հեռացրեց իր կաբինետի առավել կարևոր սոցիալիստ անդամին առանց իր կռալիցիայի սոցիալիստական կուսակցության անդամների հետ որևէ նախնական խորհրդակցության: Նման վարքագիծը մեծապես դատապարտելի կլիներ որևէ խորհրդարանական կռալիցիայում: Սոցիալիստական կուսակցության գլխավոր քարտուղարը զգուշացրեց, որ «խորհրդակցության բացակայությունը քայքայում է հենց այն հիմքերը, որոնք հնարավոր են դարձրել կառավարող կռալիցիան»: Տե՛ս «Չիլի. սոցիալիստները բարկացած են բարձրագույն պաշտոնը կորցնելու պատճառով» ("Chile: Socialists Angered by Loss of Top Post", Latin America Research Review: Southern Cone Report (Oct. 20, 1994), 6):

աչքում: Արդեն 1993թ. կային անհանգստացնող նշաններ, որ սա սկսում է տեղի ունենալ: Չնայած շարունակվող տնտեսական գերազանց կատարողականին ու նախագահ Այլվինի բացառիկ բարձր անձնական ժողովրդականությանը՝ պատասխանողների թիվը, որոնք արտահայտել են իրենց «շատ բավարարվածությունը» կամ «բավարարվածությունը» ժողովրդավարությունից, 1990թ. օգոստոսին 75%-ից ընկել է մինչև 37% 1993թ. օգոստոսին:<sup>29</sup> Պինոչետի կողմից 1993թ. հունիսին զինվորական ուժի ցուցադրման ու նախագահի անկարողության հետևանքով՝ իրականացնելու իր հայտարարած քաղաքականության փոփոխություններն ընդդեմ զինվորականության արտոնությունների, պատասխանողների տոկոսը, ովքեր ասել էին, որ «ժողովրդավարությունն ամբողջովին ներմուծված է»՝ 25% 1991թ. հոկտեմբերին և 20% 1992թ. մարտին, Այլվինի վարչարարության գրեթե վերջում (1993թ. հոկտեմբեր) ընկավ՝ հասնելով մի նոր ցածր ցուցանիշի՝ 16%-ի:<sup>30</sup> Իսկապես, 1993 թվականի հոկտեմբերին հարցման ենթարկվածների 40.6%-ն իրականում կարծիք է հայտնել, որ զինվորականությունը ցանկանում է վերադառնալ իշխանության:<sup>31</sup>

1995թ. հունիսին պաշտոնաթող գեներալ Մանուել Կոնտրերասը՝ սարսափազդու գաղտնի ոստիկանության ("DINA"-ի) երբեմնի ղեկավարը, բանտարկության դատապարտվեց 1976 թվականին Վաշինգտոնում չիլիացի խոշոր ընդդիմադիր առաջնորդ Օռլանդո Լետերիերի սպանության մեջ ներգրավված լինելու մեղադրանքով: Սակայն նախքան բանտ նստեցնելը դատապարտված Կոնտրերասին զինվորական ուղղաթիռներով իր ռանչոյից գաղտնի տեղափոխեցին ռազմա-ծովային հոսպիտալ: Չորս ամիս տևած փակուղային իրավիճակից հետո Կոնտրերասը վերջապես նստեցվեց հատուկ բանտ՝ զինվորական պահակներով: Ժողովրդավարական կառավարությանը վախեցնելու և բացահայտորեն չենթարկվելու զինվորականության նման գործողությունները 1993-95թթ. զգալիորեն ավելի շատ էին Զիլիում, քան Բրազիլիայում, Ուրուգվայում կամ Արգենտինայում: Նման գործողությունները մշտապես շեշտում էին Զիլիի բնակչության համար, որ անցումն սկսվելուց յոթ տարի անց քաղաքականության կարևոր ոլորտները շարունակում են դուրս մնալ ժողովրդավարական վարչակարգի գործուն վերահսկողությունից:

Ավարտենք մի եզրափակիչ դատողությամբ: 1980թ. սահմանադրությունը մեծապես ամրապնդեց գոյություն ունեցող կառավարության բացառիկ իրավունքները. Կոնգրեսը պետք է հետևեր գործադրի կողմից սահմանված խիստ ժամանակացույցին, այն չէր կարող նախաձեռնել կարևոր ֆինանսական օրինագծեր, իսկ նախագահական պաշտոնը մեկուսացված էր այն կառույցների ներսում, որոնք Պինոչետը նախատեսել էր իր համար: Միտերանը, երբ ընդդիմության շարքերում էր, սովորություն ուներ դը Գոլի Հինգերորդ հանրապետության սահմանադրությունը անվանելու «մշտական պետական հե-

29. Այս անկումը երևում է տարբեր CERC հանրահարցումներում, որոնք հեղինակներին ցուցադրել է Մարթա Լագոսը, որը նախագծել է դրանք, և կարծում է՝ առնչվող հարցերի վերլուծության հիման վրա, որ լեզիտիմության ցուցանիշի անկման համար առավել հավանական բացատրությունը քաղաքացիների բացասական արձագանքն է քաղաքականության օրակարգի գլխավոր հատվածների վրա զինվորականության շարունակվող հսկողությանը, տե՛ս "Informe de Prensa Encuesta Nacional", CERC, 1993թ. հոկտեմբեր:

30. Նույն տեղում, Աղյուսակ 5:

31. Նույն տեղում, էջ 23-24:

ղաշրջում»:<sup>32</sup> Ճակատագրի խաղն այն է, որ նախագահ ընտրվելուց հետո Միտերանն էր, որ վերջնական լեգիտիմություն շնորհեց դը Գոլի սահմանադրությանը: Տխուր հեզնանք կլինի, եթե Չիլիում ժողովրդավարության որակն ի վերջո ավելի ցածր լինի, քան կարող էր լինել, այսինքն, եթե դեռևս ժողովրդավարական մակարդակի վրա գտնվող կառավարությունը 1980թ. սահմանադրության որոշ արտոնություններ համարի այն աստիճան հարմար կառավարելու համար, որ դրանք կանոնավորապես կիրառի ու լեգիտիմացնի:

---

32. Ֆրանսուա Միտերան (Francois Mitterand), *Le coup d'etat permanent* (Paris: Plan, 1965):

## Հարավային Ամերիկա. եզրափակիչ մտքեր

ԱՅՆ ՓԱՍՏԸ, որ ժողովրդավարությանն անցման ու ժողովրդավարության կայացման Հարավային Կոնի երկրների դեպքերն սկսվել են բարձրաստիճան գինվորական վարչակարգերի կադրային հիմքի վրա, նպաստել է դիտարկվող բոլոր չորս երկրներում գորեղ սահմանափակող ավանդույթների առաջացմանը: Մենք պնդում ենք, որ այս փոփոխականն ինքնին բացատրում է Հարավային Կոնի երկրներում ժողովրդավարության կայացման մեծ տարբերությունները՝ համեմատած հարավեվրոպական օրինակների հետ:

Սակայն, կարծում ենք նաև, որ Հարավային Կոնի երկրներում ժողովրդավարության կայացման դժվարին խնդիրը լուսաբանելուն օգնում են այլ գործոններ, որոնցից ոչ բոլորն են ուղղակիորեն այս փոփոխականին առնչվում: Գրքի՝ Հարավային Եվրոպային նվիրված բաժինն ավարտեցինք դրական գործոնների ևս մեկ հպանցիկ դիտարկմամբ: Լատինաամերիկյան օրինակներում նույն գործոններն առկա են, սակայն ավելի խնդրահարույց ձևով:

Սխեմատիկ պատկերմամբ խոշոր տարբերությունները հետևյալն են՝

1. Եվրոպական համայնքը ներկայացնում էր արդեն գոյություն ունեցող քաղաքական ու տնտեսական ցանց, որին Իսպանիան, Հունաստանն ու Պորտուգալիան կարող էին ձգտել: Համայնքին անդամակցելը ենթադրում էր որոշ ֆինանսական շահագրգռություններ: Հարավային Եվրոպայում ԵՏՀ-ի մեջ ինտեգրումը խոստանում էր ՀԱԱ-ի գրեթե 5%-ի չափով իրական փոխանցում: Դրան համարժեք ոչ մի տնտեսական կամ քաղաքական ցանց Հարավային Կոնի երկրների համար չկար: Շուկայական-ժողովրդավարական երկրները՝ ԱՄՆ ղեկավարությամբ, հիմնականում դիտվել են որպես արտաքին պարտքի աղբյուրներ: 1980-ական թվականներին շարունակվում է Հարավային Կոնի երկրների շուկայի ինտեգրումը, որի նպատակը Բրազիլիայի, Արգենտինայի և Ուրուգվայի համար ՀԱԱ-ի գրեթե 5%-ի չափով պարտքի վճարումն էր: Սակայն 1990-ական թվականների կեսերից Բրազիլիայի, Արգենտինայի, Ուրուգվայի և Պարագվայի ընդհանուր շուկան (MERCOSUR) սկսում է նպաստել առևտրին ու զարգացմանն այս չորս երկրներում:

2. Ոչ ժողովրդավարական ժամանակներում Հունաստանն ու Պորտուգալիան եղել են Հյուսիս-ատլանտյան միության (NATO) անդամներ: Սակայն նկատի ունենալով բոլոր հանգամանքները՝ 1980-ական թվականներին NATO-ին անդամակցելը Հունաստանին, Պորտուգալիային և Իսպանիային (հատկապես՝ օդային ուժերի ու նավատորմի առումով) նպաստեց իրենց գինվորականության անցնելուն ժողովրդավարության կողմը, որովհետև գինվորականությունն աջակցեց բարձր պրոֆեսիոնալիզմով կատարվող գործողություն-

ներին՝ նեցուկ լինելով դրանք իրականացնող վառ անհատականություններին: NATO-ին հարելը, հատկապես Իսպանիայի դեպքում առաջ բերեց զգալի հակասություններ քաղաքական գործիչների շրջանում և ընդհանուր առմամբ հասարակական կարծիքի մեջ: Սակայն անդամակցությունը նաև նշանակեց, որ այն պայթյունավտանգ հարցը՝ «Ինչո՞ւ է մեզ պետք զինվորականությունը ժողովրդավարության ժամանակ» չդարձավ քաղաքացիականներ-զինվորականներ հակամարտության լուրջ աղբյուր: Հարավային Կոնի երկրները չունեին NATO-ի նման օրինակներ: Այն խոշոր միջազգային դերը, որ պիտի խաղար Ռեյգանի և Բուշի վարչակազմերի կողմից խրախուսվող լատինաամերիկյան երկրների զինվորականությունը, վերաբերում էր թմրանյութերի անօրինական վաճառքի դեմ համատեղ գործողություններին՝ քաղաքականապես պայթյունավտանգ ոլորտին:

3. Մենք հիմնավորեցինք, որ Հարավային Եվրոպայի ոչ մի երկրում չկային «տնտեսության ուղղությանը կամ գործելուն վերաբերող հարցեր, որոնք լինեին այնքան ցայտուն, որքան քաղաքական իշխանության մասին բանավեճերը»: Կարծում ենք, որ սա օգնեց ուշադրությունը կենտրոնացնելու ժողովրդավարության կայացման քաղաքական կողմերի վրա: Լատինական Ամերիկայում մասամբ պարտքի ճգնաժամի պատճառով տնտեսական հարցերն արագորեն դարձան նույնքան և ի վերջո՝ ավելի կարևոր, քան քաղաքական հարցերը, և կարծում ենք, որ դա վնասեց ժողովրդավարության կայացմանը: Սրանից միակ բացառությունը Չիլի էր, որտեղ տնտեսությունը լավ վիճակում էր, սակայն քաղաքական սահմանափակումները խիստ էին:

4. Ի տարբերություն Եվրոպայի՝ ոչ մի լատինաամերիկյան երկիր չկազմավորեց սահմանափակումներ չունեցող Սահմանադիր ժողով: Բրազիլիան փորձեց, սակայն հետ պահվեց զինվորականության ու նախագահի կողմից: Ժողովրդավարական քաղաքական գործիչները Չիլիում դեռևս դանդաղորեն փորձում են իրենց ձեռքբազատել ավտորիտար սահմանադրությունից: Ուրուգվայն ու Արգենտինան ընտրել են վերականգնման բանաձևեր: Չնայած Արգենտինայում ընթանում էր հիմնարար բարեփոխումների քննարկում, վերջում, ինչպես տեսանք, իրականացվեց մի հատուկ բարեփոխում՝ Մենեմի վերընտրությունը հնարավոր դարձնելու համար:

5. Հարավային Կոնի բոլոր երկրներն իրենց անցումներն սկսեցին հաստատագրված պաշտոնավարման ժամկետներ ունեցող նախագահներով և պահպանում են նախագահական համակարգերը: Բրազիլիայում, Արգենտինայում և Ուրուգվայում սա նպաստեց ինստիտուցիոնալ առումով որոշ առանձին խնդիրների առաջացմանը: Բրազիլիայում գործադիր-օրենսդիր փակուղին եղել է սովորական բան, իսկ «պատահական» նախագահ Ժոզե Մարնեյը պաշտոնավարեց հինգ տարի ու նպաստեց այն բանին, որ Սահմանադիր ժողովը չընտրի խորհրդարանականությունը: Նախագահ Մարնեյը հաճախ էր հենվում զինվորականության ուժի վրա: Արգենտինայում ընտրական ժամանակացույցների տարբերությունը վերացրեց ժողովրդականություն վայելող նախագահ Ալֆոնսինի՝ 1984-85թթ. ընտրությունների ժամանակ մեծամասնություն նվաճելու բոլոր հնարավորությունները և ստիպեց արդեն ժողովրդականություն չվայելող նախագահ Ալֆոնսինի շարունակել ղեկավարել 1987-89թթ. Կոնգրեսի ընտրություններում նրա բացարձակ

պարտությունից հետո: Ուրուգվայում առաջին երեք քաղաքացիական նախագահները եղել են փոքրամասնական նախագահներ: Նախագահական համակարգում կոալիցիաների համար թույլ մոտիվացիան դժվարացրեց գործուն կոալիցիոն կառավարության ստեղծումը բոլոր երեք երկրներում: Արդյոք Չիլիում կոալիցիոն համագործակցության նորահայտ ոգին կկարողանա՞ հաղթահարել Պինոչետի ներկայության վնասակար ազդեցությունը՝ ցույց կտա ժամանակը:

6. Հաշվի առնելով քաղաքացիականներ-զինվորականներ հակամարտությունները, որոնք հաճախ սահմանափակել են ինքնիշխանությունն ու թուլացրել լեգիտիմությունը, ձգձգված տնտեսական ճգնաժամը և նախագահական կառավարությունների՝ կոալիցիաներ կազմելու թույլ կարողությունը, հասկանալի է, որ հասարակության ընկալումներն այն մասին, թե արդյոք երկրի «գործերը լավ են ընթանում» ժողովրդավարության պայմաններում թե ոչ, վտանգավոր կերպով ցածր էին անգամ նախքան առաջին քաղաքացիական նախագահները կավարտեին իրենց պաշտոնավարման ժամկետները:<sup>1</sup> Ֆիլիպ Շմիտթերը հեղինակ դարձավ մի վիատեցնող արտահայտության, երբ նկատեց, որ որոշ երկրներ գուցե «դատապարտված են ժողովրդավարության», որովհետև այլընտրանքներն էլ ավելի թույլ են: Բարեբախտաբար, ավտորիտար այլընտրանքը դեռևս չափազանց ոչ գրավիչ էր Բրազիլիայում, Արգենտինայում և Ուրուգվայում առաջին քաղաքացիական նախագահների մանդատների վերջնալու պահին: Բոլոր երեք երկրներում 1989թ. նախագահական ընտրությունները բերեցին վստահության վերականգնում նոր նախագահների նկատմամբ: Սակայն ժողովրդավարության տեսության ու կայունության տեսանկյունից Արգենտինայի նախագահ Մենեմի ու վերջում պաշտոնանկության ենթարկված Բրազիլիայի նախագահ Կոլորի պլեբիսցիտական ռճն ավելի շատ առնչվում էր «պատվիրակված ժողովրդավարությանը» (իր բոլոր հույսերով ու վտանգներով), քան ժողովրդավարության կայացմանը:

7. Ամփոփելով՝ ասենք, որ ի տարբերություն Իսպանիայի, Պորտուգալիայի ու Հունաստանի, որոնք բոլորն էլ կայացած են, մեր չորս հարավամերիկյան օրինակներից ժողովրդավարորեն կայացած է միայն ճգնաժամերին հակամետ Ուրուգվայը՝ բարձր լեգիտիմության ու դժվարին քաղաքատնտեսության իր խառնուրդով: Հաշվի առնելով զինվորականության արտոնությունները, անցումը Չիլիում դեռևս ինքնին հեռու է ավարտված լինելուց: Բրազիլիան ավելի հեռու էր կայացումից 1993թ., քան 1986թ.: Արգենտինան զսպել է սղաճը, սակայն նախագահն արհամարհում է լեգիտիմությունը:

1. Օրինակ՝ 1988թ. նոյեմբերին, երբ ավարտին էին մոտենում նախագահներ Ալֆոնսինի, Սանգվինետիի և Սարնեյի պաշտոնավարման ժամկետները, մարդկանց թիվը, ովքեր գնահատում էին իրենց համապատասխան երկրների դրությունը «վատ» կամ «շատ վատ» Բրազիլիայում կազմում էր 84%, Արգենտինայում՝ 60% և Ուրուգվայում՝ 57%: Պատասխանողների միայն 1%-ը Բրազիլիայում և 4%-ն Արգենտինայում կարծում էր, որ իրենց երկրում իրավիճակը «շատ լավ» կամ «լավ» է: Պատասխանողների թիվը, ովքեր զգում էին, որ դրությունը «ոչ լավ է, ոչ՝ վատ» Բրազիլիայում 15% էր, Արգենտինայում՝ 36% և Ուրուգվայում՝ 38%: Թվերը վերցվել են "Presente Como Sur"-ից, ինչպես գրում են Էդգարտո Կատերբերգն ու Մարթա Բրաունը "Notas para un balance de la transición"-ում (կույրը պատրաստված է ժողովրդավարության կայացմանը նվիրված համաժողովի համար՝ կազմակերպված "Centro de la Realidad Contemporanea" (CERC) կողմից, Սանտյագո, Չիլի, օգոստոսի 10-11, 1989թ.), էջ 19:

Դրական կողմն այն է, որ բոլոր չորս երկրներում պետությունից ու կառավարությունից «թափանցիկության» ու հաշվետու լինելու քաղաքացիական հասարակության պահանջը հասել է աննախադեպ մակարդակի, և բոլոր չորս երկրներն էլ այս պահին հաստատակամորեն նվիրված են ընտրական քաղաքականությանը:

ՀԱՎԵԼՎԱԾ. Ի՞ՆՉ ԿԱՐԾԻՔ ՈՒՆԵՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ  
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1995թ. օգոստոսին, երբ սրբագրում էինք այս գրքի խմբագրված օրինակը, ստացանք պատմության մեջ առաջին «Լատինոս Բարոմետրի» առաջին արդյունքները: Այս հարցման ժամանակ կիրառվել է սովորական հարցաթերթիկ և սովորական եղանակ: Աղյուսակ 14.1-ում ամփոփված են այն արդյունքները, որոնք առնչվում են ժողովրդավարության լեգիտիմությանը, ժողովրդավարության արդյունավետությանն ու ապագայի սպասումներին: Այս կարևոր ուսումնասիրության բոլոր հնարավոր կիրառությունները դեռ պետք է սպասեն ծրագրի համակարգողների կողմից մանրակրկիտ և լիարժեք վերլուծության: Սակայն անգամ այս փուլում կարող ենք ուշադրություն հրավիրել մի շարք արդյունքների վրա, որոնք առավել առնչվում են մեր գրքին:

Նախորդ գլուխներն ընթերցողները կարող են տեսնել, որ ժողովրդավարության լեգիտիմության և որոշ հանգամանքների պարագաներում ավտորիտար այլընտրանքների նկատմամբ համապատասխան վերաբերմունքի մասին հարցի պատասխանները հստակորեն հաստատում են մեր եզրակացությունները ժողովրդավարության կայացման նկատմամբ վերաբերմունքային աջակցության մասին Ուրուգվայում և մեր մտահոգությունը՝ Բրազիլիայի դեպքում: Այս հավելվածում ավելի ուշ բերված լրացուցիչ տվյալներն ընթերցողին էլ ավելի հիմնավորված տեղեկություններ են տալիս հիմնական պատկերի մասին վերոհիշյալ երկու երկրներում: Լեգիտիմության հարցի վերաբերյալ պատասխաններն Արգենտինայում և Չիլիում առաջադրում են էլ ավելի բարդ խնդիրներ: Չիլիին վերաբերող գլխում մենք փաստել ենք ժողովրդավարության հանդեպ քաղաքացիների բավարարվածության նվազեցման միտումը: Սակայն մի շարք պատճառներով, որոնք մենք ավելի ուշ առաջ քաշեցինք, Չիլիում ժողովրդավարությանն աջակցության 1995 թվականի 52.2%-ի (իջել է 1991թ. 63.8%-ից) և Արգենտինայում 76.6%-ի միջև տարբերությունը շփոթեցնող է:

Պատասխաններն այն հարցին, թե արդյոք ավտորիտար կառավարությունը կարո՞ղ է նախընտրելի լինել, թե՞ ոչ, ցույց են տալիս ավտորիտարության մի փոքր պոտենցիալ ընտրազանգված Ուրուգվայում և Արգենտինայում: Տվյալները ցույց են տալիս ավտորիտարության ավելի մեծ պոտենցիալ ընտրազանգված Բրազիլիայում, սակայն նաև՝ Չիլիում: Ի դեպ, այն մարդկանց տոկոսը, ովքեր պատասխանել են, որ «ինձ նման մեկի համար նշանակություն չունի՝ վարչակարգը ժողովրդավարական է, թե ոչ» մոտ չորս անգամ ավելի մեծ է Բրազիլիայում և Չիլիում, քան Ուրուգվայում կամ Արգենտինայում: Ընթերցողը կնկատի, որ ժողովրդավարությանը ընդհանուր ավելի ցածր նվիրվածությունը Բրազիլիայում ավտորիտար կամ «անտարբեր» պատասխանների մեծ թվի պատճառով չէ, այլ



**Աղյուսակ 14.1.Վերաբերմունքները ժողովրդավարության լեգիտիմության ու արդյունավետության նկատմամբ և ակնկալիքները ապագայից. Ուրուգվայ, Արգենտինա, Ջիլի և Բրազիլիա, 1995թ.**

Նարցման պատասխանը	Պատասխանողների տոկոսը			
	Ուրուգվայ	Արգենտինա	Ջիլի	Բրազիլիա
Նետկալ արտահայտություններից որի՞ հետ եք առավել համաձայն (Լեգիտիմության ցուցանիշ)				
«ժողովրդավարությունը նախընտրելի է կառավարության ցանկացած այլ ձևից»	80	76.6	52.2	41.1
«Որոշ հանգամանքներում ավտորիտար կառավարությունը կարող է նախընտրելի լինել ժողովրդավարականից»	8	10.9	18.5	21
«Ինձ նման մեկի համար վարչակարգի ժողովրդավարական, թե ոչ ժողովրդավարական լինելը նշանակություն չունի»	6	6.1	25.3	21
«Չգիտեմ»	4	6.4	2.4	13.8
Պատասխան չկա	2	-	1.5	0.8
«Որոշ մարդիկ ասում են, որ ժողովրդավարությունը թույլ է տալիս լուծել մեր երկրում եղած խնդիրները: Ուրիշներն ասում են, որ ժողովրդավարությունը չի լուծում այդ խնդիրները: Այս արտահայտություններից ո՞րն է առավել մոտ Ձեր մտածելակերպին» (Արդյունավետության ցուցանիշ)				
«ժողովրդավարությունը թույլ է տալիս լուծել այդ խնդիրները»	54	52.9	47.6	45.6
«ժողովրդավարությունը չի լուծում այդ խնդիրները»	34	36.6	46.4	44.6
«Չգիտեմ»	9	10.5	4.3	9.2
Պատասխան չկա	3	0.1	1.7	0.7
«Կարող եք ասել, որ երկիրը... » (Ակնկալիքի ցուցանիշ)				
«Առաջադիմում է»	29	30.6	52.6	43.7
«Լեռնացման մեջ է»	45	43.2	39.1	37.7
«Նետ է գնում»	22	22.8	5.8	15.8
«Չգիտեմ/Պատ. չկա	4	3.4	2.4	2.9
N	(1213)	(1200)	(1240)	(1200)

*Աղբյուրը՝ Լատինո բարոմետր, ծրագիրը ղեկավարել է Մարթա Լագոսը: Լրիվ արդյունքները կիրառարարկվեն 1995թ. վերջին: Անչափ երախտապարտ ենք Մարթա Լագոսին այս տվյալները մեզ հասանելի դարձնելու համար: Մեկնաբանությունը, սակայն, մեր պատասխանատվությանը է:*

«չգիտեմ» պատասխանների, որոնք Բրազիլիայում կազմել են 13.8%՝ համեմատած 2.4%-ի հետ Չիլիում:

Իրականացվող քաղաքականության արդյունավետության մասին «ժողովրդավարությունը [հնարավոր է դարձնում] [երկրում] խնդիրների լուծումը» հարցին տրված պատասխանները պետք է որ բացատրեն վերոհիշյալ տարբերությունները: Սակայն առաջին փաստը, որ մեզ ապշեցնում է, այն է, որ երկրների միջև առավելագույն տարբեք ընկած է (8.4%) ըստ արդյունավետության մասին հարցի՝ այնքան մեծ չէ, որքան առավելագույն տարբերությունը՝ ըստ լեգիտիմության մասին հարցի (39.0%): Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ սկզբունքային ու քաղաքական սխալ է ենթադրելը, որ լեգիտիմությունն ու արդյունավետությունը մշտապես սերտորեն կապված են:

Թեև արդյունավետության հարցում Ուրուգվայի ու Բրազիլիայի ցուցանիշների միջև

տարբերությունը համապատասխանում է ժողովրդավարության լեգիտիմության մասին հարցի ցուցանիշներին, դա ոչ մի կերպ ողջ տարբերության բացատրությունը չէ:<sup>2</sup> Տվյալների վերաբերյալ առավել զարմացնում է այն, որ Չիլիում արդյունավետության վերաբերյալ պատասխաններն ավելի քիչ դրական են (և ավելի շատ բացասական են), քան նույն պատասխաններն Արգենտինայում: Ընթերցողները կարող են մտածել, որ դա բացատրում է Չիլիում և Արգենտինայում լեգիտիմության ցուցանիշին վերաբերող տարբերությունը, սակայն կարող են նաև զգալ դրա անտրամաբանական լինելը, քանի որ արդեն գիտեն, որ Չիլիի տնտեսական կատարողականը գերազանցել է Արգենտինայի կատարողականին, և որ ժողովրդավարության որոշ ասպեկտներ Չիլիում ավելի բարձր որակի են, քան Արգենտինայում: Ընթերցողները չեն սխալվում, երբ Չիլին ընկալում են դրական լույսի ներքո, քանի որ չիլիացիների 52.6%-ը կարծում է, որ երկիրն առաջընթաց է ապրում, մինչդեռ արգենտինացիների միայն 30.6%-ն է կարծում, որ իրենց երկիրն առաջ է ընթանում: Նաև չիլիացիների միայն 5.8%-ն է ասել, որ Չիլին «հետ է գնում» ի սուր հակադրություն Արգենտինայում 22.8%-ի՝ նույն հարցի համար: Այդուհանդերձ, Չիլիի՝ օբյեկտիվորեն ուժեղ տնտեսական ցուցանիշներն ու չիլիացիների՝ հույսով լի սուբյեկտիվ ակնկալիքները չեն ազդել ժողովրդավարության լեգիտիմության հարցում նրանց նվիրումին: Սա մի մեծ պարադոքս է, որը հեշտ չէ բացատրել: Սակայն կարծում ենք, որ հարցման արդյունքները համահունչ են Չիլիում անցման *անավարտության* մասին մեր վերլուծության հետ, 1990-ական թվականներին չիլիական ու արգենտինյան հասարակություններում զինվորականության գրաված տարբերվող դիրքի և Չիլիում եղած այն սահմանափակումներին, որոնց ներքո ժողովրդավարությունը գործում էր:

Ըստ մի շարք ցուցանիշների՝ չիլիացիներն ինչ-որ չափով ավելի բավարարված են ժողովրդավարության որակով, քան արգենտինացիները: Չիլիում, ի տարբերություն Արգենտինայի, ավելի քիչ մարդիկ են կարծում, որ վերջին հինգ տարիների ընթացքում կոռուպցիան զգալիորեն աճել է (14%-ով ավելի քիչ), ավելի շատ մարդ է կարծում, որ հետուստատեսության հասանելիությունն արդարացի է (7%-ով ավելի), և ավելի շատ մարդ է կարծում, որ ընտրություններն ավելի մաքուր են եղել (6%-ով ավելի): Տնտեսության ոլորտում ավելի շատ չիլիացիներ, քան արգենտինացիներ (19%-ով ավելի), գիտակցում են, որ իրենց կենսամակարդակն ավելի բարձր է, քան իրենց ծնողներինը, և ավելի քիչ չիլիացիներ, քան արգենտինացիներ (39%-ով ավելի քիչ), կարծում են, որ վերջին հինգ տարիների ընթացքում աղքատությունը «շատ է ավելացել»:

Սակայն ինչպես պարզ է դառնում Ադյուսակ 14.2-ից, զինվորականության առնչությամբ կան հակառակ ուղղությամբ խոշոր տարբերություններ Չիլիի ու Արգենտինայի, ինչպես նաև Ուրուգվայի ու Բրազիլիայի միջև: Ամենահեշտը Արգենտինայի տվյալները մեկնաբանելն է: Ավելի քիչ քաղաքացիներ Արգենտինայում, քան Հարավային Կոնի որևէ

2. Ի դեպ, այն դեպքում, երբ բրազիլացիների 43.7%-ը համարում է, որ երկիրն «առաջընթաց» է ապրում, ուրուգվայցիների միայն 29%-ն է այդպես կարծում: Սա ցույց է տալիս, որ պատասխանը, որ «ժողովրդավարությունը նախընտրելի է կառավարության ցանկացած այլ ձևից (39%-ային կետով ավելի բարձր Ուրուգվայում, քան Բրազիլիայում) բարդ դատողություն է, որը պահանջում է շատ ավելին, քան տնտեսական կամ քաղաքական առաջընթացի զգացումը: Այնպիսի հարցերը, ինչպիսիք են արդարության ու հավասարության ընկալումների մասին հարցերը, անկասկած մտնում են լեգիտիմությանը վերաբերող դատողությունների մեջ:

այլ երկրում, կարծում են, որ զինվորականությունը գորեղ է: Հարավային Կոնի երկրներից Արգենտինայում է ամենացածր տոկոսն այն մարդկանց, ովքեր ցանկանում են, որ զինվորականությունն ունենա ավելի մեծ իշխանություն. նրանք նաև բոլոր երկրներից ամենաքիչն են վստահում զինվորականությանը: Այս տվյալներն ամրապնդում են մեր նախորդ այն փաստարկը, որ զինվորականության՝ որպես ինքնուրույն ու վստահելի քաղաքական գործող անձի դերն Արգենտինայում մեծապես նվազել է: Բրազիլիայում այն մարդկանց տոկոսը, ովքեր կցանկանային, որ զինվորականությունն ավելի շատ ուժ ունենար, ամենաբարձրն է և համադրելի է Բրազիլիայում ժողովրդավարության լեգիտիմության ցածր ցուցանիշի հետ: Դարձյալ Չիլիի տվյալներն ամենաբարդն են: Շատ ավելի շատ չիլիացիներ են զինվորականությանն ընկալում որպես երկրում ամենահզոր խումբը, սակայն միայն Բրազիլիայում է, որ ավելի շատ մարդ է վստահում զինվորականությանը: Ի տարբերություն Արգենտինայի, Չիլիում զինվորականությանը սատարողներն ու զինվորականության ընդդիմախոսները նույն կերպ ասում են, որ քաղաքական համակարգում զինվորականությունը դեռևս իսկապես խոշոր դերակատար է:

Ժողովրդավարության անկումն ու զինվորականության ճնշիչ իշխանությունը հավանաբար տարբեր հետևանքներ են թողել Չիլիում և Արգենտինայում: Մենք կարող ենք միայն ակնարկել այդ ժառանգության մասին, մինչդեռ այն արժանի է ավելի խոր հետազոտության ու վերլուծության: Չիլիում հասարակության մի կարևոր հատվածն իրեն զգում էր Ժողովրդական Միասնության (Unidad Popular) կառավարության և դրա հետ կապված կուսակցությունների կողմից լուրջ սպառնալիքի տակ: Այս խմբերը սատարել են Պինոչետին և շարունակել են սատարել պլեբիսցիտի ժամանակ, իսկ դրանցից շատերը շարունակում են սատարել աջ կուսակցություններին և զինվորականության արտոնությունների պահպանման կողմնակից են: Արգենտինայում քաղաքացիները սպառնալիք են զգում ոչ այնքան կառավարության կամ որևէ կուսակցության կամ կուսակցությունների կողմից, որքան կառավարության անկումից և պարտիզան-ահաբեկիչների ու պետական-ահաբեկիչների քաղաքական բռնություններից: Համենայն դեպս, 1995թ-ի դրությամբ Արգենտինայում չկա այն գործող անձանց ցայտուն ու ծանրակշիռ ներկայությունը, որոնք հանգեցրին զինվորական իշխանության ողբերգական տարիներին: Ի լրումն ասվածի, այդ իշխանությունն իրեն պատիվ բերող ոչինչ չունի: Ի տարբերություն դրա՝ Չիլիում աջերի մի մասը դեռևս կարծում է, որ որոշ ձախ կուսակցություններ ներկայացնում են պոտենցիալ վտանգ և պետք է արգելվեն: Իրենց հերթին ձախերի մեծ մասը Պինոչետի արած հեղաշրջումը համարում է հարձակում ժողովրդավարության վրա, հեղաշրջման գոհերին անմեղ քաղաքացիներ, որոնք հարել էին լեգիտիմ տարբերակներին և դեմ էին զինվորականության արտոնությունների պահպանմանը: Մարդու իրավունքների հարցը, հետևաբար, Չիլիում կրում է այլ արտահայտչականություն ու իմաստ, քան Արգենտինայում, և որոշ իմաստով մնում է քաղաքական օրակարգում, ինչն այդպես չէ Արգենտինայում: Չիլիում զինվորականության արտոնությունների պահպանումն ու մարդու իրավունքների առնչությամբ դատավարությունների սահմանափակումները ժողովրդավարացման գործընթացի անավարտ մասերն են: Սա այսպես է, որովհետև մարդու իրավունքների պաշտպանների՝ դատավարությունների վերաբերյալ պահանջների պատասխանը Չիլիում չորվեց այնպես, ինչպես Ուրուգվայում (թեկուզ դժկամորեն) քաղաքացիների կողմից հանրաքվեի ժամանակ, կամ ինչպես Արգենտինայում (թեկուզ և հակասականորեն) երկու

**Աղյուսակ 14.2. Վերաբերմունքը զինվորականության իշխանության նկատմամբ և զինվորականության նկատմամբ վստահությունը Արգենտինայում, Ուրուգվայում, Բրազիլիայում և Չիլիում, 1995թ..**

Նարցման պատասխանը	Պատասխանողների տոկոսը			
	Արգենտինա	Ուրուգվայ	Բրազիլիա	Չիլի
«Ձեր կարծիքով՝ ո՞վ ունի ամենամեծ իշխանությունը (Ձեր երկրում): Նշեք մինչև երեք խումբ»				
«Զինվորականությունը»	18	22	30.9	
«Իսկ ո՞նց կցանկանայիք, որ ունենար ամենամեծ իշխանությունը (Ձեր երկրում): Նշեք մինչև երեք խումբ»				
«Զինվորականությունը»	5.4	8	32.9	
«Որքա՞ն վստահություն ունեք ...» («չատ» կամ «որոշ» պատասխանածների տոկոսը)				
«Զինվորականությունը»	37.5	44	58.7	

Աղբյուրը՝ Լատինո բարոմետր (տե՛ս Աղյուսակ 14.1):

անգամ ժողովրդավարորեն ընտրված նախագահի կողմից շնորհված ներման միջոցով, այլ՝ ինքնաներման ձևով, որը զինվորականությունը շնորհեց ինքն իրեն:<sup>3</sup>

Ժողովրդավարական իշխանության վեց տարիներից հետո անցումը դեռևս ավարտված չէ, և զինվորականությունն իր ձեռքում պահում է լայն արտոնություններ ու երբեմն գործում է անպատժելիության պայմաններում: Սա կարող է օգնել բացատրելու, թե ինչու նույնիսկ տնտեսության շարունակվող բարելավման պարագայում Չիլիում կրճատվում է համոզված ժողովրդավարների թիվը:

Աղյուսակ 14.1-ն առաջարկում է, որ հասարակական կարծիքի ոլորտում Արգենտինան կարծես թե քայլ է արել իր ոչ ժողովրդավարական անցյալի որոշ հատվածների վրայով, թեև Մենեմի ղեկավարման ռճը և ընտրողների հանդուրժողականությունն օրենքի ու կոռուպցիայի հանդեպ նրա կասկածելի վերաբերմունքի նկատմամբ մեզ հիշեցնում են Արգենտինայի վերջին ժամանակների սոցիալական ու տնտեսական խառնաշփոթի որոշ հետևանքներ: Չիլիում, սակայն, թվում է, թե կա անհանգստության որոշ աստիճան ներկայի, անցյալի ու քաղաքական ապագայի նկատմամբ, ինչը նպաստում է ոչ միայն լեզիտիմության համեմատաբար ցածր ցուցանիշի առկայությանն Աղյուսակ 14.1-ում, այլև տարբեր մոտեցումների այնպիսի փնջի, որը չի հանդիպում կայացած ժողովրդավարություններում (Աղյուսակ 14.3):

Դժվար է պնդել, թե լեգիտիմության նկատմամբ հավատի զգալի տարբերություններ կան չորս երկրների միջև այն հարցում, թե ժողովրդավարությունը հնարավոր է դարձնում արդյոք խնդիրների լուծումը: Սակայն ժողովրդավարությանը նվիրվածության հարցում

3. Սա վառ կերպով ցույց տրվեց 1995թ. հունիսին, երբ գեներալ Կոնտրերասի դատապարտումից հետո (քաղաքական սպանության մեջ նրա մասնակցության համար) մի հանրահարցման ժամանակ հարց էր տրվել, թե արդյոք «Չիլիում տեղի ունեցե՞լ է համաձայնեցում»: Հարցման ենթարկվածների 68.9%-ն ասել է, որ չիլիացիները համաձայնության չեն եկել: Չախերի շրջանում 63.7%-ը ցանկացել է ավելի շատ դատավարություններ, մինչդեռ աջերի մեջ դա եղել է միայն 22.2%-ը: *See Encuesta Nacional CERC (Santiago, July 1995):*

**Աղյուսակ 14.3. Վերաբերմունքները քաղաքական ազատությունների ու վստահության նկատմամբ Զիլիում, Բրազիլիայում, Արգենտինայում և Ուրուգվայում, 1995թ.**

Նարցման պատասխան	Պատասխանողների տոկոսը			
	Արգենտինա	Ուրուգվայ	Բրազիլիա	Զիլի
«Բոլոր կուսակցությունները պետք է թույլատրվեն»	38.6	62.8	59.0	67
«Ծայրահեղական կուսակցությունները պետք է արգելվեն»	53.6	25.6	29.0	24
«Ժողովրդավարությունը կարող է գործել առանց կուսակցությունների»	33.6	42.2	18.1	15
Երկրի համար վատ չէ, երբ կառավարությունը բռունցք (mono dura) է ցույց տալիս»	62.9	51.8	46.8	45
«Մարդիկ սովորաբար ասում են այն, ինչ մտածում են քաղաքականության մասին»	28.5	31.3	46.4	Տվ/չկան

Աղբյուրը՝ Լատինո բարոմետր (տե՛ս Աղյուսակ 14.1):

տարբերությունները, տեսնում ենք, որ շարունակվում են՝ անկախ ժողովրդավարության պոտենցիալ արդյունավետության մասին դրական տեսակետից: (Աղյուսակ 14.4):

Իսկապես, ինչպես պարզ է դառնում Աղյուսակ 14.4-ից, նրանց շրջանում, ովքեր ժողովրդավարությունն արդյունավետ են համարում, զգալի տարբերություններ կան այն հարցի շուրջ, թե արդյոք իրենք ժողովրդավարությունը լեգիտիմ են համարում: Ժողովրդավարությունն արդյունավետ համարողների թվից ժողովրդավարությունը նախընտրելի համարողների տոկոսն Ուրուգվայում կազմում է 89.8, Արգենտինայում՝ 89.3, Չիլիում՝ 72.9 և Բրազիլիայում՝ 55.2:

Եթե կապն արդյունավետության ու լեգիտիմության միջև ամուր լիներ, ապա կարելի կլիներ ակնկալել, որ ժողովրդավարության անարդյունավետության մասին կարծիքի կողմնակիցների շրջանում կնեղանային լեգիտիմության նկատմամբ հավատի տարբերությունները: Փաստն այն է, որ դրանք ավելի արտահայտված են: Սա կարող է վկայել այն, որ հասարակության մեջ ավելի քիչ լեգիտիմության պարագայում ընկալված արդյունավետության բացակայությունն ավելի մեծ ազդեցություն ունի քաղաքացիների պատասխանների վրա: Այդ առումով սա համապատասխանում է համաշխարհային ճգնաժամի ժամանակ միջպատերազմական Եվրոպայում արդյունավետության կորստի ազդեցության մասին մեր վերլուծությանը:<sup>4</sup> Ժողովրդավարության նախընտրության տարբերությունը ժողովրդավարության արդյունավետությանը հավատացողների ու չհավատացողների միջև (համապատասխանաբար 89.8 և 71.5%) Ուրուգվայում կազմել է 18.3%, Արգենտինայում՝ 24.2, Բրազիլիայում՝ 26.2 և Չիլիում՝ 39.8:

Ավտորիտար այլընտրանքի նախընտրությունը միշտ ավելի բարձր է նրանց շրջանում, ովքեր հավատ չեն ընծայում ժողովրդավարության արդյունավետությանը: Ժողովրդավարության արդյունավետությանը հավատ չընծայող և ավտորիտարությունը նախընտրող խումբը փոքր է Ուրուգվայում (14.5%) և Արգենտինայում (18.3%), սակայն ավելի մեծ

4. Տե՛ս մեր «Ժողովրդավարության քաղաքական կայացում կամ քայքայում. եվրոպական ու հարավամերիկյան համեմատություններ» (*Political Crafting of Democratic Consolidation or Destruction: European and South American Comparisons*), Ռոբերտ Պաստորի խմբ.՝ «Ժողովրդավարությունն Ամերիկաներում» (Robert A. Pastor, ed., *Democracy in the Americas* (New York: Holmes and Meier, 1989), 46-47, 58):

**Աղյուսակ 14.4. Ժողովրդավարության՝ երկրում խնդիրները լուծելու կարողության ընկալումն ու վերաբերմունքը ժողովրդավարության նկատմամբ Ուրուգվայում, Արգենտինայում, Չիլիում և Բրազիլիայում (պատասխանողների տոկոսը)**

Վարցման պատասխանը	Արդյունավետություն							
	«Ժողովրդավարությունն ի վիճակի է լուծելու խնդիրները»				«Ժողովրդավարությունն ի վիճակի չէ լուծելու խնդիրները»			
	Ուրուգվայ	Արգենտինա	Չիլի	Բրազիլիա	Ուրուգվայ	Արգենտինա	Չիլի	Բրազիլիա
Լեզիտիմություն. «այս արտահայտություններից որոնց հետ եք դուք առավելապես համաձայն»								
«Ժողովրդավարությունը նախընտրելի է կառավարության ցանկացած ձևից»	89.8	89.3	72.9	55.2	71.5	65.1	33.1	29.0
«Որոշ հանգամանքներում ավտորիտար վարչակարգը կարող է նախընտրելի լինել ժողովրդավարական կառավարությունից»:	3.9	5.3	11.7	16.8	14.5	18.3	25.7	27.7
«Ինձ նման մեկի համար տարբերություն չկա վարչակարգը ժողովրդավարական է, թե ոչ ժողովրդավարական»	3.8	1.9	13.4	17.2	8.3	11.7	37.9	30.7
Պատասխան չկա կամ «Զգիտեմ»	2.5	3.5	2.0	10.8	5.7	4.9	3.3	12.7
N	(660)	(617)	(590)	(547)	(411)	(427)	(575)	(535)

Աղբյուրը՝ Լատինո բարոմետր (տե՛ս Աղյուսակ 14.1):

Է Չիլիում (25.7%) և Բրազիլիայում (27.7%): Արդյունավետության բացակայությունը նաև հանգեցնում է այն բանին, որ պատասխանողների զգալի տոկոսը համարում է, որ «իրենց նման մարդկանց համար ժողովրդավարությունը ոչինչ չի փոխում»: Սակայն դարձյալ տոկոսը համեստ է Ուրուգվայում (8.3%) և Արգենտինայում (11.7%), սակայն մեծ է Չիլիում (37.9%) և Բրազիլիայում (30.7%): Բարձր համամասնությունը Չիլիում մեծ չափով բացատրվում է «Ժողովրդավարության» դեֆիցիտով, որը Բրազիլիայում նաև բացատրվում է քաղաքականապես չհետաքրքրված կամ չտեղեկացված մարդկանց ավելի մեծ թվով:

Այս հավելվածն ավարտենք լեզիտիմության ու արդյունավետության՝ էմպիրիկ արդյունքների վրա հիմնված տիպաբանության կառուցման փորձով և տեղորոշենք Հարավային Կոնի չորս երկրների բնակչությունները մեր տիպաբանության մեջ: Մեր տիպաբանության առաջին հարթությունը վերաբերում է լեզիտիմությանը: Պարզության համար անվանումներ տանք լեզիտիմության ցուցանիշի վերաբերյալ մեր երեք խումբ պատասխաններին: Պատասխանողներին անվանենք *ժողովրդավարներ*, եթե նրանք դրական պատասխան են տվել այն դրույթին, որ «Ժողովրդավարությունը նախընտրելի է կառավարության ցանկացած ձևից»: Պատասխանողներին կանվանենք *ավտորիտար*, եթե նրանք դրական պատասխան են տվել այն դրույթին, որ «որոշ հանգամանքներում ավտորիտար վարչակարգը կարող է նախընտրելի լինել ժողովրդավարական կառավարությունից»: Պատասխանողներին կանվանենք *օտարացած*, եթե նրանք դրական պատասխան են տվել այն դրույթին, որ «ինձ նման մեկի համար տարբերություն չկա՝ վարչակարգը ժողովրդավարական, թե ոչ ժողովրդավարական է»:

**Աղյուսակ 14.5. Ժողովրդավարական «լեգիտիմության» և «արդյունավետության» տիպաբանությունը**

Լեգիտիմության ցուցանիշ	Արդյունավետության ցուցանիշ	
	Ժողովրդավարությունը լուծում է խնդիրները	Ժողովրդավարությունը չի կարող խնդիր լուծել
Ժողովրդավարությունը նախընտրելի է	Վանձված ժողովրդավարներ	Անհանգստացած ժողովրդավարներ
Որոշ հանգամանքներում ավտորիտար կառավարությունը նախընտրելի է	Ավտորիտարներ (պոտենցիալ ժողովրդավարներ)	Ավտորիտարներ (առանց ժողովրդավարությունից դրական ակնկալիքներով)
Ինձ նման մեկի համար տարբերություն չկա	Օտարացած (անգամ եթե ժողովրդավարությունը հաջողությամբ գործի)	Օտարացած (չեն ակնկալում, որ ժողովրդավարությունը հաջողությամբ կգործի)

Մեր տիպաբանության երկրորդ հարթությունը վերաբերում է արդյունավետությանը: Մենք պարզապես կկառուցենք դիխոտոմիա՝ «ժողովրդավարությունը հնարավոր է դարձնում այն խնդիրների լուծումը, որոնք կան մեր երկրում» հավատ ունեցողների և այդպիսի հավատ չունեցողների միջև: Այս երկու հարթություններն ստեղծում են «լեգիտիմություն-արդյունավետություն» հարաբերության վեց տեսակի տիպաբանություն: Այս տիպաբանության մեջ մարդկանց, ովքեր սատարում են ժողովրդավարությանը և կարծում են, որ այն արդյունավետ է, կանվանենք *հանդգված ժողովրդավարներ*: Նրանք, ովքեր սատարում են ժողովրդավարությանը, սակայն չեն կարծում, որ այն ընդունակ է լուծելու երկրի խնդիրները, կանվանենք *ստահողված ժողովրդավարներ* (Աղյուսակ 14.5):

Այժմ կարող ենք դառնալ բնակչության բաշխվածությանը հարցման ենթարկվածների շրջանում, ովքեր կարծիք են արտահայտել ժողովրդավարության լեգիտիմության ու արդյունավետության մասին: Կիրառելով այս փոփոխականները և "Latino Barometer"-ի արդյունքները՝ էմպիրիկորեն կարող ենք մեր տիպաբանության մեջ տեղորոշել Հարավային Կոնի յուրաքանչյուր երկրի պատասխանողների տոկոսը (Աղյուսակ 14.6): Պատասխանողները, ովքեր ժողովրդավարությունը համարում են կառավարության առավել նախընտրելի ձևը և ընդունակ՝ լուծելու երկրում եղած խնդիրները (Բսպանիայի և Հարավային Եվրոպայի մասին որոշ ուսումնասիրություններում դրանք կոչվում են *բավարարված ժողովրդավարներ*), Ուրուգվայում կազմում են 57.4%, Արգենտինայում՝ 54.9%, Չիլիում՝ 37.9% և Բրազիլիայում՝ 31.6%:<sup>5</sup> Նրանք, ովքեր կարծում են, որ ժողովրդավարությունը կառավարման առավել նախընտրելի ձևն է, սակայն այն չեն համարում խնդիրներ լուծելու ընդունակ (հարավեվրոպական ուսումնասիրություններում հաճախ բնորոշվում են որպես *քննադատական ժողովրդավարներ*), Ուրուգվայում կազմում են 28.5%, Արգենտինայում՝ 27.7%, Չիլիում 16.8% և Բրազիլիայում 16.2%: Այս երկու խմբերը միասին վերցրած այն մարդիկ են, ովքեր ժողովրդավարությունը համարում են նախընտ-

5. Տե՛ս կարևոր հոդված՝ Լեոնարդո Մորլինո և Խոսե Մոնտեռո, «Լեգիտիմությունն ու ժողովրդավարությունը Հարավային Եվրոպայում» (Leonardo Morlino and Jose' R. Montero, "Legitimacy and Democracy in Southern Europe"), Ռիչարդ Գյունտերի, Նիկիֆորոս Դիամանդուրոսի և Հանս-Յուրգեն Պուլեի խմբ.՝ «Ժողովրդավարության կայացման քաղաքականությունը. Հարավային Եվրոպան համեմատական տեսանկյունից» (Richard Gunther, P. Nikiforos Diamandouros, and Hans-Jurgen Puhle, eds., *The Politics of Democratic Consolidation: Southern Europe in Comparative Perspective* (Baltimore: John Hopkins University Press, 1995), 231-60):

**Աղյուսակ 14.6. Ուրուգվայի (Ու), Արգենտինայի (Ա), Չիլիի (Չ) և Բրազիլիայի (Բ) էմպիրիկ տեղադրումը  
լեգիտիմության ու արդյունավետության տիպաբանության մեջ 1995թ. (տոկոսներով)**

Լեգիտիմության ցուցանիշ	Երկիր	Արդյունավետության ցուցանիշ		
		ժողովրդավարությունը լուծում է խնդիրներ	ժողովրդավարությունը չի լուծում խնդիրներ	Ընդամենը
		Վանդված ժողովրդավարներ	Անհանգստացած ժողովրդավարներ	Ընդամենը ժողովրդավարներ
ժողովրդավարությունը նախընտրելի է	Ու	57.4	28.5	85.9
	Ա	54.9	27.7	82.6
	Չ	37.9	16.8	54.7
	Բ	31.6	16.2	47.6
Որոշ հանգամանքներում ավտորիտար կառավարությունը նախընտրելի է	Ու	2.5	5.8	8.3
	Ա	3.3	7.7	11.0
	Չ	6.1	13.0	19.1
	Բ	9.6	15.5	25.1
Ինձ նման մեկի համար տարբերություն չկա	Ու	2.4	3.3	5.7
	Ա	1.2	5.0	6.2
	Չ	7.0	19.2	26.2
	Բ	9.8	17.2	27.0

*Աղբյուրը՝* Լատինո բարոմետր (տե՛ս Աղյուսակ 14.1): Պատասխանողները, ովքեր չեն պատասխանել երկու հարցին էլ, չեն ներառվել: Տոկոսները, հետևաբար, հիմնված են երկու հարցերին էլ պատասխան տվածների ընդհանուր թվի վրա: Տիպաբանության մեջ ընդգրկված օրինակների քանակն Ուրուգվայում կազմել է 1031, Արգենտինայում՝ 1002, Չիլիում՝ 1135 և Բրազիլիայում՝ 955: Ընդհանուր պատասխանողների տոկոսը, որը չի ներառվել, որովհետև նրանք չեն պատասխանել հարցերից մեկին կամ մյուսին, համապատասխանաբար կազմել է 14.3, 6.6, 6.4 և 20.4 տոկոս: Բրազիլիայում չընդգրկվածների թվի գրեթե կեսը պատասխանել է ժողովրդավարության մասին հարցին, իսկ նրանց կեսը կողմնակից էր ժողովրդավարությանը:

րելի. Ուրուգվայում նրանց գումարային տոկոսը հասնում է 85.9-ի, Արգենտինայում՝ 82.6-ի, Չիլիում՝ 54.7-ի և Բրազիլիայում՝ 47.8-ի:


Նրանք, ովքեր կարծում են, որ «որոշակի հանգամանքներում ավտորիտար կառավարությունը նախընտրելի է», սովորաբար վստահություն չեն արտահայտում ժողովրդավարության՝ խնդիրները լուծելու ունակության հանդեպ, սակայն կա մի փոքր տոկոս, որը չնայած ընդունում է ավտորիտար իշխանությունը, սակայն հավատում է ժողովրդավարության պոտենցիալ արդյունավետությանը: Նրանք մի փոքր տոկոս են կազմում Ուրուգվայում (2.5) և Արգենտինայում (3.3), սակայն ավելի մեծ թիվ են կազմում Չիլիում (6.1) և Բրազիլիայում (9.6):

Եվ վերջապես կան այնպիսի մարդիկ, ովքեր անտարբեր են ժողովրդավարության և ավտորիտար իշխանության նկատմամբ, որոնք մեծ մասամբ քիչ վստահություն ու-



ներն ժողովրդավարության՝ խնդիրներ լուծելու կարողության հանդեպ: Բրազիլիայում տեսնում ենք ավելի մեծ թվով այնպիսի մարդկանց, ովքեր չնայած հավատում են ժողովրդավարության՝ խնդիրներ լուծելու կարողությանը, այնուամենայնիվ, չեն կարծում, որ դա որևէ դեր է խաղում իրենց նման մարդկանց կյանքում (7.0% Չիլիում և 9.8% Բրազիլիայում): Սա տարբերվում է Ուրուգվայի՝ ընդամենը 2.4 և Արգենտինայի 1.2%-ից:

Դժբախտաբար, Հարավային Եվրոպայում տրված հարցերը մեզ թույլ չեն տալիս կազմել ճիշտ նույնանման տիպաբանություն, քանի որ միայն լեզվատիրության հարթությունն է չափվել նույն հարցով: Նրանք, ովքեր պատասխանել էին, որ «ժողովրդավարությունը նախընտրելի է», կազմել են 87% Հունաստանում, 70% Իսպանիայում և 61% Պորտուգալիայում (որոնք, եթե անտեսենք «չգիտեմ» - «պատասխան չկա» խումբը, դառնում են 88.8, 78.6 և 79.2% համապատասխանաբար): Ժողովրդավարներն՝ ըստ արդյունավետության նկատմամբ իրենց հավատի, կարող են բաժանվել հետևյալ հարցի հիման վրա. «Հետևյալ դրույթներից որի՞ հետ եք համաձայն՝ (1) մեր երկրում ժողովրդավարությունը լավ է գործում, (2) մեր երկրում ժողովրդավարությունն ունի շատ թերություններ, սակայն գործում է, (3) մեր երկրում ժողովրդավարությունը գնալով ավելի է վատանում և շուտով բոլորովին չի գործի»: Առաջին երկու պատասխանը դրական համարելով՝ լեզվատիրության և արդյունավետության վրա վստահ պատասխանողների տոկոսը (77% Պորտուգալիայում, 75% Իսպանիայում և 84% Հունաստանում) կարծես թե զգալիորեն ավելի բարձր է Հարավային Եվրոպայի նոր ժողովրդավարություններում, քան Հարավային Ամերիկայի Հարավային Կոնում: Եթե մենք երրորդ պատասխանը համարենք արդյունավետության նկատմամբ բացասական, ապա կունենանք 9% «մտահոգված ժողովրդավարներ» Պորտուգալիայում, 12% «մտահոգված ժողովրդավարներ» Իսպանիայում և 11%՝ Հունաստանում: Հաշվի առնելով բացարձակ համադրելիության բացակայության մասին վերապահումը՝ ընթերցողը կարող է ըստ Նկար 14.1-ի տեսնել համոզված ժողովրդավարների ու մտահոգված ժողովրդավարների համեմատական տոկոսները Հարավային Եվրոպայում և Հարավային Ամերիկայում՝ ժողովրդավարությանն անցման գործընթացների նախաձեռնումից մոտավորապես մեկ տասնամյակ անց:



**Վաճառված և անհավատացած ժողովրդավարները Հարավային Եվրոպայում 1985թ. և Հարավային Ամերիկայի Հարավային կոնոմ 1995թ.**

*Ճանաչողություն.* Հարավային Եվրոպայի համար Վ - Նոմաստան, Դ - Դորտուգալիա, Ի - Իսպանիա, Բ - Բուլղարիա, Ա - Արգենտինա, Չ - Չիլի, Բ - Բրազիլիա: Աղբյուրը՝ Հարավային Եվրոպայի համար՝ Լեոնարդո Մուրվինյոյի և ժոզե Ռ. Սոնտերոյի "Legitimacy and Democracy in Southern Europe", Ռիչարդ Գալտերի, Դ. Լիկիֆորուս Դայմոնորոսի և Վալու-Տարթեն Դաիլի, *The Politics of Democratic Consolidation: Southern Europe in Comparative Perspective* (Baltimore: Johns Hopkins University Press, 1995), 231-60. Հարավային Ամերիկայի համար Latino Barometer (*տես՝ Արդյունք 14.7*). Ինչպես տեսնում ենք, 14.6 արդյունքում ընդգրկված են այն պատասխանող երկրները, որոնք պատասխանել են և՛ օրինականություն, և՛ արդյունավետության մասին հարցերին:



## ՄԱՍ 4

*Հետևումունիստական Եվրոպա.  
ամենաբարդ ուղիներն ու խնդիրները*

1989 թվականը պատմական տարի էր, երբ բոլոր կոմունիստական վարչակարգերը Եվրոպայում (այդ թվում՝ ԽՍՀՄ-ը) սկսեցին քաղաքական, տնտեսական ու սոցիալական փոփոխությունների մի նշանակալի գործընթաց: Եթե 1989թ-ին գոյություն ունեին ինը պետություններ, այժմ դրանք քսանյոթն են, որոնցից տասնհինգը ԽՍՀՄ-ի իրավահաջորդ պետություններն են: Ակներևորեն այս զանգվածային փոխակերպման գործընթացի առանձնահատկությունների ճշգրիտ պատկերումը կտևի տասնամյակներ ու կլինի տարածաշրջանի՝ պահանջվող լեզվական ու պատմական հմտություններին տիրապետող գիտնականների աշխատանքի արդյունքը: Մաս 4-ում մեր աշխատանքը տարածական ու գործնականում անխուսափելիորեն ավելի սահմանափակ է և իր բնույթով պետք է լինի գլխավորապես հասկացութենական:

Յուրաքանչյուր գլխում մեր հիմնական խնդիրն է շարունակել զարգացնել այն գլխավոր տեսական հարցերը, որոնք մենք քննարկեցինք Մաս 1-ում, և օժանդակել դրանց լուսաբանմանը: Հուսով ենք, որ հետկոմունիստական Եվրոպայի երկրների օրինակները տեսության կառուցման գործում պարբերաբար ներառելով՝ կարող ենք խորացնել և որոտել հարկն է՝ վերաձևակերպել կամ մերժել ներկա ժողովրդավարացման տեսության ասպեկտները: Ի վերջո, մի եղանակով, որն Ալբերտ Հիրշմանը կանվաներ «օրինազանցություն», մեր նպատակն է ոչ միայն ընդարձակել ժողովրդավարության տեսության շրջանակն ու կիրառումը, այլև փոքր-ինչ նպաստել հետկոմունիստական Եվրոպայում համաշխարհային պատմական փոխակերպումը վերլուծելու մոնումենտալ խնդրին:

Տեսական խնդիրները, որոնք մենք կհետազոտենք Մաս 4-ի յոթ գլուխներում, ունեն հետևյալ կառուցվածքը: Գլուխ 15-ում մենք անդրադառնում ենք հետկոմունիստական Եվրոպայի «նախապատմությունների» հարցին՝ փորձելով արժանին մատուցել տարածաշրջանում ընդհանրության ու տարբերության տարրերին:<sup>1</sup> Քանի որ ԽՍՀՄ-ի արտաքին կայսրության ընդհանրությունները մեծ մասամբ ԽՍՀՄ կողմից պարտադրված ռազմավարական մոտեցումների հետևանք էին, մենք քննարկում ենք այս մոտեցումների ազդեցությունը և այն, թե ինչու, ինչպես և ինչ հետևանքներով են այս մոտեցումները փոխվել: Մենք նաև շարունակում ենք խորացնել Մաս 1-ում սկսած վերլուծությունը, որը վերաբերում է ամբողջատիրական ու հետամբողջատիրական վարչակարգերին հատուկ

1. Նախապատմությունը, որի վրա մենք առավելապես կենտրոնանում ենք, կոմունիստական ժամանակահատվածն է: Ավելի հին նախապատմություններն, իհարկե, նույնպես չափազանց կարևոր են: Դասական աշխատանքներ, որոնք վերլուծում են գրքի այս մասում դիտարկվող Արևելակենտրոնական Եվրոպայի երկրներից յուրաքանչյուրի առանձնահատուկ նախակոմունիստական սոցիալ-քաղաքական պատմությունը, տե՛ս Ջոզեֆ Ռոտշիլդ, «Արևելյան կենտրոնական Եվրոպան երկու համաշխարհային պատերազմների միջև» (Joseph Rothschild, *East Central Europe between the Two Wars* (Seattle: University of Washington Press, 1977)) և նրա «Վերադարձ բազմազանությանը. Արևելյան Կենտրոնական Եվրոպայի քաղաքական պատմությունը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» (*Return to Diversity: A Political History of East Central Europe since World War II* (New York: Oxford University Press, 1989)), վերջինս հատկապես լավ է այն նկարագրությունների համար, որոնք ցույց են տալիս այն առանձնահատուկ եղանակները, որոնցով յուրաքանչյուր երկիր դարձավ կոմունիստական Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Տե՛ս նաև Հյու Սեթոն-Վատսոն, «Արևելյան Եվրոպան պատերազմների միջև. 1918-1941թթ.» (Hugh Seton-Watson, *Eastern Europe between the Wars: 1918-1941* (Boulder, Colo.: Westview Press, 1986)):

հետևանքներին, որոնք ներկա են հինգ ոլորտներից յուրաքանչյուրում, և որոնց արդյունավետ գործելը նպաստում է ժողովրդավարության կայացման խնդրին:

Առաջին երկիրը, որը դուրս պրծավ ԽՍՀՄ արտաքին կայսրությունից, Լեհաստանն էր: Գլուխ 16-ում մենք հետազոտում ենք այն, թե ինչու Լեհաստանը՝ Եվրոպայում կոմունիստական երկրներից միակը, երբեք ամբողջությամբ չհարմարվեց խորհրդային ամբողջատիրական վարչակարգի տիպին, և ինչպես այն արդեն 1970-ական թվականների վերջին Լեհաստանին տվեց որոշ եզակի ռեսուրսներ՝ դիմադրելու կոմունիստական համակարգին: Սակայն որպես տարածաշրջանում առաջին երկիր, որը ձեռք բերեց «Կլոր սեղանի» համաձայնություն անցման շուրջ, Լեհաստանը վճարեց մի գին, որը եղել է թերագնահատված ժողովրդավարության կայացման համար դրա հարուցած խնդիրների տեսանկյունից: Այդ առավել սուր խնդիրներից մեկը Լեհաստանում տիրապետող դարձած ընդդիմության ձևն է, որը ծնունդ տվեց արժեքների ու քաղաքացիական հասարակության ոլորտում գործողության այն մոդելներին, որոնք խոչընդոտեցին ժողովրդավարորեն գործուն քաղաքական հասարակության կառուցմանը: Բրազիլիայի հետ զուգահեռներն այստեղ ուսանելի են:

Ոչ ժողովրդավարական վարչակարգերի վերլուծության մեջ Մաս 1-ում հիմնավորեցինք, որ հետամբողջատիրությունն իր տեսակի մեջ ունի զգալի տարբերակներ՝ սկսած վաղ ամբողջատիրությունից մինչև սառեցված ու հասուն ամբողջատիրությունը: Գլուխ 17-ում մենք ծավալեցինք փաստարկը՝ քննելով հասուն հետամբողջատիրության՝ աշխարհում առավել զարգացած օրինակը (Հունգարիան 1980-ական թվականների վերջին), սառեցված հետամբողջատիրության մի գրաֆիկական օրինակ (Չեխոսլովակիան 1968-89թթ.) և շատ վաղ ամբողջատիրության մի օրինակ (Բուլղարիան 1988-89թթ.): Մեզ հետաքրքրքրում են հետամբողջատիրական ոլորտում քաղաքականության կառուցվածքն ու հնարավոր տարբեր, սակայն վերլուծական առումով կանխատեսելի, տարաբնույթ մեկնարկային կետերից ժողովրդավարությանն անցման ուղիները:

Այս գրքի Մաս 1-ում վարչակարգի մեկ այլ վերլուծված տիպը սուլթանական վարչակարգն է: Վերևում հիմնավորվեց, որ եթե մի առանձին վարչակարգ գրեթե մոտենում է ամբողջատիրական ու սուլթանական կատարելատիպերի միաձուլմանը, ապա դաշնությունահենք բարեփոխումներ-դաշնությունահենք բաժանում անցումային ուղին, որը մենք տեսնում ենք Իսպանիայում և Հունաստանում, հնարավոր չի լինի: Այնուհետև մենք պնդում էինք, որ եթե վարչակարգի որևէ փոփոխություն տեղի ունենա նման համատեքստում (հավանաբար հեղափոխության կամ միջազգային ուժերի փոփոխության միջոցով), ժողովրդավարության կայացումն իր հետևից կբերի ժողովրդավարական հասարակարգի հինգ ոլորտներից յուրաքանչյուրում ժողովրդավարական արժեքների ու գործողության մոդելների ստեղծման հատկապես դժվարին խնդիրներ: Գլուխ 18-ում Ռումինիայի վերլուծությունը մեզ թույլ կտա հետազոտել այս տեսական փաստարկն էմպիրիկորեն, քանի որ Չաուշեսկուի վարչակարգն, ի լրումն ամբողջատիրականի, ուներ սուլթանական տարրեր:

Պետութենականության, ազգայնականության ու ժողովրդավարության միջև եռակողմ հարաբերության կարգավորումը, տեսանք, որ առանցքային էր Իսպանիայում ժողովրդավարությանը բարեհաջող անցման համար: Այս եռորակ հարաբերության շուրջ համաձայնության հասնելու անհաջողությունը վճռորոշ դեր է խաղացել ժողովրդավար-

րությանն անցման ձախողման համար շատ հետխորհրդային երկրներում: Ոչ մի գլխում հնարավոր չի լինի արժանին մատուցել ԽՍՀՄ-ում ժողովրդավարությանն անցման ձախողման կարևորությանն ու դրա առաջ բերած դժվարություններին: Մենք կարող ենք, սակայն, պետութենականության մասին մեր նախորդ տեսական քննարկման համատեքստում խիստ համեմատական տեսանկյունից դիտարկել այդ ձախողման որոշ կողմեր (Գլուխ 19): Մենք կարող ենք նաև նշել, թե ինչու պետության ապակազմավորման այդ առանձնահատուկ ձևը ծանր հետևանք ունեցավ Ռուսաստանում ժողովրդավարության ապագա կառուցողների համար:

Նախկին Խորհրդային Միության նոր պետություններից շատերում ժողովրդավարության կայացման անհաջողությունը գրեթե նախասահմանված է կանխատեսելի ապագայում: Էթնիկ քաղաքացիական պատերազմներն ու տնտեսական քառույթ, որոնք մասամբ արդյունք են տարածայնություններից բզկտված որոշ հասարակարգերի գրեթե պետականագուրկ որակի, չափազանց դժվարացնում են օրենքի գերակայության, ինչպես նաև ժողովրդավարական քաղաքացիական, քաղաքական ու տնտեսական հասարակությունների հաստատումը:<sup>2</sup> Սակայն նախկին Խորհրդային Միության նոր երկրներից, որոնք սկսում են իրենց փոխակերպումը, Էստոնիան՝ իր 1918-33թթ. տպավորիչ ժողովրդավարական փորձով ու համեմատաբար ուժեղ տնտեսությամբ, ի տարբերություն նախկին Խորհրդային Միության այլ իրավահաջորդ երկրների, անցումն սկսել է մի շարք համեմատաբար բարենպաստ պայմաններում (Գլուխ 20): Հետևաբար, ժողովրդավարության մեր սահմանմանը բավարարելու անկարողությունն Էստոնիայի պարագայում նախասահմանված չէր: Գլխավոր խնդիրը, որ Էստոնիան ուներ (և ինչպես կտեսնենք, անգամ շատ ավելի, քան Լատվիան) անցման իր օրակարգում այն էր, թե ինչպես վարվել իր մեծ թվով ռուսախոս բնակչության հետ: Մերձբալթյան հանրապետություններն, այսպիսով, մեզ համար ներկայացնում են հատկապես հետաքրքիր մի բնագավառ՝ հետազոտելու ըստ էության բազմազգ դեմոսներում ազգային պետության կառուցման ու ժողովրդավարության կառուցման երբեմն հակադրվող տրամաբանությունների վրայով քայլ կատարելու հնարավորությունները (և քայլ չկատարելու գինը):

Մենք ավարտում ենք գիրքը հետկոմունիստական Եվրոպայի ժողովրդավարական հեռանկարների ընդգրկումն ու, անշուշտ, նախնական վերլուծությամբ՝ ժողովրդավարության ժամանակակից տեսության ու պրակտիկայի տեսանկյունից: Գլուխ 21-ում վերլուծության մեջ ներառում ենք հետկոմունիստական Եվրոպայի բոլոր պետությունները՝ նվավերագրելու, և՛ դրանց տարբերությունները ժողովրդավարության արդյունավետության ու լեգիտիմության տեսանկյունից բացատրել սկսելու համար:

2. Այս նոր հասարակարգերն առավել ցայտուն օրինակներ են այն բանի, ինչը Քեն Ջովիտը փայլուն կերպով կանխատեսել էր, որ կարող է լինել թույլ հասարակությունների ու թույլ պետությունների «նոր համաշխարհային խառնաշփոթ»: Տե՛ս Ջովիտ, «Նոր համաշխարհային խառնաշփոթ. լենինիստների ոչնչացումը» (Jowitt, *New World Disorder: The Leninist Extinction* (Berkeley: University of California Press, 1992)):

## Հետկոմունիզմի նախապատմությունը

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎՐՈՊԱՅԻՆ, Հարավային Ամերիկայում ու հետկոմունիստական Եվրոպայում ժողովրդավարացման միջտարածաշրջանային տարբերությունների ու հետկոմունիստական Եվրոպայի ներսում ներտարածաշրջանային մեծ տարբերությունների ցանկացած լուրջ համեմատական քաղաքական վերլուծության ժամանակ հատուկ ուշադրություն է պետք հատկացնել պետության կանոնադրության հարցերին, որոնք մենք քննարկեցինք Գլուխ 2-ում: Ի լրումն սրա, համեմատական վերլուծաբանները պետք է մեծապես հաշվի առնեն, թե ինչպես են միմյանց հետ փոխհարաբերվում Մաս 1-ում մեր քննարկած երեք փոփոխականները: Այդ փոփոխականներն են՝ միջազգային ազդեցությունները, ճնշման քաղաքատնտեսությունն ու լեգիտիմությունը, ինչպես նաև ամբողջատիրական ու հետամբողջատիրական վարչակարգերի թողած յուրահատուկ ժառանգությունը:

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՆՑՈՒՄԸ

Երբ համեմատական տեսանկյունից դիտարկում ենք անցումները Խորհրդային Միությունում և Արևելակենտրոնական Եվրոպայի Վարշավյան դաշինքի նախկին երկրներում (Լեհաստան, Հունգարիա, Չեխոսլովակիա, Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն, Ռումինիա և Բուլղարիա), ապա դրանց առավել տարբերակիչ հատկանիշներից մեկը վերաբերում է այն փոփոխականին, որը մենք անվանում ենք *միջազգային ազդեցություն*: Հարավային Եվրոպայում ու Հարավային Ամերիկայում անցումների վերաբերյալ դասական քառահատոր ուսումնասիրության խմբագիրներից մեկը՝ Լոուրենս Ուայթհեդը, պնդում էր, որ «խաղաղ ժամանակների» այստեղ դիտարկված բոլոր օրինակներում անցման փորձի ընթացքն ու արդյունքը որոշելու համար առաջնային կարևորություն են ունեցել ներքին ուժերը, իսկ միջազգային ուժերը խաղացել են միայն երկրորդական դեր»<sup>1</sup> Պարզ է, որ նման դատողությունն ակներևորեն երաշխավորված չի լինի Արևելակենտրոնական Եվրոպայի համար՝ հաշվի առնելով այն արագությունը, որով կոմունիզմն անկում ապրեց 1989թ., և այն փաստը, որ Չեխոսլովակիան, Ռումինիան ու Բուլղարիան իրենց անցումներն սկսեցին գրեթե *մինչև* որևէ էական ներքին փո-

1. Լոուրենս Ուայթհեդ, «Ժողովրդավարացման միջազգային կողմերը» (Laurence Whitehead, "International Aspects of Democratization"), Օ'Ռոննելի, Շմիտտերի, և Ուայթհեդի խմբ.՝ «Անցումներ ավտորիտար իշխանությունից. համեմատական տեսանկյուններ» (O'Donnell, Schmitter, and Whitehead, *Transitions from Authoritarian Rule: Comparative Perspectives*, 4):



փոխություններ տեղի ունենալը:<sup>2</sup> Շատ գիտնականներ փաստել են տարածաշրջանի մեծ մասում ձգձգված տնտեսական լճացումն ու լեգիտիմության խնդիրները: Սակայն միայն տնտեսական լճացմամբ ու թույլ լեգիտիմությամբ (որոնք երկար ժամանակ գոյություն են ունեցել 1989թ. առաջ) հնարավոր չէ բացատրել երկրների դոմինոյաձև անկման արագությունը: Մրա համար մեզ անհրաժեշտ է հետազոտել տարածաշրջանում միջազգային ու ներքին քաղաքականությունների միջև հատուկ կապը:

Իհարկե, Արևելյան Եվրոպայում 1948-1989 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում քաղաքականությունը նկարագրելու համար «անկախ», «ինքնիշխան» ու «ներքին» բառերն ինքնին վերապահումով ենք օգտագործում՝ հաշվի առնելով գաղափարախոսական, քաղաքական, զինվորական ու տնտեսական կապերը խորհրդային հեգեմոնի և նրա արևելակենտրոնական եվրոպական «արտաքին կայսրության» միջև:<sup>3</sup> Այս կապերի բնույթն իր հերթին նվազեցրել է խոշոր ժողովրդավարական ու շուկայական հասարակարգերի նորմալ միջազգային ազդեցությունը, որոնք նշանակալից էին, թեև ոչ որոշիչ Հարավային Եվրոպայում ու Հարավային Ամերիկայում: Այստեղ պետք է կանգ առնենք, որ քննարկենք, թե համեմատական վերլուծաբաններն ինչպես պետք է և ինչպես չպետք է մոտենան Խորհրդային Միության միջազգային ազդեցության հարցին:

Տարածաշրջանի երկրների մասին մինչև 1989 թվականը եղած գրականության մեծ մասն ունի երկու վերլուծական խնդիր: Նախ, գրականության մի խոշոր ուղղություն սկսվեց այնպիսի մի բացառիկ կենտրոնացմամբ տարածաշրջանի երկրների՝ որպես «արբանյակներ» ընդհանուր կարգավիճակի վրա, որ յուրաքանչյուր երկրի մինչկոմունիստական ու կոմունիստական պետություն-հասարակություն հարաբերությունների զգալի հետերոգենությունը նվազեցվեց: Ավելի ուշ շատ գիտնականներ, արձագանքելով սառը պատերազմի անօրինականություններին, սկսեցին շեշտել իրենց մասնագիտացման տիրույթում եղող երկրների եզակիությունը: Դա պատճառ դարձավ ամբողջ տարածաշրջանի տնտեսությունների, քաղաքականության ու հասարակությունների կարևոր ընդհանրությունների թերընդօժմանը: Սակայն որպես համեմատական վերլուծաբաններ, որոնց հետաքրքրության առարկան ժողովրդավարությանն անցումն է ու այն խնդիրները, որոնք պետք է լուծել նախքան ժողովրդավարությունը կկարողանա կայանալ, հասկա-

2. Ադամ Պրժեւորսկին (Adam Przeworski) նկարագրում է, թե ինչպես այս վարչակարգերը մաքրվեցին-գնացին, կարծես թե ամբարտակ էր ճեղքվել, իր «Ժողովրդավարությունը և շուկան. քաղաքական և տնտեսական բարեփոխումներն Արևելյան Եվրոպայում ու Լատինական Ամերիկայում» (*Democracy and the Market: Political and Economic Reforms in Eastern Europe and Latin America* (Cambridge: Cambridge University Press, 1991), 4-6): Տե՛ս նաև Սեմյուել Հանթինգտոնի (Samuel P. Huntington) քննարկումը «ձնագնդու էֆեկտի մասին», նրա «Երրորդ ալիքը. ժողովրդավարացումը քսաներորդ դարի վերջին» (*The Third Wave: Democratization in the Late Twentieth Century* (Norman: University of Oklahoma Press, 1991), 33):

3. Տե՛ս օրինակ՝ արտաքին կայսրության հասկացության կիրառումը՝ Ալեքս Պրավդայի խմբ.՝ «Արտաքին կայսրության ավարտը. խորհրդային-արևելյան եվրոպական հարաբերություններն անցման մեջ, 1985-90թթ.», (Alex Pravda, ed., *The End of the Outer Empire: Soviet-East European Relations in Transition, 1985-90* (London: Royal Institute of International Affairs and Sage Publications, 1992)): Ներքին կայսրություն տերմինն այժմ ավելի ու ավելի շատ է կիրառվում՝ նկարագրելու ԽՍՀՄ-ի և տասնինը նախկին խորհրդային հանրապետությունների միջև հարաբերությունները:

ցութենական փորձ պետք է անենք՝ ցույց տալու, թե ինչպես, ինչու և ինչ հետևանքներով ընդհանրության ու տարբերության տարրերը կարող են առկա լինել միաժամանակ:

Խորհրդային Միությունը պարզապես համակարգ կամ կայսրության կենտրոն չէր, այլ խոշոր ուտոպիստական տեսականի ճառագայթման աղբյուր: Արևելյան Եվրոպայում խորհրդային էքսպանսիայի հետպատերազմյան փուլում (Երկրորդ համաշխարհային) Խորհրդային Միության համար գոյություն ունեին կարևոր ռազմական ու տնտեսական օգուտներ: Սակայն «ծաղկուն ստալինիզմի» ժամանակահատվածում ուժային հարաբերությունները բոլորի ներսում ամրապնդվել էին գաղափարախոսության պահանջներով: Իսկապես, 1968թ. սահմանափակ ինքնիշխանության մասին բրեժնևյան դոկտրինը, որը կիրառվեց Պրահայում գարնանային փորձի ճնշումն արդարացնելու համար, բացահայտորեն հիմնված էր նման պահանջների վրա՝ «Անկախ սոցիալիստական երկրների ինքնիշխանությունը չի կարող լինել համաշխարհային սոցիալիզմի ու համաշխարհային հեղափոխական շարժման շահերի դեմ»:<sup>4</sup>

Սահմանափակ ինքնիշխանությունն ամրապնդվում էր համատարածաշրջանային առևտրի, պլանավորման ու ներդրումների ցանցով (Տնտեսական փոխօգնության խորհուրդը՝ ՏՓԽ), որը կենտրոնացած էր Մոսկվայի շուրջ, և համատարածաշրջանային ռազմական դաշինքով (Խորհրդային Միության կողմից ղեկավարվող Վարշավյան դաշինքը): Ի հավելումն նշենք, որ Խորհրդային Միության քաղաքական ուժեղ միջամտությունն Արևելյան Եվրոպայի երկրներում ղեկավարության փոփոխություններին և գաղափարախոսական շրջանակների ու կուսակցական պետության վարչական կառույցների արտաքին վերահսկողությունը, որը քաղաքական իրականացնում էր, արևելաեվրոպական Վարշավյան դաշինքի երկրներին տվել էր տարածաշրջանային ընդհանրությունների ու ընդհանուր հեգեմոնից կախվածության զարմանալիորեն բարձր աստիճան:<sup>5</sup>

4. Այս մեջբերումը և համապատասխան քննարկում, *տե՛ս* Մարկ Կրամեր, «Բրեժնևյան ուսմունքից անդին. նոր ժամանակաշրջան խորհրդային-արևելաեվրոպական հարաբերություններում» (Mark Kramer, "Beyond the Brezhnev Doctrine: A New Era in Soviet-East European Relations?" International Security (Winter 1989- 90): 25):

5. Արևելյան Եվրոպայի նման կառույցներում ներգրավված լինելու մասին *տե՛ս* Ռոբերտ Հասչինգս, «Խորհրդային-արևելաեվրոպական հարաբերությունները. կայացում և հակամարտություն», (Robert L. Hutchings, *Soviet-East European Relations: Consolidation and Conflict* (Madison: University of Wisconsin Press, 1983)) և Քրիստոֆեր Ջոնս, «Խորհրդային ազդեցությունն Արևելյան Եվրոպայում. քաղաքական ինքնուրույնությունն ու Վարշավյան դաշինքը» (Christopher D. Jones, *Soviet Influence in Eastern Europe: Political Autonomy and the Warsaw Pact* (New York: Praeger Publishers, 1981)): Արևմտյան ժողովրդավարությունները, հատկապես՝ Միացյալ Նահանգները, իսկապես խաղացել են քողարկված կամ անգամ բացահայտ դեր ժողովրդավարությունների խորտակման կամ տապալման համար այնպիսի երկրներում, ինչպիսիք են՝ Բրազիլիան (1964թ.) կամ Չիլին (1973թ.): Սակայն արևմտյան աջակցությունը Պինչետին Չիլիում և զինվորականությանը՝ Բրազիլիայում երբեք միանշանակ չէր, որովհետև հեղաշրջումները տրամաբանորեն հիմնավորվում էին ժողովրդավարության անուկից անգամ հեղաշրջման պաշտպանների կողմից և դրանց ընդդիմանում էին նույնպես ժողովրդավարության ու մարդու իրավունքների անուկից կարծիքներ կրող հատվածներն ու որոշ գործը քաղաքական գործիչներ: Անգամ ավելի կարևոր է այն, որ ժողովրդավարական ընդդիմությունն այնպիսի կառավարողների դեմ, ինչպիսին, օրինակ՝ Պինչետն է, սովորաբար կարող էր հավաքել լայն քաղաքական դաշինք Բոսալիայում, Գերմանիայում և անգամ Միացյալ Նահանգներում, որոնք խոշոր ազդեցություն ունեին այնպիսի երկրներում, ինչպիսին Չիլին է: Ներքին ժողովրդավարական ընդդիմությունը դրան համեմատելի ցանց Խորհրդային կայսրությունում չունեի:

Ավելին, խորհրդային ռազմական ներկայությունը հստակ և որոշիչ գործոն էր՝ հետ մղելու տարաբնույթ դիմադրության այն տպավորիչ շարքը, որ այդ «արբանյակները» դեռևս ի վիճակի էին ծնունդ տալու: Խորհրդային զորքերը դեռևս տեղակայված էին Վարշավյան համաձայնագրի յոթ երկրներից չորսում: դրանք էին՝ Լեհաստանը, Չեխոսլովակիան, Հունգարիան և Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունը: Այդ չորսից երեքում՝ ԳԴՀ-ում 1953 թ-ի խռովությունների ժամանակ, Հունգարիայում 1956 թ-ի հեղափոխության ժամանակ և Չեխոսլովակիայում 1968թ. «Պրահայի գարնանից» հետո խորհրդային զորքերն օգտագործվում էին ներքին քաղաքականության ընթացքը փոխելու նպատակով: Լեհաստանում 1981թ. խորհրդային զորքերի միջամտության սպառնալիքի գիտակցումը վճռորոշ դեր խաղաց՝ հնարավորություն տալով վարչակարգին հայտարարելու ռազմական դրություն և ճնշելու լեհական քաղաքացիական հասարակության ներսում Գրամշիի կարծիքով գերիշխող դարձած «Համերաշխության» ուժերը: Եթե այս երկրները անկախ համարենք, ապա «կոմունիզմի անդառնալիության» գաղափարը բազմիցս հոշակված որոշ մտածողների, այդ թվում՝ Ջին Քրեյկատրիկի կողմից, ակնհայտորեն սխալ է: 1956թ. Հունգարիայում տեղի ունեցածը, ինչպես իրավամբ ասում է Ջոզեֆ Ռոտշիլդը, «հաղթանակած հեղափոխություն էր [որը] պարտվեց միայն գերագանցող օտարեկրյա ուժի կողմից»:<sup>6</sup> Եթե Հունգարիան տեղակայված լիներ Իսպանիայի կամ Բրազիլիայի աշխարհաքաղաքական տարածքի նման տարածքում, ապա գրեթե վստահաբար ասենք, որ կոմունիզմի վրա հակագրոհ կլիներ, և ժողովրդավարությանն անցումը հավանաբար կսկսվեր 1956թ.: Նույն ձևով, եթե «Պրահայի գարունը» 1968թ. պատահած լիներ այդպիսի մի տարածքում, Չեխոսլովակիան գուցե հետամբողջատիրականից քայլ աներ դեպի ավտորիտար վարչակարգ՝ անցման տարբերակների ավելի լայն տեսականիով, որը վարչակարգի այդպիսի տիպն առաջարկում է:<sup>7</sup> Դրա փոխարեն, ինչպես 1986 թվականին գրող Թիմոթի Գարտոն Աշն է նկատել, «մեկ գարնանը հետևեց տասնհինգ ձմեռ»:<sup>8</sup>

6. Ջոզեֆ Ռոտշիլդ, «Վերադարձ բազմազանությանը. Արևելյան կենտրոնական Եվրոպայի քաղաքական պատմությունը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» (Joseph Rothschild, *Return to Diversity: A Political History of East Central Europe since World War II* (Oxford: Oxford University Press, 1989), 160):

7. Ենթադրություն այն մասին, թե ինչպես էր կարող զարգանալ Չեխոսլովակիան, *տե՛ս* Գորդոն Սքիլլինգ, «Չեխոսլովակիայի ընդհատված հեղափոխությունը» (H. Gordon Skilling, *Czechoslovakia's Interrupted Revolution* (Princeton: Princeton University Press, 1976)): Սքիլլինգը պնդում է, որ «գործի էր դրված մի հզոր դինամիկա կուսակցության ներսում և ընդհանրապես հասարակության մեջ, որը նշանակում էր, որ արտաքին միջամտության վերացման պայմաններում փոփոխությունների գործընթացը դանդաղելու կամ արգելափակվելու փոխարեն կարագանար և ի վերջո՝ առաջ կբերեր լիովին վերանայված սոցիալիզմ՝ ժողովրդավարական՝ ձևով, և ազգային՝ բովանդակությամբ ... Պրահայի փորձը թվում էր դատապարտված ձախողման ավելի շատ արտաքին, քան ներքին պատճառներով» (էջ 842-43): Սակայն որպես համեմատական վերլուծաբան՝ կարծում ենք, որ չկա ապացույց՝ ասելու, որ Ալեքսանդր Դուբչեկը ցանկանում էր արևմտյան ոճի ժողովրդավարություն: Դուբչեկը երբեք չառաջարկեց բազմակուսակցական քաղաքականություն: Սակայն նա հստակորեն կողմ էր ազատականացմանը: Հաշվի առնելով Պրահայի պատմությունն ու միջավայրը՝ կարծում ենք, որ այս ազատականացումն ամենայն հավանականությամբ կարող էր ստեղծել մի համատեքստ, որում այլ ուժեր կարող էին արթնանալ ու հրել-տանել դեպի անցում ժողովրդավարությանը:

8. Թիմոթի Գարտոն Աշ, «Չեխոսլովակիան սառույցի տակ» (Timothy Garton Ash, *Czechoslovakia under the Ice*՝ in *The Uses of Adversity: Essays on the Fate Central Europe* (New York: Random House, 1989), 62):

ԳՂՀ-ում 1953թ., Լեհաստանում 1956թ. և 1981թ., Չեխոսլովակիայում 1968թ. և անգամ ավելի հաստատապես 1956 թվականի Հունգարիայի իրադարձությունների արդյունքները ցույց չտվեցին կոմունիստական տիպի վարչակարգերի անդառնալիությունը: Այդ արդյունքները ցույց տվեցին, սակայն, որ գաղափարապես վստահ և աշխարհաքաղաքականորեն ուժ գործադրելու պատրաստական կոմունիստական հեգեմոնի կողմից կառավարվող օտարերկրյա մարտական գործերի ներկայությունը կարող է խանգարել ժողովրդավարության պոտենցիալ անցումներին:

Ինչո՞ւ էր խորհրդային հեգեմոնը պատրաստ դարձյալ ու դարձյալ ուժ գործադրելու: Մասամբ որովհետև խորհրդային տեսանկյունից ուժի գործադրումը շատ քիչ ծախս էր պահանջում: Հաշվի առնելով այդ պահին առկա միջուկային սպառնալիքը՝ Արևմուտքը թույլ տվեց Խորհրդային Միությանը ուժ կիրառել 1956թ. Հունգարիային ճնշելու համար, իսկ 1961 թվականին՝ կառուցելու Բեռլինի պատը: Նախագորքաշովյան շրջանում Խորհրդային Միությունն արևմտյան ուղղակի ներդրումներ ստանալ չէր ցանկանում, ուստի ուժի կիրառման սպառնալիքներին Արևմուտքի բացասական արձագանքը Խորհրդային Միության համար չմեծացրեց այլընտրանքային հնարավորությունների արժեքը: Խորհրդային առաջնորդները նաև դեռ հավատում էին (կամ առնվազն հավատ էին արտահայտում) իրենց սոցիալ-տնտեսական և տեսական համակարգի անխուսափելի համաշխարհային հաղթանակին: Արևմուտք-Արևելք շահերի այս հաշվարկում Խորհրդային Միության կողմից Արևելյան Եվրոպայում գործադրված ճնշման համար պահանջվող ծախսը չէր գերազանցում Արևմուտքի կողմից նրան հանդուրժելու գինը:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Վարշավյան դաշինքի երկրների միջազգային փոխշահակապվածությունը և նրանց կախվածությունը հեգեմոնից, այսպիսով, նման չէր ոչ մի կենտրոն-ձայրամաս հարաբերության, որին տեսաբանները բախվել էին Իսպանիայի, Պորտուգալիայի կամ Հունաստանի ձայրամասային նահանգների քաղաքականության մեջ, կամ ինչը կախվածություններն ուսումնասիրող տեսաբանները կարողացել են փաստել Արգենտինայում, Չիլիում, Ուրուգվայում կամ Բրազիլիայում:<sup>9</sup> Այս համատեքստում առանց հեգեմոնի ներքին փոփոխության (և այստեղ վճռորոշ էին ԽՍՀՄ-ում ներքին գործունեները) կենտրոնական և արևելաեվրոպական վերնախավի (կախված խորհրդային քաղաքական վերահսկողությունից) կամ կենտրոնական ու արևելաեվրոպական զանգվածների համար (պարտադրվող տեղի վերնախավերի կողմից, որոնք վստահ էին հեգեմոնի աջակցության վրա) չափազանց դժվար էր սկսել նոր քաղաքական գործընթացներ, որոնք կարող էին հանգեցնել անցումների դեպի ժողովրդավարություն:

Հարավսլավիան խորհրդային ճամբարում չէր, սակայն Տիտոյի «տատանումները» Արևելքի և Արևմուտքի միջև թուլացրեցին միջազգային ճնշումները ժողովրդավարության՝ ըստ մեր սահմանման, նկատմամբ: Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականություն մշակողները, գլխավորապես «բաժանիր և տիրիր» քաղաքականության պատճառով Հարավսլավիային շնորհեցին *դե ֆակտո* «ամենաարտոնյալ կոմունիստ» կարգավիճակը: Նույն ձևով ժողովրդավարության տեսաբանները Հարավսլավիան

9. Սակայն ԱՄՆ կողմից ուժի գործադրումը Կարիբյան ծովի ավազանում և Կենտրոնական Ամերիկայում առաջինը Մոնրոյի ուսմունքի, իսկ ավելի ուշ՝ պատժիչ գործողությունների ու ցածր լարվածության պատերազմի գաղափարախոսական թողի տակ մեկ այլ հարց է:

դնում էին մեկ այլ, բոլոր կոմունիստական համակարգերից տարբերվող կատեգորիայում, որովհետև հավատում էին, որ աշխատավորների ինքնակառավարումը ժողովրդավարության մի ձև է և կարող է ստանալ դրական զարգացում: Լայնորեն կիրառվող արտաքին «ելքի» մի տարբերակ, հատկապես՝ Գերմանիայի նկատմամբ, նույնպես ազատ արձակեց ժողովրդավարացմանն ուղղված որոշ ճնշումներ: Ազատականացման զգալի աստիճանը, որը վերաբերում էր հատկապես տեղափոխություններին ու բազմաթիվ համալսարանական ազատություններին, թուլացրեց Հարավսլավիայի դեռևս զգալի «ժողովրդավարության դեֆիցիտի» արևմտյան քննադատությունը: Երբ վրա հասավ 1989 թվականը, տարբեր հանրապետություններում իշխանություն կրողներից շատերը կարող էին իրենց ազգայնական դիրքի հիման վրա դիմադրել լրիվ ժողովրդավարացմանն ու ազատական արժեքներին իրենց հարևանների ու ներքին փոքրամասնությունների վերաբերյալ: Այսպիսով, մեծամասնական էթնոկրատիկ «ազգային պետությունների» անկախությունը գնալով ավելի առաջնային արժեք ձեռք բերեց մեր կողմից սահմանված ազատական ժողովրդավարական արժեքների ու ժողովրդավարացման նկատմամբ:<sup>10</sup>

**ՃՆՇՄԱՆ ԵՎ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՎԱԾ ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՒ ԴՐԱ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՇԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

Ի՞նչը հանգեցրեց գերիշխող դերի ներքին փոփոխություններին և ի՞նչ ազդեցություն ունեցան այդ փոփոխությունները՝ կապված Արևմուտքի և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում կայսրության սահմանները պահելու համար վճարած գնի հետ: Այս հարցի շուրջ հարյուրավոր հոդվածներ ու գրքեր են գրվել և գրվում տվյալ հարցերին մեզանից ավելի իրազեկ գիտնականների կողմից: Սակայն որպես համեմատական վերլուծաբաններ, որոնց հետաքրքրում է ուժային հարաբերությունների փոփոխությունը, մենք համարում ենք, որ որոշ փոփոխություններ կարծես թե հիմնական են:

Նախնական փոփոխությունը տեղի ունեցավ հեգեմոնի գաղափարախոսության և ուժային կառուցվածքի մեջ: 1985թ. կոմունիստական կուսակցության նոր առաջնորդ Միխայիլ Գորբաչովը և նրա հիմնական կողմնակիցները համոզված էին, որ Խորհրդային Միությունը գտնվում է վտանգավոր լճացման վիճակում, որը պահանջում է հեռուն գնացող վերակառուցում:<sup>11</sup> Գորբաչովի՝ փոփոխություններ կատարելու գործիքները

10. Նախկին Հարավսլավիայի տարածքում էթնիկ ազգայնական բռնապետությունների առաջացման մասին տե՛ս Ջորջ Սորոս, «Ազգայնական բռնապետություններն՝ ի տարբերություն բաց հասարակության» (George Soros, "Nationalist Dictatorships versus Open Society" (New York: Soros Foundation, January 1993, pamphlet):

11. Երեք հիմնական աղբյուր՝ լճացման մասին իրենց կարծրատիպային ընկալմամբ և այդ խնչընդոտը հաղթահարելու իրենց ռազմավարություններով, հետևյալն են՝ Միխայիլ Գորբաչով, «Պերեստրոյկա. նոր մտածողություն մեր երկրի ու աշխարհի համար» (Mikhail Gorbachev, *Perestroika: New Thinking for Our Country and the World* (New York: Harper and Row, 1987)), Էդվարդ Վիլկիս Ուոլկեր, «Կառուցվածքային ճնշումներ, քաղաքական ընտրություն և ինստիտուցիոնալ փոփոխություն. բյուրոկրատական ամբողջատիրությունը և պերեստրոյկայի ակունքները» (Edward Wilkes Walker, "Structural Pressures, Political Choice and Institutional Change: Bureaucratic Totalitarianism and the Origins of Perestroika" (Ph. D. diss., Department of Political Science, Columbia University, 1992)), և Արչի Բրաունի

«պերեստրոյկան», իսկ ավելի ուշ՝ «գլասնոստն» էին: Սակայն երկու ռազմավարություններն էլ հիմնավորապես փոխեցին Արևելյան Եվրոպայի, Արևմուտքի և ճնշման քաղաքատնտեսության տեղերը նրա հաշվարկներում: Պերեստրոյկան հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ էր խթանել ներդրումների ու տեխնոլոգիայի հոսքը և, իսկապես, կառուցել շատ ավելի մոտ հարաբերությունների ցանց Միացյալ Նահանգների և Եվրոպական Համայնքի հանրային ու մասնավոր հատվածների հետ: Հարաբերությունների այս ցանցն ու ռեսուրսների հոսքն ավելի հնարավոր էր ձեռք բերել հետսառըպատերազմյան, քան թե սառըպատերազմյան միջավայրում:

Ավելին, Խորհրդային Միությունում նոր ներդրումների համար օգտագործվելիք պոտենցիալ խնայողությունների ամենամեծ աղբյուրը կրճատված ռազմական ծախսերն էին: Իսկապես, գորբաչովյան ժամանակաշրջանի սկզբում նրա խորհրդականները եկան այն եզրակացության, որ խորհրդային ՀԱՄ-ի չափն ավելի փոքր է, քան նախապես հաշվարկվել էր, և որ ռազմական ծախսերն ավելի մեծ են:<sup>12</sup> Ի պաշտպանություն կուսակցական անզիջումների դեմ Գորբաչովի բարեփոխումների արտաքին գործերի նախարար Շևարդնաձեն 1990թ. կուսակցության համագումարի ժամանակ ցուցադրաբար հարցրեց համագումարի անդամներին, թե, իսկապես, նրանք կարծում են, որ հնարավոր է կամ Խորհրդային Միության շահերից է բխում շարունակել պաշտպանության ոլորտում այդպիսի չափազանց մեծ ծախսեր կատարելը, ինչը նրա կարծիքով՝ հանգեցրել է Խորհրդային Միության «տնտեսական ու սոցիալական» քայքայման:

Գալով արտաքին գործերի նախարարություն և ստանալով համապատասխան տեղեկատվությունից օգտվելու հնարավորություն՝ ես իմացա, որ վերջին երկու տասնամյակներում միայն Արևմուտքի հետ գաղափարախոսական հակամարտությունն ավելացրել է 700 տրիլիոն ռուբլի՝ որպես ռազմական հակամարտության գին....

Հեռանկարները բացել են նոր դարաշրջան մտնելու և երկու գերտերությունների միջև միանգամայն նոր հարաբերություններ կառուցելու նոր հնարավորություններ... Սակայն ակնհայտ է, որ եթե մենք շարունակենք այնպես, ինչպես նախկինում, ընկերներ, ես սա առում եմ ամենայն պատասխանատվությամբ, ծախսել մեր բյուջեի քառորդ մասը, ես շեշտում եմ՝ քառորդը ռազմական ծախսերի վրա... մենք կործանելու ենք երկիրը, ապա մենք պաշտպանության կարիք պարզապես չենք ունենա, ճիշտ այնպես, ինչպես կարիք չենք ունենա բանակի կործանված երկրի ու աղքատ մարդկանց համար:

Իմաստ չունի պաշտպանել մի համակարգ, որը հանգեցրել է տնտեսական ու սոցիալական քայքայման: Կա միայն մի ելք՝ քաղաքականությունն իր վրա պետք է վերցնի ապահովության պահուստներ ստեղծելու խնդիրը՝ պաշտպանության ոլորտում ծախսերի ուղեկցող կրճատումներով....

Մեր հաշվարկները ցույց են տալիս, որ ընթացիկ հնգամյա պլանային ժամանակահատվածում խաղաղության ընդհանուր շահաբաժինը, որը հետևանք է նոր մտածողության վրա

հեղինակավոր գիրքը՝ «Գորբաչովյան գործունը» (Archie Brown, *The Gorbachev Factor* (Oxford: Oxford University Press, 1996)):

12. Ստեփանի հետ հարցազրույցներից մեկում այս միտքը շեշտել է Գորբաչովի գլխավոր խորհրդականներից մեկը՝ Ալեքսանդր Յակովլևը, Մոսկվայում հոկտեմբերի 24-ին՝ 1989թ.:


հիմնված արտաքին քաղաքական գծի, կարող է հասնել 240-ից 250 միլիարդ ռուբլու: Մեր երկիրը չունի այլ ապագա, քան ինտեգրվելը տնտեսական ու ֆինանսական հաստատությունների և կապերի համաշխարհային համակարգին: Մենք պետք է դուրս գանք աշխարհից ինքնամեկուսացումից, որի մեջ ինքներս ենք մեզ դրել:<sup>13</sup>

Խորհրդային Միության պաշտպանության ոլորտի ծախսերն անգամ ավելի մեծ էին, քան ենթադրում էր Շևարդնաձեն: Համեմատելու համար ասենք, որ Խորհրդային Միության անվտանգության առնչվող ծախսերն ավելի քան երեք անգամ մեծ էին Միացյալ Նահանգների ծախսերից, վեց անգամ ավելի մեծ, քան ԵՏՀ-ի միջինը և քսան անգամ ավելի մեծ, քան Ճապոնիայինը: Ավելին, այս բոլոր բաց և բարձր տեղեկատվական շուկայական տնտեսություններում ռազմական տեխնոլոգիայի և աշխարհում մրցունակ արտահանման ոլորտների միջև կար ավելի մեծ փոխազդեցություն, քան ԽՍՀՄ-ում: Հետևաբար, համեմատական տնտեսական առումով երկիրը, որը միանշանակ առավելագույնը կշահեր «սառը պատերազմի ավարտից», Խորհրդային Միությունն էր: Տե՛ս Նկար 15.1-ը, որը նաև ցույց է տալիս, որ Խորհրդային Միության պաշտպանության ոլորտի ծախսերը նույնպես առնվազն երեք անգամ ավելի մեծ էին, քան որևէ հարավեվրոպական կամ հարավամերիկյան երկրում, որի օրինակը մենք այս գրքում դիտարկել ենք:

Ինչ վերաբերում է Արևելյան Եվրոպային, ապա խորհրդային ազդեցիկ վերլուծաբանները կարծում էին, որ ողջ Տնտեսական փոխօգնության խորհուրդը տնտեսապես և քաղաքականապես կշահի «պերեստրոյկայի» ու «գլասնոստի» ուղղությամբ կատարած փոփոխությունից:<sup>14</sup> 1988թ. կեսերին վերաբերող մի կարևոր փաստաթղթում, որը հիմնականում գրված էր «Արևելյան Եվրոպայի տեղն ու դերը ԱՄՆ և ԽՍՀՄ միջև լարվածության թուլացման գործում» թեմայով համաժողովի համար, հեղինակավոր խորհրդային մասնագետները առաջ քաշեցին այն փաստարկը, որ տնտեսական ու քաղաքական ազատականացումն զգալի նշանակություն կունենա Արևելյան Եվրոպայի և Խորհրդային Միության համար: Փաստաթուղթը պարզորոշ կերպով քննադատում էր Արևելյան Եվրոպայում Խորհրդային Միության նախկին ռազմական ու քաղաքական ներխուժման ինտենսիվ աստիճանը: Մենք մանրամասն մեջբերում ենք անում այս փաստաթղթից,

13. Տե՛ս Շևարդնաձեի ելույթը հուլիսի 3-ին՝ 1990թ., Խորհրդային Միության կոմունիստական կուսկցության (ԽՄԿԿ) 28-րդ համագումարի ժամանակ, վերաստված՝ Foreign Broadcast Information Service, Daily Report, Soviet Union, 5 հուլիս, 1990թ., էջ 7-10: Հաշվի առեք, որ նա խոսում է ոչ այնքան ռազմական, որքան գաղափարախոսական առճակատման մասին:

14. Գորբաչովից դեռ շատ առաջ որոշ խոշոր վերլուծաբաններ Խորհրդային Միությունում և Միացյալ Նահանգներում նույնպես պնդել են, որ «արտաքին կայսրությունն» Արևելյան Եվրոպայում Խորհրդային Միության համար ակտիվից դարձել է պարտավորություն, օրինակ՝ խորհրդային սուբսիդավորման չափազանց բարձր գնահատումներն ըստ Մ. Մարեսի և Ջ. Վանուսի՝ «Խորհրդային Միությունը սուբսիդավորում է առևտուրն Արևելյան Եվրոպայի հետ. խորհրդային տեսանկյուն» (M. Marrese and J. Vanous, *Soviet Subsidizing of Trade with Eastern Europe: A Soviet Perspective* (Berkeley: Institute of International Studies, University of California, Berkeley, 1983)): Ապացույցների ու շատ ավելի ցածր գնահատականների մասին տե՛ս Չարլզ Վոլֆ կրտսեր, «Խորհրդային կայսրության ծախսերն ու օգուտները» Charles Wolf, Jr., "The Costs and Benefits of the Soviet Empire", Հենրի Ռոունենի և Չարլզ Վոլֆ կրտսերի խմբ.՝ «Խորհրդային կայսրության ապագան» (Henry S. Rowen and Charles Wolf, Jr., eds., *The Future of the Soviet Empire* (New York: Institute for Contemporary Studies and St. Martin's Press, 1987), 121-142):



Նկ. 15.1. Պաշտպանության ոլորտի ծախսերը՝ որպես ՂՏԱ-ի տոկոս, 1983-1989թթ.

Աղբյուրը՝ 1989թ. Խորհրդային Միության վերաբերյալ տվյալները՝ Ղիմիտրի Շոեյնհեր, «Խորհրդային պաշտպանության ոլորտի բեռը. թաքնված ծախսերի գնահատում», "The Soviet Defense Burden: Estimating Hidden Costs", *Soviet Studies* 44, no. 2 (1992թ.), էջ 258: Մնացած բոլոր տվյալները 1984թ. կտրվածքով են (բացի Ուրուգվայից, որը 1983թ. կտրվածքով է) և վերցված են Ստոկհոլմի խաղաղության հետազոտական միջազգային ինստիտուտից, *World Armaments and Disarmament: SIPRI Yearbook, 1984* (Stockholm: SIPRI), էջ 129-31 և 1986թ. էջ 243-47:

որովհետև այն գրվել էր *նախքան* Արևելյան Եվրոպայում 1989թ. նշանակալից փոփոխությունները:

Սոցիալիզմի վարչական պետության մոդելը, որը 1950-ական թվականներին հաստատվել էր արևելաեվրոպական երկրների մեծ մասում Խորհրդային Միության ազդեցության ներքո, չդիմացավ ժամանակի փորձությանը՝ դրանով իսկ ցույց տալով իր սոցիալ-քաղաքական ու տնտեսական անարդյունավետությունը... Անթույլատրելի էր կոմունիստական կուսակցության առաջնային դերի մասին դրույթը տարածել սոցիալիստական երկրների միջև հարաբերությունների վրա... Գոյություն ունեցող համակարգի մոդելն ստեղծվել էր Խորհրդային Միությունում 1930-ական և 1940-ական թվականներին... *Պերեստրոյկայի* գործընթացով արդեն ձևավորվում է մի նոր բազմակողմ քաղաքական իրականություն՝ լի հակասություններով ու հակամարտություններով: Ինտեգրման գործընթացների ծավալի ու խորության և տնտեսական, գիտական ու տեխնոլոգիական շահերի ու հարաբերությունների միափոխման ինտեսիվության առումով պարզվեց, որ ՏՓՄ երկրները չափազանց հետ են մնացել Եվրոպական Համայնքի երկրներից... Խաղաղության պահպանման գործում շահագրգռվածությունը՝ մի նախադրյալ, որին ուղղված է երկու համակարգերի միջև հարաբերությունների դրական զարգացումը, ստիպում է, որ մեծ տերությունների քաղաքականությունն ուղղորդվի նոր քաղաքական մտածողությամբ՝ կապված ամբողջ աշխարհում՝ ներառյալ Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրներում առկա ճգնաժամային իրավիճակները... Անընդունելի է, որ *կոդներից որևէ մեկը* միջամտի դժվարին վիճակում հայտնված որևէ երկրի ներքին խնդիրներին ... Ճգ-



նաժամային իրավիճակների առաջացման դեպքում ոչ մի պարագայում չպետք է թույլ տալ, որ դրանք խանգարեն առաջընթացին Արևելք-Արևմուտք հարաբերություններում:<sup>15</sup>

Այդ փաստաթուղթը գրվելուց վեց ամիս հետո՝ 1988 թվականի դեկտեմբերին, Գորբաչովը Միացյալ ազգերի կազմակերպությունում արեց իր պատմական հայտարարությունն այն մասին, որ մինչև 1990թ. վերջն անկախ սպառազինությունների կրճատման Արևմուտքի գործողություններից Խորհրդային Միությունն Արևելյան Եվրոպայից և Խորհրդային Միության՝ Արևելյան Եվրոպային մոտ գտնվող արևմտյան ռազմական տարածքից կհանի 240000 մարդ, 10000 տանկ և 820 մարտական ինքնաթիռ: Ըստ Չարլզ Գատիի՝ «ավելի, քան որևէ մեկ այլ իրադարձություն, այդ հայտարարությունը հող նախապատրաստեց 1989թ. ցնցող զարգացումների համար: Ասելով, որ Մոսկվան պատրաստ է խորհրդային զորքերը հանելու իր արևելաեվրոպական վերահսկվող տարածքներից, Գորբաչովը տեղյակ պահեց տարածաշրջանի կոմունիստական ղեկավարներին, որ խորհրդային տանկերն այլևս չեն պաշտպանի նրանց իշխանությունը: Շատ բան չպահանջվեց Արևելյան Եվրոպայի ժողովուրդների համար՝ հասկանալու, որ իրենց առաջնորդներն այդ պատճառով խոցելի են, որ նրանցից ոմանք իրականում փախուստի մեջ էին»:<sup>16</sup> Երբ Գորբաչովն արեց այս հայտարարությունը, «Չորսի խումբը» Չեխոսլովակիայի, Արևելյան Գերմանիայի, Ռումինիայի և Բուլղարիայի բրեժնևյան տիպի բռնակալ առաջնորդները, դիմադրում և հաճախ քննադատում էին գլխնոստի մասին նրա հայտարարությունները, և միայն Բուլղարիայում է, որ պերեստրոյկան հավանության է արժանացել գոնե տեսականորեն:

Հետագա գլուխներում մենք ցույց ենք տալիս, որ յուրաքանչյուր առանձին պահի տարածաշրջանային հեգեմոնը (Խորհրդային Միությունը) նախաձեռնել է մի ինչ-որ որոշակի գործողություն «Չորսի խմբից» յուրաքանչյուրին թուլացնելու համար: Դժբախտաբար, մենք տվյալներ չունենք Արևելյան Գերմանիայի վերաբերյալ, սակայն ունենք 1986-87թթ. Բուլղարիայում, Ռումինիայում և Չեխոսլովակիայում իրականացված հասարակական կարծիքի մասին հարցման տվյալները, որոնք ցույց են տալիս, որ բազմաթիվ քաղաքացիներ այս երկրներում կարծել են, որ գլխնոստն ու պերեստրոյկան «նպաստավոր կլինեն» այդ երկրների համար (Աղյուսակ 15.1):

Թեև Գորբաչովը կնախընտրեր, որ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներն

15. «Արևելյան Եվրոպայի տեղն ու դերը ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև լարվածությունների թուլացման գործում», "The Place and Role of Eastern Europe in the Relaxation of Tensions between the USA and the USSR", գրվել է համաշխարհային սոցիալիստական համակարգի տնտեսագիտության ինստիտուտի աշխատակազմի կողմից (Մոսկվա) Ալեքսանդրիայում, Վիրջինիայի նահանգ, մի համաժողովի համար և լայնորեն շրջանառվել է, որովհետև խորհրդային հեղինակները թույլ են տվել այն ամբողջությամբ տպագրել "Problems of Communism 37"-ում, nos. 3-4 (1988թ. մայիս-օգոստոս), էջ 55-70:

16. Չարլզ Գատի, «Չախտողված ճամբարը. խորհրդային-արևելաեվրոպական քաղաքականությունը փոխակերպման մեջ» (Charles Gati, *The Bloc That Failed: Soviet-East European Politics in Transformation* (Bloomington: Indiana University Press, 1990), 166-67): Ալեքս Պրավդան բերում է որոշ փաստարկներ այն մասին, որ արևելաեվրոպական առաջնորդներին ասվել է դեռ 1986թ. նոյեմբերին, որ Խորհրդային Միությունն ուժ չի կիրառի նրանց իշխանությանը սատարելու համար: Տե՛ս «Խորհրդային քաղաքականությունն Արևելյան Եվրոպայի նկատմամբ անցման ժամանակ», "Soviet Policy towards Eastern Europe in Transition", Պրավդա, «Արտաքին կայսրության ավարտը», "The End of Outer Empire", հատկապես՝ էջ 17-18:

**Աղյուսակ 15.1. «Ի՞նչ կարծիքի եք, արդյոք Գորբաչովի ղեկավարությունը լավ էր, թե՛ վատ (պատասխանողի երկիր)-ի համար**

Պատասխան	Պատասխանողների տոկոսը		
	Բուլղարիա	Չեխոսլովակիա	Ռումինիա
Լավ	64	53	40
Վատ	8	8	10
Ոչ...ոչ...	24	34	38
Այլ/պատասխան չկա	4	5	12
Օրինակների թիվը	556	436	541

Աղբյուրը՝ Գորբաչովի և խորհրդային բարեփոխումների արևելաեվրոպական ընկալումը *East European Perceptions of Gorbachev and Soviet Reforms* (Munich: Radio Free Europe, Audience and Public Opinion Research Department, July 1988): Վերաստված՝ Գատի, «Ձախողված ճամբարը», *The Bloc That Failed*, էջ 68:

ընդունեին «համակարգի ներսում» խորհրդային տիպի փոփոխությունների գաղափարը, նա լրջորեն թերագնահատել էր այն, թե որքան ոչ լեգիտիմ ու վարկաբեկված էին վարչակարգերից շատերը, և որքան ապակայունացնող է լինելու *հոգուտ* գլխաձուլումը ու պերեստրոյկայի և Խորհրդային Միության ռազմական միջամտության *դեմ* իր հայտարարությունների համադրությունը:<sup>17</sup> Հաշվի առնելով այն հեգեմոնային հարաբերությունները, որ Խորհրդային Միությունը նախապես ունեցել էր Արևելյան Եվրոպայում, Գորբաչովի կողմից փոփոխություններին հավանություն տալն ամենուրեք Վարշավյան դաշինքի երկրներում փոխեց ուժային հարաբերությունները: Այն թուլացրեց կոմունիստական կուսակցության հակազսանոստային ղեկավարությունը Բուլղարիայում, Ռումինիայում, Արևելյան Գերմանիայում և Չեխոսլովակիայում, ամրապնդեց կոմունիստական կուսակցության բարեփոխումներին կողմ թե՛ները Հունգարիայում և Լեհաստանում, որոնք ցանկացան նոր հարաբերություններ ստեղծել ժողովրդավարական ընդդիմության հետ, և վստահություն ներշնչեց ժողովրդավարական ընդդիմությանն Արևելյան Եվրոպայի բոլոր երկրներում:

Գործող անձինք 1989 թվականի կեսերին զգում էին երկու ուժային դաշտ: Առաջին. Խորհրդային Միության միջամտության իրավունքի՝ բրեժնևյան դոկտրինով սահմանված գաղափարախոսական ինքնավստահությունը հաստատուն կերպով թուլանում էր: Այս թուլացնող ուժն զգում էին Խորհրդային ղեկավարությունը, Արևելյան Եվրոպայի երկրների կառավարությունների ղեկավարները և ընդդիմությունը: Սակայն կար մի երկրորդ հակազդող ուժ ևս: Ժողովրդավարական գլխավոր ակտիվիստները, հատկապես՝ Լեհաստանում և Հունգարիայում, պնդում էին, որ իրենք չեն կարող հույսը դնել ԽՍՀՄ-ի չմիջամտելու վրա: Ըստ էության, նրանք հասան իրենց նպատակին՝ խորհրդային չմիջամտելու փաստացի օրինակին վարչակարգի՝ կոմունիզմից դեպի այլ ուղղությամբ փոփոխվելու պահին: Իրենց զուշավորությունն ու չհամախմբվելը նրանք բացատրում էին այն գործոններով, որ մշտապես առկա էր այն վտանգը, որ անգիջումները և/կամ

17. Այս թեմայի վերաբերյալ ապացույցներ ու փաստարկներ, *տես* Պրավդա, "The End of Outer Empire", էջ 1-34, և Գատի, "The Bloc That Failed", «Ձախողված ճամբարը», էջ 102-3:

ազգայնականները կվերցնեն իշխանությունը: Ինչպես ցույց տվեցին 1991թ. օգոստոսին Խորհրդային Միությունում հեղաշրջման փորձը և 1993թ. Ռուսաստանում ընտրությունների արդյունքները, նրանց մտավախությունն անհիմն չէր:<sup>18</sup>

Ինչպիսին էլ որ եղած լինեին Գորբաչովի նախնական հաշվարկները, արդեն 1989թ. աշնանը խորհրդային քաղաքականությունը հիմնավորապես փոխել էր ուժերի հարաբերակցությունը ճամբարում: Գոյություն ունեցող կոմունիստական կառավարություններն ավելի թույլ էին, իսկ ժողովրդավարական ընդդիմություններն՝ ավելի ուժեղ:<sup>19</sup> Այս համատեքստում փոփոխությունները կասեցնելու համար Խորհրդային Միության կողմից զինված ուժի գործադրումը կտրականապես կփոխեր «պերեստրոյկայի» ընթացքը Խորհրդային Միությունում: Արևմուտքի հետ տնտեսական ու ֆինանսական հարաբերությունները լուրջ հետընթաց կապրեին: Ռազմական ծախսերի կրճատումների մասին Գորբաչովի հույսերը անկատար կմնային: Այլ կերպ շարադրենք 1989թ. աշնանը Ռոբերտ Դալիի ասածը. «Միջամտելու գինը ավելի մեծ կլիներ, քան հանդուրժելու գինը»:<sup>20</sup>

18. Բովանդակալից ուսումնասիրություններ «Սահմանափակված ինքնիշխանության» բրեժնևյան դոկտրինի և այն մասին, թե այն ինչպես և ինչու փոփոխվեց Գորբաչովի կողմից, *տե՛ս* Ռոբերտ Ջոնս (Robert A. Jones), *The Soviet Concept of "Limited Sovereignty" from Lenin to Gorbachev* (New York: St. Martin's Press, 1990) և Մարկ Կրամեր (Mark Kramer), *Beyond the Brezhnev Doctrine: New Era in Soviet-East European Relations?* International Security (Winter 1989-90), 25-67:

19. Սակայն վերնախավի որոշ հատվածներ դեռևս հավատում են սոցիալիզմի գաղափարախոսությանը և այն բանին, որ հնարավոր է տնտեսական ու սոցիալական բարեփոխումներն իրենց թույլ տան մնալ իշխանության և ստեղծել չափավոր ընդդիմություններ, քանի դեռ չեն ունենա զանգվածային բռնություններ կիրառելու անհրաժեշտություն: Սա նշանակում էր, որ բացառությամբ Հունգարիայի և Լեհաստանի առանձնահատուկ դեպքի կոմունիստական առաջնորդները Վարշավյան դաշինքի երկրներում չնախաձեռնեցին բարեփոխումների ձևով անցում ժողովրդավարությանը, ինչպես Իսպանիայում կամ Բրազիլիայում: Ժողովրդավարության անցումը նրանց պարտադրվեց ոչ թե «Կլոր սեղանի» բանակցությունների միջոցով, այլ հեռացմամբ դեպի Արևմտյան Գերմանիա և ըմբոստությանը Արևելյան Գերմանիայի փողոցներում: Անգամ Չեխոսլովակիայում վարչակարգի անկմանը հանգեցնող իրադարձություններն ավելի պակաս կանխատեսելի էին: Այն փաստը, որ վարչակարգի այս առաջնորդները չէին ծրագրել անցում ժողովրդավարությանը, նպաստեց հեղափոխություն բառը կիրառելուն (ինչպես, օրինակ՝ «Թավշյա հեղափոխություն» արտահայտության մեջ): Հեղափոխություն բառը չի կիրառվի՝ նկարագրելու որևէ հարավեվրոպական կամ հարավամերիկյան անցում, որը մենք քննարկել ենք, բացառությամբ Պորտուգալիայում անցմանը, որը հեղափոխություն էր՝ սանձազերծված ոչ աստիճանակարգային զինվորական հեղաշրջումից հետո:

20. Ռոբերտ Դալի (Robert Dahl) հայտնի աքսիոմը հանդուրժելու ծախսի մասին *տե՛ս* նրա՝ «Բազմիշխանություն. մասնակցություն և ընդդիմություն» (*Polyarchy: Participation and Opposition* (New Haven: Yale University Press, 1971), 15): Չինաստանում, որը նույնպես որոշ իմաստով կայսրություն է, ծայրամասերում (Տիբեթում և Սինքյանում) ճնշման ծախսը բարձր չէ հանդուրժելու ծախսից այս գիրքը գրելու պահին: Սա մասամբ Արևմուտքից Տիբեթի ու Սինքյանի աշխարհագրական ու մշակութային մեծ հեռավորության շնորհիվ է: Նաև հաշվի առնելով չինական շուկայի չափն ու աճը՝ Արևմուտքի կողմից դիմադրության ծախսը բազմաթիվ հզոր գործող անձանց կողմից ընկալվել է որպես չափազանց բարձր: Հավելենք, որ Արևմուտքի մեծ մասում կա գաղտնընթաց էթնակենտրոն մի զգացում, որ ոչ ժողովրդավարական իշխանությունն «անհանդուրժելի» է Արևմուտքում, սակայն «հանդուրժելի» է աշխարհի այլ մասերում:

ԿՈՍՏՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՈՃԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ԱՄԲՈՂՋԱՏԻՐԱԿԱՆ ԵՎ  
 ՀԵՏԱՄԲՈՂՋԱՏԻՐԱԿԱՆ ՏԻՊԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
 ԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Շատ վերլուծաբաններ իրավամբ նշել են, որ գլխավոր տարբերությունները մեկը «միաժամանակայնության խնդիրն» է մի կողմից՝ արևելաեվրոպական ու հետխորհրդային անցումների և մյուս կողմից՝ հարավեվրոպական ու հարավամերիկյան անցումների միջև: Արևելյան Եվրոպայում և Խորհրդային Միությունում, ի լրումն ժողովրդավարությանը քաղաքական անցում կատարելուն, երկրները միաժամանակ ստիպված էին անցում կատարել դեպի շուկայական տնտեսություններ:<sup>21</sup> Մենք միանգամայն համաձայն ենք, որ այս երկու հիմնավոր փոփոխություններն էլ անհրաժեշտ են: Սակայն, վերլուծությունը պետք է ավելի հեռուն գնա:

Տարածաշրջանում բոլոր վարչակարգերը (մասնակի բացառելով Լեհաստանը, որտեղ, մենք դա հիմնավորելու ենք (հակասականորեն), երբեք չի եղել լրիվ ձևավորված ամբողջատիրական վարչակարգ) մի ժամանակ եղել են «ամբողջատիրական»: Մի քանիսն ավելի ուշ դարձան «հետամբողջատիրական»: Ինչպես նշեցինք Ադյուսակ 1.1-ում, կան ժամանակակից կայացած ժողովրդավարական հասարակարգն ամրապնդող հինգ ոլորտներ, որոնք վերաբերում են քաղաքացիական հասարակությանը, քաղաքական հասարակությանը, օրենքի գերակայությանը, պետական ապարատին ու տնտեսական հասարակությանը: Այնուհետև Ադյուսակ 4.3-ում նշեցինք, որ երբ որևէ առանձին անցում սկսվում է մի նախնական բազայից, որը հիշեցնում է մեր ամբողջատիրական կամ հետամբողջատիրական կատարելատիպը, սա հինգ ոլորտներից *յուրաքանչյուրում* անպայման ենթադրում է մի շարք շատ հստակ ու դժվարին խնդիրների լուծում, որոնք պետք է իրականացվեն նախքան այդ հասարակարգը կկարողանա դառնալ կայացած ժողովրդավարություն:

Քանի որ մինչ այժմ Հարավային Եվրոպայում կամ Հարավային Ամերիկայում մեր դիտարկած ոչ ժողովրդավարական վարչակարգերից ոչ մեկն ամբողջատիրական կամ հետամբողջատիրական չէր, այստեղ՝ 4-րդ մասում, մեր դիտարկելիք բոլոր երկրների (ներառյալ՝ Լեհաստանը) մարտահրավերներն, այսպիսով, իրենց տեսակով տարբերվում են մինչև այժմ մեր քննարկածներից: Թեև մեր փաստարկը նկարագրված է նաև Ադյուսակներ 1.1-ում և 4.3-ում (և մենք հորդորում ենք ընթերցողին նորից վերադառնալ այդ ադյուսակներին) և էմպիրիկորեն կհետազոտվի հետագա գլոխներում, այնուամենայնիվ, օգտակար կլինի այստեղ կանգ առնել՝ ցուցադրելու որոշ ընդհանրական խնդիրներ, որոնք հատկապես արտահայտված են հասարակարգի հինգ ոլորտներից *յուրաքանչյուրում*՝ հաշվի առնելով ամբողջատիրական կամ հետամբողջատիրական ժառանգությունը:

21. Կլաուս Օֆֆեն ավելի հեռու է գնում և խոսում է եռաբնույթ (քաղաքական, տնտեսական ու սոցիալ-տարածքային) փոխակերպումների մասին, որոնք անհրաժեշտ են: Տե՛ս «Կապիտալիզմ ժողովրդավարական կառուցվածքով: Ժողովրդավարության տեսությունը բախվում է եռաբնույթ անցման Արևելյան կենտրոնական Եվրոպայում» (*Capitalism by Democratic Design? Democratic Theory Facing the Triple Transition in East Central Europe*), translated by Pierre Adler, Social Research 58 (Winter 1991): 865-92):

## Քաղաքացիական հասարակություն

Դասական մոտեցմամբ այս արտահայտության մեջ պետք է ներառել այն կազմակերպություններն ու խմբերը, որոնք հարաբերականորեն անկախ են պետությունից: Եթե մենք կիրառենք այս սահմանումը, ապա գլխավոր դիտարկումն այն կլինի, որ Լեհաստանի մասնակի բացառությամբ, Արևելյան Եվրոպայում և ԽՍՀՄ-ում անցման ժամանակ գոյություն ունեցած միությունների, գյուղատնտեսական կոլեկտիվների, մշակութային հանրույթների, հաղորդակցման համակարգերի և այլ կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը նախապես ստեղծվել էր ամբողջատիրական ժամանակաշրջանում և կուսակցական պետության կողմից պահպանվել էր անգամ հետամբողջատիրական ժամանակահատվածում: Հակահետախուզության գործակալների քողարկված, բայց իրականում հայտնի և որոշ դեպքերում զուգահեռ ներկայությունը լրացուցիչ կերպով թուլացնում էր այս կազմակերպությունները և հաճախ վարկաբեկում դրանց առաջնորդների՝ անցման մեջ դեր խաղալու կարողությունը: Այս երևույթն առավել կարևոր էր ԳՌՀ-ում, Չեխոսլովակիայում, Ռումինիայում, Բուլղարիայում և ԽՍՀՄ-ում: Ի տարբերություն դրա՝ Հարավային Եվրոպայի և Հարավային Ամերիկայի ավտորիտար վարչակարգերում չնայած արհմիութենական, ձեռնարկատիրական և լրագրային շատ կազմակերպություններ դաժանորեն ճնշվում էին, միաժամանակ դրանց մեջ ամբողջությամբ ներդրված չէին որևէ պաշտոնական կուսակցության կամ անգամ ոստիկանության ու հակահետախուզության գործակալներ:

Կրոնի մասին պետք է հատուկ խոսել: Բոլոր հասարակություններում կրոնն այն սոցիալական իրականությունն է, որն առավել դժվար է կառավարվում իշխանությունը կրողների կողմից: Կոմունիզմը՝ աթեիզմի իր հայացքներով, հատկապես պարտավորվել էր կրոնի դերը որքան հնարավոր է սահմանափակել քաղաքացիական հասարակությունում: Կրոնների միջև, սակայն, գոյություն ունեին կարևոր տարբերություններ: Ուղղափառ քրիստոնեությունը՝ կեսարապապական (*բացատրություն տողատակում՝ իմաստն այն է, որ հետևելով բյուզանդական ավանդույթին՝ կեսարը կամ միապետը միաժամանակ եկեղեցու գլուխն է, այլ կերպ ասած՝ քրիստոնեական թեոկրատիայի մի ձև է*) իր ժառանգությամբ և, հետևաբար, պետությունից կախվածության ու ազգային եկեղեցի լինելու իր հակվածությամբ, չէր կարող հիմք ծառայել ընդդիմադիր գործունեության համար: Լավագույն դեպքում այն սահմանափակ մշակութային այլախոհության մի փոքր աղբյուր էր: Որպես հետևանք՝ բացառությամբ հետկոմունիստական երկրներում ազգայնականության, այն չի եղել նոր լուրջ ղեկավարության կամ հարցերի ձևակերպման աղբյուր: Միջազգայնորեն կազմակերպված հռոմեական կաթոլիկ եկեղեցու ներկայությունը (հատկապես Լեհաստանում և Լիտվայում) և բողոքական այլախոհները (հատկապես՝ Արևելյան Գերմանիայում 1980-ականների վերջին) նպաստեցին մեկ այլ քաղաքացիական հասարակության ստեղծմանը:

Ժողովրդավարական հասարակություններում կրոնը, եկեղեցիները և դրանց հետ կապված կամավորական խմբերը կարևոր դեր են խաղում մարդկանց միավորելու, բարոյական դիրքորոշումները հստակորեն ձևակերպելու (որոնք հաճախ ունեն քաղաքական ներիմաստներ) և տարբեր խմբերի շահերի կազմակերպմանն օգնելու գործում: Այս առումով զանգվածային աշխարհիկացումը կարող է թուլացնել ակտիվ հասարակություն-

նր: Կոմունիզմը միտումնավոր ջանքեր գործադրեց հասարակությունները աշխարհիկացնելու, կրոնական կազմակերպությունները հետապնդելու, վերահսկելու ու գտելու ուղղությամբ, իսկ դրանց հավատարիմ մնացածների համար արգելված էին բարձրագույն պաշտոններն ու էլիտար կրթությունը: Ռիչարդ Ռոուզի հավաքած տվյալները վկայում են այն մտտեցումների ձևափոխումները, որոնք առկա էին միայն որոշ կաթոլիկական երկրներում, ինչպես օրինակ՝ Լեհաստանում: Պատասխանողների թիվը, ովքեր ասել էին, որ իրենք երբեք չեն հաճախում կամ հազվադեպ են հաճախում եկեղեցի, կազմել էր 71.1% Բելառուսում, 68%՝ Ուկրաինայում, 68%՝ Չեխիայի Հանրապետությունում (որտեղ աշխարհիկացումն առաջ էր քաշվել դեռ կոմունիզմից առաջ), 66%՝ Բուլղարիայում և 66%՝ Հունգարիայում՝ ի տարբերություն Սլովակիայում 41%-ի, Ռումինիայում 46%-ի, Սլովենիայում 44%-ի և Լեհաստանում 16%-ի:<sup>22</sup>

Այլ միջավայրերում սովորաբար քաղաքացիական հասարակության մաս համարվող կազմակերպությունների մեծամասնությունը կոմունիստական Եվրոպայում ոչ միայն ինտեգրվել էր կուսակցական պետության մեջ, այլև դրանք ունեին նյութական ներկայություն՝ շահառությունը մի շարք պետական դոտացիաներից, ինչը հաճախ դեռ շարունակվում է: Ուստի անպայման չէ, որ ինքնուրույն քաղաքացիական հասարակության մեջ նման պոտենցիալ գործող անձանց գիտակցված շահից բխի անկախանալ *ցանկանալը*: Հետկոմունիստական Եվրոպայում՝ բուլղարական կոլտնտեսություններում, լեհական հանքերում և ռուսական գործարաններում աշխատող շատ բանվորներ, բոլոր երկրներում Գիտությունների ակադեմիայի զանգվածային համակարգերի մտավորականներ կամ պետության կողմից ֆինանսավորվող հարյուրավոր այլ կազմակերպություններում ընդգրկված մարդիկ անհանգստանում էին, որ իրենք քվեարկելիս կլինեն իրենց նյութական շահի դեմ, եթե սատարեն դեպի շուկան կողմնորոշված ժողովրդավարների մեծ մասի կողմից առաջարկվող ուստոպիստական այլընտրանքներին: Կարևոր է շեշտել այն, որ այդ նույն կորստի առջև կանգնելու վտանգը տարածվում էր նոմենկլատուրայից շատ ավելի հեռու գտնվող հասարակության շերտերում: Արևելյան Եվրոպայում շատ քաղաքացիներ ամեն օր ապրում են իրենց ապագայի նպատակների ու ներկա նյութական շահերի միջև որոշակի լարվածության պայմաններում:

Այս հնարավոր հետևանքների առաջատար վերլուծաբաններից մեկը՝ լեհ սոցիոլոգ Էդմունդ Մոկշիցկին, պնդում է, որ սխալ է չհասկանալը, որ «այսպես կոչված իրական սոցիալիզմը, այսինքն՝ այն համակարգը, որը ձևավորվել էր Խորհրդային Միությունում և Եվրոպայի սոցիալիստական երկրներում, սոցիալական համակարգ էր արտահայտության խիստ իմաստով. այն ուներ իր ուրույն հավասարակշռության մեխանիզմները, իր սեփական դինամիկան և իր առանցքային առանձնահատկությունները վերարտադրելու ունակությունը»:<sup>23</sup> Բուլղարիայում և Ռումինիայում երկու միմյանց հաջորդող ընտ-

22. Եկեղեցի հաճախելու մասին տվյալներ, տե՛ս Ռիչարդ Ռոուզ և Քրիստիան Հաերպֆեր, «Հարմարվելով փոխակերպմանն Արևելյան Եվրոպայում. նոր ժողովրդավարությունների բարոմետր 11» (Richard Rose and Christian Haerpfer, "Adapting to Transformation in Eastern Europe: New Democracies Barometer-11", Studies in Public Policy no. 212 (1993): table 35):

23. Տե՛ս նրա մտածելու տեղիք տվող «Իրական սոցիալիզմի ժառանգությունը, խմբային շահերն ու նոր ուստոպիայի որոնումը» ("The Legacy of Real Socialism, Group Interests, and the Search for a New Utopia"), Վալտեր Կոննորի և Պյոտր Պլոժայսկու խմբ.՝ «Փախուստ սոցիալիզմից. լեհական ուղին» (Walter

րությունների ժամանակ հին վարչակարգի հետ կապված խմբերի շարունակվող ուժեղ մասնակցությունը և Լիտվայում, Լեհաստանում ու Հունգարիայում կոմունիստների հետ կապված կուսակցությունների վերադարձը իշխանության 1992-94թթ. ցույց են տալիս, թե իրական շահերի մեջ սոցիոլոգիապես որքան խոր են մխրճված «իրական սոցիալիզմի» հետ կապված խմբերը: Մեկ այլ տեղ Մոկչիցկին և իր համահեղինակը քննադատում են «ժողովրդավարության անցման» վերաբերյալ գրականության հեղինակների մեծ մասին իրենց վերլուծություններում այս հարցը չարծարծելու համար. «Իրականում գոյություն ունեցող սոցիալիզմը՝ ժխտելով՝ ժողովրդավարությունը հռչակվել էր որպես ավետյաց երկիր... Մի կարևոր պարադոքս էր, սակայն, ծագել 1989 թվականից: Այն դեպքում, երբ արևմտաեվրոպական ու ամերիկյան իրականության մեջ ժողովրդավարությունը հռչակվել և ինստիտուցիոնալացվել էր միննույն սոցիալական խմբերի կողմից, Արևելյան Եվրոպայում, ինչն առավել վառ երևաց Լեհաստանի դեպքում, այն սոցիալական խմբերը, որոնք խոսեցին ժողովրդավարության մասին, հենց այն խմբերն էին, որոնց համար ժողովրդավարության ինստիտուցիոնալացումն իր ազատական կապիտալիստական ձևով սպառնալիք էր հանդիսանում... Անցման վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումներից ոչ մեկը համապատասխան ուշադրության չի արժանացրել լենինիզմի ներքո զարգացում ապրած սոցիալ-տնտեսական կառույցներն ու այն ազդեցությունը, որ դրանք ունեն քաղաքական ժողովրդավարացման գործընթացների վրա:<sup>24</sup>

### Քաղաքական հասարակություն

Երբ անդրադառնում ենք քաղաքական հասարակությանը, ապա ապագայի մասին ուտոպիստական ձգտումների և ներկայիս կյոթապաշտական շահերի միջև առկա լարվածությունը հետամբողջատիրության համեմատաբար համահարթված համատեքստում խնդրահարույց է այն առումով, թե արդյոք ներկայացուցչական է լինելու քաղաքական դաշտը: Քաղաքական գործիչները հիմնադիր ընտրությունների ժամանակ հաճախ հայտարարում էին, որ ներկայացնում են անկախ ձեռնարկատերերին ու անկախ արհմիություններին, խմբեր, որոնք Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասում դեռևս գոյություն չունեին: Ժողովրդավարական քաղաքական հասարակությունը, բացի այդ, չի նշանակում միայն քաղաքական ներկայացուցչություն. այն նաև նշանակում է քաղաքական կուսակցություններ: Մակայն Արևելյան Եվրոպայում կուսակցական պետության իշխանության քառասունհինգ, իսկ Խորհրդային Միությունում ավելի քան յոթանասուն տարիները հենց *կուսակցություն* բառին տվել են բացասական ենթատեքստ ամբողջ տարածաշրջանում: Իսկապես, Արևելյան Եվրոպայում գրեթե ոչ մի խոշոր քաղաքական շարժում իրեն կուսակցություն չի անվանում (ինչպես օրինակ՝ «Համերաշխությունը»՝ Լեհաստանում, «Քաղաքացիական ֆորումը»՝ Չեխոսլովակիայում, «Հունգարիայի ժողովրդավարական ֆորումը», ժողովրդական ճակատները՝ Մերձբալթյան հանրապե-

D. Connor and Piotr Ploszajski, eds., *Escape from Socialism: The Polish Route* (Warsaw: IFiS Publishers, 1992), 269):

24. Էդմունդ Մոկչիցկի և Արիստա Մարիա Սիրտաուտաս, «Ժողովրդավարության հռչակումն ու ինստիտուցիոնալացումը Լեհաստանում» (Edmund Mokrzycki and Arista Maria Cirtantas, "The Articulation and Institutionalization of Democracy in Poland", *Social Research*, 60, no. 4 (1993): 787-819):

տություններում և «Ժողովրդավարական ուժերի միությունը»<sup>25</sup> Բուլղարիայում): Ավելին, տարածաշրջանում խարիզմատիկ առաջնորդները՝ Վալենսան Լեհաստանում, Հավելը՝ Չեխոսլովակիայում և Ելցինը՝ Ռուսաստանում, հրաժարվեցին միանալ ու ղեկավարել քաղաքական կուսակցությունները:

Այստեղ օգտակար է համեմատությունը կոմունիստական Եվրոպայի և այլ տարածաշրջանների հետ: Ի հակադրություն Արևելյան Եվրոպայի և Խորհրդային Միության՝ ընդդիմադիր կուսակցություններն Իսպանիայում, Ուրուգվայում և Չիլիում պայքարում էին ավելի կայուն և ինքնուրույն քաղաքացիական հասարակության ստեղծման համար, սակայն նրանց եռանդի մեծ մասը նվիրված էր այլընտրանքային քաղաքական ապագայի ձևակերպմանը, մի ապագայի, որտեղ կուսակցությունները կխաղային առաջատար դեր:<sup>25</sup> Այս կուսակցությունները *նախքան* ժողովրդավարությանն անցումը մշակել էին մրցակցային այլընտրական քաղաքական ծրագրեր, սահմանել էին, թե ինչ են մտադրվում անել, երբ իշխանության գան ժողովրդավարական ընտրությունների միջոցով: Որոշ երկրներում քաղաքական կուսակցությունների ամբողջ սպեկտրը գոյությունը շարունակել է ընդհատակում, և, այսպիսով, մի «ոչ լեգալ» կամ «անլեգալ», սակայն իրական ու տեսանելի քաղաքական հասարակություն գոյություն է ունեցել անգամ ոչ ժողովրդավարական վարչակարգի ներքո:<sup>26</sup>

## Օրենքի գերակայություն

Ստորև անդրադառնում ենք օրենքի գերակայության ոլորտին և վերջինիս առաջնային կազմակերպական սկզբունքին՝ սահմանադրականությանը: Իհարկե, չկա կայացած ժողովրդավարություն առանց համեմատաբար ինքնուրույն օրենքի գերակայության: Որոշ իրավական ավանդույթներ և նորմեր, որոնք օգնում են ստեղծել ու պահպանել օրենքի հարաբերական ինքնուրույնությունը, այն են, որ իրավական օրենսգրքերը զգալի չափով մշակված են նախադեպի հիման վրա կամ իրենց սեփական ներքին տրամաբանությամբ: Բացի այդ, անկախ դատական համակարգը վճռորոշ դեր է խաղում հին օրենքների մեկ-

25. Ինչպես տեսանք, սրանից մեծ բացառություն է Բրազիլիան, որտեղ անցման ու կուսակցությունների աստղը քաղաքացիական հասարակությունն էր. դրանք գոյություն ունեին և խաղում էին նշանակալի դեր, մշտապես փոխում էին իրենց ինքնությունը:

26. *Տե՛ս Խուան Լինզի (Juan J. Linz) քննարկումը հանդուրժված, անօրինական, բայց և հատկապես ապօրինի ընդդիմության մասին Իսպանիայում Ֆրանկոյի ժամանակաշրջանի վերջում, «Ընդդիմություն վարչակարգի նկատմամբ և վերջինիս ներքո. Բսպանիայի օրինակը» ("Opposition to and under an Authoritarian Regime: The Case of Spain"), Ռոբերտ Դահլի խմբ.՝ «Վարչակարգեր և ընդդիմություններ» (Robert A. Dahl, ed., *Regimes and Oppositions* (New Haven: Yale University Press, 1973), 171-260, esp. 216-30): Չիլիում և Ուրուգվայում ցանկացած արտասահմանցի քաղաքական վերլուծաբան կարող էր երկու շաբաթվա այցելության ընթացքում և սովորաբար անցմանը նախորդող տասնամյակում փաստացի հանդիպել բոլոր այն քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին, որոնք հետագայում առաջ էին գալու որպես քաղաքական նշանակություն ունեցող (կամ ինքնին, կամ որպես բազմակուսակցական կոալիցիայի մաս) հիմնադիր ընտրությունների ժամանակ: Ինչպես կտեսնենք, Արևելյան Եվրոպայում միայն Հունգարիան էր (1988թ. դեկտեմբերից հետո), որ ինչ-որ չափով մտնե՛նում էր քաղաքական հասարակության նման՝ որոշ զարգացածության աստիճանի անցմանը նախորդող ժամանակահատվածում:*



նաբանման, նոր օրենքների սահմանադրականության և պետության կողմից օրենքների կիրառման գործում:

Օտոկուն ստալինիզմի ժամանակաշրջանում օրենքի ընկալումը բոլորովին այլ էր: Իսկապես, ԽՍՀՄ գերագույն դատարանի առաջին նախագահը 1927 թվականին գրել է, որ «Կոմունիզմ չի նշանակում սոցիալիստական օրենքների հաղթանակը, այլ սոցիալիզմի հաղթանակը ցանկացած օրենքի նկատմամբ»:<sup>27</sup> Ստալինի օրոք վարչակարգի առաջատար իրավական տեսաբան Ե. Բ. Պաշուկանիսն առաջ մղեց սկզբունքներ, որոնք ամբողջությամբ կախում ունեին կոմունիզմի հեղափոխական առաքելությունից:<sup>28</sup> Պաշուկանիսի կենտրոնական դոգմաներից մեկն ըստ էության այն էր, որ «գարգացած սոցիալիզմի օրոք ռազմավարությունն ու ծրագիրը կփոխարինեն օրենքին»:<sup>29</sup> Մեր վերլուծական նպատակներով, քանի որ առաջնորդն ու կուսակցական պետությունն ստեղծում են և՛ ռազմավարություն, և՛ ծրագիր, ապա իրավական համակարգի համար տեղ չկա՝ սահմանափակելու կամ պարտադրելու առաջնորդին կամ կուսակցական պետությանը: Սա, իհարկե, համապատասխանում է ամբողջատիրության կատարելատիպին, որի չորս որոշիչ բնութագրերից մեկն այն է, որ առաջնորդը «կառավարում է չորոշված սահմաններում»:

Ժամանակակից ժողովրդավարական սահմանադրականության սկզբունքային հատկանիշներից է այն, որ առաջնորդը կառավարում է «ոչ հստակ սահմաններում», ինչը նշանակում է, որ ընտրված քաղաքական առաջնորդները, պետությունը և անգամ քաղաքացիական բնակչությունը համաձայնության են եկել մի շարք բարդ «ինքնապարտադրման» մեխանիզմների շուրջ:<sup>30</sup> Օրենքով սահմանափակված ժողովրդավարական հասարակարգի այս ինքնապարտադրման հատկանիշներից մեկն այն է, որ գոյություն

27. Ամբողջատիրական ժամանակահատվածում օրենքի վերլուծության մասին տե՛ս Հարոլդ Բերման, «Արդարադատությունը ԽՍՀՄ-ում» (Harold J. Berman, *Justice in the USSR* (New York: Vintage, 1963); quotation is from p. 26): Բերմանի գիրքը նախապես պագրված է եղել Հարվարդի համալսարանի հրատարակչության կողմից 1950թ.:

28. Այս առումով Հիտլերի ու Ստալինի իրավական օրենսգրքերը նմանություն են ունեցել նախադեպը կամ իրավական տրամաբանության ներքին սկզբունքները անտեսելու տեսանկյունից: Նացիստների կողմից նախագծված "Volksgesetzbuch"-ի (Ժողովրդական օրենսգիրք), որը պետք է փոխարիներ տասնիններորդ դարի քաղաքացիական օրենսգրքին՝ "Bürgerliches Gesetzbuch", հողված 1-ում սահմանված էր հետևյալը. «Գերագույն օրենքը գերմանացի ժողովրդի բարեկեցությունն է» (հողված 1): «Գերմանական արյունը, գերմանացու պատիվը և ժառանգական առողջությունը պետք է մաքուր պահվեն ու պաշտպանվեն: Սրանք գերմանական ժողովրդի օրենքի հիմնական ուժերն են» (հողված 2): «Դատավորն իր որոշումների ընդունման մեջ ենթակա չէ որևէ հրահանգի: Նա օրենքը պարտադրում է լիակատար վստահությամբ, որը բխում է ընդհանուր փաստացի իրավիճակից և գործում է՝ համաձայն օրենքի ազգային-սոցիալիստական աշխարհայացքի վրա հիմնված մեկնաբանության» (հողված 20): Volksgesetzbuch: Grundregeln und Buch I. Entwurf und Erläuterungen, ներկայացված Յուստուս Վիլիելմ Հեդեմանի, դոկտոր Հայնրիխ Լեբմանի և դոկտոր Վոլֆգանգ Ջիբերտի կողմից (Munich: C. H. Beck, 1942):

29. Տե՛ս «Օրենք»-ի տակ գրվածը, Թոմ Բոթոմորի խմբ.՝ «Մարքսիստական մտքի բառարան» (Tom Bottomore, ed., *A Dictionary of Marxist Thought* (Cambridge: Harvard University Press, 1983), 276):

30. Հարուստ քննարկում ժողովրդավարական սահմանադրականության «ինքնապարտադրման» հարթության մասին, տե՛ս Ջոն Էլսթեր և Ռոն Սլեգստադ, խմբ.՝ «Սահմանադրականություն և ժողովրդավարություն» (Jon Elster and Rune Slagstad, eds., *Constitutionalism and Democracy* (Cambridge: Cambridge University Press, 1988), esp. the introduction by Jon Elster, pp. 1-18):

ունի օրենքների հստակ աստիճանակարգ՝ նրանցում փոփոխությունների նախապես սահմանված համեմատաբար խիստ նորմերով ու ընթացակարգերով:<sup>31</sup>

Պետք է ընդունել, որ այն երկրներում, որտեղ հասարակարգերը զարգացել են հետամբողջատիրության ուղղությամբ, սոցիալիստական իրավականությունն ինչ-որ չափով դառնում է սահմանափակող պետական ապարատի համար: Սակայն կուսակցական պետությունում կուսակցության «առաջատար դերը» դեռևս օրենքների մեծ մասը դարձնում է գործիքային և խստորեն կախված կուսակցության նախաձեռնությունից ու մեկնաբանությունից: Ավստրալացի հայտնի գիտնական Հ. Ռիգբին 1980թ. ընդգծել է «ինքնապարտադրման» թուլությունը հետամբողջատիրական սոցիալիստական իրավագիտակցության մեջ. «Խորհրդային սահմանադրությունը, անգամ դրա ամենավերջին տարբերակը լայնորեն հայտնի է որպես համակարգում իշխանության բաշխման մոլորեցնող և ոչ լիարժեք ուղեցույց... Խորհրդային համակարգի հիմնական կողմը՝ կուսակցություն-պետություն հարաբերությունը, կարգավորվում է, ինչպես միշտ արվել է, ըստ հայեցողության և ոչ թե՛ համաձայն օրենքի... Խորհրդային վարչակարգը ... երբեք պատրաստ չի եղել իրեն սահմանափակելու այն կանոններով, որոնք հենց ինքն է սահմանել»:<sup>32</sup>

Հետսոսալիսյան ժամանակահատվածում ծագած առավել կարևոր նոր նորմերից մի քանիսը ոչ այնքան նպատակաուղղված էին ամբողջ քաղաքացիական բնակչության համար ընդհանրական օրենքի գերակայությանը, որքան այն բանին, որ ստեղծվեն հատուկ ընթացակարգեր կուսակցության ղեկավար ների կողմից վերնախավի մնացած մասին վերահսկելու ազատությունը սահմանափակելու նպատակով: Կարևոր ընդհանրական պարտադրող ընթացակարգեր առաջ եկան միայն հասուն հետամբողջատիրական վարչակարգերում հարցերի որոշակի բնագավառների վերաբերյալ, որոնցում կուսակցությունը կայացրել էր որևէ կարևոր նախնական որոշում օրինական իրավունքներ տրամադրելու օգտին (օր.՝ մասնավոր սեփականության իրավունքները Հունգարիայում 1983թ. հետո): Կենտրոնական միտքն այն է, որ իրավական մշակույթը, հատկապես՝ «ինքնապարտադրող» ժողովրդավարական սահմանադրական մշակույթը, որը դրված է օրենքների աստիճանակարգի հիմքում, պետք է լինի նոր ժողովրդավարությունների ստեղծածը:

Եվս մեկ անգամ նշենք, որ համեմատած հետկոմունիստական Եվրոպայի հետ մեր դիտարկյալ էրկար գոյատևած ավտորիտար որոշ բռնապետություններ՝ Ֆրանկոյի օրոք՝ Իս-

31. Օրինակ՝ մայրցամաքային Եվրոպայի բոլոր տևական ժողովրդավարություններն ըստ էության ունեն օրենքների նույն քառակի աստիճանակարգությունը, որին սատարում է դատական համակարգը, և եթե այդպիսին կա, սահմանադրական դատարանը: Նվազող աստիճանակարգային հերթակալությունը դրանք են՝ (1) սահմանադրությունը, որը կարող է փոխվել միայն նախապես հաստատված, համեմատաբար ոչ ճկուն կանոններով, որոնց համար անհրաժեշտ են հատուկ մեծամասնություններ, (2) օրենքներ, որոնք ընդունվել են խորհրդարանի կողմից, սակայն չեն կարող խախտել սահմանադրությունը, (3) հրամանագիր-օրենքներ, որոնք արձակվել են կարինետի կողմից, որոնք սովորաբար ունեն սահմանափակ տևողություն և վավեր մնալու համար պետք է խորհրդարանի կողմից ակտիվ կամ պասիվ կերպով հաստատվեն և (4) վարչական հրամաններ, որոնք կարող են արձակվել նախարարների կողմից, սակայն որոնք չեն կարող խախտել վերը նշվածներից ոչ մեկը:

32. Ռիգբի, «Հասկացութենական մոտեցում իշխանությանը, իրավասությանն ու ռազմավարությանը Խորհրդային Միությունում» (T. H. Rigby, "A Conceptual Approach to Authority, Power and Policy in the Soviet Union"), Ռիգբիի, Արչի Բրաունի և Պիթեր Ռեդդեյի խմբ.՝ «Իշխանությունը, իրավասությունն ու ռազմավարությունը ԽՍՀՄ-ում» (T.H. Rigby, Archie Brown, and Peter Reddaway, eds., *Authority, Power and Policy in the USSR* (New York: St. Martin's Press, 1980), 12):

պանիան, Սալագարի օրոք՝ Պորտուգալիան և Պինչետի օրոք՝ Չիլին, ավելի շատ բան էին թողել, որի վրա կարելի էր շարունակել առաջ գնալ սահմանադրական մշակույթի ուղիով: Այս բոլոր երկրներում իրավաբանական համալսարանները պահել էին իրենց ավանդական մոտեցումները, իսկ ուսանողներին հասու էր դարձել այլ երկրների՝ ներառյալ ժողովրդավարությունների իրավական իմացությունը: Բոլոր երեք դեպքերում էլ արևմտյան ժողովրդավարական իրավունքի սկզբունքների մեծ մասը՝ թեև չարաշահված կամ գործնականում չկիրառվող, նորմատիվորեն կամ տեսականորեն հիմնովին չվիճարկվեցին օրենքի ու իրավական մտածողության մի միանգամայն նոր համակարգի կողմից:<sup>33</sup>

### Գործուն պետություն

Հաջորդ խնդիրը վերաբերում է գործուն պետական բյուրոկրատական ապարատին: Ամբողջատիրական կամ հետամբողջատիրական ժառանգություն ունենալու պարագայում արդյոք որքանով է կիրառելի պետական բյուրոկրատական ապարատը ժողովրդավարությանը հնարավոր անցման սկզբում: Մենք համակարծիք ենք Յոզեֆ Շումպետերի հետ, որ ժամանակակից ժողովրդավարություններին լավագույն ծառայությունը մատուցվում է այն դեպքում, երբ ընտրված քաղաքական գործիչներին (հաճախ՝ սկսնակ) սատարում է պրոֆեսիոնալ պետական պաշտոնյաների՝ բյուրոկրատների մի շերտ: Բյուրոկրատները՝ որպես այդպիսին, ժողովրդավարական չեն, բայց նրանք դեր ունեն ժողովրդավարություններն արդյունավետ դարձնելու գործում:<sup>34</sup> Սակայն ելնելով այն բանից, թե ինչ չափով է նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգի բյուրոկրատիան հավաքագրվել՝

33. Իսպանիայում Ֆրանկոյի վարչակարգը գոնե ձևական հարգանք մատուցեց 1889թ. Իսպանիայի քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածին, որը սահմանում էր նորմերի իրավական աստիճանակարգը՝ լրացված օրենքի ընդհանուր սկզբունքներով: Հավելենք, որ հատկապես վարչակարգի վերջին տարիներին վարչարարության ենթարկումն իրավական վերահսկողության և վարչական դատարաններին ընդլայնվեց՝ համեմատած նախաֆրանկոյական անցյալի հետ: Պորտուգալիայի վերջին բռնապետն իրավագիտության պրոֆեսոր Մարսելյո Կատանուն էր: Իր մշակած ստանդարտ նորմատիվային ակտերում նա հարգանքի մեծ տուրք էր մատուցում իրավագիտության արևմտյան սկզբունքներին:

34. Թեև մենք պարտադիր համաձայն չենք նրա բոլոր ասածներին, Յոզեֆ Շումպետերի դասական դիտարկումները արժե մեջ բերել մանրամասն. «Ժամանակակից արդյունաբերական հասարակությունում ժողովրդավարական կառավարությունը պետք է կարողանա ղեկավարել... ծառայությունները բարի համբավ ու ավանդույթ ունեցող լավ վարժեցրած բյուրոկրատիայի, որն օժտված է պատասխանատվության ուժեղ զգացումով և ոչ պակաս ուժեղ թիմային ոգով (esprit de corps): Նման բյուրոկրատիան գլխավոր պատասխանն է սկսնակների կառավարության մասին փաստարկին: Պատենցիալ կերպով դա միակ պատասխանն է այս երկրում այնքան հաճախ լավող այն հարցին, թե ժողովրդավարական քաղաքականությունն իրեն դրսևորել է որպես անընդունակ՝ ստեղծելու տեղական կառավարման լավ մարմին...»

Բավարար չէ այն, որ բյուրոկրատիան պետք է լինի արդյունավետ՝ ընթացիկ վարչարարության և բանիմաց խորհրդատվություն տրամադրելու մեջ: Այն պետք է նաև բավական ուժեղ լինի՝ ուղղորդելու, իսկ անհրաժեշտության դեպքում սովորեցնելու այն քաղաքական գործիչներին, ովքեր ղեկավարում են նախարարությունները: Սա անելու համար նա պետք է կարողանա սկզբունքներն ինքնուրույնաբար մշակել և իննել բավական անկախ դրանք հաստատելու համար: Նա ինքնին պետք է լինի մի «իշխանություն»: Յոզեֆ Շումպետեր, «Կապիտալիզմ, սոցիալիզմ և ժողովրդավարություն» (Joseph A. Schumpeter, *Capitalism, Socialism and Democracy* (New York: Harper and Row, 1975), 293):

համաձայն հին վարչակարգի կողմից սահմանված քաղաքական չափանիշների և որքանով խորն է սերտաճել հին վարչակարգի քաղաքական ղեկավարության հետ, այն պիտանելիության առումով կասկածելի է դառնում նոր վարչակարգի համար: Պոտենցիալ խնդիրները, որոնք առկա կլինեն վարչակարգի ամբողջատիրական կամ հետամբողջատիրական կատարելատիպից անցման սկզբում, հետևյալն են՝ (1) կուսակցության և պետության միջև հստակ տարբերակման բացակայությունը (անշուշտ, կուսակցությունը սովորաբար տիրում է պետությանը)<sup>35</sup> նշանակում է, որ կուսակցության անկումը, կազմալուծումը կամ զանգվածային մերժումը նույնպես կարող է խանգարել պետական բյուրոկրատական ապարատի մեծ մասի բնականոն գործունեությանը:<sup>36</sup> (2) Արդյունավետությունը վտանգվում է, երբ բազմաթիվ պոտենցիալ առումով հավատարիմ ու արդյունավետ քաղաքացիական ծառայողներ աշխատանքից ազատվում են կուսակցության հետ կապ ունենալու պատճառով կամ երբ վարչական պաշտոններն անմիջապես «բնակեցվում են» հակավարչակարգային (սակայն հնարավոր է՝ ապիկար) ուժերի կողմից: Ե՛վ զանգվածային գոտումը (ինչպես Արևելյան Գերմանիայում), և՛ որևէ զգալի փո-

35. Առավել առատորեն վավերագրված օրինակն Արևելյան Գերմանիան է: Հատկապես արտահայտիչ ու հեղինակավոր ինքնակարագրություններ կարելի է գտնել ԳՂՀ-ի մասին երկխառտրանի տեղեկագրքում, որը տպագրվել է հենց վարչակարգի կողմից 1985թ. որպես ԳՂՀ տեղեկագիրք: Հատկապես կարևոր է "S.E.D." (պաշտոնական կուսակցությունը, Գերմանիայի սոցիալիստական միասնության կուսակցությունը) և "Staatsapparat" (պետական ապարատ) վերնագրերի տակ գրվածը: Բարձրագույն պետական պաշտոնյաները նստում էին "Partieleitung"-ում (կուսակցության ղեկավարություն), իսկ կուսակցության բարձրագույն պատասխանատուները մասնակցում էին պետական մարմինների "Sitzungen"-ին (ժողովներ): Քաղբյուրոյի և կենտրոնական կոմիտեի որոշումներն ամբողջովին պարտադիր էին պետության համար: ԳՂՀ վարչակարգի տեղեկագիրքը բացահայտորեն սահմանում էր, որ «պետության մեջ ղեկավար գործառույթներն իրագործվում են SED այն անդամների կողմից, ովքեր դե ֆակտո պետական գործառույթները կատարում են որպես կուսակցության հանձնակատարներ» (2:1274): Իսկապես, պետական ապարատն ընդհանրապես օժտված չէր ոչ մի մասնագիտական ինքնավարության և տեղեկագրքում պատկերված էր որպես կուսակցության գործիք: «Կուսակցության ապարատը [S.E.D.-ի] ղեկավարում է պետությանը որպես կուսակցության առավել կարևոր գործիք» (2: 1275): Պետության ներքում կուսակցական կառույցները և գաղտնի ոստիկանությունը լրացնում են վերահսկողության մեխանիզմները (2a188-89): Պետական ապարատում 2125054 արևելագերմանացիներ ուղղակիորեն աշխատում են իրենց կառավարության համար [Կլաուս Քյոնիգ, «Բյուրոկրատական ինտեգրում վերնախավի տեղափոխմամբ», "Bureaucratic Integration by Elite Transfer", Governance 6, no. 3 (1933), էջ 386-96], որոնցից մոտ 500000 կուսակցության կողմից քննվում էին որպես նոմենկլատուրայի նշանակումներ [Գերդ Մեյեր, Die DDR Machtelite in der A Honecker (Tubingen: Francke, 1991), էջ 891: ԳՂՀ-ի վերաբերյալ հետազոտությունները նախքան 1989թ. վարչակարգի փոփոխությունը հանգել են այն եզրակացության, որ նոմենկլատուրան ընդգրկում էր բոլոր միջին և բարձր օղակի պաշտոնները, որից մի փոքր թիվ պահվում էր Ազգային ճակատի ոչ SED կուսակցությունների անդամների համար [Գերդ Նոյգեբաուեր, "Die führende Rolle der SED", Իլդե Շպիտմանի խմբ.՝ "Die SED in Geschichte und Gegenwart" (Deutschland Archiv, 1987) էջ 70]: Բանակի սպաների ավելի քան 99%-ը SED անդամ էր (նույն տեղում, էջ 69): «Kleines Politisches Wörterbuch»-ը [Փոքր Քաղաքական բառարան] (Berlin: Dietz, 1973) սահմանում է "Kaderpolitik"-ը (կադրային քաղաքականություն), հետևաբար, բավական լայն ձևով որպես «ընտրություն, կրթություն, որակավորում, ինչպես նաև աշխատանքի տեղավորում ունակ կադրերի, որոնք նվիրված են աշխատավոր դասակարգի գործին և նրա մարքս-լենինյան կուսակցությանը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում» (էջ 390):

36. Կուսակցության պայթյունի առավել ծայրահեղ օրինակներ տեղի ունեցան նախկին Խորհրդային Միությունում և Հարավսլավիայում: Խորհրդային Միությունում կուսակցական պետության բաժանվածությունը քննարկում ենք Գլուխ 19-ում:

փոխության բացակայությունը (ինչպես Ռումինիայում) ժողովրդավարության համար խնդիրներ կստեղծեն: (3) Խնդիրներ է հարուցում ավանդաբար խրախուսվող «գործ տալը»: Վարչակարգերը, որոնք նման են ամբողջատիրությանը կամ անգամ վաղ հետամբողջատիրությանը, ունեն համընդգրկուն գաղափարախոսություններ ու կազմակերպական կառուցվածքներ: Ուստի նման վարչակարգերում գոյություն ունի սովորական քաղաքացիների (ոչ միայն հակահետախուզության մասնագետների) մեջ այլ քաղաքացիների մասին տեղեկություններ տալու կամ լրտեսելու հակվածություն առաջացնելու միտում:<sup>37</sup> «Գործ տալու» այս ժառանգությունն անխուսափելի խնդիրներ է հարուցում նոր վարչակարգերի առջև, որոնցից առավել աչքի ընկնողը շատ քաղաքացիների կողմից պետական ապարատի «մաքրման» պահանջն է, անգամ էթե սա խախտում է պատշաճ գործընթացն ու քաղաքացիական իրավունքներն ու ստեղծում է լեգիտիմության խնդիրներ:<sup>38</sup> Եթե նոր ժողովրդավարությունները զբաղվեն լայնածավալ մաքրման քաղաքականությամբ, մեկ այլ հետևանք կարող է լինել այն, որ մաքրման սպառնալիքի տակ գտնվողները և նրանց ընտանիքները կարող են շրջվել ու քվեարկել իրավահաջորդի՝ բարեփոխված կոմունիստական կուսակցությունների օգտին՝ որպես ազդեցիկ խումբ իրենց շահերն առաջ տանելու համար:

Ամբողջատիրական կամ վաղ հետամբողջատիրական այս ժառանգությունը կտրուկ տարբերվում էր նման երևույթից այն ավտորիտար վարչակարգերում, որոնք մենք դի-

37. Օրինակ՝ Արևելյան Գերմանիայում տասնութ միլիոնից ոչ ավելի բնակչությունից «Շտագի» (Stasi) հետախուզական գործեր էին պահվում վեց միլիոն հպատակների անունով, որոնցից չորս միլիոնը ԳՂԷ-ի բնակիչներ էին: «Շտագի» լրիվ դրույթով աշխատողների (Hauptamtliche Mitarbeiter) առավելագույն թվաքանակը 85000 էր, ճշգրիտ թիվը 1982թ. դրությամբ 81487 էր, ըստ Գաուկ-Բեհորդեի, որը երբեմն նշում է ամենաբարձր 99000 թիվը: Դևիդ Գիլ և Ուլրիխ Շրոտեր (David Gill and Ulrich Schroter), *Das Ministerium für Staatssicherheit: Anatomie des Mielke-Imperiums* (Berlin: Rohwolt, 1991), 34-37: «Գործ տվողների» ընդհանուր թիվը (Informelle Mitarbeiter) հասնում էր առնվազն 109000-ի, որոնց մեծ մասը ստորագրել էին համագործակցության գրավոր փաստաթղթեր, սակայն, հնարավոր է՝ նրանց թվաքանակն ավելի շատ լինի, քանի որ բազմաթիվ փաստաթղթեր ոչնչացվել էին վարչակարգի փոփոխության ժամանակ: Գաուկը նշում է 150000 թիվը հեռուստատեսային մի ելույթի ժամանակ: Նա նաև նշում է 100000 "Gehaltsempfänger"-ի (աշխատավարձ ստացող անձինք) մասին իր գրքում, Յոակիմ Գաուկ, "Die Stasi-Akten" (Hamburg: Rohwolt Taschenbuch, 1991), էջ 27:

38. Այս խնդիրներն առավել դաժան էին Չեխոսլովակիայում, Բուլղարիայում և Արևելյան Գերմանիայում (որոնք բոլոր երեքն էլ 1989թ. մոտենում էին «վաղ» կամ «ասեցված» հետամբողջատիրության նկարագրությանը): Չեխոսլովակիայում խորհրդարանն անցկացրեց գտման մասին մի օրենք, որը խախտում էր ժողովրդավարական օրենքների ու քաղաքացիական ազատությունների բազմաթիվ հիմնական սկզբունքները (տե՛ս Գլուխ 17): Բուլղարիայում գտման հարցի շուրջ երկու մասի բաժանվեց «ժողովրդավարական ուժերի միությունը»՝ «հեղափոխական ժողովրդավարներ» և «ընթացակարգային ժողովրդավարներ»: Գերմանիայի պատրաստի «ժառանգող պետությունը»՝ Արևմտյան Գերմանիան, հաղթահարեց այս ժառանգությունը մի այնպիսի գտմամբ, որը չափազանց դժվար (և ժողովրդավարական առումով վտանգավոր) կլինի նոր ժողովրդավարությունների մեծ մասի համար: Օրինակ, նոր Բունդեսլանդերի նախարարությունների վարչական բոլոր մակարդակների աշխատողների 27%-ը ներմուծվեց Արևմուտքից և բարձրագույն պաշտոնների նշանակումների 51%-ը նույնպես համարվեց այդպիսի ներմուծված աշխատողներով: Բրանդենբուրգի արդարադատության վարչությունում արևմտագերմանական դրսից ընդունված աշխատողների թվաքանակը հասավ 70%-ի: ԳՂԷ-ի մասին տվյալները մեզ տրամադրել է Դանիել Ֆրիդհայմը Յեյի համալսարանի իր առաջինից դոկտորական թեզից ԳՂԷ-ում վարչակարգի փոփոխության մասին: Տե՛ս նաև Քյոնիգ, «Բուլղարիայում և ինտեգրում վերնախավի տեղափոխմամբ» (Keonig, "Bureaucratic Integration by Elite Transfer"):

տարկեցինք Մաս 2-ում և 3-ում:<sup>39</sup> Այնտեղ «գործ տալու» ժառանգությունը (և, հետևաբար, մաքրման պահանջը) ավելի նվազ ծանր էր, որովհետև քաղաքացիների լրտեսումը մեծ մասամբ կատարվել էր պետական հակահետախուզության անդամների կամ պատժիչ ապարատի և ոչ թե՛ սովորական քաղաքացիների կողմից: Անտարակույս, շատ ավտորիտար վարչակարգեր թողնում են զինվորականության, ոստիկանության և հետախուզական գործակալությունների կողմից մարդու իրավունքների խախտումների դժվարին ժառանգություն: Եվ ինչպես մենք փաստել ենք, նոր ժողովրդավարական կառավարություններն Արգենտինայում, Ուրուգվայում և Չիլիում քիչ հաջողության են հասել մարդու իրավունքները խախտողներին ազատագրելու գործում: Սակայն քանի որ այս բարձրաստիճան զինվորականների վարչակարգերի շրջանակն ավելի նվազ էքստենսիվ էր, քան ամբողջատիրական կամ անգամ վաղ հետամբողջատիրական վարչակարգերինը, և քանի որ չկային պաշտոնական պետական կուսակցություններ Արգենտինայում, Ուրուգվայում կամ Չիլիում (և միայն մի համեմատաբար թույլ պաշտոնական կուսակցություն՝ Բրազիլիայում), ապա պետական ապարատի բազմաթիվ անդամներ իրենց տեղերում թողնվեցին. կամ պաշտոններն ամբողջովին չէին քաղաքականացվել ավտորիտար ժամանակահատվածում, կամ գործում էին վերը նշված երկու գործոնները: Ուստի և պետական ապարատի ավելի մեծ մասն էր «առկա» ու կիրառելի նոր ժողովրդավարական ուժերի կողմից անցման ընթացքում և անցումից հետո:<sup>40</sup> Այս առումով անցմանը նախորդող ժամանակահատվածում պետական ապարատի քաղաքականացման աստիճանի տարբերությունը հատկապես սուր է Արևելյան Գերմանիայի և Իսպանիայի միջև: Արևելյան Գերմանիայում կային 500000 նոմենկլատուրային պաշտոններ, Իսպանիայում այդպիսիք գրեթե չկային: Ֆրանկոյի մահվանը նախորդող տասնամյակում քաղաքացիական ծառայություն մուտքը մրցութային քննության միջոցով էր, որի ժամանակ թեկնածուներն առանձնանում էին միայն համարներով: Իսկապես, մինչև 1960թ. իսպանական կառավարությունում միակ պաշտոնը, որը պահանջում էր անդամակցություն պաշտոնական կուսակցությանը՝ «Մովիմիենտո նասիոնալին» (Movimiento Nacional), նահանգի կառավարչի պաշտոնն էր, որովհետև այդ պաշտոնը զբաղեցնողը նաև «Մովիմիենտո» կազմակերպության նահանգային մասնաճյուղի ղեկավարն էր հանդիսանում:<sup>41</sup>

39. Սակայն այն վարչակարգերը, որոնք մոտենում են սուլթանիստական կատարելատիպին, կանխատեսվում է, որ կունենան հին պետական ապարատի կիրառելիության լուրջ խնդիրներ, որովհետև ըստ սահմանման՝ սուլթանը չի հարգում ոչ մի բյուրոկրատական նորմ: Ինչպես մենք (և Վեբերը) հիմնավորեցինք, սուլթանիստական վարչակարգում չկա «պետական աշխատանքում առաջխաղացում», կան միայն սուլթանի «տնային տնտեսության անձնակազմի» անդամներ:

40. Օրինակ, թեև զինվորականությունն Ուրուգվայում արգելեց ընտրությունները, երբ ստանձնեց իշխանությունը 1973թ., այն ոչինչ չարեց՝ փոխելու ընտրական գրանցամատյանների կամ տարածքների ավանդական համակարգը: Այն ձեռք չտվեց նաև Ուրուգվայի խիստ հմուտ և չեզոք ընտրական դատարանին: Հետևաբար, երբ զինվորականությունը որոշեց անցկացնել սահմանադրական հանրաքվե 1980թ., պրոֆեսիոնալ բյուրոկրատները կիրառեցին Ուրուգվայի ավանդական և, ըստ էության, արտաքին «ազդեցությունների» դեմ ստեղծված կայուն ժողովրդավարական ընտրական ընթացակարգերը: Այս հանգամանքներում ժողովրդավարական ընդդիմությունը կարողացավ օգտվել այս «կիրառելի պետությունից» և պարտության մատնել զինվորականության՝ կիսավտորիտար սահմանադրության առաջարկությունը:

41. Ուշագրավ է այն, որ անգամ այս մեկ նոմենկլատուրային պաշտոնում նշանակվողների մեծ մասը դառնում է կուսակցության անդամ միայն կառավարչի պաշտոնում նշանակվելուց հետո: Ան-

## Տնտեսական հասարակություն

Մենք կեզրափակենք կայացման մեր հինգ խնդիրներից վերջինի համառոտ քննարկմամբ, որը վերաբերում է տնտեսական հասարակությանը: Շատ չենք խոսի այն մասին, թե կոմունիստական տիպի ամբողջատիրական վարչակարգն ինչ է ենթադրում շուկաների վերաբերյալ, որովհետև այս թեմայի շուրջ կա ընդարձակ գրականություն: Սակայն պետք է այստեղ նշենք, որ մեր կարծիքով՝ մեկնաբանությունների մեծ մասում չեն ընդգծվում արդի շուկայական տնտեսությունների խիստ կարևոր սոցիալական, քաղաքական ու պետական պահանջները: Առաջադիմական շուկայական տնտեսությունները ո՛չ արհեստածին են, ո՛չ էլ՝ ինքնաբերական: Առաջադիմական ժողովրդավարությունների բոլոր տնտեսական հասարակությունները՝ իրենց ողջ բազմազանությամբ, սոցիալապես կառուցվել են նյութական շահագրգռման և հասարակական նորմերի, կառավարական մոտեցումների ու պետության կողմից սահմանված կանոնների (որոնք կարգավորում են (ի թիվս այլ բաների) պայմանագրերը, մասնավոր (և հանրային) սեփականության իրավունքներն ու արտոնությունները և բանկային ու վարկային համակարգերը) բարդ փոխազդեցության ճանապարհով:

Կոմունիստական տիպի ամբողջատիրական վարչակարգում գործուն, սոցիալապես կառուցված տնտեսական հասարակության այս վերը նշված (նվազագույն) բաղադրիչներից և ոչ մեկը գոյություն չունի: Ամենահեշտ ստեղծվող և սովորաբար առաջինը երևացող բաղադրիչը շուկայի խթանման աստիճանն է: Սակայն կան հսկայական թվով այլ խնդիրներ, որոնք պետք է լուծվեն մինչև արդյունավետ տնտեսական հասարակության կայացումը: Դրանցից է նախ, և առաջ, արդյունավետ պետության խնդիրը:<sup>42</sup> Հեղափոխական խռովությունը կարող է վերջ տալ վարչափրամայական տնտեսությանը, սակայն եթե կուսակցական պետությունը նույնպես «պայթի», և չլինի արդյունավետ քաղաքական իշխանություն, ինչպե՞ս կկառուցվի տնտեսական հասարակության նոր ենթաօրենսդրական շրջանակը: Ապացույց՝ Ռուսաստանը: Գոյություն ունի նաև սեփականության հարցը: Եթե ներմուծվի մասնավոր սեփականության իրավունքը, ապա անխուսափելիորեն հարցեր կծագեն այն մասին, թե ինչպես է պետք հաստատել մասնավոր սեփականության նոր իրավունքները: Իրավունքների վերականգնման միջոցով: Ո՞ր ամսաթվով: Նախ քան կոմունիստները: Նախքան ֆաշիստները: Ինչպե՞ս պետք է վաճառվեն պետական ընկերությունները: Աճուրդով: Ո՞վ ունի բավարար կապիտալ: Կա՞ն բավարար թվով գործուն գնորդներ: Արդյո՞ք օտարերկրյա կապիտալին պետք է հատկացվի հաստատագրված

շուշտ, մեկ լավ հայտնի դեպքում 1960-ական թվականների սկզբին Սևիլիայի նշանակված կառավարիչը հրաժարվեց միանալ կուսակցությանը, սակայն բոլոր դեպքերում իր պաշտոնն ստանձնելու թույլտվություն ստացավ: Բսպանական քաղաքացիական ծառայության հարաճուն մասնագիտացման ու ինքնուրույնության մասին, տե՛ս Միգել Բելտրան Վիլլալվա (Miguel Beltran Villalva), *"Política y administración bajo el Franquismo: La reforma administrativa y los planes de desarrollo"* Ռայմոնդ Քարրի խմբ.՝ «Ֆրանկոյի դարաշրջանը» (Raymond Carr, ed., *La época de Franco* (Madrid: Espasa Calpe, forthcoming)):

42. Պետության դերը հետկոմունիստական տնտեսությունների փոխակերպման գործում մի հսկայական չհետազոտված բնագավառ է: Իսկապես, երբ հարցրեցիք առաջատար հյուսիսամերիկյան մի տնտեսագետի, որը հետազոտում էր հետկոմունիստական Եվրոպան, այդ թեմայի շուրջ գիտական նյութերի մասին խոսելիս նա նկատեց, որ «փոխակերպման մեջ պետության դերի անտեսումը տնտեսագետների կողմից հավասարազոր է քրեական հանցագործության»:

քվոտա: Արդյո՞ք պետք է լինեն ղեկավարների կողմից ձեռնարկությունների գնումներ: Արդյո՞ք սրանք կհամարվեն որպես նումենկլատուրայի կողմից գնումներ: Արդյո՞ք պետք է թույլատրվի հախուռն մասնավորեցումը: Արդյո՞ք սա իրականում հանրային ունեցվածքի կողոպուտ չէ: Սրանք և հարյուրավոր այլ հարցեր կանխատեսելիորեն կգտնվեն օրակարգում ամբողջատիրական կամ հետամբողջատիրական կոմունիստական վարչակարգից դեպի ժողովրդավարություն անցումից հետո, և նույնանման խնդիրներ էլ տարբեր եղանակներով ժառանգություն կմնան սուլթանական վարչակարգերի մեծ մասից հետո: Սակայն Չիլիի կամ Իսպանիայի տիպի ավտորիտար վարչակարգում այդպիսի շատ քիչ հարցեր կառաջանան:

### ՀԵՏԿՈՄՈՒՆԻԻՍՏԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՈՒՂԻՆԵՐ

Այս գլխում ձգտել ենք գնահատել Ռուսաստանի և հատկապես Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների կարևոր ընդհանրությունները խորհրդային տիրապետության ճնշիչ համակարգի ներսում, դրանց համակեցության և այն փաստի պատճառով, որ Խորհրդային Միությունը փորձում էր պարտադրել վարչակարգի համանման սոցիալական, քաղաքական, գաղափարախոսական ու տնտեսական տիպեր դրանց բոլորին: Սակայն հետագա գլուխներում մեր առաջնային խնդիրն այս ընդհանուր ժառանգությունը որպես կարևոր պատմական գործոն ընդունելն ու տարածաշրջանում ժողովրդավարությանը (կամ ոչ ժողովրդավարությանը) անցման *ուղիների* քիչ վերլուծված տարբերությունը հետազոտելն է: Նաև ցանկանում ենք հետազոտել էական տարբերություններն այն խնդիրների միջև, որոնք հասարակարգերը պետք է իրագործեն, եթե երբևիցե դառնալու են կայացած ժողովրդավարություններ: Տարածաշրջանի ներսում այդ տարբերությունների զգալի մասը գալիս է երկրների նախակոմունիստական պատմությունից ու աշխարհաքաղաքական դիրքից: Սակայն այդ տարբերությունների մի կարևոր մասը կարելի է բացատրել ելնելով նրանց վարչակարգերի հստակ տիպերից (կամ ենթատիպերից) և/կամ նրանց պետութենականության խնդրի ծանրությունից:

Խորհրդային Միության՝ ճնշում կիրառելու միջոցով իր արտաքին ու ներքին կայսրությունները կառավարելու գաղափարախոսական վստահության և աշխարհաքաղաքական կամքի քայքայումը փոխեց ուժային հարաբերություններն ամբողջ տարածաշրջանում: Սակայն այս նոր միջազգային միջավայրի հետևանքները խիստ բազմաբնույթ են, և անհրաժեշտ է *հաջորդականությունից կախված* համեմատական վերլուծություն կատարել: Օրինակ, սկսած 1970-ական թվականների վերջից՝ Լեհաստանն, ըստ մեր չափանիշների, մոտենում էր ավտորիտար (ոչ թե՛ ամբողջատիրական կամ հետամբողջատիրական) վարչակարգին: Հաշվի առնելով ճնշիչ փոփոխված խորհրդային քաղաքատնտեսությունը՝ Լեհաստանում արգելքները վերացվեցին մի ժողովրդավարական ընդդիմության առջև, որն արգելափակված էր: Հասուն հետամբողջատիրական Հունգարիայում ժողովրդավարական ընդդիմության չորս խաղացողով խաղը, որն անցյալում անգամ չէր սկսվի, թույլատրվեց խաղալ մինչև վերջ: «Մառեցված» հետամբողջատիրական հասարակարգերում (ԳԴՀ և Չեխոսլովակիա) հին գվարդիայի բրեժնևյան դարաշրջանի առաջնորդները, ովքեր արտաքին աջակցության կարիք ունեին իրենց ճնշիչ սպառնալիքները արժանահավատ



դարձնելու, անկում ապրեցին, երբ նրանց միջին օղակի կադրերը կամ այլևս չէին հավատում վարչակարգի ուտոպիստական գաղափարախոսական հավակնություններին, կամ առնվազն չէին ուզում լայնածավալ բռնություններ գործադրել ընդվզող ամբոխների հանդեպ: Վարչակարգերը, որոնք ըստ էության ոչ մի ներքին փոփոխություն չէին կրել, ինչպես օրինակ՝ սուլթանական-ամբողջատիրական Ռուսիան և հազիվ հետամբողջատիրական Բուլղարիան, վերակազմավորվեցին ոչ ժողովրդավարական վերնախավերի կողմից այն բանից հետո, երբ ազատվեցին իրենց վաղեմի առաջնորդներից:

Խորհրդային Միության կայսրության հարավային երկրների մեծ մասում Խորհրդային Միության պետութենականության ճգնաժամը հանրապետություններում իշխանության լծակներին մոտ կանգնած ոչ ժողովրդավարական վերնախավերին հնարավորություն տվեց կուսակցական պետության դիսկուրսից կտրուկ անցնելու էթնիկ պետության դիսկուրսին՝ չհանդուրժելով բազմակարծությունը, փոքրամասնությունների իրավունքները կամ ժողովրդավարական քաղաքացիական հասարակության կառուցումը: Նման փոփոխություններն իսկապես առնչվում են հետկոմունիստական քաղաքականության վերաբերյալ գրականությանը, սակայն էթնոավտորիտարությունը, էթնիկ հակամարտությունն ու պետության քայքայումն այս հասարակարգերից շատերի համար ավելի տիրապետող գծեր են, քան ժողովրդավարացումը կամ անգամ լրիվ ազատականացումը: Ի դեպ, ինչպես մենք փաստում ենք Գլուխ 19-ում, «ազգային ազատագրման» դիսկուրսն առավելություն ուներ ժողովրդավարության նկատմամբ, իսկ «անվանադիր ազգությունների» հավաքական իրավունքների դիսկուրսն առավելություն ուներ անհատի իրավունքների նկատմամբ: Որպես հետկոմունիստական վարչակարգերի մասին նոր համեմատական քաղաքագիտության մեջ մեր կատարած ներդրում՝ մենք կհետազոտենք այդպիսի լուրջ տարբերությունների աղբյուրներն ու հետևանքները:

## Ավտորիտար կոմունիզմ, էթիկական քաղաքացիական հասարակություն և երկդիմի քաղաքական հասարակություն. Լեհաստան

ԱՅՍ ԳԼԽՈՒՄ մեր նպատակն է տեղորոշել Լեհաստանում փոխակերպումները ժողովրդավարությանն անցումների մասին գրականության ու քաղաքականության ընդհանուր համատեքստում: Դրա համար առաջ ենք քաշելու չորս փոխկապակցված փաստարկներ: Առաջին՝ պնդելու ենք այն դրույթը, որ Լեհաստանն Արևելյան Եվրոպայում միակ երկիրն է, որը միշտ ավելի մոտ է եղել ավտորիտար, քան թե ամբողջատիրական վարչակարգին անգամ 1949-53թթ. ժամանակահատվածում, երբ ամբողջատիրական միտումներն ավելի ուժեղ էին: Երկրորդ՝ ցույց ենք տալու, որ 1976թ-ից մինչև 1988թ. ընկած ժամանակահատվածում Լեհաստանում հակամարտության տիրապետող ոգին, կառուցվածքն ու լեզուն գտնվել են ազգի «էթիկական քաղաքացիական հասարակության» և վարչակարգի միջազգայնացված ավտորիտար կուսակցական պետության միջև: Երրորդ՝ հիմնավորելու ենք, որ հենց այն պատճառով, որ Լեհաստանը 1988-89թթ. եղել է կուսակցական զինվորների կողմից ղեկավարվող ավտորիտար վարչակարգ և անցումներից *ստաջինը* Արևելյան Եվրոպայում, վարչակարգը նախաձեռնեց, իսկ ընդդիմությունն ընդունեց «դաշնությունահենք անցում», որն իր սահմանափակող պայմաններով համեմատելի էր Չիլիում և Բրազիլիայում մեր տեսածի հետ: Չորրորդ՝ հետազոտելու ենք, թե ինչպես նոր ժողովրդավարության ակունքները, որոնք գտնվում են էթիկական քաղաքացիական հասարակության, դաշնությունահենք անցման և շատ արագ, ուղիղ ընտրված խարիզմատիկ առաջնորդ ունեցող կիսանախագահական համակարգի մեջ, ծնունդ տվեցին քաղաքական հասարակության նկատմամբ մի երկդիմի ժառանգության, որի վրայով Լեհաստանը պետք է քայլ անի ժողովրդավարությունը կայացնելու համար:

### ԱՄԲՈՂՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԱՆԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Եկեք նախ գնահատենք վարչակարգի տիպի հարցը: Ցանկացած այլ երկրների հասարակություններից առավել, որոնք մենք դիտարկելու ենք այս բաժնում, լեհ հասարակությունն է եղել դեմ այն բանին, որ համարվի լրիվ հաստատված ամբողջատիրական վարչակարգ ձևավորած երկիր: Մենք, անշուշտ, չենք ժխտում, որ Լեհաստանում ամ-

բողջատիրական վարչակարգ հաստատելու որոշ ջանքեր եղել են (ինչպես Իսպանիայում քաղաքացիական պատերազմից հետո), և որ Լեհաստանում նույնպես մեծ չափով եղել է ամբողջատիրական պետական ապարատ և կուսակցության պաշտոնական գաղափարախոսություն, ինչպես ամբողջ Արևելյան Եվրոպայում: Մակայն Լեհաստանի քաղաքականության որոշ հիմնատարներ իսկապես չեն համապատասխանում ամբողջատիրական վարչակարգի տիպին, ինչպես մենք այն վերլուծեցինք Գլուխ 3-ում: Մասնավորապես, մենք կարծում ենք, որ Լեհաստանը միշտ ունեցել է հասարակական բազմակարծության զգալի *դե ֆակտո* աստիճան: Այնուհետև կարծում ենք, որ այս *դե ֆակտո* հասարակական բազմակարծությունը մեծացրել է քաղաքացիական հասարակության հատվածների՝ վարչակարգի գաղափարախոսությանը դիմադրելու ունակությունը և ինչոր չափով փորձության է ենթարկել հավակնոդ ամբողջատիրական վարչակարգի ինտենսիվ համախմբում պարտադրելու կամքը հատկապես գաղափարախոսական ոլորտում: Այս ամբողջատիրական սահմանափակումներն իրենց հերթին ազդեցություն են թողել վարչակարգի ղեկավարության ոճի վրա: Մեր փաստարկը, հետևաբար, այն է, որ ամբողջատիրության չորս գլխավոր տիպաբանական հարթություններից յուրաքանչյուրում, ավելի պարզ ասած՝ բազմակարծության մեջ, սակայն նաև համախմբման, գաղափարախոսության և ղեկավարության մեջ Լեհաստանն ունեցել է որոշ չափով ամբողջատիրական, սակայն էլ ավելի ուժեղ ավտորիտար միտումներ:<sup>1</sup>

Բոլոր ժամանակներում լեհական կաթոլիկ եկեղեցին պահել է հարաբերական ինքնավարության մի ոլորտ, որը նրան տվել է կազմակերպական ու գաղափարախոսական կարողություն՝ դիմադրելու իր և լեհ ժողովրդի լիարժեք ինտեգրմանը ամբողջատիրական կառույցների մեջ: Կաթոլիկ եկեղեցու այս *դե ֆակտո* սոցիալական բազմակարծությունը ծնունդ տվեց կաթոլիկ եկեղեցու ու պետության միջև իշխանությունը փոխադարձաբար ճանաչելու և անգամ միմյանց հետ բանակցելու մի բարդ մոդելի, որը չի եղել որևէ ամբողջատիրական համարվող կոմունիստական վարչակարգում: Օրինակ, 1950թ. ապրիլին կառավարությունը համաձայնեց թույլ տալ կրոնի ուսուցում հանրային դպրոցներում և չմիջամտել եկեղեցական մամուլին: Փոխարենը եկեղեցին համաձայնեց ձեռնպահ մնալ բացահայտ քաղաքական գործունեություն վարելուց և քահանաներին հետ պահե-

1. Միլովան Դիլանս ուսումնասիրել է ամբողջատիրության պատմությունն Արևելյան Եվրոպայի բոլոր երկրներում, և նա նույնպես ասում է, որ միայն Լեհաստանում ամբողջատիրությունը երբեք չի արմատավորվել: «Միայն չի լինի եզրակացնել, որ Լեհաստանը երբեք չի եղել ամբողջատիրական պետություն հենց միայն այն պատճառով, որ հոգևոր կյանքի որևէ ձև՝ առաջին հերթին կաթոլիկ եկեղեցին, պահպանել է ինքնուրույնության ինչ-որ չափ: Նաև գյուղացիական տիրույթները մեծապես մնացել են որպես մասնավոր սեփականություն: Բացի այդ, 1944թ. Վարշավայի խռովության և անմիջապես պատերազմից հետո զինված և այլ տիպի դիմադրության շնորհիվ լեհերի ճնշող մեծամասնությունը ստացել էր նր՝ նոր վարչակարգ, և՛ խորհրդային վերահսկողություն առանց որևէ պատրանքների խորհրդային «ազատարարների» վերաբերյալ: Լեհաստանը եղել է, ի դեպ, ընդհանուր առմամբ ոստիկանական պետություն: 1956թ. ապստամբությունը Լեհաստանում ունեցել է վճռորոշ նշանակություն Լեհաստանի ներքին ինքնավարության համար: [Գոմուլյական] ... դանդաղեցրեց, սակայն չդադարեցրեց հակամբողջատիրական շարժումը Լեհաստանում. հենց այնտեղ է ամենավճռական ձևով մերժվել ամբողջատիրության գաղափարը»: Միլովան Դիլաս, «Լեհինիստական ամբողջատիրության կազմաքանդումը» (Milovan Djilas, "The Disintegration of Leninist Totalitarianism"), Իրվինգ Հաուվելի խմբ.՝ «1984թ. վերադարձը. ամբողջատիրությունը մեր երկրում» (Irving Howe, ed., 1984 Revisited: Totalitarianism in Our Century (New York: Harper and Row, 1983), 145-46):

լու ակտիվ ընդդիմությունից:<sup>2</sup> Այն փաստը, որ աշխարհում ամենահավատացյալ կաթոլիկ բնակչություն ունեցող երկրներից մեկում աթեիստական կուսակցական պետությունն անգամ ժամանակավորապես գնացել էր այս զիջմանը, արդեն հավասարագոր էր համընդհանուր գաղափարախոսական գերիշխանության հասնելու իր նպատակի սահմանափակման:<sup>3</sup> 1953-56թթ. գործադրվեց եկեղեցին վերահսկելու նոր ջանք, որի ժամանակ Լեհաստանի հոգևոր առաջնորդը՝ կարդինալ Ստեֆան Վիշինսկին, ենթարկվեց տնային կալանքի:<sup>4</sup> Չափորոշիչներից մեկը, թե Խորհրդային Միության սատարած կուսակցական ղեկավարները որքան էին վախենում կաթոլիկ եկեղեցուց, այն է, որ ի տարբերություն Հունգարիայի կամ Խորվաթիայի՝ Լեհաստանի իշխանությունները կարդինալի դեմ դատավարություն չսկսեցին: Եկեղեցու վրա հարձակումն առաջ բերեց լեհական հասարակության կողմից էլ ավելի մեծ դիմադրություն և խորացրեց լեհ ժողովրդի «մենք»-ի և խորհրդային

2. Կոմունիստների ու կաթոլիկ եկեղեցու միջև զիջման ու նվաճման դինամիկ ուժային պայքարի մասին քննարկումներ, *տե՛ս* Ռոնալդ Մոնտիկոնե, «Կաթոլիկ եկեղեցին կոմունիստական Լեհաստանում 1945-1985թթ. եկեղեցի-պետություն հարաբերությունների քառասուն տարին» (Ronald C. Monticone, *The Catholic Church in Communist Poland 1945-1985: Forty Years of Church-State Relations* (New York: Columbia University Press, 1986), esp. 26-130): Լեհական եկեղեցու և պետության միջև «հակամարտությունների ու համակեցության» մեկ այլ վերլուծություն և 1945թ. Լեհաստանում եկեղեցու քաղաքական դերի մասին, *տե՛ս* Բոգդան Շայկովսկի, «Աստծու կողքին... Լեհաստան. քաղաքականությունն ու կրոնը ժամանակակից Լեհաստանում» (Bogdan Szajkowski, *Next to God ... Poland: Politics and Religion in Contemporary Poland* (New York: St. Martin's Press, 1983)): Լեհական կաթոլիկ եկեղեցին ավտորիտար կառավարություն-ընդդիմություն դինամիկայի մեջ համեմատական տեսանկյունից, *տե՛ս* Չեկ Ջոնսթոնի ակնարկը՝ «Ի բացատրություն ավտորիտար վարչակարգերին եկեղեցու ընդդիմության. կրոնա-ընդդիմադիր ենթամշակույթները Լեհաստանում և Կատալոնիայում» (Hank Johnston, "Toward an Explanation of Church Opposition to Authoritarian Regimes: Religio-oppositional Subcultures in Poland and Catalonia", *Journal for the Scientific Study of Religion* 28, no. 4 (1989): 493-508):

3. Կոմունիստական Լեհաստանն ուներ զգալիորեն ավելի շատ քահանաներ մեկ շնչի հաշվով, քան կաթոլիկական Լատինական Ամերիկան: Օրինակ, 1968թ. Լեհաստանում կար 52 քահանա 100000 բնակչի հաշվով: Քսան լատինաամերիկյան երկրներից մեկ շնչի հաշվով քահանաների ամենամեծ թիվն ունեցողը նույն տարում Չիլին էր՝ 27: Բրազիլիայում 100000 բնակչին ընկնում էր միայն 13 քահանա, իսկ Կուբայում՝ 3: *Տե՛ս* Լուիջի Էյնաուդի, Ռիչարդ Մոլլին, Ալֆրեդ Ստեփան և Մայքլ Ֆլիթ, «Լատինական Ամերիկայի ինստիտուցիոնալ զարգացումը. փոփոխվող կաթոլիկ եկեղեցին» (Luigi Einaudi, Richard Maullin, Alfred Stepan, and Michael Fleet, *Latin American Institutional Development: The Changing Catholic Church* (Santa Monica: Rand Corp., 1969), 18):

4. Տե՛ս «Ազատություն ներքուստ. կարդինալ Ստեֆան Վիշինսկու բանտային գրառումները» (*A Freedom Within: The Prison Notes of Stefan Cardinal Wyszyński*) (San Diego: Harcourt Brace Jovanovich, 1982)), որում կարդինալը փաստում է դեպի եկեղեցին պետական քաղաքականության տատանումներն իր բանտարկության ժամանակ, ընթացքում և հետո: *Տե՛ս նաև* Անջեյ Միցևսկի, «Կարդինալ Վիշինսկի» (Andrzej Micewski, *Cardinal Wyszyński* (San Diego: Harcourt Brace Jovanovich, 1984)): Հավելենք, որ եկեղեցական աստիճանակարգի նկատմամբ կոմունիստական վերահսկողության այդ խորհրդանշական ծեստի հետևանքում 1953թ. «պետության կողմից ընդունելի հայրենասեր քահանաներն առաջ էին քաշվում գլխավոր եկեղեցական պաշտոններում, և առաջադեմ կաթոլիկների «PAX» շարժումը սատարվում էր իշխանությունների կողմից»: Սակայն այս քաղաքականությունը ձախողվեց, երբ հանդիպեց եկեղեցու դիմադրությանը: Տե՛ս Դիտեր Բինգեն, «Կաթոլիկ եկեղեցին՝ որպես քաղաքական գործող անձ» (Dieter Bingen, "The Catholic Church as a Political Actor"), Ջեկ Բելազիակի և Մորիս Սիմոնի խմբ.՝ «Լեհաստանի քաղաքականությունը. անդունդի եզրին» (Jack Bielasiak and Maurice D. Simon, eds., *Polish Politics: Edge of the Abyss* (New York: Praeger Press, 1984), 213): *Տե՛ս նաև* Ջիլանովսկի Մ. Կ., «Լեհաստանի կոմունիստական կուսակցությունը. պատմական ակնարկ» (M. K. Dziewanowski, "The Communist Party of Poland: An Outline of History", (Cambridge: Harvard University Press, 1976), esp. 241-51):

աջակցությունը վայելող կուսակցական պետության «նրանք»-ի միջև հեռավորությունը: Ինչպես Ջոզեֆ Ռոտշիլդն է ամփոփում, «Լեհաստանի կաթոլիկ եկեղեցին սպասվածից ավելի վերականգնեց իր կրած հետպատերազմյան նյութական վնասներն իր հոտի նորացված խանդավառության շնորհիվ ... այն սոցիալական խմբերը, որոնք անցյալում եղել էին անտարբեր կամ անգամ հակակղերական, նրան տվեցին իրենց հավատարմությունը՝ ի նշան քաղաքական ու հոգևոր բողոքի ընդդեմ ստալինյան միտումների»:<sup>5</sup> Արդեն 1956թ. չափավոր ազգայնական բարեփոխումների կողմնակից կոմունիստ Գոմուլկան իր կառավարությունն ավելի գրավիչ դարձնելու համար թույլատրեց վերսկսել կրոնի դասավանդումը պետական դպրոցներում:<sup>6</sup> Ի դեպ, 1956թ-ի և 1989թ. միջև ընկած ժամանակահատվածում կառավարությունը մի շարք առիթներով ոչ բացահայտ կամ անգամ բացահայտ ստիպված է եղել դիմելու եկեղեցուն, որ հաշտարարի դեր խաղա Լեհաստանի քաղաքականության մեջ՝ հաղթահարելու համար ճգնաժամային իրավիճակները, որոնք կարող էին հանգեցնել խորհրդային ներխուժման: Խորհրդանշական է, որ 1986 թվականին կարդինալ Վիշինսկու արձանը դրվեց Վարշավայի առավել հայտնի մի ծառուղում՝ եկեղեցու առջև:

Ի հակադրություն մոնիզմի, սահմանափակ բազմակարծության մեկ այլ տպավորիչ ցուցանիշ է գյուղատնտեսությունը: Գյուղատնտեսության ազգայնացումը կոլեկտիվացման ու կոոպերատիվների միջոցով մեղմացվել էր անգամ լեհ ստալինականների կողմից 1940-ական թվականներին: Գոմուլկայի կողմից բռնի կոլեկտիվացման եղանակի հետևողական մերժումը նրա՝ «սոցիալիզմ տանող լեհական ուղու» առանցքային բաղադրիչն էր, որը Մոսկվայի կողմից սկզբում որակվեց որպես հերետիկոսական, իսկ այնուհետև՝ հեռատեսական: Գյուղացիական կոոպերատիվների ավանդույթը գերակշռող էր կոլեկտիվացված պետական տնտեսությունների համեմատ: Իսկապես, անկախ, մասնավոր

5. Ջոզեֆ Ռոտշիլդ, «Վերադարձ բազմազանությանը» (Joseph Rothchild, *Return to Diversity* (New York: Oxford University Press, 1989), 87):

6. Կրոնի ուսուցումը լեհական դպրոցներում թույլատրելու առանձնահատկությունների մասին տե՛ս Մոնտիկոնե, «Կաթոլիկ եկեղեցին կոմունիստական Լեհաստանում» (Monticone, *The Catholic Church in Communist Poland*, esp. 26-28): Մոնտիկոնեն քննարկում է Կառավարության և Եպիսկոպոսության ներկայացուցիչների համատեղ հանձնախումբը, որն ստեղծվել էր 1956թ.՝ լուծելու «փոխադարձ հարաբերություններում բազմաթիվ չլուծված խնդիրներ»: Համատեղ հանձնախմբի կոմյունիկեի. որը բաց թողնվեց դեկտեմբերի 8-ին, դիսկուրսն առաջարկում է, որ կառավարությունն ու եկեղեցական աստիճանակարգը կստանան լրիվ փոխադարձ ըմբռնման մի քաղաքականություն: Մոնտիկոնեն հաստատում է, որ «համաձայնության առավել կարևոր մասը վերաբերում է դասերից հետո կրոնի ուսուցմանը բոլոր դպրոցներում, որտեղ ծնողների մեծամասնությունը հավանություն է տվել դրան... Հետևանքում... կրոնական դաստիարակություն տրվում էր Լեհաստանով մեկ դպրոցների մեծ մասում» (Էջ 27-28): Գոմուլկայի ազատականացման քաղաքականությունը եկեղեցու նկատմամբ, ներառյալ կարդինալ Վիշինսկու ազատումը տնային կալանքից, մաս էր նրա «Գարուն հոկտեմբերին» ազատականացման արշավի, որն ուղեկցում էր Խորհրդային Միությունում տեղի ունեցող «ապաստալիսականացման» գործընթացին: Ինչպես ասում է Նիկոլաս Բեթեկը, «1956թ. նա [Գոմուլկա] և կարդինալը լավ հարաբերությունների մեջ էին... բանտարկությունից կարդինալի ազատումը Գոմուլկայի առաջին քաղաքական գործողություններից էր: Փոխարենը կարդինալն օգնեց Գոմուլկային՝ ամրապնդելու իր իշխանությունը և սանձելու անպատասխանատու տարրերին»: Նիկոլաս Բեթեկը, «Գոմուլկա, նրա Լեհաստանն ու նրա կոմունիզմը» (Nicholas Bethell, Gomulka, *His Poland and His Communism* (London: Longmans Press, 1969), 248-49): Տե՛ս նաև Լուրենս Վեշլեր, «Լեհաստանի ստառպանքները» (Lawrence Weschler, *The Passion of Poland* (New York: Pantheon Books, 1982), esp. 211-18), լեհական իրադարձությունների ժամանակագրությունն ապաստալիսականացման ժամանակ:

սեփականություն հանդիսացող գյուղացիական ֆերմաները շարունակում էին կազմել ճնշող մեծամասնություն՝ երբեք չիջնելով Լեհաստանի գյուղատնտեսական տիրույթների 70%-ից:<sup>7</sup> Եվ դարձյալ սա նշան էր պետության ոչ լրիվ ներթափանցման ու ամբողջատիրական պետության բռնցքից դուրս գտնվող սոցիալական ուժի ու ինքնավարության:

Եվ վերջապես՝ քաղաքականության և գաղափարախոսության ընդհանուր մակընթացություններն ու տեղատվությունները, որոնք սահմանազատում էին ղեկավարության փոփոխությունները Բոլեալավ Բիերուտի մինիստալինիզմից դեպի Գոմուլկայի հարաբերական հանդուրժողականությունն ու լեհական ազգայնականությունը (1956-70թթ.), դեպի Գերեկի զանգվածային օտարերկրյա վարկերի նախաձեռնությունն (1971-80թթ.) ու Յարուզելսկու (1981-89թթ.)՝ զինվորականության կողմից ղեկավարվող վարչակարգի ճնշումները, ներկայացնում է քաղաքականության և ղեկավարության ոճերի փոփոխության մի պատկեր, որն ավելի շատ համապատասխանում է ավտորիտար, քան ամբողջատիրական վարչակարգին: Ի դեպ, ամբողջատիրությունը Լեհաստանին պարտադրելու ամենամեծ ջանքերի ժամանակաշրջանում (1949-53թթ.) նախագահ և առաջին քարտուղար Բոլեալավ Բիերուտը հավասարների մեջ առաջինն էր (*primus inter pares*) մի եռիշխանությունում, որը ներառում էր գաղափարախոս Յակուբ Բերանին և տնտեսագետ Հիլարի Մինցին: Իշխանության այս կոլեգիալ բնույթը վկայում է Լեհաստանի այլ տարբերությունների մասին ծայրահեղ ամբողջատիրությունից, բռնապետից ու անհատի պաշտամունքից:

Ինչո՞ւ Լեհաստանում ծագեց ավտորիտար կոմունիզմի հենց այս յուրահատուկ պատկերը: Մասնավորապես, ինչո՞վ է Լեհաստանի քաղաքացիական հասարակության դիմադրողականության այդ եզակի հատկությունը նպաստել այս պատկերին և այն փաստին, որ Լեհաստանը դարձել է աշխարհում առաջին երկիրը, որն ստիպել էր իշխող կոմունիստական կուսակցությանը երկիշխանության մեջ մտնելու ժողովրդավարական ընդդիմության հետ:

Պետութենականություն փոփոխականը Լեհաստանում ունի առանձնահատուկ կարևորություն, սակայն միանգամայն այլ ձևով, քան Խորհրդային Միությունում: Լեհաստանի հրեաների վերացումից, էթնիկ գերմանացիների արտաքսումից և Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո բելառուս և ուկրաինացի բնակչության՝ Խորհրդային Միության հետ միավորումից հետո Լեհաստանում մնաց մեծ մասամբ էթնիկապես լեհ ու հռոմեական կաթոլիկ բնակչություն: Սա առաջին իսկական ազգային պետությունն էր Լեհաստանի պատմության մեջ:<sup>8</sup>

7. Տե՛ս Անջեյ Կորբոնսկի, «Սոցիալիստական գյուղատնտեսական քաղաքականությունը Լեհաստանում. 1945-1960» (Andrzej Korboński, *Politics of Socialist Agriculture in Poland: 1945-1960* (New York: Columbia University Press, 1965), 212-312) և «Գյուղացիական գյուղատնտեսությունը Սոցիալիստական Լեհաստանում 1956թ.. կոլեկտիվացման այլընտրանք» (*"Peasant Agriculture in Socialist Poland since 1956: An Alternative to Collectivization"*), Եժի Կարժի խմբ.՝ «Խորհրդային և արևելաեվրոպական գյուղատնտեսությունը» (Jerzy F. Karcz, ed., *Soviet and East European Agriculture* (Berkeley: University of California Press, 1967), 411-31): Տե՛ս Լուս Զանին Վեդել, «Մասնավոր Լեհաստանը» (Janine Wedel, *The Private Poland* (New York: Facts on File Publications, 1986), 54), Լեհաստանում համեմատաբար զգալի, ոչ պաշտոնական, ոչ գյուղատնտեսական մասնավոր հատվածի մասին 1970-ական թթ. վերջին և 1980-ական թթ. սկզբին:

8. Դեռևս 1939թ. լեհ (որոնց 92%-ը հռոմեական կաթոլիկ էին) «բնակչության միայն մոտ 90%-ն էր

Ավելին, լեհ ժողովրդի՝ իրեն որպես ազգ զգալու ձգտումը զգացմունքայնորեն ու պատմականորեն եղել է առավել ինտենսիվներից մեկը Եվրոպայում: Լեհաստանն անցել է երկար ուղի՝ Եվրոպայում խոշոր ուժերից մեկը լինելուց մինչև «առանց պետության» վիճակը 1795-1918թթ. Ռուսաստանի, Պրուսիայի և Ավստրիայի կողմից նվաճվելու և նրանց միջև բաժանվելու պատճառով: Պետականությունից զուրկ լինելու այս ժամանակահատվածում կաթոլիկ եկեղեցին դարձել էր լեհ ազգի հատկապես ուժեղ ու սիրված մշակութային և ինստիտուցիոնալ դրսևորումը: Լեհական պետությունը դարձյալ պաշտոնապես անհետացավ այն ժամանակ, երբ Գերմանիան ու Խորհրդային Միությունը երկիրը բաժանեցին 1939թ. օգոստոսի 23-ի գերմանա-խորհրդային դաշինքից հետո: Լեհաստանի նոր բաժանումը հանգեցրեց բռնի կառավարմանը, լեհական բանակի բռնի վերաբնակեցմանը Խորհրդային Միություն, լեհական մտավորականության մեծ մասի միտումնավոր քայքայմանն ու զանգվածային սպանություններին Կատինում, որոնց մեջ սկզբում մեղադրվեցին գերմանացիները, սակայն ավելի ուշ այդ մեղքը վերագրվեց Խորհրդային Միությանը:<sup>9</sup> Բայց լեհական հասարակությունն սկսեց ամենաուժգին դիմադրության շարժումը Եվրոպայում Հարավսլավիայի հետ միասին: Ի տարբերություն Հարավսլավիայի, սակայն, Լեհաստանում դիմադրության շարժումն ու աքսորում գտնվող կառավարությունը միավորված էին և գտնվում էին սերտ կապի մեջ: Կարմիր բանակն սպասում էր և ոչինչ չէր ձեռնարկում, մինչդեռ լեհ դիմադրության մարտիկները պայքարում էին նացիստների դեմ Վարշավայի ապստամբության ժամանակ: Խորհրդային ռազմական լրիվ տիրապետություն Լեհաստանում հաստատվեց միայն 1945-47թթ. քաղաքացիական պատերազմում լեհական դիմադրության ուժերի պարտությունից հետո:<sup>10</sup> Քանի որ Լեհաստանը Երկրորդ համաշխարհային պատերազմում եղել էր հաղթանակած դաշնակցային կռալիցիայի մաս, Խորհրդային Միությունը (ի տարբերություն Արևել-

ապրում արևմտյան վոևոդություններում... մոտ 80%-ը՝ կենտրոնականում... և 60%-ը՝ հարավայինում»: *Տե՛ս Յան Տոմաշ Գրոս*, «Լեհ հասարակությունը գերմանական նվաճման տակ» (Jan Tomasz Gross, *Polish Society under German Occupation, The Generalgouvernement 1939-1944* (Princeton: Princeton University Press, 1979), 12): Կ.Ա. Ելենսկին (K. A. Jelenki) պնդում է, որ «պարադոքսալ կերպով, Յալթայի պայմանագրով առաջ եկած կոմունիստական Լեհաստանը համապատասխանում էր խիստ ծայրահեղական մի հին երազի՝ առաջին անգամ պատմության մեջ՝ մեկ էթնիկ խումբ և մեկ կրոն ունեցող երկիր, որտեղ կաթոլիկությունից բացի, մյուս հավատքներին պատկանում է բնակչության միայն մի աննշան մասը»: *Տե՛ս նրա ակնարկը*, «Լեհ ազգայնականության պարադոքսը» (*Paradoxes of Polish Nationalism*), Լեոպոլդ Լաբեժի խմբ.՝ «Լեհաստանը Յարուզելսկու օրոք. համապարփակ աղբյուր-գիրք Լեհաստանի մասին ռազմական դրությունից առաջ և հետո» (Leopold Labedz, ed., *Poland under Jaruzelski: A Comprehensive Sourcebook on Poland during and after Martial Law* (New York: Scribner's Sons, 1983), 391):

9. *Տե՛ս* երկու նշանավոր ուսումնասիրությունները Յան Գրոսի կողմից, «Հեղափոխությունն արտասահմանից. Լեհաստանի, Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի նվաճումը Խորհրդային Միության կողմից» (Jan T. Gross, *Revolution from Abroad: The Soviet Conquest of Poland's Western Ukraine and Western Belorussia* (Princeton: Princeton University Press, 1988)) և Գրոս, «Լեհական հասարակությունը գերմանական նվաճման ներքո» (Gross, *Polish Society under German Occupation*):

10. Օրինակ՝ միայն «1948-1955թթ. միջև էր [որ] լեհական զինված ուժերը ենթարկվեցին խոշոր փոխակերպման, որը նրանց համապատասխանեցրեց այն ժամանակվա խորհրդային մոդելին»: Պոլ Լատավսկի, «Լեհական զինվորականությունն ու քաղաքականությունը» (Paul C. Latawski, *The Polish Military and Politics*), Ջեյ Բելազիակի և Մորիս Սիմոնի խմբ. «Լեհաստանի քաղաքականությունը. անդունդի եզրը» (Jack Bielasiak and Maurice D. Simon, eds., *Polish Politics: Edge of the Abyss* (New York: Praeger Press, 1984), 271):

յան Գերմանիայի, Հունգարիայի կամ Սլովակիայի) չէր կարող իր բռնագավթյունը լեզի-տիմացնելու փորձ կատարել այն ակնկալությամբ, որ դա համարվեր դաշնակիցների կողմից նացիստների հետ համագործակցության մեջ մտածների նվաճում:<sup>11</sup> Հետևաբար, լեհական պետութենականությունն ի սկզբանե եղել է խորհրդային հեգեմոնի դեմ ազգայնական անտագոնիզմի աղբյուր և հանդիսացել է դիմադրության ակունքների մի խոր «ջրամբար»:

Սա մեզ բերում է ամբողջատիրության և ճնշիչ ապարատի վրա նրա վերահսկողության հարցին: Լրիվ ամբողջատիրական վարչակարգը, քանի որ մեծապես հենվում է պետության հասարակական ներթափանցման ու վերահսկողության վրա, պետք է իր ձեռքում պահի անվտանգության ապարատի, հատկապես՝ զինվորականության ընդհանուր կազմակերպական ու գաղափարախոսական վերահսկողությունը: Արևելյան Եվրոպայում բոլոր երկրներից առավել, Լեհաստանը 1945-47թթ. քաղաքացիական պատերազմ սկսեց խորհրդային ու կոմունիստական ուժերի դեմ: Սա քաղաքացիականներ-զինվորականներ հարաբերությունների վրա թողեց պարադոքսալ ազդեցություն: Լեհաստանի զինվորականությունն անվտանգելի էր ճանաչվել, քանի որ Արևելյան Եվրոպայում նա միակ երկիրն էր, որտեղ Ռուսաստանի քաղաքացի, խորհրդային մարշալ ու պաշտպանության փոխնախարար Կոնստանտին Ռոկոտովսկին (պետք է ասել, որ ծագումով լեհ), նշանակվել էր գլխավոր հրամանատար: Սա միայն ավելի ակնառու էր դարձնում կոմունիստական կառավարության «օտար», ոչ լեզիտիմ կարգավիճակը:<sup>12</sup> Խորհրդային Միությունը դիմեց որոշ ջանքերի՝ կապ ստեղծելու լեհական ազգային ավանդույթի հետ՝ թույլատրելով, որ Լեհաստանը դառնա միակ երկիրն Արևելյան Եվրոպայում, որտեղ սպաները մեծ մասամբ պահպանեցին իրենց նախապատերազմական համագգեստը: Սակայն վճռական պահերին բանակն իր երկակի մոտեցմամբ ու անշտապ գործողություններով *դե ֆակտո* բացառեց ամբողջատիրական պետության իշխանության հնարավորությունը: Սրա մի կարևոր ավելի վաղ օրինակ էր այն, որ բանակը կրակ չբացեց պոզնանյան գործադուլավորների վրա 1956թ. հունիսին:<sup>13</sup> Այլ դեպքերում բանակը գլխավոր դեր է խաղացել

11. Այս միտքը մշտապես շեշտվում էր Ստեփանի ներկայությամբ 1989թ. հոկտեմբերին և 1990թ. հուլիսին կոմունիստական կուսակցությունից կամ զինվորականությունից դուրս եկած բազմաթիվ լեհ պաշտոնյաների ու վերլուծաբանների կողմից:

12. 1949-1956թթ. Լեհաստանի բարձրագույն հրամանատարության խորհրդային ծագման մասին տե՛ս Ջորջ Սենֆորդ, «Զինվորական իշխանությունը Լեհաստանում. կոմունիստական գործության վերակառուցումը» (George Sanford, *Military Rule in Poland: The Rebuilding of Communist Power, 1981-1983* (London: Crown Helm, 1986), 57): Լատավսկին, որն ուսումնասիրում էր Լեհաստանի արտաքին քաղաքականությունն ու պատմությունը, հաստատում է, որ 1949թ. հետո «բանակում առավել նշանակալի փոփոխությունը խորհրդային սպաների մուտքն էր, որոնք ի վերջո կազմեցին ամբողջ սպայական կազմի կեսը»: Լատավսկի, «Լեհական զինվորականությունն ու քաղաքականությունը» (Latawski, "The Polish Military and Politics", 271, 288 n.12): Տե՛ս նաև Դեյլ Հերսփրինգ, «Լեհական զինվորականությունը և քաղաքականության գործընթացը» (Dale Herspring, "The Polish Military and the Policy Process"), Մորիս Սիմոնի և Ռոջեր Քեյնի խմբ.՝ «Ճգնաժամի նախապատմությունը. ռազմավարությունն ու քաղաքականությունը Լեհաստանում» (Maurice D. Simon and Roger E. Kanet, eds., *Background to Crisis: Policy and Politics in Poland* (Boulder, Colo.: Westview Press, 1980), esp. 222--24):

13. Պոզնանի իրադարձությունների մասին տե՛ս Ռոու Ջոնսոն, Ռոբերտ Դին և Ալեքսանդր Ալեքսեն, «Արևելաեվրոպական զինվորական հաստատությունները. Վարչական դաշինքի հյուսիսային շարքը» (A. Ross Johnson, Robert W. Dean, and Alexander Alexiev, *East European Military Establishments: The War-*



կուսակցական պայքարում: Վիատրը պնդում է, որ «1956թ. հոկտեմբերին, երբ ԽՍՀՄ-ը փորձեց շանտաժի ենթարկել Լեհաստանի ղեկավարներին՝ ապաստալինականացման գործընթացը դանդաղեցնելու նպատակով, լեհ զինվորականությունն իր աջակցությունը բերեց կուսակցության նոր ղեկավարությանը, որը գլխավորում էր Վլադիսլավ Գոմուլկան, ինչը նույնպես վկայում է բանակի՝ խորհրդային միջամտությանը դիմադրելու տրամադրվածության մասին»:<sup>14</sup>

Նախքան ամբողջատիրության վերաբերյալ այս դիտողությունները եզրափակելը, կցանկանայինք անել մի ընդհանուր դիտարկում քաղաքական բազմակարծության և հռոմեական կաթոլիկ եկեղեցու մասին: Իհարկե, պատմության ընթացքում եղել են բազմաթիվ ժամանակներ, երբ հռոմեական կաթոլիկ եկեղեցին համագործակցել է պահպանողական ու կորպորատիվիստական ավտորիտար վարչակարգերի հետ, առավել նկատելիորեն Իսպանիայում և ավելի քիչ չափով՝ Պորտուգալիայում:<sup>15</sup> Սակայն մենք այն տեսակետն ենք պաշտպանում սոցիոլոգիական ու քաղաքական տեսանկյունից, որ ամբողջատիրական երկրում ուժեղ հռոմեական կաթոլիկ եկեղեցու գոյությունը *մշտապես* հանդիսանում է բազմակարծության թաքնված աղբյուր, հենց այն պատճառով, որ դա պաշտոնական կազմակերպություն է՝ անդրազգային բազայով: Պապականությունը կարող է հանդիսանալ հոգևոր ու նյութական աջակցության աղբյուր այն խմբերի համար, որոնք ցանկանում են դիմադրել սոնիստական կլանմանը կամ վերացմանը: Պապականությունը կարող է նաև պատժամիջոցներ կիրառել ու հրաժարվել ճանաչելուց տեղական արքեպիսկոպոսներին, որոնք, հնարավոր է, ճնշման տակ համաձայնություն տան համագործակցելու ամբողջատիրական կառավարությունների հետ: Լեհաստանի դեպքում, օրինակ, մեկ կամ երկու անգամ որոշ լեհ քահանաներ մոտ են եղել կոմունիստական կառավարությունների հետ համաձայնության գալուն, սակայն այդ համաձայնությունների իրավագործությունը բացահայտորեն ժխտվել կամ մերժվել է պապի կողմից:

Միջազգային ավելի բարձր իշխանության այս աղբյուրն, իհարկե, հասու չէ այնպիսի քաղաքական համակարգերին (ինչպես օրինակ՝ Բուլղարիան, Ռումինիան կամ նախկին Խորհրդային Միության մեծ մասը), որոնք ունեն իրենց շրջանակով ազգային և ոչ թե՛ անդրազգային ուղղափառ եկեղեցիներ, և որոնք պատմականորեն ընդունել են

*saw Pact Northern Tier* (Santa Monica: RAND, 1982), 60): Խրուշչովի քննարկումն այն մասին, թե ինչպես են «լեհերը մեզ անվանարկել 1956թ.» և խորհրդային զորքերի տեղափոխումը դեպի Վարշավա, ինչպես նաև խմբագրի մեկնաբանությունները լեհական զորքերի կողմից զինված դիմադրության հնարավորության մասին, *տե՛ս* Ջերրոլդ Շեկտերի և Վլաչեսլավ Լուչկովի խմբ.՝ «Հիշում է Խրուշչովը. գլխնուստյան ձայնագրություններ» (Jerrold L. Schecter with Vyacheslav V. Luchkov, eds., *Khrushchev Remembers: The Glasnost Tapes* (Boston: Little, Brown and Co., 1990), 113-20):

14. Ջերզի Վիատր, «Չորս ակնարկ արևելաեվրոպական ժողովրդավարական փոխակերպումների մասին» (Jerzy J. Wiatr, *Four Essays on East European Democratic Transformation* (Warsaw: Scholar Agency, 1992), 62): Նման դատողություն, *տե՛ս* Անջել Կորբոնսկի, «Քաղաքացիա-զինվորական հարաբերությունների երկընտրանքները ժամանակակից Լեհաստանում. 1945-1981թթ.» (Andrzej Korbonksi "The Dilemmas of Civil-Military Relations in Contemporary Poland: 1945-1981", *Armed Forces and Society* 8, no. 1, (1981): 3-20, esp. 10):

15. Սակայն անգամ Իսպանիայում եկեղեցին ի վերջո նպաստեց ավտորիտար մոդելի ապալեզիտինացմանը: Խուան Լինց, «Եկեղեցին և պետությունն Իսպանիայում քաղաքացիական պատերազմից մինչև ժողովրդավարության վերադարձը» (Juan J. Linz, "Church and State in Spain from the Civil War to the Return of Democracy", *Daedalus* 120, no. 3 (1991): 159-78):

«կեսարապապականության» մի այնպիսի ձև, որի դեպքում կայարը կամ պետության դեկավարը հանդիսանում է գերագույն՝ թե՛ աշխարհիկ, և թե՛ հոգևոր իշխանություն:<sup>16</sup> Այն մեծ մասամբ հասու չէ նաև իսլամական հասարակությանը, որովհետև իսլամը, որպես կրոն, հավատացյալների մի համայնք է, որտեղ բոլոր հավատացյալները կարող են լինել քարոզիչներ, և որտեղ չկա պաշտոնական անդրազգային աստիճանակարգ: Կաթոլիկության՝ որպես անդրազգային դերակատարի մասին այս էքսկուրսը հատկապես հարիր է Լեհաստանի մեր վերլուծությանը, որովհետև 1978թ. հոկտեմբերի 16-ին կարդինալ Կարոլ Վոյտիլան (Հովհաննես Պողոս II պապ)՝ Լեհաստանի երկրորդ քաղաքի՝ Կրակովի արքեպիսկոպոսը, դարձավ պապ Հովհաննես Պողոս II, և մեկտեղվեցին անգամ էլ ավելի մեծ հակավարչակարգային ռեսուրսներ՝ այնպիսի հետևանքներով, որոնք մենք կբացատրենք ավելի ուշ:

Մենք չենք ցանկանում գերընդգծել մեր միտքը: Լեհաստանում ամբողջատիրական վարչակարգի պարտադրումը հետկոմունիստական Լեհաստանում իհարկե թողեց որոշ հետևանքներ, որոնք բնորոշ չեն տիպիկ հետավտորիտար վարչակարգին: Ամենակարևոր հետևանքն այն էր, որ չնայած մասնավոր գյուղատնտեսական տիրույթների նշանակալի աստիճանին, պետությունն էր կատարում հրամայող դերը տնտեսության մեջ, որի արդյունաբերության ու ծառայությունների ոլորտները ճնշող մեծամասնությամբ պետականացված էին: Անգամ եթե Լեհաստանը երբեք լրիվ ամբողջատիրական չի եղել, այնտեղ 1945-89թթ. «իրական սոցիալիզմը» հետկոմունիստական Լեհաստանում թողել էր խմբային շահերի բազմաթիվ կառույցներ:<sup>17</sup> Կոմունիստական ավտորիտարության իրականությունը նույնպես նշանակում էր, որ, որպեսզի դիմադրությունն արդյունավետ լինի, պետք է հիմնված լինի քաղաքացիական հասարակության վրա, որովհետև ընդդիմադիր կուսակցությունները, որպես քաղաքական հասարակության արտահայտություն, երբեք պաշտոնապես թույլատրված կամ ոչ պաշտոնապես հանդուրժված չեն եղել:

## ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԳԵՐԻՇԵՄԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԿՈՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Գոմուլկայի 1956թ. համաձայնությամբ՝ թույլատրել եկեղեցուն կրոնի դասավանդումը հանրային դպրոցներում, եկեղեցուն այլևս երբեք ոչ մի մահացու վտանգ չի սպառնացել:<sup>18</sup> 1956թ. հետո Լեհաստանի համալսարաններն ու հետազոտող գիտնականները (ինչ-

16. Կեսարապապականության և ուղղափառ եկեղեցիների մասին տե՛ս Մաքս Վեբեր, «Տնտեսությունը և հասարակությունը», Գյունտեր Ռոթի և Կլաուս Վիտտիչի խմբ. (Max Weber, *Economy and Society*, ed. Guenther Roth and Claus Wittich (Berkeley: University of California Press, 1978), 2:1159-63):

17. Տե՛ս Էդմունդ Մոկրչիցկի, «Իրական սոցիալիզմի ժառանգությունը, խմբային շահեր և նոր ուտոպիայի որոնումը» (Edmund Mokrzycki, *"The Legacy of Real Socialism, Group Interests, and the Search for a New Utopia"*), Քոննորի և Պոլժայսկու խմբ.: «Փախուստ սոցիալիզմից. լեհական ուղին» (W. C. Connor and P. Ploszajski, eds., *Escape from Socialism: The Polish Route* (Warsaw: IFiS Publishers, 1992), 269-81):

18. Լեհական եկեղեցու և «Համերաշխության» գերմանացի ուսումնասիրող Դիտեր Բինգերը նշում է, որ «1957թ. մայիսին Գոմուլկան բացատրեց, որ ինքը գտնում է, որ կա համակեցության կարիք հավատացյալների ու ոչ հավատացյալների միջև և եկեղեցու ու սոցիալիզմի միջև»: Թեև եկեղեցու և պետության միջև լարվածությունը, որը մեծ մասամբ բնորոշ է «վարչակարգը զիջում է, հասարակություն-

պես և մինչ այդ Արևելյան Եվրոպայում ինքնուրույնության ամենաբարձր աստիճանն ու ստեղծագործ միտք զարգացնող Հարավսլավիայում), զարգացրին այնպիսի քաղաքականապես կարևոր բնագավառներ, ինչպիսիք են քաղաքական սոցիոլոգիան, փիլիսոփայությունը, պատմությունը և տնտեսագիտությունը:<sup>19</sup> Լեհ մտավորականներն ու քաղաքացիները, չնայած վարչակարգի կողմից որոշ սահմանափակումներին ու հսկողությանը, ունեին միջազգային այցելությունների ազատության զգալի աստիճան:

Համեմատական ու տեսական տեսանկյունից լեհական ընդդիմության բարոյական ու կազմակերպական ոճը Լեհաստանը դուրս էր բերել առաջապահ դիրքի վրա Արևելյան Եվրոպայում: Վճռական տարբերությունը Լեհաստանի և բոլոր մյուս արևելավրոպական կոմունիստական պետությունների միջև «քաղաքացիական հասարակության արտակարգ հորիզոնական հարաբերությունն էր ինքն իր հետ»:<sup>20</sup> Լեհական հասարակության «ինքնակազմակերպման» այս աստիճանը հնարավոր էր ավտորիտար վարչակարգում, սակայն անհնար է ամբողջատիրական վարչակարգում և ցանկացած այլ վարչակարգի սահմաններից դուրս, որը կարելի էր անվանել հետամբողջատիրական: Այս հարաբերությունը ստեղծվել է ժամանակի ընթացքում: 1968թ. ուսանողներն ու մտավորականները բողոքեցին, սակայն քիչ աջակցություն ստացան բանվորների կողմից: Իսկապես, կառավարությունը բանվորներին հավաքագրել էր հատուկ խմբերում՝ խանգա-

նը՝ նվաճում» դիմամիկային, նորից շարունակվեց այս ժամանակահատվածից հետո, եկեղեցին այլևս երբեք լուրջ սպառնալիքի տակ չհայտնվեց: Այն մնաց, Բինգենի բառերով, «Լեհաստանի քաղաքական համակարգի հաստատուն խարխիսը»: Դիտեր Բինգեն, «Կաթոլիկ եկեղեցին որպես քաղաքական գործիչ» (Dieter Bingen, *"The Catholic Church as a Political Actor"*, 213, 236):

19. 1970-ական թթ. Վարշավայից մի խումբ մտավորականներ սկսեցին անկախ դասախոսությունների շարք՝ նվիրված հասարակագիտությանն ու պատմությանը: Նախաձեռնությունը, որին մասնակցում էին հիմնականում համալսարանի ուսանողները՝ «ժողովրդի մեջ հայտնի որպես «Թոչոդ համալսարան», պարզվեց, որ ժողովրդականություն է վայելում... Հունվարին, 1978թ., վեց հայտնի մտավորականներ ու գիտնականներ ստորագրեցին մի հռչակագիր՝ կյանքի կոչելով «Ուսումնական դասընթացների ընկերությունը»... Իր գոյության առաջին տարիների ընթացքում «Թոչոդ համալսարանի» կողմից երկրի խոշոր քաղաքներում առաջարկվեց 120 դասախոսություն առնվազն 5000 մարդու»: Տե՛ս Յանուշ Բուգայսկի և Մաքսին Պոլակ, «Արևելյան Եվրոպայի թյուր զծերը՝ այլախոհություն, ընդդիմություն և սոցիալական ակտիվություն» (Janusz Bugajski and Maxine Pollack, *East European Fault Lines: Dissent, Opposition and Social Activism* (Boulder, Colo.: Westview Press, 1989), 226): Տե՛ս նաև Կարոլ Բորովսկի, «Աշխարհիկ և կրոնական կրթությունը Լեհաստանում» (Karol H. Borowski, *"Secular and Religious Education in Poland"*, *Religious Education* 70, no 1 (1975): 70-76):

20. «Քաղաքացիական հասարակության՝ ինքն իր հետ հորիզոնական հարաբերության մասին» հասկացությունը մշակել է Ալֆրեդ Ստեփանը, «Պետական իշխանությունը և քաղաքացիական հասարակության հզորությունը Լատինական Ամերիկայի Հարավային Կոնուսում» (Alfred Stepan, *"State Power and Strength of Civil Society in the Southern Cone of Latin America"*), Պիտեր Էվանսի, Դիտրիխ Ռյուշեմեյերի և Թեդա Տոքոպոլի խմբ.՝ «Հետ վերադարձնելով պետությունը» (Peter Evans, Dietrich Rueschmeyer, and Theda Skocpol, eds., *Bringing the State Back In* (Cambridge: Cambridge University Press, 1988), 317-43): Լեհաստանում քաղաքացիական հասարակության միախուսման բարդ ու չափազանց կարևոր գործընթացը՝ հյուսելու ընդդիմության «գործվածքը», նման է Բրազիլիայի օրինակին, որտեղ այդ «գործվածքը», որը բաղկացած էր «նոր միութենականությունից», հիմնական համայնքային խմբերից, «ժողովրդական եկեղեցուց» և մտավորականներից, վճռորոշ էր հին վարչակարգի ոչ թե պարզապես ազատականացման, ժողովրդավարացման համար: Տե՛ս ակնարկներն Ալֆրեդ Ստեփանի խմբագրած հատորում, «Բրազիլիայի ժողովրդավարացումը. անցման և կայացման խնդիրներ» (Alfred Stepan's edited volume, *Democratizing Brazil: Problems of Transition and Consolidation* (Oxford: Oxford University Press, 1989), esp. 143-296):

րելու ցույցերին՝ փորձելով բևեռացնել բանվորներին ու մտավորականությանը: 1970թ-ի վերջին ու 1971թ-ի սկզբում բանվորներն անցկացրեցին զանգվածային ցույցեր, սակայն մտավորականները նրանց չմիացան: 1976թ., սակայն, մտավորականները ստեղծեցին մի կազմակերպություն, որն անվանվում էր "KOR" (Բանվորների պաշտպանության հանձնախումբ), օգնելու բանվորներին, որոնք պատժվել էին գործադուլային միջոցառումներին մասնակցության համար: Երբ 1980թ. Լեխ Վալենսայի ու բանվորների կողմից ղեկավարված զանգվածային բողոքներ բռնկեցին Գդանսկի՝ Լենինի անունը կրող նավաշինարանում, քաղաքացիական հասարակության մյուս խմբերը՝ մտավորականներից մինչև եկեղեցին, օգնեցին միահյուսելու լեհական դիմադրության խիտ գործվածքի «միջնաթելերն ու հենքը»: «Համերաշխությունն» իր բարձրակետին ուներ 10 միլիոն անդամագրված բանվոր, որոնք ներկայացնում էին երկրում զբաղված բանվորների մեծամասնությունը: «Համերաշխություն» դիրքն այնքան ամուր էր տնտեսության ու հասարակարգի մեջ, որ 1980թ. օգոստոսին ժողովրդի միակ ներկայացուցիչը լինելու կուսակցական պետության ցանկացած հավակնություն ջախջախվեց, երբ «Համերաշխությունը», որը դարձավ կոմունիստական երկրներում առաջին անկախ արհմիությունը, նվաճեց իրավական ճանաչում: «Համերաշխությունը» նաև կարողացավ ստիպել կառավարությանը՝ մեղմացնելու նումենկլատուրային համակարգը: Լեհական կառավարությունը համաձայնեց, որ գործարաններում հետագա նշանակումներն «արվեն որակավորման և ոչ թե՛ կուսակցական անդամակցության հիման վրա»:<sup>21</sup>

Լեհաստանն ունի հանրային կարծիքի հարցման հետազոտությունների ամենամեծ ու ամենալավ ավանդույթն Արևելյան Եվրոպայում: Այս հարցումները մշտապես ցույց են տալիս պետության ու հասարակության ամբողջատիրական տեսլականի հանդեպ լուրջ հասարակական մերժում: 1981թ. նոյեմբերին անցկացված մի հանրահարցում ցույց տվեց, որ «պատասխանողների 60-80%-ը հայտարարել է, որ իրենք կողմ են իշխանության բազմակենտրոն մոդելին, այսինքն՝ ինստիտուտների ինքնուրույնության, սահմանափակ կենտրոնական պլանավորման, սոցիալական կյանքում եկեղեցու հարաճուն մասնակցության ու կուսակցական կյանքի կրճատման սկզբունքին... պատասխանողների 70%-ն ասել է, որ իրենք կողմ են անկախ, ինքնակառավարվող «Համերաշխություն» արհմիության գործողություններին»:<sup>22</sup>

Պետության դեմ հասարակության ինքնակազմակերպման լեհական ձևերն, ի դեպ,

21. Վլոդիմիր Չոնկով, «Համերաշխություն» շարժումը, ղեկավարությունը և քաղաքական համակարգը Լեհաստանում» (Włodzimierz Pankow, *"The Solidarity Movement, Management and the Political System in Poland"*), Յադվիգա Կորալևիչի, Իրենեուշ Բյալեցկու և Մարգարետ Վաթսոնի խմբ.՝ «Ճգնաժամ ու անցում. լեհական հասարակությունը 1980-ականներին» (Jadwiga Koralewicz, Ireneusz Bialecki, and Margaret Watson, eds., *Crisis and Transition: Polish Society in the 1980s* (Oxford: Berg Publishers, 1987), 112-15): Քաղաքական մշակույթը, որը ծնունդ է տվել "KOR"-ին և «Համերաշխությանը» մեծ խորությամբ ուսումնասիրվել է Անջեյ Տիմովսկու կողմից՝ «Անցանկալի հեղափոխությունը. բարոյական տնտեսությունից մինչև ազատական հասարակությունը Լեհաստանում» (Andrzej W. Tymowski, *The Unwanted Revolution: From Moral Economy to Liberal Society in Poland* (The Social Origins of Reform and Counter-Reform) (Ph.D. disc. Department of Political Science, Yale University, 1995), esp. 126-241):

22. Իրենեուշ Բյալեցկի, «Ի՞նչ էին մտածում լեհերը 1981թ.» (Ireneusz Bialecki, *"What the Poles Thought in 1981"*), Կորալևիչի, Բյալեցկու և Վաթսոնի խմբ.՝ «Ճգնաժամ և անցում» (Koralewicz, Bialecki, and Watson, eds., *Crisis and Transition*, 30):

ոգեշնչման աղբյուր են հանդիսացել քաղաքացիական հասարակության կազմակերպիչների համար աշխարհի տարբեր մասերում, հատկապես՝ Լատինական Ամերիկայում: Լեհաստանի ինքնակազմակերպված հասարակությունում մարդիկ համարձակվում էին կազմակերպվել, գործել, մտածել ու ապրել Ադամ Միխնիկի հայտնի արտահայտությամբ՝ «կարծես թե իրենք ազատ էին»: Իսկապես, մեկ տարվա գոյությունից հետո «Համերաշխության» ուժն ու լեգիտիմությունն այնպիսին էն, որ Ստեֆան Կանիան՝ առաջին քարտուղարը Գերեկից հետո և նախքան Յարուզելսկին, ջանքեր էր գործադրում ժխտելու այն, որ Լեհաստանում գոյություն ունի երկիշխանության իրադրություն (այսինքն՝ անկում ապրող կուսակցության և «Համերաշխության» միջև):

Գրամշիի բառերով ասած՝ «Համերաշխությունը» 1981 թվականի աշնանը քաղաքացիական հասարակությունում ուներ գերիշխանություն, և կուսակցությունն իր իշխանությունը պահպանել էր միայն այն չափով, որքանով այն կառավարում էր բանակի պատժիչ ուժերն ու անվտանգության ծառայությունները, իսկ Խորհրդային Միության ստվերը սահմանափակում էր վարչակարգին նետված մարտահրավերը: Այս ավելի ու ավելի ինքնակազմակերպվող հասարակության ֆոնի վրա էր, որ երևաց Լեհական կոմունիստական կուսակցության թուլության մեկ նշան ևս: 1981թ. դեկտեմբերի 13-ին գեներալ Յարուզելսկին, չհիշատակելով կոմունիստական կուսակցության մասին կամ չկիրառելով *ընկեր* բառը և իրեն ներկայացնելով որպես պարզապես «զինվոր և Լեհաստանի կառավարության ղեկավարը»՝ հայտարարեց. «Մոյնով ես հայտարարում եմ, որ այսօր կազմավորվել է Ազգային փրկության զինվորական խորհուրդը», և Լեհաստանը գտնվում էր ռազմական դրության մեջ:<sup>23</sup> Կուսակցության առաջատար դերի *դե ֆակտո* կորուստը բացահայտորեն ճանաչվեց այն փաստով, որ կառավարության ղեկավարն ու գրեթե բոլոր գլխավոր նախարարները կուսակցական պաշտոնյաներ չէին՝ որպես այդպիսին, այլ լեհական կուսակցական զինվորներ՝ գեներալ Յարուզելսկու հրամանատարությամբ: Ի տարբերություն պատմության մեջ այլ կոմունիստական վարչակարգերի՝ Լեհաստանի կոմունիստական վարչակարգը 1981 թվականից մինչև «Համերաշխության» առաջին վարչապետի պաշտոնի անցնելը 1989թ. օգոստոսին ուղղորդվում էր զինվորականության ներկայացուցիչների կողմից, որոնք, կոմունիստական կուսակցության անդամակցություն ունենալով հանդերձ, հիմնականում զինվորական սպաներ էին:

Գեներալ Յարուզելսկին, միաժամանակ պահելով վարչապետի ու պաշտպանության նախարարի պաշտոնները, բարձրաստիճան զինվորական սպաներ նշանակեց մի շարք կարևորագույն նախարարություններում, պետական ձեռնարկություններում և համայնքային կառավարման բազմաթիվ պաշտոններում: Նա ստեղծեց Ազգային փրկության

23. Որպես փաստաթուղթ՝ ռազմական դրության մասին հռչակագիրը զարմանալիորեն նման է Լատինական Ամերիկայում աստիճանակարգային զինվորականության ղեկավարների կողմից արձակված բազմաթիվ փաստաթղթերին՝ ի հիմնավորումն իշխանությունը խլելուն: Փաստաթուղթը չունի նաև որևէ գաղափարախոսական հավակնություն, որը կարելի է տեսնել ամբողջատիրական կամ անգամ հետամբողջատիրական դիսկուրսում: Յարուզելսկին հիշատակում է «անվերջանալի հակամարտությունն» ու «քառուր», որոնք երկիրը հասցրել էին «անդունդի եզրին», որը բացատրում է «պատասխանատվության այն բեռը, որն ընկնում է ինձ վրա»: Լրիվ փաստաթուղթը վերարտադրվել է Ռոբերտ Մաքսվելի խմբ.՝ «Յարուզելսկի. Լեհաստանի վարչապետ» (Robert Maxwell, ed., *Jaruzelski: Prime Minister of Poland* (Oxford: Pergamon Press, 1985), 28-30):

զինվորական խորհուրդն ու կառավարեց դրա միջոցով (*Wojskowa Rada Ocalenia Narodowego*, or WRON): Այս խորհրդի բոլոր քսանմեկ անդամներն ունեին բարձր զինվորական պաշտոններ և հանդես էին գալիս որպես առաջատար իշխանություն երկրում: Լեհ զինական Յադվիգա Ստանիչկիսը ռազմական դրության ռեժիմը նկարագրում է որպես Յարուզելսկու՝ ինստիտուցիոնալ վարչակարգը վերասահմանելու և կուսակցական պետությունից դեպի ավտորիտար-բյուրոկրատական, ոչ գաղափարախոսական բանակային պետության անցնելու փորձ:<sup>24</sup> Չինվորականության առաջատար դիրքերում գտնվող կուսակցական զինվորների մի խումբ, որը միևնույն ժամանակ ձևավորեց կոմունիստական կուսակցությունից տարբերվող մի ինստիտուտ, ազդեց վարչակարգի որոշման վրա՝ նախաձեռնելու ազատականացում և ճանաչելու «Համերաշխությունը» որպես լեզիտիմ, ընդունելի ու անգամ անհրաժեշտ «խաղաղողի», որի հետ վարչակարգը կբանակցեր: Ինչպես Կորբոնսկին իրավամբ ասում է, լեհական զինվորականությունը պատմականորեն հանդես է եկել որպես քաղաքականության մեջ «չափավորեցնող» ուժ, որը ժամանակ առ ժամանակ վետո է կիրառել ներքին օրակարգի ու առանձնապես կոմունիստական մոտեցումների վրա: 1981թ., սակայն, այս չափավորեցնող ուժի դերն անկում ապրեց, զինվորականությունը դարձավ կառավարություն, և զարգացավ մի յուրօրինակ հնգակողմ ուժային հարաբերություն՝ անվտանգության ծառայությունների (որոնք ղեկավարվում էին ներքին գործերի նախարար գեներալ Չեպլավ Կիսչակի կողմից, ով իր պաշտոնը պահեց մինչև 1990թ. ամառը), բանակի, Խորհրդային Միության հետ առնչվող կուսակցության (որը ղեկավարվում էր Վարշավյան դաշինքի վստահելի սպա գեներալ Յարուզելսկու կողմից), կաթոլիկ եկեղեցու և «Համերաշխության» միջև:<sup>25</sup> Հույժ

24. Յադվիգա Ստանիչկիս, «Լեհաստան. ինքնասահմանափակող հեղափոխություն» (*Jadwiga Staniszkis, Poland: Self-limiting Revolution* (Princeton: Princeton University Press, 1986), 320):

25. Տե՛ս Սինդի Սկաչ, «Չինվորական վարչակարգեր և համաձայնեցված անցումներ ժողովրդավարությանը. Լեհաստանն ու Բրազիլիան համեմատական տեսանկյունից» (*Cindy Skach, "Military Regimes and Negotiated Democratic Transitions: Poland and Brazil in Comparative Perspective"* (1991, unpublished manuscript)): Արվել են մի շարք լավ վերլուծություններ Լեհաստանում «ավտորիտարության զինվորականություն» հարթության վերաբերյալ: Ջորջ Մալչերն, «Լեհաստանի քաղաքականացված բանակը, համազգեստավոր կոմունիստները» (*George C. Malcher, Poland's Politicized Army: Communists in Uniform* (New York: Praeger, 1984)) այն քիչ հեղինակներից մեկն է, որն ընդունել ու փաստել է լեհական վարչակազմի ռազմականացումը 1981թ. հետո: Լեհ սցիոլոգ Ջերզի Վիատրը (*Jerzy Wiatr*) քննարկում է կուսակցական զինվորի զարգացումը՝ «Չինվորը և ազգը. զինվորականության դերը Լեհաստանի քաղաքականության մեջ 1948-1985թթ.» (*The Soldier and the Nation: The Role of the Military in Polish Politics, 1948-1985* (Boulder, Colo.: Westview Press, 1988)): Էնդրյու Միխտայի գիրքը՝ «Կարմիր արծիվ. բանակը Լեհաստանի քաղաքականության մեջ 1944-1988թթ.» (*Andrew Michta, Red Eagle: The Army in Polish Politics, 1944-1988* (Stanford, Calif.: Hoover Institution Press, 1990)), պարունակում է զինվորական ավտորիտարիզմի ավելի քիչ իրական վերլուծություն, սակայն զինվորականություն-ինստիտուտի մասին տրամադրում է մանրամասն ու թարմ պատմական նկարագրություն:

Լեհաստանում քաղաքացիական-զինվորական պատմական հարաբերությունների մանրամասն քննարկում և վերլուծություն կարելի է գտնել Անջեյ Կորբոնսկու (*Andrzej Korbonski*) աշխատություններում: Տե՛ս հատկապես նրա հոդվածը Սարա Մ. Թերրիի հետ՝ «Չինվորականությունը որպես քաղաքական գործող անձ Լեհաստանում» (*Sarah M. Terry, "The Military as a Political Actor in Poland"*), Անջեյ Կոլկովիչի խմբ.՝ «Չինվորները, գյուղացիները և բյուրոկրատները. քաղաքացիական-զինվորական հարաբերությունները կոմունիստական և արդիականացող հասարակություններում» (*Andrzej Kolkowicz, ed., Soldiers, Peasants and Bureaucrats: Civil-Military Relations in Com-munist and Modernizing Societies* (London: George Allen and Unwin Press, 1982) 159-80), և «Քաղաքացիական-զինվորական հա-

կարևոր է ընդունել, որ բոլոր հինգ ինստիտուտներն այնուհետև ազդեցին միմյանց վրա՝ ձևավորելով վերջնական անցման ժամկետն ու ընթացքը:

### ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՆԱԶԵՆՔ ԱՆՅՈՒՄ

Երբ ռազմական դրություն հայտարարվեց 1981 թվականի դեկտեմբերի 13-ին, Լեհաստանում գործող խոշոր ուժերի հարաբերակցությունը ներառում էր մի կողմից «Համերաշխություն» շարժումը (կազմակերպված աշխատավորների ու նրանց հետ կապված սոցիալական շարժումների մեծ մասը) և կաթոլիկ եկեղեցին, իսկ մյուս կողմից՝ բարձրաստիճան գինվորականությունը, անվտանգության ծառայությունները և նրանց հսկողության տակ մնացած պաշտոնական կուսակցության մնացուկները: «Համերաշխություն» շարժման ուղերձն ամրապնդվեց նրանով, ինչը Բրոնիսլավ Գերեմեկն անվանել է «անկործան կայսրություն», այն է՝ ավելի քան հազար ոչ պաշտոնական ու պաշտոնական հրատարակություններով: Կաթոլիկ եկեղեցին, չնայած ընդդիմությանը հարելուն, մերթընդմերթ օգտագործվել է վարչակարգի կողմից որպես ոչ պաշտոնական միջնորդ ու հաշտարար: Գործող անձանց այս խումբը (անգամ եթե ընդունենք անդրազգային խորհրդային ներկայությունը) ավելի մոտ է ավտորիտար Բրազիլիայում և Չիլիում եղած խմբերին, քան ամբողջատիրական կամ անգամ հետամբողջատիրական երկրներում եղածներին:

Գործող ուժերի այս վերլուծությունը մեզ ուղղակիորեն հանգեցնում է մեր այն փաստարկին, որ Լեհաստանն ավելի, քան որևէ այլ երկիր Արևելյան Եվրոպայում, դաշնությունահենք անցման օրինակ է, որտեղ ընդդիմությունը վճարել է գին անցման համար, որը նման է այն անցումներին, որոնք մենք վերլուծեցինք Բրազիլիայում և էլ ավելի շատ՝ Չիլիում: Ե՛վ Չիլիում, և՛ Լեհաստանում դաշնությունահենք անցումները նշանակել են, որ ժողովրդավարությունն սկսվել է հին վարչակարգի սահմանադրությամբ և հին վարչակարգի կողմից դեռևս օրենսդիրում ու պետական ապարատում պահպանվող ուժեղ պաշտոններով: Այժմ եկեք տեսնենք, թե այս պարադոքսալ, սակայն շատ իրական դաշնությունահենք անցումն ինչպես է տեղի ունեցել:

1987-88թթ. Լեհաստանն ավտորիտար վարչակարգ էր, որն ուներ հարաճուն խնդիրներ և հարաճուն ընդդիմություն: 1987թ. հունիսին Հովհաննես Պոդոս II պապը կատարեց իր երրորդ այցելությունը Լեհաստան և կոչ արեց վերալեզիտիմացնելու «Համերաշխությունը»: Վարչակարգը հասկանում էր իր տնտեսական խնդիրների լրջությունը, սակայն 1987թ. նոյեմբերին գեներալ Յարուզելսկու առաջարկը՝ տնտեսական փոփոխությունների փաթեթը, որը պետք է աջակցության արժանանար հասարակության կողմից, ժողովրդական հանրաքվեի ժամանակ պարտություն կրեց, որովհետև չկարողացավ ձեռք բերել քվեարկելու իրավունք ունեցող քաղաքացիների պահանջվող մեծամասնությունը: Հանրաքվեում պարտությունը (անհնար՝ ամբողջատիրական վարչակարգում և աննախադեպ՝ մինչկլորսեդանային հետամբողջատիրական վարչակարգերում)

րաբերությունների երկրնտրանքները ժամանակակից Լեհաստանում. 1945-1981թթ.» ("The Dilemmas of Civil-Military Relations in Contemporary Poland: 1945-1981", in *Armed Forces and Society* 8, no. 1, (1981): 3-20):

յուրահատուկ իրադարձություն էր կոմունիստական Եվրոպայում և նպաստեց վարչակարգի հետագա քայքայմանը:

1988թ. մայիսին սկսվեց «Համերաշխության» գործադուլների նոր շրջան՝ նախաձեռնված ավելի երիտասարդ ու ավելի ակտիվ արհմիութենականների նոր սերնդի կողմից: Որոշ չափով և՛ Յարուզելսկին՝ որպես վարչակարգի չափավոր, և՛ Վալենսան՝ որպես ընդդիմության չափավոր, կանգնած էին իրենց արմատականների պոտենցիալ մարտահրավերների առջև: Եվ վերջապես, առաջ էր ելել անցման դասական խաղը՝ չորս խաղացողով (վարչակարգի արմատականները, վարչակարգի չափավորները, ընդդիմության չափավորները, ընդդիմության արմատականները):

1988 թվականի ամռան սկզբին ներքին գործերի նախարար գեներալ Կիշչակը հարցազրույցի միջոցով դիմեց Լեխ Վալենսային, թե արդյոք վերջինս կցանկանա սկսել «հետախուզական» բանակցություններ: Վալենսան համաձայնվեց 1988 թվականի հուլիսի 21-ի մի նամակում: Օգոստոսի 26-ին՝ «Համերաշխության» գործադուլների երկրորդ ակիթի ընթացքում, գեներալ Յարուզելսկին քաղբյուրոյի մի հանդիպման ժամանակ առաջարկեց բանակցություններ վարել «Համերաշխության» հետ:<sup>26</sup> Վճռորոշ մինչբանակցային գործընթացի առաջ գալու հետ մեկտեղ պարզ դարձավ, որ կառավարությունը «Համերաշխությունից» որոշ աջակցություն է ցանկանում ստանալ իր տնտեսական ռազմավարության համար: Կառավարությունը չէր ցանկանում գնալ այն ռիսկին, որ «Համերաշխությունը» 1989թ-ին համընդհանուր բոլկոտի ենթարկի առաջիկա խորհրդարանական ընտրությունները: «Համերաշխությունն» էլ իր հերթին ցանկանում էր իրավական ճանաչում, որը միայն կառավարությունը կարող էր տալ:<sup>27</sup> Մենք շեշտում ենք այս կետերը, որովհետև ջանում ենք ընդգծել, որ կառավարությունը ցանկանում էր բանակցություններ, սակայն դարձյալ իրեն պահում էր այնպես, կարծես դեռևս տիրապետում է զգալի ճնշիչ ուժի: Ինչպես պարզվեց, և՛ կառավարությունը, և՛ ընդդիմությունը գերազնահատել էին կառավարության ուժը:<sup>28</sup> Իսկապես, նույնիսկ այն ժամանակ, երբ ընթանում

26. «Կլոր սեղանի» մեր քննարկման համար շատ բանով պարտական ենք Լեհական իրավական սահմանադրական տեսաբան Վիկտոր Օսիատինսկուն, որը դիտել էր «Կլոր սեղանի» բանակցությունները, իսկ ավելի ուշ՝ իրականացրել արխիվների ու հարցազրույցների էքստենսիվ հետազոտություն: Նա գրում է իր հայտնաբերած փաստերի մասին ««Կլոր սեղանի» բանակցությունները Լեհաստանում» գործում (*"The Round Table Negotiations in Poland"*) (Արևելյան Եվրոպայում սահմանադրականության ուսումնասիրությունների կենտրոն, Չիկագոյի համալսարանի իրավաբանական դպրոց՝ Կենտրոնական Եվրոպական համալսարանի հետ համագործակցությամբ, 1993թ., աշխատանքային փաստաթուղթ no. 1): Պետք է ներառվի Ջոն Էլսթերի խմբ.՝ «Կլոր սեղանի» բանակցություններն ու կոմունիզմի վերջը» (Jon Elster, ed., *The Roundtable Talks and the End of Communism* (Chicago: University of Chicago Press, forthcoming)):

27. 1988թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսների նախաբանակցային գրույցների կարևորության (և չորս խաղացողով խաղի դինամիկայի ցուցադրում) մասին տե՛ս Յադվիգա Մտանիկչիս, «Արևելյան Եվրոպայում թրիչքային փոփոխության դինամիկան. Լեհաստանի փորձը» (*Jadwiga Staniszkis, The Dynamics of Breakthrough in Eastern Europe: The Polish Experience* (Berkeley: University of California Press, 1991), 195-202), և Օսիատինսկի, ««Կլոր սեղանի» բանակցությունները Լեհաստանում» (*Osiatynski, "Round Table Negotiations in Poland"*, 7-12): Պաշտպանելու համար, թե ինչու «Համերաշխությունը» մասնակցեց «Կլոր սեղանին», որն ընդգծում է առաջինը լինելու և ձեռք բերված նվաճումների գինը, տե՛ս Բրոնիսլավ Գերեմեկ, «Հետկոմունիզմն ու ժողովրդավարությունը Լեհաստանում» (*Bronislaw Geremek, "Post-Communism and Democracy in Poland"*, *Washington Quarterly* 13, no. 3 (1990): 125-31):

28. Կառավարության կողմից գլխավոր բանակցող (իսկ հետագայում կոմունիստական կուսակցու-



Էին «Կլոր սեղանի» բանակցությունները, դրանք միշտ պարուրված էին լինում «անգիտության ռուլյան շղարշով» այն առումով, որ երկու կողմերն էլ չիմանալով, թե ինչ կպատահի ապագայում, գնացին զիջումների, որոնց չէին գնա, եթե կարողանային իմանալ, թե արդյունքներն ինչպիսին կլինեն:<sup>29</sup>

Իհարկե, Լեհաստանի «Կլոր սեղանի» բանակցությունները շարժման մեջ դրեցին 1989 թվականի արտասովոր իրադարձությունների շղթան Եվրոպայում: Բանակցությունների հետևանքով տեղի ունեցավ մեկ պալատի՝ Սենատի քառասուն տարվա մեջ առաջին ամբողջապես ազատ ընտրությունն Արևելյան Եվրոպայում: 1989թ. հունիսի ընտրությունների ժամանակ «Համերաշխության» անսպասելի ցնցող հաղթանակի պատճառով օգոստոսին՝ քառասուն տարվա մեջ առաջին անգամ, Արևելյան Եվրոպայում պաշտոնի անցավ առաջին ոչ կոմունիստ վարչապետն այն բանից հետո, երբ կոմունիստները չկա-

թյան իրավահաջորդի՝ սոցիալ- ժողովրդավարների միության նախագահ) Ալեքսանդեր Կվասնիսկին ավելի ուշ Օսիտինսկուն ասաց. «Այս պատրանքը [մեր ուժի մասին] մեզ գերծ պահեց Ռուֆինիայի փորձից: Եթե կուսակցության ղեկավարությունը հասկանար, թե որքան թույլ է այն, երբեք չէր լինի «Կլոր սեղանի» ու խաղաղ փոփոխությունը» (էջ 7): «Համերաշխության» գլխավոր բանակցող Ջրիգլ Բույակը (որն ավելի ուշ դարձավ ROAD կուսակցության համահիմնադիրը) ընդգծել է Օսիտինսկու մտ. որ «Համերաշխությունը» ջանք է գործադրել «մոտենալու գոյություն ունեցող համակարգը գուտ բարելավելու և իրական բարեփոխումների միջև սահմանագծին, որը ձևահյուս կատաշտացնի» (էջ 47): Օսիտինսկին շարունակում է՝ ասելով, որ «1989թ. ապրիլի 5-ին գրեթե ոչ ոք չէր հավատում, որ այս գիծը կանցնեն «Կլոր սեղանից» գրեթե անմիջապես հետո»: «Կլոր սեղանի» դաշինքից վեց տարի անց դրա որոշ համաձայնություններ, ինչպես, օրինակ՝ նախագահական պաշտոնը, դեռևս գործում են:

29. Իսկապես, ինչպես Ադամ Պրժեմոսկին (Adam Przeworski) ցույց է տալիս «Ժողովրդավարությունը և շուկան. քաղաքական ու տնտեսական բարեփոխումներն Արևելյան Եվրոպայում և Լատինական Ամերիկայում» (*Democracy and the Market: Political and Economic Reforms in Eastern Europe and Latin America* (Cambridge: Cambridge University Press, 1991), 87), «Եթե ոմանք գտնվում են ռուլյան շղարի հետևում, այսինքն՝ եթե քիչ են տեղյակ իրենց քաղաքական ուժի մասին հնարավոր ժողովրդավարական ինստիտուտների ներքո, բոլորն ընտրում են առավելագույն լուծումը՝ ինստիտուտներ, որոնք բերում են զայտը և հակված չեն հանդիսացող ուժեր և առավելագույնի են հասցնում փոքրամասնությունների քաղաքական ազդեցությունը... Հետևաբար, սահմանադրությունները, որոնք գրվում են այն ժամանակ, երբ ուժերի հարաբերությունը դեռ պարզ չէ, հավանական է՝ չեզոքացնեն իշխանության հարաճուն վերադարձերը, տրամադրեն ապահովագրություն վերջում պարտվողներին և նվազեցնեն մրցակցության պարզը»: Այսինքն, «ինստիտուտները, որոնք ընդունվել են, երբ ուժերի հարաբերությունը հայտնի կամ պարզ չէ, ամենայն հավանականությամբ կարող են դիմանալ մի շարք բավազան պայմաններին»: *Տե՛ս նաև* Ջոն Ռոլս, «Արդարության տեսություն» (John Rawls, *A Theory of Justice* (Cambridge: Harvard University Press, 1971), 136-37), որտեղ նա առաջին անգամ տեսականորեն զարգացրեց անգիտության շղարշի հետևում գտնվող սկզբնական դիրքի մասին իր գաղափարը: «Սկզբնական դիրքի մասին գաղափարն այն է, որ սահմանվի մի արդար ընթացակարգ, այնպես որ ցանկացած համաձայնեցված սկզբունք լինի արդար... Ինչ-որ կերպ մենք պետք է չեղյալ դարձնենք հատուկ չնախատեսված հանգամանքների ազդեցությունները, որոնք մարդկանց դնում են վատ վիճակում և գայթակղում են իրենց սեփական օգտին օգտագործել սոցիալական ու բնական հանգամանքները: Ներկայումս այդ չեն կարող անել կուսակցությունները, որովհետև գտնվում են անգիտության շղարշի հետևում: Կրանք չգիտեն, թե ինչպես զանազան այլընտրանքներ ազդեցություն կգործեն իրենց իսկ պարագայում և պարտավոր են գնահատել սկզբունքները միայն ընդհանուր նկատառումների հիման վրա»:

1991թ. Աժփիում վարչակարգն ընդդիմության կամ ինստիտուտների հետ առանց որևէ նախնական համաձայնության թույլ տվեց «FIS»-ին (Իսլամական փրկության ճակատ) հաղթել ընտրությունների առաջին փուլում. վարչակարգն այնուհետև չեղյալ համարեց երկրորդ շրջանը և հայտարարեց ռազմական դրություն: Երբ ընտրությունների արդյունքներով բարձրացվեց անգիտության շղարշը, անցման պայմանների շուրջ բանակցությունը դարձավ շատ ավելի դժվար:

րողացան ձևավորել կառավարություն, երբ նրանց՝ նախկին արբանյակ գյուղացիական կուսակցության դաշնակիցներից ոմանք անցան «թշնամու» բանակը: Առաջին ոչ կոմունիստ վարչապետի պաշտոնադրությունը խստորեն պայմանավորված էր միջազգային ուժային հարաբերություններով: Խորհրդային որևէ ներխուժում Լեհաստան կնշանակեր Արևմուտքի հետ Գորբաչովի լարվածության թուլացման վերջը՝ իր «պերեստրոյկա» ծրագրի համար վնասակար հետևանքներով: Գորբաչովը, հետևաբար, բախվեց մի բացահայտ ընտրության, որը չէր ակնկալել և որին չէր ձգտել ներխուժել Լեհաստան կամ թողնել, որ իշխանության գա մի ոչ կոմունիստական կառավարություն: Ավտորիտար կոմունիստական Լեհաստանում նոր ուժային հարաբերությունները ձևավորեցին Գորբաչովի որոշումը:<sup>30</sup> Սակայն երբ որոշումն ընդունվեց, լեհական օրինակն իր հերթին ունեցավ միջազգային ցուցադրական ազդեցություն և փոխեց ուժերի հարաբերակցությունը նաև արևելաեվրոպական բոլոր մյուս հետամերոջատիրական, կիսամերոջատիրական և անգամ սուլթանական վարչակարգերում:

Լեհաստանի պատմական ներդրումն Արևելյան Եվրոպայում կոմունիզմի տապալման գործում այժմ լայնորեն և ճիշտ է ըմբռնված: Ավելի թերի պատկերացում կա, սակայն, այն գնի մասին, որը Լեհաստանը վճարել է առաջինը լինելու համար: Լեհաստանի դաշնությունահենք անցումը հետաձգեց իր սեփական լրիվ անցումը և, որ առավել կարևոր է, այդ անցման ուղու ժառանգությունն ունեցավ չկանխատեսված վնասակար ազդեցություն ժողովրդավարության կայացման համար անհրաժեշտ քաղաքական ինստիտուտների ստեղծման Լեհաստանի ջանքերի վրա: Մենք համամիտ ենք Յան Գրոսի այն գնահատականին, որ «որևէ դարաշրջանի վերջին օրերի տրամաբանությամբ նախագծված վճռական իրավիճակները ոչ միայն արձանագրում են հին կարգի ավարտը, այլև մեծ մասամբ առանց այդ պահին գիտակցվելու ունենում են այնպիսի հետևանքներ, որոնք նոր դարաշրջանը ստիպված պետք է լինի հաղթահարել... Լեհաստանում այժմյան քաղաքական ճգնաժամի աղբյուրն ինստիտուցիոնալ է»:<sup>31</sup>

30. Ալեքս Պրավդան գեղեցիկ նկարագրում է այս բարդ դիպեկտիկական՝ Լեհաստանի առաջ գնալու և Խորհրդային Միության պատասխան ամենաթողության միջև. «Քանի որ Լեհաստանը ճանապարհ էր հարթում «պաշտպանողական ազատականացումից» դեպի իշխանության բաժանումն անցման համար, այն, այսպիսով, փոփոխություն հրահրեց Խորհրդային Միության քաղաքականության մեջ՝ ազատականացումից դեպի պատասխան ամենաթողություն: Լեհական քաղաքականության անցման և Խորհրդային Միության քաղաքականության զարգացման մեջ առանձնանում են երեք վճռորոշ պահեր՝ «Համերաշխության» օրինականացումը, դրա ընտրական հաղթանակը և Մազովեցկու կառավարության ձևավորումը: Յուրաքանչյուր դեպքում լեհերը որոշել են փոփոխության ժամանակն ու բնույթը՝ թեև միշտ աչքը պահելով Մոսկվայի վրա, որն ամեն պահի իր կշիռը դրել է ամենաթողության և ոչ թե՛ արգելքներ հարուցելու կողմում անկայունությունը նվազագույնի հասցնելու հույսով»: Ալեքս Պրավդա, «Խորհրդային քաղաքականությունն անցման մեջ գտնվող Արևելյան Եվրոպայի նկատմամբ: *The Means Justify the Ends*»), Ալեքս Պրավդայի խմբ.՝ «Արտաքին կայսրության վերջը. խորհրդային-արևելաեվրոպական հարաբերություններն անցման մեջ 1985-1990թթ.» (Alex Pravda, ed., *The End of the Outer Empire: Soviet-East European Relations in Transition, 1985-1990* (London: Royal Institute of International Affairs and Sage Publications, 1993), 24):

31. Տե՛ս Յան Գրոս, «Լեհաստան. քաղաքացիական հասարակությունից մինչև քաղաքական ազգ» (See Jan T. Gross, «Poland: From Civil Society to Political Nation»), Իվո Բանացի խմբ.՝ «Արևելյան Եվրոպայի հեղափոխության մեջ» (Ivo Banac, ed., *Eastern Europe in Revolution* (Ithaca: Cornell University Press, 1992) 57, 65):

«Կլոր սեղանի» դաշինքն իր հետևից բերեց երեք վճռորոշ փոխհամաձայնություն: Յարուզելակու շուրջ գտնվող կուսակցական զինվորները շատ էին փափագում թույլ չտալ «Համերաշխությանը» բոյկոտել առաջիկա 1989թ. ընտրությունները: «Համերաշխությունը» հիմնականում ցանկանում էր իրավական ճանաչում: Չնայած չափազանց ուժեղ նոմենկլատուրային ընդդիմությանը՝ կուսակցական մարտիկները, համաձայնվեցին, որ Լեհաստանի այն ժամանակ միապալատ Սեյմում տեղերի 35%-ը բաց լինի ազատ մրցակցային ընտրությունների համար հանուն այն բանի, որ «Համերաշխությունը» մասնակցի 1989թ. ընտրություններին: «Համերաշխությունը» չէր հավատում, որ այն ժամանակ հնարավոր էր լրիվ անցում ժողովրդավարությանը, սակայն լրջորեն մտածում էր, որ կարող է օգտագործել ընտրությունները «Համերաշխությունը» վերաօրինականացնելու և ազատ քաղաքական քարոզարշավի գործընթաց սկսելու համար: «Համերաշխությունն», այսպիսով, համաձայնեց նույնիսկ մի էլ ավելի մասնակի հաղթանակի, քան համաձայնել էին Բրազիլիայի, Ուրուգվայի կամ Չիլիի ընդդիմություններն իրենց սեփական բանակցություններում վարչակարգերի հետ, որոնք դեռևս անմիջականորեն կառավարվում էին բարձրաստիճան զինվորականության կողմից: Պարզվեց, որ լեհական փոխհամաձայնությունը նշանակում էր, որ 1989թ. օգոստոսից մինչև 1991թ. դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում կոմունիստական կուսակցությունն ու իր դաշնակիցներն ունեն մեծամասնություն ստորին պալատում, չնայած արբանյակային գյուղացիական կուսակցությունը, ինչպես ԳԴՀ-ում և Բուլղարիայում, շուտով հաստատեց որոշ անկախություն:<sup>32</sup>

Երկրորդ և երրորդ խոշոր փոխհամաձայնությունները Սենատի ու նախագահականության ստեղծման շուրջ էին: Սրանք ծագեցին որպես համալիր փոխհամաձայնություն: Կուսակցական զինվորներն ու նոմենկլատուրան ցանկանում էին ստեղծել ուժեղ նախագահականություն, որը կապահովեր «ընդհանուր շահերի» (օր.՝ կուսակցություն) երաշխավորումը: Սկզբում Կառավարությունն առաջարկեց, որ Սեյմն ու այլ մարմիններն անուղղակիորեն ընտրեն նախագահին: «Համերաշխությունը» հրաժարվեց սա ընդունել: Այս փակուղուց դուրս գալու համար կառավարությունն առաջարկեց ստեղծել Սենատ և թույլ տալ Սենատի ազատ ընտրություններ այն պատկերացմամբ, որ Սեյմն ու Սենատը պարզ մեծամասնությամբ, ինչը կառավարության ակնկալությամբ պետք է որ շահեր, կրնորեն նախագահին: Նախագահի լիազորությունների շուրջ բազմաթիվ քննարկումներից հետո «Համերաշխությունը» համաձայնեց նախագահության ու Սենատի ստեղծմանը:<sup>33</sup>

«Կլոր սեղանը» համաձայնության եկավ նախագահի հետևյալ լիազորությունների շուրջ, որոնք Լեհաստանի Սեյմի կողմից որպես փոփոխություններ մտցվեցին սահմա-

32. Սահմանադրության մշակման այդ խիստ բարդ գործընթացը: Այն հարուցում է հարցեր. արդյո՞ք «Համերաշխությունն» ունի բավարար ձայներ իր ուզած սահմանադրությունը ստանալու համար. արդյո՞ք կոմունիստական մեծամասնությունը Սեյմում ունի նոր սահմանադրությունը համահեղինակելու լեգիտիմություն:

33. Սահմանադրությունը հաստատելու դժվարության պատճառով այս փոփոխությունները 1992թ. կեսերին ձեռք են բերել լրացուցիչ ազդեցություն՝ որպես նախագահի «սահմանադրական իրավունքներ»: Սենատ-նախագահություն «Կլոր սեղանի» փոխհամաձայնության մանրամասները, *տե՛ս Օսիատինսկի, ««Կլոր սեղանի» բանակցությունները Լեհաստանում»* (Osiatynski, "Round Table Negotiations in Poland", 40-43):

նադրության մեջ «Կլոր սեղանի» դաշնագրի ստորագրումից հետո մեկ շաբաթվա ընթացքում: Առաջին. նախագահը պետք է անուղղակիորեն ընտրվեր օրենսդրի կողմից վեց տարվա պաշտոնավարման ժամկետով: Նախագահն ի պաշտոնն դառնում էր Ազգային անվտանգության խորհրդի նախագահ ու գլխավոր հրամանատար: Նա լիազորված էր Լեհաստանը ներկայացնելու արտաքին հարցերում, վարչապետության համար Սեյմին առաջադրելու թեկնածուներ և հեռացնելու վարչապետին որոշակի պարագաներում: Կարևորագույն նախագահական օրենքներն ամրագրելու համար պահանջվում էր վարչապետի ստորագրությունը, բացի այն դեպքերից, երբ դրանք «վերաբերում էին գործադրին վերապահված հարցերին, այսինքն՝ արտաքին քաղաքականությանը, պաշտպանությանը և ազգային անվտանգությանը... Նախագահը նաև լիազորություն ուներ հայտարարելու «արտակարգ» իրավիճակ մինչև երեք ամիս ժամանակով»:<sup>34</sup>

Անցման տեսության տեսանկյունից այս համաձայնությունները հանգեցրին իր անցումն ավարտելու և ժողովրդավարությունը կայացնելու Լեհաստանի ջանքերին խոչընդոտող երկու հետևանքի: Այն փաստը, որ Սեյմի 65%-ն ընտրվելու էր ոչ մրցակցային ընտրություններում և ունենալու էր համահավասար լիազորություն Սենատի հետ, նշանակում էր, որ ոչ ժողովրդավարական ծագում ունեցող մի մարմնի կարևոր դեր էր տրվել ժողովրդավարական սահմանադրություն մշակելու գործում: Նաև նախագահի հստակ չսահմանված պաշտոնը (որն առաջին անգամ զբաղեցնողը ենթադրվում էր, որ կլինի և եղավ գեներալ Յարուզելսկին), որոշ հատուկ լիազորություններով ներքին անվտանգության, պաշտպանության ու արտաքին հարաբերությունների բնագավառներում և որոշ արտակարգ իրավիճակների դեպքում լիազորությամբ, ավելացվեցին գոյություն ունեցող սահմանադրությանը: Այս զիջումը ժամանակի ընթացքում ձեռք բերեց լրացուցիչ կարևորություն: Քանի որ այնքան դժվար էր սահմանադրություն նախագծել դաշնությունահենք անցման պատճառով ստեղծված պայմաններում, նախագահի սահմանադրական «իրավունքները» ձեռք բերեցին իրենց սեփական ինքնուրույն կյանքը:

«Համերաշխությունն» սկսեց ղեկավարել Լեհաստանի ժամանակավոր կառավարությունը հասարակության կողմից մեծ աջակցությամբ՝ ընդդիմության մեջ իր դերի և խորհրդարանում ազատ մրցույթի համար բաց տեղերում իր փայլուն հաղթանակի շնորհիվ: Այս հասարակական լեգիտիմությունը ձեռք բերվեց նաև շնորհիվ այն մեծ աջակցության, որը նախապես տրվել էր ֆինանսների նախարար Բալցերովիչի կայունացման ծրագրին, որն ամենահանդուգն ծրագիրն էր Արևելյան Եվրոպայում և մասամբ հիմք հանդիսացավ նրան, որ 1993-94թթ. Լեհաստանի տնտեսությունն ամենաարագ զարգացող տնտեսությունն էր ամբողջ Եվրոպայում:<sup>35</sup> Սակայն մեր հիմնական միտքը մնում է նույնը: «Համերաշխությունը», ինչպես ժողովրդավարական ընդդիմադիրները Բրազիլի-

34. Օսիատինսկի, «Կլոր սեղանի» բանակցությունները Լեհաստանում» (Osiatynski, "Round Table Negotiations in Poland", 45-46):

35. Ինչպես ասում է Ադամ Պրժմոսկին, «Եթե մարդիկ վստահում են կառավարությանը, ընտրողները կարող են քվեարկել հոգուտ «ձիու բուժմանը» գործածելով Բալցերովիչ ծրագրին լեհերի տված նկարագրությունը... Լեհաստանում բնակչության ճնշող մասը (մոտ 90%-ը) աջակցում էր Մագովեցկու կառավարությանը՝ չնայած նոր տնտեսական ծրագրի առաջին ամիսներին կենսապայմանների կտրուկ վատթարացմանը»: Տե՛ս Պրժմոսկի, «Ժողովրդավարությունը և շուկան» (Przeworski, *Democracy and the Market*, 165):

այում, Ուրուգվայում և Չիլիում, համաձայնություն տվեց դաշնությունահենք անցմանը: Ի դեպ, հարավամերիկյան ոչ մի անցում չէր սկսվել ստորին պալատի 65%-ով և նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգի ձեռքին գտնվող գուգահեռ գործադիրով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Այժմ եզրափակենք այս գլուխը քաղաքացիական հասարակության վրա խարսխված ժողովրդավարական ընդդիմության թողած հետևանքների և կուսակցական զինվորների հետ դաշնությունահենք անցման նախնական վերլուծությամբ: Գլուխ 1-ում մենք ասացինք, որ ժողովրդավարության կայացման համար, ի թիվս այլ բաների, պահանջվում է պետական քաղաքականություն ստեղծող ինստիտուտների շուրջ համաձայնությունների ձեռքբերում: Նման աշխատանքը պահանջում է քաղաքական հասարակության որոշ ինքնուրույնություն, ինչպես նաև վերաբերմունքային հավատ հանրային կարծիքի և գլխավոր գործող անձանց կողմից, որ այս ժողովրդավարական ինստիտուտներն ավելի հարմար են իրենց հասարակության համար, քան որևէ այլընտրանքային ձևեր: Ինչպե՞ս է Լեհաստանն առաջ ընթացել դեպի այս նպատակները:

Եթե առաջինը վերցնենք քաղաքական հասարակությունը, ապա ժողովրդավարական հասարակարգի գլխավոր բնութագրերից մեկն այն է, որ այն իրենից ներկայացնում է *հակամարտության* մի ձև, որն ընթանում է համաձայնեցված ընթացակարգերի շրջանակում: Կայացած ժողովրդավարությունը մի հասարակարգ է, որը լեգիտիմացնում և սովորական է համարում հակամարտությունը ժողովրդավարական շրջանակի սահմաններում: Ժամանակակից ժողովրդավարական հասարակարգը նաև պահանջում է, որ կուսակցությունները համախմբվեն ու ներկայացնեն հասարակության կազմակերպված շահերը: Բոլոր հետկոմունիստական հասարակությունները, այդ թվում՝ հետավտորիտար Լեհաստանը, ունենում են հատուկ հիմնախնդիրներ *ներկայացուցչության* խնդրի հետ: «Համահարթեցված» հետկոմունիստական տարածքում գործարարները և անգամ արհմիություններն ու բազմաթիվ այլ կարևոր սոցիալական խմբերը դեռևս գտնվում են ինքնորոշման սաղմնային գործընթացում: Գործարարության վերաբերյալ այն երկրներում, որոնք ինչպես ներկայացնել այն շահերը, որոնք դեռևս կազմակերպված չեն կամ անգամ գոյություն չունեն, սեղմ ձևակերպվեց լեհական Սեյմի հաստատման լուսնների ժամանակ, երբ արդյունաբերության նախարարի թեկնածուն ասաց. «Ես ներկայացնում եմ այն սուբյեկտներին, որոնք դեռևս գոյություն չունեն»:<sup>36</sup> Ներկայացուցչության գործառույթը հավելյալ բարդանում է այն փաստով, որ թեև Արևելյան Եվրոպայում հետկոմունիստական վարչակարգերի մեծ մասի նպատակն է ստեղծել շուկայական տնտեսություններ ու հասարակություններ, բայց փոխակերպման գործընթացների սկզբում քչերն էին, որ ունեին *փաստացի նյութական շահեր* (ի տարբերություն պոտենցիալ տեսական շահերի) այդպիսի բարեփոխումներում: Հետևաբար, դժվար է ներկայացնել այն նյութական շահ

36. Ստանիշկիս, «Թռիչքի դինամիկան» (Staniszkis, *The Dynamics of Breakthrough*, 184):

հերը, որոնք դեռևս գոյություն չունեն։<sup>37</sup> Անգամ այն դեպքերում, երբ նյութական շահեր իսկապես գոյություն ունենին, օրինակ՝ արդյունաբերական աշխատանքի բնագավառում, 1989-90թթ. դժվար էր ստեղծել սոցիալ-ժողովրդավարական կուսակցություն՝ ներկայացնելու սոցիալ-ժողովրդավարական տարածքը, հասարակության խիստ երկինաստ վերաբերմունքի պատճառով հանդեպ կոմունիստական կուսակցությունը, որը հավակնում էր, թե ներկայացնում է աշխատավորներին։<sup>38</sup> Բայց քանի որ մասնավորեցումն առաջ էր ընթանում, և հիմնախնդիրների համար պատասխանատու էին համարվում ղեկավարությունն ու կապիտալիզմը, քաղաքական կուսակցությունները, անգամ հետկոմունիստական կուսակցությունները, որոնք հավակնում էին, թե ներկայացնում են սոցիալ-ժողովրդավարական տարածքը, 1993-94թթ. արդեն բարգավաճում էին:

Հետկոմունիստական ներկայացուցչության այս ընդհանուր խնդիրը և քաղաքական հասարակության ճանաչումն ու լեգիտիմացումը բարդանում և բնորոշ առանձնահատկություն էին ստանում Լեհաստանում ընդդիմության քարոզարշավի տևողության ու բնույթի պատճառով: Քաղաքացիական հասարակությունը, ինչպես և շատ այլ կարևոր քաղաքական բառեր, օրինակ՝ ժողովրդավարությունը, կարող են տարբեր տեսաբանների ու սոցիալական շարժումների կողմից գործածվել տարբեր ձևերով:<sup>39</sup> Լեհաստանում և մի փոքր այլ կերպ՝ Բրազիլիայում քաղաքացիական հասարակության գաղափարը առաջ

37. Նույն տեղում, էջ 216: Ինչպես Պրժմոսկին է նշում, անգամ «որոշ կապիտալիստական երկրներում, որտեղ մասնավոր ձեռնարկատիրությունը թույլ էր՝ Բրազիլիայում, Ֆրանսիայում, Մեքսիկայում, Հարավային Կորեայում, պետությունը ոչ միայն գլխավորել է կապիտալի կուսակումբ, այլև ժամանակի ընթացքում ստեղծել տեղական բուրժուազիա: Արևելաեվրոպական երկրները չունեն տեղական բուրժուազիա, իսկ գերակշռող տրամադրությունն այնքան արմատապես հակապետական է, որ պետությունը չի կարող խաղալ այդ դերը մոտ ապագայում... Լեհաստանում մասնավոր խնայողությունները հասնում էին ՀՆԱ-ի մոտ մեկ երրորդին կամ բաժնետիրական կապիտալի մոտավորապես 8%-ին արդեն 1989թ. վերջին», Պրժմոսկի, «Ժողովրդավարությունը և շուկան» (Przeworski, *Democracy and the Market*, 159, 156):

38. Սա Իվան Շելոնյի (Ivan Szelényi) աշխատության գլխավոր թեմաներից է: Տե՛ս նրա «սոցիալիստական ընդդիմությունն Արևելյան Եվրոպայում. երկրներանքներ ու հեռանկարներ» (*Socialist Opposition in Eastern Europe: Dilemmas and Prospects*), Ռուդոլֆ Տոկուսի խմբ.՝ «Ընդդիմությունն Արևելյան Եվրոպայում» (Rudolf L. Tokes, ed., *Opposition in Eastern Europe* (Baltimore: Johns Hopkins University Press, 1979), 187-208) և «Սոցիալական ու քաղաքական տեղանքը, Կենտրոնական Եվրոպա, 1990թ. աշուն» (*Social and Political Landscape, Central Europe, Fall 1990*), Բանացի «Արևելյան Եվրոպան հեղափոխության մեջ» գրքում (Banac, *Eastern Europe in Revolutio*), որտեղ նա ասում է. «Խիստ զարմանալիորեն նոր ձևավորված սոցիալ-ժողովրդավարական կուսակցությունները տառապում էին ամուսնային պարտություններից», (էջ 227):

39. «Քաղաքացիական հասարակության» արտահայտության տարբեր իմաստների քննարկում տարբեր փիլիսոփայական մոտեցումներում և ինչպես այն սկսեց գործածվել Արևելյան Եվրոպայում, տե՛ս Ժան Կոհեն և Էնդրյու Արատո, «Քաղաքացիական հասարակությունը և քաղաքական տեսությունը» (Jean L. Cohen and Andrew Arato, *Civil Society and Political Theory* (Cambridge: MIT Press, 1992)): Տարբեր մոտեցումների ընտրություն և հիանալի ակնարկ այն մասին, թե ինչպես քաղաքացիական հասարակությունը դարձավ կենտրոնական արևելաեվրոպական ընդդիմադիր շարժումների տեսության, պրակտիկայի և կյանքի համար, տե՛ս Ջոն Կեանի խմբ.՝ «Քաղաքացիական հասարակությունը և պետությունը» (John Keane, ed., *Civil Society and the State* (London: Verso, 1988)): Ներկայումս առաջանում է քաղաքացիական հասարակության ռեզիստանսիստական քննադատություն: Տե՛ս, օրինակ՝ այն գլուխը, որտեղ ասվում է, որ քաղաքացիական հասարակությունը «հին մտավորականության վերջին գաղափարախոսությունն էր», Կլաուս ֆոն Բեյեմի (Klaus von Beyme) *Systemwechsel in Osteuropa* (Frankfurt an Main: Suhrkamp, 1994), 100-123:

բերեց որոշ չափազանց հստակ և քաղաքական առումով հզոր լրացուցիչ իմաստներ: Լեհաստանում *քաղաքացիական հասարակությունը* վերաբերում էր պետության կողմից չստեղծված և, ըստ էության, պետությունից անկախ, չհարկադրված գործունեության ոլորտին: Կարծում ենք նաև, որ Լեհաստանը հատկապես ուժեղ օրինակ է «քաղաքացիական հասարակությունն ընդդեմ պետության» դիվիսիոնալիզմի՝ ունենալով ուժեղ մշակութային արմատներ օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող պետական իշխանության դեմ ժողովրդի պայքարում:<sup>40</sup> Մա քաղաքական առումով կարևոր հասկացություն էր ընդդիմության ժամանակահատվածում, որովհետև այն հնարավոր դարձրեց խիստ տարբերակույր «նրանք»-ի (Մոսկվայից կախում ունեցող կուսակցական պետությունը) և «մենք»-ի (լեհական քաղաքացիական հասարակությունը) միջև:<sup>41</sup> Քաղաքացիական հասարա-

40. Մի փաստարկ, որ սուր՝ «քաղաքացիական հասարակությունն ընդդեմ պետության» դիվիսիոնալիզմն էմպիրիկորեն հազվադեպ բացառություն է կոմունիստական համակարգերում և որ սովորաբար պետության ներսում հակառակ ուժերն ու ռեֆորմիստները ֆիլտրում ու շահարկում են կուսակցական պետությունը, տե՛ս Բ. Լ. Դեն, «Ինստիտուցիոնալ երկկենցաղություն և անցումը կոմունիզմից. Չինաստանի օրինակը» (X. L. Deng, "Institutional Amphibiousness and the Transition from Communism: The Case of China", British Journal of Political Science 24 (July 1994): 293-318): Կարծում ենք, որ Դենի քննադատությունը հատկապես օգտակար է հիշել այնպիսի երկրի գնահատման ժամանակ, ինչպիսին է Հունգարիան 1980-ական թթ.:

41. Այժմ արդեն կա ընդարձակ գրականություն լեհական քաղաքացիական հասարակության տարբեր կողմերի վերաբերյալ: Որոշ լավագույն աշխատանքների թվում են Թիմոթի Գարտոն Աշի, «Լեհական հեղափոխությունը. «Համերաշխություն» (Timothy Garton Ash, *The Polish Revolution: Solidarity* (New York: Charles Scribner's Sons, 1983)), Յադվիգա Ստանիչկիսի, «Լեհաստանի ինքնասահմանափակող հեղափոխությունը, խմբ.՝ Յան Գրոս (Jadwiga Staniszkis, *Poland's Self-limiting Revolution*, ed. Jan T. Gross (Princeton: Princeton University Press, 1984)) և Անջել Տիմոսկի, «Անցանկալի սոցիալական հեղափոխությունը. բարոյական տնտեսությունից մինչև ազատական հասարակություն Լեհաստանում (1989թ. փոխակերպման սոցիալական ծագումը)» (Andrzej M. Tymowski, "The Unwanted Social Revolution: From Moral Economy to Liberal Society in Poland (The Social Origin of the Transformation of 1989) (Ph. D. diss., Yale University, 1995)):

Ռուդոլֆ Տոկուսի (Rudolf L. Tokes) խմբագրած հատորը՝ «Ընդդիմությունն Արևելյան Եվրոպայում» (*Opposition in Eastern Europe* (Baltimore: Johns Hopkins University Press, 1979)), պարունակում է փայլուն ակնարկներ Լեհաստանի մասին, ներառյալ Ժակ Ռուպնիկի «Այլախոհությունը Լեհաստանում, 1968-78թթ. ռեվոլյուցիոնիզմի ավարտն ու քաղաքացիական հասարակության վերածնունդը» (Jacques Rupnik, "Dissent in Poland, 1968-78: The End of Revisionism and the Rebirth of Civil Society"): Երկու ակնարկ այս հատորում՝ Իվան Չելենի «Սոցիալիստական ընդդիմությունն Արևելյան Եվրոպայում. երկրներանքներ ու հեռանկարներ» (Ivan Szelenyi, "Socialist Opposition in Eastern Europe: Dilemmas and Prospects") և Ալեքս Պրավդա, «Արդյունաբերական բանվորներ. այլախոհության, ընդդիմության ու համաձայնեցման պատկերներ» (Alex Pravda, "Industrial Workers: Patterns of Dissent, Opposition and Accommodation") քննարկում են Լեհաստանի քաղաքացիական հասարակությունը Կենտրոնական Եվրոպայի համեմատական տեսանկյունից: Քաղաքացիական հասարակության ինքնակազմակերպման մասին, քննարկում, տե՛ս Զ. Ա. Պելչինսկի, «Համերաշխությունը» և քաղաքացիական հասարակության վերածնունդը Լեհաստանում, 1976-81թթ.» (Z. A. Pelczynski, "Solidarity and the 'Rebirth of Civil Society' in Poland, 1976-81"), Ջոն Կեանի խմբ.՝ «Քաղաքացիական հասարակությունը և պետությունը» (John Keane, ed., *Civil Society and the State* (London: Verso, 1988), 361-80):

Գրվել են նաև բազմաթիվ ինքնակենսագրություններ Լեհաստանի քաղաքացիական հասարակության անցյալ ու ներկա առաջնորդների կողմից: Պատմաբան Ադամ Միխնիկի (Adam Michnik), որը Աշխատողների պաշտպանության հանձնաժողովի (KOR) հիմնադիրներից է, հիշողությունները տպագրված են «Նամակներ բանտից և այլ ակնարկներ» գրքում (*Letters from Prison and Other Essays* (Berkeley: University of California Press, 1985)):

կուռքանն առնչվող լեզուն էլ ավելի ամրապնդեց ընդդիմության դիրքը կուսակցական պետության դեմ, որովհետև այն գաղտնագրված էր «ճշմարտության» բարոյական դիսկուրսի և «ճշմարտության մեջ ապրելու» էկզիստենցիալ պահանջի մեջ: Այս դիսկուրսը հատկապես գործառական էր այն բանի համար, ինչն, ըստ էության, ազգային-ազատագրական շարժումն էր, որը Լեհաստանում տարվում էր 1976թ-ից մինչև 1989թ.: Ցանկացած ազատագրական շարժման մեջ չափազանց բարձր արժեք է տրվում պայքարի ներսում *միասնությունը*, իսկ *փոխհամաձայնությունն* ու *ներքին հակամարտության* գաղափարների մասին խոսվում է քամահրանքով: Հաշվի առնելով խիստ կազմակերպված պետության հետ ընդդիմության պայքարի դժվարությունները՝ կար գործողությունների անհապաղության, ինքնաբուխության և գործելու հակապաշտոնական ձևերի մարտավարական ու ռազմավարական հասկանալի անհրաժեշտություն: Անհապաղության, ինքնաբուխության ու հակապաշտոնականության կիրառական կողմերն աննկատելիորեն դարձան անձնական ու կոլեկտիվ վարքագծի էթիկական չափորոշիչներ: Ընդհանուր առմամբ այս լեզուն ու վարքագիծը բնութագրում են այն, ինչը որոշ լեհ վերլուծաբաններ անվանում են «էթիկական քաղաքացիական հասարակություն», որն, անկասկած, լեհական ընդդիմության և առհասարակ ժողովրդավարության անցման լեհական ուղու առավել հզոր և նորարարական գծերից էր:<sup>42</sup>

Թեև «էթիկական քաղաքացիական հասարակության» գաղափարը նպաստում էր ընդդիմության չափազանց հզոր քաղաքականությանը, շատ տեսաբաններ ու պրակտիկներ գնացին անգամ ավելի հեռուն: Նրանք այնքան էին ցանկանում խուսափել կուսակցական պետության ընդունված կարգի ու ստերի մեջ խրվելուց, որ ընդդիմադիր վարքագծի իրավիճակային էթիկան բարձրացրեցին մինչև «հակաքաղաքականության քաղաքականության» ընդհանուր սկզբունքի աստիճանի:<sup>43</sup> «Հակաքաղաքականության քաղաքականությունն» իր հետ բերում է պետությունից անկախ ազատության ոլորտի ստեղծման ձգտում:

Ի լրումն ասեմք, որ Թեյուսի 1981թ. գարնանային հրատարակությունը՝ հատոր 47, ակիրված է «Լեհաստանը և սոցիալիզմի ապագան» քննելուն: Այս հատորը պարունակում է քաղաքացիական հասարակության մասին բազմաթիվ ակնարկներ լեհ և արևելաեվրոպական մտավորականների կողմից: Հունգարացի գիտնական Էնդրյու Արատոյի «Քաղաքացիական հասարակությունն ընդդեմ պետության. Լեհաստանը 1980-81թթ.» (Andrew Arato, *Civil Society against the State: Poland 1980-81*), Ադամ Միխնիկի տեսանկյունը, «Ի՞նչ ենք ցանկանում անել և ի՞նչ ենք կարող անել» (*What We Want to Do and What We Can Do*) և «Համերաշխության» անելիքները» (*Solidarity's Tasks*) ակնարկը Թադեուշ Մազովեցկու (Tadeusz Mazowiecki) կողմից («Համերաշխության» փորձագետ, որին հրավիրել էին Գդանսկի բոլոր գործարանների գործադուլային փորձագետների կոմիտեն նախագահելու համար) ոչ միայն օրինակ են Լեհաստանի մտավորական համայնքի բազմազանության, այլև փաստում են քաղաքացիական հասարակության առաջնորդների մտքերը վճռորոշ ու դժվարին 1980-81թթ. ժամանակահատվածում: Միխնիկի՝ քաղաքացիական հասարակության մասին ավելի վաղ ժամանակների ակնարկ է «Նոր էվոլյուցիոնիզմը» (*The New Evolutionism*), որը կարելի է գտնել *Survey* 22 (1976թ.), էջ 267-77: Տե՛ս նաև *Survey* 17 (1971թ.), էջ 37-52, Լեշեկ Կոլակովսկու (Leszek Kolakowski) խոր բովանդակային ակնարկը, «Հույս և հուսահատություն» (*Hope and Hopelessness*):

42. «էթիկական քաղաքացիական հասարակության» թեման զարգացրել է Պյոտր Օգրոզինսկին՝ «Քաղաքացիական հասարակության չորս դեմքերը» (Piotr Ogródzinski, *The Four Faces of Civil Society*) (Warsaw, 1991, unpublished manuscript):

43. Դեյվիդ Օսուն ասում է, որ լեհական ընդդիմության մի զգալի մասը « մերժեց պետությունը ոչ միայն պարզապես այն պատճառով, որ չէր կարող այնտեղ հաղթանակի հասնել, այլև այն պատճառով, որ չէր ցանկանում այնտեղ հաղթանակի հասնել... Այս ընդդիմությունը անգամ չէր ցանկանում



**Աղյուսակ 16.1. «Ընդդիմադիր բարոյական քաղաքացիական հասարակության» և «կայացած ժողովրդավարությունում քաղաքական հասարակության» տարբեր «լեզուները»**

Արժեք կամ վերաբերմունք	Ընդդիմադիր էթիկական քաղաքացիական հասարակություն	Քաղաքական հասարակություն կայացած ժողովրդավարությունում
Գործողության հիմք	Եշմարտության էթիկա	Շահեր
Գործող անձինք	Էթիկական ժողովուրդ	Խմբեր
Վերաբերմունքը «ներքին տարբերությունների» նկատմամբ	Դիտվում են բաժանաբանքով	Ընդունվում է որպես սովորական
Վերաբերմունքը «ներքին հակամարտության նկատմամբ ժողովրդավարական համայնքի ներսում	Ենշելու ջանք	կազմակերպելու, համախմբելու և ներկայացնելու ջանք
Վերաբերմունքը «փոխհամաձայնության» նկատմամբ	Բացասական	Դրական
Վերաբերմունքը սովորական կարգ դարձած ինստիտուտների» նկատմամբ	Բացասական	Դրական
Վերաբերմունքը «հակաքաղաքականության» նկատմամբ	Դրական	Բացասական
Վերաբերմունքը «պետության» նկատմամբ	Գործել դրանից դուրս	Այն ուղղորդելու ձգտում

Դժբախտաբար, էթիկական քաղաքացիական հասարակության միջոցով ժողովրդավարությանն անցման Լեհաստանի նորարարական ու հերոսական ուղին անխուսափելիորեն առաջ բերեց դիսկուրսներ և փորձ, որոնք մինչև դրանք կարելի կլինի փոխակերպել, ընդհանուր խնդիրներ կհարուցեն ժողովրդավարական քաղաքական հասարակության ստեղծման համար: Էթիկական քաղաքացիական հասարակությունը ներկայացնում է «ճշմարտությունը», մինչդեռ քաղաքական հասարակությունը կայացած ժողովրդավարությունում սովորաբար ներկայացնում է «շահեր»: Քաղաքական հասարակության մեջ գործող անձը հազվադեպ է լինում միայն «ժողովուրդը». ավելի սովորական են «խմբերը»: «Ներքին տարբերություններն» ու «հակամարտությունն» այլևս անհրաժեշտ չէ կոլեկ-

տիրել իշխանությանը, որ այն վերացնի... Հետևաբար, «հակաքաղաքականությունը» ոչ միայն պարզապես պետության անհրաժեշտ մերժումն է, այլ նաև պետության դիտավորյալ մերժումը, հավատը, որ արդար կարգի համար էական է ոչ թե բարեգութ կառավարություն ու իշխանության եկած լավ մարդիկ, այլ կենսունակ, ակտիվ, տեղյակ, ինքնակառավարվող ու ստեղծագործ հասարակություն»: Դեյվիդ Օստ, «Համերաշխությունը» և հակաքաղաքականության քաղաքականությունը. ընդդիմությունն ու բարեփոխումները Լեհաստանում սկսած 1988 թ-ից» (David Ost, *Solidarity and the Politics of Anti-Politics: Opposition and Reform in Poland since 1988* (Philadelphia: Temple University Press, 1990), 2):

Որոշ ավելի ազդեցիկ հայտարարություններ՝ ուժեղ հակաքաղաքական երանգով, պատկանում են հունգարացի Ջորջ Կոնրադին, «Հակաքաղաքականություն» (George Konrad, *Anti-Politics* (San Diego: Harcourt Brace Jovanovich, 1984)) և Վացլավ Հավելին, «Անգորների գորությունը» (Vaclav Havel, *The Power of the Powerless* (London: Hutchinson, 1985)): Հավելն ասում է. «Մեծ կարևորություն ունի այն, որ հիմնական բանը՝ մարդկային էակների առօրյան, անշնորհակալ և անվերջ պայքարն ավելի ազատ ապրելու համար... երբեք իր վրա սահմաններ չի դնում, երբեք չի լինում իմիջիայլոց, անհետևողական, երբեք իրեն չի գցում քաղաքական մարտավարության ծուղակը, մտածում իր գործողությունների արդյունքների մասին կամ ապագայի մասին ունենում երևակայական պատկերացումներ» (էջ 88): Տե՛ս նաև չեխ լրագրող և նախկին այլախոհ Բոժի Ռումլի ակնարկը , «Ո՞վ է իսկապես մեկուսացած» (Jiri Ruml, *"Who Really Is Isolated?"*), Հավելի «Անգորների գորությունը» (Havel, *The Power of the Powerless*, 178-97):

տիվ կերպով ճնշել, այլ՝ կազմակերպորեն ներկայացնել քաղաքական հասարակությունում: Փոխհամաձայնությունն ու ինստիտուցիոնալացումն արդեն ոչ թե բացասական, այլ դրական արժեքներ են: Հակաքաղաքականությունը վտանգավոր է ժողովրդավարական քաղաքականության համար: Նոր ժողովրդավարություններում այլևս պետք է ջանք գործադրվի ոչ թե պետական իշխանությանը զուգահեռ գոյատևելու, այլ պետական իշխանությունը նվաճելու և ուղղորդելու համար: Ի դեպ, էթիկական քաղաքական հասարակության արժեքների ու ձևակերպումների (որոնք այնքան լավ գործում էին ընդդիմության խնդիրների համար) մեծ մասը կայացած ժողովրդավարությունում քաղաքական հասարակության համար չի գործում (Աղյուսակ 16.1):

Նույնիսկ լավագույն հանգամանքների պարագայում անգամ Լեհաստանի նոր ժողովրդավարության համար կպահանջվեր գերազանց քաղաքական ղեկավարություն և հարատև վարպետություն՝ ենթարկվելու նորմատիվային, դիսկուրսային և վարքագծային փոփոխություններին, որոնք պահանջվում են ընդդիմադիր էթիկական քաղաքացիական հասարակությունից դեպի կայացած ժողովրդավարության քաղաքական հասարակությանն անցնելու ժամանակ: Սակայն Լեհաստանի «թույլատրված» անցման հետևանքները դարձնում են նման փոխակերպումն զգալիորեն ավելի դժվար: Երբ Սեյմի 65%-ը դեռևս գտնվում էր կոմունիստական կուսակցության ու նրա նախկին մանր կուսակցական դաշնակիցների ձեռքին, և երբ նախագահության պաշտոնն ու դրա հետ միասին որպես հավելում պետության ճնշիչ ապարատի գլխավոր հատվածները գտնվում էին ռազմական դրություն ստեղծողի՝ գեներալ Յարուզելսկու և ներքին գործերի նախարար գեներալ Կիշչակի ձեռքին, որը շարունակաբար եղել է այդ պաշտոնին ռազմական դրության սկզբից նեթ, «Համերաշխության» առաջնորդները շարունակում էին մեծ շեշտ դնել «մենք» ընդդեմ «նրանց» դիխտոմիայի վրա: Նրանք չափազանց մեծ եռանդ ու հույզեր էին ծախսում՝ փորձելով պահել «Համերաշխության»՝ որպես ազգային շարժման միասնականությունը: Նրանք նաև ցանկանում էին այդ միասնությունն օգտագործել որպես գլխավոր ռեսուրս՝ դրա միջոցով առաջ տանելու արմատական տնտեսական բարեփոխումների իրենց հանդուգն ծրագիրը: Սա նշանակում էր, որ «մենք»-ի ներսում մշտական քամահրական լրացուցիչ իմաստ էր տրվում ներքին տարակարծությանը, խմբային հակամարտությանը և «Համերաշխության» հովանոցից դուրս ցանկացած կազմակերպչական ջանքերին, որոնք նպատակաուղղված էին ստեղծելու նորմալ, շահերի վրա հիմնված քաղաքական կուսակցություններ: Խորհրդարանում «Համերաշխության» «ոչ կուսակցական բլոկը» կառավարության հետ համագործակցելով, փորձեց, ըստ լեհ հասարակագետ Յադվիգա Ստանիշկիսի, փաստացի արգելափակում մտցնել տարբեր շահերի հստակ ձևակերպման ու ներկայացման դեմ:<sup>44</sup>

Անգամ երբ «Համերաշխությունն» իսկապես բաժանվեց երկու խոշոր կուսակցական խմբերի (Ruch Alternatywny Akcja Demokratyczna [ROAD] և Center Alliance) 1990-ական թվականների կեսերին, մի մեկնաբան նկատեց, որ երկու խմբերն էլ դեռ ձգտում են «պահել իրենց կապերը «Համերաշխության» ոգու և արժեքների հետ... "ROAD"-ին ու

44. Ստանիշկիսը (Staniszczis) հատկապես խիստ է քննադատում «Համերաշխության» առաջին կառավարության հակաքաղաքականությունն իր «Թռիչքի դինամիկան» (*The Dynamics of Breakthrough*, 203-6):

"Center Alliance"-ին գոնե մինչև հիմա բնորոշն այն է, որ նրանք մերժում են իրենց բնութագրել որպես քաղաքական կուսակցություններ և տալ հստակ ծրագրային ինքնասահմանում: Երկու շարժումներն էլ նախընտրում են հասարակությանը դիմել որպես «Համերաշխության» ժառանգություն, նրա փոխհամաձայնական նորմերի ու կոլեկտիվ դիրքորոշման արտացոլում»:<sup>45</sup>

Լեհաստանի քաղաքական հասարակության հիմնախնդիրները ավելի էին բարդանում Լեխ Վալենսայի ընդունած որոշումներով: Հետադարձ հայացքով երևում է, որ «Համերաշխության» ապաքաղաքական ոճը կարծես թե ուղղակիորեն նպաստել է նրա՝ բազմաթիվ մանր կուսակցությունների բաժանվելուն, 1990-92թթ. որպես քաղաքական ուժ մարելուն, նախկին կոմունիստների և գյուղացիական կուսակցության նրանց դաշնակիցների զարմանալիորեն լուրջ հաղթանակին 1993թ. սեպտեմբերի խորհրդարանական ընտրություններում և նախկին կոմունիստ Ալեքսանդր Կվասնիևսկու 1995թ. որպես նախագահ ընտրվելուն:

Առաջին ապաքաղաքական ընտրությունը, որն ունեցավ վնասակար նշանակություն քաղաքական հասարակության համար, կատարվեց էթիկական քաղաքացիական հասարակության առաջնորդ Լեխ Վալենսայի՝ Արևելյան Եվրոպայում ամենախարիզմատիկ առաջնորդի կողմից: Նա որոշեց չուղղել իր հսկայական ազդեցությունն ու եռանդը քաղաքական պաշտոնի համար իր թեկնածությունը դնելուն, Սեյմում քաղաքական կուսակցություն ստեղծելուն կամ պնդելուն, որ դառնա առաջին վարչապետ: Փոխարենը նա որոշեց մնալ Լեհաստանի սաղմնավորվող քաղաքական հասարակությունից դուրս և որպես քաղաքացիական հասարակության բարոյական խոսնակ: Երբ Վալենսան ի վերջո որոշեց իր թեկնածությունը դնել որևէ պաշտոնի համար, որոշեց ներկայանալ որպես անկուսակցական թեկնածու նախագահի պաշտոնի մրցույթին մասնակցելու համար:

«Համերաշխության» կազմած կառավարությունն արագորեն բարդացրեց այս նախնական խնդիրը՝ որոշելով օգտագործել «Համերաշխություն» շարժման բարոյական կապիտալը՝ իշխելու տեխնիկական ապաքաղաքական եղանակով: Այս տեխնիկական, հակաքաղաքական կենտրոնացումը ի թիվս այլ բաների հանգեցրեց նրան, որ վարչապետ Տադեուշ Մազովեցկին չկարողացավ անգամ Լեխ Վալենսայի հետ խորհրդակցել իր կաբինետի ձևավորման հարցում:<sup>46</sup> Այս թերացումը կամ անհոգության դրսևորումը շարժման մեջ դրեց Վալենսայի առաջնորդած «Համերաշխության» որպես շարժման հեռացումը Մազովեցկու առաջնորդած «Համերաշխությունից» որպես կառավարությունից:

«Համերաշխության» առաջնորդների կատարած հաջորդ հակաքաղաքական ընտրությունը խորհրդարանում և կառավարությունում այն էր, որ նրանք չպնդեցին նոր ու լիովին ազատ խորհրդարանական ընտրություններ անցկացնել 1990-ական թթ. սկզբներին: «Համերաշխության» «Կլոբ սեդանի» գործընկեր պաշտոնական կոմունիստական կուսակցությունը (PZPR) ինքն իրեն կազմալուծեց 1990թ. հունվարին: 1990թ. ապրիլին Լեխ Վալեն-

45. Ջեկ Բելասիակ, «Քաղաքական շահերի երկրնորանքը հետկոմունիստական անցման մեջ» (Jack Bielsiak, "The Dilemma of Political Interests in the Postcommunist Transition"), Քոնստր և Պլոշայսկի, «Փախուստ սոցիալիզմից» (Connor and Plosszajski, Escape from Socialism, 209):

46. Այս միտքն առաջին անգամ մեր ուշադրությանն է ներկայացվել Թիմոթի Գարտոնի հետ մասնավոր զրույցի ժամանակ, իսկ ավելի ուշ հաստատվել է «Համերաշխության» առաջատար մտավորականներից մեկի կողմից:

սան ոչ պաշտոնապես հայտարարեց նախագահի պաշտոնին իր հավակնության մասին:<sup>47</sup> Հաշվի առնելով «Համերաշխության» ճնշող բարոյական հաղթանակը 1989թ. ընտրություններում, ընտրություններից հետո կառավարություն կազմելու կոմունիստների անկարողությունը, կոմունիստական կուսակցության կազմալուծումը և Լեխ Վալենսայի արտահայտած ցանկությունը պայքար տանելու վաղաժամ ընտրությունների համար՝ մեր կարծիքով՝ համաժամանակյա խորհրդարանական ու նախագահական ընտրությունները եղել են պատմական հնարավորություն 1990թ. աշնանը: Մակայն «Համերաշխության» առաջնորդները խորհրդարանում և կառավարությունում ցանկանում էին հետաձգել խորհրդարանական ընտրությունները: Սա հանգեցրեց «Համերաշխության» ներսում հայտնի պառակտմանը, երբ քաղաքական հասարակության «Համերաշխության» առաջնորդ Մագովեցկին և քաղաքացիական հասարակության «Համերաշխության» առաջնորդ Լեխ Վալենսան միմյանց դեմ մրցակցեցին ուղղակի նախագահական քարոզարշավի ժամանակ:<sup>48</sup> «Համերաշխության» վարչապետը պարտվեց ոչ միայն Լեխ Վալենսային, այլև մի անհայտ ամբոխավար, ապաքաղաքական էմիգրանտ Ստան Տիմիսկուն: Իր նախագահական քարոզարշավում Վալենսան խորացրեց պառակտումները «Համերաշխության» ներսում և շարունակեց իր հակաքաղաքական դիրքորոշումը: Նախագահի պաշտոնի համար իր թեկնածությունը նա դրել էր որպես անկուսակցական թեկնածու: Որպես թեկնածու՝ նա ձևակերպեց հախուռնության ու հակապաշտոնական քաղաքականության և ոչ թե ինստիտուցիոնալացման արժեքը պահպանելու անհրաժեշտությունը: Այն դեպքում, երբ Լեհաստանում ժողովրդավարության կայացման համար կպահանջվեր կուսակցությունների իսկության հաստատում և խորհրդարանի՝ ընդունված կարգով լիազորում, Լեխ Վալենսան արշավում էր որպես միջամտող նախագահ, որը «աջ ու ձախ պիտի պարտադրեր իր կարծիքը»:<sup>49</sup>

Այժմ դառնանք քաղաքական կուսակցությունների և քաղաքական հասարակության մեջ դրանց դերի հարցին: Կայացած ժողովրդավարության համար պահանջվում է, որ մի շարք քաղաքական կուսակցություններ ոչ միայն *ներկայացնեն* շահերը, այլև ձգտեն ներդաշնակ ծրագրերի ու կազմակերպչական գործունեության միջոցով *համախմբել* այդ շահերը: Լեհաստանում առաջին լիարժեք մրցակցային ընտրություններ Խորհրդարանի երկու պալատներում անցկացվեցին 1991թ. հոկտեմբերին՝ «Համերաշխության» առաջին կառավարության կազմավորումից քսանվեց ամիս հետո: Ժամանակակից քաղաքական հասարակության գործիքներից մեկը՝ օգնելու որոշ խորհրդարանական կուսակցություններին համախմբելու իրենց շահերը, այն է, որ սահմանվի նվազագույն շեմ՝ ընդհանուր համաժողովրդական քվեի 3-5%-ից բարձր, նախքան կուսակցությունները կկարողանան ներկայացված լինել խորհրդարանում: Լեհաստանում սուր պայքարից հետո որոշվեց,

47. Թիմրթի Գարտոն Աշն (Timothy Garton Ash) ուսումնասիրում է որոշ լեհերեն գրքեր, որոնք գրվել են այդ ժամանակների խոշոր մասնակիցների կողմից, իր փայլուն «Լեհաստանը «Համերաշխությունից» հետո» գրվածքում ("Poland after Solidarity" New York Review of Books (June 13, 1991): 46-58):

48. Ավելի վաղ խորհրդարանական ընտրությունների բաց թողնված հնարավորության մասին տե՛ս նույն տեղում, էջ 54:

49. Մեջբերված՝ Գրոս, «Լեհաստան. քաղաքացիական հասարակությունից մինչև ազգ», "Poland: From Civil Society to Nation", էջ 63:

որ ոչ մի նվազագույն շեմ պետք չէ սահմանել:<sup>50</sup> Համախմբմանը խոչընդոտող մեկ այլ գործոնն այն էր, որ թեև Լեխ Վալենսան պահպանեց իր անկուսակցական դիրքորոշումը, նա բազմաթիվ քաղաքական խմբավորումներին ցույց տվեց երկիմաստ նշաններ, որ ինքը նրանց վերաբերվում է որոշ բարեհաճությամբ: Իրենց հերթին պառակտված նախկին «Համերաշխության» խմբերը չձևակերպեցին ծրագրային այլընտրանքներ կամ չձգտեցին դառնալ շահերի վրա հիմնված կուսակցություններ: Անփոփոխ արժեքների շուրջ էթիկական քննարկումները պահպանվեցին որպես տիրապետող դիսկուրս: Տարածվեցին ոչ կուսակցությունները՝ հակաքաղաքականության կազմակերպչական ոճով: Ինչպես մի մեկնաբան ասաց,

Անցման վաղ փուլի ընթացքում ... համանման շահեր ունեցող խմբերն, անշուշտ, եղել են բավական թույլ: Ոլորտային շահեր, ըստ էության, քաղաքական բեմում գոյություն չունեն... Բացի մինի-կուսակցության իրենց կարգավիճակից, նոր կազմակերպությունների ճնշող մեծամասնության համար նշանակալի տարր է նորմատիվային, հաճախ փոխբացատրող արժեքների՝ որպես իրենց քաղաքական ակտիվության հիմքի վրա հենվելը: Մինի-կուսակցությունները, սովորաբար, գործում են արժեքների, ավանդույթների և նորմերի մի հարթության մեջ:<sup>51</sup>

Ի վերջո Սեյմում ներկայացվեցին քսանհինգ կուսակցություններ: Ոչ մի կուսակցություն չստացավ ձայների անգամ 14%-ը: Չորս խոշոր կուսակցությունները խիստ բևեռացված էին և վերահսկում էին տեղերի 50%-ից էլ պակաս մասը (Աղյուսակ 16.2):<sup>52</sup>

Երբ մենք կիրառում ենք Լասկո-Տաագեպերայի կշռված բանաձևը՝ հաշվելու «իրական» քաղաքական կուսակցությունների ինդեքսը խորհրդարանում, Լեհաստանը երևում է 10.8 քաղաքական կուսակցություն ինդեքսով: Ինչպես պարզ է դառնում Աղյուսակ 16.3-ից, սա կուսակցությունների զգալիորեն ավելի մեծ թիվ է, քան գրանցվել է աշխարհում տասը տարուց ավելի գոյություն ունեցած որևէ այլ ժողովրդավարությունում:

Այս համատեքստում Լեհաստանի նոր ժողովրդավարության առաջին ազատ կերպով ընտրված խորհրդարանը չափազանց մեծ դժվարություններ կրեց կառավարությունը ձևավորելու գործում: Երբ երկու ամսվա ճգնաժամից հետո կառավարությունը վերջապես կազմավորվեց, այն դեռևս մեծ դժվարություն ուներ ծրագրի համար կռալիցիա ստեղծելու գործում:<sup>53</sup> Առաջին յոթ ամիսներին առաջ քաշվեցին երեք տարբեր վարչա-

50. Լեխ Վալենսան մտցրեց ավելի բարձր շեմ կամ ով է առաջինն ստանում պարզ մեծամասնություն սկզբունքն ավելի խոշոր կուսակցություններին խրախուսելու համար: Նախկին կոմունիստները ցանկանում էին համամասնական ներկայացուցչություն, քանի որ անհանգստացած էին, որ իրենք առաջինը կվերանան պարզ մեծամասնություն ստանալու ընտրական համակարգով: Վալենսայի «Համերաշխության» նախկին դաշնակիցներից շատերը նրան դեմ քվեարկեցին նրա իշխանությունը սահմանափակելու համար, տե՛ս Դեյվիդ ՄրքՔեդ, «Պատերազմ ընտրական օրենքի համար» (David McQuaid, "The 'War' over the Election Law", Report on Eastern Europe 2, no.3 (1991): 11-28):

51. Բելազիակ, «Քաղաքական շահերի երկընտրանքը հետկոմունիստական անցման մեջ», "Dilemma of Political Interests in Postcommunist Transition", էջ 211, 210:

52. Դեյվիդ ՄրքՔեդ, «Խորհրդարանական ընտրությունները. դիսհերձում» (David McQuaid, "The Parliamentary Elections: A Postmortem", Report on Eastern Europe (Nov. 8, 1991): 15-21):

53. Սանրամասները, տե՛ս Լուիզա Վինտոն, «Նոր կառավարության շուրջ բանակցություններում «ձեռք բերված» փակուղի» (Louisa Vinton, "Impasse Reached on 'Talks on New Government'", Report on

**Աղյուսակ 16.2. Քաղաքական կուսակցությունների իրական թիվը Լեհաստանի Սեյմում 1991թ. հոկտեմբերի ընտրություններից հետո**

Կուսակցություն	Տեղերի թիվը
Ժողովրդավարական միություն	62
Ժողովրդավարական ծախ միություն/դաշինք	60
Կաթոլիկական ընտրական գործողություն	49
Լեհական գյուղացիական կուսակցական-ծրագրային միություն	48
Նամադաշնություն հանուն անկախ Լեհաստանի	46
Կենտրոն քաղաքացիների միություն	44
Ազատական ժողովրդավարական համագումար	37
Գյուղացիական համաձայնություն	28
Նամերաշխություն	27
Գարեջրասերների կուսակցություն	16
Գերմանական փոքրամասնություն	7
Քրիստոնեական ժողովրդավարություն	5
Քրիստոնյա ժողովրդավարների կուսակցություն	4
Լեհական արևմտյան միություն (աշխատավորների փոքրամասնություն)	4
Յանուշ-Կորվին-Միկլե ("Realpolitik" միություն) համերաշխություն	4
X կուսակցություն	3
Իրական քաղաքականության միություն	3
Սիլեզյան ինքնավարության շարժում	2
Ժողովրդավարական կուսակցություն	1
Ուղղափառ հավատացյալներ	1
Վիելկոպոլսկա և Լուբուսկի տարածաշրջանների բնակիչների միություն	1
Գյուղացիական ընտրական միություն Պիաստ	1
Պոդհալե տարածաշրջանի բնակիչների միություն	1
Գյուղացիության միասնականության Բիդզոշչի ցուցակ	1
Կուսակցություն հանուն Վիելկոպոլսկայի ու Լեհաստանի	1
Կրակովյան կոալիցիա «Նախագահի հետ միասնությամբ»	1
Կանանց միությունն ընդդեմ անբարենպաստ պայմանների / Women's Alliance against Adversity	1
Ժողովրդավարական սոցիալական շարժում	1
Նամերաշխություն 80	1
Ընդամենը տեղերի քանակը	460
Կուսակցությունների «իրական» թիվը	10.8

*Աղբյուրը՝ Լեհաստանում ընտրությունների արդյունքները "New Digest for October, 1991", Kessings Record of World Events. Կուսակցությունների «իրական» թիվը հաշվարկելու բանաձևը՝ Մարկու Լասկոս և Ռեյն Տաագապերա, «Կուսակցությունների «իրական» թիվը. չափորոշիչ կիրառված Արևմտյան Եվրոպայում», "Effective Number of Parties A Measure with Application to West Europe", Լամնստակական քաղաքական ուսումնասիրություններ, Comparative Political Studies 12, no. 1 (1979թ.), էջ 3-27:*

պետեր, որոնցից ոչ մեկը կանգնած չէր կայուն կոալիցիոն մեծամասնության գլխին: Հարաբերությունները վարչապետի և ուղղակիորեն ընտրված նախագահի միջև դարձան վտանգավոր կերպով բախումնային՝ ոչ ժողովրդավարական մտադրությունների և անզամ գործողությունների մեջ մեղադրանքներով ու հակամեղադրանքներով:

Eastern Europe (Nov. 29, 1991). 19-25), նույն հեղինակին պատկանող՝ «Լեհաստան. կառավարության ճգնաժամն ավարտվում է, բյուջեի ճգնաժամը՝ սկսվում» ("Poland: Government Crisis Ends, Budget Crisis Begins", RFE./RE Re-search Report (Jan, 17, 1992): 15-21) և դարձյալ նույն հեղինակին պատկանող՝ «Լեհական կառավարությունը ծրագրի որոնումներում» ("The Polish Government in Search of a Program", Report on Eastern Europe (March 27, 1992): 5-12):

**Աղյուսակ 16.3. Լաակոտ-Տաագապերայի «իրական» քաղաքական կուսակցությունների ցուցիչը Լեհաստանի օրենսդրի նկատմամբ (1991թ.)՝ համեմատած աշխարհում տևական խորհրդարանական, կիսանախագահական և նախագահական ժողովրդավարությունների օրենսդիր մարմինների հետ (1979-1989թթ.)**

Խորհրդարանական		Կիսանախագահական		Նախագահական	
3.0 կամ ավելի կուսակցություն	3.0-ից քիչ կուսակցություն	3.0 կամ ավելի կուսակցություն	3.0-ից քիչ կուսակցություն	3.0 կամ ավելի կուսակցություն	3.0-ից քիչ կուսակցություն
	Կիրիբատի a				
	Նաուրու a				
	Տուվալու a				
	Բոտսվանա 1.3				
	Սն. Վինսենտ 1.4				
	Դոմինիկա 1.5				
	Ջամայկա 1.5				
	Բահամներ 1.6				
	Թրին. և Թոբ. 1.6				
	Բարբադոս 1.7				
	Սան Լուսիա 1.7				
	Նոր Զել. 2.0				ԱՄՆ 1.9
	Կանադա 2.0				
	ՄՅ 2.1				
	Նդկաստան 2.1				
	Նունաստան 2.2				
	Ավստրիա 2.4				Գոմ. Նանր. 2.3
	Ավստրալիա 2.5				Կոստա Ռիկա 2.3
	Սողոմոնի կղ. 2.5				
	Մաուրիտիուս 2.5				
	Իռլանդիա 2.7				Վենես. 2.6
	Իսպանիա 2.7				
	Ճապոնիա 2.9				
Արևմտ.Գերմ. 3.2		Ֆրանսիա 3.2			
Նորվեգիա 3.2					
Շվեդիա 3.4					
Լյուքսեմ. 3.4					
Իսրայել 3.6		Պորտուգ. 3.6			
Սիդեյլ. 3.8					
Իտալիա 3.9					
Պապուա Ն.Գ. 4.0					
Իսլանդիա 4.3					
Դանիա 5.2					
Բելգիա 7.0					
		Լեհաստ. 10. 8			

<sup>a</sup> Նաշվի առնելով պաշտոնական կուսակցությունների բացակայությունը՝ կա երկուսից էլ քիչ «քաղաքական խմբավորում» էշում՝ Շվեյցարիան և Ֆինլանդիան «խառը» համակարգեր են 5.4 և 5.1 իրական կուսակցություններով *Աղբյուրը*՝ Այս աղյուսակը վերարտադրվել է Ալֆրեդ Ստեփան և Սինդի Սկաչ՝ «Սահմանադրական շրջանակներ և ժողովրդավարության կայացում. խորհրդարանականությունն ընդդեմ նախագահականության» "Constitutional Frameworks and Democratic Consolidation: Parliamentarism versus Presidentialism." *World Politics* 46, no. 1 (1993թ.) էջ 8-9: Տե՛ս նաև Մարկու Լաակոտ և Ռեյն Թաագեպերա, «Կուսակցությունների «իրական» թիվը. չափորոշիչ՝ կիրառված Արևմտյան Եվրոպայի նկատմամբ» "Effective Number of Parties: A Measure with Application to West Europe." *Comparative Political Studies* 12, no. 1 (1979թ.), էջ 3-27:

Կիսանախագահականությունն առանց սահմանադրության

Ուղղակիորեն ընտրված նախագահների ու վարչապետերի՝ խորհրդարանի առջև պատասխանատու լինելու հարցն այնքան կարևոր է, որ պահանջում է մի համառոտ էքսկուրս: Ինչպես երկուսս էլ առանձին-առանձին մեկ այլ տեղ հիմնավորել ենք, գոյություն ունեն ուժեղ տեսական հիմքեր՝ մտահոգվելու պոտենցիալ խնդիրների մասին ժողովրդավարական կառավարության ներսում, որն ունի կրկնակի գործադիր՝ լեգիտիմության երկու առանձին աղբյուրներով:<sup>54</sup> Մորիս Դյուվերժեն իր նորարարական վերլուծության մեջ կառավարություններն անվանում է «կիսանախագահական», եթե դրանք բավարարում են երեք պայմանի՝ նախագահն ուղղակիորեն ընտրված է, նախագահի պաշտոնն ունի զգալի *դե յուրե* և *դե ֆակտո* լիազորություններ, և վարչապետը վայելում է ուղղակիորեն ընտրված խորհրդարանի վստահությունը:<sup>55</sup> Երեսուկոյթ երկրներից, որոնք 1980-89թթ. ժամանակահատվածում տևական ժողովրդավարություններ էին, միայն երկուսն են բավարարել Դյուվերժեի սահմանումը. դրանք են՝ Ֆրանսիան և Պորտուգալիան:<sup>56</sup> Ավստրիան, Իսլանդիան և Իռլանդիան ունեն ուղղակիորեն ընտրված նախագահներ ու վարչապետեր, ովքեր պատասխանատու են ուղղակիորեն ընտրված խորհրդարանի առջև, սակայն Դյուվերժեն հիմնավորում է, և մենք համաձայն ենք, որ դրանք կիսանախագահական չեն, որովհետև նախագահը չունի զգալի *դե ֆակտո* լիազորություններ:<sup>57</sup> Ֆինլանդիան հաճախ անվանվել է կիսանախագահական, որովհետև նախագահն ունի զգալի *դե յուրե* և *դե ֆակտո* լիազորություններ, սակայն նախագահը մինչև 1988թ. ուղղակիորեն չէր ընտրվում, այլ անուղղակիորեն առաջ էր քաշվում կուսակցական բոլոկների

54. Տե՛ս Խուան Լինց, «Նախագահական կամ խորհրդարանական ժողովրդավարություն. տարբերություն կա՞» (See Juan J. Linz, "Presidential or Parliamentary Democracy: Does It Make a Difference?"), Խուան Լինցի և Արտուրո Վալենսուելայի խմբ.՝ «Նախագահական ժողովրդավարության ձախողումը. համեմատական տեսանկյուններ» (Juan J. Linz and Arturo Valenzuela, eds., *The Failure of Presidential Democracy: Comparative Perspectives* (Baltimore: Johns Hopkins University Press, 1994), 3-87, esp. 58-69): *Տե՛ս նաև* Ալֆրեդ Ստեփան և Էզրա Սուլեյման, «Ֆրանսիական հինգերորդ հանրապետությունը. ներմուծման մոդել՝: Մտքեր Լեհաստանի և Բրազիլիայի մասին» (Alfred Stepan and Ezra Suleiman, "The French Fifth Republic: A Model for Import? Reflections on Poland and Brazil"), շ. Ե. Չեհաբիի և Ալֆրեդ Ստեփանի խմբ.՝ «Քաղաքականություն, հասարակություն և ժողովրդավարություն. համեմատական ուսումնասիրություններ» (H. E. Chehabi and Alfred Stepan, eds., *Politics, Society and Democracy: Comparative Studies* (Boulder, Colo.: Westview Press, 1995), 393-407):

55. Տե՛ս Մորիս Դյուվերժեի դասական հոդվածը, «Քաղաքական համակարգի նոր մոդել. կիսանախագահական կառավարություն» (Maurice Duverger, "A New Political System Model: Semi-presidential Government", *European Journal of Political Research* 8 (1980): 165-87): Նման քաղաքական համակարգը կոչվում է վարչապետա-նախագահականություն Մելթոյ Մոքերգ Շուգարտի և Ջոն Քարբիի մոտ, «Նախագահներ և ժողովներ. սահմանադրական կառուցվածք և ընտրական դինամիկա» (Matthew Soberg Shugart and John M. Carey, *Presidents and Assemblies: Constitutional Design and Electoral Dynamics* (Cambridge: Cambridge University Press, 1992), 53-57):

56. Տե՛ս Ալֆրեդ Ստեփան և Սինդի Սկաչ, «Սահմանադրական շրջանակներ և ժողովրդավարության կայացում. խորհրդարանականությունն ընդդեմ նախագահականության» (Alfred Stepan and Cindy Skach, "Constitutional Frameworks and Democratic Consolidation: Parliamentarism versus Presidentialism", *World Politics* 46, no. 1 (1993): 1-22):

57. Ավստրիայի, Իռլանդիայի և Իսլանդիայի սահմանադրությունները կիսանախագահական են: Քաղաքական պրակտիկան խորհրդարանական է», *տե՛ս* Դյուվերժե, «Քաղաքական համակարգի նոր մոդել» (Duverger, "A New Political System Model", 167):



կողմից:<sup>58</sup> Կենտրոնական Եվրոպայում փոխակերպումների զարմանալի արդյունքներից մեկն այն էր, որ միակ երկրները, որոնք չնայած բոլոր ազատ ընտրություններին, ընտրել են դասական խորհրդարանական համակարգ, որտեղ վարչապետը գլխավոր գործադիրն է, իսկ նախագահն ընտրվել է անուղղակիորեն, Հունգարիան ու Չեխոսլովակիան էին: Հետկոմունիստական երկրների մեծ մասն ընտրել է կիսանախագահական համակարգ. հավանաբար ոգեշնչված Ֆրանսիական հինգերորդ հանրապետության օրինակով:

Հաճախ, հաշվի առնելով հետկոմունիստական անցումների չկարգավորվածությունը և սահմանադրականության համեմատաբար թույլ իրավական ու պատմական ավանդույթները, *դե յուրե* սահմանումն ու *դե ֆակտո* ակնկալիքն այն է, որ առավել կարևոր գործադիր պաշտոնը նախագահի պաշտոնն է:<sup>59</sup> Սակայն այս նախագահներն օրենսդիրում հաճախ բախվում են ընդդիմության, որը հանգեցնում է փակուղիների, հակամարտությունների, իսկ երբեմն՝ անգամ զինված պայքարի, ինչպես Ռուսաստանում և Վրաստանում:

Երբ ասում ենք, որ կան «կրկնակի գործադիր» համար մտահոգության ամուր տեսական հիմքեր, նկատի ունենք, որ եթե նախագահն ուղղակիորեն է ընտրված, իսկ վարչապետը պատասխանատու է ուղղակիորեն *ընտրված* խորհրդարանի առջև, ապա գոյություն ունի փակուղու և սահմանադրական հակամարտության հավանականություն: Փակուղին կարող է հատկապես վտանգավոր դառնալ, եթե նախագահն ունի հատուկ իշխանություն անվտանգության ուժերի վրա և որոշ արտակարգ իրավիճակների լիազորություններ: Տեսականորեն մենք կարող ենք առաջ քաշել միայն երկու իրավիճակներ, որոնց դեպքում երկակի գործադրի՝ փակուղի մտնելու և հակամարտության հավանականությունը հասցված է նվազագույնի: Եթե նախագահը որևէ կուսակցության կամ կուսակցական կոալիցիայի առաջնորդ է, և այս կուսակցությունը խորհրդարանում շահում է հստակ մեծամասնություն, պետք է որ ոչ մի փակուղի կամ ճգնաժամ չառաջանա, որովհետև ուժերի հարաբերակցությունը կարող է դառնալ նախագահի հստակ սահմանադրական գերազանցության հարաբերություն: Մեկ այլ հնարավոր կայուն իրավիճակ կարող է լինել

58. Մինչև 1988թ. Ֆինլանդիայում բնակիչները համամասնական ներկայացուցչությամբ ընտրում էին ընտրական կոլեգիա, և այս մարմինն իր հերթին ընտրում էր նախագահին՝ եռամակարդակ քվեարկությամբ: Նույն տեղում, էջ 166: Գործող համակարգում նախագահն ուղղակիորեն ընտրվում է բնակչության կողմից, եթե միայն որևէ թեկնածուի չի հաջողվում ապահովել համաժողովրդական ձայների մեծամասնությունը, որի դեպքում նախագահն ընտրվում է ընտրական կոլեգիայի կողմից: Ֆինլանդիայում նախագահական ընտրությունների քննարկում *տե՛ս* Շուգարտ և Քարի, «Նախագահներ և ժողովներ» (Shugart and Carey, *Presidents and Assemblies*, esp. 266-69): Ֆինլանդիայի սահմանադրության կիսանախագահական բնույթի մասին և երկակի գործադիր պաշտոնների միջև ուժային հարաբերությունների մասին մինչև 1988թ. *տե՛ս* Յաակո Նուուսիայենն, «Բյուրոկրատական ավանդույթ. կիսանախագահական իշխանություն և խորհրդարանական կառավարություն. Ֆինլանդիայի օրինակը» (Jaakko Nousiainen, "Bureaucratic Tradition, Semi-presidential Rule and Parliamentary Government: The Case of Finland", *European Journal of Political Research* 16, no. 2 (1988): 229-49):

59. *Տե՛ս* օրինակ՝ Ռուսաստան, Վրաստան, Խորվաթիա, Ռումինիա և Սերբիա: Հետկոմունիստական Եվրոպայում նախագահության դերի զարգացման մասին *տե՛ս* հատուկ կրկնակի հրատարակությունը՝ *East European Constitutional Review* 2, no. 4, 3, no. 1 (1993-94թթ.): Նաև Ռեյ Թարասի խմբ. «Նախագահական համակարգերը հետկոմունիստական պետություններում. համեմատական վերլուծություն» (Ray Taras, ed. *Presidential Systems in Post Communist States: A Comparative Analysis*) գրքի մեծությամբ հատորը ընթացքի մեջ է: Վերնագիրը նախնական է:

այն, երբ վարչապետը կուսակցության առաջնորդ է և ունի միակուսակցական կամ բազմակուսակցական մեծամասնություն, իսկ համակարգը, անկախ նախագահի հատուկ արտոնություններից, կարող է գործել խորհրդարանական ձևով՝ պաշտպանության, ներքին անվտանգության և արտաքին գործերի ոլորտներում:

Քանի որ Ֆրանսիական հինգերորդ հանրապետությունը հաճախ վերցրել են որպես օրինակ, որին պետք է ընդօրինակել ոչ միայն Լեհաստանում, այլև Արևելյան Եվրոպայում և նախկին Խորհրդային Միության նոր պետություններում, օգտակար կլինի մատնացույց անել որոշ թերի վերլուծված պայմաններ, որոնք օգնել են ֆրանսիական կիսանախագահականությանը խուսափելու այն պոտենցիալ տեսական խնդիրներից, որոնք մեր կարծիքով՝ ներհատուկ են կիսանախագահական բանաձևին: Հինգերորդ հանրապետությունն սկիզբ առավ 1958 թվականին, սակայն միայն 1962թ. անցկացված հանրաքվեով մտցվեցին նախագահի ուղղակի ընտրություններ, որոնք առաջին անգամ անցկացվեցին 1965թ.: Ֆրանսիական կիսանախագահության առաջին քսանվեց տարիների ընթացքում նախագահը կուսակցության առաջնորդ էր և կարողացավ առաջնորդել մի կուսակցություն կամ կուսակցական կոալիցիա, որը խորհրդարանում ուներ հստակ մեծամասնություն: Սա ապահովեց նախագահի՝ սահմանադրորեն ամրագրված գերակայությունը: Հետևաբար, վարչապետի ու նախագահի միջև փակուղիներ կամ սահմանադրական հակամարտություններ չառաջացան: 1988-90թթ.՝ քսանյոթ ամսվա ընթացքում, նախագահը մեծամասնություն չէր վերահսկում: Սակայն այս ընթացքում մեծամասնությունը վերահսկում էր վարչապետը: Այսպիսով, համակարգը գործում էր որպես մի մարմին, որտեղ վարչապետը *դե ֆակտո* գլխավոր գործադիրն էր: Այս քսանյոթ ամիսների ընթացքում, որն անվանվեց «համակեցություն», փակուղի կամ սահմանադրական հակամարտություն չկար: 1990թ. խորհրդարանական ընտրություններից հետո նախագահի կուսակցությունը մեծամասնություն չափեց, և համակարգը նորից դարձավ այնպիսին, որտեղ տիրապետողը նախագահն էր: Գլխավոր միտքն այն է, որ ֆրանսիական կիսանախագահականության առաջին երեսուն տարիների ընթացքում ոչ մի անգամ նախագահը կամ վարչապետն այնպիսի վիճակում չհայտնվեցին, որ չկարողանան վերահսկել մեծամասնությունը:<sup>60</sup>

Այս էքսկուրսից հետո պետք է պարզ լինի, որ լեհական կիսանախագահականության այդ նախնական մոդելը չունի և ոչ մեկն այն բարենպաստ պայմաններից, որոնք գոյություն ունենին Ֆրանսիայում: Լեյն Վալենսան կուսակցության առաջնորդ չէր: Նա չէր ուղղորդում կոալիցիոն մեծամասնություն Սեյմում: Նույն ձևով Լեհաստանի կուսակցական ծայրահեղ պառակտվածության պատճառով երկրի վարչապետներից ոչ մեկն առաջին ազատ կերպով ընտրված ստորին պալատում երբեք չի տիրել հստակ մեծամասնության:

Լեհաստանի դեպքը լրացուցիչ բարդանում էր այն փաստով, որ նախագահի պաշտոնի և խորհրդարանի համապատասխան լիազորությունները սահմանադրությամբ

60. Ֆրանսիայում այլ կարևոր փոփոխություններ, որոնք արվեցին առաջ բերելու այս մեծամասնությունները, ներառում են ընտրական օրենք բարձր դե ֆակտո շեմով, առաջինը պարզ մեծամասնությամբ ընտրվելու սկզբունքը և կուսակցությունների նորմատիվային ակտեր (ի տարբերություն Լեհաստանի), որոնք խրախուսում էին կուսակցությունների ինստիտուցիոնալացումը: *Stéu* Ստեփան և Սուլեյման, «Հինգերորդ հանրապետությունը. ներմուծման մոդելը» (Stepan and Suleiman, "The Fifth Republic: A Model for Import?"), Չեհաբիի և Շտուրմի խմբ.՝ «Քաղաքականություն, հասարակություն և ժողովրդավարություն» (Chehabi and Sturm, eds., *Politics, Society and Democracy*, 396-98):

հստակորեն չէին սահմանվել նախքան քաղաքական գործող անձանց դեմ հանդիման դուրս գալը:<sup>61</sup> Ինչպես տեսանք, նախագահի պաշտոնը բխում էր «Կոլր սեղանի» դաշինքի ժամանակ կոմունիստական կառավարության պահանջներից: Այս պաշտոնն ունի վատ սահմանված, սակայն պոտենցիալ մեծ լիազորություններ: Ավելին, ժողովրդավարական Մեյնում քաղաքական բազմաթիվ գործող անձինք նախագահի լիազորություններն ընկալում են որպես *դե ֆակտո*՝ ծագամբ և ոչ թե ժողովրդավարորեն նախընտրած:

Վալենսան, որը 1990թ. նախագահական ընտրությունների առաջին շրջանում հիմնականում մրցակցում էր «Համերաշխության» վարչապետ Տադեուշ Մազովեցկու և նախկինում անհայտ կանադացի լեհ գործարար Ստան Տիմինսկու հետ, շահեց ձայների միայն 39.9%-ը: Տիմինսկին ստացավ 21.1%, Մազովեցկին՝ 18.0%, իսկ հաջորդ երեք թեկնածուները միասին ստացան 18.8%: Այս տոկոսներն, անշուշտ, «Համերաշխության» պատմական ու խարիզմատիկ առաջնորդի համար ակնկալված արդյունքները չէին: Տիմինսկու դեմ երկրորդ, լրացուցիչ փուլում Վալենսան ստացավ ձայների 74.3%-ը, սակայն ընտրողների մասնակցությունը հիասթափեցնելու չափ ցածր էր՝ 53.4%:<sup>62</sup>

Չնայած ընտրական այս բոլորովին էլ ոչ փայլուն արդյունքներին՝ Վալենսան շարունակում էր իրեն տեսնել որպես խարիզմատիկ առաջնորդ, որպես ժողովրդի խոսնակ և ավելի շատ լեգիտիմություն ունեցող, քան կուսակցություններն ու խորհրդարանը: Այս հավատը չխարխլվեց անգամ հաջորդ հինգ տարիների ընթացքում հասարակական կարծիքի հարցումների ժամանակ արտահայտված տատանվող, սակայն նվազ ու էլ ավելի նվազելու միտում դրսևորած աջակցության պարագայում: Համաժողովրդական աջակցության և ինքնապատկերացման միջև այս հակադրությունը կիսանախագահական, արդեն իսկ ռիսկերի հակված կառավարման բանաձևի շրջանակներում հիմնականում բացատրում է Լեհաստանում մոլեգնող ինստիտուցիոնալ հակամարտությունը, որին մենք այժմ կանդրադառնանք:

Գլուխ 5-ում ասացինք, որ սահմանադրության մշակման համար առավել ազատ կլի-

61. Եթե նման համակարգը պետք է գործի, ապա հատկապես կարևոր է, որ նախագահի և օրենսդրի լիազորությունները հստակորեն սահմանվեն լեգիտիմ սահմանադրության մեջ:

62. Քշիշտոֆ Յասինիչը (Krzysztof Jasiewicz) 1990թ. ընտրությունների իր ուսումնասիրության մեջ նշում է, որ Վալենսայի հավաքած ձայների քանակն «իր բազմաթիվ աջակիցների, ինչպես նաև իր համար ամենատեսալի անակնկալն էր»: Տե՛ս նրա «Լեհաստանում ընտրությունները 1990թ.» «"Pospolite Ruszenie" [«հասարակների շարժում»]-ից անդին» ("Polish Elections of 1990: Beyond the 'Pospolite Ruszenie'"), Քոննոր և Պոլշայսկի, «Փախուստ սոցիալիզմից» (Conner and Ploszajski, *Escape from Socialism*, 1994): Ֆրանսիս Միլլարը համաձայնվում է. «Առաջին շրջանի արդյունքները նոյեմբերի 25-ին ասես ցնցում լինեք: Վալենսան չկարողացավ հաղթել առաջին շրջանում, ինչին ձգտում էր», և Տիմինսկին, ում նա բնութագրում է որպես «անձանոթ լեհ արտասահմանցի գործարարի, և ոչ թե Մազովեցկին, տեղ հասավ երկրորդը: Ֆրանսիս Միլլար, «Նոր Լեհաստանի անատոմիան. հետկոմունիստական քաղաքականությունն իր առաջին փուլում» (Frances Millard, *The Anatomy of the New Poland: Postcommunist Politics in Its First Phase* (Aldershot, U.K.: Edward Elgar Publishing Co., 1994), 115-32, quotations from pp. 119 and 128): Նախագահական և կիսանախագահական համակարգերի կողմ փաստարկներից մեկն այն է, որ խարիզմատիկ նախագահը կարող է օգնել՝ հաղթահարելու ապաքաղաքականացվածությունը, որը թվում է բնորոշ հետկոմունիստական հասարակություններին: Լեհաստանում նախագահական ընտրություններին ունեցած մասնակցության ցածր աստիճանը և խարիզմատիկ Վալենսային ցույց տված թույլ աջակցությունը՝ ընտրություններում, և՛ հատկապես վերջին հանրահարցումների ժամանակ կարծես թե չեն հաստատում այդ ակնկալիքը:

նի այնպիսի գործընթացը, որտեղ սահմանադիր ժողովն առանց ուղղակիորեն ընտրելու պաշտոնավարող նախագահին, ազատ է քննարկելու և ընտրելու, թե սահմանադրական կառավարության որ ձևն է ամենահարմարն իրենց երկրի համար: Լեխ Վալենսասն ուղղակիորեն ընտրվեց որպես նախագահ, *նախքան* առաջին ժողովրդավարորեն ընտրված խորհրդարանն սկսեց իր քննարկումները: Այս փաստն ընդհանրապես բարդացնում է սահմանադրության մշակման գործընթացը, և այն մասնավորապես խորացրեց հակամարտությունները փոքրամասնության վարչապետերի ու անկուսակցական նախագահի միջև:

Մի քանի օրինակներ ցույց են տալիս Լեհաստանում սահմանադրական հակամարտության բարդությունն ու վտանգավորությունը: Անմիջապես այն բանից հետո, երբ առաջին ազատ կերպով ընտրված խորհրդարանը գումարվեց, դրա անդամներն ստացան ութ էջանոց մի փաստաթուղթ՝ նախագահ Լեխ Վալենսայից, որտեղ վերջինս առաջարկում էր մի «փոքրիկ սահմանադրություն», որը Վալենսասն հույս ուներ որ արագ կերպով կհաստատվեր ու ի վերջո կմտցվեր նոր սահմանադրության մեջ: Վալենսասն առաջարկում էր, ըստ էության, մեծացնել նախագահի իշխանությունը վարչապետի իշխանության նկատմամբ՝ նախագահին տալով վարչապետի թեկնածությունն առաջարկելու և սեփական նախաձեռնությամբ վարչապետին պաշտոնից ազատելու ու կարիները ցրելու իրավունք: Խորհրդարանի հակակշիռ իրավունքը՝ վարչապետին մեծամասնության քվեարկությամբ հեռացնելը, մյուս կողմից՝ կենթարկվել նախագահական վետոյի, որը կարելի կլիներ հաղթահարել միայն մեծամասնության երկու երրորդով:<sup>63</sup>

Խորհրդարանը քննադատաբար մոտեցավ առաջարկությանը, և Վալենսասն վերջ ի վերջո այն հետ վերցրեց: Սակայն բազմաթիվ ֆորումներում նա հիշեցնում էր, որ կօգտագործի նախագահի իր մանդատը՝ պայքարելու իր ռազմավարական տեսակետների համար: Օրինակ, իր «փոքրիկ սահմանադրությունը» հետ վերցնելուց անմիջապես հետո նա գնաց իր նախնական կենտրոնակայանը Գդանսկում և հայտարարեց. «Ես պահանջներ կներկայացնեմ այն զանգվածների անունից, որոնք ընտրել են ինձ: Ես վերադառնում եմ դեպի զանգվածները: Ես չեմ ընդունի պատասխանատվությունը կառավարության արածի համար, սակայն ես ձեզ հետ կլինեմ»:<sup>64</sup> Ապրիլին, վարչապետի հետ մի շարք բախումներից հետո այն հարցի շուրջ, թե ում է պատկանում Պաշտպանության նախարարությունում գլխավոր պաշտոնյաներին նշանակելու իրավունքը, Վալենսասն ազգային հեռուստատեսությամբ հայտարարեց, որ խնդրագրով դիմելու է Սեյմին «նախագահին

63. Վալենսայի հինգ էջանոց առաջարկությունը պարունակվում է Սեյմի նախագահ Վիսլավ Խր-ժանովսկուն 1991թ. դեկտեմբերի 3-ի ուղղված նամակում: Նամակի պատճենը և առաջարկությունը արդեն հասանելի են Սեյմի գրադարանում: Նամակի մանրամասները, *տե՛ս* Լուիզա Վինտոն, «Հինգվուսակցական կոալիցիան ուժ է հավաքում, Վալենսասն առաջարկում է «Փոքր սահմանադրություն» (Louisa Vinton, "Five-Party Coalition Gains Strength, Walesa Proposes 'Little Constitution'", Report on Eastern Europe (Dec. 6, 1991): 7-8):

64. Մեջբերված «Ազատ Եվրոպա» ռադիոկայանի կողմից (17 հունվարի, 1992թ.), էջ 15: Չափազանց հետաքրքիր հարցազրույց Լեխ Վալենսայի հետ, որը կարևոր պատկերացում է տալիս Վալենսայի՝ որպես նախագահ իր դերի ընկալման մասին, *տե՛ս* Վիկտոր Օսիատինսկի, «Նախագահ Լեխ Վալենսայի նկարագիրը», "A Profile of President Lech Walesa", East European Constitutional Review 2, no. 4, no. 1 (1993-94թթ.), էջ 47-50: Նույն համարում՝ էջ 47-50, Օսիատինսկին ունի նաև հարցազրույց Վալենսայի նախորդի՝ գեներալ Վոյցեխ Յարուզելսկու հետ:

ավելի մեծ իրավունքներ տրամադրելու համար, որոնցով վարչապետը կդառնա նախագահին ստորադաս, ճիշտ այնպես, ինչպես ֆրանսիական համակարգում... Այն փորձություններից հետո, որոնցով մենք անցանք, հավանաբար բոլորս համաձայն ենք, որ Լեհաստանի համար միակ իրավիճակը վերկուսակցական կառավարությունն է, կառավարություն, որը մենք կձևավորենք մասնագետներից»:<sup>65</sup>

Նրա՝ նախկին սերտ աջակիցներից երկուսը մտահոգություն արտահայտեցին Բելվեդերից՝ նախագահական պալատից, նախաձեռնված գործողությունների հետևանքով ժողովրդավարության անկման պատճառով: Յադվիգա Ստանիշկիսը, որը աշխատել էր Վալենսայի՝ որպես նախագահ ընտրվելու օգտին, գրում էր նախագահական բնապարտիզմն ու գործադիր դուալիզմը համակցելու խնդրի մասին. «Լեհաստանը դեռևս չի տեսնում ժողովրդավարության անկումը, սակայն այն կարող է կանգնած լինել դրա եզրին... Գնալով ավելանում են ապացույցները վերահաս գործադիր հեղաշրջման մասին (քաղաքական գործիչների դեմ)»:<sup>66</sup> Յարոսլավ Վաչինսկին "Center Alliance"-ի նախագահը, եղել էր Վալենսայի նախագահական աշխատակազմի ղեկավարը: Սակայն լրագրողի այն հարցին, թե արդյոք «Բելվեդերն իսկապես ամենամեծ վտանգն է ներկայացնում ժողովրդավարության համար», նա պատասխանեց. «Դա այն քաղաքական դասավորությունն է, որով ուժային կենտրոններից մեկը գործնականում մնում է որևէ վերահսկողությունից դուրս, սակայն ինքը վերահսկում է մնացած բոլորին, որը սպառնալիք է ներկայացնում: Ի վերջո, Սեյմ ուղարկելով սահմանադրության իր նախագիծը, նախագահը ցույց տվեց իր ձեռագիրը: Նա իր համար ցանկանում էր ամբողջ իշխանությունը»:<sup>67</sup>

Ի դեպ, նախագահ Վալենսան չէր վերահսկում մյուս բոլոր ուժային կենտրոնները և գործադիր հեղաշրջման փորձ չարեց: Սակայն, անշուշտ, պնդում ենք, որ լեհական կիսանախագահականությունը նպաստեց լուրջ սահմանադրական ու ներկառավարական հակամարտությունների առաջացմանը, որոնք խոչընդոտեցին ժողովրդավարության կայացմանը:

Իր հերթին նորընտիր խորհրդարանի կողմից նշանակված առաջին վարչապետ Յան Օլշնսկին կազմակերպեց մի շարք «արշավանքներ» նախագահի դեմ: Իր կառավարությունը պաշտպանելու և նախագահին խանգարելու համար, որը քարոզում էր զգուշավոր քաղաքականություն կոմունիստների համագործակիցների ու գործակալների նկատմամբ, վարչապետը, խախտելով Սեյմի նախորդ որոշումը, հրապարակեց նախկին կոմունիստական վարչակարգի հետ վաթսուներորս ենթադրյալ համագործակիցների ցուցակ: Ներքին գործերի նախարարը միևնույն ժամանակ, ասում էին, հավաքեց հատուկ ոստիկանական ջոկատ՝ վախեցնելու (և հավանաբար ձերբակալելու) նախագահին և նրա գլխավոր աշխատակազմին: Այս գործողությունների համար ներքին գործերի նախարարը պաշտոնից հեռացվեց, իսկ Սենատի հանձնախումբն առաջարկեց անցկացնել քրեական հետաքննություն:<sup>68</sup>

65. Մեջբերված *FBIS-EEU* (30 ապրիլի, 1992թ.), էջ 14:

66. *Տե՛ս* Յադվիգա Ստանիշկիս, «Շարունակականությունն ու փոփոխությունը հետկոմունիստական Եվրոպայում» (*Jadwiga Staniszkis, "Continuity and Change in Post-Communist Europe"* (The Hague: Netherlands Institute of International Relations, June 1992), 27):

67. Հարցազրույց՝ *"East European Reporter"* (մարտ-ապրիլ 1992թ.), էջ 51:

68. *Տե՛ս* «Ճակատագրերի հետադարձում» (*"Reversal of Fortunes"*, Warsaw Voice: Polish and Central

1992թ. օգոստոսին դեռևս պառակտված Մեյմն ընտրեց Լեհաստանի՝ չորս ամսվա մեջ թվով երրորդ վարչապետին: Նոր վարչապետ Հաննա Մուխոցկան պնդում էր, որ հնարավոր չէ կառավարել, եթե նախագահն ու վարչապետը միմյանց հետ վատ հարաբերությունների մեջ են, ուստի նրա ձևավորած կոալիցիան արագացրեց «կարճ սահմանադրության» նոր տարբերակի վրա աշխատանքը: Նա ասաց, որ նախագահի «սահմանադրական իրավունքները» պետք է հարգել: Դրանով նա ցուցաբերեց իր աջակցությունը նախագահի՝ իրենց արմատներով դեպի «Կլոր սեղանի» դաշինքը գնացող հատուկ լիազորությունների որպես նորմ ընդունմանը: Մեյմը նրա առաջարկությունն ընդունեց առանց այն հատուկ պայմաններից որևէ մեկի, որոնք Ֆրանսիայում հնարավոր դարձրեցին կիսանախագահականության նորմալ ընթացքը, իսկ Լեհաստանը ևս մեկ քայլ առաջ գնաց «կրկնակի գործադիրը» իր անկայուն ժողովրդավարության մշտական մասը դարձնելու ուղղությամբ:<sup>69</sup> Կուսակցության պառակտվածության և դուալիստական փակուղու պատճառով կասեցվեց դեպի հավասարակշռված բյուջե ու խառը տնտեսություն գնալու Լեհաստանի ջանքը: Ինչպես հաղորդում էր *Տնտեսագետների տեղեկատվական բաժինը*, «թեև իրական տնտեսությունը պարզվեց, որ զարմանալիորեն դիմացկուն է քաղաքական ղեկավարության բացակայության պայմաններում, գլխավոր զարգացումները լրջորեն հետաձգվեցին: Հավանաբար առավել կարևորն այստեղ գանգվածային մասնավորեցման ծրագրի բացարձակ անշարժունակությունն է, որտեղ ամբողջ վեց ամիս ոչինչ տեղի չի ունեցել՝ այսպիսով էլ ավելի թուլացնելով Արևմուտքի վստահությունը Լեհաստանի նկատմամբ»:<sup>70</sup>

### Հասարակական կարծիքը, ընտրություններն ու լեհական ժողովրդավարությունը

Առաջին հետկոմունիստական կառավարության իշխանության գալուց երեք տարի անց արդյո՞ք Լեհաստանում հասարակական կարծիքը լրջորեն աջակցում էր ժողովրդավարական քաղաքական հասարակությանը: Թե՞, ինչպես որոշ վելուծաբաններ վախենում էին, լեհ հասարակության կարծիքն իրականում վտանգավոր կերպով երկիմաստ էր ժողովրդավարության որոշ սկզբունքների ու գործի հանդեպ:

Դիտարկենք մի շարք ցուցանիշներ, որոնք մեզ կօգնեն հետազոտել այս հարցը: Սկսենք ամենաքիչ մտահոգություն պատճառողից՝ Լեհաստանում կուսակցություններին հարելու ծայրահեղ ցածր ցուցանիշից, ինչը զարմանալի չէ՝ հաշվի առնելով կուսակցական

European Review (July 26,1992): 5):

69. Այս պարբերությունը հիմնված է Մեյմի՝ սահմանադրական հանձնաժողովի անդամների հետ Ստեփանի քննարկումների վրա (հուլիս 22-26, 1992թ.) Վարչավայում:

70. Տնտեսագետների տեղեկատվական բաժինը (EIU) հաստատեց, որ քաղաքական անելանելիությունը 1992թ. լուրջ խոչընդոտ էր ներկայացնում տնտեսական ռազմավարության ձևակերպման և իրականացման համար: Այնքանով, որքանով տնտեսությունը մնում էր չափավոր առողջ ու սղաճը՝ վերահսկված, այդ արվում էր «չնայած քաղաքականությանը» երկրում՝ կարողանալով «դիմանալ անցած վեց ամիսների ռազմավարական վակուումին»: "EIU"-ի կանխատեսումը 1992թ. երկրորդ կեսի համար առաջարկում է, որ «վատված վեց ամիսներից հետո ռազմավարության մշակման որակը կարող է բարելավվել»: *SkU "The Economist Intelligence Unit Country Report: Poland" (3-րդ քառորդ, 1992թ.)*, էջ 6, 4, 8, համապատասխանաբար:

**Աղյուսակ 16.4. Կուսակցություններին հարելը հինգ արևելաեվրոպական երկրներում 1990-1991թթ. Վարդ. «Մեր երկրում եղած քաղաքական կուսակցությունների ու շարժումների մեջ կան այնպիսիք, որոնց Դուք ավելի մոտ եք գտում Ձեզ»:**

Երկիր	Տոկոս		
	Այո	Ոչ	Չգիտեմ
Լեհաստան	17%	72%	11%
Բուլղարիա	67%	28%	5%
Չեխոսլովակիա	53%	46%	1%
Նոնգարիա	51%	47%	3%
Ռումինիա	64%	30%	5%

*Աղբյուրը՝* Լալո Բրուստ և Յանոշ Սայմոն, «Քաղաքական մշակույթը, քաղաքական և սոստեսական կողմնորոշումները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում ժողովրդավարության անցման ժամանակ. 10 երկրների միջազգային հետազոտության ծածկագրի բանալին», Political Culture, Political and Economic Orientations in Central and Eastern Europe during the Transition to Democracy: The Codebook of the International Survey of 10 Countries (Բուդապեշտ, Նոնգարիայի գիտությունների ակադեմիայի քաղաքագիտության ինստիտուտ, 1992թ.):

պառակտվածության բարձր ինդեքսը: 1990 թվականի նոյեմբերից մինչև 1991 թվականի օգոստոսն ընկած ժամանակահատվածում երկու լավ պատրաստված քաղաքական սոցիոլոգներ՝ Լալո Բրուստն ու Յանոշ Սայմոնը, համակարգեցին հասարակական կարծիքի մի համեմատական հետազոտական աշխատանք յոթ արևելաեվրոպական երկրներում և նախկին Խորհրդային Միության երկու հանրապետություններում: Այդ ուսումնասիրությունից մի փաստ ամրապնդում է Լեհաստանում ցածր քաղաքական կողմնորոշման մասին մեր պատմական-կառուցվածքային վերլուծությունը: Հանրահարցման մեջ ներգրավված հինգ արևելաեվրոպական երկրներից Լեհաստանը, անկասկած, ունեցել է պատասխանողների ամենացածր տոկոսը, որոնք արտահայտել են համակրանք որևէ քաղաքական կուսակցության կամ անգամ քաղաքական շարժման նկատմամբ (Աղյուսակ 16.4):

Նույն հետազոտության ժամանակ Լեհաստանն ունեցել է նաև ավելի նվազ տարբերությամբ ամենացածր տոկոսը այն պատասխանողների, ովքեր հստակորեն նախընտրել են բազմակուսակցական համակարգը: Անգամ ավելի մտահոգիչ է այն, որ նախագահի, վարչապետի և Սեյմի միջև հակամարտության գագաթնակետին՝ 1992թ. մայիսին, Լեհաստանում հասարակական կարծիքն ավելի աննպաստ էր քաղաքական հասարակության այս երեք գլխավոր բաղադրիչների, քան Լեհաստանում ցանկացած այլ խոշոր կազմակերպության հանդեպ: Իսկապես, կար ժողովրդականություն վայելող մի լեհական ասացվածք այն մասին, որ որևէ մեկը, ով կհայտնվի պատերազմող նախագահի, վարչապետի ու Սեյմի միջև առաջացած «Բերմուդյան եռանկյունում», կստանա վնասվածքներ:

Ի տարբերություն դրա՝ երեք առավել ժողովրդականություն վայելող ինստիտուտները համեմատաբար չէզոք իշխանություններն էին՝ զինված ուժերը, ոստիկանությունը և օմբուդսմենը՝ մարդու իրավունքների պաշտպանը, որոնք համարվում էին քաղաքացիների ծառայություններ մատուցող կառույցներ և ներգրավված չէին «Բերմուդյան եռանկյունում» հակամարտության մեջ: Հետաքրքիր է, որ եկեղեցու նկատմամբ, որը հանդես էր եկել որպես հղիության ընդհատման դեմ ուժեղ ջատագով, դրսևորվում էր աճող քննադատության զգացում (Աղյուսակ 16.5):

Հասարակական կարծիքի ուսումնասիրության կենտրոնը Վարշավայում, որը ղեկա-

**Աղյուսակ 16.5. Խոշոր քաղաքական ինստիտուտների քննադատման տոկոսը, 1990թ. փետրվար, 1991թ. հոկտեմբեր, 1997թ. մայիս**

Ինստիտուտ	Քննադատման տոկոսը		
	Փետրվար 1990թ.	Նոյեմբեր 1991թ.	Մայիս 1992թ.
Օրենսդրի ստորին պալատ	14%	54%	60%
Կառավարություն և նախարարություններ	14%	48%	53%
Նախագահ	N/A	43 %	52%
Կաթոլիկ եկեղեցի	12%	25%	44%
Տեղական մարմիններ	N/A	33%	33%
Ոստիկանություն	N/A	21%	21%
Զինված ուժեր	15%	10%	12%
Օմբուդսմեն	N/A	9%	10%

Աղբյուրը՝ Centrum Badania Opinii Społecznej (Նասարակական կարծիքի ուսումնասիրության կենտրոն, Public Opinion Research Center, CBOS, Վարշավա): Տվյալներն ու թարգմանությունը տրամադրվել են կենտրոնի տնօրեն Լեննա Կոլարսկա-Բոբինսկայի կողմից:

**Աղյուսակ 16.6. Մի շարք արտակարգ միջոցառումներին աջակցությունը Լեհաստանում, 1-3 մայիս, 1992թ**

Միջոցառում	Տոկոս				
	Խիստ հավան.	Որոշ չափով հավան.	Որոշ չափով անհավան.	Խիստ անհավան.	Պժվար է ասել
«Ամուր ձեռքի» օրենք և ժողովրդավարության արգելում»	11%	19%	19%	37%	14%
«Կառավարությունը կարող է իշխել հրամանագրերով»	10%	35%	16%	15%	24%
«Նախագահը կարող է իշխել հրամանագրերով»	9%	24%	17%	30%	20%
«Գործադրյալների անցկացման իրավունքի զգալի սահմանափակումներ»	14%	29%	21%	21%	15%
«Նոր կառավարության ստեղծում, որտեղ նախագահը վարչապետ է»	14%	18%	14%	29%	25%
«Ընդհանուր գործադրյալի կոչ»	7%	20%	21%	41%	11%

Աղբյուրը՝ Նոյնը, ինչ Աղյուսակ 16.5-ի համար:

վարում է լեհ հայտնի սոցիոլոգ Լեննա Կոլարսկա-Բոբինսկան, չէր նախատեսել որևէ հարց՝ հետազոտելու բացահայտորեն հակաժողովրդավարական զգացմունքները 1989-91թթ.: Սակայն 1992թ. մայիսի քաղաքական ճգնաժամի պայմաններում կենտրոնն անցկացրեց հանրային հարցում՝ որոշելու, թե արդյոք արտակարգ իրավիճակների պարագայում ձեռնարկվող միջոցառումները, երբ հրամանագրերի միջոցով իշխելու կառավարության (կամ նախագահի) իրավունքը կիրառվում է մինչև անգամ ժողովրդավարության վրա արգելք դնելու համար, ընդունելի՞ են, թե՞ ոչ (Աղյուսակ 16.6):

Արդյունքները ենթակա են տարբեր մեկնաբանությունների: Սակայն եթե հակա-ժողովրդավարական անվանենք նրանց, ովքեր հավանություն կտային «ամուր ձեռքի օրենքին ու ժողովրդավարության արգելմանը», ապա հարցման ենթարկվածների 30%-ը հակաժողովրդավարական էր: Եթե նրանց, ովքեր պատասխանել են «ոժվար է ասել», անվանենք երկիմաստ ժողովրդավարներ, ապա Լեհաստանի՝ 1992թ. մայիսին հարցման ենթարկված բնակչության 44%-ն արտահայտել է հակաժողովրդավարական կամ երկիմաստ ժողովրդավարական կարծիքներ: 1992թ. հուլիսի վերջին, սակայն, երբ նշանակվեց



**Աղյուսակ 16.7. Ավտորիտար հակաքաղաքական տարբերակներին հավանություն տվող պատասխանողների տոկոսը Լեհաստանում, Չեխիայի Հանրապետությունում, Սլովակիայում, Ղունգարիայում և Ավստրիայում, 1991-1993թթ.**

Երկիր	Պատասխանողների տոկոսը		
	«Հավանություն տալ կուսակցության և Խորհրդարանի կազմալուծմանը» (1992թ.)	«Նախընտրել միակուսակցական համակարգ» (1992թ.)	«Հավանություն տալ ուժեղ անձի իշխանությանը» (1993թ.)
Լեհաստան	40%	31%	39%
Ղունգարիա	24%	22%	26%
Սլովակիա	20%	14%	19%
Չեխիայի Հանրապ.	19%	8%	22%
Ավստրիա	8%	N.D.	22%

*Աղբյուրը՝ Ֆրից Պլատեր և Պիտեր Ուլրամ, "Zum Stand der Demokratisierung in Ost-Mitteleuropa," Ֆրից Պլատերի և Պիտեր Ուլրամի խմբ. «Անցում, թե՛ լնացում. իրական քաղաքական միտումները Արևելյան Եվրոպայում» Transformation oder Stagnation? Aktuelle Politische Trends in Osteuropa (Vienna: Schriftenreihe des Zentrums fGr angewandte Politikforschung, 1993), 2:46-47:*

ավելի փոխհամաձայնեցված վարչապետ, և կային նշաններ, որ «Բերմուդյան եռանկյունու» միջև հակամարտությունը նվազել է, հակաժողովրդավարների թիվը 30%-ից ընկավ մինչև 25:

Ընթերցողներին խնդրում ենք նորից դիտել Աղյուսակ 16.1-ը: Մեր կարծիքով՝ էթիկական քաղաքացիական հասարակության հիմնական վերաբերմունքները ավտորիտար չեն, սակայն նրանք հիմնավորապես տարբերվում են ազատական ժողովրդավարության Լոկի հայեցակարգից: Ավելի կարևոր է այն, որ Աղյուսակ 16.1-ում պատկերված հիմնական վերաբերմունքների համակարգը նման է ապաքաղաքական համայնավարության այն առումով, որ դրանք, թվում է, թե հակադրվում են հակամարտության ինստիտուցիոնալացմանը ժողովրդավարական քաղաքականության մեջ: Ի դեպ, ըստ ավտորիտար հակաքաղաքականության դասական երեք ցուցանիշներից երկուսի (կուսակցության ու Խորհրդարանի կազմալուծմանը հավանություն տալու պատրաստակամությունը, միակուսակցական համակարգի նախընտրությունը և ուժեղ անձի իշխանությանը հավանություն տալը)՝ Լեհաստանը հասարակական կարծիքի տարբեր հարցումների ժամանակ 1991թ-ից մինչև 1993թ. շատ ավելի հակաքաղաքական է եղել, քան Չեխիայի Հանրապետությունը, Սլովակիան կամ Ավստրիան (Աղյուսակ 16.7): Մի վերջին ապացույց առ այն, որ Լեհաստանում գոյություն ունեին լավագույն դեպքում երկիմաստ վերաբերմունքներ ժողովրդավարական քաղաքական հասարակության նկատմամբ, տեսնում ենք, երբ համեմատում ենք քաղաքական վերաբերմունքը Լեհաստանում ու Բրազիլիայում քաղաքական վերաբերմունքի հետ այն չորս կայացած ժողովրդավարություններում, որոնք մենք ուսումնասիրել ենք (Իսպանիա, Պորտուգալիա, Հունաստան և Ուրուգվայ) (Աղյուսակ 16.8):

Ստույգ վստահ չենք, թե ինչին կարելի է վերագրել ժողովրդավարական ինստիտուտների նկատմամբ այս երկիմաստ վերաբերմունքը, թեև իսկապես կարծում ենք, որ դեր է խաղացել էթիկական քաղաքացիական հասարակության ապաքաղաքական ժառանգությունը: Շատ վերլուծաբաններ կանդեն, որ հիմնականը շուկայական տնտեսությանն անցման ժամանակ տնտեսական անկումն ու քայքայումն էր: Սակայն համեմատական տեսանկյունից պետք է նշենք, որ հետկոմունիստական Եվրոպայում Լեհաստանն, ան-

**Աղյուսակ 16.8. Ժողովրդավարության վերաբերմունքային աջակցության համեմատությունը Լեհաստանում և Բրազիլիայում ի տարբերություն չորս կայացած ժողովրդավարությունների Ուրուգվայում, Իսպանիայում, Պորտուգալիայում և Ղուանստանում**

Նախընտրած հասարակարգի մասին կարծիքը	Պատասխանողների տոկոսը					
	Լեհաստ.	Բրազիլ.	Ուրուգվ.	Իսպան.	Պորտուգ.	Ղուանստ.
«Ժողովրդավարությունը նախընտրելի է կառավարության ցանկացած այլ ձևից»	31	42	73	70	61	87
«Ինձ նման մարդկանց համար ժողովրդավարական ու ոչ ժողովրդավարական վարչակարգերը նույնն են»	40	24	8	9	7	0
«Որոշ դեպքերում ոչ ժողովրդավարական կառավարությունը կարող է նախընտրվել ժողովրդավարությունից	13	22	10	10	9	5
Զգիտեմ/Պատ. չկա*	16	12	9	11	23	7

*Աղբյուրը՝* Լեհաստանի համար նույնը ինչ որ Աղյուսակ 16.5, հարցումն անցկացվել է 1992թ. նոյեմբերին: Ուրուգվայի համար, նույնը, ինչ որ 10.1: Իսպանիայի, Պորտուգալիայի և Ղուանստանի համար նույնը, ինչ որ Աղյուսակ 8.2: Բրազիլիայի համար՝ "Avaliacao do Governo Collor apes Bois anos de mandato," Datafolha (Sao Paula: Feb. 1992), ազգային ընտրանքը՝ 2500:

\* DK/NA – չգիտեմ/պատ. չկա

**Աղյուսակ 16.9. Տնտեսական համակարգին հավանություն տվող պատասխանողների տոկոսը և կառավարության ու նախագահի նկատմամբ նրանց վստահության աստիճանը. Արևելյակենտրոնական եվրոպայի վեց երկրներ, 1993թ. նոյեմբերից մինչև 1994թ. մարտ**

Երկիրը	Պատասխանողների տոկոսը			
	Վստահություն քաղաքական համակարգի գործադիր նկատմամբ			
	Հավանություն՝ տնտեսական համակարգի	կառավարության	նախագահի	ընդհանուր համակցված վստահություն
Լեհաստան	50%	25%	20%	(45%)
Բուլղարիա	14%	13%	40%	(53%)
Ղունգարիա	27%	21%	65%	(86%)
Ռումինիա	35%	27%	48%	(75%)
Սլովակիա	31%	32%	62%	(94%)
Չեխ. Ղանրապ.	67%	57%	67%	(124%)

*Աղբյուրը՝* Ռիչարդ Ռուզ և Քրիստիան Ղանթեր, «Նոր ժողովրդավարությունների բարոնետր III. սովորել տեղի ունեցածից» "New Democracies Barometer III: Learning from What Is Happening," Studies in Public Policy, no. 230 (1994թ.), Աղյուսակներ 23, 52, 58:

կասկած, 1992-94թթ. Ժամանակահատվածում օբյեկտիվորեն ուներ ՀՆԱ-ի ամենամեծ դրական աճը:<sup>71</sup> 1993թ. և 1994թ. հոկտեմբերի միջև ընկած ժամանակահատվածում սուբյեկտիվորեն իրականացված մի հանրային հարցման ժամանակ Չեխիայի Հանրապետությունում, Սլովակիայում, Հունգարիայում, Լեհաստանում, Ռումինիայում և Բուլղարիայում Լեհաստանն ունեցել է տնտեսության երկրորդ բարձրագույն գնահատականը, սակայն, անկասկած, ցածրագույն ընդհանուր վստահությունը գործադիր իշխանության երկու աղբյուրների՝ կառավարության ու նախագահի նկատմամբ (Աղյուսակ 16.9):

Աղյուսակ 16.9-ը որոշ չափով հասկանալու համար վերադառնանք երկակի գործա-

71. Տե՛ս Աղյուսակ 21.1-ն այս գրքում:

դիրով կիսանախագահականության հնարավոր վտանգների մասին մեր քննարկմանը: Ընդհանուր տեսական տեսանկյունից նախագահի և օրենսդրի միջև հակամարտությունը և դրանից ծնված կառավարությունն անպայման չէ, որ վնաս բերի ժողովրդավարությանը, երբ երկու կողմերը հարգում են միմյանց և մեկը մյուսին վերացնելու մտադրություն չունեն: Սակայն երբ կիսանախագահականության այս կամ այն բաղադրիչի կողմնակիցները զգում են, որ երկրի համար ավելի լավ կլինի, որ իշխանության ժողովրդավարորեն լեգիտիմացված կառուցվածքի մի ճյուղն անհետանար կամ փակվեր, ապա ժողովրդավարական համակարգը վտանգի տակ է և կրում է լեգիտիմության ընդհանուր կորուստ, քանի որ նրանք, ովքեր հարցականի տակ են դնում մեկը կամ մյուսը, հակված կլինեն համարելու քաղաքական համակարգը որպես անցանկալի, քանի դեռ չի գերակշռում իրենց նախընտրած կողմը: Չուտ խորհրդարանական համակարգում չկա երկակի գործադիր, այնպես որ ժողովրդավարական ինստիտուցիոնալ շրջանակի ապալեգիտիմացման այս աղբյուրը գոյություն չունի: Ժողովրդավարական խորհրդարանում հակամարտություն, իհարկե, կա, սակայն այն սովորաբար լինում է կուսակցությունների միջև ռազմավարությունների շուրջ: Սակայն կիսանախագահական համակարգում ռազմավարության շուրջ հակամարտությունները հաճախ իրենց դրսևորում են որպես հակամարտություն ժողովրդավարության երկու ճյուղերի միջև:

Աղյուսակ 16.9-ը ցույց է տալիս կառավարության ու նախագահի փոխադարձ ապալեգիտիմացումը, որը տեղի ունեցավ Լեհաստանում՝ չնայած տնտեսության համեմատական առողջությանը: Այս հակամարտության հատկապես վտանգավոր շրջան տեղի ունեցավ 1995թ. հունվարին և փետրվարին: Նախագահը ցանկանում էր, որ գոյություն ունեցող կառավարությունը հրաժարական տա և զլխավոր գործող անձանց հետ մասնավոր գրույցների ժամանակ կամ երբեմն հրապարակայնորեն բարդ ձևակերպումներով ակնարկում էր, որ եթե կառավարությունը հրաժարական չտա, ապա նա միակողմանիորեն կարձակի խորհրդարանը և կհայտարարի նոր ընտրություններ, նույնիսկ եթե չունի այդպես վարվելու հստակ սահմանադրական իրավունք: Նախագահ Վալենսան դիմեց Կոնգրեսին՝ գործելու իր բարոյական լեգիտիմության հստակ զգացումով (չնայած այն փաստին, որ Աղյուսակ 16.9-ում բերված հանրահարցման մասնակից վեց երկրների տվյալներով նա ուներ նախագահին հավանություն տալու գծով ամենացածր վարկանիշը), որովհետև հավատում էր իր խարիզմատիկ առաքելությանը՝ ամրապնդված այն փաստով, որ նա ուղղակիորեն ընտրվել էր: Գիյերմո Օ'Դոննելն, իհարկե, Վալենսայի ելույթը կդասակարգեր որպես «պատվիրակված ժողովրդավարության» նախատիպային դիսկուրս:<sup>72</sup> Վալենսան որոշ ժամանակ հատկացրեց խորհրդարանի ու կառավարության դանդաղկոտությունը քննադատելուն.

Երկրի համար առավել կարևոր որոշումները հետաձգվում են: Միակ արագ ընդունվող որոշումները նրանք են, որոնք ծառայում են անձնական և կուսակցական շահերին... Լեհաստանը ժամանակ չունի դեղին լույսի առջև սպասելու: Այդ պատճառով, եթե այլևս չկա որևէ բան, որ կառավարությունն ու խորհրդարանը կարող են անել, եթե չկա ոչինչ, որ կարող է արվել

72. Գիյերմո Օ'Դոննել, «Պատվիրակված ժողովրդավարություն» (Guillermo O'Donnell, "Delegative Democracy", Journal of Democracy 5, no. 1 (1994): 55-69, esp. 64):

Լեհաստանի բարօրության համար, ապա ես ձեզ դիմում եմ հրաժարական տալու պահանջով, որովհետև պատմությունը չի ների ձեզ կամ մեզ բոլորիս: Եվ եթե դուք որևէ այլ մտքեր կամ մարդիկ չունեք [առաջարկելու] և միայն ունեք գոյատևելու այս պարզ կամքը, ապա ես կկայացնեմ որոշումն այն լրիվ համոզմունքով, որ դա բխում է Լեհաստանի շահերից... Ժողովրդավարական ընտրություններում ժողովուրդն ինձ է վստահել պետության համար պատասխանատվությունը... Ես փորձում եմ փոխել իրավիճակը՝ կիրառելով ժողովրդավարական ու խաղաղասիրական եղանակներ: Սակայն այս արդյունքներին հասնելու համար ես կանեմ այնպես, ինչպես հարմար եմ համարում:<sup>73</sup>

Իշխող կոալիցիան փոխեց վարչապետին: Սակայն նախագահի՝ խորհրդարանը ծաղրածանակի ենթարկելու և սպառնալու ներկայացումը շատ բանով չնպաստեց իշխանության ժողովրդավարորեն լեգիտիմացված աղբյուրների ժողովրդավարական լեգիտիմությունը մեծացնելու գործին:

Լեհաստանի քաղաքական հասարակությունն անսպասելի շրջադարձ կատարեց 1993թ.: Խորհրդարանականները, ովքեր տեղյակ էին, որ օրենսդրի կուսակցական ծայրահեղ պառակտվածությունը դժվարացնում է տևական կոալիցիոն մեծամասնություններ ստեղծելու հարցը, ընդունեցին նոր ընտրական օրենք 1993թ. մայիսի 28-ին: Այս ընտրական օրենքը, որին աջակցեցին այն ժամանակ իշխող «Համերաշխության» կոալիցիային կողմ բոլոր յոթ կուսակցությունները և ի վերջո որոշ ընդդիմադիր կուսակցություններ, պարտադրում էր, որ որևէ կուսակցություն չի կարող ներկայացված լինել Սեյմի ստորին պալատում, եթե չի ստացել համաժողովրդական վավեր ձայների 5%-ից ավելի: Կուսակցությունների կոալիցիայի կազմում Սեյմ մտնելու համար սահմանվել էր էլ ավելի բարձր՝ 8% շեմ: Որպես լրացուցիչ պարզ խոշորագույն կուսակցություններին՝ միայն նրանց, ովքեր ստացել են ձայների առնվազն 7%-ը, իրավունք էր տրվում վերաբաժանելու երկրի մասշտաբով մնացած համամասնական ներկայացուցչական ձայները, որոնք տրվել են շեմից վեր գտնվող կուսակցություններին:

Ընտրական օրենքը պարունակում է երկու այլ դրույթ, որոնք, ինչպես ցույց է տրվում ընտրական համակարգերի վերաբերյալ գրականության մեջ, ունեն խիստ միտում՝ ուժեղացնելու համակարգում եղած մեկ կամ երկու ամենախոշոր կուսակցությունները: Առաջին. լեհական ընտրական օրենքն ընտրել էր ընդհանուր համամասնական ներկայացուցչական համակարգում տեղերի բաշխման դ՛ճոնդոտի բանաձևը: Արենդ Լիյփհարտն ընտրական համակարգերի իր հեղինակավոր էմպիրիկ ու տեսական ուսումնասիրության մեջ դ՛ճոնդոտի բանաձևի ազդեցության մասին շատ խիստ է արտահայտվում. «Ամենաբարձր միջինների բանաձևերից դ՛ճոնդոտի եղանակը... ամենաբիչ համամասնականն է և պարբերաբար գործում է ամենախոշոր կուսակցությունների օգտին»:<sup>74</sup> Եվ վերջապես, որոշ ընտրական տարածքներ կիսվել էին՝ այդպիսով նվազեցնելով դրանց «տարածքային

73. Նախագահ Վալենսայի դիմումը Սեյմի ղեկավարությանը 6 փետրվարի, 1995թ., տպագրվեց 7 փետրվարի, 1995թ., "Gazeta Wyborcza"-ում, իսկ հատվածներ թարգմանվեցին ու վերատպվեցին «Վալենսա. փորձում է կարկատել» վերնագրով, Transition, 1, no, 4 (1995թ.), էջ 56-57:

74. Արենդ Լիյփհարտ, «Ընտրական համակարգեր և կուսակցական համակարգեր. քսանյոթ ժողովրդավարությունների ուսումնասիրություն, 1949-1990թթ.» (Arend Lijphart, *Electoral Systems and Party Systems: A Study of Twenty-Seven Democracies, 1945-1990* (Oxford: Oxford University Press, 1994), 23):

մեծությունը» և այդ արտահայտությունը սահմանելով որպես որևէ տարածքում ընտրված ներկայացուցիչների թվաքանակ: Ընտրությունների մասին ուսումնասիրությունների հերթական հայտնագործությունն այն է, որ որքան փոքր են ընդհանուր տարածքային մեծությունները, այնքան քիչ են կուսակցություններն օրենսդիրում, և այնքան ավելի անհամասնական կարող է դառնալ համամասնական ներկայացուցչական համակարգը:<sup>75</sup>

Այս ընտրական օրենքը, որը ներառում էր չորս ուղղություն, չորսն էլ՝ հօգուտ առաջին և երկրորդ խոշորագույն կուսակցությունների, Մեյնում պաշտոնապես ընդունվելուց անմիջապես առաջ «Համերաշխությունից» պոկված խմբի խորհրդարանականների մեծամասնությանը օգնեց տապալելու վարչապետ Հաննա Սուխոցկայի՝ դեպի «Համերաշխություն» միտված կառավարությունը: Ի գարմանս բազմաթիվ խորհրդարանականների՝ «Համերաշխության» պատմական առաջնորդ Լեյն Վալենսսան հայտարարեց վաղաժամ ընտրություններ, որոնք պետք է անցկացվեին 1993թ. սեպտեմբերին:

«Ռացիոնալ ընտրությունը» միշտ չէ, որ հանգեցնում է նախընտրելի «ռացիոնալ արդյունքների»: Ընտրությունների մասին օրենքով նախատեսված նոր խթանները կրեթին այն ցանկալի արդյունքին, որին ձգտում էին դրա հիմնական ձևակերպողները, եթե միայն նրանք վերաչափեին իրենց վարքագիծն իրենց իսկ ստեղծած նոր կանոնների սահմաններում հաղթելու համար: Նրանք դա չարեցին:

Չորս կաթոլիկ կուսակցություններ դիտարկեցին կոալիցիա կազմելու հարցը, սակայն վերջում միայն երկուսը մտան կոալիցիայի մեջ հենց վերջնաժամկետից անմիջապես առաջ և հավաքեցին ձայների միայն 6.4%-ը: Կաթոլիկ Լեհաստանում չորս հիմնական կաթոլիկ կուսակցություններից ոչ մեկը շեմը չանցավ:<sup>76</sup> Ազատական ժողովրդավարական կոնգրեսը, որը չնայած տարբերություններին, եղել է 1989թ. հետո բարեփոխումների տնտեսական ծրագրի խոշոր ջատագով, չկարողացավ կոալիցիա ստեղծելու շուրջ համաձայնության գալ բարեփոխումներին նույնպես աջակցող «Համերաշխության» նախկին մեկ այլ խոշոր կուսակցության հետ (Ժողովրդավարական Միությունը (ԺՄ)) կոալիցիայում իրենց հատկացվելիք տեղերի քանակի շուրջ վեճի պատճառով: Ազատական-ժողովրդավարական կուսակցությունը շեմը չանցավ: Ի դեպ, Սուխոցկայի կոալիցիայում յոթ կուսակցություններից վեցը, որոնք օգնել էին օրենքի ձևակերպմանը, չանցան իրենց նախատեսված շեմերը:

75. Սա լուրջ փաստարկ էր Դուգլաս Ռեյի դասական «Ընտրական օրենքների քաղաքական հետևանքները» (Douglas W. Rae, *The Political Consequences of Electoral Laws* (New Haven: Yale University Press, 1967), 114-25), և հիմնավորվեց Ռեյն Թաագեպերայի ու Մեթյու Շուգարտի համեմատական ուսումնասիրություններով՝ «Տեղեր և ձայներ. ընտրական համակարգերի էֆեկտներն ու դետերմինանտները» (Rein Taagepera and Matthew S. Shugart, *Seats and Votes: The Effects and Determinants of Electoral Systems* (New Haven: Yale University Press, 1989), 112) և Լիյփհարտ, «Ընտրական համակարգեր և կուսակցական համակարգեր» (Lijphart, *Electoral Systems and Party Systems*, 10-14): Այլ մանրամասներ ընտրական օրենքի մասին տե՛ս Լուիզա Վիրոն, «Լեհաստանի նոր ընտրական օրենքը. ավելի քիչ կուսակցություններ, նույն փակուղին» (Louisa Viron, "Poland's New Election Law: Fewer Parties, Same Impasse", RFE/RL Research Report 28 (July 12, 1993): 7-17): Շեմի սկզբունքները չեն կիրառվում էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ:

76. Տե՛ս Աննա Սաբոտ-Սվիդլիցկա, «Քաղաքական ընտրությունները. եկեղեցին, աջերը և ձախերը» (Anna Sabbot-Swidlicka, "The Political Elections: The Church, the Right and the Left", RFE/RL Research Report 40 (October 8, 1993): 24-31, esp. 25):

**Աղյուսակ 16.10. Ձայներ՝ համեմատած տեղերի հետ. կուսակցությունները, որոնք անցան և այն կուսակցությունները, որոնք չանցան Լեհաստանում սահմանված ընտրական շեմը 1993թ. սեպտեմբերի Սեյմի խորհրդարանական ընտրությունների ժամանակ (ստորին պալատ)**

Ընտրական շեմ	Կուսակցություն	Վամաժողովրդական բլեի տոկոսը	Տեղերի տոկոսը
Շեմից բարձր	SLD (Democratic Left Alliance)	20.41%	37.10%
	PSL (Polish Peasant Party)	15.40%	28.60%
	UD (Democratic Union)	10.59%	16.08%
	UP (Union of Labor)	7.28%	8.90%
	KPN (Confederation of Independent Poland)	5.77%	4.70%
	BBWR (Non-Party Bloc for Support of the Reforms)	5.41%	3.40%
	German Minority (not subject to threshold rules)	0.70%	0.80%
Ընդամենը		65.56%	100%
Շեմից ցածր	Fatherland Catholic Election Committee	6.37%	0
	Solidarity Trade Union	4.90%	0
	Center Alliance	4.42%	0
	Liberal Democratic Caucus	3.99%	0
	Union of Real Politics	3.18%	0
	Self-defense	2.78%	0
	Party X	2.74%	0
	Coalition for Republic	2.70%	0
	Peoples' Alliance	2.37%	0
	Political Party of Beer Lovers	0.10%	0
	Others	0.89%	0
	Ընդամենը		34.44%

*Աղբյուրը՝* Կազմված տվյալները էդմունդ Վնուկ-Լիպինսկու, «Ձախ շրջադարձ Լեհաստանում. սոցիոլոգիական և քաղաքական վերլուծություն», "Left Turn in Poland: A Sociological and Political Analysis," Լեհաստանի Գիտությունների ակադեմիայի Քաղաքական ուսումնասիրությունների ինստիտուտ, Վարշավա (1993թ. նոյեմբեր) և «Ընտրական վիճակագրության և հանրային կարծիքի հետազոտման տվյալների բյուլետեն», "Bulletin of Electoral Statistics and Public Opinion Research Data," *East European Politics and Societies* 8, no. 2 (1994թ.), էջ 371:

Նախագահ Վալենսան մերժեց սատարել որևէ կուսակցության, սակայն ստեղծեց «Բարեփոխումների աջակցության ոչ կուսակցական բլոկը» (BBWR), որը շեմն անցավ ձայների 5.4%-ով, սակայն չստացավ մնացած ձայների վերաբաշխման իրավունք, 7%-ի մասին դրույթի պահանջների պատճառով: Ի վերջո, ընդհանուր ձայների չափազանց բարձր 34.4%-ը գնաց կուսակցություններին, որոնք շեմերը չէին անցել (Աղյուսակ 16.10):<sup>77</sup>

77. 1993թ. ընտրությունների վերլուծություն, *տե՛ս* Էդմունդ Վնուկ-Լիպինսկի, «Ձախ շրջադարձ Լեհաստանում. սոցիոլոգիական ու քաղաքական վերլուծություն» (Edmund Wnuk-Lipinski, "Left Turn in Poland: A Sociological and Political Analysis" (Institute of Political Studies, Polish Academy of Sciences, Warsaw, Nov.1993)), «Ընտրական վիճակագրության և հանրային կարծիքի հետազոտական տվյալների տեղեկագիր», "Bulletin of Electoral Statistics and Public Opinion Research Data" *East European Politics and Societies* 8, no. 2 (1994թ.), էջ 369-73, Լուիզա Վիրտոն, «Լեհաստանը դեպի ձախ է գնում», "Poland Goes Left", RFE/RL Research Report 40 (8 հոկտեմբերի, 1993թ.), էջ 21-23 և Վոյտեկ Զուբեկ, «Ձախերի վերա-

Ընտրական օրենքների մասնագետները կազմել են մի շարք բանաձևեր՝ չափելու այն, ինչը Դուգլաս Ռեյն անվանում է «սարքովի մեծամասնություններ» կամ Արենդ Լիյփհարտն անվանում է «ձայն/տեղ անհամամասնություն»։ Լիյփհարտն ընտրությունները վերլուծել է անհամամասնականության պարզ ցուցիչի միջոցով, որը չափում է շեղումը երկու խոշորագույն կուսակցությունների ստացած ընդհանուր ձայների և նրանց ստացած ընդհանուր տեղերի միջև:<sup>78</sup> Նա հաշվարկել է միջին «անհամամասնականության ցուցիչը» աշխարհում բոլոր տևական ժողովրդավարություններում 1945-1980թթ. միջև ընկած ժամանակահատվածում։ Ամենաբարձր անհամամասնականության ինդեքս ունեցող ժողովրդավարությունը, որը կիրառել է պարզ մեծամասնության և մեծամասնական ընտրական համակարգը, Ֆրանսիայի հինգերորդ հանրապետությունն է՝ 12.3%։ Ամենացածր միջին անհամամասնականության ցուցիչ ունեցողը՝ բոլոր տասնհինգ տևական ժողովրդավարություններից, որոնք կիրառել են համամասնական ներկայացուցչական ընտրական համակարգ, Լյուքսեմբուրգն է՝ 3.2%-: 1993թ. Լեհական Սեյմի ընտրությունների դեպքում կիրառվել է համամասնական ներկայացուցչություն։ Երկու խոշորագույն կուսակցությունները ստացել են ձայների 35.8%-ը և տեղերի 65.9%-ը՝ այսպիսով առաջացնելով, ըստ Լիյփհարտի բանաձևի, 35.1% անհամամասնականության ցուցիչ (Աղյուսակ 16.11):

Այս էքսկուրսի իմաստն այն է, որ Լեհաստանի քաղաքական հասարակության գլխավոր խաղացողները «ոացիոնալ» կերպով չհարմարեցրեցին իրենց վարքը՝ գործելու այն խթանների սահմանում, որոնք ստեղծվել էին նոր ընտրական օրենքներով, որոնք հենց իրենք էին սահմանել:<sup>79</sup> Նրանց վարքագիծը ռեֆորմիստ կոմունիստների կուսակցությանն ու նրանց դեռ մինչև 1988թ. դաշնակից գյուղացիական կուսակցությանը ոչ միայն տվեց բացարձակ մեծամասնություն խորհրդարանում, այլև տեսական կարողություն՝ Սահմանադրությունը միակողմանիորեն նախագծելու և խորհրդարանում հաստատելու համար։ Ինչպես կտեսնենք այս գրքի եզրափակիչ գլխում, «կոմունիզմի վերադարձին» կամ «ժողովրդավարության ավարտին» վերաբերող մոայլ կանխատեսումների մեծ մասն իրականում զարգացում չստացավ մասամբ այն պատճառով, որ և՛ կոմունիստական դա-

հաստատումը հետկոմունիստական Լեհաստանում», "The Reassertion of the Left in Post-Communist Poland", *Europe-Asia Studies* 46, no. 2 (1994թ.), էջ 801-37:

78. Ձայն-տեղ անհամամասնությունը չափելու տարբեր բանաձևերի ուժեղ և թույլ կողմերին ծանոթանալու համար, ինչպես, օրինակ՝ Ռեյի ցուցիչը, Լուզմոր-Չենֆի ցուցիչը, Լիյփհարտի ցուցիչը և Մայքլ Գալահերի նվագագույն քառակուսիների ցուցիչը, *տե՛ս* «Անհամամասնություն, բազմակուսակցականություն և մեծամասնության հարթանակներ» փայլուն գրված Լիյփհարտի «Ընտրական համակարգեր և կուսակցական համակարգեր», "Electoral Systems and Party Systems" գրվածքում, էջ 57-77: Լիյփհարտը քննարկում է իր անվանացանկը 61-62 էջերում: Դուգլաս Ռեյը կազմել է մի ուրիշ բանաձև՝ չափելու «սարքովի մեծամասնությունները», մի արտահայտություն, որը նա գործածում է ասելու, որ որևէ կուսակցություն կամ կոալիցիա չի ստացել ձայների մեծամասնություն ընտրություններում, սակայն, այնուհանդերձ, ստացել է տեղերի մեծամասնություն օրենսդրում:

79. Ինչպես նկատել է մի լեհ վերլուծաբան, "KID"-ը կարող էր միանալ ժողովրդավարական միությանը, "PL"-ը կարող էր միանալ "KKW"-ին և էթե "UP"-ը չբաժանվեր, ապա այս բոլոր խմբերը ներկայումս կունենային ներկայացուցչություն Ստորին պալատում: Հատկապես քանի որ չկա զգալի տարբերություն "KLD"-ի և ժողովրդավարական միության, "PC"-ի և "KdR"-ի, ինչպես նաև "KKW"-ի և "PL"-ի միջև: Քաղաքական առաջնորդներն... անտեսեցին ընտրական նոր օրենքի ներմասսերը և պետք է վճարեին գինը: Վնուկ-Լիպինսկի, «Ձախ շրջադարձ Լեհաստանում», "Left Turn in Poland", էջ 16:

Աղյուսակ 16.11. 1993 թվականի սեպտեմբերի լեհական Սեյմի (ստորին պալատը) ընտրությունների Լիյփհարտի անհամամասնության ցուցիչը եւ աշխարհի 21 չընդհատվող ժողովրդավարությունների միջինը՝ ըստ ընտրական համակարգի, 1945 – 1980թթ.

Ընտրական համակարգ	Երկիր	Անհամամասնության ցուցիչ
Վամամասնական ներկայացուցչություն	Լեհաստան	35.1
	Լյուքսեմբուրգ	3.2
	Նորվեգիա	3.1
	Իսլանդիա	3.0
	Ֆրանսիա IV	2.8
	Իռլանդիա	2.4
	Իտալիա	2.2
	Գերմանիա	2.1
	Ավստրիա	2.0
	Ֆինլանդիա	1.6
	Շվեյցարիա	1.5
	Շվեդիա	1.2
	Իսրայել	1.1
	Նիդերլանդներ	1.1
Դանիա	0.9	
Եզակի ոչ փոխանցելի բվե	Ճապոնիա	4.2
Բազմակարծություն և մեծամասնություն	Ֆրանսիա V	12.3
	Կանադա	8.1
	Նոր Զելանդիա	6.3
	Միացյալ Թագավորություն	6.2
	Ավստրալիա	5.6
	Միացյալ Նահանգներ	5.6

Աղբյուրը՝ Լեհաստանի համար նույնը, ինչ Աղյուսակ 16.8-ը: Բոլոր մյուս երկրների համար՝ Արենոյ Լիյփհարտ, «Ժողովրդավարություններ. մեծամասնական և փոխհամաձայնական կառավարությունների մոդելներ քսանմեկ երկրներում», *Democracies: Patterns of Majoritarian and Consensus Government in Twenty-One Countries* (Նյու Ղեվըն, Յեյլի համալսարանի հրատարակչություն, 1984թ.), էջ 160:

րաշրջանի նախկին իշխող կուսակցությունները, և՛ սոցիալական խմբերի մեծ մասն ու 1993թ. ընտրություններից հետո խորհրդարանից դուրս մնացած կուսակցությունները կարծես թե ընդունել են, որ ժողովրդավարությունը միակ լավագույն տարբերակն է: Այդուհանդերձ, 1991թ. կուսակցությունների բաժանվածությունը չափող Լասկոտ-Տաագեպերայի ցուցիչի գծով աննախադեպ գնահատականի արժանացած Լեհաստանի վերջին ժամանակների ընտրական պատմությունը և հակառակ ուղղությամբ՝ անհամամասնականության Լիյփհարտի ցուցիչի գծով 1993 թվականի աննախադեպ գնահատականը ցույց են տալիս, թե Լեհաստանը դեռ որքան առաջ պետք է գնա, մինչև որ այնտեղ ձևավորվի կուսակցական վերաբերմունք ու վարքագիծ, որոնք քաղաքական հասարակությանը թույլ կտան իր անհրաժեշտ լուրման ներդնել Լեհաստանում ժողովրդավարության կայացման մեջ:

Արծարծելով քաղաքական հասարակության մասին այս խիստ կարևոր վերլուծական մտքերը՝ չենք ցանկանում այս գլուխն ավարտել առանց ուշադրություն հրավիրելու Լեհաստանի որոշ արտակարգ նվաճումների վրա: Շատ ավելի, քան հետկոմունիստական Եվրոպայում որևէ այլ երկիր, Լեհաստանը նպաստել է 1989թ. վարչակարգի փոփոխությունների հնարավորությունն իրականություն դարձնելու գործին: Լեհաստանի



քաղաքացիական հասարակության և «Համերաշխության» մշտական ճնշումն օգնեցին ընդլայնել այն խաղի պարամետրերը, որը Գորբաչովն ու Խորհրդային Միությունը խաղում էին Արևելյան Եվրոպայի մնացած երկրների հետ: Այս որոշակի փաստը կարևոր պատմական նվաճում է, որն օգնում է Լեհաստանի ընթացքին դեպի ժողովրդավարության կայացում:

Մեկ այլ կարևոր նվաճում է այն, որ 1993-1994թթ. Լեհաստանը գրանցել է ավելի բարձր ՀԱԱ աճ, քան Արևմտյան Եվրոպայի որևէ երկիր: Այս նվաճումն օգնեց բարձրացնելու ներքին ու միջազգային վստահությունը Լեհաստանի նկատմամբ: Թեև պետական հատվածի մասնավորեցումը ամեննին չընթացավ այնքան արագ, որքան Չեխիայի Հանրապետությունում, նոր փոքր ու միջին մասնավոր ձեռնարկությունների դինամիզմը նշանակում էր, որ արդեն 1995թ. սկզբին աշխատուժի ավելի քան կեսն աշխատում էր մասնավոր հատվածում:

Ճիշտ ինչպես Լեհաստանի տնտեսությունը, այնպես էլ հասարակության տարբեր հատվածները դրսևորում են առողջ աշխուժություն: Թեև մտահոգություն ունեինք Լեհաստանի քաղաքացիական հասարակության՝ քաղաքական հասարակության հետ արգասաբեր աշխատելու կարողության հարցում, չենք ցանկանում հոռետես երևալ ընդհանուր առմամբ Լեհաստանի քաղաքացիական հասարակության վերաբերյալ: Մի ավանդույթով, որն սկսվել էր 1989թ. պատմական փոփոխություններից շատ առաջ, Լեհաստանի քաղաքացիական հասարակությունն առանձին ոլորտներում շարունակում է ձեռք բերել որոշակի լուրջ նվաճումներ: Օրինակ, «Համերաշխության» երկու նախկին առաջնորդները՝ Ադամ Միխնիկն ու Հելենա Լուչիվոն, ստեղծել են Եվրոպայի առավել դինամիկ լրագրերից մեկը՝ "Gazeta Wyborcza" («Գազետա վիբորչա»), որն օրական շրջանառության մեջ է դնում տասնյոթ տարբեր մայրաքաղաքային հրատարակումներ:

Այս և շատ այլ նվաճումների, ինչպես նաև իր խիստ կարևոր աշխարհաքաղաքական դիրքի պատճառով շատ դիտորդներ Լեհաստանում և երկրից դուրս կարծում են, որ Լեհաստանն ունի լավ հնարավորություններ՝ մտնելու Եվրոպական Միություն մինչև 1990-ականների վերջը: Հենց այն փաստը, որ սա Լեհաստանի համար տարբերակ է, դրդում է լեհ քաղաքական գործիչներին գործելու պատասխանատու, ժողովրդավարական ձևով:<sup>80</sup> Այս գործնական ապագան, ինչպես նաև իր գործնական անցյալի որոշ տարրեր զգալիորեն կնպաստեն ժողովրդավարության անկումը կանխելուն և ժողովրդավարության կայացմանը:

80. Ինչպես քննարկեցինք Գլուխ 21-ում, շատ երկրների համար, որտեղ կան պետութենականության լուրջ խնդիրներ և լարված էթնիկ պայքար, Եվրոպական Միություն մտնելն անգամ հեռավոր հնարավորություն չէ: Այսինքն, [այդ դեպքում] Եվրոպական Միության հետ կապված խթանող և սահմանափակող գործոնների համակազմը, որը մենք ցույց տվեցինք որպես դրական դեր խաղացող Հարավային Եվրոպայում, և համեմատելի դեր Լեհաստանում, պարզապես առկա չեն: 1995թ. նոյեմբերին Ալեքսանդր Կվասնիսկին՝ ռեֆորմիստ կոմունիստների նախկին կուսակցության առաջնորդը, ընտրվեց Լեհաստանի նախագահ: Քարոզարշավի ընթացքում և հետո (ի տարբերություն կոմունիստական կուսակցության առաջնորդների Ռուսաստանում) պնդում էր, որ Եվրոպական Միությանն ու NATO-ին միանալը Լեհաստանի երկու բարձրագույն գերակայություններն են: Քանի դեռ այս գերակայությունները պահպանվում են, Լեհաստանը կշարունակի ենթարկվել Եվրոպական Միության ճնշմանը՝ համապատասխանելու ազատական և ժողովրդավարական ստանդարտներին:

## Հետամբողջատիրական վարչակարգերի տարբերակներ. Հունգարիա, Չեխոսլովակիա, Բուլղարիա

ՀԵՏԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ քսանյոթ պետություններից քսանվեցը Եվրոպայում (միակ բացառությունը, ինչպես ասացինք, Լեհաստանն էր) ժամանակին մոտեցան ամբողջատիրական կատարելատիպին՝ ստալինիզմի ծաղկման ժամանակաշրջանում կամ նախքան Հարավսլավիայի «հերետիկոսությունը»: Դրանց մեծ մասն ավելի ուշ աստիճանաբար նմանվեց հետամբողջատիրական կատարելատիպին: Հետամբողջատիրական տերմինն ինքը ցույց է տալիս, որ վարչակարգի այս տիպն սկզբնապես իր հիմնադիրների կողմից չի մտահղացվել որպես հասարակարգի առանձին տիպ, այլ առաջ է եկել փոփոխությունների հետևանքով մի այնպիսի համակարգում, որը ժամանակին մոտեցել է ամբողջատիրական մոդելին: Հետևաբար, հետամբողջատիրությունը (ոչ այնպես, ինչպես ժողովրդավարությունը, ամբողջատիրությունը, ավտորիտարությունը կամ սուլթանականությունը) ոչ թե գենետիկական, այլ էվոլյուցիոն տիպ է: Այսինքն, ոչ ոք չէր ստեղծի կամ չէր կարող ստեղծել հետամբողջատիրական վարչակարգ, եթե նախապես արդեն ստեղծված չլիներ ամբողջատիրական վարչակարգը:

Հասկացութենական առումով երկու տիրապետող ուղիները դեպի հետամբողջատիրություն՝ վարչակարգի ներսից, կարելի է անվանել «հետամբողջատիրություն՝ ընտրությամբ» և «հետամբողջատիրություն՝ քայքայմամբ»: Առաջին ուղին այն է, երբ վարչակարգի վերնախավերը (հաճախ անձնական ապահովության իրենց սեփական զգացման համար) կարող են խմբովի որոշել սահմանափակել գերագույն առաջնորդի բացարձակապես ինքնակամ լիազորությունները, նվազեցնել հասարակությանն ահաբեկելու դերը (եթե այն եղել է արտահայտված) և աստիճանաբար հանդուրժել որոշ ոչ պաշտոնական կազմակերպությունների առաջացումն այնպիսի մի քաղաքացիական հասարակությունում, որն, ըստ էության, եղել է բացարձակապես համահարթեցված: «Հետամբողջատիրություն՝ քայքայման հետևանքով» դեպքում (կամ հարկադրական համաձայնությամբ հետամբողջատիրության դեպքում) գաղափարախոսությանը նվիրվածությունը կարող է պարզապես դառնալ սնամեջ, համախմբումը կարող է հետաճ ապրել մինչև բյուրոկրատական ծիսակատարության, իսկ դիմադրության կամ հարաբերական ինքնուրույնության օջախներ կարող են առաջանալ ավելի շատ վարչակարգի անկարողության կամ օտարերկրյա ճնշմանը հարկադրական համաձայնության, քան թե որևէ ընտրության պատճառով: Վարչակարգից դուրս գտնվող ուժերը կարող են նաև առաջ բերել «հետամբողջատիրություն՝ հասարակության նվաճմամբ» մի իրավիճակ, որտեղ քաղա-

քացիական հասարակության մեջ խմբերը պայքարում են և շահում հարաբերական ինքնուրույնության ոլորտներ:<sup>1</sup> Որ ուղին էլ որ լինի, բոլոր հետամբողջատիրական վարչակարգերն, ըստ սահմանման, ծնունդ են առնում ամբողջատիրական վարչակարգերից:<sup>2</sup>

Այն էմպիրիկ փաստը, որ ամբողջատիրությունից, սովորաբար, փոփոխությունը տեղի չի ունենում դեպի բնորոշ ավտորիտար վարչակարգ, այլ դեպի հետամբողջատիրական վարչակարգի հստակ տիպ, հաստատում է Լինցի այն փաստարկը, որ ամբողջատիրությունից դեպի ավտորիտարություն անմիջական անցում չկա:<sup>3</sup> Սակայն այն փաստը, որ հետամբողջատիրությունը անհնար է հասկանալ առանց հղում անելու ամբողջատիրությանը, նույնպես բացատրում է այն, որ հետամբողջատիրությունը կարող է պատկերացվել որպես մի շարունակություն՝ գրեթե ամբողջատիրական համակարգից դեպի մի այնպիսի համակարգ, որում նախկին ամբողջատիրության տարրերը դարձել են գրեթե մնացուկներ (մարդաբանական իմաստով): Մրանով է պայմանավորված այն հարցի պատասխանը գտնելու դժվարությունը, թե որ կետում է տեղի ունեցել անցումն ամբողջատիրական վարչակարգից հետամբողջատիրականի:

Քանի որ հետամբողջատիրությունը հանդիսանում է շարունակականություն, մենք ընդարձակ տեղ կհատկացնենք տարբեր տիպերի հետամբողջատիրական վարչակարգերում կյանքի որոշ առանձնահատկությունների ներկայացմանը: Մենք կփորձենք նաև հասկացութենական մակարդակի հասցնել ու քննարկել հետամբողջատիրական տիպի ներսում հիմնական հնարավոր տարբերակները, որոնք կարող են լինել ամբողջատիրությանը սահմանակից վաղ հետամբողջատիրությունից մինչև սառեցված հետամբողջատիրություն (որը ցույց չի տալիս դրական զարգացման ոչ մի զգալի միտում դեպի ավելի մեծ բազմակարծություն), և մինչև անգամ էլ ավելի հասուն հետամբողջատիրություն, որը կարող է մոտ լինել դեպի ժողովրդավարական կամ ավտորիտար վարչակարգ ոչ բնորոշ փոփոխությանը: Միայն այն բանից հետո, երբ պատկերացում ձեռք բերենք հետամբողջատիրության տիպի ներսում նման տարբերակվածության մասին, մենք վերլուծական տեսանկյունից պատրաստ կլինենք ուսումնասիրել, զնահատել և անգամ կանխատեսել անցման ուղիների այն լայն շարքը, որոնք իրականում կարող են պատահել և պատահում են հետամբողջատիրական վարչակարգի ներսում: Եվրոպայում հետկոմունիստական երկրների մեծ մասն անցումը կոմունիզմից սկսել է հետամբողջատիրա-

1. Գոյություն ունեն, իհարկե, ամբողջատիրությունից դուրս գալու այլ ուղիներ: Ամբողջատիրությանը կարելի է վերջ տալ ժողովրդավարական հասարակարգերի կողմից նվաճմամբ ու գրավմամբ, ինչպես տեղի ունեցավ Գերմանիայում և Ճապոնիայում Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո: Այս դեպքերում երբեք չի եղել հետամբողջատիրական վարչակարգ, այլ փոխարենը եղել է մի հաջորդականություն՝ ամբողջատիրությանը հաջորդել է գրավումը և ազատականացումը, որին հաջորդել է ժողովրդավարացումը: Տե՛ս Ադյուսակ 4.2, Նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգի տիպի նշանակությունը ժողովրդավարությանն անցման ուղիների համար:

2. Ամբողջատիրականից ոչ ամբողջատիրական վարչակարգին անցման հատուկ առանձին օրինակները կարող են հաճախ էմպիրիկորեն պարունակել որոշ տարրեր՝ ընտրությամբ հետամբողջատիրությունից, քայքայմամբ հետամբողջատիրությունից և հասարակության նվաճմամբ հետամբողջատիրությունից:

3. Տե՛ս Խուան Լինց, «Ավտորիտար վարչակարգ. Իսպանիա» (Juan J. Linz, "An Authoritarian Regime: Spain"), Էրիկ Ալլարդի և Շտեյն Ռոկանի խմբ.՝ «Զանգվածների քաղաքականություն. քաղաքական սոցիոլոգիայի ուսումնասիրություններ» (Erik Allardt and Stein Rokkan, eds., *Mass Politics: Studies in Political Sociology* (New York: Free Press, 1970), 251-83, esp. 253):

կան մեկնարկային կետից: Բոլոր հետամբողջատիրական վարչակարգերը կրել են 1989թ. «դոմինոյի էֆեկտի» ազդեցությունը, սակայն, ինչպես կտեսնենք, փաստացի անցման ոճն ու հետևանքները մեծապես կախված են եղել յուրաքանչյուր առանձին երկրում եղած հետամբողջատիրական յուրահատուկ ենթատիպից:

Էմպիրիկորեն ի՞նչ նկատի ունենք «հետամբողջատիրության ներսում տարբերակներ» ասելով: Տարբերությունն առավել բացահայտ էր Հունգարիայի և Բուլղարիայի դեպքում: Ինչպես կապացուցենք փաստերով, Հունգարիան արդեն 1989թ. փետրվարին (այսինքն՝ նույն ամսին, երբ սկսվեց լեհական «Կլոբ սեղանը»), ըստ էության, արդեն մոտ էր ոչ բնորոշ փոփոխության հետամբողջատիրությունից դեպի դեռևս չհաստակեցված ժողովրդավարական կամ ավտորիտար վարչակարգ: Ի տարբերություն սրա, կարծում ենք, որ կտրամադրենք համոզիչ փաստեր առ այն, որ Բուլղարիան արդեն 1988թ. մոտ էր ամբողջատիրական բևեռին քաղաքացիական հասարակությունում գոյություն ունեցող ինքնուրույն խմբերի առումով: Չեխոսլովակիան, ի տարբերություն Բուլղարիայի, մեկ տասնամյակից ավելի ունեցել էր որոշ կարևոր հետամբողջատիրական առանձնահատկություններ քաղաքացիական հասարակության բնագավառում, քանի որ մարդու իրավունքների խումբը՝ «Մարտիա-77»-ը, որը կապված էր Հեկտինկիի գործընթացին, ծագել էր 1977թ.: Սակայն Չեխոսլովակիայում 1980-ականների ապամբողջատիրացումը, որը հիմնականում «քայքայմամբ ապամբողջատիրացման» օրինակ էր, ոչ մի դեպքում այնքան խոր կամ էքստենսիվ չէր, որքան Հունգարիայում էր, որն ուներ շատ ավելի ուժեղ «ընտրությամբ ապամբողջատիրացման» տարրեր:

Եթե Հունգարիան անվանում ենք հասուն հետամբողջատիրության, իսկ Բուլղարիան՝ վաղ հետամբողջատիրության օրինակ, ապա Չեխոսլովակիան կարելի է համարել սանեցված հետամբողջատիրության օրինակ: Ըստ էության, Հունգարիան, Չեխոսլովակիան և Բուլղարիան 1980-ական թվականների վերջին ունեին պետության, օրենքի գերակայության, տնտեսական, քաղաքացիական և քաղաքական հասարակությունների տարբեր խառնուրդներ: Այս տարբեր խառնուրդները մեծ չափով կազմավորեցին վարչակարգի, ինչպես նաև ընդդիմության բանակցային կարողությունները, բացեցին և/կամ փակեցին որոշակի անցման ուղիներ և օգնեցին ստեղծել կայացման խնդիրների լուծման հստակ խմբեր:

Այս գլխում մեր նպատակն է բացատրել, թե ինչպես և ինչու, ինչպես նաև ինչ հետևանքներով Հունգարիան, Չեխոսլովակիան և Բուլղարիան ունեցան անցման խիստ տարբեր ուղիներ: Հունգարիայում մի կողմից՝ կոմունիստական կուսակցությունը, որի ղեկավարության մեջ աստիճանաբար ավելանում էին բարեփոխիչները, իսկ մյուս կողմից՝ կազմակերպված ժողովրդավարական կուսակցական ընդդիմությունը, *բանակցությունների միջոցով* եկան համաձայնության, որ հաջորդ կառավարությունը կձևավորվի ազատ ընտրությունների միջոցով: Այս ընտրություններում «ընդդիմության «Կլոբ սեղանի» կուսակցություններից» ամենախոշորը շահեց տեղերի մեծ մասն ու ձևավորեց կոալիցիոն կառավարություն՝ ուժեղ խորհրդարանական մեծամասնությամբ: Բեռլինյան պատի փլուզումից հետո Չեխոսլովակիայում ուսանողներն ու արվեստի գործիչներն առաջնորդեցին բողոքն ընդդեմ ոստիկանության դաժանությունների: Անգլիզումների վարչակարգն *անկում ապրեց* և իշխանությունը հանձնեց ժամանակավոր կառավարությանը՝ քաղաքացիական հասարակության ընդդիմության առավել հայտնի առաջնորդ Վացլավ Հավելի

գլխավորությամբ:<sup>4</sup> Բուլղարիայում դեռևս բարեփոխումներ չիրականացնող կոմունիստական կուսակցության դեմ եղան որոշ հասարակական ընդվզումներ, սակայն այն ի վիճակի եղավ *հսկողության տակ պահելու* անցումը: Կոմունիստական կուսակցությունը ներքին հեղաշրջման միջոցով ազատվեց իր հին առաջնորդ Տոդոր ժիվկովից, «Կլոր սեղանին» մասնակցելով՝ ձեռք բերեց որոշ լեզվատիրություն և ի վերջո հաղթեց առաջին մրցակցային ընտրություններում դեռևս թույլ ժողովրդավարական ուժերին:

Այս բոլոր օրինակներն էլ, իհարկե, մեծապես կրել են դիֆուզիոն էֆեկտներին ու լեզվատիրության քաղաքատնտեսությանը վերաբերող մեր փոփոխականների ազդեցությունը: Սակայն մեր հիմնական վարկածն այն է, որ այս երեք բացարձակապես տարբեր անցումները (բանակցություն, անկում և վերահսկողություն) բացատրելու առավել գորեղ եղանակը հետամբողջատիրական վարչակարգի տիպի ներսում դրանց տարբերության պատճառներն ու հետևանքները հետազոտելն է:

Այս երեք դեպքերը քննելուց առաջ համառոտակի նշենք մի ցավոտ պարադոքս: Հունգարիան և ավտորիտար Լեհաստանն անընդհատ փորձարկում էին բազմազան տնտեսական բարեփոխումներ և այդ գործընթացում բացեցին իրենց երկրները արևմտյան միջազգային վարկերի առջև, որոնք ի վերջո նրանց դարձրեցին աշխարհում ամենաշատ պարտք ունեցող երկու երկրները: Պարտքեր ունենալու փաստը նպաստեց վարչակարգի անցմանն ուղղված ճնշումների գործադրմանը, սակայն ժողովրդավարության կայացման համար թողեց ծանր տնտեսական ժառանգություն, հատկապես՝ Հունգարիայում, որը տնտեսությունը չէր վերապլանավորել անցումից առաջ կամ հետո: Ի տարբերություն դրա՝ ստեղծված հետամբողջատիրական վարչակարգը Չեխոսլովակիայում չէր զբաղվում ոչ մի տնտեսական փորձարկմամբ կամ բարեփոխումներով և չէր ստանում գրեթե ոչ մի արևմտյան օտարերկրյա վարկ և, հետևաբար, ավելի քիչ էր բախվում տնտեսական ճնշումներին, որոնք կստիպեին անցում կատարել: Սակայն Չեխոսլովակիայի արտաքին պարտքի բացակայությունը, իհարկե, ոչ այնքան պարադոքսալ կերպով, դարձավ առավելություն ժողովրդավարության կայացման փուլում:

#### ՀՈՒՆԳԱՐԻԱ. ՀԱՄԱԶԱՅՆՑՎԱԾ ԱՆՑՈՒՄ ՀԱՍՈՒՆ ՀԵՏԱՄԲՈՂՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Այն ընթերցողներին, ովքեր ծանոթ են Հարավային Եվրոպայում և Լատինական Ամերիկայում համաձայնեցված անցումների ու դաշինքների վերաբերյալ հեղինակավոր աշխատանքներին, ասենք, որ անցման դինամիկայի առումով, անկասկած, առավել հայտնի

4. Եթե ԳՂՀ-ն բացառած չլինեինք Դաշնային Հանրապետության հետ միանալու պատճառով դրա անհետանալու հետևանքով, ապա այն կլիներ վարչակարգի անկմանը հանգեցնող վաղ հետամբողջատիրության օրինակ: Ինչպես Չեխոսլովակիան, ԳՂՀ-ն էլ անցման շուրջ բանակցելու ինչ-որ ջանքեր գործադրեց միայն այն ժամանակ, երբ անկումն արդեն անխուսափելի էր: Վստահելի բանակցողները վարչակարգի ներսում թույլ էին և՛ Չեխոսլովակիայում, և՛ ԳՂՀ-ում: Սակայն ԳՂՀ-ի դեպքում վարչակարգի ղեկավարության՝ միմյանց հաջորդած փոփոխությունները և գուցե Գերմանիայի օրինակի միջազգային չափողականությունը պաշտոնավարողներին տվեց մի քիչ ավելի շատ շունչ քաշելու հնարավորություն:

արևելաեվրոպական երկիրը Հունգարիան է:<sup>5</sup> Իսկապես, Իսպանիայում և Ուրուգվայում անցումները նկարագրելու համար գործածված հիմնական բառապաշարի մեծ մասը կարելի է գործածել Հունգարիայում անցումը նկարագրելու համար:<sup>6</sup> Վարչակարգի «բլանդոսները» (*"blandos"*՝ փափուկ գծի կողմնակիցներ) փորձում էին համաձայնության եզրեր գտնել չափավոր ընդդիմության որոշ առաջնորդների հետ. նրանք ջանում էին օգտագործել իրենց՝ որպես ազատականացման հովանավորների դերը՝ ուժեղացնելու իրենց դիրքերն իրենց իսկ անդիջումների դեմ. և՛ «բլանդոսները», և՛ ընդդիմության առաջնորդները գնալով ավելի էին կենտրոնանում անցման քաղաքական մեխանիկայի վրա, և բարձր մակարդակի բանակցությունները զգալի դեր էին խաղում: Ինչո՞ւ վարչակարգի անցման այսքան նման քաղաքական գործընթաց տեղի ունեցավ միմյանցից այդքան տարբերվող քաղաքական համակարգերում:

Արևելակենտրոնական Եվրոպայի բոլոր վարչակարգերից, որոնք մենք վերլուծելու ենք, ամենակտրուկ փոփոխությունների ենթարկվել է հունգարականը: Հունգարիան ունեցել է ազատ ընտրություններ 1945թ., մի խիստ ամբողջատիրական ժամանակահատված՝ 1948թ.-ից մինչև 1953թ., բարեփոխումների մի ժամանակահատված, որը հանգեցրեց բարեհաջող համաժողովրդական հեղափոխության 1956թ., կոմունիստական հակահեղափոխության՝ 1956թ.-ից մինչև 1962թ., և սպասամբողջատիրացման՝ սկսած 1962թ.: Արդեն 1980-ական թվականների կեսերին Հունգարիան աշխարհում հասուն հետամբողջատիրության առաջատար օրինակն էր:<sup>7</sup>

1945թ. և 1947թ. միջև ընկած ժամանակահատվածում Լեհաստանում տեղի ունեցավ քաղաքացիական պատերազմ լեհ պարտիզանների և Խորհրդային Միության աջակցու-

5. *Տե՛ս*, օրինակ՝ Գիլբերտ Օ'Ռոննելի, Ֆիլիպ Շմիտթերի և Լոուրենս Ուայթհեդի խմբ.՝ «Անցումներ ավտորիտար իշխանությունից» (Guillermo O'Donnell, Philippe C. Schmitter, and Laurence Whitehead, eds., *Transitions from Authoritarian Rule* (Baltimore: Johns Hopkins University Press, 1986)), Ջոն Հիգլիի և Ռիչարդ Գյունտերի խմբ.՝ «Վերնախավերն ու ժողովրդավարության կայացումը Լատինական Ամերիկայում և Հարավային Եվրոպայում» (John Higley and Richard Gunther, eds., *Elites and Democratic Consolidation in Latin American and Southern Europe* (Cambridge: Cambridge University Press, 1992)) և Ջուզեպպե դի Պալմա, «Կառուցել ժողովրդավարություններ. ակնարկ ժողովրդավարության անցումների մասին» (Giuseppe di Palma, *To Craft Democracies: An Essay on Democratic Transitions* (Berkeley: University of California Press, 1990)):

6. Իսկապես, մի իսպանացի հասարակագետ Էքստենսիվ զուգահեռներ է անցկացնում Հունգարիայի և Իսպանիայի միջև, *տե՛ս* Կարմեն Գոնսալես Էնրիկես (Carmen Gonzalez Enriquez), *"Crisis y cambio en Europa del Este: La transición húngara a la democracia"* (Madrid: Centro de Investigaciones Sociológicas / Siglo XXI de España, 1993), հատկապես՝ էջ 50-80 դաշինքների մասին և էջ 340-68՝ Հունգարիայում և Իսպանիայում անցումների ընդհանուր համեմատություն:

Հանրային կարծիքի Հունգարիայի առաջատար մասնագետներից մեկը՝ Յանոշ Շիմոնը, սովորել է իսպաներեն, որպեսզի կարողանա ուսումնասիրել Իսպանիայում անցումը, և ժամանակ առ ժամանակ տպագրում է իր աշխատանքի արդյունքը հաճախ Լասլո Բրուստի հետ Իսպանիայում: *Տե՛ս* նրանց "La mayoria mas silenciosa" (Մադրիդ և Բուդապեշտ, 1990թ., անտիպ ձեռագիր):

7. Այս բոլոր փոփոխությունների մասին հիշատակումներ կարելի է գտնել այս գլխում: Նախակոմունիստական Հունգարիայի մասին դասական գիրք, որտեղ հատկապես մանրամասն են նկարագրված երկրում դուալիստական ընտրական սկզբունքները 1922թ. հետո (գաղտնի և ազատ՝ քաղաքներում, սակայն ոչ գաղտնի և շահարկվող՝ գյուղական վայրերում) և միջպատերազմական ավտորիտար ժամանակահատվածը բավականին աշխույժ մամուլով և օրենքի գերակայության դրոշմներով, *տե՛ս* Էնդրյու Յանոշ, «Հետ մնալու քաղաքականությունը Հունգարիայում» (Andrew C. Janos, *Politics of Backwardness in Hungary 1825-1945*, (Princeton: Princeton University Press, 1982)):

թյունը վայելող ուժերի միջև: Հունգարիայում, սակայն, գուցե Խորհրդային Միության համար դրա ավելի նվազ ռազմավարական դիրքի պատճառով խորհրդային ռազմական վարչակազմը 1945թ. նոյեմբերին թույլատրեց ընտրություններ, որոնք հաճախ անվանվում են մինչև այդ օրը Հունգարիայում երբևէ անցկացված ամենազատ ընտրությունները: «Մոռվողներին» (մանր գյուղացիական տնտեսություններ) կուսակցությունը հաղթեց ընտրություններում ձայների 57%-ով, սոցիալ-ժողովրդավարները ստացան 17.4%, իսկ կոմունիստները՝ 17%:<sup>8</sup> Սակայն 1947թ. ավելի նվազ ազատ խորհրդարանական ընտրությունների ժամանակ կոմունիստները ստացան ձայների ամենամեծ միասնական քանակը՝ 22.3%, և ապա կիրառեցին մի շարք մարտավարություններ՝ հասնելու համար այն բանին, որ խորհրդարանն ընդմիջի իր աշխատանքները մեկ տարով: 1948թ-ից մինչև 1953թ. Հունգարիան ապրեց Արևելյան Եվրոպայում ստալինականացման առավել ինտենսիվ ժամանակահատվածներից մեկը՝ կարդինալ Յոժեֆ Մինդսենտիի ցուցադրական դատավարությունից մինչև գյուղատնտեսության մեջ հարկադրական կոլեկտիվացումն ու կոմունիստական կուսակցության երկուհազարանոց «տեղական ընդհատակի» հապճեպ ու առանց ձևականությունների ի կատար ածված մահապատիժը: Այս ժամանակահատվածը շատ հունգարացի մեկնաբաններ անվանում են «ամբողջատիրական»:<sup>9</sup>

Ստալինի մահվանից հետո՝ 1953թ., Խրուշչովը՝ որպես իր հակաստալինյան արշավի մի մաս, Հունգարիայի մինի-Ստալինի՝ Մատյաշ Ռակոշիի փոխարեն նշանակեց ավելի չափավոր Իմրե Նադին, որը սկիզբ դրեց «հասուն ստալինիզմի ամենակտրոկ և ամենավաղ շրջադարձին ժողովրդավարական երկրներում»:<sup>10</sup> Հունգարիայի ապամբողջատիրացումն սկսվել էր, սակայն պարզվեց, որ այն լինելու էր դադարներով առաջ ընթացող գործընթաց: 1955թ. ապրիլից մինչև 1956թ. հուլիսը Խորհրդային Միության կողմից հեռացվելուց հետո դարձյալ իշխանության վերադարձավ Ռակոշին, որին հաջորդեց Էոնյո Գերյոն, իսկ այնուհետև ուսանողների ու մտավորականների զանգվածային պահանջով՝ Նադը: Նադի օրոք բողոքները Հունգարիայում արագորեն դարձան հեղափոխական: Ռոտշիլդի կարծիքով՝ իրադարձությունները Հունգարիայում 1956 թվականի հոկտեմբերի 23-ից մինչև նոյեմբերի 4-ը դարձան «մի իսկական ու երկրի ներսում հաղթական հեղափոխություն՝ ազգային-քաղաքական, ինչպես նաև սոցիալ-տնտեսական նպատակ-

8. Չարլզ Գատին (Charles Gati) պնդում է, որ ընտրությունների բաց լինելը հիմնականում մինչև 1946թ. Ստալինի վախի պատճառով էր, որ հնարավոր է՝ նա ստիպված լինի փոխանակելու Հունգարիան Արևմուտքի հետ Լեհաստանի ու Գերմանիայի նկատմամբ իր պահանջների դիմաց: *Տե՛ս* նրա «Հունգարիան և Խորհրդային ճամբարը» (*Hungary and the Soviet Bloc* (Durham: Duke University Press, 1986), 118):

9. Օրինակ, Ռուդոլֆ Անդրկայի նյութը Սոցիոլոգիայի XII համաշխարհային համագումարին Մադրիդում, 1990թ. հուլիս. «Անցումներ ամբողջատիրականից ժողովրդավարական քաղաքական համակարգի. Հունգարիայի օրինակը», որտեղ նա պնդում է, որ «1947թ. հետո Հունգարիան որոշակիորեն դարձավ ամբողջատիրական պետություն կոմունիստական կուսակցության իշխանության ներքո, որի ուժը հիմնված էր Խորհրդային բանակի ներկայության վրա... Ամբողջատիրության առաջին թուլացումը տեղի ունեցավ Ստալինի մահից հետո» (էջ 1):

10. Ջոզեֆ Ռոտշիլդ, «Վերադարձ բազմազանությանը. Արևելակենտրոնական Եվրոպայի քաղաքական պատմությունը՝ սկսած Երկրորդ համաշխարհային պատերազմից» (Joseph Rothschild, *Return to Diversity: A Political History of East Central Europe since World War II* (New York: Oxford University Press, 1989), 154):

ներով: Այս հեղափոխությունը պարտվեց միայն գերակշռող արտաքին ուժի միջոցով՝ խորհրդային տանկերով:<sup>11</sup>

Հունգարական վարչակարգի եվոլյուցիան 1956 թվականի հակահեղափոխական ճնշումից մինչև 1989 թվականի փետրվարին տեղի ունեցած ոչ տիպական բարեփոխումը, արժանի է մի առանձին ամբողջական վերլուծության: Մեր ներդրումն անհրաժեշտաբար ավելի սահմանափակ է և բխում է ժողովրդավարության տեսությունից: Մենք կարծում ենք, որ ապամբողջատիրացման դինամիկ գործընթացը պետք է և կարող է վերլուծվել: Մենք նաև կարծում ենք, որ հետամբողջատիրությունը ստատիկ հասկացություն չէ, և պետք էլ չէ, որ այդպիսին լինի: Ի լրումն ասվածի՝ մենք կարծում ենք, որ այն հատուկ ուժերը և գործընթացները, որոնց միջոցով որոշ հետամբողջատիրական վարչակարգեր զարգացել են, ներկայացնում են հետագոտության կարևոր ոլորտ այն գիտնականների համար, ում հետաքրքրում է ժողովրդավարացումը: Հետևաբար, մենք այժմ կփորձենք ցույց տալ, թե ապամբողջատիրացումն ինչպես սկսվեց: Մենք նաև կփորձենք ցույց տալ, թե ինչպես կայացած ժողովրդավարության հինգ ոլորտներից յուրաքանչյուրում, որոնք մենք քննարկեցինք Գլուխ 1-ում, Հունգարիայում տեղի ունեցան որոշ կարևոր փոփոխություններ նախքան վարչակարգի փոփոխությունը 1989թ.: Մենք նմանապես ցույց կտանք, թե փոփոխությունները յուրաքանչյուր ոլորտում ինչպես են աստիճանաբար ամրապնդում միմյանց: Մեր խնդիրն է, հետևաբար, վերլուծել և ցուցադրել փոխազդող փոփոխությունների դինամիկ գործընթացը: Մենք առաջ կանցնենք՝ հետագոտելով փոփոխությունները մոտավոր հաջորդականությամբ, ինչպես դրանք տեղի են ունեցել՝ գաղափարախոսությունը, տնտեսությունը, պետությունը, օրենքի գերակայությունը, քաղաքացիական հասարակությունը և վերջապես՝ քաղաքական հասարակությունը:

Առաջին ոլորտը, որում Հունգարիան դարձավ հետամբողջատիրական, գաղափարախոսությունն էր: 1956թ. հեղափոխությանը հաջորդեց Նադի հետապնդումն ու գնդակահարությունը, սակայն այն առաջ բերեց նաև մտահոգություն խրուշչովյան Խորհրդային Միությունում, ինչպես նաև Նադի հաջորդ Յանոշ Կադարի ղեկավարած թիմի մեջ առ այն, թե ինչպես խուսափել մոտեցումներից, որոնք նորից կարող են պատճառ հանդիսանալ հեղափոխության: Խանդավառության խթանման ամբողջատիրական փորձերի փոխարեն Կադարի քաղաքական ոճի բնորոշ գիծը դարձավ պասիվ ենթարկման պահանջը: Առաջին բացահայտ ապացույցը, որն արտացոլեց հետամբողջատիրական զարգացումը, Կադարի կողմից արտաբերվեց 1962թ. մարտին Կենտրոնական կոմիտեի պլենումի ժամանակ, երբ նա խրախուսեց «դաշինքի քաղաքականությունը»: Պլենումի ժամանակ Կադարն իրեն բացահայտորեն հեռացրեց ստալինական տիպի բռնապետ Մատյաս Ռակոշի ամբողջատիրական ձգտումներից, երբ հայտարարեց, որ «Ռակոշիներն ասում են, որ նրանք, ովքեր մեր կողքին չեն, մեզ դեմ են. մենք ասում ենք՝ ովքեր մեզ դեմ չեն, մեզ հետ են»:<sup>12</sup>

11. Նույն տեղում, էջ 160: Կարևոր վերլուծություն վարչակարգի բաժանման և հասարակական բողոքի մասին, որը հանգեցրեց ամբողջատիրության ներքին հետադարձելիության այս չափազանց հաճախ մոռացվող դեպքին, տե՛ս Պոլ Կեչկեմետի, «Անսպասելի հեղափոխությունը. սոցիալական ուժերը հունգարական ապստամբության մեջ» (Paul Kecskemeti, *The Unexpected Revolution: Social Forces in the Hungarian Uprising* (Stanford University Press, 1961)):

12. 1962թ. Քադարը դեռ պետք է ավարտեր վերակոլեկտիվացման վերջին փուլը, որով կավարտվեր



Ապամբողջատիրացման երկրորդ խոշոր քայլը 1968թ. նոր տնտեսական մեխանիզմի ներդրումն էր, որը չնայած 1972-1979թթ-ի մասնակի հետքայլին, շուկաների և կիսամասնավոր սեփականության ամենալայնածավալ փորձարկումն էր Վարշավյան դաշինքի երկրներում:<sup>13</sup> Այս փորձարկումը չէր կարող սկսվել առանց դեպի հետամբողջատիրություն նախնական գաղափարախոսական շրջադարձի, սակայն այդ նոր տնտեսական մեխանիզմն ինքն էլ ավելի քայքայեց դասական կոմունիստական ուտոպիստական գաղափարախոսությունը և սկիզբ դրեց ապամբողջատիրացման գիտակցված գործընթացի: Շատ է գրվել Հունգարիայում բարեփոխումների մասին տնտեսական տեսանկյունից, սակայն համեմատաբար քիչ՝ այն մասին, թե ինչպես ուղեկցող սոցիալական ու իրավական փոփոխությունները փոխեցին և՛ պետությունը, և՛ հասարակությունը: Նոր տնտեսական մեխանիզմից առաջացող պետություն-հասարակություն բազմաթիվ փոխադեցություններն էլ ավելի հեռացրեցին հունգարական հասարակությունն ու վարչակարգն ամբողջատիրական բևեռից: Ապացույցները բազմաթիվ են: Պետական հսկողությունն անհատական աշխատանքային շարժունության վրա դե յուրե թուլացվեց, երբ 1968թ. աշխատողներին իրավունք տրվեց փոխելու իրենց զբաղմունքը, տեղափոխվելու այլ վայր՝ աշխատանքի, և օրինական կերպով կես դրույքով աշխատելու փոքր, մասնավոր արդյունաբերության ոլորտում:<sup>14</sup> Պետության գրեթե բացարձակ մենաշնորհը աշխատողների եկամուտների աղբյուրների նկատմամբ ապամենաշնորհացվեց այն աստիճան, որ մասնաբաժինն ընդհանուր եկամուտների, «որոնք բնակչության մոտ երեք քառորդը ստանում էր երկրորդ տնտեսությունից, հասնում էր առաջին տն-

նրա 1956-62թթ. վերակայացումը, սակայն ամբողջատիրությանը մոտեցող համակարգը պահելուն նվիրված ոչ մի առաջնորդ չէր կարող արտահայտել այդպիսի մի դասական հետամբողջատիրական կարծիք: Քաղաքի ելույթի ենթատեքստը, *տե՛ս* Գոնսալես Էնրիկես (Gonzalez Enriquez, *Crisis y cambio en Europa del Este*, 9):

13. Ինչպես Չարլզ Գատին է (Charles Gati) բացատրում, «Նոր տնտեսական մեխանիզմը (ՆՏՄ), որն սկսվել էր կիրառվել 1968թ., տնտեսության մեջ ներմուծել էր ռացիոնալության մասնիկ: Կենտրոնանալով գյուղատնտեսության, փոքր ծավալի արդյունաբերության և ծառայությունների ոլորտի վրա՝ բարեփոխումների միջոցով հաջողությամբ ստեղծվեց մի տնտեսություն, որում պլանն ու շուկան կարող էին ինչ-որ ձևով համագոյակցել, և կենսամակարդակը նույնպես բարձրացավ: Քաղաքի «գուլյաշ կոմունիզմը»՝ հավանաբար պերեստրոյկայի մի վաղ տարբերակը, նաև սատարվում էր նրա վարչակարգի հարաբերական քաղաքական հանդուրժողականությամբ ու բացությամբ. դա գրեթե գլասնոստի վաղ տարբերակն էր»: *Տե՛ս* նրա «Ձախողված ճամբարը. Խորհրդային Միություն-Արևելյան Եվրոպա հարաբերություններն անցման մեջ» (*The Bloc That Failed: Soviet East European Relations in Transition* (Bloomington: Indiana University Press, 1990) 95):

14. *Տե՛ս* Աննա Սելեն, «Ձեռնարկությունների և սեփականության իրավունքների ծածուկ բարեփոխումներ սոցիալիստական Հունգարիայում» (See Anna Seleny, *Hidden Enterprise and Property Rights Reform in Socialist Hungary*, Law and Policy 13 (April 1991): 156-58): Այս հոդվածը և նրա 1993թ. MIT դոկտորական թեզը քաղաքագիտության ֆակուլտետում, «Երկարատև փոխակերպումը. հունգարական սոցիալիզմը 1949-1989թթ.», "The Long Transformation: Hungarian Socialism 1949-1989", նորարարական աշխատանքներ են, թե ինչպես նոր տնտեսական մեխանիզմն ունեցավ շատ անսպասելի հետևանքներ իրավական, սոցիալական և քաղաքական ասպարեզներում և ինչպես այն սկսեց ստեղծել «տնտեսական հասարակություն» Հունգարիայում: Հունգարիայի «Սոցիալիստական աշխատավորների կուսակցության» ներսում «վիճելի լեզվական ձևակերպումների և իմաստի» մասին քննարկում, *տե՛ս* նրա «Փոխակերպման դիսկուրսի կառուցումը. Հունգարիա 1979-82թթ.» ("Constructing the Discourse of Transformation: Hungary, 1979-82", East European Politics and Societies 8, no. 3 (1994): 439-66):

տեսության մեջ վճարված աշխատավարձերի առնվազն երկու երրորդին»<sup>15</sup> Բնակարանային շինարարության ոլորտում պետության մենաշնորհը նույնպես վերացվեց: Արդեն 1984թ. Հունգարիայում նոր բնակարանային ֆոնդի 55%-ը կառուցվել էր երկրորդ տնտեսության կողմից և բաց էր մասնավոր գնման ու սեփականության համար:<sup>16</sup>

Հունգարիայում կարևոր փոփոխություններ տեղի ունեցան նաև օրենքի գերակայության մեծացման ուղղությամբ, մասնավորապես՝ կարգավորվող դաշտի ստեղծումը ոչ թե պլանային տնտեսության, այլ նրա համար, ինչը մենք անվանել ենք *տնտեսական հասարակություն*: 1982թ. ընդունվեցին մի շարք նոր ենթաօրենսդրական ակտեր, որոնք օրինականացրեցին սեփականության իրավունքը երկրորդ տնտեսության մեծ մասում:<sup>17</sup> Մրաքաղաքական նշանակությունը երկակի էր: Մի կողմից՝ հասարակության համար այն նվազեցրեց կուսակցական պետության կամային իշխանությունը ու մեծացրեց օրենքով պաշտպանված իրավունքների ոլորտը և դրանով իսկ՝ օրենքի գերակայությունը: Մյուս կողմից՝ կուսակցական պետության պաշտոնյաների համար օրինականացրեց նոմենկլատուրային ընտանիքների եկամուտների բազմազանացումը ու մասնակցությունը երկրորդ տնտեսությանը:<sup>18</sup>

Կարգավորման այս նոր դաշտն, այսպիսով, սկսեց փոխել երկրորդ տնտեսության, ինչպես նաև պետական ապարատի անդամների աշխատանքային առաջխաղացման ու կապերի հաստատման հնարավորությունները: Պետական հատվածի «ամայացման» և անուղղակիորեն «նոմենկլատուրայի վերահսկողական փաթեթների» ձեռքբերման գործընթացի հիմքը դրվել էր կոմունիզմի ավարտից դեռ յոթ տարի առաջ: Պետության կողմից վերահսկվող ոչ գյուղատնտեսական կոռպորատիվ հատվածում հանրային սեփականության վերակազմակերպումն ու վերակազմավորումն սկսվեց գրեթե անմիջապես այն բանից հետո, երբ մարդիկ մինչև հարյուրի հասնող խմբերով կարողացան օրինական կերպով «անջատվել որևէ ոչ գյուղատնտեսական պետական կոռպորատիվից» իրենց հետ վերցնելով սարքավորումներն ու կապիտալը»:<sup>19</sup> Ինչպես նշել է Աննա Սելենը, երկրորդ

15. Սելեն, «Ձեռնարկությունների և սեփականության իրավունքների ծածուկ բարեփոխումներ» (Seleny, "Hidden Enterprise and Property Rights", 162):

16. Տե՛ս Ադյուսակ 19.5, Յանոշ Կորնայի, «Սոցիալիստական համակարգը. կոմունիզմի քաղաքատնտեսությունը» (Janos Kornai, *The Socialist System: The Political Economy of Communism* (Princeton: Princeton University Press, 1992), 441): Երկար ժամանակ Հունգարիայում տնտեսական բարեփոխումների խորհրդատու, իսկ այժմ՝ Հարվարդում տնտեսագիտության ամբիոնի վարիչ, հունգարացի տնտեսագետի կողմից այս գիրքը հրատարակելուց հետո այն մի ակնթարթում դասական դարձավ պլանային տնտեսությունների խնդիրների ու դրանք մասնակիորեն բարեփոխելու ջանքերի սահմանների բնագավառում:

17. Սա մանրամասն քննարկվում է Սելինի «Երկարատև փոխակերպումը» գրվածքում, "The Long Transformation":

18. Պետական կառավարման ներկայացուցիչների համար ռաջիոնալ ընտրության հնարավորությունների նոր կառուցվածքի հետևանքների մասին տե՛ս Լապո Ուրբան, «Հունգարիայում անցումը պետական ընտրության տեսանկյունից» (Laszlo Urban, "Hungarian Transition from a Public Choice Perspective"), Անդրաշ Բոզոկիի, Անդրաշ Կորոշենի և Գեորգի Չոպֆլինի խմբ.՝ «Հետկոմունիստական անցում. ծագող բազմակարծությունը Հունգարիայում» (Andras Bozoki, Andras Korosenyi, and George Schopflin, eds., *Post-Communist Transition: Emerging Pluralism in Hungary* (London: Pinter Publishers, 1992), 88-95):

19. Սելեն, «Ձեռնարկությունների և սեփականության իրավունքների թաքուն բարեփոխումներ» (Seleny, "Hidden Enterprise and Property Rights", 163):

տնտեսությունը Հունգարիայում ստացավ սովորական մարդկանց և բարձր դիրք ու լավ ծանոթություններ ունեցող անհատների միջև մեծ վստահության ցանցերի տեսք, որոնք առանց բացահայտ քաղաքական նպատակի սկսեցին ձեռք բերել քաղաքական նշանակություն: Հավանական է, մենք այս գրքում ավելի, քան որևէ այլ տեղ, կվերլուծենք, թե Հունգարիայում երկրորդ տնտեսության տարածումն ու ինստիտուցիոնալացումն ինչպես են էմպիրիկ կամ վերլուծական առումով դժվարացնում տնտեսական հասարակության տարբերակումը քաղաքական հասարակությունից: Որոշ կոմունիստական համակարգեր *անկում ապրեցին*, ինչպես Չեխոսլովակիայում, ուրիշները, ինչպես Հունգարիայում, *հարմարեցվեցին*: Հունգարիայում երկրորդ տնտեսության բարդ ցանցերը նուրբ կլատուրայի՝ հարմարվելու կարողության ու հակումի գլխավոր մասն էին: Քաղաքական ոչ բնորոշ փոփոխություններ տեղի չունեցան մինչև 1989թ. սկիզբը: Սակայն տնտեսական ոչ բնորոշ փոփոխություն սկսվել էր 1982թ.:

Չնայած տնտեսական հասարակության, օրենքի և պետության ասպարեզներում այս կարևոր փոփոխություններին՝ պետք է շեշտել, որ Կադարը երբեք թույլ չտվեց կուսակցության առաջատար դերի փոփոխություններ: Նաև մինչև 1987թ., ըստ էության, չկար ոչ մի զգալի կազմակերպված քաղաքական ընդդիմություն, իսկ միավորումները քաղաքացիական հասարակությունում բավական թույլ էին: Այս ոլորտներում Հունգարիան դեռևս մնում էր վաղ ամբողջատիրական:

Սակայն արդեն 1980-ական թվականների կեսերին Կադարի վարչակարգի և կոմունիստական կուսակցական պետության քաղաքատնտեսությունը ենթարկվում էր հարածուն ճնշման: Չնայած տնտեսական փորձարկումների վերսկսմանը 1979 թվականին, տնտեսությունն ուներ աճող խնդիրներ: Արտաքին պարտքը «վերելք» էր ապրում 1980-ական թվականներին: Իսկապես, արտաքին պետական պարտքը հասել էր մինչև 16 միլիարդի արդեն 1989թ.: Երկրի պարտքը՝ 1561 դոլար մեկ շնչի հաշվով, ամենամեծն էր աշխարհում: Սրա համեմատ, Բրազիլիայի 622 դոլար մեկ շնչի հաշվով պարտքը փոքր էր երևում:<sup>20</sup> Կուսակցության բարեփոխական թևը գնալով ավելացնում էր քննադատությունը Կադարի նկատմամբ և փնտրում էր դաշնակիցներ կուսակցության ու հասարակության մեջ: Արդեն 1987թ. հասարակության մեջ ինքնուրույն խմբերը, ծածուկ աջակցություն ստանալով կուսակցական բարեփոխիչների կողմից, նույնպես սկսեցին քննադատել Կադարին: *Սամիզդատ* հրատարակչությունը՝ «*Բեսելյո*»-ն, 1987թ. առաջին կեսին հրատարակեց հատուկ համար՝ «Սոցիալական պայմանագիր»-ը, որը սկսվում էր այն պնդմամբ, որ «Կադարը պետք է հեռանա»: «*Բեսելյո*»-ի սովորական հրատարակչությունն ուներ 4000 օրինակ տպաքանակ: «Սոցիալական պայմանագիրը» վերահրատարակվեց ու վաճառվեց 12000 օրինակով և լայնորեն կարդացվում էր կուսակցական բարեփոխիչների կողմից, որոնց առաջնորդներ Ռեյժո Նյերշն ու Իմրե Պոժգաին հեղինակների հետ ունեցել էին զաղտնի համակրական հանդիպումներ:<sup>21</sup> Կարծում ենք, որ այս իրադարձությունները

20. Մեկ շնչի հաշվով պարտքն արտահայտող թվերը հաշվարկվել են պետական և պետական երաշխավորմամբ երկարաժամկետ պարտքի մասին տվյալներից՝ *World Debt Tables, 1992-1992* (Վաշինգտոն, Համաշխարհային բանկ), ինչպես բերվում է Վիճակագրական տարեգրքում՝ *Statistical Yearbook 1993* (Նյու Յորք, ՄԱԿ), էջ 1051-53: Բնակչության մասին տվյալները՝ Վիճակագրական տարեգրքից՝ *Statistical Yearbook 1993*, էջ 59-67:

21. Վերը բերվածը հիմնված է Ալֆրեդ Ստեփանի՝ Պրահայում ունեցած մի գրույցի վրա (16 դեկ-

չէին կարող տեղի ունենալ առանց վարչակարգի ներսում արդեն իսկ տեղի ունեցող իշխանության համար պայքարի և վարչակարգի ու ընդդիմության չափավորների որոշ լեզիտիմության: Ի դեպ, արդեն 1987թ. հոկտեմբերին Հունգարիայի առաջին ընդդիմադիր նախակուսակցությունը՝ Հունգարիայի ժողովրդավարական ֆորումը, ունեցավ իր կազմակերպական ժողովը, որին ներկա էր նաև Պոժգաին:<sup>22</sup>

Ճիշտ է, մինչև 1989թ. Հունգարիայում չկային այնպիսի սոցիալական շարժումներ, որոնք հեռավոր կերպով համեմատելի լինեին Լեհաստանում «Համերաշխության» կամ Արևելյան Գերմանիայում, կամ թեկուզ Չեխոսլովակիայում բազմամարդ ցույցերի հետ, սակայն սխալ կլինի Հունգարիայում անցումը համարել զուտ որպես վարչակարգի բարեփոխիչների կողմից նախաձեռնված և հսկողության տակ վերցված մի բան: 1988թ. առաջ եկավ նոր գործող անձանց մի առատություն՝ հիմնականում ինքնակազմակերպված միավորված խմբեր: Նոր սոցիալական շարժումներից առավել կարևորներից մեկը մի բնապահպանական խումբ էր, որը ցույցեր էր կազմակերպում Դանուբի վրա ամբարտակի կառուցման դեմ: 1988թ. առաջացած երկու այլ կարևոր խմբեր կենտրոնացել էին բացահայտ քարոզչության վրա՝ ուղղված մի այնպիսի ինստիտուցիոնալ շրջանակի ստեղծմանը, որը կնպաստեր ավելի ուժեղ ու ավելի ինքնուրույն քաղաքացիական հասարակության առաջացմանը: Հաղորդակցությունների դարում «Հրապարակայնության ակումբն» ստեղծվել էր լրագրողների և այլ մասնագետների կողմից՝ առաջ տանելու խոսքի ազատությունը: Իրավական ոլորտում 135 իրավաբաններ ստեղծեցին «Իրավաբանների անկախ ֆորում»՝ նպաստելու քաղաքացիական (իսկ հետագայում՝ քաղաքական) հասարակությանը բավարար փորձառությամբ ապահովելուն՝ ակտիվորեն ծանոթանալու և գնահատելու հետզհետե ավելացող իրավական ու սահմանադրական առաջարկությունները, որոնք բարձրացվում էին և՛ վարչակարգի, և՛ նոր սոցիալական խմբերի կողմից:<sup>23</sup>

Արևելյան Եվրոպայում նորընտիր վարչակարգերի մեծագույն քաղաքական խնդիրներից մեկը քաղաքական ներկայացվածության հարցն է, որն առաջ է եկել հետամբողջատիրական «համահարթեցված» տնտեսական ու սոցիալական պատկերի պատճառով: Հունգարիայում, սակայն, տնտեսական բարեփոխումներն սկսվեցին 1968թ.. ավելի վաղ նախադեպեր տեղի էին ունեցել դեռ 1953թ. և իրավական ճանաչում ստացան 1982թ., ինչը

տեմբերի, 1992թ.) «Սոցիալական պայմանագրի» գլխավոր հեղինակի՝ քաղաքական փիլիսոփա Յանոշ Քիշի հետ, որը հետագայում՝ ազատ ընտրություններից հետո, դարձավ «Ազատ ժողովրդավարների դաշինքի» նախագահ:

22. Հունգարիայի ժողովրդավարական ֆորումի հետ Պոժգաիի սատարող հարաբերության մասին քննարկում, մանրամասն բերվում է՝ Ռոբերտ Ջենկինս, «Շարժումները դառնում են կուսակցություններ. Հունգարիայի ընդդիմության պատմական փոխակերպումը» (Robert M. Jenkins, "Movements into Parties: The Historical Transformation of the Hungarian Opposition" (Program on Central and Eastern Europe, Working Papers Series, no. 25, Harvard University, 1993)):

23. Այս նոր սոցիալական շարժումների փայլուն վերլուծություն, տե՛ս Էնդրյու Արատո, «Քաղաքացիական հասարակությունը ծագող ժողովրդավարություններում. Լեհաստան և Հունգարիա» (Andrew Arato, "Civil Society in the Emerging Democracies, Poland and Hungary"), Մարգարետ Լատուա Նուգանի խմբ.՝ «Լենինիզմից մինչև ազատություն. ապարդյունականցման դժվարությունները» (Margaret Latua Nugent, ed., *From Leninism to Freedom: The Challenges of Demoralization* (Boulder, Colo.: Westview Press, 1992), 127-52):

ստեղծեց ավելի խայտաբղետ ու բազմակարծիք միջավայր շահերը հստակորեն ձևակերպելու համար: Աննա Սելենը լավ է նկարագրում այս հարաբերությունը.

Այսպիսով, մասնավոր ձեռներեցությունն ընդլայնվեց ավելի արագ, քան շատ պաշտոնյաներ ակնկալում էին, և դա ունեցավ ապշեցուցիչ իրավական ու քաղաքական ինստիտուցիոնալ հետևանքներ: Այդ անվերջ թվացող շրջանը փոփոխությունների, ձևափոխումների ու միմյանց հաջորդող բարեփոխումների, որոնք ֆինանսների նախարարությունն ստիպված էր նախաձեռնել 1982թ. և 1989թ. միջև, ցույց է տալիս, որ երբ խմբերին շնորհվում են սեփականության իրավունքներ, որոնցով այդ խմբերը նորովի օրինական ազատություն են ստանում, ապա այդ իրավունքներն ընդլայնելու ճնշումն առաջանում է դրա իսկ սեփական տրամաբանությունից... Ման հրամանագրերի գումարային ազդեցությունը երկրորդ տնտեսության ձեռնարկատերերի սեփականության իրավունքների ու գործողության տարածքի լայնացումն էր... Իրավական կարգավիճակով ապահովվելուց հետո առանձին ձեռնարկատերերն ու բազմաթիվ կազմակերպված խմբերը սկսեցին ճնշում գործադրել լրացուցիչ փոփոխությունների համար: Փոխանցման շրթա հանդիսացող կազմակերպությունները, որոնք պատասխանատու էին արտադրողների ու մանրածախ առևտրականների ավանդական օրինական փոքր մասնավոր հատվածի շահերը «ներկայացնելու» համար, ներքուստ կազմալուծվեցին, որովհետև կառավարությունը փոխեց տնտեսական տարածքը մի գիշերվա ընթացքում առանց սահմանելու դրանց նոր մանրատները: 1987թ. ձեռնարկատերերը ձևավորեցին իրենց սեփական անկախ շահերը ներկայացնող կազմակերպությունը, որն օգնեց գիշումներ կորզելու մասնավոր հատվածի համար (օր.՝ հարկային քաղաքականության հարցում), իսկ մեկ տարի անց ձեռնարկատերերը կազմավորեցին քաղաքական կուսակցություն: 1982թ. մասնավոր սեփականության իրավունքների բնագավառում բարեփոխումները շրջադարձային կետ էին... դրանք բավարար չէին տնտեսության կայունացման համար և էլ ավելի ապակայունացրեցին կուսակցության գաղափարախոսությունը, սոցիալական վերաբերմունքն ու վարքագիծը, և պարզվեց, որ դրանք անհամատեղելի էին պետական սոցիալիզմի՝ որպես ինստիտուցիոնալ-քաղաքական համակարգի հետ: Մասնավոր ձեռնարկատիրության օրինականացումը կասկածի տակ դրեց պետության հավակնություններն առ այն, որ նա իրավունք ունի վերահսկելու ոչ միայն արտադրությունը, այլև տնտեսության կազմակերպումն ու միությունների ստեղծումը:<sup>24</sup>

Ձեռնարկատերերի կազմակերպվելուց անմիջապես հետո ստեղծվեց Գիտական աշխատողների միությունը, որին հետևեցին այլ անկախ միություններ: Լինելով համեմատաբար փոքր և հիմնականում սահմանափակված մտավորական աշխատողներով՝ այս միությունները, այնուամենայնիվ, հետամաքողջատիրության սահմաններն էլ ավելի ընդլայնեցին բազմակարծության ուղղությամբ: Ինչպես էնդրյու Արատոն է ասում. «աշխատավորների շահերի պաշտպանության այս բոլոր կազմակերպությունները, որոնք կրել են լեհական «Համերաշխության» մոդելի տարբեր կողմերի ազդեցությունը, հասկացել են, որ իրենք ամրապնդում են սոցիալական ինքնակազմակերպման հաստ գործված-

24. Սելեն, «Ձեռնարկությունների և սեփականության իրավունքների թաքուն բարեփոխումներ» (Seleny, "Hidden Enterprise and Property Rights", 165-66):

քը ներքևից, երբ կառուցում ու պայքարում են քաղաքացիական հասարակության համար՝ տնտեսական ու քաղաքական կյանքին մասնակցության կարևոր տարրերով»:<sup>25</sup>

Վերջին ոլորտը, որտեղ հունգարական ընդդիմադիր ուժերն սկսեցին կազմակերպվել, քաղաքական հասարակությունն էր: Սոցիալական շարժումների՝ քաղաքականապես ավելի մեծ հակվածություն ունեցող անդամները ստեղծեցին նախաքաղաքական կուսակցություններ: Ամբոխահաճ և ինչ-որ չափով գյուղական ու ազգայնական մտավորականները հանդիպեցին Լակիտելեկում 1987թ. և կազմավորեցին Հունգարական ժողովրդավարական ֆորումը (ՀՄՖ): 1988թ. մարտին կազմավորվեց մի նախակուսակցություն՝ Երիտասարդ ժողովրդավարների դաշնությունը: 1988թ. գարնանը նոր սոցիալական շարժումների ոչ պաշտոնական դաշինքը, կանաչները, լրագրողները, բարեփոխումների տնտեսագետները և ուսանողների ու աշխատավորների անկախ կազմակերպությունները կազմեցին ավելի քաղաքային և սոցիալապես ազատական բնույթի խմբավորում, որն անվանվում էր Ազատ նախաձեռնությունների ցանց: 1988թ. աշնանն այս խումբը հիմք դարձավ Ազատ ժողովրդավարների դաշինքի համար: Հունգարիայի քաղաքականության բնորոշ փաստերից մեկն այն է, որ վերը նշված կուսակցություններից ոչ մեկը Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ ստեղծված պատմական կուսակցություն չէր, ընդհակառակը, դրանք ծագել էին հասուն հետամբողջատիրական Հունգարիայում: Նոր սոցիալական ու քաղաքական շարժումների այս համակցությունը 1988թ. վերջին նպաստեց միությունների մասին նոր օրենքի ընդունմանը, որն իր հերթին օգնեց ճանապարհ հարթելու բազմակուսակցական համակարգի համար: Միությունների մասին այս նոր օրենքն ընդունվելուց հետո երեք պատմական կուսակցությունները՝ Մանր գյուղացիական անկախ տնտեսություն վարողների կուսակցությունը, Սոցիալ-ժողովրդավարական կուսակցությունը և Քրիստոնյա-ժողովրդավարական կուսակցությունը, հայտարարեցին իրենց վերաակտիվացման մասին:<sup>26</sup>

Հունգարիայում անցման մասին առավել հաճախ տրվող հարցերից մեկն այն է, թե ինչու Հունգարիայի կոմունիստական կուսակցությունն սկսեց ընդունել մրցակցային քաղաքականությունն անգամ նախքան լեհական «Կլոր սեղանի» ավարտն ու Լեհաստանում առաջին ոչ կոմունիստական կառավարության կազմավորումը: Այս հարցին պատասխանելու համար պետք է հետ գնանք ու դիտարկենք Կադարի և կոմունիստական կու-

25. Արատո, «Քաղաքացիական հասարակությունը ծագող ժողովրդավարություններում» (Arato, "Civil Society in the Emerging Democracies" 139):

26. Ընդդիմադիր կուսակցությունների առաջացման ու տարածման մասին, տե՛ս Լասլո Լենգել, «Քաղաքական կուսակցությունների բնույթը Հունգարիայում (1989թ. աշուն)» (Laszlo Lengyel, "The Character of Political Parties in Hungary (Autumn 1989)", Անդրաշ Բոգոկիի, Անդրաշ Կորոշենի և Գեորգի Չոպֆլինի խմբ.՝ «Հետկոմունիստական անցում. ծագող բազմակարծությունը Հունգարիայում» (Andras Bozoki, Andras Korosenyi, and George Schopflin, eds, *Post-Communist Transition: Emerging Pluralism in Hungary* (London: Pinter Publishers, 1992), 30-44), և Ջենկինս, «Շարժումները դառնում են կուսակցություններ» (Jenkins, "Movements into Parties"): Ճնշման արդյունավետ համախմբման մասին, որը հանգեցրեց միությունների մասին օրենքի շատ ավելի ժողովրդավարացնող վերջնական տարբերակի ընդունմանը, քան վարչակարգը նախապես մտադիր էր, տե՛ս Գաբոր Հալմաս, «Ներկայացուցչությունն ու քաղաքացիական հասարակությունը Հունգարիայում. ժողովների ու միությունների իրավունքի վերակողմորումը» (Gabor Halmas, "Representation and Civil Society in Hungary: The Recodification of the Right of Assembly and Association", *Law and Policy* 13 (April 1991): 135-47): Սա «հասարակության նվաճմամբ ապամբողջատիրացման» դինամիկայի հստակ օրինակ է:

ասկցության լեզվի տիրության փոփոխվող համատեքստը: 5-րդ գլխում մենք ասացինք, որ վարչակարգի լեզվի տիրության ավանդական չափորոշիչներից մեկն այն էր, թե արդյոք որևէ առանձին վարչակարգ իր քաղաքացիների կողմից ընկալվում է որպես «ամենաճիշտը՝ հաշվի առնելով հանգամանքները»: 1970-ական թվականների ընթացքում Կադարի վարչակարգի տնտեսական ու քաղաքական մոտեցումները մեծ մասամբ դիտվել են որպես համեմատաբար բարեհաջող «Բրեժնևյան դոկտրինի» պարամետրերի շրջանակում: Հաշվի առնելով «Բրեժնևյան դոկտրինի» աշխարհաքաղաքական սահմանափակումները՝ հունգարացիների համար առավել համապատասխան էտալոնային խումբը Խորհրդային Միությունն ու Արևելյան Եվրոպան էին:

Սակայն 1980-ական թվականների վերջին անգամ նախքան այսպես կոչված «Մինատրայի դոկտրինի» պաշտոնական ձևակերպումը աստիճանաբար էտալոնային խումբ է դառնում Արևմտյան Եվրոպան, հատկապես՝ Հունգարիայի Դանուբից վերև գտնվող հարևանը՝ Ավստրիան:<sup>27</sup> Աղյուսակ 17.1-ը ցույց է տալիս, թե ինչպես 1989թ. Գորբաչովի իշխանության գալուց չորս տարի հետո, հունգարացիները հետզհետե ավելի բացասական են գնահատում իրենց վիճակն այն բնագավառներում, որոնք առնչվում են կյանքի որակի, հավասարության և անձնական քաղաքական արդյունավետության բնագավառներին:

Աղյուսակ 17.1-ից պարզ է դառնում, որ Գորբաչովի բարեփոխումները դիտվել են որպես հարաբերական ձախողում արդեն 1989թ., և որ Ավստրիան հարաձուռն կերպով համարվում էր լավագույնը՝ ըստ հետազոտված երեք չափորոշիչների՝ ներառյալ նույնիսկ այն վիճակի բնագավառը, որը կոմունիստական համակարգերի մեծ մասը համարում էր որպես իրենց համեմատաբար ուժեղ կողմը՝ հավասարությունը: Այս ընդհանուր համատեքստում արդեն 1987թ. Հունգարիայում սկսում էին առաջ գալ անցումային խաղի բարդ տարրերը:

Ինչպես Ալֆրեդ Ստեփանը մեկ այլ տեղում հիմնավորել է, խզումը պետական ապարատում (կամ Հունգարիայի դեպքում «կուսակցական պետության ներսում») կարող է շարժման մեջ դնել «դեպի հետ ձեռք մեկնելու» միտումը պետության մի մասի կողմից՝ համախմբելու քաղաքացիական հասարակության մի մասը պետության ներսում իր սեփական ուժային դիրքը մեծացնելու համար:<sup>28</sup> Սա սահմանում է զիջման շրջանակը: Սա-

27. Վլադիմիր Տիշմանիանու (Vladimir Tismaneanu) բացատրում է, որ «Մինատրայի դոկտրինը» «Խորհրդային Միության որոշումն էր՝ թույլատրելու, որ յուրաքանչյուր արևելաեվրոպական երկիր իր ձևով իրականացնի բարեփոխումները»: Փաստորեն դա նրանց թույլ տվեց գնալու «իրենց սեփական ուղղով»: Տե՛ս նրա «Քաղաքականության վերահայտնագործում. Արևելյան Եվրոպան Մտալիսից գնում է դեպի Հավել» (*Reinventing Politics: Eastern Europe from Stalin to Havel*) (New York: Free Press, 1993), 216):

28. Ստեփանի (Stepan) փաստարկը ներպետական հակամարտության և քաղաքացիական հասարակության սիրաշահման մասին, տե՛ս «Պետական իշխանությունը և քաղաքացիական հասարակության գործությունը Լատինական Ամերիկայի Հարավային Կոնում» (*State Power and the Strength of Civil Society in the Southern Cone of Latin America*)՝ Պիտեր Էվանսի, Դիտրիխ Ռեսչեմեյերի և Թեդա Տկոպոլի խմբ.՝ «Պետության հետ վերադարձումը» (Peter Evans, Dietrich Rueschemeyer, and Theda Skocpol, eds., *Bringing the State Back In*) (Cambridge: Cambridge University Press, 1985), 317-46) և «Զինվորական քաղաքականության վերախմաստավորում. Բրազիլիա և Հարավային Կոնի երկրներ» (*Rethinking Military Politics: Brazil and the Southern Cone*) (Princeton: Princeton University Press, 1988), chaps. 1 and 3):

**Աղյուսակ 17.1. Ղուևգարացիների գնահատականն իրենց անկում ապրող կյանքի որակի, հավասարության և անձնական քաղաքական արդյունավետության վերաբերյալ. հինգ երկրների համեմատություն, 1985թ. և 1989թ.**

Երկիր	Պատասխանողների տոկոսը	
	1985թ.	1989թ.
«Ո՛ր երկրում են մարդիկ ավելի լավ ապրում»		
Ավստրիա	49.9	80.3
Ղուևգարիա	28.7	12.7
Խորհրդային Միություն	4.3	0.9
Չեխոսլովակիա	0.3	0.6
Ղարավալակիա	0.3	0.3
Ռումինիա	0.0	0.1
«Ո՛ր երկրում մարդկանց միջև կա ավելի մեծ հավասարություն»		
Ավստրիա	9.8	48.9
Ղուևգարիա	17.8	19.6
Խորհրդային Միություն	38.2	9.5
Չեխոսլովակիա	1.1	3.9
Ղարավալակիա	0.8	1.3
Ռումինիա	0.4	0.9
«Ո՛ր երկրում մարդիկ ունեն քաղաքական հարցերին մասնակցելու ավելի մեծ հնարավորություն»		
Ավստրիա	14.1	52.3
Ղուևգարիա	23.0	24.0
Խորհրդային Միություն	25.0	4.7
Չեխոսլովակիա	0.6	0.8
Ղարավալակիա	1.1	2.6
Ռումինիա	0.1	0.0

*Աղբյուրը՝* Լասլո Բրուստ և Յանոշ Հիձն, *La mayorfa ma's silenciosa* (Բուղապետ, Սոցիալական գիտությունների ինստիտուտ, 1990թ.): Ղիմնված հանրային հարցման վրա, որը նրանք իրականացրեցին Ղուևգարիայի «Գելլապ» հանրահարցման համար («Gallup Poll»): Եթե անգամ կասկածում ենք, որ կա որոշակի գզուշավորություն 1985թ. պատասխաններում, կամ, ինչպես անվանում են հանրային հարցման մասնագետները, *լռության պարույր*, փաստը, որ մարդիկ իրենց վերաբերմունքներն այդպես ազատորեն արտահայտում էին 1989թ., արդեն իսկ արտացոլում է զգալի փոփոխություն: Աղյուսակը չի ներառում «այլ» և «չգիտեմ/պատ.չկա» պատասխանները, հետևաբար, թվերի գումարը 100-ի չի հասնում:

կայն եթե քաղաքացիական հասարակությունը բավարար չափով ուժեղ չէ, ապա այն, ինչը տրվել է վարչակարգի մի մասի կողմից, կարող է հետ վերցվել այդ պետական խմբի նպատակին ծառայելուց հետո: Սակայն եթե հասարակության մեջ ընդդիմադիր ուժերը բավարար չափով ուժեղ են, կարող է առաջ գալ «վարչակարգի զիջման ու հասարակական նվաճման» մի բարդ դիալեկտիկա, որը կօգնի ընդհանուր համակարգը դեպի սահմանային փոփոխություն հրելուն՝ նախ գնալ ազատականացման ուղղությամբ, իսկ վերջում՝ հատել ժողովրդավարության անցման գիծը:<sup>29</sup> Այդպիսի քաղաքական գործընթաց

29. Բրազիլիայում «վարչակարգի զիջման և հասարակության նվաճման» դիալեկտիկայի Ստեփանի (Stepan) վերլուծությունը, *տե՛ս* նրա «Զինվորականության վարած քաղաքականության վերախմաստավորումը» (*Rethinking Military Politics*, esp. 39, 45-46):



տեղի ունենալու պոտենցիալ հնարավորության մասին իրազեկությունը մեզ ստիպում է պատրաստ լինել դիտարկելու որոշ անցումներ՝ որպես մրցակցային աճուրդի օրինակներ կառավարության որոշ մասերի կողմից քաղաքացիական հասարակության հանդեպ: Այսպիսով, թեև քաղաքացիական հասարակությունն ընդդեմ վարչակարգի տարբերակը հաճախ ճիշտ է, քաղաքացիական հասարակության աճն ու լիազորումը մասամբ կարող է տեղի ունենալ վարչակարգի մասերի և քաղաքացիական հասարակության մասերի միջև կարճաժամկետ դաշինքների շնորհիվ, թեև, իհարկե, երկու կողմերից յուրաքանչյուրն էլ համոզված է, որ ինքն է դառնալու վերջնական հաղթողը: Հունգարիայի կոմունիստական կուսակցության ոչ մի խմբակցություն, անգամ ամենաառաջատար բարեփոխիչ Պոժգաիի խմբակցությունը, չնախաձեռնեց վարչակարգի զիջումներ՝ ընդունելով այն փաստը, որ դա կարող է հանգեցնել իշխանության կորստի: Այդ դեպքում ինչո՞ւ վարչակարգի զիջման ու հասարակության նվաճման դիալեկտիկական հանգեցրեց այն բանին, որ Հունգարիան կտրեց-անցավ հասուն հետամբողջատիրությունից դեպի ազատ մրցակցային ժողովրդավարություն սահմանը:

Արդեն 1987թ. կուսակցական պետությունն աճող տնտեսական ճգնաժամի իրավիճակում և նոր աշխարհաքաղաքական համատեքստում ուներ առնվազն չորս հստակ խմբակցություն՝ (1) անզիջումներ, որոնք հույս ունեին, որ Գորբաչովը կտապավի, և շահագրգռված էին 1968թ.-ից հետո Չեխոսլովակիայում տեղի ունեցածի նման մի «նորմալացման ռազմավարություն» էլ Հունգարիայում պարտադրելուն, (2) մի «ստատուս քվո» խումբ ծերացող առաջնորդ Կադարի շուրջը, (3) մի չափավոր բարեփոխական խումբ Կարոյ Գրոսի ղեկավարությամբ, որը շահագրգռված էր տնտեսական ապակենտրոնացման մեջ, բայց ցանկանում էր շատ քիչ քաղաքական փոփոխություն, բացառությամբ օրենքին ավելի ու ավելի ենթարկվող պետությունից և (4) Պոժգաիի կողմից ղեկավարվող մի բարեփոխական խումբ, որը ցանկանում էր տնտեսական, իրավական և քաղաքական փոփոխություններ: Սկսած 1987թ. կեսերից՝ կուսակցության երկու բարեփոխական խմբակցություններ աջակցում էին միմյանց, և երկուսն էլ օգտագործում էին կուսակցության՝ իրենց վերահսկողության տակ գտնվող մեխանիզմները՝ օգնելու Կադարի նկատմամբ ճնշում գործադրելուն:<sup>30</sup> Կադարի խոշոր մրցակիցը Կարոյ Գրոսն էր, որը դարձավ վարչապետ 1987թ. հուլիսին: Գրոսն օգտագործեց այս սովորաբար թույլ պաշտոնը որպես հարթակ, որտեղից քննադատում էր Կադարին նրան հաջորդելու իր քարոզարշավի ընթացքում: Ղեկավար օղակի ներկուսակցական մրցակցության վերաբերյալ մի փայլուն ուսումնասիրության մեջ ասվում է, որ «Գրոսի ռազմավարությունը հետամուտ էր վերնախավերի

30. Կարևոր է շեշտել, որ կուսացության երկու բարեփոխական խմբակցություններն ու նրանց բազմաթիվ տեխնոկրատ դաշնակիցները քիչ կապ ունեն լեհական ոճի «քաղաքացիական հասարակությունն ընդդեմ պետության» դիխոտոմիական դինամիկայի հետ: Ի դեպ, քաղաքացիական հասարակության խմբերի համար Հունգարիայում մեծ տարածքը մասամբ քաղաքացիական հասարակության հետ պետության ներսում բարեփոխիչների ստեղծած բազմաթիվ կապերի շնորհիվ էր: *Sté U. L.* Դենի կարևոր աշխատանքը, որը վերաձևում է ավանդական «քաղաքացիական հասարակությունն ընդդեմ պետության» մտածելակերպն իր «Բնատիրոջոնալ երկկենցաղությունը և անցումը կոմունիզմից. Չինաստանի օրինակը», "Institutional Amphibiousness and the Transition from Communism: The Case of China", *British Journal of Political Science* 24 (1994թ. հուլիս), էջ 293-318: Դենը իրավացիորեն նշում է հունգարացի հասարակազետ Էլմեր Հանկիսի աշխատությունը՝ որպես Հունգարիայում «փնտրիտուցիոնալ երկկենցաղության» կարևոր պահերի վավերագրության (էջ 301):

կառավարելի մոբիլիզացման ու արմատականացման՝ ճնշելու կադարական ղեկավարությունը... Գրոսը գնաց գաղափարախոսությունից էլ այն կողմ՝ փնտրելու կուսակցության, ինչպես նաև ոչ կուսակցությունների աջակցությունը, և այդ անելով՝ ճակատագրական կերպով խարխիլեց Կադարի՝ որպես ազգային առաջնորդի հեղինակությունը»:<sup>31</sup>

Գրոսի մարտավարական դաշնակիցներից մեկն այս քարոզարշավում նրա բարեփոխիչ հակառակորդ Պոժգաին էր, որը մեծ ազդեցություն ուներ լրատվամիջոցների վրա: Պոժգաին և՛ օգնում էր ոչ կուսակցական սոցիալական շարժումներին ստանալու լրատվամիջոցներից օգտվելու որոշ հնարավորություն, և՛ դրա փոխարեն օգնություն էր ստանում նրանցից: Պոժգաին մասնակցեց Հունգարիայի ժողովրդավարական ֆորումի շատ կարևոր կազմակերպական ժողովին 1987թ. սեպտեմբերին և ապահովեց այդ ժողովում ընդունված հայտարարության տպագրությունը կուսակցության կողմից կառավարվող մի լրագրում: Ի դեպ, Պոժգաին ելույթ ունեցավ այդ ժողովի ժամանակ և հորդորեց մասնակիցներին՝ ներկայացնելու բարեփոխումների այլընտրանքային ծրագիր: Մի գիտնական, որն ուսումնասիրել էր Հունգարիայի ժողովրդավարական ֆորումի (ՀԺՖ) փոխակերպումը սոցիալական շարժումից քաղաքական կուսակցության, անում է հետևյալ դատողությունը. «Պոժգաիի կողմից ժողովրդական հայրենասիրական ճակատի միջոցով տրամադրված ռեսուրսները՝ կազմակերպչական աջակցություն և լրատվամիջոցների հասանելիություն, իսկապես դեր խաղացին ՀԺՖ-ին օգնելու գործում... Այս խումբը գուցե ձեռնամուխ չլիներ կազմակերպության ձևավորմանը, եթե չլիներ կուսակցական բարեփոխիչների խմբակցության կողմից տրամադրված որոշիչ պաշտպանությունը... Այս դաշինքն օգուտ բերեց երկու ճամբարներին էլ: Այն Պոժգաին և իր բարեփոխիչ գործընկերներին համաժողովրդական աջակցություն տվեց ներքին [կոմունիստական կուսակցության մեջ] պայքարում»:<sup>32</sup>

Վարչակարգի կողմից զիջումների ու հասարակության ձեռք բերած նվաճումների միջև դինամիկան ապշեցուցիչ կերպով պարզ դարձավ իրադարձությունների արագացման մեջ 1989 թվականի սկզբին: Հունգարացի քաղաքագետ Անդրաշ Կորոշենին պատկերավոր կերպով ցույց է տալիս, թե ինչպես են ավելի ու ավելի գորացող քաղաքացիական հասարակությունը և բազմաթիվ նախակուսակցությունները մղել Հունգարիայի հետամբողջատիրական վարչակարգը դեպի ոչ բնորոշ քաղաքական փոփոխություն բազմակուսակցական ընտրությունների լեգիտիմությունը ճանաչելու միջոցով:

Իրադարձություններն արագացրեց Պոժգաիի քայլը 1989թ. հունվարի վերջին: Պոժգաին ընդունեց, որ չի կարող լինել փոխհամաձայնություն առանց 1956թ. իրադարձությունների վերագնահատման: Այն ժամանակ, երբ Կարոյ Գրոսը վայելում էր Ալպյան լեռները Շվեյցարիայում, Պոժգաին մի ռադիոհարցազրույցի ժամանակ հայտարարեց, որ այն, ինչ տեղի ունեցավ Հունգարիայում 1956թ., հակահեղափոխություն չէր, ինչպես որ այդ իրադարձությունը համարում էր պաշտոնական կոմունիստական պատմագրությունը, այլ «ազգային ապստամբություն»:

31. Գեորգի Չոպֆլին, Ռուդոլֆ Տոկեշ և Իվան Վոլգյես, «Ղեկավարության փոփոխությունը և ճգնաժամը Հունգարիայում» (George Schopflin, Rudolf Tokes, and Ivan Volgyes, "Leadership Change and Crisis in Hungary", *Problems of Communism* (Sept.-Oct. 1988): 34, 36):

32. Ջենկինս, «Շարժումները դառնում են կուսակցություններ» (Jenkins, "Movements into Parties" 67, 60):

Արդյունքն ապշեցուցիչ էր: Գրոսը նշանակեց HSWP [կոմունիստական կուսակցության] կենտրոնական կոմիտեի արտակարգ նիստ, որ պիտի հրավիրվեր երկու շաբաթ անց: Այս երկու շաբաթվա ընթացքում հարյուրավոր սոցիալական ու քաղաքական կազմակերպություններ իրենց համաձայնությունն արտահայտեցին Պոժգաիի հետ կամ գոնե իրենց հավանությունը՝ նրա հայտարարությանը: Ունենալով հասարակական կարծիքի ու մամուլի աջակցությունը՝ Պոժգաին և բարեփոխիչները շահեցին մարտը: Կենտրոնական կոմիտեի փետրվարյան նիստի ժամանակ ոչ միայն ընդունվեց 1956թ. իրադարձությունների վերազնահատման հարցը, այլև բազմակուսակցական համակարգը:<sup>33</sup>

Հունգարիայի կոմունիստական կուսակցության կողմից բազմակուսակցական ընտրությունների վերաբերյալ որոշման ընդունմամբ, հատկապես Պոժգաիի բացահայտ հայտարարությամբ, որ բազմակուսակցական մրցակցությունն «իր հետ բերում է իշխանությունը կորցնելու հավանականություն», առաջ եկավ վարչակարգ-հասարակություն նոր հարաբերություն և մոտեցավ ժողովրդավարությանն անցման ծնունդը:<sup>34</sup> Ըստ վարչակարգի մեր չափանիշների՝ բազմակարծություն, գաղափարախոսություն, համախմբում և ղեկավարում, 1989թ. փետրվարին Հունգարիան Լեհաստանում ընտրությունների սուր իրադարձություններից առաջ արդեն մոտեցել էր հետամբողջատիրությունից հեռանալու սահմանային փոփոխության եզրին: Մնացածը պատմություն է՝ լավ նկարագրված ուրիշների կողմից:<sup>35</sup> Սակայն որպես համեմատական վերլուծաբաններ՝ մենք կցանկանայինք ուսումնասիրել, թե ինչպես հասուն հետամբողջատիրությունը Հունգարիայում բացեց անցման մի ուղի, որը հասու չէր Չեխսլովակիային կամ Բուլղարիային կամ Արևելյան Եվրո-

33. Անդրաշ Կորոշենի, «Կոմունիստական իշխանության քայքայումը Հունգարիայում» (Andras Korosenyi, "The Decay of Communist Rule in Hungary"), Բոզոկի, Կորոշենիի և Չոպֆլինի խմբ.՝ «Հետկոմունիստական անցում» (Bozoki, Korosenyi, and Schopflin, eds., *Post-Communism Transition*, 6-7):

34. Պոժգաիից մեջբերումը "Magyar Hirlap"-ի կոմունիստական կուսակցության պաշտոնական օրաթերթ, մի հարցազրույցում էր և մեջբերված էր Չարլզ Գատի, «Չախտղված ճամբարը. Խորհրդային Միություն-Արևելյան Եվրոպա հարաբերություններն անցման շրջանում» (Charles Gati, *The Bloc That Failed: Soviet-East European Relations in Transition* (Bloomington: Indiana University Press, 1990), 171): Պոժգաիի հայտարարության խորհրդանշական նշանակության մասին, տե՛ս Անդրաշ Սայո, ««Կոր սեղանները» Հունգարիայում» (Andras Sajo, "Round Tables in Hungary" (Center for the Study of Constitutionalism in Eastern Europe, University of Chicago Law School, working paper, no. 2, August 1991), 5):

35. Երեք փայլուն ուսումնասիրություններ են Լասլո Բրուստ և Դեյվիդ Շտարկ, «Քաղաքական դաշտի վերաձևումը Հունգարիայում. հսկամարտության քաղաքականությունից դեպի մրցակցության քաղաքականություն» (Laszlo Bruszt and David Stark, "Remaking the Political Field in Hungary. From the Politics of Confrontation to the Politics of Competition"), Իվո Բանացի խմբ.՝ «Արևելյան Եվրոպան հեղափոխության մեջ» (Ivo Banac, ed., *Eastern Europe in Revolution* (Ithaca, N.Y.: Cornell University Press, 1992), 13-55), Թիմոթի Գարտոն Աշ, «Մենք՝ մարդիկ՝ 89 թ-ի հեղափոխության ականատես Կարշավայում, Բուդապեշտում, Բեռլինում և Պրահայում» (Timothy Garton Ash, *We the People: The Revolution of '89 Witnessed in Warsaw, Budapest, Berlin and Prague* (London: Granta Books, 1990), 47-60), որը հատկապես արտահայտիչ կերպով նկարագրում է այն, թե ինչպես խորհրդանշական և ուժային հարաբերությունները փոխվեցին ժողովրդավարների օգտին Նադի վերահուղարկված մամբ, և արդեն մեջբերված իսպանացի հասարակագետի գիրքը, որտեղ հետաքրքիր համեմատություններ են արվում Իսպանիայում և Հունգարիայում անցումների միջև, Գոնսալես Էնրիկես (Gonzalez Enriquez), *Crisis y cambio en Europa del Este*, esp. 362-68:

պայում որևէ այլ հետամբողջատիրական վարչակարգի: Ադյուսակ 4.2-ում այդ ուղին մենք անվանել ենք *դաշնությունահենք բարեփոխում-դաշնությունահենք ապահարզան*:

Արդեն իսկ ներկայացվել են գործոնների մեծ մասը, որով հասկանալի է դառնում, թե ինչու նախ և առաջ Հունգարիան ուներ անցման այս տարբերակը: Մակայն ոչ բոլոր *հնարավոր* տարբերակներն են, որ *իրականացվում են*: Ավելի հստակորեն ասենք, թե ինչ է պահանջվում *դաշնությունահենք բարեփոխման-դաշնությունահենք ապահարզանի* համար, և թե Հունգարիան իրականում ինչու ընտրեց այս հնարավորությունը:

*Դաշնությունահենք բարեփոխման-դաշնությունահենք ապահարզանի* ուղու համար նպաստավոր պայմաններից առավել կարևոր են չորսը՝ (1) և՛ վարչակարգի չափավորները, և՛ ժողովրդավարական ընդդիմության չափավորներն ունեն որոշ ուժային կարողություն, (2) նշված երկու «խաղացողներն» էլ գալիս են այն համոզման, որ հաշվի առնելով բոլոր այլընտրանքները, բանակցություններն առավել նախընտրելի են, (3) երկու կողմերի չափավոր խաղացողներն էլ ունեն և/կամ զարգացրել են ռազմավարական ու մարտավարական բանակցային կարողություն, և (4) չափավոր խաղացողները դառնում են տիրապետող խաղացողներ իրենց կողմում:

Կարծում ենք, որ հստակ ցույց ենք տվել, որ և՛ վարչակարգի չափավորները, և՛ ժողովրդավարական ընդդիմության չափավորներն ունեին որոշ ուժային կարողություն: Բանակցությունը դարձել էր նախընտրելի հնարավորություն երկու չափավոր խաղացողների համար, որովհետև երկու կողմն էլ տեղյակ էին, որ չեն կարող հաղթանակել զուտ միայն իրենց սեփական ջանքերով, երկուսն էլ հասկանում էին սոցիալական ու տնտեսական ճգնաժամի խորությունը, և երկուսն էլ վախենում էին այն բանից, թե ինչ նշանակություն կունենա իրենց ապագայի համար 1956 թվականի կրկնությունը: Հունգարական հեղափոխության մասին հիշողությունն, ըստ էության, օգնեց խաղացողների երկու չափավոր խմբերին նստելու բանակցային սեղանի շուրջ և նպաստեց այն բանին, որ նրանք դառնան իրենց կողմի տիրապետող խաղացողները: Լասլո Բրուստն ու Դեյվիդ Շտարկը հիանալի նկարագրում են, թե ինչպես են 1956թ. հետևանքներն իրենց աղդեցությունը թողել և՛ վարչակարգի, և՛ ընդդիմության վրա: «Կոմունիստական վերնախավի համար 1956թ. ուրվականների վերածված հիշողություններն էին այն ցատումի մասին, որը կարող է սանձազերծվել, երբ հասարակությանը հանում են համբերությունից: Ամենից առավել դա *վախն* էր *հասարակությունից*, ինչը կոմունիստական ղեկավարության մեջ առաջացրել է մի խոր բնագոյ, որ ամեն ինչ պետք է անել զերծ մնալու համար 1956թ.-ից: 1988թ. ընթացքում տնտեսական ու քաղաքական ճգնաժամի խորանալուն զուգընթաց կուսակցության ղեկավարների ելույթներում շատանում էին հղումները 1956թ. դեպքերին:<sup>36</sup> Բրուստն ու Շտարկը նույնն են պնդում նաև ժողովրդավարական ընդդիմության մեծ մասի վերաբերյալ:

1956թ. ռուսական միջամտության դասն էր, որ ստիպեց նոր առաջացող սոցիալական ու քաղաքական խմբերին հապաղել վարչակարգի լեգիտիմությունը հարցականի տակ դնելու գործում և դրա փոխարեն ձգտել փոխհամաձայնության գալ նրա առաջնորդների հետ: Միխայիլ Գորբաչովն ինքնաբերաբար չփոխեց այդ հաշվարկները, քանի որ նրա հանդուրժելու սահ-

36. Բրուստ և Շտարկ, «Քաղաքական դաշտի վերածնունդը Հունգարիայում» (Bruszt and Stark, "Remaking the Political Field in Hungary," 24) (շեշտը բնօրինակում է):

մանները ո՛չ հստակ նշված էին, ո՛չ էլ փորձարկված էին այդ ժամանակ... Բրեժնևյան դոկտրինի ավարտի առաջին հստակ նախանշանը Խորհրդային Միության կողմից Լեհաստանում ոչ կոմունիստ Մագովեցկու կառավարության ընդունումն էր [1989թ. օգոստոս]:<sup>37</sup>

1989թ. սկզբին ընդդիմությունը կազմված էր բազմաթիվ կուսակցություններից ու սոցիալական շարժումներից: Վարչակարգը փորձեց բանակցությունների մեջ մտնել ընդդիմության յուրաքանչյուր մասի հետ առանձին-առանձին: Սակայն, ժողովրդավարական ընդդիմության՝ առանձին-առանձին բանակցելուց հրաժարվելը նրանց բանակցային կարողությունը զարգացնելու մի խոշոր քայլ էր դեպի առաջ: Նրանք նախ ստեղծեցին իրենց սեփական՝ Ընդդիմության «Կլոր սեղանը» 1989թ. մարտի 23-ին: Ընդդիմության «Կլոր սեղանին» մասնակցած ութ խմբերը ներկայացնում էին միմյանց հետ բախվող շահեր ու կարծիքներ: Սակայն նրանք մեծապես խթանեցին իրենց ռազմավարական ու մարտավարական բանակցային կարողությունները՝ գալով մի ներքին համաձայնության, որ վարչակարգի հետ ցանկացած «Կլոր սեղանի» կենտրոնական նպատակը պետք է լինի ոչ թե սոցիալական ռազմավարության կամ համատեղ իշխանության հարցի քննարկումը, այլ *հիմնովին* ազատ ընտրությունների շուրջ, որոնցով Հունգարիայում կորոշվի ապագա իշխանությունը, համաձայնություն ձեռք բերելու քայլերը:<sup>38</sup> Ի տարբերություն այլ արևելաեվրոպական «Կլոր սեղանների», բանակցությունները ընթանում էին վարչակարգի ու արդեն հաստատված քաղաքական ու ոչ թե քաղաքացիական հասարակության միջև: Քաղաքական խմբերը պետք է միմյանց միջև համաձայնություն ձեռք բերեին նախքան բանակցել կարողանալը կամ բանակցելը: Ի դեպ, վճռորոշ իրադարձությունների ժամանակ, ինչպես օրինակ՝ Նադի վերահուղարկավորումը, քաղաքական հասարակությունը իր շուրջը հավաքեց ու կազմակերպեց քաղաքացիական հասարակությանը:

Երբ ազգային եռակողմ բանակցությունները («Կլոր սեղանը») սկսվեցին, վարչակարգի որոշ մասեր դեռ ամբողջությամբ չէին ընդունել ազատ ու մրցակցային ընտրությունների սկզբունքը: Սակայն այնպիսի մի համատեքստում, որտեղ քաղաքական տարածքն անընդհատ վերակազմվում էր Նադի վերահուղարկավորման ու լեհական ընտրությունների շուրջ ազգային զգացմունքների արտակարգ հորդման պայմաններում, Պոժգաին ու կոմունիստական կուսակցության բարեփոխիչները դարձան կուսակցության ներսում տիրապետող ու հաշտվեցին ժողովրդավարական ընտրությունների արդյունքների անորոշության հետ:<sup>39</sup>

37. Նույն տեղում, էջ 25:

38. *Տե՛ս* Լասլո Բրուստ, «1989թ. համաձայնեցված հեղափոխությունը Հունգարիայում» (See Laszlo Bruszt, "1989: The Negotiated Revolution of Hungary", Social Research (Summer 1990); 365-88, esp. 375), Անդրաշ Բոզոկի, «Համակարգի փոփոխությունների Հունգարիայի ուղին. ընդդիմության Կլոր սեղանը» (Andras Bozoki, "Hungary's Road to Systemic Change: The Opposition Round Table", Eastern European Politics and Societies 7, no. 2 (1993): 276-308, esp. 285) և Սայո, ««Կլոր սեղանները» Հունգարիայում» (Sajo, "Round Tables in Hungary", 20-25):

39. Լասլո Բրուստը՝ որպես Արհմիությունների ժողովրդավարական լիգայի ազգային քարտուղար, պաշտոնապես մասնակցում էր ընդդիմության «Կլոր սեղանին» և կառավարություն-ընդդիմություն «Կլոր սեղանին»: Լինելով և՛ արհմիութենական պաշտոնյա, և՛ որոշ չափով իմանալով լեհերեն՝ Բրուստը որպես դիտորդ գործուղվեց՝ մասնակցելու Լեհաստանի «Կլոր սեղանին»: Նրա «1989թ. համաձայնեցված հեղափոխությունը Հունգարիայում», "1989: The Negotiated Revolution of Hungary" հատկապես

Այս կետում մեզ անհրաժեշտ է դադար առնել ու հետազոտել, թե ինչու կոմունիստական կուսակցության բարեփոխիչները կարողացան ընդունել ընտրությունների ելքի անորոշությունը որպես լավագույն այլընտրանք և կարողացան հասնել այն բանին, որ կուսակցության կշիռ ունեցող այլ տարրերը, տարածքային կառավարման ներկայացուցիչներն ու բանակը զիջեցին նրանց որոշմանը: Ռեֆորմիստ կոմունիստների տեսանկյունից վարչակարգի վրա ուժի բարեհաջող գործադրումը, ինչպես օրինակ՝ ԽՍՀՄ-ում հեղաշրջման կոալիցիայի կողմից արված փորձը 1991թ. օգոստոսին, ամենայն հավանականությամբ կարող էր հանգեցնել իրենց գտմանը, ինչպես Չեխոսլովակիայում 1968թ.: Սակայն բարեփոխիչ կոմունիստները մտածեցին, որ իրենք ունեն մրցակցային ընտրություններում հաջողության հասնելու բավական լավ հնարավորություն: Ի դեպ, 1989թ. հունիսին հանրային հարցումը ցույց էր տվել, որ նրանք կշահեին ձայների առավելագույն հարաբերական մեծամասնությունը՝ 26%, և եթե նախագահական ընտրությունները ավելի վաղ անցկացվեին, ապա ընդդիմության ոչ մի թեկնածու չէր ունենա Պոժգաիի հռչակն ու վայելած աջակցությունը:<sup>40</sup> Անգամ եթե նրանք չշահեին ձայների առավելագույն հարաբերական մեծամասնությունը, կար հեռանկար, որ ժողովրդավարական բազմակուսակցական համակարգում նրանք կարող էին լինել լեգիտիմ մրցակիցներ: Ինչպես Բրուստն ու Շտարկն են ասում բարեփոխիչ կոմունիստների հաշվարկների մասին, «ընդդիմության թուլության մասին նրանց պատկերացումներն ու սեփական ընտրական հեռանկարների գնահատականը նրանց վստահություն էին ներշնչում... Այդ պատճառով նրանք բախտորոշ քայլ արեցին՝ ընդունելու «անորոշ արդյունքներ ունեցող որոշակի ինստիտուտների» այդ սկզբունքը, որը կազմում է ազատական ժողովրդավարության միջուկը»:<sup>41</sup>

սոր է պատկերում իրադարձությունների ինտերակտիվ համեմատական դինամիկան Լեհաստանում և Հունգարիայում, ինչպես նաև այն, թե այս դինամիկան ինչպես է նպաստել ռեֆորմիստ կոմունիստների՝ Հունգարիայի աշխատավորների սոցիալիստական (կոմունիստական) կուսակցության մեջ տիրապետող դառնալուն:

40. Նույն Գեյլլայի 1989թ. հունիսի հանրային հարցման ժամանակ Հունգարիայում խոշորագույն ընդդիմադիր կուսակցությունը՝ «Հունգարական ժողովրդավարական ֆորումը», ստացավ միայն 9%: Առավել կարևոր է, որ դեռ 1989թ. աշնանը Պոժգաիի համոզված էր, որ ընդդիմության առաջնորդների անունների ոչ հայտնի լինելու շնորհիվ ինքը կկարողանա հաղթել ուղղակի նախագահական ընտրություններում: Հանրային հարցման մասին, *տե՛ս* Էլմեր Հանկիս, «Հարացույցի որոնումներում» (Elemer Hankiss, *In Search of a Paradigm*, Daedalus (Winter 1990): 206): Մի շարք հանրային հարցումների, որոնցից շատերը բարեփոխիչ կոմունիստներին որոշ չափով քաջալերեցին 1989թ., ուսումնասիրություն, *տե՛ս* Լասլո Բրուստ և Յանոշ Շիմոն, «Քաղաքացիների քաղաքական կողմնորոշման փոփոխությունը Հունգարիայում ժողովրդավարության անցման ժամանակ (արտացոլված հանրային կարծիքի հետազոտման և ընտրական ուսումնասիրությունների մեջ, 1990-1991թթ.)» (Laszlo Bruszt and Janos Simon, *The Change in Citizens' Political Orientations during the Transition to Democracy in Hungary (Reflected by Public Opinion Survey and Electoral Studies, 1990-1991)*, (Budapest: Institute of Political Science, Hungarian Academy of Sciences, 1991): Դեռ 1989թ. հուլիսի 6-ին Սայոն «Կլոր սեղանի» պոժգաիական մասնակիցների ընդհանուր կարծիքը բնութագրեց հետևյալ կերպ. «Ինքնըստինքյան հասկանալի էր համարվում, որ համաժողովրդական նախագահական ընտրությունների հաղթողը լինելու է Պոժգաին»: Սայոն, ««Կլոր սեղանները» Հունգարիայում», "Round Tables in Hungary", էջ 25:

41. Բրուստ և Շտարկ, «Քաղաքական դաշտի վերաձևումը Հունգարիայում» (Bruszt and Stark, *Re-making the Political Field in Hungary*, 45): Նրանց հղումը «անորոշ արդյունքների սկզբունքին» իրենց ներքին մեջբերման մեջ վերաբերում է Ադամ Պրժմոսկի, «Ժողովրդավարությունը որպես հավանարտությունների պատահական արդյունք» (Adam Przeworski, *Democracy as a Contingent Outcome of Conflicts*), Ջոն Էլսթերի և Ռոնե Սլեգոթեի խմբ.՝ «Սահմանադրականություն և ժողովրդավարություն»

Իհարկե, կուսակցական անզիջումների և գաղտնի ոստիկանության որոշ հատվածներ պատրաստ չէին ընդունելու անորոշության այս սկզբունքը, սակայն կուսակցական պետության մի զգալի մասը, հատկապես պետական կառավարիչները, որոնք սովորաբար «պրագմատիկ պահպանողականներ» էին, պետք է իրենց հաշվարկներն անեին, թե որն է բխում իրենց շահից՝ կողմ լինել պատժիչ միջոցառումների<sup>42</sup>, թե՞ անցնել բարեփոխիչ կոմունիստների կողմը: Թեև մենք այնքան հեռու չենք գնա, որ պնդենք, որ «նումենկլատուրայի վերահսկիչ փաթեթի ձեռքբերումների» ոսկե պարաշյուտի հնարավորությունն է պետական կառավարիչներին դարձրել *ակտիվ կոալիցիոն* գործընկերներ Պոժգաիի հետ, իսկապես կարծում ենք, որ պետական կառավարիչների լավ հեռանկարները՝ որպես հանրային հատվածի կառավարիչներ «փոխարկելու» իրենց բազային ակտիվները անձնական տնտեսական ակտիվների, կարող է օգնել բացատրելու նրանց լուր համաձայնությունը կոմունիստական կուսակցության ներսում բարեփոխիչ կոմունիստների առաջացմանը:<sup>42</sup> Ինչպես պնդում է Լասլո Ուրբանը, երկրորդ տնտեսության կողմից բացված հնարավորության կառուցվածքը [արտաքին գործոնների կազմն ըստ ստրուկտուրալիստական մոտեցման] փոխեց նրանց ռացիոնալ ընտրության հաշվարկները:

Ինչո՞ւ բարեփոխիչներն աստիճանաբար իրենց ձեռքը վերցրեցին վերահսկողությունը կոմունիստական կուսակցության ու կառավարության ներսում, և ինչո՞ւ նրանց չարգելափակեցին ու չփոխարինեցին պահպանողականները, որոնք դիմադրում էին փոխակերպմանը: Կարճ պատասխանն այն է, որ բարեփոխիչները հեշտությամբ վերցրեցին ղեկավարությունը, որովհետև պրագմատիկ պահպանողականները նրանց թույլ տվեցին այդ անել: Ինչո՞ւ: Որովհետև պրագմատիկ պահպանողականների քաղաքական աջակիցները, հին վարչակարգի «թոշակառուները» ունեին իրենց սեփական գործը (բիզնեսը), որի մասին պետք է հոգ տանեին, և որը նրանց տալու էր մեծ դրական արդյունքներ՝ ի տարբերություն համակարգի փոխակերպման դեմ քաղաքական դիմադրության կազմակերպման:<sup>43</sup>

Նոր վերնախավերի մի նորարարական հետազոտություն ցույց է տալիս, որ որոշ պետական կառավարիչների համար այս հաշվարկը ճիշտ դուրս եկավ: 1993թ. մասնավոր հատվածի նոր տնտեսական վերնախավի 81%-ը Հունգարիայում 1988 թվականին աշ-

(Jon Elster and Rune Slagstad, eds., *Constitutionalism and Democracy* (New York: Cambridge University Press, 1988), 59-80):

42. Հունգարիայի պետական ապարատի ներկայացուցիչների «պասիվ զիջողականության» վարքագիծը որակապես չէր տարբերվում կապիտալիստական գործարար վերնախավերի լուր համաձայնության վարքագծից մեր քննարկած այնպիսի անցումային օրինակներում, ինչպիսիք են՝ Բսպանիան, Ուրուգվայը կամ Չիլին: Ի դեպ, մեր խմբում անցման միակ դեպքը, երբ որոշ ձեռնարկատերեր մի պահ հանդիսանում էին ժողովրդավարական ընդդիմության «ակտիվ կոալիցիոն գործընկերներ», Բրազիլիայում էր: Տե՛ս Ֆերնանդո Կարդոսո, «Ձեռնարկատերերն ու անցման գործընթացը. Բրազիլիայի օրինակը» (Fernando H. Cardoso, *Entrepreneurs and the Transition Process: The Brazilian Case*), Օ'Ղոննելի, Շմիտտերի և Ուայթհեդի խմբ.: «Անցում ավտորիտար իշխանությունից. համեմատական տեսանկյուններ» (O'Donnell, Schmitter, and Whitehead, *Transition from Authoritarian Rule: Comparative Perspectives*, 137-53):

43. Տե՛ս արդեն նշված Ուրբան, «Հունգարիայի անցումը հասարակության ընտրության տեսանկյունից» (Urban, *Hungarian Transition from a Public Choice Perspective*), Բոզոկիի, Կորոշենիի և Չոպֆլինի «Հետկոմունիստական անցում» (Bozoki, Korosényi and Schopflin, *Post-Communist Transition*, 91-92):

խատել էր կուսակցական պետության տնտեսությանը վերաբերող ոլորտներում (50%-ը՝ ղեկավար պաշտոններում տնտեսության պետական հատվածում և 30%-ը՝ բարձր տնտեսական պաշտոններում):<sup>44</sup>

Իսկ ի՞նչ էր անում բանակը: Պատժիչ գործողության ժամանակ՝ հատկապես այն դեպքում, երբ հույսը չէր կարող դրվել խորհրդային բանակի վրա, հավանաբար ճարահատյալ պետք է օգտագործվեր հունգարական բանակը, ինչպես նաև Հունգարիայի գաղտնի ոստիկանությունը: Սակայն, ի տարբերություն հարավսլավական բանակի, իր գլխավորապես սերբ սպայական կազմով, որը համարում էր, որ իր շահերից է բխում Խորվաթիայի հետ պատերազմի ու Բոսնիա-Հերցեգովինայում էթնիկ գտումներին ցույց տրվող ակտիվ աջակցությունը, կամ ի տարբերություն լեհական բանակի, որը կուսակցական պետության առաջատար մասն էր 1981թ-ից մինչև 1989թ., կամ ռումինական բանակի, որը նոմենկլատուրային օգնեց ճնշելու ռումինական ապստամբությունը, հունգարական բանակը բացարձակապես չեզոք դիրք գրավեց Հունգարիայում անցման ժամանակ: Դարձյալ հաշվի առնելով Հունգարիայի վերջին ժամանակների քաղաքական պատմությունը՝ բանակը հաշվարկեց, որ խաղաղ բանակցությունների միջոցով ձեռք բերված փոփոխությունների պասիվ ընդունումը չի վնասի իր շահերին: Յանոշ Շիմոնը 1989թ. Հունգարիայում անցման ընթացքում բանակի դերի առաջին գնահատումներից մեկում ասում է, որ «1956թ. [Հունգարիայի] զինվորականությունը կամ աջակցում էր հեղափոխությանը, կամ դասակարգում էր, սակայն ռուսական ներխուժմանն աջակցող կազմակերպված ուժ չկար... Վարչակարգի փոփոխության սկզբից նեթ օրակարգում եղել է խորհրդային զորքերը դուրս հանելու պահանջը»: Բանակի բախտախաղը սովեց իր պտուղները վստահության առումով: Պետական ինստիտուտների նկատմամբ քաղաքացիների վստահությանը վերաբերող ամենամյա ուսումնաիրությունների ժամանակ 1989-1992թթ. միջև ամեն տարի հարցման առարկա վեց ինստիտուտներից ամենաբարձր գնահատականին արժանացել է բանակը:<sup>45</sup>

Հաշվի առնելով ընդհանուր դրությունը մի կողմից՝ կուսակցության, պետական ապարատի և բանակի ներսում, իսկ մյուս կողմից՝ քաղաքականապես կազմակերպված ընդդիմությունում, պետք է պարզ դառնա, թե ինչու *դաշնությունահենք բարեփոխում-դաշնությունահենք ապահարգանի* եղանակը ոչ միայն հավանական, այլև իրական ուղին էր:

44. Սակայն եթե վերցնենք հին տնտեսական վերնախավի ամբողջ խումբը 1988թ., ապա 23.4%-ի շրջանում եղել է պաշտոնի իջեցում մինչև 1993թ., իսկ 47.6%-ը ստիպողաբար անցել է վաղաժամ թոշակի: *Տե՛ս Սոնյա Սելոնյի, Իվան Սելոնյի և Իմրե Կովաչ, «Հունգարիայի բաժան-բաժան եղած վերնախավը. շրջանառություն քաղաքականության մեջ, վերարտադրություն տնտեսության մեջ» (Szonja Szeleenyi, Ivan Szeleenyi, and Imre Kovach, "The fragmented Hungarian Elites: Circulation in Politics, Reproduction in Economy"), Իվան Սելինյի, Վնուկ-Լիպինսկու և Դոնալդ Թրեյմանի «Վերնախավի շրջանառությունն. հին և նոր վերնախավերը հետկոմունիստական հասարակությունում» (Ivan Szeleenyi, Edmund Wnuk-Lipinski and Donald Treiman, eds., *Circulation of Elites? Old and New Elites in Post-Communist Society*), ընթացքում գտնվող գրքի մեծության ձեռագրի նախնական վերնագիրը:*

45. Յանոշ Շիմոն, «Ֆելդմարշալի «փայտիկը» և խաղաղություն (դատողություններ զինվորականության դերի մասին Հունգարիայում վարչակարգի փոփոխությունների ժամանակ 1988-1992թթ. միջև (Janos Simon, *Fieldmarshal's Baton and Peace (Judgements on the Role of the Military in Hungary during the Regime-Change between 1988-1992)* (Budapest: Erasmus Foundation for Democracy, 1993), quote from 7-8, poll data found in table 3):



Այժմ համառոտակի դիտարկենք, թե Հունգարիայում հասուն հետամբողջատիրության առանձնահատկություններն ինչ են ենթադրում այն խնդիրների առումով, որ իշխանության եկող ժողովրդավարական կառավարությունն ու խորհրդարանը պետք է լուծեն, նախքան ժողովրդավարությունը կկարողանա կայանալ: Աղյուսակ 1.1-ում մենք հստակ ցույց ենք տալիս, թե ինչպես կարելի է հասկացութենական մակարդակում կայացած ժողովրդավարությունը պատկերացնել որպես հինգ խոշոր փոխկապակցված ոլորտներից բաղկացած ամբողջություն: Գուցե չափազանց վաղ է պատասխանելն այն հարցին, թե Հունգարիան ժողովրդավարորեն կայացել է, թե ոչ: Սակայն չափազանց վաղ չէ ասելը, որ էթե դիտարկենք հասարակարգի բոլոր հինգ ոլորտները, Հունգարիան, չնայած պետութենականության և քաղաքացիական հասարակության ներկայացուցչության կարևոր խնդիրներին, որոնք մենք կքննարկենք, կայացման խնդիրների առումով ուներ զգալի առավելություններ այլ արևելաեվրոպական երկրների նկատմամբ, որոնք իրենց անցումներն սկսեցին 1989թ.:

Առաջին ոլորտը, որ կդիտարկենք, քաղաքական հասարակությունն է: Ի տարբերություն Արևելյան Եվրոպայում ցանկացած այլ հետամբողջատիրական երկրի, Հունգարիայում քաղաքական հասարակությունն իր կազմակերպական կառուցվածքը հիմնականում ստացել էր *նախքան* անցումը: Ի դեպ, թեև հիմնադիր ընտրությունները անցկացվեցին միայն 1990թ. մարտին, արդեն 1988թ. դեկտեմբերին՝ ընտրություններից տասնհինգ ամիս առաջ 1990թ. ընտրությունների հետևանքով խորհրդարանում ի վերջո ներկայացուցչություն շահած վեց կուսակցություններից *յուրաքանչյուրն* արդեն իսկ կազմավորված էր:<sup>46</sup> Ավելին, ի տարբերություն Լեհաստանի, կազմակերպված քաղաքական կուսակցությունները, որոնք արդեն սկսում էին կատարել անհրաժեշտ փոփոխությունը քաղաքացիական հասարակության միասնական «մենք»-ից դեպի քաղաքական հասարակության մրցակցային բաղադրիչներ դառնալը, հանդիսանում էին ընդդիմության ամենամեծ կշիռ ունեցող մասերը «Կլոր սեղանի» ժամանակ:

Մեր տեսական ու համեմատական վերլուծության առումով քաղաքական հասարակությունն է՛լ ավելի առաջ էր գնացել արդյունավետ գործելու կարողությունների ստեղծման գործում այն առումով, որ ի տարբերություն Ֆիլիպինների, Կորեայի կամ Լատինական Ամերիկայի որևէ երկրի, Հունգարիան ընտրել էր կառավարության զուտ խորհրդարանական մոդելը: Պոժգաին նախագահի ուղղակի ընտրություններ ցանկանում էր անցկացնել նախքան խորհրդարանի ազատ ընտրությունները: Ի դեպ, «Կլոր սեղանի» ժա-

46. Չայների և տեղերի վերաբերյալ աղյուսակները, *տե՛ս* Անդրաշ Կորոշենի, «Հունգարիայի խորհրդարանական ընտրությունները, 1990թ.» (Andras Korosenyi, "The Hungarian Parliamentary Election, 1990"), Բոգոկի, Կորոշենի և Չոպֆլին, «Հետկոմունիստական անցում» (Bozoki, Korosenyi and Schopflin, *Post-Communist Transition*, 72-81): Ի դեպ, այս նույն վեց կուսակցությունները միակ կուսակցություններն էին, որ Խորհրդարան վերադարձան 1994թ. ընտրություններից հետո: Ոչ մի նոր կուսակցություն Խորհրդարան չստավ: Ոչ մի հին կուսակցություն չվերացվեց: *Տե՛ս* Աթիլա Ագ և Շանդոր Կուրտան, «1990թ. և 1994թ. խորհրդարանական ընտրությունները Հունգարիայում. անփոփոխությունն ու փոփոխությունը քաղաքական համակարգում (Attila Agh and Sandor Kurtan, "The 1990 and 1994 Parliamentary Elections in Hungary: Continuity and Change in the Political System"), Աթիլա Ագի և Շանդոր Կուրտանի խմբ.՝ «Ժողովրդավարացումն ու եվրոպականացումը Հունգարիայում. առաջին Խորհրդարանը 1990-1994թթ.» (Attila Agh and Sandor Kurtan, eds., *Democratization and Europeanization in Hungary: The First Parliament, 1990-1994* (Budapest: Hungarian Centre for Democracy Studies, 1995), 13-26):

մանակ 1989թ. նոյեմբերին նախագահի ուղղակի ընտրություններ անցկացնելու հարցում նա աջակցություն ստացավ Հունգարիայի ժողովրդավարական ֆորումից:<sup>47</sup> Մեր դատողությամբ, եթե նման ընտրություններ տեղի ունենային, ապա Հունգարիան ձեռք կբերեր կառավարության կիսանախագահական ձև կառավարման այդ ձևին ուղեկցող մի շարք խնդիրների հետ մեկտեղ: Նույն կերպ սահմանադրության վերանայման գործընթացը, առաջին ազատ խորհրդարանական ընտրությունները և կառավարության կազմավորման գործընթացը բոլորն էլ կարող էին ինչ-որ չափով բարդանալ, եթե լինե՞ր ուղղակի ընտրություններով լեգիտիմացված գործող նախագահ: Այն ժամանակ ժողովրդավարական ընդդիմության երկու կուսակցությունները (Ազատ ժողովրդավարների դաշինքն ու Երիտասարդ ժողովրդավարները) բավական լավ կազմակերպված ու բավականաչափ ունակ էին ռազմավարական ու մարտավարական վարքագիծ դրսևորելու համար, այնպես որ կարողացան հավաքել սահմանադրությամբ պահանջվող քանակով ստորագրություններ հանրաքվեի համար, որի հինգ կետերից մեկն այն էր, թե արդյոք խորհրդարանական ընտրությունները պետք է անցկացվեն նախագահի ընտրությունից առաջ, թե՞ հետո: Եռանդուն քարոզարշավից հետո փոքր տարբերությամբ հաղթեց «նախ խորհրդարանական ընտրություններ» տարբերակը: Այնուհետև նորընտիր խորհրդարանը կշռադատելուց հետո որոշեց նախագահ ընտրել անուղղակիորեն:<sup>48</sup>

Քաղաքական հասարակության ոլորտի առումով տարբերությունը Հունգարիայի և Լեհաստանի միջև չափազանց մեծ է: Հունգարական «Կլոր սեղանի» համաձայնագիրը չհանգեցրեց իշխանությունը կիսելու բանաձևին, այլ տարավ դեպի խորհրդարանի ուղղակի համաժողովրդական ընտրություններ: Քաղաքական կուսակցությունների վաղ կազմավորումն ու համեմատաբար չսահմանափակված բանակցությունները հանգեցրեցին ազատ և մրցակցային ընտրություններին 1990 թվականի մարտին ու ապրիլին, մինչդեռ Լեհաստանում առաջին լիովին մրցակցային խորհրդարանական ընտրությունները անցկացվեցին միայն 1991թ. հոկտեմբեր ամսին: Սա նշանակում է, որ Լեհաստանում ժողովրդավարական կուսակցությունները քսանմեկ ամիս կրում էին կառավարության պարտականությունների ստանձնման հետևանքները՝ նախքան ազատ խորհրդարանական ընտրությունները:<sup>49</sup>

47. *Steu* Բրուստ և Շտարկ, «Քաղաքական դաշտի վերածնունդ Ուրուգվայում» (Bruszt and Stark, "Remaking the Political Field in Hungary", 48-50):

48. Վերը քննարկման փաստերը Յանոշ Քիշի հետ Ստեփանի մի հարցազրույցից են, Բուդապեշտ, 5 հուլիսի, 1990թ. և Բոգոլիի և Բրուստի ու Շտարկի՝ արդեն մեջբերված հոդվածներից:

49. Սա կարող է օգնել բացատրել այն փաստը, թե ինչու, երբ առաջին ազատ խորհրդարանական ընտրություններին Լեհաստանում քվեարկողների մասնակցությունը եղել է 42%, Հունգարիայում խորհրդարանական ընտրությունների առաջին շրջանում 1990թ. մարտին մասնակցությունը եղել է 63%: Բացի այդ, Լեհաստանում «ցածր մասնակցության պատճառը մեկնաբանները կապում էին «Համերաշխության» կողմից ղեկավարվող կառավարության «դրակոնյան» խստության տնտեսական միջոցառումների... և ավելի քան 80 մրցակցող քաղաքական կուսակցությունների ու տասնյակ միությունների ծրագրերից առաջացած շփոթության հետ»: *Steu* *Kessings Record of World Events: 1990, 37464-65, 37325*, մեջբերումը, համապատասխանաբար, 374651: Սակայն կցանկանայինք նշել, որ քվեաթերթիկի վրա հայտնված կուսակցությունների թիվը սովորաբար չափազանց մեծ է լինում գրեթե բոլոր «հիմնադիր ընտրությունների» ժամանակ: Շատ դեպքերում ընտրողներն արագորեն դրանց թիվը կրճատում են, ինչպես այդ արեցին Հունգարիայում: Ի դեպ, Հունգարիայում 1989թ. գրանցվել էր հիսունչորս կուսակցություն, որոնցից միայն տասներկուսը կարողացան բավարարել խելամտորեն

Հունգարիան չունեցավ սահմանադրության մշակման այն բանաձևը, որը Գլուխ 5-ում մենք հիմնավորեցինք որպես օպտիմալ բանաձև, այսինքն՝ նոր սահմանադրությունը չմշակվեց ազատ ընտրված օրենսդիր կամ Սահմանադիր ժողովի կողմից և հետո ներկայացվեց հանրաքվեի: Փոխարենը «Կլոր սեղանի» ժամանակ բոլոր խոշոր կուսակցությունները և դաշինքի մեջ գտնվող երկու խոշոր ժողովրդավարական կուսացությունները խորհրդարանական լուրջ փոփոխության ենթարկեցին գոյություն ունեցող սահմանադրությունն այն պիտանի դարձնելու համար:<sup>50</sup> Սակայն մի համատեքստում, որտեղ քաղաքական կուսակցություններն արդեն գոյություն ունեին, և չկար ընտրված գործող նախագահ որոշումներին խանգարելու համար, հնարավոր կառավարման բանաձևերի շուրջ բանավեճը լայնորեն հիմնվում էր եվրոպական ժամանակակից ժողովրդավարական սահմանադրական մտածելակերպի ու փորձի վրա:<sup>51</sup> Հունգարիայի մոտեցումը թեև քիչ օպտիմալ էր, սակայն այն արագ սահմանեց խաղի կանոններ քաղաքական հասարակության համար, օրենքի գերակայություն և կառավարական ու պետական իշխանության աստիճանակարգի մասին վճռի կայացման ընթացակարգեր: Հունգարիան երբեք չի կանգնել սահմանադրական այնպիսի փակուղու առջև, ինչպիսին վերլուծեցինք Լեհաստանի հետ կապված և կվերլուծենք Չեխոսլովակիայի, ԽՍՀՄ-ի և Ռուսաստանի օրինակներով: Նույն ձևով, թեև Հունգարիայում սահմանադրության մշակման գործըն-

սահմանված պահանջները համերկրային ցուցակում հայտնվելու համար: Իսկապես, միայն տասնիները կուսակցություն ներկայացրեցին ծայրամասային ցուցակները: Հունգարիայում քաղաքական հասարակության ավելի վաղ կազմավորումը թույլ տվեց, ի տարբերություն Լեհաստանի, որ առաջ գա բավական լավ կազմավորված կուսակցական համակարգ: *St' u* Գոնսալես Էնրիկես (Gonzalez Enriquez, *Crisis y combia en Europa del Este*, 149-50), և Կորոշենի, «Հունգարիայի խորհրդարանական ընտրությունները, 1990թ.» (Korosenyi, "The Hungarian Parliamentary Election, 1990", 74-81):

50. Սահմանադրության փոփոխման գործընթացի և դրա արդյունքների մասին, *տե՛ս* Էնդրյու Արատո, «Լեգիտիմացումն ու սահմանադրության մշակումը Հունգարիայում» (Andrew Arato, "Legitimation and Constitution Making in Hungary") (նյութը պատրաստվել է Ամերիկյան սոցիոլոգիական ընկերության ամենամյա հանդիպման համար, Մայամի Բիչ, 16 օգոստոսի, 1993թ.) և Սնդրաջ Բոզոկի «Քաղաքական անցումը և կայացած փոփոխություն Հունգարիայում» (Andras Bozoki, "Political Transition and Consolidated Change in Hungary"), Բոզոկի, Կորոշենի և Չոպֆլինի, «Հետկոմունիստական անցում» (Bozoki, Korosenyi and Schopflin, *Post-Communist Transition*, 60-71):

51. Սահմանադրության փոփոխման գործընթացում Հունգարիան ընդունեց Գերմանիայի (իսկ ավելի ուշ՝ Իսպանիայի) հայտնի «վստահության կոնստրուկտիվ քվե» բանաձևը, որն օգնում է խուսափելու կառավարության չափից դուրս անկայունությունից նրանով, որ անվստահության քվե կարող է ընդունվել միայն այն դեպքում, եթե կա դրական մեծամասնություն այլընտրանքային կառավարության համար: Հունգարիայում ստեղծվեց նաև ուժեղ սահմանադրական դատարան, որը մի շարք դեպքերում զայլ է իր մեծամասնությունը չարաշահելու կառավարության հակվածությունը: Սահմանադրական դատարանի վերաբերյալ *տե՛ս* Էթան Բլինգսբերգ, «Հունգարիա. անցման ապահովագրումը» (Ethan Klingsberg, "Hungary: Safeguarding the Transition", *East European Constitutional Review* 2, no. 2 (1993): 44-48): Նրանց նախագծած ընտրական օրենքը նույնպես օգնում է խուսափելու կուսակցությունների չափից դուրս պառակտումից, որովհետև որոշ ընտրատարածքներ մեկմանդատանի են, իսկ մյուսներն ունեն համամասնական ներկայացուցչություն՝ հիմնված 4% բարձր շեմի վրա: Սակայն, ի տարբերություն Գերմանիայի օրենքի, որն ապահովում է ընտրատարածքներում անհատական թեկնածուների ընտրությունը և համամասնության բավարար մակարդակ ամբողջ երկրում, Հունգարիայի օրենքը հնարավոր է դարձնում առավել հաջողակ կուսակցության կամ կուսակցությունների զգալի գերներկայացվածություն: Այս գերներկայացվածության տարրը նպաստեց այն բանին, ինչը Դուզլաս Ռեյը կանվանեք «սարքովի մեծամասնություն», 1994թ. ընտրությունների ժամանակ:

թացը չունի ընտրված Սահմանադիր ժողովի «ծագման ողջ լեգիտիմությունը» կամ հանրաքվեի միջոցով սահմանադրության «վավերացման լեգիտիմությունը», սահմանադրությունը փոփոխելու համեմատաբար փոխհամաձայնական գործընթացը գերծ մնաց «մեծամասնության պարտադրման» զգացումից, որն ինչպես կտեսնենք, Բուլղարիայում և Ռուսիինիայում նշանակալի փոքրամասնություններին հանգեցրեց սահմանադրության լեգիտիմությունը կասկածի տակ առնելուն: Հունգարիան չբախվեց նաև որոշումների ընդունման կաթվածահարության խնդրին, որն առաջացավ ձևական խորհրդային տիպի դաշնային համակարգի պատճառով, ինչն էլ նպաստեց նախկին ԽՍՀՄ-ի, Չեխոսլովակիայի ու Հարավսլավիայի կազմալուծմանը: Եվ վերջապես, Հունգարիայի դատական իշխանության աստիճանակարգը կանխեց օրենքների պատերազմը, որը տիրում էր գորբաչովյան ԽՍՀՄ-ում և Ելցինյան Ռուսաստանում: Այդուհանդերձ, այն փաստը, որ Հունգարիան փոփոխել էր կոմունիստների մշակած սահմանադրությունը նորը ստեղծելու փոխարեն, 1995թ. դեռ քաղաքական բախումների աղբյուր էր:

Տնտեսական հասարակության, սեփականության իրավունքի, պայմանագրային իրավունքի, կապիտալի շուկայի և բանկային կառույցների բնագավառները բոլորն էլ Հունգարիայում ունեցել են նախասնցումային սկիզբ՝ ի տարբերություն Արևելյան Եվրոպայի ցանկացած այլ երկրի: Մեր անվանած *ինստիտուցիոնալացված տնտեսական հասարակության* ենթաօրենսդրական դաշտի մեծ մասն արդեն ստեղծված էր, նախքան վարչապետ Անթալի առաջին ժողովրդավարորեն ընտրված կառավարությունը կստանձներ պաշտոնը: Ինչպես վերլուծաբաններից մեկն ամփոփել է,

Հին վարչակարգի գործողությունները շատ ավելի հեշտացրել էին հարցերը Անթալի կառավարության համար՝ երկրորդ տնտեսության օրինականացումը՝ իրեն հատուկ ձեռնարկատիրական հմտություններով, որոնք քաղաքական անցումից հետո Հունգարիային կտային մրցակցային առավելություն մյուս արևելավերոպական երկրների նկատմամբ, կապիտալի շուկայի ու առևտրային բանկային համակարգի գործադրումը, որոնք ունակ էին տրամադրելու մասնավորեցման գործի համար կենսական միջնորդային ծառայություններ, նոր մասնավոր ընկերությունների հիմնադրման և գոյություն ունեցող պետական ձեռնարկությունները մասնավոր սեփականատիրական ձևերի փոխակերպման համար անհրաժեշտ իրավական մեխանիզմների հաստատումը, օտարերկրյա ներդրումների մասին Արևելյան Եվրոպայում գոյություն ունեցող ամենամեղմ օրենքների ընդունումը:<sup>52</sup>

Վերոհիշյալ մեջբերման մեջ կարևոր է երկրորդային տնտեսության ոչ միայն սոսկ մեծությունը, այլև այն, որ այս նոր շուկան մաս է կազմում ինստիտուցիոնալացված, ուստի և ավելի կանխատեսելի շրջանակի: Մեր ասածը Հունգարիայի համեմատաբար զարգացած տնտեսական հասարակության մասին զուտ մեր գիտական դատողությունը չէ: Շահամոլ ֆինանսական ղեկավարները կգնեն ցածր հավելագներով պարտատոմսեր միայն

52. Տե՛ս Դեյվիդ Բարթլետ, «Մասնավորեցման քաղաքատնտեսությունը. սեփականության բարեփոխումները և ժողովրդավարությունը Հունգարիայում» (David Bartlett, "The Political Economy of Privatization: Property Reform and Democracy in Hungary", East European Politics and Societies (winter 1992): 73-118):

այն դեպքում, երբ համոզված լինեն, որ ռիսկն արդարացված է: Ինստիտուցիոնալացված տնտեսական հասարակությունն օգնում է ստեղծել այս ցածր ռիսկային միջավայրը: Համեմատական «գերագույն ռիսկի» երկու առավել ազդեցիկ գնահատողներն են «Մուդիի ներդրողների ծառայություն» և «Ստանդարտ և աղքատներ» ընկերությունները (Moody's Investors Service, Standard and Poor's): Զարմանալիորեն 1990թ. ընտրություններից հետո ընդամենը երեք տարվա ընթացքում ամբողջ Լատինական Ամերիկայի երկրներում (կապիտալիստական տնտեսությունների ու անկանխատեսելի տնտեսական հասարակությունների երկարատև պատմություն ունեցող երկրներ), միայն Չիլիին է շնորհվել Հունգարիայից ավելի բարձր վարկային վստահելիության գնահատական:<sup>53</sup> Օտարերկրյա ներդրողները նույնպես խիստ դրական գնահատական են տվել Հունգարիայի համեմատական գրավչությանը: 1991թ., օրինակ, նրանք այնքան ներդրում կատարեցին Հունգարիայում, որքան կատարել էին մնացած արևելաեվրոպական երկրներում՝ միասին վերցրած:<sup>54</sup>

Ինչ վերաբերում է գործուն պետական ապարատի հարցին, ապա ինչպես բոլոր արևելաեվրոպական երկրներում, այնպես էլ Հունգարիայում, հնչում էին նոմենկլատուրայի և անվտանգության ապարատի նախկին անդամներին գտելու որոշ պահանջներ: Հաշվի առնելով Հունգարիայի՝ համեմատաբար բաց կրթական համակարգը, որը թույլ էր տվել ռազմավարության շատ մասնագետների այցելել կամ կանոնավորապես դասավանդել Արևմտյան Եվրոպայում կամ Միացյալ Նահանգներում, կուսակցական բարեփոխիչների ու ժողովրդավարական ընդդիմության շատ խմբերի միջև ոչ պաշտոնական կապերի բարձր մակարդակը և այն փաստը, որ հունգարական պետությունն ավելի ու ավելի էր ենթարկվում տնտեսական գործընթացներին, ինստիտուտներին ու ենթաօրենսդրական կարգավորմանը, հեղափոխական գտումների և *էքս պոստ ֆակտո* արդարության հասարակական պահանջն զգալիորեն ցածր էր Հունգարիայում, ինչպես մենք կտեսնենք, քան այնպիսի ստեղծված հետամբողջատիրական երկրում, ինչպիսին է Չեխոսլովակի-

53. Ըստ «Ստանդարտ և փոր»-ի չափագանց ճշգրիտ քսանմեկ միավորով սանդղակի՝ AAA առավել վստահելիության գնահատականից մինչև D (դեֆոլտի համար), Չիլին ստացել է BBB, իսկ Հունգարիան մեկ կարգ ցածր՝ BB+: Մեքսիկան ստացել է Հունգարիային հավասար BB+: Նավթով հարուստ, սակայն քաղաքականապես անհանգիստ Վենեսուելային տրվել է ավելի ցածր՝ BB գնահատականը: Բրազիլիան, Արգենտինան և Ռուսաստանը գնահատված չեն: Մուդիին կիրառել է մեկ այլ բանաձև, սակայն Հունգարիան գնահատել է Արգենտինայից երեք միավորով, Իսկ Բրազիլիայից՝ չորս միավորով բարձր: Հունգարիայի գնահատականները բոլորն էլ ավելի տպավորիչ կերևան, երբ հիշենք, որ 1988թ. Հունգարիան ուներ մեկ շնչի հաշվով արտաքին պարտք, որը երկու անգամ ավելի էր, քան Բրազիլիայինը: *Տե՛ս* Ջոն Փարսել և ուրիշներ, «Ինքնիշխան, ինքնիշխան-աջակցվող, տեղական կառավարական և վերպետական թողարկողների գնահատում» (John F. H. Purcell et al., "Rating of Sovereign, Sovereign-supported, Local Government, and Supranational Issuers" (New York: Solomon Brothers, January 8, 1993)): Հաջորդ տեքստի գնահատականները վերցվել են վերը նշված փաստաթղթի՝ հունիսի 16, 1993թ., թարմ տարբերակից:

54. Հունգարիան ունի Արևելյան Եվրոպայի բնակչության միայն 10%-ը, սակայն ստացել է ավելի շատ օտարերկրյա մասնավոր կապիտալ 1991թ.: 1.4 միլիարդ դոլարից ավելի, քան տարածաշրջանում բոլոր երկրները միասին վերցրած: Դիրք Դամրո, «Օտարերկրյա ներդրումների դերը արևելաեվրոպական մասնավորեցման մեջ. Հունգարիա, Լեհաստան և Չեխոսլովակիա» (Dirk W. Damrau, "The Role of Foreign Investment in East European Privatization: Hungary, Poland and Czechoslovakia"), Ջոն Լամպելի խմբ.՝ «Կապիտալի շուկաների ստեղծումն Արևելյան Եվրոպայում» (John R. Lampe, ed., *Creating Capital Markets in Eastern Europe* (Baltimore: Johns Hopkins University Press, 1992), 33-46, quote from p. 44):

ան: Այս հանգամանքներում երկրի մասնագիտական կադրերն ու անգամ դատավորները համարվել են պիտանի նոր ժողովրդավարական կառավարության մեծ մասի կողմից: Այս պարագաներում խորհրդարանն ընդունեց մասնակի գումարների մասին օրենք, որը չեղյալ հայտարարվեց Սահմանադրական դատարանի կողմից:<sup>55</sup> 1993թ. խորհրդարանը նորից ջանքեր գործադրեց *էքս պոստ ֆակտո* «մաքրման» օրենքներ անցկացնելու, սակայն նրանց ուշադրությունը հիմնականում կենտրոնացած էր 1956թ. հեղափոխության ժամանակ խոշոր ճնշիչ դեր խաղացած անձանց վրա:<sup>56</sup>

Լայնորեն ընդունված գուման օրենքների արդյունքում պետության հնարավոր ճգնաժամը հաղթահարելու գործում Հունգարիային օգնեցին երեք գործոններ, որոնք արժանի են հատուկ ուշադրության:

Առաջին. քաղաքական բոլոր գործող անձինք՝ ներառյալ նախկին կոմունիստները, որոնք «Կլոր սեղանների» միջոցով մասնակցեցին համաձայնեցված անցմանը ժողովրդավարության, ձեռք բերեցին առնվազն որոշ քաղաքական կապիտալ: Նախկին կոմունիստների համար քաղաքական կապիտալի այսպիսի աղբյուր չառաջացավ ստեղծված հետամբողջատիրական Չեխոսլովակիայում, որտեղ վարչակարգը, ինչպես կտեսնենք, պարզապես փլուզվեց: Երկրորդ. անուղղակի կերպով ընտրված նախագահ Արփադ Գոնցը, ում պաշտոնն ու իշխանությունն ունեին առավելագույն լեգիտիմություն ազատ ընտրությունների արդյունքում ստեղծված խորհրդարանում, հմտորեն ու հեղինակավոր կերպով օգտվեց սահմանադրությամբ իրեն շնորհված չափավորեցնող լիազորություններից՝ հանձնելու կասկածելի օրինագծերը Սահմանադրական դատարանի քննարկմանը: Երրորդ, Սահմանադրական դատարանը գործեց իր կանոնադրության շրջանակներում ու պահպանեց իր լեգիտիմությունն ու հեղինակությունը, թեև մերժել էր շատ ավելի խորհրդարանական օրինագծեր, քան ընդունված էր Արևմտյան Եվրոպայի կայացած ժողովրդավարություններում:

Մեր հինգ ոլորտներից վերջինը քաղաքացիական հասարակությունն է: Այստեղ մենք մի փոքր պարադոքս ունենք: Որոշ հունգարացի վերլուծաբաններ 1988թ. անվանում են քաղաքացիական հասարակության տարի, իսկ 1989թ.՝ քաղաքական հասարակության տարի:<sup>57</sup> Սա պետք է հող նախապատրաստած լիներ այնպիսի փոխադարձաբար աստարող հարաբերության համար, որը մենք քննարկել ենք Գլուխ 1-ում: Սակայն 1989թ. հե-

55. *Տե՛ս* հատուկ ֆորում Հունգարիայի Սահմանադրական դատարանի որոշման մասին, որը բեկանեց հետադարձելիության մասին օրենքը, *East European Constitutional Review* (1992թ. ամառ), էջ 17-22:

56. *Տե՛ս* Էդիթ Օլտայ, «Հունգարիան փորձում է հաղթահարել իր անցյալը» (See Edith Oltay, "Hungary Attempts to Deal with Its Past", RFE/RL Research Report 2, no.18 (1993): 6-10)

57. Այս արտահայտության նպատակն էր ուշադրություն հրավիրելը քաղաքացիական հասարակության արագ աճին 1988թ. և անմիջապես դրանից հետո՝ 1989թ., քաղաքացիական հասարակության փոխարկվելուն: Ինչպես Բրուստն ու Շտարկն են բացատրում, «անցումը սոցիալական շարժումներից քաղաքական կուսակցությունների կարելի է տարիների փոխարեն չափել ամիսներով»: Նրանք շարունակում են բացատրությունը, որ «առաջնորդների՝ պետության դեմ քաղաքացիական հասարակության համախմբումը թափ հավաքեց 1989թ. հունիսի 16-ին, որը նույն շաբաթն էր, երբ այն արագորեն սկսեց նվազել: 1989թ. ամառը հասարակությունը կազմակերպելու ժամանակ չէր, այլ մյուս քաղաքական կուսակցությունների հետ բանակցելու ժամանակ»: Բրուստ և Շտարկ, «Քաղաքական դաշտի վերածնունդը Հունգարիայում» (Bruszt and Stark, "Remaking the Political Field in Hungary" 52-53):

տո քաղաքական հասարակությունը փաստորեն դեմոքրիլիզացրեց քաղաքացիական հասարակությանը: Կառավարության խորհրդարանական մեծամասնությունը 1990-93թթ. այնքան ուժ ուներ, որ հակվեց անտեսելու քաղաքացիական հասարակության ներդրումը: Կառավարությունը նաև սառեցրեց այն օրենքները, որոնք հնարավոր կդարձնեին լրատվամիջոցների ավելի լայն քաղաքացիական վերահսկողությունն ու հասանելիությունը: Մենք համաձայն ենք Արատոյի պես վերլուծաբանների հետ, որոնք համոզված են, որ Հունգարիայում ժողովրդավարությունը կբարելավվի՝ քաղաքացիական հասարակության համար ավելի գործուն ու բազմազան եղանակների ստեղծմամբ քաղաքական հասարակության վրա միջնորդի ազդեցություն գործադրելու համար: Բազմաթիվ պոտենցիալ կարևոր խմբեր, ինչպես օրինակ՝ սոցիալ-դեմոկրատ ընտրազանգվածները, ընդդիմության՝ անցման ժամանակ ծնունդ առած կուսակցություններում իսկապես չէին ներկայացվել:<sup>58</sup>

Հունգարիայում մի բանավեճ է մղվում այն հարցի շուրջ, թե արդյոք քաղաքացիական հասարակություն-քաղաքական հասարակություն այս անհավասարակշռությունը հետ շրջելի՞ է, թե՞ ոչ: Յանոշ Շիմոնն ուսումնասիրել է հանրային կարծիքի հետազոտման ժամանակ տրված որոշ հարցեր՝ 1985թ., 1989թ. և 1991թ.: Հայտնաբերված երկու փաստ հատկապես կարևոր թվացին: Առաջին. հարցման բոլոր տասներկու ոլորտների հարցերին պատասխանած քաղաքացիներն *ավելի շատ* էին պահանջում կառավարությունից 1991թ., քան 1985թ.: Երկրորդ. տպավորիչ աճողական միտումով քաղաքացիներն ավելի ու ավելի շատ էին ասում, որ եթե իրենց շահերը ոտնահարվեն, ապա իրենք «կարող են ինչ-որ բան անել այդ ուղղությամբ» տարածքային ու համերկրային մակարդակով:<sup>59</sup> Եթե լրատվամիջոցներն ազատ են, եթե մարդիկ ունեն կազմակերպվելու իրավունք, և եթե ընտրություններն արդար են, ապա ապագա ընտրությունները կարող են հնարավորություն ընձեռել բարելավելու քաղաքացիական հասարակության ներկայացվածությունը քաղաքական հասարակության ներսում:

Ավարտենք Հունգարիայի մասին մեր քննարկումը պետութենականության մասին մի քանի խոսքով: 1920թ. Տրիանոնի հաշտության պայմանագրով Հունգարիան դաժանորեն մասնատվեց: Այն կորցրեց իր նախկին տարածքի *երկու երրորդը*, բնակչության նախապատերազմյան ընդհանուր թվի *երեք հինգերորդը* և հունգարախոս բնակչության *մեկ երրորդը*:<sup>60</sup> Այն հունգարացիների խնդիրը, որոնք սպրում են ազգայնական կառա-

58. Տե՛ս, օրինակ՝ քննարկում այն մասին, թե ինչու էր սոցիալ-ժողովրդավարական ընտրազանգվածը թերներկայացված, Տամաշ Կոլոշի, Իվան Սելունի, Սոնյա Սելունի և Բրյուս Վեսթերն, «Քաղաքական դաշտերի ստեղծումը հետկոմունիստական անցման ժամանակ (դասակարգերի և կուսակցությունների դինամիկան հունգարական քաղաքականության մեջ, 1989-1990թթ.)» (Tamas Kolosi, Ivan Szelenyi, Szonja Szelenyi, and Bruce Western, "The Making of Political Fields in Post-Communist Transition (Dynamics of Class and Party in Hungarian Politics, 1989-1990)", Բոզոկիի, Կորոշենիի և Չոփֆլիի խմբ.՝ «Հետկոմունիստական անցում» (Bozoki, Korosenyi, and Schopflin, eds., *Post-Communist Transition*, 132-62):

59. Յանոշ Շիմոն, «Հետպատերազմական (չափազանցված հոգածություն) քաղաքական մշակույթը Հունգարիայում. հարաբերությունները քաղաքացիների և քաղաքականության մեջ «մելանխոլիկ հեղափոխության» ընթացքում և հետո (1989-1991թթ.)» (Janos Simon, "Post-paternalist Political Culture in Hungary: Relationships between Citizens and Politics during and after the 'Melancholic Revolution' (1989-1991)", *Communist and Post-Communist Studies* (June 1993): 226-38):

60. Ջոզեֆ Ռոտշիլդ, «Արևելակենտրոնական Եվրոպան երկու համաշխարհային պատերազմների

վարությունների ներքո Ռումինիայում, Սլովակիայում և սերբերի կողմից վերահսկվող Վոյվոդինայում, Հունգարիայի քաղաքականության մշտական հարցերից է: Ժողովրդավարների խնդիրը արտասահմանում ապրող հունգարացիների՝ մարդու իրավունքների պաշտպանությունն է: Որոշ աջ ազգայնականների համար դա «իռեդենտա»-ի հարց է, ինչպես գերմանացի ու ավստրիացի աջերի համար՝ միջպատերազմական տարիներին: 1990-1994թթ. իրական հավանականություն կար ժողովրդավարական կառավարության ապալեզիտիմացման համար, քանի որ այն չի «պաշտպանում» բոլոր հունգարացիներին, և համակարգի մեղադրման համար՝ հիմնված չվերամիավորված տարածքի խնդրի վրա: Իշխող կոալիցիայի ներսում 1990-94թթ. ամենաբուռն պայքարը մասամբ տեղի էր ունենում այս հարցի շուրջ: Փոխնախագահներից մեկը՝ Իշտվան Չուրկան, որը կոալիցիայի Հունգարիայի ժողովրդավարական ֆորում խոշոր կուսակցությունից էր, հրապարակեց մի ռասիստական մանիֆեստ:<sup>61</sup> Քաղաքականապես ավելի թույլ զարգացած միջավայրում կառավարությունը հավանաբար հետզհետե կդառնար ազգայնական ու կրնդուներ ոչ ժողովրդավարական կուրս:<sup>62</sup> Իսկապես, Հունգարիայի ժողովրդավարական ֆորումը խուսափողական դիրք գրավեց և հապաղեց արձագանքել Չուրկայի սադրանքին: Ի վերջո, հասարակական կարծիքի մասին հարցումների ժամանակ Հունգարիայի ժողովրդավարական ֆորումի մշտական ցածր գնահատականը, 1994թ. սպասվող ընտրությունները և «կոալիցիոն» լինելու ցանկությունը ստիպեցին իշխող կուսակցությանը հեռացնելու ռասիստական-ազգայնամոլական խմբակցության առաջնորդ Չուրկային:

Հունգարիայի սահմանների մոտ պատերազմ էր, քաղաքներում փախստականներն էին ապրում, և չկար համոզվածություն, որ հնարավոր կլինի բնակչության կենսամակարդակը պահպահել: Ընդ որում, Եվրոպական Միությունը ճնշում էր գործադրում Հունգարիայի վրա՝ հարևան պետությունների հետ փոքրամասնությունների մասին համաձայնագրեր ձեռք բերելու պահանջով: Այդ պայմաններում իռեդենտիստական ազգայնականությունը (որը կոչ է անում վերադարձնել պատմականորեն իր ազգին պատկանած, բայց այդ պահին օտար պետության հսկողության տակ գտնվող հողեր), որը կարող էր հրահրել ներքին և արտաքին հակամարտություններ, հազիվ թե ներկայացներ հաղթանակած ընտրական բանաձև Հունգարիայում: Ի դեպ, 1994թ. խորհրդարանական ընտրություններում երկու ծայրահեղ ազգայնական կուսակցությունները՝ Չուրկայի հունգարական «Ճշմարտություն և կյանք» կուսակցությունը և «Կանաչների» կուսակցությունը, համապատասխանաբար ստացան ձայների 1.6 և 0.7%-ը և խորհրդարան չհասան: Այդ

միջև» (Joseph Rothschild, *East Central Europe between the Two World Wars* (Seattle: University of Washington Press, 1974), 155):

61. Տե՛ս էդիթ Օլտայ, «Հունգարիայի ժողովրդավարական ֆորումը» (Edith Oltay, "Hungarian Democratic Forum Rent by Dispute over Extremists", RFE/RL Research Report 1, no. 47 (1992)): Ջորջ Սորոսն արդյունավետ կերպով վիճարկեց Չուրկայի հայտարարությունը և՛ Հունգարիայի ներսում, և՛ «Ելու Յորք թայմսի» «խմբագրի դիմաց» էջում:

62. Միայն Ռումինիան, որը շահարկել էր հունգարական վտանգի հարցը, երկրների ուսումնասիրության մեջ ավելի բարձր գնահատական է ստացել «հարևան երկրներից սպառնալիքի զգացման» գծով, ներկայացնում են Ռիչարդ Ռոուզը և Քրիստիան Հաերպֆերը, «Հարմարվելով փոխակերպմանը Արևելյան Եվրոպայում. նոր ժողովրդավարությունների բարոմետր II» (Richard Rose and Christian Haerpfer, "Adapting to Transformation in Eastern Europe: New Democracies Barometer—II", *Studies in Public Policy*, no. 212, (1993): table 19):



ձայները կազմում էին Ֆրանսիայում 1993թ. կամ Իտալիայում 1994թ. ծայրահեղ աջ-ազգայնական կուսակցությունների ստացած ձայների թվի մեկ հինգերորդից էլ պակաս մասը:<sup>63</sup>

Չնայած 1994թ. ընտրությունների արդյունքներին՝ սխալ կլինի կարծել, որ ազգայնականության ու պետութենականության հարցերը կանհետանան Հունգարիայի քաղաքական օրակարգից: Այս հարցերն, անկասկած, նորից կհայտնվեն ավելի ժամանակակից տեսքով և կարող են ազդել Հունգարիայում ժողովրդավարության որակի վրա, սակայն մեր դատողությամբ՝ դրանք հավանաբար չեն դադարեցնի ժողովրդավարության կայացումը: Հասուն հետամբողջատիրական, իսկ այժմ՝ ժողովրդավարական Հունգարիան բավական լավ է լուծել պետութենականության իր խնդիրը:

ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱ. ԱՆՑՈՒՄ «ՄԱՌԵՑՎԱԾ ՀԵՏԱՄԲՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ»  
ՏԱՊԱԼՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Ժամանակակից Չեխոսլովակիայի չեխական մասը՝ որպես Հաբսբուրգների կայսրության ավստրիական մասի բաղադրիչ, ուներ օրենքի ամենաուժեղ ավանդություններից մեկն Արևելյան Եվրոպայում: Չեխոսլովակիան՝ նախքան իր անջատումն ու նվաճումը Գերմանիայի կողմից Մյունխենի պայմանագրի հետևանքով, նաև Արևելյան Եվրոպայում միակ երկիրն էր, որն ունեցել էր անընդմեջ ժողովրդավարություն իր անկախությունից՝ 1918թ.-ից մինչև 1938թ.: Եվ վերջապես Չեխոսլովակիան ուներ ամենազարգացած արդյունաբերությունն ու ամենամեծ թվով լիարժեք գրագետ բնակչությունն Արևելյան Եվրոպայում:<sup>64</sup> Այս նախակոմունիստական ժառանգությունը և այն փաստը, որ Պրահան գտնվում է Վիեննայից արևմուտք և Բեռլինին՝ Եվրոպայի *դե ֆակտո* քաղաքական կենտրոնին մերձագույն կենտրոնավորակական մայրաքաղաքն է, նշանակում է, որ միատարր Չեխիայի Հանրապետությունը, չունենալով պետութենականության խնդիր, ունի բավական լավ հեռանկարներ՝ դառնալու Արևմտյան Եվրոպայի զարգացած ժողովրդավարական անդամ:

Սակայն Չեխոսլովակիան, ի սուր հակադրություն Հունգարիայի, չկարողացավ իրականացնել համաձայնեցված անցում: Տասն օր տևած հասարակական ցույցերից հետո վարչակարգը պարզապես տապալվեց: «Թավշյա հեղափոխությունից» ծնունդ առած ժամանակավոր կառավարությունն ուներ ուժեղ հակաքաղաքական միտումներ ու մերժեց համերկրային քաղաքական կուսակցությունների զարգացման հնարավորությունը:

63. Ֆրանսիայում Լը Պենի «Ազգային ճակատն» ստացավ ձայների 12.4%-ը խորհրդարանական ընտրությունների առաջին շրջանում 1993թ.: Իտալիայում նեոֆաշիստական «Ազգային դաշինքը», որը նախկինում հայտնի էր որպես Իտալիայի սոցիալական շարժում, ստացավ ուղղակի պատգամավորական ձայների 13.5%-ը Իտալիայի խորհրդարանական ընտրություններում 1994թ., ինչպես հաղորդում է *Kessings Record of World Events: 1993թ., 39381-82* և *1994թ., 39918-20*, համապատասխանաբար:

64. Միջպատերազմական Չեխոսլովակիայում օրենքի և ժողովրդավարության հիմնավորված համեմատական գնահատական, *տե՛ս* Ժակ Ռուպնիկ, «Մյուս Եվրոպան», (Jacques Rupnik, *The Other Europe* (London: Weidenthal and Nicolson, 1988), 3-23, esp. 13-18): Ընդհանուր արդյունաբերական համալիրի առումով Ավստրիոնգարական կայսրության Բոհեմական կամ Չեխերի Երկիր, մասն ավելի զարգացած էր, քան ավստրիական մասը:

Նույն ձևով ժամանակավոր կառավարության այնքան չէին հետաքրքրում որոշումների կայացման պաշտոնական կառույցները, որ նա ուշադրությունը չկենտրոնացրեց խորհրդային ոճի դաշնային ձևական սահմանադրությունը փոխելու վրա, մինչև որ բանակցությունները վերսկսելն ու դաշնությունը փրկելն արդեն չափազանց ուշ էր: Եվ վերջապես, Չեխոսլովակիայի ընտրված խորհրդարանն ընդունեց Արևելյան Եվրոպայում պետական գտման *էքս պոստ ֆակտո* օրենսդրության՝ բարոյական ու ժողովրդավարական տեսանկյունից ամենակասկածելի օրենքներից մեկը:<sup>65</sup> Հասկանալու համար, թե ինչու և ինչպես վերոհիշյալ իրադարձությունները տեղի ունեցան, կարևոր է վերլուծել Չեխոսլովակիայի սատեցված հետամբողջատիրական վարչակարգի ղեկավարների և ժողովրդավարական ընդդիմության որոշ կենտրոնական առանձնահատկություններ:

Նախ դիտարկենք իշխողներին: Արևելյան Եվրոպայում միջպատերազմյան տարիներին միայն կոմունիստական կուսակցությունն էր վայելում քաղաքական համակարգին մասնակցելու օրինական իրավունքը: Իսկապես, Չեխոսլովակիայում Սքիլլինգի ասելով՝ կուսակցությունը համարվում էր «ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի օրինական ժառանգորդ»:<sup>66</sup> 1941թ. հետո Չեխոսլովակիայի կոմունիստներն ջջակցեցին Խորհրդային Միությանը նացիստական նվաճման դեմ պայքարելու իր ջանքերում: Ե՛վ Խորհրդային Միությունը, և՛ կոմունիստական կուսակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմից դուրս եկան շատ ավելի նպաստավոր լույսի տակ Չեխոսլովակիայում, քան Լեհաստանում: Ի դեպ, հետպատերազմյան ժամանակահատվածում առաջին ազատ խորհրդարանական ընտրությունների ժամանակ կոմունիստները ստացան 38% ձայների պարզ մեծամասնությամբ:<sup>67</sup> Կոմունիստական կուսակցությունն, այսպիսով, Չեխոսլովակիայում ուներ առաջընթացի ամուր հիմք:

65. Հունգարիայի հետ համեմատությունը «Արևելաեվրոպական սահմանադրական ռեվյուի» տիտղոսաթերթի վրա է, *East European Constitutional Review* (1992թ. գարուն), «Հետադիմական արդարադատություն Չեխոսլովակիայում», "Backward-looking Justice in Czechoslovakia" և «Առաջդիմական արդարադատություն Հունգարիայում», "Forward-looking Justice in Hungary": Չեխոսլովակիայում իրականացվող արշավը կոչվում է շարքերի մաքրում, դրա լատինական արմատներն ընկած են «մաքրագործող» գոհաբերության հիմքում: Օրենքը քննադատվել է միջազգային իրավական և մարդու իրավունքների պաշտպանության խմբերի մեծ մասի կողմից: Համագործակցողների ցուցակների կազմման համար խոշոր աղբյուր դարձավ Ներքին գործերի նախարարության՝ այն բնակիչների վերաբերյալ ունեցած գործերը, ում նրանք համագործակցության առաջարկ էին արել: Եթե որևէ մեկի անունը հայտնվում էր ցուցակներում, ապա նրա մեղավորությունը գրեթե հաստատված էր համարվում: Բողոքարկելու իրավունք ունեին միայն համագործակցության ստորին աստիճանի մեջ մեղադրվողները: Բարձրագույն ղեկավար օղակի կոմունիստական պաշտոնյաներն ունեին շատ քիչ բողոքարկման իրավունք: *Տե՛ս* Վոյցեխ Ցեպլ, «Օրհակարգային գոհաբերություններ» (Vojtech Cepl, "Ritual Sacrifices", *East European Constitutional Review* (Spring 1992): 24-26): Մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից խիստ քննադատություն, *տե՛ս* Հելսինկիի դիտորդական հանձնաժողովի գործադիր տնօրեն Ջերրի Լաբերի (Jeri Laber) հոդվածը, *New York Review of Books*, April 23, 1992: Չեխոսլովակիայի հատկապես կասկածելի գտման ընթացակարգերի համեմատական վերլուծություն, *տե՛ս* Հերման Շվարց, «Շարքերի մաքրումներն Արևելյան Եվրոպայում» (Herman Schwartz, "Lustration in Eastern Europe", *Parker School journal of East European Law* 1, no. 2 (1994): 141-71):

66. *Տե՛ս* Գորդոն Սքիլլինգ, «Չեխոսլովակիայի ընդհատված հեղափոխությունը» (H. Gordon Skilling, *Czechoslovakia's Interrupted Revolution* (Princeton: Princeton University Press, 1976), 3-10):

67. Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո չէի կոմունիստների համեմատական ուժի մասին, *տե՛ս* Ռոտշիլդ, «Վերադարձ բազմազանությանը» (Rothschild, *Return to Diversity*, 89-97), և Յան

1948թ. կոմունիստական հեղաշրջումից հետո չեխոսլովակները ենթարկվեցին էքստենսիվ ճնշումների, որոնք «երկիրը դարձրել էին ժողովրդակրատիայի բոլոր հանրապետություններից, հնարավոր է, ամենաստպիկանը»: Այս դոգմատիկ չեխոսլովակյան ստալինիզմը մնաց անսասան Ստալինի մահվանից հետո: Անգամ 1957թ. կուսակցության առաջնորդն *ապաստալինականացում* բառը քննադատում էր որպես «թուլության և ռեակցիոն ուժերին տեղի տալու» հոմանիշի:<sup>68</sup> Պատմականորեն ինչ-որ չափով թույլ (հատկապես՝ չեխական հողերում) կաթոլիկ եկեղեցին ենթարկվում էր ավելի տևական ու ազդեցիկ ճնշման, քան Արևելյան Եվրոպայի որևէ այլ երկրում:<sup>69</sup>

Մոսկվայի նախնական հավանությամբ սլովակ առաջնորդներից մեկը՝ Ալեքսանդր Դուբչեկը, 1968թ. սկսեց բարեփոխումների՝ կուսակցության կողմից ղեկավարվող գոլշավոր ջանքեր, որոնք արագորեն վերածվեցին խաղաղ ու դեռևս կուսակցության կողմից ղեկավարվող «Պրահայի գարնան»: Սակայն խորհրդային տանկերը, որոնք առաջնորդում էին Վարշավյան դաշինքի որոշ երկրների զինված ուժերից կազմված զորքերին, ջախջախեցին «Պրահայի գարունը» և սկիզբ դրեցին Բրեժնևյան դոկտրինի դարաշրջանին:<sup>70</sup> 1969թ.-ից մինչև 1989թ. Չեխոսլովակիայի խոշոր առաջնորդն էր, նախ՝ կուսակցության գլխավոր քարտուղար, իսկ ավելի ուշ՝ նախագահ Գուստավ Հուսակը: Նա շատ ավելի պակաս ճկուն ու փոխհամաձայնության գնացող առաջնորդ էր, քան Կադարը Հունգարիայում: Իսկապես, «Պրահայի գարնան» հետևանքները հանգեցրեցին կոմունիստական կուսակցության անդամների՝ պատմության մեջ հավանաբար ամենախոշոր գոմանը: Գուսակցականների մոտավորապես մեկ երրորդը կուսակցությունից դուրս եկավ կամ գոման ենթարկվեց: Բարեփոխական ուղղվածություն ունեցող կոմունիստները, եթե նույնիսկ մնացին կուսակցության մեջ, ապա ի հակադրություն Հունգարիայի բարեփոխիչներին, լուր էին ու թվով չափազանց քիչ:<sup>71</sup>

Ուրբան, «Ուժի և անարգանքի քաղաքականությունը» (Jan Urban, "The Politics of Power and Humiliation"), Թիմ Ուիփլը խմբ.՝ «Թավշյա հեղափոխությունից» հետո. անկեղծանում են Վացլավ Հավելն ու Չեխոսլովակիայի նոր առաջնորդները» (Tim D. Whipple, ed., *After the Velvet Revolution: Vaclav Havel and the New Leaders of Czechoslovakia Speak Out* (New York: Freedom House, 1991), esp. 269-70):

68. Վերը բերված երկու մեջբերումները՝ Ռոտշիլդ, «Վերադարձ բազմազանությանը», "Return to Diversity", էջ 166:

69. Վարչակարգի համապարփակ հինգամսանի ռազմավարությունը՝ հսկողության տակ պահելու կաթոլիկ եկեղեցին և եկեղեցու թեթևակի վերականգնումը 1986թ. հետո, *տե՛ս* Սարրինա Պետրա Ռամետ, «Կաթոլիկ եկեղեցին Չեխոսլովակիայում 1948-1991թթ.» (Sabrina Petra Ramet, "The Catholic Church in Czechoslovakia, 1948-1991", *Studies in Comparative Communism* (Dec. 1991):377-93): Տասը երկրների ուսումնասիրության մեջ 1993թ. Չեխերի Երկրում գրանցվել է պատասխանողների երկրորդ բարձրագույն տոկոսը, ովքեր «երբեք» կամ «հազվադեպ» են գնում եկեղեցի (68%): Սա կտրուկ կերպով տարբերվում է Լեհաստանից, որի համեմատական ցուցանիշը 16% էր: *Տե՛ս* Ռոուզ և Հաերպֆեր, «Հարմարվելով փոխակերպման Արևելյան Եվրոպայում» (Rose and Haerpfer, "Adapting to Transformation in Eastern Europe", table 35): Նույն հետազոտության մեջ գրեթե երկու գործակցով Չեխիայի Հանրապետությունն ունի ոչ հավատացյալների ամենաբարձր տոկոսը (47%): Լեհաստանն ու Ռումինիան ունեն ոչ հավատացյալների ամենացածր տոկոսը (2%): Նույն տեղում, Ադրյուսակ 34:

70. Դասական գիրք «Պրահայի գարնան» մասին, Սքիլլինգ, «Չեխոսլովակիայի ընդհատված հեղափոխությունը» ("Czechoslovakia's Interrupted Revolution"):

71. «Թավշյա հեղափոխության» ժամանակ «Քաղաքացիական ֆորումի» առաջնորդներից մեկը Յան Ուրբանն է: Նրա հայրը ժամանակին եղել է կոմունիստական կուսակցության կենտկոմի բարձրաստիճան անդամ: Ուրբանը գրում է, որ խորհրդային ներխուժումից հետո «կուսակցության գրե-

Դարձյալ, ի սուր հակադրություն Հունգարիայի, կուսակցական պետությունը հարում էր տնտեսական ավանդապահությանը: Նախասանցումային Չեխոսլովակիայում երբեք փորձ չարվեց կատարելու որևէ շուկայական կամ այլ բարեփոխում: Հետևաբար, այն շատ քիչ բան վերցրեց Արևմուտքից, ուստի ենթակա չէր պարտքի դիմաց տնտեսական ու քաղաքական բարեփոխումներին ուղղված ճնշումներին, որոնց ենթարկվեցին Լեհաստանն ու Հունգարիան:<sup>72</sup> 1968թ. հետո համալսարանական կյանքը Չեխոսլովակիայում, հատկապես՝ հասարակական գիտությունների բնագավառում, գրեթե չունեցավ աշխուժության, գերազանցության ու ակտիվության այն օջախները, որոնք սովորաբար կարելի էր գտնել Լեհաստանում, Հունգարիայում կամ Սլովենիայում: Չունենալով զարգացած ժողովրդավարությունում քաղաքացիություն ձեռք բերելու հնարավորություն, որը հասանելի էր բոլոր արևելագերմանացիներին Արևմտյան Գերմանիայում, զանգվածային արտաքսման տարբերակը, որպես վարչակարգի քայքայման գործոն, նույնպես առկա չէր:<sup>73</sup> Հուսակի կողմից բրեժնևյան դոկտրինի անվերապահ ընդունումը և կուսակցության ներսում բարեփոխումների բացակայությունը Չեխոսլովակիայի կուսակցությանը դրդեցին դիմադրել Գորբաչովի մտածելակերպին:

Ոլորտը, որտեղ վարչակարգն ամենից հեռու էր ամբողջատիրական կատարելատիպից, բազմակարծության աստիճանն էր՝ հատկապես քաղաքացիական հասարակության կողմից այլախոհության որոշ դրսևորումները: Խորհրդային Միությունն ու, այսպիսով, անգամ Չեխոսլովակիան ստորագրեցին Հելսինկիի վերջնական ակտը 1975թ.՝ որպես Անվտանգության ու համագործակցության համաժողովի երեսունհինգ անդամ-երկրներից մեկը: Հելսինկիի համաձայնագրի բոլոր ստորագրողները համաձայնություն տվեցին մարդու իրավունքների միջազգային մոնիտորինգին: Չեխոսլովակիայի միանալը Հելսինկիի համաձայնագրին կազմակերպական հնարավորություններ բացեց Չեխոսլովակիայում մարդու իրավունքների ակտիվիստների համար:<sup>74</sup> Այնպիսի խմբերն, ինչպիսիք էին՝ «Խարտիա-77»-ը և «Անարդար կերպով հետապնդման ենթարկվածների պաշտպանության կոմիտեն», չնայած կանոնավորապես բանտարկվելուն, շարունակեցին քիչ թե շատ հետևողականորեն գործել 1977-78թթ., մինչև «թավշյա հեղափոխությունը»:<sup>75</sup> Ի տարբերություն Հունգարիայի՝ հետամբողջատիրությունը դրական զարգացում չսպրեց դեպի

թե կես միլիոն անդամներ գտնան ենթարկվեցին, և մոտ 800000-ը կորցրեցին իրենց աշխատանքը: Այդ օրվանից ՉԿԿ-ն (Չեխոսլովակիայի կոմունիստական կուսակցությունը) իրեն հաստատեց որպես հասարակության ներսում ազգայնական ու մարդասիրական ուժերին ընդդիմադիր... Այս կուսակցությունն այլևս չէր կարող բարեփոխվել: Հենց այդ պատճառով էլ նա մարդկանց կարող էր կառավարել միայն կոռուպցիայի և վախի միջոցով: «Բարեփոխում» բառը դարձավ հայիոյանք»: *Տե՛ս* Ուրբան, «Ուժի և անարգանքի քաղաքականությունը» (Urban, "Politics of Power and Humiliation", 276):

72. Կորնայի, «Սոցիալիստական համակարգը» (Kornai, *The Socialist System*, 427):

73. Ալբերտ Հիրշման (Albert O. Hirschman), (*Exit, Voice, and the Fate of the German Democratic Republic: An Essay in Conceptual History*), World Politics 45, no. 2 (1993): 173–202):

74. Արևելյան Եվրոպայում ժողովրդավարացման համար Հելսինկիի մարդու իրավունքների համաձայնագրի կարևորության մասին, *տե՛ս* Սեմյուել Հանթինգտոն, «Երրորդ ալիքը. ժողովրդավարացումը քսաներորդ դարի վերջին» (Samuel P. Huntington, *The Third Wave: Democratization in the Late Twentieth Century* (Norman: University of Oklahoma Press, 1991), 89-94):

75. Այս անկախ խմբերի կարևոր թվարկում, *տե՛ս* «Հելսինկիի դիտորդի» զեկույցը «Դեպի քաղաքացիական հասարակություն. անկախ նախաձեռնությունները Չեխոսլովակիայում» (The Helsinki Watch report, *Toward Civil Society: Independent Initiatives in Czechoslovakia* (New York: Helsinki Watch, 1989)):

որևէ ոչ բնորոշ փոփոխություն, սակայն լուր համաձայնության դիմաց վարչակարգն արեց խանդավառության համախմբման մի քանի փորձ:

Քանի որ նախ դիտարկեցինք ավտորիտար Լեհաստանն ու հասուն հետամբողջատիրական Հունգարիան, մինչև այժմ մենք իսկապես չենք նկարագրել հետամբողջատիրական մշակութային կյանքի բնույթն ու մթնոլորտը, թեև Գլուխ 3-ում քննարկել էինք բնորոշ հետամբողջատիրական նահանջը քաղաքականությունից ու գաղափարախոսության սնամեջ դառնալը: Հաջորդ մի քանի էջերում, ուստի, մանրամասն մեջբերումներ կանենք երկու պերճախոս հեղինակներից՝ Վացլավ Հավելից և Թիմըթի Գարտոն Աշից, որոնցում քննարկվում է, թե ինչ էր նշանակում «ստի մեջ ապրելը» սառեցված հետամբողջատիրության ներքո՝ կ'վարչակարգի շրջանակների, և՛ քաղաքական ընդդիմության կազմակերպչական շրջանակների առումով:<sup>76</sup> Մենք ասում ենք *սառեցված*՝ շեշտելու համար այն հասկացությունը, որ վարչակարգը ո՛չ գտնվում էր հետամբողջատիրության վաղ շրջանում (ինչպես Բուլղարիան 1989թ. բազմակարծության առումով), ո՛չ էլ զարգացում էր ապրում հասուն հետամբողջատիրությունից դեպի հնարավոր ոչ բնորոշ փոփոխություն (ինչպես Հունգարիան 1980-ական թվականների վերջին): Չեխոսլովակիան 1968թ.-ից մինչև 1989թ. քարացած, քայքայված, իսկ որոշ փոքր բնագավառներում՝ հասարակական պայքարի արդյունքում ձևավորված հետամբողջատիրական դարձած վարչակարգ էր:

Հետամբողջատիրական Չեխոսլովակիայում առավել նշանակալի այլախոհական խումբը «Խարտիա-77»-ն էր, որի անդամները թեև միանգամայն խաղաղասեր էին, բայց հաճախ բանտ էին նետվում:<sup>77</sup> Խարտիայի հիմնադիր անդամներից մեկը՝ դրամատուրգ Վացլավ Հավելը, գրում էր այն անկախ մտածողների «գուգահեռ մշակույթի» մասին, ովքեր փորձում էին «ճշմարտության մեջ» ապրել: Տասը միլիոն լեհեր 1981թ. գրանցվել էին օրենքով ճանաչված անկախ արհմիությունում: Դեռևս Գորբաչովի իշխանության գալու նախորդ տարում՝ 1984թ.-ին, Հավելը գրում է «տարբեր պայմաններում ապրող բոլոր տեսակի այն հարյուրավոր, գուցե հազարավոր մարդկանց՝ երիտասարդների, տարեցների, տաղանդավորների, անտաղանդների, հավատացյալների, ոչ հավատացյալների մասին, որոնք հավաքվել էին «գուգահեռ մշակույթի» հովանու ներքո և դրան էին գնացել բացառապես գործնականում ոչինչ չհանդուրժող վարչակարգի աներևակայելի նեղմտության պատճառով ...»:<sup>78</sup>

Օքսֆորդի համալսարանի պատմաբան Թիմըթի Գարտոն Աշը, նույնպես 1984թ.-ին, մանրամասն նկարագրում է Չեխոսլովակիայի սառեցված հետամբողջատիրության հարթությունը: Այն ժամանակ, երբ ամբողջատիրական վարչակարգն ինտենսիվ ջանք էր գործադրում «խանդավառություն համախմբելու», Գարտոն Աշը, կրկնելով չէիս մեծ գրող

76. Ոչինչ ավելի լավ չի հաղորդի սառեցված ամբողջատիրության իմաստը, քան Վացլավ Հավելի և Թիմըթի Գարտոն Աշի գրվածքները, որոնց մենք հղում կանենք: Մենք այժմ հասկանում ենք, որ մեր «սառեցված» բառը Գարտոն Աշի ակնարկներից մեկի արձագանքն է՝ «Չեխոսլովակիան սառուցի տակ» (*"Czechoslovakia under the Ice"*):

77. «Խարտիա-77»-ի վաղ պատմության գերազանց քննարկում, *տե՛ս* Գորդոն Սքիլինգ, «Խարտիա-77»-ը և մարդու իրավունքները Չեխոսլովակիայում» (H. Gordon Skilling, *Charter 77 and Human Rights in Czechoslovakia* (London: George Allen and Unwin, 1981)):

78. Վացլավ Հավել, «Վեց «մեկուսի» մշակույթի մասին» (Vaclav Havel, *"Six Asides about Culture"* (1984)), Յան Վլադիսլավի խմբ.՝ «Վացլավ Հավել. ապրել ճշմարտության մեջ» (Jan Vladislav, ed., *Vaclav Havel: Living in Truth* (London: Faber and Faber, 1986), 128):

Միլան Կունդերային, Հուսակին անվանում է «մոռացման նախագահը»: «Մոռանալը Չեխոսլովակիայի այսպես կոչված նորմալացման բանալին մնաց: Ըստ էության, վարչակարգը ժողովրդին ասել է՝ մոռացե՛ք 1968թ.: Մոռացե՛ք ձեր ժողովրդավարական ավանդույթները: Մոռացե՛ք, որ դուք մի ժամանակ եղել եք իրավունքներ ու պարտականություններ ունեցող քաղաքացիներ: Մոռացե՛ք քաղաքականությունը: Դրա փոխարեն մենք ձեզ տալիս ենք հարմարավետ կյանք... Ձեզանից չենք պահանջում հավատալ մեզ կամ մեր անիմաստ գաղափարախոսությանը: Մեր ողջ պահանջն այն է, որ դուք արտաքուստ և հասարակայնորեն հարմարվեք»:<sup>79</sup>

Ղեկավարությունը, հեռու խարիզմատիկ առաջնորդ կամ փոփոխություններին հակված ամբողջատիրական կատարելատիպի կուսակցական ակտիվիստներ ունենալուց, բաղկացած էր գուտ կարիերիստ հետամբողջատիրականներից: Գարտոն Աշը գրում է. «Կուսակցությունը ինքնաառաջխաղացման միությունից քիչ բանով է ավելի... Երկրի քաղաքականությունը սառեցվել է, անշարժացվել. տասնհինգ տարվա ձմեռ Պրահայի մեկ գարունից հետո... Բարեփոխումների ոչ մի ազդակ չի գալիս գտված, ահաբեկված ու կոռումպացված ապարատից: Ավելի երիտասարդ կուսակցական առաջնորդներն անհավատալիորեն քննադատական են, սակայն ցինիկ ու գաղտնի, մինչդեռ չեխերի մեծ մասն ընդհանրապես կուսակցությունից ոչինչ չի ակնկալում... Ես երբեք չեմ եղել մի երկրում, որտեղ քաղաքականությունը և, անշուշտ, հասարակական կյանքը լինեն այդ չափի անտարբերության ենթարկված առարկա»:<sup>80</sup>

Հավելը նկարագրում է իրական քաղաքական բազմակարծության բացակայությունը և անդամակցության ոչ իսկությունն ու տաղտկալիությունը մի գործում, որը ժամանակին եղել է համախմբման կուսակցական կազմակերպում: «Հետամբողջատիրական համակարգի ներքո գտնվող հասարակություններում ողջ քաղաքական կյանքն իր ավանդական իմաստով վերացվել է... Դրա հետևանքով առաջացած ճեղքը լցված է գաղափարախոսական ծիսականությամբ: Նման իրավիճակում քաղաքական հարցերում մարդկանց հետաքրքրվածությունը, բնականաբար, նվազում է... Անհատները կարիք չունեն հավատալու ողջ միատիֆիկացմանը, սակայն պետք է իրենց պահեն այնպես, կարծես թե հավատում են... նրանք պետք է ապրեն ստի մեջ»:<sup>81</sup>

Դոկտոր Գուստավ Հուսակին ուղղված իր հայտնի նամակում Հավելը բարձրացնում է հետամբողջատիրության գրեթե բոլոր թեմաները, որոնք մենք քննարկեցինք Գլուխ 3-ում, նա խոսում է «ինքնատարման», «երկերեսանիության սկզբունքի», «քաղաքական ապարտեիդի», «հասարակական գործունեության ոլորտից փախուստի մասին, որն իշխանությունները ողջունում են»:<sup>82</sup> Հավելի փայփայած հույսն այն է, որ կարող է զարգանալ գու-

79. Թիմոթի Գարտոն Աշ, «Չեխոսլովակիան սառույցի տակ» (Timothy Garton Ash, "Czechoslovakia under the Ice"), «Չախորդությունների օգուտները. ակնարկներ կենտրոնական Եվրոպայի ճակատագրի մասին» (*The Uses of Adversity: Essays on the Fate of Central Europe* (New York: Random House, 1989), 62): Շեշտը բնագրում:

80. Նույն տեղում, էջ 63:

81. Վացլավ Հավել և ուրիշներ, «Անգորների զորությունը. քաղաքացիներն ընդդեմ պետության Արևելակենտրոնական Եվրոպայում» (Vaclav Havel et al., *The Power of the Powerless: Citizens against the State in Central-Eastern Europe* (Armark, N.Y.: M.E. Sharpe, 1985)):

82. Հավել, «Նամակ դոկտոր Գուստավ Հուսակին» (Havel, "Letter to Dr. Gustav Husak"), Վլադիսլավի «Վացլավ Հավել. ապրել ճշմարտության մեջ» (Vladislav, *Vaclav Havel: Living in Truth*, 3-35):

գահեռ մշակույթը, որովհետև այն անխուսափելիորեն պետք է լինի հետամբողջատիրական կուսակցական պետության «առաջին մշակույթի» հետ մշտական լարվածության մեջ: Նա նաև երագում է այն հեռանկարը, որ «բլոկի կենտրոնում ուժային տեղաշարժերը կարող են ազդել պայմանների վրա»:<sup>83</sup>

Գրելով 1984թ.՝ Թիմրթի Գարտոն Աշը գիտեր, որ լեհական «ինքնակազմակերպվող» հասարակություն Չեխոսլովակիայում չի կարող զարգանալ, սակայն Հավելի պես նա հույս էր տածում դրսից նախաձեռնված փոփոխությունների նկատմամբ:

Իհարկե, չարտիստականները տեսնում են, որ չեխական «Համերաշխությունն» այնքան է հնարավոր, որքան սառույցի տակ կրակը: Մակայն նրանք տեսնում են նաև, որ սամիզդատ հակամշակույթի զարգացումը և մասնավոր կարծիքի աճող օտարացումը՝ զուգակցված տնտեսական ու քաղաքական լճացման հետ, սկսել են սառույցը գոնե տակից փափկացնել: Եթե երբևէ իսկական հալոցք լինի, ապա վերևից: Մոսկվայում փոփոխությունից հետո՝ ... Նրանք գիտեն 1968թ. իրենց սեփական փորձից ... որ փռփռացված, անտարբեր ու կոտրված թվացող մի հասարակություն որքան հանկարծակի կարող է փոխակերպվել-դառնալ իր մտքերը հստակորեն ձևակերպող, միավորված քաղաքացիական հասարակություն: Թե ինչպես մասնավոր կարծիքը կարող է դառնալ հասարակական կարծիք: Թե ինչպես ազգը կարող է նորից ոտքի կանգնել: Եվ սրա համար նրանք աշխատում ու սպասում են սառույցի տակ:<sup>84</sup>

Այժմ վերադառնանք այլախոհներին: Ինչպե՞ս էին նրանք ապրում սառույցի տակ: Բացի «Խարտիա-77»-ից, 1988 և 1989թթ. մի շարք խմբեր ծագեցին, սակայն դրանցից ոչ մեկը չի կարող համարվել կազմակերպված քաղաքական ընդդիմություն: Դրանք բողոքի խմբեր էին քաղաքացիական հասարակության մեջ: Համեմատած Լեհաստանի հետ՝ դրանք, իհարկե, բնակչության մի աննշան մասն էին միայն: Համեմատած սոցիալական շարժումների հետ Հունգարիայում, որոնք վերածվեցին քաղաքական կուսակցությունների արդեն 1988թ. վերջին, դրանք փոքր էին, չկազմակերպված ու հակաքաղաքական: Յան Ուրբանը՝ «Խարտիա-77»-ի առաջատար այլախոհներից մեկը, Սլովակիայի անջատման նախօրեին գրված մի ինքնաբնանադատական հոդվածում նկատում է, որ

1989թ. ամռանը մենք ստացանք կուսակցական քարոզիչների համար մի գաղտնի փաստաթուղթ՝ հիմնված մի վերլուծության վրա, որը "StB"-ն [«Ստատնի բեգոպասնոստ»] (չեխոսլովակյան գաղտնի ոստիկանությունը) պատրաստել էր քաղբյուրոյի համար: Այդ փաստաթղթում "StB"-ի հաշվարկով «հակասոցիալիստական ընդդիմության խմբերի» անգիջողականների կորիզը բաղկացած էր մոտ վաթսուս մարդուց, մի հինգ հարյուր աջակցողներով ու համագործակցողներով: Նրանց հաշվարկը ճիշտ էր: Եվ այն ճիշտ էլ մնաց... Մենք հավատում էինք վարչակարգի անպարտելիությանը, մինչև այն ինքն իրեն փլուզվեց: Մենք չգիտեինք, թե ինչպես ինքներս մեզ կազմակերպենք՝ ձևավորելու քաղաքական ընդդիմություն... Մենք չգիտեինք այն ոչ հասարակությունը, որի հետ հաշտվել էինք: Այն ամենը, ինչ գիտեինք, մեր թշնամին էր,

83. Վացլավ Հավել, «Անգործների գորությունը» (Vaclav Havel, "The Power of the Powerless"), Վլադիսլավի «Վացլավ Հավել. ապրել ճշմարտության մեջ» (Vladislav, Vaclav Havel: Living in Truth, 105):

84. Աշ, «Չեխոսլովակիան սառույցի տակ» (Ash, "Czechoslovakia under the Ice", 70):

և նա՝ այդ չար սրիկան, հանկարծ փախավ: Առանց նրա մենք մնացինք միայնակ մի անծանոթ փոշիացված ոչ հասարակության հետ և դրա վրա ունեցած իշխանությամբ: Եթե կոմունիստները կարողանային բանակցել ավելի երկար ժամանակ կամ եթե փորձեին դիմադրել, ապա նոր իշխանական վերնախավը գոնե ինչ-որ բան կտվորեր այն մասին, թե ինչպես է պետք կազմակերպել քաղաքական աջակցությունը, և որքան կարևոր է այն ինստիտուցիոնալացնելը... Կուրացած իշխանությունը վերցնելու հեշտությամբ՝ մենք չմտածեցինք դրա բնույթի ու ինստիտուտների մասին... Փոփոխությունից առաջ որպես քաղաքական արարածներ մեր իսկ գոյության հակաքաղաքական ձևի պատճառով, մենք դատապարտված էինք պարտության, քանի դեռ ինքներս չենք փոխվել-դարձել քաղաքական գործիչներ: Արդեն այսօր գիտենք, որ ձախողվել ենք:<sup>85</sup>

Այս մեջբերումները որոշ պատկերացում են տալիս այն մասին, թե ինչու, ինչպես մենք հիմնավորեցինք Գլուխ 3-ում, ստեղծված հետամբողջատիրական վարչակարգը մի այնպիսի վարչակարգ է, որտեղ *փլուզումն է և ոչ թե՛* բանակցությունը, ավելի հնարավոր անցման ուղի, և ինչու ընդդիմությունը, զարմացած իր անսպասելի հաջողությունից, որպես կանոն զարգացրած չի լինում հստակ քաղաքական մոտեցում:

Արդեն բավական բան ասացինք, որը մեզ թույլ կտա վերլուծել այն, թե ինչու Չեխոսլովակիան, ի տարբերություն Հունգարիայի, չունեցավ *դաշնությունահենք բարեփոխում-դաշնությունահենք բաժանում /խզում, ապահարգան/*: Հասուն հետամբողջատիրական Հունգարիան բավարարում էր նման դաշինքի համար երկու անհրաժեշտ (և չորս նպաստող) պայմաններին: Ստեղծված հետամբողջատիրական Չեխոսլովակիան ոչ մի պահանջի չէր բավարարում: Հատկապես, չեխոսլովակյան անգիջում վարչակարգը կուսակցական պետությունում տեղ չէր տալիս ռեֆորմիստական չափավորներին: Նույն ձևով և ընդդիմությունը, ունենալով մեծ բարոյական ներկայություն, չունեի վարչակարգի հետ բանակցելու կարողություն և անշուշտ ինստիտուցիոնալապես կազմակերպված չէր՝ վարելու ռազմավարական ու մարտավարական բանակցություններ:

Հետամբողջատիրականների միջև համեմատության մի երկրորդ հարթություն վերաբերում է Չեխոսլովակիայի ու Բուլղարիայի միջև տարբերություններին: Ինչո՞ւ չեխոսլովակյան վարչակարգը *փլուզվեց* (ինչպես Ուրբանից վերը բերված մեջբերումն է ցույց տալիս), մինչդեռ, ինչպես ցույց կտանք, բուլղարական վարչակարգը հարմարվելու, ճնշման ու բանակցային բարդ գործընթացի միջոցով ի վիճակի եղավ *կառավարելու* անցումը: Մեզ համար վերևի նախադասության մեջ գլխավոր բառը *փլուզումն է*:

Վարչակարգի փլուզումը մի երևույթ է, որը մեր կարծիքով՝ պահանջում է շատ ավելի շատ հասկացութենական ու էմպիրիկ աշխատանք: Փլուզումը կարող է հակադիր համեմատվել և՛ տապալման, և՛ բանակցությունների միջոցով անցման նկատմամբ: Փլուզումը տարբերվում է վարչակարգի տապալումից նրանով, որ փլուզման ժամանակ տեղի չի ունենում հարձակում իշխանության նստավայրերի և հեռուստակայանի վրա, կառավարական շենքերի, բանակի բազաների կամ հաղորդակցության ցանցերի գրավում ապստամբած զինվորականության կամ հեղափոխական ակտիվիստների ու զանգվածների

85. Յան Ուրբան, «Զորեղների անգործությունը» (Jan Urban, "The Powerlessness of the Powerful" (Prague, Nov. 1992, unpublished manuscript), 22), շեշտն ավելացված է:



կողմից: Տեղի չի ունենում վարչակարգի ղեկավարների ձերբակալություն, հրաձգություն կամ անմիջական փախուստի փորձ՝ փրկվելու իրենց հակառակորդներից, ովքեր իրենց ձեռքն են վերցնում իշխանությունը՝ հռչակելով ժամանակավոր կառավարություն, ազգային փրկության խունտա կամ զինվորական խունտա: Հետևաբար, տեղի չի ունենում բռնություն:

Վարչակարգի փլուզումը տարբերվում է նաև համաձայնեցված բարեփոխումների ու անցման մեր մոդելից նրանով, որ պաշտոնավարողները չեն կարող բանակցությունների մեջ մտնել այն պայմանների շուրջ, որոնց պարագայում իրենք կհետանան իշխանությունից: Նրանք չեն կարող պարտադրել անցումը կառավարող կանոններ, զգալիորեն հետաձգել գործընթացը կամ իրականացնել ապագայի որոշ վերահսկողություն: Նրանք դա անել չեն կարող, որովհետև կարծում են, որ եթե իրենք փորձեն պահել իշխանությունը մինչև ընտրությունները, ապա պատճառ կդառնան համաժողովրդական զայրույթի արտահայտման կամ հեղաշրջման: Պաշտոնավարողներն այլևս չեն հավատում, որ կարող են հույս դնել իրենց ջանքերի ճնշման ապարատի վրա: Ավելացնենք, որ ժողովրդավարական ընդդիմությունը չունի անցման պայմանների շուրջ բանակցելու ոչ մի պատճառ, որովհետև համոզված է, որ ունի համեմատաբար գերակշռող ուժ: Փլուզումն արդյունք է վերնախավերի անձկունության, քարացածության ու արձագանքելու կարողության կորստի, որը նրանց թույլ չի տալիս ժամանակին ընդունել սպասվող ճգնաժամերն ու փոփոխությունը կանխատեսող որոշումներ:<sup>86</sup> Ընդդիմության պահանջներից մեկ քայլ առաջ լինելու փոխարեն վարչակարգն ստիպված է արձագանքել «ոտքի վրա», ինչպես ԳԴՀ-ի ղեկավարությունը, կամ հանպատրաստից, ինչպես Չեխոսլովակիայինը: Երկու դեպքում էլ պաշտոնավարողներն ունեցան իշխանության այնքան կորուստ, որ անցման լավագույն նկարագրական արտահայտությունը «վարչակարգի փլուզումն» է:

Մեր վարկածը, հետևաբար, այն է, որ վարչակարգերը փլուզվում են ոչ այնքան շնորհիվ արտաքին ուժերի, որքան այն պատճառով, որ երբ վարչակարգը դժվարությունների հետ է բախվում, տեղի են ունենում բազմաթիվ և գրեթե միաժամանակյա խափանումներ պետության ներսում, հատկապես՝ ճնշիչ ապարատի միջին օղակներում:<sup>87</sup> Փլուզման այսպիսի երևույթը բացատրելու համար չափազանց մեծ նշանակություն ունի լեզիտիմության հասկացությունը: Հասարակարգում լեզիտիմությունը կարող է լինել միլիոնավոր մարդկանց՝ ինչ-որ բանի հավատալու հարց: Սակայն ճնշիչ ապարատի աշխատողների մեջ դժվարությունների վաղ փուլում լեզիտիմությունը հաճախ կախված է լինում

86. Վարչակարգի փոփոխության համար ճիշտ ժամանակի ընտրության կարևորության մասին, տե՛ս Խուան Լինզ (Juan Linz), "Il fattore tempo nei mutamenti di regime", *Teoria Politica* 2, no. 1 (1986): 3-47:

87. Կարծում ենք, որ արա առավել հայտնի երկու օրինակները Չեխոսլովակիան ու Արևելյան Գերմանիան են: Բարեբախտաբար, Յեյլի համալսարանից Դեյվիդ Ֆրիդմանը (David Y. Friedman) գրում է մի թեզ Արևելյան Գերմանիայի անկման մասին, որը խոստանում է լինել կարևոր ներդրում: Նրա նախնական հայտնաբերումների մասին գրվել է «Վարչակարգի անկումը Արևելյան Գերմանիայի խաղաղ հեղափոխության ժամանակ. միջին օղակի պաշտոնյաների դերը» ("Regime Collapse in the Peaceful East German Revolution: The Role of Middle Level Officials" (paper prepared for the Eighth International Conference of Europeanists, Chicago, March 27-29, 1992)): Կլաուս Օֆֆեն (Claus Offe) նույնպես վերլուծում է Արևելյան Գերմանիայի անկման գործընթացն իր *Der Tunnel am Ende des Lichts. Erkundungen der politischen Transformation im Neuen Osten* (Frankfurt am Main: Campus Verlag, 1994), chap. 2:

այն բանից, թե ինչին են հավատում պետական ապարատի տասնյակ, հարյուրավոր կամ առավելագույնը՝ հազարավոր անդամները, ովքեր ստիպված են *արձակել* և/կամ *կատարել* հրամաններ:

Ճգնաժամային իրավիճակներում հարցը Վեբերի բառերով՝ այն է, թե արդյոք կառավարողի ճնշիչ վարչակազմը հավատո՞ւմ է հրամանների լեգիտիմությանը՝ ուժ գործադրելու համար: Վեբերի համար «սովորաբար իշխանությունը զգալի թվով մարդկանց վրա պահպանելու համար պահանջվում է վարչակազմ, այսինքն՝ մի *հատուկ* խումբ, որին սովորաբար կարելի է վստահել ընդհանուր քաղաքականության, ինչպես նաև հատուկ հրամանների իրագործումը... Սովորույթը, անձնական առավելությունը, համերաշխության մաքուր զգացմունքային կամ կատարելատիպային մղումները բավականաչափ վստահելի հիմք չեն կազմում ցանկացած տիրապետման համար: Ավելացնենք, որ սովորաբար գոյություն ունի մի լրացուցիչ տարր ևս՝ հավատն առ *լեգիտիմություն*»:<sup>88</sup>

Չեխոսլովակիայի վերաբերյալ մենք սովյալներ չունենք: Սակայն մի հայտնի հետազոտություն՝ նախատեսված հենց այս վեբերյան հարցը բազմակողմանիորեն քննելու համար, իրականացրել է Դանիել Ֆրիդհայմը Գերմանիայում, "*Einsatzleitungen*"-ի [օպերատիվ խմբի] 119 առաջատար կադրերի շրջանում:

Ֆրիդհայմը գրում է, որ իր «ընտրանքը որոշվել էր ըստ ճգնաժամերի հաղթահարման գաղտնի թիմերին անդամակցության ("*Einsatzleitungen*") Բեռլինում և նրա արվարձաններում, Դրեզդենի (հարավ) և Ռոստոկի (հյուսիս) շրջաններում: Կենտրոնական, տարածքային և համայնքային մակարդակներում այս թիմերում հավաքվել էին կուսակցության բարձրագույն քարտուղարները, կառավարության ներկայացուցիչները և կանոնավոր ոստիկանության, բանակի ու գաղտնի ոստիկանության հրամանատարները, ովքեր 1989թ. աշնանն ընդունեցին որոշում՝ ցուցարարների դեմ ուժ կիրառել, թե՞ ոչ»:<sup>89</sup> Կիրառելով վեբերյան չափանիշները՝ սա կառավարողի «ճնշիչ վարչակազմի» գերազանց օրինակ է: Ի՞նչ էր այս ճնշիչ վարչակազմը մտածում 1989թ. աշնանը:

Այս գիրքը գրելու ընթացքում մարդիկ կրկին ու կրկին մեզ հարցնում էին, թե ինչու կոմունիստներն իրենց իշխանությունը պահելու համար Արևելյան Եվրոպայում կրակ չբացեցին, ինչպես Տիանանմեն հրապարակում: Ֆրիդհայմի հետազոտությունը տալիս է համոզիչ պատասխաններ: Նա սվել է համալիր հարցեր: Հարցերի առաջին խումբը ցույց է տվել, որ կոմունիստական կուսակցությանը (SED) միանալիս հարցման ենթարկված ճնշիչ վարչակազմի 97.4%-ը հավատում էր, որ «ոչ մի այլ քաղաքական համակարգ չէր կարող ավելի լավ իրագործել ԳԴՀ-ի սոցիալական նպատակները»: ԳԴՀ-ի վախճանից առաջ նրանց 65%-ն անձամբ դեռ հավատում էր դրան: Սակայն նրանց հավատը կտրուկ պակասեց ուժ գործադրելու լեգիտիմության հարցում այն բանի դեմ, ինչը պետությունն անվանում էր անօրինական բողոքներ (Աղյուսակ 17.2):

88. Տե՛ս Մաքս Վեբեր, «Տնտեսություն և հասարակություն. մեկնաբանական սոցիոլոգիայի նկարագրություն», խմբ.: Գյունտեր Ռոթ և Կլաուս Վիտտիխ (Max Weber, *Economy and Society: An Outline of Interpretive Sociology*, ed. Guenther Roth and Claus Wittich (Berkeley: University of California Press, 1978), 1:212-43): Շեշտը՝ բնագրում: Նույն հատորում *տե՛ս նաև* Վեբերի քննարկումը պետության կողմից ուժ գործադրելու սպառնալիքի մասին (էջ 53-55 և 314-15):

89. Իր թեկնածուական թեզի նախագծից, Քաղաքագիտության ֆակուլտետ, Յեյլի համալսարան: Մեջբերվում է հեղինակի թույլտվությամբ:

Աղյուսակ 17.2. ԳԴԿ-ի ճնշիչ վարչակազմի հավատի քայքայումն առ այն, որ իրավունք ունեն ուժ կիրառելու պետության հայտարարած անօրինական բողոքների դեմ

Վարց՝ (1) Ինչպես աշխարհում ցանկացած կառավարություն, ԳԴԿ-ի կառավարությունը միշտ փորձել է իրականացնել օրենքն՝ անկախ որոշ քաղաքացիների անհամաձայնությունից: Երբ Դուք Ձեր կարիերան սկսեցիք կուսակցության հետ, Դուք հավատո՞ւմ էիք, որ պետությունն իրավունք ունի օգտագործելու ոստիկանությունն անօրինական բողոքները ճնշելու համար: (2) 1989թ. աշնանը, երբ ավելի ու ավելի շատ քաղաքացիներ էին լքում Ձեր երկիրը կամ ցույցեր անում փողոցներում, Դուք դարձյա՞լ կարծում էիք, որ պետությունն այդ անելու իրավունք ունի:

Պատասխան	Պատասխանողների տոկոսը	
	Անցյալում	1989թ. աշուն
Այո	78.4	8.8
Նիսկանում	18.9	21.2
Գումար	(97.3)	(30.0)
Կասկածներ է ունեցել	0.9	31.0
Ոչ	1.8	38.8
Գումար	(2.7)	(69.9)
Ընդամենը	100.0	100.0

Աղբյուրը՝ Դանիել Ֆրիդհայմ, ղոկտորական թեզն ընթացքի մեջ է, Քաղաքագիտության ֆակուլտետ, Յեյլի համալսարան: Տվյալները վերարտադրվում են թույլտվությամբ:

Եթե Տիանանմեն հրապարակի տիպի գանգվածային ճնշում ավելի վաղ գործադրվեր ԳԴԿ-ում բողոքողների նկատմամբ, ապա որոշ վերլուծաբանների կարծիքով՝ կոմունիստական վարչակարգը միանգամայն կկարողանար կանխել հաջորդած փլուզումը: Սակայն Ֆրիդհայմը հարց էր տվել ԳԴԿ-ի ճնշիչ վարչակազմի անդամներին, թե իրենք ինչ են կարծում Տիանանմեն հրապարակի օրինակով ուժ գործադրելու հնարավորության մասին: Պատասխանները ցույց են տալիս, որ Եվրոպայի համատեքստում նրանց ճնշող մեծամասնությունը հավատում էր, որ ուժի նման կիրառումը կլիներ անօրինական ու անհնարին անգամ ի պաշտպանություն սոցիալիզմի (Աղյուսակ 17.3):

Հաշվի առնելով ԳԴԿ-ի վերաբերյալ այս պատմական էքսկուրսը, եկեք շարադրենք մեր փաստարկն առ այն, թե ինչպես են վարչակարգերը փլուզվում, ավելի ֆորմալ ձևով: Վարչակարգի ճգնաժամի վճռորոշ փուլերում պետական ճնշիչ վարչակազմի կենսական մասերը երկմտում են, ապստամբում կամ հալչում-գնում: Տեսնելով գործուն ուժի այս հանկարծակի բացակայությունը՝ ցուցարարների թվաքանակը մեծանում է, իսկ ոգին՝ խրոխտանում: Որոշակի պահի կարող են վարչակարգի դեմ լինել այնքան շատ ցուցարարներ և այնքան քիչ պաշտպաններ, որ վարչակարգի առաջնորդները կորցնեն բանակցություններ վարելու ողջ կարողությունը: Այդ պահին վարչակարգը ոչ այնքան տապալվում, որքան փլուզվում է:<sup>90</sup>

90. Արժեքավոր ֆորմալացված մոդել՝ փողոցներում մարդկանց նվազող վախի մասին, երբ ավելի շատ մարդիկ են միանում բողոքներին, ու վարչակարգի ճնշիչ ներկայությունը դառնում է ավելի քիչ արտահայտիչ, տես՝ Հարի Մարքս, «Քառսի ռացիոնալ ակունքները ժողովրդավարությանն անցման ժամանակ (Gary Marks, "Rational Sources of Chaos in Democratic Transition"), Լարրի Դայմոնդ և Հարի Մարքս, իմբ.՝ «Ժողովրդավարության վերաքննումը», (Larry Diamond and Gary Marks, ed., *Re-examining Democracy* (Newbury Park: Sage Publications, 1992), 47-69, esp. 53-55): Տես՝ նաև Թիմուր Կուրան, «Հիմա՝ ելք «երբեք»-ից. զարմանքի տարրը արևելաեվրոպական հեղափոխության մեջ 1989թ.» (Timur

**Աղյուսակ 17.3. ԳԳԿ ճնշիչ վարչակազմի անդամների պատասխանը ստորև տրվող հարցին՝ «Այն ժամանակ ո՞րն էր Ձեր կարծիքն այն մասին, թե ինչ առավել կարևոր դասեր է պետք քաղել Տիանանմեն հրապարակի՝ 1989թ. հունիսի իրադարձություններից»**

Պատասխան	Տոկոս
«Դա կարող էր հնարավոր լինել ԳԳԿ-ում»	1.2
«Այդպիսի արյան հեղում հնարավոր է միայն Ձինաստանի ժողովրդական Հանրապետությունում կամ Ասիայում»	42.5
«Սոցիալիզմը չարժե նման արյունահեղության»	26.4
«Ես դա երբեք արյունահեղություն չեմ համարել»	29.9

*Աղբյուրը՝* Դանիել Ֆրիդհայմ, դոկտորական թեզն ընթացքի մեջ է, Քաղաքագիտության ֆակուլտետ, Յեյլի համալսարան: Տվյալները վերարտադրվում են թույլտվությամբ:

Հետագոտենք այս գործընթացը Չեխոսլովակիայում: Պատը Բեռլինում սկսեցին քանդել 1989թ. նոյեմբերի 9-ից: Ութ օր անց՝ նոյեմբերի 17-ին, ուրբաթ օրը, ուսանողները, որոնք դուրս էին եկել իշխանությունների կողմից արտոնված երթի՝ հիշելու նացիստական ներխուժման ժամանակ սպանված առաջին ուսանողին, երթը վերածեցին հակաիշխանական ցույցի և դաժանաբար ծեծվեցին: Շաբաթ առավոտյան, երբ Հավելն ու երկրի առաջատար այլախոհների մեծ մասը արձակուրդում էին, ուսանողները որոշեցին դիմել բողոքի գործադուլի: Գործադուլի կոչն այդ օրը կեսօրին կարդացվեց ժողովրդականություն վայելող մի թատրոնում, որտեղ հավաքվել էին թատրոնների շատ տնօրեններ, ինչպես նաև սովորական հանդիսատեսներ: Սկսվեց համընդհանուր խաղաղ գործադուլի մասին քննարկումը:

Նախքան իրադարձությունների հաջորդականությունը շարունակելը եկեք հաստատենք որոշ պարամետրեր, այնպես որ ընթերցողը կարողանա պատկերացնել, թե ներքին փլուզումը իրականում *եղբ* սկսվեց: Նոյեմբերի 21-ին՝ երեքշաբթի օրը, Հավելը Պրահայում՝ փողոցում, առաջին անգամ դիմեց հանրահավաքին: Խոշոր գանգվածային ցույցը Լետնայում տեղի ունեցավ կիրակի օրը՝ նոյեմբերի 26-ին: Երկժամյա համընդհանուր գործադուլը (այնքան խաղաղ, որ շատ բանվորներ համաձայնեցին աշխատելու արտաժամյա կորցրած ժամանակը լրացնելու համար) անցկացվեց երկուշաբթի օրը՝ նոյեմբերի 27-ին: Վարչակարգի ներսում, սակայն, դասալքությունները տեղի էին ունենում դրա հիմնական ինստիտուտներում նույնիսկ դեռ Հավելի ելույթից առաջ:<sup>91</sup>

Kuran, "Now Out of Never: The Element of Surprise in the East European Revolution of 1989", World Politics 44, no. 1 (1991): 7-48): Չինաստանի ժողովրդական Հանրապետությունում, եթե Տիանանմեն հրապարակի իրավիճակի նման իրավիճակ ծագի, սոցիալիզմի՝ գաղափարախոսական լեգիտիմության կորստի և նոր գործարար ձեռնարկներում նումենկլատուրայի ակներև ինքնաառաջաշման համակցությունը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, որտեղ ո՛չ վարչակարգը, ո՛չ ընդդիմությունը չեն ունենա բանակցություններ վարելու լիազորություն ունեցող չափավորներ: Նման իրավիճակում, եթե ինչպես Չեխոսլովակիայում և Արևելյան Գերմանիայում, զինվորականները չգործադրեն ուժ, վարչակարգը կարող է անկում ապրել: Տիանանմեն հրապարակի դեպքերի ժամանակ ո՛չ վարչակարգը, ո՛չ էլ ընդդիմությունը չունենին բանակցելու կարողություններ: Սակայն, ի տարբերություն Չեխոսլովակիայի և Արևելյան Գերմանիայի, վարչակարգն ուներ ճնշելու ուժ:

91. «Թավշյա հեղափոխության» ամենօրյա, մի ամբողջ գրքի ծավալ կազմող նկարագրությունները, որոնք ներկայացնում են անգնահատելի փաստաթղթեր՝ Բեռնարդ Ուիթոն և Ջոննել Կավան, «Թավշյա հեղափոխությունը. Չեխոսլովակիա 1988-1991թթ.» (Bernard Wheaton and Zdenek Kavan, *The Velvet Revolution: Czechoslovakia, 1988-1991* (Boulder, Colo.: Westview Press, 1992)) և Ջոն Բրեդլի, «Չեխոսլովակիայի թավշյա հեղափոխությունը. քաղաքական վերլուծություն» (John F.N. Bradley,

Կիրակի օրը՝ երեկոյան, նոյեմբերի 19-ին, կոմունիստական կուսակցության երիտասարդական միությունը, որի նախագահ Վասիլ Մոհորիտան տեղ ուներ կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեում, և որն ուներ իր սեփական լրագիրը՝ «Մլադա ֆրոնտան» (*Mlada Fronta՝ Երիտասարդական ճակատ*), կոչ արձակեց հետաքննություն սկսել ուսանողների ծեծի կապակցությամբ և դատապարտեց ուժի կիրառումը պետության կողմից: «Երիտասարդների մեծամասնությունը կոչ է անում և աջակցում է հիմնավոր ու էական քաղաքական բարեփոխումներին մեր հասարակությունում... Ներկա իրավիճակի քաղաքական լուծումը մենք համարում ենք առանցքային... Բռնությունն այս դեպքում մենք համարում ենք ոչ ժողովրդավարական... Հնարավոր չէ, որ մեր հասարակությունում որոշակի թեմաներ առհավետ արգելված լինեն»:<sup>92</sup> Երկուշաբթի օրն առավոտյան Կոմունիստական երիտասարդական միությունը «գործադուլային կոմիտեներին սովեց յուրաքանչյուր ֆակուլտետում իր գրասենյակային տարածքները՝ հեռախոսով և պատճենահանման սարքերով՝ նրանց զգալի օգնություն տրամադրելով այդ պայքարում ժողովրդի հետ ուղիղ հաղորդակցություն ապահովելու համար»:<sup>93</sup> Այդ նույն օրը «մի ոստիկանական պարեկ տեխնիկական քոլեջի շենքը հսկող ուսանողներից պահանջեց հանել գործադուլային պաստառները պատուհաններից: Պահանջն արհամարհվեց, և ոստիկանական ոչ մի հետագա գործողության մասին չհաղորդվեց ո՛չ այդ, ո՛չ էլ որևէ այլ քոլեջի կամ ֆակուլտետի մոտ»:<sup>94</sup>

Երեքշաբթի օրը՝ վաղ առավոտյան, նոյեմբերի 21-ին, կենտրոնական կոմիտեի հանդիպումից հետո կառավարությունն արեց տարբեր հայտարարություններ այն մասին, որ դեմ դուրս կգա հետագա հակասոցիալիստական գործողություններին «բոլոր հնարավոր եղանակներով»:<sup>95</sup> Մակայն այդ օրը՝ կեսօրին, Հավելը ելույթ ունեցավ իր առաջին խոշոր հանրահավաքում: Ոստիկանության երկմտելը պարզ դարձավ ցուցարարներին: «Ցույցի ժամանակ նկատված ոստիկաններն իրենց դարձածալերին կրում էին ազգային գույներն՝ ի նշան համերաշխության ցուցարարների հետ, և նաև նրանց տեսել էին հավանության բացականչություններով Հավելին ողջունելիս»:<sup>96</sup>

Նոյեմբերի 22-ին՝ չորեքշաբթի օրը, ոստիկանությունն սկսեց գրավոր շարադրել այն, ինչն արդեն գործնականում անում էր: «Մենք՝ ոստիկանական ուժերի Պրահայի հյուսիսային շրջանի կուսակցության առաջնային կազմակերպության կոմունիստներս, դիմում ենք ձեզ կենտրոնական կոմիտեի նախագահությունում... Վերջին օրերի իրադարձությունները մեզ պարտավորեցնում են ընդունել դիրքորոշում՝ քաղաքական լուծման հասնելու նպատակով... Այլևս հնարավոր չէ մեզ՝ օրինականության սպաներիս, օգտագործել՝ ծածկելու չլուծված քաղաքական և այլ հարցեր»:<sup>97</sup>

*Czechoslovakia Velvet Revolution: A Political Analysis* (Boulder, Colo.: East European Monographs, distributed by Columbia University Press, New York, 1992):

92. Ամբողջ տեքստը վերարտադրված է հավելված Բ-ում, Ուիթոն և Կավան, «Թավշյա հեղափոխությունը», *"The Velvet Revolution"*, էջ 209–10:

93. Նույն տեղում, էջ 60:

94. Բրեդլի, «Չեխոսլովակիայի թավշյա հեղափոխությունը», *"Czechoslovakia's Velvet Revolution"*, էջ 78:

95. Նույն տեղում, էջ 79:

96. Նույն տեղում, էջ 85:

97. Լրիվ փաստաթուղթը՝ Ուիթոն և Կավան, «Թավշյա հեղափոխությունը», *"The Velvet Revolution"*,

Այդ նույն օրը՝ նախքան Հավելի ելույթը և դրա ընթացքում, պետական ապարատի այլ հատվածներում էլ տեղի ունեցան դասալքության և դիմադրության դեպքեր: Հեռուստակայանի գլխավոր տնօրենը հրավիրվեց մի զանգվածային հանրահավաքի, որտեղ նրա 1500 աշխատողներից 700-ը ստորագրել էին խնդրագիր՝ պահանջելով ի թիվս բազմաթիվ այլ բաների, որ ցույց տրվեն ոստիկանական վայրագությունների մասին տեսաֆիլմեր: Նա հանձնվեց:<sup>98</sup> Պետական ռադիոկայանում «ՉԿԿ-ի (Չեխոսլովակիայի կոմունիստական կուսակցություն) առաջնային կազմակերպության 300 անդամ-աշխատողներ հավաքվեցին ու դատապարտեցին կենտրոնական կոմիտեի դիրքը և արտահայտեցին աջակցություն "CF"-ին (Քաղաքացիական ֆորում)»: Նրանք նաև պահանջեցին, որ օրը երկու ժամ եթերաժամանակ տրամադրվի հասարակական քննարկումներին՝ «որպես բնակչության տարբեր հատվածների՝ դեպի բազմակարծություն միտումի արտահայտություն»:<sup>99</sup>

1948թ. Պրահայից դուրս գտնվող գործարանի բանվորները խոշոր դեր էին խաղացել կոմունիստական կուսակցության հեղաշրջման գործում: Գործարանային միլիցիան վարչակարգի պահուստային ճնշիչ ապարատի կարևորագույն մասն էր կազմում: Երեքշաբթի օրը՝ նոյեմբերի 21-ին, Պրահայի քաղխորհրդի անզիջում առաջնորդ Միլոսլավ Ստեփանը դիմում հղեց «Պրահայի բանվորներին, ժողովրդական միլիցիայի անդամներին և այլ զինված ստորաբաժանումներին՝ պատժելու հակասոցիալիստական շրջաններին»:<sup>100</sup> Յուրաքանչյուր միլիցիայի բաժանումնք մեկը մյուսի հետևից անցկացրեց բուռն զանգվածային ժողովներ. հետևանքում իրենց կազմալուծված համարեցին:<sup>101</sup> Այս համատեքստում բանակի հրամանատար գեներալ Վացլավիկը, որին Հավելը հետագայում նշանակեց պաշտպանության նախարար, մի վայրիվերո ելույթ ունեցավ հեռուստատեսությամբ, որտեղ ըստ Բրեդլիի՝ սասց. «Բանակը չի կռվի ժողովրդի դեմ»: Բրեդլին ավելացնում է, որ «պատճառն ակնհայտ է. զինվորները չեն ենթարկվի իրենց սպաների հրամաններին: Սա մահացու հարված էր կոմունիստական ղեկավարությանը»:<sup>102</sup>

Ուրբաթ օրը՝ նոյեմբերի 24-ին (ծրագրված համընդհանուր գործադուլի փաստացի իրականացումից երեք օր առաջ), պետության մեջ ներքին դասալքություններն արդեն հանգեցրել էին վարչակարգի վերնախավի ճգնաժամին: Կենտրոնական կոմիտեի ամբողջ օրը տևած ժողովից հետո, որի ժամանակ քննարկվեցին զանազան առաջարկություններ, ներառյալ՝ ճնշումը, գլխավոր քարտուղար Յակեչը ներկայացրեց իր, ինչպես նաև իր քարտուղարության ու քաղբյուրոյի հրաժարականը:<sup>103</sup> Արդեն ղեկտեմբերի 4-ին Հուսակը հայտարարեց նախագահի պաշտոնից իր հրաժարականի մասին: Դեկտեմբերի 29-ին կոմունիստական խորհրդարանը միակ թեկնածու Վացլավ Հավելին ընտրեց Չեխոսլովակիայի նախագահ:<sup>104</sup>

Էջ 204-05:

98. Նույն տեղում, էջ 67:

99. Նույն տեղում, էջ 68:

100. Ուիթոն և Կավան, «Թավշյա հեղափոխությունը» (Wheaton and Kavan, *The Velvet Revolution*, 70):

101. Նույն տեղում, *տե՛ս* փաստաթղթեր 13 և 17 Հավելված Բ-ում և էջ 70-71 տեքստում:

102. Բրեդլի, «Չեխոսլովակիայի թավշյա հեղափոխությունը» (Bradley, *Czechoslovakia's Velvet Revolution*, 93):

103. Նույն տեղում, էջ 98:

104. Ինչպես Հունգարիայում, մի ականատեսի կողմից բազմաթիվ վճռորոշ իրադարձությունների գերող նկարագրություն, *տե՛ս* Գարտոն Աշ, «Մենք՝ մարդիկ», "We nhe People", էջ 78-130:

Ինչո՞ւ այս փլուզումը տեղի ունեցավ: Հղում անենք Վացլավ Հավելի փայլուն մարգարեական դիտողությանը: 1975թ. իր հայտնի «Նամակ դոկտոր Գուստավ Հուսակին» գրվածքում Հավելը ասում էր, որ ստեղծված հետամբողջատիրական Չեխոսլովակիայի հույսը «մի այնպիսի պահի առաջացումն է», երբ «Էնտրոպիկ վարչակարգը» չի կարողանա արձագանքել: «Փորձելով կաթվածահար անել կյանքը՝ իշխանությունները կաթվածահար են անում իրենք իրենց և երկարաժամկետ հեռանկարում դառնում անկարող՝ կյանքը կաթվածահար անելու»: Ըստ Հավելի, երբ այդ պահը գալիս է, «իներցիայի բեռը թոթափվում է, և պատմությունը նորից ասպարեզ է դուրս գալիս»:<sup>105</sup> Հավելի հույսն արդարացավ: Վարչակարգն իրեն անկարող էր դարձրել կյանքը կաթվածահար անելու համար և *փլուզվեց*:

Մեր՝ որպես հասարակագետի վարկածն այն է, որ այն տեսակի ներքին փլուզումը, որը տեղի ունեցավ Չեխոսլովակիայում, շատ բանով պարտական է ստեղծված հետամբողջատիրությանը՝ որպես տիպի, հատկապես՝ գաղափարախոսության հարաճուն ոչ իսկության մթնոլորտին, վարչակարգին *պրոֆորմա* (ձևի համար) աջակցությանը և ցանկացած այլընտրանքի համար հիմք հանդիսացող այլախոհության գրաված համեստ դիրքին քաղաքացիական հասարակության մեջ: Սրանք հիմնավոր պատճառներ են մտածելու, որ այս տիպի իրավիճակն ավելի մեծ հավանականությամբ հնարավոր է ստեղծված հետամբողջատիրական վարչակարգում, քան հասարակարգի որևէ այլ տեսակում: Լրիվ ամբողջատիրական վարչակարգում կամ շատ վաղ հետամբողջատիրական վարչակարգում, ինչպես Բուլղարիայում 1989թ., գաղափարախոսական նվիրումն ավելի իրական է, գոնե կադրայինների համար, որոնք գլխավոր վարչակազմն են՝ անհրաժեշտ ճնշիչ ռազմավարություն կիրառելու համար: Ջարգացող, հասուն հետամբողջատիրական վարչակարգում բարեփոխիչ կոմունիստներն ունեն ավելի մեծ բանակցային կարողություն: Ավտորիտար վարչակարգերի մեծ մասում կառավարությունները հակված են արձագանքելու՝ նոր հեղաշրջման կամ ընտրությունների միջոցով իշխանությունից հեռանալու ձևով:

Իսպանիայի և Բրազիլիայի մասին գլուխներում մենք նկարագրում էինք իրադարձություններ, որոնք չափազանց նման էին և անգամ ավելի մեծ էին ծավալով՝ համեմատելի ուսանողների, պրոֆեսիոնալների, ամբոխների և գործադուլավորների գործողությունների՝ Պրահայում: Մենք այդ չարեցիք, որովհետև դրանք քիչ ուղղակի ազդեցություն ունեին անցման ու վարչակարգի վերջնական վախճանի վրա: Իշխանություն կրողները կարող էին հույս դնել ռստիկանության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև զինված ուժերի հավատարմության ու հնազանդության վրա և երբեք չմտածել իշխանությունից հրաժարվելու մասին՝ ի պատասխան նման ճնշումների: Չկար փլուզում և փլուզման ոչ մի հեռանկար:

Պետութենականություն և «թավշյա բաժանում».  
նեոինստիտուցիոնալիստական վերլուծություն

Մեր վերջին հարցը վերաբերում է պետութենականությանը: 1992թ. դեկտեմբերի 31-ին՝ կեսգիշերին, «թավշյա հեղափոխությունից» երեք տարի անց, Չեխոսլովակիան բաժան-

105. Վացլավ Հավել, «Նամակ դոկտոր Գուստավ Հուսակին» (Vaclav Havel, "Letter to Dr. Gustav Husak" (1975), Vladislav, Vaclav Havel: Living in Truth, 3-35, quote from p. 27):

վեց երկու առանձին պետությունների՝ Չեխիայի Հանրապետության և Սլովակիայի:<sup>106</sup> Եղել են մի շարք փայտյուն ուսումնասիրություններ, որոնք իրավացիորեն ուշադրություն են հրավիրել Չեխոսլովակիայի նախկին դաշնության երկու բաղադրիչ մասերի միջև որոշ կարևոր սոցիալական, մշակութային ու պատմական տարբերությունների վրա: Չեխերի Երկիրը մաս է կազմել Ավստրոհունգարական կայսրության ավստրիական կեսի, իսկ Սլովակիան՝ հունգարականի: Կայսրության տարիներին Չեխերի Երկիրը դարձել է կայսրության առավել արդյունաբերական մասը, իսկ Սլովակիան՝ մնացել առավելապես գյուղատնտեսական: Չեխոսլովակիայի երկու բաղադրիչները խոսում էին տարբեր, սակայն փոխադարձաբար հասկանալի լեզուներով: Սլովակիան պատմականորեն ավելի կաթոլիկական է եղել, քան Չեխերի Երկիրը: Նա 1939թ-ից մինչև 1945թ. եղել է կիսանկախ նացիստական խամաճիկային պետություն: Սլովակիան ապրել է արագ, ինտենսիվ ինդուստրիալացում կոմունիստական իշխանության օրոք՝ դեպի ԽՍՀՄ կողմնորոշված սուբսիդավորված ինդուստրիալացման մի ձև, որի արդյունքում այն կառուցվածքային ավելի մեծ խոցելի տեղեր ունեցավ 1989թ. հետո դեպի շուկայական տնտեսության անցնելու ժամանակ: Դրա հետևանքով նախքան 1992թ. Սլովակիան ուներ գործազրկության 11.3% մակարդակ՝ համեմատած Չեխերի Երկրի 2.7%-ի հետ:<sup>107</sup>

Հասկանալով այս սոցիալ-մշակութային ու պատմական տարբերությունները Չեխերի Երկրի ու Սլովակիայի միջև՝ կարծում ենք, որ վերլուծաբանների համար սխալ կլինի գերընդգծել զանգվածների ազգայնական զգացմունքների որոշիչ դերը Չեխոսլովակիայի բաժանման գործում: Մամուլում շատ հղումներ կան այն բանին, որ պետութենականության խնդիրները բխել են զանգվածային «իռացիոնալ» և նախասկզբնական զգացմունքներից: Սակայն մեր դատողությամբ՝ եղած ապացույցները որոշակիորեն վկայում են այն, որ *զանգվածային* ինտենսիվ անջատողական ու ազգային պահանջները երբեք տիրապետող չեն եղել ո՛չ Չեխիայի Հանրապետությունում, ո՛չ Սլովակիայում մինչև այն պահը, երբ քաղաքական վերնախավերն վաղուց արդեն սկսել էին պատրաստել բաժանումը 1992թ. հունիսի ընտրություններից հետո (Աղյուսակ 17.4):<sup>108</sup>

106. Այս թեմայի ընդհանուր արծարծում, տե՛ս Իրժի Մուսիլի խմբ.՝ «Չեխոսլովակիայի վերջը» (Jiri Musil, ed., *The End of Czechoslovakia* (Budapest: Central European Press, 1995)): Չոն Էլսթերը (Jon Elster) քննադատաբար հետազոտում է քանդման վերաբերյալ վեց հնարավոր բացատրություն իր «Չեխոսլովակիայի դաշնության քանդվելը. համաձայնության եկած չափահասներ, թե՞ աճպարարի աշակերտներ» (*"Explaining the Breakup of the Czechoslovak Federation: Consenting Adults or the Sorcerer's Apprentice?"* East European Constitutional Review, 4, no. 1 (1995), 36-41): Ըստ Էլսթերի՝ մենք տալիս ենք մի յոթերորդ բացատրություն: Քանդման մասին չորս հոդված, երկուսը՝ խոշոր քաղաքական գործիչների կողմից (Պետր Պիտիսարտ և Յան Կարնոգուրսկի), պարունակվում են՝ Scottish Affairs, no. 8 (1994թ. ամառ):

107. Այս և այլ տարբերությունները քննարկող և վավերագրող գրականության երկու գերազանց ուսումնասիրություն, տե՛ս Իրժի Մուսիլ, «Չեխ և սլովակ հասարակությունը. համեմատական ուսումնասիրության նկարագրություն» (Jiri Musil, "Czech and Slovak Society: Outline of a Comparative Study", Czech Sociological Review 1, no. 1 (1993), 5-21), և Շարոն Վոլչիկ, «Էթնիկության քաղաքականությունը հետկոմունիստական Չեխոսլովակիայում» (Sharon Wolchik, "The Politics of Ethnicity in Post-Communist Czechoslovakia", East European Politics and Societies 8, no. 1 (1994), 153-88):

108. «Շատ քաղաքացիներ Չեխոսլովակիայում կիսում են այն կարծիքը, որ քաղաքական առաջնորդներն են հիմնականում պատասխանատու էթնիկ լարվածությունների աճի և դժվարությունների համար, որոնք առաջանում էին պետության ձևի շուրջ... Չեխերի Երկրում պատասխանողների 71%-ը



**Աղյուսակ 17.4. Նախընտրելի պետական ձևերը (1991թ. նոյեմբեր-1992թ. հուլիս) Չեխերի Երկրում (ՉԷ) և Սլովակիայում (ՍՄ) (տոկոսներով)**

	1991թ. նոյեմբեր		1992թ. մայիս		1992թ. հուլիս	
	ՉԷ	ՍՄ	ՉԷ	ՍՄ	ՉԷ	ՍՄ
Պետական ձևի տիպը						
Միասնական պետություն	39	20	34	12	38	14
Դաշնություն	30	26	28	33	19	27
«Ղողերի վրա հիմնված հանրապետություն»	20	6	22	6	18	8
Նամադաշնություն	4	27	6	31	3	30
Երկու անկախ պետություն	5	14	6	11	16	16
Զգիտեմ	2	7	4	7	6	5

*Աղբյուրը՝ վերարտադրված Հարոն Վոլչիկի թույլտվությամբ, «Էթնիկության քաղաքականությունը հետկոմունիստական Չեխոսլովակիայում», "The Politics of Ethnicity in Post-Communist Czechoslovakia", էջ 180: Վիճակում Կարծիքի հետազոտության ինստիտուտի անցկացրած հանրահարցումների վրա:*

*Ծանոթություն՝ ի լրումն այս աղյուսակում բերված արդյունքների, Պրահայում Անկախ սոցիալական վերլուծության ասոցիացիայի (AISA) տնօրենը մեզ տրամադրեց արդյունքներ համազգային հարցումից՝ իրականացված 1992թ. հոկտեմբեր-նոյեմբերին, ըստ որոնց՝ պատասխանողների միայն 22 տոկոսը Չեխերի երկրում և 19 տոկոսը Սլովակիայում են ցանկացել երկու բոլորովին անկախ պետություն, նույնիսկ այն դեպքում, երբ քաղաքական առաջնորդներն արդեն համաձայնության էին եկել անջատման օրվա շուրջ 1992թ., հեկտեմբերի 31-ը: «Ղողերի վրա հիմնված հանրապետություն» տարբերակը լրիվ չէր սահմանվել, սակայն սովորաբար այն հասկացվում էր որպես մի տարբերակ, որը կտաներ երեք միավորների վրա հիմնված մի համակարգի՝ Բոհեմիա, Մորավիա և Սլովակիա:*

Ի դեպ, քաղաքացիների ճնշող մեծամասնությունը ցանկանում էր երկրի ապագան որոշել հանրաքվեի միջոցով: 1992թ. հուլիսին «պատասխանողների 823-ը Չեխերի Երկրում և 84%-ը Սլովակիայում համաձայնվել է, որ պետության հետագա գոյության հարցը պետք է որոշվի ոչ թե քաղաքական գործիչների, այլ *միայն քաղաքացիների կողմից հանրաքվեի միջոցով*»:<sup>109</sup>

1992թ. հուլիսին արվեց հասարակական կարծիքի մեկ այլ հարցում՝ հաստատելու «առավել քիչ նախընտրելին» ու «առավել շատ նախընտրելին» երեք առավել ճշմարտանման տարբերակներից՝ դաշնություն (գոյություն ունեցող մոդելը), համադաշնություն կամ անջատում: Առավել քիչ նախընտրելի տարբերակը Սլովակիայում (47%) և Չեխերի Երկրում (46%) անջատումն է եղել:<sup>110</sup>

Անջատումից վախենալու պատճառը մասամբ տնտեսական էր: Չեխերի Երկրում հարցման ենթարկվածների միայն 21%-ը և Սլովակիայում միայն 34%-ն է կարծել, որ իրենց կենսամակարդակը կբարելավվի անջատումով:<sup>111</sup> Կարծիքների լուրջ տարբերությունը վերաբերում էր թե՛ դաշնության, թե՛ համադաշնության սահմանադրական ձևին: Չեխերի Երկրում առավել նախընտրելի մոդելը (62%) գոյություն ունեցող մոդելն էր՝ դաշ-

և Սլովակիայում 65%-ը՝ հարցման ենթարկված 1991թ. վերջին «Ազատ Եվրոպա» ռադիկալայանի համար, համաձայն կամ խիստ համաձայն էին, որ քաղաքական գործիչներն օգտագործում են ազգայնականությունն իրենց սեփական նպատակների համար»: Վոլչիկ, «Էթնիկության քաղաքականությունը Չեխոսլովակիայում» (Wolchik, "Politics of Ethnicity in Czechoslovakia," 176):

109. Նույն տեղում, էջ 178, մեր շեշտը:

110. Հասարակական կարծիքի ուսումնասիրության ինստիտուտի անցկացրած այս հարցման մեթոդաբանության մասին, տե՛ս նույն տեղում, էջ 180-81:

111. Նույն տեղում: Սակայն դաշնության երկու բաղկացուցիչ մասերն էլ մտածում էին, որ դաշնային կառավարության կիրառած մեխանիզմներից առավել օգուտ ստանում է մյուս տարածաշրջանը:

նությունը: Քիչ հարաբերական մեծամասնությամբ (38%) սա նաև առավել նախընտրելի մոդել է համարվել Սլովակիայում, սակայն հարցման ենթարկվածների 35%-ն առավելապես նախընտրել է համադաշնությունը, իսկ 20%-ը՝ անջատումը:<sup>112</sup>

Եթե Չեխերի Երկրի ու Սլովակիայի լայն հասարակությունները չէին պահանջում առանձին պետություններ, ապա ինչո՞ւ և ինչպե՞ս Չեխոսլովակիան բաժանվեց: Բազմաթիվ հետազոտություններ պետք է իրականացվեն այդ նյութի շուրջ, նախքան կարելի կլինի գրել վերջնական մենագրություններ: Սակայն մեր պնդումն այն է, որ նման աշխատանքներ չեն կարող գրվել, եթե դրանցում լիարժեք ուշադրություն չդարձվի խորհրդային տիպի դաշնային սահմանադրական համակարգի փոխազդեցությանը ժողովրդավարական ղեկավարության հակաքաղաքական ոճի վրա, որն անսպասելիորեն ժառանգեց պետական իշխանությունը սառեցված հետամբողջատիրական վարչակարգի հանկարծակի փլուզումից հետո: Մեր աշխատանքային վարկածը մեծապես նեոհիստորիոսոցիոնալիստական է: Մասնավորապես, *առանց* Չեխոսլովակիայի խորհրդային ոճի դաշնային համակարգի փակուղու բերող մեխանիզմների, կասկածում ենք, որ Չեխերի Երկրի ու Սլովակիայի միջև պատմական, մշակութային և տնտեսական տարբերությունները կհանգեցնեին Չեխոսլովակիայի բաժանմանը:<sup>113</sup> Եկեք դիտարկենք որոշ հիմնական փաստարկներ ու տվյալներ ինստիտուտների, վերաբերմունքների, բաց թողնված հնարավորությունների և ռազմավարական վերնախավի ընտրությունների մասին:

Երբ վարչակարգը փլուզվեց 1992թ. նոյեմբերին, նոր ժողովրդավարները ժառանգեցին մի խորհրդարան (Ազգային ժողով), որը երկպալատանի էր, սակայն եռապալատային լինելու *դե յուրե* և *դե ֆակտո* իրական ներուժով: Ստորին պալատը՝ ժողովրդական պալատը, ուներ 150 անդամ և հիմնված էր բնակչության վրա: Վերին պալատը՝ ազգերի պալատը, նույապես ուներ 150 անդամ՝ բաղկացած 75 չեխ և 75 սլովակ անդամներով հատվածներից: Իրավականորեն և՛ չեխ, և՛ սլովակ հատվածները կարող էին կշռադատել ու քվեարկել առանձին-առանձին: Որ ավելի կարևոր է, մի ամբողջ շարք հարցերի շուրջ, հատկապես՝ այնպիսի հարցերի շուրջ, որոնք ինչ-որ առնչություն ունեին դաշնության գործելուն, որոշումն արգելափակելու սահմանադրական իրավունքը չափազանց մեծ էր: Ցանկացած միջոցառում կարող էր հաստատվել միայն այն դեպքում, երբ ստանար յուրաքանչյուր պալատի *բոլոր* անդամների 60%-ի «կողմ» ձայները, անկախ այն բանից արդյոք նրանք ներկա են եղել, թե ոչ, և արդյոք քվեարկել են, թե ոչ: Դավիդ Օլսենը բավական լավ է նկարագրում փոքր խմբերի արգելափակող ուժը, երբ ասում է, որ հետամբողջատիրական սահմանադրությունը, որը Հավելը ժառանգեց, «անդամների մի փոքր թվի (30), եթե նրանք դա ցանկանային կամ պարզապես բացակայեին, ժողովում տրվում էր որոշումն արգելափակելու իրավունք... Դաշնայնության կարևորության մեծացման հետ...Դաշնային ժողովը չկարողացավ ընդունել առաջարկվող օրենսդրությունն իր առջև դրված ամենակարևոր հարցի՝ պետութենականության վերաբերյալ»:<sup>114</sup> Փակուղու

112. Նույն տեղում:

113. Ի դեպ, հաշվի առնելով կարծիքների բաշխումը Չեխերի Երկրում և Սլովակիայում՝ հավանաբար անջատման մի *անհրաժեշտ* պայման էր ինստիտուտների գոյությունը, որոնք ի վերջո թվում էին (բաց թողնված հնարավորությունների պատճառով) անգործունակ և անփոփոխելի:

114. Դավիդ Օլսեն, «Բաժանված երկիրը. դաշնայնությունը ու խորհրդարանը Չեխոսլովակիայում» (David M. Olson, "The Sundered State: Federalism and Parliament in Czechoslovakia" (paper presented at the

այս հավանականությունը շատ ավելի վաղ նկատել է Գորդոն Սքիլլինգը, որը Չեխոսլովակիայի վերաբերյալ իր դասական աշխատության մեջ մեկնաբանել է, որ 1968թ. հետո գործող սահմանադրությունը նշանակում էր, որ մի աննշան փոքրամասնություն կարող էր արգելափակել «կառավարության ծրագրի հաստատումը կամ վստահության քվեն՝ կառավարությանը»:<sup>115</sup> Սքիլլինգն առաջ է անցնում՝ նշելով, որ սահմանադրությունն իսկապես ազդեցություն չգործեց կուսակցական պետության վրա, որը մնաց միասնական: Կուսակցական պետության իշխանության գլուխ լինելուց ի վեր սահմանադրությունը եղել է ձևական: Երբ տեղի ունեցավ անցումը, փակուղու սահմանադրական հավանականությունն ավելի իրական դարձավ, որովհետև ի տարբերություն արևմտաեվրոպական ցանկացած ստանդարտ խորհրդարանական ժողովրդավարության, խորհրդային ոճի սահմանադրություններում փակուղու դեպքում ո՛չ վարչապետը, ո՛չ պետության ղեկավարը չէին կարող արձակել խորհրդարանը և նոր ընտրություններ հայտարարել:<sup>116</sup>

Այս տիպի սահմանադրությունը, որը հենց նոր վերլուծեցինք, կարող է ձևական լինել կուսակցական պետության համար, սակայն որքան ավելի երկար ժամանակ այն մնա անփոփոխ նոր ժողովրդավարական համատեքստում, այսպիսի սահմանադրությունը կարող է ունենալ նոր ու վտանգավոր կյանք:

Որպես համեմատական վերլուծաբաններ՝ կարծում ենք, որ սառեցված հետամբողջատիրության փլուզումից հետո վճռորոշ ժամանակահատվածում նոր ժողովրդավարները կարող էին արագ օրակարգ մտցնել մի շարք սկզբունքային հարցեր ժողովրդավարական ինստիտուտների ապագայի ու որոշումների կայացման ձևերի վերաբերյալ: Օրակարգի առաջին հնարավոր հարցերից մեկը կարող էր լինել այն որոշումը, թե արդյոք ընտրե՞լ, թե՞ չընտրել Սահմանադիր ժողով՝ դաշնության համար հաստատելու մի նոր ու ավելի կենսունակ սահմանադրություն: Մեկ այլ հնարավոր տարբերակ Հավելի համար՝ ամրապնդված «թավշյա հեղափոխության» հեղինակությամբ, կարող էր լինել գոյություն ունեցող Դաշնային ժողովին դիմումը՝ ձևափոխելու սահմանադրությունն իր նախագահ ընտրվելուց անմիջապես հետո: Մա այն տարբերակն էր, որ Իսպանիայում Ադոլֆո Սուարեսը հաջողությամբ ընտրեց քաղաքական բարեփոխումների մասին օրենքով, ինչպես փաստել ենք:

Որոշումը կամ ավելի ճիշտ՝ որոշման բացակայությունը ընտրություններն անցկացնելու 1990թ. հունիսին ուլտրադաշնային և արգելափակող բնույթ ունեցող խորհրդային ոճի դաշնային սահմանադրության շրջանակների ներքում խստորեն սահմանափակեց այն ձևը, որով հնարավոր կլիներ լուծել Չեխոսլովակիայի պետութենականության խնդիրը: Սահմանադրության կազմալուծող ներուժը մեծացավ, երբ Հավելը, ի տարբերու-

Conference on Comparative Parliamentary Development in Eastern Europe and the Former USSR at the Center for Soviet, Post-Soviet and East European Studies, Emory University, Atlanta, April, 9-10, 1993), 7):

115. Սքիլլինգ, «Չեխոսլովակիայի ընդհատված հեղափոխությունը» (Skilling, *Czechoslovakia's Interrupted Revolution*, appendix B):

116. Հեղինակների անձնական գրույցը պրոֆեսոր Լեոն Լիպսոնի հետ, Յեյլի համալսարանի իրավունքի դասախոս և խորհրդային ոճի սահմանադրությունների մասնագետ: *St'u šauš Դոլ Վիլսոն*, «Չեխոսլովակիա. բաժանման ցավը» (Paul Wilson, *"Czechoslovakia: The Pain of Divorce"*, New York Review of Books, 39 (Dec. 17, 1992): 69-75):

թյուն Իսպանիայում Սուարեսի, որոշեց համապետական կուսակցություն կազմավորելու փորձ չանել:

Ի՞նչ տեղի ունեցավ և ի՞նչ տեղի չունեցավ՝ կապված խորհրդային ոճի դաշնային սահմանադրության հետ: Դժբախտաբար, սառեցված հետամբողջատիրական Չեխոսլովակիայում այլախոհական կյանքի մթնոլորտը բավականաչափ ուշադրություն չէր դարձնում ձևականորեն ինստիտուցիոնալ հարցերին: Իսկապես, Հավելի և նրա ամենամոտ խորհրդատուներից շատերի ոճը, ի հակադրություն Հունգարիայի կամ Իսպանիայի ընդդիմադիր ղեկավարության, ակտիվորեն հակաքաղաքական ու հակաինստիտուցիոնալ էր:

Չեխոսլովակիայի կազմալուծման նախօրեին «թավշյա հեղափոխության» առաջնորդներն ավելի ու ավելի շատ էին խոսում իրենց նախնական հակաքաղաքականության և հակաինստիտուցիոնալականության հետևանքների մասին: Հավելի մոտ ընկերներից մեկը՝ Պետր Պիթհարտը, որն սկզբում ղեկավարում էր Քաղաքացիական ֆորումի համակարգման կենտրոնը, իսկ հետագայում դարձավ Չեխոսլովակիայի վարչապետ 1990-1992թթ., ավելի ուշ ասաց, որ Հավելը «թերագնահատել էր ժառանգած սահմանադրության խոչընդոտները: Նա կարծում էր, որ «թավշյա հեղափոխության» սրընթացությունը նրանց կտանի խնդրի կողքով»: Ինչպես մենք հիմնավորեցինք Իսպանիայի մասին մեր քննարկման մեջ, օգնել կարող էր միասնական համապետական կուսակցության ստեղծումը: Սակայն Պիթհարտը շարունակում էր բացատրել. «թավշյա հեղափոխության» ավարտից մի քանի օր անց Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայից առաջնորդները Հավելի հետ խորհրդակցելու եկան Սլովակիայում «Քաղաքացիական ֆորում կուսակցության» ապարատի շուրջ: Հավելը նրանց հորդորեց ստեղծել իրենց սեփական առանձին կուսակցությունը Սլովակիայում: Նրանք հեռացան և ի վերջո ստեղծեցին «Ժողովուրդն ընդդեմ բռնության» կուսակցությունը:<sup>117</sup> Պիթհարտը ասում է, որ սա արտացոլում է «լայնորեն տարածված բացասական վերաբերմունքը կուսակցություն հիշեցնող ցանկացած բանի հանդեպ: Հավելը սրա խորհրդանիշն էր: Նա իրեն ամբողջովին տարանջատեց կուսակցությունից»:<sup>118</sup> Որպես «Քաղաքացիական ֆորումի» համակարգող՝ Պիթհարտի հաջորդը՝ Յան Ուրբանը, նույնիսկ էլ ավելի քննադատաբար է վերաբերվում Հավելի հակաքաղաքականությանը: «Նա դարձավ նախագահ՝ որպես «Քաղաքացիական ֆորումի» առաջնորդ ու ներկայացուցիչ, սակայն շատ շուտ իրեն հոչակեց որպես ոչ կուսակցական նախագահ՝ բոլոր քաղաքական կուսակցություններից վեր... Արդեն 1990թ. փետրվարին փոխադարձ մեկուսացման մի քանի շաբաթներից հետո, Քաղաքացիական ֆորումի (Չեխերի Երկիր) և Ժողովուրդն ընդդեմ բռնության (Սլովակիա) համատեղ պատվիրակությունը ստիպեց Հավելին հանդիպել իրենց պաշտոնապես: Նա ընդունեց նրանց մի օր՝ կեսօրին՝ անգամ չհրավիրելով հանդիպումների դահլիճ»:<sup>119</sup>

Քաղաքականության ու քաղաքական կուսակցությունների նկատմամբ այս անուշադրությունը, անկասկած, նպաստեց այն փաստին, որ 1989թ. ընտրական քարոզարշավներն, ըստ էության, անցկացվում էին միայն չեխերից կամ միայն սլովակներից կազմված

117. Հարցազրույց Պրահայում Ստեփանի հետ: 16 դեկտեմբերի, 1993թ.:

118. Նույն տեղում:

119. Ուրբան, «Չորեղների անզորությունը» (Urban, "Powerlessness of the Powerful"):

խմբերի կողմից: Իսկապես, դաշնային խորհրդարանում տեղեր ստացած տասնմեկ կուսակցություններից միայն մեկն էր՝ Չեխոսլովակիայի նախկին կոմունիստական կուսակցությունը, որ ուներ ներկայացուցիչներ երկու հանրապետություններից: Չեխոսլովակիայի «հիմնադիր ընտրությունները» գրեթե ոչ մի գաղափարախոսական կամ կազմակերպական ուշադրություն չդարձրեցին համադաշնային կուսակցությունների ձևավորմանը: Ինչպես Իսպանիայում (և ի տարբերություն Խորհրդային Միության ու Հարավսլավիայի), Չեխոսլովակիայում *իսկապես* տեղի ունեցան հաջորդական հիմնադիր ընտրություններ, որոնք սկսվեցին համապետական ընտրություններով: Սակայն, ի տարբերություն Իսպանիայի, կենտրոնական կառավարության ղեկավարությունը ոչ մի ջանք չգործադրեց՝ ուղղված համապետական կուսակցության կազմավորմանը, և փաստորեն խանգարեց դրան:<sup>120</sup>

«Թավշյա բաժանումից» մեկ տարի անց առանձին հարցազրույցների ժամանակ Ալֆրեդ Ստեփանը հարցրեց Պիթիարտին և Ուրբանին, թե արդյոք նրանք հավատո՞ւմ էին, որ Հավելն ու «Քաղաքացիական ֆորումը» առաջնորդները կկարողանան գործող խորհրդարանից բարեհաջող կերպով պահանջել ձևական սահմանադրության փոփոխությունը: Երբեք հնարավոր չէ վստահ լինել բարդ պատմական հակափաստերի հարցում: Սակայն արժե նշել, որ և՛ Պիթիարտի, և՛ Ուրբանի հետահայաց կարծիքով՝ Քաղաքացիական ֆորումը 1989թ. վերջին կամ 1990թ. սկզբում *կարող էր* հասնել որոշ առանցքային փոփոխությունների, ինչպես օրինակ՝ երկու պալատների համար պարզ մեծամասնական համակարգը կամ Սահմանադիր ժողովը: Մի շարք այլ բանաձևերով թերևս հնարավոր կլինեին խուսափել սահմանադրական փակուղուց: Սակայն կենտրոնական հարցն այն է, որ այն ժամանակ լուրջ սահմանադրության մշակում օրակարգում չկար: Ինչպես պարզվեց, Հավելը, չնայած 1991թ-ին և 1992թ-ին գործադրած մեծ ջանքերին, երբեք չկարողացավ փոխել սահմանադրությունը: Կազմալուծման մասին ոչ մի հանրաքվե երբեք չանցկացվեց: 1992թ. հունիսի ընտրություններն առաջ չբերեցին զանգվածային մեծ ոգևորություն անջատման համար ո՛չ Չեխերի Երկրում, ո՛չ էլ Սլովակիայի Հանրապետությունում: Սակայն դրանց արդյունքում մի վարչապետ հանդես եկավ Չեխիայի Հանրապետությունում՝ Վացլավ Կլաուսը, և մի վարչապետ Սլովակիայում՝ Վլադիմիր Մեչիարը ընտրական մեծամասնություններով, տնտեսական ու քաղաքական տարբեր օրակարգերով և միմյանց նկատմամբ որոշումն արգելափակելու իրավունքով:

1992թ. հունիսի «եզրափակիչ» ընտրություններում Վլադիմիր Մեչիարի կուսակցությունը (HZDS) շահեց միայն 12% ձայն Չեխոսլովակիայի Դաշնային Հանրապետության ստորին պալատում և միայն 33.8% առավելագույն հարաբերական մեծամասնություն Սլովակիայի ազգերի պալատում: Սակայն սա ավելի քան բավարար էր իշխանության խորհրդային ոճի եռապալատ դաշնային համակարգում նրա ղեկավարած կուսակցությանը տալու բացարձակ վետոյի իրավունք ցանկացած նշանակալի բարեփոխումների առնչությամբ այն դաշնային համակարգում, որին նրանք ընդդիմանում էին: Վացլավ Կլաուսի կողմից առաջնորդվող կոալիցիան շահեց վավեր դաշնային ձայների 27%-ը, և

120. Ընտրական հաջորդականության և համապետական կուսակցությունների ձևավորման կարևորության մասին, տե՛ս Գլուխ 6, Իսպանիայի մասին, այս գրքում և Խուան Լինց և Ալֆրեդ Ստեփան, «Քաղաքական ինքնություններ և ընտրական հաջորդականություններ. Իսպանիա, Խորհրդային Միություն և Հարավսլավիա» (Juan J. Linz and Alfred Stepan, "Political Identities and Electoral Sequences: Spain, the Soviet Union, and Yugoslavia", Daedalus (Spring 1992): 123-39):

Աղյուսակ 17.5. «Եզրափակիչ» ընտրությունները Ֆեխտսլովակիայում 1992թ., կուսակցական ձայներ ու տեղեր ժողովրդական դաշնային պալատում և ազգերի պալատում՝ համեմատած այն ձայների հետ, որոնք անհրաժեշտ էին Ազգությունների պալատում արգելադրելու ժողովրդական պալատի կողմից ընդունված ցանկացած նշանակվից, դաշնության հետ առնչություն ունեցող օրենսդրություն

	% ընդամենը ստացած ձայների ժողովրդական դաշնային պալատում	% ժողովրդական դաշնային պալատում շահած տեղերի, 5% շեմից հետո	% ձայների, որ Սյո-վակիան ստացել էր ազգերի պալատի համար	% տեղերի՝ շահած Սլովակիայում ազգերի պալատի համար շեմի ամրամույց հետո	% ձայների՝ շահած Ֆեխերի երկրի ազգային պալատում	% տեղերի՝ շահած Ֆեխերի երկրի ազգային պալատում շեմի ամրամույցից հետո	Տեղերի քանակը, որոնք անհրաժեշտ են Ազգերի պալատում արգելադրելու որևէ խոշոր դաշնային օրենք անցկացված ժողովրդի պալատում
Կուսակցություն	12	16	33.85	44	33/75	33/75	30/75
Մեչիարի կողմից ղեկավարվող կուսակցություն (Սլովակիայի ժողովրդավարական Հարժմա)							
Վացլավ Կլատսի կողմից ղեկավարվող կուսակցիա (ODS-KDS)	26	32	3.66	—	33.43	49.33	30/75

Աղբյուրը՝ *Keesing's Record of World Events, News Digest for June 1992, 38944-45*, և *Դավիդ Օտտն «Բաժանված պետությունը. դաշնայնությունը և խորհրդարանը Չեխոսլովակիայում», "The Sundered State: Federalism and Parliament in Czechoslovakia"*, լույսը մերկայացվել է կրկնյան Եվրոպայում և Ամսթերդամում խորհրդարանական համեմատական զարգացման համաժողովին, Խորհրդային, հետխորհրդային և արևելաեվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, Էնդրի համալսարան, Ատլանտա, սպիտի 9-10, 1993թ.:

սա նույնպես Կլաուսի կոալիցիային տվեց որոշումն արգելափակելու բացարձակ իրավունք (Ադյուսակ 17.5):

Գլխավոր հարցերից երկուսը Չեխոսլովակիայում 1992թ. հունիսի ընտրությունների ժամանակ վերաբերում էին դաշնային հարաբերությունների ապագային և զարգացման այլընտրանքային մոդելներին: Ընտրություններից հետո Վացլավ Կլաուսը, որը Թեռչերի նման կողմնակից էր արագ շարժմանը դեպի շուկա և կենտրոնական կառավարության ավելի ուժեղ դերին, առաջ անցավ Չեխերի Երկրում՝ հավաքելով ձայների առավելագույն հարաբերական մեծամասնություն (ոչ թե՛ մեծամասնություն): Մեչիարը, որը կողմնակից էր ավելի դանդաղ, ավելի պետականական ավատրիական շարժմանը դեպի շուկա և էականորեն ավելի մեծ ինքնավարության Սլովակիայի համար, ձեռք բերեց առավելագույն հարաբերական մեծամասնություն (ոչ թե՛ մեծամասնություն) Սլովակիայում: Սակայն հիմքում խորհրդային ոճի դաշնային համակարգը յուրաքանչյուր հանրապետության վարչապետին մյուսի նկատմամբ տալիս էր վետոյի դե ֆակտո իրավունք: Մեչիարը գուցե կբավարարվեր համադաշնական պետությամբ՝ սոցիալ-տնտեսական ինքնավարությամբ, սակայն Կլաուսը կարող էր նրան գրկել իր համադաշնությունից: Կլաուսը գուցե կբավարարվեր դաշնային պետությամբ, քանի դեռ կկարողանար առաջ տանել իր տնտեսական բարեփոխումների օրակարգը, սակայն Մեչիարը կարող էր նրան գրկել շուկայի իր ծրագիրն իրականացնելու կարողությունից: Հաշվի առնելով նրանց առանձին նպատակներն ու փոխադարձ արգելափակման իրավունքը՝ յուրաքանչյուր ղեկավարի համար ռացիոնալ լուծումը պետության բաժանումն էր: Բաժանումը խաղաղ էր, և նույնիսկ՝ «թավշյա», որովհետև ազգերը բավարար չափով առանձնացված էին տարածքային առումով, և ինչն էլ վերջո ցանկալի է, առաջնորդներից յուրաքանչյուրը կարողացավ քվե ստանալ բաժանման համար համապատասխան օրենսդրության նկատմամբ իր ունեցած վերահսկողության շնորհիվ:<sup>121</sup>

121. Բաժանման հետևանքով Չեխիայի Հանրապետությունը ծնունդ առավ ժողովրդավարության կայացման ավելի լավ հնարավորություններով այնպիսի պատճառներով, որոնք մենք այստեղ չենք կարող քննարկել: Սոցիալ-քաղաքական ոլորտում անջատումը կարող է օգնել Չեխիայի Հանրապետությանը՝ շարժվելու դեպի ժողովրդավարության կայացում, որովհետև նոր պետությունը՝ քիչ գերմանացիներով կամ հրեաներով (Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով) և քիչ սլովակներով («թավշյա բաժանման» պատճառով), թերևս բացի Մորավիայի տրամադրվածությունից, մոտ էր ազգային պետություն լինելուն, հետևաբար՝ պետք է որ չունենա լուրջ պետութենականության խնդիրներ: Նաև Չեխիայի Հանրապետության սահմանադրական ընտրությունն առանձնացման ժամանակ, որը մաքուր խորհրդարանականություն էր, նույնպես օգնում է խուսափել քաղաքական տիպի այն խնդիրներից, որոնք կարող են առաջ գալ զգալի լիազորություններ ունեցող անկախ նախագահի և լայն իավունքներ ունեցող անկախ ընտրված վարչապետի ներկայությամբ: Ավելին, առաջ տանելով մեր նախորդ փաստարկը խորհրդարանականության մասին՝ խորհրդարանական համակարգը պետք է որ օգնի այնպիսի միջավայր ստեղծելուն, որտեղ կուսակցությունները կարող են զարգանալ, և որտեղ կան տևական կուսակցական կոալիցիաներ ստեղծելու խթաններ: Պետք է նշել, որ Կլաուսը կուսակցության կառուցմանը նվիրված հինուտ քաղաքական գործիչ է:

Անջատումը Սլովակիային թողեց ինչ-որ չափով ավելի դժվարին վիճակում այն առումով, որ Մեչիարը ցանկանում էր կառուցել մեծամասնական ազգային պետություն, սակայն ուներ զգալի հունգարացի, գնչու և ուկրաինացի փոքրամասնություններ: Անգամ 1994թ. ընտրություններից հետո նա ուներ միայն հարաբերական մեծամասնություն: Սլովակիայում ազգային պետությունն ու ժողովրդավարությունը կարող են հակասական տրամաբանություններ լինել:

ԲՈՒՂԱՐԻԱ. ԿԱՐԶԱԿԱՐԳԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՐԱՀՄԿՎՈՂ ԱՆՑՈՒՄ ԿԱՂ  
 ՀԵՏԱՄԲՈՂՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բուլղարիայում անցման վերաբերյալ երկրորդային ու մենագրական գրականությունը դեռևս այնքան հարուստ չէ, որքան Հունգարիայի կամ Չեխոսլովակիայի մասին գրականությունը, այնպես որ վերլուծությունն, անշուշտ, ավելի նախնական է: Սակայն առկա գրականությունը՝ լրացված մեր այցելություններով ու հարցազրույցներով, մեզ թույլ է տալիս որոշ վստահությամբ պնդելու, որ ի տարբերություն Հունգարիայի և Չեխոսլովակիայի անցումների՝ Բուլղարիայում վաղ հետամբողջատիրական վարչակարգը *նախաձեռնեց* ու *երբեք չկորցրեց հսկողությունն* անցման նկատմամբ, և որ այդ վարչակարգի առաջնորդներն առաջ մղվեցին առաջին ազատ ընտրությունների արդյունքում ոչ միայն ձայների հարաբերական մեծամասնությամբ, այլև իշխանության նկատմամբ նորովի վերաձևված հավակնությամբ: Ի՞նչն էր հետամբողջատիրությունից հեռանալու այդպիսի տարբերվող ուղու պատճառը Բուլղարիայում՝ ի տարբերություն Հունգարիայի ու Չեխոսլովակիայի: Բացատրությունը հիմնականում կարծես թե կարելի է գտնել նախորդ վաղ հետամբողջատիրական վարչակարգի բնույթի և այն սահմանափակ դերի մեջ, որ այդ վարչակարգում ժողովրդավարական ընդդիմությունն ի վիճակի է եղել խաղալու՝ հաշվի առնելով վերջինիս ընդհատվող և անօրինական բնույթը:

Ըստ ամբողջատիրական վարչակարգի չորս հարթությունների (բազմակարծություն, համախմբում, գաղափարախոսություն և ղեկավարություն), Բուլղարիան՝ բազմակարծության առումով, ի տարբերություն Հունգարիայի կամ անգամ Չեխոսլովակիայի, մինչև 1988թ. դեռևս նմանվում էր ամբողջատիրական կատարելատիպին:

Այս պնդումը փաստելու և վարչակարգի բնույթը ցույց տալու համար մանրամասն մեջբերումներ անենք մի արժեքավոր ուսումնասիրությունից Բուլղարիայում ծնունդ առած ժողովրդավարական ընդդիմության մասին, որը գլխավորում էր Դեյան Կիուրանովը՝ Բուլղարիայի առավել ազդեցիկ ընդդիմադիր խմբի՝ 1989թ. փետրվարին հիմնադրված «Էկոզլանտոստի» առաջնորդներից մեկը:<sup>122</sup> Կիուրանովն ասում է, որ 1988թ. առաջ կային դիմադրության որոշ անհատական գործողություններ, սակայն «դժբախտաբար այս իսկապես հերոսական արարքները չունեցան որևէ սոցիալական ազդեցություն այդ ժամա-

122. Կիուրանով, «Բուլղարիայի ընդդիմության քաղաքական կայացումը (1988թ. հունվար-1990թ. ապրիլ)» (Deyan Kiuranov, "Political Establishment of the Bulgarian Opposition (January 1988–April 1990)") (չհրատարակված նյութ, որը պատրաստվել էր Չիկագոյի համալսարանի իրավաբանական դպրոցի՝ Արևելյան Եվրոպայում սահմանադրականության ուսումնասիրությունների կենտրոնի համար Կենտրոնական Եվրոպական համալսարանի հետ համագործակցությամբ, ապրիլ 25, 1991թ.): Այլ արժեքավոր նկարագրություններ ժողովրդավարական ընդդիմության չափազանց ուշացած ձևավորման վերաբերյալ, տե՛ս Ռուսեն Դասկալով և Բորիս Նիկոլով, «Բուլղարիա, 1989թ. ընդդիմության ծնունդը» (Roumen Daskalov and Boris Nikolov, "Bulgaria, 1989: The Birth of the Opposition" (Center for Cultural Studies, Sofia University, no date, unpublished paper)) և Ռիչարդ Քրեմպտոն, «Մտավորականությունը, բնապահպանությունը և ընդդիմությունը Բուլղարիայում» (Richard Crampton, "The Intelligentsia, the Ecology and the Opposition in Bulgaria", World Today (Feb. 1990): 23-26): Տե՛ս նաև Ռուսեն Դիմիտրովի հոդվածը, «Երթն ինստիտուտներով մեկ. Բուլղարիայի ընդդիմության ձևավորումը, 1989-1991թթ.» (Roumen Dimitrov, "March across the Institutions: Formation of the Bulgarian Opposition, 1989-1991", Bulgarian Quarterly 1, no. 2 (1991): 43-52):



նակ ... մենք տառացիորեն ոչինչ չգիտեինք դրանց մասին, երբ դրանք կատարվում էին»:<sup>123</sup> Կիուրանովի համար բողոքի առաջին իսկապես ոչ կառավարական կազմակերպությունը, որը հայտնվեց Բուլղարիայում, «Հունգարացիների իրավունքների ասոցիացիան» էր, որը հիմնադրվել էր 1988թ. հունվարին մի փոքրիկ գավառական քաղաքում նախկին քաղբանտարկյալ Էդվարդ Գենովի կողմից: Գենովը և մյուս ակտիվիստներն արագորեն «արտաքսվեցին երկրից»:<sup>124</sup> Սակայն փոքր աջակցության խմբեր երկրում շարունակում էին ստեղծվել: Այս խմբերի անդամները «մշտապես ձերբակալվում էին ու հետապնդվում. նրանց փաստորեն չէին թողնում կազմակերպականորեն հավաքվել, առավել ևս միասին ինչ-որ բան անել: Ի դեպ, ոստիկանությունը նրանց ստիպեց վերադառնալու նախալմբային ժամանակների մարտավարությանը՝ անհատական գործողություններին: Սակայն, ի տարբերություն նախորդ «մարտիոսների», նրանց լսում էին (շնորհիվ «Ազատ Եվրոպա» ռադիոկայանի և BBC-ի): Դրանով էլ սա հիմնականում տարբերվում էր»:<sup>125</sup>

Մտավորապես նույն ժամանակ, երբ կազմավորվեց ու ջախջախվեց «Մարդու իրավունքների ասոցիացիան», բնապահպանական մի խումբ Ռուսեում ստեղծեց աջակցման խումբ, որն ուներ 300 հիմնադիր անդամ: Սակայն Կիուրանովը նշում է, որ «հիմնադիր ժողովից հետո այս խումբն այլևս երբեք չհանդիպեց»:<sup>126</sup> Սոֆիայում մի խումբ տեսավ Ռուսեի բողոքի մասին մի ֆիլմ, և 1988թ. մարտին 30 աչքի ընկնող դեմքեր, որոնցից ոմանք Բուլղարիայի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ էին, հիմնադրեցին Ռուսեի աջակցության կոմիտեն: Կոմիտեի ձևավորման հաջորդ օրն այդ 30 ստորագրյալները կանչվեցին քաղբյուրո և մեղադրվեցին «արդեն գոյություն ունեցող կառույցներին զուգահեռ կառույցներ ստեղծելու» մեջ:<sup>127</sup> Մեզ համար այս մեղադրանքն իսկապես բանաձևային դրույթ է, որը ցույց է տալիս, որ բազմակարծության ասպարեզում Բուլղարիան 1988թ. դեռևս նմանվում էր ամբողջատիրական վարչակարգի: Բոլոր դեպքերում վարչակարգի քայլը «կանխեց կոմիտեի ցանկացած այլ գործունեություն: Երկու ամիս իր հիմնադրումից հետո այն անհետացավ տեսադաշտից»:<sup>128</sup> Այլ խմբեր կազմավորվեցին ու ցրվեցին, և ինչպես Ռիչարդ Քրեմպտոնն է նշում, «հզոր հակազդեցությունն անհավանաբար 1988թ. վերջին և 1989թ. սկզբին: Անկախ խմբերի առավել անհանգստություն պատճառող առաջնորդներն արտաքսվեցին, իսկ երկրում մնացածներից շատերը հետապնդվում էին ու ենթարկվում բռնությունների, որոնք ավելի շատ հիշեցնում էին ստալինյան գտումները, քան Գորբաչովի «զլասնոստի» ժամանակները»:<sup>129</sup>

1989թ. փետրվարից մինչև նոյեմբեր առաջ եկան ուրիշ նշանակալի անկախ խմբեր, որոնցից առավել կարևոր էր «Էկոզլասնոստը»: Եվրոպայում անվտանգության ու համագործակցության համաժողովի (CSCE) պաշտպանիչ ծածկի ներքո, որն անցկացվեց Սո-

123. Կիուրանով, «Բուլղարիայի ընդդիմության քաղաքական կայացումը» (Kiuranov, "Political Establishment of the Bulgarian Opposition", 7):

124. Նույն տեղում, էջ 8:

125. Նույն տեղում:

126. Նույն տեղում, էջ 9:

127. Նույն տեղում, էջ 9, շեշտն ավելացված է:

128. Նույն տեղում, էջ 10:

129. Քրամպտոն, «Մտավորականությունը, բնապահպանությունը և ընդդիմությունը Բուլղարիայում» (Crampton, "Intelligentsia, Ecology and Opposition in Bulgaria", 24):

Ֆիայում 1989թ. հոկտեմբերին ու նոյեմբերին, «Էկոզլասնոստը» դարձավ առաջին խումբը, որը բացահայտորեն իրականացնում էր քաղաքական համակարգված բողոքներ: Սակայն անգամ «Էկոզլասնոստը» զգում էր, որ իր գոյությունը վտանգված է. և դա տևեց ընդհուպ մինչև 1989թ. նոյեմբերի 2-ը, այն պահը, երբ ներքին կուսակցական հեղաշրջումը տապալեց Թոդոր Շիվկովին: Շիվկովը ղեկավարել էր Բուլղարիայի կոմունիստական կուսակցությունը 1954 թվականից, մինչև Բուլղարիայի քաղաքացիական պայքարի և նրան հանեց 1989թ.: «Էկոզլասնոստի» հիմնական անդամներից մեկը՝ Դեյան Կիուրանովը, մի հարցազրույցում ասաց, որ չնայած «Էկոզլասնոստի» բողոքներին՝ 1989թ. նոյեմբերի սկզբում վարչակարգը դեռևս պահպանում էր ամբողջական ղեկավարումը: Ի դեպ, «Էկոզլասնոստի» առաջնորդները վախենում էին, որ իրենք զանգվածաբար կճնշվեն վարչակարգի կողմից՝ քաղաքից ԵԱՀԽ-ի պատվիրակության հեռանալուն պես:<sup>130</sup> «Ես չէի հավատում Շիվկովի տապալմանը մինչև այդ իրադարձության տեղի ունենալը և նույնիսկ դրանից էլ որոշ ժամանակ անց: «Էկոզլասնոստը» պատրաստում էր լուրջ պաշտպանություն ԵԱՀԽ-ի պատվիրակության մեկնումից հետո եկող շրջանի համար: Մենք ենթադրում էինք, որ մեր խոշոր առաջնորդները երկրից կարտաքսվեն: Մենք մտածում էինք, որ կունենանք անառաջնորդ կազմակերպություն: Որոշ մարդկանց պահում էինք. նրանք դուրս չէին գալիս հասարակության առջև, որպեսզի հետո կարողանան փորձել համակարգել որոշ գործողություններ»:<sup>131</sup> Իր գրվածքում Կիուրանովը միանգամայն հստակորեն ասում է, որ վարչակարգը և ոչ թե ընդդիմությունը հանգեցրեց Շիվկովի տապալմանը: «Չնայած հակառակ ենթադրություններին՝ իմ կարծիքն այն է, որ կանաչ հովանոցի տակ ընդդիմության գործողությունները հակաժիվկովյան հեղաշրջման ուղղակի պատճառը չէին... դա, ըստ էության, կուսակցության ներքին գործն էր: Որքան էլ ես ցանկանայի, չեմ կարող «Էկոզլասնոստին» կամ ընդդիմությանը վերագրել այդ լավ մտածված պալատական հեղաշրջման պատիվը»:<sup>132</sup>

Առաջին անկախ արհմիության առաջնորդներից մեկը՝ Պոդկրեպան, համաձայնեց, որ «1989թ. նոյեմբերին 10-ին տեղի ունեցավ պետական հեղաշրջում կուսակցության ներսում: 1989թ. նոյեմբերին և դեկտեմբեր ամսվա մեծ մասի ընթացքում երկրի կառավարումը դեռևս կուսակցության ձեռքին էր: Մենք գործադուլի մեր առաջին կոչը հասարակությանը հղեցինք կուսակցական ներքին հեղաշրջումից ավելի քան մեկ ամիս հետո միայն»:<sup>133</sup> Համեմատեք այս փաստը գործադուլների մակարդակի հետ Ֆրանկոյի վարչա-

130. Այս ընկալումը նույնպես մասն է այն պատճառի, որ ի տարբերություն Հունգարիայի, որտեղ կազմակերպված ընդդիմությունը նույնպես համեմատաբար ուշ հայտնվեց խաղի մեջ, Բուլղարիայում ժողովրդավարամետ խմբերը քիչ արձագանք էին գտնում հասարակության մեջ, և «բուլղարացիների մեջ գերակշռում էր այն զգացումը, որ Շիվկովի վարչակարգը դեռ բավարար ուժ ունի զինաթափելու ընդդիմությանը և սանձահարելու ցանկացած անկեղծ բարեփոխիչ ջանք»: *Տե՛ս* Վլադիմիր Տիշմանի-անու, «Քաղաքականության վերահայտնագործումը. Արևելյան Եվրոպայի Ստալինից մինչև Հավել» (Vladimir Tismaneanu, *Reinventing Politics: Eastern Europe from Stalin to Havel* (New York: Free Press, 1992), 221):

131. Ալֆրեդ Ստեփանի հարցազրույցը Դեյա Կիուրանովի հետ, Սոֆիա, 4 սեպտեմբերի, 1992թ.:

132. Կիուրանով, «Բուլղարիայի ընդդիմության քաղաքական կայացումը» (Kiuranov, "Political Establishment of the Bulgarian Opposition", 15):

133. Ալֆրեդ Ստեփանի հարցազրույցը Բոլկո Պրոյչևի հետ, Պոդկրեպայի քաղաքական խորհրդատու, Սոֆիա, 2 սեպտեմբերի, 1992թ.:

կարգի վերջին տարիներին, Լեհաստանի գործադուլների հետ և Սան-Պաուլոյի արդյունաբերական գոտու գործադուլների հետ:

Մեր եզրակացությունն այն է, որ ինքնուրույնաբար կազմակերպված ժողովրդավարական ընդդիմությունը՝ որպես գործուն ուժ, Բուլղարիայում ծագեց միայն 1989թ. կեսերին: Մինչ այդ բուլղարական վարչակարգը բազմակարծության առումով նմանվում էր ամբողջատիրական մոդելին:<sup>134</sup> Անգամ սառեցված հետամբողջատիրական Չեխոսլովակիան ունեցել է մշտական քաղաքական ընդդիմություն 1977թ-ից մինչև 1989թ. և «Խարտիա-77»-ի խմբերն ունեցել են բողոքի աչքի ընկնող առաջնորդներ, ինչպես օրինակ՝ Հավելը, և մշակել են բազմաթիվ ռազմավարական փաստաթղթեր բազմաթիվ հարցերի վերաբերյալ: Ի դեպ, երբ Չեխոսլովակիայում վարչակարգը տապալվեց, Հավելը և նրա աջակիցները հանդես եկան որպես հստակ բարոյական այլընտրանք, որը հաստատուն հեգեմոնիա ուներ քաղաքացիական հասարակությունում: Սրան հակառակ՝ վաղ հետամբողջատիրական Բուլղարիայում ընդդիմությունը թույլ էր, ուներ երկրում հայտնի քիչ առաջնորդներ և, ինչպես ապացուցեցին հետագա իրադարձությունները, վարչակարգի՝ ընդդիմության մեջ ներթափանցվածությունն այնքան խորն էր, որ բազմաթիվ առաջնորդներ նորից ու նորից մերկացվում էին որպես «գործակալներ» և գրկվում վստահությունից: Ավտորիտար Լեհաստանի, սառեցված հետամբողջատիրական Չեխոսլովակիայի կամ հասուն հետամբողջատիրական Հունգարիայի հետ համեմատած՝ 1989թ. Բուլղարիան քանակապես ուներ զգալիորեն ավելի քիչ ինքնուրույն շարժումներ: Քանի որ իշխանությունը միշտ հարաբերական է, ժողովրդավարական ընդդիմության այս թուլությունը մեծացրել էր ոչ ժողովրդավարական վարչակարգի կարողությունները: Այժմ դառնանք այն բանին, թե վարչակարգն ինչպես սկսեց ու ղեկավարեց անցումը:

Ժիվկովի դեմ կուսակցական ներքին հեղաշրջման երկու գլխավոր առաջնորդներից մեկը Պետար Մլադենովն էր, որն ի վերջո Բուլղարիայի կոմունիստական կուսակցության կողմից ընտրվեց որպես կուսակցության գլխավոր քարտուղար, և որը կոմունիստական կուսակցության աջակցությամբ ընտրվեց Բուլղարիայի նախագահ Ժողովրդական ժողովի կողմից: Որ նա վարչակարգին կողմ, բայց հակաժիվկովյան գործիչ էր, պարզ է դառնում Ժիվկովին, քաղբյուրոյին և կենտրոնական կոմիտեին ուղղված նրա արտաստվոր հրաժարական նամակից 1989թ. հոկտեմբերի 24-ին: Սկզբում Ժիվկովը նամակը շրջանառության մեջ չէր դրել, բայց ստորև բերվող հատվածները հենց այդ նամակից են, որը Մլադենովը հետագայում հրապարակեց ու երբեք չժխտեց: Այն հասակորեն ցույց է տալիս նրա անսասան պերեստրոյկայամետ կոմունիստ լինելը: Մլադենովը սկսել էր նամակը՝

134. Անգամ տնտեսության մեջ մասնավոր նախաձեռնությունները խստորեն սահմանափակվում էին՝ նպաստելով բազմակարծության առումով բավական համահարթված իրավիճակին: Մասնավոր տնտեսական գործունեությունը չափազանց քիչ էր և, «ըստ էության, չկար շուկայանման խթանների որևէ փորձ»: Տե՛ս Ջեկ Կոչանովիչ, Կալման Միշեի/Mizxei և Ջոան Նելսոն, «Անցումը Բուլղարիայում, Հունգարիայում և Լեհաստանում. ընդհանուր ակնարկ» (Jack Kochanowicz, Kalman Mizxei, and Joan M. Nelson, *"The Transition in Bulgaria, Hungary and Poland: An Overview"*), Ջոան Նելսոնի խմբ.՝ «Խախտու հավասարակշռություն. Ժողովրդավարությունը և տնտեսական բարեփոխումներն Արևելյան Եվրոպայում» (Joan M. Nelson, ed., *A Precarious Balance: Democracy and Economic Reform, in Eastern Europe* (San Francisco: ICS Press, 1994)), մեջբերումը՝ էջ 10: Նույն հատորում տե՛ս նաև Եկատերինա Նիկովա, «Անցումը Բուլղարիայում. դժվար սկիզբ» (Ekaterina Nikova, *"The Bulgarian Transition: A Difficult Beginning"*, 125-162):

ասելով, որ իր հայրն ու մայրը երկուսն էլ եղել են Բուլղարիայի կոմունիստական կուսակցության (ԲԿԿ) անդամներ, և որ ինքը վեց տարի սովորել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտում: Նամակը շարունակելով՝ նա շեշտում է, որ

Ես նշանակվել էի ԲԿԿ ԿԿ-ի պրոպագանդայի և ագիտացիայի վարչության պետ ... 1977թ. ես ընտրվեցի ԲԿԿ ԿԿ-ի քաղբյուրոյի անդամ (այսինքն՝ ավելի քան 18 տարի ես մասնակից եմ եղել մեր կուսակցության գերագույն ղեկավար մարմնին) ... Ես կարծում եմ, որ ընկեր ժիվկովի դժգոհության ու կոպտության [Մլադենովի նկատմամբ] իրական պատճառն այն է, որ նա հասկանում է, որ երկիրը տարել է դեպի խոր տնտեսական, ֆինանսական ու քաղաքական ճգնաժամ... [ժիվկովին] «հաջողվեց» մեկուսացնել Բուլղարիան աշխարհից, այն մեկուսացնել անգամ ԽՍՀՄ-ից, և այժմ մենք (և միայն մենք) գտնվում ենք Չաուշեսկուի ընտանեկան բռնապետության փտած վարչակարգի հետ մի նավակում: Միով բանիվ՝ Թողոր ժիվկովի քաղաքականությունը Բուլղարիան նետել է ժամանակի հոսքից դուրս... Ես կարծում եմ, որ բոլորս տեղյակ ենք, որ աշխարհում տեղի են ունենում խոշոր փոփոխություններ, և եթե Բուլղարիան ցանկանում է աշխարհի հետ համընթաց քայլել, ապա մեր քաղաքականությունը պետք է թարմացվի: Եթե անգամ մենք ուրիշ ոչ մեկի չենք հավատում, մենք պետք է հավատանք ԽՍՀՄ-ին և Խորհրդային Միության կոմունիստական կուսակցությանը:<sup>135</sup>

Ժիվկովի տապալումից հետո առաջին ամսվա ընթացքում պարզ չէր, թե արդյոք Մլադենովը ցանկանում էր պերեստրոյկա, թե՞ վարչակարգի ազատականացում: Սակայն երբ ժիվկովի անկումից մեկ ամիս հետո սկսվեցին վարչակարգի դեմ խոշոր զանգվածային հասարակական գործունե բողոքներ, Մլադենովը 1989թ. դեկտեմբերից մինչև 1990թ. փետրվարը նախաձեռնեց մի շարք ազատականացնող քայլեր: Այս քայլերից առավել կարևորներից մեկն այն էր, որ վերացվեց սահմանադրության 1-ին հոդվածը, որը կոմունիստական կուսակցությունը հռչակում էր որպես հասարակության միակ առաջատար ուժը:<sup>136</sup>

Բուլղարիայում անցման շրջանի մեկ այլ լուրջ փաստաթուղթ, որը ցույց էր տալիս, որ վարչակարգը վերահսկում է անցման ընթացքը, Բուլղարիայի «Կլոր սեղանի» մանրամասն ուսումնասիրությունն է:<sup>137</sup> Ի տարբերություն Հունգարիայում «Կլոր սեղանի», որ-

135. Նամակը վերապավեց *"The Insider: Bulgarian Digest Monthly"*, no. 1 (1990թ.), էջ 41-42: Նույն համարում Կոնստանդին Չակուրովը՝ ժիվկովին շատ մտերիմ քաղաքական խորհրդատուն, 1988-89թթ. հաստատեց ժիվկովի կողմից նամակի ստացումը, էջ 39:

136. Բուլղարիայի կոմունիստական կուսակցության տասնչորսերորդ (արտակարգ) համագումարում Մլադենովը «Կուսակցության վերակազմավորման և ժողովրդավարական սոցիալիստական հասարակության կառուցման մասին» իր զեկույցում դրեց ազատականացման հիմքերը, "On Restructuring the Party and Building a Democratic Socialist Society": Չեկույցը կոչ էր անում «դեպի հասարակությունը կողմնորոշված շուկայական տնտեսության» և հայտարարում էր, որ ԲԿԿ-ն պետք է «ապաստալինականացվի»: Ըստ "Keesing's"-ի՝ զեկույցին «հաջողեց տաք բանավեճ, որը ցույց տվեց բաժանումը բարեփոխիչների ու պահպանողականների միջև»: *See Keesing's Record of World Events, News Digest for February 1990*, էջ 37253:

137. Ռումիանա Կոլարովա և Դիմիտր Դիմիտրով, «Բուլղարիա» (Rumyana Kolarova and Dimitr Dimitrov, *"Bulgaria"*), Ջոն Էլսթերի խմբ.՝ «Կլոր սեղանի» բանակցությունները և կոմունիզմի անկումը» (Jon Elster, ed., *The Roundtable Talks and the Breakdown of Communism* (Chicago: University of Chicago

տեղ ժողովրդավարական ընդդիմությունն առաջինն անցկացրեց ընդդիմության «Կլոր սեղան» և սահմանեց բանակցությունների հաստատուն սկզբունքներն անգամ նախքան բանակցությունների մեջ մտնելու համաձայնությունը, Բուլղարիայում «Կլոր սեղանի» համար նախապատրաստական հանդիպումները համակարգում էր Անդրեյ Լուկյանովը՝ Բուլղարիայի կոմունիստական կուսակցության հեղաշրջման առաջնորդներից մեկը, որը «նախագահում էր բոլոր հանդիպումները, կազմում էր օրակարգը և ղեկավարում քննարկումները»:<sup>138</sup>

Ընդդիմությունն էլ ավելի թուլացավ այն պատճառով, որ ժողովրդավարական ընդդիմության որոշ առաջնորդներ, ինչպիսիք են՝ Տանբուևը, Պրոդևը, Ռուսսևը և Կիուրաևնովը, որոնք 1989թ. ընդդիմադիր կազմակերպության համահիմնադիրներից էին, բոլորը նորից միացել էին Բուլղարիայի կոմունիստական կուսակցությանը, շատերը՝ նախքան «Կլոր սեղանի» բանակցությունների փաստացի սկիզբը:<sup>139</sup>

Երբ «Կլոր սեղանի» բանակցություններն սկսվեցին 1990թ. հունվարին, Ալեքսանդար Լիլովն ընտրվեց կոմունիստական կուսակցության առաջնորդ, և Կուլարովայի ու Դիմիտրովի դատողությամբ՝ իրականությունն այն էր, որ Լիլովն ուներ այնպիսի դիրք, որ «ամբողջությամբ իր ձեռքն էր վերցրել իշխանության ղեկը և կարող էր զիջումներ անել, լայն հասարակության կողմից համարվում էր որպես փոխակերպման ու ժողովրդավարացման ապացույց և հզոր լեգիտիմացնող գործոն էր: Պետք է ընգծել այն փաստը, որ բոլոր խոշոր զիջումները հայտարարվել են կուսակցության առաջնորդ Լիլովի կողմից և լայնորեն տարածվել»:<sup>140</sup> Բուլղարիայի կոմունիստական կուսակցությունը՝ շնորհիվ խորհրդարանի վրա իր վերահսկողության, կարողացավ նաև սահմանել ընտրությունների օրը 1990թ. հունիսին, ավելի վաղ, քան կցանկանար նորելու ընդդիմությունը: Բուլղարիայի կոմունիստական կուսակցության մեկ այլ հաղթանակ էր նաև այն, որ կուսակցությունը կարողացավ համոզել բազմաթիվ պոստեցիալ ընտրողներին, որ Ժիվկովը և ոչ թե կոմունիստական կուսակցությունն է (1990թ. մարտից հետո հայտնի որպես Բուլղարիայի սոցիալիստական կուսակցություն (ԲՄԿ) եղել Բուլղարիայի անախորժությունների գլխավոր պատճառը:<sup>141</sup>

Վաղ հետամբողջատիրական համատեքստում, որտեղ իշխող կուսակցությունը կա-

Press, forthcoming)): Ապագա հղումները՝ 1991թ. չիրատարակված ձեռագրին, ««Կլոր սեղանի» բանակցությունները Բուլղարիայում», *"Round Table Talks in Bulgaria"*:

138. Կուլարովա և Դիմիտրով, ««Կլոր սեղանի» բանակցությունները Բուլղարիայում» (Kolarova and Dimitrov, *"Round Table Talks in Bulgaria"*, 12):

139. Նույն տեղում, էջ 8: Պրոդևը վերադարձավ՝ դառնալու կուսակցական լրագրի խմբագիրը՝ «այն դարձնելով այնքան բազմազան ու հետաքրքիր, որքան ընդդիմադիր մամուլը» և նպաստելով կուսակցության նոր, ազատականացված կերպարին: *Տե՛ս Ջոն Բել*, «Հետկոմունիստական Բուլղարիան» (John D. Bell, *"Post-Communist' Bulgaria"*, Current History (Dec. 1990): 417-20, 427-29, quote from p. 420):

140. Կուլարովա և Դիմիտրով, ««Կլոր սեղանի» բանակցությունները Բուլղարիայում» (Kolarova and Dimitrov, *"Round Table Talks in Bulgaria"*, 33-34):

141. Օրինակ՝ նախընտրական հարցման ժամանակ Բուլղարիայի սոցիալիստական կուսակցության համակիրների 60%-ը Բուլղարիայում ճգնաժամի համար մեղադրում էր «Ժիվկովին և իր մաֆիային», սակայն նրանց միայն 7%-ն էր մեղադրում նախորդ կոմունիստական կուսակցությանը: Այս նախընտրական հարցման վերլուծությունը, *տե՛ս* «Քաղաքական փոփոխությունները Բուլղարիայում. նախընտրական վերաբերմունքներ», *"The Political Change in Bulgaria: Pre-Election Attitudes"*, «Կայունությունը և անցումը ժողովրդավարության Բուլղարիայում», *"Stability and Transition to Democ-*

րող էր մարմնավորել բռնապետությունը, իրեն վերագրել դրա տապալման պատիվը և իրեն ներկայացնել որպես ազատականացման նախաձեռնող, որտեղ ընդդիմությունը դեռևս պառակտված էր, որտեղ խորհրդային Միությունը երբեք չէր համարվել որպես ազգայնականության գլխավոր թշնամի, և որտեղ ընդդիմությունը գրեթե չուներ կազմակերպական ներկայություն գյուղական վայրերում, իշխող կուսակցությունը ի տարբերություն Հունգարիայի և Չեխոսլովակիայի, հաղթեց առաջին ազատ ու արդար ընտրություններում:

Մենք համամիտ ենք ընտրությունների դիտորդների մեծ մասի հետ, որ 1990թ. ընտրություններում Բուլղարիայի սոցիալիստական կուսակցությունն ուներ բազմաթիվ կառուցվածքային առավելություններ, սակայն ընտրությունները հիմնականում արդար էին: Նախընտրական հանրային հարցումների մեծ մասում, ի դեպ, Բուլղարիայի սոցիալիստական կուսակցությունը ստացել էր մի փոքր առաջնություն: Սա մեզ ստիպում է մտածել, որ ընտրությունների օրը մեծ կեղծիք չի եղել: Ժողովրդավարական ուժերի միությունը (UDF) հաղթեց խոշոր քաղաքների մեծ մասում, սակայն լավ արդյունքների չհասավ գյուղական վայրերում, որտեղ նրանց արդիականացման ուղերձը եթե անգամ լավեց, ապա վստահության չարժանացավ Բուլղարիայի համեմատաբար տարեց գյուղական բնակչության զգալի մասի կողմից:<sup>142</sup>

Որոշ վերլուծաբաններ ավելի խիստ են իրենց դատողություններում և պնդում են, որ տեղական ԲԿԿ ակտիվիստները շահարկեցին գյուղական ընտրողների մտահոգությունները: «Մարդկանց այնտեղ պարզապես ասացին, որ նրանք կգրկվեն կենսական նշանակության մատակարարումներից, եթե քվեարկեն ընդդիմության օգտին: 1990թ. հունիսից հետո մի շարք մուսուլմանական գյուղեր Հարավային Բուլղարիայում իսկապես գրկվեցին մատակարարումից, երբ պարզվեց, որ նրանք աջակցել են «Ժողովրդավարական ուժերի միության» իրավունքների ու ազատությունների համար շարժմանը»:<sup>143</sup> Բուլղարի-

*racy in Bulgaria*» (Ժողովրդավարության ուսումնասիրությունների կենտրոն, Սոֆիա, 1990թ., occasional paper 1), էջ 15:

142. *Stéu* «Քաղաքական փոփոխությունները Բուլղարիայում. հետընտրական վերաբերմունքներ», *“The Political Change in Bulgaria: Post-electoral Attitudes”*, «Կայունությունն ու անցումը ժողովրդավարության Բուլղարիայում», *“Stability and Transition to Democracy in Bulgaria”*, էջ 19-38:

143. *Stéu* Պլամեն Ցետկով, «Անցման քաղաքականությունը Բուլղարիայում. հե՛տ դեպի ապագան» (Plamen S. Tzetkov, *“The Politics of Transition in Bulgaria: Back to the Future?”* Problems of Communism (May–June 1992): 34-42, quote from p. 34, n. 1): Համեմատական վերլուծությամբ հետաքրքրվող վերլուծաբանները կարող են Բուլղարիան համեմատել Պարագվայի հետ, որտեղ գեներալ Ստրեսներին մտերիմ դաշնակիցները տապալեցին նրա բռնապետությունը, բավարար վստահություն շահեցին ազատականացում սկսելու համար և կարողացան օգտագործել «Կոլորադո» կուսակցությունների ռեսուրսները բաժանված ու թույլ ընդդիմության դեմ՝ հաղթելու առաջին ազատ ընտրություններում, հատկապես՝ գյուղական վայրերում ուժեղ մասնակցության պայմաններում:

1991թ. հունիսի հարցումը մեզ կտա գյուղական վայրերում Բուլղարիայի սոցիալիստական կուսակցության (ԲՄԿ) հաջողությունը հասկանալու բանալին: Հարցման արդյունքներով մեծ տարբերություն չկա քաղաքների ու գյուղական վայրերի միջև՝ ըստ պատասխանների այն հարցին, թե «Արդյո՞ք նախընտրում եք ներկայումս մեր ունեցած կառավարման համակարգը, թե՞ այն, որ ունենք հեղափոխությունից առաջ»: Դրական պատասխաններ տրվել էին համապատասխանաբար 80 և 70%-ի կողմից: Սակայն երբ անցում էինք ութ հարցից բաղկացած մի շարքի կառավարման համակարգի վերաբերյալ, գյուղական վայրերում «չգիտեմ»-ների տոկոսը հասնում էր 42-64-ի՝ համեմատած քաղաքների 17-26-ի հետ: Ուշագրավն այն է, որ այն դրույթին, որ «Յուրաքանչյուրն ազատ է ասելու այն, ինչ ինքը մտա-

այի սոցիալիստական կուսակցության հաղթանակը 1990թ. հունիսի ընտրություններում նշանակում էր, որ կուսակցությունը վերահսկում էր խորհրդարանն ու կառավարությունը և կարողացել էր վերկանգնել իր իշխանությունը «Կլոր սեղանի» քննարկումների մասնակցության և համաժողովրդական մանդատի հիման վրա:

Ընտրություններից հետո Բուլղարիայի սոցիալիստական կուսակցության մղումը շարունակելու խորհրդանշական կամ էական բարեփոխումների իրականացումն ինչ-որ չափով դանդաղեց: Նոր անվանում կրող Բուլղարիայի սոցիալիստական կուսակցությունը շարունակեց զբաղեցնել Բուլղարիայի կոմունիստական կուսակցության նախկին կենտրոնակայանը: Բուլղարիայի սոցիալիստական կուսակցության համաժողովի ժամանակ 1990թ. սեպտեմբերին, կուսակցությունը նախընտրեց ընդգծել շարունակականության որոշ աստիճան անցյալի հետ՝ հանդիպումը անվանելով Բուլղարիայի սոցիալիստական կուսակցության երեսունիններորդ համաժողով (կուսակցության առաջին համաժողովի փոխարեն): Գերագույն խորհրդում ընտրված կուսակցության համաժողովի 151 ներկայացուցիչներից քչերն էին հաստատակամորեն հարում բարեփոխական խմբակցությանը: Ալեքսանդար Լիլովը, որը Ժիվկովի դեմ կուսակցական ներքին հեղաշրջման առաջնորդներից մեկն էր, և որը, սակայն, եղել էր նաև Ժիվկովի գլխավոր գաղափարախոսը 1974-1983թթ., վերընտրվեց կուսակցության նախագահ:<sup>144</sup>

Ընդդիմության կողմում նախկին կոմունիստական կուսակցության հաղթանակն ստեղծեց որոշ դժվարություններ քաղաքական հասարակության մեջ հաստատուն ժողովրդավարական փորձի կայացման համար: Ընդդիմության առավել ինտենսիվ պայքարները քաղաքացիական հասարակությունում տեղի ունեցավ ընտրություններից հետո, ոչ առաջ, և կարծես թե փողոցները մի պահ փոխարինեցին խորհրդարանին՝ որպես քաղաքականության կենտրոնի: 1990թ. ամռան ընթացքում իր բողոքը բարձրացրած երիտասարդության «վրանային քաղաքները» սկսեցին հայտնվել որոշ խոշոր քաղաքներում: Դեռևս անբացատրելի, սակայն վտանգավոր մի պատահարի ժամանակ 1990թ. օգոստոսի 26-ին Բուլղարիայի սոցիալիստական կուսակցության կենտրոնակայանն «այրվեց պոգրոմի արդյունքում», ինչպես Ազգային ժողովն անվանեց այդ աղետը:<sup>145</sup> Բուլղարացի հասարակագետ Եկատերինա Նիկոլան այդ ժամանակները նկարագրում է հետևյալ

ձևով է՝ «45% գյուղական վայրերից պատահանողներ և 17% քաղաքային բնակավայրերից պատասխանողներ տվել են «չգիտեմ» պատասխանը: Կասկած ենք հայտնում, որ գյուղական բնակավայրերում «չգիտեմ»-ների այս բարձր տոկոսն արտահայտում է սոցիալական վերահսկողության մթնոլորտը, որը հանգեցնում է զգուշավորության: Մյուս կողմից՝ պետք է ընդունել, որ գյուղական բնակչությունը հատկապես բարեհաճ է վերահսկվող տնտեսության նկատմամբ (78%): Տե՛ս NAPOC հարցումը, «Բաժանումները Բուլղարիայի ներսում. տնտեսական ու քաղաքական վարքագծի հետազոտության արդյունքներ», *"Divisions within Bulgaria: Results of a Survey of Economic and Political Behavior"*, *Studies in Public Policy*, no. 199 (1992թ.), հարցերը՝ էջ 57, 58, 63:

144. Տե՛ս մանրամասն հոդվածը Դունկան Պերրիի կողմից՝ «Բուլղարիայի սոցիալիստական կուսակցության համագումարը. պահպանողականությունը պահպանվում է» (Duncan M. Perry, *"The Bulgarian Socialist Party Congress: Conservatism Preserved"*, Report on Eastern Europe (Oct. 26, 1990): 4-8):

145. Վերլուծություն հրդեհի մասին, BSP-ի մեղադրանքների մասին, որ դա ընդդիմության կողմից հրահրված վայրագություն էր և ժողովրդավարական ուժերի միության (UDF) հակամեղադրանքների մասին, որ դա արվել է ԲՄԿ-ի կողմից՝ այրելու մերկացնող փաստաթղթերը, տե՛ս Մարկ Բասկին, «ԲՄԿ կենտրոնակայանի վրա գրոհի քաղաքականությունը» (Mark Baskin, *"The Politics of the Attack on BSP Headquarters"*, Report on Eastern Europe (Sept. 28, 1990): 8-12):

կերպ. «1989-1992թթ. ամբողջ ժամանակահատվածում Բուլղարիայի քաղաքականությունը մնացել էր նախաքաղաքականության կամ հակաքաղաքականության փուլում: Կենդանի էր մնում հեղափոխական պաթոսը անցյալին, ԿԳԲ-ին, Մոսկվային և տարբեր դավադրություններին ժամանակավրեպ պարանոիկ կառչածության» հետ: <sup>146</sup> Այնպիսի պարագաներում, որոնք ավելի նման էին արևելագերմանական քաղաքականությանը վաղ հետամբողջատիքական վարչակարգի անկումից հետո, նախկին ժողովրդավարական ընդդիմության մի շարք խոշոր առաջնորդներ կորցրեցին լեգիտիմությունը, երբ բացահայտվեց, որ նրանք եղել են «ոստիկանության գործակալներ» նախորդ վարչակարգի օրոք: <sup>147</sup>

Ժողովրդավարական ինստիտուտների լեգիտիմության համար հավանաբար առավել վտանգավոր վերաբերմունքը UDF-ի որոշ անդամների դժկամությունն էր՝ ընդունելու ԲՄԿ-ի դեկավարած «պաշտոնական ժողովրդավարության» լեգիտիմությունը: UDF-ի մի խմբակցություն («Մուգ կապույտներ» անվանմամբ), ընդդիմադիր լինելով «Բաց կապույտներին», որ սկզբնապես UDF կուսակցության հիմնական հոսանքն էր, բողոքարկեցին նոր ժողովրդավարության սահմանադրությունը՝ մշակելու ԲՄԿ-ի ունեցած պաշտոնական մեծամասնության բարոյական լեգիտիմությունը: Նրանց բողոքի մարտավարությունը ներառում էր Ազգային ժողովում սահմանադրական բանավեճերից թողնել-հեռանալը: <sup>148</sup> Նրանց հատկապես զայրացնում էր այն, որ սահմանադրությունը դժվարացնում է վարչակարգի նախկին պաշտոնյաների քրեական հետապնդումը պաշտոնավարության ընթացքում նրանց անօրինական գործողությունների համար: Մամուլում և Ալֆրեդ Ստեփանի հետ բազմաթիվ հարցազրույցներում այս խումբը հարց էր տալիս, թե արդյոք պաշտոնական ժողովրդավարական սահմանադրական ընթացակարգերը պե՞տք է առաջնություն ունենան արդարության բարոյական հրամայականների նկատմամբ: Ըստ մեր կատեգորիաների՝ «Մուգ կապույտները» ժամանակ առ ժամանակ ընդդիմության մեջ եղել են միայն կիսահավատարիմ ժողովրդավարներ 1990-91թթ.: Անգամ 1991-92թթ. ժամանակահատվածում՝ 1991թ. հոկտեմբերի համընդհանուր ընտրություններում UDF-ի հաղթանակից և «Մուգ կապույտ» ակտիվիստներից մեկի՝ Ֆիլիպ Դիմիտրովի մեկ տարի վարչապետ լինելուց հետո, նրանք վարում էին որոշ կիսահավատարիմ գործունեություն: <sup>149</sup>

146. Նիկոլա, «Բուլղարիայի անցումը», *"The Bulgarian Transition"*, էջ 137:

147. Առավել վարկաբեկող գործում ներգրավված էր UDF-ի առաջնորդ Պետար Չերոն, որը ստիպված էր հրաժարական տալ 1990թ. դեկտեմբերին, երբ ներկայացվեց մեղադրանք, որ նա երկար տարիներ եղել է պետական անվտանգության իրազեկիչ: *Տե՛ս Ռադա Նիկոլան*, «Հուսիս և բարկության միջև» (Rada Nikolaev, *"Between Hope and Anger"*, Report on Eastern Europe (Jan. 4, 1991):5-10):

148. 1991թ. մայիսին 50 UDF պատգամավորներ լքեցին Ազգային ժողովը՝ ցույց տալով, որ իրենք չեն ցանկանում աշխատել BSP-ի հետ, սակայն «ընդդիմության պատգամավորների երկու երրորդը մնաց Խորհրդարանում՝ պնդելով, որ կոմունիստների նկատմամբ ավելի հաշտվողական վերաբերմունքը կարող է նրանց դարձնել ժողովրդավարության կողմը»: *Տե՛ս Պլամեն Ցետկով*, «Անցման մոտեցումները Բուլղարիայում. հե՞տ դեպի ապագան» (Plamen S. Tzvetkov, *"The Politics of Transition in Bulgaria: Back to the Future?"* Problems of Communism (May-June 1992): 35):

149. Ալֆրեդ Ստեփանի տված հարցազրույցները Բուլղարիայում 1992թ. օգոստոսի 3-ից մինչև սեպտեմբերի 4-ը: Թեև ընդդիմության որոշ անդամներ «ջատագովում էին վերջնական հաշտեցումը և դեմ էին BSP-ի պաշտոնյաների դեմ պատժամիջոցներ կիրառելու գաղափարին», մեկ այլ խմբակցություն («Մուգ կապույտները») «ընդունել էին շատ ավելի կտրուկ տոն՝ հաճախ անվանելով BSP-ին «մարդասպաններ» և «մաֆիա»՝ թողնելով այնպիսի տպավորություն, որ UDF-ը կիրականաց-



Չնայած այս խնդիրներին, 1995 թվականին Բուլղարիան դեռևս գործող ժողովրդավարական համակարգ էր: 1991թ. ԲՄԿ-ն սկսեց իրեն ներքուստ նորացնել ավելի ժողովրդավարական ձևով այն բանից հետո, երբ նրանք բավարար ձայներ չստացան իշխանությունը պահելու համար: 1991թ. դեկտեմբերին ԲՄԿ-ի չորրորդ կուսակցական համաժողովում դեկավարությունն սկսեց նորանալ՝ բազմաթիվ երիտասարդների կարևոր պաշտոնների ստանձամար: "UDF"-ն՝ ի տարբերություն դրա, բախվում էր ավելի մեծ դժվարություններին: 1994 թվականին ի նշան «Մուգ կապույտների» կողմից բողոքի UDF-ի շարունակվող վերահսկողության դեմ «Ժողովրդավարական կուսակցությունն» ու «Էկոլոլանսոստի» խոշոր խմբերը հեռացան UDF-ից: Ի դեպ, «Էկոլոլանսոստը» քաղաքացիական հասարակության առավել հայտնի ընդդիմադիր խումբը, 1989թ. հոկտեմբեր-նոյեմբերին տեղի ունեցած հակավարչակարգային ցույցերում *միացավ* ԲՄԿ-ին ընտրական կռաւիցիայում: 1994թ. դեկտեմբերին՝ երկրորդ համընդհանուր ուղղակի ընտրությունների ժամանակ, UDF-ի ձայների ընդհանուր մասնաբաժինը նվազեց: ԲՄԿ կռաւիցիան ձայների 43.5%-ով գրավեց տեղերի 52%-ը: 1995թ. հունվարին սա հանգեցրեց 1991թ-ից ի վեր կուսակցական իշխանության երկրորդ խաղաղ փոփոխության, երբ տեղի ունեցավ Ժան Վիդենովի երդմնակալությունը որպես վարչապետ:<sup>150</sup>

1995թ. սկզբին UDF-ն, այսպիսով, նորից ընդդիմության մեջ էր և դեռևս անմիաբան այն հարցում, թե արդյոք պետք է հանդիսանա կուսակցություն, թե՞ շարժում: Օրինակ, UDF-ը շարունակում էր հավասար ձայներ տալ իր կազմակերպության տասնյոթ անհամադրելի խմբերին: Այլ կերպ ասած՝ UDF-ը դեռ պետք է կտրվեր վաղ հետամբողջատիրական համատեքստում որպես հովանոց-շարժում առաջ գալու իր նախաքաղաքական ակունքներից՝ փոխակերպվելու համար ժամանակակից ժողովրդավարական կուսակցության:

Նախորդ վարչակարգի տիպի տեսանկյունից Բուլղարիան 1989-1995թթ. ժամանակահատվածում ժողովրդավարության առումով հավանաբար ունեցել է «գերկատարողական»: Բուլղարիայի օրինակը կարիք ունի ավելի շատ ուսումնասիրության դիտորդների կողմից, ովքեր ավելի գիտակ են, քան մենք: Մակայն մենք առաջարկում ենք երկու վարկած՝ բացատրելու այս ժողովրդավարական «գերկատարողականը». վարկածներից մեկը վերաբերում է ինստիտուցիոնալ ընտրությանը, իսկ մյուսը՝ այնպիսի մի անտեսված հարցի, ինչպիսին է Բուլղարիայի նախասանցումային քաղաքացիական հասարակությունը:

---

նի կառավարության մեծ գտումներ: Ե՛վ BSP-ն, և՛ UDF որոշ անդամներ այս մտեցումն անվանեցին «մրքբարտիզմ»: *Տե՛ն Բել*, «Հետկոմունիստական Բուլղարիան» (Bell, "Post-Communist Bulgaria", 427): Ջ. Ֆ. Բրաունն ավելի հեռուն է գնում «Մուգ կապույտների» իր քննադատության մեջ: Նա պնդում է, որ նրանք նպաստել են վտանգավոր առճակատիչ մտեցումներին 1992-93թթ.: «Նախկին կոմունիստները (այժմ սոցիալիստները) առավել մեղավորներ չէին, ընդհակառակը, «ամբողջատիրական» հակակոմունիստներն են սպանացել, որ իրենց մոլեգին են պահելու»: Ջ. Ֆ. Բրաուն, «Չույսեր և ստվերներ. Արևելյան Եվրոպան կոմունիզմից հետո» (J. F. Brown, *Hopes and Shadows: Eastern Europe after Communism* (Durham: Duke University Press, 1994), 105-14, quote from p. 113):

150. 1994թ. ընտրությունների մասին տեղեկությունների համար պարտական ենք Դեսիսլավա Ջագորչևայի չիրատարակված կյոթին՝ «Անցումը ժողովրդավարության Բուլղարիայում և Հունգարիայում» (Dessislava Zagorcheva, "The Transition to Democracy in Bulgaria and Hungary" (Department of Political Science, Central European University, Budapest, January 1995)) և Ստեֆան Կրաուզեին, «Բուլղարիա. սոցիալիստներն իշխանության ղեկին» (Stefan Krause, "Bulgaria: Socialists at the Helm", Transition 1, no. 4 (1995): 33-38):

Ինստիտուցիոնալ ընտրության հարցը վերաբերում է Բուլղարիայում խորհրդարանական շրջանակի նախնական ու փոքրամասնության ներկայացվածությանը նպաստող համամասնական ներկայացուցչության շարունակվող կիրառմանը: Կառավարության խորհրդարանական ձևը Բուլղարիայի դյուրաբեկ ժողովրդավարությանը տվեց որոշ ճկունություն, որը նախագահական կամ կիսանախագահական համակարգը չէր տա: Օրինակ, երբ նախագահ Մլադենովը ներգրավվեց մի սկանդալային պատմության մեջ՝ բողոքողների դեմ տանկեր գործադրելու իր հնարավոր հորդորանքով, խորհրդարանը 1990թ. օգոստոսին կարողացավ որպես նախագահ ընտրել UDF ընդդիմության առաջնորդ Ժելյու Ժելին՝ մեծ հեղինակություն վայելող այլախոհ փիլիսոփային (այնուհետև 1991թ. հուլիսի Սահմանադրությունը ներմուծեց կիսախորհրդարանական համակարգ՝ նախագահի ուղղակի ընտրությամբ):

1991թ. հոկտեմբերի ընտրություններում հաղթեցին «Մուգ կապույտները», ինչը նպաստեց նրանց՝ սովորական քաղաքականության մեջ մի քիչ ավելի ներգրավվելուն: Այն, որ նախապատվությունը տրվեց համամասնական ներկայացուցչությամբ ընտրվող խորհրդարանին, նույնպես նշանակում էր, որ ինչ-որ չափով մեղմացել են Բուլղարիայում թուրք փոքրամասնության նկատմամբ քաղաքական դրդապատճառներ ունեցող հարձակումները, քանի որ երկու խոշոր կուսակցություններն էլ ժամանակ առ ժամանակ ցանկանում էին իրականացնել այնպիսի ռազմավարություն, որը նրանց կդարձներ ընդունելի «կոալիցիոն գործընկեր» մուսուլմանների վրա հենվող «Իրավունքների ու ազատության համար շարժման» (MRF) համար, որն առաջին մի քանի ընտրություններում տրամադրել էր «տատանվող քվեն»: Ի դեպ, MRF-ը վճռական գործընկեր էր ԲՄԿ փոքրամասնական կառավարությունում և UDF փոքրամասնական կառավարությունում:<sup>151</sup>

Բուլղարիայի գերկատարողականը բացատրելու մեր երկրորդ վարկածը վերաբերում է քաղաքացիական հասարակության մասին մի անսպասելի հայտնագործության: Ընդդիմության կազմակերպվածության վերաբերյալ մենք համոզված ենք, որ մինչև 1988թ. Բուլղարիան մոտ է եղել ամբողջատիրական կատարելատիպին: Սակայն համալսարանների ու հետազոտողների կյանքն այնքան փակ չի եղել, որքան կարելի է ենթադրել: Չնայած այդ գիտնականները չեն կազմակերպել բողոքներ կամ գրել քննադատական հոդվածներ, նրանց հասանելի է եղել ազգային գրադարանում նյութերի մի զարմանալիորեն լայն բազմազանություն՝ շատ ավելի, քան նրանց գործընկերներին Չեխոսլովակիայում կամ ԽՍՀՄ-ում: Սա նշանակում է, որ Բուլղարիան ուներ ավելի շատ մտավոր կապիտալ, քան մեր՝ վաղ հետամբողջատիրություն կատեգորիան թույլ կտար: Մենք ուրախ ենք, որ ուշադրություն ենք հրավիրում Բուլղարիայի վաղ հետամբողջատիրու-

151. Իսկապես, Նիկովան հաստատում է, որ «Դիմիտրովի կառավարությունը փաստորեն փոքրամասնության կառավարություն էր, որի ճակատագիրը կախված էր MRF-ի հետ համագործակցությունից: UDF-MRF կոալիցիան կարգապահ էր, լուրջ հարցերի կապակցությամբ քվեարկում էր որպես բրկ... Արևելյան Եվրոպայում եզակի մի իրավիճակում մի փոքր, էթնիկ հիմք ունեցող շարժում ստանձնել էր իրական ազգային կուսակցության դերը՝ դրանով խանգարելով UDF և BSP ծայրահեղականների համատեղ ջանքերին»: *Տե՛ս* Եկատերինա Նիկովա, «Բուլղարիայի անցումը և նոր «մասնավորեցման կառավարությունը» (Ekaterina Nikova, "Bulgaria's Transition and the New Government of Privatization:" Woodrow Wilson Center East European Studies Meeting Report, no. 82, p. 1): MRF-ի տատանողական դերը 1990-94թթ. հավանաբար մեծացրեց Բուլղարիայի կարողությունները՝ հաղթահարելու իր հնարավոր պետութենականության խնդիրները:

թյան այս անոմալ առանձնահատկության վրա:<sup>152</sup> Չնայած այս լավատեսական վարկածին՝ այդուհանդերձ, մեզ մտահոգում է այն, որ վաղ հետամբողջատիրության որոշ հետևանքներ (այսինքն՝ գրեթե համահարթեցված քաղաքացիական, քաղաքական ու տնտեսական հասարակությունները և ուժեղ հակաքաղաքական լարվածությունը կուսակցություններում և հասարակության մեծ մասում) փոխադարձաբար գորացնում են միմյանց: Այսպիսով, այս ասպարեզներից յուրաքանչյուրի վերակազմավորման մարտահրավերը դժվարին, սակայն անհրաժեշտ խնդիր է ժողովրդավարության կայացման համար:<sup>153</sup> Այս առումով մենք պետք է գրանցենք որոշ սթափեցնող փաստեր: Բուլղարիայում, Չեխիայի Հանրապետությունում, Սլովակիայում, Հունգարիայում, Լեհաստանում և Ռումինիայում իրականացված մի հետազոտության ժամանակ ի պատասխան այն հարցին, թե «Ամենից լավ չէ՞ր լինի, արդյոք, խորհրդարանից ու ընտրություններից ազատվելն ու մի ուժեղ առաջնորդ ունենալը, որն արագորեն որոշումներ կկայացնէր», հարցման ենթարկված բուլղարացիների 45%-ը խիստ համաձայն կամ ինչ-որ չափով համաձայն է եղել: Հունգարիան և Չեխիայի Հանրապետությունն ավելի մոտ էին ժողովրդավարության կայացմանը «վերաբերմունքային» աջակցության մեր չափանիշը բավարարելուն նրանով, որ բնակչության միայն համապատասխանաբար 18 և 16%-ն է խիստ համաձայն կամ ինչ-որ չափով համաձայն եղել այս հակաժողովրդավարական դրույթին:<sup>154</sup>

Մեր եզրակացությունն այն է, որ գոյություն ունի մեծ բազմազանություն, և կան էվոլյուցիայի որոշ հնարավորություններ վարչակարգի հետամբողջատիրական տիպից: Այժմ մենք պատրաստ ենք հետազոտելու ժողովրդավարությանն անցման ու ժողովրդավարության կայացման համար վարչակարգի կազմության անգամ է՛լ ավելի մի դժվարին տիպ: Մենք այն համարում ենք վարչակարգի առավել դժվարին ու ամենվատ ընկալված կառուցվածքը, մի կազմություն, որը համակցում է սուլթանական և ամբողջատիրական միտումները:

152. Այս դիտարկումը հիմնված է Ալֆրեդ Ստեփանի՝ 1989թ. դրությամբ Պրահայի, Մոսկվայի և Մոֆիայի տարբեր գրադարանների պարունակության ուսումնասիրության վրա և հաստատվել է բուլղարացի գիտնականների կողմից, ինչպես, օրինակ՝ տնտեսագետ Մարիա Տոթորովան և հասարակագետ Դեյան Կիուրանովը, ովքեր հետազոտական աշխատանք են իրականացրել և՛ Մոսկվայում, և՛ Բուլղարիայում 1989 թ-ին նախորդած ժամանակահատվածում:

153. Տնտեսական հասարակության մեջ բազմակարծության կարևորության և քաղաքական հասարակության մեջ դրա արտահայտման վերաբերյալ Հերբերթ Կիցչելը նշում է, որ «Բուլղարիայում անցումը ժողովրդավարության ձևավորվել է կոմունիստական կուսակցության հատվածների կանխարգելող հարվածից, որոնք հետո ձեռք են բերել տնտեսական փոխակերպման մեծ մասը ձևավորելու դիրք, որովհետև ընդդիմադիր ուժերը չեն ունեցել համապատասխան կարողություններով օժտված հակավերնախավ, որը կկարողանար գործունե կերպով կազմակերպել քաղաքական-տնտեսական փոխակերպումը... Բուլղարիայի քաղաքական պատկերից բացակայում է իսկապես ազատ կամքի կողմնակից շուկայամետ քաղաքական ուժը, որը համարժեք կլինի Լեհաստանում կամ Հունգարիայում եղած ուժերին»: Հերբերթ Կիցչելը. «Քաղաքական ներկայացուցչության ծագող կառույցներն Արևելյան Եվրոպայում» (Herbert Kitschelt, *"Emerging Structures of Political Representation in Eastern Europe"* (paper prepared for the conference on the Social and Political Bases of Economic Liberalization, Warsaw, September 23-26, 1994), quotes from pp. 14 and 32):

154. Ռիչարդ Ռոուզ և Քրիստիան Հեյպֆեր, «Նոր ժողովրդավարությունների Բարոմետր 111. դաս քաղել տեղի ունեցող իրադարձություններից» (Richard Rose and Christian Haepfer, *"New Democracies Barometer III: Learning from What Is Happening"*, Studies in Public Policy, no. 230 (1994): table 45):

## Ամբողջատիրության և սուլթանականության միաժամանակյա ազդեցությունը ժողովրդավարությանն անցման վրա. Ռումինիա

ՌՈՒՄԻՆԻԱՆ բազմաթիվ տարբերություններ ունի Արևելյան Եվրոպայի Վարչավարչական պայմանագրի նախկին անդամ երկրներից (Բուլղարիա, Չեխոսլովակիա, Հունգարիա, Լեհաստան և Ռումինիա):<sup>1</sup> Այնտեղ անցումը կատարվեց ամենավերջինը: Այնտեղ կատարվեց վարչակարգի գործունեության ամենաբռնի դադարեցումը: Սա միակ երկիրն էր, որտեղ ոչինչ նույնիսկ հեռավոր կերպով չէր հիշեցնում ազգային «Կլոր սեղանը»: Դա մի երկիր է, որտեղ հաջորդող վարչակարգն իրականացրեց մարդու իրավունքների ամենակոպիտ ոտնահարումները: Սա միակ երկիրն է, որտեղ ժողովրդավարական ընդդիմությունը դեռ պետք է հաղթի ազգային ընտրություններում: Սա միակ երկիրն է, որտեղ նախկին կոմունիստական բարձր պաշտոնյան ոչ միայն ընտրվեց նախագահական առաջին ազատ ընտրություններում, այլև վերընտրվեց:<sup>2</sup>

1. Այս գլխում քննարկվում են Alfred Stepan (Alfred Stepan), *"Romania: In a Sultanistic State"*, Times Literary Supplement (Oct. 1992), 26-27 աշխատության մեջ նախկինում ներկայացված որոշ նյութեր: Երախտագիտություն ենք հայտնում վերահրատարակման թույլտվության համար:

2. Բհարկե, այս «բացառիկության» մի մասն ունի պատմական արմատներ, որոնք նախորդում են կոմունիստական ժամանակաշրջանին: Արևելյան Եվրոպայում Ռումինիան ուներ միջպատերազմյան ժողովրդավարության ամենաքիչ փորձը և ամենաուժեղ տեղական ֆաշիստական շարժումները (Արխանգել Միխայիլի լեգեոնը կամ պողպատյա գվարդիան): Այս ժամանակաշրջանի մասին տե՛ս Յուջին Վեբերի (Eugene Weber) *"Romania"* կարևոր ուսումնասիրությունը՝ Hans Rogger and Eugene Weber, eds., *"The European Right: A Historical Profile"*, (Berkeley: University of California Press, 1966), 501-74 գրքում և Henry L. Roberts, *"Romania: Political Problems of an Agrarian State"* (New York: Yale University Press, 1951): Այս գլխի նպատակի համար Չաուշեսկուի լավագույն կենսագրությունը՝ Օրսֆորդի պատմաբան Սարք Ալմոնդի (Mark Almond) *"The Rise and Fall of Nicolae and Elena Ceausescu"* (London: Chapman, 1992), Anneli Ute Gabanyi, *"Die unvollendete Revolution: Rumanien zwischen Diktatur und Demokratie"* (Munich: Piper, 1990) աշխատությունը հատկապես օգտակար է Չաուշեսկուի տապալման բարդ քաղաքականությունը հասկանալու համար: Ռումինիայի ժամանակակից պատմության առումով օգտակար է Martyn Rady, *"Romania in Turmoil: A Contemporary History"* (London: I. B. Tauris, 1992) աշխատությունը, որը ներառում է հետադարձական ժամանակաշրջանին վերաբերող յոթ կարճ գլուխ: *Skéu íssu* Daniel Nelson, ed., *"Romania after Tyranny"* (Boulder, Colo.: Westview Press, 1992):

## ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ԲԱՅԱՌԻԿՈՒԹՅԱՆ ՓԼՈՒԶՈՒՄԸ

Ինչո՞վ է բացատրվում այսպիսի բացատրվածությունը: Նախ պետք է ընդունենք, որ Ռումինիայի անցման հիմնական «փաստերի» վերաբերյալ ավելի շատ վիճաբանություններ կան, քան այս գրքում մեր կողմից քննարկված որևէ այլ անցման վերաբերյալ: Օրինակ, ապստամբությունը, որը սկիզբ դրեց Չաուշեսկուի (Ceaușescu) անկմանը, սկսվեց Տիմիշոարա քաղաքում: Տարբեր տեսակետներ կան այն մասին, թե քանի մարդ է սպանվել Տիմիշոարայում, ով է սպանել նրանց, արդյոք Տիմիշոարայի, իսկ հետագայում՝ Բուխարեստի ապստամբությունները տարերային էին, թե ծրագրված կոմունիստների կողմից իրենց սեփական նպատակներին հասնելու համար:<sup>3</sup> Ռումինիայում երկրի բացատրվածության ամենատարածված բացատրությունը ներառում է յուրացված հեղափոխության և լավ ծրագրված գաղտնիության մասին եղած տարբեր գաղափարներ:<sup>4</sup> Ցնծության, վախի, ասեկոսների, խառնաշփոթի, ապատեղեկատվության և հիասթափության մթնոլորտի մասին, որով ուղեկցվում էր Չաուշեսկուի անկումը 1989թ-ի ձմռանը, և որը նպաստում էր դավադրության վարկածի առաջացմանը, լավագույնս կարելի է պատկերացում կազմել՝ կարդալով դափնեկիր Բանաստեղծ Անդրեյ Կոդրեսկուի (Andrei Codrescu) նկարագրությունը, որը նա գրել է Միացյալ Նահանգներում անցկացրած քսանհինգամյա աքսորից վերադառնալուց հետո:<sup>5</sup> Իր գրքի լավագույն գլուխներից մեկում, որը ենթավերնագրված էր «Առգրավեք ցուցադրության միջոցները», նա պատկերում է երիտասարդ ուսանողների, բանաստեղծների, գյուղացիների և նախկին պաշտոնյաների, ովքեր ելույթ են ունենում տեսախցիկների առջև և ներկայացնում իրենց տեսակետները, թե ինչ է կատարվում էլեկտրականացված երկրում և աշխարհում: Դեռևս կարծիք կար, որ Սեկյուրիտատեի (Securitate – Չաուշեսկուի պետական անվտանգության ծառայություն) գործիչներն իրենցից հակահեղափոխական վտանգ էին ներկայացնում: Լրատվամիջոցներն ու փողոցները լի էին դիտավորյալ կերպով թունավորված ջրի աղբյուրների, 10000, 60000 և նույնիսկ 100000 մահացածների մասին ասեկոսներով: Կոդրեսկուն իր վերապահումներն ուներ հին վարչակարգի մաս կազմած և հիմա հեղափոխության նոր նվիրյալներ դարձած շա-

3. Ռումինիայով հետաքրքրված համեմատաբանների բախտը բերել է, որ երկու մարդաբաններ, որոնք երկար տարիներ դաշտային հետազոտություններ են անցկացրել Ռումինիայում, իրենց հրաշալի հոդվածը նվիրել են Չաուշեսկուի անկմանը վերաբերող առասպելների մանրակրկիտ ուսումնասիրությանը: *See* Ivo Banac, ed., "Eastern Europe in Revolution" (Ithaca: Cornell University Press, 1992), գրքում Katherine Verdery and Gail Kligman, "Romania after Ceaușescu: Post-Communist Communism?", 117-47, աշխատությունը: Տիմիշոարային վերաբերող և մեծ պահանջարկ վայելող առասպելների վերլուծության համար *տե՛ս* էջ 118-22: Նման մի առասպել՝ հեղափոխությունը որպես ԽՍՀՄ ՊԱԿ-ի կողմից կազմակերպված դավադրություն, *տե՛ս* Michel Castex, "Un men-songe gros comme le siecle: Romania, histoire d'une manipulation" (Paris: Albin Michel, 1990):

4. Վերդերին (Verdery) և Կլիգմանն (Kligman) ավելի հեռու են գնում՝ «1989թ. դեպքերից առաջ, դեպքերի ժամանակ և դրանցից հետո կատարված իրադարձություններին յուրաքանչյուր ռումինացու կողմից տրված նկարագրությունը կոչելով «դավադրության մենթալիտետ»՝ Verdery and Kligman "Romania after Ceaușescu", 119: Նեաթոր Ռատեշն (Nestor Ratesh) իր՝ "Romania: The Entangled Revolution" (New York: Praeger, 1991), 80-119, աշխատությունում քառասուն էջանոց գլուխ է նվիրել գաղտնիության տեսության լուսաբանմանը:

5. Andrei Codrescu, "The Hole in the Flag: A Romanian Exile's Story of Return and Revolution" (New York: William Morrow, 1992):

տերի նկատմամբ, սակայն նա, ինչպես մնացած բոլորը, հիացած էր հեղափոխականների կողմից հեռուստատեսությունն իրենց նպատակներին ծառայեցնելու ունակություններով և ինքն էլ ներքաշվեց հեղափոխական տարերային իրադարձությունների հորձանքի մեջ:

Վեց ամիս անց՝ իր երկրորդ այցելության ժամանակ, Կոդրեսկուի ոգևորությունը փոխվեց հուսահատության: «Փրկության ազգային ճակատ» կազմակերպության մեջ մտած հին կոմունիստները, իսկ այժմ՝ նեոկոմունիստները Իլիեսկուի (Iliescu) և նրա նախկին կոմունիստ դաշնակիցների կողմից ղեկավարվող կառավարությունը, ոչ միայն «յուրացրին հեղափոխությունը», այլև յուրացրին հեղափոխության բառերն ու հասկացությունները: Նախագահ Իլիեսկուն «զգոնության կոմիտեների» անդամ հանքափորներին կանչել էր՝ ջարդելու ուսանողներին (որոնք Կոդրեսկուի պատկերացմամբ կազմում էին Բուխարեստի հեղափոխության ամենահուսալի մասը): Կոդրեսկուն ցավ էր զգում՝ տեսնելով, որ իր ընկերներից շատերը ողջունում էին Իլիեսկուին, որը հրապարակավ շնորհակալություն էր հայտնել հանքափորներին նրանց հայրենասիրական և կարգապահ պոռթկման համար: Այնուհետև Տիմիշոարայում դիերի հաշվարկն ակնհայտորեն ուռճացվել էր մոտակայքում գտնվող աղքատների գերեզմաններից հանված մարմինների հաշվին: Կոդրեսկուն խորապես հիասթափված ու մոլորված էր: Նրան թվում էր, որ ամբողջ հեղափոխությունը շինծու էր՝ մի կիսունկար, որի սցենարը գրվել էր ռումինական կոմունիստների կողմից, որն ուղեկցվում էր «Կրեմլի կողմից գործիքավորված երաժշտությամբ, որի դիրիժորը մատարոս Գորբաչովն էր»:<sup>6</sup>

Ինչպես Կոդրեսկուն, այնպես էլ մենք, դժվարանում ենք հասկանալ, թե ինչ կատարվեց: Մենք հաստատ գիտենք, որ Չաուշեսկուի վարչակազմի հետ բախման ժամանակ մահացածների թիվն ավելի մոտ է երկու հազարին, քան վաթսույն հազարին: Մենք նաև գիտենք, որ Կոդրեսկուն հավանաբար ճիշտ է, երբ կարծում է, որ կային բեմադրված հակահեղափոխության տարրեր, նույնիսկ կեղծ կրակոցներ, և որ այդ իրադարձությունների ժամանակ ապատեղեկատվությունը կարևոր դեր խաղաց: Եթե ապստամբության ժամանակ Բուխարեստում Կենտրոնական կոմիտեի շենքում գտնվող Իլիեսկուի գորքերը գտնվում էին պետական անվտանգության ծառայությանը հավատարիմ գորքերի պաշարման մեջ, ապա ինչո՞ւ են շրջակա շենքերն ավերված, իսկ Կենտրոնական կոմիտեի շենքը նույնիսկ քերծված չէ գնդակներից:

Մենք կանգ ենք առնում Կոդրեսկուի գրքի վրա, որովհետև «ծրագրված» հեղափոխության գաղափարը, որը ենթադրում է նախապես նյութված չարանենգ դավադրություն, որի իրականացումը դրա հեղինակներին թույլ տվեց «յուրացնել» հեղափոխությունը, հավանաբար, դեռևս մնում է որպես երկրում տեղի ունեցած իրադարձությունների վերլուծության իշխող տեսակետ: Սակայն, ինչպես արդեն ասել ենք, Արևելյան Եվրոպայի բոլոր երկրներից, որտեղ կոմունիզմից անցում էր կատարվել, Ռումինիան միակն է, որտեղ մեզ ամենաքիչն է հայտնի, թե ինչ է տեղի ունեցել, և բոլոր վարկածներից միայն ծրագրված հեղափոխության վարկածն է առաջ բերում ամենաքիչ անորոշություն և հակասականություն: Ըստ այդմ՝ Կոդրեսկուի գրքի արժանիքը ոչ թե իրադարձությունների հաջորդական նկարագրությունն է, այլ այն փաստագրումը, թե ինչպես առասպելները փոխարինվեցին հակաառասպելներով: Իսկապես, մեր պնդումն այն է, որ Ռումինիայի համար

6. Նույն տեղում, էջ 206:

առավել, քան Արևելյան Եվրոպայի այլ անցումների դեպքում ցանկացած հիմնականում պատմողական վարկած պետք է պարտադիր կերպով դիտվի որպես ոչ բավարար. մեզ ավելի շատ հարկավոր են առասպելի ստեղծման զարգացումների և ապատեղեկատվության գործառույթների, այսինքն՝ հենց հեղափոխության կազմալուծման ուսումնասիրությունները: Այս առումով լավագույնը երկու մարդաբանների՝ Քեթրին Վերդերիի (Katherine Verdery) և Գեյլ Կլիգմանի (Gail Kligman) գերազանց աշխատությունն է: Նրանք մանրամասն վերլուծել են ենթադրյալ փաստերն ու վկայությունները, և նրանց հայտնի է ողջ գրականությունը, սակայն նրանց հետաքրքրում էին այն կոնկրետ բառերը, որոնց օգնությամբ վերապրվում, նկարագրվում և հասկացվում էր Ռումինիայում տեղի ունեցածը՝ *հանքափորներ, ցույցեր, ճակատ, հեղափոխություն, նեոկոմունիզմ*: Շեղագրով գրված բառերն օգնում են եղածը բացատրել:<sup>7</sup>

Ռումինական անցման վերլուծության համար մեզ համար շատ կարևոր է ավելի խոր մտածել Չաուշեսկուի վարչակարգի բնույթի մասին և ռումինական քաղաքականությունը ներկայացնել համեմատական հեռանկարում: Վարչավայի պայմանագրի անդամ Արևելյան Եվրոպայի երկրներից Ռումինիան ամենաթույլ կազմակերպված ընդդիմությունն ուներ: Իսկապես, քաղաքացիական հասարակությունը դեռևս այնքան թույլ է, որ նորարարական երկու կազմակերպությունների՝ Քաղաքացիական դաշինքի և Սոցիալական երկխոսության խմբի անդամներից շատերը ցանկանում են վերականգնել միապետությունը, որպեսզի, ինչպես իրենք են ասում, քաղաքացիական հասարակությանը զարգանալու շանս տրվի:

Ռումինիայի բացառիկությունն առավել ակնհայտ է դառնում, երբ մենք այն դիտարկում ենք Լեհաստանի, Հունգարիայի և Չեխոսլովակիայի հետ համեմատելով: Ինչպես էլ մենք դասակարգենք վերջիններիս վարչակարգերը քաղաքական տեսանկյունից, նախքան անցումային փուլի սկիզբը կազմակերպված ընդդիմության համար արդեն իսկ գոյություն ուներ որոշակի տարածք դրանցից բոլորում, սակայն ոչ Ռումինիայում: Չաուշեսկուի Ռումինիան հիմնովին այլ վայր էր: Ռումինիայի պետական ապարատում չկային կարիերայի ինքնավար կամ նույնիսկ կիսաինքնավար ուղիներ: Նույնիսկ բարձրագույն նոմենկլատուրայի անդամները վարձվում, լավ կամ վատ վերաբերմունքի արժանանում և հեռացվում էին աշխատանքից տնային ծառայողների պես: Գոյություն ուներ աճող անհատի պաշտամունք՝ սկսած 1972թ-ին Էլենա Չաուշեսկուի Քաղբյուրոյի անդամ նշանակելուց և վերջացրած քաջ հայտնի 1980-ականների «սոցիալիզմը մեկ ընտանիքում» արտահայտությամբ:

Ըստ էության Չաուշեսկուն Ռումինիային վերաբերվում էր որպես իր անձնական տիրույթի: Մաքս Վեբերը (Max Weber) նման ծայրահեղ ժառանգականությունը կոչում էր սուլթանական: Այս տերմինը միջինարևելյանի հետ նմանեցնելն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ այդպիսի վարչակարգերն աշխարհագրորեն շատ տարբեր են, ինչպես Կիմ Իր Սենինը՝ Հյուսիսային Կորեայում, Բոկասայինը՝ Կենտրոնական Աֆրիկյան Կայսրությունում և Սոմոսայինը՝ Նիկարագուայում, որտեղ բոլորն էլ ուժեղ սուլթանական միտումներ էին դրսևորում: Մեր կարծիքով՝ Ռումինիայում Չաուշեսկուի սուլթանական և ամբողջատիրական միտումների համադրության ընթրնումն ավելի շատ է հստակեցնում այն, ինչը

7. Verdery and Kligman, "Romania after Ceaușescu":

հատկանշական է Ռումինիայի անցյալին, ներկային և տեսանելի ապագային, քան կոմունիստական դավադրության կամ «յուրացված հեղափոխության» տեսակետը:<sup>8</sup>

ԱՄԲՈՂՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱԿԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՇԵՏԱՄԲՈՂՋԱՏԻՐԱԿԱՆ  
ՉԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՑ ԹՈՂՎԱԾ ՆՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Նախքան Չառուշեսկուի կառավարման սուլթանական բաղադրիչների ուսումնասիրությունը, եկեք նախ քննության առնենք ամբողջատիրական բաղադրիչը: Մասնավորապես, Ռումինիան երբևէ մոտեցե՞լ է հետամբողջատիրական լինելուն, որով նկատի ունենք, թե արդյոք Ռումինիան երբևէ թուլացրե՞լ է լրիվ ամբողջատիրական համակարգի նկատմամբ վերահսկողությունը: Եթե այո, ապա ինչպե՞ն և ինչո՞ւ (հակառակ Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասի) ամբողջատիրությունը նորից ի հայտ եկավ: Ժառանգականությունն ու ազգայնականության շահարկումը կազմում են այս և հետագա սուլթանական պատմության հիմնական մասը:

Այն դեպքում, երբ Խրուշչովի ազդեցության տակ Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասն ունեցավ ապաստալինացման ժամանակաշրջաններ, Ռումինիան Գեորգիու-Դեժի և նրա մերձավոր օգնական Նիկոլայե Չառուշեսկուի իշխանության ներքո գործնականում դիմադրեց ապաստալինացմանը: Սակայն Դեժի իշխանության վերջին երկու տարիների ընթացքում (1963-65թթ.) հակախորհրդային ազգայնականության և տեղական ազատականության համատեղումը վարչակարգին ինչ-որ տեղ ավելի մեծ ներքին աջակցություն ցուցաբերեց:

Երբ 1965թ-ի մարտին Դեժը մահացավ, Չառուշեսկուն, որին ոչ մի կերպ չէր կարելի համարել նախկին Քաղբյուրոյի աչքի ընկնող անդամ, երեք օրվա ընթացքում ընտրվեց առաջին քարտուղար: Սակայն Չառուշեսկուն հեզմանքով հաջող կերպով «կոլեկտիվ կառավարման» և գործընկերների նկատմամբ հարգանքի կոչեր արեց իշխանությունն ամրապնդելու համար: Իսկապես, ինչպես իրենց խոր ուսումնասիրություններում պարզաբանում են Քեն Ջովիթը (Ken Jowitt) և Մերի Էլեն Ֆիշերը (Mary Ellen Fisher), Չառուշեսկուի իշխանության գալուն հստակորեն նպաստեց այն, որ նա դիմեց կուսակցության այն առաջնորդներին, ովքեր կուսակցական կառավարմանը ցանկանում էին ավելի ինստիտուցիոնալ մոտեցում ցուցաբերել: 1965-68թթ. ընկած ժամանակահատվածը ճակատագրական էր Ռումինիայի զարգացման համար, քանի որ կուսակցական վերնախավում

8. Ամբողջատիրության և սուլթանականության համատեղումն այնքան էլ անհավանական չէ, որքան հաճախ կարծում են: Խոր և պարզաբանող ձևով Քեննեթ Ջովիթը (Kenneth Jowitt) բազմիցս պնդել է լենինյան շատ վարչակարգերի ժառանգական կողմի մասին: Նրա կարծիքով՝ և՛ խորհրդային, և՛ ռումինական վարչակարգերը 1953թ. Ստալինի մահից առաջ էլ ուժեղ ժառանգական միտումներ ունեին: Նա նույնիսկ ավելի հեռուն է գնում: Նա, օգտագործելով Մաքս Վեբերից բերված միևնույն մեջբերումը, որը մենք մեջբերել ենք Գլուխ 3-ում, զարգացնում է մի տեսակետ, ըստ որի՝ «ժառանգականությունն իր սուլթանական դրսևորումներով գերիշխող էր Ռումինական կուսակցությունում առնվազն 1957 թ-ից 1965թ.»։ *St'u* Kenneth Jowitt, "Revolutionary Breakthroughs and National Development: The Case of Romania 1944-1946" (Berkeley: University of California Press, 1971), 190-197, մեջբերում էջ 193-ից: Դեժի (Dej) լենինիզմի ու ժառանգականության համակցումը, և թե դա ինչքանով էր համահունչ անձնական հովանավորչության ռումինական ավանդական վերագրողական կառույցներին, *տե՛ս*, էջ 147-149:



միականցից ունեցած վախը կարող էր, ինչպես դա ավելի վաղ եղավ Խորհրդային Միությունում, նպաստել, որ վարչակարգը վերածվի հետամբողջատիրականի:<sup>9</sup>

Սակայն Չաուչեսկուն վարպետորեն օգտագործեց ազգայնականությունը *հավասարների մեջ՝ առաջինից (primus inter pares)* դառնալով անառարկելի առաջնորդ: Վարչավայի պայմանագրի երկրներից միայն Չաուչեսկուն դատապարտեց խորհրդային գործերի ներխուժումը Չեխոսլովակիա: Այդ գործողությունը մեծապես ավելացրեց նրան ցուցաբերվող ազգային և միջազգային սատարումը: Աջակցության այդ երկու աղբյուրներն էլ արագացրեցին նրա հարաբերական անկախացումը կոլեկտիվ ղեկավարումից և քննադատությունից: Ռուսիական ականավոր մտավորականներից մեկը նկարագրում է, թե ինչպես ազգայնականությունն օգնեց Չաուչեսկուին. «1968թ-ի վերջին Ռուսիան Արևելյան Եվրոպայի երկրներից միակն էր, որտեղ կոմունիստ առաջնորդն ուժեղ աջակցություն էր ստանում մտավորականների կողմից: Չաուչեսկուին քննադատելու համար մենք պետք է անցնեինք մերժման գործընթացով, որը մեզ համար հեշտ չէր, քանի որ Չաուչեսկուի դեմ կատարած յուրաքանչյուր քայլ դիտվում էր որպես քայլ՝ հօգուտ Խորհրդային Միության»:<sup>10</sup> Տեղական ընդդիմությանը բարոյագրելու նման գործընթացները կարևոր նյութ և բարոյական փորձառություն տվեցին նաև արևմտյան առաջնորդներին: Դը Գոլից (De Gaulle) մինչև Նիքսոն (Nixon) առաջնորդներն էկան Ռուսիան և զովաբանեցին Չաուչեսկուին նրա անկախության համար: Նման միջազգային աղմկալի ողջունումն ուշադրությունը շեղեց այն փաստից, որ Չաուչեսկուն նման չէր Չեխոսլովակիայի Դուբչեկին,

9. Ջովիթթը մեջբերում է 1965թ. կուսակցության համագումարի ժամանակ Չաուչեսկուի գլխավոր ելույթը՝ որպես նրա կոչի՝ ավելի կոլեգիալ կառավարման օրինակ: Նա նաև նշում է, որ «մյուս տարրն այն իրական վախն էր, որ ընտրյալ կոալիցիայի անդամներից շատերը կուսակցության առաջնորդի պարտականությունները ստանձնելու համար տաժում էին անվտանգության ոստիկանության պետ Դրագիչիի (Draghici) հանդեպ»: Նույն տեղում, էջ 226, տե՛ս նաև էջ 192-97, 224-28: Ջովիթթի փաստարկը նման է այն պատճառներին, որ նա տալիս էր Ստալինի մահից հետո Խորհրդային Միությունում հետամբողջատիրական ավելի կոլեկտիվ ղեկավարման ձևի առաջացման վերաբերյալ: «Կուսակցության առաջնորդները Խրուշչովին տվեցին կուսակցական Magna Carta՝ անսահմանափակ լիազորություններ, այսինքն, Ստալինի նման կուսակցական սուլթանի հանդեպ խիստ քննադատություններ անելու և հենց առաջնորդների նկատմամբ նրա կողմից ժառանգական գաղտնի ոստիկանության հնարավոր օգտագործման համար»: Kenneth Jowitt, *"New World Disorder: The Leninist Extinction"* (Berkeley: University of California Press, 1992), 251: Չաուչեսկուի օրոք Ռուսիայում կոլեկտիվ ղեկավարման զարգացման և անկման մասին ամենախոր վերլուծությունը տրված է Mary Ellen Fischer, *"Nicolae Ceausescu: A Study in Political Leadership"* (Boulder, Colo.: Lynne Rienner Publishers, 1989), 66-140 գրքում:

10. Ալֆրեդ Ստեփանի՝ Պավել Կամպեանուից վերցրած հարցազրույց, Բուխարեստ, 23 հունիսի, 1991թ.: Համեմատության համար ուշագրավ նկատառում է ներկայացրել մեկ այլ ականավոր մտավորական, որը Կամպեանուի հետ համեմատած՝ ուներ բոլորովին այլ քաղաքական տեսակետ: Օվիդիու Տրասնեան (Ovidiu Trasnea), որը 1984թ. Միջազգային քաղաքագիտական ասոցիացիայի փոխնախագահն էր, փաստում է, որ «1968-71թթ. Չաուչեսկուին հաջողվեց վաստակել ժողովրդի համակրանքը: Սա նրա ամենավայրուն ժամանակաշրջանն էր»: Հարցազրույց Ստեփանի հետ, Բուխարեստ, 25 հունիսի 1991թ.: Մարտին Ռադին (Martyn Rady) նույնպես մեկնաբանություններ է ներկայացնում, թե իր իշխանության ամրապնդման համար որքան կարևոր էր Չաուչեսկուի կողմից Խորհրդային Միության գործերը Չեխոսլովակիա մտցնելու քննադատությունը: «Չաուչեսկուի կողմից Մոսկվային հակադրվելը նրան դարձրեց ազգային հերոս: Նա և ռուսիական ժողովրդի գոյատևումը մի որոշ ժամանակ հասարակական երևակայության մեջ միմյանց անբակտելիորեն կապված դարձան, իսկ նրան ընդդիմանալը ժամանակավորապես դիտվում էր որպես դավաճանություն երկրին», Rady, *"Romania in Turmoil"*, 42:

որը միավորել էր հակախորհրդային և հակաստալինյան գործընթացները, այլ իրականում ստեղծում էր նոր ձևի «հակախորհրդային ստալինիզմ»:<sup>11</sup>

Մինչև 1969թ.-ի կուսակցության տասներորդ համագումարը կոլեկտիվ կառավարման մասին խոսքերն արդեն մոռացվել էին: Չաուշեսկուին հաջողվել էր փոխել կուսակցության կանոնադրությունն այնպես, որ մեծացներ իր ազատությունը կոլեկտիվ կառավարումից: Կոլեկտիվ ղեկավարման համար հնարավոր ամենաօգտակար գործիքն այն էր, որ Քաղբյուրոն և Կենտրոնական կոմիտեն ունեին գլխավոր քարտուղար նշանակելու և պաշտոնանկ անելու բացառիկ իրավունք: Չաուշեսկուն կարողացավ այս բացառիկ իրավունքները տեղափոխել ավելի մեծ կուսակցական համագումար, որի վրա նա ավելի մեծ անձնական վերահսկողություն ուներ: Նրա փաստարկներն այն էին, որ դա պետք է անել ազգային ինքնավարության համար, քանի որ Մոսկվայի համար ավելի դժվար կլինի մանիպուլյացիաների ենթարկել համագումարին, ինչպես նաև ժողովրդավարության նպատակներով, որովհետև համագումարը պետք է կուսակցության անկախ մարմինը լինի:<sup>12</sup>

1971թ. Չաուշեսկուն այցելեց «մշակութային հեղափոխության» գագաթնակետում գտնվող Չինաստան և կատարեց Հյուսիսային Կորեա իր բազմաթիվ այցելություններից առաջինը: Ինչպես Մարկ Ալմոնդն (Mark Almond) է մեկնաբանում, «նա ավելի շատ էր տպավորված Փենյանում Կիմ Իր Սենի պաշտամունքից, քան Պեկինում՝ Մաոյի պաշտամունքից»:<sup>13</sup> Ռումինիա վերադառնալուց հետո Չաուշեսկուն գրեթե անմիջապես վերացրեց ավելի հանգիստ հետամբողջատիրական կյանքի բոլոր մնացուկները:<sup>14</sup> 1974թ. նա ստանձնեց նախագահի պաշտոնը (մի արարողությամբ, որն ավելի շատ թագադրություն էր հիշեցնում), որն էլ ավարտին հասցրեց կուսակցական և պետական կարևոր դերերի միավորումը:<sup>15</sup>

## ՄՈՒԼԹԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

1974թ. հետո ռումինական վարչակարգն այլևս երբեք պակաս ամբողջատիրական չդարձավ, սակայն այն գնալով ավելի ու ավելի սուլթանական դարձավ: Այս համադրու-

11. Ինչպես Մարկ Ալմոնդն է նշում, «այսօր դժվար է հիշել, որ Դուբչեկն (Dubcek) ու Չաուշեսկուն հաճախ մեկ շնչով նշվում էին որպես բարեփոխությունների մեծ հույսեր»: Almond, "Rise and Fall of Ceaușescu", էջ 65: Նա շարունակում է՝ ասելով, որ իրականում Չաուշեսկուն երբեք էլ չէր դավաճանել Ստալինին. իսկպես մահվանից չորս ամիս առաջ նա հաստատել է, որ «Ստալինն արել է այն ամենը, ինչ կաներ նրա դիրքում գտնվող ցանկացած մարդ», էջ 67:

12. Օվիդիու Տրանսեսայի հարցազրույցից վերը բերված մեջբերում, *int'cu lui* Fischer, "Nicolae Ceaușescu", 152-59:

13. Almond, "Rise and Fall of Ceaușescu", 70:

14. 1970-72թթ. Միրչեա Մալիցան (Mircea Malitza) Ռումինիայի մշակույթի նախարարն էր: Չաուշեսկուի՝ Չինաստան և Կորեա կատարած այցելություններից գրեթե անմիջապես հետո Չաուշեսկուն քննադատեց Մալիցային չափազանց հանդուրժող լինելու համար, հրամայեց չեղյալ համարել արևմտյան կառավարման մեթոդների փորձարկման ընթացքը, մեծապես կրճատեց օտար լեզուների ուսուցումը և ստիպեց, որ բոլոր գաղափարախոսական ուսումնական ծրագրերը պտտվեն իր անձնական մտքերի շուրջ: Ստեփանի հարցազրույցը Միրցեա Մալիցայի հետ, 22 հունիսի 1991թ., Բուխարեստ:

15. Սանրամասների համար *int'cu*, Fischer, "Nicolae Ceaușescu", 160-70, and Almond, "Rise and Fall of Ceaușescu", 70-71:

թյունը ռումինական վարչակարգն ավելի դիմադրողունակ էր դարձնում ոչ բռնի փոխակերպման ցանկացած ձևի նկատմամբ:

Գլուխ 3-ում մենք ներկայացրել ենք, թե ինչպիսին կլինի սուլթանական ուժեղ միտումներ ունեցող վարչակարգը, երբ դեմ դիմաց համեմատենք վարչակարգի չորս հիմնական բնութագրերի առումով՝ ղեկավարություն, բազմակարծություն, գաղափարախոսություն և համախմբում: Մենք սկսում ենք վարչակարգի այն բնութագրից, որն ամենահատկանշականն է սուլթանականության համար՝ ղեկավարությունից: Չաուշեսկուի քաղաքականությունից և անձնական ոճից պարզ էր դառնում, որ նա սահմանափակված չէր ռացիոնալ-օրինական կապերով, ինչպիսիք են՝ կոլեկտիվ ղեկավարությունը և կուսակցության կանոնադրությունը, և նրա ղեկավարման ձևը մեծապես սուբյեկտիվ և կամայական բնույթ էր կրում:

Մենք նշել ենք, որ սուլթանական վարչակարգերն իրենց պերսոնալիստական բնույթի և այն փաստի պատճառով, որ ամբողջ իշխանությունը պատկանում է սուլթանին, միտված են ուժեղ տոհմական հակումներ ցուցաբերել: Սուլթանի ծայրահեղ միտվածությունն՝ իր ընտանիքի անդամներին նշանակել կարևոր պաշտոններում, այն տարբերակում է ամբողջատիրության խիստ արտահայտված պերսոնալիզմից: Չաուշեսկուի օրոք նրա կինը՝ Էլենան, պաշտոնապես և ոչ պաշտոնապես երկրի երկրորդ ամենագորեղ անձնավորությունն էր: Նրա զբաղեցրած պաշտոններից էին վարչապետի առաջին տեղակալի, Ռումինիայի կոմունիստական կուսակցության կադրերի գծով հանձնաժողովի նախագահի և Գիտության և տեխնիկայի ազգային խորհրդի նախագահի պաշտոնները:

Նախագահ Չաուշեսկուի բոլոր չորս եղբայրներն էլ իշխանության կարևոր լծակներ ունեին, իսկ նախարարական այլ պաշտոնները Չաուշեսկուի (որին հաճախ անվանում էին *Դիրիժոր*) քմահաճույքով ձեռքից ձեռք էին անցնում: Պաշտպանության նախարարությունում նրա եղբայր Իլիեն Գլխավոր քաղաքական դիրեկտորատի պետն էր: Բոլորի կողմից ատելի ամենագոր անվտանգության ոստիկանությունում (*Securitate*) նրա մի եղբայրը կադրերի բաժնի պատասխանատուն էր: Նրա եղբայր Իոանը Պետական պլանավորման հանձնաժողովի փոխնախագահն էր, իսկ նրա եղբայր Ֆլորեան կուսակցության «Սինտեա» (*Scinteia*) օրաթերթի խմբագրության անդամ էր: Բարձր պաշտոններ զբաղեցնող ընտանիքի անդամների այս ցուցակը կարելի է անվերջ շարունակել: Եվ, իհարկե, նրա որդին՝ Նիկուն, բոլորի կողմից դիտվում էր որպես նրա հետնորդ:<sup>16</sup>

Ղեկավարման ոճը նույնպես աստիճանաբար դարձավ ավելի ու ավելի անձնավորված: Չաուշեսկուի 160 «գրքեր» թարգմանվեցին երեսույն լեզուներով, իսկ ռումինական փիլիսոփայական բառարանն ավելի մեծ տեղ հատկացրեց մարքսիզմի մասին նախագահ Չաուշեսկուի դոկտրինին, քան Մարքսին, Էնգելսին ու Լենինին վերաբերող նյութերին միասին վերցրած:<sup>17</sup> 1970-ականների կեսերին Մերի Էլեն Ֆիշերը (*Mary Ellen Fisher*) գրում է, «ռումինական ոչ մի պաշտոնյա չի կարող հաշվետվություն ներկայացնել կամ

16. Չաուշեսկուի ղեկավարման ժառանգական կողմերի մասին *տե՛ս*, R. de Fleurs, "Socialism in One Family", *Survey* 28, no. 4 (1984), 165-74 և Ronald H. Linden, "Socialist Patrimonialism and the Global Economy: The Case of Romania", *International Organization* 40, no. 2 (1986), 347-79: Ընտանիքի անդամների գլխավոր պաշտոնների ցուցակի համար *տե՛ս* Vladimir Tismaneanu, "Personal Power and Political Crisis in Romania", *Government and Opposition* 24, no. 2 (1989), էջ 177-98, հատկապես՝ էջ 192-93:

17. *Stéu Vlad Georgescu, "Romania in the 1980s: The Legacy of Dynastic Socialism"*, *East European Politics*

հողված գրել առանց հղումներ կատարելու նախագահ Չաուշեսկուի անձնական տեսակետներին և ղեկավարությանը՝ որպես ոգեշնչման կարևոր աղբյուրի և ուղեցույցի»:<sup>18</sup>

Չաուշեսկուի ղեկավարման սուլթանական ոճը նորից ու նորից արտահայտվում էր նրա վարած քաղաքականության մեջ: Նա անձամբ, գործնականում առանց տեխնիկական կամ կուսակցական օգնության, բազմաթիվ արդյունաբերական նախագծեր ձեռնարկեց: Նա քանդեց պատմական Բուխարեստի մեծ մասը, երբ ինքնագույն կերպով նախագծում ու վերանախագծում էր Արևելյան Եվրոպայի ամենաանճաշակ ճարտարապետական կառույց հանդիսացող Ժողովրդական պալատի կենտրոնական շենք տանող ճանապարհները:<sup>19</sup> Հսկայական պողպատածուլական գործարաններն այդ ոճի արդյունք էին:<sup>20</sup> Չաուշեսկուի անձնական որոշումներից ամենակործանարարը ծնելիության մակարդակի բարձրացմանը և արհեստական վիժեցումների դեմ ուղղված քարոզարշավն էր, որը հանգեցնում էր գործարաններում կանանց ստորացուցիչ պարտադիր գինեկոլոզիական ստուգումների, լքված երեխաների և Ռումինիայի առողջապահական թույլ համակարգի պատճառով որբանոցների երեխաների շրջանում ՁԻԱՀ-ի համաճարակի:<sup>21</sup>

Ամբողջատիրական և սուլթանական այս միտումները համադրվում էին, որպեսզի անհատները, խմբերն ու կազմակերպությունները ենթակա լինեին սուլթանի կամայական միջամտություններին: Սուլթանականության մեջ բազմակարծության էությունն այն է, որ ոչ ոք դուրս չի մնում սուլթանի դեսպոտիկ իշխանության ազդեցությունից՝ կուսակցական բարձր պաշտոնյաներից մինչև հողի կանայք: Տիամենանուն վարպետորեն տալիս է Չաուշեսկուի դեսպոտիկ իշխանության նկարագրությունը. «Նա իրեն պահում է որպես բացարձակ միապետ՝ նվաստացնելով կուսակցական բյուրոկրատներին (իր վասալներին) և քաղաքացիների հետ վարվելով՝ ինչպես իր սեփականության»:<sup>22</sup> Իշխանության այս ծայրահեղ անձնավորումն անխուսափելիորեն նշանակում էր, որ Ռումինիայում չկար և ոչ մի աստիճանի հիմնարար ինքնավարություն կամ բազմակարծություն: Կուսակցության և պետական կարևոր օրգաններում, ինչպես օրինակ՝ բանակը, աշխատանքային առաջխաղացման օրինաչափություններն անընդհատ խախտվում էին: Ըստ

and Society 2, no. 1 (1988), 82 և Vladimir Tismaneanu, "Ceașescu's Socialism", Problems of Communism 34 (Jan.-Feb. 1985), 63:

18. Mary Ellen Fisher, "Idol or Leader? The Origins and Future of the Ceaușescu Cult", in Daniel N. Nelson, ed., "Romania in the 1980s" (Boulder, Colo.: Westview, 1981), 118.

19. Այս սուլթանիստական բացահայտ դեպքին Ալմոնդը նվիրում է մի ամբողջ գլուխ. "The Architect of Socialism", Almond, "Rise and Fall of Ceaușescu", 153-71:

20. Այս և քաղաքականության այլ կամայականությունների մասին տե՛ս Daniel N. Nelson, "Romania: Politics in the Ceaușescu Era" (New York: Gordon and Breach Science Publishers, 1988), հատկապես՝ էջ xiii-xvii, և Vlad Georgescu, "Romania in the 1980s: The Legacy of Dynastic Socialism", East European Politics and Societies 2, no. 1 (1988), 66-93:

21. Sk'u Gail Klingman, "The Politics of Reproduction in Ceaușescu's Romania: A Case Study of Political Culture", East European Politics and Societies 6, no. 3 (1993), 364-418, Daniel J. Rothman and Sheila M. Rothman, "How AIDS Came to Romania", New York Review of Books, November 8, 1990, 5-8 և Ռադիի գրած գլուխը շրջակա միջավայրի և ՁԻԱՀ մասին նրա "Romania in Turmoil" գրքում, էջ 78-82:

22. Մեկնաբանություններ «Կլոր սեղանի» քննարկումների ժամանակ՝ "Romania: A Case of Dynastic Socialism" (Perspectives on Freedom no. 11, general ed., James Finn) (New York: Freedom House, 1989), 30: Այս գրավիչ գրքի 5-93 էջերում բերված են ռումինական այլախոհների «Կլոր սեղանի» ժամանակ տեղի ունեցած քննարկումները:

Տիամանեանուի «կուսակցության առաջատար դերը դուրս էր մղվել Գլխավոր քարտուղարի և նրա ընտանիքի բացարձակ իշխանությամբ: Կուսակցական «սպարատչիկների» ինքնուրույն նախաձեռնությունները հասցվել էին նվազագույնի: Պաշտոնում մնալու համար այդ մարդիկ պետք է միմյանց գերազանցեին ծառայամտության և հարմարվողականության մեջ... Չառաջեսկուի օրոք կոմունիստական վերնախավն իրականում կազմաքանդվել էր և Քաղաքական գործադիր կոմիտեն ոչ այլ ինչ էր, քան նախագահի և նրա կնոջ կողմից իշխվող մի կամագուրկ մարմին»:<sup>23</sup>

Ռումինիայի ուղղափառ եկեղեցին որևէ ինքնավարություն չուներ: 1980-ականների վերջին մի քանի հոգևորականներ սկսեցին բողոքել վարչակարգի դեմ, սակայն ըստ ռումինական Սախարովի՝ Միհայել Բոտեզի (Mihail Botez), «բոլոր հոգևորականներն, ովքեր կոշտ կեցվածք ունեին պետություն-եկեղեցի համագործակցության նկատմամբ, արտաքսվեցին, կամ ինքնակամ հեռացան երկրից: Ռումինացիների համար նրանք այլևս կարևոր չեն»:<sup>24</sup>

1989թ-ից առաջ ամենանշանակալի հուզումները տեղի ունեցան 1977թ-ի Ժիու դաշտավայրի հանքափորների գործադուլի ժամանակ: Գործադուլի երկու ամենահիմնական առաջնորդներն էին Կոնստանտին Դոբրեն (Constantine Dobre) և ինժեներ Ժուրկան (Jurca): Սեկուրիտատեի միջամտության և Չառաջեսկուի ամբոխահաճության միջոցով գործադուլի մարումից հետո Դոբրեն անհետացավ, իսկ Ժուրկան սպանվեց:<sup>25</sup> 1979թ. Բուխարեստում տասնհինգ անձ փորձեցին ստեղծել անկախ արհմիություն: Ըստ Նելսոնի (Nelson)՝ «Չառաջեսկուի պատասխանը չուշացավ. գլխավոր կազմակերպիչ Վասիլե Պարաշչիվը (Vasile Paraschiv) ձերբակալվեց, և նրա հետագա ճակատագիրը մնում է անհայտ»:<sup>26</sup>

Չառաջեսկուի Ռումինիայում բոլորովին տեղ չկար երկրորդային մշակույթի զարգացման համար, ինչպես հետամբողջատիրական Չեխոսլովակիայում: Տպագրական մեքենաները պետք է գրանցվեին ոստիկանությունում (1983թ. մարտի 23, կարգադրություն 98), օտարերկրացու հետ զրույցի մասին չհայտնելը համարվում էր քրեական հանցագործություն (1985թ. դեկտեմբեր, կարգադրություն 408):<sup>27</sup>

Վերջին գլխում մենք ցույց ենք տվել, որ Բուլղարիան էապես ավելի պակաս քանակությամբ քաղաքացիական հասարակության անկախ կազմակերպություններ ուներ, քան Հունգարիան կամ Չեխոսլովակիան: Ինչևէ, համեմատաբանական լեզվով՝ սուլթանական և ամբողջատիրական Ռումինիան շատ ավելի ճնշիչ էր անկախ խմբերի հանդեպ, քան ամբողջատիրության / հետամբողջատիրության սահմանին ամենամոտ գտնվող երկիրը՝ Բուլղարիան: Համաձայն «Ազատ Եվրոպա» ռադիոկայանի (Radio Free Europe) կատարած համեմատական ուսումնասիրության՝ 1989թ. հունիսին Բուլղարիայում տասներեք ան-


23. Tismaneanu, "Personal Power and Political Crises", 192-93:

24. 20-րդ ծանոթագրության մեջ նշված «Կլոր սեղանի» ժամանակ տեղի ունեցած քննարկումներ, "A Case of Dynastic Socialism", 76:

25. Նույն տեղում, էջ. 80-81:

26. Nelson, "Romania: Politics in the Ceaușescu Era", XIV:

27. Տեն՝ Georgescu, "Romania in the 1980s", 84: Ստեփանի հետ հարցազրույցի ժամանակ մի շարք գրողներ մատնանշեցին, որ շեշտվում էր այս վերահսկման մեխանիզմների դրակոնյան արդյունավետությունը:



Նկ. 18.1. Արևելյան Եվրոպայում անկախական շարժումների քանակը. հունիս, 1989թ.

Աղբյուրը. Jiri Pehe, "An Annotated Survey of Independent Movements in Eastern Europe," Radio Free Europe Research, RAD Background Report/100 (Eastern Europe), June 13, 1989, pp. 1-29:

կախ կազմակերպություններ կային, որոնց առաջնորդների անունները լավ ծանոթ էին հանրությանը: Ի հակադրություն դրա՝ 1989թ. հունիսին Ռումինիայի ներսում միայն երկու անկախ կազմակերպություն կար, որոնցից ոչ մեկն էլ հանրահայտ առաջնորդ չուներ (նկ. 18.1):

Ալֆրեդ Ստեփանը հարցազրույցներ է վերցրել մի շարք այլախոհներից, որոնք 1991թ. և 1992թ. հաճախ հիշատակվում էին՝ որպես վարչակարգը քննադատող նյութեր տպագրելու և տարածելու ամենահամարձակ փորձեր անողներ: Նրանք բոլորն էլ նույն պատմության տարբերակներ էին պատմում: Նրանք աշխատում էին մենակ կամ գրեթե մենակ: Փաստորեն նրանք ստիպված էին ձեռքով պատրաստել իրենց տպագրական սարքավորումները, և նրանք բոլորն էլ ձեռքակալվել էին նախքան իրենց քննադատությունները կամ գործողության կոչերը տարածելու փորձերը կամ անմիջապես դրանից հետո:<sup>28</sup> Այս

28. Ռադու Ֆիլիպեսկուն (Radu Filipescu), ով 1992թ. մարդու իրավունքների պաշտպանության և ընտրությունները վերահսկող «Ապադոր» (Apador) կազմակերպության նախագահն էր, ի նշան խորհրդանշական բողոքի՝ երեք անգամ անձամբ (մեկ այլ մարդու հետ) մեկ էջանոց թռուցիկ էր պատրաստել ու տարածել: Երեք անգամներից երկուսում նա բռնվել և ձերբակալվել էր: Չաուշեսկուի ժամանակաշրջանից հետո քաղաքացիական հասարակության երկու հիմնական շարժիչ ուժ հանդիսացող «Սոցիալական երկխոսության խմբում» և «22» շաբաթաթերթում առանցքային դեմքերից Գաբրիել Անդրեսկուն (Gabriel Andreescu) երեք տարի ծախսեց գաղտնի ճանապարհներով երկրից դուրս բերած այլախոհական գրականությունը հայթայթելու վրա: Երբ Ստեփանը հարցրեց նրան, թե Ռումինիայում քանի մարդ է երբևէ տեսել այդ այլախոհական հայտարարությունները, Անդրեսկուն ասաց. «Հինգ կամ վեց»: Երբ Ստեփանը հարցրեց, թե ինչու այդքան քիչ, Անդրեսկուն պատասխանեց. «Ես վախենում եմ, որ դա էլ էր շատ»: Անդրեսկուն մեկ անգամ ձերբակալվել էր պետական դավաճանության մեղադրանքով և մեկ անգամ էլ՝ աքսորվել երկրի ներսում: Երևի թե այլախոհական հրատարակումներ ստեղծելու ամենամեծ ջանքերը թափել է լրագրող Պետրե Միհայի Բաքանուն (Petre Mihai Bacanu), որը 1992թ. ամենակարևոր "Romania Libera" («Ազատ Ռումինիա») անկախ օրաթերթի խմբագիրն էր: Ութ ամիս Բաքանուն իր վեց աշխատակիցների հետ, «ինչպես Գուտենբերգը», ջարդոնից փոքր շարժա-

գրքում քննարկված բոլոր երկրների մեջ Ռումինիան *միակն* էր, որտեղ ոչ մի իսկապես լիարժեք սամիզդատային հրապարակում ի հայտ չէկավ:<sup>29</sup> Ոչ մի երկրում տիրակալի և նրա անվտանգության ծառայության միջամտությունն ու նրանց հանդեպ վախն այդ աստիճանի մեծ չի եղել:

Սա բնավ չի նշանակում, որ ոչ մի տեսակի մասնավոր այլախոհություն չկար մարդկանց մեջ, որոնք խոսում էին ծածկալեզվով: Կար: Ամենահայտնի օրինակներից մեկը կապված է մի գրաքննադատի հետ: "Cenaclul de Luni" (Երկուշաբթի օրվա խմբակ) պոետական խումբը 1977թ-ից մինչև 1983թ. Բուխարեստի համալսարանում որպես պարտադիր մշակութային ակտիվության դրսևորում հավաքվում էր հոչակավոր գրաքննադատ Նիկոլաե Մանոլեսկուի (Nicolae Manolescu) ղեկավարության ներքո: Երկուշաբթի օրվա խմբակի անդամներից մեկը՝ բանաստեղծ Բոգդան Լեֆտերը (Bogdan Lefter), նշում է, որ չնայած խումբը երբեք ամսագիր կամ իրեն քաղաքականապես արտահայտելու այլ միջոցներ չի ունեցել, այն միշտ բարձրացրել է իր սեփական չափորոշիչները: «Լավագույն գրաքննադատները հրաժարվում էին գովաբանել իշխանությանը գովաբանող վատ գրողներին: Նրանք գլխիվայր շուրջ չէին տալիս արժեքների սանդղակը: Բանաստեղծները ստեղծել էին ուղիներ՝ «փոքր ռեալիզմի» միջոցով հասարակությունը նկարագրելու համար: Մենք խորհրդանշական փոքր պատկերներ էինք տալիս, այնպես որ դա թաքնված իմաստ ունենար առանց անելու այն, ինչի իրավունք չունեինք՝ ուղղակի քննադատություն: Մենք կարողացանք պաշտոնական ինստիտուտը ձևափոխել ազատ, քննադատական և ստեղծագործական կազմակերպության»: Հենց այն պատճառով, որ վարչակարգը վախենում էր «Երկուշաբթի օրվա խմբակի» ոգևորությունից, համալսարանի գաղափարախոսության համար պատասխանատու պաշտոնյան 1983թ. փակեց խմբակը:<sup>30</sup>

Մեկ այլ իրադարձություն, որը վարչակարգին ընդդիմացող մտավորականներին

կան տպագրական սարքավորումներ էր կառուցում, որպեսզի կարողանա թերթ հրատարակել: Նրանք երկկողմանի տպագրությամբ 2000 օրինակներ էին պատրաստում: Բոլոր յոթ այլախոհներն էլ ձերբակալվեցին մինչև թերթի տարածումը գուցե այն պատճառով, որ նրանք տարածման ցանց ստեղծելու համար փորձեցին ընդլայնել իրենց խումբը մինչև երեսուն հոգու: Բաքանուն բանտից ազատվեց հենց այն օրը, երբ Չաուշեսկուն փախավ Բուխարեստից: Գրառումները հենված են Բուխարեստում 1991թ. հունիսի 21-25-ը և 1992թ. օգոստոսի 25-31-ը Ստեփանի վերցրած հարցազրույցների վրա:

29. Հետագա ուսումնասիրություններն, անկասկած, երևան կհանեն *սամիզդատի* հրատարակությունների որոշ օրինակներ, սակայն հիմնականն այն է, որ շատ քաղաքական ակտիվիստներ պնդում են, որ իրենք երբեք նման բաների չեն հանդիպել: Թույլ տվեք մեջբերում անել հայտնի քաղաքական ակտիվիստների հետ մեր որոշ հարցազրույցներից. «Ռումինիայում *սամիզդատ* գոյություն չունեի: Ժամանակ առ ժամանակ ինչ-որ անհատ կարող էր թողնել թողնել, բայց ոչ մի ամսագիր երբեք լույս չէր տեսել» (Պավել Կամպեանու (Pavel Campeanu)): «Մենք հաստատ ոչ մի *սամիզդատ* այստեղ չունեինք: Բայց մենք առանձնահատուկ բարձր որակի անեկդոտներ ունեինք» («Ազգային ազատական կուսակցությունից» սենատոր և նախկին քաղբանտարկյալ Սորին Բոտես (Sorin Botetz)): «Իրականում ոչ մի տեսակի *սամիզդատ*, ընդամենը՝ պատահական թողնելներ, բայց նույնիսկ դա դժվար էր, քանի որ բոլոր տպագրական մեքենաները պետք է ուստիկանությունում գրանցված լինեին և տառատեսակներն ամեն տարի քննվում էին: Չաուշեսկուի օրոք ընդդիմության մասին քիչ ուսումնասիրություններ կան, որովհետև ոչ մի նշանակալի բան չկար» (Կալին Անաստասյու (Calin Anastasiu), հասարակագետ, որը, որպես ընդդիմադիր պատգամավոր, հաղթել էր 1992թ. սեպտեմբերի ընտրություններում): Նույն տեղում:

30. Ստեփանի հարցազրույցը բանաստեղծ և կարևոր մշակութային "*Contrapuncte*" (Կոնտրապունկտ) ամսագրի խմբագիր Բոգդան Լեֆտերի հետ Բուխարեստում, 1991թ. օգոստոսի 27:

ոգեշնչեց, համարյա վանականի պես ճգնակյաց փիլիսոփա Կոնստանդին Նոյկայի (Constantin Noica) աշակերտի երկխոսությունների լայն տարածման արժանացած երկու գրքերի հրատարակությունն էր: Գրքերը մեծ նշանակություն ունեին հաստատապես այն պատճառով, որ հենց սոկրատյան երկխոսությունների միտքը ներմուծում էր անհամաձայնության և մտքերի բազմակարծության գաղափարը:<sup>31</sup> Սակայն այն փաստը, որ «Երկուշաբթի օրվա խմբակն» ու սոկրատյան երկխոսություններն ազատ մտքի և կյանքի երկու ամենալայնորեն քննարկվող արտահայտություններն էին, ցույց է տալիս, թե Ռումինիան որքան հեռու էր կազմակերպված «ճշմարտության մեջ ապրել» հանրային այլախոհությունից:

Ավտորիտար Լեհաստանում անցումային շրջանից ութ տարի առաջ զուգահեռ հասարակությունն առաջնորդվում էր տասը միլիոն անդամ ունեցող արհմիության կողմից: Վերին աստիճանի ռեպրեսիվ Չեխոսլովակիայում զուգահեռ հասարակության առաջնորդը դրամատուրգ էր, որն օգնում էր ղեկավարելու մի կազմակերպություն, որն անցումից առաջ տասներկու տարիների ընթացքում 570 զեկույց էր հրատարակել: Սուլթանական Ռումինիայում այդ առաջնորդները պոետներ, գրաքննադատներ և փիլիսոփաներ էին, որոնք խոսում էին անհամաձայնության խորապես կողմնորված լեզվով, բայց նրանցից ոչ մեկը հասարակական դիմադրության որևէ ձևի՝ երկրով մեկ հայտնի կազմակերպիչ չէր: Երբ սուլթանն ընկավ, երկրով մեկ հայտնի ժողովրդավարական շարժում կամ անհատներ չկային, ովքեր ի վիճակի լինեին պետական իշխանությունը ստանձնելու ազդեցիկ հայտ ներկայացնել:

Մենք հիմա անցնում ենք գաղափարախոսության հարցերին: Չաուշեսկուի իշխանության օրոք իսկապես մշակվել էր մի այնպիսի գաղափարախոսություն, որը հիմնական բնութագիրն էր ամբողջատիրության, բայց որն ուղղակիորեն չէր կապվում սուլթանականության հետ: Գաղափարախոսությունն ուներ մարքսիզմ-լենինիզմի ստանդարտ բնութագրերից շատերը՝ կենտրոնացվածությունը կոլեկտիվ սեփականության վրա, կուսակցության առաջատար դերը և ուտոպիական նպատակների բարձրաձայնումը: Լայնածավալ արդյունաբերականացման քաղաքականությունը և յոթ հազար ավանդական տիպի գյուղերի վերացման ու գյուղացիներին բռնի կերպով 3-4 հարկանի շենքերում բնակեցնելու միջոցով գյուղ-քաղաք տարբերությունների վերացման սխեմատիկ պլանները ներկայացնում էին հասարակության յուրահատկության ենթարկումը ամբողջատիրացնող վերացական գաղափարախոսության: Ինչևէ, Չաուշեսկուի իշխանության ներքո հատկապես 1980-ականներին հարաճուն սուլթանականության միտումներ եղան, որոնք թուլացրեցին գաղափարախոսության առաջատար գործառույթը, քանի որ Չաուշեսկուի գաղափարախոսական ուղերձները դարձան մեծապես հակասական, անկանխատեսելի, անձնավորված և պատեհապաշտական: Երրորդ գլխում մենք ասել ենք, որ սուլթանականությունը «արդյունավետ և ուղղորդող գաղափարախոսություն» չէ, այլ «խորհրդանիշերի հետ մեծապես կապված կամայական մանիպուլյացիաներ» և «առաջ-

31. Փիլիսոփա Կոնստանդին Նոյկայի «դպրոցին» մի գլուխ է նվիրված Կաթերին Վերդերիի (Katherine Verdery) մշակութային քաղաքականության վերաբերյալ կարևոր *"National Ideology under Socialism: Identity and Cultural Politics in Ceaușescu's Romania"* (Berkeley: University of California Press, 1991) գրքում, էջ 256-301:



նորդի ծայրահեղ գովաբանում»: Չաուշեսկուի անհամար վերլուծաբաններ ընդգծում են գաղափարախոսության ծայրահեղ մանիպուլյացիաները: Բավական է կատարել մի քանի մեջբերումներ:

Մեզանից մեկը ռումինացի մի հասարակագետի հարցրեց, թե ինչ նշանակություն ուներ գաղափարախոսությունը Չաուշեսկուի համար: Պատասխանը չափազանց խոսուն է.

Նա մեծ նշանակություն էր տալիս գաղափարախոսական խնդիրներին, բայց նա շատ շարժունակ էր, շատ ուշադիր ազգային և միջազգային շրջապատի նկատմամբ, այնպես որ նրա նախընտրած կարգախոսներից էր «սոցիալիստական տեսության հարստացումը»: Նրա կարծիքով՝ դա լուրջ ջանքեր էր պահանջում, բայց մշտական միտում կար՝ գաղափարախոսությունը մեկնաբանելու հոգուտ իրեն, և վերջին երեք կամ չորս տարիների ընթացքում նման «հարստացում» գտնելու վճռականությունը դառնում էր ավելի ու ավելի թույլ: Կարգախոսները կրկնվում էին առանց հիմնավորման... Նա քիչ մարդկանց էր համոզում իր գաղափարախոսությամբ: Չաուշեսկուին նվիրվածության և նրա հետ նույնականացման կորը վար էր իջնում:<sup>32</sup>

Մի եվրոպացի գիտնական, որը գրում էր դեռ Չաուշեսկուի իշխանավարության օրոք, ևս նկատել է այն աստիճանը, որում գաղափարախոսությունը գնալով դառնում էր ավելի քիչ կաշկանդող Չաուշեսկուի համար և այլևս ուղենիշ չէր նրա հետևորդների համար: «Չաուշեսկուիզմը»,- գրում է նա,-

պարունակում էր գործնականում մշտապես խախտվող հիմնական դրոյթների միջուկը՝ այդպիսով առաջացնելով անիրականության, ֆանտաստիկայի և կաֆկյան անապահովության, տազնապի և անկանխատեսելի վարքի զգացում: Գործելակերպի ոճը բնութագրվում էր իշխանության ծայրահեղ կենտրոնացմամբ, իռացիոնալությամբ և ուռճացված սիմվոլիզմով ... Չաուշեսկուիզմը՝ որպես ենթավերնախավի վարքի չափանիշ, անկանխատեսելի էր... այդպիսով գործունեության չափանիշներն ու չափորոշիչները դարձնելով անաշխատունակ և Չաուշեսկու-Պետրեսկու կլանի ներքին շրջանակներում տեղաշարժերի դիրքորոշումներից կախված:<sup>33</sup>

Ռումինիայի կենտրոնական կոմիտեի նախկին անդամի որդի և համակարգիչների մասնագետ Գեորգե Սենկովիչին (Gheorghe Sencovici), որը 1982թ. հեռացել էր Ռումինիայից, 1986թ. հարցնում է. «Ո՞վ է Չաուշեսկուն այսօր: Նա կոմունիստ է: Նա ստալինիստ է: Նա հիվանդագին կերպով մտահոգված է լեգիտիմության պակասով: Նա ինչ-որ դոկտրին է ներկայացնում: Ես վախենում եմ՝ նա ընդհանրապես ոչինչ չի ներկայացնում: ... Նա ավելի մոտ է Իդի Ամինին, Հիտլերին, Ռեգա Փեիլիին և Բոկասային, քան դոկտրինով առաջնորդվող որևէ այլ կոմունիստական առաջնորդի»:<sup>34</sup> Նշանակալի է, որ բոլոր

32. Օվիդիու Տրասնեայի հետ Ալֆրեդ Ստեփանի հարցազրույցից նախկինում արված մեջբերումից:

33. Ջիլբերգ Տրոնդ (Trond Gilberg), "Nationalism and Communism in Romania: The Rise and Fall of Ceausescu's Personal Dictatorship" (Boulder, Colo.: Westview Press, 1990), 56):

34. Տէն նախկինում մեջբերված Ֆրիդրմ Չաուսի (Freedom House) «Կտր սեղանի» շուրջ քննարկում-

չորս մարդկանցից, ում հետ Չաուշեսկուին համեմատում է Սենկովիչին, ըստ մեզ՝ միայն Հիտլերը մոտ չէր սուլթանական տիպին:

Այս համատեքստում մարքսիզմը՝ որպես կենսունակ գաղափարախոսություն, Ռումինիայում իրականում մահացել էր: Ինչպես Կատերին Վերդերին է եզրակացնում Չաուշեսկուի օրոք գաղափարախոսությանը և մշակութային քաղաքականությանը նվիրված իր սիստեմատիկ և տպավորիչ ուսումնասիրություններում, «մարքսիստական փիլիսոփայությունը չէր վերարտադրվում երկրորդ սերնդի շրջանում. 1980-ականներին դժվար թե ինչ-որ մեկը մատերիալիստական բնույթի լուրջ փիլիսոփայական հետազոտություններ էր անցկացնում»: <sup>35</sup> Փաստորեն, նրա կենտրոնական թեզն այն է, որ այնպիսի տիպի ծայրահեղ ազգայնականությունը, որին նվիրված էր Չաուշեսկուն, և որը պաշտպանում էր, քայքայում է մարքսիզմ-լենինիզմի համընդհանրականությունը: «Այս ազգային գաղափարախոսությունը քայքայում է մարքսիստական դիսկուրսը և այդպիսով, չնայած դրա հանդեպ կոմունիստական կուսակցության ցուցադրական նվիրվածության՝ կուսակցության լեգիտիմության քայքայման հիմնական տարրն է»: <sup>36</sup>

Վարչակարգի վերջին բնութագիրը, որը մենք կքննարկենք, համախմբումն է: Դա մեզ համար ամենադժվարն է այն դասակարգելու առումով: Ռումինիան Չաուշեսկուի ժամանակ հստակորեն մոտեցել էր ամբողջատիրության կատարելատիպին, որտեղ «լայնածավալ և ինտենսիվ մոբիլիզացում կար վարչակարգի կողմից ստեղծված կազմակերպությունների մեծ բանակում»: Ինչպես մեկնաբանում է մի ռումինացի հասարակագետ, «Արևելյան Եվրոպայի ոչ մի այլ երկրում այդքան շատ քաղաքականացված կազմակերպություններ չկային: Նույնիսկ ներքին քաղաքական բնութագրեր չունեցող փոքր կազմակերպություններն, ինչպես օրինակ՝ մեղուների հարցերով զբաղվողների կազմակերպությունը, ստեղծված էին կուսակցական պետության կողմից: Համակարգը ձեր ներքին կյանքի մեջ ավելի էր միջամտում, քան Արևելյան Եվրոպայի ցանկացած այլ երկրում»: <sup>37</sup> Անտարակույս, շարաթօրյակներում «կամավոր» աշխատանքի աստիճան կար, և մշտական, երկրով մեկ պետության կողմից կազմակերպվող մոբիլիզացումներ, որոնք սովորաբար բնութագրական չեն ո՛չ հետամբողջատիրական, և ո՛չ էլ սուլթանական վարչակարգերին:

Եթե մոբիլիզացման առումով ամբողջատիրությունից կային շեղումներ, ապա դրանք նախատեսված էին ոչ այնքան «ոգևորությունը մոբիլիզացնելու», այլ ավելի շուտ մասնավոր տարածքի և ցանկացած չթույլատրված գործունեության մասշտաբի նեղացման միջոցով ժողովրդի վրա սուլթանի վերահսկողությունն ամրապնդելու համար: Իհարկե, Չաուշեսկուի գանգվածային ծիսականացված պաշտամունքը որքան սուլթանական,

ները՝ round-table discussions, "Romania; A Case of Dynastic Socialism", 19:

35. Verdery, "National Ideology under Socialism", 269: Խուան Լիսըրը PSUC-ի (Partido Socialista Unificado de Catalunya՝ կոմունիստական կուսակցության կատալոնական թևի) կողմից պաշտպանվող, Կատալոնիայում բարձրագույն պետական պաշտոնին հավակնող ամենաուժեղ թեկնածուներից մեկի հետ, որը Չաուշեսկուի հյուրն է եղել Ռումինիայում, մասնավոր գրույցի ընթացքում լսել է թեկնածուի մեկնաբանությունները, որ Չաուշեսկուի վարչակարգին ամենամոտ վարչակարգը նա համարում է Սոմոսայինը՝ Նիկարագուայում:

36. Նույն տեղում, էջ 4:

37. Օվիդիու Տրասնեսայի հետ Ալֆրեդ Ստեփանի հարցազրույցից նախկինում արված մեջբերումից:

նույնքան էլ ամբողջատիրական որակներ ուներ: 1980-ականներին արդեն ակտիվիստներն ու կադրերը հատկապես կարևոր դեր չէին խաղում: Հակառակ դրան՝ Բուխարեստի ցանկացած կազմակերպության և՛ ինստիտուտի որոշակի չափաբաժին, և՛ յուրահատուկ տեղ էր հատկացվում ծիսական պարտականությունները կատարելու համար:<sup>38</sup>

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ Չաուշեսկուի օրոք՝ հատկապես 1974-89թթ. ժամանակահատվածում, բազմակարծության, դեկավարման, գաղափարախոսության և մոբիլիզացման վիճակի մեր վերլուծությունը հանգեցնում է նրան, որ Ռոմինիան կարող է դասակարգվել որպես վարչակարգ, որը միաժամանակ ուժեղ սուլթանական և ուժեղ ամբողջատիրական որակներ է դրսևորում:

Ոչ մի փոփոխական, առանձին վերցված, չի կարող լիովին բացատրել բարդ պատմական գործընթացները: Ինչևէ, ամբողջատիրական և սուլթանական որակները համադրող վարչակարգի բնույթը հասկանալն օգնում է լույս սփռել, թե ինչպես և ինչու են անցման ժողովրդավարական ուղիներից շատերն իրականում արգելափակված: Դա նաև օգնում է մեզ հասկանալ, թե ինչու են նույնիսկ սուլթանականությունից անցում կատարելուց հետո կազմակերպված ժողովրդավարական ուժերը կանխավ թույլ, իսկ ոչ ժողովրդավարական ուժերը, որոնք կարող են ճանաչում ստանալ միայն այն բանի համար որ վերացրել են սուլթանին, կարող են հեղափոխական լինելու հավակնություններ ներկայացնել:

#### «ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՆԱԶԵՆՔ ԱՆՑՄԱՆ» ԲԱՅԱԿԱ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ

Ոչ ժողովրդավարությունից դեպի ժողովրդավարական վարչակարգեր անցման ամենաստվորական ճանապարհներից մեկն անցնում է «դաշնությունահենք անցման» միջով: Այս գրքում մենք վերլուծել ենք ավտորիտար վարչակարգերից նման դաշնությունահենք անցումներն Իսպանիայում, Բրազիլիայում, Ուրուգվայում և Լեհաստանում և նույնիսկ Հունգարիայի պես հասուն հետամբողջատիրական վարչակարգում: Ըստ էության, դաշնությունահենք անցումը չորս խաղացողներով խաղ է, որտեղ կան կոշտ գծի ու մեղմ գծի կողմնակիցներ վարչախմբում և չափավորներ ու ծայրահեղականներ՝ ընդդիմության մեջ: Տեսականորեն և քաղաքականապես կան երկու կառուցվածքային նախապայմաններ ժողովրդավարությանը նման դաշնությունահենք անցման համար. (1) կազմակերպված, երկրով մեկ հայտնի խաղաղ պայքարի կողմնակից ժողովրդավարական խմբերի գոյություն քաղաքացիական և քաղաքական հասարակություններում և (2) վարչախմբի ներսում մեղմ գծի կողմնակիցների գոյություն, ովքեր ցանկություն և ինքնուրույնություն ունեն՝ բանակցելու «դաշնությունահենք բարեփոխումների» շուրջ: Այս անհրաժեշտ նախապայմաններից ոչ մեկն էլ հնարավոր չէ սուլթանական և ամբողջատիրական վարչակարգերում: Ընդդիմադիր խմբերը, հատկապես եթե նրանք չափավոր են, ժողովրդավարական և տեսանելի, ստիպված են լինում անհայտանալ: Վարչակարգի ներսում սուլթանը տեղ չունի իր անձնական տնային ծառայողների կազմում մեղմ գծի հետևորդների համար, որոնք բանակցում են վարչակարգի փոփոխության շուրջ: Այդպիսով, չորս

38. Նման ստիպողական մոբիլիզացման և քծանքի նկարագրության մասին տե՛ս Nelson, "Romania: Politics in the Ceausescu Era", 60:

խաղացողներով խաղն անցման հասանելի ճանապարհ չէ, որովհետև երկու ամենակարևոր խաղացողները պարզապես բացակայում են:

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԼՔԻ ՈՒՂԻՆԵՐԸ. ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԴԵՐԸ

Ռումինիայի ազգայնական սուլթանականության և ամբողջատիրության յուրահատուկ խառնուրդը նաև օգնում է բացատրել, թե ինչու բռնությունները, ինչպես որ սպասվում էր, բախտորոշ դեր ունեցան անցման գործընթացում, և թե ինչու այն հանդիսացավ Վարչական պայմանագրի վերջին երկիրը, որտեղ փոխվեց վարչակարգը: Սուլթանական վարչակարգերում համարյա թե ոչ մի դրդիչ կամ շարժիչ չկա վարչակարգի կողմից նախաձեռնվող ժողովրդավարական անցումների համար: Կուսակցության ինքնավարության սուլթանական քայքայումն իրականում խանգարեց, որ խաղաղ բուլղարական տիպի, հավաքական Քաղբյուրոյի որոշմամբ առավելագույն քանակով առաջնորդների հեռացում հնարավոր լինի: Զինվորականների գլխավորությամբ ազատագրական հեղաշրջում «բանակի՝ որպես կազմակերպության» կողմից նույնիսկ ավելի անհավանական էր, ոչ միայն այն պատճառով, որ զինվորական կառավարություն չկար, այլև որ, ինչպես Վեբերն է նշում, «սուլթանական» վարչակարգերում պետական կարիերան և պետական հաստատությունները կորցնում են իրենց ողջ կազմակերպական ինքնավարությունը, քանի որ անընդհատ մանիպուլյացիաների են ենթարկվում՝ համաձայն սուլթանի կամքի: Վերջապես, սուլթանական և ամբողջատիրական միախառնումն իրականում խոչընդոտում է անցմանը, որի ժամանակ քաղաքացիական հասարակության ժողովրդավարական և լավ կազմակերպված ընդդիմությունը վայր է բերում իշխանությանն՝ առանց բռնության հանդիպելու: Վարչակարգի փոփոխության ոչ բռնի ճանապարհների փակ լինելն է հենց, որ բացատրում է, թե ինչու ուժեղ սուլթանական կողմեր ունեցող վարչակարգերը, հավանաբար ավելի հաճախ, քան այլ վարչակարգերն, ի վերջո գալիս են բռնի ուժի կիրառման կամ հեղափոխական ապստամբությունների:<sup>39</sup> Դրա օրինակներ են Սոմոսայի Նիկարագուան, Շահի Իրանը և Բատիստայի Կուբան, ինչպես նաև Չաուչեսկուի Ռումինիան:

Այդ պայմաններում վարչակարգի կամ հասարակության կողմից նախաձեռնված

39. Գնալով ավելացող քանակությամբ գրականություն կա ուժեղ սուլթանիստական հատկանիշներ ունեցող վարչակարգերի՝ հեղափոխական ապստամբությունների միջոցով անկման հակվածության մասին: *St' u* Jeff Goodwin and Theda Skocpol, "Explaining Revolutions in the Contemporary Third World", *Politics and Society* 17, no. 4 (1989), 489-509, հրատարակման փուլում գտնվող մեծ գրքի չափեր ունեցող, Չեհաբիի (H. E. Chehabi) և Խուան Լինցի խմբագրած "Sultanistic Regimes" ձեռագրում Ռիչարդ Մնայդերի (Richard Snyder) "Combining Structural and Voluntaristic Explanatory Perspectives: Paths Out of Sultanistic Dictatorships" աշխատությունը և John Foran and Jeff Goodwin, "Revolutionary Outcomes in Iran and Nicaragua: Coalition Fragmentation, War, and the Limits of Social Transformation", *Theory and Society* 22 (1993), 209-47: Չաուչեսկուի տապալելուց մի քանի ամիս առաջ գրելով՝ Ջուզեպպե դի Պալման (Giuseppe di Palma) խորաթափանց կերպով նկատում է. «Չաուչեսկուն շատ է մոտեցել Կենտրոնական Ամերիկայի ժառանգական և ավազակային բռնատիրություններին: Այդ պատճառով բաց ճնշումները/բաց հակամարտությունները շատ հավանական են: *St' u*՝ նրա՝ "To Craft Democracies: An Essay on Democratic Transitions" (Berkeley: University of California Press, 1990), 240:

**Աղյուսակ 18.1. Չառուշեկուի վարչակարգի տապալումից առաջ ընկած ժամանակաշրջանում հասարակական կարծիքի վրա ազդող ամենակարևոր գործոնների գնահատումը**

Գործոնը	%
Քաղաքական փոփոխություններն Արևելյան Եվրոպայում	61%
Արևելյան Եվրոպայի հանդեպ խորհրդային քաղաքականության փոփոխությունը	53%
«Ազատ Եվրոպա» ռադիոկայանի հեռարձակումները	33%
Ռումինական այլախոհական գործողությունները	28%

*Աղբյուրը:* Վարցումն անց է կացվել 1990թ. Ռումինիայում 1500 մարդկանց շրջանում «Ազատ Եվրոպա» ռադիոկայանի կողմից և ներկայացվել Ռոնալդ Լինդենի (Ronald Linden) կողմից Խորհրդային և արևելաեվրոպական հետազոտությունների IV-րդ համաշխարհային գիտաժողովին: 1990թ., հուլիսի 21-26, Կարոզեթ, Անգլիա:

որևէ տեսակի խաղաղ անցում ոչ միայն իրականում անհնար է, այլև արտաքին դեպքերը ներքիններից առավել կարևոր դեր կարող են խաղալ: Համաձայն դիֆուզիայի էֆեկտի՝ «գլասնոստի» և «պերեստրոյկայի» առումով Խորհրդային Միության դեպքերին և Հունգարիայի, Լեհաստանի, Արևելյան Գերմանիայի ու Նույնիսկ Բուլղարիայի հուզումներին Ռումինիայով մեկ հետևում էին «Ազատ Եվրոպա» ռադիոկայանի ու հունգարական և նույնիսկ բուլղարական հեռուստատեսությունների միջոցով:<sup>40</sup> Այդ դեպքերի կարևորությունը և ներքին այլախոհական գործողությունների հարաբերական անկարևորությունն ընդգծված է Չառուշեկուի վարչակարգի տապալումից հետո անցկացված հարցման արդյունքներում (Աղյուսակ 18.1): Նախորդող դեպքերի ունեցած այդ աստիճան կարևորության պարագայում հասկանալի է դառնում այն փաստը, որ Ռումինիայի սուլթանական և ամբողջատիրական վարչակարգը վերջինն էր Վարչապետի պայմանագրի դումինոյի քարերից, որն ընկավ:

**ՀԵՂԱՓՈՒՄՈՒԹՅԱՆ «ՅՈՒՐԱՅՈՒՄԸ». ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ**

Ռումինիայում անցմանը նվիրված ակադեմիական և հանրամատչելի գրքերից շատերում հեղինակները գլուխ են կոտրում «յուրացված հեղափոխության» խնդրի վրա: Այն հեշտությունը, որով Իոն Իլիեսկուն և այլ նեոկոմունիստներ կարողացան վերահսկողու-

40. Մի հարցազրույցից մյուսը ակտիվիստներն ու դիտորդները հատուկ նշում են արտաքին դեպքերի կարևորությունը: Նույնիսկ Վարչապետի պայմանագրի նախավերջին երկրի՝ Բուլղարիայի տապալումը վճռորոշ էր Ռումինիայում իշխանական հարաբերությունների փոփոխությունների համար: Կրթության նախկին նախարար Մալիցան (Malitza) մեկնաբանում է. «Սկսած 1988-1989 թթ-ից՝ մեզ համար հաճույք էր դիտել բուլղարական հեռուստատեսությունը: Մենք բռնում էինք հարավայլավակյան, հունգարական, խորհրդային և բուլղարական հեռուստահաղորդումները: Մենք գիտեինք, որ ավելի ցածրանակ չենք կարող: Մենք տեսանք ժիվկովի տապալումը Բուլղարիայում: Մենք գիտեինք, որ ինչ-որ բան մեզ մոտ պատահելու է»: Հարցազրույց Ստեֆանի հետ, 1991թ., հունիսի 22, Բուխարեստ: Գաբրիել Անդրեսկուն (Gabriel Andreescu) հստակ գիտակցում էր բուլղարական ցուցադրությունների հետևանքները: «Ես տեսա բուլղարական «Էկոլասնոստի» հաջողությունը: Ես փորձեցի այստեղ բնապահպանական խումբ ստեղծել»: Հարցազրույց, 1992թ., օգոստոսի 26, Բուխարեստ: Շատ կարևոր էր, որ մարդիկ զգում էին, որ խաղաղ փոփոխությունները տարբերակ չեն: Բանաստեղծ Իոն Բոգդան Լեֆտերի խոսքերով՝ «1980թ. Լեհաստանից, 1980թ. Գորբաչովից և հատկապես՝ 1989թ. դումինոյի էֆեկտից հետո մենք զգում էինք, որ առանձին դեպք ենք, և Չառուշեկուն երբեք չի ընդունի խաղաղ փոփոխությունները»: Հարցազրույց, 1992թ., օգոստոսի 27, Բուխարեստ:

թյուն հաստատել Տիմիշոարայում սկսված ժողովրդական ապստամբության վրա, շատ մեկնաբանների մոտ է այն վերագրել խորհրդային վերահսկողությանը կամ նախօրոք լավ կազմակերպված դավադրությանը: Հիմա արդեն մենք կարող ենք զարգացնել մեր այն պնդումը, որ սուլթանականությունն ինքնին ավելի հզոր բացատրություն է:

Հստակ է, որ Չաուշեսկուի վարչակարգի սուլթանական բաղադրիչը թույլ տվեց Իլի-եսկուին ներկայացնել Չաուշեսկուին՝ որպես համակարգի մարմնավորում, և հասկացնել տալ, որ ինքը՝ Իլիեսկուն, ամբողջովին փոխեց քաղաքական և տնտեսական համակարգը՝ գլխատելով «հիդրայի գլխով հրեշին»: Վարչավյան պայմանագրի ոչ մի այլ երկրում նման կշիռ չէր ունենա այս հռետորական աճպարարությունը, երբ բարոյական ցատումը կենտրոնացվեց ոչ թե համակարգի, այլ անձի վրա: Արևելյան Գերմանիայում, Չեխոսլովակիայում և մի փոքր ավելի պակաս՝ նույնիսկ Բուլղարիայում, գլխավոր առաջնորդը հեռացվել էր կուսակցության կողմից, բայց դա ոչ մի կերպ իրականում չկանգնեցրեց վարչակարգի դեմ բողոքները որպես այդպիսին, և ողջ համակարգը փոխելու ժողովրդավարական ընդդիմության պահանջները:

Վարչակարգի ծայրահեղ անձնավորվածությունը և դեսպոտիզմն օգնեցին հին վարչակարգին շատ մոտ կանգնած խմբերին «յուրացնելու» հեղափոխությունը: Վարչակարգի բարձր աստիճանի անձնավորվածության բնույթը թույլ տվեց նոր առաջնորդներին, եթե նույնիսկ նրանք սերտ կապեր ունեին վարչակարգի հետ, առաջ մղելու այն կոչը, որ երկրում ամեն վատ բանի համար պատասխանատու էր սուլթանը, այդպիսով, նրա հեռացման մեջ աչքի ընկնող դեր խաղալով՝ իրենց գատել սուլթանական վարչակարգից:

Ռումինիայում ռադիոն և հեռուստատեսությունը նոր Ազգային փրկության խորհրդի մասին հաղորդումներում ընդգծում էին վարչակարգի անձնավորված բնույթը: Կոմյունիկեում խոսվում էր «Չաուշեսկուի կլանի ատելի բռնատիրության տապալման» մասին: Իրականում երկար ժամանակ պահանջվեց՝ բացատրելու համար, թե ինչու Իլիեսկուն և ժամանակավոր վարչախմբի նրա գործընկերներն արագորեն վերացրեցին սուլթանին «դատական սպանության» միջոցով:<sup>41</sup> Նոր վարչակարգն ու նրա ազատական ժողովրդավարական բնույթի մասին մեր կասկածները հասկանալու համար մենք չենք կարող չհիշեցնել ընթերցողներին Նիկոլաե և Էլենա Չաուշեսկուների «դատավարության» և «դատական սպանության» ծաղրանկարային բնույթը, որն ամբողջովին հակասում էր օրենքի գերակայության և ձևական դատավարության սկզբունքներին: Շտապողական մահապատիժը շատ կասկածներ թողեց այն բանի մասին, թե ինչպես էր այն կազմակերպված, նույնիսկ չնայած որ ողջ աշխարհին հեռուստատեսությամբ ցուցադրում էին դատավարությունն ու մահապատիժը: Տպավորություն էր ստեղծվում, որ նոր ղեկավարները ցանկանում էին օգտագործել Չաուշեսկուի նկատմամբ ատելությունը և միևնույն ժամանակ խուսափել սուլթանի հետ իրենց նախկին կապվածության վերաբերյալ ամոթալի մեղադրանքներից: Ցանկացած դեպքում թատերականացված դատավարությունը և վերջում՝ մահապատիժը նոր վարչակարգի չարագուշակ սկիզբն էին: Հեղափոխության հաջողությունը հայտարարված էր հենց սուլթանին վերացնելու և ոչ թե նոր ժողովրդա-

41. «Գեղոտո» դատավարության մասին տե՛ս Almond, "Rise and Fall of Ceaușescu", 224-36, և Vladimir Tismaneanu, "Romania: Democracy, What Democracy?", East European Reporter 4, no. 2 (1990), 30:

վարական ինստիտուտներ ստեղծելու, ինչպես նաև՝ Չաուշեսկուի հետ սերտ կապված լայնածավալ ճնշիչ ապարատը վերացնելու առումով:<sup>42</sup>

Վարչակարգի սուլթանական որակներներն օգնում են նաև բացատրելու, թե ինչու Ռումինիան Վարչավյան պայմանագրի միակ երկիրն էր, որտեղ նախկին բարձրաստիճան կոմունիստ պաշտոնյաները հաղթեցին առաջին ընտրություններում ոչ միայն հեռու շրջաններում, ինչպես դա եղել էր Բուլղարիայում, այլև բոլոր մեծ քաղաքներում:<sup>43</sup> Մեր կողմից հստակեցված պատճառներով երկրով մեկ ճանաչված և կազմակերպական ռեսուրսներ ունեցող ոչ մի ժողովրդավարական առաջնորդ կամ խումբ ի հայտ չէր եկել Ռումինիայում: Ապստամբությունը չափազանց կարճատև էր, ինքնաբոլիս և քաղաքականապես մանիպուլյացիաների ենթարկված, որպեսզի իշխանական այլընտրանք ճներ: Այս համատեքստում Իլիեսկուն և նրա դաշնակիցներն ընտրություններում կարիք ունեին մրցելու երկու նախապատերազմյան (Երկրորդ համաշխարհային պատերազմ) ավանդական կուսակցությունների՝ Ազգային-ազատական կուսակցության, որի առաջնորդը հեղափոխական իրադարձություններից հետո տարիներ տևած տարագրությունից վերադարձել էր Ռումինիա՝ մասնակցելու նախագահական ընտրություններին, Ազգային գյուղացիական կուսակցության, ինչպես նաև Ռումինիայի հունգարների ժողովրդավարական միության հետ: Չնայած որ ավանդական կուսակցությունները տասնամյակներ շարունակ հակակոմունիստական էին եղել, նրանք չէին կարող հավակնել այն բանին, որ դեր են խաղացել սուլթանի վերացնելու մեջ, իսկ հունգարական կուսակցությունը հեշտությամբ ենթակա էր ազգայնական հարձակումներին:<sup>44</sup>

Հակառակ դրան՝ Իոն Իլիեսկուն ոչ միայն կարողացավ անձնական միավորներ շահել հիդրայի գլխով հրեշին ոչնչացնելուց, այլև հետագայում միավորներ հավաքեց՝ համարյա անմիջապես ոչնչացնելով սուլթանի հետ անձնապես կապված աղաղակող նախաձեռնությունները: Չաուշեսկուի մահվանից ընդամենը շաբաթներ անց վերացվեցին պարտադիր զինեկոդգիական քննությունները, հակաբեղմնավորիչ պահպանակները հասանելի դարձան, գյուղերի քանդումը դադարեցվեց, քաղաքաշինական պլանը մի կողմ նետվեց, գրամեքենաների գրանցման օրենքը չեղյալ հայտարարվեց, և հրապարակումներն արագորեն տարածվեցին: Չաուշեսկուի օրոք ոչ ոք անհատական անձնագիր չուներ: Եթե որևէ մեկին ժամանակավոր անձնագիր էին տալիս արտասահման պաշտոնապես թույլատր-

42. Սա համապատասխանում է հեղափոխական ժամանակավոր վարչակարգերի տրամաբանությանն ու դինամիկային, ինչը մենք քննարկել էինք հինգերորդ գլխում, և որը վերլուծված է Yossi Shain and Juan J. Linz, eds., *"Between States: Interim Governments and Democratic Transition"* (Cambridge: Cambridge University Press, 1995) գրքում:

43. Վարչավյան պայմանագրի միակ այլ երկիրը Բուլղարիան է, որտեղ ընտրություններում մեծ հաջողությամբ հաղթել էին կոմունիստական վարչակարգի հետ սերտորեն կապված ուժերը: Մակայն նույնիսկ այնտեղ ժողովրդավարական ընդդիմությունն այնքան ուժեղ էր, որ հաղթել էր չորս ամենամեծ քաղաքներում և կարողացել էր վերահսկողություն հաստատել նախագահականության վրա նախքան իր հաղթանակը երկրորդ ազատ ընտրություններում: Վարչավյան պայմանագրի մեջ չընդգրկված Ալբանիայում ընդդիմությունը պարտվեց առաջին ընտրություններում, բայց հաղթեց բոլոր մեծ քաղաքներում: Որպես խիստ հակադրություն՝ ոչ մի հարցում երբեք ցույց չի տրվել, որ Իլիեսկուն քիչ ձայներ ուներ նույնիսկ Բուխարեստում 1990թ. մայիսյան ընտրությունների ժամանակ:

44. Ռումինիայի 1990թ. մայիսյան ընտրությունների մասին տես Rady, *"Romania in Turmoil"*, 160-174; Roger East, *"Revolutions in Eastern Europe"* (London: Pinter Publishers, 1992), 145-46 և Nestor Ratches, *"Romania: The Entangled Revolution"*, 142-44:

ված ճանապարհորդության համար, այն անմիջապես վերադառնալուն պես պետք է հետ վերադարձվեր՝ անհատական պարտադիր նույնականացման քարտը ստանալու համար: Չառուշելուի տապալումից մեկ տարի անց Արտաքին գործերի նախարարությունը հայտարարեց, որ տասը միլիոն ռումինացիներ անհատական անձնագրեր ունեն:<sup>45</sup> Կարևոր է նաև, որ Իլիեսկուն կարողացավ օգտագործել պետական ապարատի վրա իր ազդեցությունը՝ օգնելու իրեն՝ նախագահ դառնալու և օգնելու Ազգային փրկության ճակատին (ԱՓՃ) խորհրդարանում ճնշող մեծամասնություն ստանալու համար: Արտասահմանյան վարկերն օգտագործվեցին վաճառատներ միս հասցնելու համար: ԱՓՃ-ի ժամանակավոր կառավարությունը երեք միլիոն դոլար հատկացրեց ԱՓՃ-ամետ մամուլի տպագրական նոր սարքավորումների համար, մինչդեռ նա ընդդիմադիր մամուլի համար պակասեցրեց տպագրական թուղթը և դժվարացրեց տարածումը:<sup>46</sup> Չնայած ընդդիմությունը որոշ չափով կարող էր օգտվել պետական հեռուստատեսությունից, ԱՓՃ-ն հստակ առավելություն ուներ, երբ վերլուծվում էր, թե ինչ է ցուցադրվում և չի ցուցադրվում ընտրություններից առաջ:<sup>47</sup> Մինչև Ռումինիա գնալը մենք կարծում էինք, որ ընդդիմությունը, հնարավոր է, որ հաղթի մայիսյան ընտրություններում, եթե ավելի շատ ժամանակ ունենա ընտրարշավ անցկացնելու համար: Սակայն Ռումինիա կատարած երկու ուղևորությունները մեզ համար պարզ դարձրին, որ Իլիեսկուն՝ որպես «հակասութանային» կերպար, անձնական և պետական ապարատի վրա իր վերահսկողության շնորհիվ այնպիսի կազմակերպչական առավելություններ ունի, որ ընտրարշավի ընթացքում հետզհետե ավելի նախընտրելի է դառնում:<sup>48</sup> Այս համատեքստում ընտրության օրը մեծ չափերի տեխնիկական կեղծիքների կարիք չկար, և 1990թ-ի մայիսի 20-ին Իլիեսկուն նախագահական ձայների 85%-ը ստացավ, իսկ Ազգային փրկության ճակատը՝ խորհրդարանական ձայների 66%-ը:<sup>49</sup>

#### ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՈՉ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԴԻՄԿՈՒՐՍՈՒ

Անցման շրջանի յուրահատուկ բնույթը հաճախ ազդեցություն է ունենում հաջորդած

45. Ստեփանի հարցազրույցը Ռումինիայի արտգործնախարար Ադրիան Նաստասեի (Adrian Nastase) հետ, Բուխարեստ, 1992թ., հունիսի 25:

46. Օրինակ՝ Յասի քաղաքում ԱՓՃ-ն հարձակվեց Չառուշելուի ժամանակների գլխավոր օրաթերթի վրա, «որը հեղափոխությունից հետո փոխեց իր անունը, և ոչ մի այլ բան»: Յասիում ընդդիմադիր մամուլին, սակայն, մշտապես զրկում էին տպագրական թղթից, վախեցնում նախկին Սեկուրիտատեի գործակալի ուղարկած երեսուն ավագակներով և զրկում քաղաքում տպագրվելուց: *See "24 Hours: An Independent Daily Newspaper Fighting for Survival"*, East European Reporter, 4, no. 2 (1990), 43:

47. *See Crisula Stefanescu, "Romanian Radio and Television Coverage of the Election Campaign"*, Report on Eastern Europe 1, no. 23 (1990): 42-45:

48. Ստեփանին այս մասին ասել էր Իլիեսկուի հիմնական քննադատ Պավել Կամպեանուն (Pavel Campeanu), որն ընտրարշավի ընթացքում հարցումներ էր անցկացրել: Հարցազրույց, օգոստոսի 31, 1992թ., Բուխարեստ:

49. Որոշ կեղծիքներ արվել էին, բայց ձայների բարձր տոկոսը ստացվել էր նախքան ընտրությունները եղած կառուցվածքային առավելություններից: Ինչևէ, ընտրական խախտումների մանրամասների համար *see Vlad Socor, "National Salvation Front Produces Electoral Landslide"*, Report on Eastern Europe 1, no. 27 (1990), 24-31:



կառավարության դիսկուրսի և գործելաոճի վրա: Ռումինիայի դեպքում անցման շրջանի յուրահաստկությունն այն էր, որ այնտեղ ներառված էին հեղափոխական ապստամբություններ, որոնք հետևեցին ժամանակավոր կառավարմանը, որի ընթացքում «Կլոր սեղաններ» չէին կազմակերպվել կամ համաձայնագրեր չէին ստորագրվել: Հինգերորդ գլխում մենք վերլուծել էինք, թե ինչպես և ինչու են ժամանակավոր կառավարությունները ժողովրդավարական տեսակի անցման համար խնդիրների լայն շրջան ստեղծում: Ժամանակավոր կառավարությունների ստեղծած ամենամեծ կանխատեսելի (և տեսանելի) խնդիրներից մեկն այն է, որ նրանք ձգտում են խոսել և գործել հեղափոխության անունից ու հավատում են, որ վեր են կանգնած սովորական ժողովրդավարական գործելաոճի ահմանափակումներից: Ոչ ժողովրդավարական հեղափոխական դիսկուրսն ու գործունեությունը միտում ունեն իրականացվելու որպես «բնականոն» բան: Եթե անցումն իրականացվում է հանուն հեղափոխության, այլ ոչ թե՛ ժողովրդավարության, նոր իշխանավորները, էթե նույնիսկ նրանք ավելի ուշ իրենց լեգիտիմությունը մեծացնում են ընտրությունների միջոցով, ձգտում են կառավարել այնպես, որ հաճախ առկա են լինում ոչ ժողովրդավարական դիսկուրսն ու գործելակերպը:

Նույնիսկ այն բանից հետո, երբ Բլիեսկուն ու Ազգային փրկության ճակատը տպավորիչ հաղթանակ տարան ընտրություններում, նրանք նախընտրեցին իրենց պարտված ախոյաններին վերաբերվել մեծապես ոչ ժողովրդավարական ձևով: Իր ընտրությունից մինչև պաշտոնական երդմնակալության արարողությունն ընկած ժամանակահատվածում Բլիեսկուն ցուցադրեց հեղափոխական դիսկուրսի և գործելակերպի գերակայությունը ժողովրդավարականի հանդեպ, երբ Բուխարեստի համալսարանի հրապարակում «զգոնության կոմիտեների» «արդարադատությունը» կիրառեց ուսանողական բողոքի ցույցերի դեմ: Նա կոչ արեց ածխափորներին գալ Բուխարեստ (նախապես տրանսպորտով ապահովելով)՝ պաշտպանելու կառավարությանը և քաղաքը մաքրելու «խուլիգաններից»: Երկու օրվա ընթացքում հանքափորները ոչ միայն դաժանորեն ծեծեցին ուսանողներին, այլև լրջորեն վնասեցին երկու հիմնական ընդդիմադիր կուսակցությունների շենքերը:<sup>50</sup> Ժողովրդավարական կառավարությունների հատկանշական բնութագրերից է այն, որ նրանք կատարում են օրենքի գերակայությունն ապահովելու մասին տված խոստումը և իրենց գործողությունները կազմակերպում են՝ համաձայն դրանք կարգավորող օրենքների: Երբ հանքափորները հեռանում էին Բուխարեստից, նորընտիր նախագահ Բլիեսկուն գնաց երկաթգծի կայարան և հրապարակավ դիմեց նրանց: Նրա խոսքերն ավելի շատ սազական էին ոչ ժողովրդավար հեղափոխականի, քան պետության ժողովրդավար նախագահի:

Ես շնորհակալություն եմ հայտնում ձեզ այն ամենի համար, ինչ դուք արեցիք այս օրերին: Ես շնորհակալություն եմ հայտնում ձեզ ևս մեկ անգամ այն բանի համար, ինչ դուք ապացուցեցիք այս օրերին. որ դուք քաղաքացիական և բանվոր դասի բարձր կարգապահություն ունեցող հզոր ուժ էք, ում վրա կարելի է հենվել լավ և հատկապես՝ վատ օրերին: Այս ամենը մաս էր ողջ Եվրոպայի համար գրված ավելի մեծ և մանրամասն սցենարի: Գոյություն ունեին

50. Skú Michael Shafir, "Government Encourages Vigilante Violence in Bucharest", Report on Eastern Europe 1, no. 27 (1990), 32-39:

համաձայնեցված գործողություններ՝ ի շահ աջակողմյան թևի ծայրահեղական ուժերի, որոնք մտադրվել են, որ ողջ Եվրոպայում աջակողմյան ծայրահեղական ուժեր գան իշխանության: ... Ամեն ինչ, ինչ նրանք արել էին, բոլոր այն կարգախոսները, որ բերել էին, ինձ ու նաև ուրիշներին մեղադրում էին հեղափոխությունը բռնազավթելու մեջ. կարծես թե կարելի է գողանալ հեղափոխությունը: Բայց ճշմարտությունն այն է, որ ծայրահեղական աջերը ցանկանում են ռումինական հեղափոխությունը տեղափոխել աջ թևի ձեռքը: Մենք մեր զգոնությունը պետք է արթուն պահենք: ... Մենք պետք է պահպանենք մարտական ոգևորվածությունը: ... Մենք պետք է ձեր օգնությունը խնդրենք, երբ որ դրա կարիքը լինի: ... Ամենայն հաջողություն ձեզ: <sup>51</sup>

ՄԻՆԺԱՄԱՆԱԿՅԱ ԱՄԲՈՂՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ, ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՅՆԱՄՈՒՈՒԹՅՈՒՆ. ԾԱՆՐ ԺԱՌԱՆԿՈՒԹՅՈՒՆ

1992թ-ին Ռումինիայում նորից անցկացվեցին խորհրդարանական և նախագահական ընտրություններ: Նախագահ Իոն Իլիեսկուն համեմատաբար հեշտությամբ վերընտրվեց: Միավորված ժողովրդավարական ընդդիմությունը (Ժողովրդավարական կոնվենտը) կարողացավ ստանալ խորհրդարանական ձայների միայն 21%-ը՝ չնայած այն փաստին, որ միջազգային դիտորդների մեծ մասը շատ խախտումներ չէր հայտնաբերել:

Ինչպե՞ս մենք կարող ենք հասկանալ ռումինական քաղաքականությունը 1992թ-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կայացած խորհրդարանական և նախագահական ընտրություններից հետո: Դրա համար մենք պետք է անցնենք գրված սցենարով ապստամբության, յուրացված հեղափոխության կամ նեոկոմունիզմի տրամադրած հայեցակարգային շրջանակներից այն կողմ: Տիմիշոարայում և Բուխարեստում *գրված սցենարով* ապստամբությունների մասին խոսելը Չաուշեսկուի բռնի իշխանության տապալման գործում «ցամառի շարժման» (օգտագործելով Քեն Ջովիտի հիշարժան արտահայտությունը) նշանակության թերագնահատում է: *Հեղափոխություն* բառը գերագնահատում է, թե այս շարժումներն ինչ աստիճանի են ներկայացնում իրենց սեփական առաջնորդներին ու ծրագրերն ունեցող ընդդիմադիր խմբերին: *Յուրացված հեղափոխություն* արտահայտությանը պակասում է հանպատրաստի օպորտունիզմն ու Իլիեսկուի թուլությունը: *Նեոկոմունիզմն* ուռճացնում է Չաուշեսկուի անկումից հետո եկած կառավարության սկզբունքային ամրությունը և հատկապես հաշվի չի առնում Ազգային փրկության ճակատի ներսում զգալի բաժանումը, որն ի հայտ եկավ 1991թ.: Փաստորեն, 1992թ. ընտրություններից տասներկու ամիս առաջ Ազգային փրկության ճակատի հակաիլիեսկուական թևը, 1991թ. սեպտեմբերին հանդիպելով կառավարման ճգնաժամի, որոշ ավանդական ազատականների ներառող կոալիցիոն կառավարություն ձևավորեց, պաշտպանեց վարչապետի՝ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ սիրահետելը, և 1992թ-ի մարտի վերջին վերահսկողություն սահմանեց կուսակցության վրա: <sup>52</sup>

51. 1990թ. հունիսի 15-ի հանրափորներին ուղղված Իլիեսկուի «Բարի ճանապարհ և շնորհակալություն ձեզ» ելույթն ամբողջովին վերատպված է "East Europe"-ի արտասահմանյան ռադիոհաղորդումների տեղեկատվական ծառայության ամենօրյա զեկույցում, հունիսի 18, 1990թ., էջ 67-70:

52. Șteiu Dan Ionescu, "Romania's Ruling Party Splits after Congress", RFE/RL Research Report, 1, no. 16 (1992), 8-12:

Բայց ինչպես ցույց տվեցին խորհրդարանական և նախագահական ընտրությունները, սուլթանական վարչակարգն իրենից հետո քաղաքական և սոցիալական հարթեցված տարածք էր թողել:<sup>53</sup> Քաղաքացիական հասարակությունը սկզբնավորման փուլում մնաց, օրենքի գերակայությունը՝ փխրուն, քաղաքական կռալիցիաները՝ փոթորկոտ, և քաղաքական միտումներից շատերը՝ վարկաբեկված:<sup>54</sup> Այս համատեքստում ռումինական ընդդիմությունն անկարող էր հայտնի քաղաքական առաջնորդների ղեկավարությամբ սկզբունքային և միացյալ ժողովրդավարական կամպանիա անցկացնել և իրենց ուղերձները հասցնել երկրի ամեն մի անկյուն, ինչպես դա կարողացավ անել հակապինդչետյան ընդդիմությունը Չիլիում 1989թ.: Ռումինական ընդդիմությունը ստացավ խորհրդարանական ձայների միայն 21%-ը, իսկ նախագահի ընդդիմադիր թեկնածու Էմիլ Կոնստանդինեսկուն (Emil Constantinescu) նախագահական ընտրությունների երկրորդ փուլում ստացավ ձայների 39%-ն՝ ընդդեմ Իլիեսկուի 61%-ի: Ընդդիմության թուլությունը, ինչպես նաև Իլիեսկուի ուժը բացատրում են, թե ինչու Իլիեսկուն 1992թ. հոկտեմբերին հաղթեց նախագահական ընտրությունների երկրորդ փուլում:<sup>55</sup>

53. Գեյլ Կլինգմանը իրավացիորեն նշում է, որ Չաուշեսկուի թողած հիմնական ժառանգությունը և ապստամբության հետևանքով նրա կործանման պատճառն այն էր, որ համարյա լիովին բացակայում էր այն, ինչը մենք կոչում ենք *քաղաքացիական հասարակություն*: «Ժողովրդական կամքի մարմնավորված և բարձրաձայնված ցուցադրումը բախտորոշ էր հեղաշրջման/ժողովրդական ապստամբության ոգևորիչ օրերին, [բայց] ժողովրդի կամքը չի կարող լավագույնս իրագործվել անվերջ փողոցային ցույցերով: ...Մի բան է՝ դեռ շարունակ բռնատիրությունը, մի այլ բան՝ մասնակցել ժողովրդավարական հանրային ոլորտի և քաղաքացիական հասարակության հիմնադրմանը: Չաուշեսկուի իշխանության տարիներից ժառանգություն էր ստացվել այն, որ մարդկանց վարքն ավելի շատ ծիսական էր, քան գործնական, և ժողովրդավարության ճանապարհի որոնման քայլեր գրեթե չէին արվում: Հիմա շահերը ձևական և ոչ ձևական կազմակերպություններում ինստիտուցիոնալացնելու կարիք կա»: Gail Kligman, "Reclaiming the Public: A Reflection on Creating Civil Society in Romania", East European Politics and Societies 4, no. 3 (1990), 393-437, մեջբերումը՝ էջ 410-411-ից:

54. Ե՛վ «Ազգային ազատական կուսակցությունը» բաժանվեցին: Յուրաքանչյուր կուսակցության մի խմբակցությունը 1991թ. սեպտեմբերից մինչև 1992թ. ապրիլ միացավ կառավարությանը: Ուսանողության առաջնորդ Մարիան Մունտեանուն (Mirian Munteanu), որը 1990 թ-ի հունիսին դաժան ծեծի էր ենթարկվել հանքափորների կողմից, 1990-ի նոյեմբերին դարձավ «Քաղաքացիական այլանսի» առաջին նախագահը, բայց արդեն 1991-ին կապերը խզեց «Քաղաքացիական այլանսի» հետ և ստեղծեց «Շարժում հանուն Ռումինիայի» անվամբ մի կուսակցություն, որը մտածված կերպով օգտագործում էր Ռումինիայի միջպատերազմական տարիների (I և II համաշխարհային) ֆաշիստամետ «Երկաթյա գվարդիայի» կարգախոսներից և սիմվոլներից շատերը: 1992թ. հունիսին, Ռումինիայի՝ պատերազմի ժամանակաշրջանի ավտորիտար ազգայնական առաջնորդ գեներալ Իոն Անտոնեսկուի (Ion Antonescu) ծննդյան 110-րդ տարեդարձի օրը, պառլամենտի գրեթե բոլոր անդամները մեկ ըուպե լրությամբ հոտնկայա նշեցին նրա հիշատակը: *See* և Vladimir Tismaneanu, "Endangered Democracy: Emerging Pluralism in Post-Communist Romania", («Ժողովրդավարության նոր խնդիրները» Բելաշիդայի համաժողովի համար պատրաստված աշխատություն):

55. Ժողովրդավարական ընդդիմությունը կարողացավ «Ժողովրդավարական կոնվենտ» անվանումով կռալիցիայի մեջ համախմբել տասնութ կուսակցությունների: Սակայն «Ազգային ազատական կուսակցության» հիմնական թերը 1992թ. ապրիլին հետացավ կոնվենտից, քանի որ այլք առարկում էին նրանց կուսակցության շարքերում Ռումինիայի հունգարական փոքրամասնության ներկայացուցիչներ ունենալուն: Հետագայում կոնվենտը մի քանի արժեքավոր ամիսներ կորցրեց նախագահի թեկնածու ընտրելու վրա: Ժողովրդավարական կոնվենտի երկու հիմնական ուժերն էին ութսուներեք անկոտրում հակակոմունիստ և միապետական Կոռնելիու Կոպուտուի (Corneliu Coposu) ղեկավարած նախապատերազմյան «Գյուղացիական կուսակցությունը» և ավելի ժամանակակից «Քաղաքացիական

Ժողովրդավարական ընդդիմության թուլության մեր վերլուծությունում մենք հատուկ ընդգծել էինք սուլթանական և ամբողջատիրական ժառանգությունը: Ինչևէ, Ռումինիան նաև պետութենականության անթեղված խնդիր ուներ, որը շահագործվեց Չաուշեսկուի հետնորդների կողմից: Ռումինան 1.7 միլիոն հունգարական փոքրամասնություն ունի, որոնց մեծ մասը կենտրոնացած է Տրանսիլվանիայում: Ռումինիայի նոր սահմանադրության առաջին՝ «Ազգությունների վերաբերյալ» հոդվածում Ռումինիան սահմանվում է որպես «միավորված ազգային պետություն»: Չորրորդ հոդվածում ասվում է, որ պետությունը հենված է «ռումինական ժողովրդի միության» վրա: Տասներեքերորդ հոդվածն ասում է. «Ռումինիայում պետական լեզուն ռումիներենն է»:<sup>56</sup> Մերժելով այս ազգային պետության քաղաքականությունը՝ «Հունգարական ժողովրդավարական այլանս» կարևոր քաղաքական կուսակցությունը երբեմն ընդգծում էր իր ժողովրդավարական ընդդիմադիր, իսկ երբեմն՝ իր ինքնավար բնույթը: Ե՛վ 1992թ-ին, և՛ 1995թ-ին «Հունգարական ժողովրդավարական այլանսի» կարգավիճակը հանգեցրեց զգալի բաժանումների ժողովրդավարական ընդդիմության շարքերում:

Այս համատեքստում Իլիեսկուի կառավարությունը, ինչպես և Չաուշեսկուինը, շահագործում և ուռճացնում էր ազգային միասնությանը սպառնացող վտանգը: Իսկապես, 1995թ-ի հունվարին պետութենականության խնդիրը դեր ունեցավ ժողովրդավարական ընդդիմության մասնատման և չարագուշակ «դարչնագույն-կարմիր-սուլթանական» քառակուսակցական իշխանական կոալիցիայի ժամանակավոր միակցման մեջ: Վերլուծաբաններից մեկն այս նոր իլիեսկուամետ կոալիցիան նկարագրում է հետևյալ բառերով.

Շովինիստական «Մեծ Ռումինիա» կուսակցությունն (PRM) ու Ռումինիայի անհետացած կոմունիստական կուսակցության ժառանգորդ Սոցիալիստական աշխատավորական կուսակցությունը (PSM) պաշտոնական բնույթ հաղորդեցին իշխող կոալիցիայի հետ իրենց հարաբերություններին: ... Արձանագրության չորրորդ ստորագրողը՝ ծայրահեղ ազգայնամոլական Ռումինիայի «Ազգային միաբանություն» կուսակցությունն (PUNR), արդեն իսկ միացել էր կառավարությանը: ... Արձանագրությունը ստորագրելու պահին Չաուշեսկուի օրոք նախկին վարչապետ, իսկ հիմա PSM-ի նախագահ Հիյե Վերդետը (Hie Verdet), PSM-ի առաջին փոխնախագահ և Չաուշեսկուի ընտանիքի «պալատական պոետ» Ադրիան Պաունեսկուն (Adrian Paunescu), Չաուշեսկուի մի այլ «պալատական տրուբադուր», իսկ հիմա բացահայտ հակասեմական PRM-ի նախագահ Կորնելիու Վադիմ Տուդորը (Corneliu Vadim Tudor) և աննկուն հա-

այլանս» կուսակցությունը: Չնայած որ Պավել Կամպեանուի հարցումները ցույց էին տալիս, որ «Գյուլագիական կուսակցությանը» պաշտպանում են ընտրողների 11%-ը, և «Քաղաքացիական այլանս» կուսակցությունն ունի 9%, միավորման գինն այն էր, որ «Գյուլագիական կուսակցությունը» կոնվենտի ընտրացուցակներում ստացավ տեղերի 55%-ը, մինչդեռ «Քաղաքացիական այլանս» կուսակցությունը՝ 20%-ից էլ պակաս: 1992թ. ընտրարշավի ընթացքում ժողովրդավարական կոնվենտի երկու հիմնական թների միջև համակարգումը շատ վատն էր: Արդյունքում կոնվենտը չկարողացավ եռանդուն ընտրարշավ անցկացնել գյուղական շրջաններում, որոնք մնացին Իլիեսկուի և նախկին կոմունիստական նոմենկլատուրայի վերահսկողության տակ, և վերցրեց խորհրդարանական քվեների միայն 21%-ը: Այս դիտարկումները հենված են նախընտրական շրջանում Ստեփանի՝ Ռումինիա կատարած այցելությունների և մասնակիցների հետ հետընտրական զրույցների վրա:

56. Stéu Aurelian Craiutu, "A Dilemma of Dual Identity: The Democratic Alliance of Hungarians in Romania", in East European Constitutional Review 4, no. 2 (1995), էջ 43-49:

կահունգարացի Ֆունարը (Funar) անմահացած են լուսանկարների վրա՝ PDSR-ի առաջնորդների հետ միասին:<sup>57</sup>

Այս կոալիցիան ճնշում գործադրեց ընդդիմադիր քաղաքապետերի վրա, որոնցից շատերն ընկալվում էին որպես փոքրամասնությունների կամ ընդդիմության նկատմամբ համակրանք ունեցող: Արևելաեվրոպական սահմանադրական հանդեսի (*East European Constitutional Review*) սահմանադրական վերահսկման բաժնում նշվում է, որ «ընդհանուր առմամբ 133 քաղաքապետեր փոխարինվել են կառավարության կողմից նշանակված պրեֆեկտներով: ... Դատարան դիմած 62 քաղաքապետերից միայն չորսի դիմումներն են բավարարվել: Չնայած խորհրդարանական ընդդիմության, միջազգային կազմակերպությունների և ընտրագանգվածի հակազդեցությանը՝ գործադիրը կարծես թե վճռական է՝ իրագործելու քաղաքապետերից ազատվելու ծրագիրը»:<sup>58</sup>

Մինչ 1995թ. Ռումինիան կարծես թե գտնվում էր հակասական դրության մեջ: Ի տարբերություն Արևելակենտրոնական Եվրոպայի բոլոր հետկոմունիստական երկրների, որոնք մինչ այժմ քննարկել էինք (Լեհաստան, Հունգարիա, Չեխիայի Հանրապետություն և Բուլղարիա), Ռումինիան մեր հինգ ոլորտներից բոլորում էլ ամենահեռուն էր գտնվում կայացած ժողովրդավարություն լինելուց: Քաղաքացիական հասարակությունը դեռևս շատ թույլ էր: Քաղաքական հասարակությունն առողջ իշխանական այլընտրանք չէր ստեղծել: Օրենքի գերակայությունը կաղում էր, հատկապես՝ տեղական կառավարման և գնչուների ու հունգարացիների պես փոքրամասնությունների շրջանում մարդու իրավունքների ոլորտներում: Պետական կառավարման բարեփոխումները դեռևս չէին կատարվել: Տնտեսական հասարակությունը դեռևս չէր ստեղծվել: Այս խնդիրներից շատերը կարող էին ուղղակիորեն հետևանք լինել (ինչպես որ էր՝ խնդիրների նմանատիպ հավաքածու ունեցող Հաիթիում) սուլթանականության ժառանգության:

Ակնհայտ պարադոքսն այն էր, որ Ռումինիան մի հարցումից մյուսը երևում էր որպես մի երկիր, որտեղ հարցվողներն ասում էին, որ ներկա վարչակարգն էապես ավելի լավն է նախկին վարչակարգից:<sup>59</sup> Ակնհայտ պարադոքսը բացատրվում էր, իհարկե, սուլթանի նկատմամբ տածած վախով և նրա ամբողջատիրական ու սուլթանական ներթափանցմամբ մասնավոր և հանրային կյանքի մեջ: Անցյալի սարսափելի հիշողությունների պարագայում որոշ ընդդիմադիր առաջնորդներ փոփանք էին փնտրում նրանում, որ եթե իրենք կարողանան ամրապնդել քաղաքացիական և քաղաքական հասարակությունները, ապա ավելի լավ արդյունքների կհասնեն 1996թ-ի նախագահական և խորհրդարանական ընտրություններում՝ համեմատած 1990թ-ի կամ 1992թ-ի ընտրությունների հետ:

57. Կոալիցիայի նկարագրության մասին տե՛ս Michael Shafir, "Ruling Party Formalizes Relations with Extremists", *Transition*, 1, no. 5 (1995), 42-46, մեջբերումը՝ էջ 42-ից:

58. Տե՛ս "Constitution Watch: Romania", in *East European Constitutional Review* 4, no. 2 (1995), 22:

59. Օրինակի համար՝ 1993թ. հարցվածների միայն 35%-ն էր նախկին կոմունիստական վարչակարգը դրական դիտարկում այն դեպքում, երբ 68%-ը դրական էր դիտարկում այդ ժամանակվա վարչակարգը: Այս 33%-անոց դրական տարբերությունը զգալիորեն ավելի մեծ էր, քան համեմատելի տարբերությունները Բուլղարիայում, Սլովակիայում, Հունգարիայում և Լեհաստանում և մի փոքր ավելի բարձր էր, քան Սլովենիայում: Միայն Չեխիայի Հանրապետությունում էր տարբերությունն ավելի մեծ: Տե՛ս Richard Rose and Christian Haerpfer, "Adapting to Transformation in Eastern Europe: New Democracies Barometer-II", *Studies in Public Policy*, 212 (1993), 47:

Ռումինիան մինչև հիմա ունեցել է երկու ընտրություն, ժողովրդավարության ինստիտուցիոնալ կողմերից շատերն առկա են, և մարդիկ նոր վարչակարգն ընկալում են անցյալի համեմատ որպես դրական տեղաշարժ: Ինչևէ, մենք ստիպված ենք ընդունել, որ ռումինական ժողովրդավարությունը տարբերվում է այս ուսումնասիրության մեջ քննված Արևելակենտրոնական Եվրոպայի բոլոր երկրների ժողովրդավարություններից, ինչպես նաև երեք Բալթյան հանրապետություններից նրանով, որ Ռումինիայում մինչև հիմա կոմունիստական կուսակցության ապարատում կարիերա չանցած (ոչ միայն որպես կուսակցության անդամ, այլև կուսակցության հետ կապեր ունեցող) ոչ մի առաջնորդ իշխանություն չի ստացել: Հասարակական խմբերի առումով երբեք խզում չի եղել: Նման շարունակականությունը նույնը չէ, ինչ նախկին կոմունիստների դեկավարությամբ փոփոխված կոմունիստական կուսակցությունների (կամ այլ անունով) վերադարձը իշխանության ազատ ընտրությունների միջոցով: Նման հասարակություններում (Լեհաստան, Հունգարիա և Լիտվա) ոչ կոմունիստները կարողացան ստեղծել քաղաքական կուսակցություններ, որոնք ունակ էին հաղթել ընտրություններում և վերահսկել հիմնական ապահարզանը: Մինչ օրս Ռումինիայում նման ապահարզան դեռ միայն մասնակի է եղել:

Բայց ինչո՞ւ դա պետք է այդպես լիներ: Մենք պնդում ենք, որ մինչև Չաուշեսկուի տապալումը եղած ամբողջատիրական վերահսկողության ժառանգությունը՝ համակցված սուլթանականության ժառանգականության հետ և, որպես հետևանք, այն ձևը, որով ընթացավ անցումը, այս ամենը միասնաբար պատասխանատու են վերոհիշյալ նշանակալի տարբերությունների համար:

## «Պետութենականության» և անցումային փուլի խնդիրները. ԽՍՀՄ և Ռուսաստան

ՊԵՏՏՈՒԹԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ամենացավոտ խնդիրները, որոնց մենք անդրադառնում ենք այս գրքում, ի հայտ են եկել նախկին Խորհրդային Միությունում և նախկին Հարավսլավիայում: Պետութենականության խնդիրները հրատապ, սակայն պակաս ցավոտ էին նաև նախկին Չեխոսլովակիայում և ուրույն կերպով՝ նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում: Էստոնիայում և Լատվիայում ամենաբարդ խնդիրները, որոնք պետք է լուծվեն մինչև կայուն ժողովրդավարություններ դառնալը, ոչ թե տնտեսական բնույթի են, այլ ներառում են քաղաքացիությունն ու պետութենականությունը: Նախկինում ժողովրդավարությանն անցման վերաբերյալ գրականության մեջ անտեսված լինելով՝ պետականության խնդիրները պետք է այժմ մշտապես գտնվեն քաղաքական գործիչների, ինչպես նաև տեսաբանների ուշադրության կենտրոնում:<sup>1</sup>

Որպես ոչ ժողովրդավարական վարչակարգերից անցման գործընթացով հետաքրքրված համեմատաբաններ՝ մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում այն հարցին, թե արդյոք ինչ-որ դասեր կարելի<sup>2</sup> է քաղել Խորհրդային Միության և Հարավսլավիայի տրոհման պատմությունից: Շատ հաճախ, երբ խոսվում է Հարավսլավիայում իրականացված ազգային գտումների սարսափների, Չեչնիայի անջատողական պայքարի արյունոտ հետևանքների կամ նախկին խորհրդային հանրապետությունների, ինչպես օրինակ՝ Ադրբեջանի, Մոլդովայի կամ Վրաստանի միջէթնիկ բախումների մասին, շատ հեշտ է այդ կատաղի բախումները բնութագրել՝ հղում կատարելով «նախաստեղծ ինքնությանն» ու դրա հետևանքներին: Իսկապես, աստիճանաբար տարածվեց այն կարծիքը, որ ի դեմս այսպիսի «իռացիոնալ հույզերի»՝ միջազգային դերակատարներից և ոչ մեկը՝ ո՛չ Եվրամիությունը, ո՛չ էլ պետական կառավարման որևէ արվեստ ոչինչ չեն կարող անել ազգայնամոլության նոր դարաշրջանում անխուսափելի բախումները կանխելու համար:

Ինչն է, գրքի սկզբում պետութենականության խնդիրների քննարկման ժամանակ մենք պնդել ենք, որ քաղաքական ինքնություններն ավելի շուտ կախված են այլ գործոններից ու փոփոխվող են, քան նախաձին են և կարծր: Նրանք ենթակա են քաղաքական ինստիտուտների կամ քաղաքական ընտրության կողմից ստեղծվելու կամ կազմալուծվելու:<sup>2</sup>

1. Մեր վերլուծության, թե ինչու են ժողովրդավարությանն անցման դասական գրականության մեջ համարյա ամբողջովին անտեսվել պետութենականության խնդիրները, և այլընտրանքային հայեցակարգային մոտեցումների մասին տե՛ս՝ Գլուխ 2-ը:

2. Հասարակագիտական տարբեր աշխատություններ տարբեր շեշտադրմամբ ցույց են տալիս, թե պատմությունը, ինստիտուտներն ու երևակայությունն ինչպես են կերտում և մշտապես փոփոխում ազգերը, ազգայնականությունը և քաղաքացիության հասկացությունը: Տե՛ս Ernest Gellner, "Nations and

Իսպանիայի դեպքում մենք փաստացի ապացուցում ենք, թե ինչպես է ընտրությունների հաջորդականության որոշումն օգնում ստեղծել ժողովրդավարական պետական իշխանություն և բազմաթիվ օժանդակ քաղաքական ինքնություններ: Նույնիսկ ամենահմուտ կառավարման դեպքում մենք գիտակցում ենք, որ Խորհրդային Միությունում և Հարավսլավիայում պետութենականության խնդիրը շատ ավելի դժվար կլիներ լուծել, քան Իսպանիայում:<sup>3</sup> Ինչևէ, մենք ցանկանում ենք լուսաբանել քաղաքական կառույցների, ինստիտուտների, խթանող գործոնների և որոշումների հետևանքները, որոնք մեր կարծիքով՝ պետք եղած չափով ուշադրության չեն արժանացել ժողովրդավարացման, ազգայնականության և պետութենականության մասին նոր բանավեճերում:

Մենք մշակել ենք Խորհրդային Միությունում պետութենականությանը և անցումային փուլին վերաբերող երեք սերտորեն շաղկապված փաստարկներ: Առաջին, մենք պնդում ենք, որ Խորհրդային Միությունում, որոշ փոփոխություններով՝ նաև Հարավսլավիայում և Չեխոսլովակիայում գոյություն ունեցող խորհրդային տիպի դաշնությանը բնորոշ ինստիտուտները և սկզբունքները խթանեցին և ստեղծեցին ռեսուրսների համախմբման հնարավորություններ թնիկ պատկանելության քաղաքականացման համար: Իհարկե, Գորբաչովից առաջ Խորհրդային Միությունում այս խթաններն ու հնարավորությունները մեծապես մեղմվում էին ուժային և տնտեսական ռեսուրսների վրա կենտրոնի կողմից դե ֆակտո վերահսկման և այն փաստի միջոցով, որ դաշնային սահմանադրությունը մեծապես մնում էր ձևական: Ինչևէ, մեր նպատակն է ուշադրություն հրավիրել այս ինստիտուտներից ծնունդ առնող պետականության *հնարավոր* մեծ խնդիրների վրա:

Երկրորդ, մենք պնդում ենք, որ վերոհիշյալ ինստիտուտներից գատ, գլխանոստի և պերեստրոյկայի անցումային ուղին, հետամբողջատիրական կենտրոնական իշխանության ինստիտուտների ազատականացումը, սակայն ոչ ժողովրդավարացումը և ավելի շուտ՝ հանրապետական, քան միութենական մակարդակով անցկացված առաջին ոչ միակուսակցական մրցակցային ընտրությունները լուրջ կազմաքանդող հետևանքներ ունեցան: Այս ուղին աստիճանաբար թուլացրեց կուսակցություն-պետության գաղափարախոսա-

*Nationalisms*" (Ithaca: Cornell University Press, 1983), Benedict Anderson, *Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism*" (London: Verso, 1991, rev. ed.) և Joseph Rothschild, *Ethnopolitics*" (New York: Columbia University Press, 1981): Խորհրդային Միության վրա հղումներով, մասնավորապես *տե՛ս* Ronald Grigor Suny, *The Revenge of the Past: Nationalism, Revolution, and the Collapse of the Soviet Union*" (Stanford: Stanford University Press, 1993), Alexander J. Motyl, ed., *Thinking Theoretically about Soviet Nationalities: History and Comparison in the Study of the USSR*" (New York: Columbia University Press, 1992):

3. Իսկապես, մենք կարծում ենք, որ բալթյան երկրների՝ նրանց նախկին, անկախ պետության կարգավիճակից սկիզբ առնող բարդությամբ դժգոհությամբ, նրանց՝ ԽՍՀՄ-ին համեմատաբար նոր և բռնի միավորմամբ, նրանց համեմատաբար ավելի մեծ հարստությամբ և կրոնական և լեզվական տարբերություններով պայմանավորված խնդիրն ակուծելի էր ԽՍՀՄ կազմում: Հավանաբար դա լավագույն ձևով կարող էր լուծվել Գորբաչովի կողմից, եթե նա հայտարարեր, որ Հիտլերի և Ստալինի միջև կնքված գաղտնի պակտը համարում է անօրինական և այդ պակտի հիսունամյակի օրը հարկավոր է անցկացնել հանրաքվե՝ բնակչությանը հարցնելով, թե արդյոք նրանք կցանկանայի՞ն կամավոր կերպով միանալ ԽՍՀՄ-ին: Եթե նրանք քվեարկեին Խորհրդային Միությանը չմիանալու օգտին (ինչը նրանք ամենայն հավանականությամբ կանեին), խաղաղ և արագ անջատում կիրականացվեր՝ բոլորի համար քաղաքացիության լիարժեք իրավունքներ ապահովելով: Կարծում ենք, որ Վրաստանին և Մոլդովային ԽՍՀՄ կազմում պահելու համար այդքան շատ բան անելու կարիք չէր լինի:



կան, ուժային և տնտեսական վերահսկողության հնարավորությունները, քիչ բան արեց կենտրոնում ժողովրդավարական լեզիտիմ պետական կառույցներ ստեղծելու համար և ուղղակիորեն նպաստեց քաղաքականության մեջ անհանդուրժողական էթնիկ ազգայնամոլ ուժերի ձևավորմանը:

Երրորդ. մենք պնդում ենք, որ ԽՍՀՄ-ի իրավահաջորդ պետությունը՝ Ռուսաստանը, բոլոր հետկոմունիստական պետական կարգերի առջև ծառայած նորմալ խնդիրներից բացի, պետութենականության և քաղաքացիության հիմնախնդիրների չափազանց յուրահատուկ և բարդ ժառանգություն է ստացել, որը մեծապես պետք է դժվարացներ անցումը դեպի ժողովրդավարություն և դրա կայացումն անկախ այն բանից, թե ինչ ընտրություն է կատարվել: Մակայն տնտեսական վերակառուցումը ժողովրդավարական պետության վերակառուցման նկատմամբ գերադասելը հետագայում ավելի թուլացրեց արդեն իսկ թույլ պետությունը, ձախողեց պետության տնտեսական նախնական բարեփոխումների ծրագրի իրականացումը, որի հետևողականությունն անհրաժեշտ էր գործուն տնտեսական հասարակարգ ստեղծելու համար և նպաստեց իշխանության երեք ճյուղերի ապալեզիտիմացմանը:

#### ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

ԽՍՀՄ-ի արտասովոր փլուզման պատճառներից մեկը կարող է լինել նաև այն, որ քաղաքական դերակատարներից շատերը չէին համարում, որ ԽՍՀՄ-ում հնարավոր է ունենալ պետութենականության հետ կապված լուրջ խնդիրներ: Օրինակ, Միխայիլ Գորբաչովը իր հայտնի «Պերեստրոյկա» գիրքը սկսել է այն ուժեղ փաստարկով, որ «երկիրը ճգնաժամի եզրին է»: Առկա էին «տնտեսական աճի դանդաղում», «գաղափարախոսական և բարոյական արժեքների քայքայում», և «խրախուսվում էր գովաբանությունն ու քծնանքը»: Այս ամենի պատճառով նա պնդում էր, որ «վերակառուցումը մեզ համար հրատապ անհրաժեշտություն է»: Բարեփոխումների հետաձգումը կնշանակեր, որ ԽՍՀՄ-ը «լցված կլիներ սոցիալական, տնտեսական և քաղաքական ճգնաժամերով»:<sup>4</sup>

Այս սպառնալից ֆոնի վրա Գորբաչովը նշում է, որ ազգային քաղաքականությունը գրեթե աննախադեպ հաջողության ոլորտ է:

ԽՍՀՄ-ն իրենից ներկայացնում է մարդկային քաղաքակրթության իսկապես եզակի օրինակ: Սրանք էին Լենինի կողմից առաջ քաշված ազգային քաղաքականության պտուղները: Հեղափոխությունը և սոցիալիզմը վերացրեցին ազգային ճնշումներն ու անհավասարությունը և բոլոր ազգերի ու ազգությունների համար տնտեսական, ինտելեկտուալ և մշակութային առաջընթաց ապահովեցին... Ամեն անաչառ մարդ պարտավոր է ընդունել այն փաստը, որ մեր Կուսակցությունը իրականացրել է հսկայական ծավալի աշխատանք... Եթե ազգային խնդիրը չլուծվեր սկզբունքորեն, ... մեր պետությունը չէր գոյատևի, և ոչ էլ հանրապետությունները

4. Mikhail Gorbachev, "Perestroika: New Thinking for Our Country and the World" (New York: Harper and Row, 1987), 3-7:

կկազմեին եղբայրության և համագործակցության, հարգանքի ու փոխօգնության վրա հիմնված միասնություն:

Խորհրդային Միության հանրապետություններում և ազգային շրջաններում կատարած իմ ուղևորությունների ընթացքում մարդկանց հետ հանդիպումների ժամանակ ես ինքս կրկին ու կրկին տեսնում եմ, որ նրանք գնահատում և հպարտանում են այն իրողությամբ, որ նրանց ազգը մի մեծ ինտերնացիոնալ ընտանիքի անդամ է, որ նրանք մի մեծ և հզոր երկրի մաս են, որն այսպիսի մեծ դեր է խաղում մարդկության առաջընթացի գործում: Հենց սա է խորհրդային հայրենասիրությունը:<sup>5</sup>

Միայն Գորբաչովը չէր, որ ուներ այսպիսի թյուր կարծիք: Մեզ հետ ունեցած մասնավոր գրույցների ժամանակ Գորբաչովի գլխավոր խորհրդատու և բարեփոխումների դաշնակից Ալեքսանդր Յակովլևը և Քաղխորհրդում կոշտ դիրքորոշմամբ գլխավոր ընդդիմադիր Եգոր Լիզաչովն ընդունում էին, որ ազգայնականության հնարավոր խնդիրների վրա առանձնապես մեծ ուշադրություն չեն դարձրել, երբ սկսում էին պերեստրոյկան և գլանոստը:<sup>6</sup> Քաղաքական այս անտեղյակությունը չէր սահմանափակվում միայն կուսակցության առաջնորդներով: 1991թ-ի ձախողված հեղաշրջումից հետո, գրելով ազգերի մասին, Խորհրդային Միության առաջատար գիտնականներից մեկը դիտարկում է. «Վերակառուցման տարիները, հատկապես՝ վերջին երկու-երեք տարիները, նշանավորվեցին ազգային շարժումների, ազգային հուզումների և առճակատումների աննախադեպ աճով... Այս իրադարձությունները միանգամայն անսպասելի էին հանրության, ազգերի հարցերով փորձագետների, մամուլի և քաղաքական ղեկավարների համար: Ինչո՞ւ դա տեղի ունեցավ»:<sup>7</sup> Մենք կփորձենք բացատրել:

Հիմնական պատճառներից մեկը (ինչպես Հարավսլավիայում և Չեխոսլովակիայում) կապված էր խորհրդային առաջնորդների կողմից խորհրդային տիպի դաշնության վրա կառուցված առճակատումների հնարավորության թերագնահատման հետ: Դաշնության այս տիպի իր արմատներն ունի պատմության, գաղափարախոսության և կուսակցություն-պետություն իշխանության մեջ: Խորհրդային Միությունը՝ Եվրոպայի վերջին մեծ և բազմազգ կայսրությունը, կառուցված էր պոտենցիալ կերպով իրենց մեջ հակա-

5. Նույն տեղում, էջ. 104-107:

6. Ալֆրեդ Ստեփանի և Ալեքսանդր Յակովլևի՝ 1989թ. հոկտեմբերի 24-ին Սոսկվայում և Խուան Լինցի և Եգոր Լիզաչովի միջև 1991թ. նոյեմբերի 11-ին կայացած քննարկումներ: Ֆյոդոր Բուռլացկին, որը ակնավոր բարեփոխիչ և Գորբաչովի կողմնակից ինտելեկտուալ էր, Հարվարդի համալսարանում 1990թ. կարդացած դասախոսության ժամանակ փաստել է, որ ԽՍՀՄ-ի առջև ծառայած ամենակարևոր խնդիրը տնտեսական է և ոչ թե՛ Էթնիկ: Բսկապես, Բուռլացկին պնդում էր, որ եթե տնտեսական բարեփոխումներն արագանան, ապա ազգային խնդիրները կանհետանան, և նույնիսկ Բալթերը կհամաձայնեին մնալ Միության կազմում: Այսպիսի մտածելակերպը, որը հիմնական շեշտը դնում էր տնտեսական միջոցառումների վրա, հատուկ էր Գորբաչովի շրջապատին:

7. Չափազանց շատ տեղեկություններ տրամադրող Գեյլ Լապիդուսի (Gail W. Lapidus), Վիկտոր Չասլավսկու (Victor Zaslavsky) և Ֆիլիպ Գոլդմանի (Philip Goldman) կողմից խմբագրված *"From Union to Commonwealth: Nationalism and Separatism in the Soviet Republics"* (Cambridge: Cambridge University Press, 1992) հատորում, Galina Staravoiotova, *"Nationality Policies in the Period of Perestroika: Some Comments from a Political Actor"*, էջ 114: Սովետոլոգիայի մեջ ազգերի մասին ուսմունքի մարզինալ դերի մասին սուր քննարկումներ, *տե՛ս Orest Subtelny, "American Sovietology's Greatest Blunder: The Marginalization of the Nationality Issue"*, Nationalities Papers 22, no. 1 (1994), էջ 141-56:

ասկանություն պարունակող սկզբունքների վրա:<sup>8</sup> Քանի որ ազգերից ու ազգություններից շատերը նախկինում անկախություն էին ունեցել, վարչակարգը փորձ կատարեց համաձայնության ու ինտեգրման հասնել՝ ստեղծելով մի դաշնային համակարգ, որն ուներ երկվության արտասովոր բարձր աստիճան: Մի կողմից՝ հանրապետությունները վերածվեցին «նախապետությունների», մշակութային առանձնահատկություններ ունեցող կազմակերպություններն օրինականացվեցին և «անվանադիր հանրապետությունների» էլիտայի համար ստեղծվեցին իրենց հանրապետությունների (և հատկապես իրենց ազգի) շահերն առաջ տանելու հնարավորություններ:<sup>9</sup> Մյուս կողմից՝ հանրապետություններն անդամներ էին մի վարչակարգի, որը որդեգրել էր ունիվերսալիստական գաղափարախոսություն և ղեկավարվում էր կենտրոնացված կուսակցություն-պետության կողմից, որը ոչ միայն մենաշնորհել էր կարևոր որոշումներ ընդունելու իրավունքը, այլև ոչ ռուս ազգերին (բացի ուկրաինացիներից) հեռու էր պահում կուսակցության կենտրոնական քարտուղարության, ՊԱԿ-ի և բանակի գրեթե բոլոր կարևոր և վերահսկող պաշտոններից:<sup>10</sup> Հակասություններն ու հակամարտությունները, չնայած որոշակի աճին, զսպվում

8. Կայսրությունների համեմատության հայտնի տեսաբան Մ. Ս. Այզենշտադը (S.N. Eisenstadt) լեգիտիմության երկու սկզբունքների միավորման ջանքերը նկարագրում է հետևյալ կերպ. «Գաղափարախոսական մակարդակում նոր վարչակարգի օրինականացման հիմնական ձևը՝ նրա ուժեղ ունիվերսալիստական և համատեղ ուղղվածությունը, սկզբունքորեն անցավ ազգային սահմանները... Միասնական սոցիալիստական հայրենիքի ընդլայնված շրջանակներում տարբեր համայնքների մշակութային ժառանգության դրսևորումը լիովին օրինականացվեց... Դրանում ներառվեց նաև այս հանրապետությունների՝ որպես ինքնավարությունների ամբողջական լեգիտիմացումը՝ նրանց կառավարման բոլոր օրգաններ տրամադրելով... Այսպիսով, ամբողջովին օրինականացվեցին նրանց առանձնահատկությունները, նույնիսկ եթե իրականում այդ միտումները սովորվում էին ռուսական ցենտրիստական հեգեմոնիայի կողմից»: Նա նշում է, որ «այս քաղաքականությանը հատուկ հակասությունները կարող էին վերացվել միայն ուժեղ ամբողջատիրական վարչակարգի կողմից»: Տե՛ս նրա *"Center-Periphery Relations in the Soviet Empire: Some Interpretive Observations"* հոդվածը Motyl, *"Thinking Theoretically about Soviet Nationalities"*, գրքում, էջ 220, 205: ԽՍՀՄ-ի որպես «կայսրություն» հասկացության քննարկումներ, տե՛ս նաև՝ Alexander J. Motyl, *"From Imperial Decay to Imperial Collapse: The Fall of the Soviet Empire in Comparative Perspective"*, in Richard Rudolph and David Good, eds., *"Nationalism and Empire: The Hapsburg Monarchy and the Soviet Union"* (New York: St. Martin's Press, 1991), 15-43: «Արտաքին կայսրության» գաղափարի համար տե՛ս Alex Pravda, ed., *"The End of the Outer Empire: Soviet East-European Relations in Transition"*, 2985-2990 (London: Sage Publications, 1992):

9. Այս երևույթի ուժեղ, պատմականորեն հիմնավորված համեմատական վերլուծության համար տե՛ս, Ռոնալդ Սունի (Ronald Suny), որը պնդում է, որ չնայած ցարական Ռուսաստանը անվանում էին «ազգերի բանտ», շատ խմբերի համար «Խորհրդային Միությունը դարձել էր նոր ազգերի ինկուբատոր», և որ «խորհրդային ազգությունների պատմությունը կարելի է բնութագրել որպես ազգեր ստեղծող պետության պատմություն, սակայն ոչ այնպես, ինչպես ցանկալի կլիներ»: Տե՛ս Suny, *"Revenge of the Past"*, 87, 160:

10. Օրինակ, Սերին Բիալերը (Seweryn Bialer) 1980թ. գրում է, որ «կուսակցության կենտրոնական քարտուղարությունում ոչ մի պաշտոն զբաղեցված չէ ոչ ռուսի կողմից: Կուսակցության կենտրոնական ապարատում ավելի քան 150 բարձրագույն պաշտոնյաներից միայն երեքն ունեն ոչ սլավոնական ծագում»: Եվ որ «գրեթե բոլոր հանրապետություններում, անկախ նրանց ինքնակառավարման աստիճանից, երեք բարձրագույն գործադիր պաշտոններ համարյա միշտ զբաղեցված են ռուսների կողմից... մեկը ՊԱԿ-ի նախագահն է... երկրորդը՝ հանրապետության տարածքում տեղակայված զինված ուժերի հրամանատարը: Երրորդ պաշտոնը հանրապետության կուսակցական կազմակերպության երկրորդ քարտուղարի պաշտոնն է»: Տե՛ս նրա *"Stalin's Successors: Leadership, Stability and Change in the Soviet Union"* (New York: Cambridge University Press, 1980), 219, 214:

էին Բրեժնևի ժամանակաշրջանում: Այս հակասական կառույցները բավականաչափ արդյունավետ էին ազգայնականության վերահսկման համար, քանի դեռ կենտրոնացված կուսակցություն-պետությունը գտնվում էր դաշնության ամբողջական վերահսկողության տակ: Ինչևէ, ինչպես կտեսնենք պերեստրոյկայի ժամանակաշրջանի վերլուծության ժամանակ, միևնույն կառույցները տարբեր քաղաքականության և տարբեր պայմաններում կարող են ունենալ տարբեր զարգացումներ, հատկապես եթե այդ կառույցները պարունակում են ազգերի քաղաքականացման այնքան խթանիչներ, ինչքան գոյություն ունեին խորհրդային տիպի դաշնությունում (Վավերաշար 19.1):<sup>11</sup>

Այս բաժինը մենք կեզրափակենք մի գերզանց պատմական ուսումնասիրությունից երկար մեջբերումով, որը ներկայացնում է ազգերի խորհրդային քաղաքականության հասկանալի կողմերը:

ԽՍՀՄ-ում ազգաստեղծումը իրականացվում էր եզակի համատեքստում. մի պետություն, որը ստեղծվել էր ազգայնամոլությունը և ազգերի միջև եղած տարբերությունները հաղթահարելու համար, իրականում ստեղծել էր մի շարք ինստիտուտներ և նախաձեռնել էր այնպիսի գործընթացներ, որոնք արագացրեցին գիտակից, աշխարհիկ, քաղաքականապես համախմբվող ազգությունների զարգացումը: Չնայած Կոմունիստական կուսակցության հռչակած նպատակներին՝ ԽՍՀՄ-ում տեղաբնիկացման, արդյունաբերականացման, ուրբանիզացման, պետականաշինության գործընթացները սոցիալական և մշակութային հիմք էին ստեղծում ազգային վերնախավերի համար, որոնք պետք է սկզբում թույլ դիմադրություն կազմակերպեին Ռուսաստանի կողմից ղեկավարվելուն և ապա՝ հակավերնախավի համար, որոնք պետք է խթանեին լայնածավալ ազգայնամոլական շարժումները: Մակայն կայսրությանն իրական մարտահրավեր նետվեց այն բանից հետո, երբ կուսակցության բարձրագույն ղեկավարությունը որոշեց արմատական բարեփոխումներ կատարել քաղաքական համակարգում, և միայն երբ կոմունիստներն իրենք սկսեցին խորհրդային համակարգի ապալեզիտիմացման գործընթացը և թույլ տվեցին քաղաքականության մեջ ազգայնամոլական այլընտրանքը բարձրաձայնել:<sup>12</sup>

Հաջորդ բաժնում մենք կքննարկենք, թե ինչպես, ինչու և ինչպիսի հետևանքներով Գորբաչովը սկսեց պետության ապալեզիտիմացման այս գործընթացը:

11. Բիպլերը, իր վերը նշված գրքում (1980թ.) հատկապես կանխատեսել էր այն հնարավոր վտանգները, որ այս կառույցները ներկայացնում են Խորհրդային Միությանը: «Խորհրդային դաշնության դրույթն ու իրականությունը պարունակում են հնարավոր վտանգավոր երկվություն ... Գործնականում այն դաշնակից ազգերի համար թողնում է ինքնավարության ամենափոքր աստիճան միայն, բայց միևնույն ժամանակ նրա սիմվոլիկ ինստիտուտները և վարչական կառուցվածքը հիմքեր են ստեղծում պայքարելու ազգային ինքնավարության համար», էջ 210: «Այդ ինստիտուտները, որոնք ղեկավարվում են տեղական վերնախավի կողմից... այդ ընտրանուն պատրաստի մեխանիզմներ են տրամադրում իրենց ազգային ինքնավարության ձգտումներն իրականացնելու համար», էջ 211:

12. Suny, "Revenge of the Past", 126:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՔԱՆԴՈՒՄԸ. ԱԶՍԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՌԱՆՑ  
ԿԵՆՏՐՈՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ

Ինչպես ցույց են տվել բազմաթիվ ուսումնասիրություններ, 1970-ական թվականների վերջերին Բրեժնևի ժամանակ, Խորհրդային Միությունը մի շարք բարդ և փոխկապակցված խնդիրների սկսեց բախվել:<sup>13</sup> Սակայն, չնայած Գորբաչովի կողմից մշակված հիմնական գաղափարներից ու դրույթներից շատերը նախքան նրա իշխանության գալն արդեն հնչեցվել էին նրա կուսակցությանը մոտ կանգնած ինտելեկտուալների շրջանում, Գորբաչովը որևէ խմբի կողմից հարկադրված չէր սկսել իր բարեփոխումները: Գորբաչովն ու նրա գլխավոր խորհրդատուները ընտրություն կատարեցին՝ փոխելու խորհրդային համակարգը, և այս առումով Խորհրդային Միությունը լիովին համապատասխանում է մեր՝ վարչակարգի կողմից նախաձեռնված փոփոխություն կատեգորիային:<sup>14</sup>

Սակայն ինչո՞ւ վարչակարգի կողմից նախաձեռնված այս փոփոխությունը հանգեցրեց ազգայնամոլական պոռթկումների և խորհրդային պետության կազմալուծմանը: Ցուցադրություն 19.1-ը հստակ ցույց է տալիս, որ պատասխանը պարզապես նախածին ազգայնամոլությունն ու իռացիոնալ հույզերը չեն: Հասարակագիտական գրականության ամենավերջին երեք փաստարկները կարելի է բերել 19.1 Ցուցադրության համար. ռացիոնալ ընտրություն, ռեսուրսների համախմբում և նեոիմստիտուցիոնալիզմ:<sup>15</sup> Գոյություն

13. Պերեստրոյկայի ծագումն ու ընթացքը վերլուծող կարևոր աշխատություններից է՝ Archie Brown, *"The Gorbachev Factor"* (Oxford: Oxford University Press, 1996): *Տե՛ս նաև* յուրահատուկ հոդվածների ժողովածու՝ Archie Brown, ed., *"New Thinking in Soviet Politics"* (London: Macmillan, 1992): Արժեքավոր դիտարկումներ են պարունակում՝ Edward Wilkes Walker, *"Structural Pressures, Political Choice, and Institutional Change: Bureaucratic Totalitarianism and the Origins of Perestroika"* (PhD diss., Department of Political Science, Columbia University, 1992) (թեկն. ատենախոսություն, քաղաքագիտության ֆակուլտետ, Կոլումբիայի համալսարան, 1992թ.) աշխատության մեջ:

14. Իր սկզբնական գրվածքներում Գորբաչովը ջանում էր շեշտել, որ պերեստրոյկան վարչակարգի ընտրություն էր: Իր «Պերեստրոյկա» աշխատության առաջին գլուխը կոչվում է «Ի՞նչը ստիպեց մեզ նախաձեռնել պերեստրոյկան», և նա շարունակում էր ասել, որ «պերեստրոյկան սկսվեց Կոմունիստական կուսակցության նախաձեռնությամբ, և կուսակցությունն է գլխավորում այն ... Պերեստրոյկան ոչ թե տարերային, այլ կառավարվող գործընթաց է»: Գորբաչով, «Պերեստրոյկա», էջ 41-42: Այս գրքում մենք քննության ենք առել ևս երկու կարևոր, վարչակարգի կողմից նախաձեռնված փոփոխությունների դեպքեր՝ Իսպանիայում և Բրազիլիայում: Սակայն երկու դեպքում էլ «վարչակարգի զիջումների և հասարակության հաղթանակի» դիալեկտիկական բարդ գործընթացը կենտրոնը ազատականից վերածեց ժողովրդավարականի: Խորհրդային Միության դեպքում, ելնելով կուսակցության ու պետության միահյուսվածությունից, զգուշավորության կարիք կա: Դժվար է ասել, թե որքանով է վերակառուցումը նախաձեռնված կուսակցության կամ պետության կողմից: Այս նախագգուշացումը մտքում պահելով՝ հստակորեն կարելի է ասել, որ վերակառուցումը նախաձեռնվել էր վարչակարգի ներսից և ոչ թե՛ դրսից: Բայց փոփոխություններին ցուցաբերված դիմադրություն կարելի էր գտնել կուսակցական պաշտոնյաների շրջանում և պետական ապարատում: Բացի այդ, որոշ քաղաքներից դուրս, հասարակության պասիվությունից ելնելով, վարչակարգի նախաձեռնության շուրջը հանրության համախմբումը, հակառակ նշված այլ դեպքերի, նախապես սահմանափակված էր:

15. Խորհրդային Միությունում էթնոքաղաքականության ռացիոնալ ընտրության մոտեցման առաջին և համոզիչ օգտագործումը, *տե՛ս Motyl, "Sovietology, Rationality, Nationality"*, esp. 30-45, 146-60: Գերազանց նեոիմստիտուցիոնալ վերլուծության համար *տե՛ս* Rogers Brubaker, *"Nationhood and the National Question in the Soviet Union and Post-Soviet Eurasia: An Institutional Account"*, *Theory and Society* 23 (1994), 47-78:

**Ցուցադրություն 19.1. Պերեստրոյկայի ժամանակաշրջանի Խորհրդային Դաշնությունը. հակասական կառույցների, սկզբունքների և դրոշիչների համադասակարգությունը**

**I. Դաշնությանը միանալու ձևը**

Տեսականորեն ցանկացած դաշնությունում կարող են նրան միանալու երեք հիմնական հակասական ձևեր լինել՝ հիմնական միավորների ավանդական ճանաչում, միանալու կամավոր միջնորդություն և բռնակցում: Ավանդական ճանաչումն ու կամավոր միջնորդությունն իրենց մեջ պարունակում են անդամակցության առնչությամբ հակամարտության ամենափոքր հնարավորություն: ԽՍՀՄ-ում ոչ ռուս ազգերն ու հանրապետությունները դաշնության անդամակցել են տարբեր աստիճանի բռնության միջոցով: Էստոնիան (1918-1940), Լատվիան (1918-1940) և Լիտվան (1918-1940) ունեցել են անկախ պետականության նշանակալի ժամանակաշրջան և բռնակցվել են Սոլտովո-Ռիբենտրոպ պակտի արդյունքում: Բեսարաբիան Ռուսաստանից անջատվեց և միացավ Ռումինիային, բայց ԽՍՀՄ-ի կողմից բռնակցվեց որպես Սոլդովայի անբաժան մաս: Վրաստանը, Ղաչաստանը, Ադրբեջանը, Ուկրաինան, Խիվան և Բուխարան Առաջին համաշխարհային պատերազմից հետո ունեցել էին մեկից չորս տարվա անկախություն: Բելառուսը, Ղրիմը, Բաշկիրիան, Վոլգայի թաթարական շրջանը և Դազախադրզական տափաստանը մեկ տարուց պակաս որոշ աստիճանի անկախություն են ունեցել: Բուն հանրապետության ներսում եղած մեծաթիվ այլ ազգությունների համար Ռուսաստանը սահմանեց ինքնավարություն և ինքնակառավարման իրավունք: Յարական կայսրության մաս հանդիսացած ազգություններից մի քանիսը դաշնության ավանդական անդամ չէին, այլ բռնակցվեցին 19-րդ դարում՝ քաղաքական անկախության որոշ ժամանակահատվածից հետո:<sup>3</sup>

**II. Դաշնային միավորների քաղաքական ինքնության, վարչական կազմավորման և ընտրական ներկայացուցչության սկզբունքները**

Դաշնություններում կարող են լինել ինքնության ու ներկայացուցչության երկու փոխհակասող սկզբունքներ՝ պարզ տարածքային սկզբունք կամ թեմիկ ծագման, լեզվի կամ կրոնի վրա հիմնված սկզբունք: Խորհրդային Միությունն այս երկու սկզբունքները միավորեց մեկ՝ տարածքային երևույթայնության սկզբունքի մեջ: Տասնհինգ հանրապետություններից յուրաքանչյուրը հստակորեն հենվում էր տարբեր թեմիկ ազգությունների վրա և կոչվում էր նրանց անունով: Եթե հանրապետությունում կար այլ թեմիկ խմբավորում, ապա նրանց համար ստեղծվում էր ինքնավար վարչական միավոր: Բացի միութենական տասնհինգ հանրապետություններից, ստեղծվել էին երեսուներեք վարչական տարածքներ՝ որպես թեմիկ հայրենիք, որոնցից քսանն ինքնավար հանրապետություններ էին, ութը՝ ինքնավար մարզեր, և տասը՝ ինքնավար օկրուգներ: Այս վարչական միավորները տեսականորեն պետք է ծառայեին որպես ընտրական ներկայացուցչության հիմք: Պերեստրոյկային նախորդող ժամանակաշրջանում, երբ ընտրությունները չէին ընթանում լուրջ մրցակցության պայմաններում, և կենտրոնը վերահսկում էր այդ միավորի քաղաքականությունը, այս կառույցները ոչ մի նշանակություն չունեին: Սակայն երբ որոշ աստիճանի ընտրական մրցակցություն ներմուծվեց, ավանդական և պայմանականորեն ձևավորված ազգությունների համար ստեղծվեցին համախմբման մեծ հնարավորություններ:<sup>4</sup>

**III. Անհատ քաղաքացու ինքնության սկզբունքը**

Դաշնությունների մեծ մասում անհատի նախնական իրավական ինքնությունը պետության քաղաքացի լինելն է: Խորհրդային Միությունում Կոմունիստական կուսակցությունը ձգտում էր (և ակնկալում) առավելագույնս միաձուլել ազգային թեմիկ ինքնությունները և դրանք դարձնել խորհրդային ժողովրդի անդամ լինելու ավելի բարձր ինքնություն: Սակայն բոլոր ներքին անձնագրերը պարտադրում էին նշել մարդու այս կամ այն թեմիկ պատկանելությունը: Քանի որ ինքնության սկզբունքն ավելի շուտ արյունն էր, քան այն, թե որտեղ է մարդն ապրում և աշխատում, մարդը նոր ազգային պատկանելություն ձեռք չէր բերում, նույնիսկ եթե նրա ընտանիքը սերունդներով ապրել էր այլ հանրապետությունում: Պետության կողմից պարտադրված այս թեմիկ ինքնություններն իրականում խոչընդոտում էին բազմազան լրացուցիչ քաղաքական ինքնությունների հայտնվելուն:<sup>5</sup>

**IV. Անջատման սկզբունք**

Դաշնությունների մեծ մասի սահմանադրությունները լռում են անջատման ընթացակարգի մասին, սակայն պարունակում են մանրամասն և պարտադիր մեխանիզմներ և դատարաններ, որոնք կարգավորում են դաշնային հարաբերությունները: Խորհրդային սահմանադրություններն անսովոր էին նրանով, որ և՛ 1936թ. ստալինյան, և՛ 1977թ. բրեժնևյան սահմանադրությունները սահմանում էին հանրապետությունների անջատման իրավունքը: 1977թ-ի սահմանադրության 72-րդ հոդվածում հստակ նշված է, որ «ցանկացած միութենական հանրապետություն ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու իրավունք ունի»: Սակայն սահմանադրությունում ընթացիկ չէր խոսվում, թե ինչպես պետք է իրականացվի անջատման իրավունքը: Այսպիսով, իրականում գոյություն ուներ հակամարտության մեծ հնարավորություն, եթե առաջխաղացում լիներ դեպի օրենքի գերակայություն, եթե ընտրությունները դառնային մրցակցային, և եթե որևէ հանրապետություն ցանկանար իրականացնել սահմանադրությամբ իրեն տրված անջատման իրավունքը:

**Ցուցադրություն 19.1. (շարունակություն)**

**V. Միջազգային ներկայացուցչության և արտաքին քաղաքականության ինքնավարության սկզբունքներ**

Դաշնությունների մեծ մասը կենտրոնին են վերապահում միջազգային ատյաններում իրենց ներկայացնելու և պայմանագրեր կնքելու իրավունքը: 1944-ի դրությամբ խորհրդային սահմանադրությունը հանրապետություններին այլ երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների մեջ մտնելու, բանակցելու և պայմանագրեր ստորագրելու, դիվանագետներ փոխանակելու և միջազգային կազմակերպությունների անդամակցելու իրավունք վերապահեց: 1944թ, կատարված լրացումը մեծապես պայմանավորված էր նրանով, որ կենտրոնը ցանկանում էր, որ Ուկրաինան և Բելառուսն ընդունվեն Միացյալ ազգերի կազմակերպություն՝ որպես ծայրի իրավունք ունեցող անդամներ: Այս լրացումն ընդհանուր առմամբ ձևական էր, սակայն այն հնարավորություն էր ընձեռում դաշնային հակամարտությունների և հանրապետական ռեսուրսների համախմբման համար, եթե քաղաքականությունը դառնար մրցակցային, և կենտրոնը թուլանար:<sup>4</sup>

**VI. Նանրապետական քաղաքական վերնախավի աշխատանքային առաջխաղացման դրդիչների կառուցվածքը**

Խորհրդային Միությունում դե յուրե և դե ֆակտո, կենտրոնը յուրաքանչյուր հանրապետությունում հիմնական էթնիկ ղեկավար խմբի համար ստեղծում էր հատուկ խթանումների և խրախուսանքի մի բարդ համակարգ: Գրեթե բոլոր հանրապետություններում անվանադիր ազգությունը չափից ավելի ներկայացված էր համալսարաններում, կուսակցական-պետական պաշտոններում և մշակութային կազմակերպություններում: Քաղաքական էթնիկ ընտրանին, ի պատասխան արտոնյալ դիրքի և հանրապետությունների առաջին քարտուղարների չափազանց երկար պաշտոնավարման, կանխում էր կենտրոնին ընդդիմադիր ընտրանու ի հայտ գալը, քանի դեռ կենտրոնն ի վիճակի էր տրամադրել ուժային և տնտեսական ռեսուրսներ: Այստեղ հակամարտության հնարավորությունը կայանում էր նրանում, որ էթնիկ քաղաքական գործիչները, որոնք ունեին իրենց կողմնակիցները և վերահսկում էին հանրապետական կազմակերպությունները, ունեին որպես քաղաքական գործիչ հանդես գալու հնարավորություն և շահագրգռվածություն համախմբելով իրենց լայն էթնիկ քաղաքական ռեսուրսները, եթե հին իշխանության՝ կենտրոնացված կուսակցություն-պետության հիմքերն այլևս չէին կարող երաշխավորել նրանց պաշտոնավարումը:<sup>5</sup>

<sup>4</sup> Տես, See Alexander J. Motyl, *Sovietology, Rationality, Nationality: Coming to Grips with Nationalism in the USSR* (New York: Columbia University Press, 1990), հատկապես՝ էջ. 30-45 և 146-60; Richard Pipes, *The Formation of the Soviet Union: Communism and Nationalism, 1917-23* (Cambridge: Harvard University Press, 1954); և Suny, *Revenge of the Past*, հատկապես՝ էջ 20-83:

<sup>5</sup> Տե՛ս Ֆիլիպ Գ. Ռոդերի / Philip G. Roeder/ գեղազանց հոդվածը, որտեղ նա զարգացնում է էթնիկ պատկանելության նկատմամբ ռեսուրսների համախմբման մոտեցումը նախաժին զգացումների մոտեցմանը հակադրելու գաղափարը՝ "Soviet Federalism and Ethnic Mobilization," *World Politics* 43 (Jan. 1991), էջ 196-232:

<sup>6</sup> Տես, Leokadia Drozhzheva, "Perestroika and the Ethnic Consciousness of Russians," Lapidus, Zaslavsky, and Goldman, eds., *From Union to Commonwealth*, զբոսում, էջ 98-114, հատկապես, 98-99 և Suny, *Revenge of the Past*՝ «Եթնիկության տեղայնացումը» քննարկելու համար, հատկապես էջ 110-12: Դաշնային միավորների քաղաքական ինքնությունների և անհատ քաղաքացիների քաղաքական ինքնության վերոհիշյալ սկզբունքների համատեղումը հնարավոր հակասություն և հակամարտության ժառանգություն էր պարունակում: Դա նշանակում էր, որ մեծ քանակությամբ «ազգություններ»՝ ոչ միայն ռուսներ, ապրում էին իրենց «անվանադիր ազգությունից» տարբերվող այլ հանրապետություններում կամ ինքնավար էթնիկ տարածքներում, ասես սփյուռքում: Դրա հետևանքներից մեկն այն էր, որ 15 խորհրդային հանրապետությունների անվախացումից հետո դրանց բնակիչներից՝ քաղաքացիներից շատերը ճանաչվեցին ազգեր, որոնք նոր պետություն «անվանադիր ազգությանը» չէին պատկանում: Բացի այդ, տվյալ ազգությունը, բացառությամբ խառն ամուսնության դեպքերի, ոչ թե ինքնության ընտրության կամ երկարատև բնակության, այլ ծագման արդյունք էր: Այդ իսկ պատճառով նոր պետությունների փոքրամասնությունների խնդիրներից շատերը խորհրդային ֆեդերալիզմի ժառանգություն են, ինչը նպաստում էր ազգայնական ինքնությունների և զգացումների ի հայտ գալուն:

<sup>7</sup> Դաշնությունների համեմատության մասնագետ Ստիվեն Կուկսը /Stephen Kux/ այս դրույթն անվանում է «եզակի»: Տե՛ս նրա հոդվածը, "Soviet Federalism," *Problems of Communism* 39 (March-April 1990), 12:

<sup>8</sup> Տես՝ Roeder, "Soviet Federalism and Ethnic Mobilization," 196-232; Bialer, *Stalin's Successors*, 210-11 և Suny, *Revenge of the Past*, 117-24:

ունեցող ինստիտուցիոնալ կառույցները նույնիսկ պերեստրոյկայից առաջ հանրապետական վերնախավին ռացիոնալ դրդիչներ էին տրամադրում՝ էթնիկ քաղաքականություն խաղալու և էթնիկ բնույթի ծրագրեր առաջ քաշելով՝ շահագրգիռ խմբեր ստեղծելու համար: Այն փաստը, որ տարածաշրջանային էթնիկ ընտրանին հատուկ վերահսկողություն ուներ մշակութային կազմակերպությունների, համալսարանների և պետական պաշտոնյաների վրա, նրանց համար հասու էին դարձնում այն *ռեսուրսները, որոնք նրանք կարող էին հավաքել*, էթե քաղաքականությունը զարգանար այնպես, որ այդպես վարվելը

բխեր իրենց շահերից և գտնվեր իրենց հնարավորության սահմաններում:<sup>16</sup> Իսկապես, կուսակցություն-պետության կողմից ստեղծված *ինստիտուտները* փաստորեն ստեղծում էին այնպիսի ազգեր, որոնք նախկինում գոյություն չէին ունեցել:<sup>17</sup> Նեոինստիտուցիոնալ հեռանկարի մյուս կողմը, իհարկե, այն էր, որ բացի որոշ արդյունքներ ձևավորելուց, այդ ինստիտուտները սահմանափակում էին ընտրություն կատարելու հնարավորությունները: Գոյություն ունեցող կառույցները սահմանափակեցին այն արդյունավետ ընտրության տարբերակները, որ Գորբաչովը կարող էր կատարել: Նա ցանկանում էր ճնշում գործադրել կուսակցական-պետական այն անդամների վրա, ովքեր խոչընդոտում էին պերեստրոյկայի ծրագրին: Գլաստնոստի ազատականացնող քաղաքականությունը, մամուլին ավելի շատ ազատություն տալը սկզբում օգնեցին համախմբել պերեստրոյկայի աջակիցներին (հատկապես՝ ինտելեկտուալների շրջանում) և օգնեցին հասարակական հնչեղություն տալ այն գործընթացներին ու խմբերին, ովքեր դեմ էին պերեստրոյկային:<sup>18</sup> Սակայն հետագայում Գորբաչովը Յակովլևի աջակցությամբ որոշեց ընտրություններն օգտագործել որպես իր վարչակարգի փոխակերպման ռազմավարություն:

Մենք չենք կարծում, թե խորհրդային պետության փլուզման վերլուծության ժամանակ ընտրությունների դերին արժանի ուշադրություն է դարձվել: Գոյություն ունեցող կառուցվածքը, որը բերվել է Ցուցադրություն 19.1-ում, ներկայացնում է էթնիկ պատկանելության համախմբման դրդիչների և հնարավորությունների արտասովոր լայն շարք: Այնուամենայնիվ, քանի դեռ սահմանադրությունը կրում էր ձևական բնույթ, և կուսակցություն-պետությունը ուներ հանրապետություններում էթնիկ ընտրանին վերահսկողության տակ պահելու բավականաչափ ուժային, գաղափարախոսական և տնտեսական ռեսուրսներ, էթնիկ պատկանելությունը, երբեք անհետացած չլինելով, չհամախմբվեց այն աստիճան, որ սպառնալիք հանդիսանար ԽՍՀՄ միասնականությանը:

Սակայն էլնելով Ցուցադրություն 19.1-ում բերված կառուցվածքից՝ Գորբաչովի կողմից ընտրված վարչակարգի փոխակերպման ռազմավարությունը Խորհրդային Միության տարածքային հիմք ունեցող անվանադիր ազգերին ուղղակիորեն համախմբեց պետության դեմ: Սա տեղի ունեցավ երեք փոխազդող երևույթների շնորհիվ՝ վարչակարգի տիպը, ազատականության նախապատվություն տալը ժողովրդավարացման հանդեպ և ընտրությունների հաջորդականությունը:

Ինչպիսի՞ վարչակարգ ժառանգեց Գորբաչովը: Եկեք մեծ մեջբերումներ անենք Գորբաչովի մասին Արչի Բրաունի փայլուն ուսումնասիրությունից:

16. Ռոեդերի վերը նշված հոդվածը՝ *"Soviet Federalism and Ethnic Mobilization"*, 196-232, հայեցակարգորեն և մեծապես կախված է ռեսուրսների համախմբման մոտեցումից:

17. Վիկտոր Չասլավսկին (Victor Zaslavsky), ինչպես և վերը բերված Մունիի աշխատությունը, նշում է, որ այս կառույցները «գարգաբեցին ազգաշինության յուրահատուկ գործընթացը»: *Տե՛ս նրա "The Evolution of Separatism in Soviet Society under Gorbachev"*, in Lapidus, Zaslavsky, and Goldman, *"From Union to Commonwealth"*, 71:

18. Սա պետության կողմից ղեկավարվող ազատականացման դասական օրինակ է, որն արդյունավետ կերպով օգտագործվել է, օրինակ, գեներալ Գեյզելի (Geisel) և Գոլբերիի (Golbery) կողմից Բրազիլիայում անվտանգության ապարատում իրենց կոշտ ընդդիմադիրների դեմ: *Տե՛ս Alfred Stepan, "State Power and the Strength of Civil Society in the Southern Cone of Latin America"*, in Peter Evans, Dietrich Rueschemeyer, and Theda Skocpol, eds., *"Bringing the State Back In"* (New York: Cambridge University Press, 1985), 337-38:



Չնայած Ստալինի ամբողջատիրական բռնապետության և դրան հաջորդած խրուշչովյան և բրեժնևյան ավտորիտար, բայց հետամբողջատիրական վարչակարգերի միջև կային կարևոր տարբերություններ, մինչև 1980-ականների վերջը Խորհրդային Միության վերաբերյալ «բազմակարծություն» պիտակը օգտագործվում էր մեծ վերապահումներով:

Քաղաքական բազմակարծությունը ենթադրում է քաղաքական կազմակերպությունների տարանջատումը պետությունից (կամ Խորհրդային Միության դեպքում՝ կուսակցություն-պետությունից), և սրան կոչտ հակադրվում էին խորհրդային առաջնորդները՝ Լենինից մինչև Չեռնենկո: Նույնիսկ սոցիալական բազմակարծությունը, որը մտնում է քաղաքացիական հասարկություն հասկացության մեջ, հազիվ թե կարելի լիներ հանդիպել մինչև գորբաչովյան ժամանակաշրջանը... Մինչև 1980-ականթ. կեսերը Խորհրդային Միությունում անթույլատրելի էր որևէ կազմակերպության ստեղծումն առանց պետության թույլտվության ու վերահսկողության, նույնիսկ եթե այդ կազմակերպությունը բացահայտորեն քաղաքական չէր ... Բրեժնևի իշխանության վերջին տարիներին և Անդրոպովի ու Չեռնենկոյի իշխանության ժամանակ խորհրդային այլախոհական շարժումը երկու տասնամյակ գտնվում էր իր գործունեության ամենաստորին աստիճանում և լայն առումով ճնշվեց:<sup>19</sup>

Այստեղ չէ, որ պետք է փորձենք մեր տիպաբանությամբ տալ ԽՍՀՄ 1917-91թթ. վարչակարգի մանրամասն էմպիրիկ և պատմական բնութագիրը: Սակայն այն վարչակարգը, որը ժառանգեց Գորբաչովը, ո՛չ ավտորիտար էր, ո՛չ էլ սուլթանական:<sup>20</sup> Այս գլխում արծարծվող հիմնական հարցն այն է, թե որտեղ էր նախագորբաչովյան վարչակարգը գտնվում տոտալիտար-հետտոտալիտար առանցքի վրա, որը մենք քննարկել ենք երրորդ գլխում: Ինչ վերաբերում է հանրային բազմակարծությանը, ապա վարչակարգը հեռու էր հասուն հետտոտալիտար լինելուց, ինչպես պարզ է դառնում Արչի Բրաունի միանգամայն հստակ ձևակերպումից:

Համեմատական կարգով ասած՝ «ըստ ընտրության» ապամբողջատիրականացումը Խորհրդային Միությունում չէր գնացել այնքան հեռու, որքան Հունգարիայում: Համեմատության ոչ մի եզր չկար 1982թ. Հունգարիայի օրենսդրական փոփոխությունների հետ, որոնք ստեղծեցին կիսամասնավոր սեփականություն և երկրով մեկ տարածեցին պայմանագրային հարաբերություններ, որոնք մինչև 1988թ. նպաստեցին ամբողջ երկրում ձեռնարկատիրական և արհմիութենական կազմակերպությունների ի հայտ գալուն: Ամենակարևորն այն էր, որ Հունգարիայում նախքան անցումային փուլը երեք հիմնական ընդդիմադիր կուսակցական խմբավորումներ ի հայտ եկան: Խորհրդային Միությունում գոյություն չունեի դրան նույնիսկ հեռավոր կերպով հիշեցնող ինչ-որ բան:<sup>21</sup>

Իսկպատե, մենք նույնիսկ կարող ենք ասել, որ ապարատի կարծրացումը, ծերակույտի կողմից իրականացված ղեկավարությունը, գաղափարախոսության անտաշ լեզուն,

19. *Steu Brown, "The Gorbachev Factor", 16-17 և 8:*

20. Կենտրոնական Ասիայի՝ երկար ժամանակ պաշտոնավարած քարտուղարներից ոմանք ցուցաբերեցին պատրիմոնիալ, իսկ երբեմն էլ՝ սուլթանիստական դրսևորումներ: Ստալինիզմն իր բարձրակետում ևս որոշ սուլթանիստական հատկանիշներ ուներ:

21. Հունգարիայի լրացուցիչ վերլուծության համար *տե՛ս* գլուխ 17-ի մեր դիտարկումները: Իրականում ԽՍՀՄ-ը նախքան Գորբաչովը հետամբողջատիրական չափանիշներով երբեք չէր գնացել այնքան հեռու, որքան Չեխոսլովակիան՝ 1968 թ-ի գարնանը Պրահայում:

համախմբման հնարավորության կորուստը և բնակչության պասիվությունը ԽՍՀՄ-ը դարձրին «ըստ քայքայման» հետամբողջատիրական պետության օրինակ:<sup>22</sup> Ճակատագրի հեզմանքով հենց այս փուլում ու հետքայլը նախագորբաշովյան վարչակարգն *ավելի հեռացրին* ամբողջատիրության կատարելատիպից, քան Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում էր: Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում 1980-ականների կեսերին գլխավոր կադրերից շատերը (գուցե Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության հետ նրանց մշտական հակամարտության և օրինականացման պահանջի պատճառով) շարունակում էին նվիրված մնալ այն գաղափարախոսությանը, որ նրանց կարծիքով՝ անհրաժեշտ էր իրենց կուսակցության առաջատար դերը կամ նույնիսկ համախմբման աստիճանն արդարացնելու համար:<sup>23</sup>

Չնայած այս քայքայման պատճառով առաջացած հետամբողջատիրությանը՝ անհրաժեշտ է նշել երեք գործոններ, որոնք վերաբերում են ԽՍՀՄ-ում ամբողջատիրական ժառանգության եզակի մեծ կշռին՝ համեմատած Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հետ: Առաջին. ԽՍՀՄ հիմնական բնակչության համար, ի տարբերություն կենտրոնական Եվրոպայի երկրների, ամբողջատիրական կոմունիզմի լենինյան և ստալինյան տարբերակները տեղական ստեղծագործություն էին և ոչ թե՛ արտասահմանից ներմուծված: Երկրորդ. ԽՍՀՄ ժողովուրդների մեծ մասի համար, ի տարբերություն Կենտրոնական Եվրոպայի, կոմունիզմը տևեց յոթանասունհինգ տարի քառասուն տարվա փոխարեն: Երրորդ. Կենտրոնական Եվրոպայի որոշ ժողովուրդներ (լեհերը) երբեք չէին ապրել լիակատար ամբողջատիրության պայմաններում, իսկ ուրիշներն էլ, ինչպես օրինակ՝ Հունգարիան, ամբողջատիրության պայմաններում ապրեցին ընդամենը 15 տարի: Կախված այն բանից, թե որտեղ էին ապրում ԽՍՀՄ-ում, շատ քաղաքացիներ երեսունից քառասուն տարի ապրում էին այնպիսի պայմաններում, որոնք մոտ էին ամբողջատիրությանը:<sup>24</sup>

Պետք է շեշտել այն փաստը, որ Խորհրդային Միությունը ստեղծվել էր Լենինի կողմից քաղաքացիական պատերազմից հետո վաղ քսանականներին՝ որպես ամբողջատիրական քաղաքական համակարգ, և որ խորհրդային քաղաքացիները տասնամյակներով ապրել են Ստալինի իշխանության ներքո: Խրուշչովի ապաստալինականացման արշավը, իհարկե, կարևոր էր ԽՍՀՄ-ը վախի վարչակարգից հեռացնելու համար, սակայն հարկավոր է հիշել, որ ամբողջատիրության որոշ տարրեր նորից ի հայտ եկան կամ ավելի ուժեղացան Խրուշչովի օրոք, օրինակ, ինչպես հարձակումները կրոնի վրա, «արևմուտքը թաղե-

22. «Քայքայման պատճառով առաջացած հետամբողջատիրության» և «ընտրությամբ առաջացած հետամբողջատիրության» միջև եղած տարբերությունները զարգացվում են Գլուխ 3-ում և հատկապես՝ Գլուխ 17-ում:

23. Ինչպես ցույց է տալիս Ֆրիդմանի (Friedman) կողմից կատարված ուսումնասիրությունը, որին մենք անդրադարձել ենք Գլուխ 17-ում, նույնիսկ ԳՂՀ-ի ուժային վերնախավի ուժի գործադրման մասին համոզվածությունը 1980-ականների վերջին դուրս էր մղվել մաքուր ամբողջատիրության նրանց ընթրնումից:

24. Հակառակ Չեխոսլովակիայի՝ կարող ենք նաև ասել, որ ԽՍՀՄ- և իրականում չունեն կիրառելի նախամբողջատիրական ժողովրդավարական անցյալ և սահմանափակ առաջավոր կապիտալիստական օրենսդրական և/կամ արդյունաբերական կառույցներ: Սակայն այս առումով ԽՍՀՄ-ը եզակի չէր: Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի որոշ այլ երկրներում նույնպես գործում էին համեմատաբար թույլ զարգացած նախամբողջատիրական ժողովրդավարական կամ առաջավոր կապիտալիստական կառույցներ:

լու» առաքելական ձգտումը կամ 1956թ. Հունգարիայի հեղափոխության ժամանակ բիրտ ուժի կիրառումն ամբողջատիրությունը վերահաստատելու համար: Ինչպես տեսանք, Բրեժնևի դարաշրջանը ավելի շուտ ապամբողջատիրականացում էր «որպես քայքայման հետևանք», քան «որպես հետևանք ընտրության»: Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ Գորբաչովը ժառանգեց մի վարչակարգ, որտեղ ամբողջ սերունդներ չէին ապրել այլ քաղաքական համակարգերի պայմաններում, և ծանոթ էին միայն խորհրդային կոմունիզմի հասարակարգին: Խորհրդային հանրության վրա Հոկտեմբերյան հեղափոխության, քաղաքացիական պատերազմի, ստալինիզմի և Երկրորդ համաշխարհային պատերազմում նացիստների դեմ տարած հաղթանակից արթնացած հայրենասիրության համակցված ազդեցությունը հասկանալիորեն շատ ավելի մեծ էր, քան կարճատև ամբողջատիրական ժամանակաշրջանը Կենտրոնական Եվրոպայի վրա (1948-57թթ.), որը պարտադրվել էր խորհրդային օկուպացիայի կամ «ազատագրման» ժամանակ:

Այս համատեքստում ԽՍՀՄ ազատականացումը և նույնիսկ կուսակցություն-պետության կազմաքանդումը, որը սկսվեց 1980-ականների վերջերին՝ կոմունիզմի յոթանասուն տարիներից հետո, չէին կարող դառնալ բառի արևմտյան իմաստով քաղաքացիական հասարակության արագ առաջացման պատճառ: Չափազանց շատ կառույցներ ու ավանդույթներ, որ կարողացել էին գոյատևել արտաքին կայսրությունների կազմում, ոչնչացվել կամ այնպես էին այլափոխվել ԽՍՀՄ-ում (օրինակ՝ ուղղափառ եկեղեցին), որ հսկայական ջանքեր էին պահանջվում դրանք վերականգնելու համար: Ամբողջատիրության երեսունհինգ տարիները լիովին սոցիալականացված տնտեսության հետ մեկտեղ ձևավորում էին բոլոր քաղաքացիների կյանքը: Գործնականում բոլոր նրանք, ովքեր սոցիալական կարևորություն ունեցող պաշտոններ էին զբաղեցնում 1980-ականների սկզբում, հավաքագրվել, վերապատրաստվել և ձևավորվել էին այս համակարգում: Հսկայական Խորհրդային Միության միայն մի քանի քաղաքային կենտրոններում այլախոհների փոքր խմբեր էին «ոչ խորհրդային» մշակույթ զարգացնում: Նույնիսկ գաղափարախոսությունը հերքելիս, մերժելիս կամ մեղադրելիս առկա էր համակարգի կողմից ձևավորված առանձնահատուկ խորհրդային մի մտածելակերպ:

Սա օգնում է հասկանալ խորհրդային հասարակարգում հայտնվող նոր վերնախավի ազատական և ժողովրդավարական մտածելակերպի թերությունները: Իրականում մենք ենթադրում ենք, որ որոշ տեղերում վերնախավի այն մարդկանց հեռացումները, որոնք սատարում էին Գորբաչովին կամ Ելցինին (օրինակ՝ Ալեքսանդր Յակովլևը) կամ նրանց, որոնք տարբեր պատճառներով մերձ էին երկրորդ էշելոնի մարդկանց կամ «գավառական» ընտրանու գաղափարներին, աննպաստ դեր ունեցան «ժողովրդավարությանն» անցում իրականացնելու ժամանակ:

Գորբաչովը իշխանության եկավ մի հասարակության մեջ, որը կոմունիզմի 70 տարիների ընթացքում իր ձևն էր ստացել, և որտեղ ծայրամասերում իշխանության հասած մարդիկ պետք է փորձեին պահել իրենց իշխանությունը: Երբ Գորբաչովը սկսեց իրականացնել այնպիսի միջոցառումներ ու քաղաքականություն, որոնք սկսեցին թուլացնել կենտրոնացված կուսակցություն-պետության գաղափարախոսությունն ու կառուցվածքը, հանրապետական ընտրանիները սկսեցին փնտրել իշխանության, գաղափարախոսության օրինականության և հատկապես նոր ինքնությունների այլ աղբյուրներ: Այսպիսով, տարածաշրջանային հանրապետական վերնախավերի համար ԽՍՀՄ էթնոդաշնայնու-

թյունը և թշվառության հասցված, քայքայված կամ հորինված ազգային մշակույթներից ակնկալվող հնարավոր լեզվատիրությունը դարձան օգտակար: Ծայրամասային հանրապետություններում դեկավար պաշտոն զբաղեցնողները հաճախ առավել հեշտությամբ կարող էին փորձել արդարացնել իրենց՝ հղում կատարելով «անվանադիր բնակչության» կողմից իրենց տիրապետության տակ գտնվող տարածքներում «փոքրամասնություն կազմող էթնիկ» խմբերի, ինչպես նաև կենտրոնական խորհրդային պետության հանդեպ յուրահատուկ տեսակի ազգայնականության վրա:<sup>25</sup> Այս առումով ազգայնամոլությունը, որն ի հայտ եկավ ԽՍՀՄ փլուզման ժամանակ, ԽՍՀՄ հասարակարգի ամբողջատիրական փլուզման և էթնոդաշնայնության յուրահատուկ ինստիտուտների արդյունք էր:<sup>26</sup> Մենք կարող ենք հասկանալ, թե ինչպես *անկախությունը* գերադասվեց *ժողովրդավարության* հանդեպ: Մակայն այս մասին՝ ավելի ուշ, քանի որ մենք առաջ ընկանք մեր պատմությունից:

Քաղաքական գործիչները մարդկանց հույսերն ու դժգոհություններն օգտագործելու մասնագետներ են: Բայց ի՞նչ հույսեր ու դժգոհություններ պետք է մոբիլիզացվեն: Ինչպե՞ս: Ո՞ւմ կոմից: Գորբաչովը ժառանգեց «թուլացած» հետամբողջատիրական սոցիալական և քաղաքական տարածք: «Թուլացած տարածք» ասելով՝ նկատի ունենք, որ շատ սոցիալական կառույցներ, ինչպես օրինակ՝ եկեղեցիներ, գործարար կամ շահագրգիռ խմբեր, մասնագիտական ընկերություններ և որոշ գիտահետազոտական ինստիտուտներ (Չիլիում և Ուրուգվայում նույնիսկ քաղաքական կուսակցություններ), ավտորիտար վարչակարգերում կարողացել են գոյատևել՝ որոշակի անկախություն և ինքնություն ունենալով Հարավային Ամերիկայում և Հարավային Եվրոպայում, ինչը մենք վերլուծել ենք: Սակայն ԽՍՀՄ-ում ամբողջատիրական վարչակարգի պայմաններում այսպիսի կազմակերպություններն այնպես էին միաձուլվել կուսակցություն-պետության հետ, որ չէին կարող ԽՍՀՄ-ում նշանակալի դեր խաղալ անցումային գործընթացներում: Մա չի նշանակում, որ ավելի շատ ազատություն ունենալով՝ չէին կարող բազմահազար խմբեր ի հայտ գալ «քաղաքացիական հասարակության» և նորահայտ «քաղաքական հասարակության» սահմանին: Իրականում հակառակ թուլացած տարածքի՝ 1987-88թթ. կարողացան հայտնվել բազմաթիվ ժողովրդավարական միավորումներ, ճակատներ և ակումբներ: Այս խմբերը հետապնդում էին տարբեր նպատակներ՝ բնապահպանությունից մինչև ստալինյան տեռորի զոհերի հիշատակը վառ պահելը: Այս խմբերը հիմնականում կազմված էին բարձրագույն կրթությամբ և այլախոհական շարժումների փորձ չունեցող երեսունից հիսուն տարեկան մարդկանցից: Այնպիսի նախաքաղաքական կազմակերպություններ, ինչպիսին օրինակ՝ Մոսկվայի ընտրողների միությունն է, ստեղծվեցին 1989թ. ուշ աշնանը, իսկ նրանց առաջնորդները սկսեցին նախապատրաստվել մասնակցելու Ռուսաստանի Գերագույն խորհրդի ընտրարշավին:

25. Ընդունելով վերնախավի կողմից ազգայնամոլության օպորտունիստական օգտագործման նշանակալի դերը՝ մենք չէինք ցանկանա ժխտել այն փաստը, որ յուրաքանչյուր տարածաշրջանում զգալի քանակությամբ խմբեր կային, որոնք իսկապես նույնացվում էին պատմական մշակույթի հետ: Այս նույնականացումը հատկապես ուժեղ էր մտավորականների, արվեստագետների, ակադեմիկոսների և երբեմն էլ, ինչպես, օրինակ՝ Հայաստանում, եկեղեցականների շրջանում, որոնք միավորում էին ավանդույթներն ու իրենց արտաքին կապերը:

26. Էռնեստ Գելները (Ernest Gellner) հետխորհրդային Ռուսաստանն անվանում է «վակուումային հասարակություն»: *Տե՛ս նրա "Home of the Unrevolution", Daedalus 122, no. 3 (1993), 141-254:*

1990թ. հունվարին մի միավորում իրեն անվանեց «Ժողովրդավարական Ռուսաստան» և 5000 թեկնածուներ առաջադրեց ՌՄՖՍՀ բոլոր մակարդակների խորհուրդների տեղերի համար:<sup>27</sup> «Ժողովրդավարական Ռուսաստանը» կարողացավ Մոսկվայում երկու մեծ ընտրարշավ կազմակերպել, և նրանց պաշտպանած թեկնածուները Ռուսաստանի ժողովրդական պատգամավորների համագումարում զբաղեցրեցին Մոսկվային հատկացված վաթսուներեք տեղերից հիսուներեքը: Ընտրություններից հետո «Ժողովրդավարական Ռուսաստանը» կարողացավ ՌՄՖՍՀ ժողպատգամավորների համագումարում ձևավորել խորհրդարանական խմբակցություն, սակայն նրանք կազմում էին ընդհանուր թվի առավելագույնը 30%-ը: Չնայած «Ժողովրդավարական Ռուսաստանը» վճռորոշ դեր խաղաց բարեփոխումներին, ազատականությանը և ժողովրդավարության կոչերին աջակցելու գործում, սակայն այն այդպես էլ մնաց ավելի շատ որպես շարժում, քան քաղաքական կուսակցություն:

Մի վճռորոշ գործոն, որը մեծ դեր խաղաց «Ժողովրդավարական Ռուսաստան» շարժման նման խմբերի իրական համամիութենական կուսակցություններ դառնալու ձայնողման մեջ, այն էր, ինչպես մենք կփաստենք այս գլխում, որ Գորբաչովի և Ելցինի նման առաջորդները լավ կազմակերպված ժողովրդավարական քաղաքական կուսակցությունների ստեղծման հարցում ունեին երկակի մոտեցումներ: Իշխանության հասնելու իր ձգտումն իրականացնելու համար Ելցինն օգտվեց «Ժողովրդավարական Ռուսաստանի» աջակցությունից, բայց նա չցանկացավ առաջնորդել այն որպես կուսակցություն և նույնիսկ չօգնեց, որ այն դառնա կուսակցություն: Այսպիսի պայմաններում, եթե ընտրություններ իրականացվեին, ապա քաղաքական գործիչների համար հույսերի, վիրավորանքների, շահերի և ինքնությունների համախմբումն անկասկած կապված կլիներ էթնիկ պատկանելության հետ: Փաստորեն, հանրապետությունները «նախապետություններ» էին, և միակ անջատման ձևը, որը մասամբ օրինական էր Խորհրդային Միությունում, էթնիկ պատկանելությունն էր:

Սա մեզ համար առաջ է բերում սահմանափակ ընտրության հարցը, որ ծառայել էր Գորբաչովի առջև: Մենք բավարար գիտելիքներ չունենք Խորհրդային Միության մասին դատելու համար, թե արդյոք Գորբաչովը կարող էր ընտրություն կատարել ստատուս քվոն պահպանելու օգտին, ինչպես 1990-ականների Չինաստանում, կարող էր փորձել ձևափոխել տնտեսական համակարգն առանց քաղաքական համակարգի փոփոխության: Իհարկե, շատերն են պնդում, որ Բրեժնևի դարաշրջանի վերջում կուսակցություն-պետությունում ստեղծվել էր մի իրավիճակ, որտեղ չկային բավարար տնտեսական ու գաղափարախոսական ռեսուրսներ՝ պահպանելու այն, ինչ Պետեր Հաուսլոներն (Peter Hauslohner) անվանել է «սոցիալական պայմանագիր» խորհրդային քաղաքացիների հետ:<sup>28</sup> Ինչն է, քանի որ Գորբաչովն ընդունել էր համակարգը վերափոխելու և ընտրությունները որպես այդ վերակառուցման մաս օգտագործելու որոշում, նրա առջև ծառայան անցումային գրականության մեջ նշվող երկու դասական հնարավորություններ, որոնց միջև

27. Stéu Yitzhak M. Brudny, "The Dynamics of 'Democratic Russia', 1990-1993", Post-Soviet Affairs, 9 (April-June 1993), 141-70:

28. Peter Hauslohner, "Gorbachev's Social Contract", in Ferenc Feher and Andrew Arato, eds., "Gorbachev: The Debate" (Atlantic Highlands, NJ: Humanities Press International, 1989), 61-83:

պետք է ընտրություն կատարեր. «ազատականացնել», թե՞ «ժողովրդավարացնել»:<sup>29</sup> Այս մասին գիտնականների միջև բավական սուր բանավեճ է ընթանում, և դրա մեծ մասը կախված է նրանց վերաբերմունքից: Որոշ գիտնականներ (սակայն ոչ բոլորը), որոնք Խորհրդային Միության մասնագետներ էին, և որոնք ոգևորվել էին Գորբաչովի կողմից մշտապես օգտագործվող *ժողովրդավարացում* եզրով և այն փաստով, որ պերեստրոյկան ու գլասնոստն այնքան շատ ազատականացման ուժեր տեղից շարժեցին, պնդում էին, որ Գորբաչովը ժողովրդավարության կողմնակից է: Սովետոլոգիային վերաբերող գրականության մեջ իրականում փոքր տարբերություն էր դրվում *ազատականացման* և *ժողովրդավարացման* միջև: Հաճախ այդ երկու գործընթացները հավասարեցվում էին:<sup>30</sup>

Ինչևէ, որպես համեմատական ժողովրդավարական անցումների մասնագետ-գիտնականներ, կարծում ենք՝ կարևոր է շեշտել, որ 1985-1991թթ. Գորբաչովը, կուսակցություն-պետությունը կամ կենտրոնական կառավարությունը *երբեք* միանշանակ չհանդիսացան բառիս բուն իմաստով՝ *ժողովրդավարացման* ջատագով: Այսինքն, երբեք չանցկացվեցին կամ նույնիսկ չնախատեսվեցին ազատ-մրցակցային, համամիութենական, բազմակուսակցական ընտրություններ, որոնց հաղթողները կենտրոնում կձևավորեին կառավարություն և կստանձնեին հասարակական քաղաքականություն և պետական ապարատ կերտելու պատասխանատվությունը:

Ժողովրդավարության և ժողովրդավարությանն անցման ժամանակակից տեսաբանների շրջանում անխուսափելիորեն տարբեր շեշտադրումներ կան: Սակայն մի շարք խնդիրների շուրջ կա միակարծություն, որի հետ համաձայնում է նույնիսկ եվրոպական կոմունիստների մեծամասնությունը: Այս միակարծությունը ներառում է այն պարզ ընկալումը, որ ժողովրդավարության մեջ իշխանության հետևանքներն անպայման *կախված են հանգամանքներից* և չեն կարող երաշխավորվել կամ կարգավորվել մեկ պատմական որոշումով,<sup>31</sup> քաղաքական *ընդդիմությունը* պետք է ունենա օրինական գոյատևման իրավունք, ներկուսակցական ժողովրդավարությունը կարևոր է, սակայն երբեք էլ չի կարող փոխարինել կենտրոնական իշխանության ազատ *բազմակուսակցական ընտրություններին*, և սոցիալական բազմակարծության ոչ մի աստիճան չի կարող փոխարինել քաղաքական բազմակարծությանը: 1985-1991թթ. բոլոր այս կետերի վերաբերյալ Գորբաչովի մտքերը թշնամական էին կամ լավագույն դեպքում՝ երկիմաստ (Ցուցադրություն 19.2):

29. Այս հիմնարար տարբերության վերլուծության համար տե՛ս Գլուխ 1:

30. Ինչպես փաստել ենք Գլուխ 1-ում, ազատականացումն ու ժողովրդավարացումը բոլորովին տարբեր հասկացություններ են: Էմպիրիկ տեսանկյունից նույնպես, ազատականացումը հաճախ առաջացել է առանց ժողովրդավարացման: Թե ինչքան տարբեր էին խորհրդային մասնագետների կարծիքները Գորբաչովի և ժողովրդավարության վերաբերյալ, տե՛ս Stephan White, "Democratization" in the USSR", Soviet Studies 42, no.1 (1990), 3-24 and John Gooding, "Gorbachev and Democracy", Soviet Studies 42, no. 2 (1990), 195-231:

31. Ինչպես իրավամբ փաստել է Ադամ Պրժեւորսկին (Adam Przeworski) մեր կողմից ժողովրդավարության անցման անորոշության քննարկումների ժամանակ, «ժողովրդավարական փոխզիջումը չի կարող լինել էական. այն կարող է լինել միայն իրավիճակային փոխզիջման մաս... Եթե հնարավոր լինի խաղող անցում իրականացնել ժողովրդավարությանը, առաջին լուծելիք հարցն անորոշությունն ինստիտուցիոնալացնելու խնդիրն է»: Տե՛ս նրա "Some Problems in the Study of the Transition to Democracy" աշխատությունը, Guillermo O'Donnell, Philippe Schmitter, and Laurence Whitehead, eds., "Transitions from Authoritarian Rule: Comparative Perspectives" (Baltimore: Johns Hopkins University Press, 1986) գրքում, էջ 59-60:

### Յուզադրություն 19.2. Միխայիլ Գորբաչովի արտահայտությունները մրցակցային ժողովրդավարության մասին. 1987-1991թթ.

1. Ընդդիմության և կոմունիստական կուսակցության դերի մասին. 1987թ.

«Մեր երկրում գոյություն չունի պաշտոնական ընդդիմություն: Սա ավելի մեծ պատասխանատվություն է դնում Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության՝ որպես ղեկավարող կուսակցության վրա: Այդ պատճառով մենք ներկուսակցական ժողովրդավարության հետագա զարգացումը, աշխատանքում կոլեկտիվ ղեկավարման սկզբունքի ուժեղացումը և կուսակցության ավելի բաց լինելը համարում ենք զլխավոր գերակայություն»:<sup>3</sup>

2. Արդյունքների՝ հանգամանքներից կախված չլինելու մասին պերեստրոյկայի և ժողովրդավարացման համատեքստում 1987-1988թթ.

«Սոցիալիստական բազմակարծությունն այս պատճառով էլ կոչվում է սոցիալիստական, բանավե՛ն է, գիտական աշխատանք, որը կատարվում է մեր ժողովրդի կողմից 1917թ-ի հոկտեմբերին մեկընդմիջտ կատարված ընտրության սահմանների *ներսում*»:<sup>4</sup>

«Մենք մեր բոլոր բարեփոխումներն իրականացնում ենք սոցիալիստական ընտրությանը համապատասխան: Մենք սոցիալիզմի մեջ և ոչ թե դրանից դուրս ենք փնտրում բոլոր ծագող հարցերի պատասխանները... Այդ իսկ պատճառով պերեստրոյկայի մեր ծրագրի յուրաքանչյուր մաս և ծրագիրն ամբողջությամբ հիմնված են ավելի շատ սոցիալիզմի, ավելի շատ ժողովրդավարության սկզբունքների վրա»:<sup>5</sup>

3. Առաջին բազմաթեկնածու կիսամրցակցային ընտրություններից առաջ ընկած ժամանակահատվածում բազմակուսակցական համակարգի հնարավորության մասին. 1989թ., փետրվար

«Դրանք քննարկելու հիմքեր չկան (այսինքն՝ բազմակուսակցականության բարեփոխումներ) ... երկու, երեք կուսակցություն, այդ բոլորը անհեթեթություն է: Եթե դուք ունեք երեք-չորս կուսակցություն, միևնույն է, դուք կարող եք ունենալ այնքան բռնապետություն, որ ոչ ոք չի կարողանա բերանը բացել և ազատ խոսել ... այս ամենը մեր վզին փաթաթվում է անպատասխանատու մարդկանց կողմից»:<sup>6</sup>

4. Կոմունիստական կուսակցության առաջատար դերի մասին. 26 նոյեմբերի, 1989թ.

(Վանրպետություններում սկսվել էր ընտրարշավը, և Բեռլինի պատը՝ քանդվել)

«Մենք պաշտպանում ենք իրական ժողովրդավարությունը ... Կոմունիստական կուսակցությունը սոցիալական օրգանիզմում խաղում է հատուկ դեր, որը կոչված է լինել խորհրդային հասարակարգի առաջամարտիկ ... Միակուսակցական համակարգի շրջանակներում զարգացնել զանգվածների անկախ գործունեությունը և ողջ սոցիալական կյանքի ժողովրդավարացման գործընթացները, կուսակցության դժվար և ազնիվ առաքելությունն է»:<sup>7</sup>

5. Բազմակարծության զարգացման մեջ կոմունիստական կուսակցության դերի մասին. 26 նոյեմբերի 1989թ.

«Ներկայիս բարդ փուլում հասարակարգի ամրապնդման և պերեստրոյկայի դժվար խնդիրների լուծման վրա նրա բոլոր առողջ ուժերի կենտրոնացման շահերը պարտադրում են պահպանել միակուսակցական համակարգը: Սակայն այդուհանդերձ կուսակցությունը կշարունակի զարգացնել բազմակարծությունը ... Կուսակցությունը չի կարող տեղի տալ ժողովրդահան բարեփոխության, ազգայնամոլության և շովինիստական հոսանքների կամ անկառավարելի խմբավորումների շահերին»:<sup>8</sup>

6. Միավորված կոմունիստական կուսակցության իր հավատարմության մասին. ձախողված հեղաշրջման հաջորդ օրն անցկացրած մամուլի ասուլիսում, 23 օգոստոսի, 1991թ.

«Ցավում եմ, որ այն ուժերը, որոնք պետք է նպաստեին կուսակցության բարեփոխմանը, հեռանում են: Ես սրանում տեսնում եմ իմ դերը: Ես մտադիր չեմ զիջել իմ դիրքերը»:<sup>9</sup>

<sup>3</sup> Mikhail Gorbachev, *Perestroika: New Thinking for Our Country and the World* (New York: Harper and Row, 1987), 23:

<sup>4</sup> Михаил Горбачев, "Политика партии, политика обновления", *Коммунист* (1988). 4: Ավելացված շեշտադրություն: Մեջբերված է Neil Robinson, «Gorbachev and the Place of the Party in Soviet Reform, 1985-1991» *Sower Studies* 44, no. 3 (1992): 423-43.

<sup>5</sup> Gorbachev, *Perestroika*, 23:

<sup>6</sup> Դիշտատվված է Վիկտոր Յասմանի /Victor Yassman/ մոտ, "Gorbachev's Formula for the Second Stage of Perestroika: Full Ahead but Keep Right," *Radio Liberty: Report on the USSR*, March 10, 1989, 19.

<sup>7</sup> Михаил Горбачев, "Идея социализма и революционная перестройка", *Правда*, 26 նոյեմբերի 1989թ. Անգլերեն թարգմանությունը FBIS-Sov-89-226, 27 նոյեմբերի 1989թ., էջ. 78-79: 1990թ-ի փետրվարի 5-ին, կենտրոնական կոմիտեի պլենումում Գորբաչովն ի վերջո պաշտպանեց սահմանադրության վեցերորդ հոդվածի փոփոխությունը, որը կուսակցությանը վերապահում էր առաջատար դեր

և առաջարկեց ստեղծել նախագահական ինստիտուտ՝ նրան օժտելով բավարար իշխանությամբ բարեփոխումների առաջընթացն ապահովելու համար:

ֆ. Նույն տեղում:

ց. Սիխայիլ Գորբաչովի մամուլի ասուլիսը, անգլերեն թարգմանությունը FBIS-Sov-91 164, օգոստոսի 23, 1991թ., էջ 28:

ԽՍՀՄ-ում ընտրություններ տեղի ունեցան 1989 և 1990թթ.:<sup>32</sup> 1989թ. ԽՍՀՄ ժողպատգամավորների համագումարի ընտրությունները հստակորեն օգնեցին թուլացնել պերեստրոյկային ընդդիմացողներին: Մակայն մեր կարծիքով՝ ընտրություններում կային էական բացթողումներ: 1989թ-ի կենտրոնական օրենսդիր մարմնի ընտրությունները բազմակուսակցական չէին: Ընտրություններն իրականում իրավասու էին ստեղծելու նոր օրենսդիր մարմին և ոչ թե կառավարություն: Օրենսդիր մարմինն այդպես էլ չստեղծեց նոր սահմանադրություն, իսկ առանց դրա հնարավոր չէր վերածնել դաշնությունը:

1989 թ-ի ազատականացնող ընտրությունները նույնիսկ կենտրոնում մի շարք առումներով իսկապես սկսեցին թուլացնել կենտրոնացված կուսակցություն-պետությունը: Պատգամավորների մի խումբ՝ պատգամավորների «միջոցգիծնալ խումբը», որոնցից շատերը ցանկանում էին շարժվել դեպի իսկական ժողովրդավարացում, սկսեցին քննադատել Գորբաչովին և կուսակցություն-պետությունը ոչ լեգիտիմ լինելու մեջ: Իրենց հերթին կուսակցության մեջ աճող կոշտ դիրքորոշում ունեցողները սկսեցին քննադատել Գորբաչովին կուսակցություն-պետության թուլացումը թույլ տալու համար: Չնայած 1989թ.-ի ընտրությունները նպաստեցին բալթյան հանրապետություններում և Կովկասում ազգայնական-անկախական շարժումների խթանմանը, մյուս հանրապետություններում գաղափարախոսական սահմանները հատող «ինքնիշխանություն» անորոշ հասկացությունը դրոշ դարձրած՝ նրանք կենտրոնական կառավարությանը մարտահրավեր նետելու հիմքեր ստեղծեցին: Այսպես եղավ Ուկրաինայում, որտեղ առավել կերպով անկախության հակված «Ռուխ» շարժումը չհաղթեց, և Բելառուսում: Կուսակցություն-պետության և կենտրոնի արագ և անդառնալի քայքայումը սկսվեց հանրապետական ընտրությունների ժամանակ, ինչը սկսվեց 1989թ-ի վերջին և շարունակվեց 1990թ-ի մեծ մասում:

Եկեք ավելի հանգամանորեն կանգ առնենք ԽՍՀՄ-ում իրականացված ընտրությունների և մասնավորապես՝ ընտրությունների հերթականության և Հարավսլավիայում իրականացված դրան բավականին նման ընտրությունների վրա:<sup>33</sup> Երկու երկրներում էլ ընտրությունները թույլատրվեցին, սակայն երկու երկրներում էլ ամենաժողովրդավարականը և մրցակցայինը տարածաշրջանային իշխանության ընտրություններն էին: Դա ամենից ցայտուն արտահայտվեց Հարավսլավիայում, որտեղ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մրցակցային համապետական ընտրություններ պարզապես երբեք էլ չէին անցկացվել: Հարավսլավիայում հանրապետական ընտրություններն անցկացվեցին 1990թ-ի ամռանն ու աշնանը, և զարմանալի չէ, որ էթնիկ խնդիրները դարձան մեծ մտահոգության առարկա:

32. Եվ, իհարկե, մինչև 1991թ. մայիս և հունիս նախագահական կարևոր ընտրություններ իրականացվեցին համապատասխանաբար Վրաստանում և Ռուսաստանում:

33. Հաջորդ մի քանի էջերում մեծապես հենվում ենք մեր "Political Identities and Electoral Sequences: Spain, the Soviet Union, and Yugoslavia", Daedalus 121, no. 2 (1992), 123-40, աշխատության վրա: Մեր երախտագիտությունն ենք հայտնում մեջբերում անելու թույլտվության համար:



Խորհրդային Միությունում իրավիճակն ինչ-որ տեղ ավելի խճճված էր: 1989թ-ին Խորհրդային Միության ժողովրդական պատգամավորների համագումարի ընտրություններն իսկապես համաձայնեցնական էին: Սակայն այս ընտրությունները բազմակուսակցական չէին, և ըստ այդմ՝ չէր կարող ձևավորվել բուն իմաստով ժողովրդավարական քաղաքական հասարակություն: Չպետք է մոռանանք, որ միայն 1990թ-ի մարտին՝ Ռուսաստանում ընտրությունները սկսվելուց միայն մեկ շաբաթ առաջ, Խորհրդային Միության կոմունիստական կուսակցությունը հրաժարվեց Սահմանադրության 6-րդ հոդվածով իրեն վերապահված մենաշնորհից: Միայն 6-րդ հոդվածի վերացումից հետո հնարավոր եղավ գրանցել այլ կուսակցություններ:<sup>34</sup> Չնայած տարբեր ժողովրդավարական խմբավորումների և շարժումների կողմից առաջադրված անդամներ ընտրվեցին, խորհրդարանական կուսակցությունները կամ ավելի ստույգ՝ խմբակցություններն իսկապես ստեղծվեցին 1989-90թթ. ընտրություններից *հետո* միայն:

Մենք այստեղ չենք կարող համարժեք համեմատություն կատարել և ընդգծել Հարավային Եվրոպայի, Լատինական Ամերիկայի և Կենտրոնական Եվրոպայի մեծ մասի հետ եղած այս հիմնական տարբերությունը, որտեղ կուսակցություններն օրինական կերպով գործում էին *նախքան* առաջին կամ հիմնադիր ընտրությունները: Այդ տարբերության հետևանքներից մեկն այն էր, որ Խորհրդային Միության մեծ մասում և հատկապես՝ Ռուսաստանում, չնայած ժողովրդավարացման շարժումներին և հասարակության կարծիքի արտահայտման գործընթացներին, ձգձգվում էր անցումը քաղաքական հասարակությանը: Ռուսաստանի «Ժողովրդավարական Ռուսաստանը», ինչպես որ «Միասնությունը»՝ Լեհաստանում, «Քաղաքացիական ֆորումը»՝ Չեխոսլովակիայում, «Նոյե ֆորումը»՝ Գերմանիայում և «Մայոդիսը»՝ Լիտվայում, «հովանոցային» կազմակերպություն էր, և նրա հետագա ճգնաժամը զգալի նմանություններ ունի այդ շարժումների ճգնաժամերին: Սակայն ի տարբերություն այլ «հովանոցային» կազմակերպությունների, «Ժողովրդավարական Ռուսաստանը» *երբեք* էլ չհամակարգեց ընդհանուր համապետական ընտրությունները:

1989թ. մարտյան ընտրությունները չափազանց կարևոր էին Խորհրդային Միությունում ազատության նոր ոգի ձևավորելու համար: Սակայն ինքնուրույն քաղաքական հասարակարգ կամ ժողովրդավարական իշխանական կառույցներ ձևավորելու տեսանկյունից ընտրություններն ունեին որոշ ակնհայտ սահմանափակումներ:<sup>35</sup> Ժողովրդական

34. Ռուսաստանի մեր հետագա վերլուծության համար անհրաժեշտ է նաև նշել, որ Ռուսաստանի խորհրդարանի 1990 թ-ի ընտրությունները նույնպես բազմակուսակցական չէին: 1990 թ-ի Ռուսաստանի ընտրություններում «Ժողովրդավարական Ռուսաստանը» մեր ընկալմամբ ոչ թե իսկական քաղաքական կուսակցություն էր, այլ քաղաքացիական հասարակության և քաղաքական հասարակության սահմանագծում նորահայտ շարժում: Այս պետություն-հասարակություն համատեքստի պատճառով Սթեփեն Ֆիշը (M. Stephen Fish) պնդում է, որ «1989-90թթ. քաղաքականության բացումը չափազանց հանկարծակի ու մասնակի էր: Այն ուժեղ և բացասական ազդեցություն ունեցավ այլընտրանքային կուսակցությունների առաջացման և նրանց արդյունավետության վրա: Ընտրությունների ժամանակացույցը նվազեցրեց արմատական առաջնորդների կուսակցություններին միանալու ցանկությունը և իրախուսեց քաղաքական ձեռնարկատիրության մեծապես անհատականացված ձևին»: *Տե՛ս* նրա կարևոր գիրքը՝ "Democracy from Scratch: Opposition and Regime in the New Russian Revolution" (Princeton: Princeton University Press, 1995), 73: Շեշտադրումները՝ ըստ բնագրի:

35. 1989 թ-ի ընտրությունների սահմանների լավ փնտրված համար, *տե՛ս* Victor Sergeev and Nikolai Biryukov, "Russia's Road to Democracy: Parliament, Communism and Traditional Culture" (Aldershot, England: Edward Elgar, 1993), էջ 101-51:

պատգամավորների համագումարի 2250 անդամների մեկ երրորդը հատկացվել էր կոմունիստական կուսակցությանն ու նրան հարող կազմակերպություններին և չէր վայելում ժողովրդի աջակցությունը: Ավելին, առաջադրման գործընթացները կոմունիստական կուսակցության կողմից վերահսկվող տեղական ընտրական հանձնաժողովներին հնարավորություն տվեցին իրենց աջակիցների հետ անցկացնելու հավաքներ և այսպիսով՝ վերահսկելու առաջադրման գործընթացը: Շատ շրջաններում տեղական ընտրական հանձնաժողովների կողմից առաջադրված բոլոր թեկնածուները կոմունիստական կուսակցության աջակիցներ էին: Իսկապես, ընտրատարածքների մեկ քառորդում տեղական ընտրական հանձնաժողովների կողմից առաջադրվեց միայն մեկ թեկնածու: Այս համատեքստում ընդդիմադիր թեկնածուներից շատերը դուրս մնացին:

Այս գործընթացների հետևանքով առաջ քաշված Ժողովրդական պատգամավորների համագումարի խիստ ընտրություն անցած 2250 անդամները դարձան ընտրագանգված Գերագույն խորհրդի անուղակի ընտրությունների համար: Ընտրության այս անուղակի մեթոդն ավելի թուլացրեց վերին և ավելի հզոր պալատի նկատմամբ եղած վստահությունը և առաջ բերեց բազմաթիվ անարդարություններ: Օրինակ, Բորիս Ելցինը Մոսկվայի իր պաշտոնին հասավ ժողովրդական քվեարկության 89-տոկոսանոց արդյունքով, սակայն սկզբում նրա համար տեղ չգտնվեց Գերագույն խորհրդում, մինչև անդամներից մեկը ինքնաբացարկ չհայտնեց նրա օգտին: Մնացած պակաս հայտնի պատգամավորների բախտն այդքան էլ չբերեց: Այսպիսով, չնայած Խորհրդային Միության առաջին ընտրությունները համամիութենական բնույթ էին կրում, սակայն և՛ Խորհրդային Միությունում, և՛ Հարավսլավիայում ամենակարևոր և մրցակցային ընտրությունները տեղի ունեցան ոչ թե համամիութենական, այլ հանրապետական մակարդակներում:

Քաջատեղյակ լինելով համամիութենական ընտրական օրենքի թերություններին՝ հանրապետական խորհրդարանները օրենքի նախագծեր մշակեցին, որոնք զուրկ էին այնպիսի գործելառճերից, որոնք վարկաբեկել էին համամիութենական խորհրդարանը: Ընտրակարգը տարբեր հանրապետություններում տարբեր էր, սակայն ընդհանուր առմամբ նրանք հանրապետական մակարդակի դերակատարներին թույլ էին տալիս ավելի շատ հավակնել լեգիտիմության, քան նրանց համամիութենական գործընկերներին: Գրեթե բոլոր հանրապետությունները երաշխավորված տեղեր չհատկացրեցին կոմունիստական կուսակցությանն ու նրա կողմից վերահսկվող կազմակերպություններին: Հանրապետական խորհրդարանների ընտրությունների ժամանակ կային անհավասար պայմաններ՝ հատկապես Կենտրոնական Ասիայում և ազգային փոքրամասնությունների իրավունքների բնագավառում: Սակայն ընդհանուր առմամբ հանրապետությունների Գերագույն խորհուրդների պատգամավորները, առավել քան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորները, կարող էին հավակնել ոչ միայն էթնիկ շահերի պաշտպան լինելուն, այլ նաև ավելի մեծ չափով լեգիտիմ լինելուն:

Այս գրքում մենք փաստում ենք, որ ընտրությունները կարող են ստեղծել ծրագրեր ու դերակատարներ, կարող են վերաձևավորել ինքնությունները, օգնել օրինականացնել կամ ապաօրինականացնել հնազանդության կոչերը և ստեղծել իշխանություն: Այս ամենը տեղի ունեցավ ԽՍՀՄ և Հարավսլավիայի տարածաշրջանային ընտրությունների ժամանակ: Իսպանիայում համապետական ընտրությունների կողմից սկզբնավորված գործընթացը պետականությունը դրեց ավելի ամուր հիմքերի վրա: ԽՍՀՄ-ում և Հարավսլավիայում

լավիայում իրականացված տարածաշրջանային ընտրություններն արեցին հակառակը: «Հելսինկյան հանձնաժողովի» և ընտրությունները դիտարկող խմբերի զեկույցներից բերված հետևյալ մեջբերումները ցույց են տալիս, թե ինչ չափով տարածաշրջանային ընտրարշավների գործընթացները (համամիութենական ընտրություններ անցկացնելուն երբեք էլ չհակված խորհրդային բազմազգ պետության համատեքստում) դեր ունեցան պետության կազմալուծման մեջ: Դա տեղի ունեցավ կենտրոնի թուլացման և հանրապետություններում կառավարող ընտրանու կողմից անկախության և ինքնիշխանության պահանջների ուժեղացման ու անվանադիր ազգերի ազգայնամոլական զգացումները խթանելու պատճառով:

### Մոլդովա /Ընտրություններ, 25 փետրվարի, 1990թ./

«Ընտրարշավը ցուցադրեց հանրապետությունում իշխանության համար պայքար մղող բոլոր շարժումների համար Մոլդովայում նվազագույն պահանջ հանդիսացող ինքնիշխանության ծրագիր մշակելու անհրաժեշտությունը... Կարևոր չէ, թե Մոսկվան ուղղակիորեն գործ կունենա Ժողովրդական ճակատի կողմից վերահսկվող Գերագույն խորհրդի հե՞տ, թե՞ կգործի կուսակցության առաջին քարտուղար Լուչինսկու միջոցով. նա համարյա անմիջապես կբախվի հանրապետության ինքնիշխանության պահանջի բավարարման անհրաժեշտությանը»:<sup>36</sup>

### Ուկրաինա /Ընտրություններ, 18 մարտի, 1990թ./

«Ընդդիմադիր խմբերի ժողովրդավարական բլոկը, որը ձևավորվեց ընտրությունների ժամանակ պայքարելու համար, ընտրարշավը հաջողությամբ կառուցեց ընտրողների դժգոհությունների վրա՝ հաճախ ստիպելով կոմունիստական կուսակցության թեկնածուներին միանալ այդ բողոքին: Ընտրողների մեջ կարևորվում էին ավելի մեծ քաղաքական ինքնավարությունը և ազգային ու մշակութային հարցերը»:<sup>37</sup>

«Ուկրաիներեն լեզվի օգտագործման աճող պահանջը Ուկրաինական ԽՍՀ Գերագույն խորհրդի կարևոր հռչակագրի պատճառ դարձավ, որտեղ նշվում էր, որ 1990թ. հունվարի մեկից ուկրաիներենը համարվում է հանրապետության պետական լեզու, մինչդեռ ռուսերենը կօգտագործվի ազգային խմբերի միջև հաղորդակցության համար... Երկար ժամանակ ճնշված ազգային զգացումներն այժմ պարուրել են Ուկրաինայի բնակչությանը»:<sup>38</sup>

«Հավանական է, որ դեպի Ուկրաինայի՝ անկախացում տանող ինքնորոշման հարցում ավելի մեծ առաջընթաց կլինի»:<sup>39</sup>

36. "Elections in the Baltic States and the Soviet Republics" (compiled by the Staff of the Commission on Security and Cooperation in Europe, Washington, D.C., December 1990), էջ 89:

37. Նույն տեղում, էջ 115:

38. Նույն տեղում, էջ 119:

39. Նույն տեղում, էջ 135:

Վրաստան /Ընտրություններ, 28 հոկտեմբերի, 1990թ./

Մինչև ընտրությունների օրը բոլոր մրցակից կուսակցությունները՝ ներառյալ Վրաստանի կոմունիստական կուսակցությունը, պաշտպանում էին անկախությունը:<sup>40</sup> «Իր ազգայնական մանդատն ավելի ուժեղացնելու նպատակով Վրաստանի կոմունիստական կուսակցության ծրագրահենքը պահանջում է Վրաստանի տարածքային ամբողջականության երաշխիքներ, Վրաստանի քաղաքացիության ներմուծում՝ հայտարարելով, որ Վրաստանի քաղաքացիներն իրենց զինվորական ծառայությունը պետք է իրականացնեն հանրապետության ներսում»:<sup>41</sup>

Ընտրությունների ժամանակ անկախության և անվանադիր ազգայնական թեմաները սրեցին հարաբերությունները կենտրոնի հետ: Վրաստանում, ինչպես և այլ հանրապետություններում, ազգայնամոլության աճը վատացրեց հարաբերությունները հանրապետությունում փոքրամասնություն կազմող խմբերի հետ և քայքայեց ապագա ժողովրդավարացման հիմնական բաղադրիչը՝ բոլոր բնակիչների համար լիակատար քաղաքացիության իրավունք՝ անկախ էթնիկ պատկանելությունից: Ընտրությունների դիտորդների խումբը նշեց, որ Վրաստանում «հնարավոր հաղթող Գամախուրդիան շատ հայտարարություններ է արել, որոնք անհանգստություն են առաջացրել ոչ վրացի բնակչության շրջանում»:

Օրինակ, 1990թ. հունիսին նա խառնամուսնությունները կոչեց «վրացական ընտանիքների ու վրացերեն լեզվի համար ճակատագրական»:<sup>42</sup> «Անկախ Վրաստանում իրենց ազգային իրավունքների համար վախենալով՝ որոշ ոչ վրացի խմբեր փորձեցին պաշտպանել իրենց՝ համապատասխանաբար 1990թ. օգոստոսին և սեպտեմբերին Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունը և Հարավ-օսական Ինքնավար Մարզը հայտարարեցին իրենց ինքնիշխանության մասին»:<sup>43</sup>

ԽՍՀՄ-ում և Հարավսլավիայում տարածաշրջանային ընտրությունների արդյունքը, ազատ մրցակցային համամիութենական ժողովրդավարական ընտրությունների բացակայության պայմաններում նպաստեց պետությունը քայքայող հինգ փոխադակազմված և բարդ զարգացումների առաջացմանը: Առաջին. տարածաշրջանային ընտրությունների հենց հաջորդ օրը կենտրոնական իշխանության օրինականությունը կասկածի տակ դրվեց, որովհետև տարածաշրջանային ինքնիշխանության կողմնակից ուժերն ընտրությունների միջոցով ժողովրդավարական լեգիտիմություն ստանալու ավելի մեծ պահանջներ էին ներկայացնում:<sup>44</sup> Ոչ մի տեղ դա ավելի զգալի չէր, քան Ռուսաստանում:

40. Նույն տեղում, էջ 165:

41. Նույն տեղում, էջ 170:

42. Նույն տեղում, էջ 169:

43. Նույն տեղում, էջ. 165-166:

44. Պետութենականության քայքայման կարևոր ցուցիչ է գորակոչային տարիքի քաղաքացիների թվի կտրուկ նվազումը: 1990թ. վերջում Լատվիայում գորակոչի տոկոսը կազմում էր 39.5, Լիտվայում՝ 35.9, Հայաստանում՝ 22.5 և Վրաստանում՝ 18.5: Մինչև 1991թ. կեսերն այս թվերը նվազեցին մինչև 30.8%՝ Լատվիայում, 12.4%՝ Լիտվայում, 16.4%՝ Հայաստանում և 8.2%՝ Վրաստանում: Կարևոր է նշել, որ մինչև 1991թ. կեսերը հենց Մոսկվան վեց ամսվա կտրվածքով իր գորակոչը իրականացրել էր միայն կիսով չափ: *Stéu Steven Foye, "Student Deferments and Military Manpower Shortages", Report on the USSR (Aug. 2, 1991), 5-8:*

Ռուսաստանի հանրապետությունում կայացած ընտրությունները նոր, ժողովրդավարորեն օրինականացված հիմք ստեղծեցին Բորիս Ելցինի համար, որը 1990թ. մայիսին ընտրվեց Ռուսաստանի խորհրդարանի նախագահ: Հենվելով այդ հիմքի վրա՝ 1990թ. հունիսի 12-ին նա հրապարակեց Ռուսաստանի ինքնիշխանության մասին հռչակագիրը: 1991թ. հունիսին Ելցինը դարձավ Ռուսաստանի ուղղակիորեն ընտրված նախագահ: 1991թ. հուլիսին որպես նախագահ՝ իր առաջին հրամանագրով նա արգելեց կոմունիստական կուսակցության գործունեությունը ձեռնարկություններում: Քանի որ բացի աշխատատեղերում առաջնային կազմակերպություններից, կոմունիստական կուսակցությունն այլ կազմակերպություններ չուներ, այս կարգադրությունը հավասարազոր էր Ռուսաստանի կոմունիստական կուսակցությանը մահապատժի ենթարկելու: 1991թ. հեղաշրջման փորձն այդպիսով ոչ միայն 9 + 1 համաձայնագրի, այլ նաև այս հրամանագրի արդյունք էր:<sup>45</sup>

Երկրորդ. Խորհրդային Միության հանրապետություններից և ոչ մեկում որևէ մեծ, նոր համամիութենական քաղաքական կազմակերպության չհաջողվեց մրցակցել ընտրությունների ժամանակ որպես տեղական ազգայնամոլության արդյունավետ հակակշիռ՝ հաշվի առնելով այն փաստը, որ մինչև 1990թ. մարտին 6-րդ հողվածի վերացումը Խորհրդային Միության կոմունիստական կուսակցությունը միակ օրինական կուսակցությունն էր ԽՍՀՄ-ում: Հարավսլավիայում գոյություն ունեցող հանրապետություններում կայացած ընտրություններում նույնպես գերիշխում էին ոչ համամիութենական կուսակցություններն ու շարժումները:

Երրորդ. ընտրությունների ընթացքում քաղաքական ինքնությունները ԽՍՀՄ-ում և Հարավսլավիայում դարձան ավելի նեղ, բարդ, բացառող և հնարավոր համամիութենական ժողովրդավարական կազմավորմանը մասնակցելուն չաջակցող: Իսպանիայում ընտրական գործընթացներից առաջ և հետո քաղաքական ինքնությունները դարձան ավելի բազմաթիվ, միմյանց սահմանները հատող, ներառական և սատարող իսպանական վերաստեղծված ժողովրդավարական պետության գործերին:

Չորրորդ. շատ հանրապետություններում, ինչպես օրինակ՝ Վրաստանում, Ադրբեջանում, Սերբիայում և Խորվաթիայում, էթնիկ պատերազմների հեռանկարը նորընտիր նախագահներին ստիպեց ճնշել հենց իրենց էթնիկ խմբերում հնչող այլախոհ ձայները և ավելի մեծ անհանդուրժողականություն ցուցաբերել փոքրամասնություն կազմող խմբերի նկատմամբ:

Հինգերորդ. պետութենականության ճգնաժամը և դրանից բխող կառավարելիության ճգնաժամը խոչընդոտեցին տնտեսական քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը: Խորհրդային Միության և Հարավսլավիայի կենտրոնական կամ համակարգող իշխանության աղետալի քաղաքական անկումը նախորդեց տնտեսական ճգնաժամին և ավելի խորացրեց այն և ոչ թե՛ հակառակը:<sup>46</sup>

45. «Պետությունը» վեբերյան իմաստով անկում էր ապրում Խորհրդային Միությունում նույնիսկ 1991թ. օգոստոսյան ձախողված հեղաշրջումից առաջ, հեղաշրջում, որի դրդիչներից մեկը հանդիսացել էր կուսակցության, ՊԱԿ-ի և զինվորականության համամիութենական ուժերի ներսում որոշ տարրերի հուսահատ փորձը՝ կանխելու 9+1 պայմանագրի իրականացումը, ինչը ԽՍՀՄ-ի դե ֆակտո ապակենտրոնացմանը կարող էր տալ դե յուրե կարգավիճակ:

46. Հարավսլավիայում դաշնային վարչապետը՝ Անտե Մարկովիչը, վերահսկում էր համեմատա-

Եկեք ընտրությունների հաջորդականության հետևանքների մասին մեր քննարկումներն ավարտենք խորհրդային մի հասարակագետ-գիտնականի մարգարեական խոսքերով, որոնք նա գրել էր հեղաշրջման փորձից և խորհրդային պետության դե յուրե փլուզումից առաջ: Նա նկարագրում է, թե տարածաշրջանային ընտրություններն ինչ աստիճանի նշանակություն ունեցան պետության դե ֆակտո կազմաքանդման համար. «Տեղական ընտրությունները ներդրում ունեցան ազգայնամոլական շարժումների հոետորաբանության «քաղաքացիականից» «Էթնիկի» շեղման մեջ: ... «Օրենքների պատերազմներն» ու «ինքնիշխանությունների շքերթներն» անխուսափելիորեն հետևեցին հանրապետական և տեղական ընտրություններին ... Միության կենտրոնում չափազանց մեծ չափերի հասան իշխանության ճգնաժամն ու անկառավարելիության գործընթացը»:<sup>47</sup>

Մենք մանրամասն կանգ չենք առնի խորհրդային պետության «վերջնախաղի» վրա, քանի որ այն խորությամբ փաստագրվել է այլոց կողմից: Բավական է ասել, որ հանրապետություններում կայացած ընտրությունները հանգեցրեցին հայտնի «ինքնիշխանությունների շքերթի» և խորացրեցին «օրենքների պատերազմը»: Սա հանգեցրեց Միության համար նոր օրենք գտնելու ձգտմանը, որը հանրապետություններին ավելի մեծ իրավունքներ կտար: Գորբաչովը փորձեց ամրապնդել միությունը՝ 1991թ. մարտի 17-ին անցկացնելով հանրաքվե, որտեղ պետք էր պատասխանել հետևյալ հարցին. «Համարո՞ւմ եք արդյոք, որ անհրաժեշտ է պահպանել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը՝ որպես հավասար, ինքնիշխան հանրապետությունների նորացված դաշնություն, որտեղ լիովին կերաշխավորվեն ցանկացած ազգության յուրաքանչյուր անհատի իրավունքներն ու ազատությունները»: Քվեարկողների 76%-ն այս հարցին պատասխանեց «այո», այնպես որ Գորբաչովը դա համարեց հաղթանակ: Սակայն հանրաքվեի ամբողջական վերլուծությունն ավելի երկիմաստ և վնասակար արդյունքներ է բացահայտում: Միութենական 15 հանրապետություններից միայն երեքը (Բելառուս, Տաջիկստան և Թուրքմենիա) հանրաքվեն անցկացրեցին Գորբաչովի ցանկացած ձևով: Լիտվան, Լատվիան, Էստոնիան, Վրաստանը, Հայաստանն ու Մոլդովան բոլկոտեցին գորբաչովյան հանրաքվեն: Մնացած վեց հանրապետությունները, բացի գորբաչովյան հարցից, ավելացրեցին իրենց հարցը կամ հարցերը: Հանրապետությունների կողմից ձևակերպված հարցերի արդյունքները հանրապետությունների կողմից որոշումներ ընդունելուն տվեցին նորացված լեզիտիմություն: Օրինակ, Ռուսաստանում մտցված լրացուցիչ հարցն այն հաջողությամբ վերածեց Ռուսաստանում ուղղակի նախագահական ընտրություններ անցկացնելու վերաբերյալ հանրաքվեի: Ռուսաստանյան հարաքվեի այս հարցի դրական պատասխանը մեկ այլ կարևոր քայլ էր իշխանության այլընտրանքային

բար հաջող ընթացող կայունացման քաղաքականությունը և 1990 թ-ի առաջին կեսին սղաճի չափը քառանիշից կրճատեց մինչև երկնիշ թվի: Սակայն պետականության ճգնաժամի բռնկումից հետո մինչև 1993թ. սղաճի չափն անցավ տրիլիոնից: 1989թ. Ուկրաինան ուներ ՀՆԱ-ի 4.1 դրական աճ, սակայն պետականության ճգնաժամից հետո՝ 1991-94թթ., լավագույն արդյունքը 1991 թ-ի 12-ն էր: 1994թ. Ուկրաինայի ՀՆԱ-ի աճը կազմում էր 23: Ռուսաստանը, չնայած իր բոլոր խնդիրներին, 1990թ. շարունակում էր արձանագրել արդյունաբերական արտադրանքի անշեղ աճ: 1992 թ-ի համար այդ թիվը կազմում էր 18.8, 1994 թ-ի համար՝ 21: Տնտեսական այս տվյալների համար, տե՛ս Աղյուսակ 21.1:

47. Անդրանիկ Միհրանյան, «Վերակառուցման ռոմանտիկ փուլի վերջը» (Andranik Migranian, "The End of Perestroika's Romantic Stage" (Moscow, July 1991, unpublished manuscript, 7):

կենտրոն ստեղծելու ուղղությամբ՝ ընդդեմ Միության և Գորբաչովի: 1991թ. ապրիլի 23-ին պայմանագրի նախագիծը վերջապես ստորագրվեց Միության և ինը հանրապետությունների միջև: Սա իր հերթին պատճառ դարձավ զանազան դավադիր գործողությունների: Հեղաշրջման փորձը սկսվեց 1991թ. օգոստոսի 18-ին: Հեղաշրջման ձախողումը արմատապես արագացրեց ԽՍՀՄ-ի փլուզումը: ԽՍՀՄ-ը միասնական պահող բոլոր կարևոր կազմակերպություններն ու մեխանիզմները՝ ԽՍՀՄ-ի կոմունիստական կուսակցությունը, ՊԱԿ-ը, բանակը, ոստիկանությունը և նախագահի աշխատակազմը թուլացան: Հակառակ դրան՝ մեծապես ամրապնդվեցին Բորիս Ելցինի դիրքերը, որը լեգիտիմություն էր ձեռք բերել՝ հաղթելով 1991թ. հունիսին անցկացված ուղղակի նախագահական ընտրություններում, որն առաջնորդել էր հեղաշրջման դեմ մղված դիմադրությունը, և որը պայքարում էր Ռուսաստանն ավելի ինքնիշխան դարձնելու համար: 1991թ. դեկտեմբերի 25-ին կարմիր դրոշն իջեցվեց Կրեմլից: Պետության փլուզման այս գործընթացի արագությունն ու բնույթը բազմաթիվ ծանր հետևանքներ ունեցան:<sup>48</sup>

#### ԽՍՀՄ-ի ՓԼՈՒԶՈՒՄԸ. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՑՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՂՆՎԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին մասում մենք մանրամասն քննարկեցինք այն համաժամանակյա խնդիրները, որոնք ծառայել էին Եվրոպայի բոլոր նախկին կոմունիստական երկրների առջև: Բացի այդ խնդիրներից, ԽՍՀՄ-ում նախկինում գոյություն ունեցած տարածքային հիմք ունեցող էթնոդաշնայնությունն ու պետության փլուզման արագությունն ու ձևը ժողովրդավարությանն անցման և դրա կայացման համար առաջացրեցին լրացուցիչ ծանր խնդիրներ: Այդ խնդիրներից յուրաքանչյուրի վերլուծության մասին մեզնից ավելի քաջատեղյակ մասնագետները կարող են մի ամբողջ գիրք գրել: Սակայն էլնելով ժողովրդավարության տեսության և պրակտիկայի համեմատական վերլուծության հեռանկարից՝ եկեք հակիրճ կերպով նշենք այն երեք ընդհանուր խնդիրները, որոնց կարելի էր հանդիպել նախկին Խորհրդային Միությանը հաջորդած 15 պետություններում: Դրանք են՝ անկայության

48. Խորհրդային պետության վերջնական փլուզման մանրամասն վերլուծության համար, տե՛ս John B. Dunlop, *"The Rise of Russia and the Fall of the Soviet Empire"* (Princeton: Princeton University Press, 1993): Արժեքավոր փաստաթղթերի համար, տե՛ս Alexander Dallin and Gail W. Lapidus, eds., *"The Soviet System: From Crisis to Collapse"*, rev. ed. (Boulder, Colo.: Westview Press, 1995), հատկապես՝ մաս 7, *"From Coup to Collapse"*, էջ 565-647: Տե՛ս նաև Alexander Dallin, *"Causes of the Collapse of the USSR"*, *Post-Soviet Affairs* 8, no. 4 (1992), 279-302, Suny, *"Revenge of the Past"*, 145-54 և Graeme Gill, *"The Collapse of a Single Party System: The Disintegration of the Communist Party of the Soviet Union"* (Cambridge: Cambridge University Press, 1994), հատկապես՝ էջ 144-85: Իրականում բոլոր վերլուծություններն էլ շեշտում են, որ ձախողված հեղաշրջման փորձը երկրով մեկ ավելի թուլացրեց բոլոր պետական ինստիտուտները, որոնք ԽՍՀՄ-ը դեռ պահում էին միասնական: Գորբաչովյան հանրաքվեի արժեքավոր մանրամասների և այն մասին, թե ինչպես նոր իրավասություններ ստացած հանրապետական առաջնորդներն այն օգտագործեցին նրա դեմ, տե՛ս "Reports on the Referendum on the Future of the Soviet Union: March 17, 1991" գլուխը, *"Presidential Elections and Independence Referendums in the Baltic States, the Soviet Union and Successor States: A Compendium of Reports"*, 1991-1992, compiled by the Staff of the Commission on Security and Cooperation in Europe, Washington, D.C. (August 1992) գրքում, էջ 15-63: Գորբաչովի հարցի ձևակերպումը՝ էջ 20:

գերակայությունը ժողովրդավարացման նկատմամբ, կոլեկտիվ իրավունքների գերակայությունը անհատական իրավունքների նկատմամբ և տնտեսական վերակառուցման գերակայությունը պետական վերակառուցման նկատմամբ:

### Անկախության գերակայությունը ժողովրդավարացման նկատմամբ

Բոլոր այն հասարակարգերում, որոնք իրականացրել են ավարտված անցում ժողովրդավարությանը և հետագայում էլ կարողացել են ամրապնդել այն, սովորաբար ժողովրդավարական նպատակները ընդդիմության ձգտումների կարևոր մասն են կազմում այն ժամանակահատվածում, որը մենք *ազատականացում* ենք անվանում: Նաև ընդդիմադիր ուժերը իշխանության գալիս պետք է շարունակեն ժողովրդավարական գործընթացներ և ինստիտուտներ ստեղծել, որպեսզի ժողովրդավարությունը դառնա «միակ խաղը» նույնիսկ այն բազմաթիվ խմբերի համար, որոնք նախապես երկակի կամ ընդդիմադիր վերաբերմունք ունենին ժողովրդավարության նկատմամբ:

Խորհրդային Միությունում այն արագությունն ու ձևը, որով պետությունը փլուզվեց, կրճատեցին (կամ խոչընդոտեցին) ազատականացումը, անցման ուղուն տվեցին պլեբիսցիտային «ազգային-ազատագրական» հատկանիշներ և ժողովրդավարության ստեղծման գործընթացները համարյա թե հանեցին քաղաքականության նորմատիվային և ինստիտուցիոնալ օրակարգից: ԽՍՀՄ-ին հաջորդած 15 պետություններից մի քանիստում ազատականացման, առավել ևս՝ ժողովրդավարության գործընթացը գրեթե չէր սկսվել մինչև 1991թ. օգոստոսի ձախողված հեղաշրջումը, որն ի վերջո մինչև 1992թ. հունվարը նրանց անկախության բերեց: Շատ հանրապետություններում, նույնիսկ այնտեղ, որոնց առաջնորդները պաշտպանում էին հեղաշրջումը, ԽՍՀՄ-ում առաջացած խառնաշփոթը պաշտոնատար անձանց ստիպեց զբաղվել իշխանության նոր հիմքեր գտնելու տենդագին փնտրտուքով: Նախկին ԽՍՀՄ ակնավոր մարդաբան Անատոլի Խազանովն ակնառու կերպով պատկերել է այս երևույթը. «Եթե՛նիկ և տարածաշրջանային ընտրանին՝ լինել հինը, որ միայն փոխել էր իր գաղափարախոսական շապիկը, թե նոր ի հայտ եկածը, հաղթեց կենտրոնական կողմնորոշում ունեցող վերնախավին: Այս ընտրանին *անկախությունը* համարում էր իրենց պաշտոնի լավագույն երաշխիքը: Սակայն նրանք ազատական ժողովրդավարական սկզբունքների հանդեպ միայն կեղծ վերաբերմունք են ցուցաբերում և իրենց համար այն չեն համարում առաջնային»:<sup>49</sup>

Ռոնալդ Գրիգոր Մյունին նույնպես նշում է, թե ինչպես կազմաքանդման արագությունը ժողովրդավարական կառուցվածք ունեցող նոր կազմակերպություններին քաղաքական, սոցիալական կամ տնտեսական ներկայություն և մանավանդ իշխանություն ձեռք բերելու քիչ ժամանակ թողեց.

Հանրապետությունների մեծ մասում ազգայնականությունն ուղեկցվում էր տեղացի վերնախավի կողմից տեղական իշխանության համար մղվող հուսահատ պայքարով: Ուզբեկստանում, Տաջիկստանում, Թուրքմենիայում և Ադրբեջանում հին ընտրանին նոր ազգային հանդերձանք

49. Anatoly Khazanov, "The Collapse of the Soviet Union: Nationalism during Perestroika and Afterwards", Nationalities Papers 22, no. 1 (1994), 168: Ավելացված շեշտադրում:



հազավ իր իշխանությունը պահպանելու և ժողովրդավարական շարժումները ճնշելու համար: Նույնիսկ այնպիսի հարավային հանրապետություններում, ինչպիսիք են՝ Հայաստանը, Վրաստանը, Ղրղզստանը և ավելի պակաս չափով՝ Ղազախստանը, որտեղ ժողովրդականություն վայելող ժողովրդավարները կարողացան իշխանությունից գրկել կամ կրճատել կոմունիստների իշխանությունը, կլանային քաղաքականության խոր ենթակառուցվածքները մնացին անփոփոխ: Ուկրաինայում, Բելառուսում և նույնիսկ Ռուսաստանում նախկին կոմունիստները զբաղեցնում էին քաղաքական կարևոր պաշտոններ և իրենց ձեռքում ամուր պահում տնտեսական ուժային լծակները:<sup>50</sup>

Ջոնաթան Ավեսը (Jonathan Aves) Խորհրդային Միությանը հաջորդած պետությունների մասին իր վերլուծության մեջ հանգում է նմանատիպ եզրակացության.

Հանրապետական վերնախավերը կարողացան հարմարվել ազգայնական ծրագրերին ոչ միայն կենտրոնի վերահսկողությունից իրենք իրենց ազատելու, այլև *ենթադրյալ ժողովրդավարական շարժումներին խաբելու* համար: ... Այս գործընթացների դրամատիկ բնույթի, դրանց արագության ու չափի տեսանկյունից բազմաթիվ էին նրանց շարունակականության տարրերը ... Հաջորդած վարչակարգերից դեռ քչերն են նոր սահմանադրություն ընդունել և նոր երկրների բոլոր օրենսդիր մարմինները նախկին գերագույն խորհուրդների կրկնությունն են ... Կենտրոնական Ասիայի բոլոր հանրապետությունների նախագահները, բացառությամբ Ղրղզստանի նախագահ Ասկար Ականի, իրենց նախկին հանրապետական գերագույն խորհուրդների նախկին առաջին նախագահներն են:<sup>51</sup>

Կռվելտիվ իրավունքների գերակայությունն անհատական շահերի նկատմամբ

Ե՛վ տեսական, և՛ գործնական մակարդակներում կայացած ժողովրդավարությունները պետք է հարգեն անհատի իրավունքները: Որքան քաղաքացիության իրավունքների հասանելիությունը ներառական ու հավասար է, այնքան ժողովրդավարության որակն ավելի բարձր է: Երկրորդ գլխում մենք նշել ենք, որ մենք տարբերվում ենք իրավունքի մասին ազատական շատ տեսաբաններից, որոնք պնդում են, որ բոլոր իրավունքները պետք է լինեն անհատական և համընդհանուր: Մեզ թվում է, որ ոչ բոլոր իրավունքները պետք է անպայման լինեն համընդհանուր: Փոխհամաձայնողական ժողովրդավարության տեսությունն ու պրակտիկան իրականում կռվելտիվ իրավունքների որոշ ձևեր (օրինակ՝ լեզվական, կրթական կամ կրոնի իրավունքներ) վերապահում է խմբերին:<sup>52</sup> Սակայն ինչպես ժողովրդավարության բոլոր տեսաբանները, մենք նույնպես ընդունում ենք այն դրույթը,

50. Suny, "Revenge of the Past", 156: Ավելացված շեշտադրում:

51. Տե՛ս նրա "Assessing the Prospects of the New Soviet Successor States", Nationalities Papers 22, no. 1 (1994), 211, 212: Ավելացված շեշտադրում:

52. Խմբային իրավունքների ժողովրդավարական նորմերը չտոնահարող գործառույթների միավորող ձևի վերլուծության համար, տե՛ս, Arend Lijphart, "Consociational Democracy", World Politics 21 (1969), 44-59, and Kenneth D. McRae, ed., "Consociational Democracy: Political Accotnodation in Segmented Societies" (Toronto: McClelland and Stewart, 1974):

որ այդպիսի կոլեկտիվ իրավունքները, որոնք մեր կարծիքով՝ պետք է խելամիտ կերպով կիրառվեն որոշ բազմազգ և բազմամշակութային հասարակարգերում, *երբեք* չպետք է ոտնահարեն անհատական իրավունքները կամ ստեղծեն երկրորդ կարգի քաղաքացիների կատեգորիա:

Ինչպես արդեն փաստել ենք, Խորհրդային Միությունն աշխարհի առաջին դաշնային պետություններից էր, որը ստեղծված էր էթնոտարածքային հիմքի վրա: Նույնիսկ պետության փլուզումից առաջ ԽՍՀՄ-ում հաճախ լարվածություններ էին առաջանում հանրապետություններում «անվանադիր ազգերին» տրված կոլեկտիվ արտոնությունների պատճառով: Վիկտոր Զապլավսկին տալիս է այս լարումների համառոտ նկարագիրը.

Դաշնային քաղաքական-վարչական ողջ համակարգը ծառայում էր որպես մանրամասն մշակված էթնիկ անհավասարության կառույց: Այն էթնիկ խմբերը բաժանում էր ճանաչված տարածք և պետական կառուցվածքի աստիճանակարգության մեջ որոշակի կարգ ունեցող և այդպիսի տարածք չունեցող խմբերի: Առաջին տիպի խմբերը քառակարգ աստիճանակարգության մեջ էին դրվում, ինչը սահմանում էր էթնիկ իրավունքների ու արտոնությունների համապատասխան չափը: Ավելին, էթնիկ խմբերի տարածքների սահմանագծումը կատարվում էր կամայականորեն՝ հաճախ համաձայն «բաժանիր, որ տիրես» սկզբունքի, որը հաճախ հակասում էր պատմական ավանդույթներին և գոյություն ունեցող էթնոժողովրդագրական պայմաններին... Ներքին օգտագործման անձնագրերում ազգությունը գրանցելու և իրենց վարչական միավորների ներսում բնիկ ազգերին գերադասելի առավելություն տալու քաղաքականությունը բերեց բացասական արդյունքի ... Դրանք փոքրամասնությունների ուժեղ դժգոհությունը հարուցեցին... Շատ դեպքերում այն հանգեցրեց աշխատանքի էթնիկ բաժանման պայթյունավտանգ իրավիճակի... Իրադրությունը հատկապես լարվեց այն հանրապետություններում, որտեղ անվանադիր ազգերը վերածվել էին քանակական փոքրամասնությունների:<sup>53</sup>

Ակնհայտ է, որ նույնիսկ ամենազգույշ ժողովրդավարական քաղաքական հմտությունների պարագայում դժվար կլինեք հաղթահարել պետության կողմից ձևավորված և պետության կողմից թույլատրված այս անհավասարության ժառանգությունը: Սակայն, ինչպես տեսանք, այն իրավիճակում, երբ անվանադիր արտոնյալ ազգերին անկախություն տալը գերադասվում էր ժողովրդավարությունից, Խորհրդային Միությանը հաջորդած պետությունների առաջնորդների մեծ մասի համար անկախությունը նշանակում էր իրենց «անվանադիր» ազգերի կոլեկտիվ իրավունքների խորացում, համակարգում և իրականացում:

Ռուսաստանում վերը նշված խնդիրը սրվեց, որովհետև Ելցինը Գորբաչովի և խորհրդային կենտրոնի հետ մղած իր պայքարում Ռուսաստանի ինքնավար հանրապետությունների տեղական անվանադիր վերնախավին հաճախ ասում էր՝ «վերցրեք այնքան ինքնիշ-

53. Ian Bremmer and Ray Taras, eds., *"Nations and Politics in the Soviet Successor States"* (Cambridge: Cambridge University Press, 1993) գրքում՝ Victor Zaslavsky, *"Success and Collapse: Traditional Soviet Nationality Policy"*, էջ 35.39:

խանութուն, որքան կարող եք մարսել»:<sup>54</sup> Այսպիսով, Ռուսաստանի հանրապետության ինքնիշխանության հռչակումից ամիսներ անց «Ռուսաստանի Դաշնության ինքնավար հանրապետություններից յուրաքանչյուրը» հետևեց այս կոչին:<sup>55</sup> Ռուսաստանում իրավիճակն ավելի բարդացրեց այն հանգամանքը, որ էթնիկ հիմքերով «քսանմեկ հանրապետություններից միայն հինգում էին անվանադիր ազգերը մեծամասնություն կազմում»:<sup>56</sup> Գորբաչով-Ելցին պայքարը երկու կողմ ուներ: Մեկը՝ Ռուսաստանի ինքնիշխանության հռչակագրի ընդունումը պնդելու միջոցով միությունը քանդելու Ելցինի ջանքերն էին: Մյուս կողմից Գորբաչովը թուլացնում էր Ելցինին Ռուսաստանի ինքնավարությունների (ոչ ռուսական) ղեկավարներին (որոնք հաճախ շատ պահպանողական կոմունիստներ էին)՝ հորդորելով նոր միութենական պայմանագրի կապակցությամբ բանակցել ուղղակիորեն իր՝ Գորբաչովի հետ: Փաստորեն Գորբաչովը պնդում էր, որ Ռուսաստանի ինքնավար մարզերը լինեն նոր միութենական պայմանագրի կողմ: Ելցինն առարկում էր Գորբաչովին այն հիմքով, որ դա Ռուսաստանի Դաշնության հիմքերը խարխլելու փորձ է: Ինքնավար մարզերին արած Ելցինի՝ «վերցրեք այնքան ինքնավարություն, որքան կարող եք մարսել» հայտնի հայտարարությունը պետք է դիտարկել այս համատեքստում:

Յան Բրեմերը (Ian Bremmer) պնդում է, որ ամբողջ Խորհրդային Միությունում անկախությունը եկավ որպես «ազգայնականությունը *ազատագրման* տեղ ներկայացնելու» և «անկախությունն իրենց համար հայտարարելու» խմբերի ցանկության դրսևորում:<sup>57</sup> Նա շարունակում է պնդել, որ «անվանադիր ազգերի և ավելի ցածր կարգի անվանադիր կամ ոչ անվանադիր ազգերի միջև եղած հարաբերությունները *գերիշխանության* հարաբերություններ են ... Առաջին կարգի անվանադիր ազգերը կենտրոնի հետ գործ ունենալիս կարող են ազատագրման կոչերը շահարկել և միաժամանակ հրաժարվել նման կոչերից, երբ նրանք ստիպված են դա անել իրենց սահմանների ներսում ապրող ավելի ցածր կարգի անվանադիր ազգերի կամ ոչ անվանադիր ազգերի հարկադրանքով»:<sup>58</sup>

Այս իրավիճակը հատկապես Ռուսաստանում առաջ է բերում ոչ անվանադիր ազգերի կողմից երկու տիպի գործողություններ, որոնք խնդիրներ են առաջացնում պետականության և/կամ ժողովրդավարացման համար: Ոչ անվանադիր ազգերը ցանկանում են անջատվել և իրենց սեփական անվանադիր շրջանները ստեղծել: Կամ էլ նրանք գաղտնի համաձայնության են գալիս կենտրոնի հետ՝ անվանադիր ազգերի վրա ոչ ժողովրդավարական, ուղղակի վարչական կառավարում սահմանելու մասին:<sup>59</sup>

Անհատական իրավունքների նկատմամբ կոլեկտիվ իրավունքների գերակայության այս խնդիրն ավելի է բարդանում, երբ հաշվի ենք առնում այն փաստը, որ Անկախ պետությունների համագործակցությունում (ԱՊՀ) վաթսուն միլիոն մարդ ապրում է իրենց

54. Skéu Gail W. Lapidus, ed., "The New Russia: Troubled Transformation" (Boulder, Colo.: Westview Press, 1995) գրքում՝ Gail W. Lapidus and Edward W. Walker, "Nationalism, Regionalism and Federalism: Center-Periphery Relations in Post-Communist Russia", էջ 83:

55. Նույն տեղում:

56. Նույն տեղում, էջ. 87:

57. Ian Bremmer, "Reassessing Soviet Nationalities Theory", in Bremmer and Taras, "Nations in Soviet Successor States", 15: Շեշտադրումը՝ բնագրում:

58. Նույն տեղում, էջ. 16-17:

59. Նույն տեղում, տե՛ս «գերիշխանության» և «գաղտնի պայմանավորվածության» այս հարաբերությունների փայլուն ձևական մոդելավորումը՝ բազմաթիվ էմպիրիկ հղումներով, էջ 11-21:

ազգային պետության կամ իրենց անվանադիր ազգային շրջաններից դուրս: Իսկապես, խորհրդային պետության փլուզումից հետո քսանհինգ միլիոն ռուսներ ապրում էին Ռուսաստանից դուրս:<sup>60</sup> Այս նոր իրավիճակը հաջորդած պետություններում դժվարություններ առաջացրեց թեկնածու ազգային պետությունների վերնախավի, այդ պետություններում ապրող փոքրամասնությունների և այդ փոքրամասնությունների հայրենիք հանդիսացող պետությունների միջև եղած եռակողմ հարաբերություններում:<sup>61</sup> Ազգամիջյան այս լարվածություններն իրենց հերթին նոր վտանգներ ծնեցին ապագա փոխհամաձայնողական ժողովրդավարություն ստեղծողների համար, քանի որ դա պարարտ հող էր տրամադրում «արտասահմանում գտնվող իրենց հայրենակիցներին չպաշտպանելու» պատճառով պետությունը ապալեգիտիմացնելու գործում ազգայնամուլների կամ պետության ներսում ավտորիտար ղեկավարման այն կողմնակիցների համար, ովքեր չէին ցանկանում «հինգերորդ շարապուն» ներկայացնող օտարներին հավասար քաղաքացիական իրավունքներ տալ:<sup>62</sup>

### Ժողովրդավարական պետության վերակառուցման նկատմամբ տնտեսական վերակառուցման գերակայությունը (Ռուսաստանի օրինակը)

Ժողովրդավարության կայացման համար վճռական նշանակություն ունի օրենքների հստակ աստիճանակարգություն, հավելյալ արժեքներ ստանալու կարողություն և նոր ժողովրդավարական կառավարման քաղաքականություն իրականացնելու ունակ ուժեղ պետություն ունենալը: Իսկապես, քաղաքացիության ժողովրդավարական իրավունքներից շատերը կարելի է ձեռք բերել միայն, եթե կա ներդաշնակ պետություն, գործուն օրենքի գերակայություն և պետական գործունակ ապարատ: Նույնիսկ շուկայական կողմնորոշում ունեցող սխեմաները, ինչպես օրինակ՝ մասնավորեցումը, ավելի արդյունավետ են, եթե դրանք իրականացվում են պետության կողմից, որը կարող է սահմանել և ներդնել կարգավորման հստակ մեխանիզմներ, որպեսզի հնարավոր լինի օրենքի վրա հիմնված տնտեսական հասարակություն ստեղծելը:<sup>63</sup> Եթե այս հնարավորությունները գոյություն չունեն, ապա դրանք պետք է ստեղծվեն ժողովրդավարական նոր ուժերի կողմից, հակառակ դեպքում ժողովրդավարությունը չի կարող կայանալ: Այդ պատճառով էլ մենք

60. Sk' u Khazanov, "Collapse of the Soviet Union", 171:

61. Sk' u Rogers Brubaker, "National Minorities, Nationalizing States, and External Homelands in the New Europe", Daedalus (Spring 1995) գրքում, էջ 107-32: Մենք այսպիսի եռակողմ հարաբերությունները կքննարկենք մեր հաջորդ գլխում, որտեղ քննության են առնվում էստոնիայում և Լատվիայում ռուսական քաղաքացիության խնդիրները:

62. Ենթադրյալ ժողովրդավարներն այս երկու պահանջներից պաշտպանվում են: Ազգայնամուլական պահանջներին ի պատասխան՝ Ռուսաստանը Հայաստանում, Վրաստանում, Ղրղզստանում և Տաջիկստանում ունի զինվորական ստորաբաժանումներ, որոնք վերահսկում են ԱՊՀ-ի «արտաքին սահմանները», և փորձում է բանակցությունների միջոցով նման վերահսկողություն սահմանել Ադրբեջանում, Ուզբեկստանում և Թուրքմենիայում: Ռուսաստանը նաև առաջարկել է իր այդ գորքերի ինտեգրում Ուկրաինայի, Բելառուսի և Ղազախստանի սահմանապահ գորքերի հետ: Այս տեղեկատվությունը ձեռք է բերվել Eric Schmelling, "The Near Abroad: Being Too Close" (Central European University, Budapest, January 1995, unpublished paper), հիմնված ռադիո «Ազատ Եվրոպա»/«Ազատություն» ռադիոկայանի ամենօրյա հաղորդման վրա, 15 նոյեմբերի, 1994թ. և 2 դեկտեմբերի, 1994թ.:

63. Այս բոլոր փաստարկները զարգացվել են առաջին մասում:

պնդում ենք, որ ժողովրդավարացումը հաճախ պետք է սկսվի պետության քաղաքական վերակառուցումից՝ դրան նոր, փոխհամաձայնեցված և սահմանադրական հիմնավորվածություն ունեցող ուժով օժտելու համար: Դա հատկապես կարևոր է այնտեղ, որտեղ գոյություն ունի պետութենականության խնդիր, ինչպես մենք ցույց ենք տվել Իսպանիայի վերլուծության ժամանակ: Համապետական ընտրությունները և փոխհամաձայնական սահմանադրության ստեղծումը լեզիտիմ պետական իշխանություն ձևավորելու ձևերից են: Այսպիսի իշխանությունը հետագայում կարող է իր վրա վերցնել դաշնային հարաբերությունների կամ տնտեսության վերակառուցման պատասխանատվությունը:

Դաշնության ներսում եղած ուղղահայաց հարաբերությունների ոլորտում, ինչպես տեսանք, նախքան ներդաշնակ ժողովրդավարական հասարակարգի վերածվելը Ռուսաստանի դեմ ծառայան արտակարգ խնդիրներ, որոնց պետք է անդրադառնալ: Հետկուսակցական պետության համատեքստում շատ սպասված տնտեսական վերակառուցման իրականացումը պահանջում էր նաև ժողովրդավարական իշխանության նոր ձևերի ստեղծում: Կառավարման հին կառույցները և ԽՍՀՄ-ի փլուզման ձևի համադրությունը Ռուսաստանում պետությանը հատկապես դարձրեցին գործադիրի և օրենսդիրի միջև իշխանության հորիզոնական հակամարտություններին ենթակա: Ավելին, բրեժնևյան ժամանակաշրջանի գործող սահմանադրությունը քիչ հնարավորություններ էր ընձեռում իշխանության վերաբերյալ օրենսդիր-գործադիր բանավեճի հետևանքով ծագած հակամարտությունները լուծելու: Օրինակ, սահմանադրությունը դատական համակարգին նշանակալի դերակատարում չէր հատկացնում: Ինչպես և Չեխոսլովակիայում, ժողովրդավարական կառավարության ծրագրահենքի բացակայությունը խնդիր չէր, քանի դեռ կուսակցություն-պետությունն էր կառավարում: Սակայն Ռուսաստանում ավելի շատ ժողովրդավարական պայմանների դեպքում կառավարման ժողովրդավարական գործընթացների բացակայությունը բերեց ներպետական փակուղու և հանգեցրեց իշխանության թուլացման:

Մեր կարծիքով՝ այս հանգամանքներում առաջնահերթ խնդիրը պետք է լիներ պետության ժողովրդավարական վերակառուցումը ժողովրդավարական իշխանության կառույցներ ստեղծելու համար: Իրականում ո՞րն էր առաջնահերթ խնդիրը:

Բորիս Ելցինը Ժողովրդական պատգամավորների համագումարին և Ռուսաստանի քաղաքացիներին ուղղված իր առաջին կարևոր քաղաքական ուղերձը հղեց հեղաշրջումից հետո՝ 1991թ. հոկտեմբերի 28-ին: Նա համագումարին և ժողովրդին ասաց, որ «ներկա ժամանակաշրջանը Ռուսաստանի պատմության ամենաճակատագրական պահերից մեկն է: Հիմա է, որ վճռվում է գալիք տարիների և տասնամյակների ընթացքում Ռուսաստանի և ամբողջ երկրի ապագայի հարցը: Մենք պետք է անդառնալիորեն բռնենք մինչև վերջ գնացող բարեփոխումների ուղին, որտեղ անհրաժեշտ կլինի բնակչության բոլոր շերտերի աջակցությունը: Եկել է գլխավոր որոշումն ընդունելու և գործելու ժամանակը»:<sup>64</sup>

64. Տե՛ս Բորիս Ելցին, «Ելույթ՝ ուղղված ՌՍՖՍՀ ժողովրդական պատգամավորների համագումարին և Ռուսաստանի քաղաքացիներին, 28 հոկտեմբերի, 1991թ.» (Boris Yeltsin, "Speech to the RSFSR Congress of the People's Deputies and to the Citizens of Russia", October 28, 1991), Dallin and Lapidus, eds., "The Soviet System" գրքում, էջ 632:

Մինչև այստեղ մենք համաձայն ենք, և Ելցինի ուղերձը համագումարին և ժողովրդին նման է Ադոլֆո Սուարեսի (Adolfo Suárez) Կորտեսին և քաղաքացիներին ուղղված ուղերձին, որը մենք երկար վերլուծել ենք Իսպանիային նվիրված գլխում: Սակայն Ելցինի առաջարկած առաջնային միջոցառումներն արմատապես տարբերվում էին Սուարեսի առաջարկություններից, որն առաջին հերթին շեշտը դնում էր քաղաքականության և պետության ժողովրդավարական վերակառուցման վրա: Հակառակ դրան՝ Բորիս Ելցինի համար «ամենակարևոր ու ամենավճռորոշ գործողությունները պետք է տեղի ունենային տնտեսության բնագավառում: Առաջին ոլորտը տնտեսության կայունացումն է ... Երկրորդ բնագավառը մասնավորեցումն է և հզոր մասնավոր հատված ունեցող առողջ, խառը տնտեսության ստեղծումը»:<sup>65</sup>

Իր ելույթի վերջում Ելցինը գրեթե հպանցիկ նշեց կառավարման կառույցները:

Ժամանակը եկել է՝ պարզ ու հստակ ասելու, որ Ռուսաստանում կա իշխանության մեկ աղբյուր՝ Ռուսաստանի Հանրապետության համագումարը և Գերագույն խորհուրդը, Ռուսաստանի Հանրապետության կառավարությունն ու Ռուսաստանի Հանրապետության նախագահը: Ընթացքի մեջ է իշխանության ինստիտուտները ԽՍՀՄ-ի կրնկի տակից հանելու դինամիկ գործընթացը: Մենք չենք վախենում ոչ ժողովրդավարական կոչվելուց, և այս առումով մենք կլինենք վճռական ... Բարեփոխումների իրականացման բեռն ընկած է Ռուսաստանի կառավարության վրա: Այս բեռը չափազանց ծանր է կառավարության ներկայիս տեսքի և հսկայական կառուցվածքի համար: Այն կարող է տանել միայն ժողովրդի վստահությունը վայելող կառավարությունը, այնպիսի կառավարությունը, որին մարդիկ կվստահեն, այն կառավարությունը, որը կհամոզի ժողովրդին, որ իր գործողությունները ճիշտ են:<sup>66</sup>

Կարևորն այն է, որ Ելցինը բացարձակապես ոչինչ չասաց այն մասին, թե ինչպես պետք է ստեղծել այդպիսի կառավարություն: Նա չնշեց նորանկախ պետության համար նոր ընտրություններ անցկացնելու մասին: Նա չնշեց նորընտիր խորհրդարանի կողմից նոր ժողովրդավարական սահմանադրություն ստեղծելու հնարավորության մասին, որը ժողովրդավարական իշխանության գործունեության շրջանակներ կստեղծեր:

1991թ. հոկտեմբերին Ելցինը դեռ մեծ ուժ և հեղինակություն ուներ: 1991թ. նա ընտրվել էր ժողովրդավարական ընտրությունների արդյունքով: 1991թ. նա առաջնորդել էր հեղաշրջման դեմ մղված դիմադրությունը: Շուտով նա Ռուսաստանն առաջնորդելու էր դեպի լիակատար անկախություն: Այս համատեքստում (հակառակ այն փաստին, որ խորհրդարանի սովոր մեծամասնությունն ընտրվել էր կոմունիստական կուսակցության աջակցությամբ) ժողովրդական պատգամավորների համագումարի պատվիրակների ճնշող մեծամասնությունը՝ 876-ը 16-ի դեմ, քվեարկեց նախագահ Ելցինի «շունդալից» ազատ շուկայական բարեփոխումների, նրա առաջին և երկրորդ գերակայությունների օգտին:<sup>67</sup> 1991թ. նոյեմբերին այս նույն, խորհրդային ժամանակաշրջանի համագումարը

65. Նույն տեղում:

66. Նույն տեղում, էջ. 636-637:

67. Քվեն տրվեց Ելցինի կողմից համագումարին և քաղաքացիներին դիմելուց մեկ շաբաթ անց: Քվեի շուրջ ստեղծված մթնոլորտի համար, տե՛ս Dunlop, "Rise of Russia and Fall of Soviet Empire", 265:

քվեարկեց Ելցինին մեկ տարով հրամանագրերով կառավարելու արտոնություն տալու օգտին՝ տնտեսական այդ բարեփոխումներն իրականացնելու համար:

Մեր կարծիքով՝ Ելցինի կողմից տնտեսական վերակառուցմանը ժողովրդավարական պետության վերակառուցման հանդեպ առավելություն տալը թուլացրեց պետությունը, ժողովրդավարությունը, ինչպես և՛ տնտեսությունը: Ժամանակը վճռական նշանակություն ունի քաղաքական բոլոր, հատկապես՝ ժողովրդավարացման գործընթացների համար: 1991թ. ճակատագրական աշնանը Ելցինն ու իր հիմնական խորհրդատուները փորձեցին ստեղծել տնտեսական ծրագիր և դրա արժանիքները ներկայացնել խորհրդարանին ու ժողովրդին: Կարծում ենք, որ նա դրանից առաջ պետք է ջանքեր գործադրեր իր կուսակցության հիմքերն ամրացնելու համար և, ինչպես Սուարեսն Իսպանիայում, համոզեր հին վարչակարգի օրոք ստեղծված խորհրդարանին անցկացնել արտահերթ, ազատ ընտրություններ: Ոչ մի նման բան չարվեց: Եկեք մանրամասն մեջբերենք մի խորաթափանց ականատեսի նկատառումները:

[Ելցինը] և իր խորհրդատուները որոշեցին չիրականացնել արմատական քաղաքական բարեփոխումներ, այլ փոխարենը հույսը դրեցին Ելցինի անձնական խարիզմայի և հեղինակության վրա՝ պետության կողմից տնտեսական փոխակերպումների ծրագիրն իրագործելու համար ... Ավելի զարմանալի է դիտարկել այն որոշումներն ու գործողությունները, որ Ելցինը չկատարեց: Նա չստիպեց ընդունել նոր սահմանադրություն ... Նոր վարչակարգը քիչ բան արեց հասարակության մեջ ժողովրդական աջակցությունն ինստիտուցիոնալացնելու համար: Ելցինը չստեղծեց քաղաքական կուսակցություն և ոչ էլ անցկացրեց ընտրություններ կուսակցությունների ստեղծումը խթանելու համար: Փոխարենը, չնայած ժողովրդավարական Ռուսաստանի շարունակաբար հնչեցրած կոչերին, նա հրաժարվեց 1991թ. աշնանը նոր ընտրություններ անցկացնել:<sup>68</sup>

Հարկավոր է կատարել ավելի շատ հետազոտություններ, և պատմական «եթե»-ները երբեք էլ հաստատ չեն: Սակայն եթե Ելցինը հեղաշրջման դեմ տարած իր հաղթանակի տրամադրությամբ այդ հաղթանակի միջոցով ձեռք բերած խարիզմատիկ կեցվածքով ու հեղինակությամբ 1991թ. սեպտեմբերին հայտարարեր, որ ասենք՝ 1991թ. դեկտեմբերին նոր խորհրդարանական և նախագահական ընտրություններ պետք է անցկացվեն, ապա բավական վստահությամբ կարելի է պնդել, որ նա Ռուսաստանի խորհրդարանին կկարողանար համոզել իր առաջարկությանը միանալու: Դա կարող էր պահանջել քաղաքական ակտիվություն, հնարքներ, կոալիցիաների ստեղծում, ինչպես նաև հղումներ հասարակական կարծիքին: 1991թ. հոկտեմբերին Ելցինի վարկանիշը դեռևս 61% էր (հուլիսի 71%-ի փոխարեն): 1991թ. սեպտեմբերին ու հոկտեմբերին իր նախաձեռնությանը միանա-

68. Տե՛ս Մայքլ ՄըքՖոլի (Michael McFaul) *"State Power, Institutional Change, and the Politics of Privatization in Russia"*, World Politics 47, no. 2 (1995), 226, գերազանց հոդվածը: 1991 թ-ի հոկտեմբերին ՄըքՖոլը Մոսկվայում էր և հարցազրույցներ է վերցրել «Ժողովրդավարական Ռուսաստանի» շատ առաջնորդներից: Ռուսական սոցիոլոգի նման քննադատության համար, տե՛ս Lilia Shevtsova, *"Russia's Post-Communist Politics: Revolution or Continuity?"* in Lapidus, ed., *"The New Russia"*, 5-37, հատկապես՝ էջ 8-10: Տե՛ս նաև Timothy J. Colton and Robert C. Tucker, eds., *"Patterns in Post-Soviet Leadership"* (Boulder: Westview Press, 1995) 49-74, գրքում Տիմոթի Ք. Փոուլթոնի *"Boris Yeltsin, Russia's All-Thumbs Democrat"* հոդվածի *"The political mismanagement of economic reform"* համոզիչ բաժինը, հատկապես՝ էջ 60-65:

լու համար խորհրդարանին համոզելու նրա կարողությունը դեռ շատ բարձր էր, ինչպես ցույց է տալիս նրա կողմից առաջ քաշված տնտեսական ծրագրին խորհրդային դարաշրջանի այս մարմնի կողմից տրված հսկայական քվեն:<sup>69</sup> Ունենալով Ելցինի 1991թ. հունիսին նախագահական հաղթական կամպանիայի ժամանակ «Ժողովրդավարական Ռուսաստանի» ձեռք բերած փորձը, Ելցինը՝ որպես «Ժողովրդավարական Ռուսաստանի» գործող առաջնորդ, տարբեր ուժեր միավորելով կոալիցիայի մեջ և իրեն պաշտպանող քաղաքական գործիք ստեղծելով, կարող էր ընտրություններում հասնել հաջողության:<sup>70</sup> Կուսակցությունից վեր կանգնած նախագահի կերպարն անհնար էր դարձնում նման քաղաքական ռազմավարության հնարավորությունը, սակայն *եթե* նա հավատարիմ մնար այդ ռազմավարությանը և *եթե* ընտրությունները տեղի ունենային 1991թ. դեկտեմբերին, ապա նոր լեգիտիմություն ստացած անկախ դարաշրջանի ռուսական խորհրդարանը կարող էր քվեարկել տնտեսական ծրագրի օգտին և խորհրդային դարաշրջանի սահմանադրությունն ամբողջովին փոփոխելուց առաջ կատարել մի քանի արագ, սակայն փոխհամաձայնեցված սահմանադրական լրացումներ: Այս նոր խորհրդարանը կարող էր կառավարությանը տալ քաղաքական, տնտեսական և սոցիալական բարեփոխումներ իրականացնելու սահմանադրական հիմքեր: Կարող էին լինել որոշ կարճաժամկետ ոչ ցանկալի հետևանքներ: Հնարավոր է, որ տնտեսական այս «շոնդալից» բարեփոխումների կիրառումը հետաձգվեր մի քանի ամսով: Սակայն երկարաժամկետ ձեռքբերումները կլինեին հիմնավոր:

Բորիս Ելցինն իր «Պայքար Ռուսաստանի համար» գրքում հետադարձ հայացք գցելով՝ կարծում է, որ նա բաց է թողել հնարավորությունը: «Ես կարծում եմ, որ հեղաշրջումից հետո բաց թողնված ամենակարևոր հնարավորությունը խորհրդարանական համակարգի վերակառուցման հնարավորությունն էր: Բայց ես մի ներքին կասկած ունեմ, որ հասարակությունը կարող էր պատրաստ չլինել նոր օրենսդիր մարմնի համար արժանի թեկնածուներ առաջադրելուն: Խորհրդարանը լուծարելու և նոր ընտրությունների (ինչպես

69. Պատմական «եթե»-ների վերլուծության համար, տե՛ս James D. Fearon, "Counterfactuals and Hypothesis Testing in Political Science", *World Politics* 43 (Jan. 1991), 169-95: Հուլիսին և հոկտեմբերին Ելցինի հասարակական բարձր վարկանիշի համար, տե՛ս Amin Saikal and William Maley, eds., "Russia in Search of Its Future" (Cambridge: Cambridge University Press, 1995), գրքում Արչի Բրաունի (Archie Braun) "Political Leadership in Post-Communist Russia", էջ 36: Բրաունը նաև պնդում է, որ Ելցինը «պետք է լուրջ ջանքեր գործադրեր նոր սահմանադրության ընդունման և նոր ընտրությունների՝ արդեն համաձայնեցված ամսաթվի՝ ողորդությամբ 1991 թ-ի վերջին կամ 1992 թ-ի սկիզբին, երբ նրա ժողովրդականության վարկանիշը դեռ այնքան բարձր էր, որ նա կարող էր համոզել ժողովրդական պատգամավորների համագումարին քվեարկել իրենց իսկ լուծարման օգտին» (էջ 33):

70. ՄըքՖոլը (McFaul) պնդում է, որ «Ժողովրդավարական Ռուսաստանի» կողմից անցկացված հարցումը ցույց տվեց, որ Ելցինի աջակցությամբ կազմակերպությունը ժողովրդական պատգամավորների համագումարում կկազմեր մեծամասնություն: Այն ժամանակ «Ժողովրդավարական Ռուսաստանը» համազգային կարգավիճակ ունեցող միակ օրինական կուսակցությունը կամ սոցիալական շարժումն էր: Հենց նոր՝ 1991 թ-ի հունիսին, ընտրություններում Ելցինի հաղթանակը կազմակերպած լինելով և ապա՝ օգոստոսին առաջնորդելով հեղաշրջման դեմ դիմադրությունը՝ «Ժողովրդավարական Ռուսաստանի» առաջնորդները վստահ էին իրենց հաղթանակում: Տե՛ս McFaul, "State Power, Institutional Change, and Privatization", 226: Շեցովան փաստում է, որ 1991 թ-ի աշնանը «տվյալ ժամանակահատվածի միակ ազդեցիկ քաղաքական շարժումը «Ժողովրդավարական Ռուսաստանն» էր՝ զանգվածների վրա հենված շարժում, որը 1990թ. և 1991թ. օգնել էր Ելցինին գալու իշխանության»: Shevtsova, "Russia's Post-Communist Politics", 18:



նաև նոր երկրի համար նոր սահմանադրության) գաղափարը թևածում էր օդում, սակայն մենք չօգտվեցինք դրանից»<sup>71</sup> Ելցինի հուշերը բացահայտումներ են կատարում հատկապես երկու՝ իրար հետ փոխկապակցված առումներով: Առաջին. Ելցինն իրականում չի նշում այն հնարավորությունը, որ նա կարող էր նպաստել, որ «Ժողովրդավարական Ռուսաստանը» (կամ որևէ այլ քաղաքական կուսակցություն) դառնար ժողովրդավարական փոփոխություններ կատարելու հզոր գործիք: Ժողովրդավարական կուսակցությունները չէին մտնում նրա ճանաչողական կամ բարեփոխումների աշխարհընկալման մեջ: Երկրորդ. ինչպես պարզ է դառնում վերը բերված մեջբերումից, Ելցինը չէր ցանկանում օգտագործել ընտրությունների հնարավորությունը: Սակայն, ինչպես պնդում են Ադամ Պրժևորսկին (Adam Przeworski) և ժողովրդավարության այլ տեսաբաններ, ժողովրդավարության կառուցումը մի գործընթաց է, որտեղ քաղաքական առաջնորդները պետք է ընդունեն ընտրությունների անորոշության ռիսկը: Ժողովրդավար քաղաքական գործիչների և կուսակցությունների խնդիրն է քարոզարշավների ու կառուցիվներ ստեղծելու միջոցով ընտրողներին համոզել՝ աջակցել իրենց ծրագրերին: Սակայն Ելցինի՝ նախագահին կուսակցություններից վեր դասելու և ոչ թե կուսակցական առաջնորդ լինելու հայեցակարգը և կառավարման նրա ոճը կոճվարացնեին այդ ուղղությամբ գործադրվող ջանքերը:

Ժողովրդավարական պետական իշխանության սահմանադրական վերակառուցման բացակայության պայմաններում խորհրդային դարաշրջանի օրենսդիր մարմինը և շուկայամետ, հակախորհրդային գործադիր մարմինը մտան մահացու պայքարի մեջ: Այս պայքարը սաստկանում և թուլանում էր, սակայն երբեք չէր դադարում, մինչև որ 1993թ. հոկտեմբերին Ելցինը զինված ուժերն օգտագործեց իր իշխանությունն ամրապնդելու համար: Իշխանության համար մղված այս պայքարը վնասեց հենց այն տնտեսական բարեփոխումներին, հանուն որոնց պետության ժողովրդավարական վերակառուցումը հետաձգվել էր: Խորհրդային դարաշրջանի համագումարը, որի հետ Ելցինը որոշել էր գոյակցել, ուներ իր որոշակի տնտեսական և պետական շահերը, որոնք հստակորեն տարբերվում էին Ելցինի կառավարության «շոնդալից» բարեփոխիչների որդեգրած ուղուց: Փաստորեն, Գայդարի ծրագրին ժողովրդական պատգամավորների հինգերորդ համագումարում ճնշող մեծամասնությամբ հավանություն տալուց միայն վեց ամիս անց այն պարտություն կրեց ձայների 632-ը 231-ի դեմ հարաբերակցությամբ:<sup>72</sup>

Ավելին, սահմանադրությունը համագումարին օժտում էր չափազանց մեծ թվով լիազորություններով, որոնք նրանք կարող էին օգտագործել՝ վերահսկելու գործադիրի գործունեությունը: Այսպիսով, խորհրդարանի և գործադիրի քաղաքական հակամարտությունը կանխատեսելի էր: Բացի այդ, կառավարության գոյություն ունեցող սահմանադրական կառուցվածքն այնպիսին չէր, որ ժողովրդավարական ճանապարհով հարթեր այդ հակամարտությունը:

71. Boris Yeltsin, "The Struggle for Russia" (New York: Times Books, Random House, 1994), 126:

72. Այս ժամանակաշրջանում օրենսդիր և գործադիր իշխանությունների մասին հստակ և փաստագրված վերլուծությունը կարելի գտնել Իցհակ Մ. Բրուդնիի (Yitzhak M. Brudny) "Ruslan Khasbulatov, Aleksandr Rutskoi and Intra-elite Conflict in Post-Communist Russia, 1991-1994", հոդվածում, տպագրված՝ Timothy J. Colton and Robert C. Tucker, eds., *Patterns in Post Soviet Leadership* (Boulder, Colo.: Westview Press, 1995) գրքում, էջ 75-101:

Բցհակ Ս. Բրուդնին իր խորաթափանց ուսումնասիրությամբ պարզություն է մտցնում սրա մեջ:

Ռուսաստանի սահմանադրական կառուցվածքի առանձնահատկություններն անհնար էին դարձնում լուծել նախագահի և խորհրդարանի միջև ծագած հակամարտությունը: Առաջին. Ռուսաստանի նախագահական համակարգն այնպիսին, ինչպիսին այն ստեղծվել էր 1991թ., հստակորեն պատկանում էր «նախագահա-խորհրդարանական» տիպին: Այս համակարգում և՛ խորհրդարանը, և՛ նախագահը նույնատիպ վերահսկողություն ունեն նախարարների կաբինետի վրա, սակայն չկար այդ երկուսի իշխանության հստակ տարանջատում ... Նախագահի մասին օրենքը փաստորեն ստեղծեց պետության իրար հետ մրցող ղեկավարներ՝ երկրի նախագահ և Գերագույն խորհրդի նախագահ:

Երկրորդ. Նախագահի մասին ռուսաստանյան օրենքը չկարողացավ առաջարկել կառավարման երկու ճյուղերի միջև ծագած հակամարտությունը հարթելու մեխանիզմներ ... Ռուսաստանի խորհրդարանականները նախագահին չտվեցին հանրաքվե կամ նոր խորհրդարանական կամ նախագահական ընտրություններ նշանակելու իրավունք՝ գերադասելով այդ իրավունքները պահել որպես իրենց բացառիկ իրավասություն:<sup>73</sup>

Ռուսաստանի Գերագույն խորհրդի նախագահ Ռուսլան Խասբուլատովը խորհրդային դարաշրջանի սահմանադրությամբ իրեն տրված իրավունքները կարողանում էր օգտագործել կառավարության նախարարներին և վարչություններին ուղղակի հրամաններ տալու համար: Նրա հրամանները հաճախ ուղղակի հակասության մեջ էին մտնում Ելցինի կողմից արձակված հրամանների հետ: 1992թ. Խասբուլատովն արձակեց 66 այսպիսի հրամաններ: 1993թ. առաջին վեց ամիսների ընթացքում նա արձակեց ավելի քան 630 հրաման:<sup>74</sup>

Տնտեսական բարեփոխումների գերակշիռ մասը ձախողվեց դրանց նախաձեռնումից ընդամենը չորս ամիս անց: Խորհրդարանը պահպանեց կենտրոնական բանկի նախագահ նշանակելու և նրան վերահսկելու իր իրավունքը: Նրանց կողմից նշանակվածները վարում էին այնպիսի քաղաքականություն, որն արմատապես հակասում էր Ելցինի և Գայդարի կայունացման ծրագրին: Խորհրդարանում կառավարության թուլությունը նշանակում էր նաև, որ պետության գլուխ կանգնածները խորհրդարանում ունեցած իրենց դաշնակիցների միջոցով կարող էին կանխատեսել այնպիսի օրենսդրական արդյունք, որը «յուրայիններին» թույլ կտար վերահսկել մասնավորեցված պետական ձեռնարկությունների սովոր մեծամասնությունը: Այս նույն դաշինքը նշանակում էր, որ պետությունը պետք է շարունակեր մեծ դրամական միջոցներ տրամադրել այդ չբարեփոխված կառուցվածքով ձեռնարկություններին:<sup>75</sup>

Պետական իշխանության համար մղվող հորիզոնական պայքարի երկու կողմերն էլ

73. Նույն տեղում, էջ. 85-86:

74. Նույն տեղում, էջ. 86:

75. Փաստագրման համար, տե՛ս ՄրքՖոլից վերը բերված մեջբերումը: Ռուսաստանում մասնավորեցումից առաջ և հետո ներքին վերահսկողության ավելի համոզիչ էմպիրիկ ուսումնասիրության համար, տե՛ս Katherina Pistor, Roman Frydman, and Andrzej Rapaczynski, "Investing in Insider-dominated Firms: A Study of Russian Voucher Privatization Funds" և Joseph R. Blasi, "Corporate Governance in Russia":

(օրենսդիրն ու գործադիրը) ժողովրդավարական լեգիտիմության մասին հայտարարություններ էին անում: Ռուսաստանում կիսանախագահականությունն ի հայտ բերեց ժողովրդավարության համար ավելի վտանգավոր միտումներ, քան դա եղավ Լեհաստանի դեպքում, որը մենք վերլուծել ենք:<sup>76</sup> Իսկապես, Ռուսաստանում քանի պայքարը թեժանում էր, երկու կողմերն էլ հայտարարում էին այնպիսի իրավասությունների մասին, որոնք հայտնի չեն աշխարհի և ոչ մի կայացած ժողովրդավարություն ունեցող երկրում:

Նախագահի հետ հակամարտության ժամանակ խորհրդարանը հաջողացրեց Ռուսաստանի սահմանադրության մեջ նորից մտցնել սովետների՝ «որպես պետության բարձրագույն օրգան» խորհրդային դարաշրջանի սահմանումը:<sup>77</sup> Այս դարձվածքը և Խաբուլատովի կողմից պաշտպանվող մի շարք լրացումները կրում էին ավելի շատ «ժողովային վարչակարգի», քան կիսանախագահական կամ նույնիսկ խորհրդարանական վարչակարգի ձևեր:<sup>78</sup> Այսինքն, խորհուրդները պետք է ուղղակիորեն ընտրեին, վերահսկեին և նույնիսկ կառավարեին գործադիր և պետական ապարատի պաշտոնները: Ժողովային այս վարչակարգը պետք է գործեր նաև որպես դատական մարմին, որովհետև Գերագույն խորհրդի նստաշրջանների ժամանակ նրանք պետք է գործեին որպես մշտական Սահմանադիր ժողով:<sup>79</sup> Այս «ամբողջ իշխանությունը սովետներին» Փարիզյան կոմունայի

Երկու հոդվածներն էլ հրապարակվեցին Համաշխարհային բանկի և Կենտրոնական եվրոպական համալսարանի մասնավորեցման ծրագրի գիտաժողովում, դեկտեմբերի 15-16, 1994թ., Վաշինգտոն:

76. Կիսանախագահականության և Լեհաստանի համատեքստում մեր կողմից կատարված դրա վերլուծության համար, տե՛ս Գլուխ 16:

77. Նույն տեղում, էջ 228: Այս դարձվածքն, անշուշտ, իր արմատներն ունի Մարքսի «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» աշխատությունում Փարիզյան կոմունայի վերլուծության և Լենինի «Պետություն և հեղափոխություն» գրքում կոմունայի զովասանքի մեջ: «Պետություն և հեղափոխություն» աշխատության «Ուաշլամենտարիզմի վերացումը» հայտնի գլխում Լենինը նշում է, որ «կոմունան փոխարինում է բուրժուական հասարակարգի ծախու և փտած պաշլամենտարիզմը»: Դա տեղի է ունենում, ինչպես նշում է Լենինը, «ներկայացուցչական կազմակերպությունները շատախտողներից աշխատող կազմակերպության վերածելով»: Ամենակարևոր օրինակը, որ Մարքսը, իսկ հետագայում նաև Լենինը տվել են Փարիզյան կոմունային՝ որպես աշխատող կազմակերպության, այն է, որ կոմունան ուղղակիորեն ստեղծում և աշխատեցնում էր դատարանները և վարչակազմի մեծ մասին: Այսպիսով, ուղղակի ժողովրդավարությունը կարող էր հանգեցնել ոչ միայն խորհրդարանականության, այլ հետագայում նաև «պետության վերացմանը»: Բոլոր խնամքով կատարված պատմական ուսումնասիրությունները ցույց են տալիս, սակայն, որ երբ իրականում ԽՍՀՄ-ում գործը հասնում էր իշխանության կառույցներ ստեղծելուն, Լենինն անմիջապես մեկուսացնում էր «Սովետները» կամ Փարիզյան կոմունայի նման ցանկացած ուղղակի ժողովրդավարությունը և դրա փոխարեն կառուցում կուսակցություն-պետության գերպետականություն: Չնայած այս պատմական փաստին՝ «ամբողջ իշխանությունը սովետներին» տիպի, հակախորհրդարանական, ուղղակի ժողովրդավարության մասին դատողությունները մնում էին որպես հետխորհրդային հիմնական քաղաքական փաստարկ: Խորհրդային քաղաքական մշակույթի և փիլիսոփայության ամբոխահաճ, ուղղակի ժողովրդավարական, հակախորհրդարանական ժառանգության շղթայի ժողովրդավարականորեն երկիմաստ հետևանքները քննարկվել են վերը բերված երկու ռուս սոցիոլոգներ՝ Սերգեևի և Բիրյուկովի «Ռուսաստանի՝ դեպի ժողովրդավարություն տանող ուղին» գրքում:

78. Խաբուլատովի ծրագրի լավագույն քննարկումը կարելի է գտնել Բրուդնիի (Brudny) *"Khasbula-tov, Rutskoj and Intra-elite Conflict"* աշխատությունում:

79. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության 1977թ. Սահմանադրությունը (հիմնական օրենքը), որի ոգին շատ դրսևորումներով առկա էր Ռուսաստանի 1991-93թթ. Սահմանադրության մեջ, ձևակերպեց սովետներին տալիս էր պետության իշխանությունը վերահսկելու իրավասություն: Հոդված 2-ում սսվում էր, «ԽՍՀՄ-ում ամբողջ իշխանությունը պատկանում է ժո-

տեսանկյունից Խասբուլատովը և խորհրդարանը հայտարարեցին իրենց գերակա լեգիտիմության մասին և ժամանակ առ ժամանակ փորձում էին Ելցինին պաշտոնանկ անել: 1992թ. հոկտեմբերին պարզվեց նաև, որ Խասբուլատովը ստեղծել է խորհրդարանական հինգհազարանոց զինված պահազոր, որը ենթարկվում էր միայն սովետներին:<sup>80</sup>

Ելցինն էլ իր հերթին հղում էր կատարում իր ուղղակի նախագահական ընտրությունների վրա հիմնված ժողովրդավարական գերակա լեգիտիմությանը: Նա գնաց ավելի հեռուն. նա հաճախ սպառնում էր, որ ուղղակիորեն կդիմի ժողովրդին: Բրազիլիայի և Արգենտինայի քննարկման ժամանակ մենք վերլուծել ենք նախագահականության այն ծայրահեղ պլեբեցիտար, հակահաստիտուցիոնալ ոճը, որ Գիլյերմո Օ'Դոննելն (Guillermo O'Donnell) անվանել է «պատվիրակված ժողովրդավարություն»:<sup>81</sup> Խորհրդարանի դեմ մղած իր պայքարում Ելցինը մոտեցավ Օ'Դոննելի նկարագրությանը՝ միայն այն տարբերությամբ, որ նա կասկածի տակ դրեց օրենսդիրի լեգիտիմությունը, որովհետև այն ուներ խորհրդային ծագում: Ռուս սոցիոլոգ Շևցովան ոչ բացահայտորեն համաձայնում է դրա հետ: Նա նշում է, որ Ելցինը «վերևից բռնեց «հեղափոխական ազատականության» ուղին», որը բնութագրվում էր որպես «քաղաքական գործընթացը անձնավորելու համար սեփական հմայքի օգտագործում և իր քաղաքականությունն իրականացնելու համար հույսը նախագահական իշխանության ուղղահայաց համակարգի վրա դնել»:<sup>82</sup>

Դուայթ Սեմլերը (Dwight Semler) 1993թ-ի առաջին ամիսներին Ռուսաստանում սահմանադրական զարգացումների իր վերլուծության մեջ մանրամասն պատկերում է, թե ինչպես սահմանադրական փոփոխության բացակայության պայմաններում ապագա հնարավոր ժողովրդավարության մի ճյուղը (գործադիրը) կասկածի տակ է դնում ապագա ժողովրդավարության մյուս ճյուղի (օրենսդիրի) լեգիտիմությունը: Օրինակ՝ 1993թ. փետրվարին Ելցինը կրկնեց իր այն տարակարծությունը, որ ներկայիս քաղաքական իրավիճակն անհնար է դարձնում Ռուսաստանի կառավարումը ... Ելցինը պնդում էր, որ ստիպված չէ հետևել սահմանադրությանը, որովհետև այն ավելի չէր, քան խորհրդային դարաշրջանի փաստաթուղթ, որտեղ կարճատես համագումարը կատարել է օպորտունիստական լրացումներ: Նա զգուշացնում էր, որ իշխանության խելամիտ բաժանման համաձայնության ձախողումը Ռուսաստանին կհանգեցնի «բռնապետության կամ անար-

դովրդին: Ժողովուրդը պետության ղեկավարությունն իրականացնում է ժողովրդական պատգամավորների խորհուրդների միջոցով, ինչը ԽՍՀՄ քաղաքական հիմքն է կազմում: Պետական բոլոր այլ մարմինները գտնվում են ժողովրդական պատգամավորների խորհուրդների վերահսկողության տակ և հաշվետու են նրանց առջև»:

Հոդված 108-ը սովետներին օժտում էր գործադիր և սահմանադրական իշխանությունները վերահսկելու իրավասությամբ: ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը պետական իշխանության բարձրագույն մարմինն է: ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն իրավունք ունի զբաղվելու Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության իրավասության տակ գտնվող բոլոր հարցերով: ԽՍՀՄ Սահմանադրության ընդունումն ու նրա մեջ լրացումներ կատարելը... ԽՍՀՄ Գերագույն խորհրդի բացառիկ իրավունքն է: Տե՛ս John N. Hazard, ed., "The Union of Soviet Socialist Republics", Ալբերտ Փ. Բլաուսթայնի (Albert P. Blaustein) և Գիսբերտ Հ. Ֆլանցի (Gisbert H. Flanz) կողմից խմբագրված "Constitutions of the Countries of the World" (Dobbs Ferry, N.Y.: Oceana Publications, Oct. 1990) շաքրում:

80. Brudny, "Khasbulatov, Rutskoj and Intra-elite Conflict":

81. Guillermo O'Donnell, "Delegative Democracy", *Journal of Democracy* 5, no. 1 (Jan. 1994): 55-69, հաւսկապէս՝ էջ 64:

82. Shevtsova, "Russia's Post-Communist Politics", 9:

խիայի»․ մի հայտարարություն, որը յուր լցրեց «արտակարգ կառավարում» մտցնելու Ելցինի մտադրության մասին ասեկոսենների կրակի վրա ...

Լարվածությունը գազաթնակետին հասավ մարտի 20-ին, երբ Ելցինն ազգային հեռուստատեսությամբ ցուցադրված իր ուղերձով հայտարարեց, որ համագումարը խախտել է իշխանության տարաբաժանումը և մեղադրեց Սահմանադրական դատարանին նրանց չկանգնեցնելու համար: Ելցինը հայտարարեց, որ նա ստորագրել է մի հրամանագիր, որով սահմանում է հատուկ նախագահական վարչակարգ, որն անհրաժեշտ է երկիրը պաշտպանելու համար: Չփորձելով լուծարել համագումարը՝ Ելցինը հասկացրեց, որ նոր «վարչակարգը» չեղյալ է համարում ցանկացած օրենսդրական ակտ, որը հակասում է նախագահի կարգադրություններին:<sup>83</sup>

Մենք կրկնում ենք մեր նախկինում արված պնդումը, որը մեր կարծիքով՝ այժմ փաստագրել ենք: 1991թ-ի աշնանը Ելցինի կողմից տնտեսական վերակառուցմանը գերակայություն տալը և խորհրդարանի, սահմանադրության և պետության ժողովրդավարական վերակառուցումն անտեսելն ավելի թուլացրեց առանց այն էլ թույլ պետությունը, առաջարկվող տնտեսական բարեփոխումների ծրագիրը գրկեց քաղաքական և պետական ամենափոքր իսկ աջակցությունից, որն անհրաժեշտ էր նրա բարեհաջող իրականացման համար և նպաստեց կառավարման ժողովրդավարական երեք ճյուղերի կողմից փոխադարձ ապալեզիտիմացմանը:<sup>84</sup>

### Հետխորհրդային կիսանախագահականություն. եզրափակիչ քննարկում

Անցման ժամանակ խորհրդային և ռուսական քաղաքական զարգացումներն ավելի ցայտուն են դարձնում այս գրքում մեր կողմից քննարկված որոշ թեմաները: Գրքեր կարող են և պետք է գրվեն հետխորհրդային (ոչ բալթյան) և հետհարավսլավական պետություններում կիսանախագահականության կողմից ստեղծված ժողովրդավարության խնդիրների մասին:<sup>85</sup> Որպես համեմատաբաններ, ովքեր երկար ժամանակ գրել են նմանատիպ խնդիրների մասին, եկեք համառոտ կերպով նշենք մի քանի հատկանիշներ, որոնք Ռուսաստանում և նախկին Խորհրդային Միության այլ պետությունների մեծ մասում

83. Dwight Semler, "Special Reports: Crisis in Russia", *East European Constitutional Review* 2, no. 3 (1993), 15-19, մեջբերումներ՝ էջ 15 և էջ 17-ից: 1993թ. ճգնաժամը թուլացավ, երբ Ելցինը Սահմանադրական դատարանի և օրենսդիրի բողոքներից հետո մեղմացրեց իր գրած տեքստը:

84. Մինչ Արևմուտքի մեծ մասն աջակցում էր Ելցինին խորհրդարանի հետ ունեցած իր հակամարտության ժամանակ, հարկ է նշել, որ 1993թ. սեպտեմբերին Ռուսաստանի ժողովրդավարական հյուսվածքը վնասվել էր շատ այլ ձևերով: Ինչպես Արչի Բրաունն է դիտարկում, ճգնաժամն ուժի միջոցով կարգավորելը նշանակում է նաև «Սահմանադրական դատարանի գործունեության դադարեցում, մոտ քսան թերթերի ժամանակավոր արգելում և հեռուստատեսության վրա կառավարական վերահսկողության ուժեղացում ու գրաքննություն», տե՛ս Brown, "Political Leadership in Post-Communist Russia", 33: Մանրամասն վերլուծության համար, որ 1991 թ-ի աշնանը Ելցինի ժողովրդավարական քաղաքական ռազմավարությունը կարող էր նպաստել 1992-93թթ. Ռուսաստանում ավելի ուժեղ պետության և ավելի հաջողակ տնտեսական բարեփոխումների իրականացմանը, տե՛ս McFaul, "State Power, Institutional Change, and Privatization", հատկապես՝ էջ 238-43:

85. Ռեյ Թարասի (Ray Taras) խմբագրությամբ շուտով կտպագրվի "Presidential Systems in Communist States: A Comparative Analysis" նախնական վերնագրով նմանատիպ մի գիրք:

սում կիսանախագահականությունը դարձրեցին չափազանց բարդ և ճգնաժամային իրավիճակ ստեղծելուն հակված կառավարման ձև:

1. Նախագահականության նոր, անորոշ ձևի և խորհրդային դարաշրջանի հին, ոչ ժողովրդավարական և մասամբ ապալեզիտիմացված կազմակերպությունների երկարատև համագոյակցությունը մեծապես խանգարեց Ռուսաստանում անցումն իրականացնելուն:

2. Ռուսաստանի դեպքում նախագահականության ստեղծումը և 1991թ. հունիսին կայացած ընտրությունների արդյունքում Ելցինի ժողովրդավարական լեզիտիմացումը սկիզբ դրեցին ևս ժողովրդավարորեն լեզիտիմացված և իր սեփական անկախ մանդատն ունեցող օրենսդիրի հետ համագոյակցող բոլոր նախագահական վարչակարգերի երկակի լեզիտիմության զարգացումներին: Երկակի լեզիտիմության այս դասական խնդիրն ավելի բարդացավ Ռուսաստանում տարբեր դերակատարների իշխանությունն ու նշանակությունը հստակորեն սահմանող սահմանադրության բացակայության պատճառով:

3. Նախագահական և կիսանախագահական ժողովրդավարության սովորական կառուցվածքային խնդիրներին մենք պետք է ավելացնենք հատուկ խորհրդային «ամբողջ իշխանությունը սովետներին» ավանդույթը, որը օրենսդիրին և նրա նախագահին տվեց արտակարգ լիազորություններ, որոնք հիմնովին անհամատեղելի են իշխանության բաժանման վրա հենված մոդելի հետ:

4. Գործերն ավելի բարդացնելով՝ և՛ Գորբաչովը, և՛ Ելցինը, ժամանակավոր, պրագմատիկ պատճառներից ելնելով, պաշտպանեցին փոխնախագահների ընտրությունները, որոնք դեմ էին նրանց քաղաքական տեսակետներին, և որոնք ի վերջո սատարեցին նրանց դեմ կազմակերպված խռովություններին: Այս օրինակը քաջ հայտնի է նախագահական այլ համակարգերում ծագած ճգնաժամներից:<sup>86</sup>

5. Մեթյու Ս. Շուգարտի (Matthew S. Shugart) վերլուծության մեջ ամենաանկայուն կիսանախագահական տարբերակն այն է, որը նակոչում է «նախագահա-խորհրդարանական»: Այս մոդելի հիմնական մոտեցումն այն է, որ խորհրդարանը կարող է անվստահություն հայտնել կաբինետին: Շուգարտը պնդում է, որ «եթե սահմանադրությունը թույլ է տալիս և՛ խորհրդարանական մեծամասնությանը, և՛ նախագահին միակողմանիորեն աշխատանքից ազատել կառավարության նախարարներին, ապա կաբինետի համար չկա սահմանադրորեն սահմանված ոչ մի ղեկավար. հավանական է գործադիր-օրենսդիր հակամարտությունը: Ինստիտուցիոնալ այսպիսի կառուցվածքը միշտ էլ առաջ է բերել

86. Բերենք մի քանի օրինակներ. Բրազիլիայում փոխնախագահ Ժոաո Գուլարթը (Joao Goulart) արմատապես հակադրվեց նախագահ Ժանիո Քվադրասի (Janio Quadras) քաղաքականությանը: Ֆիլիպիններում փոխնախագահ Սալվադոր Լաուրելը (Salvador Laurel) լավագույնս կարող ենք ասել՝ «կիսահավատարիմ» դիրք էր բռնել նախագահ Գորաստո Ակինոյի (Corazon Aquino) դեմ հեղաշրջման փորձի ժամանակ:

անկայունություն, որտեղ էլ որ կիրառվել է ... ամենավտանգավորը եղել է Վայմարում»:<sup>87</sup> Այս անհուսալի մոդելը հատկանշական է նախկին Խորհրդային Միության ոչ բալթյան երկրներում: Ճիշտ է, որ հեշտությամբ հեռացվող վարչապետերը հանդիսանում են նախագահի պաշտպանության «սպառնալից», սակայն իրավիճակը կարող է հանգեցնել նաև քաղաքական ղեկավարման մշտական ճգնաժամերի: Դա հատկապես ազդում է տնտեսական բարեփոխումների գործընթացի վրա: Իսկապես, 1991-94թթ. Ուկրաինայում կիսանախագահական ինստիտուտները հանգեցրին եռիշխանության՝ երկրի նախագահ, վարչապետ և օրենսդիր մարմինն ու նրա նախագահը, որոնք տանում էին դեպի անորոշություն և առճակատում:<sup>88</sup>

6. Քաղաքական դերակատարների միջև ծագած հակամարտությունը լուծելու համար հանրաքվեի միջոցով ժողովրդին դիմելը որոշ դեպքերում օգտակար դեր է խաղացել, սակայն այն հաճախ ավելի շատ ամբոխավարության է հանգեցրել, քան կուսակցության քաղաքականության ուժեղացմանը: Այն հանգեցրել է նաև հանրաքվեի անցկացման և ձևակերպման շուրջ ծագած առճակատումների՝ դժվարացնելով բանակցային և կուսակցությունների ստեղծման գործընթացը, որն այնքան կարևոր է որոշակի աստիճանի ինքնավարություն և կանխատեսելիություն ունեցող ինստիտուցիոնալացված քաղաքական հասարակարգ կառուցելու գործում:

7. Նախագահականությունն ու ուժեղ կիսանախագահականությունը, ինչպես մենք և այլք ամենուր պնդում ենք, երկարատև պատմության ընթացքում ձևավորված կուսակցական համակարգի բացակայության պայմաններում, չեն նպաստում կուսակցությունների ստեղծմանը: Նախագահներին դուր է գալիս լինել կուսակցություններից վեր, չնույ-

87. *Skéu* Matthew S. Shugart, "Of Presidents and Parliaments", East European Constitutional Review 2, no. 1 (1993), 30-32: Մեջբերում 30 և 32 էջերից: Այս վերլուծական մտնեցման ամբողջական զարգացումների համար, տե՛ս Matthew Soberg Shugart and John M. Carey, "Presidents and Assemblies: Constitutional Design and Electoral Dynamics" (Cambridge: Cambridge University Press, 1992):

88. Ուկրաինայում կիսանախագահականության մասին կարևոր ուսումնասիրություն է Andrew Wilson, "Post-Communist Presidents. Ukraine: Two Presidents, but No Settled Powers" (Առաջավոր պլանագիտության ամերիկյան ընկերակցությանը ներկայացված աշխատություն, Ֆիլադելֆիա, 1994թ., նոյեմբեր): Վերանայված տարբերակը կտպագրվի Ռեյ Թարասի վերը նշված գրքում: *Skéu* նաև ուկրաինացի քաղաքագետ Օլեգ Պրոցիկի (Oleg Protsyk) գերազանց աշխատությունը՝ "Do Institutions Matter? Semi-presidentialism in Ukraine and France" (Մագիստրոսական թեզ, կենտրոնական եվրոպական համալսարան, Բուդապեշտ, 1995թ., հունիս): Այս երկիշխանության կամ եռիշխանության մեջ հայտնված հետխորհրդային նախագահներն անընդհատ փորձում են ընդլայնել իրենց իշխանությունը Ֆրանսիական հինգերորդ հանրապետությունում արդեն հաստատված նախագահական իշխանության սահմաններից դուրս: Օրինակ, Շուգարտը և Քերին իրենց "Presidents and Assemblies" աշխատության 148-58 էջերում զարգացնում են նախագահական իշխանության ցուցանիշի գաղափարը: Նրանք Հինգերորդ հանրապետության նախագահին տալիս են 7 բալ: 1994թ. վերջերին հուսահատված Ուկրաինայի նախագահ Կուչման առաջարկեց նախագահական իշխանության նոր օրենք: Ըստ Պրոցիկի գնահատականի՝ եթե Կուչմայի առաջարկությունն ընդունվեր, ապա Շուգարտ-Քերիի սանդղակով այն հավասար կլիներ 19.5 միավորի, որն ավելի բարձր է, քան 1993 թ-ի Ռուսաստանի սահմանադրությամբ սահմանված «գերնախագահական» վարչախմբին տրված 14.5 միավորը: Ռուսաստանի նախագահականության մասին տե՛ս Stephen Holmes, "Superpresidentialism and Its Problems", East European Constitutional Review 2, no. 4 (1993), էջ 123-26:

նանալ կուսակցությունների հետ, և Ելցինը, իհարկե, չօգտագործեց շարժման ձև ունեցող «Ժողովրդավարական Ռուսաստան» կառույցը կուսակցության վերածելու հնարավորությունը: Կուսակցություններից վեր կանգնելու նախագահների միտումն ավելի ուժեղացավ հետխորհրդային սահմանադրությամբ սահմանված կարգի պատճառով, ըստ որի՝ նախագահները, ի տարբերություն Ֆրանսիական հինգերորդ հանրապետության, չեն կարող առաջնորդել կուսակցությունները կամ նույնիսկ պատկանել որևէ կուսակցության:

8. Նախկին ԽՍՀՄ-ի տարածքի ոչ բոլոր նախագահ-խորհրդարան հակամարտությունները հանգեցրին այնպիսի ուժեղ ճգնաժամի, ինչպես դա տեղի ունեցավ Ռուսաստանում նախագահի կողմից խորհրդարանի գնդակոծությամբ: Մակայն որոշ հետխորհրդային հանրապետություններում նախագահ-խորհրդարան լարվածությանը ոչ ժողովրդավարական լուծում տալու աճող միտում գոյություն ունի: Իրենց իշխանությունը երկարաձգելու համար նախագահներն ավելի ու ավելի հաճախ են լուծարում խորհրդարանները, կառավարում հրամանագրերի միջոցով և անցկացնում ժողովրդավարության տեսանկյունից կասկածելի, չմտածված հանրաքվեներ:<sup>89</sup>

Շատ փաստեր են վկայում նախկին ԽՍՀՄ-ի նոր պետություններում ժողովրդավարության առջև ծագած դժվարությունների մասին, և դրանցից մեկն ու ոչ ամենաանկարևորը սկզբնական համաձայնության բացակայությունն է առ այն, թե ինչպես մարդկանց ժողովրդավարական սպասումները ինստիտուցիոնալ կերպով ուղղորդել դեպի որոշումներ կայացնող կառույցներ: Ինստիտուտներն, իսկապես, մեծ նշանակություն ունեն:

89. Թուրքմենիայում հանրաքվեի մասնակցած բնակչության իրոք խորհրդային 99.9%-ը ձայն տվեց նախագահի լիազորությունները մինչև 2000թ. երկարաձգելու օգտին: Ղազախստանում նախագահը խորհրդարանը լուծարելուց հետո միայնակ ձևակերպեց հանրաքվեի դրվող հարցը և արագ անցկացրեց հանրաքվե, որի հետևանքով նրա լիազորությունները երկարաձգվեցին:



# Երբ ժողովրդավարությունն ու ազգային պետությունը փոխհակասող տրամաբանություններ ունեն. Էստոնիա և Լատվիա

1991թ. ԽՍՀՄ-ի կազմալուծումից հետո տասնհինգ նոր պետություններ ի հայտ եկան: Այդ պետությունները հիմնված էին խորհրդային դաշնության նախկին տասնհինգ հանրապետությունների վրա: Այդ նոր պետություններից յուրաքանչյուրը կոչվեց խորհրդային դաշնությունում գոյություն ունեցած հանրապետություններից յուրաքանչյուրի «նվանադիր ազգության» անունով: Սակայն, ինչպես մենք տեսանք նախորդ գլխում, 1991թ. այդ նոր պետություններից շատերը ժողովրդագրական առումով բազմազգ էին:<sup>1</sup> Չնայած դրան՝ նորանկախ պետություններից շատերում ղեկավար վերնախավը դիմեց յուրաքանչյուր հանրապետության մեծամասնություն կազմող խմբերի ազգայնականությանը՝ իշխանության գալու և այն ամրապնդելու համար: Այս նորանկախ պետությունների ղեկավար վերնախավերից շատերը, իշխանություն ձեռք բերելով, հետևեցին իրենց բազմազգ դեմոսն «ազգային պետության» վերածելու ռազմավարությանը: Այս իրողությունները մեզ ստիպում են ժողովրդավարացմանը նվիրված այս գրքում երկու հիմնական հարց վերլուծել: Կա՞ն արդյոք այնպիսի պայմաններ, երբ ժողովրդավարությունն ու ազգային պետությունը հակընդդեմ տրամաբանություն ունեն:<sup>2</sup> Եթե այո, ապա ի՞նչ պետք է անել ներառական ժողովրդավարության հասնելու համար:<sup>3</sup> Մենք հավատում ենք, որ

1. Ավելին, դրանց ներքում եղած ազգային փոքրամասնությունները նույնականացվում էին խորհրդային ներքին օգտագործման անձնագրերում նշված ազգության հետ: Այդ նույնականացումը չէր արվում սուբյեկտիվորեն, այլ անկախ անհատի անձնական, լեզվական և մշակութային ինքնությունից՝ հենվում էր ծագման վրա: Մենք հավատում ենք, որ ինքնությունները սովորաբար սոցիալապես են կառուցված, բազմակի են և փոփոխությունների ենթակա: Սակայն խորհրդային բյուրոկրատական մոտեցումը հիմնականում ԽՍՀՄ-ում ամրագրում էր միակ և անփոփոխ ինքնություններ: Այն փաստը, որ դա տարածքայնության վրա հիմնված իրավական ինքնություն էր, ըստ մեզ՝ բացառիկ է բազմակեզու հասարակությունների համար: Օրինակ, Հնդկաստանի կամ Կանադայի պես դաշնային համակարգերը կարող են անձնագրում կամ փաստաթղթերում նշել ծննդյան վայրը, բայց չեն նշի էթնիկ, լեզվական կամ կրոնական կապերը: Նույնիսկ Հարավսլավիայի խորհրդային տիպի դաշնային համակարգն անձնագրերում չէր նշում էթնիկ խմբային պատկանելությունը:

2. Այս գլուխն էականորեն վերանայված և ընդլայնված տարբերակն է՝ Alfred Stepan, "When Democracy and the National State Are Competing Logics: Reflections on Estonia", *European Journal of Sociology* 35 (1994), 127-41 հոդվածի: Շնորհակալ ենք այդ հոդվածից մեջբերումներ անելու թույլտվության համար:

3. Ժամանակակից ժողովրդավարությունների ներառականության քննարկման համար, տե՛ս Rob-

նախկին Խորհրդային Միության նորանկախ հասարակարգերի պես պետություններում այս հարցերը և քաղաքականության բարդությունը լավագույնս ուսումնասիրվել է՝ օգտագործելով եռակողմ հարաբերությունների շրջանակները, ինչը մենք առաջ էինք քաշել «Պետութենականություն, ազգայնականություն և ժողովրդավարացում» անվանումը կրող Գլուխ 2-ում:<sup>4</sup>

Մենք որոշել ենք այս եռակողմ հարաբերությունները մանրամասն ուսումնասիրել բալթյան երկրներում՝ Էստոնիայում, Լատվիայում և Լիտվայում: Մենք ընտրել ենք այս երկրները երեք պատճառով: Առաջինը՝ որպես ժողովրդավարություններ՝ նրանց ունեցած նախկին փորձի, իրենց համեմատաբար զարգացած տնտեսությունների և Եվրոպական միությանը հնարավոր անդամակցության պատճառով այս երկրները նախկին Խորհրդային Միության տասնհինգ նորանկախ պետություններից ժողովրդավարացման համար առավել նպաստավոր պայմաններ ունեն: Ժողովրդավարության անհաջողություններն այս երկրներում ոչ մի դեպքում նախասահմանված չեն: Երկրորդ. ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակում այն խոշոր խնդիրները, որոնք պետք է այս երկրները լուծեն նախքան կայացած ժողովրդավարություններ դառնալը, հակասություններն են ազգային պետության տրամաբանության և ժողովրդավարության տրամաբանության հետ: Ռուսաստանը մեծ, անկայուն և պոտենցիալ ագրեսիվ ազգայնական ու «ինքնանշանակված հայրենիք» է բալթյան երկրների ռուսախոս փոքրամասնությունների համար: Ազգային պետության փոքրամասնությունների խնդիրների վատ կարգավորումը կարող է տանել դեպի ոչ միայն անկայուն ժողովրդավարության, այլև մեկ կամ ավելի բալթյան պետությունների ամբողջականությանը սպառնացող վտանգի: Երրորդ. մեր բախտը բերել է, որ լուրջ հետազոտական բազա ունենք, որի վրա կարող ենք հենվել:<sup>5</sup>

ert A. Dahl, "Polyarchy: Participation and Opposition" (New Haven: Yale University Press, 1971), 6-7:

4. Մեկ անգամ ևս մենք ցանկանում ենք ուշադրություն հրավիրել սրա հետ կապված Ռոջերս Բրուբեյքրի (Rogers Brubaker) ընթացքի մեջ գտնվող ուսումնասիրության վրա, որում նա ուշադրությունը կենտրոնացնում է ազգային պետության ռազմավարությանը հետևող վերնախավի, ազգային պետության քաղաքականություն վարող պետություններում փոքրամասնությունների և այդ փոքրամասնությունների հայրենի պետությունների եռակողմ հարաբերությունների վրա: Բրուբեյքերի նախագիծը նվիրված է եռակողմ հարաբերությունների բաղադրիչների միջև «ուժային դաշտերի» ուսումնասիրությանը: Մեր փորձը սերտորեն կապված է դրա հետ, բայց մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում այն բանի վրա, թե ինչպես են այդ զարգացող հարաբերություններն ազդում ժողովրդավարացման վրա: Բրուբեյքերի աշխատությանը բազմաթիվ հղումների համար տե՛ս Գլուխ 2-ի մեր նշումները:

5. Դա ներառում է դեռևս շարունակվող մեծ համեմատական հարցումներ, մեկը՝ Հանս-Ռիտեր Կլինգեմանի (Hans-Dieter Klingemann) ղեկավարության տակ, մյուսը՝ Ռիչարդ Ռոուզի (Richard Rose): Դեյվիդ Լեյթինի (David D. Laitin) և Ռոջերս Բրուբեյքրի (Rogers Brubaker) հարցումը նույնպես կանոնավոր կերպով կարևոր համեմատական աշխատանքներ են կատարում՝ նվիրված բալթյան երկրներում լեզվի և ազգայնականության պես հարցերին: Շատ մեջբերումներ կատարված են այս գլխում: Անատոլի Լիվենի (Anatol Lieven) "The Baltic Revolution: Estonia, Latvia, Lithuania and the Path to Independence" (New Haven: Yale University Press, 1994, rev. ed.) աշխատությունը բալթյան ժողովրդավարացման համար նշանակություն ունեցող կարևոր պատմական և քաղաքական հարցերի լավագույն ամբողջական ներածությունն է: Հետպատերազմյան տարիների համար տե՛ս George von Rauch, "The Baltic States: The Years of Independence" (Berkeley: University of California Press, 1974) և Tonu Parmling, "The Collapse of Liberal Democracy and the Rise of Authoritarianism in Estonia" (London: Sage Publications, 1975): Խորհրդային ժամանակների համար տե՛ս Romuald Misiunas and Rein Taagepera, "The Baltic States: Years of Dependence, 1940-90" (Berkeley: University of California Press, 1993): Սա 1983թ. բնօրինակի ընդլայնված և

Եկեք մեր համեմատական հետաքննությունը սկսենք բալթյան երկրների՝ ԽՍՀՄ-ի կազմում ընդգրկվելու պատմության վերլուծությունից:

### ԲԱԼԹՅԱՆ ԴԺՎԱՐԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդավարացման բոլոր վերլուծությունների համար կարևոր են նախկին ոչ ժողովրդավարական վարչակարգերի պատմությունն ու յուրահատուկ ժառանգությունը: Հնարավոր է, որ չկա ոչ մի այլ տարածաշրջան բալթյանից բացի, որտեղ պատմությունն այդ աստիճան կարևոր է, որտեղ նախկին ոչ ժողովրդավարական վարչակարգը՝ ԽՍՀՄ-ը, կարողացել է կոշտ կերպով ձևափոխել այդ հասարակարգերը ժողովրդագրական, մշակութային, տնտեսական և նույնիսկ բնապահպանական առումով:

Էստոնիան և Լատվիան բոլոր խորհրդային հանրապետություններից առավել մեծ չափով ունեն ժողովրդավարական քաղաքականության էական փորձ նախքան ԽՍՀՄ կազմում հայտնվելը: Այս երկրները, ինչպես և Լիտվան, անկախ են եղել 1918-ից մինչև 1940թ.: 1920-ականներին նրանց մոտ բազմակուսակցական ընտրություններ էին անցկացվում, իսկ Էստոնիայում փոքրամասնությունների վերաբերյալ սահմանադրական կարգավորումները քաղաքականապես ամենապատասխանատուն էին Եվրոպայում:<sup>6</sup> Ճիշտ է, ժողովրդավարությունը Լիտվայում քայքայվեց 1927-28թթ. և ապա Էստոնիայում ու Լատվիայում՝ 1934թ.: 1939թ. ստորագրվեցին Մոլոտով-Ռիբենտրոպ գաղտնի արձանագրությունները, որոնք բալթյան հանրապետությունները դրեցին խորհրդային ազդեցության ոլորտում: Խորհրդային զորքերը 1940թ. հունիսին ներխուժեցին այդ երկրներ, և նրանք բռնակցման ենթարկվեցին: 1941-44թթ. նացիստական օկուպացիան և դրանից հետո՝ ԽՍՀՄ կողմից վերաբռնակցումը ակնհայտ քայքայիչ ազդեցություն ունեցան այդ երկրներում ցանկացած ժողովրդավարական զարգացումների համար: Չնայած դրան՝ ի տարբերություն նախկին Խորհրդային Միության այլ երկրների, բալթյան երկրները ունեին ժողովրդավարական անցյալ, որը կարելի էր նորից կիրառել: Սակայն այս երկրներն արմատապես տարբեր ժողովրդագրություն ունեին, երբ 1991թ. նորից անկախացան: Այդտեղ է, որ գտնվում է Էստոնիայի և Լատվիայի հուսահատությունն ու ազգային պե-

վերանայված տարբերակն է: Էստոնիայի համար, *տե՛ս* Rein Taagepera, "Estonia: Return to Independence" (Boulder, Colo.: Westview Press, 1993): Այս գիրքը պարունակում է ազգային պետության՝ ընդդեմ ռուս փոքրամասնության լարվածությունների նրբերանգավորված ուսումնասիրությունը: Լատվիայի համար, *տե՛ս* Rasma Karklins, "Ethnopolitics and Transition to Democracy: The Collapse of the USSR and Latvia" (Baltimore: Johns Hopkins University Press, 1994): Ի տարբերություն Էստոնիայի մասին Տաագեպերայի գրքի՝ Կարկլինսի գրքում ազգային պետության ռազմավարությունն ընդունվում է որպես համեմատաբար ոչ խնդրահարույց դե ֆակտո բազմազգ պետության համար:

6. Լիյպհարտը (Lijphart) Էստոնիան առանձնացնում է ազգային փոքրամասնությունների համար նրա նորարարական և ժողովրդավարական սահմանադրական գործընթացների համար: *Տե՛ս* նրա "Democracies: Patterns of Majoritarian and Consensus Government in Twenty-one Countries" (New Haven: Yale University Press, 1984), 183-84: Էստոնիայի 1925թ. մշակութային ինքնավարության օրենքի ամբողջական ներկայացման համար *տե՛ս* Karl Aun, "The Cultural Autonomy of National Minorities in Estonia", Yearbook of the Estonian Learned Society in America 1 (1951-53), 26-41:

**Աղյուսակ 20.1. Բալթյան ժողովրդագրությունը. 1920-ականները և 1930-ականները՝ ընդդեմ 1980-ականների**

	Տոկոս					
	Էստոնիա		Լատվիա		Լիտվա	
Խումբ	1934	1984	1939	1989	1923	1989
Անվանադիր ազգ	88.8	61.5	75.5	52	69.2	79.6
Ռուսներ	8.2	30.3	10.6	34	2.5	9.4
Ուկրաինացիներ և բելառուսներ	ՍՏ	4.9	1.4	8.0	ՍՏ	ՍՏ
Լեհեր	ՍՏ	ՍՏ	2.5	2.3	15.3	7.0
Նրեաներ	ՍՏ	ՍՏ	4.8	0.9	8.3	0.3
Գերմանացիներ	2.2	0	3.2	0.1	ՍՏ	ՍՏ
Լիտվացիներ	ՍՏ	ՍՏ	1.2	1.3	—	—
Այլ	0.8	3.3	0.8	1.4	4.7*	4.0*

*Աղբյուրը.* Anatol Lieven, *The Baltic Revolution: Estonia, Latvia, Lithuania and the Path to Independence* (New Haven: Yale University Press, 1994, rev. ed.) 432-34. Լիտվայում աստղանիշերն այլ-ում վերաբերում են Լիվենի գնահատականին, որ մեծ մասը «հիմնականում բելառուս» են: Տե՛ս նաև՝ Romuald Misiunas and Rein Taagepera. *The Baltic States: Years of Dependence, 1940-90* (Berkeley: University of California Press, 1993): 353, բալթյան երկրներում ժողովրդագրական ժամանակային արժեքավոր տվյալների համար: ՍՏ՝ անհասանելի տվյալներ:

տություն և ազատական ներառական ժողովրդավարություն լինելու նպատակների միջև եղած լարվածությունը (Աղյուսակ 20.1):

Համաձայն 1989թ. մարդահամարի՝ Էստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ԷԽՍՀ) բնակչությունը կազմում էր 1.6 միլիոն, որից մոտ 1 միլիոնը էթնիկ էստոնացիներ էին, իսկ 600000-ը՝ ոչ էստոնացիներ: Մայրաքաղաք Տալլինը 50%-ից ավելի ռուսախոս բնակչություն ուներ, իսկ Ռուսաստանի սահմանին ամենամոտ գտնվող հյուսիսային Նարվա քաղաքում 94%-ը ռուսախոս էր: Ազգությունների այս միախառնումը, հատկապես մեծ ռուսական ներգաղթը, որը հետևեց խորհուրդների կողմից իրականացված 1940թ. բռնակցմանը, պետք է որ նույնիսկ ամենալավ պայմաններում լարվածություններ ստեղծեին: Բայց, իհարկե, էստոնացիների և այլ էթնիկ բալթյան ազգերի պատմական հիշողության առկայության պարագայում պայմանները լավագույնը չէին, և ծանրաբեռնված էին կորստյան և նույնիսկ էթնիկ բռնության զգացումով:<sup>7</sup>

7. Միսիունասն (Misiunas) ու Տաագեպերան (Taagepera) *"The Baltic States"* գրքի՝ էջ 354-55, մի աղյուսակ են ներկայացնում, որտեղ հիմնավորված ենթադրություն են անում 1939-45թթ. ընթացքում խորհրդային և նացիստական քաղաքականության պատճառով բնակչության կորուստների մասին: Նրանք միայն Էստոնիայի համար պարզել են, որ այդ կորուստները ներառում են՝ խորհրդային տեղահանումներն ու մահապատիժները 1940-41թ.(15000), Խորհրդային բանակի զորահավաքը 1941թ. և 1944-45թթ. (35000), տարհանումը ԽՍՀՄ 1941թ. (30000) և խորհրդային մահապատիժներն ու տեղահանումները 1944-45թթ. (30000): Նրանք գնահատում են, որ այդ բոլոր կատեգորիաներից միայն ընդամենը 20000 էստոնացի է վերադարձել Էստոնիա: Լատվիայի և Լիտվայի համար նրանց նշած թվերն ավելի վատն են: Օրինակ, խորհրդային մահապատիժներն ու տեղահանումները 1944-45թթ. Լատվիայում կազմում են 70000 և Լիտվայում՝ 50000: 1941-45թթ. նացիստական օկուպացիայի ընթացքում մահապատիժներն ու տեղահանումները Լիտվայում կազմել են 200000, Լատվիայում՝ 90000 և

Սակայն արդյո՞ք ռուսախոս փոքրամասնություններն իրականում «անցողիկ» են, ինչպես որ նրանց հաճախ կոչում են: Կարո՞ղ են արդյոք նրանք երբևէ դառնալ նոր վերասակայնացած բալթյան պետությունների լոյալ քաղաքացիներ:<sup>8</sup> 1993թ-ի վիճակագրորեն ներկայացուցչական մի հարցման ժամանակ Էստոնիայում ոչ բալթյան ազգությունների զգալի թվով՝ 35%, մարդիկ ասել են, որ իրենք ծնվել են Էստոնիայում: Լատվիայում այդ թիվը 52% էր: Ոչ բալթյան ազգության մարդկանց ճնշող մեծամասնությունն ասել էր, որ քսանմեկ տարուց ավելի ապրում է բալթյան հանրապետություններում: Էստոնիայում՝ 78%-ը, Լատվիայում՝ 86%-ը և Լիտվայում՝ 81%-ը: Բալթյան փոքրամասնությունների մնացած մասը՝ 15%-ն Էստոնիայում, 9%-ը՝ Լատվիայում և 10%-ը՝ Լիտվայում, ասել է, որ բնակվում է այդ երկրներում տասնմեկից քսան տարի:<sup>9</sup> Ռուսները բալթյան երկրներում, անկասկած, դժվարին ժառանգություն են հանդիսանում, բայց նրանք անցողիկ չեն:

Լատվիայի բնակչությունը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, որի ընթացքում 2 միլիոնից պակասել էր 1.4 միլիոնի, ավելացել էր 535000 ոչ լատվիացի ներգաղթողներով: Բնիկ բնակչությունը մինչև պատերազմը՝ 1939թ-ին 75.5% էր մինչդեռ 1989թ. նվազեց մինչև 52%-ի: Անկախություն ստանալուց հետո լատվիացիները փոքրամասնություն էին կազմում Լատվիայի յոթ մեծ քաղաքներում՝ սկսած 47%-ից՝ Յուրմալայում մինչև ընդամենը 13%-ը՝ հյուսիսային Դաուգավպիլս քաղաքում: Լատվիայում բնակչության 34%-ը ռուսներն են, 4.5%-ը՝ բելառուսները և 3.5%-ը՝ ուկրաինացիները, չնայած որ նրանք միտում ունեն ռուսախոս լինելու և կորցրել են իրենց սկզբնական ազգության հետ կապերի մեծ մասը: Ռուսաստանը, սակայն, նրանց քաղաքացիություն է առաջար-

Էստոնիայում՝ 10000: Դրանցից պարզված է, որ համապատասխանաբար՝ 180000-ը, 70000-ը և 1000-ը հրեաներ էին: Բալթյան ազգությունների մասին Ռոսի (Rose) և Մալիի ուսումնասիրությամբ հարցվածների 42%-ն ասել է, որ իրենց ընտանիքներից առնվազն մեկը տեղահանվել, բանտարկվել կամ մահապատժի է ենթարկվել: Խորհրդային չարաշահումների մասին պատմական հիշողությունը շատ ավելի ուժեղ է, քան նացիստական չարաշահումների մասին. ուրթ անգամ ավելի շատ հարցվածներ, ի հակադրություն նացիստների, խորհուրդներին են համարում իրենց դժբախտությունների պատճառը (Rose and Maley, հարց 216): Բնակչանաբար, քիչ փրկված հրեաներ են մնացել, որոնք կարող էին վերհիշել բալթյան հրեաների հոլոքոսթը, հատկապես՝ Լիտվայում ու Լատվիայում: Richard Rose and William Maley, "Nationalities in the Baltic States, a Survey Study", Studies in Public Policy, 222 (1994):

8. Նոր վերանկայացած բալթյան պետություններում *ռուսներ, ռուսախոսներ և ոչ բալթյան ազգեր* տերմինների հետ կապված անխուսափելի խառնաշփոթ կա: Ինչպես ցույց է տալիս Ադյուսակ 20.1-ը, անկախանալու պահին Էստոնիայում և Լատվիայում զգալի ուկրաինական և բելառուս փոքրամասնություններ կային: Նրանց մեծ մասը ռուսախոս էր, բայց ոչ անպայման՝ «ռուս»: Հնարավոր է, որ Ադյուսակ 20.1-ում «այլ»-երը նա ռուսախոսներ են խորհրդային հանրապետություններից, որոնք հիմա ԱՊՀ-ի անդամ երկրներ են: Այս գլխում մենք անվանադիր ազգի ներկայացուցիչներին (այսինքն՝ Էստոնացիներին, լատվիացիներին և լիտվացիներին) կանվանենք *բալթյաններ*: Այդու մենք *ոչ բալթյաններ* կամ *բալթյան փոքրամասնություններ* կանվանենք: Երբ հարցման տվյալներում հատուկ նշվում է «ռուսախոս» ռուսներին հակադրելու համար, մենք նաև դա այդպես կնշենք: Քանի որ ինքնությունները փաստորեն սոցիալապես են կազմվում և մշտապես փոխվում են (Դելվիդ Լեյթինի հետազոտությունների վրա հիմնվելով), մենք կարծում ենք, որ ռուսախոս բնակչությունը, անկախ նրանից, թե որտեղից՝ Ուկրաինայից, Բելառուսից, Ռուսաստանից, թե ԱՊՀ այլ հանրապետությունից է եկել, հիմա «ռուսախոս փոքրամասնություն» սփյուռքի նոր ինքնություն է իրականում ձևավորում:

9. Տե՛ս Rose and Maley, "Nationalities in the Baltic States", 52-53: Տվյալները վերցված են 1993թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին անցկացված հարցումից, որն ընդգրկում էր վիճակագրորեն ներկայացուցչական ընտրանք կազմող 6136 հարցազրույցներ բալթյան պետություններում յուրաքանչյուր յոթ ազգությունների հետ:

կում:<sup>10</sup> Ռիգան պատմականորեն բազմազգ քաղաք է:<sup>11</sup> Ռիգայի ռուսական համայնքն առանձնահատուկ դիրք է զբաղեցնում, և նրա մի քանի կարևոր առաջնորդներ սատարել են Լատվիայի անկախությանը: Ռիգան մաքուր լատվիական մշակութային և քաղաքական դեմք ունեցող քաղաքի վերածելը հակասության մեջ է այդ ավանդական ազգային պետության և ազատական ժողովրդավարության տրամաբանությունների հաշտեցման խնդրի հետ, որը Լատվիան է:

Ժողովրդագրության և մշակույթի առումով ազատական ժողովրդավարության ամենահեշտ դեպքը Լիտվան է: Լիտվան ունի խորհրդային բռնակցման և տիրապետության նույն փորձը, չնայած որ կաթոլիկ մեծամասնությունը վառ էր պահում հակախորհրդային զգացումները: Իհարկե, 1989-91թթ. «Սայուդիսի» և նախասնկախության շրջանի ազգայնական առաջնորդ Վիտաուտաս Լանդսբերգիսի ղեկավարության ներքո հակախորհրդային ազգայնական համախմբումը բալթյան մյուս երկրների պես էր կամ ավելի ուժեղ: Սակայն անկախություն ձեռք բերելու պահին ռուսական փոքրամասնությունը ողջ բնակչության ընդամենը 9%-ն էր կազմում: Ավելին, այնտեղ կար 7%-անոց կարևոր լեհական փոքրամասնություն, որն ակնհայտորեն Ռուսաստանն իր հայրենիքը չէր համարում: Քանի որ բալթյան քաղաքական վերնախավերի շարքում ավելի քիչ ազգագրական «տազնապ» կար Լիտվայում, հետևաբար, հոգեբանորեն և քաղաքականապես ավելի հեշտ էր բոլոր բնակիչների համար ներառական քաղաքացիության ռազմավարությանը հետևելը, քան Էստոնիայում և Լատվիայում:<sup>12</sup> Ոչ լիտվացիների փոքր համամասնության և փոքրամասնությունների տարասեռության պատճառով լիտվացիները երբեք քաղաքացիության վանողական քաղաքականություն չներմուծեցին: Ոչ լիտվացիներն այլ քաղաքացիների պես ունեն բոլոր քաղաքական իրավունքները: Բոլոր հարցումների տվյալները զգալի ինտեգրացիա են ցուցադրում: Այս գլխի նպատակներից էլնելով՝ Լիտվան, այդպիսով, իրականում զգալի լարվածություններ չունի ազգային պետության և ազատական ժողովրդավարության տրամաբանությունների միջև:

Երեք բալթյան հանրապետությունները՝ Էստոնիան, Լատվիան և Լիտվան, երբ անկախություն ստացան, անկախ պետականության և ժողովրդավարության ավանդույթ ունեին: Ի տարբերություն ԽՍՀՄ-ի այլ հանրապետությունների՝ նրանք Խորհրդային Միության մաս էին՝ միայն սկսած 1940թ-ից, ոչ 1917թ-ից կամ քաղաքացիական պատերազմից անմիջապես հետո: Բայց բալթյան հանրապետությունների մոտ հիսուն տարի ինտեգրումը խորհրդային պետությանն ու հասարակությանը նրանց ժողովրդավարացման գործընթացներն արմատապես տարբերեցին «արտաքին կայսրության»՝ Կենտրոնական Եվրոպայի պետություններից:

Պետականության վերականգնման և ազգի վերակառուցման տարբերությունները կենտրոնական տեղ զբաղեցրեցին բալթյան երկրներում ժողովրդավարության կառուցման գործընթացներում: Այդ գործընթացների անորոշությունը լավ երևում էր 1991թ. Ռի-

10. Ské Lieven, "The Baltic Revolution", 433-34:

11. Օրինակի համար, Լիվինը (Lieven) "The Baltic Revolution"-ում մեջբերումներ է անում, որոնք ցուցադրում են, որ 1867թ. գերմանացիները կազմում էին Ռիգայի բնակչության 42.9%-ը, ռուսները՝ 25.1%-ն էին և լատվիացիները՝ 23.6%-ը:

12. Լիտվայում ներառական քաղաքացիության շնորհման վերաբերյալ տե՛ս Lieven, "The Baltic Revolution", 309-10:

գայում խորհրդարանի մոտ բարիկադների վրա գրված կարգախոսից, որը վերցվել էր 1863թ. ցարի դեմ լեհական ապստամբության ժամանակներից՝ «Մեր և Ձեր ազատության համար»: Այդ կարգախոսի ներքին խոստումն այն էր, որ ազատությունն ու ժողովրդավարությունը պետք են բոլորին՝ և՛ բալթյան, և՛ այլ ազգերին:<sup>13</sup> Սակայն կարճ ժամանակ անց քաղաքացիության վերաբերյալ մի այլ դիսկուրս ի հայտ եկավ, որում ազգային պատկանելությունը նախապատվելի էր դիտվում: Մեծաքանակ փոքրամասնությունները (հիմնականում՝ ռուսախոս) որակվեցին որպես օտարերկրյա «գաղութարարներ» կամ «ժամանակավորներ»:

Վերը նշված խնդիրների խումբը չէր կարող ավելի լավ բնութագրվել, քան այն փաստով, որ ինչ-որ ժամանակ միանգամից կարելի էր հանդիպել ժողովրդավարորեն ընտրված մարմինների՝ երկուսն էստոնիայում, և երկուսը՝ Լատվիայում: Ընտրված մարմիններից մեկը՝ Գերագույն խորհուրդը՝ խորհրդարան, որտեղ անկախամետ ժողովրդական ճակատը մեծամասնություն ուներ, ընտրվել էր ողջ ժողովրդի կողմից 1991թ. գարնանը: «Քաղաքացիական կոնգրես» կոչվող մյուս՝ նույնպես ընտրված անկախամետ մարմնի ընտրությունները սահմանափակված էին մինչև 1940թ-ի քաղաքացիներով և նրանց հետնորդներով:<sup>14</sup> Մենք կարող ենք ասել, որ գերագույն խորհուրդները նորահայտ բազմազգ ժողովրդավարական պետության մաս էին, որտեղ մեծամասնություն ունեին անկախամետ ժողովրդական ճակատները, մինչդեռ քաղաքացիական կոնգրեսները ազգի ներկայացուցչություն էին: Այս հարցում բալթյան ազգերը համարյա բացառիկ էին ազգայնականության պատմության մեջ նրանով, որ նույնիսկ մինչև անկախությունը պետության ներսում ժողովրդավարական ներկայացուցչություն էին ապահովում ազգի համար: Այս երկակիությունը հնարավոր էր դարձել այդ ժամանակ տիրապետող անորոշության պատճառով: Այդ անորոշությունն արտացոլվում էր այն բանում, որ հնարավոր էր նույնիսկ միաժամանակյա անդամակցություն երկու մարմիններին: Կարևոր է, որ էստոնիայում 1992թ. սահմանադրությունն ընդունած Սահմանադիր ժողովը ձևավորվել էր երեսուն անդամներից, որոնց առաջարկել էին պաշտոնական Գերագույն խորհուրդը և զուգահեռաբար՝ Կոնգրեսը: Եկեք վերլուծենք դեպի անկախություն և ժողովրդավարական ու ոչ ժողովրդավարական ներկայացուցչություն ու մրցակցություն երկակի անցման դժվարությունը:

### ԱՆՅՈՒՄԸ ԴԵՊԻ ԱՆԿԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ.

ՓՈԽԼԸՄՍՄԱՆ (ԿՈՄՊԼԵՄԵՆՏԱՐՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ՆԱԿԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԸ

Ակտիվ այլախոհությունը սկսեց հայտնվել էստոնիայում գորբաչովյան տարիներին՝ որպես բողոք ընդդեմ բնապահպանական վնասակար նախագծերի կամ որպես մշակույթի հուշարձանների վերականգման պահանջ, ինչպես օրինակ՝ էստոնիայի Ազգային

13. Նույն տեղում, էջ. 303:

14. Ժողովրդական ճակատի կողմից վերահսկվող էստոնիայի Խորհրդային Հանրապետության խորհրդարանի ու ի վերջո՝ իրենց սեփական զուգահեռ էստոնական կոնգրեսը ստեղծած էթնիկ էստոնացիների կոմիտեների դուալիզմի և մրցակցության փայլուն վերլուծություն, *տե՛ս* Taagepera, "Estonia: Return to Independence", 170-182:

Ժառանգության ընկերակցության կողմից, որն ավելի ուշ՝ 1989թ. հունվարին, կոչ արեց ստեղծել բացառապես մինչ 1940թ. ապրած քաղաքացիների և նրանց հետնորդների կողմից ընտրված Կոնգրես: Լատվիայում՝ Ռիգայում, Ազատության հուշակոթողի մոտ 1941-ի ստալինյան տեղահանման տարելիցը նշելու համար 1987թ. կայացած միջոցառումները սկիզբ դրեցին ազգային զգացմունքների արթնացմանը: 1987թ. Լատվիայի տնտեսական ինքնավարության առաջարկն արտացոլում էր տնտեսության տվյալ պահի վիճակից ունեցած հիասթափությունը: 1989թ. ամռանը Մոսկվայում Գերագույն Խորհուրդն ընդունեց «Մոլոտով-Ռիբենտրոպ պակտի» գաղտնի արձանագրությունների գոյությունը և դրանով իսկ՝ խորհրդային կարգերի անօրինականությունը: Բալթյան կոմունիստական կուսակցությունները սկսեցին տրոհվել՝ հայտնվելով Գորբաչովի բարեփոխումների ընդդիմացողների և ժողովրդական ճակատների ու «Մայուդիսի» աջակիցների միջև, որոնց առաջնորդները 1988թ. օգոստոսին Մոսկվայում արժանացել էին Ալեքսանդր Յակովլևի և այլ բարեփոխիչների հավանությանը: Ժողովրդական ճակատի առաջնորդները տարբեր ծագում ունեին, հիմնականում և՛ հումանիտար, և՛ տեխնիկական մտավորականության շարքերից էին դուրս եկել, շատերը նախկինում կոմունիստական կուսակցության անդամներ էին եղել: Էստոնիայում Ժողովրդական ճակատը հիմնականում կազմված էր կոմունիստական վերնախավի ազատական թևից: 1989թ. և 1990թ. լիտվական և էստոնական կոմունիստական կուսակցությունները ձայների մեծամասնությամբ որոշեցին անջատվել խորհրդային կոմունիստական կուսակցությունից: Լատվիական կոմունիստական կուսակցությունը մեջտեղից կիսվեց: Գերագույն խորհուրդներն ընդունեցին անկախության հռչակագրեր, քաղաքացիության մասին նոր օրենքներ, բնական պաշարների ու արդյունաբերության վրա վերահսկողության վերաբերյալ հայտարարագրեր, և որ ամենակարևորն է՝ ամբողջովին մերժեցին խորհրդային բռնակցման օրինականությունը:

Գերագույն խորհուրդների 1990թ. փետրվարյան և մարտյան ընտրությունների ժամանակ ձայնի իրավունք ստացան մշտական բնակություն ունեցող բոլոր չափահասները, բացառությամբ հոգեկան հիվանդների:<sup>15</sup> Թեկնածու գրանցվելու համար անհրաժեշտ էր ունենալ ընդամենը տասը տարվա մշտական բնակություն: Կուսակցությունները քիչ ժամանակ ունեին ընտրություններին պատրաստվելու, և թեկնածուները մասնակցում էին որպես անհատներ և ոչ թե՛ որպես որոշակի կուսակցության անդամներ, բայց հաճախ աջակցություն էին ստանում մեկ կամ մի քանի քաղաքական կազմակերպությունների կողմից: Այս ընտրություններից ժողովրդական ճակատները դուրս եկան որպես մեծամասնություն ունեցող խորհրդարանական խմբեր:<sup>16</sup> Էստոնիայում 105 պատգամավորական տեղերից (որոնցից 4-ը ներկայացնում էր բանակը) ժողովրդական ճակատը ստացավ 46 տեղ, Աշխատավորական կոլեկտիվների միացյալ խորհուրդը (պաշտպանում էր

15. Stå'u Jan Ake Dellebrant, "The Reemergence of Multipartyism in the Baltic States", in Sten Berglund and Jan Ake Dellebrant, eds., "The New Democracies in Eastern Europe: Party Systems and Political Cleavages", Aldershot, U.K.: Edward Elgar Publishing, 1991), 71-106:

16. Կարելի է եզրակացնել, որ Էստոնիայի և Լատվիայի «հիմնադիր ընտրությունները» նրանք էին, որոնք կայացան 1990թ., և որոնցում հաղթեցին ժողովրդական ճակատները: Եթե այդպես է, ապա Էստոնիայում անկախությունից հետո 1992թ. ընտրությունները մեծապես ցուցադրեցին այն ռուսներին և ռուսախոսներին ընտրական իրավունքներից զրկում, ովքեր քվեարկել էին նախկին՝ 1990թ. ընտրություններում:



Էստոնիայի՝ որպես խորհրդային հանրապետության կարգավիճակը՝ ռուսախոս բնակչության աջակցությամբ ստացավ 23 տեղ, իսկ կոմունիստներից և ԽՍՀՄ-ի հետ որոշ կապեր պահպանելով անկախությունը պաշտպանող նախկին կոմունիստներից կազմված «Ազատ Էստոնիա» Ժողովրդավարական ընտրական կոալիցիան 13 մանդատ ապահովեց: Էստոնիայում ընտրված 105 պատգամավորներից մոտ 27-ը համարվում էին ռուսախոս բնակչության ներկայացուցիչներ:

Լատվիայի Գերագույն խորհրդում 201 մանդատ էր նախատեսված: Ժողովրդական ճակատը ստացավ 131-ը: Կոմունիստական կուսակցության և նրա աջակիցների կողմից ղեկավարվող ընդդիմադիր խմբերը, որոնք դեմ էին անկախությանը, 59 տեղ ստացան: Ութ տեղ զբաղեցրին անկախ պատգամավորները:

Բալթյան երկրների ռուսախոս կոմունիստները և Մոսկվայում կոշտ գծի կողմնակիցները միավորեցին ուժերը՝ ստեղծելու խորհուրդներին նվիրված շարժումներ, որոնք պետք է ընդդիմանային ժողովրդական ճակատների բարեփոխիչ և ծայրյալ անկախամետ ուժերին: Էստոնիայում խորհրդայնամետ ուժերը կոչվում էին «Էստոնական ԽՍՀ-ի աշխատավորների միջազգային շարժում», Լատվիայում՝ «Միջազգային ճակատ» և Լիտվայում՝ «Միասնություն»: Հաճախ նաև պաշտոնական արհմիությունների միջոցով համամիութենական գործարանների ռուսախոս բանվորներին համախմբելու ջանքեր էին գործադրվում՝ Էստոնիայում և Լատվիայում ստեղծելով Աշխատավորական կոլեկտիվների միավորված խորհուրդներ (ՕՍՏԿ): Ինտերշարժման և ՕՍՏԿ-ների կողմից 1989թ. օգոստոսին ձեռնարկված ընդհանուր գործադուլը պաշտպանեց աշխատուժի 5-ից 8%-ը: 1990թ. մայիսին նմանատիպ փորձերը ձախողվեցին: Բանվորների մեծ մասը մերժեց կոռուպացված կոմունիստական առաջնորդներին, բայց միայն փոքր մասը կարողացավ իրեն ամբողջովին հեռու պահել կոմունիստական անցյալից:

Կոմունիստական կուսակցությունների խորհրդայնամետ թևերում կային նաև բալթյան ազգությունների մարդիկ, որոնք չէին կարողանում անցում կատարել դեպի անկախության սատարումը, ի տարբերություն այնպիսի անկախամետ առաջնորդների, ինչպիսիք էին՝ Ալգիրդաս Բրազաուսկասը Լիտվայում, Անատոլիս Գորբունովը՝ Լատվիայում և Առնոլդ Ռյույտելը՝ Էստոնիայում: Որոշ կոմունիստներ, որոնք չէին պաշտպանում անկախությունը, հեռացան բալթյան երկրներից. ուրիշներն այնտեղ շարունակեցին քաղաքական գործունեությունը:

Բալթյան երկրներում 1990թ. փետրվար-մարտին կայացած ընտրություններում խորհուրդներին հավատարիմ մնացածները շահեցին քվեների մեծամասնությունը ռուսախոս շրջաններում: Սակայն Լատվիայում Ժողովրդական ճակատն առաջին փուլում մեծ թվով ձայներ հավաքեց ռուսախոս բնակչության շրջանում, բայց երկրորդ փուլում Ժողովրդական ճակատի պաշտպանությունը ռուսական փոքրամասնության կողմից անհետացավ, երբ Լիտվան անկախություն հայտարարեց: Վերջնական արդյունքում ընտրվեցին Ժողովրդական ճակատի 139 թեկնածուներ (այդ թվում 5 ռուսախոսներ, 2 լեհ և 2 հրեա) և «Հավասար իրավունքների» թևի (Ինտերֆրոնտ և կոմունիստներ) 62 թեկնածուներ, որոնցից 8-ն էթնիկ լատիշներ էին:<sup>17</sup>

17. Երեք բալթյան /երկրներում/ 1990թ. ընտրությունների փայլուն համեմատություն, *տե՛ս Lieven, "The Baltic Revolution"*, 214-315:

Անշուշտ, կային որոշ ռուսական փոքրամասնություններ, որոնք չէին հաշտվել անկախության և Մոսկվայի հակահեղափոխության պարտության հետ: Օրինակ, Նարվայի խորհուրդն անտեսեց Էստոնիայի սահմանադրությունը, քանզեց սահմանապահ պահակակետերը և ստեղծեց խորհրդամետ կիսազինվորական ուժեր՝ աշխատավորական ստորաբաժանումներ: 1992թ. նախկին կոմունիստները հաղթեցին Նարվայի տեղական ընտրություններում: Բայց և այնպես, սահմանամերձ շրջանների անջատման հարցը 1995թ-ի դրությամբ, թվում է, թե գտնվում է անորոշ վիճակում:

1990թ. ամռանը երեք բալթյան հանրապետությունները գտնվում էին ընտրված ներկայացուցիչների կողմից որոշված ժողովրդավարությանն ու անկախությանն անցումն ավարտելու ճանապարհին: Ընտրություններն արդար և մրցակցային էին՝ չնայած հենված էին եղել ժողովրդական ճակատների տարասեռ կոալիցիաների և անհատ թեկնածուների քվեարկության վրա: Հետագա քաղաքականությունը չէր լինելու բանավեճ ժողովրդավարության մասին, ինչպես որ մենք այն սահմանել ենք, այլ այն մասին, թե ինչ տեսակի ժողովրդավարություն է պետք ունենալ. ներառական ազատական ժողովրդավարություն՝ հենված բոլոր մշտական բնակչություն ունեցողների քաղաքացիության վրա՞, թե՞ վանողական «Էթնիկ ժողովրդավարություն»՝ միայն 1940թ-ի հետնորդների համար:<sup>18</sup> Երկրորդ անցումն իրագործման փուլում է գտնվում:

Էստոնիան իր անցումն սկսեց բարենպաստ աշխարհաքաղաքական պայմաններում, հատկապես ամենից կարևոր՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների շնորհիվ: Երբ Խորհրդային Միության «Սև բերետավորներ» զինվորական միավորումները (կամ ՕՍՕՆ-ը) 1991թ-ի հունվարին հարձակվեցին և սպանեցին մոտ քսան բալթյան ցուցարարների, Էստոնիայի վարչապետի հրավերով այդ ժամանակվա Ռուսաստանի Գերագույն խորհրդի նախագահ Բորիս Ելցինը եկավ Տալլին՝ անմիջապես ստորագրելու Ռուսաստանի և բոլոր բալթյան պետությունների միջև փոխադարձ ճանաչման համաձայնագիր: Ելցինը դիմեց ռուս զինվորներին՝ չկրակել քաղաքացիների վրա: Էստոնաամերիկացի հասարակագետ (և 1992թ-ին նախագահի թեկնածու) Ռեյն Տագեպերան (Rein Taagepera) պնդում է, որ Ելցինի աջակցությունը Էստոնիային՝ Ռուսաստանի ինքնակոչ պաշտպանների (որոնք պահանջում էին Կրեմլի ուղղակի կառավարում) ոտքի տակից հանեց հողը: Ելցինի դերը հավասարապես կարևոր էր Գորբաչովի դեմ հեղաշրջման փորձի ժամանակ: Խորհրդային զորքերը Տալլինի ուղղությամբ շարժվեցին 1991թ-ի օգոստոսի 21-ին: Հաջորդ օրն Էստոնիան անկախություն հռչակեց: Երկու օր անց Ելցինը Ռուսաստանի

18. «Էթնիկ ժողովրդավարություն» հասկացության մասին տե՛ս Juan J. Linz, "Totalitarian and Authoritarian Regimes", in Fred I. Greenstein and Nelson W. Polsby, eds., "Handbook of Political Science" (Reading, Mass.: Addison-Wesley Publishing, 1975), 3:326-30: Այդ աշխատանքում Լինցը Էթնիկ ժողովրդավարությունները բնութագրել է որպես այնպիսի հասարակարգեր, որոնք ժողովրդավարական են գերակայող խմբի համար, բայց Էթնիկության հողի վրա և այլ խմբերին հեռացնում են քաղաքական գործընթացներից: Այդ կոնցեպտի կիրառությունների համար, տե՛ս Yoav Peled, "Ethnic Democracy and the Legal Construction of Citizenship: Arab Citizens of the Jewish State", American Political Science Review 86, no. 2 (1992), 432-43 և Velio Pettai, "Emerging Ethnic Democracy in Estonia and Latvia: The Dynamics of Sovereign Nationalism and Minority Identities" (գեկույցը ներկայացված է Բալթյան հետազոտությունների զարգացման սանցիացիայի 14-րդ գիտաժողովում, Չիկագո, Իլինոյս, 1994թ., հունիսի 8-11):

անունից ճանաչեց Էստոնիան՝ որպես անկախ երկիր ավելի շուտ, քան դա արեց Եվրոպական Համայնքի որևէ անդամ երկիր:<sup>19</sup>

Ռուս փոքրամասնության հանդեպ Էստոնիայի և Լատվիայի քաղաքականությունը հասկանալու համար մենք երբեք չպետք է մոռանանք ամբողջատիրության և մինչև անկախ ժամանակահատվածների ժառանգությունը: Առանց անցյալին անդրադառնալու դժվար է հասկանալ ժողովրդական ճակատների գործառույթները Լատվիայում և Էստոնիայում կամ «Սայուդիսինը»՝ Լիտվայում: Դրանք ավելի շատ շարժումներ էին, քան կուսակցություններ: Դրանք տարբեր առաջնորդներ ու օրակարգեր ունեցող առանձին խմբակցությունների կոալիցիաներ էին՝ քիչ թե շատ միավորված՝ Մոսկվային դիմակայելու և դեպի անկախություն քայլեր անելու համար: Այս «հովանոցային» կազմակերպությունների տարրերն ի վերջո բախվեցին իրար և բաժանվեցին մասերի: Բայց նրանք պատմական կատալիզատորներ էին: Նկատի առնելով բարեփոխումների ընթացքում կոմունիստական տարրի կարևորությունը՝ պետք է նշվի այն փաստը, որ ամբողջատիրական երկարատև կարգերի ներքո համարյա յուրաքանչյուր ոք, նույնիսկ այլախոհներն ինչ-որ ժամանակ իրենց կարիերան արել էին վարչակարգի կազմակերպությունների ներսում: Ոմանք այն արել էին պետական համակարգում, ուրիշները՝ կուսակցության ներսում և կոմերիտմիությունում, ուրիշները՝ մշակութային կազմակերպություններում՝ զովաբանելով վարչակարգը, և ոչ քչերն էին համագործակցել նույնիսկ ՊԱԿ-ի հետ: Նախկինում խորհրդային վարչակարգում ներառվածության ժառանգությունը նոր անկախամետ ընտրանուն դարձնում էր խոցելի փոխադարձ ապակառուցողական մեղադրանքների և ավելի արմատական ազգայնականների՝ հատկապես վատ կրթված ու ցածր դիրք ունեցող «զավառացիների» կամ արտագաղթածների հարձակումների համար: Այդ համատեքստում շատ քաղաքական գործիչներ, ովքեր սկզբում քաղաքացիության հարցում կողմնակից էին ներառական քաղաքականության (անվանում ենք «գրոյական տարբերակ») ցույց տալու, որ անկախությունից հետո համարյա բոլոր բնակիչներն ինքնաբերաբար քաղաքացիություն կստանան, թեքվեցին դեպի վանողական ազգայնական տարբերակը: Այս վանողական տարբերակում քաղաքացիությունը նախատեսված էր միայն մինչ 1940թ. եղած քաղաքացիների և նրանց հետնորդների համար, և դա քաղաքացիությունից զրկում էր շատ ռուսախոսների, ովքեր ծնվել էին բալթյան երկրներում:

Ներկայացնենք առանձնահատուկ ակնառու մի օրինակ քաղաքացիության հարցում ներառական ռազմավարությունից վանողականին անցնելու վերաբերյալ: 1990թ-ի մայիսի 6-ին՝ Լատվիայի անկախության հռչակումից երկու օր անց, Լատվիայի Գերագույն խորհրդի նախագահ Անատոլիս Գորբունովը ռուսաց լեզվով ելույթ ունեցավ լատվիական հեռուստատեսությամբ՝ խոստանալով, որ բոլոր այն մարդիկ, ովքեր կցանկանան դառնալ Լատվիայի քաղաքացիներ, կարող են դառնալ: Նա նաև հատուկ հրամանագիր հրապարակեց՝ երաշխավորելով քաղաքական և մշակութային իրավունքներ Լատվիայի ոչ լատվիացի բնակիչների համար: Նա պնդեց, որ լուրջ չէ խոսել «երկրորդ կարգի քաղաքացիների» մասին: Սակայն 1992թ. ամռանը Լատվիայի այդ նույն առաջնորդը կողմ

19. Taagepera, "Estonia: Return to Independence", 202:

արտահայտվեց այնպիսի հանրաքվեի օգտին, որը քաղաքացիությունը սահմանափակեց մինչև 1940թ-ի քաղաքացիներով և նրանց հետնորդներով:<sup>20</sup>

**ԲԱԼԹՅԱՆ ՌՈՒՍՆԵՐԸ. ՄՇԱԿՈՒՅԹՈՎ ՉՈՒԾԱՑՎՈ՞Ղ,  
ԲԱՅՑ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՊԵՍ ԻՆՏԵԳՐՎՈ՞Ղ**

Ժողովրդավարական բազմազգ պետության կարևորագույն հարցն այն է, թե արդյո՞ք փոքրամասնությունները բաց են բազմակի և փոխլրացնող քաղաքական ինքնության և լոյալության համար, և եթե այո, ապա արդյո՞ք նրանց քաղաքացիություն կշնորհվի: Եթե փոքրամասնությունների մշակութային և քաղաքական ազատությունները երաշխավորվեն, գուցե նրանք իսկապես՝ դառնան լոյալ քաղաքացիներ, թե՞ նրանք ի սկզբանե կման լոյալ իրենց «հայրենի» պետությանը: Ակնհայտ է, որ նման հարցերը բացառիկ կարևորություն ունեն Էստոնիայի և Լատվիայի դեպքում: Բարեբախտաբար, հարցումների երկու տարբեր շարքեր թույլ են տալիս մեզ քննել այս խնդիրները:

1990թ. հունիսից օգոստոս՝ մինչև անկախությունը կատարված և գերմանացի հայտնի հասարակագետ Հանս-Դիտեր Կլինգեմանի (Hans-Dieter Klingemann) կողմից համակարգված սոցիալական հարցումը ցույց է տալիս, որ ինչպես էթնիկ ռուսները, այնպես էլ էթնիկ էստոնացիներն ու լատվիացիները համեմատաբար ավելի ուժեղ նույնականացման զգացողություն ունեին իրենց հանրապետությունների հետ, և համեմատաբար ավելի թույլ նույնականացման զգացողություն՝ ԽՍՀՄ-ի հետ (Աղյուսակ 20.2):

Աղյուսակ 20.2-ը երեք կարևոր կետեր է բացահայտում: Առաջին. նույնիսկ այն ժամանակ, երբ ԽՍՀՄ-ը գոյություն ուներ և դեռևս գերտերություն էր, բալթյան երկրներում բնակվող էթնիկ ռուսների հիմնական ինքնությունը ԽՍՀՄ-ի հետ համեմատաբար թույլ էր, դրա հետ մեկտեղ ինքնությունն ինչ-որ չափով ավելի ուժեղ էր Էստոնիայում, քան Լատվիայում: Երկրորդ. 1992թ. Լատվիայի և Էստոնիայի անկախությունից, Խորհրդային Միության վերացումից ու անկախ Ռուսաստանի հայտնվելուց հետո Լատվիայի ռուսախոսների միայն 4.2%-ն իրենց առաջին ինքնությունը Ռուսաստանն էին անվանել, մինչդեռ 53.2%-ն իրենց առաջին ինքնություն համարում էին այն հանրապետությունը, որտեղ բնակվում էին: Էստոնիայի ռուսախոսների շրջանում հարաբերակցությունը՝ համապատասխանաբար 12.0 և 38.3 էր: Երրորդ. մեր կարծիքով՝ այս տվյալները ցուցադրում են, որ բալթյան երկրների ռուսախոսներն ունակ էին բազմակի և փոխլրացնող ինքնության: Օբյեկտիվորեն և մշակութի առումով նրանք ռուսախոս էին: Բայց սուբյեկտիվորեն և քաղաքականապես նրանք բաց էին իրենց բնակության հանրապետության հետ ինքնանույնականացման համար:

Հարցերի մի այլ շարք ցույց է տալիս, որ ոչ բալթյան փոքրամասնությունները (չնայած ավելի փոքր չափով, քան էթնիկ բալթյան ազգերը) իրենց հպարտ էին զգում իրենց հանրապետությունների բնակիչ լինելու համար: Աղյուսակ 20.3-ը ցույց է տալիս, որ ոչ բալթյան ազգությունների երեք քառորդը 1990թ-ին հպարտ էր՝ համապատասխան հանրապետության բնակիչ լինելով (Աղյուսակ 20.3):

20. Anatol Lieven, "The Baltic Revolution", 304:

**Աղյուսակ 20.2. Էստոնիացիների, լատվիացիների և ոչ էստոնացիների ու ոչ լատվիացիների (ռուսերեն խոսողները) ինքնությունները բալթյան երկու հանրապետություններում, երբ նրանք ԽՍՀՄ-ի մաս էին կազմում (1990թ., հունիս-օգոստոս), և անկախությունից հետո (1992թ.)**

**Վարց. «Որտեղի՞ բնակիչ եք Ձեզ զգում առաջին հերթին, երկրորդ հերթին»**

Պատասխան	Տարի	Տոկոս							
		Էստոնացիները		Ոչ էստոնացիները		Լատվիացիներ		Ոչ լատվիացիները	
		1-ն	2-րդ	1-ն	2-րդ	1-ին	2-րդ	1-ն	2-րդ
«Նանրապետության, որտեղ ապրում եմ»	1990	66.9	30.9	37.3	26.7	72.8	24.5	38.5	39.5
	1992	52.3	34.8	38.3	37.4	63.1	36.6	53.2	35.2
«Քաղաքի, վայրի, որտեղ ապրում եմ»	1990	30.3	28.3	32.5	28.3	25.6	55.3	41.6	24.5
	1992	44.0	40.4	40.4	21.5	32.9	39.1	37.1	25.2
«ԽՍՀՄ-ի»	1990	0.5	2.0	21.5	21.2	0.9	1.7	10.6	17.4
«Ռուսաստանի»	1992	—	—	12.0	20.9	0.2	0.2	4.2	15.5
«Այլ պետության»	1992			0.3		0.7	2.1	1.3	6.9
«Եվրոպայի»	1990	1.0	11.5	2.1	4.1	0.5	10.7	0.9	5.7
	1992	2.4	3.5	3.5	5.9	0.9	13.6	0.8	9.0
«Ողջ աշխարհի»	1990	1.3	3.6	6.6	9.8	0.2	7.8	8.4	13.1
	1992	1.3	2.7	5.6	7.0	2.3	8.5	3.4	8.1
Վարցվածների քանակը	1990		621		387		449		460
	1992		629		380		587		481

*Աղբյուրը՝ Hans-Dieter Klingemann (Berlin) and Mikki Titma (Tallinn). Gesellschaft und Politik in Baltikum, Eine Vergleichende Umfrage in Litauen, Estland und Lettland im Juni-August 1990. 1992թ-ի տվյալները վերցված են՝ Hans-Dieter Klingemann, Values and Elections (Preelection Survey) in Estonia, Latvia and Litva, machine readable codebook. Zentralarchiv fur empirische Sozialforschung an der Universitat in Koln, n.d.: 1992թ-ին հարցը մի փոքր այլ կերպ էր ձևակերպված՝ «Նետկյալ աշխարհագրական ո՞ր վայրերին Դուք կասեիք, որ պատկանում եք առաջին հերթին (ցույց տվեք բարտը) և որին, Դուք կասեիք, որ պատկանում եք երկրորդ հերթին»:*

**Աղյուսակ 20.3. Որքա՞ն եք Դուք հպարտ՝ լինելով հանրապետության բնակիչ». բալթյան երկրներում ազգային խմբերի պատասխանները. 1990թ.**

Պատասխան	Տոկոսը					
	Էստոնացիներ	Ոչ էստոնացիներ		Ոչ լատվիացիներ		Ոչ լիտվացիներ
		Էստոնացիներ	Լատվիացիներ	Լատվիացիներ	Լիտվացիներ	
«Շատ հպարտ եմ»	39.5	11.3	72.7	21.1	45.8	13.1
«Վպարտ եմ»	49.0	65.3	24.9	63.5	43.0	66.4
«Շատ հպարտ չեմ»	10.4	18.7	1.6	13.5	10.3	15.3
«Բացարձակապես հպարտ չեմ»	1.2	4.6	7	1.9	.7	5.1
	(621)	(387)	(449)	(460)	(837)	(163)

*Աղբյուրը.* աղյուսակ 20.2-ում նշված 1990թ. հարցումը:

Նույն 1990թ-ի հարցման ժամանակ կար հետևյալ հարցը. «Ինչպիսի՞ն էք ցանկանում, որ լինի Ձեր հանրապետության ապագան»: Միայն 42%-ը ոչ էստոնացիների, 30%-ը ոչ լատվիացիների և 28%-ը ոչ լիտվացիների կողմ էին լիակատար ստատուս-քվոյի (Աղյուսակ 20.4):

**Աղյուսակ 20.4. Բալթյան տարբեր ազգությունների վերաբերմունքը ԽՍՀՄ-ի հետ Բալթիկայի ապագա քաղաքական հարաբերություններին. 1990թ., հուլիս-օգոստոս**

Պատասխան	Նարց. «Դուք ցանկանո՞ւմ եք, որ ապագայում ձեր հանրապետությունը լինի...»					
	Տոկոսը					
	Էստոնիա		Լատվիա		Լիտվա	
	նշ Էստոնացիներ	նշ Էստոնացիներ	նշ լատվիացիներ	նշ լատվիացիներ	նշ լիտվացիներ	նշ լիտվացիներ
Անկախ պետություն ԽՍՀՄ-ի կազմից դուրս (անկախության տարբերակ)	87	15	84	26	80	27
Անկախ հանրապետություն ԽՍՀՄ-ի կազմում, որը կարող է պայմանագրեր կնքել այլ հանրապետությունների հետ (համադաշնության տարբերակ)	11	35	9	32	15	39
Անկախ հանրապետություն ԽՍՀՄ-ի դաշնության շրջանակներում (ստատուս-քվոյի տարբերակ)	1	42	3	30	2	28
Այլ պատասխաններ	1	4	1	1	1	0
Զգիտեմ	0	4	3	11	2	6
Նարցվածների թիվը	620	387	449	460	837	163

*Աղբյուրը.* Hans-Oieter Klingemann and Wolfgang G. Gibowski. "Gesellschaft und Potitik im Baltikum" (հեղինակների կողմից տրամադրված չհրապարակված ձեռագիր):

Չնայած Աղյուսակ 20.4-ը համեմատաբար ցածր տոկոսներ է ցույց տալիս առ այն, որ ոչ բալթյան ազգությունները 1990թ-ին կողմ էին անկախությանը, Լատվիայի վերաբերյալ մեր տվյալները խոսում են այն մասին, որ ոչ լատվիացիների նվիրվածությունը ամրագրված չէր, այլ սոցիալապես կազմավորված էր և ենթակա փոփոխությունների: Իսկապես, Ռասմա Կարկլինս (Rasma Karklins) իր՝ Լատվիային նվիրված հետազոտությամբ ցույց է տալիս, որ 1989թ. հունիսին ոչ լատվիացիների միայն 9%-ն էր անկախամետ: 1990թ. հոկտեմբերին անկախամետ էր 26%-ը: 1991թ-ի մարտին Լատվիայի անկախությանը կողմ էր 39%-ը:<sup>21</sup>

Նախկին Խորհրդային Միության մեջ ռուսախոս սփյուռքի ինքնությունն ու քաղաքականությունը խորհրդային ամբողջատիրական պետության մեջ ռուսական ինքնության ճգնաժամի հետևանքով որոշ բացառիկ բնութագրեր են տրամադրում: 1917-ից մինչև 1991թ. Ռուսաստանը մի այնպիսի ազգ և մշակույթ էր, որը տարրալուծված էր խորհրդային պետության մեջ: Խորհրդային պետությունն ինքը ներգրավված էր «ինտերնացիոնալ» ազգ ստեղծելու գործում: Չափազանցնելով՝ կարող ենք ասել, որ ռուս լինելը հիմնականում ռուսերեն խոսել էր նշանակում: Պատահական չէ, որ սփյուռքում շատ մարդիկ իրենց նույնականացնում էին որպես «ռուսախոսներ» և ոչ թե՛ ռուսներ: Մենք կարիք ունենք ավելի շատ բան իմանալու ԽՍՀՄ-ի Ռուսաստանի Դաշնային Հանրապետությունում և

21. Stéu Karklins, "Ethnopolitics and Transition to Democracy", 50:

այժմ նորանկախ Ռուսաստանում ռուսական մշակութային-ազգային ինքնության ստեղծման մասին: Բայց մինչև հիմա ներսում և հատկապես դրսում դեռևս շատ ապացույցներ կան ռուսական «ազգայնականության» թուլության մասին: Եկեք չմոռանանք, որ ռուսական ազգային-մշակութային ինքնության համար կենտրոնական տեղ զբաղեցնող Ռուս ուղղափառ եկեղեցին հետապնդվում, քայքայվում և «մասնավորեցվում» էր: Ժողովրդի լայն զանգվածներ զգալիորեն ապաքրիստոնեացված էին: Խորհուրդների պատմության դասագրքերում Ռուսաստանի պատմությունը տարրալուծված էր: «Հայրենական մեծ պատերազմը» «խորհրդային հայրենիքի» պաշտպանություն էր: Ռուսաստանում հայրենասիրական հուշակոթողները խորհրդային հուշարձաններն էին: Այս ողջ անցած պատմությունը սփյուռքում փոքրամասնության «ազգային» պահանջների բարձրաձայնումն ավելի շատ սահմանափակում էր «լեզվական», քան «քաղաքական» պահանջներով: Դա նաև որոշ սահմանափակումներ էր դնում հայրենի հողում և «մերձավոր արտասահմանում» ռուսների պատրաստակամության վրա՝ նույնականացվել հնարավոր չլերամիավորված տարածքների հետ:<sup>22</sup> Ի՞նչ է սա նշանակում Բալթիկայում բնակչության ռուսախոս փոքրամասնության ապագա հնարավոր ինքնության ձևավորման համար:

Այս ինչ-որ չափով ապամշակութայնացված ռուս փոքրամասնության աշխատավոր դասը, տեսնելով, որ Բալթիկայում բարելավվել է իր անձնական կյանքը, ի տարբերություն այն դեպքի, որ եթե վերադառնար Ռուսաստան (մի ընկալում, որը հաստատվել է բազմաթիվ հարցումների տվյալներով), հնարավոր է, որ հարմարեցվեր և նույնիսկ երկար ժամանակ անց՝ ուժացվեր:<sup>23</sup> Իսկապես, ամենուրեք աշխատավոր դասի գաղթողների համեմատական հետազոտությունների հիման վրա մենք պետք է ենթադրենք, որ ռուսները կցանկանան իրենց երեխաներին բալթյան լեզուներ սովորեցնել՝ պարզապես նրանց հարմարվելու հնարավորություններն ընդլայնելու համար:<sup>24</sup> Սակայն ողջախոհու-

22. Հավելենք, որ ինչպես քննարկել էինք Գուլյա 19-ում, բազմաթիվ քաղաքական միավորներ Ռուսաստանի Դաշնային Հանրապետության ներսում կազմված են ոչ ռուսներից և ընդհանուր առմամբ ներառում են տասներկու միլիոն մարդու:

23. Բալթյան ռուսների համար հիմնական հարցն այն է, թե արդյոք իրենց և իրենց երեխաների կյանքի պայմանները կբարելավվե՞ն Ռուսաստան տեղափոխվելուց հետո: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Բալթիկայի ռուսները շատ հոռետես են իրենց՝ Ռուսաստանում աշխատանք և կացարան ունենալու հնարավորությունների կապակցությամբ: Դա հետևանալու տարբերակը ռիսկային և անհավանական է դարձնում: Փաստորեն հենվելով Էստոնիայում 1416 ռեսպոնդենտների շրջանում Դեյվիդ Լեյթինի և Ջերի Հաուի (Jerry Hough) 1993թ. կատարած հարցման վրա՝ Լեյթինը պարզել է, որ ռուսախոս փոքրամասնության միայն 3.1%-ն է լրջորեն մտածում հետևանալու մասին: *St' u David D. Laitin, "Identity in Formation: The Russian Speaking Nationality in the Post-Soviet Diaspora"* (զեկույցը պատրաստված էր 1994թ. Ամերիկյան քաղաքագիտական ասոցիացիայի ամենամյա հանդիպման համար, 1994թ., սեպտեմբերի 1-4), էջ 13:

24. Օրինակ, Խուան Լինցը մի հարցման մեջ այն երիտասարդների շրջանում, որոնց երկու ծնողներն էլ ներգաղթել են Բասկերի երկիր (որը Էստոնիայի պես դժվար լեզու ունի), ցույց է տալիս, որ երիտասարդները դեմ չեն այն մտքին, որ կրթական համակարգը պետք է բասկերեն սովորեցնի, հարցվածների 39%-ը ցանկանում է, որ տարրական դպրոցներում պարտադիր իսպաներեն սովորեցնեն կամբոտրական բասկերենի հետ միասին, 35%-ն իսպաներեն է ցանկանում պարտադիր բասկերենի հետ, և 18%-ը ցանկանում է, որ լինեն բասկերեն դպրոցներ, որտեղ իսպաներենը կլինի պարտադիր կամ կամբոտրական: *St' u Juan J. Linz, "Los jóvenes en una España multilingüe y de nacionalidades"*, in Francisco Andres Orizo et al., *Juventud es-panola 1984* (Madrid: Ediciones S.M., 1985), 325-436: Տվյալները՝ էջ 384-ից:

**Աղյուսակ 20.5. Լեզվի իմացությունը բալթյան հանրապետություններում (1992թ. հարցազրույցներ)՝ ըստ հարցման ընթացքում օգտագործված լեզվի**

Լեզվի իմացությունը	տոկոսը					
	Էստոնիա		Լատվիա		Լիտվա	
	Էստոներեն	ռուսերեն	Լատվիերեն	ռուսերեն	Լիտվերեն	ռուսերեն
Միայն ռուսերեն (կամ ոչ բալթյան լեզուներ)	—	45	—	33	—	22
Միայն բալթյան լեզուներ	74	1	52	4	64	4
Բալթյան լեզու և ռուսերեն (կամ այլ ոչ-բալթյան լեզուներ)	26	54	48	63	36	74

*Աղբյուրը.* Hans-Dieter Kiingemann, Jurgen Lass, and Katrin Mattusch, "Nationalitätenkonflikt und Mechanism politischer Integration im Baltikum" (unpublished manuscript, Wissenschaftszentrum Berlin für Sozialforschung, November 1994): Տվյալները մեզ տրամադրել է Նանս-Պիտեր Կլինգեմանը /Hans-Dieter Klingemann/: Անհրաժեշտ է նշել, որ հարցումների և մարդահամարի ժամանակ լեզվի իմացության սուբյեկտիվ գնահատումը անվստահելի է և հատկապես ենթակա է սոցիալական ճնշմանը: Դրանից հետևում է, որ վերը բերված տվյալները համարյա հաստատ գերազանհատված են բալթյան լեզուների իմացության առումով ռուսախոս փոքրամասնության կողմից:

թյունը հուշում է, որ եթե աշխատանք ունենալու, քվեարկելու կամ պետական ծառայություններին հասու լինելու համար էստոններեն սովորելու պահանջը վերաբերում է միջին տարիքի, ռուսախոս, արդյունաբերության մեջ աշխատող բանվորներին, դա տազնապ կառաջացնի իրենց աշխատանքային ապահովության կապակցությամբ և կասկածներ, թե արդյոք պետությունը բոլոր բնակիչների՞ համար է, թե՞ միայն՝ էթնիկ էստոնացիների:

Տեսանելի ապագայում լեզվական քաղաքականությունը հիմնական մտահոգության առարկան կմնա բալթյան ռուսախոս փոքրամասնությունների համար: Ռուս բնակչության մեծ մասն աշխատում է արդյունաբերության մեջ: Էստոնացիների և ռուսների միջև լեզվական անջրպետը շատ խորն է: Էստոնիայում ռուսների 45 և Լատվիայում՝ 33%-ն են ասում, որ գիտեն բալթյան լեզուները: Նրանցից շատերը միայն միջին մակարդակով են տիրապետում բալթյան լեզուներին: Ինչևէ, Էստոնիայում 1979թ-ի և 1989թ-ի մարդահամարների վերլուծությունը հաստատել է, որ Էստոնիայի մայրաքաղաքում ռուս բնակչության շրջանում էստոններեն խոսողները միայն 12% էին կազմում 1979թ-ին և 15%՝ 1989թ-ին (Աղյուսակ 20.5):<sup>25</sup>

Ամփոփելով կարելի է ասել, որ Բալթիկայում (հատկապես՝ Էստոնիայում) անկախության շրջանում միայն լեզվական հողի վրա բնակչության ռուս փոքրամասնությունը մեկ կամ երկու սերունդ բացարձակապես մշակութային առումով ուժացվող չէ ժողովրդավարական ազգային պետության մեջ: Հակառակ դրան՝ մենք հավատում ենք, որ բալթյան ժողովուրդների ռուս փոքրամասնությունն ունակ է արագորեն քաղաքականապես ինտեգրվել ժողովրդավարությանը: Ինչո՞ւ: Այս պնդման ապացույցն է ռուս փոքրամասնության ցածր աստիճանի նույնականացումը հայրենիքի հետ, նրանց միտումը՝ որոշակի աստիճանի երկակի (հատկապես՝ աշխարհագրական) ինքնության, նրանց ուժեղ զգացումը, որ իրենց (և իրենց երեխաների) կյանքի փոփոխությունները Բալթիկայում ավելի լավը կլինեն, քան եթե նրանք վերադառնան իրենց սկզբնական հայրենիքները և, ինչպես մենք կտեսնենք, իրենց հանրապետություններում սպասվող քաղաքական փո-

25. Տես՝ Peteris Zvidrins, "Changes of Ethnic Composition in the Baltic States", Nationalities Papers 22, no. 2 (1994): 377:



փոխությունների հանդեպ նրանց ընդհանուր դրական գնահատականը: Ըստ մեր կարծիքի՝ նման հատկանիշներ ունեցող մարդիկ պոտենցիալ նվիրյալ քաղաքացիներ են մի պետության, որը նրանց լիակատար քաղաքական իրավունքներ է տալիս ու մի փոքր՝ մշակութային պաշտպանություն, հատկապես՝ լեզվի ոլորտում:

Ժառանգությունը կարևոր է նոր ժողովրդավարության համար, բայց անցման շրջանում կամ անմիջապես դրանից հետո արված որոշումները նույնպես կարող են փոքրացնել կամ, ընդհակառակը, մեծացնել ժողովրդավարության կայացման հնարավորությունները: Թույլ տվեք մեզ հետագոտել էթնիկ էստոնական և էթնիկ լատվիական քաղաքական վերնախավերի ընդունած որոշումները:

#### ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՆԵՐԱՌԱՎԱՆ ԴԻՍԿՈՒՐՄՆ՝ Ի ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՆՈՂԱԿԱՆԻ

Խորհրդային Միությունից անկախանալու հնարավորությունների աճին զուգընթաց՝ էստոնացի քաղաքական առաջնորդներն անկախության և ժողովրդավարության փոխարեն սկսեցին շեշտը դնել էստոնական ազգային պետության տրամաբանության և իրավունքների վրա: Մի շարք իրավական ու քաղաքական քայլեր կատարվեցին ազգային պետության նկրտումներն առաջ մղելու համար: Ժամանակի ընթացքում քաղաքացիության օրենքը տեղափոխվեց պետությանն անդամակցելու լայն ու ներառական սահմանումներից դեպի նեղն ու վանողականը<sup>26</sup>: Դեպի անկախություն շարժման ընթացքում շատ անգամ առաջարկվել էր, որ էստոնիայում ծնված կամ անկախության շարժմանը մասնակցած ամեն ոք կարող է հավակնել էստոնական քաղաքացիության, եթե դա ցանկանա: Սակայն վերջում էթնիկ էստոնացի ազգայնամոլների՝ անկախ պետությունն ազգության հետ նույնացնելու պահանջն այնքան ուժեղ էր, որ դժվար էր դիմադրել: Քաղաքացիությունն ուղղակիորեն շնորհվում էր միայն այն անհատներին, որոնք ծնվել էին էստոնիայում մինչև 1940թ., և նրանց հետևորդներին: Մա նշանակում էր, որ օրինակ՝ Կանադայի կամ ԱՄՆ քաղաքացիները, որոնք երբեք չէին եղել էստոնիայում, բայց էստոնացիների սերունդ էին, իրավունք ունեին քվեարկել ընտրությունների ժամանակ, բայց քաղաքացիություն չէր տրվում ռուսներին, ովքեր ծնվել էին էստոնիայում 1940թ.-ից հետո և ողջ կյանքն ապրել այնտեղ: Այս վանողականությունը հատկապես լուրջ էր, քանի որ 1992թ.-ի սեպտեմբերին կայանալիք խորհրդարանական և նախագահական ընտրություններին մասնակցել, քաղաքական կուսակցություններ ստեղծել և ընտրվել կարող էին միայն նրանք, ովքեր քաղաքացիություն ստացել էին մինչև 1992թ.: Դրա հետևանքով քաղաքացիության օրենքը էստոնիայի բնակչության համարյա 40%-ին դեպի ապագա ժողովրդավարություն կարևոր, հիմնարար շարժման ժամանակ զրկեց ընտրական իրավունքից:

Լեզուն հատկապես զգայուն հարց է, քանի որ, ինչպես տեսանք, ռուսների մեծամասնությունը էստոններեն չէր խոսում: 1989թ.-ի հունվարին էստոնիայի ժողովրդական ճակատի աջակցությամբ ընդունվեց Լեզվի մասին օրենքը: Ճակատն էստոններենը դարձրեց

26. Skú Peet Kask, "National Radicalization in Estonia: Legislation on Citizenship and Related Issues", Nationalities Papers 22, no. 2 (1994), 379-91:

երկրի պետական լեզու: Սպասվում էր, որ երկու տարվա ընթացքում էստոներեն լեզվի իմացության պահանջը կգործի ծառայության և առևտրի ոլորտներում ցանկացած աշխատանք ունենալու համար: Չորս տարվա ընթացքում պետական ողջ գրագրությունը պետք է անցնէր էստոներենի: Շատ տարեցների, վատ կրթված ռուսների համար այս օրենքը վտանգ էր ներկայացնում, որ նրանք կարող են կորցնել իրենց աշխատանքը նույնիսկ մասնավոր հատվածում: Դա կարող էր նաև նշանակել, որ եթե նրանք ցանկանային դիմել պետությանը իրավունքների և ծառայությունների մասին տեղեկություններ ստանալու համար, նրանք դա պետք է անեին էստոներեն լեզվով: Էստոնական պետությունը սկսում էր իրեն մեկուսացնել Էստոնիայում ապրող ժողովուրդների մեծ մասից:

Այդ բոլոր օրենսդրական և քաղաքական որոշումներին դեմ էին որոշ էստոնացիներ և ոչ էստոնացիներ՝ ընդամենը հանուն քաղաքական ողջամտության և ժողովրդավարության: Սակայն բոլորը պաշտպանեցին այդ որոշումներն ազգային պետության տրամաբանության և այդ տրամաբանության հետ կապված իրավական ու բարոյական հիմնավորումների ամուր հիմքի վրա: Լեզվի դեպքում ենթադրությունն այն էր, որ եթե պետությունը ազգի արտահայտությունն է, ապա միակ լեզուն, որը կարող է գոյություն ունենալ, ազգի լեզուն է: Այդ հավատամքն ուժեղ էր զգացվում Էստոնիայում այն վախի պատճառով, որ բարդ լեզու ունեցող շատ փոքր երկիր Էստոնիան կարող էր հեշտությամբ վերանայ: Էստոնիայում և Լատվիայում քաղաքացիությունը մինչև բռնակցումը եղած բնակիչներով սահմանափակելու իրավական և բարոյական իրավունքները հենված էին Պոզնանից գերմանացիների, որոնք այդտեղ բնակեցվել էին Հիտլերի կողմից (ինչպես և նրանց, ովքեր նախկինում ապրել էին այդտեղ) արտաքսման՝ Լեհաստանի համանման «իրավունքի» վրա: Համաձայն միջազգային իրավունքի՝ օկուպացնող ուժերը և զինվորական անձնակազմը քաղաքացիության իրավունք չունեն: Էստոնական դիվանագետները պնդում էին, որ 1939թ-ի «Մոլոտով-Ռիբենտրոպ պակտը» բերեց պետության անօրինական բռնազավթման, և որ ողջ 1940-91թթ. ժամանակահատվածը պետք է որակավորվի որպես օկուպացիա: Այդ հիման վրա բոլոր ռուսները, ովքեր երկիր մուտք են գործել 1940թ-ից հետո, և նրանց հետնորդներն անօրինական օկուպանտներ են և իրավունք չունեն ինքնաբերաբար քաղաքացիություն պահանջելու:<sup>27</sup>

Ընտրական իրավունքը քաղաքացիներին վերապահելու և ինքնաբերաբար քաղաքացիություն ստանալը մինչև բռնակցումն այդտեղ բնակվողներով սահմանափակելու հիմնավորումը հենվում էր եվրոպական երկրներում ընդունված պրակտիկայի վրա, ըստ որի՝ արտագնա աշխատողներն ու նրանց երեխաները հեռու էին պահվում քաղաքացիություն ստանալուց այն երկրներում, որտեղ նրանք աշխատում էին կամ նույնիսկ ծնվել էին: Այսպես, Գերմանիայում ծնված թուրք աշխատավորներն ընտրական իրավունքներ չունեն գերմանական ազգային պետությունում, բացի տեղական խորհուրդներում ներկայացված լինելուց:

Այստեղ մենք երևի պետք է կանգ առնենք՝ անցնելու համար տարբեր տեսակի միգրացիաների միջև եղած վերլուծական տարբերությունների քննարկմանը: Այն դեպքում, երբ ներգաղթողներն օտար երկիր գալիս են՝ լինելով այլ երկրի քաղաքացի (կամ այլ երկրի

27. Սա վերլուծվել է փաստագրվել է Վելիո Պետայիի (Velio Pettai) գալիք դոկտորական (PhD) ստենախոսության մեջ (Կոլումբիայի համալսարան, Քաղաքագիտության դեպարտամենտ):

քաղաքացի չլինելով՝ որպես զբոսաշրջիկներ, փախստականներ, ապաստան փնտրողներ կամ ներգաղթողներ, մեզ համար խնդիր չէ, որ պետությունն օրինական իրավունք ունի տրամադրելու կամ չտրամադրելու քաղաքացիություն (սովորաբար այլ քաղաքացիությունից հրաժարվելու պայմանով): Նույնը ճիշտ կլինի տվյալ երկրում օտարերկրացիներից ծնված երեխաների դեպքում, չնայած կարող են պատճառներ լինել՝ արագացնելու քաղաքացիության ստացումը: Ամերիկայի Միացյալ Նահանգների պես որոշ «ներգաղթածների երկրներ» ավանդույթ ունեն՝ ինքնաբերաբար քաղաքացիություն շնորհելու բոլոր նրանց, ովքեր այդ երկրում են ծնվել:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ներգաղթածները, որոնք գալիս են որպես իրենց քաղաքական միավորի մաս, և որտեղ «ազատ» շրջապտույտ կա ավելի մեծ միավորի ներսում, մեր կարծիքով՝ պատկանում են մի այլ կատեգորիայի, որը տարբերվում է սովորական արտասահմանյան միգրանտներից: Նորմատիվ առումով մենք հավատում ենք, որ անհրաժեշտ է քննարկման համար տարբեր դեպքեր առանձնացնել, երբ «պետության ներսում» միգրացիան պետք է առանձին կատեգորիա դիտվի: Պետք է ենթադրվի, որ պետության ներսի ներգաղթածները քաղաքացիության իրավունք ունեն, քանի դեռ նրանք չեն նախընտրել այլ քաղաքացիություն կամ հրաժարվել են դիմել այդ կապակցությամբ, երբ ենթամիավորն անկախանում է: Հակառակ դեպքում՝ նրանք զրկված կլինեն նախկին կարգավիճակից: Նրանք նորանկախ երկիր են եկել ոչ որպես օտարերկրացիներ:

Պուերտո-Ռիկո կղզուց Նյու Յորք եկող պուերտոռիկացի ներգաղթածներն ԱՄՆ-ի քաղաքացիներ են, չնայած որ հնարավոր է, որ մշակութապես տարբեր լինեն: Նրանք բնակիչ-օտարերկրացիներ չեն: Նրանք ներգաղթի թույլտվության համար դիմելու կարիք չունեն: Եթե Պուերտո-Ռիկոն անկախ դառնա, այդ պուերտոռիկացիները կշարունակեն լինել (ինչպես որ կան) ԱՄՆ-ի քաղաքացիներ: Միացյալ Նահանգները սակայն կարող են նրանց խնդրել ընտրություն կատարել Պուերտո-Ռիկոյի և Միացյալ Նահանգների քաղաքացիության միջև: Նորանկախ Պուերտո-Ռիկոն կարող է անել նույն բանը՝ ենթադրելով, որ ոչ Միացյալ Նահանգները, ո՛չ էլ Պուերտո-Ռիկոն թույլ չեն տա կրկնակի քաղաքացիություն: Մակայն, քանի որ նրանք եղել են ԱՄՆ-ի քաղաքացիներ (չնայած, որ պուերտոռիկացիները, հնարավոր է, որ նույնիսկ անգլերեն չիմանան), Միացյալ Նահանգների քաղաքացիության մերժումը կնշանակի նրանց զրկել ձեռք բերված իրավունքներից: *Mutatis mutandis* (այն ինչ պահանջվում էր ապացուցել, կամ այն, ինչ անհրաժեշտ էր փոփոխել), այսինքն՝ նույնը կլինի ոչ պուերտոռիկացի ամերիկացի բնակիչների համար Պուերտո-Ռիկոյում: Նրանց քաղաքացիության մերժումը նորանկախ Պուերտո-Ռիկոյում, որտեղ նախքան անկախությունը նրանք եղել են ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիներ, նույնպես կնշանակի զրկել նրանց իրենց ունեցած իրավունքներից:

Էստոնիայում և Լատվիայում ազգայնականների պնդումների ներքո քաղաքացիության վանողական սահմանումն այս հարցում Եվրահամայնքի (ԵՀ) կողմից լռելյայն աջակցություն ստացավ: ԵՀ-ի կողմից 1992թ. սեպտեմբերի ընտրությունների պաշտոնական մոնիտորինգի խումբը լրագրողներին ասաց, որ ԵՀ-ն հրապարակավ չի մեկնաբանի Էստոնիայի Քաղաքացիության և Լեզվի մասին օրենքները:

Էստոնիայում և Լատվիայում ազգային պետության վրա հիմնված քաղաքացիության սահմանման փաստարկը շատ զորեղ է, քանի որ ձևավորված է անցյալի դժգոհությունների և անօրինականությունների հիման վրա: Այս փաստարկը համապատասխանում է

մշակութային և լեզվական ուժեղ ցանկություններին, որոնք լիովին հասկանալի են պատմության լույսի ներքո: Դա նաև ուներ իր ուրույն տրամաբանությունը, ինչպես նաև իրավական և քաղաքական նախադեպերը:

Քաղաքական մասնակցության, իրավունքների և քաղաքացիության ավելի լայն սահմանման օգտին փաստարկներ բերելն իրականում անհնար է ազգային պետության ոչ ուժացման տրամաբանության շրջանակներում: Մշտապես «դիսկուրսի թակարդն» ընկնելու վտանգ կա: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է ժողովրդավարական արժեքներ և տրամաբանություն ներմուծել, ինչպես նաև՝ կենսունակություն և խաղաղություն հասարակության ներսում: Կարճ ասած՝ անհրաժեշտ է հարստացնել դիսկուրսի հասկացությունները՝ այլ կարևոր արժեքներ ներմուծելով: Հավանաբար պետք է նաև, ինչպես արվում է այս գլխում, միտումնավոր սրել երկու տրամաբանությունների միջև եղած լարվածությունը, որպեսզի ազգային և միջազգային դերակատարներն ավելի շատ ջանքեր գործադրեն ազգային ինքնահաստատման և ժողովրդավարության նպատակներն իրար համատեղելու համար և ավելի զգոն լինեն այն վտանգների հանդեպ, որոնք կարող են ծագել այդ գործում ձախողվելու դեպքում:

Այդպես վարվելու կարևորությունը շատ մեծ է, քանի որ ազգային պետության տրամաբանությունը ծնում է քաղաքական լեզու և որոշակի նկարագրական բառեր, որոնց դիսկուրսիվ արդյունքն է՝ ստեղծել միաբնեռ ինքնություններ և աշխատել ընդդեմ բազմակի, փոխլրացնող ինքնությունների, ինչը հնարավոր կդարձնի ժողովրդավարական կյանքը դե ֆակտո բազմազգ պետությունում: Օրինակ, «գաղութարար» տերմինը լայնորեն կիրառվում է Էստոնիայի և Լատվիայի բնակչության ռուսական բաղադրիչը նկարագրելու համար: Այդ տերմինի իմաստն այն է, որ ռուսների ներկայությունն անօրինական է: Մակայն «գաղութարար» բառը թյուրիմացության մեջ է զցույց, քանի որ այդպիսով ազգային պետությունից շատ ավելի մարդ է հեռու մղում, քան նույնիսկ նախատեսված է քաղաքացիության մասին սահմանափակող օրենքով: Օրինակ, մոտ 100000-ից 150000 ռուսներ բնակվում էին Էստոնիայում մինչև 1940թ. և, հետևաբար, նրանք և նրանց սերունդներն իրավամբ Էստոնիայի քաղաքացիներ են: Քանի որ այդքան հզոր և այդքան վանող է գաղութացման լեզուն, այս օրինական քաղաքացիներից շատերը սկսում են զգալ, որ ազգային պետության ներսում իրենց մասնակցության համար քաղաքական տարածք չկա:

Մի այլ պոտենցիալ բաժանարար տերմին է «անցողիկը»: Քանի որ 1944թ.-ից մինչև 1991թ.-ի անկախությունը մոտ յոթ միլիոն ռուսներ մեկ և կես միլիոն բնակչություն ունեցող Էստոնիա են եկել և այնտեղից հեռացել, կարելի է հասկանալ «անցողիկ» տերմինին դիմելը: Այդ խորհրդային քաղաքացիները հիմնականում զինվորականներ էին և շինարարական աշխատողներ, որոնց որոշակի ժամկետներով բերում էին գործարաններ կառուցելու համար: Չնայած դրան՝ այդ տերմինը ևս թյուրիմացության տեղիք է տալիս, քանի որ ի հավելումն մինչև 1940թ. եղած 100000-ից 150000 ռուսների, այժմյան Էստոնիայի բնակչությունից ևս 87000 ռուսներ ծնվել են 1940թ.-ից հետո և ողջ կյանքն անցկացրել այնտեղ: Եթե ոչ մշակույթով և լեզվով, ապա աշխարհագրորեն նրանք Էստոնացի են: «Անցողիկ» և «գաղութարար» բառերը քողարկում են այն փաստը, որ նրանցից շատերը բալթյան հանրապետությունները համարում են իրենց տունը:

Էստոնացիները և լատվիացիները նաև վախենում են, որ ոչ հավատարիմ ռուս ներ-

գաղթածները ներսում մշտական հինգերորդ շարասյուն կձևավորեն: Չնայած նրան, որ շատ քաղաքաբնակ ներգաղթողներ եկել էին որպես սևագործ բանվորներ, նրանք, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ հետազոտություններն, ավելի շատ միտված են հասարակության մեջ իրենց երեխաների ապագայով մտահոգ լինելուն, քան ոչ հավատարիմ քաղաքական կազմակերպություններին միանալուն: Իհարկե, ռուս ներգաղթածներից շատերը նյութական և հոգեբանական օգուտներ էին քաղում խորհրդային կայսրության հետ կապված լինելուց, և շատերն աշխատում էին Մոսկվայի նախարարությունների կողմից ուղղակիորեն կառավարվող մեծ գործարաններում: Մակայն երբ բալթյան պետությունների և Ռուսաստանի միջև իշխանական հարաբերությունները փոխվում են, և էթե էստոնական և լատվիական պետություններն ապահով են (և ապահով տուն են տրամադրում ռուսներին), ռուսները կարող են աշխատանք ունենալու անձնական շահը գերադասել մրցակից ազգային պետության անդամ լինելու կոլեկտիվ բարիքից: Դեյվիդ Լեյթինը (David D. Laitin) ենթադրում է, որ օրինակ Էստոնիայի ռուսները, ավելի հավանական է, որ գնալով ավելի շատ տեղի են տալիս մրցակցային ուժացման տրամաբանությանը, ըստ որի՝ յուրաքանչյուր ընտանիք կցանկանա առաջ գնալ՝ Էստոններն սովորելով և հարմարվելով տեղական մշակույթին: Ընտանիքների միջև «բանտարկյալի երկընտրանքը» տիպի խաղերում Լեյթինը կանխատեսում է, որ յուրաքանչյուրը պետք է ունենա «պարտվելու» կամ ուժացվելու գերակշռող ռազմավարություն:<sup>28</sup>

Էստոնիայում ազգային պետության դիսկուրսի վերջին, բայց շատ հզոր մասը վերաբերում է գոյատևման և վերացման միջև եղած դիխոտոմիային: Մրանք նույնպես անհիմն մտավախություններ չեն: Աշխարհում մեկ միլիոնից մի փոքր ավելի էստոններն խոսողներ կան, իսկ դրան մոտ կանգնած մի շարք ուգրոֆիննական լեզուներ արդեն վերացել են: Բայց սկսած 1970-ականներից՝ ամեն ինչ վկայում է այն, որ ժողովրդագրական առումով էստոնացիներն իրենց դիրքերը չեն զիջում ոչ էստոնացիներին:<sup>29</sup> Անկախ Էստոնիայում քիչ հավանական է, որ էստոնացիներն անկախ պետության ներսում փոքրամասնություն դառնան, և ավելի քիչ՝ որ վերանան որպես ժողովուրդ կամ մշակույթ: Բայց «լեզվական վերացում» արտահայտությանը դիմելը սոցիալապես հեշտացնում է ռուսների նկատմամբ ներառական քաղաքականության փոխարեն վանողական քաղաքականություն ձևավորելը:<sup>30</sup>

28. *St' u David D. Laitin, "Language Normalization in Estonia and Catalonia", Journal of Baltic Studies* 23, no. 2 (1992), 149-66: Լեյթինի ոչ լիարժեք (defecting) տերմինի փոխարեն մենք նախընտրում ենք գործածել «ստեղծել բազմակի և փոխլրացնող ինքնություններ» արտահայտությունը: Բայց և՛ Լեյթինի, և՛ մեզ համար գոյատևման հստությունների ցանկի կառուցման իրավիճակային տրամաբանությունը հիմնականում նույնն է: Խորհրդային համատեքստում պետության կատարելագործման և փոքրամասնությունների ավելի լայն քննարկում, *St' u David D. Laitin, "The National Uprisings in the Soviet Union", World politics* 44 (Oct. 1991), 139-77:

29. Օրինակներ, *St' u Rein Taagepera, "Baltic Population Changes 1950-1980", Journal of Baltic Studies* 12, no. 1 (1981), 49:

30. Եթե քաղաքացիություն շնորհվի այն ռուսախոսներին, ովքեր հարցման ժամանակ ասել են, որ «հաստատ» կնախընտրեն էստոնական քաղաքացիությունը, էթնիկ էստոնացիները, միևնույն է, բոլոր քաղաքացիների ամբողջության մեջ ամուր մեծամասնություն կպահպանեն, բայց երկրում ոչ քաղաքացիների տոկոսն էականորեն կնվազի:

**Աղյուսակ 20.6. Նախկինում, այժմ և հինգ տարի անց կառավարման համակարգի հանդեպ վերաբերմունքները. Էստոնացիներ, լատիշներ և ոչ բալթյան ազգեր, 1993թ..**

Վերաբերմունքը	Նարցվողների տոկոս			
	Լատիշները Լատվիայում	Ոչ բալթյան ազգերը Լատվիայում	Էստոնացիները Էստոնիայում	Ոչ բալթյան ազգերը Էստոնիայում
<b>Կառավարման համակարգը մինչև անկախություն</b>				
Դրական	36	66	32	65
Չեզոք	14	12	13	14
Բացասական	50	22	55	21
<b>Կառավարման ներկա համակարգը</b>				
Դրական	43	43	58	50
Չեզոք	19	18	15	14
Բացասական	38	39	26	37
<b>Կառավարման համակարգը, որը կունենանք հինգ տարի անց</b>				
Դրական	81	71	88	79
Չեզոք	8	13	6	10
Բացասական	11	16	5	11

Աղբյուրը. Richard Rose and William Maley, "Nationalities in the Baltic States." Studies in the Public Policy, no. 222 (1994), հարցեր 122-24:

### ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ «ԻՐԱԿԱՆ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Չնայած նորանկախ Էստոնիայի և Լատվիայի խորհրդարանների ու կառավարությունների կողմից քաղաքացիության նկատմամբ ներառականից վանողական մոտեցմանն անցմանը, զգալի տոկոսով ռուսախոսներ (43%՝ Էստոնիայում և 50%՝ Լատվիայում) անկախությունից տասնութ ամիս անց դրական էին վերաբերվում «կառավարման ներկա համակարգին»: Ռուսախոսների նույնիսկ ավելի մեծ տոկոսը (79%՝ Էստոնիայում և 71%՝ Լատվիայում) դրական վերաբերմունք էր պահպանում հինգ տարի անց սպասվող քաղաքական համակարգի նկատմամբ: Մեր այն վարկածը, որ ոչ բալթյան ազգերն ունակ են քաղաքականապես ինտեգրվելու, հատկապես ամրանում է այն ապշեցուցիչ տվյալներով, որ Լատվիայում լատիշները, ինչպես և ոչ բալթյան ազգերը, չնայած անցյալին իրենց տված խիստ տարբեր գնահատականներին, իրականում նույն ձևով են գնահատում կառավարման ներկա համակարգը (Աղյուսակ 20.6):

Իսպանիայի մասին մեր քննարկման մեջ մենք պնդել էինք, որ ներկայի և հատկապես ապագայի վերաբերյալ քաղաքական դիրքորոշումներն ավելի նշանակալի են, քան դրական կամ բացասական վերաբերմունքները ոչ ժողովրդավարական անցյալի հանդեպ: Մենք հավատում ենք, որ Աղյուսակ 20.6-ն ընդգծում է այդ ընդհանուր պնդումը: Ոչ բալթյան բնակչությունն իսկապես ոչ ժողովրդավարական անցյալին շատ ավելի դրական էր վերաբերվում, քան էթնիկ Էստոնացիներն ու լատիշները: Ինչևէ, ժողովրդավարություն կառուցելու հնարավորությունների համար ոչ բալթյան ազգերի դիրքորոշումները ներ-

կայի և հատկապես՝ ապագայի նկատմամբ ամուր հող են նախապատրաստում բազմազգ ժողովրդավարության ստեղծման վերաբերյալ լավատես լինելու համար:<sup>31</sup>

Ի՞նչն է ընկած բալթյան և ոչ բալթյան ազգերի շրջանում առկա ընդհանուր առմամբ դրական վերաբերմունքի հիմքում: Հիմնական բացահայտումն այն է, որ բոլոր բալթյան բնակիչները հավատում են, որ իրենց քաղաքական ազատությունները հիմնականում բարելավվել են (Աղյուսակ 20.7):

Սակայն Աղյուսակ 20.7-ը մեր ուշադրությունը հրավիրում է նաև որոշ նախազգուշացնող նշանների վրա: Էստոնիայում և Լատվիայում ռուսախոսները չեն կարծում, որ բարելավում կա ցանկացած տեղում ապրելու և ճանապարհորդելու ազատության բնագավառում: Ինչպես մենք կտեսնենք, սա վերաբերում է Էստոնիայում և Լատվիայում ոչ միայն որպես լիիրավ քաղաքացի, այլ նույնիսկ որպես օտարերկրացի բնակիչ ապրելու իրավունքի հետ կապված տագնապին: Այս անապահովությունը, անկասկած, հիմնված է այն իրականության վրա, որ անկախությունից ի վեր օտարերկրացի բնակիչների կարգավիճակը որոշող դաժան օրենքները հաճախ քննարկվում են և՛ Լատվիայի, և՛ Էստոնիայի խորհրդարաններում: Իսկապես, 1993թ-ի հունիսին Էստոնիայի խորհրդարանը ձայների 59:3 հարաբերակցությամբ ընդունեց օտարերկրացիների մասին օրենքը, որն այնպիսի տագնապ առաջացրեց քաղաքացիություն չունեցողների՝ Էստոնիայում մնալու օրինական իրավունքի վերաբերյալ, որ Եվրահամայնքի բոլոր տասներկու կառավարություններն էլ քննադատեցին այդ օրենքը: Դիվանագիտական քննադատության ներքո նախագահ Մերին (Meri) վետո դրեց օրենքի վրա: Բայց արդյունքում օրենքն ավելացրեց ռուսախոսների անհանգստությունը: Իսկապես, խորհրդարանում օրենքի հիմնական պաշտպան Կալյո Պոլդվերեն (Kaljo Põldvere) հստակ արտահայտվեց, որ դա օրենքը կազմողների մտադրությունն էր: Խորհրդարանական բանավեճի ժամանակ Պոլդվերեն ասել է. «Այս օրենքի միջոցով մենք մի իրավիճակ ենք ստեղծում, որ «գաղութարարները» զգան,

31. Էստոնիայի Տարտու քաղաքի համալսարանի Քաղաքագիտության դեպարտամենտի ղեկավար Ռայվո Վելիկը (Raivo Velik) էթնիկ ինքնությունների ստեղծման ուսումնասիրություններ է կատարում, ինչը և լավատեսության հիմքեր է տալիս առ այն, որ հնարավոր է, որ ռուսախոսները բազմակի և փոխլրացնող ինքնություններ ստեղծեն: Կիրառելով «ինքնության կառուցվածքային վերլուծության» համար Պետեր Վայնռայխի (Peter Weinreich) ստեղծած մեթոդը, նա փորձական հետազոտություն է անցկացրել Էստոնական երեք քաղաքներում պատահական կերպով ընտրված 266 ռուս պատասխանողների շրջանում: Փորձական հետազոտության մեջ 1993թ. ապրիլին ռուսների 72%-ը դրական պատասխան է տվել՝ «այս պահին Էստոնիայում ապրող ռուսներն իրենց նույնականացնում են Էստոնիայի հետ» պնդմանը: Մեր այս պնդումների համար, որ սիյուռքում ռուսները Ռուսաստանի ռուսներից տարբերվող մշակութային և քաղաքական ինքնություն են զարգացնում, կարևոր նշանակություն ունի այն փաստը, որ Էստոնիայում հարցման ենթարկված ռուսների միայն 18%-ն է ասել, որ իրենք իրենց նույնականացնում են ավելի շատ Ռուսաստանի, քան Էստոնիայի հետ: Սակայն պարզվել է, որ Ռուսաստանում ռուսների 54%-ը կարծում է, որ ռուսները Էստոնիայում նույնականացվում են ավելի շատ Ռուսաստանի, քան Էստոնիայի հետ: Վելիկն իր հետազոտությունը եզրափակում է հետևյալ մտահանգումով՝ «բազմակի ինքնության նոր տարրեր են ստեղծվում Էստոնիայի ռուս համայնքի ներսում, և նրա անդամներն իրենք իրենց սոցիալապես հարմարեցնում են իրենց երկրի նոր սոցիոքաղաքական շրջապատին»: *St'u Raivo Velik, "Identity Development and Political Adjustment in Estonia Research Note", World Affairs 157, no. 3 (1995), 148: Նաև տե՛ս "A Strategy for Ethnic Conflict Accommodation"* (զեկույցը պատրաստված է Միջազգային քաղաքագիտական ասոցիացիայի XV համաշխարհային գիտաժողովի համար, 1994թ., օգոստոսի 20-25, Բեռլին):

**Աղյուսակ 20.7. «Կարո՞ղ եք ասել, որ նախկին խորհրդային համակարգի համեմատ մեր ներկա համակարգն «ավելի լավն» է, «հիմնականում նույնն» է կամ «ավելի վատն» է**

Պատասխան	Էստ	Լատ	Լիտ	Մջն	ԷսՌ	ԼաՌ	ԼիՌ	ՄջՆ
<b>«Ասել, ինչ մտածում եմ»</b>								
Ավելի լավն է	95	81	87	<b>87</b>	75	71	70	72
Դիմնականում նույնն է	3	12	8	<b>8</b>	17	15	18	17
Ավելի վատն է	—	2	2	<b>2</b>	4	5	2	4
Զգիտեմ	2	5	3	<b>3</b>	4	8	9	7
<b>«Ճանապարհորդել և ընտրել՝ որտեղ են ցանկանում բնակվել երկրում»</b>								
Ավելի լավն է	83	38	64	<b>62</b>	35	30	50	39
Դիմնականում նույնն է	8	34	20	<b>21</b>	20	23	25	23
Ավելի վատն է	6	16	6	<b>9</b>	35	32	16	28
Զգիտեմ	3	12	9	<b>8</b>	9	15	9	11
<b>«Գնալ արտասահման կամ ապրել արտասահմանում, եթե ցանկանան»</b>								
Ավելի լավն է	93	83	90	<b>89</b>	78	76	83	79
Դիմնականում նույնն է	2	4	3	<b>3</b>	8	6	6	7
Ավելի վատն է	3	4	1	<b>3</b>	7	6	4	6
Զգիտեմ	2	9	5	<b>5</b>	7	12	8	9
<b>«Անդամակցել իրենց նախընտրած կազմակերպությանը»</b>								
Ավելի լավն է	86	72	86	<b>81</b>	73	67	72	71
Դիմնականում նույնն է	8	12	7	<b>9</b>	10	12	11	11
Ավելի վատն է	1	4	1	<b>2</b>	5	4	3	4
Զգիտեմ	6	12	6	<b>8</b>	13	17	14	15
<b>«Որոշել՝ մասնակցել, թե՞ ոչ քաղաքական կուսակցությունների գործողություններին»</b>								
Ավելի լավն է	84	70	83	<b>79</b>	59	59	69	62
Դիմնականում նույնն է	9	12	7	<b>10</b>	15	13	11	13
Ավելի վատն է	1	3	1	<b>2</b>	9	5	2	5
Զգիտեմ	5	14	9	<b>9</b>	17	23	18	19
<b>«Ապրել առանց անօրինական ձերբակալության վախի»</b>								
Ավելի լավն է	64	41	57	<b>54</b>	39	29	44	37
Դիմնականում նույնն է	14	28	23	<b>22</b>	31	31	25	29
Ավելի վատն է	11	7	4	<b>8</b>	12	9	6	9
Զգիտեմ	10	23	16	<b>16</b>	18	30	25	24
<b>«Որոշել՝ հավատա՞լ, թե՞ ոչ Աստծուն»</b>								
Ավելի լավն է	81	76	89	<b>82</b>	74	76	80	76
Դիմնականում նույնն է	14	17	7	<b>13</b>	19	16	15	17
Ավելի վատն է	1	—	1	<b>1</b>	1	—	1	1
Զգիտեմ	3	6	3	<b>4</b>	6	8	4	6
<b>«Պաշտպանել լիտվացիների/ լատվիացիների/ էստոնացիների իրավունքները»</b>								
Ավելի լավն է	86	80	84	<b>84</b>	79	75	70	74
Դիմնականում նույնն է	8	11	9	<b>10</b>	10	8	17	12
Ավելի վատն է	1	1	1	<b>1</b>	1	1	—	1
Զգիտեմ	4	7	5	<b>5</b>	9	16	13	13
<b>«Պաշտպանել ռուսների իրավունքներն այս երկրում»</b>								
Ավելի լավն է	29	18	43	<b>30</b>	24	13	29	22
Դիմնականում նույնն է	29	30	26	<b>28</b>	16	17	32	21
Ավելի վատն է	21	23	16	<b>20</b>	48	51	24	41
Զգիտեմ	21	28	15	<b>21</b>	12	20	15	16

Մոբիլորը. նույնը, ինչ՝ աղյուսակ 20.5-ի համար; հարցեր 129-137: ԷսՌ՝ Էստոնիայի ռուսներ, ԼաՌ՝ Լատվիայի ռուսներ, ԼիՌ՝ Լիտվայի ռուսներ:



որ գետինը ցնցվում է իրենց ոտքերի տակ»:<sup>32</sup> Ավելի մտահոգիչն այն է, որ Ադյուսակ 20.7-ը ցույց է տալիս, որ Էստոնիայում 2:1, իսկ Լատվիայում՝ 4:1 հարաբերակցությամբ ռուսները համարում են, որ ռուսների իրավունքները պաշտպանելու առումով ներկա կառավարման համակարգն ավելի վատն է, քան նախկինը:<sup>33</sup>

Մեր այն պնդման համար, որ ընդհանուր քաղաքական տանիքը կարող է բարելավել պետության քաղաքականության և ինստիտուտների ընկալումը փոքրամասնությունների կողմից, ուշագրավ է, որ ներառական Լիտվայում ռուսների միայն 24%-ն է ասել, որ իրավունքների պաշտպանության հարցում վիճակն ավելի վատ է, քան հին վարչակարգի օրոք: Սրան հակառակ՝ վանողական Լատվիայում 51%-ն է ասել, որ վիճակը վատացել է: Ուշագրավն այն է (և հնարավոր դրական բացահայտումը), որ լատիշները նույնպես կարծում են, որ ներկայիս համակարգն ավելի վատն է ռուսների իրավունքների պաշտպանության առումով, քան նախկին խորհրդային համակարգը:

Այն հարցը, որն ամենից շատ էր Էստոնիայում և Լատվիայում բաժանում է թոնիկ բալթյան ազգերին և ռուս փոքրամասնություններին, վերաբերում է խորհրդարանական ընտրություններում քվեարկելու իրավունքին: Էստոնիայում էթնիկ ռուսների միայն 3%-ը և Լատվիայում էթնիկ ռուսների 6%-ն են համարում, որ նման ընտրություններում քվեարկելու իրավունքը պետք է սահմանափակվի մինչև 1940թ-ի քաղաքացիներով և նրանց ընտանիքներով: Բայց էթնիկ էստոնացիների 44%-ն ու լատիշների 49%-ը կողմ են այս վանողական չափանիշին: Ներառողական Լիտվայում, ինչպես և սպասում էինք, էթնիկ լիտվացիների միայն 12%-ն է սատարում մինչև 1940թ. քաղաքացիության չափանիշին (Ադյուսակ 20.8):

Ադյուսակ 20.8-ը պարունակում է որոշ դրական բացահայտումներ առ այն, որ հասարակ մարդիկ (հակառակ նրանց քաղաքական առաջնորդներին) պատրաստակամ են՝ ընդունել ավելի ներառական խորհրդարանական ընտրական իրավունքներ, քան թույլ է տալիս առկա օրենքը: Օրինակ, եթե մենք իրար ավելացնենք «բոլոր այստեղ ծնվածներին», «տասը տարուց ավելի բնակություն ունեցողներին» և «բոլոր նրանց, ովքեր այստեղ էին անկախության պահին» խորհրդարանական ընտրություններում քվեարկելու իրավունքը տալու մասին դրական պատասխանները, կատանանք, որ էթնիկ էստոնացիների 56%-ն ու լատիշների 42%-ը կողմ են այնպիսի ընտրական քաղաքականության, որն ավելի ներառական է, քան այդ պահին գոյություն ունեցող օրենքը:

1993թ. սեպտեմբեր-հոկտեմբերին նրանք, ովքեր գերադասել էին պատասխանել ռուսաց լեզվով գրված հարցաթերթիկին, քան բալթյան լեզուներից մեկով գրվածին, բաժանված էին և անվստահ իրենց քաղաքացիության կապակցությամբ: Էստոնիայում 17%-ը

32. Օտարերկրացիների մասին օրենքի շուրջ բանավեճի վրա հղումների և նկարագրության համար, տե՛ս Kask, "National Radicalization in Estonia", 385-88, հղումը՝ էջ 386-ից:

33. Էստոնիայում մի այլ տագնապալի ցուցիչ էլ այն է, որ ռուսական փոքրամասնությունը չի զգում, որ իրենց գլխավորում անկողմնակալ և ապահով պետական տանիք ունի: Էստոնիայում փոքրամասնություն կազմող բնակչության 32.8%-ը պատասխանել է՝ «բոլորովին՝ ոչ», երբ նրանց հարցրել են, թե նրանք վատահոմ են ռատիկանությանը: Էթնիկ էստոնացիների միայն 14.7%-ն է նման մտավախություն արտահայտել: Լիտվայում՝ հակառակը, ոչ լիտվացիներն ու լիտվացիներն ավելի մեծ վստահություն են արտահայտել ռատիկանության նկատմամբ, և նրանց դիրքորոշումները հիմնականում համընկնում են: Տվյալները Հանս-Ռիտեր Կլիգեմանի 1992թ. անցկացրած հարցման 136-րդ հարցից են, մեջբերված՝ Ադյուսակ 20.2-ում:

**Աղյուսակ 20.8. «Վետկյալ պնդումներից որո՞նք են ամենից շատ համապատասխանում Ձեր տեսակետներին առ այն, թե ով իրավունք ունի քվեարկելու խորհրդարանական ընտրությունների ժամանակ». բալթյան ազգությունների տարբերակված պատասխանները**

Պատասխան	Նարցվածների տոկոսը					
	Էստ	Էստ	Լատ	Լատ	Լիտ	Լիտ
Մինչև 1940թ. քաղաքացիները և նրանց ընտանիքները	44	3	49	6	12	2
Բոլոր այստեղ ծնվածները	31	22	25	24	38	8
Տասը տարուց ավելի բնակություն ունեցողները	23	37	15	30	25	22
Բոլոր նրանք, ովքեր այստեղ էին անկախության պահին	2	19	2	15	11	16
Ցանկացած նախկին խորհրդային քաղաքացի	1	16	1	12	10	35
Զգիտեն	0	2	7	13	4	6

Աղբյուրը. նույնը, ինչ աղյուսակ 20.5-ի համար, հարց 120:

բնորոշել էր իրեն որպես էստոնացի, ամբողջ 41%-ը՝ որպես խորհրդային (պետություն, որը մոտ երկու տարի արդեն գոյություն չուներ), միայն 8%-ը՝ որպես ռուս, 4%-ը՝ որպես այլ խորհրդային հանրապետության ազգ, 6%-ը՝ այլ, և 23%-ը՝ որպես «վստահ չեմ, ես անձնագիր չունեմ»: Լատվիայում, 35%-ն ասել է՝ լատվիացի, 20%-ը՝ խորհրդային, 4%-ը՝ ռուս, 4%-ն՝ այլ խորհրդային հանրապետությունից, 22%-ն՝ այլ և 15%-ը՝ չկողմնորոշված: Սա հակադրվում է ներառական Լիտվային, որտեղ 96%-ն ասել է՝ լիտվացի, 2%-ը՝ ռուս և 2%-ն՝ այլ: Լիտվայում էթնիկ լեհերի 99%-ն ասել է, որ իրենք «լիտվացի» են:<sup>34</sup> Այս տվյալներն արտացոլում են քաղաքացիության վերաբերյալ ոչ էստոնացիների և ոչ լատիշների անվստահությունը, որը հետևանք է նորանկախ պետության քաղաքականության:

Էստոնիայի քաղաքացիության մասին օրենքների (ըստ որոնց անցկացվել էին 1992թ-ի խորհրդարանական ընտրությունները և 1992թ. սահմանադրական հանրաքվեն) քաղաքական հետևանքները կարելի է ցույց տալ այն փաստով, որ ընտրական տարիքի 1.1 միլիոն բնակիչների պարագայում ընտրացուցակներում ներառված ընտրազանգվածը կազմում էր 660000 մարդ: Ռուսաստանի սահմանի մոտ գտնվող Նարվայի պես քաղաքում հանրաքվեի ժամանակ 77000 բնակիչներից միայն 6000-ն էր իրավասու քվեարկելու:

Մենք մեր քննարկումը կենտրոնացրել ենք քաղաքացիության, խորհրդարանական ընտրություններում քվեարկելու իրավունքի և ժողովրդի «ներառվածության» հարցերի վրա: Այս հարցերը տարբերվում են լեզվական և մշակութային ուժացման, երկլեզվության մակարդակի, տարբեր ոլորտներում իրենց լեզուն օգտագործելու փոքրամասնության իրավունքների, դպրոցներում լեզվական քաղաքականության և երկլեզու կրթությանը հանրային աջակցության ու դրանց հետ կապակցված՝ ուժացման տեմպի հարցերից: Տարօրինակ կերպով ազգաստեղծման լիակատար ուժացման ներառական տարբերակը նա-

34. Rose and Maley, "Nationalities in the Baltic States", հարց 229: Ռուսախոսների մեծ թիվը, ովքեր ասել են, որ իրենք խորհրդային են, գուցե արտացոլում է այն փաստը, որ իրենք չեն ցանկանում նույնակա-նացվել Ռուսաստանի հետ, և որ իրենց թույլ չեն տալիս էստոնացի կամ լատվիացի լինել: Խորհրդային «քաղաքացիությունն», այդպիսով, միակ քաղաքացիությունն է, որը նրանք երբևէ ունեցել են:

խապես քաղաքացիություն է ենթադրում, ինչը ժողովրդավարության ներսում չպետք է բացառի խորհրդարանական ընտրություններում քվեարկելու իրավունքը:

Ազատական արժեքներն այս հարցերից շատերում պետք է հանգեցնեն քիչ թե շատ մեծահոգի և ոչ խտրական քաղաքականության, հատկապես՝ որոշ փոքրամասնությունների իրավունքների ճանաչման հարցում, ճանաչում, որը չի բացառում դեպի ընդհանուր մշակույթն ու լեզուն նպատակամղված պահանջները: Դա չանելը կօտարացնի կամ փոքրամասնությանը կամ մեծամասնությանը: Բայց այդ հարցերը տարբերվում են ժողովրդավարական ներառական պահանջներից: Մենք չենք կարող այստեղ մեր մտքերը զարգացնել բազմամշակութային, մասամբ՝ երկլեզու հասարակություն կառուցելու անհրաժեշտության հիմքերի վրա, ինչը թույլ կտա փոքրամասնությանն ուժացվել կամ պահպանել իրենց ինքնությունը՝ միաժամանակ նվազագույն մշակութային ինտեգրում պահանջելով: Մակայն մենք կարծում ենք, որ լուծումներ կան, որոնք չնայած ամբողջությամբ չեն բավարարի բոլորին, երկու էթնիկ խմբերի մեծամասնությունների կողմից էլ կհամարվեն ընդունելի և նույնիսկ՝ արդար, և որոնք կարող են ներդրում ունենալ պետության հանդեպ հավատարմության կառուցման և կայուն, ազատական, ժողովրդավարական քաղաքականություն վարելու գործում:<sup>35</sup>

Շատ ոռուներ և ԽՍՀՄ-ից այլ ներգաղթածներ դժվար թե քաղաքացիություն ձեռք բերեն: Իրականում մինչև հիմա նրանցից շատերը, ովքեր իրենց մերժված էին զգում, նույնիսկ չեն էլ ցանկանում դա, իսկ ովքեր այն ձեռք էին բերել, չեն համարվում (որոշակի մշակութային իրավունքներ ունեցող) փոքրամասնություններ, այլ դիտվում են որպես երկրորդ կարգի քաղաքացիներ: Նրանք, սակայն, Ռուսաստանում և բալթյան երկրներում կենսամակարդակի տարբեր չափանիշների, Ռուսաստանում իրենց ապագայի մասին սպասումների, ընտանեկան կապերի և վերադարձի դեպքում որևէ հեռանկարի բացակայության պայմաններում ձգտում են մնալ: «Հեռանալու» տարբերակը, ինչպես մենք տեսանք, քննարկվում է միայն շատ քչերի կողմից: Ուշագրավ է, որ համարյա կեսը նրանց, ովքեր քննարկում են հեռանալու տարբերակը, որպես դրա պատճառ նշում են, որ «իմ քաղաքական և մարդու իրավունքները սահմանափակված են»: Ուշագրավ է նաև, որ համարյա ոչ մեկը (դրանք կազմում են ընդամենը 2.9%-ը ոչ էստոնացիների և 1.5%-ը՝ ոչ լատիշների շրջանում) որպես հնարավոր արտագաղթի պատճառ չի բերում հետևյալ արտահայտությունը՝ «ես չեմ կարող հարմարվել» Էստոնիայում կամ Լատվիայում:<sup>36</sup>

Բալթիկայում ոռու փոքրամասնությունը, ի տարբերություն անգլիացիների՝ Հնդկաստանում, ֆրանսիացիների՝ Ալժիրում, կամ ֆինների՝ Կարելիայում (երբ այն անեքսիայի ենթարկվեց ԽՍՀՄ-ի կողմից), չունի այն հայրենիքը, որը պատրաստ լինի ընդունելու և օգնելու նրանց վերադառնալու դեպքում: Նրանց մեծ մասը կմնա որպես հզոր, հնարավոր

35. Մարդիկ բազմալեզու-բազմազգ համատեքստում հաճախ պարզապես ցանկանում են տարբերություններ դնել այն իրավիճակների միջև, որտեղ պետական լեզու պետք է պահանջվի, և որտեղ փոքրամասնությունները կարող են օգտագործել իրենց լեզուն: Նույնն է դպրոցներում լեզվական և մշակութային քաղաքականության առումով: Սովորական ընտրողներն ու քաղաքացիներն այս հարցերում հաճախ ավելի ճկուն և հանդուրժող են, քան գաղափարախոսները, ակտիվիստներն ու կառավարությունները: Իսպանիայի երկլեզու շրջանների համար, տե՛ս Linz, "Los jóvenes en una España multilingüe", 325-436:

36. Շարք 139, Ադյուսակ 20.2-ում մեջբերված՝ 1992թ. Կլինգեմանի հարցումից:

Է՝ թշնամական հարևանի օտարերկրացի բնակիչներ այն երկրներում, որոնց քաղաքացի էին իրենք իրենց համարում մի ժամանակ: Կամ նրանք կմնան որպես պետության քաղաքացիներ, որոնք ներգրավված են ազգաստեղծման գործում, ինչն ուժացում է պահանջում, բայց առանձնապես չեն ձգտի նպաստել ուժացմանը՝ այդպիսով մնալով երկրորդ կարգի քաղաքացիներ:

Սա պատմական ժառանգություն է, որն իր գուգահեռները չունի Հարավային Եվրոպայում, Հարավային Ամերիկայում կամ նույնիսկ Հարավ-Կենտրոնական Եվրոպայում: Սա ժառանգություն է, որը բնորոշ է նախկին Խորհրդային Միությանը և նախկին Հարավսլավիային: Այդպիսով, մեծ պատմական բեռ կար, որից պետք էր ազատվել Էստոնիայում և Լատվիայում նոր ժողովրդավարություններ ստեղծելու ճանապարհին: Բայց այս ժառանգությունը հետագայում ավելի բարդացվել էր անկախության ձեռքբերումից հետո ընդունված որոշումներով: Դժբախտաբար, ազգային պետության և ժողովրդավարության մրցակցող տրամաբանությունները չպետք է մոռացվեն, երբ մարդ մտածում է Էստոնիայում կամ Լատվիայում ժողովրդավարության կայացման հեռանկարների մասին: Բարեբախտաբար, դա համարյա թե խնդիր չէ Լիտվայում: Ազգաստեղծման գործընթացը բարդացնում է նույն չափի կամ ավելի մեծ կարևորություն ունեցող պետական շինարարության անհրաժեշտ գործընթացը, այն է՝ զինված ուժերի և միասնական ոստիկանության ստեղծումը (ավելի շուտ, քան տարբեր կազմակերպությունների, որոնց մի մասը կապված է ազգայնական կուսակցությունների հետ):

### Ո՞ՐՆ Է ԱՊԱԳԱՆ. ԲԱԶՄԱԶԳ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԹԵ՞ ՉՄԻԱՎՈՐՎԱԾ ՇՐՋԱՆՆԵՐ

Բայթյան հանրապետությունները, այլ բազմաթիվ պետությունների նման, ունենալով բնակչություն, որը հարևան երկրի, հատկապես՝ Ռուսաստանի պես հզոր հարևանի կողմից կարող է դիտարկվել որպես «չմիավորված շրջան», վախենում են ապագա վտանգներից: Հստակ պատասխան չկա, թե հնարավոր պահանջատեր բնակչությունն ավելի հավատարիմ չի՞ լինի արդյոք հուսախաբ եղած փոքրամասնության՝ իրենց պահանջներին սատարող «հայրենի» պետությանը, քան այն պետությանը, որն իր տարածքում բոլոր բնակիչներին մշակութային և քաղաքական իրավունքներ է ապահովում: Կարելի՞ է արդյոք պնդել, որ քաղաքացիությունն ու փոքրամասնությունների իրավունքները քաջալերում են պետությանը ոչ հավատարիմ լինելը: Հնարավոր է: Բայց Լիտվայի վերաբերյալ մեր տվյալները ենթադրել են տալիս, որ Լիտվայում քաղաքացիության շնորհումը կապված է փոքրամասնության կողմից պետական ինստիտուտների նկատմամբ ավելի դրական վերաբերմունքի հետ:

Փոքրամասնությունների իրավունքների անտեսումն ամենահեշտն է և պոտենցիալ կերպով ամենաարդյունավետն այն պարագայում, երբ փոքրամասնությունը չունի արտաքին «հայրենի» հովանավոր: Արևելակենտրոնական Եվրոպայի շատ երկրներում այդպիսին է, օրինակ, գնչուների հետ կապված իրավիճակը:<sup>37</sup> Երկրորդ Համաշխարհային

37. Skú Claus Offe, "Ethnische Politik im osteuropäischen Transformationsprozess", in Der Tunnel am

պատերազմում Գերմանիայի պարտությունը և դաշնակիցների կողմից Գերմանիայի օկուպացիան նշանակեց, որ Չեխոսլովակիան և Լեհաստանը ունակ դարձան լուծել գերմանական խնդիրը՝ արտաքսելով իրենց համարյա ողջ գերմանական փոքրամասնություն կազմող բնակչությանը: Սակայն Ռուսաստանի չափերն ու առկա աշխարհաքաղաքական իրավիճակը թելադրում են, որ Բալթիկայից ռուս բնակչության ուժային դուրսնդուրը պարզապես կիրառելի աշխարհաքաղաքական տարբերակ չէ:

Հիմա շրջվելով դեպի ապագան՝ մենք սկսում ենք տեսնել, որ հենց ազգային պետության տրամաբանությունն է ստեղծում մի քաղաքականություն, որը սպառնում է Էստոնիայի տարածքային ամբողջականությանը և նույնիսկ ժողովրդավարությանը: Եթե Էստոնիան չափազանց կոշտ վարվեր իր բնակչության ռուսական տարրի հանդեպ, Ելցինը կամ նրա, հնարավոր է՝ ավելի ազգայնական հաջորդը կարող էին ուժեղ ճնշման տակ հայտնվել՝ ստիպված լինելով պաշտպանելու ռուսներին: 1992թ. սեպտեմբերին Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրևը Միացյալ ազգերի կազմակերպությունում իր ելույթի ժամանակ, իսկապես, մեղադրեց Էստոնիային ռուսների իրավունքների ոտնահարման մեջ և հարց բարձրացրեց՝ Էստոնական պետականությունը դնել Միացյալ ազգերի կազմակերպության հոգաբարձությանը հատուկ կառավարման տակ:<sup>38</sup> 1995թ-ին նա բացահայտորեն առանձնացրեց Էստոնիան ու Լատվիան որպես երկրներ, որտեղ ռուս փոքրամասնությանը պաշտպանելու նպատակով ռուսական զինուժի կիրառումն արդարացված կլինի:<sup>39</sup>

Մենք այստեղ կենտրոնացել ենք Էստոնիայի նոր օրենքների հոգեբանական և քաղաքական հետևանքների վրա, որոնք շատ ավելի վտանգավոր են, քան ենթադրաբար՝ օրենքի տառը: Ոչ քաղաքացիները մեկուսացվեցին 1992թ. սեպտեմբերի 20-ի նախագահական և խորհրդարանական ընտրություններում քվեարկությունից և քաղաքական կուսակցություններ ստեղծելու գործընթացից: Սա նշանակում էր, որ Էստոնիայի տարածքում ռուս բնակիչների մեծ մասը չէր կարող ձայն տալ նորանկախ պետության առաջին ընտրությունների ժամանակ, չէր մասնակցում քաղաքական կուսակցական համակարգի ստեղծմանը և 1992-94թթ. չէր կարող համազգային մակարդակով քաղաքական տեղ գրադեցնել Էստոնական խորհրդարանում: Բնակչության մոտ 40%-ի մեկուսացումն այս ժամանակաշրջանում շրջեց ընտրական դիսկուրսը՝ նույնիսկ տանելով ավելի հեռուն՝ ազգային պետության հարցերի ուղղությամբ: 1992թ. ընտրություններում երեք կուսակցություններ, որոնք քաղաքացիության և լեզվի հարցերում կոդմ էին ազգային պետության ուժեղ դիրքերի, 46 տեղ վերցրեցին 101-ից և առաջին խորհրդարանում հիմնական ուժը կազմեցին: Քանի որ ռուսական քվեներ չկային, որոնց կարելի կլիներ հղում կատարել, նույնիսկ սոցիալ-դեմոկրատների նման չափավոր կուսակցությունները թեքեցին իրենց դիսկուրսը դեպի ավելի ազգայնական ուղղություն: Ավելի համախմբված Ժողովրդական ճակատը, որը չէր կարող ռուսների կողմից որևէ աջակցություն ունենալ, միայն տասնվեց տեղ գրա-

Ende des Lichts, Erkundungen der politischen Transformation im Neuen Osten (Frankfurt/Main: Campus, 1994)՝ 135-186: Տիպաբանությունը՝ տե՛ս էջ 145:

38. "New York Times", September 23, 1992, 9:

39. Տե՛ս "Meri Dismayed at Kozyrev's Remarks, Latvia Likewise", Baltic Independent (April 28-May 4, 1995), 6:

վեց: 1990-92թթ. խորհրդարանում քսաներեք էթնիկ ռուս պատգամավոր կար: 1992-94թթ. խորհրդարանում՝ ոչ մի հոգի:<sup>40</sup>

Կրկին նշենք, որ այս երևույթներից ոչ մեկի պատճառն անկասելի նախաձին ազգայնամոլությունը չէր: Իրականում, 1992թ-ի առաջին կեսին սուր պայքար էր մղվում այն հարցի շուրջ, թե արդյոք թույլ տա՞լ քսան, կամ նույնիսկ ավելի տարիներ Էստոնիայում բնակվող ռուսներին քվեարկել թե դա թույլ տալ անել առնվազն այն 5017 բնակիչներին, ովքեր պաշտոնապես դիմել էին Էստոնական քաղաքացիություն ստանալու համար: Վերջին դեպքում հարցն ուղղակի խորհրդանշական էր, քանի որ ռուսական բնակչության այս 1%-ն այդքան փոքր էր և նրանք ողջ ռուսական բնակչության մեջ ամենից ավելի հակվածն էին անկախությանը: Չնայած դրան՝ որոշում ընդունվեց այդ կապակցությամբ հանրաքվե անցկացնել, որի ընթացքում կազմակերպված քաղաքական կուսակցություններից շատերը 5017 ռուսներին քվեարկել թույլ տալու դեմ կամպանիա անցկացրեցին. կարևոր է նաև, որ նախագահը, վարչապետը և խորհրդարանի խոսնակը լուռ էին այդ հարցում: Հանրաքվեն շատ մոտ էր հաջողություն ունենալուն. ընտրազանգվածի 52%-ը դեմ արտահայտվեց այս փոքրաթիվ էստոնամետ ռուսներին քվեարկելու իրավունք տալուն, իսկ 48%-ը պաշտպանեց նրանց իրավունքը: Հարցն այն էր, որ քաղաքական առաջնորդները կարող էին շատ բան փոխել. հակառակը՝ քաղաքական գործընթացներում առանցքային ֆիգուրներից ոչ մեկը չօգնեց լեգիտիմացնել բազմապիսի փոխլրացնող ինքնություններից կազմված պետության գաղափարը: Բանն ավելի պայթուցավտանգ դարձավ, երբ ինչ-որ պահի թույլատրեցին հանրաքվեի և ընտրությունների ժամանակ քվեարկել մինչև 1940թ-ի քաղաքացիների երեխաներին և թոռներին, նույնիսկ եթե նրանք իրենց ողջ կյանքն անց էին կացրել արտասահմանում:<sup>41</sup>

Լեզվի մասին օրենքը ևս սպառնում էր ժողովրդավարական պետության գաղափարին, որում ոչ բոլոր անդամներն են իրար հավասար՝ ըստ իրենց լեզվի և էթնիկ պատկանելության: Սրա թողած ազդեցությունն ավելի ծանր էր, քան օրենքն ինքը, որովհետև չնայած ապագայում տարբեր աշխատատեղերի համար կապահաջվեր էստոներենի իմացություն, բայց շատ ուրիշ վայրերում դրա կարիքը չկար (ինչպես օրինակ՝ հիմնականում ռուսախոս հյուսիսարևելյան Նարվա, Կոհիլա-Յարվե և Սիլյամյայե քաղաքների գործարաններում): Բայց քիչ բան արվեց այս կարևոր տեղեկությունը տարածելու համար: Նաև հստակ չէր, թե ինչպես էստոնական պետությունը կարող է զգալի քանակությամբ ուսուցիչներ տրամադրել, որոնք կկարողանան կամ կցանկանան դասավանդել ռուսախոս շրջաններում: Դեյվիդ Լեյթինը պնդում է, որ 1990-91թթ. մեծ քանակությամբ ռուսների ներգրավվածությունը էստոնական հասարակության մեջ ենթադրել է տալիս, որ ավելի մեծ պատրաստակամությամբ ռուսներն ուժացում կցանկանային, քան էստոնացիները՝ ուժացնել նրանց:<sup>42</sup> Իհարկե, այս ամենը հասկանալի է, նաև՝ թշնամանքը ռուսների նկատմամբ, ովքեր տասնամյակներ շարունակ հրաժարվում էին թեկուզ ամենատարրական

40. *St'ü Velio Pettai, "Emerging Ethnic Democracy in Estonia and Latvia"* (զեկույցը ներկայացված է Բալթյան հետազոտությունների զարգացման ասոցիացիայի 14-րդ գիտաժողովում, Չիկագո, Բրիտոյ, 1994թ., հունիսի 8-11):

41. Սրանք հենված են Ալֆրեդ Ստեփանի 1992թ. հուլիսին Էստոնիայում կատարած լայնածավալ հարցազրույցների վրա: *St'ü üvli Kask, "National Radicalization in Estonia"*, Nationalities Papers, 383-84:

42. Laitin, *"National Uprisings in the Soviet Union"*, 163:

գիտելիքներ ձեռք բերել էստոններենից: Չնայած դրան՝ ժողովրդավարական քաղաքակա- նության տեսակետից ազգային պետության տրամաբանությունը հաճախ տարբերվում է ժողովրդավարական պետության տրամաբանությունից, և լեզվի դեպքում էստոնիայի կառավարությունը պարտավորություններ և պարտականություններ ունի, որոնք չպետք է աչքաթող անի:<sup>43</sup>

1991-93թթ. ընթացքում էստոնիայում ազգային պետության կառուցման տրամա- բանությունը, լեզուն և քաղաքականությունը հենված էին քաղաքացիության նեղ սահ- մանման վրա, ինչը տանում էր դեպի քաղաքական և սոցիալական տարածքների կրճա- տում, որտեղ էստոնացիներն ու ոչ էստոնացիները կարող էին փոխազդել և մրցակցել ժողովրդավարական ձևով: Այսօր, սակայն, Բալթիկայի ռուսախոս փոքրամասնությանը մեղադրում են պասիվության մեջ, ինչը բացատրում է էթնիկ բռնությունների բացակա- յությունը: 1993թ. հարցումը ցույց է տալիս, որ ո՛չ էստոնացիները և ո՛չ լատիշները կար- ծես թե ավելի քիչ են հակված մասնակցելու «կառավարության առջև կանգնած խնդիրնե- րի շուրջ փողոցային ցույցերին», քան բալթյան ազգությունները: Ռուսների զարմանալի բարձր%-ը՝ 50-ից 51՝ համեմատած էստոնացիների և լատիշների 38 և 39%-ի հետ, ասել է, որ «հաստատ չեն» մասնակցի քաղաքական բողոքի ցույցերին: Նույնիսկ ի պատասխան քաղաքացիության և քվեարկության իրավունքի հարցերին՝ էստոնիայում ռուսների մի- այն 38%-ը և Լատվիայում ռուսների 27%-ն են ասել, որ հնարավոր է, որ մտածեն իրենց իրավունքների համար փողոցային ցույցերին մասնակցելու մասին:<sup>44</sup>

Սակայն 1991-94թթ. դեպքերը նշանակում են, որ ժողովրդավարության նախկի- նում բացակայող արգելքներն, անզգուշորեն կամ նույնիսկ կանխամտածված կերպով ստեղծվել են քաղաքական գործիչների կողմից, որոնք ընկել են ազգային պետության քաղաքականության դիսկուրսի մեջ և անուշադիր են եղել քաղաքականության փոխհա- մաձայնական կամ միասնականացնող ոճերի հանդեպ: Կարճ ասած՝ նրանք անուշադիր են եղել բազմազգ պետության ներսում համախմբված ժողովրդավարության ստեղծմանն օգնող քաղաքականության ոճի հանդեպ:<sup>45</sup>

Մենք դիտարկել ենք էստոնիայի և Լատվիայի օրինակները ԽՍՀՄ-ի՝ տասնհինգ նոր պետությունների բաժանման լայն համատեքստում, բայց չնայած պետության, պետու- թյան ներսում բազմապիսի ազգությունների և ժողովրդավարության կապերի նմանա- տիպ խնդիրներին՝ զգալի տարբերություններ կան բալթյան և ԱՊՀ պետությունների միջև: Այս տարբերությունները արհամարհելի չեն: Բալթյան երկրներում մենք գործ ու- նենք պետությունների հետ, որոնք երկար ժամանակ 1918թ-ից հետո անկախություն են վայելել: Նախկին Խորհրդային Միության մյուս համարապետությունների դեպքում մենք

43. Չնայած ճիշտ է, որ շատ ռուսներ էստոնիայում չեն սովորել էստոներեն լեզուն, հիմնական հարցն այն է, թե արդյոք իրենք, կամ, ավելի հավանական է, նրանց երեխաները կցանկանա՞ն էստո- ներեն սովորել անկախ էստոնիայում: Այստեղ հարցման տվյալներն ավելի դրական մոտեցումներ են ցույց տալիս: էստոնիայում ռուսախոսների միայն 37%-ն է ասում, որ նրանք դեմ են, երբ իրենց պես մարդկանց ստիպում են բալթյան լեզուներ սովորել: *Stu Rose and Maley, "Nationalities in the Baltic States"*, հարց 206:

44. Rose and Maley, "Nationalities in the Baltic States", 45:

45. Մեծամասնական ժողովրդավարության դեմ փաստարկների և ավելի փոխհամաձայնական, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ միասնականական, գործելակերպերի համար *տե՛ս Lijphart, "Democracies"*:

գործ ունենք քաղաքական միավորների հետ, որոնք իրենց գոյությունն ու սահմանները ստացել են խորհրդային պետությունից, չնայած նրանցից շատերը կարճ ժամանակով պետականություն են ունեցել ցարական կարգի տապալումից հետո: Այն փաստը, որ ԱՊՀ երկրները երկար ժամանակ եղել են կայսրության մաս, նշանակում է, որ ռուսները և երբեմն՝ այլ սլավոնական փոքրամասնություններ սերնդեսերունդ ապրել են այնտեղ որպես քաղաքացի աուբյեկտներ: ԱՊՀ-ի որոշ երկրներում, ի տարբերություն բալթյան երկրների, ռուսները նորարար խումբ էին:<sup>46</sup> Բալթյան ազգերը, ընդհակառակը, շնորհիվ մինչև 1918թ. գերմանական մեծ ներկայության և լյութերական ու կաթոլիկ մշակույթի՝ ավելի ժամանակակից էին կամ առնվազն՝ ավելի արևմտյան, քան ռուսները:

Դաշնային պետությունների այն քաղաքական ենթամիավորներում, որտեղ գերակշռող ազգությունը տարբեր էր դաշնային պետության գերակա ազգությունից, իրավիճակը նույնպես տարբեր է: Այդպիսին է ռուս փոքրամասնության դեպքը Չեչնիայում: Ռուսները սփյուռք չեն այլ պետությունում: Նրանք փոքրամասնություն են դաշնային հանրապետությունում: Ռուսաստանը նրանց արտաքին հայրենիքը չէ: Այդպիսով, Չեչնիայի ողբերգությունն աշխարհի մեծ մասին ներկայանում է ավելի շատ որպես ներքին, քան միջազգային հակամարտություն: Այս առումով ռուսները Չեչնիայում նույնը չեն, ինչ ռուսները՝ Էստոնիայում: Ռուսներին պաշտպանելու համար ռուսական պետության ներխուժումը Էստոնիա միանգամայն այլ բան կլինի միջազգային իրավունքի մակարդակով:<sup>47</sup> Այդպիսով, ռուսական փոքրամասնությունները Բալթիկայում, եվրասիական մերձավոր արտասահմանում և նոր Ռուսաստանի Դաշնության ազգային ենթամիավորներում վերլուծական և աշխարհագրական առումներով զտնվում են երեք տարբեր և առանձնահատուկ իրավիճակներում:

ԱԶԳԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ, ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԺՈՂՈՎԴԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ. ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՄ

Բալթիկայի քաղաքականությունը մեզ թույլ է տալիս մի քիչ ավելի հանգամանորեն գործ ունենալ պետականաստեղծման և ազգաստեղծման միջև հարաբերությունների

46. Իսկապես, երեք պայմաններ բալթյան ազգերի և ռուսների հնարավոր ինտեգրումը, հատկապես՝ ժողովրդավարական և խաղաղ ինտեգրումը, ինչ-որ տեղ ավելի հեշտ են դարձնում, քան ԱՊՀ-ի հարավային հանրապետություններում մուսուլմանների և ռուսների միջև հնարավոր ինտեգրումը: Առաջին պայմանն աշխարհաքաղաքական է: Բալթյան երկրների Եվրոպական միությանն աշխարհագրական և քաղաքական մտակության պայմաններում բալթյան ազգերն, անկասկած, ավելի զգայուն կլինեն քաղաքացիության նորմերի խախտման վերաբերյալ Եվրամիության քննադատության նկատմամբ, քան ԱՊՀ երկրները կլինեն (կամ՝ ե՛ն): Երկրորդ պատճառը ռազմականն է: Ռուսաստանը Բալթիկայում զինուժ կիրառելու հարցում ավելի զուսպ կլինի, քան եվրասիական մոտակա արտասահմանում: Երրորդ պայմանը հասարակական և մշակութային է: Հնարավոր է, որ ավելի մեծ տարբերություններ կան եվրասիական մուսուլմանների և ռուսների միջև, քան բալթյան ազգերի և ռուսների միջև:

47. Դեյվիդ Լեյթինը, հարցման տվյալների վրա հենվելով, հետաքրքիր սոցիոլոգիական համեմատություն է անցկացնում Էստոնիայում և Բաշկիրիայում «ռուսախոս ազգությունների» միջև, բայց զարմանալիորեն չի տեսնում այն տարբերությունը, որը մենք ենք դնում անկախ պետության ներսում և դաշնային պետության ենթամիավորում փոքրամասնությունների միջև: *Sk'u* Latin, "Identity in Formation":



**Աղյուսակ 20.9. Պետություն, ազգ և ժողովրդավարություն ստեղծելու ռազմավարությունների տիպաբանությունը բազմազգ պետություններում.**

Ազգի ստեղծման ռազմավարությունները. ժողովուրդ-ազգ հարաբերությունների նկատմամբ գաղափարախոսությունը	Պետության ստեղծման ռազմավարությունները. ոչ ազգային փոքրամասնությունների կամ փոքրամասնությունների հանդեպ քաղաքականությունը	
	Բացառողական ռազմավարություն	Ներառական ռազմավարություն
Ժողովուրդը և ազգը պետք է նույնը լինեն	Տիպ I. Արտաքսում կամ առնվազն «հեռանալու» տարբերակի հետևողական քաջալերում	Տիպ III. Մեծ ջանքերի գործադրում՝ փոքրամասնություններին ազգային մշակույթի մեջ ուծացվելու համար և փոքրամասնությունների քաղաքական կամ մշակութային իրավունքների չհանաչվում
Ժողովուրդն ու ազգը կարող են տարբեր լինել	Տիպ II. Մեկրաացում քաղաքական գործընթացներից՝ քաղաքացիական ազատություններ, բայց ոչ քաղաքական իրավունքներ շնորհելով և այդպիսով «ծայնի» տարբերակի ապաքաջալերում	Տիպ IV. Մեծ ջանքերի գործադրում փոքրամասնություններին հարմարեցնելու

հետ փոքրամասնությունների առումով: Կան չորս հիմնական հնարավորություններ՝ ներսում զգալի տարբերություններով: Տիպաբանությունը հիմնված է երկու չափանիշի վրա: Առաջին չափանիշը վերաբերում է պետության ստեղծմանը: Փոքրամասնությունների քաղաքացիության իրավունքների նկատմամբ պետական քաղաքականությունը կարող է լինել ներառական կամ վանողական: Երկրորդ չափանիշը վերաբերում է ազգի ստեղծման ռազմավարություններին: Ազգի առաջնորդները կարող են ունենալ այնպիսի գաղափարախոսություն, որ դեմոսը և ազգը պետք է նույնը լինեն, կամ գաղափարախոսական առումով նրանք կարող են դեմոսի ներսում ընդունել տարբեր փոքրամասնությունների և նույնիսկ ազգերի գոյության փաստը: Այս երկու չափանիշների համադրումը հանգեցնում է չորս տարբեր տիպերի ձևավորմանը (Աղյուսակ 20.9):

Նախ վերլուծենք յուրաքանչյուր տիպը՝ որպես մաքուր տիպ՝ չնայած որ, իհարկե, էմպիրիկորեն յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարող են դրա ներսում զգալի տարբերակներ լինել կամ նույնիսկ մեկից ավելի տիպերի համակցություններ: Տիպ 1-ում վերնախավի կողմից դեմոսին ազգի հետ գաղափարախոսական նույնացումը համակցվում է ազգի համար որպես «օտար» բնորոշվողների քաղաքացիության նկատմամբ վանողական ռազմավարության հետ և հանգեցնում է այնպիսի քաղաքական համակարգի, որում նախընտրելի տարբերակը կարող է լինել օտարների արտաքսումը: Նվազագույն դեպքում 1-ին տիպի ռազմավարությունները կբերեն խտրականական քաղաքականության կամ առանձնահատուկ դեպքերում՝ հատուկ վճարումների հետևանքով արտագաղթի միջոցով ենթադրվող հայրենիքներ ոչ քաղաքացիների հեռանալու տարբերակի քաջալերմանը:

2-րդ տիպի դեպքում վերնախավի կողմից ժողովրդի և ազգի միջև տարբերություններ ընդունելն ու նրանց քաղաքացիության հանդեպ վանողական ռազմավարությունը բերում է մի քաղաքականության, որը բնակիչներին, որոնք ազգի մաս չեն կազմում, տալիս է նրանց որպես բնակիչ-օտարերկրացիների, քաղաքացիական իրավունքներ, բայց ոչ՝ քաղաքական իրավունքներ:

3-րդ տիպի դեպքում քաղաքացիության հանդեպ ներառական ռազմավարությունը, ժողովրդի և ազգի՝ սկզբունքորեն նույնացման հետ համակցվելով, թույլ կտա փոքրա-

մասնությունը կամ փոքրամասնություններին քաղաքական մասնակցություն ունենալ միայն այն դեպքում, եթե նրանք ուժացվեն գերակշռող մշակույթի մեջ: 3-րդ տիպում չկան դրական արժեքներ, որոնք կապված լինեն ժողովրդի կամ պետության ներսում բազմազանության հետ: Ավելի շուտ կան պետության կողմից ձևավորված ուժացման քաղաքականության բազմաթիվ տարբերակներ: Պետության կողմից առաջարկվող ուժացման ռազմավարությունը կարող է պարունակել զգալի խտրականություն և դե ֆակտո՝ երկրորդ կարգի քաղաքացիություն այն մարդկանց համար, որոնք անկարող են կամ չեն ցանկանում ուժացվել գերակշռող ազգին: Դրա հետևանքով բազմազան, բայց ոչ՝ բազմակարծիք հասարակություն կունենանք:

Վերջապես, 4-րդ տիպում և՛ գերակա մեծամասնության, և՛ փոքրամասնության կամ փոքրամասնությունների քաղաքացիության վերաբերյալ ներառական ռազմավարություն կա: Անհատապես ժողովրդի բոլոր մշտական անդամներն ընդունվում են որպես պետության լիակատար քաղաքական իրավունքներ ունեցող լիիրավ անդամներ: Բացառվում են միայն երկիր եկող այն օտարերկրյա քաղաքացիները, որոնք գիտակցում են, որ իրենք տվյալ երկրի քաղաքացիներ չեն: Ավելին, քաղաքական համակարգը փոքրամասնություններին խմբային իրավունքների ճանաչման տարբեր աստիճաններ է շնորհում: Իհարկե, ազատական ժողովրդավարություն համարվելու համար այս խմբային իրավունքները երբեք չպետք է խախտեն ցանկացած անհատի իրավունք անկախ այն բանից, թե այդ անհատը փոքրամասնության անդամ է, թե ոչ: Խմբային իրավունքները ներառում են փոքրամասնություններին ներկայացնելու համար քաղաքական կուսակցություններ ստեղծելու ազատությունը կամ, հնարավոր է, երկլեզվությունը կրթության և հանրային ծառայությունների որոշ ոլորտներում: Հետևաբար, 4-րդ տիպը բազմակարծիք հասարակության ընդունումն է ցուցադրում, որում ամբողջությամբ բացասական չի դիտվում բազմազանությունը:

Չորրորդ տիպի դեպքում լուծումների բազմազանությունը շատ մեծ է՝ սկսած փոքրամասնության մշակութային և կրթական կյանքի մասնավոր կազմակերպություններ թույլ տալուց մինչև տարբեր փոխհամաձայնողական քաղաքականություններ: Փոխհամաձայնողական քաղաքականությունները կարող են վերաբերել հասարակության աջակցությունը վայելող համայնքային կազմակերպությունների և հանրային ծառայությունների ոլորտներից մինչև տեղական կամ համապետական մակարդակով պաշտոնական երկլեզվությունը: Որոշ դեպքերում ֆեդերալիզմը կարող է բազմազգ հասարակության ճանաչման խնդրի լուծում լինել:

Մաքուր 1-ին տիպի ռազմավարությունը կարծես թե չի կարող «հաջողված» լինել, քանի դեռ պետությունը ստիպողական քաղաքականություն չի սկսել վարել: Բայց որոշ դեպքերում ստիպողականությունը կարող է քաղաքացիական պատերազմի հանգեցնել, ինչպես և փոքրամասնության արտաքին հայրենիքի հետ հակամարտության: Միայն շատ բացառիկ պայմաններում 1-ին տիպի ռազմավարությունը կարող է համահունչ լինել ազատական ժողովրդավարության պահանջներին:

Մաքուր 2-րդ տիպի ռազմավարությունը, եթե պասիվորեն է ընդունվում փոքրամասնության կողմից, հնարավոր է, որ ստեղծի «Էթնիկ ժողովրդավարություն»՝ դա այն է, երբ ազգային մեծամասնության համար լիարյուն քաղաքական գործընթացներ կան, բայց փոքրամասնության համար՝ միայն հպատակի կարգավիճակ: Նման էթնիկ ժողովրդա-

վարությունը, իհարկե, չի կարող բավարարել Ռոբերտ Դահլի կողմից իր "Polyarchy" գրքում սահմանված ժողովրդավարական ներառման չափանիշներին:<sup>48</sup>

3-րդ և 4-րդ տիպերը ժողովրդավարության իրարից խիստ տարբերվող հայեցակարգեր են: Որոշ պայմանների ներքո 3-րդ տիպի ուժացման միջին կամ երկարատև հեռանկարը կարող է հանգեցնել ժողովրդավարական ազգային պետության կառուցմանը: Բայցևայնպես, նման քաղաքականության հաջողությունը կախված չէ միայն ազգային պետություն կառուցողների նպատակներից: Հաջողությունը կախված է նաև փոքրամասնության անդամների՝ իրենց ինքնությունից, լեզվից ու մշակույթից հրաժարվելու և գերակշռող ազգության շահեկանությունն ընդունելու պատրաստակամությունից: Հաջողությունը կախված կլինի նաև այն բանից, թե կա՞ արդյոք հզոր «հայրենի» պետություն: Եթե հզոր «հայրենի» պետություն գոյություն ունի, ապա դա զգալիորեն կբարդացնի 3-րդ տիպը: Եթե պետության կողմից կիրառվող ուժացման 3-րդ տիպը տապալվի, ապա կարող են փորձել 1-ին տիպը, սակայն զգալիորեն մեծանում են ժողովրդավարության և նույնիսկ պետության ամբողջականության պահպանման ռիսկերը, հատկապես, եթե գոյություն ունի հզոր «հայրենի» պետություն, և այն բողոքում է:

Որպեսզի 3-րդ տիպի քաղաքականությունը ժողովրդավարական համարվի, եթե դա նույնիսկ փոքրամասնությունների ուժացման շնորհիվ պետություն ստեղծելու քաղաքականություն վարելուն է մեծապես նվիրված, այն պետք է բավարարի մշակութային փոքրամասնությունների նկատմամբ որոշակի պահանջների արտահայտման, հավաքների կազմակերպման, կուսակցություններ ստեղծելու, ընտրություններում թեկնածուներ առաջադրելու և խաղաղ միջոցներով իշխանության համար պայքարելու ազատությունները: Այսինքն, ի հավելումն սովորական մարդու իրավունքների, պետք է քաղաքական իրավունքներ լինեն:

Սա երկու կարևոր հետևանք ունի: Առաջինն այն է, որ փոքրամասնության (կամ փոքրամասնությունների) ձգտումներն ու դժգոհությունները հնարավոր լինի հրապարակապետորեն արտահայտել և իրագործել: Ներկայացուցչություն ունենալու հնարավորությունը կարող է, բայց ոչ միշտ, փոքրամասնությունների և նրանց կազմակերպությունների անհատ անդամների համար առանձնապես շահեկան լինել: Այն փաստը, որ (ըստ սահմանման) լեզվական կամ էթնիկ փոքրամասնությունը (ի տարբերություն ժողովրդավարական գործընթացներում գաղափարական հիմքեր ունեցող փոքրամասնության) չի կարող կառուցվածքային պատճառներով երբևէ մեծամասնություն դառնալու հույս ունենալ, մեծամասնական ժողովրդավարություններում ավելի քիչ հավանական է դարձնում փոքրամասնության համար զգալի շահեր ստանալը: Այդ իսկ պատճառով 4-րդ տիպի հետ կապված ցուցանիշներին հասնելու համար փոքրամասնության պահանջները պետք է հաճախ բարձրաձայնվեն: Նույնիսկ, երբ նման փոխհամաձայնության կամ միավորվածության ցուցանիշներն անհասանելի են, քաղաքական ներկայացուցչության փաստը փոքրամասնության համար իշխանության մաս կազմելու հնարավորություն է ստեղծում: Համապետական մակարդակում փոքրամասնություններն ամենից շատ կարող են իշխանության մաս կազմելուն հասնել այն ժամանակ, երբ ազգային մեծամասնությունը մասնատված է կամ (ընտրությունների կամ էլ կառավարություն կազմելու ժամանակ)

48. Ståu Dahl, "Polyarchy: Participation and Opposition", 5-10.

փոքրամասնությունների հետ բացահայտ կամ ծայտված կոալիցիաներ կազմելու և/կամ փոքրամասնությունների և/կամ նրանց ներկայացուցիչների աջակցության կարիքն ունի: Որոշ դեպքերում փոքրամասնությունը մեծ գին է պահանջում (ինչպես Բարայելում՝ կրոնապես մոլեռանդ հրեա փոքրամասնությունների կուսակցությունները):

3-րդ տիպի պայմաններում ժողովրդավարական գործընթացներում փոքրամասնության մասնակցության երկրորդ կարևոր հետևանքն այն է, որ դա կարող է հանգեցնել ծայրաստիճան բախումնաձին տարբերակների: Մեծամասնության նվիրվածությունը կոշտ ուժացման գործընթացին կարող է հանգեցնել փոքրամասնության հուսախաբությանը, նրա ծարահեղականացմանը, չափավորների և արմատականների միջև տարաբաժանմանը և նրանց որոշ անդամների կողմից ոչ հավատարիմ վարքագծին անցնելուն: Ակտիվիստների կողմից բռնություններն անհավանական չեն, և դրանց ճնշումը հաճախ դժվար է և կարող է հանգեցնել բռնությունների ծավալմանը, ինչը կարող է ծայրաստիճան անկայունացնող ազդեցություն ունենալ ժողովրդավարության և ներքին խաղաղության վրա: Բռնությունների ավելացումը կարող է նաև հանգեցնել օտարերկրյա ներխուժումների՝ ներառյալ արտաքին «հայրենիքի» կողմից: Երբ փոքրամասնության պահանջներն ինտենսիվ են, և մեծամասնության հարմարվել չցանկանալը ևս մեծ է, 3-րդ տիպը դառնում է անկայուն և անկենսունակ. եթե ժողովրդավարությունը քայքայելու ցանկություն չկա, ապա որոշ քայլեր դեպի 4-րդ տիպը դառնում են ցանկալի և նույնիսկ՝ անխուսափելի:

Այս ամենից ակնհայտ է դառնում, որ 3-րդ տիպի ներառական ժողովրդավարական պետությունը փոքրամասնության քաղաքացիների և հասարակության համար որոշակի հետևանքներ ունի: Հետևանքները կարող են լինել դրական՝ արագացնելով 3-րդ տիպի հասարակության ամրապնդումը կամ տանել դեպի 4-րդ տիպը: Բայց եթե դրանք լավ չկառավարվեն, հետևանքները կարող են բերել ժողովրդավարության և պետության ճգնաժամերի:

3-րդ տիպի կամ դեպի 4-րդ տիպը անցնելու պատրաստ 3-րդ տիպի ժողովրդավարական հասարակությունները ամեն մի էթնիկ, մշակութային կամ կրոնական փոքրամասնություններում կարող են մեկուսացնել ծայրահեղականներին, բայց չեն կարող կանխել նրանց գոյությունը և հակաժողովրդավարական գործողությունները (օրինակի համար՝ ԷՏՄ-ի ահաբեկիչներն Իսպանիայում): Նման իրավիճակներում ժողովրդավարական առաջնորդները սովորաբար կարող են հույսը դնել բնակչության փոքրամասնության խաղաղասեր մեծամասնության վրա՝ այդպիսով սահմանափակելով հասարակության վրա ծայրահեղականների ազդեցությունը:<sup>49</sup> Փոքրամասնությունների և ազգայնականների պահանջներն անպայման չէ, որ ի վերջո հանգեցնեն ժողովրդավարության քայքայմանը, մեծածավալ բռնությունների և քաղաքացիական պատերազմի, բայց ծայրահեղականության բացակայությունը չի երաշխավորվում ժողովրդավարությամբ, ինչպես որ այն չի երաշխավորում հանցագործությունների բացակայությունը: Ժողովրդավարական հասարակությունն այն առավելությունն ունի, որ բռնարարքներն (անկախ դրանց «իդեալիս-

49. Տե՛ս օրինակի համար՝ Բասկերի երկրում IV տիպի ժողովրդավարության պայմաններում ազգայնամոլական ծայրահեղ ահաբեկչության կողմից բռնության հանդեպ հասարակական կարծիքի էվոլյուցիան փաստող բազմաթիվ աղյուսակները Francisco José Llera Ramo, *Los vascos y la política. El proceso político vasco: elecciones, partidos, opinión pública y legitimación en el País Vasco, 1977-1992* (Bilbao: Servicio Editorial de la Universidad del País Vasco, 1994) գրքի Գլուխ 4-ում, էջ 97-119:

տական» դրդապատճառներից) ամենայն հավանականությամբ, ի վերջո և՛ մեծամասնության, և՛ փոքրամասնությունների հիմնական զանգվածի կողմից կորակավորվեն որպես հանցագործություններ: Քաղաքական մթնոլորտի զարգացումը Իսպանիայի Բասկերի երկրում նման Էվոլյուցիայի օրինակ է (չնայած ԷՏԱ-ի ահաբեկիչների ցավալի, վտանգավոր և հավանաբար՝ անխուսափելի գործողություններին): Դրանք կարող են, եթե լավ վերահսկվեն, վերջանալ՝ մեծ մասամբ էական ազդեցություն չունենալով ժողովրդավարության կայացման և կայունության վրա:

Սակայն մենք պետք է գիտակցենք, թե ինչի կարող է և չի կարող հասնել ժողովրդավարությունը որոշակի պայմանների և սխալների կամ նույնիսկ հանցագործությունների առկայության դեպքում, որոնք կառավարությունները կարող են կատարել, երբ դիմակայում են էթնիկ, ազգայնամոլական կամ կրոնական ապստամբություններին, ինչին մենք ծանոթ ենք այնպիսի ժամանակակից օրինակներից, ինչպիսին է Հնդկաստանը:<sup>50</sup>

Պետության առաջնորդների համար 4-րդ տարբերակը կարող է սկզբնական տարբերակ հանդիսանալ կամ, հնարավոր է, որ հանդիսանա մի տարբերակ, որին կձգտեն 3-րդ տիպի փորձի տապալումից հետո:<sup>51</sup> Կայուն լուծումների բազմազանություն կարելի է գտնել 4-րդ տիպում, որոնք որոշ դեպքերում կարող են հանգեցնել ժողովրդավարական բազմազգ պետության կամ առնվազն ժողովրդավարական պետության, որը ճանաչում է իր քաղաքացիների մշակութային և լեզվական բազմազանությունը:

#### ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ. ԲԱԼԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Եթե մեկն ընդունում է բալթյան փոքրամասնությունների համար որպես հայրենի պետության դեր կատարող ազգայնական Ռուսաստանի գոյությունը և որպես բազմազգ երկրներ՝ Էստոնիայում, Լատվիայում և Լիտվայում 1990-ականների դե ֆակտո իրողությունը, ապա ինչպե՞ս են դրանք առնչվում մեր տիպաբանությանը: Քննարկելու համար ամենահեշտը Լիտվան է: Լիտվան շատ առաջ չի գնացել փոխհամաձայնողական ուղղությամբ, բայց անկախության սկզբին բոլոր մշտական բնակիչների համար քաղաքացիության հանդեպ նրա ներառական ռազմավարությունը Լիտվային ուղղակիորեն դնում է 4-րդ տիպի մեջ: Լիտվան շատ լավ կարող է դառնալ կայացած բազմազգ ժողովրդավարություն: Մենք հասկանում ենք, իհարկե, այն փաստը, որ Լիտվացիների ամուր ժողովրդագրական մեծամասնությունը 4-րդ տիպի ընտրությունը շատ ավելի դյուրին դարձրեց, քան դա կարող էր լինել Էստոնիայում կամ հատկապես՝ Լատվիայում:

50. Առանձին հրապարակման մեջ Լինցը պնդում է, որ ժողովրդավարության ընդհանուր համատեքստում մարդու իրավունքների ամենահաճախ խախտումները տեղի են ունենում այնպիսի ժողովրդավարություններում, որտեղ կան միաժամանակ և՛ պետութենականության, և՛ էթնիկ, կրոնական և/կամ լեզվական հակամարտություններ (օր.՝ Քաշմիրը (Kashmir)): *Տե՛ս նրա "Types of Political Regimes and Respect for Human Rights: Historical and Cross National Perspectives"* հոդվածը Asbjorn Eide and Bernt Hagtvet, eds., *"Human Rights in Perspective: A Global Assessment"* (Cambridge: Blackwell, 1992) գրքում, էջ 177-221:

51. Ինչպես մենք ցույց ենք տվել Իսպանիայի դեպքում, Կատալոնիայում և Բասկերի երկրում պետութենականության հնարավոր հակամարտությանը հանդիպելով՝ Սուարեսը (Suárez) և Իսպանիայի անցումային շրջանի առաջնորդներն արագորեն ընտրեցին IV տիպի հասարակարգը:

Լատիշ քաղաքական առաջնորդների մեծ մասը 1991-95թթ. բացահայտորեն մերժեցին 4-րդ տիպի հասարակության գաղափարը: Լատվիացի շատ առաջնորդներ, հնարավոր է, որ 3-րդ տիպի ուժացումը ցանկալի էին համարում: Սակայն պատմականորեն, մշակութային առումով և աշխարհագրորեն իրականում անհնար էր կարճ կամ նույնիսկ միջին ժամանակահատվածում ուժացնել լատվիական փոքրամասնություններին, որոնք իրար հետ մեծամասնություն էին կազմում Լատվիայի բոլոր ամենամեծ քաղաքներում: Նույն պատճառով 1-ին տիպը վտանգավոր և դժվար տարբերակ էր: Փոքրամասնությունների 2-րդ տիպի քաղաքական մեկուսացումը հավանաբար հասանելի էր, եթե չսպառնար Ռուսաստանի հետ հակամարտությունը, բայց արդյունքում ազատական ժողովրդավարության փոխարեն էթնիկ ժողովրդավարություն կստացվեր: Ինչևէ, եթե փոքրամասնություններն ակտիվորեն դիմադրեին այդ վանողական ռազմավարությանը, հակամարտությունն ու ավտորիտարիզմը կարող էին լինել 2-րդ տիպի ռազմավարության տապալման արդյունքը:

Էստոնիան վերնախավի քաղաքական ռազմավարության առումով շատ ավելի մոտ է Լատվիային, քան Լիտվային: Էթնիկ էստոնացի քաղաքական վերնախավի մեծ մասը որպես ցանկալի մոդել մերժեց այն, ինչը մենք անվանում ենք 4-րդ տիպ:<sup>52</sup> Էստոնական քաղաքական վերնախավի կողմից փոքրամասնություններին գոնե չնչին մշակութային և քաղաքական իրավունքներ տրամադրելու կամեցողություն ցուցաբերելով՝ Էստոնիայի քաղաքական վերնախավը 1992-93թթ. ներկայացավ Եվրամիությանն ուղղորդված երկիր (գուցե և դեպի ինքն իրեն)՝ ինչը մենք անվանում ենք 3-րդ տիպի հասարակություն գնալու ճանապարհին գտնվող:<sup>53</sup> Սակայն կանխատեսելի ապագայում հասարակայնորեն կամ քաղաքականապես Էստոնիայում 2-րդ տիպի էթնիկ ժողովրդավարությունը կմնա հիմնական մրցունակ մոդելը: 2-րդ տիպի էթնիկ ժողովրդավարությունը, հնարավոր է, որ ավելի փոքր դիմադրության հանդիպի Էստոնիայում, քան Լատվիայում: Էթնիկ էստոնացիները ընդհանուր բնակչության համեմատաբար ավելի մեծ մաս են կազմում, քան լատիշները՝ Լատվիայում: Էստոնիայի տնտեսությունը ևս ռուս փոքրամասնության կողմից ընկալվում է ինչ-որ տեղ ավելի ուժեղ, քան Լատվիայինը:<sup>54</sup> Լատվիայի փոքրա-

52. Մենք, սակայն, նշել ենք Ադյուսակ 20.8-ում, որ հասարակ էստոնացի ու լատվիացի քաղաքացիներն ավելի բաց են ռուսական փոքրամասնության քաղաքական մասնակցության նկատմամբ, քան քաղաքական վերնախավերը: Քանի որ էստոնական կուսակցական համակարգը վերին աստիճանի մասնատված էր, նույնիսկ փոքրաթիվ ռուսախոս կուսակցությունը կարող էր խորհրդարանում մեծ կշիռ ստանալ կառավարության ձևավորման ժամանակ, և այդպիսով՝ դեպի լավը փոխել Էստոնիայում վերնախավի և զանգվածների կարծիքների անհամապատասխանությունը:

53. Մշակութային, բայց ոչ քաղաքական ոլորտում նույնիսկ հստակ IV տիպի ռուսական հավաքական պահանջների որոշ ընդունում կար: «Մշակութային ինքնավարության մասին օրենքը» փոքրամասնություններին որոշ դեր տվեց տեղական խորհուրդներ և կրթական հաստատություններ հիմնելու գործում: Էստոնիայի նախագահը նաև իր հովանու ներքո «Էթնիկ փոքրամասնությունների «Կլոր սեղան»» հիմնեց: Սակայն 1994թ. գարնանը ռուսական հեռուստատեսության փակումն ու 1993թ. «Կրթության մասին օրենքը», որն ավագ դպրոցի մակարդակից բարձր արգելում էր ռուսական լեզվով կրթությանը պետական աջակցություն ցույց տալը, պետության կողմից մեծապես պարտադրված III տիպի քաղաքականություն էր: *Տեն նախկինում մեջբերված Վելիկի (Velik) "A Strategy for Ethnic Conflict Accommodation"* հոդվածը:

54. Օրինակ, Էստոնիայում հարցված ռուսախոսների 64%-ը համաձայնել էր «Այս երկիրը Ռուսաստանի համեմատ ապագայում կենսամակարդակը բարձրացնելու ավելի լավ հնարավորություններ է

մասնությունները նաև քաղաքականությանը մասնակցելու պատմականորեն ավելի ուժեղ ավանդույթ ունեն, քան Հատոնիայինը: Սա խոսում է այն մասին, որ մենք չպետք է շփոթենք տնտեսապես ծաղկող և, հնարավոր է, քաղաքականապես կայուն, պասիվ, բայց օտարացված ռուս փոքրամասնություն ունեցող Հատոնիան ազատական ժողովրդավարության հետ: Հատոնիայում ազատական ժողովրդավարություն ունենալու հույսը, որը Եվրոպական միության միջազգային ճնշման և վտանգավոր Ռուսաստանի հանդեպ էստոնացիների ողջախոհության համադրման հետևանք է, և՛ էթնիկ էստոնացիների, և՛ ոչ էթնիկ էստոնացիների կողմից ժողովրդավարության ավելի բարձր որակ ունենալու պահանջի հետ միասին կարող է ներդրում ունենալ Հատոնիայում գնալով ավելի ներառական դարձող քաղաքական համակարգի ստեղծման գործում:<sup>55</sup>

---

ընձեռում» պնդման հետ: Լատվիայի ռուսախոսների միայն 44%-ն էր համաձայնել այդ պնդմանը: *Stéu Rose and Maley, "Nationalities in the Baltic States"*, հարց 209: Սակայն պասիվությունը հավանություն տալ չէ: Իրականում այն դեպքում, երբ Լիտվայում ռուսախոսների միայն 17%-ն էր դեմ «Դուք կարո՞ղ եք ասել, որ կառավարությունն արդար կերպով է վերաբերվում իր երկրում ապրող ռուսներին» պնդմանը, Լատվիայում համաձայն չէր 54%-ը և Հատոնիայի ռուսախոսների՝ 61%-ը: Նույն տեղում, հարց 159:

55. 1995թ. Հատոնիայի քաղաքական համակարգը դեռևս վանողական և ներառական ճնշումների տակ էր: Բացառողական կողմից ճնշումների տակ 1992-95թթ. խորհրդարանի վերջին նիստերից մեկի ժամանակ 1995թ. հունվարի 19-ին քաղաքացիության նոր օրենք ընդունվեց: *East European Constitutional Review* –ի («Արևելաեվրոպական սահմանադրական ուղի») Սահմանադրական հսկողություն (*Constitution Watch*) բաժնում նշվել էր, որ «նոր օրենքը երկարաձգեց բնակչության պահանջի դիմումների ժամկետը երեքից՝ վեց տարի և բոլոր դիմողների համար, ի հավելումն արդեն իսկ գոյություն ունեցող լեզվի պարտադիր քննությանը, նոր քաղաքացիական քննություն (էստոներեն լեզվով) ներմուծեց: Նոր քննությունը, որը պետք է ստուգի Սահմանադրության, ինչպես նաև «Քաղաքացիության օրենքի» իմացությունը, քննադատվել է քաղաքացի չհանդիսացողների համայնքի առաջնորդների կողմից՝ որպես դաժան և անարդար»: Սակայն ներառողական կողմից սահմանադրական հսկողությունը նաև նշել էր, որ 1995թ. մարտի 5-ի ընտրություններում ռուսախոսների կուսակցական կոալիցիան, որը «Մեր տունը Հատոնիայում է» խորհրդանշական անվանումն ուներ, 5 տեղ զբաղեցրեց 101 հոգանոց խորհրդարանում: Շնորհիվ խորհրդարանում կուսակցական մեծ մասնատման՝ «Մեր տունը Հատոնիայում է» կոալիցիան կարողացավ որոշ դեր խաղալ միջկուսակցական բանակցություններում, ինչն օգնեց քաղաքացիության հարցում վանողական քաղաքականությանն ընդդիմացող ազդեցիկ գործիչ, նախկին վարչապետ Էդգար Սավիսարին (*Edgar Savisaar*) մտնել իշխող կոալիցիայի կազմի մեջ: Այսպիսով, Սավիսարը դարձավ ՆԳ նախարար՝ մի պաշտոն, որը նրան կարող էր թույլ տալ կարևոր դեր խաղալ այն բանում, թե ինչպես են պետական պաշտոնյաները վերաբերվում ոչ բալթյան փոքրամասնություններին: *Stéu East European Constitutional Review* 4, no. 3 (1995), 11-13:

## Հետկոմունիստական Եվրոպա. Եզրափակիչ համեմատական խոհեր

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ շարունակվող անհանգիստ իրավիճակները հետկոմունիստական Եվրոպայում՝ հատկապես՝ նախկին Խորհրդային Միությունում և Հարավսլավիայում, շատ ընթերցողներ, անկասկած, կմտածեն, որ մենք պետք է եզրափակենք այս գիրքը հակամարտությունների և ոչ թե ժողովրդավարության մասին խոհերով: Սակայն մեր հասկացութենական մոտեցումը վերաբերում է իշխանության, պետության և քաղաքացիության շուրջ ծավալվող հակամարտություններին և այն բանին, թե արդյոք այս մրցակցությունների արդյունքում ժողովրդավարական մոտեցումները կդառնան «միակ լավագույն տարբերակը», թե ոչ: Այս տեսանկյունից հետկոմունիստական Եվրոպայի բոլոր երկրները կարելի է և պետք է գոնե սեղմ ձևով համեմատել: Անկասկած, քսանյոթ հետկոմունիստական երկրներից մի քանիսի (օր.՝ Թուրքմենստանը, Ուզբեկստանը և Հարավսլավիայի՝ սերբերի տիրապետության տակ գտնվող «անցյալի մնացուկը») իրատեսական գնահատումը պետք է հանգեցնի այն եզրակացության, որ սրանք ներկայումս (1995թ.) ոչ ժողովրդավարական են, և որ գոյություն ունեն կշիռ ունեցող փոքրաթիվ գործող անձինք, ովքեր փորձում են ժողովրդավարությունը, ինչպես մենք այն սահմանեցինք, օրակարգ մտցնել:<sup>1</sup> Սակայն հետկոմունիստական Եվրոպայի որոշ այլ երկրներում (օր.՝ Չեխիայի

1. Սակայն թեև ճիշտ է, որ «դմակային» Հարավսլավիան (Սերբիան, Մոնտենեգրոն և Կոսովոյի նախկին գավառը) իր ներկա կազմով ոչ ժողովրդավարական է, կարևոր է հասկանալ, որ «դմակային» Հարավսլավիայում ժողովրդավարությանն ուղղված ավելի շատ ձևումներ են գործադրվում, քան արևմտյան քաղաքականություն մշակողները և հասարակական կարծիքը սովորաբար ընդունում են: Թիբոր Վարադին՝ «դմակային» Հարավսլավիայում Միլան Պանիչի կառավարության արդարադատության նախարարը, ասում է, որ երբ վարչապետ Պանիչը մարտահրավեր նետեց Միլոշևիչին 1992թ. դեկտեմբերի նախագահական ընտրություններում, Արևմուտքն ուղարկեց ընտրությունների երեսունից էլ քիչ դիտորդների, և մեծ մասը ժամանեց ընտրություններից ընդամենը մի քանի օր առաջ: Ի տարբերություն Չիլիում 1988թ. պլեբիսցիտի ժամանակվա, որն ավարտվեց Պինոչետի պարտությամբ, Արևմուտքն ուղարկել էր հազարավոր դիտորդների, որոնցից շատերը եկել էին ընտրություններից ամիսներ առաջ: Ինչո՞ւմ էր այս տարբերությունը: Մեկնաբանություններն Արևմուտքում հիմնականում ենթադրում են, որ Սերբիան միանշանակ կողմ էր սերբական նվաճողականությանը, և որ «նախաձեռն ազգայնականությունն» այնքան ուժեղ էր, որ Մլոբոդան Միլոշևիչն անպարտելի էր: Սակայն անգամ Կոսովոյի մուսուլմանների ձեռնպահության (պոտենցիալ ընտրագանգվածի մոտ 10%-ը) ընտրությունների օրը Մլոբոդան Միլոշևիչի կողմից տեխնիկական կեղծիքների՝ հնարավոր է ձայների 5-10%-ի չափով, և ընտրությունների ժամանակ դիտորդների ու Արևմուտքի կողմից ֆինանսական ու մասնագիտական աջակցության բացակայության պարագայում Պանիչն էլի շահեց ձայների 43%-ը: Մեր ասածն այն է, որ 1992թ. դեկտեմբերին Միլոշևիչն անհաղթելի չէր: Որոշ վերլուծաբաններ, երբ բախվում են Չիլի-Սերբիա համեմատությանը, թոթվում են իրենց ուսերն ու ասում. «Հետո՞ ինչ, Միլոշևիչը երբեք չէր հարգի ընտրությունների արդյունքը»: Սա նույնպես բաց է թողնում հիմնականը:



Հանրապետությունը, Հունգարիան և հավանաբար նաև՝ Լիտվան) ժողովրդավարության փորձն արդեն գրեթե դառնում է միակ լավագույն տարբերակը: Այսպիսով, ժողովրդավարության քննարկումն այս եզրակացության մեջ, իսկապես, տեղին է, սակայն պետք է մշակենք անհրաժեշտ կատեգորիաներ, վկայույններ և փաստեր, որոնք մեզ թույլ կտան համեմատություններ կատարելու հետկոմունիստական Եվրոպայի երկրների միջև:

Ի հավելումն անհրաժեշտ կատեգորիաներին, վկայակոչումներին ու փաստերին, ընդգծենք երեք միտք: Առաջին. կքննարկենք այն, ինչը տեսնում ենք որպես «լեգիտիմության բուրգը շրջելու» վտանգ ակտիվիստների ու վերլուծաբանների կողմից, ովքեր կարծում են, որ շուկան կլեգիտիմացնի ժողովրդավարությունը: Մենք կհիմնավորենք, որ ժողովրդավարացման հաջողության պատմությունը ցույց է տալիս, որ սովորաբար տեղի է ունենում հակառակը: Ժողովրդավարությունը լեգիտիմացնում է շուկան (հատկապես՝ կապիտալիզմը): Երկրորդ. շատ ակտիվիստներ ու վերլուծաբաններ պնդում են նաև, որ ոչ միայն գոյություն ունի միաժամանակայնության լավ հայտնի խնդիրը (որը մենք ընդունում ենք), այլև տնտեսական ու քաղաքական արդյունքները պետք է ձեռք բերվեն միաժամանակ, այլապես վատ տնտեսական արդյունքներն արագ կխափանեն ժողովրդավարությանը ցույց տրվող աջակցությունը (ինչը չենք ընդունում): Մենք կբերենք էմպիրիկ տվյալներ և տեսական բացատրություն՝ հիմնավորելու ժողովրդավարությանը ցույց տրվող աջակցությանը վերաբերող մեր զգուշավոր լավատեսական վարկածը՝ կապված Արևելակենտրոնական Եվրոպայի հետ, և նախկին Խորհրդային Միության ոչ բալթյան երկրներում ժողովրդավարության վերաբերյալ մեր շատ ավելի նվազ լավատեսական վարկածը: Երրորդ. ժողովրդականություն վայելող մամուլի մեծ մասը Լեհաստանում, Հունգարիայում և Լիտվայում ժողովրդավարությանն այդպիսի առաջատար անցումների ժամանակ նախկին կոմունիստական քաղաքական առաջնորդների ու կուսակցությունների՝ իշխանության վերադառնալը համարեց որպես «վերադարձ կոմունիզմին» և ժողովրդավարության խոշոր հետընթաց: Մենք կհիմնավորենք, թե ինչու է նման վերլուծությունը թերի և՛ հանկարծեանկան, և՛ քաղաքական առումով:

## ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅԱՆ ՇՐՋՎԱԾ ԲՈՒՐԳԻ ՎՏԱՆԳԻ ՄԱՍԻՆ

Հարավային Եվրոպայի վերաբերյալ 2-րդ մասի եզրակացության մեջ մենք հիմնավորեցինք, որ քաղաքական, սոցիալ-տնտեսական և ապա՝ տնտեսական բարեփոխումների իսպանական հաջորդականությունը, հավանաբար, օպտիմալ էր այդ երկրում ժողովրդավարության կայացման համար: Մենք, իհարկե, անվերապահորեն չենք պնդում ավանդական ժառանգորդության սկզբունքորեն սխալ լինելը, որովհետև պատմականու-

Իշխանությունը միշտ հարաբերական է: Եթե Միլոշեվիչն իրականում պարտվեր, իսկ հետո չեղարկեր ընտրությունները, նա երկրի ներսում և միջազգայնորեն կթուլանար ժողովրդավարական հակառակորդների համեմատ, և ագրեսիվ ազգայնականությանը նրա միանշանակ աջակցության առասպելը հոգս կցնդեր:

րեն միանգամայն տարբեր քաղաքական ավանդույթներ իրականում հասել են հաջողության:

Հետկոմունիստական Եվրոպայի շատ վերլուծաբաններ, հատկապես՝ ռազմավարության ջատագովները, բացահայտորեն մերժել են իսպանական տիպի հաջորդականությունը՝ որպես ոչ կիրառելի հաջորդականություն, *միաժամանակյա* տնտեսական ու քաղաքական փոփոխությունների՝ իրենց զգացած անհրաժեշտության պատճառով: Իսկապես, չնայած միաժամանակայնության այս հրամայականի հաճախակի գովերգմանը, ներքին ու արտաքին ակտիվիստներն ու խորհրդականները հաճախ *առաջնայնությունը տալիս են* տնտեսական փոփոխությանը: Հետկոմունիստական քաղաքականության մեջ հաջորդականության հարցի վերաբերյալ լուրջ հետազոտությունները նոր են սկսվում, սակայն տեսական (իսկ այժմ՝ նաև պատմական) հիմքի վրա կարծում ենք, որ հետկոմունիստական օրինակներում ավելի շատ տեղ պետք է հատկացվի քաղաքական բարեփոխումների, հատկապես՝ պետության վերակազմավորման անտեսման հետևանքների դիտարկմանը: Ինչո՞ւ:

Քանի որ տեսականորեն, ինչպես մենք հիմնավորեցինք, ժամանակակից ժողովրդավարությունների համար հարցը ոչ թե *շուկայի*, այլ *տնտեսական հասարակության* ստեղծումն է: Ավելին, տրամաբանությունը հուշում է, որ ներդաշնակ կարգավորող միջավայր և օրենքի գերակայություն է անհրաժեշտ պլանային տնտեսությունները տնտեսական հասարակությունների փոխակերպելու համար: Եթե դա այդպես է, ապա գլխավոր գերակայությունը պետք է լինի պետության ժողովրդավարական կարգավորող իշխանության ստեղծումը:<sup>2</sup> Այս առումով գրքում ներկայացված երկու էմպիրիկ ծայրահեղություններն Իսպանիան ու ԽՍՀՄ-ն են: Ուշադրությունն ընտրական հաջորդականության նկատմամբ ու սահմանադրական փոփոխությունները նպաստեցին գործուն իշխանության ստեղծմանն ու պետության վերակազմավորմանն Իսպանիայում: Անուշադրությունն ընտրական հաջորդականության (Գորբաչովի կողմից) ու սահմանադրական փոփոխությունների (Գորբաչովի ու Ելցինի կողմից) հարցին նպաստեցին իշխանության քայքայմանն ու պետության կազմալուծմանը ԽՍՀՄ-ում և Ռուսաստանում:

Տարածաշրջանում մասնավորեցման և կառուցվածքային տնտեսական փոփոխությունների *պոստ հոք* [կատարվածից հետո] ուսումնասիրությունները (ի տարբերություն *էքս անտե* [ակնկալվող, ենթադրվող] դոկտրինի գովերգման) փաստացի նոր-նոր են սկսում ի հայտ գալ: Սակայն տարածաշրջանի լավագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս պետական իշխանության մի պատկեր՝ արդեն փաստված Լատինական Ամերիկայում, որ գործուն մասնավորեցումը (հաճախ սխալ կերպով հավասարեցվում է «պետության դերի նվազեցմանը») լավագույնս արվում է համեմատաբար ուժեղ պետությունների կողմից, որոնք կարող են իրականացնել ներդաշնակ ռազմավարություն: Մասնավորեցման և պետության վերակազմավորման մասին հարուստ հետազոտությունների նյութը ցույց է տալիս, որ արդյունավետ մասնավորեցման հետևանքով պետության ազ-

2. Հավելենք, որ վիճելի պնդում է հանրային ողջ ունեցվածքի կամ դրա մեծ մասի սեփականացման անհրաժեշտ լինելը գործող շուկայական տնտեսություն ստեղծելու համար: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ավստրիան և Իտալիան անմիջապես միտքը են գալիս որպես երկրներ, որոնք պահել են ընդարձակ հանրային հատված, սակայն եղել են շատ թե քիչ գործուն ժողովրդավարական շուկայական տնտեսություններ:

դեցության ծավալը կրճատվում է, սակայն ավելի մեծ պետական հզորություններ են ի հայտ գալիս:<sup>3</sup> Հետկոմունիստական, հետպլանային տնտեսության համատեքստում պետությունը, որի հզորություններն արագորեն քայքայվում են, պարզապես չի կարող կառավարել գործուն մասնավորեցման գործընթացը:<sup>4</sup>

3. Այս երևույթի չորս կարևոր ուսումնասիրություններից են Ալբերտ Ֆիշլոու, «Լատինամերիկյան պետությունը» (Albert Fishlow, "The Latin American State", Journal of Economic Perspectives 4, no. 3 (1990): 61-74), Հեկտոր Շամիս, «Պետության վերափոխումը. մասնավորեցման դերը Զիլիում և Բրիտանիայում» (Hector Schamis, "Re-forming the State: The Role of Privatization in Chile and Britain" (Ph.D. diss., Columbia University, Department of Political Science, 1994)), Պիտր Էվանս, «Պետությունը որպես խնդիր և լուծում. գիշատչություն, ներհատուկ ինքնավարություն և կառուցվածքային փոփոխություն» (Peter Evans, "The State as a Problem and Solution: Predation, Embedded Autonomy, and Structural Change"), Ստեփան Հազարդի և Ռոբերտ Կաուֆմանի խմբ.՝ «Տնտեսական հարմարեցման քաղաքականությունը. միջազգային սահմանափակումներ, բաշխողական հակամարտություններ և պետությունը» (Stephan Haggard and Robert R. Kaufman, eds., *The Politics of Economic Adjustment: International Constraints, Distributive Conflicts, and the State* (Princeton: Princeton University Press, 1992), 139-81), և Ջոան Նելսոնի խմբ.՝ «Խճճված կապեր. Ժողովրդավարացումն ու շուկայի բարեփոխումները Լատինական Ամերիկայում և Արևելյան Եվրոպայում» (Joan M. Nelson, ed., *Intricate Links: Democratization and Market Reforms in Latin America and Eastern Europe* (New Brunswick: Transaction Publishers, 1994)), հատկապես՝ Յացել Կոխանովիչ, «Թույլ պետությունների և թերի պետական ապարատների բարեփոխումներ» (Jacek Kochanowicz, "Reforming Weak States and Deficient Bureaucracies", 195-226): 1990-ական թթ. առաջին կեսին Չինաստանը թույլատրեց որոշ ոլորտներում աշխույժ մասնավոր հատվածի առաջացումը՝ միաժամանակ պահելով ուժեղ պլանային տնտեսություն այլ հատվածներում և ընդհանուր, գրեթե ամբողջատիրական պրակտիկա՝ քաղաքականության, լրատվամիջոցների և անգամ ընտանիքի վերարտադրման մասին որոշումներում:

4. Մենք կարիք ունենք ավելի շատ ուսումնասիրությունների՝ մասնավորեցման և տնտեսության վերակազմավորման առումով պետությունների կարողությունների տարբերությունների մասին: Նման տարբերությունները կարող են լինել պետության զգալի վերակազմավորումից, որը մեծացնում է պետության կարողությունն ու արդյունավետությունը մասնավորեցման առումով, մինչև պետություններ, որոնք իրականացրել են պետության համեատ, սակայն անբավարար վերակազմավորում, որը հանգեցրել է նոր հետբարեփոխումային խնդիրների և ցածր մակարդակի հավասարակշռության ծուղակն ընկնելու վտանգին մինչև պետության գրեթե կազմալուծման և, ըստ էության, կառուցվածքային փոփոխությունների գրո կարողության ծայրահեղ դեպքը: Արևելակենտրոնական Եվրոպան և նախկին խորհրդային Միությունը այս բոլոր հնարավոր տարբերակների օրինակներ են: Կենտրոնական Եվրոպայում առավել համաժողովրդական աջակցություն վայելած մասնավորեցումը եղել է Չեխիայի Հանրապետությունում, որը նաև այն պատճառով էր, որ չնայած որոշակի կոռուպցիայի, այնտեղ եղել է ամենամեծ թափանցիկությունը, և ազատ ընտրված կառավարություն ամենաերկարն է աշխատել այնպիսի սոցիալ-տնտեսական բարեփոխումների հարցում, ինչպիսիք են՝ աշխատանքային վերապատրաստումն ու պետության վերակազմավորումը: Սրան հակառակ՝ Ռումինիայի պես երկրում, որտեղ պետությունը չէր վերակազմավորվել, տեղի է ունեցել որոշ ոչ թափանցիկ մասնավորեցում, սակայն կա ցածր մակարդակի հավասարակշռության թակարդ: Ուկրաինայում և Ռուսաստանի որոշ մասերում նոր պետություն չի ստեղծվել, բայց հին պետությունը դրսևորել է կազմալուծման ուժեղ միտումներ և ցածր հզորություններ 1992-93թթ. ժամանակահատվածում: Տե՛ս, օրինակ, Չեխիայի Հանրապետության և Ռումինիայի՝ Էմպիրիկորեն հիմնավորված համեմատական վերլուծությունը Օլիվեր Բլանչարդի, Սյամոն Կոմանդերի և Ֆաբրիցիո Կորիչելլիի կողմից, «Գործազրկություն և վերակազմավորում» (Olivier Blanchard, Simon Commander, and Fabrizio Coricelli, "Unemployment and Restructuring", World Bank, 1993, mimeo): Տե՛ս նաև Չեխոսլովակիայի մասին գուլյար Ռոման Ֆրիդմանի, Անջել Ռապաշիսկու և Ջոն Էռլի խմբ.՝ «Մասնավորեցման գործընթացը Կենտրոնական Եվրոպայում», "The Privatization Process in Central Europe" (Բուդապեշտ, Կենտրոնական Եվրոպական համալսարանի հրատարակչություն, 1993թ.), էջ 40-94 և Ռոման Ֆրիդմանի, Անջել Ռապաշիսկու և Ջոն Էռլի խմբ.՝ «Մասնավորեցման գործընթացը Ռուսաստանում, Ուկրաինայում և Մերձբալթյան պետություններում»:

Նկատի ունեցեք, գլխավորն ուժեղ պետությունն է և ոչ թե՛ անպայման ժողովրդավարությունը: Ուժեղ ոչ ժողովրդավարական պետությունը Չիլիում մասնավորեցում կատարեց բավական գործուն կերպով: Սակայն հետամբողջատիրական մի միջավայրում, ինչպիսին Ռուսաստանն է, որտեղ հին կոմունիստական կուսակցական պետությունը պայթել է կամ այլևս չի գործում, մասնավորեցումը կարող է կանոնավոր ընթանալ միայն պետության վերակազմավորումից հետո: Երբ ամբողջատիրական կամ հետամբողջատիրական պետությունն իր էքստենսիվ պլանային տնտեսությամբ անկում է ապրում, այլևս չի գործում, պայթում է կամ կազմալուծվում, ապա պետք է վերականգնել պետական կառույցները: Սակայն պետության վերակազմավորման բազմաթիվ ոչ ժողովրդավարական եղանակներն ավելի քիչ են հնարավոր որպես այլընտրանքներ, քան սովորաբար կարծում ենք:

Ոմանք այն դում են (հատկապես՝ Ռուսաստանում), որ անհրաժեշտ է Պինոչետ: Սակայն Ռուսաստանում և նախկին Խորհրդային Միության շատ այլ երկրներում այլևս գոյություն չունեն ներդաշնակ պետություններ և այն տեսակի միասնական զինվորական կազմակերպություններ, որոնք աջակցում էին Պինոչետին:<sup>5</sup> Ավտորիտար կամ թերևս կիսաֆաշիստական կուսակցական պետությունը Ռուսաստանում նույնպես երբեմն ներկայացվում է որպես հզոր այլընտրանքային կառավարման մոդել: Սակայն գաղափարախոսական լեգիտիմություն ունեցող միակ կուսակցությունը և ոչ ժողովրդավարական իշխանության ստանձնման ու իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսները կպահանջեն համապետական մենաշնորհային կիսաֆաշիստական շարժման առաջացում ու կազմավորում, իսկ սա նույնպես անհավանական է թվում: Մեր դատողությամբ՝ ավտորիտար ու կիսաֆաշիստական Ռուսաստանն անգամ կարող է ծառայել որպես օրինակ այն բանի, ինչը Քեն Չովիտը նկարագրում է որպես թույլ պետություն և թույլ հասարակություն ունեցող մի հասարակարգ:<sup>6</sup> Ռուսաստանում ֆաշիստական կառավարության պարագայում որպես հնարավոր արդյունք՝ շատ ավելի հավանական է, որ ի հայտ գան

ներում» (Roman Frydman, Andrzej Rapaczynski, and John Earle, eds., *The Privatization Process in Central Europe* (Budapest: Central European University Press, 1993), 40-94) և Roman Frydman, Andrzej Rapaczynski, and John Earle, eds., *The Privatization Process in Russia, Ukraine and the Baltic States* (Budapest: Central European University Press, 1993): Ուկրաինայի և Ռուսաստանի օրինակների ուսումնասիրությունն ընդգծում է կարգավորված, գործուն և «անմաֆիա» մասնավորեցման դժվարությունները, եթե երկիրը գտնվում է անկարգ վիճակում: *Տե՛ս նաև* Ռոման Ֆրիդման և Անջել Ռապաշինսկի, «Մասնավորեցումն Արևելյան Եվրոպայում. արդյո՞ք պետությունն ուժասպառ է լինում» (Roman Frydman and Andrzej Rapaczynski, *Privatization in Eastern Europe: Is the State Withering Away?* (Budapest: Central European University Press, 1994)):

5. Ալֆրեդ Ստեփանի Ռուսաստան հաճախակի այցելությունների ժամանակ 1991-95թթ. Պինոչետի կամ Չինաստանի նման այլընտրանքի թեման՝ որպես Ռուսաստանի համար հնարավոր տարբերակի, հաճախ բարձրացվում էր ռուսական վերլուծաբանների ու քաղաքականություն մշակողների կողմից: Սակայն անգամ նախքան ռուսական զինվորականության անկարգ պահվածքը Չեչնիայում, ռուսաստանցի պատասխանողների միայն 3%-ը 1994թ. ապրիլի հանրային հարցման ժամանակ «լրիվ համաձայն» են եղել, և միայն 7%-ն է «ընդհանրապես համաձայն» եղել այն ձևակերպման հետ, որ «բանակը պետք է կառավարի» որպես այլընտրանքային քաղաքական բանաձև Ռուսաստանում: *Տե՛ս* Ռիչարդ Ռոուզ և Քրիստիան Հերաֆեր, «Նոր ռուսական բարոմետր III. արդյունքները» (Richard Rose and Christian Haerpfel, *New Russian Barometer III: The Results*, *Studies in Public Policy* 228 (1994), question 31b):

6. Քեն Չովիտ, «Նոր համաշխարհային քառու. լենինիզմի վերացումը» (Ken Jowitt, *New World Disorder: The Leninist Extinction* (Berkeley: University of California Press, 1992), esp. 249-331):

«չեչիններ» ու «աֆղանստաններ», քան այն հանգիստ վիճակը, որն առկա էր ֆրանկո-յական Իսպանիայում քաղաքացիական պատերազմից հետո: Ումանք էլ կողմնակից են չինական տիպի լուծման, սակայն չինական մոդելը, որը թերևս կարող էր հանդիսանալ նախապերեստրոյկայական այլընտրանք, նույնպես այլևս հնարավոր այլընտրանք չէ Ռուսաստանի համար: Ի տարբերություն Ռուսաստանի՝ Չինաստանի ոչ ժողովրդավարական վարչակարգն ու պետությունը երբեք չքանդվեցին: Իսկապես, Չինաստանի վարչակարգը երբեք չնախաձեռնեց ժողովրդավարացման գործընթաց կամ անգամ չքննարկեց դրա նախաձեռնումը, այլ իրականացրեց միայն ազատականացման խիստ ընտրովի ու մասնակի գործընթաց:

Մեր եզրակացությունն այն է, որ Ռուսաստանի համար թույլ ժողովրդավարական պետություն ունենալու գինը խիստ բարձր է, սակայն մինևնոյն ժամանակ բազմաթիվ ոչ ժողովրդավարական լուծումներ կամ հասանելի չեն կամ, հավանաբար, իրենց հետևից կբերեն ճնշման միջոցներ կիրառող, սակայն դեռևս թույլ պետություն: Մթիվ են Լյուկսեմբուրգը և ուշագրավ ձևակերպմամբ՝ նման պետությունը կարող է իշխանություն ունենալ *վրա* [ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի], սակայն չունենալ իշխանություն *ուղղված* [ինչ-որ բան անելուն]: Օրինակ, կիսաֆաշիստական ռուսական պետությունը կարող է ճնշում կիրառող իշխանություն ունենալ ավելի շատ մարդկանց վրա, սակայն դարձյալ չունենա բարեկեցիկ ու խաղաղ Ռուսաստան:<sup>7</sup> Այսպիսով, մի համատեքստում, որտեղ կուսակցական պետությունն արդեն պայթել է, և պլանային տնտեսությունն այլևս կիրառելի չէ, պետությունը պետք է վերակազմավորվի: Մեր փաստարկն այն է, որ ժողովրդավարական լեզիտիմությունը ոչ միայն անտեղի չէ, այլև դրա որոշ աստիճանը կարող է լինել պետության այս վերակազմավորմանն աջակցելու եղանակներից մեկը:

Սա տանում է լեզիտիմության ու մասնավորեցման մասին մեր գլխավոր փաստարկին: Պետության կողմից վերահսկվող տնտեսություններից հեռանալու իրենց շտապողականության մեջ ազատ շուկայի որոշ խանդավառ կողմնակիցներ սատարել են մասնավորեցմանը՝ որպես 1989թ-ից հետո սկսված գործընթացի առավել կարևոր բաղադրիչ: Մասնավորեցումը, *ինչպես էլ որ այն իրականացվի*, հաճախ դիտվում է որպես շուկայական ժողովրդավարությունների համար գլխավոր կառուցվածքային նախապայմաններ ստեղծող գործոն և տնտեսական հիմք՝ նոր ժողովրդավարությունների համար: Մենք դրան համաձայն չենք: Ժողովրդավարությունների լուրջ հետազոտությունները ցույց են տալիս, որ ժողովրդավարական լեզիտիմության աստիճանակարգի բարձրակետում գտնվում են ընդհանուր ժողովրդավարական գործընթացները (օր.՝ ընտրությունները, մեծ թվով կուսակցությունները և ազատ խոսքը): Լեզիտիմության աստիճանակարգում ավելի ցածր մակարդակում գտնվում են պաշտոնավարողները (օր.՝ խորհրդարանականները): Ժողովրդավարությանն առնչվող քաղաքական ինստիտուտները սովորաբար ավելի լեզիտիմ են, քան այնպիսի ինստիտուտները, ինչպիսիք են շուկայական տնտեսությունները, որոնք միշտ ավելի լեզիտիմ են, քան կապիտալիստական տնտեսությունները, եթե նրանք այդպես են անվանվել հետազոտություններում: Ավելին, տնտեսական ինստիտուտները (օր.՝ շուկայական տնտեսությունները) միշտ ավելի լեզիտիմ են, քան

7. Իշխանության այսպիսի կարևոր մոտեցման մասին *տե՛ս* Մթիվեն Լեյքս, «Իշխանություն. արմատական հայացք» (Steven Lukes, *Power: A Radical View* (London: Macmillan, 1974)):

տնտեսական գործող անձինք (օր.՝ կապիտալիստները):<sup>8</sup> Հետևաբար, տեսական հիմնավորմամբ՝ 1989թ. հետո առաջացած նոր ժողովրդավարությունները լեգիտիմացնելու փորձը նոր կապիտալիստների արդյունավետության միջոցով և դրանով մեծացնելով նոր կապիտալիստների թիվը *ինչ միջոցներով էլ որ լինի*, նշանակում է շրջել լեգիտիմության բուրգը:

Լեգիտիմության նման շրջված բուրգը հատկապես խնդրահարույց է այնպիսի երկրներում, ինչպիսին է Ռուսաստանը, որտեղ մասնավորեցումն, ըստ էության, եղել է չկարգավորված, մեծապես ոչ հավասար և հաճախ՝ անլեգալ:<sup>9</sup> Նման համատեքստերում քաղաքական իշխանության նախկին կրողները, ինչպես օրինակ՝ «կարմիր բուրժուազիան» պետական ձեռնարկություններում կամ պետական ֆինանսական կամ առևտրական հաստատություններում, եղել են այնպիսի դիրքում, որը նրանց հնարավորություն է ընձեռել իրենց նախկին քաղաքական իշխանությունը փոխակերպելու տնտեսական իշխանության նոր տիպերի՝ «հախուռն» մասնավորեցումների կամ գողությունների բազմաթիվ ձևերի միջոցով: Համեմատական ուսումնասիրությունները մշտապես ցույց են տալիս, որ հասարակությունների մեծ մասում որոշ լեգիտիմություն տրվում է վաստակած կամ ժառանգած մասնավոր սեփականությանն ու ձեռնարկատիրությանը: Սակայն նախկին «կարմիր բուրժուազիայի» ծնունդ նոր ռուս կապիտալիստները չեն կարող օգտվել լեգիտիմության այս սկզբունքներից: Իսկապես, նրանց հարստության աղբյուրները հաճախ դատապարտվում են որպես հանրային ունեցվածքի ոչ լեգիտիմ յուրացում և կարող են անվստահություն առաջացնել թե՛ շուկայական տնտեսությունների (որոնք կհամարվեն մաֆիայի կողմից վերահսկվող տնտեսություններ), թե՛ ժողովրդավարությունների հանդեպ, որոնք հանդուրժել են կամ անգամ ստեղծել են այդ մաֆիոզ տնտեսությունները: Քաղաքական, տեսական ու հետազոտական շատ ավելի մեծ ուշադրություն պետք է հատկացվի լեգիտիմության այս շրջված բուրգի վրա նոր ժողովրդավարական հասարակարգեր ու տնտեսական հասարակություններ կառուցելու փորձի ժողովրդավարական հետևանքների գնահատմանը: Արևմտյան ժողովրդավարությունների վերաբերյալ էմպիրիկ փաստերի ու պատմական ուսումնասիրությունների առանցքը միշտ կազմել է այն, որ ժողովրդավարության քաղաքական համակարգերն են լեգիտիմացնում շուկայական տնտեսությունները և ոչ թե՛ հակառակը: Դա այդպես է, որովհետև քանի դեռ ժողովրդավարական մեծամասնությունը, այդ իրավունքն ունենալով հանդերձ, կասկածի տակ չի առնում արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, այդ ունեցվածքը կարելի է պաշտպանված համարվել:<sup>10</sup>

8. Մանրամասն վերլուծություն և առատ փաստեր այս երևույթի մասին տե՛ս Խուան Լինց, «Ժողովրդավարության լեգիտիմությունը և սոցիալ-տնտեսական համակարգը» (Juan J. Linz, "Legitimacy of Democracy and the Socioeconomic System"), Մատեյ Դոգանի խմբ.՝ «Համեմատելով բազմակարծական ժողովրդավարությունները. լարվածություն ժողովրդավարության մեջ» (Mattei Dogan, ed., *Comparing Pluralist Democracies: Strains on Democracy* (Boulder Colo: Westview Press, 1988), 65-113):

9. Տե՛ս, օրինակ, Ստեֆրն Հանդելման, «Ռուսական մաֆիան» (Stephen Handelman, "The Russian Mafia", *Foreign Affairs* (March-April 1994): 83-96):

10. Տե՛ս Լինց, «Ժողովրդավարության լեգիտիմությունը» (Linz, "Legitimacy of Democracy"):

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԻԱԺԱՄԱՆԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ՝ Ի ՉԱԿԱՐԴՈՒԹՅՈՒՆ  
 ՀԵՏԱԶԳՎԱԾ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Այն ենթադրությունը, որ տնտեսական բարեփոխումները՝ շուկան և մասնավորեցումը, կարող են լեգիտիմացնել նոր ժողովրդավարությունները, հիմնված է նաև այն կասկածելի ենթադրության վրա, որ կարելի է տնտեսական հաջողության հասնել և ավելի մեծ հարստությունն ձեռք բերել ժողովրդավարական ինստիտուտների ստեղծման ու լեգիտիմացման հետ միաժամանակ: Մենք կարծում ենք, որ փլուզված պլանային տնտեսությունների համար ժողովրդավարական հասարակարգերը կարող են և պետք է ստեղծվեն ու լեգիտիմացվեն մի շարք վերանայումների միջոցով *նախքան* շուկայական տնտեսության հնարավոր օգուտների լրիվ փաստացի նյութականացումը: Շատ վերլուծաբաններ ու քաղաքական խորհրդատուներ մերժում են սկզբում պետությունը վերակազմավորելու փաստարկը, որովհետև ենթադրում են, որ նյութական բարելավումների մարդկանց պահանջի պատճառով պետք է ոչ միայն հետամուտ լինել տնտեսական ու քաղաքական ձեռքբերումներին, այլև դրանք պետք է *տեղի ունենան* միաժամանակ: Ումանք անգամ պնդում են, որ չնայած միաժամանակյա տնտեսական ու քաղաքական բարեփոխումներն անհրաժեշտ են, նման միաժամանակայնությունն անհնար է:<sup>11</sup> Տնտեսությունների ու ժողովրդավարացման միջև հարաբերության մասին այս երկու տեսանկյունները կարող ենք անվանել *ուժեղ կապվածության* վարկած և *թույլ կապվածության* վարկած:<sup>12</sup>

*Թույլ կապվածություն* ասելով՝ նկատի չունենք, որ չկա հարաբերություն տնտեսական ու քաղաքական ըմբռնումների միջև, այլ միայն այն, որ այդ հարաբերությունն անպայման «մեկին մեկ» չէ: Գոնե միջին ժամանակահատվածի համար մարդիկ կարող են տալ քաղաքական ու տնտեսական միտումների ինքնուրույն ու անգամ հակառակ գնահատականներ: Մենք նաև կարծում ենք, որ եթե քաղաքականության մասին գնահատականները դրական են, ապա դրանք կարող են զգալիորեն մեղմացնել տնտեսական ցավազին վե-

11. Ջոն Էլսթերի (Jon Elster) լայնորեն տարածված հոդվածի վերնագիրն արտացոլում է այդ տեսանկյունը՝ «Միաժամանակյա տնտեսական և քաղաքական բարեփոխումների անհրաժեշտությունն ու անհնարինությունը» (*"The Necessity and Impossibility of Simultaneous Economic and Political Reform"*), Դուգլաս Գրինբերգի, Ստենլի Կացի, Մելանի Բեթ Օլիվիերոյի և Ստիվեն Ուիթլիի խմբ.՝ «Մահմանադրականությունը և ժողովրդավարությունը. անցումները ժամանակակից աշխարհում» (Douglas Greenberg, Stanley N. Katz, Melanie Beth Oliviero, and Steven C. Wheatley, eds., *Constitutionalism and Democracy: Transitions in the Contemporary World* (New York: Oxford University Press, 1993), 267-74): Մեր դատողությամբ՝ միաժամանակայնության անհնարինության պատճառները պարտադիր չէ, որ լինեն Էլսթերի կողմից առաջ քաշվածները, այլ կարող է լինել այն փաստը, որ բարեհաջող տնտեսական փոփոխությունների համար անհրաժեշտ ժամանակը բնորոշ կերպով ավելի երկար է, քան ազատ ընտրություններ անցկացնելու և անգամ՝ ժողովրդավարական սահմանադրությունն նախագծելու համար պահանջվող ժամանակը: Էլսթերի վարկածի՝ հարցումների վրա հիմնված կարևոր քննադատության և պատասխանողների բազմաթիվ ժամանակային հորիզոնների էմպիրիկ իրականության և նրանց «համբերության քաղտնտեսության» օգտին փաստարկներ բերվում են հունգարացի քաղաքագետ Լասլո Բրուստի գրվածքում՝ «Հանուն ինչի՞» պետք է արևելակարգացիները կողմ լինեն կապիտալիզմին», *"Why on Earth Would East Europeans Support Capitalism?"* (կրկը ներկայացվել է Քաղաքագիտության միջազգային ասոցիացիայի XV համաշխարհային համագումարին, Բեռլին, օգոստոս 21-24, 1994թ.):

12. Այս հարաբերության նախնական քննարկում ներկայացրել ենք «Լեգիտիմության և ճնշման քաղաքատնտեսությունը» (*"The Political Economy of Legitimacy and of Coercion"*) վերնագրի տակ, Գլուխ 5-ում:

րակագնավորումը:<sup>13</sup> Ի՞նչ փաստեր ունենք, որոնք վերաբերում են տնտեսության վիճակի ու ժողովրդավարացման միջև հարաբերությանը հետկոմունիստական Եվրոպայում առաջին հինգ տարիների ընթացքում:

Իսկապես, եթե պարզապես նայենք համեմատաբար ճշգրիտ տնտեսական տվյալներին, ապա 1992թ. հետկոմունիստական Եվրոպայում քսանյոթ երկրներից ոչ մեկը (բացի Լեհաստանից) չի ունեցել դրական աճ: Բոլոր հետկոմունիստական երկրները 1993թ. իրոք դեռևս գտնվում էին 1989թ. իրենց արդյունաբերական թողարկման մակարդակներից զգալիորեն ցածր մակարդակի վրա (Աղյուսակ 21.1):

Եթե նայենք տնտեսական բարեկեցության սուբյեկտիվ ընկալմանն Արևելակենտրոնական Եվրոպայում՝ Վարշավյան դաշինքի վեց երկրներում, որոնք մենք քննարկել ենք այս գրքում, կոմունիստական համակարգի միջին դրական գնահատականը (+100-ից մինչև -100 սանդղակով) 1993թ. նոյեմբեր և 1994թ. մարտ ամիսների միջև ընկած ժամանակահատվածում հարցման ենթարկվածների շրջանում եղել է 60.2: Սակայն հետկոմունիստական տնտեսական համակարգի միջին դրական գնահատականը եղել է միայն 37.3, այսինքն՝ ընկել է մոտ 23 կետով: Ուժեղ կապվածության վարկածը կարող է կանխատեսել, որ քաղաքական համակարգի նկատմամբ վերաբերմունքը կտրուկ կերպով կընկնի, թեկուզ և ոչ լրիվ 23 կետով: Ի՞նչ են վկայում փաստերը: Նույն հետազոտության մեջ կոմունիստական քաղաքական համակարգի միջին դրական գնահատականը եղել է 45.7: Քաղաքական գնահատականի մեկ կետով նվազումը տնտեսական գնահատման նվազման յուրաքանչյուր կետի դիմաց (կատարյալ կապվածության կորելացիա) կտա քաղաքական համակարգի միայն 22.6 կետ դրական գնահատում: Սակայն հետկոմունիստական համակարգի դրական գնահատականը չընկավ, ինչպես կակնկալեր ուժեղ կապվածության վարկածը, այլ *բարձրացավ* մինչև 61.5 կամ 38.9 կետով ավելի, քան կկանխատեսեր լրիվ կապվածության վարկածը (Աղյուսակ 21.2):

Ինչպե՞ս կարող ենք բացատրել այսպիսի անհամապատասխանությունը: Նախ և առաջ մարդիկ ունակ են կատարելու առանձին ու ճիշտ դատողություններ կենսամակարդակի նվազագույն զամբյուղի մասին (որը կարող է վատթարանալ) և քաղաքական ապրանքների զամբյուղի մասին (որը կարող է բարելավվել): Ի դեպ, նույն հետազոտության մեջ Արևելյակենտրոնական Եվրոպայի բոլոր երկրներում հարցման ենթարկված քաղաքացիներն ասել են, որ այն կարևոր ոլորտներում, որոնք ուղղակիորեն կրում են ժողովրդավարական քաղաքական համակարգի ազդեցությունը, իրենց կենսափորձն ու հնարավորությունները հսկայական չափով բարելավվել են, թեև նույն հետազոտության մեջ նրանք հաստատել են, որ իրենց անձնական բարեկեցությունն ընկել է (Աղյուսակ 21.3):

13. Քվեարկողները կարող էին բացասական տնտեսական կատարողականի պատճառով պաշտոնավարողներին չվերընտրել պաշտոններում, սակայն նրանց հաջորդողների ընդհանուր տնտեսական ռազմավարությունը կարող է և շարունակել մոտավորապես նույնը մնալ: Լեհաստանը 1993-95թթ. և Հունգարիան՝ 1994-95թթ. (հատկապես՝ բարեփոխումների արագացումից հետո 1995թ.) խելքի եկան: Կառավարող կուլիցիաների ժողովրդավարական փոփոխությունը կարող էր, ի դեպ, ավելի շատ ժամանակ տալ տնտեսական փոփոխությունների ռազմավարություններին՝ միաժամանակ որոշ կարևոր տեղ տալով այն հատվածների քաղաքական հոյզերն ու վախերը փարատելուն, որոնք ամենաշատն են վնասվելու նոր ժողովրդավարական վարչակարգի կողմից նախաձեռնվող սոցիալ-տնտեսական փոփոխություններից:



Աղյուսակ 21.1. ՄԱ, արդյունաբերական թողարկում և սղանի զագաթնակետ, հետևումունիստական երկրներ, 1989-1995թթ.

Երկիր	Չափորոշիչ	ՄԱ % փոփոխություն							Արդյունաբերական թողարկում 1993թ. (1989=100)	Սղանի մակարդակ (զագաթնակետը 1989-93թթ. ընթացքում)
		1989	1990	1991	1992	1993	1994թ. (հաշվարկված)	1995թ. (նախատեսված)		
Ալբանիա	ՄԱ	9.8	-10.0	-27.1	-9.7	11.0	7.0	5.0	52	237 [92]
	Արդ. արտադրանք	5.0	-7.6	-36.9	-44.0	-10.0	չկա	չկա		
Նայաստան	ՄԱ	14.2	-7.4	-11.0	-52.0	-15.0	0	չկա	չկա	10900 [93]
Ադրբեջան	ՄԱ	չկա	-11.7	-0.7	-22.6	-13.0	-15.0	-10.0	չկա	1174 [92]
Բելառուս	ՄԱ	8.0	-3.0	-1.2	-9.6	-11.6	-26.0	-10	76	2775 [93]
	Արդ. արտադրանք	չկա	չկա	-6.8	-10.2	-6.0	չկա	չկա		
Բուլղարիա	ՄԱ	0.5	-9.1	-11.7	-5.6	-4.2	2	4	չկա	339 [91]
	Արդ. արտադրանք	-1.4	-16.5	-27.3	-22.0	-10.0	4	չկա		
Խորվաթիա	ՄԱ	-1.6	-8.6	-14.4	-9	-3.2	1	6	57	1150 [92]
	Արդ. արտադրանք	չկա	-11.3	-28.5	-15.0	-6.0	-3.0	6		
Ջեխիայի Նանրապետություն	ՄԱ	չկա	-0.4	-14.2	-7.1	-0.3	3	6	57	52 [91]
	Արդ. արտադրանք	չկա	-3.5	-22.3	-10.6	-6.3	0	չկա		
Էստոնիա	ՄԱ	-1.1	-8.1	-11	-14.2	-3.2	5.0	6.0	54	965 [92]
Մակեդոնիա	ՄԱ	չկա	-9.9	-12.1	-14.0	-14.1	-7.2	0	չկա	1691 [92]
	Արդ. արտադրանք	չկա	-10.6	-17.2	-16.1	-17.2	չկա	չկա		
Վրաստան	Ազգային վերամշակված արդյունք	-4.8	-12.4	-20.8	-43.4	-40.0	-35.0	չկա	չկա	չկա
	Արդ. արտադրանք	-6.9	-29.9	-24.4	-43.4	-21.0	չկա	չկա		
Ղուզարիա	ՄԱ	0.7	-3.5	-11.9	-4.3	-2.3	3.0	3.0	69	
	Նամախառն արդ. թողարկում	-1.0	-9.6	-18.2	-9.8	-4.0	9.0	6.0		
Ղազախստան	ՄԱ	-0.4	-0.4	-13.0	-14.0	-12.0	-25.0	չկա	68	1925 [93]
Ղրղզստան	ՄԱ	3.8	3.2	-5.0	-25.0	-16.0	-10	1.5	53	1354 [93]
	Արդ. արտադրանք	չկա	չկա	0.0	-27.0	-25.0	չկա	չկա		
Լատվիա	ՄԱ	6.8	2.9	-8.3	-33.8	-11.7	3	3	38	958 [91]
	Նամախառն վերամշակված արդյունք	չկա	չկա	0.4	-48.7	-32.6	չկա	չկա		

Աղյուսակ 21.1. (Շարունակություն)

Երկիր	Չափորոշիչ	ՄՆԱ % փոփոխություն							Արդյունաբերական թողարկում 1993թ. (1989=100)	Սղանի մակարդակ (զագագթնակետը 1989-93թթ. ընթացքում)
		1989	1990	1991	1992	1993	1994թ. (հաշվարկված)	1995թ. (նախատեսված)		
	Արդ. արտադրանք	չկա	չկա	չկա	-50.9	-42.7	չկա	չկա		
Մոլդովա	ՄՆԱ	8.8	-1.5	-11.9	-25.0	-14.0	-20.0	0		837 [93]
Լեհաստան	ՄՆԱ	0.2	-11.6	-7.6	1.5	3.8	4.5	5.0	69	640 [89]
	Արդ. արտադրանք	-1.4	-26.1	-11.9	3.9	5.6	չկա	չկա		
Ռումինիա	ՄՆԱ	-5.8	-5.6	-12.9	-13.6	1.0	2.0	3.0	47	296 [93]
	Արդ. թողարկում	-5.3	-23.7	-22.8	-21.9	1.3	2.0	չկա		
Ռուսաստան	ՄՆԱ	չկա	չկա	-13.0	-19.0	-12.0	-15.0	-7.0	60	2138 [92]
	Արդ. արտադրանք	չկա	-0.1	-8.0	-18.8	-16.0	-21.0	-12.0		
Սլովակիա	ՄՆԱ	1.4	-0.4	-14.5	-7.0	-4.1	3.5	3.0	55	58 [91]
	Արդ. արտադրանք	-0.7	-3.6	-17.8	-14.0	-10.6	5.5	չկա		
Սլովենիա	ՄՆԱ	-1.8	-4.7	-8.1	-5.4	1.0	5.0	6	46	247 [91]
	Արդ. արտադրանք	-0.1	-10.3	-11.3	-12.0	-2.6	6.6	5.1		
Տաջիկստան	NMP	-2.9	-1.6	-12.5	-33.7	-28	չկա	չկա	56	7344 [93]
	Արդ. արտադրանք	1.9	1.9	-7.4	-35.7	չկա	չկա	չկա		
Թուրքմենստան	ՄՆԱ	չկա	2.0	-4.7	-5.3	-7.6	-10.0	-5.0	90	1875 [93]
Ուկրաինա	ՄՆԱ	4.1	-3.4	-12	-17.0	-14.0	-23.0	-5.0	79	10155 [93]
	Արդ. արտադրանք	2.8	-0.1	-4.8	-6.5	-8.0	-30.0	չկա		
Ուզբեկստան	ՄՆԱ	3.7	1.6	-0.5	-11.1	-2.4	-2.6	2.0	94	927 [93]
	Արդ. թողարկում	3.6	1.8	1.8	-12.3	-8.3	չկա	չկա		3.72x10 <sup>13</sup>
Նարավելլա	Արդ. թողարկում	չկա	չկա	չկա	չկա	չկա	չկա	չկա	35	[93]

Աղբյուրը՝ 1989-95թթ. տարեկան տվյալները տրամադրվել են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից, Լոնդոն, 1995թ., հունվար: 1994թ. տվյալները գնահատումներ են, 1995թ-ինը՝ կանխատեսումներ: Տվյալների հավաքագրման համար կիրառվել է համընդհանուր եղանակ: 1993թ. արդյունաբերական թողարկման տվյալները 1989թ. մեկնարկային 100-ի նկատմամբ վերցված են Յացեկ Ռոստովսկի, «Մակրո-տնտեսական անկայունությունը հետկոմունիստական երկրներում», "Macro-economic Instability in Post-Communist Countries (Օքսֆորդ, «Կլարենդոն» հրատարակչություն, Օքսֆորդի համալսարանի հրատարակչություն, առաջիկայում): Բոսնիայի համար տվյալներ չկային: Սղանի մակարդակի մասին տվյալները նույնպես վերցված են Ռոստովսկուց: Նարավելլայում սղանի ցուցանիշը (3.72 անգամ 10-ի 13 աստիճան) կազմում է մինչև 37 տրիլիոնից ավելի գերազանի մակարդակ՝ աշխարհում բոլոր ժամանակների համար ամենաբարձրերից մեկը:

**Աղյուսակ 21.2. Դրական վերաբերմունքներն արտահայտող տոկոսները՝ կոմունիստական և հետկոմունիստական տնտեսական ու քաղաքական համակարգերի համեմատություն. պատասխաններ Արևելակենտրոնական Եվրոպայի 6 երկրներից**

Վարց	Երկիր	Դրական պատասխանների տոկոսը, 1989թ.	Դրական պատասխանների տոկոսը, 1993-94թթ.
«Ըստ հետևյալ գնահատման սանդղակի՝ ինչպե՞ս է տնտեսությունը գործում՝ վերին սահմանը՝ +100-ը, լավագույնն է, ներքևի սահմանը՝ -100-ը, վատագույնն է»	Բուլղարիա	66	15
	Չեխիա	42	66
	Նոնգարիա	75	27
	Լեհաստան	52	50
	Ռումինիա	52	35
	Սլովակիա	74	31
«Ըստ հետևյալ գնահատման սանդղակի՝ ինչպե՞ս է կառավարությունը գործում՝ վերին սահմանը՝ +100-ը, լավագույնն է, ներքևի սահմանը՝ -100-ը, վատագույնն է»	Բուլղարիա	51	59
	Չեխիա	23	78
	Նոնգարիա	58	51
	Լեհաստան	38	69
	Ռումինիա	52	60
	Սլովակիա	50	52
	Միջին	46	62

*Աղբյուրը՝* Ռիչարդ Ռոուզ և Քրիստիան Ներպֆեր, «Նոր ժողովրդավարությունների բարոմետր III. դաս քաղել տեղի ունեցող իրադարձություններից», "New Democracies Barometer III: Learning from What Is Happening", *Studies in Public Policy* 230 (1994) հարցեր 22-23, 32-33): Տոկոսներն արտահայտող թվերը կտրագված են: Նախային հարցումներն անց են կացվել այս երկրներում 1992թ. նոյեմբեր և 1993թ. մարտ ամիսների միջև ընկած ժամանակահատվածում:

Մենք չենք կարծում, որ նման անհամապատասխանությունը միշտ կմնա, սակայն դա ցույց է տալիս, որ այն արմատական փոխակերպման մեջ, որը տեղի է ունենում Արևելակենտրոնական Եվրոպայում, տնտեսության վատթարացումը պարտադիր չէ, որ արագորեն արտահայտվի քաղաքական համակարգի նկատմամբ աջակցության նվազմամբ:<sup>14</sup> Աղյուսակ 21.2-ը ցույց է տալիս, որ քաղաքական համակարգի ընկալվող լեգիտիմությունն Արևելակենտրոնական Եվրոպայի ժողովրդավարական ինստիտուտներին տվել է նոր տնտեսական համակարգի ընկալված անարդյունավետությունից առանձնացվելու զգալի աստիճան:<sup>15</sup> Իսկապես, մարդկանց մեծ մասն Արևելակենտրոնական Եվրոպայում

14. Ի դեպ, իրենց տվյալների հետընթացային մոդելում Վիլյամ Միշլերն ու Ռիչարդ Ռոուզը (William Mishler and Richard Rose) եզրակացնում են, որ «մեր հետընթացային մոդելը ցույց է տալիս, որ պահանջվում է ներկա կամ ապագա տնտեսական գնահատականների չորս կետով անկում՝ առաջ բերելու [քաղաքական] վարչակարգի գնահատականների մեկ կետով անկում»: Այս արդյունքի նրանց հիմնական բացատրությունն այն է, որ արևելաեվրոպացիներն ունեն բավական երկար ժամանակային հորիզոն: Տե՛ս նրանց՝ «Վախի և հույսի հետագծերը. Արևելյան Եվրոպայում ժողովրդավարության աջակցության դինամիկան» ("Trajectories of Fear and Hope: The Dynamics of Support for Democracy in Eastern Europe", *Studies in Public Policy* 214 (1993): 27):

15. Որոշ ընթերցողներ կարող են հիշել, որ մեզանից մեկը ժողովրդավարությունների անկման մասին, հատկապես՝ Եվրոպայում միջպատերազմյան տարիներին, մի ուսումնասիրության մեջ ավելի ուղղակի հարաբերություն է դրել արդյունավետության և լեգիտիմության միջև առանց այդ հարաբերությունը ապացուցելու տվյալների: Ի դեպ, ավելի ուշ հավաքված որոշ տվյալներ ցույց տվեցին, որ այդ հարաբերությունը ճիշտ է միայն քիչ երկրների համար, մասնավորապես՝ Գերմանիայի և Ավստ-

**Աղյուսակ 21.3. Ապրանքների տնտեսական զամբյուղի և ապրանքների քաղաքական զամբյուղի ոչ համարժեք ընկալումները կոմունիստական համակարգում և ներկա համակարգում Արևելակենտրոնական Եվրոպայի 6 երկրներում**


Կարգ	Պատասխանողների տոկոսը՝ «հիմա ավելի լավ է» պատասխան տվածներն ընդդեմ «հիմա ավելի վատ է» պատասխան տվածների					
	Բուլղարիա	Ջեխիա	Սլովակիա	Նունգարիա	Լեհաստան	Ռումինիա
Տնտեսական զամբյուղ՝ «Երբ համեմատում եք Ձեր տնային տնտեսության ընդհանուր տնտեսական վիճակը հինգ տարի առաջվա վիճակի հետ, կարո՞ղ եք ասել, որ անցյալում այն ավելի լավ էր, նույնն էր, ավելի վատ էր»	16/58	23/49	18/62	6/76	17/62	21/65
Քաղաքական զամբյուղ՝ «Ասացե՛ք, խնդրեմ, արդյոք ներկա քաղաքական համակարգը, կոմունիստականի հետ համեմատած, ավելի լավն է, նույնն է, թե՛ վատն է հետևյալ ոլորտներում»						
«Մարդիկ կարող են միանալ իրենց ցանկացած որևէ կազմակերպության»	95/5	90/1	88/3	81/2	79/2	94/1
«Յուրաքանչյուրն ազատ է արտահայտելու իր մտածածը»	90/11	84/3	82/4	73/8	83/4	94/2
«Մարդիկ կարող են ճանապարհորդել և ապրել այնտեղ, որտեղ ցանկանում են»	95/5	96/1	87/2	75/4	75/7	90/2
«Մարդիկ կարող են ապրել առանց վախենալու անօրինական ձերբակալությունից»	88/11	73/4	62/5	59/4	71/5	81/1
«Յուրաքանչյուր անձ կարող է որոշել՝ հետաքրքրվե՞լ քաղաքականությամբ, թե՛ ոչ»	97/3	84/0	81/1	n/a	69/5	92/1
«Յուրաքանչյուրն ազատ է որոշելու՝ որևէ կրոնի դավանե՞լ, թե՛ ոչ»	98/2	94/0	96/1	83/1	70/6	95/1

*Աղբյուրը՝* Նույնը, ինչ նկ. 21.1, հարցեր 26, 35, 36, 37, 39, 40, 42: Որտեղ տոկոսներն արտահայտող թվերի գումարը 100-ի չի հասնում, պատասխանողները «հավասար» պատասխան են տվել:

1993թ. ունեցել է բավական երկարաժամկետ հեռանկար և արտահայտել է լավատեսություն, որ մինչև 1998թ. *և՛* նոր ժողովրդավարության կատարողականը, *և՛* նոր տնտեսական համակարգի կատարողականն զգալիորեն կբարելավվեն (Նկար 21.1):

Այսպիսով, Արևելակենտրոնական Եվրոպայի փաստերը մեծապես այն փաստարկի

րիայի համար, սակայն ոչ՝ Նորվեգիայի և Նիդեռլանդների համար: Ինչո՞ւ այս տարբերությունն ակնհայտ է այսօր: Մենք ուշադրությունը կհրավիրեինք միջպատերազմյան տարիներին հասարակարգի համար այլընտրանքային «լեգիտիմ» մոդելների ներկայության վրա՝ խորհրդային-կոմունիստական ուսուցիչստական, նոր ֆաշիստական իտալական և ավելի ուշ՝ գերմանական մոդելը, կորպորատիստավտորիտար-կաթոլիկ «ներդաշնակ» ժողովրդավարությունը, նախապատերազմյան բյուրոկրատական-միապետական ավտորիտարությունը և անգամ (Բսպանիայում)՝ անարխիստական ուսուցիչան: Դրանք բոլորն էլ թվում են անարդյունավետ ժողովրդավարությանը գրավիչ այլընտրանքային պատասխաններ: Մինչև այժմ նման գրավիչ այլընտրանքներ «դժվարին ժողովրդավարությունների» համար դեռևս չկան: *Տե՛ս* Խուան Լինզ, «Ժողովրդավարական վարչակարգերի անկումը. ճգնաժամ, անկում և վերահավասարակշռում» (Juan J. Linz, *The Breakdown of Democratic Regimes: Crisis, Breakdown, and Reequilibration* (Baltimore: John Hopkins University Press, 1978)):




Նկ. 27.1. Այն մարդկանց տոկոսը, ովքեր դրական գնահատական են տվել տնտեսական համակարգին ու քաղաքական վարչակարգին կոմունիստական համակարգում, ներկա համակարգում և հինգ տարի հետո. արևելակենտրոնական եվրոպական 6 երկրներ

Աղբյուրը՝ Ռիչարդ Ռուզ և Քրիստիան Ներպֆեր, «Նոր Ռուսաստանի բարոմետր III», "New Russia Barometer III", Studies in Public Policy 228 [1994թ.], հարցեր 24 և 34:

օգտին է խոսում, որ հետաձգված փոխհատուցումն ու ապագայի նկատմամբ վստահությունը հնարավոր են նույնիսկ այն ժամանակ, երբ առկա է տնտեսական բարելավումների գիտակցված հետաձգում: Արագ քաղաքական ու տնտեսական արդյունքների ձեռքբերման միաժամանակայնությունը, իսկապես, սովորաբար չափազանց դժվար է լինում, սակայն, բարեբախտաբար, ինչպես ցույց է տալիս Նկար 21.1-ը, Արևելակենտրոնական Եվրոպայի բնակիչներն այդպիսի միաժամանակայնությունը չեն ընկալում որպես անհրաժեշտություն: Մինչև այժմ այս գլխում ներկայացված աղյուսակների ու նկարների ընդհանուր նշանակությունը մեզ թվում է լրացուցիչ ապացույց այն ռազմավարության ունեցած պոտենցիալ վտանգի, որ արտահայտված է լեզբիտիմության շրջված բուրգով:

Նախքան նախկին Խորհրդային Միության անդրադառնալը պետք է համառոտ նշենք երկու այլ գործոն, որոնք օգնում են բացատրելու նոր քաղաքական վարչակարգի (քաղաքական վարչակարգի, ոչ անպայման քաղաքական պաշտոնավարողների) նկատմամբ քաղաքական աջակցության զարմանալիորեն բարձր աստիճանը՝ չնայած տնտեսական դժվարություններին: Արևելակենտրոնական Եվրոպայի նախկին Վարչապետական դաշինքի



Նկ. 21.2. Կոմունիստական վարչակարգում, ներկա վարչակարգում և հինգ տարի հետո տնտեսական համակարգն ու քաղաքական համակարգը դրական գնահատած մարդկանց տոկոսը. Ռուսաստան, Ուկրաինա և Բելառուս

Աղբյուրը՝ Ռուսաստանի մասին տե՛ս Ռիչարդ Ռոուզ և Քրիստիան Ներպֆեր, «Նոր Ռուսաստանի բարոմետր III», "New Russia Barometer III", *Studies in Public Policy* 228 (1994թ.), հարցեր 15-17 և 27-29: Ուկրաինայի մասին տե՛ս Ռոուզ և Ներպֆեր, «Նոր ժողովրդավարությունների բարոմետր III», "New Democracies Barometer III", հարցեր 22-24, 32-34: Բելառուսի մասին տվյալները մոտավորապես նման են Ուկրաինայի տվյալներին: Կոմունիզմի օրոք տնտեսական համակարգի դրական գնահատականներն են ներկայումս, անցյալում և հինգ տարի հետո, 78, 11 և 47, համապատասխանաբար, և այս երեք ժամանակահատվածներում քաղաքական համակարգի դրական գնահատականներն են համապատասխանաբար 64, 28 և 56: Աղբյուրը նույն է, ինչ Ուկրաինայի համար նշվածը:

երկրներից և ոչ մեկում (ի տարբերություն նախկին ԽՍՀՄ-ի) տեղի չունեցան լայնածավալ արյունահեղություններ պետութենականության խնդիրների շուրջ: Նաև ի տարբերություն Ռուսաստանի, չկա կայսրության անկման կամ ԽՍՀՄ-ի կազմալուծման հակասական ժառանգություն:

Ի՞նչ տարբերություն կա նախկին Խորհրդային Միության ոչ բալթյան երկրների և Արևելակենտրոնական Եվրոպայի Վարշավյան դաշինքի երկրների միջև՝ ըստ կոմունիստական ու հետկոմունիստական տնտեսություններից ու քաղաքական համակարգերից ունեցած բավարարվածության մասին տրվող պատասխանների: Դժբախտաբար, մենք տվյալներ ունենք միայն Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի մասին: Մակայն տարբերությունները զարմանալի են հատկապես այն զգալիորեն ավելի ցածր գնահատականների առումով, որոնք տրվել են հետկոմունիստական քաղաքական համակարգին (Նկար 21.2):

Արտաքին դիտորդների մի խումբ նույնպես Արևելակենտրոնական Եվրոպայի երկր-

ներում նկատում է նրանց քաղաքական զարգացման հետ կապված մի շարք չափազանց տարաբնույթ պատկեր՝ ի հակադրություն նախկին Խորհրդային Միության: «Ֆրիդըմ հաուսի» (Freedom House) ամենամյա հրատարակության մեջ մշակվել է աշխարհում քաղաքական իրավունքների ու քաղաքացիական ազատությունների գնահատման մի ընդհանուր եղանակ գրեթե բոլոր երկրների համար:<sup>16</sup> «Ֆրիդըմ հաուսը» կիրառում է 7 կետից բաղկացած սանդղակ՝ գնահատելու երկրներում քաղաքական իրավունքները, և մեկ այլ՝ 7 կետից բաղկացած սանդղակ՝ գնահատելու քաղաքացիական ազատությունները: 1 միավորը ցույց է տալիս ամենաբարձր իրավունքներն ու ազատությունները, իսկ 7-ը՝ ամենացածրը: Ժողովրդավարության մասին բերած մեր փաստարկի առումով եթե որևէ երկիր քաղաքական իրավունքների տեսանկյունից գնահատվում է 2-ից ոչ ցածր, իսկ քաղաքացիական ազատությունների տեսանկյունից՝ 3-ից ոչ ցածր, մենք այն գնահատում ենք որպես ժողովրդավարական շեմից բարձր այդ տարվա համար: Եթե որևէ երկիր ստացել է 4 կամ ցածր քաղաքական իրավունքների և/կամ 5 կամ ցածր քաղաքացիական ազատությունների տեսանկյունից, ապա մենք այն համարում ենք ժողովրդավարական շեմից ցածր այդ տարվա համար: Երկու կատեգորիաների միջև գտնվող երկրները համարվում են որպես ժողովրդավարական շեմի *սահմանին* գտնվող: Կարճ ասած՝ որքան ցածր է թիվը, այնքան բարձ է ժողովրդավարության մակարդակը: Ինչպե՞ս է գնահատվում հետկոմունիստական Եվրոպան այս սանդղակով: Տե՛ս Աղյուսակ 21.4:

Աղյուսակ 21.4-ը հետկոմունիստական Եվրոպայի համեմատական վերլուծությունը մի քիչ ավելի օգտակար դարձնելու համար եկեք այդ քսանվեց երկրները բաժանենք երեք մեծ խմբերի՝ Արևելակենտրոնական Եվրոպա, նախկին Խորհրդային Միություն և նախկին Հարավավայր: Նախկին Խորհրդային Միության մեջ լրացուցիչ կառանձնացնենք ենթախմբեր՝ այն երկրները, որոնք նախկին Խորհրդային Միության մաս են կազմել 1920-ական թվականների սկզբից և այժմ Ռուսաստանի հետ են որպես ԱՊՀ՝ Անկախ պետությունների համագործակցության մաս, և այն երկրները, որոնք Խորհրդային Միության մաս են դարձել միայն 1940թ. հետո (Էստոնիա, Լատվիա և Լիտվա) և հրաժարվել են միանալ ԱՊՀ-ին: Դասակարգման արդյունքները ներկայացվում են Աղյուսակ 21.5-ում:

Այս գլխում մեր ներկայացրած բազմաթիվ աղյուսակների ու նկարների նշանակությունները, ինչպես նաև նախորդ գլուխներում արված որակական գնահատումները հարկ կլինի մշակել ու ավելի ամբողջականորեն վերլուծել համեմատական վերլուծաբանների նոր սերնդի կողմից, որոնք հետազոտություններ են կատարում Եվրոպայի հետկոմունիստական քաղաքականության բնագավառում: Սակայն մենք գոնե կարող ենք առանձնացնել որոշ պատկերներ:

Արևելակենտրոնական Եվրոպայի նախկին Վարշավյան դաշինքի վեց երկրներում պատասխանողները հետկոմունիստական քաղաքական համակարգին տվել են 62 միջին դրական գնահատականը (16 կետով բարձր այն դրական գնահատականից, որը նրանք տվել էին կոմունիստական քաղաքական համակարգին): Ի սուր հակադրություն դրա՝ նախկին Խորհրդային Միության երեք երկրներում (Ռուսաստան, Ուկրաինա և Բելա-

16. Մենք քննարկեցինք մեթոդաբանությունը, աղբյուրներն ու դիտարկումները, որոնք օգտագործվել են «Ֆրիդըմ հաուսի» այս ամենամյա հրատարակության մեջ Գլուխ 3-ում, հատկապես՝ 4-րդ և 5-րդ նշումներում:

**Աղյուսակ 21.4. 26 հետկոմունիստական եվրոպական երկրների գնահատականները «Ֆրիդոմ հաուզի» քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների սանդղակով 1993թ, համար**

Երկիր	Քաղաքական իրավունքներ	Քաղաքացիական ազատություններ	Ժողովրդավարական շեմի գնահատում՝ «բարձր», «ցածր» կամ «սահմանին»
Նայաստան	3	4	սահմանին
Ադրբեջան	6	6	ցածր
Բելառուս	5	4	ցածր
Բոսնիա-Ներցեգովինա	6	6	ցածր
Բուլղարիա	2	2	բարձր
Խորվաթիա	4	4	ցածր
Չեխիայի Նանրապետություն	1	2	բարձր
Էստոնիա	3	2	սահմանին
Վրաստան	5	5	ցածր
Ղուզարիա	1	2	բարձր
Ղազախստան	6	4	ցածր
Ղրղզստան	5	3	ցածր
Լատվիա	3	3	սահմանին
Լիտվա	1	3	բարձր
Մակեդոնիա	3	3	սահմանին
Մոլդովա	5	5	ցածր
Լեհաստան	2	2	բարձր
Ռումինիա	4	4	ցածր
Ռուսաստան	3	4	սահմանին
Սլովակիա	3	4	սահմանին
Սլովենիա	1	2	բարձր
Տաջիկստան	7	7	ցածր
Յուրբանաստան	7	7	ցածր
Ուկրաինա	4	4	սահմանին
Ուզբեկստան	7	7	ցածր
Նարավելլա (Սերբիա և Մոնտենեգրո)	6	6	ցածր
Ամփոփում			6 / 26 բարձր 7 / 26 սահմանին 13 / 26 ցածր

*Աղբյուրը՝* Ռայմոնդ Գաստիլ, խմբ., «Ազատությունն աշխարհում. քաղաքական իրավունքներ և քաղաքացիական ազատություններ», "Freedom in the World. Political Rights and Civil Liberties", 1993-1994թթ, (Նյու Յորք, «Ֆրիդոմ հաուս», 1994թ.), էջ 677-678:

ռուս), հետկոմունիստական քաղաքական համակարգին տրվել է միայն 29 միջին դրական գնահատական (26 կետով *ցածր* նրանցից, ովքեր կոմունիստական համակարգին տվել են դրական գնահատական):<sup>17</sup>

Ուսումնասիրության մեկ այլ արդյունքն այն է, որ Խորհրդային Միության մաս կազմած տասներկու ԱՊՀ երկրներից *չ ևեկը* չի եղել ժողովրդավարական պրակտիկայի նվա-

17. Անգամ այստեղ պետք է նշենք թույլ կապվածության վարկածի մասնակի հաստատում ըստ այն բանի, որ ներկա հետկոմունիստական քաղաքական համակարգի դրական գնահատականը եղել է 18.7 կետով բարձր, քան ներկա հետկոմունիստական տնտեսական համակարգի գնահատականը:



**Աղյուսակ 21.5. Նետկոմունիստական Եվրոպայի ժողովրդավարական շեմի համեմատական գնահատում. Արևելակենտրոնական Եվրոպայի, նախկին Խորհրդային Միության և նախկին Նարավսլավիայի երկրներ (1993թ.)**

Դասակարգում	Երկիր	Քաղաքական իրավունքներ	Քաղաքացիական ազատություններ	ժողովրդավարական շեմի գնահատում («բարձր», «սահմանին» կամ «ցածր»)
Արևելակենտրոնական Եվրոպա	Ջեխիայի Նանրապետություն	1	2	բարձր
	Ղունգարիա	1	2	բարձր
	Լեհաստան	2	2	բարձր
	Բուլղարիա	2	2	բարձր
	Սլովակիա	3	4	սահմանին
	Ռումինիա	4	4	ցածր
Ամփոփում				4/6 բարձր 1/6 սահմանին 1/6 ցածր
Նախկին Խորհրդային Միություն (1940-ականներից, ԱՊՆ անդամ չեն)	Լիտվա	1	3	բարձր
	Էստոնիա	3	2	սահմանին
	Լատվիա	3	3	սահմանին
Ամփոփում				1/3 բարձր 2/3 սահմանին 0/3 ցածր
Նախկին Խորհրդային Միություն (1920-ականներից, այժմ ԱՊՆ անդամներ)	Ռուսաստան	3	4	սահմանին
	Նյայաստան	3	4	սահմանին
	Ուկրաինա	4	4	սահմանին
	Ղրղզստան	5	3	ցածր
	Բելառուս	5	4	ցածր
	Մոլդովա	5	5	ցածր
	Ղազախստան	6	4	ցածր
	Ադրբեջան	6	6	ցածր
	Վրաստան	6	6	ցածր
	Տաջիկստան	7	7	ցածր
Թուրքմենստան	7	7	ցածր	
Ուզբեկստան	7	7	ցածր	
Ամփոփում				0/12 բարձր 3/12 սահմանին 9/12 ցածր
Նախկին Նարավսլավիա	Սլովենիա	1	2	բարձր
	Սակեդոնիա	3	3	սահմանին
	Խորվաթիա	4	4	ցածր
	Բոսնիա-Ներցեգովինա	6	6	ցածր
	Նարավսլավիա (Սերբիա և Մոնտենեգրո)	6	6	ցածր
Ամփոփում				1/5 բարձր 1/5 սահմանին 3/5 ցածր

*Աղբյուրը՝* նույնը, ինչ Աղյուսակ 21.4: Նետկոմունիստական Եվրոպայի միակ երկիրը, որը չի ներառվել, Ալբանիան է, որն իր անցումը բավականին ուշ է սկսել: Այն նաև այնքան էլ չի համապատասխանում աղյուսակում օգտագործված երեք աշխարհագրական-պատմական կատեգորիաներին: Մեր դատողությամբ՝ Ալբանիան 1995թ. կեսի դրությամբ կստանա ժողովրդավարական շեմից «ցածր» գնահատական:

զագույն շեմում՝ ըստ «Ֆրիդրմ հաուզի» 1993թ. ամենամյա հարցման: Ի դեպ, տասներկու երկրներից երեքը (Թուրքմենստան, Ուզբեկստան և Տաջիկստան) ստացել են *ամենացածր* հնարավոր միավորները՝ 7՝ քաղաքական իրավունքների համար, և 7՝ քաղաքացիական ազատությունների համար:<sup>18</sup> Ի տարբերություն դրա՝ Արևելակենտրոնական Եվրոպայի վեց երկրներից չորսը գտնվում էին շեմից բարձր: Ռումինիան ստացել է ամենացածր միավորներն Արևելակենտրոնական Եվրոպայի նախկին Վարշավյան դաշինքի վեց երկրներից՝ 4՝ քաղաքական իրավունքների համար և 4՝ քաղաքացիական ազատությունների համար: Հետևաբար, թվում է, ճիշտ կլինի ասել, որ ժողովրդավարական պրակտիկայի թե՛ «առաստաղը», թե՛ «հատակը» 1993թ. զգալիորեն ավելի բարձր են եղել Արևելակենտրոնական Եվրոպայում, քան ԱՊՀ երկրներում:

Պետք է նշենք նաև, որ, ի տարբերություն Արևելակենտրոնական Եվրոպայի վեց երկրների, տնտեսական ու քաղաքական դատողությունների միջև ավելի ուժեղ կապվածություն կա ԱՊՀ երկրներում: Այսպիսով, հետաձգված փոխհատուցման շատ ավելի քիչ հակվածություն են ցուցաբերել նախկին Խորհրդային Միության ոչ բալթյան մասերը, քան Արևելակենտրոնական Եվրոպայի երկրները:

Ինչո՞վ են բացատրվում նման կտրուկ տարբերություններն Արևելակենտրոնական Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության ոչ բալթյան երկրների միջև: Եկեք նորից սկսենք հետաձգված փոխհատուցման հարցից: Կասկած չկա, որ տարբերությունների պատկերն առաջացել է մասամբ դրական տնտեսական գնահատումների չափազանց կտրուկ անկման պատճառով (Արևելակենտրոնական Եվրոպայում միջին դրական գնահատականն ընկել է 60-ից 37 միայն, մինչդեռ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի

18. Որպեսզի ընթերցողը պատկերացում կազմի այն մասին, թե իրական պրակտիկան որքան հեռու է ժողովրդավարությունից Թուրքմենստանում, Տաջիկստանում և Ուզբեկստանում, կարող ենք ասել, որ այն զգալիորեն ավելի քիչ բազմակարծական է ժողովրդավարական ընդդիմադիր ընտրական գործունեության առումով, քան «դմակային» Հարավսլավիայում (*տե՛ս* Հարավսլավիայում բազմակարծության աստիճանի մասին փաստերը, որոնք մենք բերել ենք այս գլխի նշում 1-ում): Ի տարբերություն «դմակային» Հարավսլավիայի, որտեղ ընդդիմության նախագահական թեկնածուն ստացավ ձայների 43%-ը 1992թ. դեկտեմբերին, բաց ժողովրդավարական մրցակցությունը Թուրքմենստանում, Տաջիկստանում և Ուզբեկստանում դե ֆակտո աննշան էր 1994թ.: Ըստ Անկախ պետությունների համագործակցության տասներկու անդամների "Economist"-ի կարևոր քաղաքական ամփոփման՝ Թուրքմենստանը բնութագրված է որպես «միակուսակցական պետություն»: «Խորհրդարանի բոլոր անդամները, որոնք ընտրվել են 1994թ. դեկտեմբերին, ընդդիմություն չունեին: 1994-ի փետրվարին 99.99%-ը քվեարկեց [նախագահ] Սապարմուրադ Նիյազովի պաշտոնավարման ժամկետը երկարացնելու օգտին մինչև 1999թ.: Միայն 212 թուրքմեններ պաշտոնապես դեմ քվեարկեցին»: "Economist"-ն ամփոփում է Ուզբեկստանում քաղաքականությունը հետևյալ կերպ. «Հիմնական ընդդիմադիր կուսակցություններն արգելված են, լրատվամիջոցները հսկողության տակ են: Իշխող կուսակցությունը գրավեց տեղերի ավելի քան 80%-ը 1994թ. դեկտեմբերի խորհրդարանական ընտրությունների ժամանակ, ընտրազանգվածի 99.96%-ը քվեարկեց մարտի 26-ին [1995թ.]՝ երկարացնելու [նախագահ] Իսլամ Բարիսովի պաշտոնավարման ժամկետը մինչև 2000թ.»: Տաջիկստանի մասին "Economist"-ը նշում է. «Էմոմալի Ռահմոնովը հաստատվեց նախագահ անցյալ նոյեմբերին [1994թ.] այնպիսի ընտրություններում, որոնց ժամանակ ընդդիմադիր կուսակցությունների մեծ մասն արգելափակվեց տակ էր: Ասում են՝ լայն տարածում էր գտել քվեաթերթիկների կեղծումը»: «Ավելի քիչ աղքատ, ավելի քիչ ժողովրդավարական» ("*Less Poor, Less Democratic*", Economist, April 22-28, 1995, 48): Պարզ է, որ ոչ մի լուրջ տեսաբան չի համարի, որ վերը նշված երեք երկրները ներգրավված են ժողովրդավարության անցման որևէ ձևում: Դրանք բոլորը պարզ օրինակներ են գուտ «ընտրականականության», որը մենք քննարկեցինք Գլուխ 1-ում:

հետխորհրդային միջինն ընկել է 71-ից 10-ի): Ժամանակի ընտրությունն ու ապագայի ընկալումը հավանաբար նույնպես կարևոր են: Ըստ Աղյուսակ 21.1-ի՝ Արևելակենտրոնական Եվրոպայում տնտեսական անկման առումով առավել վատ տարին եղել է 1991թ.: Ամենավատ տարին Ռուսաստանում, Ուկրաինայում և Բելառուսում եղել է 1994թ., այսինքն՝ հանրային հարցումից *հետո*: 1995թ. թերևս ինչ-որ չափով տնտեսապես ավելի լավ լինի, քան 1994թ., սակայն 1993թ. վերջին մարդիկ թունելի վերջում գուցե ոչ մի լույս չեն տեսել:

Ավելին, մենք գրեթե վստահ ենք, որ տնտեսության պատմաբաններն ի վերջո կապացուցեն այն փաստը, որ պետությանակաճության խնդրի ծանրությունը ԽՍՀՄ-ում և պետության հետագա ապակազմավորումն ու լայնորեն տարածված զինված հակամարտություններն ինքնուրույն դեր են խաղացել՝ օբյեկտիվորեն խորացնելով տնտեսական քառուրդը: Նման հակամարտությունների շարունակվելը 1995թ. որոշ ԱՊՀ երկրներում նույնպես անխուսափելիորեն նվազեցրել է այն սուբյեկտիվ վստահությունը, թե արդյոք հետաձգված փոխհատուցումն արժանի՞ է հավանության: Չէ՞ որ հետաձգված փոխհատուցման քաղաքականությունը ռացիոնալ է միայն այն դեպքում, երբ պոտենցիալ փոխհատուցման որոշ նշաններ կարող են երևալ: Թույլ և վիճարկվող պետությունների համատեքստում վստահությունն ապագայի նկատմամբ, որն Արևելակենտրոնական Եվրոպայում «հետաձգված փոխհատուցման քաղաքականության» ամրապնդման կարևոր բաղադրիչ է, հասկանալիորեն ավելի թույլ է նախկին Խորհրդային Միությունում և նախկին Հարավսլավիայի մեծ մասում: Իհարկե, Չեխոսլովակիան ուներ պետությանակաճության խնդիր, սակայն ճիշտ և բավականին լավ ծրագրված «թավշյա ապահարգանի» շնորհիվ ոչ մի զինված բռնություն չգործադրվեց կամ զգալի տնտեսական անկում տեղի չունեցավ ո՛չ Չեխիայի Հանրապետությունում, ո՛չ էլ Սլովակիայում:<sup>19</sup>

Պետությանակաճության խնդիրները և ոչ թե զուտ տնտեսական խնդիրներն են վճռականորեն ազդում ժողովրդավարության արդյունքների վրա: Մա պարզ է դառնում, երբ նկատի ենք ունենում, որ նախկին Խորհրդային Միության ու նախկին Հարավսլավիայի տարանջատումից առաջացած քսան անկախ երկրներից միայն երկուսն են՝ Լիտվան ու Սլովենիան, գտնվում ժողովրդավարության շեմի գնահատականից *բարձր* (տե՛ս Աղյուսակ 21.5): Այս երկու երկրներն էլ բացառություններ են, որոնք ապացուցում են ժողովրդավարացման համար պետությանակաճության խնդիրների կարևորությանը վերաբերող կանոնը: Ինչպես մենք շեշտեցինք վերջին գլխում, Լիտվայի տնտեսությունն այնքան աշխույժ է, որքան Էստոնիայինը, սակայն Լիտվան միակ բաղթյան երկիրն էր, որը ներառական քաղաքացիություն էր շնորհել բոլոր բնակիչներին, լինեին նրանք էթնիկ բաղթեր, թե ոչ: Այս մոտեցումը հնարավորություն է տվել Լիտվային լուծելու իր պոտենցիալ պետությանակաճության խնդիրն ավելի ժողովրդավարական ձևով, քան Լատվիան կամ Էստոնիան և, հետևաբար, Լիտվան իրավամբ ստացել է ավելի բարձր միավոր «քաղաքական իրավունքների» համար, քան Լատվիան կամ Էստոնիան:

Նախկին Հարավսլավիայի հինգ երկրներից Սլովենիան *միակ* երկիրն է, որը չի ունե-

19. Ի դեպ, ՀԱՄ-ի դրական աճը Չեխիայի Հանրապետությունում նախատեսված էր 3 և 6% 1994թ. և 1995թ. համար, և 3.5 և 3%՝ Սլովակիայի համար: Ի տարբերություն դրան՝ նույն տարիների համար Ռուսաստանինը 15 և 7% էր, իսկ Ուկրաինայինը՝ 23 և 5%: Տե՛ս Աղյուսակ 21.1:

**Աղյուսակ 21.6. Ռուսաստանում 1994թ. վերաբերմունքը 1991թ, ԽՍՀՄ-ի կազմալուծման նկատմամբ**

Կարգ	% ըստ տարիքային խմբի			
	18-29	30-59	60+	Ընդամենը
«1991թ. դեկտեմբերին Ռուսաստանի, Բելառուսի և Ուկրաինայի ղեկավարները որոշեցին կազմալուծել ԽՍՀՄ-ը և հիմնել ԱՊՄ-ն: Ի՞նչ եք մտածում այդ մասին այսօր»:				
Դա ճիշտ որոշում էր	16	12	8	12
Դա սխալ որոշում էր	57	70	75	68
Դժվար է պատասխանել	28	18	17	20
«Ինչպե՞ս է տարանջատումն ազդել Ռուսաստանում կենսամակարդակի վրա»				
Դեպի լավը	5	4	3	4
Դեպի վատը	68	76	83	76
Ոչ մի փոփոխություն	11	8	5	8
Դժվար է պատասխանել	16	12	9	12

*Աղբյուրը՝ Ռուոզ և Ներպֆեր, «Նոր Ռուսաստանի բարոմետր III», "New Russian Barometer III", հարցեր 57-59: Կարծում ենք, որ Բելառուսում և Ռուսաստանում գործում է համանման երևույթ: Բելառուսի խորհրդարանի միակ պատգամավորը, որը դեմ է քվեարկել անկախությանը՝ Ալեքսանդր Լուկաշենկոն, ընտրվեց նախագահ 1994թ.: 1995թ. մայիսին նա նախաձեռնեց մի հանրաքվե, որի ժամանակ ասաց. «Եթե մարդիկ ցանկանան, մենք նաև կստեղծենք մի քաղաքական միություն, որն անգամ ավելի միասնական կլինի, քան Խորհրդային Միությունն էր: Այս պահին ես խոսում եմ տնտեսական միության մասին»: Տե՛ս Սեթյու Կամինսկի, «Բելառուսներն ապագան փնտրում են անցյալում», "Belarussians Seek the Future in the Past", "Financial Times" (մայիսի 17, 1995թ.), էջ 3: Լուկաշենկոն աջակցություն ստացավ հանրաքվեի բոլոր հարցերի առնչությամբ: Նույն հոդվածում "Financial Times"-ի թղթակիցը նշում է, որ «համազգային հանրաքվեում բելառուս քվեարկողների երեք քառորդից ավելին նախընտրեցին վերականգնել խորհրդային ժամանակների ազգային տարբերանշանները, ռուսերենը դարձնել պետական լեզու և աջակցել տնտեսական ինտեգրմանը Ռուսաստանի հետ»:*

ցել պետութենականության լուրջ խնդիր: Մլովենիան չունի զգալի էթնիկ փոքրամասնություն կազմող բնակչություն, հետևաբար, չունենալով սերբական (կամ ալբանական) տիպի «իռեդենտա» (*irredenta*), այն չի ներքաշվել փաստացի կամ պոտենցիալ հակամարտությունների մեջ, այնպես, ինչպես դա տեղի ունեցավ Խորվաթիայում, Բոսնիա-Հերցեգովինայում և «պահպանված» Հարավսլավիայում, որտեղ զինված հակամարտությունները նպաստեցին քաղաքական իրավունքների ու քաղաքացիական ազատությունների համատարած կրճատմանը: Մակեդոնիան ավելի, քան Մլովենիան, ունի պետութենականության հնարավոր լուրջ խնդիրներ (Ալբանիայի ու Սերբիայի և անգամ՝ Բուլղարիայի ու Հունաստանի հետ), և սա նպաստել է այն բանին, որ քաղաքացիության ու լեզվի ոլորտներում նա ունի ներառական լինելուց շատ հեռու ռազմավարություն:

Մեկ այլ գործոն, որն անկասկած նպաստել է հետկոմունիստական վարչակարգերի ավելի մեծ աջակցությանն Արևելակենտրոնական Եվրոպայում (ի տարբերություն Ռուսաստանի և որոշ չափով՝ Բելառուսի), այն է, որ Ռուսաստանի քաղաքացիները կարող են ուրախ լինել անկախ լինելու համար, սակայն, այդուհանդերձ, ունենալ աշխարհաքաղաքական կորստի զգացում և զայրույթ ԽՍՀՄ-ի կազմալուծման փաստի հանդեպ: Ի թիվս այլ բաների, ԽՍՀՄ-ի կազմալուծումը քսանհինգ միլիոն ռուսների թողել է որպես հաճախ շրջապատված, իսկ երբեմն էլ՝ պետություն չունեցող փոքրամասնություններ այլ երկրներում: Նաև ի տարբերություն Չեխիայի Հանրապետության քաղաքացիների, որոնց կարծիքով՝ «թավշյա բաժանումը» բարելավեց չեխերի կենսամակարդակը, ռուսները համոզված են, որ ԽՍՀՄ-ի կազմալուծումը նպաստել է իրենց կենսամակարդակի անկմանը (Աղյուսակ 21.6):

**Աղյուսակ 21.7. Վին և նոր քաղաքական համակարգերի նախընտրությունները Ռուսաստանում և Լեհաստանում 1992թ. հունվար-փետրվարին**

Նախընտրություն	% ըստ տարիքային խմբերի				% նախընտրում են ներկա համակարգը նախկինից
	մինչև 29	30-59	60-ից բարձր	Ընդամենը	
<b>Ռուսաստանում</b>					
Ներկա համակարգն ավելի լավն է	43	39	21	36	-18
Վին համակարգն ավելի լավն է	45	52	71	54	
Զգիտեմ	12	9	8	10	
<b>Լեհաստանում</b>					
Ներկա համակարգն ավելի լավն է				74	+51
Վին համակարգն ավելի լավն է				23	
Զգիտեմ				3	

*Աղբյուրը՝* Իրինա Սոլվե և Վյաչեսլավ Շիրոնին, «Ռուսները պետության և շուկայի միջև», "Russians between State and Market", *Studies in Public Policy* 205 (1992թ.), էջ 19-22:

**Աղյուսակ 21.8. Ռուսների վերաբերմունքը նախկին կոմունիստական համակարգի վերականգնման նկատմամբ, 1994թ. ապրիլ**

Վամաձայնություն պնդման հետ. «Լավ կլիներ վերականգնել նախկին կոմունիստական համակարգը»	% ըստ տարիքային խմբերի			
	մինչև 29	30-59	60+	Ընդամենը
Միանգամայն համաձայն եմ	5	8	18	9
Ընդհանրապես համաձայն եմ	8	14	19	14
Ընդհանրապես համաձայն չեմ	30	29	23	28
Բոլորովին համաձայն չեմ	41	36	22	34
Դժվար է պատասխանել	16	13	19	15

*Աղբյուրը՝* Ռուոզ և Ներպֆեր, «Նոր ռուսական բարոմետր III», "New Russia Barometer III", հարց 31a: Նույն հանրահարցման ժամանակ միայն 3%-ն է լրիվ համաձայնել և միայն 7%-ը՝ ընդհանուր առմամբ համաձայնել այն պնդման հետ, որ «պետք է կտրուվարի բանակը»: Հարց 31b: Պարզ է, որ բանակը ցանկալի այլընտրանք չէ:

Կարող ենք եզրակացնել, որ ի տարբերություն այն բանի, որ Ռուսաստանի քաղաքացիները 1991թ. նկատմամբ աշխարհաքաղաքական կորստի զգացում ունեցան, «արտաքին կայսրության» քաղաքացիներն, այնպիսի երկրներում, ինչպիսին է Լեհաստանը, անկասկած ունեն աշխարհաքաղաքական ձեռքբերման զգացում 1989թ. իրադարձությունների շնորհիվ: Սա է պատճառներից մեկը, թե ինչու Լեհաստանի քաղաքացիներն ունեն ներկա քաղաքական համակարգի նկատմամբ ավելի ուժեղ հակվածություն, քան Ռուսաստանի քաղաքացիները, և, հետևաբար, ավելի պատրաստակամորեն ընդունեցին հետաձգված փոխհատուցման քաղաքականությունը (Աղյուսակ 21.7):

Մենք չենք ցանկանում, սակայն, չափից ավելի ընդգծել Ռուսաստանում հին համակարգը նախընտրելու փաստը: Շատ մարդիկ Իսպանիայում կարծում են, որ իրենք ավելի լավ էին ապրում Ֆրանկոյի օրոք, սակայն չէին ցանկանա վերադառնալ այդ քաղաքական համակարգին: Քաղաքականության մեջ գլխավոր հարցը ապագայի ցանկալի *այլընտրանքն* է: Ի դեպ, ռուսներն ապրանքների քաղաքական զամբյուղը, որը մենք դիտարկեցինք Աղյուսակ 21.2-ում, համարում են *ավելի լավը* նոր քաղաքական համակարգի ներքո, սակայն ավելի փոքր տարբերությամբ, քան պատասխանողները Արևելակենտրոնական

Եվրոպայում:<sup>20</sup> Այսպիսով, չնայած ԽՍՀՄ-ի կազմալուծման վերաբերյալ երկակիության ու կորստի իրենց զգացման, միայն մի փոքր տոկոսն է ասում, որ կցանկանա վերադառնալ կոմունիզմին, և մի էլ՝ ավելի փոքր տոկոս նախընտրում է զինվորական իշխանությունը՝ որպես ապագայի ցանկալի այլընտրանք (Աղյուսակ 21.8):

Հետկոմունիստական Եվրոպայում ժողովրդավարացման տարբերությունների այլ կարևոր բացատրող գործոններ են (որոնք ապագա հետազոտողների ուսումնասիրության համար են) ժամանակի, նախկին վարչակարգի տիպի և կիրառելի ժողովրդավարական ժառանգության ներկայության կամ բացակայության հետ կապված խնդիրները: ԽՍՀՄ-ը գոյատևեց մոտ յոթանասունհինգ տարի, որի ընթացքում ամբողջատիրական պրակտիկան մեծ մասամբ պահպանվեց: Արևելակենտրոնական Եվրոպան խորհրդային ենթահամակարգի մաս կազմեց միայն քառասուն տարի: Լեհաստանում այս ժամանակահատվածի մեծ մասում գերակշռում էր ավտորիտար և ոչ ամբողջատիրական իրականությունը: Չունգարիայում զարգացավ հասուն հետամբողջատիրություն: Եվ, ի վերջո՝ մինչկոմունիստական պատմությունը պետք է վերլուծվի համեմատական տեսանկյունից: Չեխոսլովակիան, օրինակ, ժողովրդավարական էր անկախանալուց՝ 1919թ.-ից հետո մինչև 1938-ի նացիստական ներխուժումը: Ըստ էության, ոչ մի այդպիսի կիրառելի մինչկոմունիստական ժողովրդավարական անցյալ չկա նախկին Խորհրդային Միության ոչ բալթյան երկրներում: Սա չի նշանակում, որ ժողովրդավարությունն անհնար է այս երկրներում, սակայն հաստատ նշանակում է, որ դրանք կունենան ավելի երկարատև ու ավելի վտանգավոր ուղիներ դեպի սահմանադրականություն և պետության վերակազմավորում նախքան ժողովրդավարությունը կդառնա (եթե երբևէ դառնա) միակ լավագույն տարբերակը:

Ուշադիր ընթերցողն, անկասկած, նկատել է, որ կրոնը չի քննարկվել ԱՊՀ երկրներում և նախկին Հարավսլավիայում դեպի ժողովրդավարացում համեմատաբար ավելի թույլ առաջընթացի մասին մեր բացատրության մեջ: Այդպես է արվել երկու պատճառով: Առաջին. վերլուծաբանների շրջանում ավելի ու ավելի տարածված է դառնում որոշ կրոններն *ինքնին* (օր.՝ ուղղափառ քրիստոնեությունը, իսլամը կամ կոնֆուցիականությունը) դարձնել որպես աշխարհի շատ մասերում ժողովրդավարացման դժվարությունների հիմնական բացատրություն:<sup>21</sup> Գործոնները, որոնք մենք նշել ենք այս գլխում, *ինքնին* բավարար են՝ բացատրելու նախկին Խորհրդային Միության ոչ բալթյան երկրներում ժողովրդա-

20. Օրինակ, ավելի լավ/ավելի վատ հարաբերակցությունը տեղաշարժվելու ազատության վերաբերյալ եղել է 95/5 Չեխիայի Հանրապետությունում, 75/7՝ Լեհաստանում և միայն 41/28՝ Ռուսաստանում: Նույն հարաբերակցությունն անօրինական ձեռքակալությունից գերծ լինելու համար եղել է 73/4՝ Չեխիայի Հանրապետությունում, 71/5՝ Լեհաստանում և միայն 23/15՝ Ռուսաստանում: Մենք կարծում ենք՝ այս արդյունքները, ի թիվս այլ բաների, ճիշտ են արտացոլում մարդկանց կրած ցնցումները Ռուսաստանում պետութենականության շարունակվող ճգնաժամի պատճառով, որը մենք քննարկեցինք Գլուխ 19-ում: Տվյալներն այս գլխում Աղյուսակ 21.2-ից են և Ռոուզ և Հերպֆեր, «Նոր Ռուսաստանի բարոնետր III» (Rose and Haerpfer, "New Russia Barometer III", questions 30c and 30e):

21. Ուղղափառության, կոնֆուցիականության, իսլամի և ժողովրդավարության միջև լարվածությունը, անգամ թշնամությանը վերաբերող փաստարկ, տե՛ս Սեմյուել Հանթինգտոն, «Քաղաքակրթության բախումը» (Samuel P. Huntington, "The Clash of Civilization", Foreign Affairs 72, no. 3 (1993): 22-49): *Տե՛ս նաև* նրա՝ «Երրորդ ալիքը. Ժողովրդավարացումը քսաներորդ դարի վերջին» (*The Third Wave: Democratization in the Late Twentieth Century* (Norman: University of Oklahoma Press, 1991), 298-311):

վարացման բացարձակապես տարբեր արդյունքները՝ Արևելակենտրոնական Եվրոպայի համեմատ: Երկրորդ. կրոնի, դիմադրության և քաղաքացիական հասարակության վերաբերյալ 16-րդ գլխում բերված համեմատական ակնարկում մենք արդեն առաջ ենք քաշել այն փաստարկը, որ կրոնները միմյանցից տարբերվում են իրենց՝ ինքնուրույնաբար վերահսկվող ռեսուրսների տիրույթով և պետության հետ իրենց հարաբերությամբ: Մենք նշել ենք, որ հռոմեական կաթոլիկությունը՝ որպես անդրազգային, աստիճանակարգային կազմակերպություն, պոտենցիալ կերպով կարող է տրամադրել նյութական և դոկտրինի հետ կապված աջակցություն ցանկացած տեղական կաթոլիկ եկեղեցու՝ օգնելու նրան դիմադրել պետության կողմից ճնշմանը: Որքանով կաթոլիկ եկեղեցին կարող է դիմադրել պետությանը, այնքանով այն կարող է համարվել սատարող ուժ ավելի աշխույժ և ինքնուրույն քաղաքացիական հասարակության համար: Էմպիրիկորեն ժողովրդավարացման դիմադրության փուլում, որը մենք վերլուծում ենք այս գրքում, կաթոլիկ եկեղեցին խաղացել է սատարող դեր Լեհաստանում և Լիտվայում, ինչպես նաև Չիլիում և Բրազիլիայում, իսկ Ֆրանկոյի վերջին տարիներին՝ Իսպանիայում: Բողոքականությունը՝ անհատի խղճի վրա ունեցած իր ազդեցությամբ և իր միջազգային ցանցերով, նույնպես կարող է դեր խաղալ ճնշիչ միջոցներ կիրառող պետության դեմ քաղաքացիական հասարակության ընդդիմությանն աջակցելու գործում, ինչպես Արևելյան Գերմանիայում և Էստոնիայում: Քաղաքացիական հասարակության հարցում և պետությանը դիմադրելու առումով ուղղափառ քրիստոնեությունը հաճախ (ոչ միշտ) կազմակերպորեն և դոկտրինի առումով համեմատաբար թույլ դիրքում է իր, ինչպես Մաքս Վեբերն է անվանում, «կեսարա-պապական» կառուցվածքի պատճառով, որտեղ եկեղեցին *ազգային* կազմակերպություն է՝ ի տարբերություն *անդրազգայինի*: «Կեսարա-պապական» եկեղեցիներում ազգային պետությունը սովորաբար խոշոր դեր է խաղում ազգային եկեղեցու ֆինանսավորման և նշանակումների հարցում: Նման ազգային եկեղեցին քաղաքացիական հասարակության իսկապես համեմատաբար ինքնուրույն մաս չէ, որովհետև առկա է, Վեբերի բառերով ասած, *«հոգևորականության՝ աշխարհիկ իշխանությանը ենթակայության»* բարձր աստիճան:<sup>22</sup> Ընդունելով սա՝ մենք չենք կարծում, որ ուղղափառ քրիստոնեությունը ներքուստ հակաժողովրդավարական ուժ է: Այսինքն, եթե պետության ղեկավարները նվիրված են ժողովրդավարության գործին և կիրառում են ժողովրդավարական փորձը, ապա «կեսարա-պապական» կառույցներն ու խթանները պետք է որ ուղղափառ քրիստոնեական եկեղեցուն դարձնեն ժողովրդավարության հավատարիմ աջակից, ինչպես Հունաստանում 1975թ. ի վեր: Սակայն եթե պետության և քաղաքական հասարակության առաջնորդները հակաժողովրդավարական են, ապա քաղաքացիական հասարակության ժողովրդավարական ընդդիմությունը պաշտոնապես չի ստանա որևէ էական կամ գործուն աջակցություն որևէ ազգային ուղղափառ եկեղեցուց: Հուսով ենք, որ աշխարհի կրոնների և ժողովրդավարության դերի մասին մեր մտքերը կգարգացնենք որևէ ապագա ծրագրում:<sup>23</sup>

22. Կեսարա-պապականության Մաքս Վեբերի (Max Weber) քննարկումը *տե՛ս նրա՝ «Տնտեսություն և հասարակություն»* ("Economy and Society"), Գյունթեր Ռոթի և Կլաուս Վիտտիչի (Guenther Roth and Claus Wittich, eds. (Berkeley: University of California Press, 1978), 2:1159-63, quote from 2:1161):

23. Իսկամը (ի տարբերություն կոնֆուցիականության) կարևոր արժեքային համակարգ է հետկոմունիստական Եվրոպայի որոշ մասերում: Իսկամին վերաբերող ամբողջական փաստարկը պետք է

## ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

«Կոմունիստների վերադարձը» իշխանության Լեհաստանում, Հունգարիայում և Լիտվայում, այսինքն՝ այն երկրներում, որոնք առաջատար դեր են խաղացել ժողովրդավարությանն անցումներում, որոշ մեկնաբանների կողմից համարվում է ապացույց այն բանի, որ տնտեսությունն ու քաղաքականությունն այնքան ամուր են կապված, որ տնտեսական անկումը նշանակում է ժողովրդավարության անկում: Այն երկրների առումով, որտեղ ժողովրդավարական ընտրական ուժերը տարել են գոնե մեկ հաղթանակ (իսկ շատ երկրներում նման հաղթանակ երբեք չի եղել), կարծում ենք, որ ճիշտ կլինի ավելի նրբերանգված դատողությունը:

Ըստ ժողովրդավարության սահմանումների, որոնք մենք առաջ ենք քաշել այս գրքում, բարեփոխված կոմունիստական կուսակցության կողմից առաջնորդվող կոալիցիաների վերադարձն իշխանության Լիտվայում՝ 1992թ., Լեհաստանում՝ 1993թ. և Հունգարիայում՝ 1994թ., չնայած ժողովրդավարական որոշ հարցերում արձանագրած հետքայլին (ինչպես օրինակ՝ տեղական կառավարման բարեփոխումները Լեհաստանում), ինքնին բավարար օրինակ չէ վարչակարգի ոչ ժողովրդավարական փոփոխության: Մենք սա ասում ենք, որովհետև գիրքը գրելու պահին (1995թ. հուլիս) եղած գրեթե բոլոր արժանահավատ տեսակետներով բարեփոխական կոմունիստական կոալիցիաներն ընդունել էին խաղի ժողովրդավարական կանոնները, որը երևում էր այն բանից, թե ինչպես են նրանք մրցակցել ընտրություններում, իսկ հետագայում ինչպես են կառավարել: Նաև, որ շատ կարևոր է, նրանք ընդունվել էին որպես լեգիտիմ հաղթողներ և կառավարողներ այն կուսակցությունների կողմից, որոնց նրանք պարտության էին մատնել: Այս իմաստով տեղի չէր ունեցել ժողովրդավարությունից հեռացնող *վարչակարգի փոփոխություն*, մի եզր, որը սովորաբար գործածում են քաղաքագետները: Ըստ էության, համեմատական տեսանկյունից ընտրությունները Լիտվայում, Լեհաստանում և Հունգարիայում իշխանության ժողովրդավարական խաղաղ փոփոխություններ են եղել:

Ավելի մեծ պատմական հեռանկարում հնարավոր է՝ նաև պարզվի, որ այս ընտրություններն իրականում ամրապնդել են ժողովրդավարությունը Լիտվայում, Լեհաստանում և Հունգարիայում մեկ կարևոր առումով: Նրանք և՛ հաղթողներին, և՛ պարտվողներին ցույց են տվել, որ ժողովրդավարությունը դառնում է միակ լավագույն տարբերակը: Ի դեպ, ճիշտ այն պատճառով, որ ժողովրդավարությունը 1992-94թթ. ընկալվել է որպես

---

որ լինի ավելի բարդ, քան ուղղափառ քրիստոնեության վերաբերյալ փաստարկը: Սակայն մենք նշում ենք, որ արմատականությունից Արևմուտքի վախը հաճախ նպաստել է նրա կողմից այն հակաժողովրդավարական կառավարությունների կամ անգամ շարժումների սատարմանը և անգամ լեգիտիմացմանը, որոնք համարվել են պատնեշներ արմատականության տարածման դեմ: Սա այսպես է նաև այն դեպքում, երբ իսլամական կուսակցություններն ընտրվել են ժողովրդավարորեն և չեն խախտել ժողովրդավարական պրակտիկան: Ոչ մի տեղ սա այնքան պարզ չի երևացել, որքան Արևմուտքի բացահայտ և անգամ՝ ոչ բացահայտ աջակցության մեջ Ալժիրում զինվորական հեղաշրջմանը, երբ իսլամական ուժերը հաղթել էին ընտրությունների առաջին շրջանում 1991թ.: Այսպիսով, աշխարհաքաղաքական պատճառներով նախկին Խորհրդային Միության ավտորիտար կառավարությունները, որոնք ունեն ընդհանուր սահմաններ Իրանի և/կամ Աֆղանստանի հետ (օր.՝ Թուրքմենստան, Ուզբեկստան և Տաջիկստան) արևմտյան քաղաքականություն մշակողների և մեկնաբանների կողմից որոշ չափով արժանանում են ժողովրդավարական «կրկնակի ստանդարտի» վերաբերմունքի:



միակ լավագույն տարբերակը, բարեփոխիչ կոմունիստները Լիտվայում, Լեհաստանում և Հունգարիայում խիստ փափագում էին ցույց տալ, որ իրենք կկառավարեն որպես ժողովրդավարական կուսակցություններ: Նրանց հաշվարկն այն էր, որ այդպես կառավարելով, երբ իրենց հերթին թողնեն իշխանության դեկը, իրենք կընկալվեն որպես ժողովրդավարությանը հավատարիմ ընդդիմության մաս և դրանով իսկ՝ որպես լեգիտիմ այլընտրանքային կառավարություն:<sup>24</sup> Դա ապացուցելու համար որոշ առումներով նրանք պահպանում էին քաղաքացիական ազատությունների ինչ-որ չափով ավելի բարձր ստանդարտներ, քան իրենց նախորդները Հունգարիայում և Լիտվայում, որոնք ժամանակ առ ժամանակ խախտել են քաղաքացիական ազատությունները՝ հանուն իրենց ազգայնական ու հակակոմունիստական «մանդատների»: Օրինակ, բարեփոխիչ կոմունիստները Հունգարիայում կոալիցիայի մեջ են ազատական «Ազատ ժողովրդավարների» հետ, և կոալիցիայի ընդհանուր մոտեցումը լրատվամիջոցների նկատմամբ ավելի քիչ սխալներով է եղել, քան առաջին ժողովրդավարորեն ընտրված կառավարության մոտեցումը: Լիտվայում ազգայնական անկախականների առաջնորդ Վիտաուտաս Լանդսբերգիսն այն աստիճանի էր հետամուտ լինում իր հակակոմունիստական ազգայնականությանը, որ Անատոլ Լիվենն իր փայլուն գրքում նրան անվանել էր «հետ նայող, կրոնական երանգ ունեցող ազգայնական... [որն] ազգը դարձրեց ավելի պառակտված, քան այն ժամանակ, երբ դարձավ նրա առաջնորդը»:<sup>25</sup> Նրա բարեփոխիչ կոմունիստ հետնորդը՝ Ալգիրդաս Բրազաուսկասը, ինչ-որ չափով ավելի մեծ ուշադրություն է հատկացրել բոլոր քաղաքացիներին անհատի իրավունքների «քաղաքական տանիք» տրամադրելուն և հետամուտ է եղել ներառման քաղաքականության:

Հասկացութենական ու քաղաքական առումներով ի՞նչ է նշանակում և ի՞նչ չի նշանակում «կոմունիստների վերադարձն իշխանության» արտահայտությունը Կենտրոնական Եվրոպայում 1990-ականթթ. կեսին: Կոմունիստական վարչակարգը Կենտրոնական Եվրոպայում մինչև 1989թ., անգամ հասուն հետամբողջատիրական Հունգարիայում կամ ավտորիտար Լեհաստանում բառի ամբողջական իմաստով նշանակել է հզոր, կախյալ դաշինք համաշխարհային ոչ ժողովրդավարական հեգեմոնային իշխանության հետ: 1990-ականթթ. կեսերին նման դաշինք գոյություն չունի, իսկ Ռուսաստանը համաշխարհային հեգեմոնային իշխանություն չէ: Այս նոր աշխարհաքաղաքական համատեքստում բարեփոխիչ կոմունիստների իշխանության գալու լավագույն հնարավորությունն իրենց որպես «սոցիալ-ժողովրդավարներ» ներկայացնելն ու լինելն է:<sup>26</sup> Եթե անգամ որոշ բա-

24. Այս միտքը շեշտվել է մի գրույցի ժամանակ՝ Ալֆրեդ Ստեփան և Ջերգի Վիատր, ով նախագահում է լեհական խորհրդարանում նախկին կոմունիստների կոնգրեսական կարևոր կոմիտեն: Վիատրը շեշտել է, որ «առավել կարևոր բանը, որը մենք պետք է ձեռք բերենք մեր կառավարությունում, այն է, որ պետք է ապացուցենք, որ մենք լեգիտիմ ժողովրդավարական այլընտրանք ենք»: Ջրույց Վարշավայում, նոյեմբերի 5, 1993թ.:

25. Անատոլ Լիվեն, «Մերձբալթյան հեղափոխությունը. Էստոնիա, Լատվիա, Լիտվա և անկախության ուղին» (Anatol Lieven, *The Baltic Revolution: Estonia, Latvia, Lithuania and the Path to Independence* (New Haven: Yale University Press, 1993), 274):

26. 1989-90թթ. հետկոմունիստական Եվրոպայում սոցիալ-ժողովրդավարական տարածքն արդյունավետ կերպով չէր գրադեցվել ընտրություններում: Պատմական սոցիալ-ժողովրդավարները չափազանց խամրած և չափազանց թույլ էին, իսկ նորագատական դիսկուրսը չափազանց հեգեմոնային էր: 1992-94թթ. որոշ բարեփոխական կոմունիստական կուսակցություններ, որոնք դուրս էին մնացել

րեփոխիչ կոմունիստներ իրականում չեն ապրել մեծ փոփոխություններ իրենց մտածողության մեջ (և շատերն, իհարկե, չեն փոխվել), արտաքին իրականությունը, որոնց բարեփոխիչ կոմունիստները պետք է արձագանքեն, մեծապես փոխվել է: Քանի դեռ ժողովրդավարությունը միակ լավագույն տարբերակն է, իշխանության ձգտողների համար հիմնական խթան է մնում ժողովրդավարական համատեքստը:

Վերջապես, քանի որ ընտրողները վճռորոշ դեր են խաղում խթանների համակարգը արժևորելու գործում, ապա ի՞նչ էին նրանք իրականում ցանկանում: Արդյոք նրանք ցանկանո՞ւմ էին վերադառնալ կոմունիզմին:<sup>27</sup> Ընտրություններից երկու ամիս հետո լեի ընտրողները, որոնք, ենթադրաբար, իշխանության էին «վերադարձրել» նախկին կոմունիստներին, մեր կարծիքով՝ իրոք հավատո՞ւմ էին, որ իրենք իրականում հին կոմունիստներին իշխանության չեն վերադարձրել: Հարցմանը պատասխանող լեիերն ըմբռնել էին համաշխարհային ու ազգային ուժային հարաբերություններում շարունակականության հիմնավոր ընդհատումը 1988թ. և 1993թ. միջև: Այն հարցին, թե «Արդյո՞ք SLD-PSL [բարեփոխիչ կոմունիստական կուսակցությունը և նրանց հին դաշնակից գյուղացիական կուսակցությունը] կառավարական կոալիցիայի կազմավորումը նշանակում է վերադարձ իշխանության այն անձանց համար, ովքեր իշխել են 1989թ. առաջ», 63%-ը պատասխանել է

իշխանությունից, մասնակիորեն վերակազմավորեցին իրենց այս տարածքը լցնելու համար, հենց որ նորագատականության նկատմամբ արձագանքը վրա հասնի: Նաև կոմունիզմի անկման հետ սոցիալիստական ինտերնացիոնալը փնտրում է նոր դաշնակիցներ հետկոմունիստական Եվրոպայում: Բարեփոխական կոմունիստական կուսակցությունները կարող էին ձեռք բերել սոցիալիստական ինտերնացիոնալի հավաստագիր և աջակցություն միայն այն դեպքում, եթե կառավարեին որպես ժողովրդավարներ: 1994թ. դեկտեմբերին սոցիալիստական ինտերնացիոնալի խորհուրդը, հանդիպելով Բուդապեշտում, առաջարկեց, որ Հունգարիայի բարեփոխիչ կոմունիստների կուսակցությունն ընդունվի որպես սոցիալիստական ինտերնացիոնալի լիիրավ անդամ: Իշխանության դեկը թողնելուց հետո Հունգարիայի և Լեհաստանի հետկոմունիստական կուսակցությունների սոցիալ-ժողովրդավարական շրջադարձի քաղաքական և կառուցվածքային պատճառների խորաթափանց վերլուծություն, տե՛ս Մայքլ Վալլեր, «Արևելակենտրոնական Եվրոպայի նախկին կոմունիստական կուսակցությունների հարմարվելը. սոցիալ-ժողովրդավարացման մի օրինակ» (Michael Waller, "The Adaptation of the Former Communist Parties of East-Central Europe: A Case of Social Democratization?" (paper prepared for a conference on Political Representation: Parties and Parliamentary Democracy, Central European University, Budapest, June 16-17, 1995)): Կենտրոնական եվրոպական համալսարանի նույն համաժողովին Լիտվայի քաղաքագիտական սոցիալիստական նախագահ Ալգիս Կրուպակվիչիուսը գրել է, որ Լիտվայի հետկոմունիստական կուսակցության համար, որն իշխանության եկավ 1992թ. (Ժողովրդավարական աշխատանքային կուսակցությունը), «ընդդիմության մեջ լինելու ժամանակահատվածը չափազանց նպաստավոր հնարավորություն էր՝ թարմացնելու իրենց անդամների թիվը [որն ընկել էր 200000-ից 1989թ. մինչև 8000-ի՝ 1995թ.], կազմակերպական կառուցվածքները և գաղափարախոսական ինքնությունը»: Մեջբերումը նրա ներկայացրած նյութից է, «Հետկոմունիստական փոխակերպում և քաղաքական կուսակցություններ» ("Post-Communist Transformation and Political Parties", 12-13):

27. Ե՛վ Լեհաստանում, և՛ Հունգարիայում, ինչպես արդեն քննարկել ենք, ընտրական օրենքների արդյունքում բարեփոխիչ կոմունիստների կուսակցությունները կամ կոալիցիան ստացան շատ ավելի ձայներ, քան տեղեր: Տեղերը, հետևաբար, ընտրողների մտադրությունների հաստատուն ցուցանիշ չէին: Լեհաստանում 1993թ. բարեփոխիչ կոմունիստներին և նրանց կոալիցիոն գյուղացիական դաշնակիցներին տրված ձայների 35.8%-ը բերեց տեղերի 65.8%: Հունգարիայում 1994թ. բարեփոխական կոմունիստական կուսակցությունը՝ «Հունգարիայի սոցիալիստական կուսակցությունը», ստացավ ձայների 33%-ն առաջին շրջանում, սակայն տեղերի բացարձակ մեծամասնություն՝ երկրորդ շրջանից հետո:

«ոչ», 13%-ն ասել է «ոչվար է ասել», և միայն բնակչության 24%-ն է պատասխանել «այո»:<sup>28</sup> Մենք կարծում ենք, որ այս պատասխանը ճիշտ է աշխարհաքաղաքական, քաղաքական և պատմական առումով: Իսպանիայի օրինակից մի դիտարկում կարող է հստակեցնել մեր եզրակացությունը: Եթե ինչ-որ մի ժամանակ 1990-ականթթ., "Partido Popular"-ը (Ժողովրդական կուսակցություն), որն ընտրազանգվածի մի հատվածի կողմից ընկալվում է որպես Ֆրանկոյի հետ կառավարած աջերի գիծը շարունակող, վերցնի կառավարության հսկողությունը ընտրություններից հետո, ինչը թվում է հավանական, նրանց հաղթանակը Իսպանիայի փոփոխված միջավայրում ոչ այնքան կնշանակի «վերադարձ ֆրանկոյականությանը», որքան իշխանության փոփոխություն, որի ժամանակ մի ժամանակակից պահպանողական կուսակցություն հաղթել է ընտրություններում ժողովրդավարորեն իշխելու մանդատով:<sup>29</sup>

Թեև ուրախ ենք, որ այս գիրքն ավարտում ենք Արևելակենտրոնական Եվրոպայում ժողովրդավարության ապագայի վերաբերյալ որոշակի լավատեսական նոտայով, այնուամենայնիվ, ցանկանում ենք դարձյալ ասել, որ *մենք* չենք ընդունում ժողովրդավարության հարատևության որևէ աշխարհաքաղաքական կամ փիլիսոփայական հեռանկար: Հնարավոր է, որ մեր վերլուծած որոշ երկրներում ժողովրդավարությունը երբեք չկայանա: Այլ երկրներում ժողովրդավարությունը կարող է կայանալ, սակայն ի վերջո

28. Հանրային հարցման տվյալները տպագրվել են Լեհաստանի հանրային կարծիքի ծառայության կողմից, Centrum Badania Opinii Społecznej, 1993թ. նոյեմբեր, էջ 1: Ավելին, 1993թ. վերջին և 1994թ. սկզբին, երբ Լեհաստանի և Հունգարիայի բնակչության պատահական ընտրանքին ասվել է մեկնաբանել այն պնդումը, որ՝ «Մենք պետք է վերադառնանք կոմունիստական իշխանությանը», հարցվածների 47%-ը Լեհաստանում «խստորեն չի համաձայնել», իսկ 35%-ն «ինչ-որ չափով չի համաձայնել» այդ պնդման հետ: Հունգարիայի պատասխանողների, ովքեր համաձայն չեն եղել, գումարային ընդհանուրը եղել է համանման 82%: *Տե՛ս Ռոուզ և Հերաֆեր*, «Նոր ժողովրդավարությունների բարոմետր III» (Rose and Haerpfer, "New Democracies Barometer III", question 43): Կենտրոնական Եվրոպայում պատասխանողների այդ պնդման հետ «մեծապես համաձայն» եղածների ամենաբարձր տոկոսը Բուլղարիայում էր՝ 9%: Հաջորդ ամենաբարձր ցուցանիշը Ռումինիային էր՝ 4%:

29. Շատ ընթերցողների համար Լեհաստանում 1995թ. Կոմունիստական կուսակցության նախկին առաջնորդ Ալեքսանդր Կվասնիսկու հաղթանակը նախագահական ընտրությունների երկրորդ շրջանում կարող է թվալ կոմունիզմի ավելի հստակ հաղթանակ: Ժողովրդավարության կայացման տեսանկյունից Լեհաստանի ապագայի համար երկու առավել կարևոր հարցերը հետևյալն են՝ 1) արդյո՞ք կարող են հետկոմունիստները (ովքեր 1993 և 1995թթ. ընտրությունների արդյունքում ունեին երկու երրորդ մեծամասնություն խորհրդարանում և վերահսկում էին նախագահությունը) կառավարել ժողովրդավարորեն և 2) արդյո՞ք հակակոմունիստական ուժերը կընդունեն ազատ ընտրությունների արդյունքների լեգիտիմությունը: Թեև ոչ բավարարված 1995թ. նոյեմբերի ընտրություններից, Գարտոն Աշն ավելի մտախոզված էր երկրորդ հարցից, քան առաջինից. «Բարոյապես, ինչպես նաև գեղագիտորեն հետկոմունիստների հաղթանակը Լեհաստանում խորապես տհաճ է, բայց արդյո՞ք վտանգավոր է: Ոչ, կարծում եմ՝ որքանով այն վերաբերում է նրանց նպատակներին ու մոտեցումներին... Կվասնիսկին ու իր ընկերները չափազանց շատ էին ցանկանում, որ իրենց համարեն ոչ թե արևելյան հետկոմունիստներ, այլ սովորական արևմտյան սոցիալ-ժողովրդավարներ»: Երկրորդ հարցի վերաբերյալ Գարտոն Աշն մեջբերում է լեհական եպիսկոպոսության և Լեխ Վալենսայի մի շարք հետընտրական հոչակագրեր և եզրակացում, որ Լեհաստանում ամենամեծ վտանգը «մի մեծ աջաթևյան արտախորհրդարանական շարժում է Լեխ Վալենսայի շուրջը, որին աջակցում են եկեղեցին և «Համերաշխությունը», և որը պարզապես չի ընդունում նախագահ Կվասնիսկու որպես Լեհաստանի երրորդ հանրապետության լեգիտիմ ղեկավարի»: *Տե՛ս Գարտոն Աշ*, ««Նորիթթանսական» Լեհաստան» (Timothy Garton Ash, "NeoPagan' Poland", New York Review of Books (January 11, 1996), 10-14, quotes from 12 and 14):

անկում ապրել: Մենք նաև ցավով ընդունում ենք, որ որոշ երկրներ կկայացնեն ժողովրդավարություն, սակայն այն երբեք չեն խորացնի գենդերային հավասարության, կարևորագույն սոցիալական ծառայություններից օգտվելու հնարավորության, ներառական քաղաքացիության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի ու տեղեկատվության ազատության բնագավառներում: Նրանք կարող են, իսկապես, ժամանակ առ ժամանակ խախտել մարդու իրավունքները:

Բոլոր լուրջ ժողովրդավար մտածողներն ու ակտիվիստներն այժմ նույնպես տեղյակ են, որ այդքան գովաբանված ժողովրդավարական Երրորդ ալիքն արդեն առաջ է բերել որոշ վտանգավոր ստորջրյա հոսանքներ ոչ միայն հետկոմունիստական Եվրոպայում, այլև Արևմտյան Եվրոպայում:<sup>30</sup> Միացյալ Նահանգներում ազատության ազդեցիկ գաղափարախոսները երբեմն չափազանց պարզունակ են և առողջ ժողովրդավարական հասարակարգի համար մանրախնդիր են թվում: Այս համատեքստում ժողովրդավարության գերազանցության նկատմամբ հավատը ոչ միայն ցանկալի չէ, այլև վտանգավոր է: Ժողովրդավարական ինստիտուտները պետք է ոչ միայն ստեղծվեն, այլև ձևավորվեն, խնամվեն և զարգացվեն: Կարծում ենք, որ բազմիցս պարզորոշ ասել ենք, որ ժողովրդավարությանը սատարող տնտեսական հասարակություն ստեղծելու համար պահանջվում է շատ ավելին, քան պարզապես շուկաներն ու մասնավոր սեփականությունը: Ժամանակն է «ոչ ազատական ազատականությունը» վեր հանելու որպես խնդիր և հաղթահարելու այն, ինչպես նաև տեսականացնելու և հասարակայնորեն կառուցելու միավորող ինքնության քաղաքականություն: Ավելին, պնդելը, որ ժողովրդավարությունն ավելի լավ է, քան կառավարության որևէ այլ ձև, քանի որ այլընտրանքները ճգնաժամ են ապրել, բավարար չէ: Ժողովրդավարությունը պետք է պաշտպանել ըստ էության: Պարզ է նաև, որ ավելի շատ գիտահետազոտական աշխատանք է պետք նվիրել՝ ուսումնասիրելու ժողովրդավարական վարչակարգերի այն հսկայական բազմազանությունը, որն աշխարհում իրականում գոյություն ունի: Եվ որ ամենակարևորն է, անհրաժեշտ են նոր *քաղաքական ծրագրեր*, ինչպես նաև հետազոտություններ կատարել կայացած ժողովրդավարությունների *որակի* բարելավման հարցերի ուսումնասիրության ուղղությամբ:

30. Երեք փայլուն հոդվածներ՝ Daedalus-ի հատուկ համարում, որն անվանվում է «Կոմունիզմից հետո. ի՞նչ», "After Communism: What?" (1994թ. ամառ), նվիրված են անսպասելի ճգնաժամին, որ արևմտաեվրոպական և արևելաեվրոպական ժողովրդավարներն սկսեցին ապրել կոմունիզմի անկումից հետո իրենց լեգիտիմացնող թշնամուն կամ «ուրիշին» կորցնելուց հետո: Շատ խնդիրներ, որոնք երկար տարիներ հետաձգվել են կամ ժխտվել, մտան օրակարգ: Այս նոր և դժվարին «կորուսյալ հարացույց» իրավիճակի համար տե՛ս Թոնի Ջուդ, «Հազար ինը հարյուր ութսունիններ. եվրոպական ո՞ր դարաշրջանի վերջը» (Tony Judt, "Nineteen Eighty-Nine: The End of Which European Era", 1-20), Էլմեր Հանքիս, «Եվրոպական հարացույցներ. Արևելք և Արևմուտք, 1945–1994թթ.» (Elemer Hankiss, "European Paradigms: East and West, 1945–1994", 115-26) և Իշտվան Ռուվ, «Կոմունիզմի հետմահու հաղթանակը» (Istvan Rev, "The Postmortem Victory of Communism", 157-70): Կլաուս Օֆֆեն (Claus Offe), "Der Tunnel am Ende des Lichts: Erkundung der politischen Translormation im Neuen Osten" (Frankfurt: Campus Verlag, 1994) ամբողջ գրքում և հատկապես՝ 10-րդ գլխում բարձրացնում է համանման հարցեր:

## Նկարներ, աղյուսակներ և ցուցադրություններ

### ՆԿԱՐՆԵՐ

- 6.1. Կատալոնիայում ու Բասկերի երկրում և Նավարայում անկախության ձգտող բնակչության տոկոսն ինքնավարություններին իշխանություն տալու մասին 1979թ-ին անցկացված հանրաքվեից առաջ և հետո
- 14.1. Համոզված և անհանգստացած ժողովրդավարները Հարավային Եվրոպայում 1985թ. և Հարավային Ամերիկայի Հարավային Կոնուս 1995թ.
- 15.1. Պաշտպանության ոլորտի ծախսերը՝ որպես ՀՆԱ-ի տոկոս, 1983-1989թթ.
- 18.1. Արևելյան Եվրոպայում անկախական շարժումների քանակը. հունիս, 1989թ.
- 21.1. Այն մարդկանց տոկոսը, ովքեր դրական գնահատական են տվել տնտեսական համակարգին ու քաղաքական վարչակարգին կոմունիստական համակարգում, ներկա համակարգում և հինգ տարի հետո. արևելակենտրոնական եվրոպական 6 երկրներ
- 21.2. Կոմունիստական վարչակարգում, ներկա վարչակարգում և հինգ տարի հետո տնտեսական համակարգն ու քաղաքական համակարգը դրական գնահատած մարդկանց տոկոսը. Ռուսաստան, Ուկրաինա և Բելառուս

### ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

- 1.1. Ժամանակակից կայացած ժողովրդավարության հինգ խոշոր ոլորտները. փոխկապակցված սկզբունքներ և փոխներագուման ասպարեզներ
- 2.1. Պետության, ազգ(եր)ի և ժողովրդավարացման (այն ենթադրությամբ, որ չկա չվերամիավորված տարածք) միջև փոխհարաբերությունները
- 3.1. Ժամանակակից վարչակարգերի հիմնական կատարելատիպերը և դրանց բնորոշ առանձնահատկությունները
- 4.1. Նախկին ոչ ժողովրդավարական վարչակարգի տիպի նշանակությունը ժողովրդավարության կայացման խնդիրների համար
- 4.2. Նախորդ ոչ ժողովրդավարական վարչակարգի տիպի նշանակությունը ժողովրդավարություն տանող ուղիների համար
- 4.3. Ոչ ժողովրդավարական վարչակարգի տիպի նշանակությունն այդ տիպի վարչա-

կարգից ժողովրդավարական վարչակարգի անցման ավարտման և կայացման նվազագույն խնդիրների լուծման համար

- 6.1. Բազմակի ինքնությունները Կատալունիայում, 1982թ.
- 6.2. Ազգային ինքնությունները Կատալունիայում
- 6.3. Ազգային ինքնությունները Բասկերի երկրում
- 6.4. «Ժողովրդավարությունը լավագույն քաղաքական համակարգն է այնպիսի երկրի համար, ինչպիսին մերն է», Իսպանիա, 1978-1993թթ.
- 6.5. «Այս պահին ի՞նչն է Ձեր կարծիքով լավագույնը՝ միայն "UCD"-ից (Union de Centro Democratico՝ այն ժամանակվա իշխող կուսակցությունը) կազմված կառավարությունը՝ քաղաքական կուսակցությունների կոալիցիա՞ն, քաղաքացիա-զինվորական կառավարությունը, թե՞ զինվորական կառավարությունը»։ Իսպանիա, 1981թ.
- 8.1. Հունաստանում, Իսպանիայում և Պորտուգալիայում ավտորիտար վարչակարգերի գնահատումը
- 8.2. Ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունքային աջակցության համեմատությունը. Հունաստան, Իսպանիա և Պորտուգալիա (1985թ.)
- 9.1. Հարկային եկամուտների, հանրային ծախսերի ու պետական զբաղվածության աճ. Իսպանիա, Պորտուգալիա և Հունաստան (1976թ., 1984թ., 1988թ.)
- 9.2. Այն պատասխանողների տոկոսը, ովքեր հաստատում են, որ «Ժողովրդավարությունը նախընտրելի է կառավարության ցանկացած այլ ձևից» Իսպանիայում, Պորտուգալիայում և Հունաստանում և համեմատած Եվրոպական Միության երկրների միջինի հետ, 1992թ. (Լեգիտիմության ցուցանիշ)
- 9.3. Այն պատասխանողների տոկոսը, ովքեր «Շատ գոհ են» կամ «Բավականաչափ գոհ են» ժողովրդավարության գործելուց Իսպանիայում, Պորտուգալիայում և Հունաստանում՝ համեմատած Եվրոպական Միության անդամ-երկրների միջինի հետ, 1985-1993թթ. (Արդյունավետության ցուցանիշ)
- 9.4. Ժողովրդավարական ներկայի ու ապագայի ցանկալիության ուժեղ հաստատման և ոչ ժողովրդավարական անցյալի թույլ մերժման համադրելիությունը. Իսպանիա և Պորտուգալիա
- 10.1. Ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունքային աջակցության համեմատությունն Ուրուգվայում և Հարավային Եվրոպայի երեք կայացած ժողովրդավարություններում. Իսպանիա, Պորտուգալիա և Հունաստան
- 10.2. Ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունքներն Ուրուգվայում՝ ըստ աշխարհագրական տարածքի և պատասխանողների գաղափարական ինքնորոշման (1991թ. դեկտեմբեր)
- 11.1. Բրազիլիայում ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունքային աջակցության համեմատությունն Ուրուգվայում, Իսպանիայում, Պորտուգալիայում և Հունաստանում չորս կայացած ժողովրդավարությունների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի հետ

- 11.2. Ժողովրդավարության նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի զարգացումը Բրազիլիայում, 1988-1992թթ.
- 11.3. Քաղաքացիների բավարարվածությունը Բրազիլիայի կատարողականով 1964-1985թթ. զինվորական վարչակարգի օրոք և քաղաքացիականների կողմից ղեկավարվող ժողովրդավարության (նոր հանրապետություն) առաջին չորս տարիներին
- 11.4. Պատասխանողների վերաբերմունքների միջև առկա փոխկապակցվածությունը (կորելացիա)՝ նրանց եկամտի բավարար լինելու և ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունքի առումով. Բրազիլիա
- 11.5. Բրազիլիայում արդարադատության համակարգի և ռստիկանության արդարության մասին պնդումների հետ համաձայնության և անհամաձայնության աստիճանը, 1989թ.
- 11.6. «Գործուն» քաղաքական կուսակցությունների Լասկոն-Թաագեպերա ցուցիչը խորհրդարանական, կիսանախագահական ու նախագահական չընդհատվող ժողովրդավարությունների օրենսդիր մարմիններում, 1979-1989թթ.
- 13.1. Լեզիտիմությունն ու արդյունավետությունը Չիլիում և Իսպանիայում
- 13.2. Կառավարության արդյունավետության մասին քաղաքացիների ընկալումը ժողովրդավարական իշխանության երկրորդ տարելիցին ազատ ընտրված նախագահների օրոք (Այլվինը՝ Չիլիում, Կոլորը՝ Բրազիլիայում)
- 14.1. Վերաբերմունքները ժողովրդավարության լեզիտիմության ու արդյունավետության նկատմամբ և ակնկալիքները ապագայից. Ուրուգվայ, Արգենտինա, Չիլի և Բրազիլիա, 1995թ.
- 14.2. Վերաբերմունքը զինվորականության իշխանության նկատմամբ և զինվորականության նկատմամբ վստահությունը Արգենտինայում, Ուրուգվայում, Բրազիլիայում և Չիլիում, 1995թ.
- 14.3. Վերաբերմունքները քաղաքական ազատությունների ու վստահության նկատմամբ Չիլիում, Բրազիլիայում, Արգենտինայում և Ուրուգվայում, 1995թ.
- 14.4. Ժողովրդավարության՝ երկրում խնդիրները լուծելու կարողության ընկալումն ու վերաբերմունքը ժողովրդավարության նկատմամբ Ուրուգվայում, Արգենտինայում, Չիլիում և Բրազիլիայում (պատասխանողների տոկոսը)
- 14.5. Ժողովրդավարական «լեզիտիմության» և «արդյունավետության» տիպաբանությունը
- 14.6. Ուրուգվայի (Ու), Արգենտինայի (Ա), Չիլիի (Չ) և Բրազիլիայի (Բ) էմպիրիկ տեղադրումը լեզիտիմության ու արդյունավետության տիպաբանության մեջ 1995թ. (տոկոսներով)
- 15.1. «Ի՞նչ կարծիքի եք, արդյոք Գորբաչովի ղեկավարությունը լա՞վ էր, թե՞ վատ [պատասխանողի երկիր]-ի համար:
- 16.1. «Ընդդիմադիր բարոյական քաղաքացիական հասարակության» և «կայացած ժողովրդավարությունում քաղաքական հասարակության» տարբեր «լեզուները»

- 16.2. Քաղաքական կուսակցությունների իրական թիվը Լեհաստանի Սեյմում 1991թ. հոկտեմբերի ընտրություններից հետո
- 16.3. Լասկո-Տաագապերայի «իրական» քաղաքական կուսակցությունների ցուցիչը Լեհաստանի օրենսդրի նկատմամբ (1991թ.) համեմատած աշխարհում տևական խորհրդարանական, կիսանախագահական և նախագահական ժողովրդավարությունների օրենսդիր մարմինների հետ (1979-1989թթ.)
- 16.4. Կուսակցություններին հարելը հինգ արևելաեվրոպական երկրներում, 1990-1991թթ.
- 16.5. Խոշոր քաղաքական ինստիտուտների քննադատման տոկոսը, 1990թ. փետրվար, 1991թ. հոկտեմբեր, 1997թ. մայիս
- 16.6. Մի շարք արտակարգ միջոցառումներին աջակցությունը Լեհաստանում, 1-3 մայիս, 1992թ.
- 16.7. Ավտորիտար հակաքաղաքական տարբերակներին հավանություն տվող պատասխանողների տոկոսը Լեհաստանում, Չեխիայի Հանրապետությունում, Սլովակիայում, Հունգարիայում և Ավստրիայում, 1991-1993թթ.
- 16.8. Ժողովրդավարության վերաբերմունքային աջակցության համեմատությունը Լեհաստանում և Բրազիլիայում ի տարբերություն չորս կայացած ժողովրդավարությունների Ուրուգվայում, Բուսանիայում, Պորտուգալիայում և Հունաստանում
- 16.9. Տնտեսական համակարգին հավանություն տվող պատասխանողների տոկոսը և կառավարության ու նախագահի նկատմամբ նրանց վստահության աստիճանը. Արևելակենտրոնական Եվրոպայի վեց երկրներ, 1993թ. նոյեմբերից մինչև 1994թ. մարտ
- 16.10. Չայներ՝ համեմատած տեղերի հետ. կուսակցությունները, որոնք անցան և այն կուսակցությունները, որոնք չանցան Լեհաստանում սահմանված ընտրական շեմը 1993թ. սեպտեմբերի Սեյմի խորհրդարանական ընտրությունների ժամանակ (Ստորին պալատ)
- 16.11. 1993 թվականի սեպտեմբերի լեհական Սեյմի (Ստորին պալատը) ընտրությունների «Լիյվիհարտ» անհամամասնության ցուցիչը և աշխարհի 21 չընդհատվող ժողովրդավարությունների միջինը՝ ըստ ընտրական համակարգի, 1945 – 1980
- 17.1. Հունգարացիների գնահատականն իրենց անկում ապրող կյանքի որակի, հավասարության և անձնական քաղաքական արդյունավետության վերաբերյալ. հինգ երկրների համեմատություն, 1985թ. և 1989թ.
- 17.2. ԳԴՀ-ի ճնշիչ վարչակազմի հավատի քայքայումն առ այն, որ իրավունք ունեն ուժ կիրառելու պետության հայտարարած անօրինական բողոքների դեմ
- 17.3. ԳԴՀ ճնշիչ վարչակազմի անդամների պատասխանը ստորև տրվող հարցին՝ «Այն ժամանակ ո՞րն էր ձեր կարծիքն այն մասին, թե ինչ առավել կարևոր դասեր է պետք քաղել Տիանանմեն հրապարակի՝ 1989թ. հունիսի իրադարձություններից»
- 17.4. Նախընտրելի պետական ձևերը (1991թ. նոյեմբեր-1992թ. հուլիս) Չեխերի Երկրում (ՉՉ) և Սլովակիայում (ՍՀ) (տոկոսներով)



- 17.5. «Եզրափակիչ» ընտրությունները Չեխոսլովակիայում 1992թ., կուսակցական ձայներու տեղեր ժողովրդական դաշնային պալատում և ազգերի պալատում՝ համեմատած այն ձայների հետ, որոնք անհրաժեշտ էին Ազգությունների պալատում արգելադրելու ժողովրդական պալատի կողմից ընդունված ցանկացած նշանակալից, դաշնության հետ առնչություն ունեցող օրենսդրություն
- 18.1. Չառուշեսկուի վարչակարգի տապալումից առաջ ընկած ժամանակաշրջանում հասարակական կարծիքի վրա ազդող ամենակարևոր գործոնների գնահատումը
- 20.1. Բալթյան ժողովրդագրությունը. 1920-ականները և 1930-ականները՝ ընդդեմ 1980-ականների
- 20.2. Էստոնացիների, լատվիացիների և ոչ էստոնացիների ու ոչ լատվիացիների (ռուսերեն խոսողները) ինքնությունները Բալթյան երկու հանրապետություններում, երբ նրանք ԽՍՀՄ-ի մաս էին կազմում (1990թ., հունիս-օգոստոս), և անկախությունից հետո (1992թ.)
- 20.3. «Որքա՞ն էք Դուք հպարտ՝ լինելով հանրապետության բնակիչ»։ Բալթյան երկրներում ազգային խմբերի պատասխանները. 1990թ.
- 20.4. Բալթյան տարբեր ազգությունների վերաբերմունքը ԽՍՀՄ-ի հետ Բալթիկայի ապագա քաղաքական հարաբերություններին. 1990թ., հուլիս-օգոստոս
- 20.5. Լեզվի իմացությունը Բալթյան հանրապետություններում (1992թ. հարցազրույցներ)՝ ըստ հարցման ընթացքում օգտագործված լեզվի
- 20.6. Նախկինում, այժմ և հինգ տարի անց կառավարման համակարգի հանդեպ վերաբերմունքները. էստոնացիներ, լատիշներ և ոչ Բալթյան ազգեր, 1993թ.
- 20.7. «Կարո՞ղ եք ասել, որ նախկին խորհրդային համակարգի համեմատ մեր ներկա համակարգն «ավելի լավն» է, «հիմնականում նույնն» է կամ «ավելի վատն» է
- 20.8. «Հետևյալ պնդումներից որո՞նք են ամենից շատ համապատասխանում Ձեր տեսակետներին առ այն, թե ով իրավունք ունի քվեարկելու խորհրդարանական ընտրությունների ժամանակ»։ Բալթյան ազգությունների տարբերակված պատասխանները
- 20.9. Պետություն, ազգ և ժողովրդավարություն ստեղծելու ռազմավարությունների տիպաբանությունը բազմազգ պետություններում
- 21.1. ՀՆԱ, արդյունաբերական թողարկում և սղաճի գազաթնակետ, հետկոմունիստական երկրներ, 1989-1995թթ.
- 21.2. Դրական վերաբերմունքներն արտահայտող տոկոսները՝ կոմունիստական և հետկոմունիստական տնտեսական ու քաղաքական համակարգերի համեմատություն. պատասխաններ Արևելակենտրոնական Եվրոպայի 6 երկրներից
- 21.3. Ապրանքների տնտեսական զամբյուղի և ապրանքների քաղաքական զամբյուղի ոչ համարժեք ընկալումները կոմունիստական համակարգում և ներկա համակարգում Արևելակենտրոնական Եվրոպայի 6 երկրներում
- 21.4. 26 հետկոմունիստական Եվրոպական երկրների գնահատականները «Ֆրիդըմ հաուզի» քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների սանդղակով 1993 թ-ի համար

- 21.5. Հետկոմունիստական Եվրոպայի ժողովրդավարական շեմի համեմատական գնահատում. Արևելակենտրոնական Եվրոպայի, նախկին Խորհրդային Միության և նախկին Հարավսլավիայի երկրներ (1993թ.)
- 21.6. Ռուսաստանում 1994թ. վերաբերմունքը 1991թ. ԽՍՀՄ-ի կազմալուծման նկատմամբ
- 21.7. Հին և նոր քաղաքական համակարգերի նախընտրությունները Ռուսաստանում և Լեհաստանում 1992թ. հունվար-փետրվարին
- 21.8. Ռուսների վերաբերմունքը նախկին կոմունիստական համակարգի վերականգնման նկատմամբ, 1994թ. ապրիլ

ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 19.1. Պերեստրոյկայի ժամանակաշրջանի Խորհրդային Դաշնությունը. հակասական կառույցների, սկզբունքների և շահերի համագոյակցությունը
- 19.2. Միխայիլ Գորբաչովի արտահայտությունները մրցակցային ժողովրդավարության մասին. 1987-1991թթ.

## Այբբենական ուղեցույց

Աբխազիայի Բնքնավար Հանրապետություն, 501  
 Ազիլար Ֆերնանդես Պալումա, 129 ծ.3  
 Ազուերո Ֆելիպե, 156, 171, 259  
 Ադրբեջան, 506, ԱՊՀ, 509 ծ.6.2, ազգային գտումներ, 480  
 Ազատ նախաձեռնությունների ցանց, 399, 411  
 ազատականացում, 21, 137, Բրազիլիայում, 229, 230, 276, Բուլղարիայում, 445, 446, Չեխոսլովակիայում, 108, 110, 317 ծ.9, Լեհաստանում, 350, Ռումինիայում, 456, ԽՍՀՄ-ում, 317, 482, 491, 493, 497, 505  
 «ազատություն մի հարվածով», 152, 169, 209  
 ազգ 38, տարբերություններ պետությունից 45, Վերերի գաղափար, 45  
 ազգակերտման նման պետութենահենք, 45, 57-59, ուժացում, 58, Ֆրանսիայում, 57  
 ազգային գյուղացիական կուսակցություն, 472  
 ազգային պետության կառուցում, 561, 556, Էստոնիայում, 538-542, 550, Լատվիայում, 541, 542, 550  
 ազգային պետություն, 39, 44, ուժացում, 556, ոչ ներդաշնակ միջավայր, 56, դիսկուրս, 538-542, առաջացում, 46, միատարրություն, 49, քաղաքական ինքնություններ, 541, 542, հակասություն ժողովրդավարության տրամաբանության հետ, 317, 523, 550, 551  
 ազգային փրկության խունտա, 168  
 ազգային-ազատական կուսակցություն, 472, 476 ծ.54  
 «ազգայնականացնող պետական քաղաքականություն», 49, 63  
 ազգայնականություն, 528, 549, 561 ծ.1, բասկեր, 39, 54, 141-155, Կատալոնիայում, 39, 54, հինդու, 62, Ռումինիայում, 475-479  
 ազգայնականությունը որպես ազատագրում, 508  
 ազգի կերտում, 39, 43-47, 151, Բալթիկայում, 548, 553-560, չվերամիավորված տարածք, 51, խորհրդային պետություն, 535  
 Ալբանիա, 13 ծ.9  
 Ալժիր, 354 ծ.29  
 Ալիվիզատոս Լիկոս, 187  
 Ալլամանդ Անդրես, 288, 290 ծ.26  
 Ալմոնդ Գերրիել, 71 ծ.8

Ալմոնդ Մարկ, 459 ծ.11  
 Ալվարես Մալք, 247 ծ.34  
 Ալֆոնսին Ռաուլ, 13 ծ.8, 206, 260-265, 269-270, 271-272, 295  
 Ալերման Բրյուս, 121 ծ.25  
 Ակունա Կառլոս, 262 ծ.7, 264 ծ.10, 269 ծ.16  
 ահաբեկիչների քաղաքական մեկուսացում, 151  
 ամբողջատիրական վարչակարգեր, 66, 70, 88, 89, 337, քաղաքացիականների կողմից առաջնորդվող վարչակարգեր, 104-106, ի տարբերություն ավտորիտարության, 388, գաղափարախոսություն, 69, տնտեսական հասարակության վրա ազդեցություն, 328, «գործ տալ», 333, «ինստիտուցիոնալ բազմակարծություն», 70, 73, դեկավարություն, 77, 78, ժառանգություն, 89, 103, 532, գործուն պետական ժառանգություն, 332, զինվորականություն, 103, 104, դուրս գալու ուղիներ, 388 ծ.1, գործողություններ, 157, պետութենականության խնդիր, 50, անցման դաշինք, 99  
 Ամերիկայի Միացյալ Նահանգներ. արտաքին քաղաքականություն Չիլիի նկատմամբ, 110, ներգաղթածների հանդեպ քաղաքականություն, 540, անցումների հանդեպ քաղաքականություն, 115, որպես «պետություն-ազգեր», 62  
 ամերիկյան դիտորդ, 9 ծ.2  
 Ամին Իդի, 467  
 Այզենշտադտ Ս. Ն., 484 ծ.8  
 Այլվին Պատրիցիո, 277-281, 278 ծ.5, 283, ժողովրդականություն, 288, 289, 291, 292, պատասխան զինվորականության արտոնություններին, 291  
 «անարդար կերպով հետապնդման ենթարկվածների պաշտպանության կոմիտե», 421  
 «անգիտության շղարշ», 354  
 Անդերսոն Բենեդիկտ, 46, 49  
 Անդորկա Ռուդոլֆ, 392 ծ.9  
 Անդրես Պերես Կառլոս, 275 ծ.30  
 Անդրոպով Յուրի, 492  
 անգուսպ անձնական իշխանություն, 86  
 Անթալ Յոժեֆ, 413  
 Անկախ Պետությունների Համագործակցությունում (ԱՊՀ), 508-509, քաղաքացիության քաղաքականություն, 552, 554, քաղաքացիա-

կան ազատություններ, 581, ի տարբերություն  
 Բալթյան երկրների, 552  
 անկուսակցական նախագահ, 373  
 անհավատարմություն, 216  
 անհատական իրավունքներ, 61, 506-509  
 «անորոշ արդյունքներ ունեցող որոշակի ինստի-  
 տուտների», 407  
 «անվանադիր ազգություն», 48, 58, 338  
 Անտոնեսկու գեներալ Բոն, 476 ծ.54  
 անցման դաշինք, 90,99, բացակայություն, Արգեն-  
 տինայում, 262, Բրազիլիայում, 101, քաղաքա-  
 ցիականների կողմից առաջնորդվող վարչա-  
 կարգեր, 106, չորս խաղացողով խաղ, 95, 99,  
 351, Հունգարիայում, 101, 389, 404-408, ուժային  
 դիրք, 183, 391, չափավոր, 90, Մենկլոյայի  
 դաշինք, 131, 233, Լեհաստանում, 339, «կոբ-  
 սեղան» քննարկումներ, 295, Իսպանիայում 127,  
 ամբողջատիրական վարչակարգեր, 99, երկու  
 խաղացողով խաղ, 99  
 անցման նախաձեռնություն, 107, ժամանակա-  
 վոր կառավարություն, 108, Պորտուգալիայում,  
 166-171, 180  
 Անցում դեպի ժողովրդավարություն. քաղաքա-  
 ցիականների կողմից առաջնորդվող վարչա-  
 կարգեր, 104-106, Չիլիում անցման արգելքներ,  
 284-290, 337, Իսպանիայում անցման իրակա-  
 նացում, 90, 101, 130, 132-138, արտահայտու-  
 թյուններ, 21, 282, Վարշավյան դաշինքի դժվար  
 նախաձեռնություն, 317, արտաքին գործոններ,  
 109, 119, չորս խաղացողով խաղ, 95, «անգի-  
 ջումներ» և «չափավորներ», 90, բարձրաստի-  
 ճան զինվորականություն, 206, ներառական  
 ընտրություններ, 139, ոչ բարձրաստիճան  
 զինվորականության կողմից նախաձեռնու-  
 թյուն, 167-169, 177, Իսպանիայում վարչակարգի  
 նախաձեռնություն, 128, նախաձեռնություն,  
 107, 331, տևողություն, 231, դաշինքներ, 89, 90,  
 95, կարևոր ճնշում, 157, նախագահական, 296,  
 քաղաքացիության խնդիր, 54, տնտեսական  
 կատարողականի դեր, 115-120, ժամանակավոր  
 կառավարության դերը, 107, զինվորականու-  
 թյան դեր, 101, 102, «համաձայնեցված անցում»,  
 165, երկու խաղացողով խաղ, 99  
 աշխատավոր դասի գաղթողներ, 536  
 Աշխատավորական կոլեկտիվների միացյալ  
 խորհուրդ, 530  
 աշխատավորների ինքնակառավարում. տե՛ս  
 Հարավսլավիայում «աշխատավորների ինքնա-  
 կառավարում»  
 ապամբողջատիրացում, 83, «ըստ ընտրության»  
 (կամավոր), 83, 491, «ըստ քայքայման», 83, 491,  
 492, հասարակության հաղթանակով, 83

ԱՊՀ, 509 ծ.62, հարկադրված քաղաքացիական  
 ազատություն, 576, ոչ ժողովրդավարական կա-  
 ռավարություն, 561, 579 ծ.18  
 առանձնացում, 81  
 Առաջին համաշխարհային պատերազմ, հաշ-  
 տության պայմանագրեր, 47  
 Ասնար Խոսե Մարիա, 149  
 Աստորի Դանիլո, 218  
 ավարտված անցման պահանջները, 151  
 Ավես Ջոնաթան, 506  
 Ավստրիա. փորձ հոգուտ Գերմանիայի, 45 ծ.16,  
 120, ժողովրդավարության փլուզում, 120, ար-  
 դյունավետության և լեգիտիմության կապ, 572  
 ծ.15, խորհրդարանական համակարգ, 380  
 Ավստրոհունգարական կայսրություն, 55, 112  
 ավտորիտար կուսմունքով, 339  
 ավտորիտար համակարգ. համեմատած հե-  
 տամբողջատիրության հետ, 431, ոչ վարչա-  
 կարգային վերնախավերի ներգրավմամբ, 78,  
 սահմանում, 67 ծ.1, տարբերություններ, 109,  
 մարդու իրավունքների խախտումներ, 334,  
 գաղափարախոսություն, 69, ղեկավարություն,  
 69, 71, մոբիլիզացում, 71, վարչակարգի ամենա-  
 տարածված (մոդալ) տիպ, 67, Լեհաստանում,  
 70, 339-347, 399, 583, զինվորականության դեր,  
 99, 100, Իսպանիան՝ որպես ավտորիտար վար-  
 չակարգ, 156-161, ինքնաբերական գործողությու-  
 ններ, 157, պետութենականության խնդիր, 50,  
 անցման ուղիներ, 88  
 ավտորիտար սահմանադրական միապետու-  
 թյուն, 112  
 Արատո Էնդրյու, 29 ծ.7, 398, 415  
 Արաֆաթ Յասիր, 52 ծ.24  
 Արգենտինա, 13, 50 ծ.23, 102 ծ.1, 206, 276, դա-  
 շինքի բացակայություն, 261, վերաբերմունք  
 ժողովրդավարության նկատմամբ, 266, 297-301,  
 ժամանակավոր կառավարության վերացում,  
 261, բուրժուազիա, 267-269, քաղաքացիություն,  
 272, քաղաքացիական հասարակություն, 259,  
 սահմանադրության մշակման միջավայր, 123,  
 սահմանադրականություն, 272, սահմանադ-  
 րական վերանայում, 273, 274, ի տարբերու-  
 թյուն Բրազիլիայի, Չիլիի կամ Ուրուգվայի,  
 258, 262, ի տարբերություն Հունաստանի և  
 Պորտուգալիայի, 259-262, պարտքի ճգնա-  
 ժամ, 228, 265, 294, ինչպես «պատվիրակված  
 ժողովրդավարություն», 274, 295, 517, տնտե-  
 սական հասարակություն, 272, ընտրություն-  
 ներ, 258, 260, 266, 269, 274, բարձրաստիճան  
 զինվորականներ, 106, 258-260, մարդու իրա-  
 վունքների խախտումներ, 262, 263, 301, 334,  
 գերսղան, 266, գաղափարախոսություն, 258,

անհնարին խաղ, 266-271, միջժամանակային մոտիվացում, 271, ներգինվորական դիվիզիաներ, 259, Մավվիյան կղզիների ներխուժում, 260, 261, 269, գինվորականություն-ինստիտուտ, 263, գինվորականության ինքնավարություն, 300, գինվորականության պարտություն, 259, գինվորականության դատավարություններ, 262, գինվորական խռովություններ, 262, 285, նորագատական մոտեցումներ, 265, կուսակցությունները՝ որպես շարժում, 269, 270, պերունականություն, 115, լեզվի սիմբոլիկական քաղաքատնտեսություն, 264-266, 275, քաղաքական կուսակցություններ, 229, 261, 262, քաղաքական հասարակություն, 263, 272, Գերագույն դատարանի քաղաքականացում, 272, նախագահականություն, 273, 516, մասնավորեցման գործընթաց, 253, ժողովրդավարության որակ, 271, «անկման» հարց, 259, 261, օրենքի իշխանություն, 267-272, 301, կայունացում, 131 ձ.8, 263, գործադուլ, 263, արհմիություն, 263, 265, 270, բռնություն, 258, 262, 269

արդյունավետությունը Բրազիլիայում, 229, Ուրուգվայում, 223-225

Արևելյան Գերմանիա. տե՛ս Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն

Արժույթի միջազգային հիմնադրամ, 475

Արիագադա Ձենարո, 290 ձ.26

Արիաս Նավառո Կառլոս, 135 ձ.12, 136

Արմատականների կուսակցություն, 266, 267, 269, 270

Արտաքին քաղաքականություն. Տե՛ս միջազգային ազդեցություն, արտաքին քաղաքականություն

ացման ուղիներ, 66, 69, 88, ավտորիտար վարչակարգ, 68, 69, հետաժողջատիրական վարչակարգերի առկայություն, 390, սուլթանական վարչակարգերի առկայություն, 86, պլեբիսցիտային «ազգային ազատագրվում», 505, հետկոմունիստական Եվրոպա, 334

Ա.Ֆոլանստան, 565

Ա.Ֆրիկա, «մեկ կուսակցության» պետություն, 113

բազմազգ պետություն. ուժացում 554-558, Բելգիայում, 47, հակամարտություն պետության կերտման հետ, 62, փոխհամաձայնեցված կարգավորումներ, 555, 556, ժողովրդավարություն, 42, 48, 53-63, ընտրական հաջորդականություն, 61, 299, 529, 530, 539, 547, քաղաքական ինքնություն, 62, ընդհանուր «տանիք», 63, Իսպանիա, 128, 138-147

բազմալեզու պետություն, 55, 56, Իսպանիա, 128

բազմակարծություն, 66, ավտորիտար վարչա-

կարգերում, 72, Բրազիլիայում, 331, 332, Բուրդարիայում, 447-50, Չեխոսլովակիայում, 418, 420, 426, հետաժողջատիրական վարչակարգերում, 73-78, ԽՍՀՄ-ում, 499, 504, 505

բազմամշակույթ պետություն, 55, 548, ուժացում, 536

Բայթլ Խորխե, 214 ձ.11

բաժանված պետություններ, 43 ձ.8, 45

Բալթյան երկրներ, 522-536

բալթյան պետություններ. Ուժացում, 536, 541, 547, 548, անցյալի և ապագայի վերաբերյալ վերաբերումը, 543, քաղաքացիության քաղաքականություն, 532-537, 546-549, կոմունիստական կուսակցություններ, 529, ի տարբերություն ԱՊՀ-ի, 552, 553, ժողովրդագրական փոփոխություն, 524-525, ընտրություններ, 528-530, հեռանալու տարբերակ, 554, ինտեգրում ԽՍՀՄ, 527-530, «չմիավորված շրջան», 549, լեզվական քաղաքականություն, 537, ազգային պետության դիսկուրս, 537-542, 1989 թ-ի ընտրությունները ԽՍՀՄ-ում, 497, Գորբաչովի բարեփոխումներին ընդդիմադիր, 407, ռուսների քաղաքական ինքնություն, 533-538, 541, 542, քաղաքական կուսակցություններ, 528-530, ժողովրդական ճակատ, 528-531, ռուսախոս կոմունիստներ, 530, անջատում ԽՍՀՄ-ից, 481 ձ.3, ազգի և պետության կազմավորում, 428-430, ժողովրդավարության ու անկախության անցում, 531, համաձայնագիր Ռուսաստանի հետ, 531, աշխատավոր դասի գաղթողներ, 536

Բալցերովիչ Լեշեկ, 357

«Բասկ ազգային կուսակցություն» (PNV), 150, 154

Բասկերի ազգայնականություն, 39, 43, 144-157

Բասկերի երկրում, 141-149, Բրազիլիայում, 237-240, ժողովրդավարության համար ծառանցություն, 153, պայքար ժողովրդավարության համար, 152

Բատիստա Ֆուլգենսո, 470

«Բարեփոխումների աջակցության ոչ կուսակցական բլոկ» (BBWR), 382

բարձրաստիճան գինվորականություն, 101-103, Արգենտինայում, 112, 218, 258-260, Բրազիլիայում, 228-231, Չիլիում, 103, 105, 117, 204, 278, Հունաստանում, 182, 183, անցման նախաձեռնություն, 110, սպայական կորպուս, 102, հեղաշրջման տեսակետի հնարավորություններ, 172, բարձրաստիճանների վերահաստատում, 173, Հարավային Ամերիկա, 226, 294, Ուրուգվայում, 209

Բարրաքլաու Ջեֆրի, 44 ձ.11

բացառող փոխհամաձայնեցված ավտորիտարություն, 104

- Բեթիել Նիկոլաս, 342  
 Բելառուսիա. քաղաքական և տնտեսական համակարգի նկատմամբ վերաբերմունք, 570-586, կաթոլիկ եկեղեցի, 326, Անկախ Պետությունների Համագործակցություն (ԱՊՀ), 509 ձ.62, նախկին կոմունիստներ, 506, ինքնիշխանություն ԽՍՀՄ-ից, 497  
 Բելգիա, բազմազգ պետության կերտում, 47  
 Բենդիքս Ռայնհարդ, 244 ձ.30  
 Բենթլի Արթուր, 70  
 «Բեսելյո», 396  
 Բերման Յակոբ, 343  
 Բերմոնդյան եռանկյունի, 376, 377  
 Բերոն Պետար, 449 ձ.147  
 Բիպեր Սևերին, 484 ձ.10  
 Բիերուտ Բոլեավալ, 343  
 Բինգեն Դիտեր, 341 ձ.4  
 Բինյուն Ռենալդո, 260  
 Բիսմարկ Օտտո Ֆոն, 47  
 «Բլանդոս», 391  
 «Բլանկո» կուսակցություն, 210, 213-218, 227 ձ.40  
 Բյուրոկրատական քաղաքականություն, 71  
 Բյուրոկրատական-ավտորիտար վարչակարգ, 115, 209, 268  
 Բոլիվիա, 11  
 Բոկասա Ջին-Բեդել, 83, 456, 467  
 Բոսնիա-Հերցեգովինա. «Էթնիկ գտում», 58, սերբական իռեդենտա, 580  
 Բոտեզ Միհայել, 462  
 Բորջիա Չելլո, 242 ձ.26  
 Բուարկե դե Օլանդա Շիկու, 242 ձ.25  
 Բուլղարիա, 13, 157, 322, հակաքաղաքական, 418, 425, քաղաքական և տնտեսական վարչակարգերի հանդեպ վերաբերմունք, 574, հեղափոխության հանդեպ վերաբերմունք, 447 ձ.143, Բուլղարիայի կոմունիստական կուսակցություն, 446, կաթոլիկ եկեղեցի, 324, քաղաքացիական հասարակություն, 389, 400, 401, 415, 456, կոմունիստական կուսակցություն, 389, 399-419, շարունակականություն անցյալի հետ, 448, ի տարբերություն Հունգարիայի և Չեխոսլովակիայի, 441, 445, «Մուգ կապույտներ», 449, ժողովրդավարության կայացում, 440, ժողովրդավարական «գերկատարողական», 450, վաղ հետամբողջատիբական վարչակարգ, 311, 388, 389, 451, տնտեսական հասարակություն, 452 ձ.153, ընտրություններ, 389, 446-451, մտավոր կապիտալ, 451, ազատականացում, 445, 447, «Բաց կապույտներ», 449, «Աքրաման» խնդիրներ, 334, պալատական հեղաշրջում, 443, խորհրդարանական, 450, ԽՍՀՄ-ի ընկալում, 445, 446, բազմակարծություն, 441, «ուստիկանության գործակալներ», 448, քաղաքական կուսակցություններ, 328-329, 411, 418, քաղաքական հասարակություն, 389, 393, համամասնական ներկայացուցչություն, 450, վարչակարգի կողմից վերահսկվող անցում, 390, 403, 440, 447, վերակազմավորման վարչակարգ, 337, պատասխան Գորբաչովի բարեփոխումներին, 319, ժողովրդավարական ընդդիմության դերը, 441, 444, «Կլոր սեղան» բանակցություններ, 391, 445, 446, Ռուսի աջակցության կոմիտե, 442, կիսանախագահական, 450, ստալինիզմ, 442, արհմիություն, 443, թուրքական փոքրամասնություն, 450, ժողովրդավարական ուժերի միություն (UDF), 447  
 Բույակ Զբիգնև, 354 ձ.28  
 Բուրքիարդո Յ., 44 ձ.10  
 Բրազուսկաս Ալգիրդաս, 530  
 Բրազիլիա, 13, 22 ձ.1, 27, 51, 224, 276, 486 ձ.14, «մուտք» (abertura), 231, չունենալ պետութեանականության խնդիր, 228, վերաբերմունքը ժողովրդավարության նկատմամբ, 230, 235-341, 297-301, ավտորիտար նախորդ վարչակարգի տիպ, 228, «խաչանական մոդելի» առկայություն, 166, քաղաքացիություն, 229, 235, 246, քաղաքացիական հասարակություն, 27, 229, 231, 239, 244, 245, 255, 256, Սահմանադիր ժողով, 232, 235, 295, Սահմանադրության մշակման միջավայր, 232, սահմանադրականություն, 229, ի տարբերություն Հունաստանի, 235, պարտի ճգնաժամ 256, 295, քաղաքական իրավունքների գրկում, 54, դժվար կայացում, 228, 247, 256, «ուղղակի ընտրություններ հիմա» (Diretas Ja), 231, տնտեսական հասարակություն, 244, 256, արդյունավետություն, 229, ընտրություններ, 231, 250, դաշնայնություն, 228 ձ.1, բարձրաստիճան զինվորականներ, 228-230, եկամտների բաշխում 228, 238, օրենսդրությունները հակամարտություն, 235, անցման տնտեսություն, 230, ազատականացում, 230, 276, զինվորականության ինստիտուտ, 232, զինվորականության ինքնավարություն, 232, 300, կուսակցական անկարգապահություն, 251 ձ.40, լեգիտիմության քաղաքատնտեսություն, 228, 230, քաղաքական կուսակցություններ, 229, 233, 236, 248, 249-252, քաղաքական հասարակություն, 229, 234, 235, 244, 246, 248, 256, նախագահականություն, 232, 233, 247, 248, 520, ռազմավարության մասնավորեցում, 252, համամասնական ներկայացուցչություն (ՀՆ), 250, «վարչակարգի զիջում ու հասարակական նվաճում», 230, կաթոլիկ եկեղեցու դեր, 584, օրենքի գերակայություն, 229, 239, 244, 245, 257, ան-

- վտանգության անձնակազմ, 230, կայունացում, 131 ձ.8, 233, 246, 252 ձ.42, 256, «պետության դերի նվազեցում», 242-252, գործուն պետություն, 239, 244, 252, բռնություն, 240-241
- Բրաուն Արչի, 71 ձ.8, 489, 513 ձ.69, 518 ձ.84
- Բրատտոն Մայքլ, 99 ձ.6
- Բրեդլի Ջոն Ֆ.Ն., 431
- Բրեժնև Լեոնիդ. ապամբողջատիրականացում «որպես քայքայման հետևանք», 492
- Բրեժնևյան դոկտրին, 315, 323, 400
- Բրեմեր Յան, 508
- Բրեստեր Պերեյրա Լուիս Կառլոս, 229 ձ.4
- Բրիտանական կայսրություն, ժողովրդավարացում, 113
- Բրուքեյքր Ռոջերս, 49, 50, 523 ձ.4, 523 ձ.5
- Բրուդնի Իցհակ Մ., 515
- Բրունո Թոմաս, 177 ձ.33, 181
- Բրուստ Լաալո, 375, 404 ձ.35, 405, 405 ձ.36, 406 ձ.38, 407
- Գալտիերի Լեոպոլդո, 260
- գաղափարախոսություն, 66, Արգենտինայում, 139, ավտորիտար վարչակարգերում, 76, Կոմունիստական կուսակցության վերնախավ, 324 ձ.19, Չեխոսլովակիայում, 421, 431, Հունգարիայում, 394, Լեհաստանում, 339, 340, 343, հետամբողջատիրական վարչակարգերում, 69, 78-79, 387, Ռումինիայում, 466, 467, 478, սուլթանական վարչակարգերում, 81, 82, 87, ամբողջատիրական վարչակարգերում, 69, 79, ԽՍՀՄ-ում, 114, 315, 316, 491, 492
- գաղութային իշխանություն, 42
- Գամախուրդիա Ջվիհադ, 501
- Գայդար Եգոր, 514
- Գայզել Էռնեստո, 182 ձ.1, 230
- Գառետոն Անտոնիո, 282
- Գասթրիլի Ռեյմոնդ Դ., 40 ձ.4
- Գատի Չարլզ, 322, 392 ձ.8, 394 ձ.13
- Գարիբալդի, 47
- Գարսիա Պրուդենսիո, 260 ձ.4
- Գարսոն Աշ Թիմոթի, 316, 404, 422, 588 ձ.29
- Գելներ Էռնեստ, 46 ձ.18, 49, 57, 83 ձ.18
- գեներալ Գուլբերի դո Կուտո Է Միլվա, 230
- գեներալ Գուտիեռես Մեյադո, 134
- գեներալ Յարուզելսկի, 343, 348, 349, 350, 352, 353, 358
- Գենով Էդվարդ, 442
- Գերեկ Էդվարդ, 343, 350
- Գերեմեկ Բրոնիսլավ, 17, 352
- Գերմանիա. ժողովրդավարության փլուզում, 112, ժողովրդավարական անցում հաստատման միջոցով, 110, արդյունավետության և լեզիտիմության կապ, 572 ձ.15, ազգակերտում, 48
- Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, 13 ձ.9, 45, 49, 491, քաղաքացիության քաղաքականություն, 539, արտաքին քաղաքականություն Պրոտոկոլայի նկատմամբ, 111
- Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն, 13 ձ.9, 28, 316, 333, վաղ հետամբողջատիրական վարչակարգ, 390 ձ.4, 493, սառեցված հետամբողջատիրական վարչակարգ, 72, 82, 337, անցման նախաձեռնություն, 325 ձ.21, գտման խնդիրներ, 335 ձ.40, պետության կուսակցական տիրապետում, 332, 333, բողոքական այլախոհներ, 326, 532, պատասխան Գորբաչովի բարեփոխումներին, 322, «Շտագի» գործեր, 335 ձ.39, պետութենականության խնդիր, 480
- Գերմանիայի Սոցիալիստական համախմբվածության կուսակցություն, 291 ձ.28
- Գերյո Էռնո, 392
- Գիբսոն Էդվարդ, 269 ձ.16
- Գիզիկիս Ֆայեդոն, 183
- Գիտությունների ակադեմիայի համակարգեր, 327
- գյուղացիական կուսակցություն, 354, 379
- Գոմեշ Միոռ, 254
- Գոմուկա Վլադիսլավ, 342, 343, 346, 347
- Գոնսալես Լուիս, 209 ձ.3, 210 ձ.5, 215, 216, 222 ձ.30, 224 ձ.32
- Գոնսալես Ֆելիպե, 138, 221
- Գոնսալվիշ Վաշկո, 169
- Գոնց Արփադ, 415
- Գորբաչով Միխայիլ, 22 ձ.1, 134, բարեփոխումների հայտարարություն, 319-323, ազատականացման որոշում, 495, հեռացում, 492, հունգարական անցում, 399, ընտրական հաջողականություն 563, ազգության քաղաքականություն, 482, սահմանադրական փոփոխությունների արհամարհանք, 563, պերեստրոյկա, 482, լեհական ժողովրդավարություն, 356, 358, 384, հանրաքվե, 503, Ելցինի հետ պայքար, 512, ընտրությունների օգտագործում, 489
- Գորբունով Անատոլի, 530, 532
- «գործ տալու» ժառանգություն, 334
- գործող անձ, 134
- գործող անձանց կենտրոնացած փոփոխականներ, 101
- Գուաման Խայմե, 153
- Գվատեմալա, 9 ձ.2, 22
- Գրահամ Լոուրենս Մ., 172
- Գրամշի Անտոնիո, 282, հեգեմոն, 315, 345
- Գրինֆիլդ Լիա, 45 ձ.13

Գրոս Կարոյ, 402, 403  
 Գրոս Յան Տումաշ, 343 ծ.8, 355

դա Սիլվա Լուիս Բզնայիո «Լուլա», 256  
 Դահլ Ռոբերտ Ա., 34 ծ.16, 42, 210 ծ.5, 324, բազմիշխանության «փնտիտուցիոնալ երաշխիքներ», 68 ծ.4, 556  
 Դայմոնդ Լարրի, 115 ծ.16  
 դաշինքներ. տե՛ս անցման դաշինքներ  
 դաշնայնություն. Բրազիլիայում, 228 ծ.1, 256, ժողովրդավարություն, 54, բազմազգ քաղաքականություն, 555, Իսպանիայի կիսադաշնային պետություն, 143, ԽՍՀՄ-ում, 481, 483-486, 492, 510  
 «դաշնությունահենք բարեփոխում, դաշնությունահենք ապահարզան» 95, 139  
 դե Բրիտո Ալեխանդրա Բարաոնա, 102 ծ.1  
 Դեմ Գեորգիու, 457  
 դեմոս, 38, 50, 51, սահմանում, 52, բազմազգայնական քաղաքականություն, 554  
 դը Գու Շառլ, 292, 458  
 դի Պամա Ջուզեպպե, 22 ծ.1, 133, 469 ծ.39  
 Դիամանդուրոս Փ. Նիկիֆորոս, 182, 187 ծ.13, 190 ծ.18  
 Դիլաս Միլովան, 340 ծ.1  
 Դիմիտրով Դիմիտր, 445 ծ.137, 446  
 Դիմիտրով Ֆիլիպ, 449  
 Դյուվալիե «Պապա դոկ», 9 ծ.2, 83  
 Դյուվերթե Մորիս, 369  
 Դոբրե Կոնստանտինե, 462  
 Դոմինիկյան Հանրապետություն. սուլթանական վարչակարգ, 71 ծ.10, 80, ԱՄՆ արտաքին քաղաքականության նկատմամբ, 111  
 Դուբչեկ Ալեքսանդր, 317 ծ.9, 420  
 դուռը բացել ժողովրդավարական ջանքերի առջև, 110

Եգիպտոս, 113  
 Ելենսկի Ջ.Ա., 343 ծ.8  
 Ելցին Բորիս, 494, 512, անվատահություն քաղաքական կուսակցությունների հանդեպ, 328, բալթյան երկրներ, 530, 548, հակամարտություն օրենսդիր մարմնի հետ, 510, 513-517, Ռուսաստանի նախագահի ընտրություն, 501, Գերագույն Խորհրդի ընտրություն, 500, անուշադրություն սահմանադրական փոփոխություններին, 563, քաղաքական վերակառուցման անտեսում, 518, տնտեսական վերակառուցման գերակայություն, 509-517, ինքնիշխանություն, 508, Գորբաչովի հետ պայքար, 508  
 Եվրոպական տնտեսական համայնք, 476, Բալթյան երկրներ, 524, 531, 542, 548, 557, արտաքին

քաղաքականություն, 121, անցումը Հունաստանում, 121, 184, պերեստրոյկա, 384, 387, 388, 389, Լեհաստան, 367, անցումը Պորտուգալիայում, 188, 190, 224, Հարավային Եվրոպա, 192, 193, 314, անցումը Իսպանիայում, 142, 153, 314  
 Եվրոպայի խորհրդի ժողովրդավարության նորմեր, 63  
 «երևակայական հանրություն», 46  
 Երեյսատի, Տաստ, 254  
 Երիտասարդ ժողովրդավարներ, 399  
 Երիտասարդ ժողովրդավարների դաշնություն, 399  
 Երկու խաղացողով խաղ. տե՛ս «անցման դաշինքներ»  
 «Երկուշաբթի օրվա խմբակ», 464  
 «երկրորդային մշակույթ», 73  
 «Երրորդ ալիք» 22 ծ.1, 113 ծ.11, 128, 199

Ջալդիվար Անդրես, 290 ծ.26  
 Ջասպարիկ Վիկտոր, 507  
 զինված ապստամբություն, 107, անցման նախաձեռնություն, 107  
 Ջինված ուժերի շարժում (MFA), 164, 170, 173, 174  
 զինվորական հեղաշրջում. փորձ Իսպանիայում, 130, հեղաշրջում, 104, հակահեղաշրջման հնարավորություն, 172  
 զինվորական ղեկավարություն, դատավարություններ. Արգենտինայում, 262, 263, Հունաստանում, 186, Իսպանիայում, 130, Ուրուգվայում, 210, 211, 216, 285, 328  
 «զինվորականության արտոնություններ», 103, 156, Արգենտինայում, 296, Բրազիլիայում, 231, 297, Չիլիում, 278, 297, 298, Որոգվայում, 215  
 զինվորականություն. Արգենտինայում, 259-263, Լեհաստանում, 365, 370, 382, Պորտուգալիայում, 165, 346, հետամբողջատիրական վարչակարգ, 99, 101, պրոֆեսիոնալիզմ, 294-295, Ռումինիայում, 412, ամբողջատիրական վարչակարգ, 105, 106, Հարավսլավիա, 413  
 «զինվորականությունը՝ որպես ինստիտուտ», 99, 102, Արգենտինայում, 262, 286, Բրազիլիայում, 230, խմբային վարքագծային շահագրգռություն, 106, հեռանալ Հունաստան, 184, 185, մարդու իրավունքների խախտումներ, 103, դատավարությունների հանդուրժում, 104  
 «զինվորականությունը՝ որպես կառավարություն», 99, 102, 103, տարանջատման գին, 103, Ուրուգվայում, 210, 212-216  
 «զուգահեռ մշակույթ», 73  
 գտումներ պորտուգալական հեղափոխության ժամանակ, 179  
 Էթիկական քաղաքականություն, 25



«Էթիկական քաղաքացիական հասարակություն».  
տե՛ս Լեհաստան, «Էթիկական քաղաքացիական հասարակություն»

Էթնիկ ժողովրդավարություն, 553, Բալթյան երկրներում, 556, 557

Էթնոկրատիա, 94, 292

Էլ Սալվադոր, 9 ծ.2

Էլսթեր Ջոն, 31 ծ.10, 121 ծ.25, 433 ծ.106, 568 ծ.11

Էկոգլանոստ, 441, 450

Էկոլոգիական կուսակցություն, 476 ծ.54

Էյսֆելդ Ռայներ, 178 ծ.36

«Էնոսիս», 190

Էստոնիա. բռնակցում ԽՍՀՄ-ի կողմից, 524, վերաբերմունքն անցյալին և ապագային, 543-548, «սև բերետավորներ» զինվորական միավորումներ, 531, ժողովրդավարության քայքայում, 524, կոմունիստական կուսակցություն, 529-532

Էստոնիայի սոցիալ-դեմոկրատները, 550

«Էրրի Բատասունա», 141, 150

«ընտրական մոլորություն.» 22

ընտրական օրենքներ, 28, 250, դ՛ձոնդտի եղանակը, 381, Լեհաստանում, 366, 381-5. տե՛ս նաև համամասնական ներկայացուցչություն

ընտրականություն, 26

Ընտրություններ, 28, 131, Արգենտինայում, 258-61, 265, 269-70, 271, 273, Բալթյան երկրներում, 529-32, Բրազիլիայում, 231, 234, Բուլղարայում, 441, 446-52, Կենտրոնական Ասիայի Հանրապետություններում, 499, Չիլիում, 278-83, Չեխոսլովակիայում, 419, 432, տնտեսական կատարողականություն, 119, 120, Էստոնիայում, 525-32, Վրաստանում, 501, Հունաստանում, 185, 186, 187, 188, Հունգարիայում, 389-90, 403-404, ժամանակավոր կառավարություն, 107, 169, միջազգային դիտորդներ, 558, Լատվիայում, 525, 529-32, լեզիտիմության աստիճանակարգում, 565, Լիտվայում, 525, 529-32, Լեհաստանում, 353-364, Պորտուգալիայում, 164, 171, Ռումինիայում, 453, 472, 473-474, Իսպանիայում, 137, 138, 143-144, Ուրուգվայում, 211, 212, 214-5, ԽՍՀՄ-ում, 486, 488-489, 495, 497-504

ընտրությունների հերթականություն, 62, 480, միաժամանակություն ինչիդ, 563-4, Իսպանիայում, 480, 499, ԽՍՀՄ-ում, 480, 481, 489, 497, 499-503, Հարավսլավիայում, 497, 500

Ընտրությունների դիտորդներ, 561 ծ.1

Թայվան, 12 ծ.6, 41, 43 ծ.8, 202

«Թավշյա անջատում», 58, 325 ծ.21, Չեխոսլովակիայում, 418-423

Թեոչեր Մարգարետ, 285

Թիլլի Չարլզ, 40

«Թղթե» սահմանադրություն. տե՛ս սահմանադրությունների մշակման միջավայրը, «Թղթե» սահմանադրություն

թույլ կապվածության վարկած, 568-583

Թուրքիա, 84, ներխուժում Կիպրոս, 183

«Թռչող համալսարան» 348 ծ.19

Թրոման Դեյվիդ, 70

ժամանակավոր կառավարություն, 107-108

ժամանակի ընտրություն, 65, 138

ժեկև ժեյլու, 450

ժիվկով Տոդոր, 390, 442, 445, 448

ժիբինովսկի Վլադիմիր, 59

ժողովուրդն ընդդեմ բռնության, 437

ժողովրդականության վարչակարգ, ժողովրդականության պաշտոնավարողներից տարբեր, 574

ժողովրդավարական Միություն, 382

«ժողովրդավարական ուժերի միություն», 328

ժողովրդավարական Ռուսաստան, 494, 498, 512, 521

ժողովրդավարացման տեսություն, 310

ժողովրդավարացում, 22, 135, 159, ազգային պետության կերտում, 47, բարգավաճում, 116

ժողովրդավարության անկում Ավստրիայում, 119, կայացած ժողովրդավարություն, 24, Էստոնիայում, 523, Գերմանիայում, 119, Լատվիայում, 523, Լիտվայում, 523

ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունք, 297, օտարացած պատասխանողներ, 303, ավտորիտար պատասխանողներ, 303, մտահոգված ժողովրդավարներ, 304, 306, քննադատական ժողովրդավարներ, 304, ժողովրդավարության պատասխանողներ, 303, Արգենտինայում, 302-305, Բրազիլիայում, 237, 241-256, 295-306, Չիլիում, 277, 278, 295-306, Հունաստանում, 182, 183, Լեհաստանում, 375-379, Պորտուգալիայում, 165, 195-198, Հարավային Եվրոպայում, 200, 202, Իսպանիայում, 140, 195-199, Ուրուգվայում, 210, 211, 296-304, բավարարված ժողովրդավարներ, 304, անհանգստացած ժողովրդավարներ, 304

ժողովրդավարություն.պաշտպանություն, 142, փոխազդող համակարգ, 35, ինքնիշխան պետության անհրաժեշտություն, 39

ժունքուեյրա Արիստիդես, 246 ծ.32

ժուրկա, իմժեներ, 462

Դլիեսկու Իոն, 455, 471, 472, 474, 477, վերընտրություն, 475, 476, 477

Ինդունեզիա, 11

ինստիտուցիոնալ անորոշություն, 23  
 «ինստիտուցիոնալ բազմակարծություն». տե՛ս  
 տոտալիտարական վարչակարգեր, ինստիտու-  
 ցիոնալ բազմակարծություն  
 ինստիտուցիոնալացնելու անորոշություն, 495  
 ծ.31, 514  
 ինքնորոշում, 47  
 իռեդենտա, 51,416, Բալթյան երկրներում, 551-  
 556, Հունաստանում, 192, Սերբիայում, 584  
 Իռլանդիա,48, որպես խորհրդարանական հա-  
 մակարգ, 370  
 Իսլամ Բարիմով, 577 ծ.18  
 Իսլամ, 347  
 Իսլանդիա, խորհրդարանականություն, 369  
 Իսպանիա, 13, 50, 200, 202, ձախողված զինվո-  
 րական հեղաշրջում, 130, ժողովրդավարու-  
 թյան նկատմամբ վերաբերմունք, 153, 196-199,  
 որպես ավտորիտար վարչակարգ, 154-157, ժո-  
 ղովրդավարության հանդեպ վարքագիծ, 153,  
 ժողովրդավարության լավատեսություն, 120,  
 կաթոլիկ եկեղեցի,133, քաղաքացիություն, 55,  
 56, 59, կոմունիստական կուսակցություն, 132,  
 133, 139-142, սահմանադրության մշակում, 123,  
 139, 147, 161, 162, հիասթափություն, 130, 131  
 ծ.7, իշխանության հանձնում, 144, տնտեսական  
 գործոնները կայացման մեջ, 158-161, տնտե-  
 սական բարեփոխումներ, 195, ընտրություն-  
 ներ,144, ընտրական հաջորդականություն, 480,  
 499, քաղաքականության ուսումնասիրության  
 ապացույց, 116, Ֆրանկոյական ինստիտուտ-  
 ներ, 132, ներառական նշանակություն,140,  
 «Քաղաքականության բարեփոխումների մա-  
 սին» օրենք, 133, 134, 136-139, 144, 438, առաջ-  
 նորություն անցման մեջ, 133-139, անցման  
 օրինականություն, 132, 133, լեզվական քաղա-  
 քականություն Կատոլոնիայում, 57, Մոնկյոյայի  
 դաշինք, 131, 233, «Մուվիմիենտո նասիոնալ»,  
 335, խորհրդարանականություն, 196, 198,  
 քաղաքականության տնտեսության բարգա-  
 վաճում, 119, քաղաքականության ինքնություն,  
 62, քաղաքական կուսակցություններ, 151, 320,  
 քաղաքականության բարեփոխումների հեր-  
 թականություն 138, Կորտեսի դեր, 131-138, ԵՏՀ,  
 159, 294, քաղաքական հարաբերությունների  
 դերն անցման ժամանակ, 159, 178, NATO-ի դեր,  
 294, օրենքի գերակայություն, 331, միաժամա-  
 նակյա խնդիր, 562, պետութենականության  
 խնդիրներ, 142-152, 482, 510, ինքնավարության  
 մասին օրենսդրական ակտերի տեսք, 144-145,  
 151, ԷՏԱ-ի ահաբեկչություն, 147-153, 557  
 Իսրայել, փոքրամասնությունների կուսակցու-  
 թյուններ, 557

Իտալիա, 107, ֆաշիզմը որպես գաղափարախո-  
 սություն, 112, ազգակերտում, 47  
 «Իրականում սոցիալիզմ», 203, 328, 347  
 Իրան,16, որպես սուլթանիստական վարչակարգ,  
 71 ծ.10, 80, 469  
 իրավական բարեփոխումներ, 133  
 իրավական մշակույթ, 31  
 իրավունքների ու ազատությունների համար  
 շարժում, 447  
 Լասկոն-Թազեպերայի ինդեքս, 248 ծ.35, Լե-  
 հաստանում, 365, 385  
 Լագոս Ռիկարդո, 288, 290 ծ.26  
 Լազարաֆելդ Պոլ, տարածքի մասին հասկացու-  
 թյուն, 64, ղեկավարում 66, 105, ավտորիտար  
 վարչակարգ, 76, 77, Չեխոսլովակիա, 424, հե-  
 տամբողջատիրական վարչակարգում, 76, 79,  
 387, Ռումինիայում, 460, 462, Իսպանիայում,  
 134-138, սուլթանական վարչակարգում, 82,  
 83, 87, ամբողջատիրական վարչակարգ, 76, 77,  
 329-330, ԽՍՀՄ-ում, 491  
 Լակայե Ալբերտո, 217  
 «Լայն ճակատ», 213, 218 ծ.23  
 Լանդսբերգիս Վիտաուտաս, 527, 586  
 Լատավսկի Պոլ Ս., 344 ծ.10  
 «Լատին բարոնետր», 297, 303-307  
 Լատվիա.ԽՍՀՄ կողմից բռնակցում, 523, 524,  
 ուժացում, 559, ներկայի և ապագայի նշանա-  
 կալի դիրքորոշումները, 543-552, Գորբաչովի  
 հանրաքվեի բոլոտ, 503, ժողովրդավարության  
 քայքայում, 524, Կոմունիստական կուսակ-  
 ցություն, 528-530, ժողովրդագրական փո-  
 փոխություն, 524-527, այլախոհություն, 528,  
 ընտրություններ, 524, 528-530, Էթնիկ ժողովր-  
 դավարություն, 559, 560, քաղաքացիության  
 վանողական քաղաքականություն, 524-527, 531,  
 532, 538, 540, 550, 559, 580, Ազատության հու-  
 շակոթոդ, 529, լեզվական քաղաքականություն,  
 537, 547, ամբողջատիրության ժառանգություն,  
 532, նացիստական բռնազավթում, 524, ռուսնե-  
 րի քաղաքական ինքնությունը, 533-537, քաղա-  
 քական կուսակցություններ, 528-530, ժողովր-  
 դական ճակատ, 528-530, վարչակարգի առավել  
 մեծ չափի տեսակ, 523-527, ռուսների հինգե-  
 բորդ շարապյուն, 542, ռուսախոս բնակչություն,  
 525-528, 530-533, 550, պետության կերտում, 39,  
 59, պետութենականության խնդիրներ, 480  
 լեզիտիմության և ճնշման քաղաքատնտեսու-  
 թյուն, 114, 124-129, բարգավաճման քաղա-  
 քական տնտեսություն. Բրազիլիայում 117,  
 Չիլիում 117, 118, Հարավային Կորեայում 117,  
 Իսպանիայում, 117

լեզվիտիվության շրջված բուրգ, 562-67  
 Լեհաստան, 23, 58, 306, 309, 312, հակաքաղաքականություն, 361-64, ժողովրդավարության վերաբերմունք, 373-375, քաղաքական և տնտեսական համակարգերի վերաբերմունք, 572, որպես ավտորիտար վարչակարգ, 72, 346, 378-384, 442, 586, կաթոլիկ եկեղեցի, 348, 349, 359, 369, 371, 375, 381, քաղաքացիականներ-զինվորականների հարաբերություններ, 345, քաղաքացիական հասարակություն, 25, 344, 349, 354-356, 359, 361, 364-67, 373-377, կոմունիստական կուսակցություն, 344, 351, 354, 356, 357, 359 ձ.38, 360, 364, ժողովրդավարության կայացում, 349, 362-385, սահմանադրության մշակման միջավայր, 353-55, չորս խաղացողի անցման խաղ, 341, աշխարհագրական շահ, 578, գերմանա-խորհրդային դաշինք, 344, «քաղաքացիական հասարակության հորիզոնական հարաբերություններ», 348, գաղափարախոսություն, 341, 342, 344, անցման սկիզբ, 351, կնստիտուցիոնալ հակամարտություն, 372-374, միջազգային ազդեցություններ, 352, 353, միջազգայնացված ավտորիտար կուսակցական պետություն, 339, «դաշնությունահենք անցում», 339, 348-349, կուսակցությունների բաժանում, 364, 367, 371, 375-379, կուսակցական զինվորներ, 339, 347, 351, 352, պետութենականության խնդիր, 342  
 Լեհաստանի Ազատական-ժողովրդավարական կուսակցություն, 382  
 Լեյբին Դեյվիդ, 59, 523 ձ.5, 526 ձ.8, 536 ձ.23, 542, 551, 553  
 Լեյքս Սթիվեն, 566  
 Լենին Վլադիմիր, 490, 491, 516 ձ.77  
 Լեոնային Դարաբաղ, 51 ձ.24  
 Լետերիեր Օդյանդո, 292  
 Լեփսիուս Մ. Ռայներ, 45 ձ.16  
 Լեֆտեր Բոն Բոգդան, 464, 470 ձ.40  
 Լիզաչով Եգոր, 483  
 Լիլով Ալեքսանդր, 446  
 Լիմոնժի Ֆերնանդո, 118  
 Լիլլիհարտ Արենդ, 60, 62 ձ.41, 161 ձ.46, 381, 384, 385  
 Լին Չիա-լույն, 43 ձ.8  
 Լիվեն Անատոլ, 58 ձ.35, 523 ձ.5, 527 ձ.11, 586 ձ.25  
 Լիսովա. ԽՍՀՄ կողմից բռնակցում, 524, ներկայի և ապագայի նշանակալի դիրքորոշումներ, 543-546, Գորբաչովի հանրաքվեի բոլորտ, 503, ժողովրդավարության քայքայում, 524, կաթոլիկ եկեղեցի, 326, կաթոլիկ մեծամասնություն, 527, Կոմունիստական կուսակցություն, 528-530, ժողովրդավարության կայացում, 558,

561, ժողովրդագրական փոփոխություն, 525, 527, ընտրություններ, 524, 528-530, ներառական քաղաքացիության քաղաքականություն, 559, 580, լեզվական քաղաքականություն, 537, 544, քաղաքական կուսակցություններ, 528-530, ժողովրդական ճակատ, 528-530, «վերադարձ կոմունիզմին», 111 ձ.8, 562, 585, 586, ռուսախոս բնակչություն, 530, 533, պետության կերտում, 39, աշխատավոր դասի գաղթողներ, 536, 537  
 Լիփսետ Սելմուր Մարտին, 68 ձ.4, 115 ձ.16  
 Լյեռա Ֆրանսիսկո Գ., 150 ձ.27  
 Լովենտալ Աբրահամ Ֆ., 22 ձ.2, 109 ձ.7  
 Լուկյանով Անդրեյ, 445  
 Լուչինսկի, 500  
 Լուչիվո Չելենա, 386

Խազանով Անատոլի, 519  
 Խաբովատով Ռուպան, 523, 522  
 «Խարտիա-77», 389, 421, 422, 424, 444, Չխտալովակիայում, 316, 322-334  
 Խորհրդային բոլ, 112, 313-318  
 խորհրդային դաշնություն, 481, 484, 486, հանրապետական քաղաքական վերնախավի աշխատանքային առաջխաղացման դրդիչներ, 488, քաղաքացու ինքնություն, 487, դաշնային միավորների ինքնություն, 487, միջազգային ներկայացուցչության ներքո, 488, դաշնությանը միանալու ձև, 487, անջատում, 487  
 Խորհրդային Միություն. տե՛ս Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն  
 խորհրդային ոճի դաշնային սահմանադրություն, 151, Չխտալովակիայում, 417, 429-434, 481, 511, Հարավսլավիայում, 487  
 Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (ԽՍՀՄ), 13, 13 ձ.9, 54, 310, 311, ժողովրդավարական անցյալի բացակայություն, 491 ձ.24, բյուրոկրատական քաղաքականություն, 71, կենտրոնացված կուսակցություն պետություն, 484, 485, 489, 490, 492, 497, քաղաքացիություն, 50, 51, քաղաքացիական հասարակություն, 492, 493, կոմունիստական կուսակցություն, 318-323, 485, 498- 500, 502, 504, ժողպատգամավորների համագումար, 497, 498, 499, 511-513, սահմանադրության մշակման միջավայր, 121, 497, 513, 515, 517, ի տարբերություն Հունգարիայի, 490, ժողովրդավարություն, 496, հետամբողջատիրություն «ըստ քայքայման», 491, այլախոհներ, 492, սահմանափակ ինքնիշխանության դոկտրին, 315, տնտեսական ճգնաժամ, 503, ընտրություններ, 489, 490, 494, 496-501, ընտ-

րությունների հաջորդականություն, 481, 489, 503, Էթնոգաշնություն, 492, 493, 504, գործադիր և օրենսդիր հակամարտություններ, 510, 514-519, դաշնություն, 481, 483-485, 497, 503, ձևական սահմանադրություն, 489, «թուլացած տարածք», 493, գլասնոստ, 322, 481, 483, 489, 495, գաղափարախոսություն, 111, 314, 481, 482, նախորդ վարչակարգի տիպի կարևորություն, 489-490, բալթյան ազգերի անկախություն, 528-532, «ներքին» և «արտաքին» կայսրություն, 314, ներխուժում Բալթյան երկրներ, 526-530, ՊԱԿ, 484, 504, ղեկավարություն, 485, կենտրոնական իշխանության օրինականություն, 501, ազատականացում, 481, 492, 494, 495, 505, ռազմական ծախսեր, 319, 320, ազգայնականության մասին թյուր կարծիք, 482, 483, համախմբում, 491, 1991թ-ի ձախողված հեղաշրջում, 322, 483, 501, 503, 504, 531, ուղղափար եկեղեցի, 492, «ինքնիշխանությունների շքերթ», 503, պերեստրոյկա, 318, 320, 321, 355, բազմակարծություն, 342, 346, քաղաքական ինքնություն, 480, 481, քաղաքական կուսակցություններ, 493, 494, 512, 514, քաղաքական հասարակություն, 493, 498, Էթնիկ պատկանելության քաղաքականացում, 481, 489, 494, հետամբողջատիրություն, 72, 491, կոլեկտիվ իրավունքների գերակայություն, 506-508, տնտեսական վերակառուցման գերադասելը, 482, 494, 505, 509-518, անկախության գերակայություն, 505, հանրաքվե, 503, վարչակարգի նախաձեռնված փոփոխություն, 486-488, տարածաշրջանային հեգեմոն, 322, «անվանադիր» և «ոչ անվանադիր» ազգերի միջև հարաբերություն, 507, 508, հանրապետությունները որպես «նախապետություններ», 484, 494, պատասխան գինձառայության, 501 ծ.44, օրենքի գերակայություն, 508, ռուս ազգայնականները կուսակցություն-պետությունում, 485, կիսանախագահականություն, 516-520, միաժամանակայնության խնդիր, 324, 562, «սոցիալական պայմանագիր», 494, խորհրդային մտածելակերպ, 492, կայունացում, 511, 515, պետության քայքայում, 31, 482, 491, 501, 563, պետութենականության խնդիր, 480-484, 574, անվանադիր ազգեր, 489, 500, 507, 508, պլեբիսցիտային «ազգային ազատագրական» անցում, 505, միութենական պայմանագիր, 508, պետական գործունակ, 509, ամբողջատիրական ժառանգության կշիռ, 491

խորհրդային տիպի վարչակարգ, 70  
 Խորհրդարանականություն, 195, 196, 248-250, Իվստրիայում, 369, Բրազիլիայում, 248, 250, 260-262, Բուլղարիայում, 440, Չեխոսլովակիա-

յում, 369, Հունաստանում, 201, Հունգարիայում, 369, 499, 500, Իսպանիայում, 369, Իսպանիայում, 201, 202

խորհրդարանին հաշվետու լինել, 151  
 Խորվաթիա, 502, սերբական իռեդենտա, 580  
 Խուան Կառլոս (Իսպանիայի թագավորը), 114, 127, 130, զինվորական հեղաշրջման կոալիցիայի պարտություն, 145, 153, ժողովրդավարական միապետ, 153

Խրուշչով Նիկիտա, 52, 498, 499

Կադար Յանոշ, 61, 203, 427, 428, 429, 430, 451  
 կադրային քաղաքականություն (Kaderpolitik), 333 ծ.35

Կանտոնո Մարսելյո, 166 ծ. 5, 179, 332

Կալեր Մալլա, 252

Կամպեանու Պավել, 458, 477

Կամպոս Ռոբերտո, 234

կայացած ժողովրդավարություն. վերաբերմունքային սահմանում, 24, վարքագծային սահմանում, 24, խորհրդականություն, 295, Բրազիլիայում, 239, 243, 255, անկում, 25, Բուլղարիայում, 450, Չիլիում, 287-288, քաղաքացիականների վարչակարգեր, 104, կոմունիստական կուսակցություններ, 104, պայմաններ, 24-31, սահմանադրական սահմանում, 24, սահմանադրությունների մշակման միջավայր, 121-123, Չեխիայի Հանրապետությունում, 478 ծ.59, 561-62, նախորդ ռեժիմների վերլուծություն, 199-207, 237-242, Հունաստանում, 183-193, բարձրաստիճան զինվորականություն, 100, Հունգարիայում, 562, ամբողջատիրական և հետամբողջատիրական տիպերի հետևանքները, 324-338, տարածքային միավոր, 53, 54, Լատվիայում, 562, 558, բազմազգ միջավայրերում, 60-65, 555-559, շուկային միջամտելու համար, 33, ոչ բարձրաստիճան զինվորականություն, 103, Լեհաստանում, 339, 362-86, Պորտուգալիայում, 175-81, որակ, 191, հարաբերություններ քաղաքացիական և քաղաքական հասարակության միջև, 28-32, «պահուստային տիրույթներ», 103, 105, 156, 164, 177, 185, ժամանակի ընտրություն, 65, Սլովակիայում, 433 ծ.108, Հարավային Ամերիկայում, 235, Իսպանիայում, 159, Ուրուգվայում, 210-13, բազմազգություն, 26

կայացման խնդիրներ, 69, 72, 85, հետկոմունիստական Եվրոպայում, 327, հետամբողջատիրական վարչակարգեր, 388

կայունացում, 515, Արգենտինայում, 134 ծ.11, 263, Բրազիլիայում, 134 ծ.11, 229 ծ.4, 233, 246, 282, Լեհաստանում, 359, ԽՍՀՄ-ում, 514, 518

Կանիա Ստեֆան, 350

- Կավալյո Դոմինգո, 266  
 Կատալոնիա. լեզվական կանոնակարգեր, 56,  
 ներգաղթողներ, 59, ազգայնական, 39, 54, քա-  
 դաքսական ինքնություններ, 63  
 կատարողականի չափորոշիչներ, 80  
 Կարապինտադաս, 263  
 Կարդենաս Լագարո, 265  
 Կարդոսո Ֆերնանդո Էնրիկե, 17, 231, 257 ծ.52  
 Կարիբյան ծովի ավազանի բրիտանական մաս, 49  
 Կարիլյո Մարիա, 167 ծ. 6  
 Կարիլյո Սանտյագո, 134, 138, 140  
 Կարլ Թերրի, 22, 69 ծ.6  
 Կարկլիս Ռասմա, 535 ծ.21, 544  
 «կարմիր բուրժուազիա», 73  
 Կարրերո Բլանկո Լուիս, 152  
 Կեան Զոն, 29 ծ.7  
 «կենդանի սուս», 79  
 «կենտրոնախույս բնեռացում», 216  
 Կենտրոնական Ասիայի հանրապետություններ,  
 506, ընտրությունները հանրապետական մա-  
 կարդակներում, 499  
 Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն,  
 83, 456  
 Կիմ Իլ Սունգ, 62, 465, 467  
 Կիուրանով Դեյան, 439, 440  
 Կիուրանով Շ., 441  
 Կիպրոս. Թուրքիայի ներխուժում, 183  
 «կիսահավատարմություն», 215  
 կիսանախագահականություն, 196, 367-371,  
 Բուլղարիայում, 450, Ֆինլանդիայում, 369,  
 Ֆրանսիայում, 369, 370, Լեհաստանում, 339,  
 367-375, 379, 380, 515, Պորտուգալիայում, 196,  
 369, Ուկրաինայում, 520, ԽՍՀՄ-ում, 515-521  
 Կիսչակ Չեչյավ գեներալ, 351, 352, 363  
 Կիտչելտ շերքերտ, 452 ծ.153  
 կիրառելի գործուն պետություն, 31, 89, Բրա-  
 զիլիայում, 235-238, 246, 247, Հունգարիայում,  
 406, հետկոմունիստակա Եվրոպա, 326-328,  
 ԽՍՀՄ-ում, 482  
 կիրառելի ժողովրդավարական ժառանգություն,  
 583  
 Կլաուս Վացլավ, 35, 67, 435  
 Կլիգեման Հանս-Դիտեր, 420  
 Կլինգման Փայիլ, 451, 459  
 «կլոբ սեղան» համաձայնություն, 311, 324 ծ.21,  
 բացակայություն, Ռումինիայում, 454, 471,  
 Բուլղարիայում, 390, 412, 432, Էստոնիայում,  
 560 ծ.55, Հունգարիայում, 390, 394, 397, 399, Լե-  
 հաստանում, 350, 355, 361, 370, 372, 391  
 «կոսալիցինո ժողովրդավարություն», 61, 90, 513,  
 Չիլիում, 291 ծ.28, բազմազգ պետություննե-  
 րում, 541, 543  
 Կոդրեսկու Անդրեյ, 454  
 Կոզիրև Անդրեյ, 550  
 Կոլարովա Ռուսլանա, 448, 449  
 Կոլարսկա-Բորինսկա Լենա, 381  
 կոլեկտիվ իրավունքներ, 61, 505-508  
 Կոլլոր դե Մելլոն Ֆերնանդո, 230, 246, 257  
 «Կոլորադո խմբակցություն» (կոլորադոսներ),  
 216-218  
 Կոհեն Ժան, 29 ծ.7  
 «Կոմունիզմի անդառնալիություն», 316, 317  
 «կոմունիզմի վերադարձ», 384, 562, 583-587,  
 Հունգարիայում, 111 ծ.8, 562, 583, 585, Լիտվա-  
 յում, 562, 583, 585, Լեհաստանում, 352, 562, 583-  
 586, Ռուսաստանում, 582  
 Կոմունիստական կուսակցություն. բալթյան  
 երկրներ, 529, «գործ տալու» ժառանգություն,  
 334  
 Կոնստանդին Կարամանլիս, 184, 185, 186, 187  
 Կոնստանդինեսկու Էմիլ, 476-77  
 Կոնտրեբաս Մանուել, գեներալ, 292, 301  
 Կոպուսո Կոռնելիու, 476 ծ.55  
 Կոսովո, 561 ծ.1  
 Կոստա Պինտո Անտոնիո, 180 ծ.39  
 Կորբոնսկի Անջեյ, 343  
 Կորոշենի Անդրաշ, 404  
 Կորտես, Բուպանիայում անցման դերը, 132-38  
 Կուբա, 470  
 Կունդերա Միլան, 422  
 Կունյալ Ալվարո, 171  
 Կուչմա, 487  
 կուսակցական զինվորներ. տե՛ս Լեհաստան,  
 կուսակցական զինվորներ  
 կուսակցական պետություն, 70, 102, գործուն պե-  
 տության ժառանգություն, 332-333, Լեհաստա-  
 նում, 337, քաղաքացիական հասարակության  
 ճնշում, 327  
 կուսակցություն հանուն ժողովրդավարության  
 «PPD», 290 ծ.26  
 Կվանկինսկի Ալեքսանդր, 353, 588 ծ.29  
 կրկնակի գործադիր, 367  
 կրոն. կեսարապապական, 326, 346, 584, կոնֆու-  
 ցիականություն, 583, ժողովրդավարություն,  
 583, իսլամ, 583, ազգային եկեղեցի, 326, 584,  
 ուղղափառ քրիստոնեություն, 326, 346, 462,  
 492, 583, հետկոմունիստական Եվրոպա, 314-  
 316, բողոքականություն, 326, 584, աշխարհի-  
 կացում, 326, տե՛ս նաև Ռումինական կաթոլիկ  
 եկեղեցի  
 Կրուպալիչիուս Ալգիս, 586 ծ.26  
 Հաբսբուրգների կայսրություն, «ազգային կուրի-  
 աններ», 62

Հաիթի, 9 ծ.2, սուլթանական վարչակարգ, 80, 89, Թոնթոն Սակոտե, 86  
 «հակաքաղաքականության քաղաքականություն», 361-363  
 Հակաքաղաքականություն, 30 ծ.9, Բրազիլիայում, 233, Բուլղարիայում, 447, Չեխոսլովակիայում, 412, 427, Լեհաստանում, 358-361  
 «համակարգի մեղադրում». տե՛ս քաղաքականության տնտեսության օրինականությունը «համակեցություն», 371  
 Համահելլենիստական սոցիալիստական շարժում, 187-89  
 համամասնական ներկայացուցչություն, 61  
 համայնքների ինքնակառավարման հետ, 62  
 Հայաստան. Գորբաչովի հանրաքվեի բոյկոտ, 503, ԱՊՀ, 509 ծ.62, չվերամիավորված տարածք, 51  
 Հանթինգտոն Սեմյուել Փ., 22 ծ.1, 113 ծ.11, 128  
 Հանրապետության Գերագույն Խորհուրդ, 528  
 Հաուն Ջերրի, 70 ծ.7, 71 ծ.8  
 Հաուսլոններ Պետեր, 494  
 հաջորդականությունից կախված. համեմատական վերլուծություն, 337  
 Հավել Վացլավ, 389, 421, հրաժարվել միանալ կուսակցությանը, 326, 384 ծ.79, 421-423, փլուզման դեր, 429-431, «թավշյա» բաժանման մեջ դերը, 438, 439  
 Հարավային Ամերիկա. ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունք, 296-307, պարտքի ճգնաժամ, 294, 295, ժողովրդավարության կայացում, 295, բարձրաստիճան գինվորական, 294, քաղաքական տնտեսականության օրինականություն, 298-307, նախագահականություն, 295  
 Հարավային Եվրոպա. ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունք, 196, 199, նախորդ վարչակարգի գնահատում, 199-204, միջազգային ազդեցություն, 196, 197, խորհրդարանականություն, 196, 198, հաջորդականության բարեփոխումներ, 194, «պետության ազդեցության նվազեցում», 194  
 Հարավային Կորեա, 11, 42, 201, «իսպանական մոդել»-ի առկայությունը, 166, քաղաքական տնտեսականության բարգավաճում, 116  
 Հարավսլավիա, 14 ծ.9, սահմանադրության մշակման միջավայր, 121, խորվաթական-սերբական քաղաքացիական պատերազմներ, 129, հետաձգված փոխհատուցում, 573, ընտրությունների հաջորդականություն, 503, էթնիկ գոտումներ, 480, 481, իռեդենտա, 580, ոչ ժողովրդավարական կառավարություն, 522, գինվորականության դեր, 391, խորհրդային տի-

պի դաշնություն, 481, պետության կերտում, 39, պետության կազմաքանդում, 503, պետութենականության խնդիր, 480, աշխատավորների ինքնակառավարում, 113, 317  
 Հարավ-օսական Բնքնավար Սարգ, 501  
 Հարթլին Ջոնաթան, 90 ծ.2  
 Հելսինկիի համաձայնագիր, 113, 421  
 «Հելսինկյան հանձնաժողով», 500  
 «հետադարձ լեգիտիմացում», 133  
 հետաձգված փոխհատուցում, 568-584  
 հետամրոջատիրական վարչակարգեր, 86, 87, 94, 343, 344, 351  
 հետկոմունիստական Եվրոպա, 343, 344  
 հետկոմունիստական Եվրոպայում, 329-30  
 Հիտլեր Ադոլֆ, 539  
 Հիրշման Ալբերտ Օ., 131 ծ.7, 310  
 Հյուսիսային Իռլանդիա, 48  
 Հյուսիսային Կորեա, 12 ծ.6, 83, 456  
 Հյուսիս-ատլանտյան միություն (NATO), 294, 295  
 Հնդկաստան, 42, 49, «պետություն-ազգ», 61  
 Հորբես Թոմաս, 54  
 Հոլմս Ստեֆն, 35 ծ.17  
 Հոնգկոնգ, 41, 42  
 Հոնդուրաս, 9 ծ.2  
 Հովարդ Դիլ Ա.Ե., 121 ծ.25  
 Հունաստան, 12, 47, ժողովրդավարության հանդեպ վերաբերմունք, 189, 190, ժողովրդավարության նկատմամբ վարքագիծ, 188, քաղաքացիական հասարակություն, 183, 184, 188, ի տարբերություն Բրազիլիայի և Չիլիի, 183, ի տարբերություն պորտուգալական և իսպանական անցումների, 184, հեղաշրջում, 180 ծ.39, ժողովրդավարության կայացում, 184-192, տնտեսական բարեփոխում, 195, ընտրություններ, 185, 186, 187, 191, ժամանակավոր կառավարություն, 108, 184, ազգակերտում, 47, ազգայնական զգացումներ, 190, ոչ բարձրաստիճան պետական հեղաշրջում, 182, ուղղափառ քրիստոնեություն, 583, նախագահականություն, 196, քաղաքական հասարակություն, 182, գինվորական վարչակարգի հետադարձ գնահատում, 204, սահմանադրության փոփոխություններ, 187-189, ԵՏՀ-ի դերը, 177, 294, բարձրաստիճան գինվորականության դերը, 183, Հյուսիս-ատլանտյան միության(NATO) դերը, 294, անցում, 182, նմանություն Արգենտինայի հետ, 259, իշխանության փոխանցման բանաձև, 183  
 «Հունգարական ժողովրդավարական ալյանս», 477  
 «Հունգարացիների իրավունքների ասոցիացիա», 441

- Հունգարիա, 13, 47, 202, 316, կաթոլիկ եկեղեցի, 326, քաղաքական և տնտեսական համակարգերի հանդեպ վերաբերմունք, 573, վերաբերմունք վարչակարգի լեգիտիմության հանդեպ, 399, «խաչանական մոդելի» առկայություն, 166, 299, կայացման հնարավորություններ, 562, քաղաքացիական հասարակություն, 397-398, 400, 410, 415-421, կոմունիստական կուսակցություն, 104, 320, 390, 392, 396, 399-403, Սահմանադրական դատարան, 414, սահմանադրության մշակման միջավայր, 411, 412, «վստահության կոնստրուկտիվ քվե», 412 ծ.51, «ի տարբերություն Լեհաստանի, 397 ծ.23, 411, «ընտրությամբ ապամեթոդատիկության», 389, 392-394, 490, տնտեսական հասարակություն, 35 ծ.17, 396, 413, 451, ընտրություններ, 389, 404-407, «համահարթեցված» պատկեր, 397, հիմնադիր ընտրություն, 410, «գույլաշ կոմունիզմ», 394 ծ.13, պատմական կուսակցություններ, 399, գաղափարախոսություն, 394, պարտքեր ունենալ, 390, 396, անկախ միություններ, 398, 501, անցումների նախաձեռնություն, 390, 396, իռեդենտա, 416, 417, օրենքի ընդունում, 399, «մաքրման» օրենքներ, 414, «հատուկ հետաքրքրատիրության համակարգ», 72, 73 ծ.12, 76 ծ.13, բանակի պահվածություն, 409, նոմենկլատուրային հարմարվելը, 396, 408, «ընդդիմության կյոք սեղան», 406, խորհրդարանական, 370, 410, 411, «առաջին խորհրդարանական ընտրություններ», 411, պահված պահանջ, 393, քաղաքական կուսակցություններ, 327, 391, 396, 398, 403-411, քաղաքական հասարակություն, 398, 405, 410, 411, 415, 421, 490, սեփականության իրավունք, 398, 413, 490, բարեփոխիչ կոմունիստ, 407, դաշնությունահենք բարեփոխում-դաշնությունահենք ապահարգան, 404-409, «վարչակարգի զիջում և հասարակական նվաճում», 400, 401, ենթաօրենսդրական կարգավորում, 414, պատասխան Գորբաչովի բարեփոխումներին, 323, «վերադարձ կոմունիզմին», 562, 584-586, «Կլոք սեղան» բանակցություններ, 389, 405, 409, 410, 445, օրենքի գերակայություն, 315, 412, երկրորդ տնտեսություն, 395, 408, 412, կուսակցական պետության խզում, 400, ստալինականացում, 392, «պետութենականության խնդիրներ», 409, 415-418, համակարգի մեղադրում, 417, Տրիանոնի հաշտություն, 416, գործուն պետական ապարատ, 414
- Հունգարիայի «Կանաչների կուսակցություն», 417
- Հունգարիայի ազատ ժողովրդավարներ», 29 ծ.7
- «Հունգարիայի ժողովրդավարական ֆորում», 328, 399, 403, 407 ծ.40, 410, 417
- Հունգարիայի Սոցիալ-ժողովրդավար կուսակցություն, 399
- Հունգարիայի սոցիալիստական կուսակցություն, 587 ծ.27
- Հունգարիայի Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցություն, 399, «Քաղաքացիական կոնգրես», 528
- Հունգարների ժողովրդավարական Միություն, 472
- Հուսակ Գուստավ, 420, 423, 431
- հռոմեական կաթոլիկ եկեղեցի, 326, 346, 347, 584, Բելառուսում, 326, Բրազիլիայում, 584, Բուլղարիայում, 322, Չիլիում 584, Չեխոսլովակիայում, 389, Չեխիայի Հանրապետությունում, 326, Հունգարիայում, 326, Լիտվայում, 325, Լեհաստանում, 325, 326, 340, 341, 345, 350, քաղաքական բազմակարծություն, 346, 347, Ռումինիայում, 326, Սլովակիայում, 326, 416, Սլովենիայում, 326, Իսպանիայում, 136, անդրազգային բազա, 346
- հրեական Կաբալան լեհ-լիտվական տերությունում, 62
- «ձայն/տեղ անհամամասնություն», 384,
- Ղազախստան, 513, ԱՊՀ, 509, ռուսներ, 53
- Ղրղըզստան. ԱՊՀ, 508, կլանային քաղաքականություն, 505, ռուսներ, 61
- Ճապոնիա, 49, ժողովրդավարական անցում հաստատման միջոցով, 110
- Ճնշման և հանդուրժելու ծախս, 42, Արևելյան Եվրոպայում, 139, 317, Իսպանիայում, 139
- «ճշմարտության մեջ ապրել», 361
- «Ճշմարտություն և կյանք» կուսակցություն, 417
- Մազինի Ջուզեպպե, 47
- Մազովեցկու Թադեուշ, 360 ծ.41, 364, 372
- Մալիցա Միրչեա, 459 ծ.14, 470 ծ.40
- Մակաո, 41
- Մակարիոս արքեպիսկոպոս, 183
- Մակեդոնիա. պետութենականության խնդիր, 574
- մակրո փոփոխականներ, 10, 101
- Ման Մայքլ, 38 ծ.1
- Մանոլեսկու Նիկոլաե, 464
- մանր գյուղացիական անկախ տնտեսություն վարողների կուսակցություն, 399
- Մառլ Պիտեր, 33 ծ.13
- Մարավալ Խոսե Մարիա, 115 ծ.17, 179 ծ.38, 180 ծ.40
- մարդու իրավունքների խախտումներ, 103, 213, Արգենտինայում, 262, 263, 297, 317, ավտորի-

տար վարչակարգ, 316, Չիլիում, 103, 105, 117, 210, 277, Ռումինիայում, 454, 471  
 Մարկովիչ Անտե, 503 ծ.46  
 Մարքս Կարլ, 516 ծ.77  
 Մաքսվել Քենեթ, 168  
 «մաքրման խնդիրներ», 334, Բուլղարիայում, 335 ծ.40, ԳԻՀ-ում, 335 ծ.40, Հունգարիայում, 414  
 Մըքֆոլ Մայքլ, 512 ծ.62  
 մաֆիոզ տնտեսություններ, 567  
 Մեդինա Ուոո, 214, 221  
 «մեծամասնական ժողովրդավարություն», 69  
 մեծամասնական համակարգ, 250  
 «Մեկ երկիր, երկու համակարգ», 41  
 Մեյնուորինգ Սքոթ, 24 ծ.4, 166, 231 ծ.6, 247 ծ.33  
 մենաշնորհային կուսակցություն, 105  
 Մենեն Կառլոս, 206, 263-265, ժողովրդավարության որակի ազդեցություն, 271, 299, պլեբիսցիտական ոճ, 296, դերը «անհնարին խաղում» 266, 268-271  
 Մենենդես գեներալ Լուչանո, 258 ծ.1  
 Մեչխար Վլադիմիր, 438  
 Մերի Լեննարտ, 544  
 Մերսիլյա, 246, ավտորիտար հեգեմոնիա, 267, ռազմավարության նպատակ, 252  
 միաժամանակայնության անցման կայացում և ավարտ, 175-181, Չիլիում, 283, 285, Պորտուգալիայում, 175-181, 285  
 միաժամանակայնության քաղաքական և տնտեսական անցում, 324, 500, 564-583, ընտրական հաջորդականություն, 563, թույլ կապվածության վարկած, 568-583, Ռուսաստանում, 448, Իսպանիայում, 328, ուժեղ կապվածության վարկած, 568-583, ԽՍՀՄ-ում, 320, 447,  
 Միացյալ Ազգեր, 45 ծ.14  
 Միացյալ թագավորություն, 41, 42  
 միգրացիաների տեսակներ, 539-542  
 Միլանս դել Բոսկ Ջեիմ, 153  
 Միլլար Ֆրանսիս, 372 ծ.62  
 Միլոշևիչ Սլոբոդան, 561 ծ.1  
 Միխիլի Ադամ, 350, 386  
 Միհրանյան Անդրանիկ, 503 ծ.47  
 Մինդաենտի կարդինալ Յոժեֆ, 392  
 Մինց Հիլարի, 343  
 Միշլեր Վիլյամ, 572 ծ.14  
 միջազգային ազդեցություններ, 101, 109, որպես դիֆուզիայի էֆեկտ, 113, 167,470, որպես արտաքին քաղաքականությունները, 110, Լեհաստանում, 355, 356, շեղումունիստական Եվրոպայում, 313-18, Հարավային Եվրոպայում, 194, 195; Վարչակարգի տապալումը  
 միջուկազգային դաշինքներն, 28  
 Միսիունաս Ռոմուալդ, 523 ծ.5, 525 ծ.7

Միտերան Ֆրանսուա, 292  
 Միցնակի Անջել, 341 ծ.4  
 Մլադենով Պետար, 444, 445, 450  
 Մոբիլիզացում, 66, ավտորիտար վարչակարգ, 73, Չեխոսլովակիայում, 451, Լեհաստանում, 340, Պորտուգալիայում, 168, 185, հետամբողջատիրական վարչակարգեր, 69, 72, 387, Ռումինիայում, 471, 472, սուլթանական վարչակարգեր, 69, 71, ամբողջատիրական վարչակարգեր, 76, 77, 79, ԽՍՀՄ-ում, 504  
 Մոիզիսի Ժուզե Ալվարո, 236 ծ.20  
 Մոլդավիա, հանրապետական մակարդակի ընտրություն, 499  
 Մոլդովա. Գորբաչովի հանրաքվեի բոլոստ, 503, միջթնիկ բախումներ, 480, ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալ, 487  
 «Մոլոտով-Ռիբենտրոպ պակտ» 1939 թ., 524, 529, 539  
 Մոկշիկցի Էդմունդ, 327  
 Մոնտենեգրո, 561 ծ.1  
 Մոնտիկոնե Ռոնալդ Ս., 341 ծ.2, 342 ծ.6  
 «մոնտոներոս», 269  
 Մոնրո Դոկտրին, 318 ծ.11  
 Մոսկվայի ընտրողների միություն, 493  
 Մունտենաու Մարիան, 476 ծ.54  
 մրցակցության ներառականություն, 139  
 «մրցունակության վրա հիմնված ուժացման խաղ», 59  
 Յակեշ, գլխավոր քարտուղար, 431  
 Յակովլև Ալեքսանդր, 320 ծ.14, 483, 492, 529  
 Յասինիչ Քշիշտոֆ, 372 ծ.62  
 Նադի Իմրե, 392, 393  
 նախագահականություն, 195, 196, 268-70, Արգենտինայում, 254, 273, 428, Բրազիլիայում, 232-234, 243-247, 336, 521, Չիլիում, 284, 285, 288, Հարավային Ամերիկայում, 288, Ուրուգվայում, 289, 294  
 նախաստեղծ ինքնություններ, 62, 483. տե՛ս նաև քաղաքական ինքնություններ  
 նախորդ վարչակարգ, 66  
 Նապոլեոն և ազգայնական շարժումներ, 44  
 Նեապոլ, 44 ծ.12  
 Նելսոն Դանիել, 462  
 Նևես Տանկրեդո, 231  
 Ներու Ջավահարլալ, 62  
 Նիդեռլանդներ, 119  
 Նիկարագուա, 9 ծ.2, 168, 284 ծ.20, 456, 470  
 Նիկոլայիդես գեներալ Քրիստիանո, 260  
 Նիկոլա Եկատերինա, 448  
 Նիյազով Սապարմուրադ, 579 ծ.18



Նինո Կառլոս, 271  
 Նիքսոն Ռիչարդ, 458  
 Նյերշ Ռեյժո, 396  
 նումենկլատուրա, 78, 203, քաղաքացիական հասարակություն, 328, Լեհաստանում, 347, 355, 356, արտոնություններ նոր կապիտալիստական տնտեսության մեջ, 106, Ռումինիայում, 456  
 «Նոյեա Ֆորում», 498  
 Նոյկա Կոնստանդին, 465  
 Նորդլինգեր Էրիկ, 90 ձ.3  
 Նորվեգիա, 119

Շաբաղ Գոլդի, 150 ձ.27  
 Շևարդնաձե Էդուարդ, 319  
 Շաֆիր Մայքլ, 478 ձ.57  
 Շեյն Յոսաֆ, 9 ձ.2, 23 ձ.3, 107 ձ.5  
 Շեր Դոնալդ, 166  
 Շեփերլի Քիմ Լեյն, 61 ձ.38  
 Շմիտթեր Ֆիլիպ Ք., 22 ձ.1, 39 ձ.2, 69 ձ.6, 109, 109 ձ.7, 165 ձ.2, 167 ձ.7, 176 ձ.32, 296  
 Շվեդիա, 49  
 Շվեյցարիա, «պետություն-ազգեր», 62  
 Շտարկ Դեյվիդ, 109, 405, 408, 415 ձ.57  
 Շուգարտ Մեթյու, 519  
 շուկայական տնտեսություն, 26, կարգավորման անհրաժեշտություն, 30  
 Շումպետեր Յոզեֆ Ա., 332  
 Շեցովա Լիլիա, 517

ոչ բարձրաստիճան զինվորականություն, 101, 103, 162, Արգենտինայի, Հունաստանի և Պորտուգալիայի միջև տարբերություններ, 260, հեղաշրջում Հունաստանում, 182, 183,  
 ոչ ժողովրդական վարչակարգ. ճնշելու կարողություն, 119, սահմանադրություն, 121, տնտեսական անկում, 116, 118  
 Որուզվայում, 210, 212-216

Չամոռո Վիլլետա, 284  
 Չաուշեսկու Էլենա, 456, 460, 471  
 Չաուշեսկու Իլիե, 460  
 Չաուշեսկու Իոան, 460  
 Չաուշեսկու Նիկոլայե, 83, 99 ձ.6, 457, 471, գաղափարախոսություն, 459, 460, 465, «դատական սպանության», 471, մոքիլիզացման, 468, իշխանության գալուն, 457, ղեկավարման սուլթանական ոճը, 461  
 Չաուշեսկու Նիկու, 460  
 Չաուշեսկու Ֆլորես, 460  
 Չեխիայի Հանրապետություն, 326, ի տարբերու-

թյուն Սլովակիայի, 327, տնտեսական հասարակություն, 35 ձ.17, մասնավորեցում, 564 ձ.4  
 Չեխոսլովակիա, 13, 28, 30 ձ.9, 48, 112, 157, 370, միացում Գերմանիայի կողմից, 112, հակաքաղաքական, 418, 435, փոշիացված ոչ հասարակություն, 424, վերաբերմունք տնտեսական ու քաղաքական համակարգերի նկատմամբ, 572, ճնշիչ վարչակազմ, 428, կաթոլիկ եկեղեցի, 420, «Մարտիա-77», 389, 421, 422, 424, 444, քաղաքացիական հասարակություն, 421, 444, կոմունիստական կուսակցություն, 419, 431, 437, սահմանադիր ժողով, 436, ի տարբերություն Հունգարիայի, 425, «ապամբողջատիրացում՝ որպես քայքայման հետևանք», 391, դոգմատիկ ստալինիզմ, 419, ընտրություններ, 432, 433, 438, անկում, 389-391, «մոռացում», 422, «հիմնադիր ընտրություններ», 437, ստեղծված հետամբողջատիրական վարչակարգ, 78, 82, 390, 419, 425, 435, չեխինկիի համաձայնագիր, 421, գաղափարախոսություն, 421, 423, 432, տանել դեպի անցում, 316, ժամանակավոր կառավարություն, 108, 418, ղեկավարություն, 423, ուժի կիրառում, 428, «ստի մեջ ապրել», 422, «մաքրման» խնդիրներ, 334 ձ.38, 414, համախմբում, 422, Մյունխենի պայմանագիր, 418, փոխադարձ արգելափակման իրավունք, 440, «զուգահեռ մշակույթ», 422, 423, բազմակարծություն, 388, 404, 431, քաղաքական կուսակցություններ, 328, 410, 418, 424, 437, «հետամբողջատիրություն՝ որպես քայքայման հետևանք», 378, եռապլատային ներուժ, 435, «Պրահայի գարուն», 82, 315, 316, 420, 423, «երկերեսանիության սկզբունք», 423, դաշնությունահենք բարեփոխում-դաշնությունահենք ապահարգան, 425, վարչակարգի փլուզում, 415, 425, 426-29, 431, 435, Գորբաչովի բարեփոխումներ, 319, 322, 400, ազգայնական զգացումներ, 433, «անջատում», 58 ձ.35, խորհրդային տիպի դաշնային սահմանադրականություն, 322, 412, 418, 435, 436, պետականակերտում, 43, պետութենական խնդիրները, 418, 436, 440 ձ.121, 451 ձ.151, 477, 580, գործադուլ, 429-32, «Էզրափակիչ» ընտրություններում, 438, «Թավլյա բաժանում», 432, 438, 440, 581, «թավլյա հեղափոխություն», 324, 418, 419 ձ.67, 420 ձ.71, 421, 429 ձ.91, 430 ձ.92, 431 ձ.100, 432, 436, 437, կոմունիստական կուսակցության երիտասարդական միություն, 429  
 Չեխարի Հ.Ե., 71 ձ.10, 99 ձ.6  
 Չեչնիա, 480, 553, 565  
 Չեռնենկո Կոնստանտին, 490  
 Չիլի, 13, 29, 32, 102 ձ.1, 206, «պատվիրակված

ժողովրդավարություն», 476, «նշանակված սենատորներ», 279, ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունք, 287, 297, ավտորիտար, 287, հակապինդչեյսյան ընդդիմության սահմանադրություն, 277-8, 295, «ավտորիտար անկլավներ», 282, 284, կաթոլիկ էկեղեցի, 584, քաղաքացիական հասարակություն, 284, 285, «Concertacion», 279, 284, 285, 290, համաձայնական զգեք, 291 ծ.28, սահմանափակված անցում, 278, 280, ի տարբերություն Չիլիի և Նիկարագուայի, 284 ծ.20, ի տարբերություն Հունաստանի, 168, պարտքի ճգնաժամ, 228, «անհավատարիմ» իշխանության փոխանցում, 278, տնտեսական կատարողական, 291, 299, ընտրություններ, 279-283, բարձրաստիճան գինվորականություն, 100, 101, 102, 103, 109, 169, 284, մարդու իրավունքների խախտումներ, 261, 262, 280, 286, 291, զինվորականության ինքնավարություն, 280, զինվորականության բյուջե, 281, պետական ապարատի զինվորականության վերահսկողություն, 284, զինվորականության «պաշտպանական» ծրագիր, 276, 1988 պլեբիսցիտ, 277, 285, լեգիտիմության քաղաքատնտեսությունը, 264, քաղաքատնտեսության բարգավաճում, 116, 295, քաղաքական կուսակցություններ, 277, 279, 285, 328, 329, քաղաքական հասարակությունում, 280, նախագահական, 283, 290, 291 ծ.28, 296, մասնավորեցման նման ռազմավարության, 252, «ճշմարտության ռեժիմ», 286, օրենքի գերակայություն, 312, ավտորիտար վարչակարգի աջակցություն, 284, ԱՄՆ արտաքին քաղաքականության նկատմամբ, 111

Չիլիի Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցություն, 285, 290

Չինաստանի Ժողովրդական Հարապետություն (ՉԺՀ), 41, 43 ծ.8, ազատականացում, 566, ճնշում Տիբեթում և Սինքյանում, 324

Չուրկա Իշտվան, 417

Պաղեստինի ազատագրության կազմակերպություն, 51

Պանիչ Միլան, 561 ծ.1

Պաշտկանիս Ե.Բ., 330

պաշտոնական միակ կուսակցություն, 132, «Մովիմիենտո» /Շարժում/, 135, Պորտուգալիայում, 164, 165

Պապադոպուլոս Գեորգիոս, 182

Պապանդրեոս Անդրեաս, 187, 190

Պաստոր Ռոբերտ Ա., 160 ծ.43

պատգամավորների «միջոցեզիոնալ խումբ», 497

«պատվիրակված ժողովրդավարություն», 227

«Պատվիրակված ժողովրդավարություն», 227, 296, Արգենտինայում, 274, 294, Լեհաստանում, 380

պարտքի ճգնաժամ, 228, 294, 295, Արգենտինայում, 237, 258, 295, Բրազիլիայում, 228, 295, Չիլիում, 228, Հունգարիայում, 393, 404, Լեհաստանում, 391, Հարավային Ամերիկայում, 294, 295, Ուրուգվայում, 228, 294

պետական կառավարում, 31, 36, «ազգայնացման քաղաքականություն», 63, 65

«պետութենականության» խնդիր, 26, 38, 52-60, 101, բացակայությունը Սյոլենիայում, 580, ավտորիտար վարչակարգում, 54, Բրազիլիայում, 228, Չեխոսլովակիայում, 433-440, 480, 583, Էստոնիայում, 480, ԳԴՀ-ում, 480, հունական անցման ժամանակ, 189, Հունգարիայում, 410, 415-418, Լատվիայում, 480, Մակեդոնիայում, 580, Լեհաստանում, 345, Պորտուգալիայում, 174, հետկոմունիստական Եվրոպայում, 337, հետամբողջատիրական վարչակարգեր, 53, Ռումինիայում, 474-479, Ռուսաստանում, 482, Հարավային Եվրոպայում, 194, Իսպանիայում, 141-152, 482, 510, սուլթանական վարչակարգի ժամանակ, 53, ամբողջատիրական վարչակարգեր, 53, ԽՍՀՄ-ում, 480-486, 578, Հարավսլավիայում, 480, 481, «պետության ազդեցության նվազեցում», 194, Բրազիլիայում, 239, 250-254, Պերույում, 239, հետկոմունիստական Եվրոպայում, 562, Հարավային Եվրոպայում, 194, պետության կարգավորող իշխանություն, 563

պետության կերտում. Բալկաններում, 553-560, Էստոնիայում, 49, 58, 310, Լատվիայում, 49, 58, 310, Լիտվայում, 49

պետություն. լեգիտիմություն, 52, զինվորականության մաս, 103, 106, վերակազմավորում, 562-567, ծավալի հզորությունը, 563, պետականակերտում, 39, 43, Թիլիի սահմանումները, 39, Վերերական սահմանումներ, 39

«պետություն-ազգեր», 62

Պերես-Դիաս Վիկտոր, 129 ծ.3, 153

Պերոն Խուան, 266, 269, 270

պերոնիզմ, 104, 266-70

«Պերոնիստ» կուսակցություն, 266-70

Պերու, 22, 104, 234, 239

Պինդրո դե Ասեդո, 179

Պինդչեո Ավգուստո, 13 ծ.8, 123, 191, 251, 293, ավտորիտար սահմանադրություն, 277-82, շարունակվող ռետուրներ, 284, 288, 289, պարտությունը պլեբիսցիտի ժամանակ, 285, օրենք, 229, հակակրանք, 288, զգուշացումներ, 285

Պիտհարտ Պետր, 437

Պիրես դո Ռիո Կալդեյրա Թերեզա, 241 ծ.24

Պոզի Ջիանֆրանկո, 40 ծ.5

Պոդկրեպա, 443

Պոժգայ Իմրե, 397, 401, 402-5, 407

Պոլվերե Կալյո, 544

Պորտուգալիա, 12, 56, 84, 241

Պուերտո-Ռիկո, 539, 540

Պրավդա Ալեքս, 355 ծ.30

Պրժնորսկի Ադամ, 22 ծ.1, 113, 114, 189,

Պրոդն Ս., 446

Ջիլբերգ Տրոնդ, 466 ծ.33

Ջիլեսայի Չարլզ, 209 ծ.3, 211 ծ.6, 213 ծ.10, 215

Ջովիթ Քեն, 325, 457, 563

Ռադի Մարտին, 458 ծ.10

Ռազ Շոզեֆ, 61 ծ.38

Ռակոշի Մատյաշ, 392, 393

Ռահմոնով Էմմալի, 579 ծ.18

Ռայնիկեն Վոլֆգանգ, 68 ծ.4

Ռիպլ Խուան, 215 ծ.14

Ռիգրի Թ. Հ., 331

Ռյույտել Առնոլդ, 530

Ռոդրիգես Սահագուն Ագուստին, 131 ծ.7

Ռոդրիգո Ռոդրիգես Ֆերնանդո, 128 ծ.2, 156 ծ.36, 161 ծ.45

Ռուլս Ջոն, 354 ծ.29

Ռոկոսովսկի Կոնստանդին, 345

Ռոմանովյան կայսրություն, 48

Ռոուզ Ռիչարդ, 17, 326, 565 ծ.5

Ռոտշիլդ Ջոզեֆ, 316, 342 ծ.5

«Ռուլս» շարժում, 497

Ռուսիանիա 13, 48, 112 ծ.9, 152, 157, 322, հակախորհրդային ազգայնականություն, 457, 458, քաղաքական և տնտեսական համակարգերի նկատմամբ վերաբերմունք, 569, ուղղափառ եկեղեցու ինքնավարություն, 462, «դարչնագույն-կարմիր սուլթանական» կոալիցիա, 477, «յուրացված հեղափոխություն», 455, 475, կաթոլիկ եկեղեցի, 326, քաղաքացիական հասարակություն, 456, 462-463, 476-478, կոալիցիոն կառավարություն, 476, կոլեկտիվ ղեկավարություն, 460, կոմունիստական կուսակցություն, 460, 462, 467, 479, դավադրության վարկած, 454, Լեհաստանի, Հունգարիայի և Լիտվայի միջև տարբերություն, 479, «հակախորհրդային ստալինիզմ», 459, ժողովրդավարական կոնվենտ, 475, ժողովրդավարական ընդդիմություն, 453, 456, 471, 473, 476, դիֆուզիայի էֆեկտ, 470, ապատեղեկատվություն, 455, անցման «փաստերի» մասին տեսակետներ, 454-456, տոհմական հակումներ, 460, տնտեսական հասարակություն, 478, ընտ-

րություններ, 453, 472, 472 ծ.43, 473, անհամաձայնության կոդավորված լեզու, 465, գնչուներ, 478, մարդու իրավունքների ոտնահարում, 453, 478, հուճարական փոքրամասնություն, 477, 478, գաղափարախոսություն, 465, 466, ժամանակավոր կառավարություն, 474, «Կլոր սեղան» քննարկումների պակասություն, 453, «երկրորդային մշակույթի» պակաս, 462, դեկավարություն, 460, ազատականություն, 457, հանքափորների գործադուլ, 462, մոբիլիզացում, 467, 468, «ցասման շարժում» 475, ազգայնականություն, 467-472, Ազգային փրկության ճակատ, 474-476, նեոկոմունիստներ, 455, 471, նոմենկլատուրա, 456, հետամբողջատիրության գրոհ, 457, 458, անհատ, 456, 461-464, 473, բազմակարծություն, 461, 465, քաղաքական կուսակցություններ, 477, 479, քաղաքական հասարակություն, 478-479, սեփականացում, 563 ծ.2, վարչակարգ, 470-475, պատասխան Գորբաչովի բարեփոխումներին, 319, զինվորականության դեր, 409, անվտանգության ծառայության դեր, 455, ռուսիական բացառիկություն, 454, 456, օրենքի գերակայություն, 471, 474, 476, 478, «սամիզդատ» գրականություն, 464 ծ.29, «Socialism in one family», 460 ծ.16, պետության կերտում, 39, պետութենականության խնդիր, 477, սուլթանական վարչակարգ, 71 ծ.10, 84, 457, 460-469, 471-475, արհմիություն, 462, ապստամբություն Տիմիշոարայում, 453, 471, 475, հեռուստատեսության անհրաժեշտություն, 455, 470, վարչակարգի դադարեցման բռնություն, 453, 469

Ռուսաստան. տնտեսական և քաղաքական համակարգերի նկատմամբ վերաբերմունք, 567-575, Չեչնիայի անջատողական պայքար, 480, 553, քաղաքացիություն, 480, ինքնիշխանության հրապարակում, 502, 508, կառավարության լեգիտիմացում, 482, տնտեսական կատարողական, 502 ծ.46, 569 ծ.13, տնտեսական հասարակարգ, 35 ծ.17, 482, նախկին կոմունիստներ, 506, գորբաչովյան հանրաքվեն ԽՍՀՄ-ում, 504 ծ.48, հայրենի պետության դեր կատարող, 523, 558, «չմիավորված շրջան» Բալթյան երկրներում, 549, պետության ապակազմավորման հետևանք, 312, ուղղափառ եկեղեցի, 536, քաղաքական կուսակցություններ, 494, մասնավորեցում, 252, 563-565, սեփականության իրավունքներ, 331, հանրապետական մակարդակի ընտրություններ, 499, վերադառնալ կոմունիզմին, 587, ռուսական ինքնություն, 535, ռուսները նախկին հանրապետություններում, 59, միաժամանակյանության խնդիր, 562,

պետութենականության խնդիր, 574, համաձայնագիր Ռուսաստանի և Բալթյան պետությունների միջև, 531, ոչ ժողովրդավարական լուծումների անհասանելիություն, 566, ռուսական «ազգայնականության» թուլություն, 536  
Ռուսոս Ա., 446

Սալազար Անտոնիո, 164, 165, 180, 188, 200, Սալազար վարչակարգի իրավագիտակցությունը, 331

Սահմանադրականություն, 31, 88, Արգենտինայում, 271-72, Բրազիլիայում, 229,

սահմանադրությունների մշակման միջավայր, 101, 121-23, Արգենտինայում, 123, 259, 262, 272, 273, 274, Բրազիլիայում, 123, 234, 262, Չիլիում, 122, 276, 279, 281, 284, 289, Բուլղարիայում, 412, Սահմանադրության փոխհամաձայնեցված մշակում, 123, 162, սահմանափակ սահմանադիր ժողով, 122, 284, կաշկանդել, 109, Չեխոսլովակիայում, 122, 418, Էստոնիայում, 528, Հունաստանում, 183-188, Հունգարիայում, 411, 412, «Թղթե» սահմանադրություն, 122, Լեհաստանում, 371-375, կուսակցական սահմանադրություն, 123, Պորտուգալիայում, 122, 164, 168, 173, 174, 211, 212, 226, Ուրուգվայում, 123, 211, 295, ԽՍՀՄ-ում, 122, 489, 497, 510, 511, կառուցողական անվտանգության քվեից, 163, 412 ծ.51  
«սամիզդատ» գրականություն, 73, 99 ծ.6, Ռումինիայում, 416, 462

Սայմոն Յանոշ, 375, 391 ծ.5, 409, 416

Սայմոն Ուոլտեր Բ., 45

Սայուդիա, 498, 527

Սանզվինետի Խորխե, 214 ծ.11, 217-220, 263, 296 ծ.1

Սավիսաար Էդգար, 560 ծ.55

Սարնեյ ժոզե, 231, 232, 295

Սարտորի Ջիովանի, 68 ծ.4

«սարքովի մեծամասնություն», 384

Սելեն Աննա, 394 ծ.14, 397

Սելվեր Դուայթ, 517

Սեն Ժան գեներալ Իբերիկո, 258 ծ.1

Սենկովիչ Գեորգե, 466

Սեռոա ժոզե, 257

Սեռոա Նարցիս, 131 ծ.7, 156

Սերբիա, 502, 561 ծ.1

«Մինատրայի դոկտրին», 400, 400 ծ.27

Սլեզսթեդ Ռունե, 31 ծ.10, 121 ծ.25

Սլովակիա, 49, տնտեսական և քաղաքական համակարգի նշանակալի դիրքորոշումները, 572, կաթոլիկ եկեղեցի, 327, 432, կայացման հնարավորությունները, 440 ծ.121, նացիստական խամաճիկային պետություն, 433, արագ

արդյունաբերականացում, 433, «թավշյա բաժանում», 433-438

Սլովենիա, 13 ծ.9, պետութենականության խնդրի բացակայություն, 580, կաթոլիկ եկեղեցի, 327

Սկաչ Սինդի, 247 ծ.34

Սմիթ Ադամ, 33

Սմիթ Դայանա, 181 ծ.41

Սմուլովից Կատալինա, 262 ծ.7, 264 ծ.10

Սյունի Ռոնալդ Գրիգոր, 484 ծ.9, 485 ծ.12, 505

Մնայեր Ռիչարդ, 99 ծ.6

«Մոլիդարիդալ Էսպանյոլա», 141

Մոմալի, պետության բացակայություն, 41

Մոմոսա Դեբայլե Անաստասիո, 9 ծ.2, 86, 456, 472

Մոտելո Կալվո, 196

սոցիալական բարեկեցությանն ուղղված ծախսերն, 194

Սոցիալական երկխոսության խումբ, 456

սոցիալիստները Չիլիում, 290

սոցիալ-տնտեսական զարգացում, 115

Մուարեշ Մարիո, 178

Մուարես Ադոլֆո, 116, 118, 131, 135-140, 196, 438, 510, 512, որոշում Կոմունիստական կուսակցության վերաբերյալ, 140-145

սուլթանական վարչակարգեր, 70, փլուզում, 105, դինաստիական հաջորդականություն, 84, 90, վերնախավեր, 101, 106, միաձուլվածություն մասնավորի և հանրայինի, 83-84, գաղափարախոսություն, 81, 83, 87, առաջնորդություն, 81, զինվորականություն, 99, 101, մոբիլիզացում, 81, 83, դաշինքի վրա հիմնված անցում, Ռումինիայում, 71 ծ.10, 83, 310, 456, 472-474, 475-479, պետութենականության խնդիր, 53, անցման ուղիներ, 93

Սուլիոցկա Հաննա, 374, 392

Ստալին Իոսիֆ, 70, 74, 81, 86, 493, ծաղկուն ստալինիզմ, 329

Ստանիչկիա Յադվիգա, 351, 364, 373

Ստարովոյտովա Գալինա, 483 ծ.7

Ստեփան Միրոսլավ, 431

Սքիլինգ Հ. Գորդոն, 71 ծ.8, 317 ծ.9, 435

Վալենսա Լելի, 349, 353, 364-365, 371-382, խարիզմատիկ առաջնորդ, 339, 372, նախագահի անկուսակցական թեկնածու, 373, 374, «փոքրիկ սահմանադրության» առաջարկություն, 373, 1995-ի պարտության արձագանք, 586 ծ.26, կուսակցությանը միանալու մերժում, 328

Վալենսուելա Ջ. Սեմյոել, 24 ծ.4

վաղ հետամբողջատիրություն. տե՛ս հետամբողջատիրական վարչակարգեր, վաղ հետամբողջատիրություն

Վայնոայիս Պետեր, 544 ծ.31

վան դե Վալլ Նիկոլաս, 99 ծ.6  
 Վասկես Տաբարե, 217-219  
 Վատիկան II, 113  
 Վարադի Թիբոր, 561 ծ.1  
 Վարգաս Գետուլիո, 265, Էստադո Նովոյի փորձը, 112  
 Վարչական դաշինք, 13, 14 ծ.9, 313, 315, 317, 325 ծ.21, 342, «Որահայի գարուն», 423  
 վարչակարգի անկում Արգենտինայում, 260, հասկացություն, 77, 426, Չեխոսլովակիայում, 389, 415, 419-422, հետամբողջատիրական վարչակարգ, 107, սուլթանական վարչակարգ, 107  
 վարչակարգի հսկողության տակ պահվող անցում, 390, 441, 442, 450  
 վարչահրամայական տնտեսություն, 32, 336, հասուն հետամբողջատիրական վարչակարգերում, 73, տնտեսական հասարակությունների փոխակերպում, 563, 567, 589  
 Վացյավիկ, գեներալ, 431  
 Վեբեր Մաքս, 9 ծ.2, պետության ատրիբուտներ, 39, բյուրոկրատիա, 244 ծ.30, կեսարա-պապականություն, 584 ծ.22, ազգի գաղափար, 45, ուժի կիրառման լեգիտիմություն, 428, սուլթանականություն, 83, 84, 335 ծ.41, 457, 467  
 Վերեր Յուզին, 57  
 Վելասկո Էռնեստո, 282 ծ.16  
 Վելիկ Ռայվո, 544 ծ.31  
 Վեյզել Ջորջ, 113 ծ.12  
 Վեստֆալիա, 44 ծ.12  
 վերասերված (ռեկոմբինատային) հանրային-մասնավոր սեփականություն, 106  
 Վերբիցկի Օրասիո, 272 ծ.20  
 Վերդերի Կատերին, 454, 46  
 Վերեմիա Թանոս, 184, 186, 186 ծ.12  
 Վեֆորտ Ֆրանսիսկո, 113 ծ.13, 231 ծ.6  
 Վիատր Ջերզի, 586 ծ.24  
 Վիդենով Ժան, 450  
 Վիլսոն Վուդրո, 47  
 Վիյբերգ Հական, 56 ծ.30  
 Վիշինսկի, կարդինալ Ստեֆան, 341  
 Վիտորիո Անտոնիո, 177 ծ.34  
 Վոյտիլա Կարոլ (Հովհաննես Պողոս II պապ), 347  
 Վրաստան, 506, Գորբաչովի հանրաքվեին բոյկոտել, 503, ԱՊՀ 509 ծ.62, կլանային քաղաքականություն, 506, կոմունիստական կուսակցություն, 501, միջլեթնիկ բախումներ, 480, ազգայնամոլության աճ, 501, քաղաքական կուսակցություններ, 494, հանրապետական մակարդակի ընտրություն, 499, անջատողականություն ԽՍՀՄ-ից, 480  
 Տաագեպերա Ռեյն, 523 ծ.5, 525 ծ.7

Տանրուս Գ., 446  
 Տաջիկստան. լարված քաղաքական ազատություններ, 579  
 Տառադելլաս Ժոզեպ, 134  
 տարածաշրջանային հեգեմոն՝ որպես անցման գործոն, 110  
 տարածաշրջանային հեգեմոնների կողմից, 111, որպես ցայտգայտ, 111-114, 256  
 տարածքային սահմաններ, 38, 54  
 Տարանկոն, կարդինալ, 134  
 Տեխերո Մոլինա Անտոնիո, 141  
 Տեյտելբոն Վոլդոյա, 288  
 Տիանանմեն հրապարակ, 427  
 Տիմինսկի Ստան, 365, 372  
 Տիշմանիանո Վլադիմիր, 443 ծ.130  
 Տիպաբանություն. վերլուծական օգտակարություն, 67  
 Տիրոնի Էյուլենհիո, 278 ծ.5  
 տնտեսական հասարակություն, 27, 34, 87, Արգենտինայում, 272, Բրազիլիայում, 244, 256, Բուլղարիայում, 452 ծ.153, Չիլիում, 34, «ազգայնացման քաղաքականության» ազդեցություն, 63, Հունգարիայում, 395, 396, 413, հետպալանային տնտեսություններում, 562, 564, 566, 569, հետկոմունիստական Եվրոպայում, 336-337, ենթաօրենսդրական շրջանակ, 337, 562, շուկաների դեր, 28, Ռումինիայում, 478, Ռուսաստանում, 35 ծ.17, 482, Ուկրաինայում, 35 ծ.17  
 Տնտեսական փոխօգնության խորհուրդ, 320, 315, 321  
 տնտեսության կատարողականություն Չիլիում, 281, 291, ընկալումներ, 568-73, Լեհաստանում, 378, 382, 386, Պորտուգալիայում, 180, 181, վարչակարգի հետ հարաբերություններ, 115-118, Ռուսաստանում, 502 ծ.46, Սլովակիայում, 570, Իսպանիայում, 160, Ուկրաինայում, 502 ծ. 46  
 Տուպամարոս, 215  
 Տրանսեն Օվիդիո, 458 ծ.10  
 Տրոլսկիլո Ռաֆայել, 83, 86  
 ՏՓԽ, 13, 13 ծ.9  
 «ցամառի շարժում», 475  
 Ցետկով Պլամեն, 447 ծ.143  
 Ցիմերման Էքարտ, 119 ծ.23  
 Ուայթեդ Լոուրենս, 39 ծ.2, 109, 196, 313  
 Ուզբեկստան. ոչ ժողովրդավարական կառավարություն, 561  
 ուժեղ կապվածության վարկած, 568, 569  
 Ուիլլեր Դուգլաս, 165 ծ.3  
 Ուկրաինա, 500, տնտեսական և քաղաքական համակարգերի հանդեպ վերաբերմունք,

576-584, ԱՊՀ, 509 ծ.62, մշակութային առանձնացում, 58 ծ.35, տնտեսական արդյունք, 502 ծ.46, տնտեսական հասարակություն, 34 ծ.16, նախկին կոմունիստներ, 506, լեզվական քաղաքականություն, 500, սեփականացում, 563 ծ.2, հանրապետական մակարդակի ընտրություններ, 499, կիսանախագահականություն, 516, ԽՍՀՄ-ից ինքնիշխանություն, 497

ուղղափառ քրիստոնեություն, 326, 346

Ուրբան Լալոյ, 408

Ուրբան Յան, 424

Ուրուզվայ, 13, 102 ծ.1, 207, 276, ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունք, 221, 297-301, «խապանական մոդելի» առկայություն, 166, քաղաքացիական-զինվորական հարաբերություններ, 218, 221, քաղաքացիական հասարակություն, 210, կայացած ժողովրդավարություն, 219-221, սահմանադրության մշակման միջավայր, 122, 210, 295, ի տարբերություն Իսպանիայի, 224, 226, արդյունավետության ճգնաժամ, 223, պարտքի ճգնաժամ, 228, 294, զինվորականության պաշտպանական և հարձակողական ծրագրեր, 212, զինվորական կառավարության բաժանում, 210, 211, կրկնակի միաժամանակյա քվեարկություն, 225, ընտրություններ, 211, 213, 215, բարձրաստիճան զինվորական կառավարություն, 209, կուսակցություններին հարել, 210, զինվորական արտոնություններ, 213, զինվորական դատավարություն, 213, 214, 286, «Ռազմածովային ակումբ» դաշինք, 213, 217, 220, քաղաքական կուսակցություններ, 211, 213, 223, 328, քաղաքական հասարակություն, 210, նախագահական, 290, ժողովրդավարության որակ, 221-223, համաներման մասին հանրաքվե, 214, 220, ճնշում, 210, 258, Հունաստանի հետ նմանություն, 213, երկկուսակցական համակարգ, 225, 227 ծ.41

Փայ Լյուսինեն Ու., 68 ծ.4

Փառուլ Չարլզ Թ., 127 ծ.1

Փեհլի Ռեզա (Բրանի Շահը), 9, 467, 470

փոխանցում, 142

փոխլրացնող բազմակի ինքնությունները, 146

փոխհամաձայնեցված դաշինք, 90

փոքրամասնության վարչապետ, 373

«փոքրիկ սահմանադրություն», 373

Փրեստոն Փոլ, 154

Փրիդիսմ Ջեֆրի, 109 ծ.7

քաղաքական գիտելիք, 166

քաղաքական ինքնություններ, 146

քաղաքական կուսակցություններ, 28, 107, Արգենտինայում, 248, 271, 273, 276-281, 284

քաղաքական հասարակություն, 28, 29, 34, Արգենտինայում, 228, 269, 277, 283

քաղաքական ղեկավարություն, 28

քաղաքացիական - զինվորական հարաբերություններ, 156

քաղաքացիական դաշինք, 456

քաղաքացիական հասարակություն, 13, 29-33,

37, 72, 105, Արգենտինայում, 262, 274, Բրազիլիայում, 13, 228-32, 235-37, 241, 243, Բուլղարիայում, 322, 326, 327, 334, 356, Չիլիում, 285, 262,

Չեխոսլովակիայում, 389, 420, ժողովրդավարական ընդդիմություն, 73, «ազգայնացման քաղաքականության» ազդեցություն, 63, Հունաստանում, 182, 183, Հունգարիայում, 389-97, 399,

400, 402-4, 406, 408-9, 412, 414-18, 420-21, 424, անցման նախաձեռնություն, 107, ժամանակավոր կառավարություն, 107, 108, Լեհաստանում, 18, 311, 316, 323, 326-28, 339-44, 347, 350, 352,

355, 359, 361, 365, 370, 372-73, 375-76, 378, 380, 385-86, հետկոմունիստական Եվրոպայում, 327,

կրոն, 326, Ռումինիայում, 412, 416, 452, 454, 456, 462, 465, 471, 472, 475, 479, Իսպանիայում, 134,

156, Ուրուզվայում, 210, ԽՍՀՄ-ում, 500, 502

«քաղաքացիական հասարակությունն ընդդեմ պետության», 360

քաղաքացիական ղեկավարություն, 104

քաղաքացիական քաղաքական հասարակության փոխլրացնելիություն (կոմպլեմենտարություն), 28

«Քաղաքացիական ֆորում», 431, 437, 498, քաղաքացիական վերնախավ, 101, որպես հավանական հաղթողներ և իշխողներ, 104

քաղաքացիականացված ավտորիտար վարչակարգ Պորտուգալիայում, 165, Իսպանիայում, 153-57

Քաղաքացիություն, 38, 49-50, Արգենտինայում, 272, Բալթյան երկրներում, 530, Բրազիլիայում, 231, 245, ԱՊՀ երկրներում, 579, 583, սահմանում, 54, Էստոնիայում, 527-36, 541-46, 551, 560, Լատվիայում, 523, 525-30, 532-33, 537, 539-40, 543-44, 546 - 48, 549, 552, 558, 559, Լիտվայում, 523-27, 530, 532, 546-47, 549, 558, 560, 562, 584-86, բազմազգ պետություն, 528, 533, 541, 552, 558, ոչ ժողովրդավարական վարչակարգում, 52, 53, Ռուսաստանում, 413, Իսպանիայում, 39, 54, 95

Քաղաքացիություններ, 28, 107, Արգենտինայում, 248, 271, 273, 276-281, 284

քաղաքական հասարակություն, 28, 29, 34, Արգենտինայում, 228, 269, 277, 283

քաղաքական ղեկավարություն, 28

քաղաքացիական - զինվորական հարաբերություններ, 156

քաղաքացիական դաշինք, 456

քաղաքացիական հասարակություն, 13, 29-33, 37, 72, 105, Արգենտինայում, 262, 274, Բրազիլիայում, 13, 228-32, 235-37, 241, 243, Բուլղարիայում, 322, 326, 327, 334, 356, Չիլիում, 285, 262, Չեխոսլովակիայում, 389, 420, ժողովրդավարական ընդդիմություն, 73, «ազգայնացման քաղաքականության» ազդեցություն, 63, Հունաստանում, 182, 183, Հունգարիայում, 389-97, 399, 400, 402-4, 406, 408-9, 412, 414-18, 420-21, 424, անցման նախաձեռնություն, 107, ժամանակավոր կառավարություն, 107, 108, Լեհաստանում, 18, 311, 316, 323, 326-28, 339-44, 347, 350, 352, 355, 359, 361, 365, 370, 372-73, 375-76, 378, 380, 385-86, հետկոմունիստական Եվրոպայում, 327, կրոն, 326, Ռումինիայում, 412, 416, 452, 454, 456, 462, 465, 471, 472, 475, 479, Իսպանիայում, 134, 156, Ուրուզվայում, 210, ԽՍՀՄ-ում, 500, 502

«քաղաքացիական հասարակությունն ընդդեմ պետության», 360

քաղաքացիական ղեկավարություն, 104

քաղաքացիական քաղաքական հասարակության փոխլրացնելիություն (կոմպլեմենտարություն), 28

«Քաղաքացիական ֆորում», 431, 437, 498, քաղաքացիական վերնախավ, 101, որպես հավանական հաղթողներ և իշխողներ, 104

քաղաքացիականացված ավտորիտար վարչակարգ Պորտուգալիայում, 165, Իսպանիայում, 153-57

Քաղաքացիություն, 38, 49-50, Արգենտինայում, 272, Բալթյան երկրներում, 530, Բրազիլիայում, 231, 245, ԱՊՀ երկրներում, 579, 583, սահմանում, 54, Էստոնիայում, 527-36, 541-46, 551, 560, Լատվիայում, 523, 525-30, 532-33, 537, 539-40, 543-44, 546 - 48, 549, 552, 558, 559, Լիտվայում, 523-27, 530, 532, 546-47, 549, 558, 560, 562, 584-86, բազմազգ պետություն, 528, 533, 541, 552, 558, ոչ ժողովրդավարական վարչակարգում, 52, 53, Ռուսաստանում, 413, Իսպանիայում, 39, 54, 95

Քաղաքացիություններ, 28, 107, Արգենտինայում, 248, 271, 273, 276-281, 284

քաղաքական հասարակություն, 28, 29, 34, Արգենտինայում, 228, 269, 277, 283

քաղաքական ղեկավարություն, 28

քաղաքացիական - զինվորական հարաբերություններ, 156

քաղաքացիական դաշինք, 456

քաղաքացիական հասարակություն, 13, 29-33, 37, 72, 105, Արգենտինայում, 262, 274, Բրազիլիայում, 13, 228-32, 235-37, 241, 243, Բուլղարիայում, 322, 326, 327, 334, 356, Չիլիում, 285, 262, Չեխոսլովակիայում, 389, 420, ժողովրդավարական ընդդիմություն, 73, «ազգայնացման քաղաքականության» ազդեցություն, 63, Հունաստանում, 182, 183, Հունգարիայում, 389-97, 399, 400, 402-4, 406, 408-9, 412, 414-18, 420-21, 424, անցման նախաձեռնություն, 107, ժամանակավոր կառավարություն, 107, 108, Լեհաստանում, 18, 311, 316, 323, 326-28, 339-44, 347, 350, 352, 355, 359, 361, 365, 370, 372-73, 375-76, 378, 380, 385-86, հետկոմունիստական Եվրոպայում, 327, կրոն, 326, Ռումինիայում, 412, 416, 452, 454, 456, 462, 465, 471, 472, 475, 479, Իսպանիայում, 134, 156, Ուրուզվայում, 210, ԽՍՀՄ-ում, 500, 502

«քաղաքացիական հասարակությունն ընդդեմ պետության», 360

քաղաքացիական ղեկավարություն, 104

քաղաքացիական քաղաքական հասարակության փոխլրացնելիություն (կոմպլեմենտարություն), 28

«Քաղաքացիական ֆորում», 431, 437, 498, քաղաքացիական վերնախավ, 101, որպես հավանական հաղթողներ և իշխողներ, 104

քաղաքացիականացված ավտորիտար վարչակարգ Պորտուգալիայում, 165, Իսպանիայում, 153-57

Քաղաքացիություն, 38, 49-50, Արգենտինայում, 272, Բալթյան երկրներում, 530, Բրազիլիայում, 231, 245, ԱՊՀ երկրներում, 579, 583, սահմանում, 54, Էստոնիայում, 527-36, 541-46, 551, 560, Լատվիայում, 523, 525-30, 532-33, 537, 539-40, 543-44, 546 - 48, 549, 552, 558, 559, Լիտվայում, 523-27, 530, 532, 546-47, 549, 558, 560, 562, 584-86, բազմազգ պետություն, 528, 533, 541, 552, 558, ոչ ժողովրդավարական վարչակարգում, 52, 53, Ռուսաստանում, 413, Իսպանիայում, 39, 54, 95

Քաղաքացիություններ, 28, 107, Արգենտինայում, 248, 271, 273, 276-281, 284

քաղաքական հասարակություն, 28, 29, 34, Արգենտինայում, 228, 269, 277, 283

քաղաքական ղեկավարություն, 28

քաղաքացիական - զինվորական հարաբերություններ, 156

քաղաքացիական դաշինք, 456

քաղաքացիական հասարակություն, 13, 29-33, 37, 72, 105, Արգենտինայում, 262, 274, Բրազիլիայում, 13, 228-32, 235-37, 241, 243, Բուլղարիայում, 322, 326, 327, 334, 356, Չիլիում, 285, 262, Չեխոսլովակիայում, 389, 420, ժողովրդավարական ընդդիմություն, 73, «ազգայնացման քաղաքականության» ազդեցություն, 63, Հունաստանում, 182, 183, Հունգարիայում, 389-97, 399, 400, 402-4, 406, 408-9, 412, 414-18, 420-21, 424, անցման նախաձեռնություն, 107, ժամանակավոր կառավարություն, 107, 108, Լեհաստանում, 18, 311, 316, 323, 326-28, 339-44, 347, 350, 352, 355, 359, 361, 365, 370, 372-73, 375-76, 378, 380, 385-86, հետկոմունիստական Եվրոպայում, 327, կրոն, 326, Ռումինիայում, 412, 416, 452, 454, 456, 462, 465, 471, 472, 475, 479, Իսպանիայում, 134, 156, Ուրուզվայում, 210, ԽՍՀՄ-ում, 500, 502

«քաղաքացիական հասարակությունն ընդդեմ պետության», 360

քաղաքացիական ղեկավարություն, 104

քաղաքացիական քաղաքական հասարակության փոխլրացնելիություն (կոմպլեմենտարություն), 28

«Քաղաքացիական ֆորում», 431, 437, 498, քաղաքացիական վերնախավ, 101, որպես հավանական հաղթողներ և իշխողներ, 104

քաղաքացիականացված ավտորիտար վարչակարգ Պորտուգալիայում, 165, Իսպանիայում, 153-57

Քաղաքացիություն, 38, 49-50, Արգենտինայում, 272, Բալթյան երկրներում, 530, Բրազիլիայում, 231, 245, ԱՊՀ երկրներում, 579, 583, սահմանում, 54, Էստոնիայում, 527-36, 541-46, 551, 560, Լատվիայում, 523, 525-30, 532-33, 537, 539-40, 543-44, 546 - 48, 549, 552, 558, 559, Լիտվայում, 523-27, 530, 532, 546-47, 549, 558, 560, 562, 584-86, բազմազգ պետություն, 528, 533, 541, 552, 558, ոչ ժողովրդավարական վարչակարգում, 52, 53, Ռուսաստանում, 413, Իսպանիայում, 39, 54, 95

- Քըրկպատրիկ Ջին, 316  
 Քիմլիկա Ուլի, 61 ծ.38  
 Քիշ Յանոշ, 396 ծ.21, 29 ծ.7  
 Քիսինջեր Հենրի, 178 ծ.35  
 Քոլիե Դավիդ, 13 ծ.7  
 Քոլումեր Ժոզեպ Ա., 95 ծ.5, 130 ծ.5  
 Քոննոր Ուոլթեր, 56  
 Քոուլի Ջոան, 62 ծ.40  
 Քոփեջ Մայքլ, 68  
 Քրեմպտոն Ռիչարդ, 442  
 Քրիստոնես- ժողովրդավարական կուսակցություն, 290 ծ. 26
- Օ'Ռոննել Գիլերմո, 13, 22 ծ.1, 25 ծ.5, 39 ծ.2, 109, 183 ծ.6, 227, 242, 266, 267, 275, 380, 517  
 Օլշեսկի Յան, 374  
 Օլսեն Դավիդ, 435  
 Օլբրտ Մարթա Բրիլ, 59 ծ.36  
 Օսիատինսկի Վիկտոր, 353 ծ.26, 354 ծ.28  
 Օսմանյան կայսրություն, 48, 84, միլլեթ, 62  
 Օսո Դեյվիդ, 361 ծ.43  
 օրենսդիր մարմինները, 28, 108  
 օրենքի գերակայություն, 26, 31, 88, Արգենտինայում, 274-276, 301, Բրազիլիայում, 230, 231, 235, 238-241, 253, 255, Չիլիում, 335, տնտեսական հասարակության ստեղծում, 563, «ազգայնացման քաղաքականության» ազդեցություն, 63, Հունգարիայում, 390, 404, հատուն հետամբողջատիրականություն, 331, Պորտուգալիայում, 331, հետկոմունիստական Եվրոպա, 330, 332, Ռումինիայում, 454, 456, 462, 466, սոցիալիստական իրավագիտակցություն, 331, իսպանական անցման մեջ, 161, 335, ամբողջատիրական համակարգերում, 330 ծ.29, ԽՍՀՄ-ում, 497  
 օրինականություն, 28, ժողովրդավարական լեգիտիմության աստիճանակարգ, 566, քաղաքացիների ընկալում, 114, արդյունավետության կապը, 114-120, 163, 164, 299- 307, 313, 572 ծ.15, Հարավային Եվրոպայի ժողովրդավարություններ, 198, ոչ օգտակար պետության վերակազմավորում, 563-567  
 Օրտեգա Դանիել, 284 ծ.20  
 Օֆֆե Կլաուս, 327 ծ.23
- Ֆաշիզմը որպես գաղափարախոսություն, 112  
 Ֆարնետի Պաոլո, 28 ծ.6  
 Ֆերեյրա Վիլսոն, 213  
 Ֆերնանդես Միրանդա Տորկուատո, 134  
 Ֆիլիպեսկո Ռադու, 463 ծ.28  
 Ֆիլիպիններ, 519 ծ.86, սուլթանական վարչակարգ, 71 ծ.10, 78, ԱՄՆ արտաքին քաղաքականություն, 111
- Ֆինլանդիա, 48, կիսանախագահական համակարգ, 370  
 Ֆիշ Մ. Սթեֆեն, 498 ծ.34  
 Ֆիշեր Մերի Էլեն, 457, 461  
 Ֆիշման Ռոբերտ, 127 ծ.1  
 «Ֆուերաս Նուեսա», 141  
 Ֆուխիմորի Ալբերտո, 234, 240  
 Ֆուկույամա Ֆրենսիս, 111 ծ.8  
 Ֆոքալի Ալեյանդրո, 281, 288  
 Ֆրագա Մանուել, 114, 134  
 Ֆրանկո Իտամար, 235, 243  
 Ֆրանկո Ֆրանսիսկո, 95, 116, 129, 151, 165, 179, 188, իրավագիտակցություն Ֆրանկոյի վարչակարգում, 249  
 Ֆրանկոյական ինստիտուտներ, 132  
 Ֆրանսիա, 49, Հինգերորդ Հանրապետություն, 384, ազգայնականություն, 44, 44 ծ.12 կիսանախագահականություն, 367, 369, ազգակերտման պետությունների, 57  
 Ֆրեյ Էդուարդո, 283 ծ.19, 290 ծ.27, 291 ծ.28  
 «Ֆրիդլմ հաուս», 68 ծ.4, 576  
 Ֆրիդհայմ Դանիել, 80 ծ.16, 166 ծ.5, 427  
 Ֆրիման Ջոն Ռ., 33 ծ.12
- Center Alliance, 363, 374  
 «Convergencia i Unio», 163  
 «COPCON», 172 ծ.21
- desencanto, Բրազիլիայում, 257, Իսպանիայում, 128, 134 ծ.11, Ուրուգվայում, 218
- «East European Constitutional Review», 80 ծ.16, 478  
 Encuentro Progresista, 218  
 Euskadi ta Askatasuna, 141, 144, 147-151
- «Frepaso», 274 ծ.26
- «GAL» (Grupos Anti-terroristas de Liberacion), 163
- MERCOSUR, 227 ծ.40
- Partido do Movimento Democratico Brasileiro, 250 ծ.37  
 Partido dos Trabalhadores, 250 ծ.37  
 Partido Popular, 153, 583
- «Renovacion Nacional», 290 ծ.26  
 Ruch Alternatywny Akcja Demokratyczna (ROAD), 363  
 «Trager», 45

## Կովկասի ինստիտուտի հրատարակումները (մինչև 2008 թ., Լրատվամիջոցների Կովկասյան ինստիտուտ)

**Ս. Մինասյան, Լեռնային Ղարաբաղը քսանամյա հակամարտությունից հետո. անխուսափելի՞  
է արդյոք ստատուս-քվոյի երկարաձգումը/ Կովկասի ինստիտուտի վերլուծական զեկույց №2,  
օգոստոս 2010. – Եր.: Կովկասի ինստիտուտ, 2010 – 80 էջ:  
ISBN 978-99941-2-413-8 ռուսերեն**

**Վ.Դյատլով, Է.Մելքոնյան. Սփյուռքահայություն. ակնարկներ սոցիալ-մշակութային  
տիպաբանության շուրջ/ Խմբ. Ա.Իսկանդարյան. – Եր.: Կովկասի ինստիտուտ, 2010 – 207 էջ:  
ISBN 978-99941-2-321-6 ռուսերեն**

**Ա.Իսկանդարյան, Ս.Մինասյան. Քաղաքականության պրագմատիզմը պատմական  
սահմանափակումների պայմաններում. հայ-թուրքական գործընթացի վերլուծություն/ Կովկասի  
ինստիտուտի վերլուծական զեկույցումներ, №1, հունվար 2010. - Եր.: Կովկասի ինստիտուտ, 2010:  
Ռուսերեն՝ 59 էջ, ISBN 978-99941-2-341-4  
Անգլերեն՝ 48 էջ, ISBN 978-99941-2-340-7**

**Կովկասյան հարևանություն. Թուրքիա և Հարավային Կովկաս/ Խմբ. Ա.Իսկանդարյան. – Եր.:  
Կովկասի ինստիտուտ, 2008:  
Ռուսերեն՝ 171 էջ, ISBN 978-99941-2-180-9  
Անգլերեն՝ 146 էջ, ISBN 978-99941-2-220-2**

**Հեղինակներ՝ Ա.Իսկանդարյան, Դ.Գոկսեյ, Հ.Հաջի-Ջադե, Գ.Տեր-Գաբրիելյան, Ի.Խախնդրավա,  
Ս.Մինասյան, Ռ.Մուսաբեկով, Մ.Մայիլյան, Պ.Ջաքարեիշվիլի, Կ.Չուգան, Վ.Շարիյա, Ա.Գորգուլու**

**Ս. Մինասյան, Վրաստանի էթնիկական փոքրամասնությունները. ինտեգրման ներուժը երկրի  
հայ փոքրամասնության օրինակով. - Եր.: Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտ և «Երկիր»  
հասարակական կազմակերպությունների միություն, 2006:**

**Ռուսերեն՝ 172 էջ, ISBN-99941-2-053-0  
Հայերեն՝ 180 էջ, ISBN-99941-2-058-1  
Անգլերեն՝ 92 էջ, ISBN-99941-2-058-1  
Ֆրանսերեն՝ 92 էջ, ISBN 978-99941-2-066-6  
Վրացերեն՝ 108 էջ, ISBN 978-99941-2-065-9**

**Հետխորհրդային ՋՄՍ-ների քարոզչությունից լրագրություն/ Խմբ.՝ Վ.Չեթերյան, Ն. Իսկանդարյան. –  
Եր.: Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտ, 2005 – 192 էջ:  
ISBN 99941-2-014-x ռուսերեն**

**Հեղինակներ՝ Ս.Բոնդարենկո, Լ.Գրիբալ, Ի.Հուսեյնովա, Մ.Դուրդիևա, Ի.Կոստրիչենկո, Ռ.Մելյան,  
Մ.Մուսխելիշվիլի, Ռ.Լանի, Ա.Սուխով, Ա.Մամազան, Ա.Խաչենկո, Վ.Չեթերյան,Դ.Շմիդտ**

**Սփյուռք, նավթ և վարդեր. ինչով են ապրում Հարավային Կովկասի երկրները/ Խմբ.՝ Ի.  
Խախնդրավա, Ա. Իսկանդարյան. – Եր.: Հայերիս Բյուլլի անվ. հիմնադրամ և Լրատվամիջոցների  
կովկասյան ինստիտուտ, 2005 – 241 էջ:  
ISBN 99930-78-74-3 ռուսերեն**



*Հեղինակներ՝* Ա.Աբասով, Ս.Բագիրով, Ռ.Բադալով, Տ.Ջուվարլի, Ջ.Մամեդլի, Ռ.Մուսաբեկով, Ա.Կարագուլյան, Ա.Իսկանդարյան, Ն.Իսկանդարյան, Է.Մելքոնյան, Ռ.Մելոյան, Ա.Թադևոսյան, Ա.Խաչատրյան, Դ.Բերձենիշվիլի, Ռ.Գոցիբիձե, Դ.Դարչիաշվիլի, Օ.Կանդելակի, Դ.Ուսուպաշվիլի, Ի.Խախիդրավա, Լ.Խոմերիկի

**Կրոնը և քաղաքականությունը Կովկասում. միջազգային գիտաժողովի նյութեր/ Խմբ.՝**

Ա.Իսկանդարյան. – Եր.: Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտ, 2004 – 120 էջ:

ISBN 99930-78-42-5 ռուսերեն

*Հեղինակներ՝* Տ.Սվետոխովսկի, Է.Մելքոնյան, Ի.Խախիդրավա, Դ.Ֆուրման, Կ.Կապրիայեն, Ա.Իսկանդարյան, Ս.Խասին

**Կովկաս-Ռուսաստան. օրինական և ապօրինի գաղթ/ Խմբ.՝** Ա.Իսկանդարյան. – Եր.:

Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտ, 2004 – 160 էջ:

ISBN 99930-78-37-9 ռուսերեն

*Հեղինակներ՝* Գ.Վիտկովսկայա, Դ.Պոլետան, Ե.Տյուրուկանովա, Ե.Կրասինց

**Գաղթը Կովկասում. գիտաժողովի նյութեր/ Խմբ.՝** Ա.Իսկանդարյան. – Եր.: Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտ, 2003 – 132 էջ:

ISBN 99930-78-30-1 ռուսերեն

*Հեղինակներ՝* Լ.Հարությունյան, Գ.Վիտկովսկայա, Վ.Դյատլով, Ա.Իսկանդարյան, Է.Մելքոնյան, Գ.Պոդոյան, Գ.Սվանիդձե, Դ.Սվանիդձե, Ա.Սկակով, Լ.Խոպերսկայա

**Վիկեն Չեթերյան. Փոքր պատերազմներ և մեծ խաղ. – Եր.:** Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտ, 2003 – 132 էջ:

ISBN 99930-78-25-5 ռուսերեն

**Հետխորհրդային Հարավային Կովկաս: Սոցիալական ու քաղաքական գիտությունների գծով հրատարակումների ցանկ և տեսություն. Ռուսաստան, Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, 1991-2001թթ/ Խմբ.՝** Ա.Իսկանդարյան. – Մոսկվա: Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտ, 2002 – 132 էջ:

ISBN 5-94398-007-5 ռուսերեն

*Հեղինակներ-կազմողներ՝* Դ.Մալիշևա, Ա.Յունուսով, Ս.Մանուկյան, Մ.Մոսխելիշվիլի

**Կովկասի ինստիտուտի տարեգրքեր**

**Կովկաս-2008/ Խմբ.՝** Ա.Իսկանդարյան. – Եր.: Կովկասի ինստիտուտ, 2010 – 211 էջ:

ISBN 978-99941-2-364-2 ռուսերեն

*Հեղինակներ՝* Ա.Յունուսով, Ա.Ջոլյան, Գ.Նոդիա, Դ.Պետրոսյան, Ա.Խաչատրյան, Ս.Արությունով, Ա.Իսկանդարյան, Ս.Մինասյան, Գ.Գոգաձե, Գ.Սանաձե, Բ.Արաս, Ռ.Գիրագոսյան, Վ.Շկոլնիկով

**Կովկաս-2007/ Խմբ.՝** Ա.Իսկանդարյան. – Եր.: Կովկասի ինստիտուտ, 2009 – 256 էջ:

ISBN 978-99941-2-219-6 ռուսերեն

*Հեղինակներ՝* Ռ.Ռաջաբով, Ա.Իսկանդարյան, Գ.Գեգեշիձե, Գ.Գոգաձե, Դ.Պետրոսյան, Ս.Մինասյան, Տ.Ջրբաշյան, Դ.Հարությունյան, Դ.Մալիշևա, Մ.Այդին, Ս.Մարկեդոնով, Վ.Շկոլնիկով, Ա.Կասան

**Կովկաս-2006/ Խմբ.՝** Ա.Իսկանդարյան. – Եր.: Կովկասի ինստիտուտ, 2008 – 314 էջ:

ISBN 978-99941-2-090-1 ռուսերեն

*Հեղինակներ՝* Ա.Յունուսով, Մ.Մոսխելիշվիլի, Գ.Ջորջոլիանի, Գ.Հարությունյան, Ա.Եղիազարյան, Դ.Պետրոսյան, Ս.Մինասյան, Ռ.Գիրագոսյան, Ս.Մարկեդոնով, Ա.Իսկանդարյան

**Կովկաս-2005/** Խմբ.՝ Ա. Իսկանդարյան. – Եր.: Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտ, 2007 – 195 էջ:

ISBN 978-99941-2-064-2 ռուսերեն

*Հեղինակներ՝* Ա.Իսկանդարյան, Ա.Կոիլով, Լ. Բակրաձե, Դ.Պետրոսյան, Տ.Սարգսյան, Ա.Ցուցիև, Ա.Ցիգանով, Վ.Կաուֆման, Ա.Ցինկեր

**Կովկաս-2004/** Խմբ.՝ Ա.Իսկանդարյան. – Եր.: Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտ, 2006 – 359 էջ:

ISBN 99941-2-028-x ռուսերեն

*Հեղինակներ՝* Ա.Իսկանդարյան, Ա.Յունուսով, Գ.Արեշիձե, Ս.Զոլյան, Լ.Հարությունյան, Ա.Խաչատրյան, Ա.Արությունով, Մ.Բասնուկան, Ա.Սկակով, Ի.Տորբակով, Դ.Պետրոսյան

**Կովկաս-2003/** Խմբ.՝ Ա.Իսկանդարյան. – Եր.: Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտ, 2005 – 231 էջ:

ISBN 99930-78-73-5 ռուսերեն

*Հեղինակներ՝* Ա.Աղաջանյան, Ս.Արությունով, Ա.Դարբինյան, Կ.Չուգան, Ա.Իսկանդարյան, Օ.Կանդելակի, Ի.Կուզնեցով, Դ.Հովհաննիսյան, Դ.Պետրոսյան, Դ.Ֆուրման, Ի.Խախնդրավա

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ  
ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հարավային Եվրոպա, Հարավային Ամերիկա  
և հետկոմունիստական Եվրոպա

---

Խուան Ջ. Լինց, Ալֆրեդ Ստեփան

Կովկասի ինստիտուտ  
Երևան, 2011